Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2(08)
2-35

Lш4
433

№ ~~954~~ 954
III. 5.
п 4.
№ 931.

2006

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՈՍԿԵՐԲԱՆ

ш 6
п-6-1

ՅՈՎՀԱՆՆՈՒ

2(08)
Հ-85

ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

ՃԱՌՔ

N= 954.ж
931 - лиѣ.
(1010 9204)

Ի ՎԻՆՆԻՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄՍ 1861 ՌՅԺ

БИБЛИОТЕКА
СПЕЦИАЛЬНЫХЪ КЛАССОВЪ
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

433-2006
28 432

БИБЛІОТЕКА
СПЕЦІАЛЬНЫХЪ КЛАССОВЪ
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ո՛չ առաւ Մակեդեդրանի զոր յայլևայլ դէպս խոսեցեալ է նորա, պատեհաւս այսու տամք՝ ի լոյս՝ ի վայելս հասարակաց, Թէպէտ և յոյժ նուազունս Թուով քան որչափ ինչ կան՝ ի յոյն բնագրին. և զայն յերկուս կարգս բաժանեցաք ըստ յոյն տպագրին՝ հետևեալ Համառօտ քննաբանութեան Մոնֆոքոնի, յառաջնումն զՀարաւատան և զանեղկայելիան դասեալ ըստ նորա, և յերկրորդումն զերկբայականան. յաւելաք զնոսին և զորս յայլ մերում՝ ևեթ գտանէին յանուն բուրք վարդապետին, յոնսականնին նոցա ցարդ չերևեալ ուրեք և կամ կորուսեալ և Թերևս՝ ի սպառ ընդ անհարազատս գրեալ՝ ի գիտնոց. դէպք ժամանակաց և հայրենասիրացն իղձք տացեն լրումն ամենայն Թերութեանց՝ ի Հնութիւն և՝ ի Հզօրութիւն ազգային ցանկալի մատենագրութեց։

Ի ստորև Հառիցս իւրաքանչիւր գացեն խնդրողք զԹիւ օրինակաց նոցա, և զմեր ընտրութիւն՝ ի նոսա՝ ի բաղդատութենէ յոնսականին։

БИБЛІОТЕКА
ОБЩЕСТВЕННЫХЪ НАУКОВѢДѢНІЙ
ЯРОСЛАВСКАГО ЮРИДИЧЕСКАГО ИНСТИТУТА

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

ՃԱՌԻ

ՎԱՍՆ ԱՐԴԱՐԱՊԷՍ ԱՂՕԹԵԼՈՑ[1]

Ա՛ղաչեմ արդեօք ի՞նչ հանդիպեալս մեզ, և եղե՞ւ հուսատեաւ լեալս. ո՞չ խաբէութիւք, ո՞չ գիշեր մերձակայս և ո՞չ երազ, այլ ա՛ռաւ արդեօք իցէ, և հսկիցեմք ամենեքեան։ Այս ո՞ւր սկսամ հաւատացեալ, զի՝ ի տունջեան սեաւ և արհաւն եղելոյ ամենայն մարդկան՝ մանուկ վատթար և՝ ի բաց ընկեցեալ՝ յայսքան բարձրութիւն իշխանութեան եւ՝ քանզի՝ ի գիշերի ոչ ինչ աննման է այսպիսւոյ իրի հանդիպել։ Ա՛յրդ են ոմանք հաշուեալք մարմնով և ոչ կարեւոր կերակրովք յղփացեալք, ունելով տեսանեն զինքեանս վաղվաղակի լեալ գեղեցիկս և՝ ի թագաւորական սեղան վայելեալս. այլ է քուն և աղբիւրոյ խաբէութիւն երեւեալն. զի այնպիսի է երազոյն քնութիւն, նոր ինն և սքանչելագործ և՝ ի հրաշափառագոյնն վայելելով հրճուի։ Այլ ոչ՝ ի տունջեան և ոչ՝ ի նմին ինքն յիրացն՝ ի ձշմարտութենէ զայս վաղվաղակի պատահեալս տեսցուք արդեօք։ Այլ այժմ ահա եղե՛ւ, և վախճան ունի այսոքիկ. այս և քան զերազն

1 Ի յայնն վերնագրեալ է Ճառս Յոհաննու Յեռնափրեչոս փոխանակ, յանկն Յոհաննէս Քրիսոստոմոս։ Եւ ի յեպիսկոպոսն և՝ ի բռմմոնիան

հաւատարմագոյնք։ Վաղաք այս մեծ և յոդնաճարդ, բազմութիւն սքանչելի և մեծ՝ առ մեր վատութիւն բե-
բանաբաց է, որպէս թէ . . . .[1] յիմում բերանոյ այս-
քան հոյլք ժողովելոցս լսումն, վաղվաղակի արդեօք ար-
դելեալ լինէր երկիւղիւ հոսումն, և անդրէն դարձեալ
յետս վտակն։ Իսկ յորժամ ոչ զգետոց և ոչ զաղբե-
բայն միայն, այլ և ոչ զանարգ մանն ցօղոյ ամբողջ պա-
հեսցէ զջափ, զիա՞րդ ոչ իցէ երկիւղ՝ մի գուցէ և այս
սուղ հոսումնս Թողցէ զմեզ ահիւ ցամաքեալ ամենայն,
և լինիցի նմանապէս իմն որ և մարմնոյն հանդիպեալ
սովորեաց։ Այս զինչ լինիցի մարմնոյն։ Ո՛չ յոլովս բա-
զում անգամ հաւաստեաւ ունելով ձեռօք, և մատամբք
շուրջ պնդելով՝ ի վերուստ, զարհուրեալք յանկարծա-
կի զամենայն ցնդեմք, Թուլան . . . . այ խստութեամբ
հաւաքեցի ձեզ սուղ ինչ խմաստս, փոքրս այս՝ և յահէ
զանխլացեալ՝ ի բաց գնասցէ, և զիտս մեր անապատ
Թողլով Թուխցի։

Այլ վասն որոյ ազաչեմ զձեզ զամենեսին, նմանա-
պէս մաղթեմ զիշխանս և զիշխեցեալս, որքան մեզ ահ
արկեք միահամուռ ընթանալով՝ ի լսելութիւնս, նոյն-
քան ընձեռեցէք քաջալերութիւն փութով աղօթից.
և աղաչեցէք՝ որ տայն բան աւետարանչաց զօրութեամբ
բազմաւ, տայե ինձ բան՝ ի բանալ բերանոյ իմոյ։ Զեզ
ամենայն իրօք և ոչ մի ինչ աշխատութիւն այդքանեաց
և այդպիսեաց՝ զիոյ մանկան զոր ահիւ է լքեալ՝
սիդել. դարձեալ իրաւացի գտանիք զայս Հայկազած ինձ
տալով. զի յաղագս ձեր՝ ի վտանգս յայս ետու զանձն,
վասն ձեր և սիրոյդ ձերոյ, քան զոր ոչ ինչ է զօրաւո-
րագոյն և ոչ բռնագոյն, որ և ոչ զմեզ Հմուտս ունել ա-
սելոյ՝ դաւանեցոյց ասել, և՝ ի վարդապետութեան աս-
պարիզ Հանդիսանալ պատրաստեաց, Թէպէտ և ոչ յա-
ռաջագոյն քան զայս բուռն Հարաք զմարտիս, այլ միշտ
ընդ լսողսն էաք կարգեալք և յանհոգութեան հանդար-
տութիւն վայելէաք։ Այլ՞ այսքան խիստ և դժուարա-
ծոց, միթէ զի ձեր ժողովքդ՝ ի մէջ անցեալ, և լսելու-
թեանս ջերմադոյն յանկացողք լինել՝ ոչ ասելոյս, Թէ-
պէտ և քան զամենայն մարդ անձայնագոյն օք իցէ։

1 Տողք երկու խանգարեալք. նոյնչափ և զինի։

Կամէի նախ առաջին՝ յեկեղեցիս Հանդերձեալ գալ՝ զբանս սկսանել ցյառաջաբանիս որ մեզ լեզու զայս տայ ած։ Օ՛ի և այն իսկ է պարտ և արժան. քանզի ոչ միայն զկալց և զՆծանի, այլ և զբանից պտուղս տալ պարտ է ով, և զբանին առաւել և քան զօրայիցն. որքան և մեզ սա ընտանագոյն է պտուղ, և նման սիրելի պատուողին ով։ Օ՛ի զողկոյզ և զՀասկ գոգք երկրի բերեն, և մնուցանեն անձրևոցն՝ի վերայ հոսմունք, և երկրաւաստակացն ձեռք դարմանեն. իսկ զնծայինն օրհնութիւն ճնանի երկիւղած անձն, մնուցանէ բարի մտածութիւնն, և ընդունի յշտեմարանս երկնից ած. արդ ոչքան լաւագոյն է քան զերկիր անձն, այսքան և այս վեհագոյն է քան զայն ընծայ։

Յաղագս այսորիկ և՝ի մարգարէիցն ումն այր աքանչելի և մեծ, որում՝ անունն էր Ովսէէ, որք ով ընդդիմացեալքն էին և կամէին հաշտեցուցանել զնա, պատուիրեր ասելով. բերէք ընդ ձեզ ոչ արջառոց հոյլս և ոչ նաշխոյ այսքան չափս, ոչ տատրակ և աղաւնի և ոչ այլ ինչ այնպիսեացն. այլ “ բերէք ընդ ձեզ, ասէ, բանս ,,։ Այս զինչ պատարագ է բան, թերևս ասիցէ ոք. մեծ է, ոյլ սիրելի, և պանծալի և քան զայլսն ամենեսեան վեհագոյն։ Այս ոչ զայս ասէ. որ սա ինքն մանաւանդ զայս քան զայլսն դիտէ հաւաստեաւ, առաքինին և մեծն Դաւիթ։ Այ ան զի ով երբեմն գոհացողութիւնն ունէր ընծայելով՝ յաղթութեանն պատերազմի եղելոյ, այսպէս ինն ասէր “ Օրհնեցից զանուն ով իմոյ հանդերձ երգով. և մեծացուցից զնա գովութեամբ ,,։ Այս ապա զընծայիս զայսորիկ զգերազանցութիւնն մեզ յուցանելով՝ի վերայ էած. “ Այս հաճոյասցի ով քան զորթ մատազ, որ բերէ զեղջերս և զխոշակս ,,։

Խորժէի և այսօր զայս ընծայ առաջի դնել և ես, զսեղան՝ի զոհից այսոցիկ հոգևոր արեամբ շաղախել։ Այլ զինչ կրեցից, իմաստուն այր ըմբերանէ զնս և զարհուրեցուցանէ ասելով. “ Այ է գեղեցիկ գովութիւն՝ի բերան մեզաւորի ,,։ Օ՛ի զոր օրինակ՝ի պակուն ոչ միայն ծաղիկքն պարտ և արժան է թէ մաքուրք իցեն՝ այլ և ձեռքն որ յօրինեն զնոսա, նոյնպէս և յԱծայինն օրհնութիւնան, ոչ բանիցն և՝ևթէ վայելէ հաղորդս լինել երկիւղածութեանն, այլ և որ պատշաճեցուցանէն

զնոսա անձն. բայց մերս զարշելի է և առանց համար-ձակութեան և յոլով մեղաց լցեալ: Այլ ոչ զայս ասեմ, զոյն ’ի ներքս եթէ որ վասն զհիցն իմն զայս խօ-սեցաւ Պաւլէ: Վասն զի ասելով “Զհնեցէք զաեր յերկնից, օրհնեցէք զնա ’ի բարձանց. օրհնեցէք զաեր յերկրէ,,, և յերկոսեան զարարածս կոչելով զվերինն, զներքինն, զդալին, զհամանալին, զերևելին, զոչ երևե-լին, զդեր ’ի վերոյն քան զերկինս, որ ընդ երկնաւ են, և պար մի յերկաքանչիւրոցն կացուցեալ, և այնպէս ըզ-Թագաւորն բոլորեցունց հրամայելով օրհնել ոչ ուրեք զմեզաւորն կոչեաց. այլ զի և աստանօր նմա զդրուճան փակեաց:

Այլ զի յայտնագոյն ձեզ լինիցի ասացեալն, զնոյն ինքն զսաղմոսն վերստին ձեզ ընթերցայց: “Զհնեցէք զաեր յերկնից, օրհնեցէք զնա ’ի բարձանց. օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամե-նայն զօրութիւնք նորա,,: Ցեսո՛ր զհրեշտակս որք օրհ-նեն, տեսո՛ր զհրեշտակապետս, տեսո՛ր զսերովբէս և զքերովբէս, զվերնագոյն զօրութիւնս. զի յորժամ ասէ ամենայն զօրութիւնք նորա, զամենայն վերին զօրսն բովանդակապէս առնու. մի՛թէ զմեզաւորս ուրեք: Այլ զիա՛րդ էր, ասեն, կարողութիւն նմա անդ երևել: Արդ եկ և ’ի յերկիր իջցուք, զքեզ առ միս ևս պարսն[1] մնան փոփոխելոյ. և ոչ ասա զնա տեսցես դարձեալ. “Զհնեցէք զաեր յերկրէ վիշապք և ամենայն խորք, զազանք և ամենայն անասունք, սողունք և թռչունք թևաւորք,,:

Ոչ վայրապար և ոչ մնոտի ’ի միջոցի զայս ասելով լաեցի, այլ ամբոխեցան իմոյ մտացս խորհուրդք, և դառ-նապէս եկն լինձ արտասուել և հառաչել մեծաձայն: Վասնզի զի՞նչ օղորմելի իցէ, ասա ինձ, զի յորժամ կարիձք և քարերք և վիշապք ’ի բարեբանութիւն կո-չին արարչին ոչ իւրեանց, և միայն մեզաւորն յաստուա-ծային պարսէն յայնմանէ արտաքս հալածի: Այլ թէ և օղորմելի է այս, սակայն ըստ պատշաճին լինի և

1 Յօրինակին պարս նմանս:

ըստ իրաւացւոյն. քանզի չար գաղան է մեղաւորն, գաղան չար և անբնդել[1], ոչ՝ ի ծառայակցաց մերմինս զչարութիւնն ցուցանելով, այլ՝ ի փառն տէրունեանս զչար թոյնան հեղուս. քանզի "Վա՛ն ձեր, ասէ, անուն իմ հայհոյի՝ ի հեթանոսս,,: Զաղագս այնորիկ զնա իբր յածայրին գաւառի՝ յաշխարհի՝ ի բաց վարեաց մարգարէն, և ապրաքոյ քան զահմանան բնակեցոյց. նոյնպէս և առաքինի երաժշտականն զքաջայարմար քնարի[2] զվատահնչող աղի խզէ, զի մի այլոց հնչումն յարմարութեանն ժանտասցի. նմանապէս և արուեստաւոր բժիշկ զփտեալ անդամ հատանէ, զի մի՝ ի նմանէ ժանտահոտութիւնն յայլոց անդամոց քաջողջութիւնն ընթասցի. այսպէս և մարգարէն արար, իբրև զվատահնչող աղին և իբրև զանդամ ապականեալ յամենայն մարմնոյ յարարածոցս զմեղաւորն՝ ի բաց եհատ:

Այլ արդ զինչ արդեօք առնելի իցէ մեզ: Վա՛ն զի հատաք, հարկաւոր է ամենայն իրօք լռել: Այլ ո՞չ օր մեզ ներեսցէ օրհնել զտէրն մեր, և ընդ վայր կոչեցաք զձեր զաղօթսդ, մնոտի՝ ի ձեր բարեխօսութիւնդ ապաւինեցաք: Ահ ընդունայն, մի լիցի. քանզի միւս ևս օրինակ փառաբանութեան ձերոյք աղօթիդդ՝ ի մէջ տարակուսանացս այսց իբրև փայլակն իմն՝ ի խաւարի երևեալ, որովք մեզ իշխանութիւն է զծառայակիցն զովվել. նոցա պատուհասելոցն յած ամենայն իրօք փառքն երևեալ ելանէն. որպէս և ինքն ասէ. "Պայծառասցի լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է,,: Այդ միւս ևս փառաբանութեան օրինակ. զոր և մեղաւորի կարողութիւն է՛ ասել, և ոչ լուծանել զօրէնսն:

Այլ զո՞ արդեօք գոլեսցուք՝ ի ծառայակցացն. զոչ այլ ոք, բայց զՀասարակաց զգաւառիս վարդապետ, և յաղագս գաւառիս և յաղագս աշխարհի ամենայնի. զի զոր օրինակ սա զձեզ խրատեաց մինչև ցմահ յաղագս Հնձանութեանն կեալ, նոյնպէս և դուք զայլ մարդիկ ուսուցանէք՝ յանձնէն մանաւանդ քան Թէ՝ ի բարեպաշտութենէն՝ ի բաց կալ: Այդ կամիք եթէ ասասի յօրինեսցուք զգովութեանցն զպատակս. ախորժէի և ես.

1 Ցօրինակին ընդել: 2 Ցօրինակին փոր:

այլ տեսանեմ՝ անբաւ խորս զուղղութիւնն՝ և երկրին չիմ մի գուցէ յատակն ինձանելով բանս տկարասցի դարձեալ՝ ի վեր ընթանալ։ Այսոյ զի հարկաւոր է զհին ուղղութիւնն պատմել, զօտարութիւնս, զհակմունս, զհոգս, զբանս, զխորհուրդս, զմարտս, զյաղթութիւնս, և զնահատակութիւնս ընդ նահատակութեանս միաւորել։ Իրք որ ոչ քան զմեր միայն, այլ և քան զամենայն մարդկային լեզու մեծագոյն են։ առաքելական ձայնի կարօտեալ հոգւով շարժելումն, որում զամենայն և աւել և վարդապետել կարողութիւն էր։ Յաղագս որոյ զայսու մասամբ զանց առնելով, ՚ի միւս ևս զգուշագոյնն երթիցուք, ՚ի յոր ինձանելոյին աւելի փոքր ինչ է կարողութիւն։

Ընդ բեր յաղագս ժուժկալութեան շարժեսցուք զբանս, զհարդ ժուժկալեաց որովայնի, սրպէս անտես արար զփափկութիւն, զհարդ ծաղր արար զբազմապատիկ սեղանն, և այս ՚ի յոքնագան տան մնեալ։ Այքան չելն ինչ ոչ իցէ որում՝[1] յաղքատութեան եկաց՝ ՚ի ցամաքուտ և ՚ի խիստ վարս յայս գալ, վասն զի ունի վարդապետ իրաց զաղքատութիւնն վաճառակից միանգամայն և ուղեկից, և զբեռն հանապազօր ՚ի նմանէ թեթևացուցանէ։ բայց որ փարթամութեան լեալ է տէր, ոչ դիւրաւ զըմբռնմունս նորա ՚ի բաց մերկանայ, այնքան ախտիցն պարզ շուրջ զնորա անձամբն թռչելով։ Այլ յոլովութիւն վտանգիցն ծանր խաւարաւ զնորա զաչս մոգացն խնուն։ ոչ թողացուցանեն յերկինն նայել, այլ ՚ի վայր բռնադատեն հայել և առ երկիր բերանաբաց լինել։ Վասնզի ոչ ինչ է և ոչ ինչ այլ խաւարն երթալոյն յերկինն որպէս զընչեղութիւնն և որ ՚ի չընչեղութենէն չարիք։ և ոչ է իմ այս բանս, այլ ՚ի նոցունն իսկ յերկնից վճիռս էջ։ “Դիւրագոյն է, ասէ, ուղտու ընդ ծակ ասղան անցանել քան փարթամի յարքայութիւն երկնից”։ Այլ ահա դժուարին այս, մանաւանդ թէ անկարելիս այս՝ եղև կարելի։ Այս զոր յառաջագոյն Պետրոս տարակուսեր առ վարդապետին և ուսանել հայցէր, զայս փոքրիւ առաջեալսն դիտացաք յանկատ առաւելագոյն քան զսոյն։ Վասնզի ոչ սա միայն

1 Ցօրին։ պակասէր որոմ յաղքատութեան եկաց։ յաւելաւ ՚ի յունէն։

յերկինն եւ այլ եւ զբազմութիւն մուծանել զայսքան հանդերձ ընչեղութեամբ եւ միւս ևս քան զփարթամութիւնն ոչ ինչ նուազ խափան ունելով զմնկութիւնն եւ զտարտամութիւնն, որք զամենայն մարդկան բառականք են կախարդել զանձինս։

Ա՛յնպիսի իմն ունին յոռութիւնս, այնպէս պատրաստեն զդեղսն. այլ քան զայսոսիկ սա զօրացաւ եւ զերկնից բուռն եհար, եւ առ անդ յիմաստութիւնն փոխոխեաց զինքն. եւ ոչ զպայծառութիւն մերձաւոր կենացս զմերս տաւ ինչ ած, եւ ոչ՝ի նախահարցն վեհութիւնն հայեցաւ. մանաւանդ թէ եւ զնախահարցն երջանկութիւնս հայեցաւ, ոչ որ ըստ բնական իրացն կապեալք էին ընդ նմա, եւ որք ըստ յորդորական բարեպաշտութէն պատշաճագոյնք էին նմա. յաղագս որոյ եւ այսպիսի եղեւ։ Վասն զի հայեցաւ՝ի հայրապետն Ա՛բրահամ, հայեցաւ՝ի մեծն Մովսէս որ՝ի տան Թագաւորի մնեալ, եւ՝ի սեղանոյ հաղորդեալ սարիւրիտիկացոյ[1], եւ՝ի մէջ եգիպտական ամբոխին ըմբռնեալ. գիտէք զինչ բարբարոսացն իսկ որքան ամբարտաւանութէ՛ն եւ առ աչս երեւութիւք լինի, զամենայն անպատուելով զայն՝ առ կաւ եւ առ աղիւս հատուածեայ, ընդ ծառայս եւ ընդ գերիս գոլ բաղձացաւ Թագաւորն եւ Թագաւորի նորին որդի։ Յաղագս այնորիկ պայծառաձեւով եւանէր եւ քան զոր յառաջագոյնն ունէր՝ առ զհատուցումն։

Վասնզի յետ փախստեանն եւ առ աներջին ծառայութեան եւ օտարութեան եւ տառապանաց, եւանէր Թագաւորին լեալ Թագաւոր, մանաւանդ Թագաւորին լինելով ած. վասն զի "Յդի զքեզ, ասէ, ած փարատումի,,։ Այս պայծառագոյն էր քան զԹագաւորն, ոչ Թագ ունելով եւ ոչ ծիրանիս զգեցեալ եւ ոչ կառս վարեր ոսկեզինս, այլ զամենայն զհպարտութիւնն զայն կոխեաց. "Ամենայն փառք դստեր Թագաւորի՝ի ներքոյ,,։ Եւանէր ունելով գաւազան, որով ոչ մարդկան ևեթ հրամայէր, այլ երկնի և երկրի և ծովու և օդոց և ջուրց բնութեան և լճաց և աղբերաց և գետոց. քանզի զամենայն զոր ինչ կամէր Մովսէս, այն նշանք լինէին, և՝ի նորա ձեռս դարձեալ փոխոխեալ ձեւանային

1 Այդպէս յօրինակին, զոր յոյնն պղպեղեան ասէ։

արարածք։ Այլ զոր օրինակ աղախին ոք բարեմիտ զտեա-
ւըն սիրելի տեսանելով մերձ լեալ՝ յամենայնի հաւանի
և հնազանդի, նոյնպէս զնա տեսանելով՝ լինէին այնո-
քիկ։ Այլ մանուկ էր, եթէ երբէք եղև մանուկ. զի և
ոչ էս իսկ հաւանիմ, այլ՝ի նոցունց՝ի խանձարրոցն այն-
պէս էր՝ի նման ալեւորաց իմաստութիւնն. բայց ըստ հա-
սակին քանի մինչ մանուկն էր, զամենայն իմաստութե-
նէ բուռն հարկանէր, և ուսեալ զընութիւնս մեր. զի
տեղի իմն է անտառամէջ, զախտս անձին քանիս բարե-
պաշտութեամբ իբրև գերանդեաւ իւիք դիւրաւ՝ի բաց
հատանէր, մնքուր զսա ընձեռեալով իբրև երկրագործի
զանդաստանս՝ի սերմանցն ցանումն. և ընկալեալ զա-
մենայն՝ի խորս առաքէր, որպէս զի՝ի վերուստ արմա-
տացեալք ոչ արկածիւ ձառագայթիցն տայցեն տեղի,
և ոչ՝ի փշոյն դարձեալ հեղձնուսցեն։

Այլ զոգին դարմանէ այսպէս. իսկ զմարմնոյն զկայ-
ռանս՝ ժուժկալութեան դեղովքն զապէր, իբրև ձիոյ ի-
միք խստերախի՝ մարմնոյն զպահոյն սանձս՝ի բերան ար-
կանէր. և ցայնքան յերկարէր զկին, մինչ զի զնոյն ինքն
զցանկութեանցն խաթաթէր[1] զբերանս, սակայն հան-
դերձ օրինաւոր խնայութեամբ։ Վասնզի ոչ՝ի վայր
ընկենոյր զմարմինն, որպէս զի մի ձին խափանեալ ան-
պիտանացու նման լինիցի առ՝ի սպասաւորութիւն. և ոչ
՝ի սաստիկ քաջողջութիւնս անկանել թողացուցանէր,
զի մի բազմամիս լեալ՝ հակառակ երասանակալին դար-
ձեալ յարուսցէ զկորհուրդն. այլ միանգամայն առող-
ջութեան նորա և քաջողջութեան խնամարկէր։ Այլ ոչ
մինչ մանուկն էր այնպիսի ոք էր, և յորժամ էանոյ ըզ-
հասակաւն զայնու՝ և զնախախնամութիւնն ելոյծ. այլ
և այժմ յորժամ յանքոյթ նաւահանգստեանն՝ի ծե-
րութեանն նստի և զնոյն ունի խնամակալութի։ Ա՛ ան
զի մանկութիւն, ոմ սիրելի, խորոց նմանեցաւ մոլելոյ
և վայրագ ալեկոծութեանց և որ լի է այսոցիք չարու-
թեամբ. իսկ ալիք իբրև նաւահանգիստ առանց ալեկո-
ծութեան զծերոյն զադարեցուցանէ զմնձինս, ընձե-
ռելով՝ի հասակէն փափկանալ զգուշութեամբ։ Յո-
րում սա այժմ վայելելով և՝ի նաւահանգստի նստե-

1 Յօրինակին խայթարէր գբան։

լով քան որք ի մէջ խորոյն սկսանին՝ ոչ ինչ նուազ է ի հոգս։

Եւ զայս երկիւղ ընկալաւ ի Պաւղոսէ որ ի նոյն ինքն յերկինս յայս էր, և որ զկնի սորա ի վեր ընթացաւ և ի յերկրորդն մերձեցեալ ասէր. "Երկնչիմ մի գուցէ այլոց քարոզելով ես անփորձ լինիցիմ,,, վասն այնորիկ և սա միանձնաւոր հաստատեաց զինքն յերկիւղ, զի յաւիտենական իցէ ի համարձակութեան. և նոտի ի վերայ ղեկաց, ոչ ընդ աստեղացն պայծառութիւնս նայելով և ոչ ի ներքոյ ջրոյ զվէմն և զանձաւս դիտելով, այլ դիւացն ի վերայ յարուցեալ, և սատանայի ի չարագործութենէն և ի խորհրդոցն կռուելոյ և ի շուրջ բնակեցելոցն զգուշանալով՝ զամենեսեան պահել յաներկիւղութեան. որպէս զի մի ի նաւարկելոցն ոք փորձ առցէ մերկաց իրիք՝ զամենայն հնարս։ Յաղագս սորա իմաստասիրութեան մեք առանց ալեկոծութեան նաւեմք ամենեքեան, լի զառագաստ սփռեմք զնաւս։

Վասպէտ և առաջնի ի հօրէն վերնեցաք՝ որ և զսա մեզ ծնաւ, ի տարակուսանս էին մեր իրք. յաղագս ոչ լոյ և ողորմելի ողբացաք, ոչ վստահանալով աթոռոյս այնպիսի զայլ ոք զայր դարձեալ ընդունել։ Ոչայց յորժամ սա երևեցաւ և հանդ ի մէջ, ամենայն տրտմութեանն այնմ անցանել արար իբրև ամպոյ, և զտիրապետութեան ծածկեաց. ոչ սուղաբար ի մէնջ ի բաց ջնջելով զսուգն, այլ այնպէս յանկարծակի՝ որպէս թէ երանելին ինքն ննջեաց արդեօք և ի տապանէն յառնել յաթոռ նստաւ յայմ։

Ամէն մեռացաք հայրենի ուղղութեանցս փափաքանօք քան զչափ բանից արտաքս անկեալք, ոչ ըստ չափաւոր ուղղութեանցս, զի յայնմանէ չև ևս ձաշակեցաք, այլ ըստ չափ յարմարական մերոյ մանկութեանս։ Ոչեր այսուհետև զբանս իբրև ի նաւահանգստի լռութեամբ դադարեցուսցուք. բայց ոչ կամին ի բաց կալ այլ դժուարին և զայրանան, ամենայնիւ յղփանալ բաձան. բայց այդ անհնարին է, ով մանկունք։ Դադարեսցուք այսուհետև հալածելով զանըմբռնելին. բաւական և մեզ ի միխթարութիւն ասացեալքս։ Օ՛ և իւղոյ անուշից ոչ եթէ զանն միայն հեղուցու, այլ թէ և ծայրիւ մատինն մերձենայցէ, զօդս խնկէ, և զմեր-

ձաւոյս զամենեսեան անուշահոտութեամբ ընտ։ Որ և այժմ եղիզ, ոչ յաղագս զօրութեան մերոյ բանից, այլ վասն սուրբ ուղղութեանց։ Աղաչեմ զքեզ այսուհետև եղիր հիցուք յաղօթս դադարելով, և հասարակ ամենեքեան աղաչեսցուք զի հասարակաց մայրս մեր անշարժ և անդրդուելի կացցէ միասցէ, և հայրս մեր այս վարդապետս և առաջնորդս և հովիւս յերկայնադոյն կեանս ժամանեսցէ։

Այս եթէ է ինչ ձեր և մեր բան, քանզի ոչ ընդ քաՀանայս զանձինս համեմատել իշխեմք, զի և ոչ օրէն իսկ է վիճաճին ընդ կատարեալ ծնունդսն ի թիւ անկանել, արդ եթէ է ինչ ձեր առ իս բան իբրև առ տրուպօք, աղաչեցեք յոլով մեզ ի վերուստ լինել հոսմանն։ Պէտք էին մեզ և յառաջագոյն բազում զգուշութեան յորժամ առանձինն կէաք զանհոգ կեանսն. բայց որով հետև ի մէջ եկաք, և եթէ զիարդ՝ Թողում, եթէ մարդկային փութով և եթէ ածային շնորհիւ՝ ոչ ինչ ընդ ձեզ յաղագս այդորիկ հակառակեմ, զի մի ինչ ոք զիս պատճառեսցէ ասիցէ, բայց սակայն զի ի մէջ եկաք, և ընդ զօրաւոր[1] լծովս ընդ այսու մտաք, բազում ձեռաց են մեզ պէտք, քիւր աղօթից, որպէս զի կարիցեմք զաւանդն հաստուցանել ամբողջ աւանդողին տեառն յօրն յայնմ, յորժամ որ զտաղանդսն հաւատացեալ են՝ կոչին և ի ներքս մուծանին և զվարկն պահանջին։ Արդ աղօթեցէք մի ի կապելոյն մեզ լինել և մի ի խաւար անկեալոյն, այլ որք կարիցեն գնանք չափաւոր ինչ Թողութեան հանդիպել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր փառք պատիւ և զօրութիւն հանդերձ սրբոյ և բարերարի հոգւոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յօրինակին զբաւորս ի ծովս։

ԱՒ ԹԷՈԴՈՐՈՍ ՈՐ ԱՆԿԱՆԵԼ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԷՐ Ի ՎԱՆԱԿԱՆՈՒԹԵՆՆԻՆ ԵՒ Ի ՍՈՒՐԲ ՎԱՐՈՒՑՆ

Եթէ զարտասուս և զհառաչանս գոյր հնար՝ ի ձեռն գրոյս յայտնել, այսոքիւք զԹուղթս լցեալ առաքէի քեզ։ Արտասուեմ ես, ոչ զի հոգ տանիս ինչ իրաց հայրենեաց, այլ զի յընտրութենէ եղբարց զքեզ՝ ի բաց ջընջես, և զի որ առ Քրիստոս ուխտն է՝ կոխես։ Յայդմանէ զարհուրիմ և յաղագս այդորիկ վտանգիմ, նոքին աղագաւ երկնչիմ և դողամ։ Վտանգն զուամիկ ոչ գրե՝ ի զինուորս. իսկ զինուորն լեալ, եթէ միանգամ ըմբռնեսցի՝ ի դասալքութեան, ոչ ապաքէն վերջին տանջանս ընդունի։ Ոչ դժուարին է, ով սիրելի Ստեփանոս, որ մնարաչին եթէ՝ ի վայր անկանիցի, այլ կալ ինալ՝ ի կործանումն. և ոչ զինուորին որ պատերազմին եթէ վերաւորեսցի, այլ յետ վերին եթէ անփոյթ առնիցէ զնոցանէն։ Ոչ որ վաճառական միանգամ ընդ նաւաբեկութեամբ անկեալ և զշահն կորուսանելով, ՝ի բաց կայ՝ ի նաւելոյն. այլ դարձեալ ընդ ծով և ընդ ալիս և ընդ անբաւ խորս անցանէ, և զերկրորդ նաւարկութէն ատանայ։ Այսմանապէս և զըմբիշն յետ բազում անգամ գլորմանն տեսանեմք պատկեալս. և զինուոր դարձեալ միանգամ փախչելոյ զկնի նահատակ ցուցանի և պատերազմողացն յաղթող։ Յորմէ և որ զՔրիստոս ուրացան յաղագս տանջանացն կարեաց, վերստին մարտեան դարձեալ և զվկայութեան պսակն ունելով անցեալ գնացին։ Արդ եթէ իւրաքանչիւր որ՝ ի նոցանէ առաջին վիրօքն էր յուսահատեալ, ոչ և այդեօք յերկրորդում բարիսն վայելէին։

Այլ այսուհետև և դու, սիրելի Ստեփանոս, վասն զի եթէ փոքր ինչ՝ ի հաստատութենէն յողդողդեաց զքեզ թշնամին, մի արգիլն զքեզ ինքն մեռցես՝ ի վիհ. այլ կաց ճիա առաքինաբար, և եկ դարձեալ վերստին ուստի արտաքան մերժեցար։ Այլ թշնամանս ինչ վարկանիր սուղ ինչ լեալ վերդ գայդ. զի և զինուոր եկեալ՝ ի պատերազմ հանդերձ վիրօք թշնամանի արդեօք։

Ալ ասն զի թշնամանք են զղէն ընկենուլ և պատերազմողացն ծաղր լինել. իսկ որ կայ միայ կռուելով, եթէ սպանանիցէ և եթէ տեղի տայէ փոքր ինչ, ոչ ոք այնպէս դժոխաբարոյ և ոչ անհմուտ պատերազմողացն զայնպիսին քամբասիցէ արդեօք ոք երբեք։ Ալ պատերազմելոյն է ոչ ընդունել վէրս. իսկ որ սրտմտութեամբ ընդդէմ պատերազմողացն յարձակիցէն, լինի երբեմն և անկանիլ ի մարտին. որպիսի քեզ եղև, քանզի յանկարծակի զոր պարտէիրն սպանանել՝ ըմբռնեալ ցուցար։

Այլ վտահայիր. դուշնաքեայ պէտս ունիս արթնութեան, և ոչ հեռք միասցեն ի քեզ վերացն. մանաւանդ թէ ոյ չնորհաւն և վնորին իսկ զատանայի խորտակեսցես զգլուխն։ Ալ ի ոք զքեզ խռովեցուսցէ. վասն զի եաես սրահայեաց ակամբ չալն զքո զանձինդ զառաքինութիւն, և քաջ նահատակ ընդդէմ ինքեան առնել ի յոլովից իրաց, վտահացաւ զմարդն՝ որ այնպէս վաղվաղակի ստացար զփոյթն հակառակ նմա, եթէ ի նմին կայցես միայցես՝ ոչ դիւրաւ կարէ յաղթել նա քեզ։ Ալ ասն այնորիկ զարթեաւ փութացաւ յաբեաւ բազում իրօք հակառակ քո, մանաւանդ թէ ընդդէմ ինքեան գլխոյն, եթէ կամեսցիս կալ միալ առաքինապէս։

Ալ ասն զի ընդ քո արժանաւորութիւնն և ընդ հաւատեաւ եռանդն և ընդ փոխոխումն ի բարիս ո՞ ոչ զարմացաւ. որ զփափուկ կերակուրան արհամարհելիր, և զբազմապատիւ զգեստն անտես առնէիր, ամենայն հպարտութիւն կոխեալ էր, զամենայն արտաքնոյն ի մատութիւն Հեպով և վաղվաղակի յաստուածային բանս փոխոխեցեր. բռնադակ տիւք յընթերցուածս ծախեալ լինէին, և . . .[1] մասն զիշխանութեանն նե բեաց նմա ած ունել։

Ընդ եթէ քեզ փոյթ յաղագս արտաքին բանիցն էր, զատենականն և որք անդ պետական են և համարձակութիւնք՝ յիշեցուցանելով մաղթէի արդեօք վերըստին յաղագս այնորիկ յաշխատութիւնս. այլ զի վասն երկնայնոցն ընթանամք, և յերկրի և ոչ մի են բանք, որ անդ են զատաստանքն՝ զայն քեզ յիշեցուցանեմ,

1 Թուղթ մի անկեալ է։

զբեմն զահաւոր և զարհուրելի. “Ա՛ սա զի ամենեցունն մեզ մերձ կալ պարտ և արժան է քեմին Քրիստոսի, զի իւրաքանչիւր ոք առնու մարմնով զգործեցեալսն եթէ բարի և եթէ չար ,,։ Վատաւոր նստելոց է յայն ժամ նա, որ այժմ անարգին ի քէն։ Օ՛ ինչ ասիցեմք յայնժամ նմա, եթէ կայցեմք ծնայցեմք անարգելով զնա. զինչ խօսիցիմք առա՛ ինձ. զկրօն զհոգս պատճառիցեմք. այլ յառաջագոյն ասաց. “Օ՛ ինչ օգտեսցի մարդ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի ,,։ Բայց թերևս յայլոց խաբեցաք. այլ և ոչ Յ՛դամայ ինչ օգնեաց ի պատասխանին զկինն պատճառս առաջի բաղձագելով և ասելով. “Կինա զոր ետուր ինձ, սա զիս խաբեաց ,,. որպէս և ոչ զկինն՝ օձն։

Յ՛հաւոր է, ով սիրելի Թէոդորա ատեանն այն. ոչ ոսխաց կարօտի, և ոչ վկայութեան անսայ, քանզի աստենեքեան մերկապարանոցաւ կան առաջի դատաւորին. և ոչ ընդ գործոյն միայն, այլ և ընդ մտածութեանցն դատաստան պարտի ընդունել. քանզի քննիչ է խորհրդոց և մտածութեանց դատաւորն այն։ Յ՛յլ թերևս տկարութիւն մարմնոյ ասիցես և ոչ կարել բառնալ ըզլուծն Քրիստոսի։ Այս ո՛ղբ այսոցիկ պատասխանիք, ըզլուծն Քրիստոսի ոչ կարելով ընդունել, և ոչ զբեռն զօրել բառնալ զթեթևն. ծանո՛ւք իցեն և դժուարինք աշխատութեանց հանգիստք։ Յայսոսիկ կոչէ զքեզ Քրիստոս ասելով. “Եկայք առ իս ամենայն տարժանեալք և բեռնաւորեալք, և ես հանգուսցից զձեզ. առէ՛ք զլուծ իմ՛ ի ձեզ և ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ և գտջիք հանգիստ անձանց ձերոց. վասն զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ թեթև ,,։ Օ՛ ինչ թեթևագոյն է, ասա ինձ, քան թէ ի հոգոց և յիրաց և յերկիւղից ի բաց վճարելով՝ արտաքոյ յալեաց աշխարհս լինել և յանքոյթ նաւահանգստին դադարել։

Օ՛ ինչ քեզ թուիցի յաշխարհիս երանելի լինել և ընտիր. զիշխանութեան ամենայն իրաք, ասեն, և զընչեղութեան և զմարդկան հաճոյ լինել։ Այս զինչ քան զայսոսիկ թշուառակնագոյն, յորժամ ոք առ քրիստոնէիցն փառս համեմատիցէ. քանզի իշխանն ընդ բազմութեան անկեալ կայ զայրացման և յոյսվութեան անբան յարձակմանց, մեծամեծ երկիւղից իշխանացն

և ընդ իշխեցելոյն հոգովք. և որ երկիւ իշխանն էր, այսօր ռամիկ. քանզի ի տղայական խաղուցն ոչ ինչ զատնաղանի մերձակայ կենցաղս։ Օ որ օրինակ անդ ոմն թագաւոր և ոմն զօրավար, և այլքն զզօրականացն կարգն կատարեն, և ի հասանել գիշերոյն ոչ թագաւորն է և ոչ իշխան և ոչ զօրավարն, նոյնպէս և ի յայնմ աւուր ոչ ի կերպարանացն՝ այլ ի գործոցն իւրաքանչիւր ոք առնէ պատիւն։

Վասն որդեօք պատուականք իցեն, որ անցանեն իբրև զճաղիկ խոտոյ. այլ ընչեղութիւն, ընդ որում ատացողքն հաշին. քանզի "Այ, ասէ, ընչեղացն, և եղուկ որ յուսացեալ են ի զօրութիւնս իւրեանց, և ի զօրութիւն փարթամութեան իւրեանց պարծեսցին"։ Վրիսաոնեայ ոչ երբեք յիշխանաց ռամիկ լինի և ոչ յընչեղութենէ աղքատ և ոչ անփառ ի փառաւորութենէ. այլ կայ մնայ ձոխացեալ յորժամ աղքատանայն, և յորժամ նուաստացուցանել զինքն փութայ. և յորժամ իշխէն, ոչ մարդկան իշխէ, այլ աշխարհակալաց խաւարիս այսորիկ. ոչ ոք լուցանել զնա կարէ։

Խարւոք է ամբանութիւն, ձայնակից լինիմ և ես, քանզի "Պատուական է ամբանութիւն, ասէ, և անկողինք անարատ. այլ զշունս և զպոռնիկս դատի Աստ"։ Այլ դու ոչ ես կարես այսուհետև զարդարութիւն ամբանութենէն պահել. քանզի որ ի յերկնային փեսայն մերձենայ՝ զնա թողուլ և ի կանայս մերձենալով շնութեան են իրքն, թէպէտ և բիւր անգամ ամուսնութիւն զայնոսիկ կոչէ նա. մանաւանդ եթէ քան զշնութիւն այն դժնդակագոյն է որքան վեհագոյն է քան զմարդ Աստ։ Այ ի ոք զքեզ խաբեսցէ ասելով՝ զամբանութիւնն ոչ արգել Աստ. գիտեմ զայդոսիկ և ես, զի ոչ խափանեաց զամբանութիւնն Աստ, այլ զշնալն արգել, եթէ կամիցիս՝ որ մի լցցի երբեք՝ մերձենալ յամբանութիւն։ Այս զինչ սքանչելիք, եթէ ամբանութիւնն իբրև զշնութիւն դատիցի յորժամ անարդի Աստ։ Այսպանութիւն զարդարութիւն եբեր, և մարդասիրութիւնն առաւել քան զսպանութիւն դատապարտեաց. վասն զի միւնոյն կամացն էր, և միւսն արգելեալ լինէր յայ. վասնէհղի համարեցաւ յարդարութիւն, զի զպոռնիկ կինն և զայրն խոցելով սպանանէր. իսկ զԱաւուղ սուրբն այ

Յամուհել զբոլոր գիշերն սգալով և արտասուելով ոչ կա-
րաց զերծուցանել ՚ի դատապարտութենէն զոր կած ՚ած
հակառակ նմա. վասն զի զայլազգեաց Թագաւոր զոր ի-
բաւացի էր սպանանել՝ ապրեցոյց առանց ՚այ կամայն:

Ա՛յդ եթէ մարդասիրութիւն՝ առաւել քան զսպա-
նումն դատապարտեաց յաղագս ոչ լսելոյ ՚այ, զինչ հրա-
շալի թէ ամենութիւն իբրև զչնութիւն դատապար-
տեսցի յաղագս անարդելոյն զՔրիստոս: Օ՛ի զոր օրի-
նակ ՚ի սկզբանն ասացի՝ թէ ռամիկ ոք էիր, ոչ արդեօք
՚ի գինուորութիւն ոք գրէր զքեզ. բայց այժմ ոչ ևս
տէր ես քո ինքեան այնպիսւոյ Թագաւորի գինուորեալդ.
զի եթէ կինն իւրում մարմնոյն ոչ իշխէ, ևս առաւել
ոք Քրիստոսին գինուորին՝ իւրեանց մարմինք ոչ են
տեարք: Որ արհամարհի այժմ, նոյն յայնժամ ե գա-
տաւոր: Ա՛յդ զայսոսիկ զմնաս ած յարաժամ և զգետն
հրեղէն. վասն զի "Կոետ հրոյ ձգեաւ լինի առաջի գի-
մոց նորա,,. ոչ ևս լինի վստահանալ ՚ի տանջանացն
վախճան, որ այնմ հրոյ մանեի՝ Նոյն ինքն կենցաղոյս
այսորիկ հեշտութիւնք ՚ի սուտերայ և յերազոյ ոչինչ
զանազանին. վասն զի նախ քան զկատարումն առնուլ
մեզայն զնջանին հեշտութեանցն իրք. իսկ որ յաղագս
նոցա են տանջանքն՝ վախճան ոչ ունին. և հեշտութիւն
առ սուտ ինչ ժամանակ, բայց վտանգն յաւիտենական:
Օ՛ի և անհաստատուն ե աշխարհիս ընչեղութիւնն, որ
ոչ միւնչև յերեկոյ բազում անգամ կայ միայ: Ա՛յլ զգ-
փոռան ասիցես. լուր արդարոյն որ ասէ. "Կեանք իմ
թեթևագոյնք են քան զսուրհանդակ,,: Օ՛ի զոր օրի-
նակ նոքա նախ քան զդադարելն ՚ի բաց վազեն, նոյն-
պէս և կեանքս յառաջ քան զմերձ գալ՝ թուլին:

Ա՛յ ինչ քան զանձն պատուականագոյն ե. զի և ոչ
ոք զվերջին յիմարութեանն զհետ չոգան, անգիտա-
ցան զայս. զի քան զանձն պատուականագոյն ոչ ինչ ե՝
յարտաքնոց ամն յարարողաց[2] ասաց: Գիտեմ զի առ
չարին պատերազմի տկարագոյն եղեր. գիտեմ զի ՚ի մէջ
հեշտութեան բոցոյն կաս: Կայց եթէ ասասցես թշնա-
մոյն՝ թէ զհեշտութիւնս քո ոչ պաշտեմ և արմատոյ
ամենայն չարեացն քո ոչ պագանեմ երկիր, եթէ յա-

1 Ցօրին. արդարութիւն. եգաւ ըստ յունին: 2 Իմա փերնող:

ռեսցես ՚ի վեր զանկն, Թօ[ք]Թաւիեսցէ և այժմ զբոցն փըր-
կիչն. և որք արկին զքեզ ՚ի հուրն, ՚ի նմին կիզեսցէ.
իսկ քեզ ՚ի մէջ հնոցին ըմպել յօղ և սիք ընչեցեալ ա-
ռաքեսցէ, մինչ զի և ոչ ՚ի խորհուրդս քո և ՚ի մտա-
ծումն իւնս մերձեսցի հուրն, բայց զքեզ միայն մի տո-
չորեսցես: Ա[ն]անզի զլօրաւոր քաղաքս բազում անգամ
զկն և մեքենայք ոչ կարացին արտաքուստ կործանել.
իսկ մտանուԹիւնք միոյ կամ երկուց ՚ի ներքս բնակե-
ցեալ ՚ի քաղաքին անաչխատ մատնեցին Թշնամեացն:
Արդ և այժմ մի որ զքեզ որք ՚ի ներքս են խորհուրդք՝
մատնեսցեն, և եԹէ բիւր մեքենայս ածցէ ՚ի վերայ քո
արտաքուստ չարն՝ սնոտի և ընդունայն մերձեցուցանէ:

Օ քաղաքն ունիս ՚ով ընտրհիւն զմեծամեծ յաւակիցս
և բժշկողս որք յաղագս քո անձինդ դողան՝ զսուրբն ՚ով
զԱ[ղ]եքիոս և որ ամենայնիւ նորա եղբայրն զՓլորեն-
տիոս, զԱրիստոսի հանձարով զիմաստունն զՊօրփիւ-
րիոս և այլս յոլովս, որք հանապազօր ողբան յաղագս
քո, և աղօԹելով ոչ դադարեն. և պատահէ նոցա յա-
ղագս որոյ աղաչենն, եԹէ փոքր ինչ զքեզ ՚ի բաց կա-
ցուցանել կամեսցիս ՚ի ձեռաց պատերազմողացն: Ա-
զիաւրդ ոչ յիմարուԹիւն է, եԹէ նոքա և ոչ այժմ ան-
յուսանան զքո փրկուԹիւնն՝ յարաժամ ընդունել զիւ-
րեանց մանն աղաչէն, քեզ՝ որ միանգամ ընկձեցար՝ ոչ
վերստին յառնել, այլ կալ մնալ, և ո՛չ գոչես առ Թըշ-
նամին՝ խողխողել մի լռնայեր: "ԵԹէ որ գլորիցէն,
ո՛չ յառնիցէ ,, իմաստուն մարգարէուԹիւնն ասաց. իսկ
դու այսմիկ վայրապար ընդդէմ ասես. քանզի ՚ի գլո-
րելն անյուսանալ ոչ[1] այլ ինչ է, քան Թէ ասել՝ որ գլո-
րիցէն ոչ յառնիցէ: Ա՛ի աղաչեմ, մի այնքան ՚ի մեզ
հեղգես զցաւան: Ա[յ]ս ասեմ այժմ եԹէ քանամեայ ու-
նէիր զցաւս, այլ յոլովս արարեր և զնմա ժամանակին ՚ի
Արիստոս կեցեր, ՚ի վերջին ծերուԹեանն զայդոսիկ
ախտացար դժուարուԹիւնս, և ոչ յայնժամ անյուսա-
նալ էր բարւոք. այլ ՚ի միտ առնուլ որ ՚ի խաչին աւա-
զակն արդարացաւ, և որք ՚ի մեռսանեերորդ ժամուն
գործեցին և բովանդակ աւուրն առին զվարձն: Օ ի
զոր օրինակ ոչ է բարւոք որ ՚ի վերջին ծերուԹիւնն

1 Պակասէր յօրինակին ու . . . ու յոռնիցէ. յաւելաւ ՚ի յուսէն:

կործանիւն անյուսանալ՝ եթէ ողջամիտ իցէն, այնպէս և զգուշագոյն՝ այդպիսի յուսով անանիլ և ասել, եթէ առ ժամ մի վայելեցից՝ ի հեշտութենէ կենցաղոյս, և զինի սուղ ինչ ժամանակ աշխատեալ՝ զամենայն ժամանակացն ընկալայց զվարձս։ Այլեւս զի բազում անգամ ասելիր յորժամ զքեզ յոլովակի խրատէին՝ ի դարոցն երթալ, եթէ՝ ի փոքր ժամանակիս յայս կործանեցից զկեանս իմ, զինչ պատասխանի տաց նմա որ ասացն՝ մի կար մընար, փութա առ տէրն, մի յապաղեր օր ըստ օրէ։ Օ այնպիսի խորհուրդ ստանալով կապեա զաւազակն. քանզի այնպէս ասաի զմեր զերս Ձանապարհաց կոչէ Քրիստոս՝ ի ձեռն անգիտութենէ գալ հասանել՝ ի վերայ։ Օ մնաւ ած[1] զաշխարհիս զհոգս, զառանձին և զհասարակաց լեալս, զիշխանաց զերկիւղս, զքաղաքացեաց նախանձ որ մինչ՝ ի վերջին վտանգն հասանէ, զաշխատութիւնս և զտառապանս, և զծառայից վայելուչ փաղաքշանս, և որ ոչ հպատակ ստրկացն յարմարի, զաշխատութեանց պտուղ աստուստ վախճանեալ քան զոր[2] ոչ ինչ լինի վտանգաւոր. յոլովից և ոչ վայելել դիպեցաւ յաղագս որոյ տարժանեցանն. այլ զառաջինն զհասակն յաշխատութիւնս և՝ ի վտանգս ծախելով, յորժամ յուսացանն ընդունել զվարձս՝ անցեալ գնացին ոչ ինչ ընդ ինքեանս ունելով։ Քանզի եթէ երկրաւոր թագաւորս յետ բազում վշտաց համբերելոց և յոլովս նահատակեցելոց՝ ի պատերազմինն՝ հազիւ որ տեսցէ համարձակ, զինքրդ ապա հայել կարասցէ յերկինսն որ զամենայն ժամանկան այլոց եկաց և զինուորեցաւ։ Ո՞չ ևս ախորժեսցես զմտաւ ածելով զկնոջ և զմանկանց և զծառայից։ Ո՞ տանգաւոր է ոչ ստանալ որդիս, ցաւալի է և ստանալն. քանզի մինն մնոտի ամուսնութիւն է, և միւսն դառն ծառայութեան համբերեալ։ Իւանդացաւ մանուկն, երկիւղ և ոչ փոքր. վախճանեցաւ տարաժամ, սուգ անմխիթար. և ըստ իւրաքանչիւր ուրուք հասակի զանազան հոգք յաղագս նոցա, աշխատութիւնք և երկիւղ։ Ժնդակ է զաղքատն առնուլ կնոջ, դժուարին է և զձոխն. քանզի մինն կինչան

1 Պակասէր յօրինակին Ջմաս- ած. յաւելաւ՝ ի յունէն։

2 Պակասէր ման պղր։

ՀՆասէ, իսկ միւսն 'ի ՀոխուԹիւնս և յաղաւաԹիւնն։ Այս զինչ պարտ և արժան է ասել զծառայիցն չարիս։ ԿեաՆք իցեն այսոքիկ, ով Թէոդորոս, որ յայնքան բաժանեսցի Հոգին, այնքանեաց ծառայէ և նոցին կեայ, և ինքեան և ոչ երբեք։

Ա՛ն զինչ յայսցանէ օգուտ է. և զքեզ ինքն յաղագս այսոցիկ վկայ կոչեմ։ Վասնզի յորժամ զսակաւ ժամանակն զայն կամեցար յալէկոծուԹեանց կենցաղոյս զքեզ աղատել, զպատերս յորքան ուրախուԹիւնս և 'ի հրձուանս վայելեցեր։ Վասնզի ոչ է խակ ազատ ոք, այլ միայն որ 'ի Վրիստոսն կեայ. այնպիսին և քան զամենայն չարիս գեր 'ի վերոյ անցեալ եկայ. յորժամ զերկել զինքն ոչ կամիցի, այլ ոք այնպիսուՆի միտս առնել ոչ երբեք կարէ, այլ և անըմբռնելի. ոչ տուգանք ընչից ոչ պիծեցուցանեն, քանզի ուսաք եԹէ ոչ բերաք ինչ յաշխարհ և ոչ տանել կարասցուք. ոչ ցանկուԹիք պատուասիրուԹեանն և փառաց ըմբռնեալ լինի, ոչ 'ի Թշնամանել ուրուք տխրի, և ոչ տանջեալ՝ զայրանայ։ Վ'ի ևեԹ և քրիստոնէիցն Հոգ՝ երկիր պագանել ՀՆ. իսկ այլոցն ամենայն, որպէս ընչիցն կորուստ, 'ի հօրէ որբ ՀՆալ, զվերջինն վտանգս ընդունել, ոչ ինչ կարծիս լինել զժնդակս։ Յորմէ ամենեքեան սարսափեն՝ զաստուածն 'ի բաց գնալ, այսոքիկ են այսպիսուՆ առանձինն կեանք։

Օ՛ի զոր օրինակ 'ի կատարս դիտանոցի որ ելանել լաւ տեսանիցէ զծով և որք 'ի նմանն նաւեն, զմանն յալէկոծուԹեանց ընկղմեալս և զկեսս 'ի վերայ իրեաց անկեալս, զայլս այլուստ Հեպեալ և 'ի յայլմէ կողմանէ բերեալս իբրև զկապանաւոր 'ի հողմոյն բռնուԹեամբ, զյոլովս ընդ անդնդովքն լեալս, և զայլս 'ի վերոյ տախտակաց և կամ զայլոց իրիք նաւին բերեալ արտաքս, զաղաղումն փոխանակ նաւի և զեկաց ձեռօք վարեցեալս, և զմանսն եգեալս 'ի վերոյ աչեացն. բազմատեսակ լինի և բազմատեսակ ԹշուառուԹիւն. նոյնպէս և որ 'ի Վրիստոս կոչեցեալ է, խռովուԹեան կենցաղոյս և ալէկոծուԹեանց արտաքոյ զինքն արարեալ՝ նստի 'ի բարձրաւանդակի և յամուր տեղւոջ։ Վ՛ան զի զինչ զգուշագոյն քան զմի Հոգ ևեԹ ունել՝ ԹԷ "Վ'րպէս Հաճոյ լիցի ՀՆ,,։

Տես, ով Աֆոդորոս, զնաւաբեկութիւնս. և աղաչեմ փախիր ՚ի յանդնդոյն, փախիր յալեկոծութենէն, և ՚ի բարձրագոյն տեղին ժամանեա՝ ուստի ոչ ըմբռնել։ Յարութիւն լինելոց է, ով Աֆոդորոս, և դատաստան, ատեան մեզ աստուստ ելանելով կայ մնայ. "Կանզի ամենեցուն մեզ պարտ է մերձ կալ ՚ի բեմն Քրիստոսի,,։ Ես մնամ սպառնացաւ զգեհենն, և ոչ վայրապար այնքան բարիս պատրաստեայ։

Ատուեր է և քան զԿովհանի ոչ ինչ լաւագոյն կենցաղոյս իրք, յորով երկիւղիւք լցեալ և բազում վտանգիւք, վերջին ծառայութեամբ։ Մի առժեսցիս զայս և զայն զյաւիտեանն. իշխանութիւն է քեզ զերկաւեան շահել՝ եթէ ախորժեսցես, որ գիտեսդ զի և զասիսս շահին որ ՚ի Քրիստոսն կեան. որպէս վարդապետէ Պաւղոս առելովն "Ես ՚ի ձեզ խնայեմ,,. և դարձեալ. "Օ՜յս ՚ի ձեր յօգուտն ասեմ,,։ Տեսանես զի և աստ քան զամենացեալն գերագոյն է որ զտեառն Հոգայ։ Ես երթալոյն անդր ապաշաւել։ Ես ոք ըմբռիշ յորժամ վախճանեսցի հանդիսն և վախճանեսցի աեսարանն՝ մրցել կարասցէ։ Օ՜յսօսիկ միշտ զմտաւ ածէ, և զսուր սուսերի թշնամանոյն խորտակեա, որալ զբազումն սպանանէ. այս է զգլորելոյն հատանել զյոյս. զօրաւորագոյն քան զայն զկնի՝ որալք կառչի՝ ոչ ունի։ Այլ զայնօսիկ զկապանան եթէ կամեսցուք, ՚ա՜յ հնարհիւն խզել կարեմք վաղվաղակի։

Պիտեմք զի ըստ չափն արտաքս ելի Թղթոյս. այլ ներեա, վասն զի ոչ կամաք ընդ այն անցեայ, այլ ՚ի տըրտմութենէ և ՚ի սիրոյ հարկեալ, այլ յաղագս որոյ և բըռնադատեցին զնս զայս Թուղթս գրել։ Աֆպետ և բազումք խափանէին ասելով, գոգաբեայ ՚ի մնոտի աշխատութենանց, ՚ի վերայ վհմաց սերմանես ասէին ինձ, բայց ես ոչ ուշաք լսայ. քանզի յոյս, ասացի առ իս ինքն, կամելոյն ՚ա՜յ կալայց. սակայն զինչ Թուղթ եթէ զոր ոչն ըղձանայցեմք դիպեսցի, զի ՚ի բամբասանացն ձնդողիցեմք և ոչ ևս լինիցիմք չարք. այն որ յայսմ ծովու յորժամ զարուեստակիցն տեսանիցեն ՚ի նաւէ ՚ի բաց անկանելով՝ որ յալեկոծութենէն քակիցի, ՚ի վերայ տախտակացն՝ բերեալք լինելին, առագաստ սփռեն և հասատեն ընկենուն և ՚ի մակոյկն ելանեն, յանդիսանալ ՚ի

Թշուառութեանցն ապրեցուցանել ձեզն արկանեն. իսկ եթէ ոչ կամիցին նոքա, ոչ եւս այնուհետեւ նոցա կորըստեանն ազագաւ բաղձաղեսցեն զրքապրեցուցանել ձեզ նարկեցին:

Ա՛յսօրիկ՝ ի մէնջ. հաւատամ զի ընդհօքն Քրիստոսի եղիցի և քո, և դարձեալ վայելչական զքեզ տեսցուք յերամին ՚ի, ողջ զքեզ ՀՀմարիտ ողջութեամբն վաղվաղակի ընդունիցիմք ազօթիւք սրբոց, ով սիրելի զլուխ: Եթէ քեզ բանս մեր իցէ ախորժելի, և ոչ ամենևին զմեզ ՚ի յիշատակէ արտաքս Հանել, գրել արժանի արա զմեզ, քանզի ամենևին զմեզ զուարճացուցանես զայդ առնելով:

ՀԱՆԴԵՐՁԱԿԱՆ ՄՏԱՆԵԼ Ի ՍՈՒՐԲ ՓԱՌԱՍՏՆԵՐԵԱԿՈՆ

ՅԱՂԱԳՍ ՊԱՀՈՑՆ ԵՒ Ի ՅՈՎՆԱՆ *

Պայծառ մեզ այսօր տօնս և պայծառագոյն սուրբքանն Ժողովս. և զինչ իցէ պատճառ: Պահոց ուղղութիւն զայսօրիկ գիտեմ ես. պահոց ոչ մերձակայիս, այլ հանդերձելոյն: Ա՛յսօրիկ և նախ քան զայս պղերգասցեալս, այսօր ՚ի մայրենի ձեռս էած: Այլ եթէ վըստահացեալն միայն այնքան արար մեզ զփոյթն, երևել

* Սկսաւ երեսուն մարդ եր երիւրոյ պաշտօնութիւնն է նորա հանդերձի յաւետ-
ներգմանութիւնն լուել, երկն անխոտոր լուացով ուրէք ուրէք, ըհպէպ և ալ
և ձգիրիպ ղաբա խմասիցն պահէր ընդ յերին գործոց յօրինուած, յորմէ կայ
վերնոյն համաչոյն եղելոց ընդ յոյն բնա- երկնաւոր օրհնակ մ հնագոյն, և այլ
գրեն. այլ յայտնապես երևի ղի պար- լուր երկրագիր:

Յաղագս ապաշխարութեան յառաջ քան զմուտս պահոցն և վասն Յոյնանոյ և Նինուէացւոցն:

Երևելի և վայելուչ է տօնս, և վեհագոյն և բարձր ըստ սովորութեան աւուրցդ Ժողովս այս. և զինչ իցեն պատճառք: Բայց ես ասեմ, Թէ ՚ի պահոցն իցեն կարգք ուղղութեան. պահոց ոչ մծաւորիս, այլ ուրուք անյունիցն: Զի նա է որ Ժողովեացն զձեզ ՚ի հայրենական տունս կայս. և նա է որ յառաջ անկեալեդ էիք և վհերոտաք, զորս այսր անդր՝ իբրև զմայր ՚ի գիրկս իւր ամփոփեաց և ընկալաւ: Զի եթէ առ ՚ի սպասել և անկ ունել այսպիսի ինչ փոյթ յանձին եառ ունել իսկ յորժամ եկեսցէ և հասցէ՝ քանի և առաւել ցուցցէ ՚ի ձեզ

և մերձ լեալ, ոչքան գործիցէ մեզ զերկիւղածութիւնն։ Այնպէս և քաղաք յորժամ իշխան ոք հանդերձեալ իցէ մնանել, ահիւ զամենայն զղջերգութիւնն ՚ի բաց դնէ և առաւել ևս ՚ի փոյթ յորդորի։

Այլ մի՛ ոք վարկցի ահաւոր իշխան զպահն ըսելով. քանզի ոչ ձեզ է ահաւոր, այլ դիւացն բնութեան։ Այ. թէ լուանաս ոք իցէ, ցոյց նմա զպահոցն դէմս, և քան զքարինս անշարժագոյնս կայ ինայ յերկիւղն մածեալ և իբր կապանօք իւիք արգելեալ. և յաւէտ՝ յորժամ տեսանիցէ ընդ պահն խառնեալ զքոյրն պահոց և ըզլծակից զաղօթսն. վասն այնորիկ և Պրիստոս ասէ. “Զդդ այդ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահօք,,։ Այդ յորժամ զպատերազմունս փորձութեանս այնպէս հալածէ, և թշնամեաց կենաց մերոց այնպէս ահաւոր է, սիրել զնա և ողջունել՝ այլ ոչ երկնչել պարտիմք. զի թէ երկնչել պարտ իցէ, յորկորսուածենէ և յարբեցութենէ, և ոչ ՚ի պահոց։ Վանզի նա զմեր ձեռս յետս կապեաց բռնութեամբ ախտիցն իբրև սիկին ոք գժնդակ, և գերեալս մատնեաց. իսկ պահք ծառայեալս և կապեալս գտանելով՝ արձակէն ՚ի կապանաց, և վճարելով ՚ի բռնութենէն յառաջին ազատութիւնն ածէն վերստին։ Յորժամ և ընդ թշնամիսն մեր

զերկիւղ և զհամբերութիւն։ Այնպէս և քաղաք յորինի և պատրաստի առ ՚ի սպասել և անկ ունել ահաւոր իշխանի, և վաղվաղակի ՚ի բաց թօթափեալք զծուլութիւն՝ պատրաստին յերկիւղ և ՚ի զգուշութիւն։

Բայց զպահս և զսրբութիւն մի՛ ոք համարեսցի յերկիւղ և ՚ի տագնապութիւն. զի ոչ եթէ ձեզ է ահագին, այլ բնութեան դիւաց։ Զի թէ պէտ և լուանահար ոք իցէ, ցոյց նմա զօրինակ պահոց, և գտանի քան զվէմ անշարժ, տագնապեալ յերկիւղէ և սարսեալ և որպէս երկաթի կապանօք կապեալ, և մնասանդ առաւել ևս յորժամ տեսանիցէ զզուարճակիցն իւր զաղօթս. վասն այսորիկ և Քրիստոս ասէր՝ թէ «Աղջս այս իւիք ոչ ելանէ, բայց եթէ աղօթիւք և պահօք»։ Իսկ արդ յորժամ թշնամեաց վերկութեան մերոց և հակառակորդին կենաց մերոց այսպէս ահաւոր իցէ և ահագին, տապա արժան է սիրել զնա և մերձենալ առ նա, ոչ եթէ ակն ինչ ածել ՚ի նմանէ. զի թէ խորշել արժան է, յորկորսուածենէ և յարբեցութենէ, և ոչ ՚ի պահոց։ Զի նա է որ կապեաց զմեզ ձեռակապօք, և մատնեաց զմեզ ՚ի ձեռս բռնութեան ախտից. սիրեաց և հնազանդեցոյց որպէս և զդերեալ ծառայս։ Իսկ պահք և աղօթք ազատեցին զմեզ ՚ի ծառայութենէնն և արձակեցին զմեզ ՚ի կապանացն և վճարեցին զմեզ ՚ի բռնութենէն և անդէն յառաջին ազատութիւնն նուաճեցին զմեզ։ Իսկ արդ յորժամ ընդդէմ

պատերազմի և ՚ի ծառայութենէն վճարելով յառաջին աղաւութիւնն վերատին ածէ, զինչ այլ մեծ օրինակ ինդրեսցես սիրոյն որ առ ազգս մեր է. քանզի մեծ սիրոյ լեալ Թուին այսոքիկ՝ զանձինս սիրել, զմեզ ազատել։

Ախորժէս ուսանել որքան զարդ մարդկան են պահքըն. զմեռաւ ածէ զերանելին և զհրաշալի միաբանութեացն վարս, քանզի նոքա որ ՚ի միջոցիս ամբոխք են՝ փախչելով և ՚ի գագաթն լերանց ելանելով, զնաղաղական տագնաւարան յանապատին իբրև յանքոյթ նաւահանգստի հարկանելով, զպահն կենակից և հաւատարիմ ամենայն վարուց իւրեանց ընկալան. յաղագս որոյ և հրեշտակս զնոսա ՚ի մարդկանէ արար. և ոչ զնոսա միայն, այլ և քաղաքս որքան գոանէ մերձեցեալ ՚ի յինքն՝ առնոյն ինքն իմաստասիրասէրն Թեան բարձրութենն տարեալ հանել։ Ասան զի Նովսէս և Նղիաս՝ աշտարակք մարգարէին ՚ի հնումն Թեպէտ և այլովքն կին պայծառք և մեծամեծք և յոլովս ունէին համարձակութիւք, յորժամ կամէին մերձենալ առ Ած և խօսել, որպէս և մարդոյ կարողութիւն, ՚ի պահան ապաւինէին և պահոցն ձեռօք մերձենային առ նա։

Յաղագս այսորիկ և Ած զմարդն առնելով ՚ի սկզբանն՝ վաղվաղակի զնա տարեալ աւանդեաց ՚ի պահոցն ձեռս.

Թշնամեաց մերոց կայցեն և ՚ի ծառայութենէ վճարիցեն և յազատութիւն ձգիցեն զմեզ, ապա զինչ ևս աւելի կամիցիս զյոմէ առնուլ զսէրդ նոցա զոր ունին առ մեզ։

Արդ կամիցիս ուսանել Թէ որպիսի զարդք են մարդկան պահք և աղօթք, և կամ որպիսի պահպանութիւն և զգուշութիւն։ Եւ արդ եթէ ՚ի միս կամիցիս առնուլ և խմանալ, սովին իսկ զարմացիր զվանականացն կարգն Թէ զնարդ նոքա որոշեալ և զատեալ իցեն ՚յամենայն ղբօսանաց, և հեռացեալ մերժեալ են ոմանք ՚ի գլուխս լերանց, և ոմանք տապատարօք յանապատի դադարեալք, իբրև ՚ի նաւահանգստի խաղաղութեամբ բնակեալ են. զնոսա առեալ ունին շահակիցս և հաղորդս ամենայն կենաց իւրեանց, և նոքինքք իսկ եղոյց զնոսա հրեշտակս ՚ի մարդկանէ. և ոչ եթէ միայն զնոսա, այլ և որք ՚ի քաղաքս բնակեալ են և մերձ են յաղօթս և ՚ի պահս, ՚ի նոյն բարձրութիւն վարուց հանդիսին սպասին։ Որպէս Մովսէս և Եղիա գլուխք աշտարակաց ՚ի հին կտակարանաց, և որք յայլոց ևս եղեն երևելիք և հզօրք, որք ունէին զհամարձակութիւն առ սէրն Աւ։ Զի յորժամ կամէին մերձենալ առ նա և խօսել ընդ նմա, որպէս և մարդոյ հնար է, զնոսա առաքեան առնէին առ նա։

Ասան այսորիկ և Ած յորժամ առեղծ ՚ի սկզբանէ զմարդն, վաղվաղակի անդէն և անդ պահոցն պատուիրանաւն հրաման եւս նմա, և

և իբրև գԹածի մեր և քաջ վարդապետի վնորա փրկու-
Թիւնն ընձեռեաց պահոյն . քանզի " չամ փայտ կերի-
ցես , ասէ , բայց ի փայտէ գիտութԹէ բարւոյ և չարի ոչ
կերիցես ,, , պահոց է տեսակս : Արդ եԹէ ի դրախտին
հարկաւոր էին պահքն , և առաւել արտաքոյ դրախտին .
եԹէ նախ քան զվէրն պիտանացու էր դէղն , առաւել և
զինի վէրին : Եւ եԹէ ոչ երբեք պատերազմի ընդ ցանկու-
Թեացն յարուցելոց , վասն զի գԺնդակ էր մեզ վէրն՝ յո-
լովից յայլոց զինի այնոցիկ ցանկուԹեացն որ ի դիւացն է ,
հարկաւոր պահոյն կուռակցու Թիւն գտաւ : Եւ եԹէ այսմ
ձայնի էր լուեալ Ադամ՝ ոչ արդեօք լսէր երկրորդ ձայ-
նին որ ասէր . " Հող էիր և ի հող դարձիս ,, : Այլ
վասն զի ոչ լուաւ , յաղագս այնորիկ մահ և աշխատու-
Թիւնք և հոգք և արտաքսիւնք և կեանք որ քան զա-
մենայն մահ ծանրագոյնք . նորին աղագաւ փուշ և տա-
տասկ , յոյն սակս քրտունք և կեանք տաժանաւորք :

Ցեսէր զնարդ ՚ած զայրանայ յորժամ պահքն Թշնա-
մանին . ուսիր և որպէս հրաման ի պահել պահոյն : Ոչ ի
զոր օրինակ ի Թշնամանեն՝ մահ ի վերայ Թշնամանո-
ղին պատուհաս , նոյնպէս և ի պատուէրն՝ զմահ ի բաց
եհան : Քանզի կամելով քեզ ցուցանել զերայն զօրու-
Թիւն , եւ իշխանուԹիւն պահոց զինի հրամանին , յետ

որպէս գԹածի մեր և օրինաւոր վարդապետիս նովին նմին յանձնե-
ցոյց նմա : Քանզի յորժամ ասէ Թէ « Քամենայն ծառոց պտղոյ դրախ-
տիդ կերիջիք , իսկ ի ծառոյն գիտութԹեան չարին և բարւոյն մի ուտի-
ցէք և մի հուպ լինիցիք » , այսու եղոյց զօրինակ պահոյն : Զի եԹէ
ի դրախտի անդ պատուական և կարևոր էին պահքն , որչափ ևս ա-
ռաւել արտաքոյ դրախտին : Զի եԹէ յառաջ քան զհարուածոյն յար-
դոյ էին դեղքն , քանի ևս առաւել յետ հարուածոյն : Զի եԹէ մինչ
չև գրգռուԹիւն ցանկուԹեանցն պատերազմեալ էր՝ ի դէպ և պատ-
շաճ էր զինն , որչափ ևս առաւել յետ պատերազմի ցանկուԹեանցն
գտանէր . զի ընդդէմ դիւաց մեծ հնարք օգնականուԹեան են պահք :
Զի Թէ այսմ ձայնի լուեալ էր Ադամ , ապա ոչ ևս լսէր երկրորդ
բարբառոյն որ ասէր Թէ « Հող ես և անդէն ի հող դարձիր » : Այլ
սրտիվեաւ սատնագանեաց , վասն այնորիկ մահ և աշխատուԹիւնք և
վայրսաւք և տրտմուԹիւնք և կեանք ծանրագոյն քան զմահ եղան .
վասն այնորիկ փուշ և տատասկ , վասն այնորիկ ցաւք և երկունք և
կեանք աշխատուԹեան :

Ցեսանես զնարդ բարկանայ ՚ած առ ի Թշնամանել պահոցն . և ու-
սիր դարձեալ Թէ զնարդ ուրախ լինի առ ի պատուել պահոցն : Քան-
զի յորժամ Թշնամանեցաւ , պատիժ զմահն եդ ի վերայ Թշնամանո-
ղին . այլնպէս և յորժամ պատուեցաւն , զմահն ապգել : Արդ և կամի
ցուցանել քեզ զզօրուԹիւն իւրոյն , զոր ետ իշխանուԹիւն նմա յետ

վճարելոյ ատենին զածեսլան ՚ի մահ ՚ի միջոցէ ձանա-
պարհէն ՚ի քաց յափշտակել և ՚ի կեանս վերստին ա-
ծել։ Այլ զայս ոչ յերկուս և կամ յերիս և կամ ՚ի
քսան մարդիկ արար, այլ ՚ի բոլոր բազմութեն նինուէա-
ցւոց քաղաքին մեծ և սքանչելի, որք ՚ի գուժիլեալ կայ-
ին, առ նմին ինքն ՚ի խորխորատին խոնարհեցուցանել
լով զգլուխն, զ՚ի վերուստ բերեալ վերն էին պատրաստ
ընդունել, զոր օրինակ իբրև ՚ի վերուստ զօրութիւն ան-
կեալ ՚ի վերայ նոցա յափշտակեաց զնոսա ՚ի մարգա-
րէին ձեռաց։ Այլ եթէ բարւոք թուի, նմին իսկ պատ-
մութեանն լուիցուք։

“Այլ եղև բան տեառն առ Յովնան ասելով. արի և
գնա ՚ի Նինուէ քաղաք մեծ,,։ Ընդէն վաղվաղակի զնա
մեծութեամբ քաղաքին պատկառեցուցանել կամեցաւ,
զհանդերձեալ փախուստն նորա տեսանելով։ Այլ լուի-
ցուք և քարոզութեանն։ “Երեք ևս աւուրք, ասէ, և
Նինուէ կործանեսցի,,։ Որ աղագաւ առնել կամելով
զգժնդակագոյնն՝ յառաջագոյն ասէ. զի մի արասցէ
զոր կանխաւն ասաց։ Այսոյ այնորիկ և զգեհենին ըս-
պառնայաւ, զի մի ՚ի վերայ ածցէ զգեհենին. զուրհու-
թեցուցանեն զձեզ, ասէ, բանքն, և մի արամեցուսցեն իւ-
քեանս։ Ընդէր զկանխաւ սահմանեալ օրն այնպէս ՚ի նե-

հրամանին և զինի նեղութեանցն. զոր վտարանդեալ էր մահուն, ՚ի
միջոց առ, ՚ի նմանէ ՚ի քաց կորզեաց և անդէն ՚ի կեանս հաստատեաց
և կարգաց։ Եւ զայս ոչ եթէ երկուք և կամ երիք և քսան արամբ,
այլ զբազմութեանց և զնաւանիձամանէ զնինուէացւոց զղջմանալն և զմեծ
քաղաքն, որք ՚ի ծուխս ընկիճեալ կային, և խոնարհեցուցեալ զգլուխս
իւրեանց ՚ի կործանումն խորխորատի, սպասեալք ակն ունէին ՚ի վե-
րուստ հարուածոցն բարկութեան, ապա յանկարծակի վաղվաղակի
զհետ և զինի եղեալ հասանէր զօրութիւնն, և անդէն յետս ընդ
կրունկն զհրաման պատուհասին դարձուցանէր. կորզէր և ձգէր և ՚ի
ձեռաց բուռն պատուհասին ՚ի քաց հանէր, և անդէն ՚ի կեանս դար-
ձուցանէր։ Իսկ արդ այսուհետև թէ կամ իցէ ձեզ ունկնդիր լինել
պատմութեանն, արասցուք սկիզբն և ձառխս։

« Եւ եղև, ասէ, բան տեառն առ Յովնան և ասէ. արի և գնա ՚ի
Նինուէ քաղաք մեծ »։ Որով և մեծութեամբ քաղաքին կամի իսկ զնա
՚ի հաւան ածել, զորոյ և զփախուստն յառաջագոյն գիտէր։ Այլ նախ
լուիցուք քարոզութեանն։ « Յետ երից ևս աւուրց, ասէ, և Նինուէ
կործանեսցի »։ Արդ ընդէր արդեօք յառաջագոյն ասիցէ զոր կամիցէ
զահագինն առնել. յառաջ ասէ, զի մի զյառաջագոյնն արասցէ։ Այն
այսորիկ իսկ գեհենին սպառնայաւ, զի մի ՚ի գեհենին ընկղմեսցին. զար-
հուրեցուցանէ զմեզ բանիւք, զի մի գործովք դառնասցէ։ Կամ ըն-
դէր արդեօք ջամանեակ հրամանին ՚ի նեղ և ՚ի նուրբ արդել. զի զնաս-

ղապոյն ժամանակ հաւաքեաց. զի և զնիհուէացւոցն լսել ցեն որք կարացին զերիս աւուրս զայնքան մեղանացն բարկութիւնն լուծանել. և ընդ այ մարդասիրութիւնն աքանչանայցես, որ երից աւուրց ապաշխարութիւն բաւական եղև յաղագս այնքանեաց յանցանաց։ Այս դու մի կործանիցիս յանյուսութիւն, թէպէտ և բիւր անգամ իցես մեղուցեալ։ Օ՜ի զոր օրինակ հիւանդամիտն և տաղտկացեալն թէպէտ և բաղում ժամանակս առնուցու յապաշխարութիւն՝ ոչ ինչ մեծ գործէ և ոչ հաշտեցուցանէ զնա ընդ ինքեան յաղագս պղերգութեանն, նոյնպէս և կանգնեալն և որ յօժարամտութէն եռայ և հանդերձ բազում փութով զապաշաւանսն ցուցանէ, ՚ի սուղ ժամանակի զյոլով ժամանակացն զյանցանսն ջնջել կարէ։

Ո՞չ երից անգամ Պետրոս ուրացաւ, ո՞չ հանդերձ երդմամբ երից, ո՞չ յաղաղինոյ աւրումն ՚ի վաթսար բանից զարհուրեցաւ։ Այս ասա զինչ. տարեաց ինչ բազմաց կարօտացաւ յապաշխարութիւն իւր. և ոչ երբէք. այլ ՚ի նմին գիշերի գլորեցաւ և յարեաւ, և ըզվէրն և զդեղն ընկալաւ. հիւանդացաւ և յառողջութիւն վերստին եկն։ Օ՜իմբդ և կամ որոմ օրինակաւ. եղաց և ողբացաւ. մանաւանդ եթէ ոչ եղաց վարկպաբաղի, այլ հանդերձ յոգն փութով և սիրով։ Յաղագս որոյ և աւետարանիչն ոչ ասաց եթէ եղաց պարզաբար,

Ժագուժ ազգին նինուէացւոց ուացիա զարուեստ, որք երկրորդական աւուրքն կարացին զայնպիսի մեղաց բարկութիւն յածուցանել. և զնոյ մարդասիրութենէն զարմացիս, երրորդ աւուրքն բաւական եղեալ վասն անչափ յանցանացն։ Եւ դու մի կասեսցես և հրաժարեսցես, թէպէտ և բիւր անգամ իցես յանցուցեալ։ Զի որպէս և ոք որ ակարն և Թոյլն է ՚ի մտաց՝ թէպէտ և բազում ժամանակս կայցէ յապաշխարութէն՝ ոչ ինչ կարէ օգուտ չահել անձին իւրում, և ոչ զնա ընդ իւր հաշտեցուցանել վասն Թոյլ կամաց իւրոց, նոյնպէս և որ փոյթն և յորդորն է և քաջալերութեամբ կեայ և բազում աշխատութեամբ զապաշխարութէն ցուցանիցէ, կարէ ՚ի սակաւ ժամանակի բազում ամաց զմեղս յանցանացն խափանել։

Ո՞չ ապաքէն Պետրոս երդմամբ երից ուրացաւ, ո՞չ ՚ի միջէ յաղէ կակին աղախնոյ բանից անդրծեաց և երկեաւ։ Եւ ապա զինչ. բազում ինչ ամս արկ ՚ի վերայ ապաշխարութեանն. և ոչ ուրեք, այլ ՚ի նմին և ՚ի նոյն գիշերի գլորեցաւ և կանգնեցաւ. զի զվէրսն առ և սխատացաւ, և դարձեալ բժշկեցաւ և առողջացաւ։ Եւ եթէ ասես եթէ զհաւրդ և կամ որպէս, եղաց, ասէ, դառնութեամբ. և ոչ եթէ ընդ վայր և վայրապար, այլ բաղում, ասէ, փութով և ջերմու-

այլ եթէ "Ելայց գառնապէս ,, : Եւ արդէս զօրութիւն արտասուացն էր , և ոչ նմին բան յանդիման կարէ կացուցանել . այլ նոցին իսկ ելք ցուցին յայտնապէս : Քանզի չէ՞ր ինչ չար կործանմանն այնորիկ , զի ուրացութեանն և ոչ մի ինչ չար է հաւասար , այլ սակայն զկնի այնքանուց չարի գարձեալ զնա յառաջին պատիւն էած վերստին , և զվերակացութիւն եկեղեցւոյ ամենայն աշխարհի ընձեռեաց նմա . և որ մեծն է քան զամենայն , եղոյց մեզ զնա քան զամենայն առաքեալսն առաւել ունել սէր առ տէրն . վասն զի ասէ . "Պետրոս , սիրէ՞ս զիս առաւել քան զդոսա ,, : Յամիկ և ոչ բան մի լինի հաւասար յառաքինութիւնս :

Ո՞ւ մի ասիցես եթէ նենուէացւոցն յիրաւի ներեաց բարբարոսաց և անմիտ մարդկանն , քանզի "Ծառայ , ասէ , որ ոչ գիտէ զկամս տեառն իւրոյ և ոչ առնէ , տանջեսցի սակաւ ,, , զի մի զայսոսիկ ասիցես , այդպիսիկ ազգաւ զՊետրոս քեզ՝ի մէջ ած զծառայ՝ որ զկամս տեառն իւրոյ գիտէր . այլ սակայն և սա՝մերանչելով և ոչ վերջինն մեղս , տես առ որպիսի համարձակութեան բարձրութիւն վերստին եւ : Եւ արդ մի այսուհետև և դու ընդ մեղսն կործանիցիս . վասն զի զժնդակագոյն քան զմեղսն կալ ինձ՝ի մեղսն , և չար ևս քան զգլորումն՝ անկանել կալ

թեամբ : Վասն այնորիկ իսկ և աւետարանագիրն ոչ ասաց եթէ ելաց վայրապար , այլ « Ելաց , ասէ , դառնապէս » : Եւ որպիսի արդեօք էին արտասուացն այնը զօրութիւնքն , բանիւք ոք ոչ է կարող հաւատացանել . բայց ապա հանդէս իրացն յայտ առնէ : Ալ զհետ անաւրժան յանցանացն ուրացութեան , քանզի ոչ համեմատեն այսմ յանցանաց այլ յանցանք և կամ մեղք , բայց սակայն և յետ այսպիսի յանցանաց դարձեալ անգրկեն յառաքինի պատիւ փառացն կարգեաց և իշխան՝ի վերայ ամենայն տիեզերաց կացոյց , և գլուխ ամենայնի կացոյց զնա մեզ և առաւել քան զամենայն առաքեալսն : Զի տեսն իսկ նորա հանդէս լինի նմա առ տէրն իւր , որպէս և ասէ իսկ՝ եթէ « Պետրոս , սիրէ՞ս դու զիս առաւել քան զդոսա » : Քանզի՝ի վեր քան զայս և կամ եթէ նման սմին զինչ ևս այլ նկէ՝ի փոյթ առաքինութեան մտաց :

Քանզի մի ասիցես եթէ նենուէացւոցն յիրաւի և ըստ կարգի նեղեաց ած արանց խուժադուժ և ապիտաց , զի որպէս և գրեալն իսկ է թէ « Ծառայ որ ոչ գիտէ զկամս տեառն իւրոյ և ոչ առնէ զհրամանն նորա , արբցէ զան՝ բայց սակաւ » , զի մի զայս ասիցես , վասն այսորիկ ած քեզ զՊետրոս զծառայն իւր՝ի մէջ՝ որ գիտէր զկամս տեառն իւրոյ . բայց սակայն և նա թէպէտ և յանցեաւ զանհնարելի յանցանս , տես յորպիսի համարձակութիւն կամ՝ի պատիւ փառաց վերացաւ : Սոյնպէս և դու յորժամ մեղանչիցես , մի անկեալ վրխալեցես ամենայնիւ . զի անհնարելին և կարևոր մեղք այն են որք կան և ունան՝ի նմին :

'ի կործանմանն։ Ոչ այս և Պաւղոս ողբայ և սգայ, զայս սղոյ արժանի լինել ասէ. "Մի՛ գուցէ 'ի դալն իմ առ ձեզ, նուաստացուսցէ զիս Աստ, և սգացայց յաղագս բազմաց"։ Ոչ ոքք մեղուցեալ են պարզաբար, այլ յաղագս որոյ ոչ ապաշխարեցին 'ի կռապաշտութենէն և յանմաքուր գործոյ։ Իսկ ապաշխարութեանն ոչ իցէ արդեօք պատեհագոյն ժամանակ քան զպահոց ժամանակ։ Այլ երթիցուք վերստին 'ի պատմութիւնն։

Յուեալ զբանս զայսոսիկ մարգարէին, էջ 'ի Յոպպէ փախչել 'ի Թարսիս յերեսաց տեառն։ Որ փախչիս, ով Յովնան. ոչ լսար 'ի մարգարէէն որ ասէ. "Յո՞վ երթայց ես յոգւոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց"։ յերկինք, այլ տեառն է երկիր և լիութիւն իւր. իսկ 'ի գժոխս, այլ եթէ իջից 'ի գժոխս՝ մերձ ես, ասէ. այլ յերկինս, թէ ելանեմ, ասէ, յերկինս դու անդր ես. իսկ 'ի ծով, և անդ ընկալցի զիս ձեռ քո. որ և 'ի սմա իսկ եղև։

Բայց այնպիսի են մեղք, 'ի բաղում յանմտութիւնս արկանեն զմեր զանձինս. և իբրև արբեցութեամբք և խելագարութեամբ ըմբռնեալք, վայրապար և մտոտի բերեալ լինին, եթէ 'ի խորխորատ և եթէ 'ի գահավիժութիւն և եթէ այլ ինչ 'ի ներքոյ կացցէ՝ անկանին առանց պահպանութեան. նոյնպէս և ոքք 'ի մեղս

Չի զայս և առաքեալն իսկ ինքն տխրի և զղջանայ, զոյն սգայ և ասէ. "Թէ մի յորժամ գայցեմ, ասէ, առ ձեզ, նկուն ինչ առնիցէ զիս Աստ վասն ձեզ, և սուգ առեալ գառնիցիմ վասն բազմաց 'ի ձէնջ"։ Ոչ ասէ Թէ ոչք մեղանն լուկ, այլ ասէ՝ Թէ "Եւ ոքք ոչն զղջացան վասն գիւղութեան և պղծութեանն զոր գործեցին"։ Իսկ արդ վասն ապաշխարութեան որպիսի արդեօք ժամանակ 'ի դէպ լինելոց էցէ քան զժամանակ պահոցն։ Բայց արդ դարձցուք անդրէն 'ի նոյն ձառ պատմութեանն։

Քանզի յորժամ լուաւ մարգարէն զպատգամն, էջ Յոպպէն զի փախիցէ 'ի Թարսիս յերեսաց տեառն։ Յո՞ փախստական լինիս այր գու. ոչ լսար մարգարէէն որ ասէ. "Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց"։ ընդ երկինք, այլ տեառն է երկիր լրիւ իւրով. 'ի գժոխս, այլ "Թէ իջանեմ անդ մատ ես. և անդ, ասէ, ձեռն քո առաջնորդեացէ ինձ և ալ քո ընկալցի զիս"։ որում և եղև իսկ այս։

Բայց քանզի այսպիսի են մեղք, որ 'ի բաղում մոլորութիւն անմտութեան ընկղմեն զանձինս մեր. որպէս արբեցութիւնք և գինաւթութիւնք ունիցին զոք, և նա ընդ վայր և վայրապար բանգաւշեալ շրջեսցի, և եթէ պատահեսցէ նմա խորխորատ կամ քարանձաւ և կամ ինչ և իցէ վնաս, յանկնայ և յաներկիւղ անկեալ կործանես-

յարձակին, իբրև դժնդակ ինն արքեցութեամբ գոր-ծոյն ցանկութեամբ ըմբռնեալք՝ ոչ գիտեն զինչ գոր-ծեն. ոչ զմերձակայս և ոչ զհանդերձեալն տեսանեն։

Ի տեառնէ՛ փախչիս, ասա ինձ. սակաւ ինչ անասա, և նոցին իսկ չիրացն ուսոյիս՝ զի և ոչ յաղախինէն ՚ի ծո-վուն ձեռաց կարես փախչել։ Վասնզի միանգամայն ե-լանելով ՚ի նաւն, նա և ծովին զալիան յարոյց, և ՚ի բարձ-րութիւնան մեծ փութայր ամբառնալ. և զոր օրինակ ա-ղախին ոք բարեբարոյ զծառայակից իւր գտանելով փա-խուցեալ գողանալով ՚ի տերունական ստացուածոյն՝ ոչ յառաջագոյն ՚ի բաց կայ, քան իւր ընդունողացն զնա ՚ի վերայ հասուցանելով, մինչև առեալ զնա ՚ի բաց գնասցէ, նոյնպէս և ծովին զծառայակիցն զիւր գտանե-լով փութայր բիւր իրս վտանգ նաւավարացն ընձեռել խռովելով և գոչելով. ոչ յատեան ձգեր, այլ ինքնա-ձեռն սպառնայր ընկղմել զնաւն, եթէ ոչ զծառայա-կիցն ՚ի բաց տացեն զնա։

Եւ ապա նաւորդքն զինչ այսոցիկ եղելոցն։ Ա՛ր-բրին, ասէ, հանուցին արտաքս ՚ի կարասոյն, այլ նաւն ոչ

ցն, սոյնպէս և որք ՚ի մեղս ըմբռնեալք էին՝ իբրև յարբեցութիւն ան-առակութեան ՚ի գործս ցանկութեան կապեալք և կաշկանդեալք, լքեալք և պաշարեալք են, և ոչ գիտեն զինչ գործեն. ոչ զմօտաւորս գիտեն և ոչ զհեռաւորն ճանաչեն և ոչ զաչերն զմտաւ ածեն։

Բայց դու այսուհետև ունկն դիր և անսա վայր մի և յիւրաց անտի առցես զհանգամանան։ Զի ՚ի ձեռաց ծովուն և ՚ի ծառայակիցն իւրմէ ոչ կարաց ապաստամբել և փախչել։ Զի մինչ չև էր նորա հասեալ ՚ի նաւն, և ծովին անդրէն զալիան կուտակեալ վերացուցանէր և բարձրա-ցեալ դիզանէր. և իբրև զծառայ տիրասէր և հաւատարիմ՝ զծառայա-կիցն իւր գտեալ իբրև զապստամբ և զփախստական, իբրև զգող և զա-ւազակ տերունական առացուածոյն, և ոչ ՚ի բաց կայ և հեռանայ յայնցանէ որ ասպնջական և վանաստէն լեալ էին նմա, և բազում եպերանոք [1] և գորովանօք [2] նկուն առնէ [3] զնա, մինչև հանեալ առնու-ցու ՚ի նմանէ տէրունական [4] զդիւան։ Նոյնպէս և ծովին գտեալ զծա-ռայակիցն իւր ճանաչէր և բազում ինչ իրօք աշխատ առնէր զնա, ամ-բոխեր ալիկեր բարկանայր. ոչ ՚ի գտատտան ձգեալ տանէր, այլ ինք-նին սպառնայր նմա և ստահեր առ ՚ի յընկղմել զնա և զտեղատուք նո-ցա, և բարկացեալ գոռալով բարձրանայր առ ՚ի յափշտակել զնաւս, եթէ ոչ զծառայակիցն իւր առեալ ՚ի դուրս տայցեն։

Եւ իբրև այս ամենայն լինէր, զինչ արդեօք առնէին նաւավարքն։ Ընկերցին, ասէ, զկարասի իւրեանց ՚ի նաւէ անտի, և նաւն ասկայն ոչ

---

1 Երկու օրէն. ՚ի երեսաբանօք։
2 Մի օր. գորովանօք։
3 Երկու օր. առնէին.. առնուցուսն։
4 Երկու օր. զգանձն տէրունա-կան զգեստսն. ՚ի նոյնպէս։

Թէթևանայր. քանզի բեռն ամենայն տակաւին ՚ի ներ-քըս կայր ինայր՝ մարդարէին մարմինն, ծանր բեռն, ոչ ըստ մարմնոյ բնութեան, վասն զի ըստ մեղացն ծանրութեան. և զի ոչ այնպէս ծանր և դժուարաբառնալի է քան զմեղսն և ստունդանելի: Լ՚սր աղագաւ Օ ա-քարիաս ՚ի դէմս կապարոյ տպաւորեաց զմեղսն. և Կա-ւիթ զբնութիւնս նոցա գրելով ասէ. "Նշօրէնու-թիւնք իմ գեր ՚ի վերոյ ամբարձան քան զգլուխ իմ, իբ-րև զբեռն ծանր ՚ի վերայ իմ ծանրացան,,: Իսկ Վրիա-տոս, որք յոլով ՚ի մեզս կացեալք էին, աղաղակէր նո-ցա. "Լսկայք ամենայն տաժանեալքդ և բեռնաւո-րեալքդ, և ես հանգուցանեմ զձեզ,,: Լ՚նոքիկ ըզ-նաւն ծանրացուցին յայնժամ և ընկղմել հանդերձեալ էին:

Իսկ Յովնան ՚ի քուն էր և խորդայր: Խոր էր քունն. բայց ոչ հեշտութեան, այլ տրտմութեան, այլ կացեալ մտաց, այլ տխրացեալ. վասն զի բարեմիտ ծառայքն վաղվաղակի զգան զյանցանսն, զոր և նա կրեաց. զի յետ գործոյն մեղանացն ծանեաւ զմեղացն դժնդակու-թիւն: Լ՚նպիսիք իսկ են մեղքն. զինի ծնանելոյն կա-տարելապէս, յայնժամ զերկունսն ՚ի վերայ ծնողի հոգ-ւոյն արկանէ ընդդէմ օրինաց մերոց ծննդեանս: Ո՛ան զի միանգամայն ծնեալք լինեմք զերկունսն լուծանեմք.

Թէթևանայր. քանզի ծանրութիւն բեռինն ՚ի նեղեաս անդր կայր, այս-ինքն մարմին մարգարէին. ոչ եթէ բնութիւն մարմնոյն էր ծանր, այլ յանցանք մեղացն էին քան զբեռն ծանր. քանզի ոչ ինչ է այնպէս ծանր և դժուարաբառն քան զմեղս և զապստամբութիւն: Վասն այ-նորիկ մարգարէն Զաքարիաս ՚ի դէմս կապարի նշանակէ զմեղս. և Դաւիթ մարգարէն զբնութիւնն նորա նշանակելով ասէ՝ թէ « Անօրէ-նութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծան-րացան ՚ի վերայ իմ»: Իսկ Վրիատոս, որք ընդ բազում մեղօք հնա-զանդեալ կային, աղաղակէր և ասէր ցնոսա. « Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնիք, և ես հանգուցից զձեզ »: Քանզի նա էր որ զնաւն ծանրացուցանէր յայնժամ և կամէր ընկղմել:

Իսկ Յովնան ՚ի քուն կայր և խորդայր: Խոր էր քունն. ոչ քաղցր քուն, այլ տրտմութեան. և ոչ էր անհոգութեան, այլ զղջման: Զի ծառայ ուրեք՝ գիտէ և խմանայ զնեսս յանցանաց իւրոց, որպէս և նայն գիտաց. զի յետ գործոյ մեղացն գիտաց և ՚ի միտ առ զկարիս[1] մեղացն: Քանզի և են իսկ այնպիսի մեղքն, զի յետ մեղացն ծնանելոյ՝ յայնժամ յարուցանէ և դրդռէ զերկունս ծննդեան ոգւոյն ընդդէմ օրինաց մերոց ծննդեանն: Քանզի մեք յորժամ ծնանիմք, զսուս եր-

1 Մի օր. վարձիս. այլ օր. վարսի:

իսկ մեղքն Համանգամայն ծնեալք Ձեղբեն երկամեքն զԱորհուրդսն որ ծնանին զնա։

Յր Նաւապետան ղինչ. մատուցեալ ասէ ցնա. "Լ՚բի կոչեա զտէր ՚ձծ քո,,։ Յանեաւ այնուհետև ՚ի փոր. ձէ իրացն Թէ ոչ է սովորական ձմեռն, այլ ՚ձծ առաքէ զՀարուածծն, և մեծ քան զմարդկային արուեստ մըր. րիկքն, և ՚ի նաւուղղին ձեռն օգուտ և ոչ ինչ։ Վ՚ասն զի այլում մեծագունի էին կարօտացեալ նաւուղղի լեալքն, որ ամենայն աշխարհի առաջնորդէ, և ՚ի վե. րուստ պէտս ունէր նաւարկուԹեանն, վասն այնորիկ և նոքա զղեկն և զառագաստն և զլարսն և զամենայն գործին Թողեալ, զձեռս ՚ի վեր յերկինս ունէին ամ բառնալով, և առ ՚ձծ աղաչէին։

Յր իբրև այնպէս ոչ ինչ առաւել լինէր օգուտ, այլ կանէին, ասէ, վիձակս, և մատեաւ վիձակն վՀռաւ ՚ի պարտաւորն։ Խսկ նոքա և ոչ այնպէս զնա առեալ ընկըղ. մէին, այլ յայնքան յամբոխի և խռովուԹեան ՚ի վե. րայ կացեալց, որպէս ՚ի բազում ինչ խաղաղուԹեան վայելեալք՝ այնպէս ատեան ՚ի նաւին կացուցանէին, և բանս տային ասել նմա, և պատասխանեաց արժանի առ.

կանցն լուծանեմք. իսկ յորժամ մեղքն ծնանին, պատառեն և հեր. ձուն ցաւոք զծնողս իւրեանց, այսինքն զԱորհուրդս չարս։

Եւ ապա զինչ ևս Նաւապետն. զարԹոյց զնա և ասէ. «Ա՚րի կարդա առ ատեր ՚ձծ քո»։ Քանզի գիտաց այնուհետև տեղեկաբար եԹէ ոչ է դղրդումն ծովուն բան սովորուԹեան աւուրցն Հանապազորդաց, այլ ՚ձծական հրաման է, և վերին և Հզօրագոյն Հարուածքն քան զարուեստ մարդկան, և ոչ ինչ յօգուտ և ՚ի շահ են ՀձնուԹիւնք և աշխատու. Թիւնք մեր քեզնայից Նաւավար Ձարտարապետին։ Ա՚յլ նա այլում ու. միոն կարօտանայր և յօգնականուԹիւն Հնարէր կոչել որ զամենայն աշխարՀս արար և կազմեաց և Հաստատեաց իւրով խնամուԹեամբն, և վասն այնորիկ ՚ի վերին օգնականուԹիւն ապաւինեալ լինէր։ Վ՚ասն այնորիկ և նոքա Թողին զքեզ և զառագաստս գոգաւորս և զՀե. ծանս կանգնագեղս և զառատանս լարաձիգս և զամենայն կազմակերպս ըստ կազմածոյ չափուն իւրեանց. զձեռս ՚ի վեր առեալ յաղօԹս և ՚ի պաղատանս պատրաստէին. զաչս ՚ի յերկինս Համառնային և զձծ ա. ղաչէին։

Եւ իբրև ոչ ինչ լինէր աւելի քան զդէպն, ապա արկանէին վիձակս, և մատնէր այնուհետև վիձակն զպարտականն ՚ի ձեռս պատուհասին։ Բայց սակայն նոքա ոչ այնպէս առեալ ընկղմէին զնա. այլ յայնպիսի նեղուԹեանց և խռովուԹեանց որպէս ՚ի մէջ բազում խաղաղուԹեանց ուշանայ[1] գործս կատարելին, և դատաստան յօրինեալ կարգէին ան. դէն ՚ի նեղոցս ՚ի նաւին։ Պատասխանի տային ընդ միմեանս և աղերսա.

1 Երկու օր. ուշ ՚ի խորջս գալ ասէրէին։

նէին որպէս հանդերձեալք ումեք տալ զհամարս, որով զվարկն առնէին։

Նա լուր նոցին իսկ, որ իբրև յաւետիսի զամենայն քննէին. զինչ քո գործ, ուստի գաս, յո՞ երթաս, յորմէ՞ գաւառէ, յորմէ՞ ժողովրդենէ ես դու։ Վասպէտ և չարախօսեաց ծուխն գոլելով, յանդիմանեաց վիճակն և հակառակ վկայեաց, այլ սակայն ոչ 'ի ծովուն գոլել և ոչ 'ի վիճակին հակառակ վկայել զվճիռն 'ի վերայ երբեք ածէին. այլ իբրև 'ի դատաստանի ոսոխացն մերձեալոց վկայիցն շուրջ կացելոց և յանդիման եղելոց՝ ոչ յաւուրցն դատաւորք զվճիռն 'ի վերայ բերէն, մինչև ինքն իսկ դատապարտեալն ոսոխ իւրում մեղացն ընկերի, նոյնպէս և անդ նաւավարք ազք բարբառոք և անմիտք՝ որք յաւետեանս բարեկարգութիւնքն էին՝ նմանեցուցանէին. զի Վէպետ և յոքնակի երկիւղ այնպիսի մրրիկք այնչափ խռովութիւն մերձ կայր 'ի նոսա, և ծուխն ոչ չունչ կլանել անսայր նոցա. այնպէս ամբոխեալ լինէր փութայր գոչելով և յաճախակի զալիսն 'ի վերայ յարուցանելով։

Ասաւ այնքան եղև նախախնամութիւն. յայ տնօրէնութենէն։ Օ՛ի զոր ՚ած անօրինէր, նոյն և լինէր. զմարգարէն նոքիմքք խրատէր մարդասէր լինել և ցած, և զրեթէ դոչէր առ նա և ասէր. նմանող լեր նաւոր-

նոք խօսէին և հաւաստեաւ զամենայն ինչ քննէին, որպէս թէ զիարդ կարացեն վճիռ առնել թէ ով ոք 'ի նոցանէ յանցաւոր և պարտական գտանիցի։

Բայց արդ լուր դու նոցա, զի որպէս 'ի դատաստանի զամենայն ինչ հարցանեն՝ թէ զինչ էգեն, առնեն, քո գործք, և կամ թէ ուստի գաս և կամ յո՞վ երթաս և կամ թէ յորմէ՞ աշխարհէ ես և կամ յորմէ՞ ժողովրդենէ։ Այս յայնժամ ծուխն լինէր գնանել ամբաստան և աղաղակէր, և յանդիմանէր վիճակն և վկայէր. բայց սակայն ոչ առ 'ի ծովու ազազակելն և ոչ առ 'ի վիճակին վկայելն՝ գնա ընդ պատուհասիս փակէր. այլ որպէս 'ի դատաստանի 'ի մէջ դատախազաց և վկայից յանդիմանէր և պատուհասեալ կշտամբէր։ Զի որպէս դատաւորք ոչ յաւուրցանն նախ 'ի դատել զանցականն մինչ չև խոստովանեալ էցէ վասն մեղաց իւրոց զոր գործեաց, նոյնպէս և անդ նաւավարքն՝ տգէտք և անտեղեակք էին կարզաց և իրաւանց օրինաւորաց։ Եւ զի այնչափ ահ և երկիւղ ալեացն կուտակելոց և այնչափ խռովութիւնք շուրջ զնաւօքն պատէր, և նաւն անհնարին ահիւ վարանեալ տագնապէր նաւավարքն։

Եւ արդ նմա ուստի արդեօք լինէին այսպիսի ինամակալութիւնք, եթէ ոչ յայ տեսչութենէն։ Զի ած էր որ պատրաստէր և յօրինեալ կարդէր զայնպիսի ինչ իրս լինել, զի նոքօք խրատեսցէ զմարգարէն, և

դացդ արանցդ անմահաց. դոքա և ոչ զմի անձն արհամարհեն, և ոչ զմինդ անխնամ առնեն զմարմինդ քո. իսկ դու զբոլոր քաղաքն որ այնքան բիւրս ունի, մանուկեցեր ոչքան ինչ 'ի քէն էր: Դոքա պատճառս լեալ զքեզ իւրեանց չարութեանն գտանելով, և ոչ այնպէս յարձակեցան 'ի դատապարտութեանն վէմիս. իսկ դու և ոչ մի ինչ ունիս բամբասել զնինուէացիսն, ընկղմեցեր զնոսա և կորուսեր: Դու խնդալ հրամանաւ երթալ և 'ի փրկութիւն կոչել 'ի ձեռն քարոզութեանն՝ ոչ հնազանդիս. դոքա ոչ յումեքէ լսելով զամենայն առնեն և հնարին, որպէս զի զքեզ զդատապարտեալդ 'ի պատուհասիսն զերծուցանիցեն:

Վասն զի յեա ծովուն չարախօսութեան և զինի յանդիման ցուցանելոյ վիճակին, ինքն ինքեան ոսոխ եղև և զփախուստան խոստովանեաց, և ոչ այնպէս յարձակեցան 'ի կորուստ մարգարէին, այլ ներքին և քրտնաժէտին՝ զի զնա և մի զինի այնքան յանդիմանութենէ մանուկացեն ծովուն յարձակման: Դայց ոչ հրամայեր և ոչ այնպէս ծուխ, մանաւանդ եթէ ՚ած ոչ թողացուցաներ. զոր օրինակ 'ի ձեռն նաւորդացն, նոյնպէս և

ուսուցչէ մարգասէր լինել և խնարհ, և նոքիմք իսկ իրաւէր զնա և ասէր՝ եթէ նման լեր դէթ նաւավարացդ արանց անմոխ և սրբասաց. զի դոքա, ասէ, և ոչ վան միոյ ոգւոյ անփոյթ առնեն, և ոչ զմի մարդ արհամարհեն և անգոնեն. իսկ դու, ասէ, զքաղաք մի մեծ և ամենալից և ամենաբարի և զանհամար բիւրաւորս ընդ վայր հարեր որչափ և դու ձեռնհաս էիր: Եւ դոքա աւադիկ, ասէ, գտան պատճառս իւրեանց նեղութեանցն որ վասն քո լինին, սակայն և ոչ այդպէս պատրաստին 'ի խոշտանգիլ զքեզ: Իսկ արդ դու այդպիսի պատճառս ոչ ունիս վասն նինուէացւոց, և առ 'ի կորուստ նոցա յառաջագոյն պատրաստեալ էս զի ընկղմեցին և կորիցեն: Եւ զի դու, ասէ, համ հրամանի չանազաներ առ 'ի փրկութիւն դարձուցանել քարոզութեամբդ քով. իսկ դոքա յումեքէ ոչ լսեան և ոչ պատուէր եաք, և ամենևին հնարին և պատրաստին վասն քո, զի զքեզ որ պատճառք լինելոց էս դոցա կորստեան՝ ապրեցուսցեն, և մի կշտամբեսցեն և դատեսցեն:

Զի զիեա ծովուն դատախազութեան և զինի յանդիմանութեան վիճակին՝ ահաւասիկ և ինքն իսկ վասն իւր ոսոխ և պիտխուստան խոստովանի, սակայն նոքա և ոչ այնպէս ձեռն արկանէին 'ի մարգարէն, այլ ինայէին 'ի նա, և զանձինս իւրեանց 'ի կշտամբութեան ածանէին: Զի վասն նորա և զինի այն ամենայն յանցանաց հնարեցան զնա տալ բեցուցանել 'ի ծովուն սահմանացն, այլ ծուխ ոչ այնպէս նեբէք նոցա և թողացուցանէր: Բայց ոչ եթէ ծուխ ինքնին զայն առնէր, այլ ՚ած. զի որպէս նաւավարքն իրաւէր զնա, նոյնպէս և ձկամբն կամէր զը-

ձկամբն ողջախոհացուցանել կամէր զնա։ Ա՝ ասն զի յետ լսելոյն «Լռէք զնա և ընկեցէք ՚ի ծովդ և դադարեսցէ ՚ի ձէնջ,,, առաւել բռնադատէին գալ յերկիր. բայց ալիքն ոչ հրամայէին։

Այլ դու որպէս տեսեր զմարգարէն փախուցեալ, լուր նորա և խոստովանութեանն ՚ի ներքուստ ՚ի յորովայնէ գազանին։ Ոչ ի գայն իբրև զմարդ, և զայս իբրև զմարգարէ յանդիման եցոյց։ Լռեալ զնա ծովուն՝ իբրև կապարանի իմիք որովայնի ձկանն մատնեաց՝ առ տէրն պահել զփախուցեալն. և ոչ վայրենացեալ ալիքն հեղձուցին, և ոչ գազանն որ քան զամենայն վայրենագոյն ևս էր՝ ընդունելով ապականեաց զնա, այլ ապրեցոյց և ՚ի քաղաքն էած. ծովն և գազանն ըստ ոչ քնութեանն հնազանդէին, զի ՚ի ձեռն ամենեցուն այնոցիկ մարգարէն խրատեսցի։

Այս ապա երթեալ ՚ի քաղաքն ընթեռնոյր զհրամանն իբրև զթուղթ ինն թագաւորական որ առնչանս ունի, և գոչէր ասելով. «Լռէք և աւուրք և կործանեսցի,,։ Ուան զայսոսիկ նոքա և ոչ անհաւատացին և ոչ արհամարհեցին. այլ վաղվաղակի ընծայեն զենեցուն լինելին ՚ի պահս՝ արանց և կանանց, ծառայ-

գաստացուցանել զնա։ Քանզի յորժամ լսան ՚ի նմանէ՝ թէ «Առէք ընկեցէք զնա ՚ի ծովդ, և գադարեսցէ ՚ի ձէնջ խռովութիւն ծովուդ»,, և նոքա թէպէտ և մեքաւէին վառէին վարել զնաւն ՚ի ցամաքն, այլ ալիք ծովուն ոչ անասային։

Բայց դու տեսեր ապաքէն զմարգարէն փախստական լեալ, լսիցես ՚ի նմանէ և զխոստովանութիւնն ՚ի ներքուստ ՚ի փորոյ ձկան գազանին։ Ձի փախուստ նորա իբրև զմարդոյ լինէր, և խոստովանութիւնն որպէս զմարգարէի։ Քանզի այնուհետև առ ընկղմեաց զնա ծովն, և որպէս ՚ի բանսի երկաթապատ կապանօք դնէր զնա ՚ի փոր ձկանն, և նա պահէր զնա տեառն իւրում իբրև զծառայ փախստական։ Ձի ոչ ալիքն անհամբոյրք հեղձուցին զնա, և ոչ գազանակերպն որ եկուլ զնա՝ ապականեաց[1] և կորոյս, այլ պահեաց զնա և տարաւ հասոյց ՚ի քաղաքն. քանզի ծովն և ձուկն որ էին անզգայական քնութիւնք, լսէին և անասային ձայնական հրամանին, որովք և խրատեր խակ զմարգարէն։

Ապա յայնժամ երթայր մտանէր ՚ի քաղաքն մեծանիստ, և քարոզէր նոցա զհրաման պատուհասին իբրև զմարգարէական թագաւորական և զմահաբեր պատուհաս. աղաղակէր և ասէր՝ ելիէ «Ձեռ երից աւուրց և կործանեսցի»։ Եւ նոքա իբրև լսան զայս, ոչ թերահաւատեցին և ոչ անհոգեթ արարին, այլ ամենեքեան վաղվաղակի ընծա-

1 Օրինակ մի հարհարեաց. այլ օր. հարեաց և յամ հալեաց զնա։

ից, տերանց, իշխանաց, իշխեցելոց, տղայոց, ծերոց, մանկանց, ալևորաց, և ոչ անբանից բնութի՛ւ յայմ հարկէ ազատ լինէին։ Այլ ենայն ուրեք քուրձ, ամենայն ուրեք մխիթ, ողբք և հառաչանք. զի և նոյն ինքն որ զԹագն ունէը, ՚ի Թագաւորական աթոռոյն իջանելով՝ քուրձ զգենոյը, մխիթը ցանէը ՚ի գլուխն, և այնպէս զքաղաքն յափշտակէին ՚ի վտանգից անտի։ Այլ էը տեսանել հրաշափառագոյնս իմն յաղագս խորգոյն քան զծիրանիսն հաձոյ լեալս. զի զոր ինչ ոչ կարացին առնել ծիրանիքն, զայնոսիկ զօրեաց յօրինել խորգն. և զոր ոչ կատարեաց Թագն, զայն աւարտեաց մխիթն։

Տեսանեմ զի ոչ վայրապար ասէի Թէ ոչ ՚ի պահոց, այլ յարբեցութենէ և յանյագ ուտելոց երկինչել պարտ և արժան է. վասն զի արբեցութիւն և շատկերութիւն զհաստատեալ քաղաքն սասանեցուին և կործանել ևս հանդերձեալք. իսկ պահք զդրդեալն և որ պատրաստ էր ՚ի վայր անկանիլ՝ հաստատեցուին։

Հանդերձ պահօք և Դանիել ՚ի գուբ առիւծուցն մտեալ և իբրև ընդ ոչխարս ձեռնընդելս լինելով այնպէս ելանէր. որք և գազանութեամբք զայրացեալք և զսպանուելն տեսանէին և յառաջիկայ սեղանն ոչ մերձենային. այլ և բնութեամբ զայրացեալք, զի ոչ ինչ

ցեալք յապաշնարութիւն՝ յաղօթս և ՚ի պահս ապաւինէին ազք և կանայք, տեառք և ծառայք, իշխանք և ունկնդիրք, ծերք և տղայք, մանկունք և երիտասարդք. քանզի և ոչ անասնոց անգամ բնութիւնն յայնպիսի պաշտամանց անհնազանդէր։ Եմենեքեան առ հասարակ քրձազգեաց մխիթ ՚ի գլուխ լինէին, ամենայն ոք ՚ի սուգ և ՚ի տրտմութիւն մտանէր. նա և ինքն իսկ արքայն՝ որոյ Թագն ՚ի գլուխն էր, ի՛ջեալ յաթոռոյ արքայութեան նրոյ՝ քրձազգած մխիթ ՚ի գլուխ լինէր, և այպէս կարէր ապրեցուցանել զսասպնապետալ քաղաքն ՚ի բռնութենէ վտասցն։ Եւ անդ էր տեսանել իրս զարմանալիս և սքանչելիս. քուրձ և մխիթ պատուական գոեալ քան զԹագ և զծիրանիս. զի յորմէ ոչ կարացին ազատել Թագն և ծիրանիքն, յաղթեցուին և ապրեցուցին քուրձն և մխիթն։

Արդ տեսանեմ զի ոչ ինչ ընդ վայր ասացաք յառաջնումն Թէ ոչ ՚ի պահոց արժան է երկինչել և յաղօթից, այլ յարբեցութենէ և յանառակութենէ երկիւղ է. զի արբեցութիւն և որկորամոլութիւն զքաղաքն կանգուն և հաստ՝ շարժեաց և գողացոյց և կամէը կործանել, իսկ պահքն և աղօթքն հաստատեցուին և կանգնեցուին։

Քանզի նոքօք իսկ եմուտ Դանիել ՚ի գուբ առիւծուցն, և իբրև ընդ ոչխարս զգօնս և հանդարտս հաղորդէր և ընկերանայր. զի թէպէտ և ջերմ էին ՚ի սպանումն և ՚ի գիշակեր սովորութենէն, այլ սակայն ՚ի պատրաստական սեղան կերակրոյն ոչ իշխէին հպել, թէպէտ և բնու-

քան զառիւծան է վայրենագոյն ՚ի գազանս և սովոլ. քանզի զեօթին աւուրս ոչ ձաշակէին կերակուրս. իբրև զահՀի ուրուք հրամայել զփոյոտինն մարգարէականս փաղաղել գոչէին, պատկառեցին ՚ի կերակրոյն։

Ա. Յնոքիւք և երեք մանկունքն ՚ի բաբելոնական հնոցի մտեալք և բազում ժամս գեգերեալք ՚ի հուրն, քան զնոցն ինքեան զհուրն պայծառագոյն ունելով զմարմինս ՚ի հնոցէն ելանէին։ Որ եթէ հուր էր այն որ երևէր, իսկ հուր զնաւրդ ոչ գործէր զհրոյ գործ. և եթէ մարմինք էին այնոքիկ, զնաւրդ ոչ զմարմնական ախտն կրէին։ Ո. Նաւրդ, հարց ցսպահան և պատասխանի առնէ քեզ, և նոքա լուծանեն զառակն։ Վանզի էր արդարեւ իսկ առակ, մարմնոյն բնութիւնն մարտնչէր ընդ բնութիւն հրոյն, և չաղթութիւն մարմնոյն լինէր։

Տեսեր զհրաշափառագոյն զկնի, տեսեր զպքանչելի չաղթութիւնն. զարմացիր ընդ պահն, և տարաժեալ ձեռօք ընկալ։ Ո. Նա յորժամ և ՚ի հնոցի օգնեն և ՚ի գբի առիւծուց պահեն, զդևս հալածեն, զհրաժանս այ լուծանեն, զախտիցն զմոլորութիւնն ցածուցանեն և չաղաւորութիւն զմեզ վերստին ածեն և չոլոլս

Թիւնն իբրեանց գրգռէր զնոսա. քանզի ոչ ինչ է այլ գազան չար քան զնոսա ՚ի բռնանալ և ՚ի բեկանել, որք մանաւանդ և եօթնօրեայ աւուրբքն սովական և արգելականք լեալ էին ՚ի սովորութենէ կերակրոյն իւրեանց։ Այլ իբրև զահՀիձս և զսպանոցս ներքուստ ՚ի ներքս հրամայէին միաւանց և յօժարեցուցանէին առ ՚ի ձգել զբազուկս և սրկալ նել զնոսա, զի արեամբ և չաղտոյն նորա լցցին և չագեսցին։ Այլ նոքա ակնածեալք և կասեալք ամաչէին ՚ի մարգարէական մարմինն հպել և մերձենալ։

Եւ նովին և երեք մանկունքն ՚ի Բաբելոն ՚ի հնոց հրոյն իջեալք և բազում ժամս ընդ հրոյն խօսէին, և լուսաւորագոյն և պայծառագոյն նոցա մարմինն ՚ի հնոցէ անտի գայր ելանէր։ Իսկ արդ եթէ հուր իսկ էր հուրն այն, զնաւրդ ոչ գործէր զգործ հրոյ. և եթէ մարմինք էին մարմինքն այն, զնաւրդ իբրև զմարմինս ոչ չարչարէին։ Արդ ասիցես եթէ զնաւրդ, մաւրս հարց ցսպահան, և արասցէ քեզ պատասխանի և մեկնեսցէ քեզ զբնութիւն։ Զի արդարեւ էր իսկ օրինակ բնութիւն մարմնոյն ընդդէմ բնութեան հրոյն, և չաղթեալ բնութիւն հրոյն գտաներ։

Տեսեր զպատերազմն զարմանալի, տեսեր զպքանչելիս չաղթութիւնն. և զարմացիր ընդ պահն և ընկալ զոս զնա ՚ի քեզ խնդութեամբ։ Զի յորժամ ՚ի հնոցի կարկ օգնել և ՚ի գբոյ առիւծուց պահէ և զդևս հալածականս առնէ և զհրաժան պատուհասին այ յողորմութիւն դարձուցանէ և զմոլեգնութիւն ախտից ցանկութեանց ՚ի բաց մերժէ և չազաւորութիւն զմեզ ձգէ և բազում խաղաղութեան պատճառս ՚ի

'ի խորհուրդս մեր առնեն զնաւաղուԹիւն, զիարդ ոչ վերջին յիմարուԹիւն իցէ որք այնքանս ունին 'ի ձեռին զբարիս՝ զարհուրեալ 'ի նոցանէ փախչել։

Այլ աշխեն զմարմինս մեր, ասեն, և տկարացոյն առնեն։ Այլ որքան արտաքին մարդս մեր ապականի, այնքան ներքինն նորոգի օր ըստ օրէ։ Այանաւանդ եԹէ ախորժեսցես հարցափորձել զկրոն, քաջողջուԹեանն գտանես զպահման մայր։ Այս եԹէ իմոց բանիցս անհաւանիս, զմանկունս բժշկացն հարց յաղագս այդորիկ, և նոքա քեզ յայտնագոյնս ասասցեն՝ որք զկարօտուԹիւն մայր առողջուԹեան կոչեն։ Այսկ զարտացաւուԹիւնն և զգլխածանրուԹիւնն և զխեղկատարուԹիւնն զքրտողուԹիւնս և զայտմունս և զփքացմունս և զբիւր զայլոց և այ ախտից զուղիս՝ 'ի փափկուԹենէ և 'ի չհակերուԹենէ լինել ասեն իբրև 'ի չարուԹեան յաղեբերկ չար վտակս, որք և զմարմնոյ քաջողջուԹիւնս և զոգւոյ ողջախոհուԹիւնս ժանտացուցանեն։

Այդ մի երկիցուք 'ի պահոց որք յայսքան չարեաց ազատեն զմեզ։ Օ՛ի և ոչ վայրապար այսպէս յաճախակի պատուիրէի, այլ զի յոլովս տեսանեմ 'ի մարդկանէ՝ իբրև անզգամի ումեք կնոջ մանեւալք հանդերձ

միտս ձեր կարգէ, ապա զինչ իցէ վատԹարուԹիւն անմտուԹեան, որ այսպիսի բարեբարուԹիւնս 'ի ձեռին իւրում ունի, խորչել յայնպէսացն և երկնչել։

Այլ ասիցէ ոմն՝ եԹէ չան գնէ և տկարացուցանէ զզօրուԹիւն մարմնոյ։ Այլ որչափ արտաքին մարդն մեր ապականի և տկարանայ, նոյնպէս և ներքինն մարդն մեր նորոգի օր ըստ օրէ։ Զի եԹէ կամիցես ձրիշմարտուԹեամբ լսել և հարցանել և զչափ առնուլ զերացն, առաւել ևս առաջնուԹեան գտցես զնա մայր։ Եւ եԹէ իմոց բանիցս ոչ հաւատասա, լեր տեղեակ 'ի բժշկաց և ուսիր 'ի նոցանէ, և նոքօք հաւանեցիս և 'ի միս առցես, որք զնուազուԹիւն մերն[1] առաջնուԹիւն կոչեն։ Զի զախտս դիպոյ և զցաւս ոսից և զձագկումն յանկարծակի և զցաւս մանուա և զզայրացմունս մարմնոյ և կամ բիւր ինչ այլոս բազմուԹեան ախտից յորկորատուԹենէ և 'ի փափկուԹենէ դնեն։ որպէս և ծանրաբուռն ալքիւրք կամ պղտորական վտակք զառաջնուԹիւնս մարմնոյն և զգաստուԹիւնս հոգւոյն այլայլեն և ապականեն։

Ապա արդ մի այսուհետև զանգիտեսցուք 'ի պահոց՝ որ յայնպիսի չար ախտից զմեզ հրաժարեցուցանէ։ Զի ոչ եԹէ վայրապար ինչ ձեզ հանապազ տամ խրատ զայս, այլ վասն զի տեսանեմ զբազումս 'ի մարդկանէ որպէս ընդ կնոջ գժնդակի և անզգամի վհատեալ էք առ

1 Երկու օր. Մանկան... և պիտոյացուն... բիւր ինչ ախտս բազմանէ ցաւոց։

ձեալք՝ այնպէս գանգաղին և խորշին, արբեցութեամբ այսօր զինքեանս ապականեն, յաղագս այսորիկ պատուիրեմ, որպէս զի մի որ ՚ի պահոց օգուտն է՝ յառաջադոյն ՚ի բաց բարձցուք որկորատուութեամբն և արբեցութիւք։

Օ՚ի որք չարաչար կերպարանօք անանձին մարդիկ, յորժամ ղգառն դեղն հանդերձեալ լինին ըմպել, և լցեալ զինքեանս բազում կերակրովք այնպէս զդեղն առնուցուն բռնութեամբ համբերելով, ՚ի չօգտիցն արտաքս անկանին, գժուարագոյնս առնեն զմարդն առ ապականութիւնն. իսկ բժշկացն մանկունք ոչ ընթերցուլ քուն լինել հրամայեն, զի ամենայն դեղն յառաջնումն ՚ի հիւանդարարսն յառելոցդ մաղձն մերձենացուցէ։ Այնպէս և ՚ի պահսն եթէ օր զինքն յորով արբեցութեամբ լցցէ այսօր, և վաղիւ ՚ի նոցանէ ընդունիցի զդեղն, անպիտան զայն և անօգուտ առնէ. աշխատութեանց համբերելով զշահս և զպտուղս իրացն ոչ ընդունի, և յառաջմանէն յարբեցութենէն եղեալ չարիք զամենայն ըզպահոցն ծախեն զգօրութիւն։ Այսպա եթէ զմարմինն թեթև պատրաստեսցես, և արիւնն խորհրդովք ըզդեղն ընկալցիս, զյոլովս ՚ի հնոց մեղացն մաքրել կարասցես։

՚ի զուգել և միաբանել. այսպէս թուլացեալ տաղտկոյք։ Իսկ յարբեցութեան և յորկորատութեան լերև դեղեցիկք և զգաստ և ցած առ ապականին հակք։ Վասն այսորիկ տամ պատուէր, զի մի որ ՚ի պահոց անտի օգուտ և կամ շահ լցէ, որկորատութեամբ և արբեցութեամբ մերժեալ անարդիցէք։

Քանզի որպէս ոմանք ծանրաստամոքք ՚ի մարդկանէ յորժամ կամիցեն ըմպել զառատն դեղն, զի յորժամ կշռասցինք և չափեալք ի ցեն կերակրով, թէ անդէն նոյնժամին զդեղն ըմպեցեն, զճաշակ զատնութեանն ընդունին, այլ յօդնակատութենէ անտի հեռացեալք զատնին, գժուարամարսելիս ընդդէմ դեղոյն պատրաստեն զճաշակ յապականութիւն, վասն այսորիկ հրամայեն նոցա արուեստագէտք բժիշկացց զի առանց ընթերցուց և ճաշելոյ ՚ի քուն մացեն, զի չամենայն ախտիցն և ՚ի ցաւոց կարասցեն դեղքն ազդել և օգնել։ Այնպէս և առ պահս եթէ բազում արբեցութեամբք լցցես զքէզ և կամ բազում կերակրովք խմոզեացես այսօր, և վաղիւն առնուցուս զդեղն բժշկութեան, ընդ վայր և յանօգուտ գտանի քեզ. զի թէպէտ և ցաւոցն հաղորդակից եղեր, այլ ՚ի չահիցն հեռացեալ վերափոս, որ յարբեցութենէ անտի եղեն անառակութիւնքն. որ և հաշէ և մաշէ զամենայն զօրութիւնս հոգւոյ և մարմնոյ։ Այսպա եթէ թեթև և զգաստ և պատրաստական առնիցես զմարմինդ, և ցած և խոնարհ զհոգիդ, և ապա զդեղ բժշկութեանն ճաշակեացես, զբազում հին մեղս և դժնդեան կարասցես սրբել։

Լ՚ըդ մի՛ այսուհետև արբեցութե՛ մսցուք ՚ի պահեն, և մի՛ ՚ի պահոցն յարբեցութիւն եկցուք դարձեալ, զի մի՛ այնպիսի լինիցիմք որպէս եթէ ոք զախտացեալ մարմին և որ յառնել հանդերձեալ իցէ, աքսոյի հարկանելով ուժգնապէս ընկենուցու դարձեալ ՚ի վայր. որ և լինի անձանց մերոց յորժամ յերկոյութենց կողմանց և զսկիզբն և զկատարած արբեցութեամբ՝ որ ՚ի պահոցն լինի մեզ արթնութիւն՝ խաւարեցուցանեմք։ Օ՚ի զոր օրինակ որք ընդ գաղանին հանդերձեալ են մարտնչել, բազում զինուք և ամրութեամբք զինեն զկարևոր անդամն և պնդեն, և այնպէս առ նոսա մերձենան ՚ի կռիւն, նոյնպէս և այժմ յոլովք են ՚ի մարդկանէ որք իբրև ընդ գազանի ումեք մարտնչել հանդերձեալ իցեն՝ ընդ պահոն, այնպէս որովայնամոլութեամբ զինին երիծուցանելով հանդերձ բազում խելագարութեամբ ընդունին զպահոցն զակն։ Լ՚ու եթէ հարցիցէ ոք էր ա՛զգաւ ՚ի բազանիս ընթանաս այսօր, զի մաքուր մարմնով ընկալցց, ասէ, զպահոն. և եթէ դարձեալ հարցիցէ վասն էր արբենաս, ՚ի պահս մտանել հանդերձեալ եմ, ասէ։ Լ՚ու զիա՛րդ ոչ իցէ յիմարութիւն՝ մաքուր մարմնով և անմաքուր հոգւով յարբեցութենէն զգեղեցիկ զառաքինութիւնն զոն ընդունել։

Լ՚որ հնար և առաւելագոյն և ս քան զայսոսիկ ասել. բայց որ ողջախոհքն են՝ և այնոքիկ բաւական են յուղ-

Եւ արդ մի՛ այսուհետև դանդաչեալք արբեցութեամբ մսցուք ՚ի պահս, և մի՛ ՚ի պահոց յարբեցութիւն ընկղմեսցուք. որպէս թէ ոք հիւանդացեալ իցէ և ակարացեալ մարմնով, և ապա ապաքինեալ փոքր մի և կազդուրեալ, և հարկանիցի յումեքէ և անդէն միւսանգամ գլորեալ վիրաւորեցի. որպէս մերոց անձանցս լինիցի յերկոցունց կողմանց ՚ի սկզբանն և ՚ի կատարմանն զոր պահոք արժան է մեզ զգուշանալ և պատրաստել։ Որպէս և ՚ի գազանաց սպանողաց բազում զինուք զգուշանալ և ծածկել զկարևոր մարմինս մեր որ ընդդեմ նոցա պատրաստեալ է նահատակել, այնպէս և այժմ բազումք ՚ի մարդկանէ ՚ի պահս իբրև ՚ի գազանամարտիկ ինչ կռվեալ են, և ընդն խճճելն զզորս և զորովայն իւրեանց, և երիծուցանեն և աղջամկեալ թմրեցուցանեն բազում անհանգստութեամբ զանձինս իւրեանց, և ընդդեմ պատահին հանգուցական և բնականկան գեղեցիկ տեսլեան պահոցն։ Զի՛ թէ զոք հարցանիցես, եթէ ընդէր ՚ի բազանիս փութաս երթալ այսօր, պատասխանի տայ և ասէ, թէ վասն զի ՚ի պահս կամ մտանել։ Եւ արդ զիա՛րդ արդեօք իցէ այս մարթի և պատշաճ, և թէ զմարմին սրբեսցես և զհոգին աղտեղացուցանես։

Էր ինչ արդեօք հնար աւելի քան զայս ասել, այլ խնամոցն և

զուարթիւն. վասն որոյ հարկաւոր է դադարեցուցանել զլուռս, քանզի զՀզօրս ցանկալիք լսել զձայն. զի մեք իբրև հովուական մանկունս նուրբ եղեգամբ հնչեցաք որպէս ընդ կաղնւոյ և ընդ կաղամախոյ ընդ հովանեաւ քահանայիցս սյսօրիկ նստեալով. իսկ սա իբրև զքաջ եւ բաժշտական զսակի քնար կազմեալ, ձայնակցութեամբ բախէ անաղեացն զլոյր տեսարանս զարմուցանել, նոյնպէս և սա՝ ոչ ձայնակցութեամբ աղեաց, այլ ձայնակցութեամբ բանից և գործոց յոլովս ի մէջ ամբաւեսցէ օգտութիւնս: Ասպիսի վարդապետս և Քրիստոս խնդրէ. քանզի ասէ "Լսէք որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից,,: Լսելի և մէջ աղօթիւք սորա և ամենայն աշխատակցայն արժանի լինել արքայութեանն երկնից հնարհօք և մարդասիրութիւք տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում վայել է փառք հօր հանդերձ սուրբ հոգւոյն յաւիտեանս. ամէն:

Նուագքն բաւական են յուղղութիւն. վասն որոյ հարկ է կատարել զՀառս բանից, քանզի և հայրենի բարբառոյն ցանկացեալ եմ լսել. զի մեք իբրև զսոյս մանկունս և հովիւս երգեցաք սրնգիս և փողով որպէս ընդ հովանեաւ[1] կամ ընդ քահանայական իշխանութեամբ նրա տեալ երգեցաք. իսկ որ հայրս մեր է, իբրև ձարտարապետ և արուեստագէտ զօրինաւորն քնարն զսակին զսակեփոյն ի մի ձայն միաբանութեամբ հարկանէ և պատշաճէ, և քաղցրաձայն բարբառով զամենեսեան ժողովէ և ամփոփէ, ոչ ի միաբանութիւն փողոյ, այլ ի միաբանութիւն բանից և գործոց բազում շահի և օգտի. քանզի և Քրիստոս զայսպիսի վարդապետս ընտրեաց. «Որ արասցէ, ասէ, և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից»: Աղօթիւք սորա և աշխատակցացս ամենեցունց՝ եղիցի մէջ և ամենայն ժողովրդոց եկեղեցւոյ արժանի լինել արքայութեանն երկնից հնարհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր և սուրբ հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

1 Օրինակ մի յաւելուածով ընդ հովանեաւ նոպէալ. յայլս հատուած պակասի:

Տեսէք յառաջնումն կիւրակէին զպատերազմն և զյաղթութիւնն, զպատերազմն սատանայի և զյաղթութիւնն Քրիստոսի. տեսէք որպէս ապաշխարութիւնն գովէր, և բանսարկուն հարուածոցն ոչ հանդուրժէր, այլ երկեաւ և զարհուրեցաւ: Օ՜ի երկնչիս, ով բանսարկու, և ընդ գովեստ ապաշխարութեան զի հեծես, զի տագնապիս: Այո, ասէ, յիրաւի տագնապիմ և նեղիմ և խռովիմ: Ընդէր, ասա ինձ ով բանսարկու: Օ՜ի զմեծ զկնն իմ յափշտակեաց և եհան յինէն ապաշխարութիւնն: Օ՜ր զկն: Օ՜պոռնիկն, զմեքսաւորն, զհայհոյիչն, զաւազակն: Իբրև արդար իսկ և ճշմարիտ, զքաղցումն և զմեծ զկնն սատանայի յափշտակեաց ապաշխարութիւնն. և անդէն զնոյն բարձրաբերձ քաղաքն նորա կործանեաց, և առանց բժշկութեան ունի զվէրսն յապաշխարութենէ. քանզի ոչ ինչ գոյ նման ապաշխարութեան, սիրելի, զորոյ զփորձն յառաջագոյն եղոյց:

Իսկ արդ ընդէր և վասն ի՞ր այսպիսի խօսիւք ոչ վայելեմք և հանապազ մտանելով յեկեղեցի ողջունիմք ընդ ապաշխարութեան: Ահ մեղաւոր ես և եթէ արդար, մուտ յեկեղեցին. թէ մեղաւոր իցես, մուտ զի խոստովանեսցես զմեղսն. և եթէ արդար ես, մուտ զի մի վրիպեսցիս յարդարութենէնն. քանզի երկոցունց նաւահանգիստ է եկեղեցին: Մեղաւոր և յանցական իցես, մուտ ապաշխարութեամբ զգեցեալ, ասա ՚այ թէ մեղայ. զինչ աշխատութիւն է այս կամ զինչ ծախք, որպիսի՞ նեղութիւնք կամ որպիսի՞ վիշտք՝ քանիւ ասել թէ մեղայ: Օ՜ի թէ դու քեզէն խոստովանեսիս զմեղսն, ոչ ունիս դատախազ զբանսարկուն. յառաջեա և յափշտակեա զնորա պատիւն, զի նորա պատիւն բանսարկութիւն է: Իսկ արդ եթէ քեզէն իսկ յառաջեացես և ասիցես զմեղս քո, ընկերացես զյանցանս քո, զի տացեալ թէ այնպիսի ոսոխ ունիցիս՝ որ լռել ոչ կարէ: Մեղայր, մուտ ասա ՚այ թէ մեղայ. ոչ ինչ զքեզ այլ պահանջեմ, բայց զայս միայն. զի և զիրն ՚ածեղէնն ասէ.

“Ա՛յս դու յառաջ զմեզս քո, զի արդարասցիս,,. պատմեա զյանցանս քո, զի լուծցես զպարտիս. ոչ ինչ աշխատութիւն է այս և ոչ Թոշակ բանից և ոչ վար ընդ կոյ և ոչ այլ ինչ այսպիսի. բանիւ առա և խոստովան լեր զյանցանսն և ասա Թէ մեղայ:

Այլ ուստի՞ գիտէ այս կայտ, ասիցես, Եթէ խոստովանիցեմ նախ զմեզս իմ, քաւիցեմ զյանցանսն: Ի գրոց ունիցիս զօրինակն. որ առաջի՝ և քաւեաց, և որ ոչն խոստովանեցաւ՝ պարտաւորեցաւ: Օ՛ն Կայինն վասն նախանձու սպան զեղբայր իւր զԱ՛բէլ, և զՀետ նախանձու սպանումն գնաց. և առեալ սպանանէր զնա ի դաշտին: Այլ ասա զինչ ասէր ցնա Աստ. “Որ է, ասէ, Ա՛բէլ եղբայրն քո,,: Որ ամենագէտն էր ամենայնի, հարցանէր ոչ առ ի չգիտել, այլ յապաշխարութիւն ձգէր զսպանողն: Այլ Թէ ոչ առ ի չգիտել հարցանէր, յայտ արար զինի այնր. “Որ է, ասէ, Ա՛բէլ եղբայրն քո,,: Այլ ետ պատասխանի Թէ “Ոչգիտեմ, միԹէ պահապա՞ն եմ ես եղբօրն իմոյ,,: Համարեա Եթէ պահապան չիցես, իսկ սպանող ընդէր. զի ոչ պահէիր, ընդէր սպանանէիր. բայց սակայն խոստովանիս զայս Թէ պարտական իցես պահպանութեան: Այլ ապա զինչ ասիցէ ցնա Աստ. “Ձայնն արեան եղբօր քո բողոք ունի առ իս յերկրէ,,: Այլ իբրև յանդիմանեաց, և անդէն զպատուհասն ի վերայ հասուցանէր, ոչ այնչափ վասն սպանմանն, որչափ վասն լքեալ Թեանն. զի ոչ այնչափ առեաց զյանցաւորն, որչափ զանամեթն:

Այս և յետ այնորիկ Կայինն յապաշխարութիւն եկն, այլ ոչ ընկալաւ զնա Աստ, քանզի ոչ յառաջագոյն խոստովանեցաւ զմեզսն: Այլ տես զինչ ասէրն, Թէ “Մեծ է պատիժ պատուհասիս քան զներել Թողութեան ինձ,,. իբրև այն Թէ՝ այնչափ յանցեայ որ չեմ արժանի կեալ: Այլ ապա զինչ ասէ ցնա Աստ. “Հեծութեք և երերանօք ընկեցիս ի վերայ երկրի,,. և հրամայէր նմա Աստ զանհնարին տանջանսն: Ել ընկեմ զքեզ, ասէ, զի մի մնասցուն լիցի Հնարաւորութեանն. այլ դնեմ զքեզ օրէնս ի կարգացումն ամենեցուն, զի եղիցին տառապանքն մայր իմաստութեան: Այլ ապա ընկեր Կայինն զօրէն ընչաւորի իբրև զաղձան գնայոցն լուռ մնաց, և առաւել ևս հնչէր քան զփող բարբառումն. մի՛ ոք, ասէ,

արասցէ զայս, զի մի կրեսցէ զայս։ Ընկալաւ զպատիժսն պատուհասիւ վասն անամօթութեանն իւրոյ. զոր ոչ խոստովանեցաւ, յանդիմանեալ կշտամբեցաւ վասն մեղացն. զի թէ կամօք խոստովանեալ էր յառաջ, ընկալեալ էր զմեղսն։

Այլ զի ուսցիս զայն եթէ այնպիսի ինչ իրք են, տես թէ ո՛րպէս այլ ոք այլուր նախ քաւեալ զմեղսն։ Այս է՝ կեսցուք առ Պատիճ մարգարէ և թագաւոր, առ աղքատն և ուճատուն. մանաւանդ առաւել ևս յօժարութեամբ զնա մարգարէ կոչեմ. զի թագաւորութիւնն ի Պաղեստին միայն էր, իսկ մարգարէութիւնն ընդ տիեզերս աշխարհի. և զի թագաւորութիւնն առ սակաւ ժամանակս էր և քակտեցաւ, իսկ մարգարէութիւնն անմահական մատուցանէ զպատգամսն։ Պիւրին է ասեգական չիջանել, քան թէ բանին Պատիճայ եղծանել. "Այրինք և երկիր անցցեն, ասէ, և բանք իմ ո՛չ անցցեն,, ։ Այս իբրև նա անկաւ ի շռութիւն և ի սպանողութիւն, "Առեա, ասէ, կին գեղեցիկ զի լուանայր,, և ցանկացաւ նմա, և կամք նորա զգործն կատարէին։ Այս էր մարգարէն ի շռութեան, մարգարիտն յաղթ. այլ և ոչ իմանայր թէ մեղաւ, այնպէս էր արբեալ ի ցանկութեանն։ Օ՛ի յորժամ կառավարն գինեվից իցէ, կառքն ընդ ո՛ր կամին և երթան. զի որպէս կառք և կառավար, նոյնպէս շունչ և մարմին. ապ՝ եթէ ոգին թըմբըռեսցի, և մարմին ի տիղմն թաթաւի։ Օ՛ի մինչ դեռ կառավարն Հարուստ կայ[1], և կառացն գիւրին է. իսկ յորժամ նա լքանիցի[2] և ոչ կարիցէ հաստատել և ուղղել զերասանակն, և ինքնին իսկ կառքն ի տապնապի լինին։ Այնպէս և մարդ մինչև ինքն զգայ անձինն և տքնել կարէ հոգւով, մարմինն ի զգաստութեան է։ Իսկ յորժամ յիմարեսցի, և ինքն մարմինն աղտովք և ցանկութեամբ թաթաւի։ Այս ապա զի՞նչ. չնացաւ Պատիճ և ոչ իմանայր, և ոչ յանդիմանէր յուժեքէ, և ի վախճանի ծերութեանն. զի գիտացես՝ եթէ իցես ծայլ, և ոչ ալիքն ինչ քեզ օգնեսցեն. և եթէ իցես փոյթ, և ոչ մանկութիւն ինչ քեզ ճնասել կարիցէ։ Օ՛ի ոչ

1 Ի վեց օրինակաց երկաթագիրը մի հատիկ ա՛ն է, որ ունի՝ Հարուստ կայ. երեք օր. արևուն ա՛ն, խոտոր անգործ է։

2 Երկաթագիրը մի փուչիկ ևս ունի՝ պատճառակի հարկանին. զգայ զանձին։

եթէ հասակի են իրքն, այլ կամաց են գործքն. նոյն-պէս և Դանիէլ երկոտասանամեան էր և զծերսն յանդիմանեաց, իսկ ծերքն հնացեալ աւուրբք զգործս պատնէշեանն գործէին. և ոչ նոցա ծերութիւնն ինչ օգուտ եղեւ, և ոչ նորա մանկութիւնն ինչ վնաս: Ո՞ւ ուսցիս եթէ ոչ հասակի, այլ 'ի կամս իրաց է զգաստութիւնն. զի Դաւիթ իսկ 'ի նմին ծերութեան էր, և յայնժամ ըմբռնեցաւ 'ի շնութեան և սպանումն ևս գործեաց. քանզի արբեալ էր կառավարն անժուժկալութեամբ:

Եւ ապա զինչ. "Զաքեաց, ասէ, առնա զԱխաեան մարգարէ,,: Մարգարէն գայր առ մարգարէն: Նոյնպէս այս և առ բժիշկս լինի. զի յորժամ բժիշկն տկարանայցէ, ապա այլ բժիշկ պիտոյ է նմա: Նոյնպէս և անդ մարգարէ էր յանցականն, և մարգարէ էր որ ըզդեղն բժշկութեան գնէր: Գայր առ նա Ախաեան մարգարէ. և ոչ եթէ վաղվաղակի դրաց 'ի դուրս յանդիմանէր զնա և կոչէր անօրէն և պիղծ, շուն և սպանող, թէ այսչափ պատիւս առեր յիմ, և դու զպատուիրանն Տեառն կոխանն արարեր: Ել այնպիսի ինչ ասաց նմա Ախաեան, զի մի զնա յանսահման ըղձութիւն դարձուսցէ. զի որ ինչ հրապարակաւ յանդիմանին մեղք, 'ի ըղձութիւն դարձուցանեն զյանցաւորն: Զդէզ գայր առ նա, իրաւամբք[1] դատաստանի կարգէր և գնէր և ասէր՝ եթէ, "Զքայ, քանս ինչ ունիմ խօսել ընդ քեզ. էր ոմն մեծատուն, էր և աղքատ ոմն,,. զմեծատունն կոչէր անդ զԴաւիթ, և զաղքատն՝ զՈւրիա. "Էր ոմն, ասէ, մեծատուն, էր և ոմն աղքատ. ունէր մեծատունն հօտս և անդեայս բազումս, իսկ աղքատին էր որոջ[2] մի, 'ի բաժակէ նորա ըմպէր և 'ի սեղանոյ նորա ուտէր և 'ի վերայ լանջացն նորա հանգչէր,,: Զնու զՀարտազատութիւն մերձաւորական խնամոյն յայտ առնէ: "Եւ իբրև եկն հիւր, խնայեաց մեծատունն յիւրն, և առեալ զնոյր զորոջ աղքատին,,: Տեսանե՞ս զիարդ նիւթէ անդ զիրան, ընդ սպանդին[3] ծածկեալ ունէր զերկաթն:

Եւ ապա զինչ պատասխանի առնէր Թագաւորն.

1 Մի յերկաթագրացն իրօք: 3 Երեք օր. ոսոնգաա:
2 Երեք օր. ոբոջի:

կարծեալ այլեւս զՀրամանն՝ առնել զպատուհասն : Օ՛ի այսպիսի են մարդիկ, զի վասն այլոց յօժարագոյնք են՝ի հրաման պատուհասին խոստպոյն սաստիւք : Այս ա՛ պա ասէր Թագաւորն, Թէ "Կենդանի է տէր, արժա՛ նի մահու է այնպիսին, և տուժեսցի ընդ միոյ չորեք՛ կին ,, : Այս ապա զինչ պատասխանի ետ նմա Նաթան. ոչ բազում ժամս ձգիեաց զվէրսն, այլ վաղվաղակի ա՛ րագ հասանէր՝ի կորել զվէրսն, զի վաղվաղ հատմանքն գողացի զցաւս ախտին. Թէ "Դու ես, արքայ ,, : Այս ապա զինչ առնէր նմա պատասխանի. ա՛ սէ. "Մեղայ տեառն ,, : Ոչ ասաց՝ եթէ դու ոմն ես որ յանդիմանես զիս, և կամ ոմ յղեաց զքեզ Համարձա՛ կել առ իս, և կամ որպէս իշխեցեր զայդ առնել : Ոչ ինչ այսպիսի ասաց և ոչ զմտաւ ած, այլ ծանեաւ զիւր մեղսն և ասէ "մեղայ տեառն ,, : Ապա Նաթան զինչ. "Այս տէր եհաղ, ասէ, զմեղս քո ,,. քեզկէն զքեզ, ա՛ սէ, պարտաւորեցեր, և ես Թողում զպատիժն. կամք խոստովանեցեր զմեղսն, և ես Թողում զյանցանսն. քե՛ զկէն զպատիժն յանձն առեր, և ես Թողի զպատուհասն : Տեսե՞ր զիարդ կատարեցաւ գրեալն, Թէ "Ոչա դու նախ զանօրէնութիւնս քո, զի արդարասցիս ,, : Արդ զինչ ջան է ասել յաւաջագոյն զմեղսն :

Այլ և այլ Հանապարհ ապաշխարութեան : Որ իցէ այն : Տրտմել և յոգւոց հանել վասն մեղացդ և քաւել պյանցանս : Ոչ ինչ՝ի քէն պահանջեմ առնլի, բայց Թէ սգայցես զմեղսն. ոչ ասեմ քեզ զանդունդս Հատանել և անցանել, և ոչ՝ի նաւահանգիստն իջուցանել, և ոչ ընդ դաշտս անցանել, և ոչ Հանապարհ գնալ, և ոչ ինչս ծախել, և ոչ ընդ խռովական և անդադար ալիս ծովու Հանապարհորդել. այլ սգալ վասն մեղացն :

Այս դարձեալ ասիցես. եթէ տրտմեցայց վասն մե՛ ղացն, լուացից զմեղսն : Ընկիս և զայս օրինակ՝ի գրոց՛ եր ոմն Թագաւոր Ա՛քաաբ անուն, վկայէ Թէ յառաջ արդար էր և Թագաւորեաց : Ա՛յլ նա որ արդար Թա՛ գաւորն էր, ՝ի չարու Թենէ Յեզաբելի կնոջէ իւրմէ դալ՛ ձաւ, և սպանումն և ագահութիւն միանգամայն կատա՛ րեր : Ա՛ւաքութեամ ուրումն յեզրայելացւոյ [1] այգւոյն

1 Երկաթագիրքն Իսրայելացւոյ . նոյնպէս և զինի :

ցանկացաւ, և յղեր առ նա և ասէր՝ Թէ տուր ինձ զաե-
ղին զոր ցանկացայ, և առ յինէն զկինն և կամ տեղի
փոխանակ տեղւոյն: Եւ նա ասէ ցնա՝ Թէ քաւ լիցի ինձ
զժառանգութիւնն հարցս իմոց վաճառել: Իսկ Աքաաբ
ցանկանայր այգւոյն, այլ ոչ կամէր բռնադատել. զի
յայնմանէ և՛ի հնազանդութիւնս դառնայր: Եւ կեա
այնորիկ մնանէր առ նա կին նորա Յեզաբէլ, անամօթ
և հրաժարեալն՛ի բարեաց, պիղծն և աղտեղին, և ա-
սէր ցայրն իւր. զի տրտմեալ ես և կամ ընդէր ոչ ճա-
շակես. յոտն կաց, կեր արբ, և ես արարից քեզ ժա-
ռանգել զայգին Աբաւթեայ յեզրայելացւոյ: Եւ ա-
ռեալ գրէր Թուղթս յերեսաց Թագաւորին առ ծերս
և առ իշխանս և ասէր. քարոզեցէք պահս, և կացու-
ցէք սրս սուտս վասն Աբաւթեայ՝ Թէ օրհնեաց զՅած
և զարքայ, այսպէսն հայհոյեաց: Եւ՛վ պահք փութով և
լի անօրէնութեամբ. քարոզեցին պահս, զի սպանումն
արասցեն: Իսկ Աբաւթ քարկոծէր և մեռանէր: Եւ
իբրև լսեր Յեզաբէլ, ասէր ցայր իւր ցԱքաաբ. արի
ժառանգեա զայգին, զի մեռաւ Աբաւթ: Իսկ նա
առ ժամանակ մի տրտմէր, և ապա մնանէր ժառանգէր
զայգին: Եւ յայնժամ առաքեր առ նա Յած զՅղիա մար-
գարէ և ասէր. երթ ասա ցԱքաաբ, Թէ փոխանակ զի
սպաներ և ժառանգեցեր և հեղեր արիւն արդար, այն-
պէս հեղցի արիւն քո, և շունք լիզեսցեն զարիւն քո և
պոռնիկք լուասցեն յարեան քումմէ: Աստուածական էր
բարկութիւնն, լի սաստիկ հրամանօք, լի պատժովք:
Եւ տես եթէ յո՞ առաքէ զնա. յայգին. ուր մեղքն ե-
ղեն, անդ և պատիժքն. ուր անօրէնութիւնն, անդ և
պատուհասն: Իբրև տեսանէր զՅղիա Աքաաբ, ասէր՝
Թէ "Ահա գտեր զիս Թշնամի իմ,,. իբրև այն Թէ յան-
ցաւոր գտեր զիս և մեղաւոր, ունիս ժամանակ առ՛ի
պատժել զիս: Գտեր զիս Թշնամի իմ՝ զի ասէրն, քան-
զի հանապազ յանդիմանէր զԱքաաբ Յղիա. գիտեր
Թէ մեղաւ: Յամենայն ժամ, ասէ, յանդիմանիկիր զիս,
բայց այժմ աւելի ևս՛ի դէպ պատուհասես զիս: Եւ
կարդայր առաջի նորա զպատուհասն. "Այսպէս ասէ
տէր, փոխանակ զի սպաներ և ժառանգեցեր և զարիւն
առն արդարոյ հեղեր, այսպէս հեղցի քո արիւնդ, և
շունք լափեսցեն զարիւն քո և պոռնիկք լուասցեն յա-

լեան քում,, : Այսպէս նմա զհրամանն՝ թէ ածական կը պատուհասն : Եւ իբրև լսեր զայս Աքաաբ, յոյժ ոգայր և տրտմէր վասն մեղացն և ձանձրանայր զյանցանսն, և ածէ անցուցանէր ՚ի նմանէ զպատուհասն : Այլ նախ յանձն առեալ առաջի կայր Եղիայ, զի մի սուտ երևեսցի, և ջնջոյն կիրս կրեսցէ զոր կրեացն Յովհան :

Այսպէս ցնաւածՙ թէ երթ քարոզեա ՚ի քաղաքն մեծ ՚ի Նինուէ, յորում բնակեալ էին երկոտասան բիւր մարդկան, թող զկանայս և զմանկտի, թէ “Դրեք ևս աւուրք և Նինուէ կործանեսցի,, : Եւ Յովհան ոչ կամէր երթալ, գիտացեալ զմարդասիրութիւնն Այ. այլ դառնայր ՚ի փախուստ : Այսր. եթէ ես երթայցեմ քարոզիցեմ, և դու իբրև մարդասէր զղջանայցես, և ես իբրև սուտ մարգարէ մեռանիցիմ: Այսպէս սակայն և ծոյլն ոչ առեալ թադուցանէր, և պահէր անդրէնՙ ի Նինուէ, որպէս և զնմանատուն զծառայակից իւր պահէր :

“Այ, ասէ, Յովհան փախչել, և եգիտ նաւ մի որ երթայրՙ ի Ցոպպէ. ետ գինս և եմուտ ՚ի նա,, : Որ փախչիս, Յովհան. յերկիր յայլ փախչիս. այլ “տեառն է երկիր լրիւ իւրով,, : Կամ ընդ ծով երթայցես. “նաև նա է ծով և նա արար զնա,, : Այլ յերկինս. ո՞չ լսար Դաւթի զի ասէՙ թէ “տեսի յերկինս զգործս մատանց քոց,, : Այսպէս սակայն յերկիւղէն փախստական լինէր. կարծէր թէ փախչիցի, այլ ձշմարտութեամբ փախչէր յայ անհնարին է : Այլ յորժամ եհան ընկեաց զնա ծովն արտաքս ՚ի Նինուէ, ապա քարոզէր և ասէր. “Դրեք ևս աւուրք և Նինուէ կործանեսցի,, : Օ՛ի գիտասցես թէ այն իսկ կայր ՚ի մտի, ՚ի փախուստ տայր զանձն, թէ ած մարդասէր է, զղջանայ վասն չարութեանն զոր ասայ ածել ՚ի վերայ նոցա. և ապա երևեսցի նա իբրև սուտ մարգարէ : Օ՛ի յետ քարոզելոյն ՚ի Նինուէ, ելանէր արտաքս քան զքաղաքն, և հայեցեալ ակն ունէր թէ զինչ լինելոց է : Եւ իբրև տեսաներ թէ երեք աւուրքն անցանէին և պատուհասն ոչ առնոյր վՀու, յայնժամ ապա ինքնին մտայոյզ լինէր և ասէր. “Ո՞չ այս էին բանքն զոր խորհէի՛ թէ ած գթած է և ողորմած, երկայնամիտ է և զղջանայ վասն չարեաց մարդկան ,, :

Եւ արդ զի մի նոյն իրքն անցցեն ընդ Եղիա որպէս

և ընդ Յովհան, ասէր նմա զկրան թէ վասն էր Աքսաբու նեղէրն։ Նա զինչ ասէ ած ցՆովհա. «Տեսո՛ր, ասէ, զկարդ գնաց Աքսաբ սգով և տրտմութեամբ առաջի իմ. և մի արարից ըստ յարուցեան նորա»։ Ծառայ[1] տեառն իւրում լինիցի ջատագով, և աղերսիցէ ած մարդոյ վասն մարդոյ։ Մի կարծեր, ասէ, թէ վայրապար ինչ նեղեցի նմա, այլ զի չզջեաց զբարսն և փոխեաց, և անցոյց զբարկութիւն իմ։ Մի կարծիցես սուտ զմարգարէութիւնն, զի դու չշմարտութեամբ ասացեր. եթէ ոչ էր փոխեալ զբարսն, ունէր արդարեւ կրել զպատիժ պատուհասին. այլ նա աւանիկ զբարսն փոխեաց, և ես անցուցի զբարկութիւնն։ Նա ասէ. տես ո՛րպէս գնաց Աքսաբ սգով և տրտմութեամբ առաջի իմ. ոչ արարից ըստ բարկութեան իմոյ։ Տես զկարդ ՚ի տրտմութենէ քաւին մեղք։

Արդարդ Հանապարհ ապաշխարութեան, զի ՚ի բազմութենէ Հանապարհացն դիւրին լիցի քեզ փրկութիւն գտանել, տես որպիսի զէն ե հեզութիւն և խոնարհութիւն, և նոքօք լուծանես զկնճիռն մեղաց։ Ընկիս և զսոցա վկայութիւն ՚ի գրոց ընթերցուածոց որ առ փարիսեցին և մաքսաւորն։ Նէին, ասէ, փարիսեցին և մաքսաւորն ՚ի տաճարն կալ յաղօթս։ Նա սկսանէր փարիսեցին զիւրոյ զառաքինութեանցն թիւ ասել. ոչ եմ մեղաւոր որպէս զամենայն աշխարհս և ոչ որպէս զմաքսաւորս զայս։ Ողջուառական և անյագ անձն, զամենայն աշխարհս պարտաւորեցեր, ընդէր և զոր առ քեզ մերձաւորդ էր՝ նեղեցեր. ո՞ւր էր բաւական քեզ աշխարհս ամենայն, եթէ ոչ և զմաքսաւորդ դատապարտեիր. զամենայն ոչ բաւնաարկեցեր, և գնէ ՚ի մի այրդ ոչ խնայեցեր։ Ոչ եմ, ասէ, որպէս զամենայն աշխարհս, և ոչ որպէս զմաքսաւորս զայս. երկիցս ՚ի շաբաթու պահեմ, և տասանորդս տամ յամենայն ստացուածոց իմոց աղքատաց։ Ո՞ մաքարտաւանութեան բանս խօսեր։ Ով թշուառականդ, ոչ յագեցար աշխարհաւ, այլ զմի՞դ որ ընդ քեզ էր պարտաւորեիր։

Նա իբրև լուաւ զայս մաքսաւորն, ոչ ասաց թէ դու ո՞վ ես որ ընդ իս զայդ ասես, կամ ուստի գիտես զվարս

1 Նայդպէս ամենայն օրինակքն. իսկ յոյնն բառիւ պերն ծառայի։

իմ, ոչ երբեք կացեր ընդ իս, ընդէր այդպէս ամբար-
հաւաճէս, և կամ քեզ ոմն վկայ կայ բարեգործութեա՛ն
քում, զի զանձնդ գովես և յարդես։ Այլ ոչ ինչ տայր
պատասխանի առ այն մաքսաւորն, այլ խոնարհեալ եր-
կիր պապանէր և ասէր ցած, Թէ Աստուածիւն արա ինձ
մեղաւորիս։ Այս երբեմն խոնարհեալ հնազանդէր մաք-
սաւորն, լինէր արդարացեալ. և փարիսեցւին կորուսեալ
զարդարութիւնն զոր ունէր՝ իմանէր ՚ի տաճարէն. իսկ
մաքսաւորն իմանէր զարդարութիւն զգեցեալ։ Այս բանք
իրացն յայտնեցին. զի մին գործովքն յարդարութենէն
վրիպեր, և միւսն բանիւ խոնարհութե՛ զարդարութիւն
ստանայր։ Այս ոչ եթէ խոնարհութե՛ ինչ էր այն. զի խո-
նարհութե՛ յայնժամ էր՝ յորժամ մեծ ոք լինի և զանձն
խոնարհեցուցանէ. իսկ մաքսաւորին ոչ էր խոնարհու-
թիւն, այլ ստոյգ ճշմարտութեամբ բանիւք մեղաւոր
էր։ Օ՛ի զինչ իցէ այլ չար քան զմաքսաւորութիւնն,
ասա ինձ, որ օտար վաստակոց և վաճառական, օտար
աշխատութեանց բաժանակից. զի զոմն յաշխատութե՛
տեսանէր, և շահիցն բաժանորդ գտանէր. ո՛չ ապաքէն
դառն մեղք են մաքսաւորութիւն. զի ոչ այլ ինչ է մաք-
սաւորութիւն, բայց եթէ անամօթ բռնութիւն, օրի-
նաւորական մեղք, դէմք ագահութեան։ Օ՛ ինչ է չար
քան զմաքսաւորութիւնն, ասա ինձ, որ նաեւ ՚ի Հանա-
պարհակից [1], և զօտարաց աշխատութիւնն և զվաս-
տակս կթէ, և զաշխատութենէ ոչ ինչ փոյթ է նմա,
և յորժամ շահ՝ յորում ոչն աշխատեցաւ՝ անտի բա-
ժին առնու անիրաւութեամբ։ Իսկ արդ եթէ մաքսա-
ւորն որ Հնազանդեալ ապաշխարեաց՝ ետ արդարութե՛,
արդեաւ և առաւել որ խոնարհ և հեզ իցէ. զի ահաւա-
սիկ որ խոստովանեաց զմեղսն Հնազանդութեամբ՝ արդա-
րացաւ։

Այժմ ուսանել Թէ ով է խոնարհ և հեզ, հայեաց
՚ի Պաւղոսի խոնարհութիւնն, զՊաւղոս զվարդապետն
աշխարհաց զիմաստունն զհոգևորն, զանօթն ընտրեալ,
զնաւահանգիստն խաղաղութե՛, զաշտարակն անշարժ,
որ միով մարմնով ընդ ամենայն աշխարհ ընթանայր։
Տեսէք զնա, հայեցարուք ընդ նա խաղաղութեամբ,

1 Այլք յանդս կամ ՚ի կէս ճանապարհաց։

ընդ տգէտն և խմաստունն, ընդ աղքատն և ընդ մեծատունն. զնա Հզնարտուեթեամբ ասեմ խոնարհ և հեզ, որ բիւր ինչ աշխատութիւնս յանձին իւրում կրեր, որ բիւր անգամ պատերազմեալ նահատակեր ընդդէմ սատանայի, որ քարոզէրն և ասէր՝ թէ "Ե՞նորհք նորա որ յիս են՝ ոչ ինչ ընդունայն եղեն, այլ առաւել քան զամենեսեան վաստակեցի,,. որ բանտին համբերեր և տանջանացն և հարուածոցն, որ թղթովք իւրովք զամենայն աշխարհս որսայր, որ երկնաւորական քարբառոյն կոչեցաւ, որ հեզութեամբ ասէր՝ եթէ "Այս եմ տրտմեալ առաքեալդ, որ չեմ արժանի թէ կոչեցայց առաքեալ,,: Ցեսէր զմեծ խոնարհութիւնն, տեսէր զհեզութիւնն Պաւղոսի, տեսանէս զի տրտմ կոչէր զանձն և ասէր թէ չեմ արժանի թէ կոչեցայց առաքեալ, այն էր Հզնարտութեամբ խոնարհութիւն. աստի հրաժարեալ և զինքն տրտմ կոչէր: Օմնաւ ած թէ ով էր որ ասէրն զայն բանս. Պաւղոս քաղաքապետն երկնից, որ զմարմինն լոկ ունէր զիւրեաւ, սիւն հաստատութեանն եկեղեցւոյ, որ յերկրի հրեշտակ և յերկինս մարդ: Վկրաւ այսուհետև ընդ նորա գնացան հայեցեալ՝ զնորա գեղեցկութիւն առաքինութեանցն պատմեմք: Այլ այնպէս երբեք արեգակն ծագեալ պայծառական ձառագայթիւքն լուսաւորէ և ուրախ առնէ զաչս տեսլեան իմոյ, որպէս և զերեսան Պաւղոսի որ լուսաւոր առնէ զիմ միտս. զի արեգակն զերեսս միայն լուսաւորէ, իսկ Պաւղոս անդր՛ի վեր համբարձեալ թռուցանէ յերկինս ուր կամքն, և բարձրագոյն քան զարեգակն կացուցանէ՛ի վեր քան զլուսին: Օ՜ի այնպիսի է զօրութիւն առաքինութեանն, զմարդ հրեշտակ առնել, զոգիս յերկինս թռուցանել. զայսպիսի առաքինութիւնս ուսուցանէ մեզ Պաւղոս:

Այլ ոչ է զանց առնել որ առաջիս կայ. ցուցանել կամիմ զերջորդ Հանապարհն հեզութեան, եթէ մաքսաւորն ոչ խոնարհեցաւ, այլ ստուգութեամբ ասաց և մերկաց զիւր զմեղսն և եղև արդարացեալ. ոչ ինչս ծախեալով, և ոչ ընդ անդունդս անցանելով, և ոչ ընդ մեծ Հանապարհ աշխատելով, և ոչ զսիրելիս աղերսելով, և ոչ ժամանակ ծախելով. այլ հեզութեամբ և խոնարհութեամբ զարդարութիւն ստացաւ: Որում արժա-

նիս արասցէ ՚ած , և զմեզ զամենեսեան շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի ՚Քրիստոսի , որում փառք յաւիտեանս . ամէն :

Ի ՍԿԶԲՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴԱՑ ԱՍԱՑԵԱԼ, ՅԱՂՈՒՀԱՑԱՄՈՒՏՆ, ԵՒ ԹԷ ՎԱՍՆ Ի՞Ր ՅԵՐԿՆԷ ԵՒ ՅԵՐԿՐԷ ՍԿԻԶԲՆ ԱՐԱՐ ԶՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ՄՈՎՍԷՍ

Հեշտալի նաւավարաց է գարունն , ախորժելի և երկրագործաց . բայց ոչ նաւավարաց և ոչ երկրագործաց այնպէս հեշտալի է գարունն , որպէս օրք կամիցին իմաստասիրել ախորժելի է պահոց ժամանակ հոգևոր անձանց գարունն , ձկնարիւտ խորհրդոցն խաղաղութիւն : Վասնզի երկրագործաց հեշտալի է գարունն , զի ծաղկօք պսակեալ տեսանէ զերկիր , և իբրև զպատմուճան ինչ գնովաւ տարածեալ ամենայն ուստեք բազմազան բոյսք բանջարոց : Ախորժելի է և նաւավարաց գարունն , զի ծովային մկանունքն զգուշութեամբ ունին զնաւարկութիւնն տարածեալ աւեօքն , և ՚ի բազում խաղաղութեան գլխինքն խաղացեն , և մերձ առ նովին իսկ նաւուն ընկղմելով՝ բազում անգամ ՚ի վեր գալով երևեցին : Այլ մեզ հեշտալի է գարունն պահոց . զի յաւէտ մեզ ոչ ՚ի ջրոց , այլ յանբան ցանկութեանց զնաւուցանել սովորեաց . և պսակ մեզ ոչ ՚ի ծաղկանց , այլ ՚ի շնորհաց Հոգւոյն դնէ . “ Պսակ շնորհաց ընկալցիս , ասէ , ՚ի գլուխ քո ,, : Այ այնպէս ծիծաւն երևելով սովորեաց հալածել զձմեռն , որպէս պահք երևեալ զձմեռն սիրոյ մեռոյ արտաքս հանեն : Այ և այնուհետև կռիւ հոգւոյ առ մարմին , և ոչ ընդդէմ դառնայ տիկնոջ աղախինն . այլ ամենայն պատերազմ մարմնոյ լուծեալ լինի :

Այ արդ բազում է ՚ի մեզ խաղաղութիւն , յորով հանդարտութիւն , բեր և մեք զմակոյկ վարդապետութեանս ձգեսցուք ՚ի նաւահանգստեն ՚ի նաւահանգիստն առաքելով ՚ի լեզիս ձեր զբանս մեր . եկ ՚ի նրբագոյն միտս համարձակեսցուք և մեք յաղագս երկնի և երկրի և ծովու , և այլոց արարածոց մարմնոյս իմաստասիրեսցուք . քանզի այսոքիկ ընծերցան մեզ այսօր :

Այլ զինչ առ մեզ, ասէ, որ յաղագս արարածոց է բան սիրելի։ Վասնզի ի մեծութենէ և ի զեղեցկութենէ ստացուածոց հաւաստապէս երևի արարիչն, զի ոչքան ընդ մեծութիւն և ընդ գեղեցկութիւն արարածոց զարմանայցեմք՝ այնքան առ արարիչն պաշտպանիմք, մեծ բարի է գիտել զինչ արարիչ և զինչ արարած, զինչ գործ և զինչ գործողն։ Օ՛ի եթէ զայնսիկ հաւաստեաւ գիտելին Հինամիք Աչմարտութեանն, ոչ արդեօք զամենայն խառնակէնն զդերիվէրոյսն ի ստորև առնելով, ոչ զաստեղս և ոչ զերկինն ի խոնարհ՝ և զերկիր ի վեր տարեալ հանէին. այլ զերկնից Թագաւորն ի Թագաւորական ամբոցն ինքեանելով ընդ արարածս կարգեցին, և զստացուածս ածայինն նախագոյութեամբն պատուէրին։ Այթէ յաղագս արարածոց գեղեցիկ գիտէին խնամատարել մանիքեցիք, ոչ արդեօք զապականեալ զնիւթն յոչընչէն անեղութեան պատուով պատուէին։ Այթէ յաղագս արարածոց գեղեցկապէս գիտէին խնամատարել, ոչ մոլորէին ի Աչմարտութենէ, ոչ արդեօք հաւանեալ պաշտէին զստացուածս քան զստացողն։ Գեղեցիկ է երկինն, այլ զի երկիր պագցես առարչին. պայծառ է արեգականն, այլ զի պաշտեսցես որ գործեացն զնա. ապա եթէ կայցես մնայցես յարարածոցս ի հիացմանն, և առ գեղեցկութեան գործոցս անցեալ նստիցիս, լցուն քեզ խաւար լինի, մանաւանդ եթէ լուսոյն որպէս խաւարաւ վարիս։

Տեսէր որքան բարի է գիտել զարարածոցս զբանս։ Արդ մի զանց առնիցես զշահիւքն, այլ հաւաստեաւ միտ դիր ասացուածոյն. քանզի ոչ յաղագս երկնի և երկրի և ծովու միայն ասեմք, այլ և յաղագս լինելութեան մերոյ ասեմք, և ուստի մահ, ուստի տատանելի կեանքս, ուստի տրտմութիւնք և հոգք. զի յաղագս այդոցիկ և յոլովից այլոց բանս առաջի դնելով ած, ըզգիրս զայսոսիկ առ մեզ առաքեաց. ոչ որպէս թէ պատասխանիս ինչ մարդկան առնիցէ ած, այլ գուշ ի ձեռն մարգարէին ասելով. "Ահկայք և յանդիմանեսցուք առ սէ տեր,,։ Ոչ պատասխանիս միայն առնէ և յատեան մտանէ, այլ թէ որպէս փախիցուք ի գատապարտութենէն՝ ուսուցանէ. զի և ոչ վայրապար ասէ՝ եկայք և յանդիմանեսցուք, այլ յատաջագոյն վարդապետեաց

զինչ ասել և զինչ առնել իսկ պարտ, և այսպէս յա-
տեան ձգեաց։ Յե լուր վերայնի մարդարէական բա-
նիցս. “Ի ուսցարուք մնքուրք եղերուք. ’ի բայ բար-
ձէք զչարութիւն անձանց ձերոց. ուսարուք բարի առ-
նել, դատ արարէք որբոյն, արդարացուցէք զայրին ,,.
և ապա ասէ. “Եկայք յանդիմանեսցուք ասէ տէր ,,։
Ոչ կամիմ զձեզ մերկս և ամայիս յիրաւանցն առնել.
այլ զինեալ զձեզ պատասխանեօքն յայնպիսի յանդի-
մանութիւն կոչեմ. վասն զի յատեան կամիմ մտանել
ընդ ձեզ, ոչ զի դատապարտեցից, այլ զի խնայեցից։
Զայսպէս և այլուր ասէ. “Զայս դու զանօրինութիւնս
քո, զի արդարասցիս ,,։ Ունիս ասէս զառն և անընդել.
յառաջագոյն ժամանելով յափշտակեա զնորա կարգն,
և կարկեա զանմաթ բերանն։

Զդ ’ի սկզբանն ընդ մարդկան խօսէր Ած, որպէս
կարողութիւն էր մարդկան լսել. առ Զդամ եկն, նոյն-
պէս սատեաց Զայենի, այնպէս խօսեցաւ ընդ Զոյն,
այնպիսի հիւրութեամբ առ Զբրահամ եկն։ Նոկ յոր-
ժամ ’ի չարութիւն խոտորեցաւ բնութիւնս մեր, և
իբրև յարտաքին ինն սահման զինքն որոշեաց, յայն-
ժամ իբրև ’ի հեռաւորութեան որոշեցելոց զիր առա-
քեր, որպէս զի ’ի ձեռն թղթոյ ուրուք զառաջինն սէրն
նորոգեսցէ առ մեզ։ Յե զգիրս զայսոսիկ առաքեաց Ած.
իսկ եբեր Մովսէս։ Նոկ զինչ ասեն գիրքս. “Ի սկըզ-
բանէ արար Ած զերկինս և զերկիր ,,։ Զր աղագաւ ար-
դեօք ոչ յաղագս հրեշտակաց։ Վանզի եթէ յարա-
բածոցս արարիչն տեսանի, առաւելագոյն և արդեօք ’ի
նոցանէ երևեր. գեղեցիկ է երկինն, այլ ոչ այնպէս գե-
ղեցիկ իբրև զհրեշտակս. պայծառ է արեգակն, բայց
ոչ պայծառագոյն իբրև զհրեշտակապետս։

Ինդէր արդեօք զբարձրագոյն եթող զՀանապարհն,
ընդ Նաւաստագոյնսն մեզ առաջնորդել։ Ա՛ ասն զի ընդ
Հրեայսն խօսէր, որք յանբանութիւնն անկեալ կային,
Այգիպտոսէ այն ինչ ելեալք, ուր կռապրիլոսս և շունս
և զկապիկս պաշտէին մարդիկ. վասն որոյ և ոչ էր հնար
ընդ բարձրագոյն Հանապարհն առաջնորդելով գալ ա-
բարբնն. դեր ’ի վերոյ էր Հանապարհն այն, այլ խիստ
և զառ ’ի վեր և առաւել ուղղեալ տիարաց. վասն այ-
նորիկ զնոսա ընդ դիւրագոյնսն ածէր, յաղագս երկինի և

երկրի և ծովու և երևելեացս ամենեցուն առնէր զվարդապետութիւնս։ Այս ի միս այս էր պատճառն, յորժամ սուղ ինչ ամենեքին, լուր զնարդ ընդ նոսա մարգարէին յաղագս այնոցիկ խօսեացի վերին երանութեանցն. "Ո՛րհնեցէք զտէր յերկնից, օրհնեցէք զնա 'ի բարձանց. օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, գովեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա. զի նա ասաց և եղեն, ինքն պատուիրեաց և ստացան"։

Այս զինչ զարմանալի եթէ 'ի հնումն այսպէս էր վարդապետութեանն օրինակ. որ և 'ի նորումն յորժամ իմաստասիրապոյն վարդապետութեանցն էր ժամանակ, ընդ աթենացիսն Պաւղոս ընդ նոյն Ճանապարհ եկն, ընդ որ և Յովսէս զՀրեայսն խրատեալ։ Ոչ ի և ոչ նա յաղագս հրեշտակաց և հրեշտակապետաց ասաց նոցա, այլ յաղագս երկնի և երկրի և ծովու, այնպէս լինի հրապարակախօս լինէր. "Լուտուած որ արար զաշխարհս և զամենայն որ 'ի նոսա, նա երկնի և երկրի տէր է. ոչ 'ի ձեռագործ տաճարս բնակէ"։ Այլ և ոչ յորժամ ընդ փիլիպեցիսն խօսէր, ընդ այս Ճանապարհ ած զնոսա. այլ 'ի բարձրագոյնս Հանէր զնոսա 'ի հրապարակախօսութիւնս, այսպիսի լինի ասելով, եթէ "Լսեալ հաստատեցաւ ամենայն որ յերկինս և որ յերկրի է, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք և իշխանութիւնք և եթէ պետութիւնք, ամենայն նովաւ և 'ի նա արարաւ։ Այսպէս և Յովհաննէս զի ընդ կատարեալս խօսէր ընդ աշակերտսն իւր, առ որ զամենայն արարածս միանգամայն յիշեաց. քանզի ոչ ասէր թէ երկինն և երկիր և ծով, այլ "Լամենայն նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ"։ եթէ երևելիք և եթէ աներևոյթք։

Ո՛ր օրինակ առ վարդապետսն լինի. զի որք 'ի մօրէ զմանկունսն առնուլ վարդապետեին նոցա նախ առաջին ուսուցանելով զդիւրն, իսկ որ յայլմէն երթեկ առնուցու 'ի վարդապետէ զաշակերտսն, 'ի բարձրագոյն վարդապետութիւնսն տարեալ Հանէ, նոյնպէս առ Յովսէսիս և Պաւղոսիս և Յոհաննու եղև։ Այսու զի Յովսէս առ զբնութիւնս մեր, որ ոչ ինչ գիտէր, որ այն ինչ 'ի կաթանէն էր 'ի բաց վճարեալ՝ զառաջինն գիմծրագաշտութեանն մեզ ուսոյց զդիւրս. իսկ Յոհաննէս և Պաւղոս իբրև 'ի վարդապետէ 'ի Յովսէսէ զմեզ առնուլ, 'ի վար-

դասետութիւնս տարեալ Հանեն, և զառաջինսն դու զնաքեօք յափշտակեցին։ Յետոյ զերկոցուն զվարդապետութեանցն զազգակցութիւն. տեսիլ զմիաբանութիւնն. լուար որ յաղագս զգալեացս էր հրապարակախօսութիւն. լուր զարձեալ վասն Պաւթայ որ ասէն. "Օ՛ի նա ասաց և եղեն,,. նոյնպէս զարձեալ՝ի նոյնումն ասացին յաղագս աներևոյթ զօրութեանցն և վասն զգալեացս արարածոցս. "Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր,,։ Ահաս այս փոքր է և սակ և մի բան, այլ զամենայն զհակառակորդացն զաշտարակն կործանել կարէ։

Պիտեա և Հայեա. մանկիքեցին ասէ՝ եթէ անեղ է նիւթն. ասա նմա. "Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր,,. և զամենայն զամբարտաւանութիւն նորա կործանեա վաղվաղակի։ Աչս ոչ հաւատայ բանի դրոյս. և վասն այնորիկ իբրև՝ի մղեկանէ՝ի բաց դարձցուք՝ի նմանէ։ Օ՛ի որ այնմ ոչ հաւատայ երևելապէս, սուտ թեամբ զՀնարիան բամբասէ, և զիմաստ ոչ յայտնի ըզմղեկանութեան իւրոյ բերէ՝ի մէջ զանհաւատալի վարդապետութիւնն։ Այս կամ զիմաստ յոյնէն լինին, ասէ։ Պաւ լինձ ասա, զիմաստ յեղելոյ ումեքէ լինիցի ինչ. վասն զի յոյնէն երկիր եղև և ահա հաւատամ, իսկ դու յերկուանաս. և եթէ յերկրէ եղև մարդ՝ երկոքեան խոստովանիմք։ Արդ ասա լինձ զոր խոստովանիքն երկոքեան, և դիւրագոյնս ցոյց, զիմաստ եղև մարմնոյ բնութիւն. քանզի յերկրէ կաւ և աղիւս, սափոր և խեցի լինի. բայց մարմինն՝ի յերկրէ լեալ՝ ոչ ոք երբէք ետես։ Արդ զիմաստ եղև մարմնոյ բնութիւն, զիմաստ ոսկր ատեղծաւ, որպէս ջիլք, զիմաստ երակք, որպէս ջնջեղակք, որպէս նեարդք և ձարպ և մարմին և մորթ և եղնգունք և մազ և այսպիսեայ այլ և այլ բնութեանց զանազանութիւնք՝ի միոջէ պատճառէ՝ի յերկրէ էին։ Աչս ոչ ունիս ասել։ Այս զիմաստ ոչ իցէ յիմարութիւն, ոզք զյայտնիսն և զդիւրագոյնսն անգիտանան, զգժուարինսն և զտարակուսելիսն խուզել և քննել։

Վամին զքեզ և յայլ դիւրագոյնս ածիլ որ հանապազ լինին. այլ սակայն և ոչ զայս բանս ինչ ասես։ Հապա ցիւ կերակրիւք հանապազօր. ասա լինձ զիմաստ հացի բնութիւնն այն յարիւն փոխելի, և՝ի խօզ և՝ի խոր-

տեաղ մաղձն և ՚ի յայլ նման խռնատութիւնս. զի ամն է խիտ և խիտ, և արիւն կակուղ և ցնդող. իսկ միւսն սպիտակ և ցորենագոյն, և մինն շառագոյն և սեաւ. և զայլոցն ամենեցուն զգունոց զանազանութիւնս եթէ ոք կամիցի անցանել բանիւ, յոլովագոյն զմիջոցն գտցէ զհաւն և զարեան։ Արդ զիարդ պատճիկ լինիւր, ասա ինձ և զբանն հատո՚ի բաց. այլ ոչ ունիս։ Յա արդ զհանապազորդեան կերակրոյս որ պիտոյն՝ ընձեռել ոչ ունիս, զոր զարթուցութեամն պահանջես զքնութի՚. և զիարդ ոչ վերջին անմոռութիւն իցէ այն։

Եթէ իբրև զմեզ է ած, պահանջեաց զեղելոյն ըզբան. մանաւանդ եթէ և ոչ այնպէս. քանզի յոլովք են ՚ի մարդկանէ եղելոց արուեստից զի ոչ պիտոյս լինին՝ ասել ոչ ունիս. որպիսի ինչ, զիարդ յերկրէ ընդ հողոյն լինի ոսկւոյ բնութիւն, զիարդ յապակոյ մաքրութիւն աւազն փոփոխի. և այլս բազումս է ասել այդպիսիս, որ լինին ՚ի մարդկային արուեստ, և զբանն ոչ գիտեմք։ Այլ սակայն եթէ ըստ մեզ է ած, պահանջեաց զբանն. ապա եթէ անբաւաբար ՚ի միջի է որոշեալ և առանց հաւասարութեան գերազանցեալ, զիարդ ոչ վերջին յիմարութիւն իցէ՝ զանբաւ նորա զհմաստութիւնն և զգօրութիւնն խոստովանելով ածային և անհասանելի, իբրև զմարդկային զարուեստէ խմբէ այնպէս մի ըստ միոջէ զեղելոյն բանս պահանջել։

Այլ ՚ի բաց Թողով զխորհուրդս, ՚ի վէմն անշարժ վերստին ելցուք. “Ի սկզբանէ արար ած զերկինս և զերկիր,,։ Ի վերայ այսր բանի կաց միտս. մի մարդկային խորհրդոց խռովութիւնք փոփոխեսցեն զքեզ. “Վասն զի խորհուրդք մարդկան երկնչոտք և դիւրաւ չանցանելիք մտածութիւնք նոցա,,։ Ի՚ զհաստատանն Թողլով, զապականութենէն և որ դիւրաւն կործանի զփըլկութենէն բուռն Հարկանիցես զանձին քո. այլ միա, որ ուսարդ և հաւատացեր, և ասա. “Ի սկզբան արար ած զերկինս և զերկիր,,։ Եթէ մանիքեցի ոք մերձես ցի, եթէ ոք զմարկիոնիտեանն զվաղենտինեանոսեան ազանդն ախտանայցէ, եթէ այլ ոք ով իցէ, զայս բան առաջի դիջիր. և եթէ տեսանիցես ծիծաղեալ, դու արտասուեա զնա իբրև մոլեկան. տօսախի ունին նոքա ըզդպինն զեղին, և կափուցեալ զյօնս, և զբանիկ ցածու-

թիւն. այլ փախիր ՚ի պատրանացն, և որ ընդ մոլթով ոչխարի ծածկեաւն է՝ գայլ գիտեա. և մանաւանդ վասն այնորիկ առեա զնա, զի առ քեզ առ ծառայակիցդ ընդել և ցած կարծի թէ իցէ, իսկ առ Հասարակաց մեր տելն քան զկատաղեալ շունսն մոլեկան ևս է, և առանց հաշտութեան յերկինս զպատերազմին գործէ, մանաւ ան հաշտելի և զօրութիւն հակառակ ընդդէմ կացեալ ՚ի ուսուցանէ։ Փախիր ՚ի չարութեանցն, առեա զնահատ ցու դեղն. զոր ՚ի հարցն ընկալար զժառանգութիւն ածային գրոց՝ զհաւատս և զվարդապետութիւնս, զայս ընկալ բազում զգուշութեամբ. "Ի սկզբան արար Աստ զերկինս և զերկիր,,։ Այս զինչ այսոքիկ. նախ առաջին զերկինն և ապա զերկիրն, նախ զձեղունն և ապա զյատակս. զի և ոչ ընդ հարկաւորութեամբ անկեալ կայ, և ոչ կարգի արուեստին ծառայէ. վասն զի բնութեան և արուեստի և այլոցն ամենեցուն՝ կամք ՚ի են արարիչ և արուեստագէտ։

"Այս երկիր էր անտեսանելի և անկազմ,,։ Արդ զաղաւաս զերկինն յարմարեալ էած անցոյց, իսկ զնոյն ինքն զերկիրս առ սակաւ արուեստակել ասէ Մովսէս։ Ոչ ՚ի լաւագոյն ՚ի տարրէն ուսեալ զնորա զօրութիւնն, հաւանեցաւ Թէ և զայս կարէր որպէս զնա գոյացուցանել. այլ յաղագս քո և փրկութեան քո ոչ արար այնպէս։ Ոչ նմաղդ վասն իմ և վասն փրկութեան իմոյ, ասէ։ Հասարակաց սեղան և գայեակ և մայր է երկիր, յոլովակի և գերեզման հասարակաց. և մարմինք մեր ՚ի սմանէ և կերակուր մարմնոյս մերոյ աստուստ, քնակութիւն ՚ի սմա և վարք, և զկնի մահու ՚ի սա դարձեալ Աստուածարհ։ Արդ զի մի պիտոյիցս հարկաւորութիւն առաւել քան զարժանն հրաշանալ ընդ սա պատրաստեաց, և զգալարեգործութեանցն յոլովութիւն յամ պարշաւութիւն կործանեսցէ, ցուցանէ քեզ նախ քան զկնելն անկերպարան և անօրինակ, զի զտկարութիւնս տեսանելով սքանչասցիս ընդ արարիչն սորա և զամենայն աստի զգեալս զօրութիւնս, զի փառաւորեսցես որքան յաղագս մերոյ հանգստեանն պատրաստեաց։ Վառաւոլ ՚ած ոչ ուղիղ վարդապետութեամբքն միայն, այլ և ՚ի ձեռն առաքինութեանն. քանզի "Վայծառասցի, ասէ, լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տես-

ցեն զգեղեցիկ զգործս ձեր և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս ։։

Յամի յաղագս ողբմութեան առաջի դնել ձեզ բանս. այլ աւելորդ ինձ թուի բանիւ վարդապետել ձեզ, որ գործով խրատել կարէք այժմ՝ ի միջ նատեալ հօտս մերոյ և վարդապետի. որ զտունս Հայրենի իբրև ի նմին ինքն այս ի նախահարցն ընկալեալ, զի յօտարացն միութիւն զսա կազմիցէ, այնպէս միշտ ամենայն ուսուեք որ յաղագս Ձեմարտութեանն էն հա- լածեալք՝ բառնալով ընդունի և բազմապատիկս միս- թարութեամբն միսիթարէ. մինչ զի ոչ դիտել թէ պարտ է սմա՞ առաւել կոչել զտունս զայս՝ քան թէ օտարաց. մանաւանդ վասն այսորիկ իսկ սորա պարտ և արժան է վարկանել զտունս լինել՝ զի օտարացն է։ Վասնզի մեր ստացուածք յայնժամ առաւել մեր լինին, յորժամ ոչ մե՛ք այլ օտարացն միշտ զայնոսիկ ունիցիմք։ Այս զիարդ, եա ասեմ։ Եթէ յաջոյ ձեռին աղքատին դիցես զաջ- ձախն, ոչ զրպարտողն զքեզ զրկել կարէ, ոչ յաչաղկոտի ակն տեսանել, ոչ աւազակ յաւիշտակէ, ոչ գող ական հա- տանել, ոչ ծառայ առնլով փախչի. վասն զի անկողո- պուտ է տեղին այն։ Իսկ եթէ ի տան թաղեսցես, ա- ւազակի և մահատուի և յաչաղկոտի և զրպարտողի, ծառայից և ամենայն ընտանւոյ առնիցես դիւրամուտ զտե- ղին։ Հազուագիւտ բիւր զրօք և նգօք յարտաքին դժրու- թեանն ամրացուցանեն, բայց՝ի պահապանացն ոչ կա- րեն փախուցանել. այլ նոքին իսկ պահապանքն առնլով փախչին։ Տեսանե՞ս զի յայնժամ մանաւանդ տեղիք ստացուածոյն եմք, յորժամ աղքատացն զայնոսիկ ա- նանդեմք։

Այլ ոչ պահպանութեան աղագաւ միայն ամրագոյն է տեղին այն, այլ և շահիւ և յոլով օգտիւ որոց պատ- ճառքն լինի։ Վասնզի եթէ մարդկան փոխ տայցես, ըզ- հարիւր մասն առնուս. իսկ եթէ ՚ի ձեռն աղքատացն, ոչ զհարիւրապատիկ մասն, այլ զհարիւրապատ- տիկն ընկալցիս։ Այլ եթէ սերմանեսցես ՚ի քաջաբեր անդաստան, յորժամ յաճախագոյն բերիցէ զպտուղն, տասնապատիկ քեզ զսերմն բերէ. իսկ եթէ յերկինս սերմանեսցես, զկնի լինելոյն հարիւրապատիկ, և զկեան- սըն յաւիտենականս ընկալցիս։ Այս ասա բազում աշ-

խաւտութիւնք որ զսերմն ընկենուն յերկիր. քայց անդ առանց արօրոյ և եզանց և մշակաց և ամենայն տարաժանման սերմանողական բուսանին պտուղքն. ոչ խոր-շակ, ոչ հեղեղք, ոչ ժանդ, ոչ կարկուտ, ոչ մարախոց[1] հոյլք, ոչ գետոց ուղիք և ոչ այլ ինչ ամենևին որք անդ սերմանեն՝ երկեցուցանել կարեն երբեք. այլ քան զամենայն ինաս զեր՝ի վերոյ անցեալ կան անդ սերմանողքն և սերմանքն:

Ա.րդ յորժամ ոչ վիշտք, ոչ ինաք, ոչ անբերութիւն իցէ՝ և ևս առաւելագոյն սերմանողացն լինիցին բոյսք և այնքան յաճախեն բարիքն, մինչ ոչ ունկն լուաւ և ոչ աչն ետես և ոչ՝ի սիրտ մարդոյ եղ, զնաւրդ ոչ վերջին յիմարութեան իցէ թողուլ զյաճախագոյնն, և զնուազիցն զհետ երթալ, և զգուշագոյնն լքանել, որ դժրութեամբքն լի են և բազում վնասս ունին՝ յայն ձեռնարկել: Ա՞ր արդեօք լինիցի մեզ թողութիւն որք զայն առնեմք, ո՞ր պատասխանիք: Ա՞մենայն իրօք զաղքատութիւն առաջի դնեմք. այլ ոչ եմք քան զայրին զայն աղքատագոյն, որ զերկուս դանգան ևեթ ունելով և զայն արկ: Ա՛յսոհետև ընդ նորա ընչեղութիւնն. նմանեսցուք յօժար առատաձեռնութեան նորա, զի և յառատութենէն այնմ բարեաց հանդիպեսցուք. որոց լինի մեզ ամենեցուն արժանաւոր լինել աղօթիւք և բարեխօսութեամբ քահանայիցս չնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք և զօրութիւն հանդերձ սուրբ հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԴԴԻՐ ՅԱՂԱԴՍ ԱՐԵԳԱԿԱՆ ԵՒ ԼՈՒՍՆԻ, ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԵՒ ԱՅԼՈՑՆ ԱՍԱՑ՝ ԵՂԻՑԻՆ, ԻՍԿ ՎԱՍՆ ՄԱՐԴՈՑՆ՝ ՍՐԱՍՏՈՒԻՔ. ԵՒ ՋԻՆՂ՝

ԸՍՏ ՊԱՏԿԵՐԻՆ

Յիշեցէք զինդիրն որ յառաջագոյն եղաւ մեզ առաջի. քանզի յայսոսիկ զմեզ յապարաստանութիւն և յանհնութիւն ամբառնայք, մինչ զի և՝ի խնդրոյն ևս

1 Յօրինակին մահոց հոյլ. եգաւ ըստ յունին:

լուծումն յանդգնել մեզ. մանաւանդ եթէ ոչ իսկ իցէ ապարասանութեան և յանդգնութեան գործ այսպիսի։ Ո՛չ և ոչ՝ ի մեր զօրութիւնս ինչ վստահանամք, այլ յաղօթս քահանայիցդ և՝ ի ձեր, զամենայն՝ ի բաց ընկենուլ մերկանամք՝ ի հանդէսս յայսոսիկ։ Պաղատանք եկեղեցւոյ այնքան կարեն, մինչ զի թէ և քան զքաւրինս անզգայագոյնք ենք, քան զամենայն թևաւորս թեթևագոյնք զնեզուս մեր գործելին։ Ո՛չ զոր օրինակ հիւսիսի՝ ի մէջ անկեալ առաջաստի նաւին՝ քան զնետ արագագոյն ալացուցանէ զնաւն, նոյնպէս և եկեղեցւոյ աղօթք յաստղին լեզու անկեալ՝ քան զամենայն հիւսիսոյ Հողմ արագագոյն շարժէ զնեզուն. յաղագս որոյ և մեք հանապազօր համարձակեցուք հանդիսանամք։ Ո՛չ եթէ յարտաքին նահատակութիւնն որ տան միայն և քան ունելոյն բարեկամ՝ ի բազմութենէ՝ յօժարամտութեամբ՝ ի հանդէսն մտանէ, ծրչափ և առաւել մեք որք ոչ տան կամ քան միայն, այլ ամենայն իսկ տեսարանս յեղբարց և՝ ի հարց են հաւաքեալք՝ համարձակութեամբ զայս արասցուք. և սակայն յարտաքին նահատակութիւնն ոչ ինչ շահի նահատակեալն՝ ի սիրազան, այլ որքան զձայնն լսիցէ և աքանչելի լեալ երևեսցի, և հակառակիցն առ դիմամարտան որ՝ ի վեր նատիցին. բայց ի՞նչ ընդունել՝ ի հանդիսարանն և ձեռն կարկառել և լուծանել զստահնահատակեցելոյն և կամ այլ ինչ այսպիսի ցուցանել՝ նոյա ոչ է օրէն։ Պանդխտի որք զՀանդէսն զայնոսիկ կանխաւ յօրինեցին, ցիցս շուրջ արկանելով և չուանս ձգելով՝ այնպէս զտեսողացն զմոլորութիւն արգելուն։ Այս ինչ զարմանալի եթէ տեսողացն ընդունել ոչ է օրէն, ուր և մանկամարդացն արտաքոյ մրցարանին կալով՝ ի հեռուստ զվարդապետութեանն կառուցուածքն ընձեռել մարտակոյացն հրամայէն, բայց՝ ի մօտ ոչ ներքին երթալ։ Այլ ոչ և աստ այնպիսի. քանզի ատ վարդապետի և տեսողն՝ ի մեզ ընդունել հնար է, և մօտ կալ սիրով և աղօթիւք մերում տիարութեանս օգնել։

Այդ եկայք ըստ ըմբռնման զմարտէն բուռն հարցուք. զի նոքա յորժամ՝ ի մէջ կալեալք լինին, ի բռնութենէ նէ ապահանեալ տեղւոյն արտաքս զինքեանս՝ ի շուրջ կացելոյն ձգեն յաղագս տեղւոյն նեղութեան, և մաք-

ըելով ՚ի յինքեանց զաւազն՝ դարձեալ ՚ի հանդիսի տե-
ղին վերատին երթան, և երթեալք անդրէն ոչ ուղղա-
կի մերձենան առ մարտակիցսն, այլ այնու օրինակաւ ՚ի
կապանս զինքեանս կացուցանեն, յորում էին յառա-
ջագոյն՝ և լուծանն։ Այլ զի և մեզ ոչ տեղւոյ նեղու-
թիւն, այլ ժամանակի ուղղութիւն լուծանել զանոն
հարկաւոր է, եկայք երթիցուք ՚ի տեղի հանդիսի վերըս-
տին, և զհանդէսն ընկալցուք ՚ի յընթերցելոյն մեզ։

«Այս ասաց Տէր՝ արասցուք մարդ ըստ պատկերի մե-
րում և ըստ նմանութեան»։ Ի յառաջագոյն զայն
պարտ և արժան է խնդրել, ընդէր արդեօք յորժամ
երկինն լինելը, ոչ երբեք ասացաւ՝ արասցուք. այլ եղե-
ալ երկինն, եղիցի լոյս, և ի ըստ միոջէ արարածոցս մանն
այսպէս. աստ միայն խորհուրդ և այցելութիւն և առ
այլսն համապատիւ հաւասարութիւն։ Ո՞րինչ ար-
դեօք իցէ որ լինելն հանդերձեալ էր զի այսքան վայե-
լէ պատիւս։ Արդ է կենդանի մեծ և հրաշալի, քան
զամենայն ստացուածս նոյ պատուականագոյն. յաղագս
որոյ երկինն և երկիր և ծով և այլ ամենայն ստացուա-
ծոցս մարմին. մարդ որոյ փրկութեանն Տէր այնպէս փա-
փագեաց, մինչ զի և ոչ ՚ի միածինն խնայեաց յաղագս
նորա. քանզի ոչ հեռացաւ զամենայն առնելով, և հնա-
րելով ՚ի վեր նստոյց։ «Այս ընդ նմա նստոյց զվեր ընդ
աջմէ յերկինսաւորս ՚ի Քրիստոս Յիսուս»։ Ա՛սն այ-
սորիկ խորհուրդք և այցելութիւն և հաւանակցութի-
իբրև ոչ եթէ Տէր խորհրդոյ ինչ կարօտանայ, մի լիցի.
այլ ձեռօք բանիւն զերեզմոն ցուցանել զպատիւ։

Այս զիարդ քան զաշխարհ պատուականագոյն է։ Ո՛ր
օրինակ Թագաւոր հանդերձեալ մտանել ՚ի քաղաք, զօ-
րավարք և իշխանք և զինուորք և ամենայն ծառայք յա-
ռաջագոյն ժամանեն՝ զի զթագաւորական ապարանս կազ-
մեսցեն, և զայլ ամենայն սպասաւորութիւնսն յօրինե-
լոլ հանդերձ բազում պատուով ընդունին զթագաւորն,
նոյնպէս և աստ իբրև զթագաւոր ոմն հանդերձեալ մը-
տանել, յառաջագոյն ժամանեաց երկինն, նախ ընթա-
ցաւ արեգակն, կանխաւ եմուտ լոյս. ամենայն եղև և
յօրինեցաւ, և ապա մարդ հանդերձ յորով պատուով
՚ի ներքս եմուտ։ «Արասցուք մարդ ըստ պատկերի և
նմանութեան մերում»։ Լուիցէ հրեայ, յով ասաց Տէր՝

արասցուք։ Ա՛ովսէսի են գիրքս, Ա՛ովսէսի՝ որում հաւատալ ասեն, այլ ոչ հաւատան. «Հանդիպ եթէ հաւատայիք, ասէ, Ա՛ովսէսի, հաւատայիք արդէ օր և ինձ»։ Բայց այժմ առ նոսա գիրքն, իսկ առ մեզ գրոյն գանձն. առ նոսա գիրքն, առ մեզ և գիրքն և միտքն։

Ա՛րդ առ ո՞ասէ՝ արասցուք մարդ։ Յհրեշտակ, ասեն, և ցհրեշտակապետ։ Ա՛յրասպար և յախուռն բարբանջեն. զոր օրինակ ստահակք ծառայք՝ի տերանց պատուհասեալք՝ ուղղակի ոչ ինչ ունիցին պատասխանիս առնել, որ ինչ գայցեն՝ի լեզուն՝ զամենայն խօսին, նոյն պէս և նոքա. առ հրեշտակ ասաց. ո՛ր հրեշտակ կամ ո՛ր հրեշտակապետ. քանզի ոչ հրեշտակաց է զաշխարհ առնել և ոչ հրեշտակապետաց գործել զայս։ Ա՛յլ ո՛ր աղաչաւ յորժամ զերկինն արար՝ ոչ ասաց հրեշտակի և կամ հրեշտակապետի, այլ ինքեանմէ անցոյց՝ի մէջ. իսկ յորժամ զպատուականագոյն կենդանին քան զերկինն և զամենայն աշխարհ առնել զմարդն, յայնժամ զծառայս հաւատարմագս արարչութեանն։ Ա՛յ են այսքիկ, ոչ են. հրեշտակացն է գործ մերթ կալ, այլ ոչ զարարածս առնել. հրեշտակապետացն սպասաւորել, այլ ոչ կամացն հաղորդ լինել խորհրդոյն։ Ա՛ուր զինչ ասէ Պետրոս յաղագս սերովբէիցն վերին զօրութեցն. «Ցեսի զաչերն նոսեալ՝ի վերայ աթոռոյ բարձու և վերացելոյ, և սերովբէքն մերձ կային շուրջ զնովաւ. վեց թևք միոյ միոյ, երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, պարսպէին զդէմսն. յայս է թէ յաղագս ոչ կարելոյ ընդունել զիայլատակումն որ յանթառոյն բերեալ լինէր։ Ո՛չինչ ասես. սերովբէքն մերձ կային և յայնպիսի զարմացման և՝ի հիացման էին, և զայն՝ խոնարհումն ոչ տեսանէին. իսկ հրեշտակք և խորհրդոյն ևս հաղորդ լինելոյն նման և այցելութեանն հաւասարօրդք. այլ ոչ ունին այսքան։

Ա՛ւ ո՞վ զք էիկ, ասէ, ցոր ասեն՝ արասցուք մարդ։ «Աքանչելի խորհրդակիցն, իշխանն, ուժն հզօր, պետն խաղաղութեան, Հայրն հանդերձելոյ յաւիտենին»։ նոյն ինքն միածինն ոչ որդին. ցնա ասէ՝ «արասցուք մարդ ըստ պատկերի և ըստ նմանութեան մերում»։ Ո՛չ և

1 Յօրինակին գայնոսիկ։

ոչ ասաց իսկ՝ ըստ իմում և ձերում. այլ "ըստ պատկերի մերում,,, զի կերպարան ցուցանելով՝ և զինանուն Թիւն. բայց ոչ և հրեշտակաց ոչ է մի կերպարան և ոչ նմանութիւն նոցին. քանզի որպէս արդեօք արարչին և սպասաւորի կերպարան մի լիցի և նմանութիւն. որպէս զի ամենայն ուսուածք մեզ[1] բանս ասացաւ. և զիշխանութեն աստ ասէ զկերպարան, զոր՝ի կարգէ չայտնէ: Ա՝ան զի ասելով՝ ըստ կերպարանի և ըստ նմանութեան, ՚ի վերայ էած. "Եւ իշխեսցեն ձկանց ծովու,,. իսկ իշխանութիւն ոչ է մի. քանզի որպէս արդեօք ծառայից և տեառն, սպասաւորացն և հրամանատուին:

Բայց և այլ ինն զարձեալ մեզ ՚ի վերայ բերէն ումանք ասելով, Թէ կերպարան ունի ոճ զայս՝ զոր և մեքս ունիմք: Զարաչար իմանալոյ զասացեալսն. վասն զի ոչ զբնութեանն ասաց զկերպարանն, այլ զիշխանութեանն զպատկերը, որպէս չայտնեցաք կարգաւ ՚ի վերաբերեալսն: Եւ զի ոչ է ոճ բնութիւնն մարդապատկերը, լաւ Պաւղոսի որ ասէ. "Ո՛չ ոչ պարտի ծածկել զգլուխ իւր, վասն զի պատկերը և փառք ոյ է. իսկ կինն փառք է առն իւրում. չաղագս որոյ, ասէ, զիշխանութիւնն ունելով՝ ի վերայ գլխոյն,,: Պատկերը աստ անփոփոխելի կերպարանացն առ ոճ է. և վասն այնորիկ կերպարանն մարդոյ ասի, վասն զի և ոճ այնպէս տպաւորեցաւ. ըստ նոցա ոչ էր պարտ զայրն միայն պատկեր ասել, այլ և զկինն: Քանզի կնոջ և առն զուգահաւոր է կերպարանն և նմանութիւն մի: Եւ ընդէ՞ր այր կերպարան ոյ ասի, իսկ կինն ոչ ևս. վասն զի ոչ զկերպարանէն որ՝ ի զեմն է՝ ասէ, այլ զկերպարանն որ ըստ իշխանութեն է զոր այրն միայն ունի և ոչ ևս կինն: Ա՝ան զի այրն ոչ ումեք հնազանդի. իսկ կինն ընդ հնազանդութեան է առն, որպէս և ոճ ասաց. "Ո՛ւ այր քո դարձ քո, և նա տիրեսցէ քեզ,,: Չաղագս այնորիկ այրն կերպարան ոյ է, զի ոչ ունի զգերագոյն, որպէս և ոչ քան զոճ վերագոյն ոք է, այլ ամենայնի իշխէ. կինն փառք էն առն, զի նա հնազանդեցաւ: Եւ զարձեալ այլոր ասէ. "Ա՝ն պարտիմք ասկւոյ և արճամբոյ կամ քարանց քանդակե-

1 Յայնն չէր բանն ասասնէն:

լոց յարուեսցեն և ի մեռածութենէն մնդկան՝ վարկանել զծածուխն լեալ նման ,, ։ Օ՞ր ասէ, այսպիսի է. ոչ միայն քան զերեւելի պատկեր գերազանցեալ է ծածուխն, այլ և ոչ մնօք տպաւորեալ ինչ այնպիսի հնար լինի որպէս էն ծածուխ։ Այս ինքն զմարդոյ կերպարան ունել կարիցէ զորմէ Պաւղոս ասէ՝ և ոչ մի միտք մնդկայ կարէն տպաւորել յինքեանս զնոյ զբնութիւնն. զմեր կերպարանս և զդէմս ամենեքեան ի մեզ դիւրաւ տպաւորեմք խորհրդով։

Վարձեալ յաղագս աղօրմածութեան կամէի ի վերայ բերել քանս, այլ ժամս մեզ ոչ ներէ. յաղագս որոյ ի լուութիւն երթիցուք. այսուհետև այն միայն եւ բաշխաւոր առնել զձեզ՝ հաւաստեաւ զամենայն ստացեալն ունել, և յաւէտ ուղիղ առաքինութեանն առնել խնամախալութիւն, զի մի մոռի և վայրապար այսր ժողովիցիմք։ Օ՞ի՝ եթէ զուղիղ վարդապետութիւնն պահիցեմք, և գործոյն առաքինութիւն ոչ մերձ լինիցին, ամենայն իրօք արտաքս անկանիմք յաւիտենական կենացն. զի ,, Ո՛չ ամենայն որ ասէ ինձ տէր տէր՝ մտցէ յարքայութիւնն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է ,, ։ Բաղցուք այսուհետև զկամս նորա ամենայն փութով, բարեմտութեամբ և յօժարութիւք, զի կարասցուք յերկինս մտանել և բարեաց սիրազոյն ոյց հանդիպել. որոց լինի ամենեցունն մեզ արժանաւոր լինել ընդ հօրն և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստի, ընդ որում փառք հօր հանդերձ սուրբ հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԶԻՆՉ Է՝ ԸՍՏ ՆՄԱՆՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ԸՆԴԵՂ ԱՄԱՅԵԱԼ ԱՍՏՈՒԱԾՈՑ ՄԵՋ՝ ԻՇԽԵՍՅԵՆ ԳԱՂԱՆԱՅ, ԵՒ ՈՉ ԻՇԽԵՄՔ. ԵՒ ԶԻ ԲԱՑՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ Է ԱՑՍ

Օ՞ր օրինակ սերմանողացն օգուտ ոչ ինչ է յորժամ՝ ի ձանձաղարշս զսերմն ընկենուցուն, նոյնպէս և աստղին ոչ ինչ առաւել յորժամ՝ ի լսողացն միտս բանն

1 Ցօրինակին պահասէր Զի ԵՒԷ ··· պահիչեմք. յաւելաւ՝ ի յումէն։

ոչ բերիցի, այլ վայրապար յօդս ցնդի բանին բնութիւն և անօգուտ լքանէ զլսողն։ Օ՜յս ոչ վայրապար ձեզ ասացի. այլ զի մի առ պարզապէս մոռածութիւնան բերանաբացեալք միայն իցէք, այլ զի և զխորագոյնսն հասմարձակիցիք իմանալ։ Օ՜ի եթէ ոչ այժմ իմանեմք՝ի խորս գետոյն յորժամ թեթև են մեր առք առ՝ի լուղերն, և առ ակն, ոչ ինչ մեղձուլ չարաչ կերակրով նեղեալք, բաւական լիցի հոգին, որպէս զի մի հեղձնուլ, երբ իմացուք, յորժամ վայելչութեան և փափկութեան է, արբեցութիւն և սեղան շատակերութեամբ լցեալ. այլ յայնժամ և ոչ չարժել զանձինս է դիւրաւ. այնպէս բեռն ծանր կերակրոյն Ա՜նշէ զոգին։

Ա՜յ տեսանէք զի և որք զքարիւնն բազմապատիկ գտանել կամին, ոչ՝ի վեր առ երեսն նատելով զալիսն թռուելով կարիցեն գտանել զցանկալին, այլ՝ի նոյն ինքն՝ի խորսն մերձին. և սակայն բազում աշխատութիւն՝ի խնդրելն, յոլով վտանգ՝ի գտանելն, և զկնի գտանելոյն շահ ինչ ոչ. քանզի զինչ մեծ՝ի ներքս՝ի կեանս մեր բերիցէ բազմապատիկ քարանցն դիւտ. երանի թէ ոչ և մեծ չար ևս ինչ բերէր։ Ա՜յսն զի որ խոտորեցուցանէ զմեր կենցաղս և վեր՝ի վայր առնէ, ոչ այլ ինչ է իբրև զընչիցն մոլութիւն։ Ա՜յլ սակայն զոգի և զմարմին նոքա մտանելով առօրեայ կերակրոյն աղաղաւ, յանդգնին մտանել յալիսն. իսկ աստ ոչ վիշաք, ոչ աշխատութիւն այնպիսի յերկարեալ, այլ սուղ է և թեթև, և նոյն իսկ գտելոցն պահպանութիւն. վասն զի որք դիւրաւն գտանին, դիւրաւ և արհամարհելիք բազմց լեալ թուին։ Ա՜յ է աստ ալեաց խառնուածն՝ի խորս գրոց, այլ քան զամենայն նաւահանգիստս դիւրագոյն այս խոր. ոչ է հարկաւոր՝ի խաւարային անդընդոյն խորս իմանել, և ոչ զանբան ջրոյն Հոմանց՝ի վերայ փրկութեան մարինոյն դարձուցանել. այլ յոլով է աստ լոյս, և քան զնոյն ինքն զՀառագայթս պայծառագոյն, բազում է խաղաղութիւն. ամենայն խռովութիւն խափանեալ, և գտողացն այն շահ որքան և ոչ բանիւ յանդիման կացուցանել կարելի է։ Ա՜՛ի այսուհետև վաստահասցուք խնդրել։

Ա՜ւաք եթէ ըստ կերպարանի արար Աստ զմարդն, և եթէ զինչ իցէ ըստ կերպարանի և նմանութեանն, ա-

սացաք եթէ ոչ բնութեանս անփոփոխութիւն, այլ իշխանութեանն նմանութիւն. իսկ ըստ նմանութեանն՝ յաճ է լինել և հանդարտ, ըստ կարի նմանեցուցանել ձեզ ըստ քանի իշխանութեանն, որպէս և ասէ Պրիստոս. "Նմանեցէք եղերբօր ձերոյ որ յերկինս է,,: Օ՛ի զոր օրինակ յերկրիս յայսմիկ՝ի լայն և ընդարձակ կենդանիք են ունկնք անքանք և ունկնք գազանք, նոյնպէս և ընդարձակութեան ոգւոյս մերում՝ի խորհուրդս ունկնք են անքանապոյնք և զեռունք, և ոմանք գազանապինք և վայրագք. և պարտ է ամենեցուն այնոցիկ իշխել, խորհրդոյն նոցա ամենեցուն զիշխանութեանն տալ:

Եւ զիմիրդ արդեօք յաղթող լինին գազանապինք խորհրդոյն, ասէ: Օ՛րինչ ասես, ով մարդ. առիւծոյ յաղթեմք և զնոցա անձինս ընդելացուցանեմք, և յերկաւանսն եթէ զգազանային խորհուրդ չընտանութիւն կարես փոփոխել. և սակայն առիւծու ըստ բնութեան է՝ գազանութիւնն, և ոչ ըստ բնութեան ընտանութիւնն. իսկ քեզ հակառակ նմին՝ ըստ բնութեան[2] ընդել, և ոչ ըստ բնութեանն գազանութիւն: Մարդ որ ըստ բնութեանն է արտաքս հանել, և զոչ ըստ բնութեանն զնմ՝ի գազանին յանձին. զի ըստ բնութեանն ոչ կարիցես պահել. և դիւրան է այս պղերգութիւն: Առիւծոյն յանձին և այլ իմն դժուարութիւն զինի այսոցիկ է. զի՝ի խորհրդոյն ամայի է գազանին անձն. այլ սակայն տեսեալ յոլովակի առաւել քան զոչխարս ընդելագոյն ընդ հրապարակս ածեալս, բազումք՝ի վաճառականն և արծաթ յոլով ետուն ունողին՝ վարձ իմն արուեստին և իմաստութեանն, որով և զգազանն ընտանեցոյց. իսկ քումմ անձինդ և խորհուրդ է և երկիւղ և յաւէտ բազում ուստեք օգնականութիւն: Ի՛ այսմ հետև բազայս ինչ ասիցես և պատճառս. կարողութիւն է թէ ախորժես հեզ լինել և հանդարտ:

"Դատաստան մարդ ըստ կերպարանի և նմանութեան մերում, և իշխեսցեն գազանաց,,: Դատաստան մեզ հեթանոսք՝ի վերայ գան և ասեն զբանն ստել. քանզի ոչ

1 Յօրինակին պակասէր է գոնէ բերաբ՝ի յունէն: 2 Յօրինակին նմանութեան:
զանութիւնն, և ոչ ըստ բնութիւն. յա-

մեք, ասեն, միայն ոչ իշխեմք գաղանացն, այլ և նոքա ևս մեզ իշխեն, և յաճախագոյնս մեզ սպկանեն արհաւիրս։ Յաւէտ այս ոչ ձշմարիտ. զի բաւական են դէմքն երևեալք յօտից՝ արտաքս մերժել զգաղանն. այնքան առաւել երկիւղն։ Այս եթէ ուրեք օգնել ինքեանց յարձակեացն, կամ սովոյ հարկ արարեալ, կամ ի մէնջ ուրեք նեղեալք՝ քաղցամ անգամ ի հարկաւորութենա կոչեմք զնոսա. այսոքիկ ոչ կատարեալ իշխանութեանն են։ Օ՜ի և ոչ եթէ ոք ի մէնջ աւազակս ի վերայ եկեալս տեսանիցէ զինեալ՝ ի վրէժ առնուլ յարձակիչի՝ իշխանութեան իրք են, այլ մանաւանդ իւրոյ փրկութեանն և նախախնամութենն. բայց սակայն ոչ սատի առնեմք զպատասխանիս, այլ ի միտս կողմանէ ուստի և ձեզ պիտանացու է ասել։

Երկիւղիմք ի գաղանացն և զարհուրիմք, ոչ ընդդէմ ասեմ, զի և յիշխանութենէ իսկ արտաքս անկաք, ըստ նոյն ասեմ և ես. բայց ոչ այս սուտ զայ զօրինեն ցուցանել։ Վանդի ի սկզբանն ոչ այնպէս իրքն անկեալ կային. այլ երկնչեր և դողայր, և ի ներքոյ սարսեալ էր տեառն. իսկ յորժամ ի հանդարտութենէն արտաքս անկաք և ի պատուոյն, նմին իրի[1] երկնչիմք ի նոցանէ։ Ասաքն և այս յայտ. «Վաճ զգաղանան առ Ադամ տեսանել զինչ կոչեցեալ զնոսա...». և ոչ հրաժարեաց իբրև զարհուրեալ Ադամ, այլ իբրև հնազանդեալ ծառայից՝ անուանս նոցա ամենեցուն եդ։ Այս էր նշանակ տէրութեանն. յաղագս որոյ և ձաճ կամէլով նման և ի ձեռն այսոցիկ վարդապետել զիշխանութեանն զարժանաւորութեր, զանուանցն դիրս հրամայեաց նման, և զդրեալսն կոչեաց այնպէս. քանզի զամենայն զոր կոչեաց Ադամ, այն է անուն նոցա։ Ի այն է նշանակ ոչ ահաւորք լեալ մարդոյն գաղանքն ի սկզբանն։

Երկրորդ միւս ևս քան զայս յայտնագոյնս՝ առ կինն օձին խօսք։ Օ՜ի եթէ էին ահաւորք մարդկան գաղանք, ոչ արդեօք տեսանելով զօձն՝ կայր ճապար կինն, և ոչ զխօսհրդակցութենէնն ընդունէր, և ոչ այնքան ընդ նմին կամակարութեամբ խօսէր, այլ վազվազակի արդեօք ի դիմացն տապնապեալ ի բաց գնայր. իսկ անդ խօսէր և

1 Յօրէն. պակասէր նմին իբր երկնչիմ ի նոցանէ. յաւելաւ ի յունէն։

ոչ երկնչէր, այլ ոչ ևս էր երկիւղ այս։ Այլ իբրև մեղքն մահն, ՚ի բաց բարձան պատուոյ իրք։ Այլ զոր օրինակ ՚ի ծառայն որք քաջահաճոյքն են՝ ահաւորք ծառայակացն լինին, նոյնպէս և մարդոյն եղև. ցորքան ունէր առաձ հանդիսական Աթիւն, ահաւոր էր զազանացն. իսկ յորժամ ընդդիմանայաւ, և ՚ի վերջին ծառայիցն երկնչոտ դառաւ այնուհետև։ Այս եթէ ոչ այս է, զու ինձ ցոյց նախ քան զմեզանան եթէ՝ ահաւորք էին զազանքն մարդկան. այլ ոչ ունիս։ Ակ եթէ զինի այնոցիկ եմնատ երկիւղն, և այս աներուանական նախանձառութեանն էր։ Վանզի եթէ տեսեալ պատուիրանն չարժեցաւ ՚ի մարդոյ անտի և լուծաւ պատիւն որ նման ընձեռեցաւ յայ անշարժ կալ մնալ, ոչ լիներ դիւրին. զի եթէ յորժամ անհնազանդին մարդիկ և ոչ անհնազանդքն՝ ՚ի նմին պատիւս վայելեցեն, հրահանգին ՚ի չարութիւնն և ոչ դիւրաս ՚ի բաց կան ՚ի չարէն։ Վանզի եթէ այժմ երկիւղիչ և պատուոյ և պատուհասից ՚ի վերայ եկելոց ոչ անսաձք ողջախոհանալ, զինչ արդեօք լինեաք եթէ ոչ լինչ կրեաք չար յաղագս դժնդակութեանցն որոց յանցեաքն. որպէս զի խնամելով զմեզ և հոգ տանելով ձե ՚ի բաց եհան յիշխանութենէն։

Զու ինձ և աստանօր դիտեա զանձաւ մարդասիրութիւն նորա. վասն զի Ադամ յամենայն ՚ի պատուիրանէն խոտորեցաւ և զընաւիւն էանց զօրինաքն. իսկ ձե ոչ երթայ զամենայն զպատիւն, և ոչ ՚ի բնաւէ զնա արտաքս եհան յիշխանութենէն, այլ զայն կենդանիս միայն արտաքս յիշխանութենէն եթող լինել՝ որք ոչ յայժմանա օգտաբերք ՚ի պէտս կենացն էին. իսկ զկարևորսն և զպիտանացուս և զքր յաւէտ զսպաստարութիւն ՚ի ներքս բերեն կենաց մերոց, զնոսա եթող մեզ ՚ի ծառայութեան։ Այթող զարջառայ զնախիրս, զի արօր ձգեսցեն, և զերկիր հերկեսցուք և սերմանեսցուք. և թող զբեռնակրաց ազգ, զի զպիտանացուսդ բերելով փոխանակիցեմք միմեանց, և օգնականութիւն առ վաստակն ունիցիմք. եթող զոչխարացն հօտս, զի ունիցիմք հանդերձս բուսականապէս զգեստուցն պէտս. և զայլ ազգս կենդանեացն եթող, որք յորով մեզ ՚ի ներքս բերեն զպէտս։ Վ ասն զի պատուհասելով զմարդն ասէր. “Պտուղքք երեսաց քոց կերիցես զհաց քո,,. զի մի

քիրան այն և աշխատութիւն և տարժանութիւն անբաժանելի եղեալ իցէ, թէ և ասցուց զծանրութիւնն՝ զբեռն քրտանց յոլովութեամբ անտանոց գործակից եղելոյ մեզ աշխատութեանս այսմիկ։

Այլ զոր օրինակ տէր ոք մարդասէր և խնամող զծառայն իւր խոշտանգելով՝ բժշկութիւնս ինչ՝ ի վերայ բերցէ տանջանացն, նոյնպէս և Աստ դատապարտութիւն՝ ի վերայ գնելով պատժոյն՝ ամենայն օրինակաւ զդատապարտութիւնն թէ և ապոյն ախորժեալ առնել. քրտամբք զմեզ դատապարտեալ և հանապազորդեան վաստակաւ, իսկ յաշխատութիւնսն մերձենալ՝ և զբազում անառնոյն ազգս պատրաստեալ ընդ մեզ։ Յաղագս այնորիկ ամենեցուն պօհասցուք վնտանել. քանզի և տալ մեզ զպատիւն և դարձեալ՝ ի բաց բառնալ զայն և ոչ զամենայն առնուլ և երկիւղ՝ ի մեզ հաստատել՝ ի գաղտնացն, և զամենայն իսկ եթէ հաւաստեաւ քննեսցէ ոք՝ բազում խնամութեամբ լի է, յոլով խնամակալութեամբ, յոյժ մարդասիրութեամբ. յորս լցի մեզ վայելել միանձնաւորապէս՝ ի փառս նորա որ զործեացն զայս. ալ նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵԹԷ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԵՒՍ ՕՐԻՆԱԿՍ Ի ՆԵՐՔՍ ՄՈՒԵՒՆ ՄԵՂՔ. ԵՒ ԱՒ ՊԱՂԵՐԳԱՅԵԱԼՍՆ ՈՐՔ ԼՍԵՆ ԵՒ ՈՉ ՊԱՏՈՒԱՆՆ ՔՆՈՂՍ

Լուայք երէկ զիարդ արար Թագաւոր և իշխան գազանաց զնորդն Աստ, և ուրպէս՝ ի Թագաւորութենէն զնա արտաքս ընկէց. մանաւանդ եթէ ոչ Աստ զնա, այլ ինքն զինքն՝ ի ձեռն անհնազանդութեան եհան արտաքս՝ ի պատուոյն։ Պանզի հանդիպեալ Թագաւորութեանն՝ ու մարդասիրութեանն եղև գործ. զի ոչ փոխանակ ուղղութեանս ինչ հատոյց նմա զայն երախտիս, այլ և նախ քան զլինելն զարդարեաց զնա պատուոյն։

Այլ զի մի ասիցես, եթէ յետ լինելոյն մարդն՝ յոլով ուղղութիւնս այնուհետև արար և այնպէս յորդորեաց զԱստ առ՝ ի տալ նմա զգաղտնացս իշխանութիւն, հանդերձեալ զնա ստեղծանել՝ յաղագս իշխանութեան

նորա խօսեր այսպէս ասելով. "Արասցուք մարդ ըստ կերպարանի և ըստ նմանութեան մերում, և իշխեսցեն գազանաց երկրի,,: Եւ յետ քան զկենդանն պատիւն, և յառաջ քան զարարչութիւնն պսակն, և նախ քան զկենդանեն 'ի Յաւուրսն աստուածական աթոռն ելանէր: Այդուիկ ոչք ընդ հնգեամբք են, 'ի վերջին ծերութեան յետ բազում աշխատութեանց և բիւր վտանգից զորս 'ի խաղաղութեան և 'ի պատերազմունս կրեն, յայնժամ պատուեն. իսկ ես ոչ այսպէս, այլ վաղվաղակի լեալ նա 'ի պատիւն յայն կամ, ծանուցանելով եթէ ոչ ուղղութեամբ երախիք են լեալքն, այլ ամօթոյին ընդոհ և ոչ պարտք:

Արդ առնուլ նմա զիշխանութիւնն՝ յայ մարգասիրութենէն միայն լինէր. իսկ արտաքս անկանելն յիշխանութենէն՝ յիւրմէ պղերգութենէն: Եւ զոր օրինակ թագաւորք զոչ հնազանդեալս հրամանացն իւրեանց լուծանեն յիշխանութենէն, նոյնպէս և ամօթ մարդոյն յայնժամ, երբոյ զնա յիշխանութենէն: Չարկաւոր է ասել այսօր օրքան և յայլմէ պատուոյ զմեզ մեզացն քնութիւն մերժեաց, և օրքան ծառայութեան 'ի ներքս եմոյծ օրինակս, և իբր զբռնաւոր ոք բազմօրինակ կապանօք ամենապատիկ իշխանութիւք զմեր քնութիւնս կապեաց:

Արդ է իշխանութիւն և ծառայութիւն առաջին, ըստ որում որք կանանչ իշխեն. վասն զի յետ մեզացն այսմ պէտք եղեն: Եւ յառ քան զյանցանելն հատապատիւ էր առնն. զի յորժամ ստեղծանէրն զնա ամօթ, որովք քանութիւք վարեցաւ 'ի ստեղծման առնն, նոքիմբք և յարարչութեան կնոջն. զի որպէս ասաց զնմանէ "Արասցուք մարդ ըստ պատկերի և ըստ նմանութեան մերում,,, և ոչ ասաց՝ եղիցի մարդ, նոյնպէս և զկնոջէն ոչ ասաց՝ եղիցի կին, այլ և աստ "Արասցուք նմա օգնական,,. և ոչ պարզաբար օգնական, այլ "ըստ նմա,,. զարձեալ զհամապատիւն յայտնեաց:

Եւ քանզի յորժուն 'ի կենացս մերոց պէտս անասունքն օգնականութեան հաղորդութիւն 'ի ներքս առ ծեն, զի մի 'ի ծառայիցն զոք կարծեսցես լեալ և զկինն, տես զիարդ առնէ երևելի և զգնազանութիւնն: "Ամօթ զգազանան, ասէ, առաջի Աստուծոյ, և ոչ գտաւ օգնական նման նմա,,: Եւ զինչ արդեօք, ոչ էր օգնական

ձի յարմարեալ ՚ի պատերազմունս. եղեն ոչ էր արդեօք օգնական արօր ձգելով և աշխատակից մեզ լինելով ՚ի սերմանցն սփռումն. էշ և ջորի ոչ էր օգնական զբեռնաւնան բերել և գործակից լինելով մեզ: Այո՛ան այսորիկ հաւաստեաւ առնէ զորոշումն. զի ոչ ասաց պարզաբար՝ եթէ ոչ գոյաւ օգնական նմա, այլ "ոչ գոյաւ օգնական նմանն նմա,,: "Յոյնպէս և արտ՝ արասցուք նմա օգնական՝ ոչ պարզաբար, այլ "արասցուք նմա օգնական ըստ նմա,,: Այսոքիկ նախ քան զյանցանսն:

Իսկ յետ մեղանացն "Զի այր քո դարձ քո, և նա տիրեսցէ քեզ,,: Զարի զքեզ, ասէ, համապատիւ. ոչ վարեցար զեղեցկատես իշխանութեամբն, փոփոխեցիր առ հնազանդութիւնն. ոչ բերեր զաղատութիւնն, ընկալ զծառայութիւնն. ոչ պիտես իշխել, և ՚ի ձեռն նոքին իրացն ուսուցեր զիմքն, ըստ այսմհետէ իշխեցեալ, և զայլն ծանիցես տէր. "առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ,,: Այս զի՞ "նա քեզ տիրեսցէ,, և ծանր լինչ վարկանիցի զհերութիւնն, նախ առաջին զինամակալութեանն զանուն եդ, "առ այր քո դարձ քո,,. այս է՝ ապաւինութիւն քո և նաւահանգիստ և ամրութիւն նա եղիցի քեզ. յամենայն ՚ի վերայ եկեալ գժնդակութիւնն առ նա դարձցիս՝ ապաւինել քեզ տամ: Այլ այսու միայն, այլ և բնականօք ոմանիք զնոսա կապեաց հարկաւորութեամբք, իբրև անխզելի ինն զիփափազանսն շղթայս զնոքօք էսրկ:

Տեսեր զիարդ ՚ի ներքս մուծին զհնազանդութիւնն մեզքն. իսկ դիւրահնարն և իմաստունն ասծ և այնքիւք յօգտակարութիւն մեզ արար: Լուր զիարդ և Պաւղոս վանն նորա հնազանդութեանն ասէ, զի ուսցիս զհնոյն և զնորոյս զձախակցութիւնն. "Կին, ասէ, հեզութեամբ ուսցի ամենայն հնազանդութեամբ,,: Տեսեր զի և նա հնազանդեցուցանէ առնն զկինն. այլ ներեաց և լուիցես զարձեալ զնոյն պատճառ: Ընդէր ա մենայն հնազանդութեամբ "կնոջ, ասէ, վարդապետել ոչ հրամայեմ,,: Ա արդապետեաց երբեմն չարաչար Ադամայ: "Եւ ոչ ձնհաւանեաց չարապէս, "այլ կալ ՚ի ցածութեն,,: Այս և զպատճառն. "Ադամ ոչ խաբեցաւ, իսկ կինն պատրեալ ՚ի յանցանս եղև,,: Յաղագս այնո-

բիկ՝ ի վարդապետական աթոռոյն վնա՝ ի վայր ինջոյց։ Օ՛ր զի վարդապետեն ոչ գիտէ՝ ուսցի. ապա եթէ ոչ ախորժէ ուսանել՝ այլ վարդապետել կամիցի, և զինքն և զբրբ ուսանինն կորուսանէ. որպէս և կինջն յայնժամ եղև։ Այլ զի հնազանդեցաւ առնն և յաղագս մեզայն էր հնազանդութիւնն՝ յայտ յայսցանէ է։

Կամիք և զայն լսել "Ընդ այր քո դարձ քո, և նա տիրեսցէ քեզ,,։ Ախորժէս ուսանել զիարդ և զինանամնութիւնն այնորիկ Պաւղոս խօսի, և զահրութիւնն խաւնէ ընդ աչերն։ Այս ո՞ր զայս առնէ. կօրնթացեսցն առաքելով ասէր. "Ընդ սիրեցէք զկանայս,. ահա "առ այր քո դարձ քո,։ "Այս կանայք զի երկնչեցին յարանց,, ահա "նա տիրեսցէ քեզ,։ Տեսէ՞ք զիարդ առանց ծանրանալոյ է տէրութիւն, յորժամ ցանկայող մելիկան կնոջ ծառայելոյ տէր էցէ, յորժամ երկիւղն հանդերձ սիրով՝ ի բաց բառնայ զծանրութիւն ծառայութեանն։ Ընդ մի զայս իշխանութիւն՝ ի ներքս և՝ մեծ անհնազանդութիւն։ Այս մի յայն ինչ հայեսցիս եթէ առ պիտանացուս յարմարեալ զայն ասէ, այլ զի զնոյն ինքն զծառայութեանն բնութիւն մեզքն պատրառեցին։

Այս երկրորդ ծառայութեանն տեսակ քան զառաջինն ծանրագոյն, և նա զսկիզբն և զպատճառն՝ ի մեզայ ունի. քանզի յետ ջրհեղեղին որ առ Նոյեւ և հաստատական աւետեցաւն նաւազբեկութեանն աւետաստակութեանն այնորիկ մեղաւ՝ ի ծնողն Քանան, և մերկացեալ տեսանէր զՆոյն, մանաւանդ եթէ մերկացոյց առ եղբարսն չարախօսութեամբ, և անտի ծառայ լինէր եղբարցն։ Ա՛ստ զի ժանտացոյց զբնութեանն քաջատոհմութիւն՝ յօժարութեանն չարութիւն. և մանաւանդ յիրաւի. վասն զի զիրբ բիւրս յաղագս արդարոյն առնէն պատասխանիս, յաւէտ եթէ քանիս զամենայն նման ընձեռանէն զթողութիւն։ "Ահաւասիկ Նոյ այր երկրագործ,,։ Այս սկսաւն յոլով ունի զպատասխանիսն արբեցութեանն. զի ոչ որքան պէտք էին ըմպել զգինին՝ գիտէր, և ոչ զիարդ ըմպել՝ անապակ եթէ ընդ ջուր խառնեալ. ոչ եթէ վաղվաղակի ըմպել՝ ի հնձանացն լցեալ կամ եթէ սուղ ինչ ժամանակ անցեալ։ Ընդ զիրբ՝ ի ձեռն այսոցիկ պատասխանիս առնէն յաղագս

Այլ, իսկ ոչ ի նմանէ ծնեալն էր և յաղագս նորա ապ-
բեալ, զի վասն հօրն պատասխ ոչ կորեաւ ընդ այլսն ա-
լեկածութեամբ, ոչ ի նոյն ինքն ի բնութիւնն Հայեր
և ոչ զերկիւղն յիշեր և ոչ երկիւղիւ ողջախոհա-
նայր, տեսանելով տակաւին զինչուարս այ բարկութեանն
ճնացեալս և զիշատաւութեանն հետս երևեալս և զե-
ղելոյն զերկիւղ զարգացեալ, թշնամանեաց զծնողն:
Յաղագս այսորիկ պատուիրէ ումն ասելով. "Մի փա-
սաւորիր յանապատաւութենէն հօր քո, զի ոչ են քեզ
փսաք որբոյն թշնամանք,,: Այլ և ոչ զայսոսիկ ծա-
նեաւ նա, այլ մեզաւ մեղս քան զամենայն թողութիւն
մեծագոյն. և նորին ազագաւ պատիժս ետ ընդ մեղացն
զծառայութիւնն, եղբայրն սպրդակ եղև, և որ ի բնու-
թենէն էր նախագահութիւնն՝ բարուցն չարութեան
մնանեաց: Ահա երկրորդ ծառայութեանն օրինակ:

Կամիս և զերրորդն ուսանել. ծայրագոյն է նա և
քան զերկոսեան զառաջինան և յաւէտ ահաւոր: Ոմն
զի այնպիսւք ոչ ողջախոհացաք, յերկարեաց ի մէզ
զկապանան: Այս ըստ իոկ այն. իշխանացն և պետացն. և
ոչ այնպէս իբրև զծառայութենացն, այլ յայժ ահաւոր:
Ոչանզի սուր է տեսանել սրեալ ամենայն ուրեք, դա-
հիճս, պատիժս, տանջանաբանս, պատուհասս, մինչև
մահու և կենաց իշխանութիւն: Այս զի այսօրինակ իշ-
խանութիւն հարկաւոր եղև յաղագս մեղացն, լուր
դարձեալ նմին Պաւղոսի որ ասէն. "Կամիս չերկնչել
զիշխանութենէն, բարի արա և ընկալցիս գովութիւն
ի նմանէ. ապա եթէ չար առնես՝ երկիր, զի ոչ մնոտի
զսուրն ունի,,: Ցեսանես զի յաղագս չարագործացն է
իշխանն և սուրն. լուր դարձեալ զնոյն յայտնապոյն:
"Ոչ ըմէժ խնդրել, ասէ, չարագործին,,: Այս ոչ ասաց
եթէ վայրագագոյ իշխան է, այլ զինչ. "ոչ ընդունայն
զսուրն ածէ,,. զինեալ քեզ զղատաւորն ի վերայ կա-
յցայ: Օ որ օրինակ հայր որ բարեգութ զոդիս յինքն
ատահակեալս և յաղագս հայրենի սիրոյն արհամարհողս
տեսանելով դատաիարակայ և վարդապետայ ահաւո-
րայ ընձեռէ, նոյնպէս և ասծ զբնութեամբ մեր քամհարող
զնա յաղագս բարերարութենն տեսեալ՝ իբրև վարդա-
պետայ ոմանց և դատաիարակայ իշխանացն ատանդեայ.
որպէս զի զմեր պղերգութենէն ի բայ դարձուսցէ:

Կայց եթէ ախորժէք, և՛ի հնումն զսոյն զայս տեսցուք, զի յաղագս չարութենն մերոյ՝ իշխանութես այսմիկ եղեւն պէտք։ Ի մարգարէիցն ամն զայրացեալ յաղագս անիրաւութեց այսպէս ինն ասէր. “Ահա՛ ի հարստահարել ամբարշտի զարդարն, և առնեսցե զմարդիկ իբրև զձկունս ծովու և իբրև զսողունս որք ոչ ունին իշխանս,,։ Արդ ուրեմն յաղագս այդորիկ իշխանք, զի մի իբրև զսողունս լիցեմք, դորին աղագաւ պէտք, զի մի իբրև ձկունք կլանիցեմք զիրերաս. զի զոր օրինակ յաղագս ցաւոց դեղք, նոյնպէս և յաղագս մեզայ պատիժք։ Ա՛ստ որոյ և որ առաքինութեամբն կեայ՝ նոցա վերայ կացութեանն ինչ ոչ կարօտանայ, լոկ զինչ ասէն Պաւղոս. “Արի կամիս չերկնչել յիշխանէն, զբարիս գործեաց և ընկալցիս գովութիւն ի նմանէ,,։ Ցեսցուք և, ասէ, քո գաւառսդն. եթէ ուղիղ կեցցես, ոչ տեսցէ միայն, այլ և գովիչ։ Այս զինչ ևս ասեմ և զիշխանին պէտս, որ և քան զիւս իշխանացն իւր մեծագոյնս գեր ի վերոյք են որք զիմաստասիրութեանն զհետ երթան. քանզի իշխանք՝ իշխանաց են օրէնք։ Արդ սակայն և ոչ օրինաց կարօտանայ որ հեշտութեամբն կեայ. լոկ և զայս Պաւղոսի որ ասէն. “Արդարոյն ի վերայ օրինք ոչ կան,,. յաւէտ ևս իշխանացն վերակացութե ոչ է։ Ահա երրորդ իշխանութեանն օրինակ, և սա ի մեզանն և ի չարութենէն ունի զպատճառն։

Այժ զինքդ ասէ Պաւղոս “Ոչ է իշխանութիւն, եթէ ոչ յոյ,,։ Այս մեզ զիշխանս յօգտակարագոյնս պատրաստեաց։ Ձին ի ներքս զակտան նորա մեզքն. իսկ ածն առ ի յօգտակարութիւն մեզ վարեցուսն։ որպէս և պէտք ծառայութեանն ի մեզանէն եղեւն, և պատեհագոյնս զնոսա յարմարեաց ոյ իսնաստութիւնն։

Արդ կանգնեցարուք, և զծուլութիւն ի բաց դիք։ Ո՞ինչ է այս. յաղագս զրոյ ընդ ձեզ խօսիմ, զուք զայս ձեր ի բաց զարձուցեալ՝ առ Քահանն և որք լուցանեն զձրագսն[1] փոխոխեցայք. ո՞րքան յուլութեան նշանակ իցէ այս, զմեզ թողուլ՝ ի նոսա նայել։ Խարոյկ լուցանեմ և ես ի զրոյ, և լեզուս մեր Քահ բորբոքեալ ի վարգապետութեանն։ Արդ լոյս մեծ և լուսաւոյն է

1 Պահասէին տողք երիք ի բաղդատութենէ ընդ յունականին։

քան զայն. զի ոչ էթէ պատրոյգ ՚ի ձէթ թայեալ լու-
ցանեմք որպէս անդ, այլ զպիս բարեպաշտութեամբ
առաջեալս՝ լսելութեանն ցանկութեամբ բոլորեմք:
Խօսէր երբեմն և Պաւղոս ՚ի վերնատան ուրեմն: Բայց
մի՛ ոք զնս կարծեսցէ Պաւղոսի հաւասարեցուցանել
զանձն: ոչ եմ մտեալ. այլ զի ուսանիցիք եթէ որքան
փոյթ ՚ի լսելութիւնն յուցանել է պարտ և արժան:
Խօսէր Պաւղոս ՚ի վերնատանն, և երեկոյ ժամանեաց,
որպէս և այժմ, ջահք էին բազումք ՚ի վերնատանն.
և ապա Եւտիքոս ՚ի պատուհանէն ՚ի վայր անկաւ. ոչ
երթայ անկումին զժպղտիլ, և ոչ յարոյց զտեսութիւնն
մահն. այնպէս էին բնեռեալք ընդ լսելութիւն ածային
բանից: Դուք ոչ ինչ օտար աւեսկք և ոչ հրաշափառա-
գոյն. այլ այր որ զսովորականն առնէ, և զդէմն անդր
դարձուցէք, որմ՛ի թողութեան այդ իցէ արժանաւոր:
Մի՛ ոք ինչ սաստիկ զպատուհասս կարծեսցէ. զի ոչ է-
թէ առեամք, այլ խնամ տանելով մեզաղրիցեմք:
“Երժանի հաւատալոյ վերջ բարեկամաց քան զկամա-
ւոր հաճոյսս թշնամեաց,,: Երդ յարուցեալք այսու-
հետև ՚ի բաց թողէք զայդ հուր, և հայեցարուք ՚ի
լոյս գրոց:

Ասէ զի միւս ևս օրինակ իշխանութեան ձեզ կա-
միմ ասել, որ ոչ ՚ի մեզաց հառ զպատճառն, այլ ՚ի նմին
իսկ ՚ի բնութենէս: Լաւ ո՞ր իցէ այս. որ ՚ի ծնողացն ՚ի
մանկտնան լինի: Վասնզի երկանցն հատուցումն երախ-
տեացէ այնպիսի պատիւ. յաղագս որոյ և ամն ասէ.
“Երբէք տերանց ծառայեաց ծնողացն,,. և զպատճառն
՚ի վերայ ածէ ասելով. “Օ՞ ինչ նոցա տայցես, որպէս
նոքա քեզ,,. զքեզ ծնան, դու զնոսա ծնանել ոչ կա-
րես: Լաւ զի յայսմիկ նուազեալք լինիմք, այլով իւիք
յոլովեացուք ՚ի նոսա պատուովքն, մի՛ յաղագս բնու-
թեանն օրինաց, այլ նախ քան զբնութիւնն յաղագս
տեառնն երկիւղին: Օ՞ և յոյժ իսկ կամի ածէ ծնեցե-
լոյն պատուել զծնողսն. և ոչք զայս առնէն, մեծամեծ
բարիս հատուցանէ. իսկ որք զանցանեն զօրինացն, սաս-
տիկ չարեաք պատժէ: Վասնզի “որ չարախօսէ զհայր
կամ զմայր, մահու վախճանեսցի. և որոց պատուէրն
զնոսա, այսպէս ասէ. “Պատուեա զհայր քո և զմայր,
զի քեզ բարի լինիցի և երկայնաժամանակեայ եղիցիս

'ի վերայ երկրի ,,։ Օ երկայնութեի կենացն եղ մինչեւակ պատուհասն զնոսա , և որ վերջինն չարն Թուխ տարաժամ մահն՝ զայն և պատուհաս Թշնամանողացն զնոսա , զամենս ձգելով 'ի բարեմտութեի պատուոյն խոստմամբք , և զամենս ակամայ 'ի բաց տանելով 'ի լուտանացն պատուհասին երկիւղիւ ։ Օ և ոչ վայրապար մեռանել հրամայէ Թշնամանողին զՀայրն , և ոչ դահիճ զնա առնելով յատենէն 'ի բաց տանի ընդ հրապարակն , և ոչ արտաքոյ քաղաքի զլուխն հատանէ . այլ ածէ զնա 'ի մէջ քաղաքին Հայրն , և առանց յուսանելոյ իրքն Հաւատարիմ լինին . և յիրաւի ։ Օ և որ զինչս և զմարմինս յաղագս որդւոյն վատնէր , ոչ արդեօք չարաչար նորա լինէր , եթէ ոչ յոլով առաւելութիւք էին Թշնամանացն ։ Որդ ածէ զնա 'ի մէջ քաղաքին և կոչէ զբաղմութիւնն ամ և ապա ասէ զամբաստանութիւնն , և նորա լսելով ամենեքեան՝ իբրաքանչիւր որ քար առեալ սատակէն զԹշնամանողն հօրն ։ Օ և ոչ տեսող միայն է պատժոյն , այլ և ինքնագործս նոցա կամին լինել օրէնքն . զի զայն իւրաքանչիւր որ տեսանելով որովք գքարն ինքն Կարկ 'ի վերայ գլխոյ լուտացողին զՀայրն , բաւական յիշատակ յուղղութիւնն ընկալցի ։

Որ այլ ինն մեզ օրինադիրն զեկուցանէ , եթէ որ զծնողն Թշնամանէ , ոչ զնոսա միայն զրկէ , այլ և զամենայն իսկ մարդիկ ։ Յաղագս այնորիկ զամենեսեան 'ի հաղորդութիւն տանջանացն կոչէ իբրև Թշնամանեալս զբոլորեսեան , և զաղմուկն միանգամայն և գքաղաքն շուրջ կացուցանելով զամենեսեան խրատէ , և որք ոչն ունին հաղորդութիւն առ որս պատաստանն է ծնողացն , զի Թշնամանեալք զայրացին որպէս հասարակաց բնութեանս լուտացեալ , և զայնպիսի մարդ իբրև զժանտախտ և զհասարակաց ցաւս ոչ 'ի քաղաքէն միայն , այլ և 'ի լուսոյն 'ի բաց վարեսցեն ինքեանք ։ Ասն զի պատերազմող է այնպիսին և ամենեցուն հասարակաց Թշնամի , այլ և մարդկան և օրինաց և հասարակաց ամենեցուն մերոց կենացս ։ Յաղագս այնորիկ ամենեցուն ձեռնարկել հրամայէ 'ի սպանումն , իբրև մաքրութիւն լինի քաղաքին գործելով ։

Յաղագ ձեզ բարի լսոյի զի հանդերձ այսպիսի հեշտութեամբ որ յաղագս Թշնամանողին զՀայր էր բանն՝

ընկալջիք, և փոխանակ քարանց բարբառովքդ զնա քարկոծեցէք. նշանակ է այդ իւրաքանչիւր ուրուք 'ի ձէնջ յոլով բարեմտութիւն 'ի հարան ցուցանել: Ա՛ ասն զի յայնժամ յաւէտ աքանչանալ ընդ օրէնսն սովորեցաք որք զյանցաւորսն պատժէն, յորժամ ոչ ինչ գիտիցեմք զմեր մեղս: Յաղագս այսր ամենայնի գոհասցուք զմարդասիրէն Աստ՝ որ խնամ տանի կենաց մերոց, և նախաձեռնութեամբ ծնողացն ողջախոհացուցանէ զորդիսն, և զամենայն յաղագս մերոյ փրկութեան տնօրինէ. որում փառք միանգամայն որդւոյն և սրբոյ հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԵԹԷ ՈՉ ՑԱՂԱԳՍ ԱՂԱՄԱՑ ՊԱՏԺԻՄՔ. ԵՒ ԵԹԷ ՄԵՆԱԿՈՑՆ ՔԱՆ ՈՐ ՎԱՍՆ ՆՈՐԱ Ի ՆԵՐԿՍ ԵՄՈՒՑ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ, ԵՒ ԵԹԷ ՑՆԶԻՆՑ ՀԱՑԻՑԻՄՔ. ԵՒ ԸՆԴԴԻՄ ԱՑՆՈՑԻԿ ՈՐՔ ՉԱՆՑ ԱՐՆԵՆ ՉԱՂՔԱՏՈՂՔ

Ոյք Թերևս կարծիցէք արդեօք Թէ որ յաղագս տէրութեան ձեզ բանն ամենայն ասարեցաւ, բայց ես յոլովագոյն տեսանեմ զպտուղ 'ի նմա երևեալ. այլ մի տաղտկայք, մինչև զամենայն կԹեսցուք: Ա՛ ասն զի և աշխատասէր մշակք յորժամ տեսանեն զայգի յոլով տերևովք լցեալ, ոչ զարտաքին ողկոյզսն հատանեն մի՛ այն, այլ և 'ի ներքսն յաւելն զուղեչսն շրջելով և ըզտերևսն յուզելով, որպէս զի մի՛ զփոքր ինչ զխաղողսն զպտուղսն ընդ տերևովք ծածկեալ զանխնամացին: Ա՛րդ մի՛ քան զնոսա երևիցիմք պղերգագոյնք, և մի՛ 'ի բաց կամք մինչև զամենայն առնուցումք. և մանաւանդ զի աշխատութիւնս իմ է, իսկ պտուղն ձեր:

Ա՛համբաւեցաք երկիւղ զկանայս, մանաւանդ եԹէ ոչ զկանայս, այլ զԱ՛ստուած, զի 'ի ձեռն մեղաց զծառայութիւն 'ի ներքս եմոյծ: Ա՛յլ Թերևս ասիցեն այժմ ցմեզ կանայք. ընդէ՞ր նա մեղաւ, և մեք դատապարտիմք. և յանցանքն եղեն միոյ դիմաց, իսկ մեղադրութիւնն հակառակ[1] բնութեանս մերոյ: Ա՛յս ծառայքն ասիցեն Թերևս. վասն էր Ա՛ստուած զՀայրն Թշնամանեաց, և պատիժքն ընդ ամենայն ազգս հանց: Ա՛յս որք յիշխանայն երկընդ

1 Թերևս հոսարակ:

ջին, զսոյն բաղաղեն՝ ի՛ր աղագաւ այլք չարութեամբ կեան, և մեք ընդ լծով իշխանութեամբ մատնեալք եղաք։ Այլ արդ զինչ ասացուք առ նոսա ամենեսեան։

Այ՛ն ե ամենայն խնդրոյն լուծումն. զի մեղան առաջինքն, և՛ ի ձեռն անհնազանդութեան զծառայութիւնն՝ ի ներքս մուծին, և զմահեալն՝ որք յետ նոցա մարդիկ՝ մեղօք իւրեանց տիրացուցին յինքեանց։ Օ՛ի եթէ ուրեմն ինչ ցուցանել ամենևին՝ի մեղացն մեքուս, պատշաճագոյնս իմն թուին ասել. ապա եթէ ինքեանք յօրում սպասնալեօք իցեն պատժապարտք, աւելորդ ընդդիմամարտութիւնս այս է։ Օ՛ի ես ոչ ասացի եթէ այն ինչ մեղք զծառայութիւնն՝ի ներքս մուծին և այս մեղք զծառայութիւնն ոչ ածեն՝ի ներքս, այլ եթէ ամենայն մեղք՝ ծառայութեան վիճակակիցք են. և ոչ եթէ ըզանազանութիւն սխալանացն միայն բամբասեցի, այլ և զբնութիւն յանցանացն։ Օ՛ի զոր օրինակ ամենայն անբժշկելի ցաւք՝ի մահ տանին՝ և ոչ ամենայն նորին բնութեան են, նոյնպէս և բոլոր մեղք զծառայութիւն ծնանին, այլ ոչ ամենեքեան նորին են։ Այ՛եղաւ Այ՛ս Ճշմարիտ՝ի փայտին, և յաղագս նորին դատապարտեցաւ. մեղաւ գարձեալ և դու, այլ մեղս Հաւասար նորա գժնդակագոյնս քան զնոյնս։ Այ՛ս վասն ծառայիցն արժան է ասել զնոյն, և յաղագս իշխելոյն, և եթէ՝ի ներքս ածին առաջինքն, և որք զկնի նոցա՝ հաստատեցին զերութեանն զօրութի՛ւն՝ի ձեռն որոց մեղանն։

Այ՛նիմ և այլ ազգ ևս պատասխանի առնել, եթէ յոլովք յառաքինութիւն երթալով՝ վերստին՝ի բաց ածատեցան՝ի ծառայութենէն. և նախ առաջին յաղագս կանանց զբանս հրահանգեսցուք, զի տեսցես զիարդ շուրջ եդ նոցա Պաւղոս կապանս, և ինքն դարձեալ զայն ելոյծ։ “Այ՛եթէ որք կին, ասէ, այր ունիցի անհաւատ, և այրն ախորժեսցէ բնակել ընդ կնոջն, մի թողցէ զնա,,։ Այ՛նդէր. “Օ՛ի գիտես, կին դու, եթէ զայրն ապրեցուսցես,,։ Այ՛ս զիա՛րդ կարէ, ասէն, զայրն ապրեցուցանել կինն։ Այ՛ արդապետելով խրատելով ածէ՝ի բարեպաշտութեանն բան։ Այ՛ս սակայն երկկ ասէիր, ով երանելի Պաւղոս, եթէ “Այ՛նոջ վարդապետել ոչ հրամայեմ,,. զի՛արդ զնա վարդապետ առնես առն։ Այ՛ս մարտընչիմ ընդ իս ինքեան, ասէ. այլ և յոյժ միաբանիմ։ Այ՛ուր

և էր աղագաւ ՚ի վեր հանէ ՚ի վարդապետական աթոռն, զի ուսցիս զՊաւղոսի խնամատարութիւնն։ “Ա արդապետ տեսցէ այլն ,,. քանզի “ոչ խաբեցաւ Ադամ ,, ասէ։ “Ուսցի կինն ,,. ուստի կինն. “զի խաբեցաւ ,,. քանզի կինն պատրեալ եղև ՚ի յանցանսն։ Իսկ աստ հակառակ նմին. յորժամ անհաւատ է, ասէ, այրն և հաւատացեալ կինն, ոչ խաբի, ասէ, ուստի զի հաւատացեալ է, և ուսցի այրն, քանզի պատրեալ է և անհաւատ։ Նա կառակ դարձան, ասէ, վարդապետական իրք, ընդդէմ դարձոյն և տերութեանն։

Տեսանէս զիարդ ոչ բնութեանն, այլ խաբէութենն ամենայն ուրեք և մեղայ ցուցանէ զծառայութիւնն ըզհետ երթեալ։ Կինն և առ կինն խաբէութիւն ՚ի սկզբանն, զհետ չոգաւ խաբէութեանն և հնազանդութիւնն. փոխեցաւ զկնի այնորիկ առ Ադամ խաբէութիւնն, փոխեցաւ և հնազանդութիւնն։ Ո՛չ ի զոր օրինակ ՚ի սկզբանն առն՝ փրկութիւն կնոջն հաւատացաւ, վասն զի ոչ էր խաբեալոց այսպէս իմն ասելով, “և առ այր քո դարձ քո, և նա տիրեսցէ քեզ ,,, նոյնպէս և աստ հաւատացելոյն որ զանհաւատ այրն ունէր, զիբրև կութիւն առն հաւատաց կնոջն ասելով. “Ո՛չ գիտես, կին, եթէ զայրն ապրեցուսցես ,,։ Ո՛չինչ արդեօք քան զայս յայտնագոյն լինիցի, զի ոչ բնութեանն, այլ մեղացն զհետ երթայ ծառայութիւնն։

Ո՛նոյն և յաղագս ծառայիցն է ասելի. “Ծառայ կոչեցաւ, ասէ, մի փոյթ լիցի քեզ ,,։ Տեսանէս զիարդ զարձեալ ցուցանէ սոսկ անուն զծառայութիւնն լեալ յորժամ առաքինութիւնն մերձ իցէ։ “Այլ և եթէ կարիցես ազատ լինել, մանաւանդ վարեցիր ,,. այս է յաւէտ կացջիր միասջիր ՚ի ծառայութեանն։ Ընդէր. “Ո՛չ որ ՚ի տէր ծառայն կոչեցեալ է, ազատ տեառն է ,,։ Տեսեր միևչև յանուն ևեթ զծառայութիւնն և իրօք զազատութիւնն։ Ընդէր արդեօք թողլ միալ ծառայ. զի զազատութեանն ուսցիս զառաւելութիւն։ Ո՛չ զոր օրինակ քան զչիջուցանել զհնոցն յորում երեք մանկունքն էին՝ առաւել հրաշափառագոյն էր թողուլ զնա և անվնաս պահել զմարմինսն, նոյնպէս և քան լուծանել զծառայութիւնն՝ միալ ՚ի նմա և ցուցանել զազատութիւնն յաւէտ ևս մեծագոյն է և զարմանալի։ Յա

զաց նորին եւս ասէ. “Ով և կարիցես ազատ լինել, մանաւանդ վարեսցիս,,. Ընասջիր ծառայ, ասէ, քանզի զձիմարիտ ազատութիւնն ունիս:

Կամիս և յաղագս իշխանացն զսոյն տեսանել: Ովասգաւոր էր Ալեքսագոնոսը, որ և զՀնդոյն բորբոքեաց Հանդերձ յոլով սաստկութեամբ, և զերիս մանկունս ի մէջ հաճ անցոյց, պատանիս, ամայիս, որք և ոչ մի ինչ ունէին վերակացութիւն, ծառայս, գերիս, անքաղաքս: Ու զնոսա ասէր. “Սեղրաք, Միսաք, Աբեդնագով, աստուածոց իմոց ոչ ծառայէք, և պատկերի ոսկւոյ զոր կանգնեցի՝ երկիր ոչ պագանէք,,: Ոչինչ և նոքա. տես զիարդ զնոսա առաքինութիւնն զգերիան առաւել քան զԹագաւորն արար, զի քան զնորին զԹագաւորին բարձրագոյն և եղոյց զնոսա զմիտան: Ոչ ի սէրս ընդ Թագաւորի խօսէին, այլ որպէս առ հնազանդ որ քան ուՆեալ այնպէս Հանդերձ համարձակութեամբ պատասխանի տային. “Ընչ են պէտք, ասեն, յաղագս այդորիկ պատասխանի առնել Թագաւորի,,. ոչ բանիւք, ասէին, այլ իրօք արասցուք զպատասխանիսն. “Եւ ածէ յերկինի, կարող է զերծուցանել զմեզ,,: Յիշեցուցին նմա որ ի Դանիէլէն եղև բարեգործութիւնն, զնոյն բանս ասացին զոր և մարգարէն ասաց յայնժամ: Ու զնոսա նա ասէր. “Ընչ մեղուց, գիտաց և քաղդէից ըզբանդ զոր Թագաւոր պահանջէ. այլ է ածէ յերկինս որ յայտնէ զխորհուրդս,,: Ոչայս նմա յիշեցուցանէին զձայնն, որպէս զի արասցէն զնա հեզագոյն: Ու ապա ասեն. “Եթէ ոչ գիտասն լեցի քեզ, Թագաւոր, զի զաստուածս քո ոչ պաշտեմք, և պատկերիդ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեմք,,:

Տեսեր զիմաստութիւն մանկանցն այնոցիկ: Ոչ ի մի բամբասանս տկարութեամբ այլ՝ որք յայնժամ անդն մերձ էին՝ առնիցեն, եթէ Հանդիպեալ էր նոցա անկանել ի նեղս ի հնոյն մեռանել, յառաջագոյն ժամանեալ խոստովանեցին զնորա զօրութիւնն ասելովն եթէ “Եւ ածէ յերկինս որ կարէ զմեզ ապրեցուցանել,,. և զարձեալ զի մի փախուցեալք ի բոցոյն՝ Թուեսցին իբրև Հատուցմամբ այ ծառայել, ի վերայ ածեն՝ և եթէ “գիտասն լեցի քեզ, Թագաւոր, զի զաստուածս քո ոչ պաշտեմք,,. միանգամայն և զայ զօրութիւնն քա-

ըոզեցին, և զպատրաստուԹի անձանց իւրեանց ՚ի տան Ջանս ցուցին. զի մի զոր յաղագս Յոբայն ասէր բանսարկուն զրպարտելով, զնոյն և վասն նոցա ասիցէ: Այլ զինչ յաղագս Յոբայ ասաց սատանայ, եԹէ "Ալ ձրի պաշտէ զքեզ Յոբ. զամենայն զնորա շուրջ ամրացուցեր որ ՚ի ներքոյ և արտաքոյ,,: Այդ զի մի և յաղագս նոցա, ասէ, ունիցի այնպիսի ինչ ասել, ինքեանք յառաջագոյն ժամանեալ կարկեցին զբերանն անառակԹի: Այլ զոր ասէին՝ ԹէպԷտ և զերի զբ իցէ, ԹԷ և ծառայ, եԹէ օտար և եԹէ յայլոց գաւառի շրջիցի և զառաքինուԹիւն ընդ ինքեան ունիցի, քան զամենայն Թագաւորացոյն լինի:

Տեսեր և զկանանց ծառայուԹիւն լուծեալ և զտրըկացն և զիշխեալսն. եԿ քեզ ցուցից և զգաղանացն երկիւղ արտաքս ընկեցեալ: Երկին զՎանիել ՚ի գուբ առիւծուց ՚ի նմին ՚ի Բաբելոնի երբեմն. բայց ոչ իշխեցին մերձենալ ՚ի նա առիւծքն, վասն զի զԹագաւորականն կերպարանն պայծառացեալ տեսին ՚ի նմա, զոյն կերպարանն զոր տեսին Ադամ նախ քան զմեղանան. յաղագս այնորիկ հանդերձ նովին հնազանդուԹեամբ մատուցեալք առ Ադամ զանուանս ընդունէին յայնժամ. և ոչ անդ միայն, այլ և Պաւղոսիւ նոյն եղև: Վանզի և նա ՚ի բարբարոսաց կղզին եղեալ մերձ նրստեր ՚ի հուր ջեռնլով. և ապա ՚ի խորշոտոյն ելեալ իժ բուռն Հարկանէր զձեռանէ նորա: Այլ զինչ զկնի այնոր իկ լինէր. անկաւ գազանն վաղվաղակի. վասն զի մեղս ոչ եգիտ, և ոչ խածանել կարաց: Այլ որպէս մեք յորժամ ՚ի դիտանոց ինչ ողորկ կամիցիմք ՚ի վեր ելանել, ոչ ուսանեք գտանելով զորմէ բուռն Հարկանիցեմք, ՚ի վայր անկանիմք վաղվաղակի՝ ԹԷ խոր իցէ ՚ի ներքոյ կամ վիհ, նոյնպէս և գազանն, և այն զի խարոյկ ՚ի ներքոյ կայր, ոչ եգիտ մեղաց ինչ Հակառակ ըմբռնումն, և ոչ ուր զատամնեան ցցեր, ՚ի վայր անկաւ ՚ի խարոյկն և ապականեցաւ:

Վամին ասացից քեզ և զերկրորդ օրինակ պատասխանեաց. մի զի ոչ առաջինքն մեղան ևեԹ, այլ և որ զկնի նոցա. երկրորդ օրք ուղղեցին և ՚ի յայսմ խակ ՚ի մերձակայ աշխարհիս ԹեԹևաւոյն զփորձուԹիւն ծառայուԹեանն. մանաւանդ եԹէ ամենեքեան խակ ՚ի նմանէ ՚ի

բաց վՃարեցան, որպէս և յաղագս կանանցն և վասն իշխեցելոյն և յաղագս գազանացն ցուցաք։ Եւ երկրորդ զնոի այնոցիկ մեծութիւն բարեացն, յորոց ՚ի սկզբան մեղուցեալքն զմեզ արտաքս հանին, եկեալ Քրիստոս խոստացաւ մեզ այժմ զբարիսն։

Ընդէր ողբաս, ասա ինձ. զի զքեզ՝ մեղանչելով Ադամ ՚ի դրախտէն արտաքս եհան։ Ուղղեա, ասէ, և նախանձեցիր ընդ առաքինութիւնն, և ոչ քեզ զդրախտն, այլ զնոյն ինքն զերկինս բացից, և ոչ ինչ զնա խոստեղծեցելոյն յանհնազանդութենէն թողու քեզ կրել դժնդակութիւն։ Ողբաս զի զքեզ յիշխանութենէ գազանացն ելոյծ. ահա քեզ և զդևս հնազանդեցուցանեմ, եթէ զգուշանայցես. քանզի "Կնասջիք, ասէ, ՚ի վերայ օձից և կարձաց և ՚ի վերայ ամենայն զօրութեան սատանայի ,,։ Եւ ասաց իշխեցէք, որպէս գազանացն, այլ կոխեսջիք ուժգնագոյն, ՚ի ներքս մտեալ նեղով զիշխանութիւնն։ Յաղագս այսորիկ և Պաւղոս ոչ ասաց՝ ՚ած հնազանդեցուսցէ զսատանայ ընդ ոտիւք ձերովք, այլ եթէ "Յսատուած խորտակեսցէ ընդ ոտիւք ձերովք ,,։ Եւ ևս որպէս յառաջագոյն "Կա քում յղասցէ զարշապարի, և դու նորա գլխոյն ,, , այլ բոլորովին իսկ է յաղթութիւն, մանաւանդ յաղթանակն, ամենևին ապականութիւն պատերազմողին, խորտակումն և կորուստ։ Հնազանդեցաւ առնդ Եւա. բայց ես զքեզ ոչ առնդ միայն, այլ և նոցին իսկ հրեշտակացն առնեմ զուգապատիւ, եթէ ախորժեսցես։ Օրինակեալ քեզ ՚ի մերձակայ կենացս, իսկ ես քեզ զհանդերձեալսն ընծորհեմ, զանծերանալին և զանանցն և որ բիւր բարեօք լի է։

Ընդ մի ոք այսուհետև յաղագս յառաջագունիցն վշտանալ ինչ կարծեսցէ. վասն զի եթէ կամեսցուք ընդ ամենայն անցանել, յոյժ մեծագոյնք են տուեալքս քան զոր կորուսաքն. այլ յուսացելոցս և այլքն յայտնի ևս են։ Որ զմեզ աշխատութիւն ՚ի ներքս էած Ադամ. Քրիստոս խոստացաւ կեանս, ուստի փախստական եղեն երկունք և տրտմութիւնք և հեծութիւնք, և զարքայութիւնն երկնից ընծրհէ. վասն զի "Դիայք, ասէ, օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն նախ քան զկիզեն աշխարհի։ Վասն

զի քաղցեայ և ետուք ինձ ուտել, ծարաւեցի և արբուցէք զիս, օտար և ժողովեցէք զիս, մերկ և զգեցուցէք զիս, ի բանտի էի և եկիք առ իս ,, ։

Այսչափ արդեօք զերանելի զձայնն զայն. ոչ յոյժ ինչ զօրանամ ես, վասն զի յոլով է մեզ աղքատացն արհամարհանք։ Պահոց ժամանակ, լսելութիւն այսչափ, և փրկութեան ուսմանն վարդապետութիւն, աղօթք յաձախակի, ժողովք հանապազորդեանք. և զինչ զկնի այնոցիկ. խնամակալութիւն ի բաց գնացեալ։ Այս ոք զհոյլը աղքատացն պարապմամբ ի կողմանց յերկոցունց կացեալը իբրև սիւնս տեսանեմք, այլ ոչ իբրև զմարդկային մարմինս, այնպէս զանց առնեմք անողորմաբար. իբրև զպատկերս ինչ անշունչ և ոչ իբրև զշնչաւոր մարդիկ ձեպիմք ի տուն։ Այլ քաղցն, ասեն, հարկ առնէ։ Այս քաղցն հաւանեցուցանէ կալ ճաշ. քանզի լցեալք որովայնիւք, ըստ առակին, զքաղցեալսն անպիտանան. իսկ քաղցեալքն յիւրեանց ի կարեացն զայլսցն և ձանձրէն, մանաւանդ և ոչ այնպէս զինքն կարէ ամենայն տեսանել։ Այս ի պատրաստեալ սեղանն հրձուիս, և ոչ սուղ ինչ ճաշ անասս. իսկ աղքատն կայ մինչև յերեկոյ փութացեալ և ձեպեալ զաւօրեայ կերակուրն բովանդակել. և տեսանէ զօրն կատարեալ, և զարծաթն ոչ լցեալ ի կերակրոյն բաւականութիւն, վասնզի և երկիծանի և առաւել քան զիւր զօրութիւնն յանդգնել հարկի։ Այսան այնսրիկ և երեկոյին ուժգնապէս զմեզ թախանձեն երդնուլով և երդմնեցուցանելով, ողբան կականեն և զձեռս կարկառեն, և սթափացեալ զմեզ ունին, բիւր և այլ ինչ լըսել հարկին։ Այնզի երկնչին մի գուցէ յորժամ ամենեքեան ի տուն գնացեն, ի խաղաղութեան քաղաքիս մնալոր հանդերձեացին։ Այս զոր օրինակ ի նաւաբեկութիւնս ոք անկեալ ի տունջնեան յորժամ ըմբռնեսցէ տախտակ՝ երեկոյին ձեպի ի նաւահանգիստն, զի մի գուցէ ի հասանել գիշերոյն զդժնդակ նաւաբեկութեան ըզփորձ առնուցու, նոյնպէս և աղքատքն իբրև ի նաւաբեկութենէ երկուցեալք ի սովոյն՝ փութան նախ քան զերեկոյն առ կերակուրն իւրեանց բաւական զարծաթն ժողովել, զի մի ամենեքեան ի տուն երթեալք՝ արտաքոյ նաւահանգստին մնասցեն. քանզի է նոցա նաւահանգիստ օգնականացն ձեռք։

Այլ մեք և ոչ ՚ի հրապարակս առ նոցա Թշուառու-
Թիւնն խոնարհիմք, և ոչ ՚ի տուն երթեալք. այլ և
սեղան մերձ կացեալ առ մեզ, բազում անգամ բիւ-
րոք լցեալ բարեօք, եթէ բարիս պարտ և արժան իցէ
կոչել զորս ՚ի դատապարտութիւն մերոյ անմարդու-
թեանս ուտեմք, սակայն մերձ կալ ՚ի սեղանն՝ լսելով ՚ի փող-
ցային ՚ի խոնարհուստ ձայնին ՚ի գալն նոցա և մեծաբար-
բառս աղաղակել ՚ի սրահն, ողբացեալք ՚ի խորին խա-
ւարին, բազում ամայութեամբ, և ոչ այնպէս խոնար-
հիմք. այլ լցեալք ևս ՚ի քուն երթամք և յանկողինս
մտանեմք. և յայնժամ մեծապէս ՚ի խոնարհուստ ող-
բացելոյն լսեմք իբրև զշան ինչ կատաղացելոյ, այլ ոչ
իբրև զմարդկան ձայն, այնպէս զանց առնեմք. և ոչ յա-
ղագս ժամանակին խոնարհիմք, զի ժամ է այնուհետև
պիշերոյն, և յամենեցուն ննջելոն նա միայն ողբայ, և ոչ
առ Թեթևութիւն խնդրոյն, զի քան զհայ աւելի ինչ
ոչ խնդրէ և կամ փոքր ինչ արծաթ, և ոչ առ մեծու-
Թիւն Թշուառութեանն՝ զի ընդ միանձնաւոր ընդ սո-
վոյն կուտի, ոչ առ հեզգութիւն աղաչողին՝ զի այնպէս
պաշարեալ կարեօք ոչ առ դուրս գալ և ոչ մերձ լինել
իշխէ, այլ ՚ի խոնարհուստ յաւէտ ՚ի հեռաստանէ ըզ-
պաղատանս առաջի դնէ: Այլ եթէ առցէ, բիւր աղօթս
ընձեռէ. ապա եթէ ոչ առնու, և ոչ այնպէս դառն բան
Հանէ, ոչ Թշնամանէ և ոչ հայհոյէ ոյք կարող են տալ
և ոչ տան: Այլ որպէս եթէ ոք ՚ի դահճէ ումեքէ յան-
ըմբռնելի ՚ի տանջանս ածեալ՝ զմերձաւորսն ամենեսեան
աղաչէ և պաղատի, և ոչ միւսմ օգնականութեան դի-
պելով Հանդերձ բազում անմարդութեամբ ՚ի տանջանս
ածեալ լինի, նոյնպէս և նա ՚ի դահճէ ումեքէ ՚ի դի-
շերն ձգէ զձեռն Հանդերձ գոչելով և աղաչելով զոր ՚ի
վեր ՚ի տունս անդ նստիցին, և ոչ միւսմ մնրդասիրու-
Թեան պատահէ, առանց ողորմութեան ածեալ լինի
բազում Հակառակութեամբ:

Այլ և ոչ մի ինչ յայսցանէ զմեզ Հաւանեցուցա-
նէ. և զինի այնքան անմարդութեան յերկինն ձգել իշ-
խեմք զձեռս և յաղագս ողորմութեան խօսել ընդ նոյ
և Թողութիւն խնդրել մերոց յանցանացն, և ոչ զար-
Հուրիմք Թէ մի գուցէ շանթի զինի այսպիսի աղօթից
՚ի վայր անկցի Հակառակ խակութեան և անմարդու-

Թեան մերոյ։ Օ՜ խոնդ՝ի քուն երթալք, ասա ինձ, և՝ի հանպիսա, և ոչ երկնչիմք մի յերթալն այնպէս մեզ՝ի վերայ եկեալ կայցէ պատքեալ, աղտեղեալ, զպատաճատուն զգեցեալ. ողբասցէ և հառաչեսցէ զմեր խակութեանն սոգտանելով։ Վասնզի՝ի յորվից բաղում անգամ լուայ որք ասէին, եթէ՝ի տունջեանն անտես առնելով զաղքատացն զօգնութիւնս, ՚ի գիշերի չուանօք վարակեալք յաղքատացն ձեռաց քարշեալք՝ բիւր վտանգս ընդունէաք։ Այլ այս քուն է և երազ և առժամանակեայ տանջանք. իսկ մեք ո՞չ զարհուրիցիմք, ասա ինձ, մի գուցէ զաղքատն զայն որ ողբայ և աղաղակէ և լայ, ՚ի գոգն տեսանիցեմք Ա՛բրահամու որպէս զի աղարոս ընչեղն այն։ Այլ աստուստ ձերում խղճի մնացն թաղում զգառն և զանմխիթար զտանջանարանն պայտոսիկ, զիարդ հայցեաց ջուր, զիարդ և ոչ կաթիլ միում դիպեցաւ, որպէս լեզուն պապակեալ լինէր, զիարդ յաձախ զպաղատանան առաքն դնելով՝ և ոչ՝ի միում թաղուելեան ինչ վայելեաց, որպէս անմահ տանջեալ լինէր։

Այլ մի երբէք լեցի զայն փորձ ուսանել, այլ բանիւ լսելով փախիցուք՝ի գործոց սպառնալեաց, և Ա՛բրահամու սիրոյն արժանի ցուցեալք՝ ՚ի նոյն՝ի նորա տեղին երթիցուք ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵԹԷ ՆԱԽ ՔԱՆ ԶՈՒՏԵԼՆ Ի ՓԱՑՏԷՆ ԴԻՏԷՐ ԱԴԱՄ ՁԻՆՁ ԲԱՐԻ ԵՒ ՁԻՆՁ ՁԱՐ. ԵՒ ԵԹԷ ՊԱՐՏ Է Ի ՏԱՆ ԿՐԹԵԼ ԶԱՅՍՑԵՒԱՆՆ ՑԵԿԵՂԵՑԻՈՋ

Սիրեմք զպահս, զի մայր է ողջախոհութեան և աղբիւր ամենայն խմաստութեան. սիրեմք զպահս վասն ձերոյ և մերոյ սիրոյն, քանզի ինձ զքահանայական զժողովս զայս հաւաքէ և զփափաքելի դէմն զարձեալ տայ տեսանել, ընձեռէ և հանդերձ համարձակութեամբ փափկանալ՝ի տճիս այսմ. քանզի տօն և կացուրդ և բիւր բարիս ոչ ոք սխալեսցի զձեր ժողովդ անուանել։ Օ՜ի եթէ՝ի հրապարակ որ երթալով և միում ումեք

սիրելոյ պատահելով՝ բազում անգամ զամենայն սըրտմտելն ի բաց դնել, իսկ մեք ոչ ի հրապարակս, այլ յեկեղեցւոջս ամենեքեան պատահեալք, ոչ միւմ ումեք դիպելով սիրելոյ, այլ այսքանեաց և այսպիսեաց եղբարց և առ հարս մերձ լինելով, զիա՞րդ ոչ զամենայն ինչ ի բաց դիցուք։

Օ՜ի արդ ոչ բազմութեամբն միայն քան զժողով աթոռակցացն ի հրապարակն լաւագոյն է, այլ և նովին իսկ բնութեամբ խօսիցն։ Քանզի ոչք ի հրապարակս խմբեալ նստիցին և իրերայ աթոռակիցք լինին, բազում անգամ և յաղագս անմիտ ինչ իրաց խօսին և զգուրա բան ի ներքս ածեն, և խօսին յաղագս ոյոյ ոչ ինչ նոցա իցէ պատշաճ։ Օ՜որ և սովորեալ իսկ եմք յաճախակի փութով զայլոց իրս քննել և խուզել. որ և դիւրով վերիպել, և ի վտանգաւոր ունի բան արտաքս գալով, և լուեալ մեք յերկարեմք. և յողովք բազում անգամ այնպիսի աթոռակցութեամբ բիւր վտանգս արկին ի վերայ ինքեանց. և արդ զի անօգուտք և ցուրտք և աշխարհականք ամենայն խօսքն այն են, և հոգևոր ինչ բան ոչ երբեք վաղվաղակի յայնպիսի ժողովս մտանեն։ Իսկ աստ ոչ այնպիսի ինչ ոք ունի ասել, այլ ամենայն հակառակ նմին. քանզի բոլոր անշահ խօսք ի բաց են վարեալք, և ամենայն հոգևոր վարդապետութիւն ի ներքս մտեալ։ Ա՜ստն զի յաղագս անձանց ձերոց խօսիմք և որ ինչ հոգւոյ պատշաճագոյն է, վասն պայծառ յաղթանակացն, և մարդասիրութեանն Աստ. և յաղագս նախախնամութեանն ամենեցուն, և վասն այլոց բոլորեցուն որ մանաւանդ պատշաճագոյն է մեզ՝ եթէ վասն էր եղաք, և զինչ զկնի այնորիկ որ աստի հրաժարումն է՝ հանդիպեսցի հանգիստ մեզ, և յորպիսի ինչ մեր իրք լինիցին։

Ա՜ւ ժողովոյս այսմ ոչ մեք միայն, այլ և մարգարէքն և առաքեալքն հաղորդին. և մեծ քան զամենայն այս է զի ինքն բոլորեցուն տէրն Յիսուս ի մէջ մեր կայ, որպէս և ինքն ասաց. "Ո՜ւր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա"։ Ա՜յ եթէ ուր երկու կամ երեք ժողովեալ է՝ ի մէջ է, արջառի և առաւել ուր այսքան արք, այսքան կանայք, այսքան հարք, առաքեալք և մարգարէք ի մէջ ամենե-

ցուն: Յաղագս որոյ և մեք հանդերձ յօժարամտութիւք բարբառիմք, յանդ՚ի յորդորումն ձեզ վայելելով ըզխոստումն ձեզ հատուցանեմք: Վասնզի խոստացաք առնել վասն փայտին՝ յառաջագոյն քան զնա լեալ գիտութիւն բարւոյ և չարի Ադամայ, թէ և նախ քան զուտէլն ունէր զգիտութիւնն զայն:

Աղդ համարձակեալք այժմ ասասցուք՝ եթէ գիտէր զծանօթութիւնս զայս. և եթէ ոչ գիտէր զինչ բարի և զինչ չար, և քան զնոյն ինքն զանբանն անբանապոյն էր, և քան զծառայն տեառն անմտագոյն: Այլ զիաթդ ոչ իցէ յիմարութիւն, այծից և ոչխարաց գիտել որ բանջար նոցա պիտանացու իցէ և որ սատակիչ, և ոչ յամենեսեան յարձակել յերևելոյն, այլ ունելով զծանօթութիւնն և գիտել հաւաստեաւ զինչ նոցա ճշմարտական է և զինչ օգտակարագոյն. իսկ մարդն յայնպիսի գիտութենէ զրկեալ: Այլ եթէ ոչ զայն ունէր, և ոչ իմիք արժանի էր, այլ և վատթարագոյն քան զամենայն: Յոլովագոյն ընտրելի էր նմա՛ի խաւարի շրջել և կուրացեալ աչօք՛ի լուսոյ զրկեալ, քան թէ ոչ գիտել զինչ բարի կամ զինչ չար: Այլ ասեն զի եթէ զայս հանցես՛ի կենաց մերոց, զամենայն զմեր կեանս՛ի բաց բառնաս և բազում խառնակութեամբ զամենայն ընդս: Այսուհետև որով յանբանիցն զանազանիմք, որով քան զդազանս լաւագոյնք եմք, զբարութիւն և զառաքինութիւն գիտելով, զվատթարն ձանձրանալով, և զգեղեցիկն ոչ անգիտանալով: Այս եթէ մեք զայդ գիտեմք այժմ, և ոչ մեք միայն, այլ և սկիւթացիք և բարբարոսք, ևս առաւել մարդն յայնժամ նախ քան զմեղսն գիտէր զայս. և ոչ այնքան պատուով պատուիլ և ըստ պատկերի և ըստ նմանութեան ՚ի եղեալ և զարդարեալ այլովք օրհնութեամբքն՝ ՚ի գլխոյ բարեացն ամայի մնայր: Այն զի զբարի և զչար այնոքիկ միայն անգիտանան, որք ըստ բնութեանն են զրկեալք ՚ի մտացն. իսկ Ադամ յոլով իմաստասիրութեամբ էր լցեալ. լուր զնորա ցոյցն. "Այս ած առ նա զդազանսն տեսանել զինչ կոչեսցէ զնոսա. և զոր ինչ կոչեաց զնոսա Ադամ,

1 Ցօրինակին պակասէին բառքդ ՚ՈՅ եղեալ և զարդարեալ. յաւելան ՚ի յունէն:

այն անուն է նոցա ,, : Օ՜մեա՛ւ ած ողբան խնամատուԹիւ-
եր լեալ, այնքանեաց ազանց և այսպէս զանազանից և
ամենեցուն զանհատատելեան անանոյ անուանս ՚ի վե-
րայ դներ, և սակայն զամենայն հաստատուն կարաց
դնել : Ւրանզի այնպէս ընկալաւ զանուանադրուԹիւնն
ած, մինչ զի ոչ ևս շարժել բանիւ զկոչմանն զայնո-
սիկ, ոչ ինչ սխալելով եդողին զանուանսն՝ ոչ ՚ի բաց ե-
բարձ զնոցա կոչմանն. քանզի ասէ. “Օ՜ր ինչ կար-
դաց Ադամ, այն է անուն նոցա ,, :

Ադդ նա անդիտանայր զինչ բարի և զինչ չար. և
զիաՒդ ունիցի բան : Այլ դարձեալ էած առ նա զկինն,
և տեսանելով զնա վաղվաղակի ծանեաւ զընուԹեանն
հաղորդուԹիւն. և զինչ ասէ. “Այս այժմ ոսկր յոս-
կերաց իմոց ,, [1] : Ւայց ոմանք ոչ զայս միայն ասեն զնը-
մանէ զեկուցանել, այլ և զօրինակ արարչուԹեանն, և
եԹէ ոչ ևս լեալ կնոջն նոյնպիսի լինելուԹեան օրինակ,
յաղագս որոյ և ասաց “սա այժմ ոսկր ,, . զոր և միւս
Թարգմանիչ հաւաստագոյն Թարգմանելով ասաց՝ սա
միանգամ. որպէս Թէ ասիցէ, այժմ յատուկ եղև կին
յառնէ միայնոյ, իսկ զկնի այսորիկ ոչ այնպէս եղիցի,
այլ յերկաքանչիւրոցն. “Ոսկր յոսկերաց իմոց և մար-
մին ՚ի մարմնոյ իմմէ ,, : Ւրանզի բովանդակ յատեղծուա-
ծոյն առնլով ած մասն ինչ այնպէս ստեղծ զկինն, զի
ըստ ամենայնի հաղորդեսցի առն նա. “Այս կոչիցի կին,
զի յառնէ իւրմէ առաւ ,, : Տեսանեմ զի յայն սակս եդ
զանուն, զի և անուն իսկ վարդապետիցէ զհաղորդու-
Թիւն բնուԹեանն, և վարդապետուԹիւն ըստ բնական
հաղորդուԹեանն և արարչուԹեանն օրինակ, պատճառ
սիրոյ յաւիտենականի և կապ միաբանուԹեան : Այլ ա-
պա զինչ ասէ. “Վասնզի այսորիկ Թողցէ այր զհայր
իւր և զմայր, և յարիցի առ կին իւր ,, : Ալ ասաց վայ-
րապար՝ միաւորեսցի, այլ յարիցի, զհաւաստի մերձա-
ւորուԹիւնն յայտնելով : “Այս եղիցին երկոքեանն ՚ի
մարմին մի ,, :

Ադդ որ այսքան գիտէր, ասա ինձ, ո՞չ Հանապէր ար-
դեօք զինչ բարի և զինչ չար. և զիաՒդ ունիցի բան :
Ւրանզի եԹէ ոչ գիտէր զինչ բարի և զինչ չար նախ

1 Պահասին տողք 4 :

քան զուտեղն ՚ի փայտէն՝ և զկնի ուտելոյն ուսաւ, մեզ-քըն եղեն նման իմաստութեանն վարդապետ, և օձն ոչ ևս խաբեաց զնք, այլ խորհրդակից գտաւ օգտակար նորա, ՚ի դաշանէ արար նա զմարդ։ Որ ի լեզի. ոչ է այս, ոչ է։ Օ ի եթէ ոչ գիտէր զինչ բարի և զինչ չար, զիա՞րդ զպատուիրանն էառ. վասն զի և ոչ որ իսկ ընձեռէ օրէնս որ ոչն գիտէ զինչ չար է յանցանելն. իսկ ՚ուծ եա և զյանցուցեալն պատժեաց, ոչ արդեօք զերկաւեանն զայն առնէր, եթէ ոչն Հանապաղ գնա՚ի սկզբանն էր արարեալ առաքինութեան և չարութեան։ Ցետա-նեաւ զնարդ ամենայն ուստեք մեզ ցուցաւ՝ եթէ ոչ զկնի ուտելոյ ՚ի փայտէն՝ զբարի և զչար գիտաց, այլ և նախ քան զայն իմանայր։

Երդ զայս ամենայն ընկալեալք և՚ի տուն գնացեալք՝ կրկնապատիկ մերձ գնցուք զսերդանն, զկերակրոյն և զըլսելութեան, և խօսելոյն զասացեալսն այրն, լուիցէ կին, լուիցեն և մանկունք, մի զրկեսցին և ծառայք ՚ի լսելութենէս։ Ակեղեցի[1] արա զատուն քո. պարտական ես և մանկանցն և ծառայիցն փրկութեան։ Որ զոր օրինակ մեք ընդ ձեր պահանջեմք քան, նոյնպէս իւրաքանչիւր ոք ՚ի ձենջ պահանջեսցի քան[2] վասն ծառայի, վասն կնոջ և վասն որդւոց։ Ամին իրի յետ այսպիսի պատմութեանց՝ և երաշխեն ևս երևելոքք զձեզ ընկալցին հեշտութեամբ ՚ի բաց վճարեալք յամենայնի. վասն զի որ ինչ ՚ի տունջեան անձն վարժի, զնոյն սովորեաց և ՚ի քուն տեսանել։ Որ եթէ զհանապազորեայ ասացեալսն պահիցեմք, ոչ յոլով ինչ կարօտանամք աշխատութեան. զի և յայտնագոյն որ զկնի այսոցիկ իսկ քանն լինի մեզ, և յօժարագոյն վարդապետութիւնն։ Որ զի առաւել ևս լիցի ձեզ և մեզ օգուտ, մեզ ՚ի վարդապետութենէս, և ձեզ ՚ի լսելութենէն զկնի մարմնական սեղանոյն, սեղան հոգևոր ձեզ մերձ դիցի։ Օ ի և ամ լութիւն ձեզ և զարդ լինիցի, և մերձաւոր կենացս զօգտակարութիւն ՚ուծ ուղղեսցէ, յարմարեալ լիցի ամենայն և գիւրին. քանզի "Ասղրեցեք, ասէ, զարքայութիւն երկնից, և այս ամենայն յաւելցի ձեզ"։ Ամին

1 Պակասէր յօրինակին Եկեղեցի աբա պատուա տո. յաւելաւ ՚ի յունէն։ 2 Պակասէր յօրին. բան ... Նմին իրի յետ. յաւելաւ ՚ի յունէն։

ըեսցուք այսուհետեւ զայն, զի և որ աստ են և որ անդ բարիքն՝ պատահիցեմք ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսի Քրիստի. ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԸՆԴԵՐ-ՓԱՍՏ ՁԱՆԱԶԵԼՈՑ ԲԱՐԻՈՑ՝ ԵՒ ՉԱՐԻ ԿՈՉԻ ՓԱՍՏՆ, ԵՒ ԶԻՆՉ ԱՐԺԵՈՑ «ԱՅՍՕՐ ԸՆԴ ԻՍ ԲՅԵՍ Ի ԴՐԱԽՏԻՆ»։

Յաւէտ աղաչեցի երէկ զձեր սերդ յիշել զասայեալն, և կրկին սեղան յերեկորին մերձ դնել զկերակրոցն և զանանից, զոր եդեալ վայելեսցեն կերօղքն։ Այլ զինչ. արդեօք արարէք զայն, եղիք կրկնապատիկ զսեզանն։ Գիտեմ զի արարէք. և ոչ յայնմանէ միայն, այլ և յայսմանէ ձաշակիցէք. քանզի ոչ՝ ի վատթարագոյնսն փութայով զլսողացն առնիցէք։ Բանզի սա լաւագոյն է քան զնա. ըստ որում զայն խոհարարացն ձեռք եդին առաջի, իսկ զայս մարդարէիցն լեզուք յօրինեցին. և նա որ յերկրէ բոյսքս են՝ ունի, իսկ սա զՀոգւոյն պտուղ. և այն սեղանոյ յապականութիւն ձեռին կերակուրքն, իսկ սորայս յանապականութիւն. նա զմերձաւոր զկեանս մեր ունի, և սա՝ ի հանդերձեալն մեզ առաջնորդէ։

Արդ զի եղիք զկնի այնր սեղանոյ և զայս՝ գիտեմ, և ոչ յարմարագոյն է զձեր ծառայ Հարցանել, որ քան զայն յայտնի է հրեշտակ։ Այլ զինչ է այս. զկայթուածն յասացեալն, զգովութիւնն որ՝ ի վարդապետութենէն էր։ Ա՛ն զի ասացի ձեզ երէկ թէ իւրաքանչիւր ոք՝ ի ձէնջ արասցէ զտունն եկեղեցի, և մեծապէս կայթեաջիք յայտնելով զհեշտութիւնն որ յայտնելոյ է. իսկ որ հանդերձ հեշտութեամբ լսէ, նա և՝ ի գործոյն ցոյցս պատրաստի. յաղագս այսորիկ և այսօր յօժարամտագոյն յառաջեցայ՝ ի վարդապետութիւնս։

Այլ սթափեցարուք այժմ. զի ոչ միայն ասողին, այլ և լսողացն ևս առաւել՝ ի հոգս լինել պարտ և արժան է։ Ա՛նք զի ևթէ զիոյթ ունիմք առաջի արկանել զտէրունեան մարմինն[1] զինչս. քայց ձեզ առաւել-

1 Ի յոյնն չիք մարմին։

գոյն և աշխատութիւն, զի և ընդունել զայս և հանդերձ բազում զգուշութեամբ պահել։ Ի վերայ դիք այսու հետև զինի ասացելոցն՝ զղրունս զխականս զինդս, և զհաւատս խորհուրդս իբրև զպահապանս ոմանս ամենայն ուստեք շուրջ կացուցէք ոգւոց. վասն զի լիրք է գողն և յարաժամ ոքնէ և յաճախապէս՝ի վերայ յարձակի. և թէպետ և յոլովակի վրիպէ, բազում անգամ յանդգնի։ Այլ լեզին պահապանքն ահաւոր. և եթէ տեսցեն զատանայ եկեալ կամելով յափշտակել ինչ յաւանդելոցն, հանդերձ յոքն աղաղակաւ՝ի քաց հալածեացեն զնա. և եթէ հոգս ինչ աշխարհականս՝ի վերայ ածիցէ, արգելցեն. եթէ մռայլումն բնութեամբ վտանգեացէ, կրթութեամբ յիշատակաւ ընդոստուայցեն. վասն զի ոչ երբեք ինչ վտանգէ կորուսանել զտէրունեան ինչսն։

Օ՛ի եթէ ոք զայս ինչ ընդունիցին՝ յորժամ ցրեն զհաւատացեալն՝ բազում անգամ մահու պատահին, ոք զայժ պատուականագոյնն քան զամենայն ընդունելոցն՝ եթէ կորուսանիցեն՝ ընդ որպիսի պատուհասիւք արգելօք անկանիցին։ Այս այսմ ընդդէմ պահպանութեան պարտապանք միայն էն ընդունակք, և այլ և ոչ մի. զի ոքքան ընկալաւն, նոյնքան նոցա՝ի քաց տալ հարկ լինի, և առաւել ինչ ոչ ոք՝ի նոցանէ պահանջէ. իսկ այլ բանիցն ոչ պահպանութեան միայն էն պարտականք, այլ և յոլով գործոց. զի ոչ զոր ընկալաքն եւ եթէ հատուցանել հրամայիւք, այլ և կրկնապատիկ զայն ընծայել տեառն։ Այս սակայն եթէ պահել միայն առաջի կայը, յաւէտ հոգոյ և փութոյ կարօտեալ լինիցին իրքն. իսկ յորժամ և աձեցուցանել և զնոսա հրամայէ մեզ, ըզմտաւ ածէ ոքքանցի աշխատութեան և հոգոյ մեք հաւատացելքս[1] կարօտանամք։

Յաղագս այսորիկ և որ զհինգ տաղանդն հաւատացաւ, ոչ նոյնչափ մատոյց, այլ կրկնապատիկ. զի այնոքիկ տեառն մարգասիրութեանն էին, այլ պարտ էր և ծառային զիւր փոյթն ցուցանել[2]։ Այնուամ դարձեալ մի տաղանդն հաւատացաւ, և եբեր զնոյն զոր հաւա-

1 Խմն որոց հաւատացաւ արծաթ բանին։

2 Պակասին տողք 3։

տացաւն. ոչ նուաղեցոյց, ոչ սակաւացոյց զաւանդն, և ոչ զկեան եբեր, այլ զի ոչ շահեցոյց և ոչ կրկնապատիկ ընծայեաց զՀաւատացեալն՝ զվերջինն պատուհասն ետ, և թերևս յիրաւի: Եթէ կամէի, ասէ, զայդ պահել միայն, և այլ շահ ինչ ոչ լինել դովաբ, ոչ ևս արդեօք ի ծառայից ձեռս տայի զայդ: Դու ինձ տես և զմարդասիրութիւնն տեառն: Դարձեալ մատոյց որ զկինդն հաւատացաւ՝ և այլ ևս հինգ, և որ զերկուսն՝ այլ ևս զերկուս, և ի նոյն հատուցումն երկոքեան վայելեցին: Օ՜ի որպէս նմա ասաց "Դարի ծառայ առաքինի և հաւատարիմ, վասն զի ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ յոլովից զքեզ կացուցից,,, զնոյն և սմա ասաց. և շահն ոչ նոյն, բայց գովութիւնն նոյն և վարձ հաւատոյ: Կնդէր արդեօք, վասն զի ոչ ի քանիծնութիւն ընծայեցելոյն, այլ ի զօրութիւն ի գործունեայ հայեսցի ՝ Դոքա իւրաքանչիւր ոք ըստ կարողութեան գործեցին. զառաւելութիւնն ընծայիցն և զնուաղութիւնն ոչ պղերգութիւնն նորա և ոչ փոյթ սորա, այլ զանազանութիւնն աւանդին արար: Ո՞րինն հինգ էառ և հինգ ևս ընծայեաց, և միւսն երկուս էառ և այլ երկուս բերեալ մատոյց, և ոչ ըստ իմիք նուաղեցաւ բանիւ փութոյն, զի և սա կրկնապատիկ և նա զՀաւատացեալ աւանդն գործեցին. իսկ որ զմին էառ, մեհնակ բերեալ մատոյց, յաղագս որոյ և պատուհասեցաւ:

Ա՜յդ լուայք որքան պատիժք առաջի կան ընչիւքն տերունականք[1] անգործ եղելոցն. ապա ուրեմն պահեցուք և գործեսցուք զշահն, և յոլովագոյն յաւնոսիկ ցուցցուք զվաճառականութիւն: Ո՞ի ոք ասասցէ՝ տգէտ եմ, աշակերտ եմ, բան ոչ ունիմ վարդապետութեան, անուսումն և ոչ իմիք արժանաւոր: Ծնչպէտ և տգէտ ես, եթէ աշակերտ, և եթէ մի տաղանդոյ հաւատացար, գործեա զՀաւատացեալն, և զնոյն վարձ վարդապետին ընկալցիս: Ա՜յլ զի և պահէք զաստացեալս և հանդերձ բազում զգուշութեամբ ունիք՝ հաւատամ. բայց զի մի յայս բան զամենայն ծախիցեմք, բերք և ըզկարգաւորն[2] զերիկեան ասացելոյն առաջի դիցուք այժմ, ձեզ զայս պահպանութեանն վարձ հատուցանելով: Օ՜ի

1 Պահաեր յօրին. փերուանիանօփ անգործ եղէնցն. յաւելաւ ի յոնէն:

2 Իմա՝ որ կարգաւ զհետ գայ:

որ զառաջինն հաւատացաւ և պահեաց, արժանաւոր եղև դարձեալ այլ առնուլ։

Այս զինչ էր պատմութիւնն որ երկիւղ ձեզ առաջի եդաւ։ Յաղագս փայտին էր բանն. և ցուցաք եթէ գիտէր մարդն զբարի և զչար նախ քան զնուտելն ի փայտէն և յոլով իմաստութեամբ էր լցեալ, յորոց և զանուանս գազանացն եդ, և յորոց ծանեաւ զկինն իւր. որով ասացն "Սա այժմ ոսկր յոսկերաց իմոց,,, յորոց յաղագս ամուսնութեանն խօսեցաւ և վասն մանկարարութեան և լծակցութեան հօր և մօր, յորոց պատուիրանն էառ։ Այնպէս ոչ ոք պատուիրանս տայ և օրէնս որ գործելի է և ոչ է գործելի, որ զբարին և զչար անգիտանայ։

Այսօր հարկաւոր է ասել, զի եթէ ոչ ի փայտէն գիտութիւն մարդն էառ, ընդէր գիտութիւն բարւոյ և չարի փայտն ասի. վասն զի ոչ փոքր լինէ ուսանել վասն էր զայն անուն ունի փայտն։ Օ՛ և սատանայ ասաց. "Յորում աւուր ուտիցէք ի փայտէդ, բացցին աչք ձեր, և եղիջիք իբրև զաստուածս ձանաչել զբարի և զչար,,։ Այս զիա՞րդ, ասեն, եթէ ոչ էառ գիտութիւն բարւոյ և չարի։ Այս ո՛վ ասէ՝ եթէ էառ. բանսարկուն, ասէ։ Այս արդ զիշնամնւոյն վկայութիւն բերես ինձ և զդրժողին. և սակայն այսպէս ասաց՝ թէ աստուածք եղիջիք. իսկ արդ աստուածք արդեօք եղեն։ Արդեօք ոչն եղեն աստուածք, և ոչ գիտութիւն բարւոյ և չարի յայնժամ առին։ Սուտ է նա և ոչ ինչ ձշմարտութիւն խօսի. քանզի "Ի ձշմարտութեան ոչ եկաց,,։ Արդ մի զիշնամնոյն զվկայութիւն ի մէջ ածցուք, այլ տեսցուք ի նոյնն իսկ յիրացն վասն էր գիտութիւն բարւոյ և չարի կոչի փայտ։ Այս նախ առաջին, եթէ բարւոք Թուի, զինչ իսկ էր բարին և չարն՝ հայեսցուք։

Օ՛ զինչ էր բարի, հնազանդութիւն. զինչ չար, անհնազանդութիւնն։ Այս առ վայր մի ձեզ, զի մի մոլեսցուք ի բնութեան բարւոյն և չարի, ի գրոց զայս հաստատեսցուք։ Այս զի այս էր բարի և չար, լուր զինչ ասէ. "Օ՛ զինչ բարիս և զինչ տէր Ած քո խնդրէ ի քէն. ասա զբարին. սիրել զտէր Ած քո,,։ Ցեսանեմք զի հնազանդութիւնն է բարի, քանզի ի սիրոյն հնազանդութիւն է։ Դարձեալ. "Երկուս ևս չարս արար ժողո-

վերջս այս. զնս Թողին աղբիւր ջրոյ կենդանւոյ, և փո-
րեցին իւրեանց գուբս ծակոտկէնս որք ոչ կարեն ունել
ջուր ,,: Ցեսանէս զարձեալ զի չար է անհնազանդու-
Թիւնն և Թողուլ. առ ժամանակ մի զայս պահեսցուք
եթէ բարի է հնազանդուԹիւնն և չար անհնազանդու-
Թիւն, և դիտասցուք զայն: Օ յ վասն այսորիկ խակ կի-
տուԹեան բարւոյ և չարի կոչեացի փայտն, զի պատուի-
բանն հրահանգէր զնոցայն հնազանդուԹիւն՝ ՚ի փայ-
տէն եղև: Գիտէր և նախ քան զայն եթէ բարի է
հնազանդուԹիւնն և չար անհնազանդուԹիւնն. բայց
յետոյ ուսաւ յայտնագոյն ՚ի ձեռն իրացն փորձուԹեան
որ նովիմբ փայտիւն եղև:

Արդ ես և Այրն գիտեր զեղբայրն, գիտեր և զիւր
զջալն. լուր զինչ ասէրն. “Այդ երԹիցուք ՚ի դաշտ ,,:
Այս ընդհէր արդեօք ձգիցես ՚ի հայրենի գրկաց զեղբայրդ
՚ի դաշտ. ընդհէր կացուցանես ամբայի, ընդհէր մերկ առ-
նես ՚ի իսաամակալուԹենէ, հիմ հեռի ՚ի հայրենի դի-
մանն տանիս, և՛ր աղաղաւ ծածկես զյանդգնուԹիւնդ,
եԹէ ոչ զարհուրեցար ՚ի մեղացն: Օ յինչ և զինի սպա-
նումն առնելոյն հարցեալ՝ զարձեալ գժուարիս և ստես.
քանզի այ ասացեալ “Որ է Աբել եղբայր քո ,,, “Ոչ,
ասէ, պահապան եմ ես եղբօրն իմոյ ,,. ուստի յայտ է
եԹէ հաւաստեաւ գիտելով եկն ՚ի գործն յայն: Ամդ
զոր օրինակ նա գիտեր և նախ քան զփորձն եԹէ չար
է սպանումն, և ուսաւ յայտնագոյն զինի այսորիկ յոր-
ժամ զպատուհասն ընկալաւ և լուաւ “Հեծեծելով և
երերալով լինիս ՚ի վերայ երկրի ,,, նոյնպէս և հայրն
նորա [1]:

Ոչ ասն զի զբարն նորա զամենայն գիտեմք և նախ քան
զգործելն, այլ յայտնագոյն ևս ուսանիմք զինի գործե-
լոյն, ևս առաւել յորժամ տանջիմքն: Ամյսպէս էր
Այրն, գիտեր յառաջագոյն եԹէ չար է եղբայրասպա-
նուԹիւն. ուսաւ հաւաստեաւ ՚ի պատժոյն. վասն զի
և մեք գիտեմք եԹէ բարի է ողջախոհուԹիւն և տաղտ-
կալի հիւանդուԹիւն և նախ քան զփորձն. այլ և յա-
ւէտ ևս յորժամ ՚ի հիւանդուԹիւնն անկանիցիմք,
զերկաքանչիւրոցն զգանազանուԹիւնս գտանեմք: Այնօ-

1 Պակասին տողք 3:

բինակ և Ադամ գիտեր եթէ բարի է հնազանդութիւն և չար անհնազանդութիւնն. բայց յետոյ և յայտնագոյն ևս ուսաւ, յորժամ ի փայտին Ճաշակելով արտաքս անկաւ ի դրախտէն և յերանութենէն եւ: Ա՛ւ յորժամ ընդ պատուհասիւք անկաւ յայ, որ արգելոյրն Ճաշակել ի փայտէն, պատուհասն զնա յայտնապէս խրատեաց փորձիւն՝ որքան չար է անհնազանդելն ՚այ և հնազանդելն բարի. յաղագս այնորիկ գիտութեան բարւոյ և չարի փայտն կոչի:

Ա՛ւ ընդէր եթէ նոյն ինքն գնութիւն փայտին զգիտութիւն չունէր բարւոյ և չարի, այլ ի պատուհասէն որ յաղագս անհնազանդութեան փայտիւն յայտնապոյն զայն ուսաւ մարդն, գիտութեան բարւոյ և չարի փայտ կոչի: Օ՛ի սովորութիւն է այս գրոց, և յորժամ իրք լինին ի տեղւոջ և ի ժամանակի, յիրացն կոչեն և զտեղիս և զժամն: Ա՛ւ քաջայայտ ձեզ լինիցի ասացեալս, օրինակօք զայս յայտ արարից: Խահակ ջՏհօրս երբեմն փորեաց, և զՋհօրն զայն դրացիքն ձեռնարկեցին ապականել, և անդուստ լինէր Թշուառութիւն, և կոչեաց զՋհօրն՝ Թշնամութիւն. իբրև ոչ եթէ Ջհօրն էր նորա Թշնամի, այլ զի յաղագս նորա Թշնամութիւն եղև. նոյնպէս և փայտն գիտութեան բարւոյ և չարի, իբրև ոչ եթէ նա ինքն ունէր զգիտութիւնն, այլ զի նոցա յանդիմանութիւն եղև բարւոյ և չարի: Վարձեալ փորեաց Ջհօրն Աբրահամ, և խարդախեաց Աբիմելէք. խմբեցան և լուծին զԹշնամութիւնն, և երդմնեցուն եւ տուն միմեանց և կոչեցին զՋհօրն զայն՝ Ջհօր երդման. ոչ որպէս Թէ Ջհօրն երդուաւ, այլ առ Ջհօրին երդումն եղև: Տեսանէս զիարդ յիրացն առնուն զանուանսն:

Ա՛ւ գարձեալ վասն զի հարկաւոր է յորով օրինակս ի մէջ ածել զի յայտնագոյն լինիցի ասացեալն: Ա՛ւ եւ տես հնչեղական դիպեալս ինքեան և բանակ ՚այ, և կոչեաց զտեղին՝ բանակ. ոչ եթէ տեղին բանակ էր, այլ սակայն տեղին կոչեցաւ բանակ՝ զի անդ եաես զբանակն: Տեսանէս զիարդ ի պատահմանէ իրացն որ ի տեղւոջն էր՝ անուանեաց զտեղին: Նոյնպէս և փայտ բարւոյ և չարի[1], և կրթութիւն անհնազանդութեան

1 Պահաին տողք 3:

և հնազանդութեան։ Այլ դարձեալ ետես զնա Յա-
կոբ որպէս կարողութիւն է մարդոյ տեսանել, և կոչեաց
զանուն տեղւոյն՝ տեսութիւն ՚ի. ընդէր. վասն զի տե-
սի, ասէ, զնա։ Այլ սակայն ոչ եթէ տեղին տեսութիւն
ՙի էր, այլ յիւրացն պատահեցելոց ՚ի տեղւոջն անուա-
նակոչութիւն եղև։ Տեսանեմ ՚ի ձեռն որքանեաց ցու-
ցաւ եթէ սուղորութիւն է գրոց դիպուածոյն որք ՚ի տե-
ղիս՝ զնոյն ինքն զտեղին կոչել։ Զնոյն զայս և առ ժա-
մանակն առնել սովոր են։

Բայց զի մի աշխատ գձեզ արարից, քեր զբանս փո-
փոխեսցուք ՚ի տխրագունիցն ՚ի հրճուելիսն. վասն զի
տաժանեցան միտք ձեր ՚ի նրբագոյն յիմաստս անդր դե-
գերելով, յաղագս որոյ հանդուցանել գձեզ է բարւոք,
ծանծաղագոյն և զուարճալի իմաստիւք կերակրել։

Բ.րդ երթիցուք այսուհետև առ փրկական խաչին
փայտ։ Զանգի նա զամենայն դժնդակութիւնս ելոյծ.
զի քան զոր մարդն հանդերձ բազում համաթձակութ-
կատարեաց զամենայն իրս չարեացն, առաւելագոյն և
մեծ Քրիստոս ՚ի ներքս եմոյծ զբարիսն։ Այլ յաղագս
այսորիկ ասէ Պաւղոս. "Որ առաւելան մեղքն, յա-
ւէտ և յաձախեցին շնորհքն,,. այս է մեծագոյն պար-
գևն քան զմեղսն։ Վասն որոյ և դարձեալ ասէ. "Որ
որպէս յանցանքն, նոյնպէս և շնորհքն,,. զի ոչ որքան
մեղաւ մարդն, այնքան շնորհեաց ՚ած. և ոչ որքան տու-
դանքն, այնքան շնորհքն. ոչ որքան նաւաքեկութիւնն,
այնքան օգուտն. այլ յոլովագոյնք են բարիքն քան զա-
րիքն, և յոյժ իրաւացի։ Զանգի չարիսն ծառայ ՚ի ներքս
եմոյծ և նուազունք էին. իսկ զբարիսն տէրն շնորհեաց,
յաղագս որոյ և յոգունք էին. վասն այսորիկ ասէ. "Որ
որպէս սկսանքն, նոյնպէս և շնորհքն,,. և ապա ՚ի վե-
րայ ածէ զղջանագանութիւնն. "Օ՛ի դատաստանն ՚ի
միոջէն, ասէ, ՚ի դատապարտութիւն, բայց շնորհքն ՚ի
բազմաց յանցուածոցն յարդարութիւն,,։ Ընդայտ է
ասացեալս, վասն որոյ հարկ է զլուծմունս ՚ի վերայ բե-
րել։ Դատաստանն՝ այս է պատուհասն, պատիժքն...[1]
այսոքիկ արքայութեանն արժանիք, ասա ինձ։ Տեսա-
նե՛մ զի հաւատոյն աչօք հայեր, ոչ զերևելիս քններ։

1 Թուի թուղթ անկեալ յօրինակէն, և պակասին տողք 60։

Ա՛ման որոյ և ոչ ՚ած զբանս սոսկ խուզէր, այլ որպէս նա՝ ետես զՅուդէիւնն, նոյնպէս և ՚ած ետես ՚ի սիրտ աւազակին և ասէ. "Լ՛սօր ընդ իս իցես ՚ի դրախտին,,։

Յայսմ վայրի հայեցարուք, քանզի խնդիր ոչ դուշ նաքեայ ինչ բուսանի։ Օ՛ի մանկեցիք համբացեալ շունք, քանզի շունք համբացեալք և կատաղեալք այնպէս ձևացուցանեն դէմս հանդարտութեան, այլ գԺընդակագոյն ևս քան զշանցն ունին զմոլութիւն, և ծածկեն ընդ մորթով ոչխարաց զգայնն։ Այլ մի՛ զերևեալ դալանն քննեսցես։ Լ՛սեքա այժմ բուռն Յարկանելով զտեղւոյս զայսմանէ ասէն. ՚ած ասաց "Լ՛ինն ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին,,. ապա ուբեմն հատուցումն արդէն եղև բարեացն, և աւելորդ է յարութիւնն. քանզի եթէ յայնմ աւուր կաս, ասեն, աւազակին զբարիսն, և մարմին նորա ոչ ևս էր յարուցեալ, և այսօր ոչ ևս լիցի մարմնոյ յարութի՛ն։ Մնացո՛ք արդեօք զասացեալսդ, եթէ երկրորդ անգամ զնոյն Յարկ իցէ ասել. "Լ՛ինն ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին,,։ Լ՛ըդ եմուտ, ասեն, ՚ի դրախտն աւազակին ոչ Յանդերձ մարմնոյն. քանզի որպէս արդեօք որ յայն ժամն թաղեցաւ մարմինն լուծաւ և փոշի եղև, և ոչ ուրեք ասէ եթէ յարոյց զնա Քրիստոս։ Կա՛ արդ եմոյծ զաւազակն առանց մարմնոյ, վայելեաց ՚ի բարիսն, քաջայայտ է եթէ մարմնոյ ոչ ևս է յարութիւն. զի եթէ էր մարմնոյ յարութիւն, ոչ արդեօք ասէր՝ ընդ իս իցես ՚ի դրախտին, այլ ՚ի ժամանակի կատարածին յորժամ մարմնոյ լինի յարութիւն։ Լ՛պա եթէ արդէն իսկ եմոյծ զաւազակն, և մարմին նորա ապականեալ մնաց արտաքոյ, քաջայայտ է եթէ մարմնոյ ոչ է յարութի՛ն։ Օ՛այս նորա։

Յնկալարուք այսուհետև և զմերս. մանաւանդ եթէ ոչ ՚ի մեզ, այլ յածային գրոց. զի ոչ զմեր ինչ ասեմք, այլ զՀոգւոյն։ Օ՛ինչ ասես. ոչ՚ի հաղորդութի՛ն պատկասն մարմինն՝ այլ յաշխատութիւնան հաւասարեաց, իսկ ՚ի վարձն զրկիցի. և յորժամ հանդիսանալն էր պարտ և արժան՝ յոլովադոյն ընկալաւ զքրտունսն, իսկ յորժամ պատկացն ժամանակ՝ միայն Հոգին պատկի։ Կա՛ լսես Պաւղոսի որ ասէ՝ եթէ "Կ՛երձ կալ պարտ է յանդիման բեմին Քրիստոսի, զի իւրաքանչիւր զք կրեսցէ

նովին մարմնովն զոր ինչ գործեաց եթէ բարի և եթէ չար ,, : Որ լսես նմա որ ասէն դարձեալ . “ Պարտ է ապականացուիս այսուիկ զգենուլ զանապականութիւն և մահկանացուիս այսուիկ զգենուլ զանմահութիւն ,, : Մահկանացուի , որում , հոգւով եթէ մարմնով . վասն զի հոգին քնութեամբ անմահ է , և մարմին քնութեամբ մահկանացու : Այլ բազում ինչ կոտորէն յայտնեալ . սակայն և ի նոցունց իսկ ի մեզայուածոյն զմշգական զատուցելոյն յանդիմանեացուք :

Նմուտ , ասէն , ի դրախտն աւազակն : Նա զինչ է այս . միթէ այնոքիկ իցեն բարիքն զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և սիրտ մարդոյ ընկալաւ [1] . քանզի յաղագս նորին զայսքան աւուրս խօսիմք : Որդ պղպէս կատ զբարիսն աւազակն . քանզի ոչ ի դրախտն խոստանայ մուծանել զմեզ Աստ , այլ ի նոյն ինքն յերկինն . և ոչ արքայութիւն դրախտին , այլ արքայութիւն երկնից քարոզեաց . վասն զի “ Ակաա , ասէ , քարոզել և ասել՝ ապաշխարեցէք զի մերձեցաւ ոչ արքայութիւն դրախտին , այլ արքայութիւն երկնից ,, [2] : Նա ի դրախտն եմոյծ զաւազակն , ոչ և ես ետնման զբարիսն :

Նայց և այլ իմն առ այսոքիւք ասեմ : Դրախտ ասի տանօր ոչ զդրախտն ասաց , այլ անուամբ դրախտին զարքայութիւնն անուանեաց : Ապա զի ընդ աւազակին խօսեր ընդ առն որոյ ոչ ինչ ներ լուեալ զբարձրագոյն վարդապետութիւնն , և ոչ ինչ գիտեր յաղագս մարգարէութեան , այլ զամենայն ժամանակս յանապատս դեգերեալ և սպանութիւնս գործեալ , և ոչ երբեք յաւետարան յեկեղեցի և ոչ Աստուածային լսելութենէն , ոչ գիտեր զինչ արդեօք իցէ արքայութիւն երկնից , վասն այսորիկ ասէր . “ Այսօր ընդ իս իցես ի դրախտին ,, . Ծանօթացուն իւ և սովորական անուամբ դրախտին զերկնից արքայութիւնն նմա զեկուցանէր :

Նղկցին այդոքիկ , և կոչեսցի անուամբ դրախտին արքայութիւն երկնից , և յաղագս նորա խօսեսցի Աստ ընդ նմա . ընդունիմ : Այս ուրեմն եմուտ , ասէն , յարքայութիւնն երկնից : Ասաւ յայտ է . որոյ ասացն “ Այսօր ընդ իս իցես ի դրախտին ,, : Նա եթէ բռնաւորագոյն

1 Պաւասին տողք 2 : 2 Պաւասին տողք 27 :

է լուծումն այս, զյայտնագոյնն՝ի վերայ ածյուք։ Որ է այս. ասաց Պրիստոս. "Որ ոչ հաւատայ յորդւոյ, արդէն իսկ դատապարտեցաւ,,։ Եւ սակայն ոչ յարուցիչն և ոչ դատաստան, ոչ ևս պատիժք և տանջանք. և զիա՞րդ, ասեն, դատապարտեալ է. ՚ի մեղացն։ Եւ դարձեալ. "Որ հաւատայ, ասէ, յորդւոյ, փոխեցաւ՚ի մահուանէ՚ի կեանս,,. և ոչ ասաց փոխեսցի, այլ արդէն փոխեցաւ. և այս դարձեալ յուղղութենէն, և նա՚ի մեղացն։ Որպէս նա դատապարտեցաւ չև ևս դատեցեալ, և նա փոփոխեցաւ՚ի կեանսն չև ևս փոփոխեալ, և առ նա յուղղութենէն և առ միւսն ևս՚ի մեղայ որպէս եղելոյն խօսի, նոյնպէս և ընդ աւազակին խօսեցաւ։ Օ՚ի և բժիշկք յորժամ տեսանեն զոք անյուսացեալ, ասեն թէ արդէն վախճանեցաւ և մեռեալ է. և սակայն տակաւին ևս ղշունչն՚ի նմա տեսանեն։ Այլ որպէս նա վստահութիւն ինչ ոչ ունէր ապրանաց[1] ՚ի բժշկացն մեռեալ համարեցաւ, նոյնպէս և աւազակին զի զերծեալ էր յամենայն վտանգէ դառնալոյ՚ի կորուստ, մնանէր յերկինս։ Նոյնպէս և Ադամ լուաւ՝ եթէ "Ցաւուր յորում ուտիցէք՚ի փայտէդ, մահու մեռանիցիք,,։ Եւ ապա՚ի նմին աւուր մեռաւ. և ոչ երբէք, այլ եկաց աստ ինհարիւր ամ զկնի աւուրն այնորիկ։ Եւ զիա՞րդ ասէր եթէ՚ի նմին աւուր մեռանիցիք. հրաման նաև և ոչ փորձիւ։ Նոյնպէս և աւազակն յերկինս էմուտ։ Եւ լուր զինչ ասէն Պաւղոս, յայտնելով եթէ ոչ ոք ոչ առ զբարեացն ևս հատուցումն, քանզի յաղագս մարգարէիցն և արդարոցն խօսելով՚ի վերայ էած. "Աստ հաւատոց մեռան սոքա ամենեքեան, ոչ ևս ընկալեալ զաւետիսն. այլ՚ի հեռուստ զայնոսիկ տեսանելով ողջունեցին, ասէ, յաղագս մեր նախահոգացեալ, զի մի առանց մեր կատարեսցին,,։ Օ՚այս ընկալարուք և յիշեցէք։ ։ ։[2]

1 Հաւատուածգ ապրանաց ։ ։ ։ վասն ՚ի յունէն։
գէ դառնալոյ պակասէր ։ յաւելաւ 2 Պակասի վերջին մասն տողք 45։

ՁՕՐՆ ԶՄԵՌՆՈՒՑԻՆ ԵՒ Ի ԺՈՂՈՎՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՑՆ ԵՒ Ի ՏՈՒԻՐՍ ՕՐԻՆՈՒՑՆ ԱՂԱՄԱՑ. ԵՒ ԹԷՒ ՁՈՂՈՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵՒՆ ԻՐ ՁՕՐԷՆՍ ԱՒՆՈՒԻ.

Ա՛յսոց խօսեան ընդ ածք զօրս մեզ տիրապետիս ա-
րարին, բայց մերձաւորութիւն վարդապետիս պայծա-
ռագոյն զսա գործեաց։ Օ՛ի ոչ այսպէս արեգակն՝ ի մի-
ջոց երկնից՝ ի վերայ գագաթան ձմեռագայթս արձա-
կելով լուսաւորէ զմարմինս, որպէս Հայրենի դէմքս զսի-
րոյ ձմեռագայթս արձակելով՝ ի միջոցէ աթոռոյս լուսա-
ւորէ զմեր զանձինս։ Օ՛ր և սա գիտելով ոչ՝ ի ձմերա-
նիս առ մեզ եկն միայն, այլ և լուսաւորաց պար ընդ
ինքեան ունելով եկն, զի առաւել ևս լիցի լոյս։ Յա-
ղագս որոյ և եկեղեցիս մեր զուարճացեալ, և խայտայ
հօտս, և մեք հանդերձ յոլով համարձակութեամբ
զբանիս բուռն հարկանեմք. քանզի ուր խմբին հովուացն
ընթացք, անդ ոչխարացն է ամրութիւն։ Նոյնպէս և
նաւավարք բերկրին յորժամ նաւուղիղք բազումք առ
նոսա լինիցին. զի՝ ի խաղաղութեան և հանդարտու-
թեան հողմոց թեթևացուցանեն՝ ի զեկացն վարելով
զաշխատութիւն թևովքն, և յամբոխել ջրոյն՝ արուես-
տիւ և բազում ձեռօք յածուցանեն զջրոյն մոլութիւն։
Նոյնպէս այնօրիկ և մեք համարձակեալք զբանս՝ ի վար-
դապետութիւնս արկանեմք յաղօթից սոցա զամենայն
վատահանալով, մինչ զի դիւրուսումն և յայտնագոյն
մեզ լինել վարդապետութիւնս, և զերիկի ասացեալսն
մեզ վերստին չիչեմք։

Վ՛ասնզի ասացի եթէ նախ քան զուտեղն՝ ի փայտէն՝
գիտէր զարարն և զչար մարդն, և եթէ ոչ զինի ձաշա-
կելոյն էառ զգիտութիւնն զայն։ Ա՛յսպէս և եթէ ըն-
դէր փայտ գիտութեան բարւոյ և չարի կոչեցեալ էր,
և զիարդ սովորութիւն է դրոց յորժամ իրք հանդիպիին
՝ի տեղւոջ և կամ՝ ի ժամանակի՝ չիրացն անուանել
զտեղին և զժամանակն. այսօր հարկաւոր է զնոյն ինքն
ընթեռնուլ զպատուիրանն որով արգել՝ ի փայտէն։ Ա՛յս
պ՛ր է այն։ “Ա՛յս պատուիրեաց տէր ձեզ Ա՛զամայ ասե-
լով. յամենայն փայտէ դրախտիդ ուտելով կերիցես,,։

Հայեցարուք, քանզի զԹագաւորական գիր ընթեռնուլ մարդիկ բովանդակ ժողովէն տեսարան. և առաւել մեք ոչ զմարդկան, այլ զնոյ օրէնս հանդերձեալ եմք ընթեռնուլ, ընդոստուցանել պարտիմք զվիտս և հայել ի յաստուածս:

Պիտեմք զի բամբասեն ոմանք զօրինադիրն, և զօրէնսն ասեն պատճառք լեալ չանցանաց: Արդ առնոսա հարկաւոր նախ առաջին կալ և ցուցանել վասն նոցուն իրաց, եթէ ոչ առեալ զմարդն և ոչ ծանրացուցանել կամելով բնութեանս մերում, այլ սիրելով և խնամելով զօրէնսն ետ: Այլ զի ի մարտակցութիւն մեզ ետ, լուր զինչ ասէ Աստուած. "Օրէնս զօրինս յօգնական նութիւն ետ,,: Իսկ որ առեալն՝ ոչ օգնէ: Պարձեալ ասէ մարգարէն. "Ձրագ ոտից իմոյ են օրէնք քո և լոյս շաւղաց իմոց,,: Որ առեալն՝ ոչ լուծանէ զիաւարէն Ճրագաւ, և ոչ առաջնորդէ լուսով մտքերեցին: Պարձեալ Պաւղոսն. "Ձրագ է պատուիրան օրինացն,,. և լոյս կենաց և յանդիմանութիւն և խրատ: Ահա ոչ օգնականութի միայն և ոչ խրատ ևեթ, այլ և կեանք. և այսոքիկ ոչ են առեղծուղ և ոչ կորուսանել կամողն, այլ որ զձեռն կարկառէ և յարուցանէ: Յաղագս այսոքիկ և Պաւղոս առ Հրեայսն յերկարելով, եցոյց որքան շահ ի ներքս մուծին օրէնքն, և եթէ հանդիստ՝ այլ ոչ ծանրութիւն քնութեան մերում են՝ ասէր, եթէ "Հրեայ անուանիս և հանգուցեալ ես յօրէնսն,,: Ցեսանեմք զի և ոչ ծանրացուցանելոյ վասն զօրէնսն ետ նոճ:

Ահաւոր է ուսանել՝ թէ և պատուելոյ սակս. մանաւանդ զի և այսոքիկ բաւական էին ցուցանել զպատիւն և զնմանակալութիւնն, բայց սակայն և յայլոցն ևս ի վկայութիւն զոյն զայս արացուք յայտնի: "Պովեա Աբրահամ զտէր. գովեա զնոճ քո, Աիսու: Օ զօրացոյց զնիգս գրանց քոց. օրհնեաց զորդիս քո ի քեզ: Ո եդ զսահմանս քո ի խաղաղութի, և Ճարպով ցորենոյ լցոյց զքեզ,,: Այս ապա ասելով և զոր ի ձեռն այլոց ստացուածոց զբարեգործութիւն լեալ յայ, ի վերոյ էած զլուսագոյնն և զմեծ այսպէս ասելով. "Ո պատմեաց զբան իւր Յակոբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի: Ոչ արար այսպէս ամենայն ազգի, և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա,,: Ցեսանեմք որքան

Թուեաց զբարիսն։ Օ. ամրուԹէ քաղաքացն, քանզի ասէ "զօրացայց զնիփս զրանց քոց,,։ զվճարուումն ի պատեբազմէն, "եղ, ասէ, զսահմանս քո ի խաղաղուԹիւն,,։ զառաւելուԹիւն հարկաւորացն, "և զձարպ ցորենոյ, ասէ, լցոյց ի քեզ,,։ Ա. յԼ սակայն քան զամենայն զայնոսիկ՝ զօրինադրուԹիւն պատուական երևեցոյց։ Եւ զի քան զգուշուԹիւն և զխաղաղուԹիւն և զվճարուումն ի պատեբազմաց և զքաջորդուԹիւն և զկարևորացն զառատուԹիւն՝ յաւէտ մեծագոյն պարգև էր զօրինան առնուլ և զարդարուԹիւն ուսանել, քան զամենեսեան յետոյ դնելով իբրև զգլուխ և զկապ բարեացն՝ ի վերայ կած ասելով։ "Եւ արար ամենայն ազգաց տէր այսպէս,,։ Ա. Պրակս։ Եւ համայն յառատուԹիւնս և յայլս ամենեսեան համարեալ յօրովք բազում անգամ վայելեցին. բայց ոչ յաղագս յառաջասացելոցն խօսիմ, ասէ, այլ վասն օրինացն, զի ոչ արար այսպէս ամենայն ազգի. սորին աղագաւ ի վերայ կած. "Եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա,,։ Ցեսանես քան զամ զՀամարեալ բարիսն մեծագոյն զօրինան։ Օ. սոյն և Իրեմիաս երևեցոյց. քանզի որ ի պերուԹեանն էին, ողբալով ասէր. "Օ՛ի՛ ես զի յերկրի Թշնամեաց էս, զաղբիւր խնամուԹեանն Թողեր,,. զօրինան ասէ։ Օ. ի զոր օրինակ աղբիւր յօրով առուս արձակէ ամենայն ուստեք, նոյնպէս և օրինքն յորոնս ամենայն ուստեք արձակելով պատուիրանս ուղղանեն զմեր զանձինս։

Եւ ասա ցուցանելով զընտրուԹիւն պատուոյն որ ի ձեռն օրինացն եղև՝ ասէր. "Ոչ լսելի եղև ի Կանան այս խնամուԹիւն, և ոչ երևեցան ի Թեման, և ոչ որդիք Ագարայ վաճառականք և խնդրողք ծանեան զճանապարհս նորա,,։ Եւ ցուցանելով Թէ հոգևոր ոմն է և ՚ծածկին, "Ո՞ել, ասէ, յերկինս և իջոյց զնա,,։ Եւ ապա ի վերայ կած. "Ա՚ա ՚ծած մեր. ոչ համարեսցի ոք առ սա, եգիպ զամենայն Հանապարհ հանճարոյ, եթ զնա Յակոբայ ծառայի իւրում և Իսրայէլ սիրելոյ իւրում,,։ Յաղագս այսորիկ և Պաւղոս զեկուցանելով ասէր. "Ոչ այսպէս արար ամենայն ազգի, և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա,,։ Օ. սոյն և Պաւղոս զեկուցանելով ասէր. "Օ՛ինչ է առաւել Հրէին, և կամ զինչ օգուտ ի ԹլփատուԹենէն,,։ Յաւէտ ըստ ամենայն օ-

բինակի. Նախ առաջին ղէ Հաւատացան քանքն ՚այ։ Տեսանէս զԱրդ և սա մեկնեաց՝ զոչ արարն այսպէս ամենայն ազգի, և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։ Վասնզի եթէ առաւել Հրէից, այս է՝ նոքա միայն յայլոց մարդկանէ պատուեցան տրուէք զրաւոր օրինացն, ոչ ուրեմն ծանրացուցանելով զմեր բնութիւն՝ այլ պատուեալ եւս զօրէնսն ՚ած։

Եւ ոչ զօրէնսն միայն տալով պատուեաց, այլ և ՚ի ձեռն ինքեան տալովն. և այս մեծ տեսակ է պատուոյ, ոչ ընձեռել եւթ զբարիսն, այլ և ինքեամբ տալ։ Եւ զի մեծ է այս պարգև, լուր Պաւղոսի որ ասէ, և զայս ցուցանէ, քանզի տեսանէր զՀրեայսն ամբարտաւանեալս, որովք մարգարէքն առ նոսա եկին, ՚ի վայր զլուցանէ, եթէ ՚ի մեծագոյն պատիւս մեք վայելեցաք ոչ ՚ի ձեռն ծառայից, այլ ՚ի ձեռն տեառն վարդապետութեանցն դիպեալք, այսպէս լեն ասէ երբայեցւոցն գրելով. "Բազմամանապէս և բազմօրինակաբար կանխաւ ՚ած ընդ Հարս մեր խօսեցաւ, ՚ի կատարածի աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն,,. և դարձեալ այլուր. "Ոչ միայն, այլ և պարծիմք ևս յ՚ած ՚ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով զհաշտութիւնն ընկալաք,,։ Տեսանէս զնա ոչ ՚ի հաշտութիւնն միայն պարծեցեալ, այլ և ՚ի ձեռն Քրիստոսի առեալ զհաշտութիւնն։ Եւ դարձեալ զյարութիւնն պարկեշտացուցանելով. "Ինքնին տէրն ի ջեմ յերկինէ,,։ Տեսանէս և անդ ՚ի ձեռն տեառն զամենայն լեալ, նոյնպէս և աստ ոչ ՚ի ձեռն ծառայի ուրուք և հրեշտակի, այլ ինքն ինքեամբ պատուիրեաց Աղամայ. երկուք պատուովք զմարդն պատուեաց, և տալով զօրէնսն, և ՚ի ձեռն ինքեան տալոյն։ Եւ զիմաստ գլուխեցաւ նա. յաջակս իւրոյ պղերգութեանն։ Ցուցանէն զայս որ ընկալան զօրէնսն և ոչ գայթակղեցին, այլ և առաւել ևս քան զՀրաժարեալսն արարին։

Բայց զի տեսանեմ զժամն փութացեալ զայս բան ՚ի միւս ևս խօսսն յապաղեմ. դուք առ այժմ զասացեալդ պահեցէք և յիշեցէք, և ոչ զլուեալսն հայցեցէք, և զայսահիկ յեկեղեցւոջ և ՚ի հրապարակի և ՚ի տան վարժեսցի իւրաքանչիւր ոք. զի ոչ ինչ է հեշտ քան զաստուածային լսելութիւնս։ Եւ լուր զինչ ասէ յաղագս այ-

սորիկ մարգարէն. "Երբե՛ զի քաղցր են քմոց իմոց բանք քո քան զմեղր և զիւղիսխս բերանոյ իմոյ ,,։

Եւ դայս խորհուրդս ամենայնիւք ՚ի վերայ սեղանոյն, զի զամենայն զնա լցցէ Հոգևորականաւն։ Որ տեսանի-ցէք զպարզևամտիկ[1] մարդիկ զիարդ զինի կերակրոյն քնարերգողս և քնարս ՚ի ներքս մուծանեն, տեսարան գիւբեանց տունն առնեն նոքա. և դու արա զտուն քո երկին, և արասցես ոչ զորմէ փոփոխելով, այլ զնոյն ինքն զերկնից տէրն ՚ի սեղան քո կոչելով։ Որ առնչէ զայնպիսին ընդերել ՚ած. քանզի ուր Հոգևոր վարդապե-տութիւն, անդ և ողջախոհութիւն և պարկեշտութիւն և հեզութիւն. ուր բնաւ օր այր և կին և մանկունք, համակամութիւն և սիրելութիւն, և առաքինութեանն կապանօք կապեալ իցեն, անդ ՚ի մէջ է Քրիստոս։ Քանզի ոչ ասկեղէն ձեղուն խնդրէ, ոչ պատուականութիւն սեանց և ոչ զգեղեցկութիւն կձոյ. այլ զոդացոյն գե-ղեցկութիւն և զմնացս զբարեկերպութիւն և զսեղան արդարութեամբ լցեալ որ զաղօրմութեան պտուղ ու-նիցի։ Այս եթէ տեսցէ զայնպիսի սեղան, վաղվաղակի հաղորդի ժողովոյն, մերձ լինի. վասն զի ինքն է որ ա-սացն, "Քաղցեալ զիս տեսիք և կերակրեցէք ,,։ Եւ յորժամ լսիցես ՚ի խոնարհուստ զաղքատին զբարբառ, և ՚ի սեղանոյն որ առաջի կայ տացես կարօտելոյն, ըզ-տէրն կոչեցեր ՚ի ձեռն ծառային առ սեղանն քո, և զա-մենայն զնա օրհնութեամբ լցեր, յաղագս պատճառի պաղոյն մեծապէս լցուցանել քեզ զշռեմարանն բա-զում բարեօք կազմեցեր։

Եւլ ՚ած որ տայ հայ ՚ի կերակուր և սերմն սերմա-նողի, բազմացուսցէ զպտուղ ձեր և աճեցուսցէ զար-դիւնս արդարութեան ձերոյ յամենայնի՝ ձեզ զնորհեսն իւր ընձեռելով, և արժանաւորս արասցէ արքայութեան երկնից։ Որում լիցի ամենեցունն մեզ հասանել ընորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիս-տոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբով Հոգւովն յաւիտեանս. ամէն։

1 Ա.յդպէս յօրինակին. յոյնն ձոխ, ճեմարան։

ԵՐԿՇԱԲԱԹԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻՆ ԱՍԱՑՈՒԱԾ *

Ա ատարեցէք զպահաց նաւարկութիւն, և ՚ի նաւա-
հանգիստս ոչ ընդհատեալ ժամանեցուք։ Այլ
մի յաղագս այսորիկ պղերգասցուք զի նաւահանգստիս
դիպեցաք, այլ սորին աղագաւ փութասցուք առաւել։
Օ՛ի և նաւուղիղք յորժամ զաղմաբեռն նաւ լցեալ
բեռամբք, զառագաստն ՚ի վեր պարզելով, ՚ի մեւս նա-
ւահանգստին հանդերձեալ իցեն մնծանալ, ՚ի տապնա-
պի և ՚ի հոգս լինին, մի գուցէ յետ երկայնութեան ըն-
դոյն առ վիմի ուրեք փշրեսցեն զնաւն, և անդ կորուսա-
նիցեն զամենայն վաճառն։ Այնպէս և մեզ երկնչել
պարտ և արժան է և ՚ի վտանգի լինել, մի գուցէ ՚ի կա-
տարածի աշխատութեանն ՚ի հատուցմանէ վաստա-
կոյն անկանիցիմք. յաղագս որոյ և յերկարել պարտ է
այժմ զվոյնն։ Այսպէս և ընթացողքն առնեն. յոր-
ժամ տեսանեն մերձ ՚ի յաղթանակն լեալս, յայնժամ
առաւել ձգեն զընթացսն. նոյնպէս և ըմբիշք զինի բիւր
մարտից յորժամ յաղագս պսակի մրցին, զմարտս յա-
ւէտ կանգնեն և զարթուցանեն զիւրեանց զյօժարու-
թիւնն։ Այնպէս և մեք այժմ արասցուք. զի նաւուղ-
ղացն նաւահանգիստն և ընթացողաց յաղթանակն և
ըմբշացն պսակ, նոյնպէս և մեզ մերձաւոր եօթնե-
բեակս, գլուխ բարեաց մերոյ և յաղագս պսակի մարտ։

Ա՛ան որոյ և մեծ կոչեմք զնա, իբրև ոչ եթէ մե-
ծագոյն լինչ ունի զերկայնութիւն քան զայլ ամենայն
աւուրըս այսորիկ, քանզի են և այլքն ևս մեծագոյնք, և
ոչ զի յոլովք են թուով, զոյգ այլոցն են ամենեքեան.
այլ վասն զի մեծամեծ ուղղութիւնք մեզ ՚ի սմա եղեն
՚ի տեսանել։ Ա՛ան զի յայսմ ՚ի մեծ եօթնեւրեակի քաղ-
մնժամանակեայ բնութիւն սատանայի լուծաւ, մահ
չինջաւ, հզօրն կապեցաւ, գործիք նորա յափշտակեցան,
մեզք ՚ի բաց բարձան, նզովքն լուծան, դրախտն բա-

* Ցոյն ընագիրն Ձնչգրիա վերնա- ՚ի բանն « Օրհնեա անձն իմ զՔրիստոս »։ և
գրեալ է զձառս զայս։ Ի մէջ ար- ՚ի բանսփռտիկն որ ՚ի գործս առաքելոցն։
բանն՝ ընկ ընր աղաքաւ մեջ նուէրցաւ։ և

ցաւ, երկինն գնալն եղև, մարդիկ ընդ հրեշտակս խառնեցան, միմնոցին ի բաց բարձաւ, խաղաղութեանն ետ խաղաղութիւն արար վերնոց ընդ երկրայինս։ Ա՛ան այսորիկ մեծ կոչի եօթնեւեակն. և որպէս նոյն ինքն է գլուխ այլոց եօթնեւեկայ, նոյնպէս և սորա գլուխ շաբաթս մեծ։ Յաղագս այսորիկ ի սմա յոլովք զիպեալն երկարեն. ոմանք զպահն աձեցուցանեն և ոմանք զստուածային հսկումն, այլք առատ ողորմութիւնս առնեն ի բարի գործսն փութով, և յերկարեալ ի մեզ մեծութեամբ զբարեգործութիւնն այ լեալ վկայեն։ Օ՛ի զօր օրինակ զԱ՛ազարոս յարոյց Քրիստոս, ընդ առաջ ելանէին նմա ամենայն երուսաղէմացիքն, և առ բազմութիւնն վկայէին եթէ յարոյց զմեռեալն, և փոյթ հանդիպեցելոցն էր աբանչելեացն ցոյցք, նոյնպէս և այժմ փոյթ յաղագս մեծի եօթնեւեկի այսորիկ է մեծութիւն ուղղութեանցն որ ի սմա ցուցանի նշանք։ Օ՛ի ոչ ի միջէ քաղաքի ելանեմք հանդիպել Քրիստոսի այսօր, և ոչ Յերուսաղէմ միայն, այլ յամենայն աշխարհէ բիւր մարդիկ ամենայն ուստեք ժողովք ելանեն դիպել Քրիստոսի, ոչ ոստս արմաւենեաց առնուլ և շարժելով, այլ ողորմութիւն և մարդասիրութիւն, առաքինութիւն և պահս, աղօթս և աքսութիւնս և զամենայն երկիւղածութիւնս ընծայելով տեառն։

Ա՛չ ոչ մեք միայն պատուեմք զեօթնեւեակս զայս, այլ և Թագաւորք աշխարհի որ առ մեզս են՝ ոչ դուզնաքեայ ինչ պատուէն զնա, դատարկութիւն ամենեցուն ընձեռելով որք զհասարակ քաղաքացդ գործեն զիրս, զի յայնմ պարապման վայելեսցեն զաւուրս զայսոսիկ, և յամենայն հոգևոր սպասաւորութիւնս հպելով։ Ա՛ան այսորիկ և զատենից դրունս փակեն. դատարկացին, ասեն, ամենայն հակառակութիւնք, և կռուոյ և տանջանաց տեսակք. հանդիցեն սուղ ինչ և դահճացն ձեռք. Հասարակաց ուղղութիւն եղև ի տեառնէ, եղիցի և ի մեզ ծառայիցս բարի ինչ։ Ա՛չ ոչ այսու միայն պատուովք պատուեսցեն, այլ և միւս ևս ոչ ինչ նուազ քան զսա. Թագաւորական գիր առաքելով՝ ասեր որք ի կապարանսն զնակեն, արձակեցէք ի կապանացն։ Օ՛ի զոր օրինակ տէրն մեր ի գժոխս զլմբռնեալսն ամենեսեան ի մխոանէ ազատեաց և ելոյծ, նոյնպէս և ծառայքն

ըստ իւրեանց կարողութեան ընծայելով՝ տէրունական մարդասիրութեանն նմանիլն. արձակին ՚ի զգալի կապարանացն, վասն զի յիմանալեացն ոչ կարեն։

Օ այս եօթնեքերեակ և մեք պատուիրաք. և փոխանակ արմաւենեացն ելի ես ընդ ձեզ զվարդապետութեանս բան առաջի արկանելով, զերկուս խերևէշս արկանեմք որպէս զայրին զայն։ Նըմին նոքա յայնժամ ոստս արմաւենեաց ունելով, աղաղակէին և ասէին. "Ովսաննա՛ ի բարձունս. օրհնեալ որ եկեալդ յանուն տեառն"։ Նըլաք և մեք փոխանակ ոստոց արմաւենեաց, յօժարութիւն զուարձացեալ ցուցանելով, աղաղակեսցուք և մեք և ասացուք որպէս և այսօր սաղմոսերգն. "Ովսիա անձն իմ զտեր. գովեցից զտեր ՚ի կեանս իմ"։ Նը այն բան Հաւթայ էր և այս. մանաւանդ թէ ոչ այն Հաւթայ և ոչ այս, այլ երկոքին Հոգւոյն շնորհացն. քանզի խօսեցաւ մարգարէն, բայց շարժեաց միսիթարիչն զմարգարէին զանձն. վասն այնորիկ ասէ. "Լեզու իմ եղէգն դպրի արագագրի"։ Օ՚ի զոր օրինակ եղէգն ոչ ինքեամբ շարժի և յինքենէ գրէ, այլ որ իշխէն շարժել զնա ձեռքն, նոյնպէս և լեզու մարգարէին ոչ յինքենէ խօսէր, այլ յայ՚ն շնորհէն։ Նը ընդէր ոչ ասաց արդեօք պարզաբար՝ լեզու իմ իբրև զգրիչ դպրի, այլ եղէգն դպրի արագագրի. զի ուսցիս եթէ Հոգեւոր իմաստութիւն է, յաղագս որոյ և յորով դիւրութիւն և բազում ընթացք։ Վասնզի մարդիկ յինքեանց խօսելով յարմարեցուցանեն, խորհին, յամեն և բազում ժամանակ ձգեն։ Նսկ անդ զի իբրև յաղբերէ զբանսն բխէր[1] և ոչ էր արգել ուսուիք, այլ զընթացս լեզուին յաղթէր մեզ ՚ի վերայ հոսումն, վասն այնորիկ ասէր. "Լեզու իմ գրիչ դպրի արագագրի"։ Ի վեր բըխէր ՚ի ներքուստ զաղբիւրն հանդերձ բազում առատութեամբ, ասէ. յաղագս որոյ յորով է երագութիւն։ Ոչ խորհելոյ մեզ և ոչ աշխատութեան և կամ կրթութեան պէտք են։ Նայց տեսցուք զինչ ասէ. "Ովսիա անձն իմ զտեր"։

Օ այս Հաւթայ ասաց յայնժամ, զոյն և մեք զինի Հաւթայ սաղմոսեցաք այսօր. զի թէպէտ և ոչ մարմնով մերձ էր, այլ հոգւով մերձ է։ Նր զի մերձ են արո-

1 Պակասէր յօրինակին բխէր ... զբընթացս լեզուին. յաւելաւ ՚ի յոմանէն։

դարքն առ մեզ և ընդ մեզ սաղմոսէն, լուր զինչ ասէր Աբրահամ ընչեղին. քանզի ասացեալ նորա «Հրաքեա զի աղարտս զիւ եղբարքն իմ ուսեալ զդժոխոյն իրս ուղղեսցին զկնքեանս», ասէ ցնա. «Մնին զՄովսէս և զմարգարէսն»: Ոչ սակայն Մովսէս և մարգարէքն վաղ մեռան. այլ Թէպետ և վախճանեցան մարմնով, այլ ի ձեռն գրոց ունէին զնոսա: Վասնզի եթէ պատկեր ոք անշունչ կանգնեսցէ որդւոյ և կամ սիրելոյ, վարկանի մերձ գոլ զդնացեալն և ի ձեռն անշունչ պատկերին զնա տեսանել, և առաւել մեք ի ձեռն աստուածային գրոց ի սրբոցն վայելեմք ի քնակցութիւս, ոչ զմարմնոյ նոցա՝ այլ զհոգւոյն պատկերս առնելով. վասն զի ի նոցանէ ասացեալքն հոգւոց նոցա են կերպարանք:

Խօրժէն ուսանել եթէ կենդանիք են արդարքն: Ոչ ոք զմեռեալ վկայ կոչէ. իսկ ՈՅ վկայս զնոսա կոչեաց իւրում ՈՅուԹեանն, և նախ առաջին զԱւաւիԹ, զի քեզ ուսուցէ եթէ կեայ: Վասնզի Հրեայքն յերկուանային յաղագս նորա, ասէր ցնոսա. «Օ՞ինչ ձեզ Թուի վասն Աբրահամայ, ոչ որդի է. ասեն ցնա ԱւաԹայ: Ասէ ցնոսա. զնաւրդ ԱւաւիԹ Հոգւովն տէր կոչէ զնա. ասաց տէր տեառն իմում՝ նիստ ընդ աջմէ իմմէ»: Տեսէր զնաւրդ կեայ ԱւաւիԹ. քանզի եթէ ոչ կեայր, ոչ արդեօք կոչէր զնա վկայ ՈՅուԹեան իւրում: Ոչ ոչ ասաց զնաւրդ ԱւաւիԹ Հոգւովն տէր զնա կոչեաց, այլ տէր կոչէ. զի ուսուցէ Թէ մերձ է տակաւին ի ձեռն գրոցն և խօսի:

Սաղմոսեաց երբեմն ԱւաւիԹ, սաղմոսեմք և մեք ընդ ԱւաԹայ այսօր. նա քնար ունելով յանշունչ ներգից, և եկեղեցի քնար ունի ի շնչաւոր ներգից: Եղուք մեր աղիք քնարի են, զանազանաբար արձակել զՀնչումն և զձայնակից բարեպաշտուԹիւն: Վասնզի կանայք և արք, ծերք և մանկունք զանազանեալք են ըստ բնուԹեանն և ըստ հասակի, այլ ոչ որոշեալք ըստ օրհներգուԹեանն բանի. զի զիւրաքանչիւր ուրուք զձայն Հոգւոյն խառնելով զմի նուագերգուԹիւն գործել, որպէս և ինքն յայտնեաց ԱւաւիԹ զամենայն զՀասակս ներկայացուն զընուԹիւնն առ ձայնս առ այս կոչելով և ասելով. «Մեծնայ շունչ գովեսցէ զտէր: Գովեսցէ անձն իմ զտէր»:

Ինդէր արդեօք զմարմինն եթող, էր աղագաւ ոչ ինչ առ մարմինն խօսի. քաժանեաց արդեօք զկենդանին յերկուս։ Այս ոչ երբեք. այլ զարուեստաւորն յառաջագոյն ընդոստացանէ։ Այս զի ոչ որոշեաց զմարմինն ի հոգւոյն, լուր զինչ ասէ այլուր. "Պատուաճ ընծ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ ծարաւեաց առ քեզ անձն իմ, քանիպատիկ քեզ և մարմին իմ,,։ Այլ և յօրհնութիւնսն ցոյց ինձ զմարմինն կոչեցեալ։ Այլեր. "Օրհնեա անձն իմ զտէր, և ամենայն փոր իմ զանուն սուրբ նորա,,։ Ցեսէր զմարմինն հաւաստարեալ, տեսէր հաղորդեալ ձայնակցութեանն։ Ո՞չինչ էին զկերպ արդեօք "և ամենայն փոր իմ զանուն սուրբ նորա,,։ Ո՞չ ջիլս ասէ, զոսկերս, զերակս, զընչերակս և զամենայն որ ի ներքս մասունք են։

Այս զիաւրդ կարէն ի ներքոյքս մեր զնա բարեբանել, ձայն ոչ ունին և ոչ լեզու և ոչ բերան. քանզի հոգի կարէ, իսկ ի ներքոյքն զիաւրդ կարէն. ոչ ձայն և ոչ բերան և ոչ լեզու ունելով զիաւրդ կարասցեն ներքոյքս մեր բարեբանել զնա։ Արդեօք "երկինք պատմեն զփառս Ա՛յ,,։ Ո՞ր օրինակ երկինքն ոչ լեզու ունին, ոչ բերան, ոչ շրթունք. այլ գեղեցկութեամբ դիմաց աքանչացուցանելով զտեսողն առաքէն զարմանալեօքն զբարեբանութիւնն յարարիչն իւրեանց, նոյնպէս և ներքոյքս մեր, եթէ անցանիցես ընդ ամենայն բանիս. եթէ տեսցես զզանազանութիւնն, եթէ տեսցես զորշմանն առ բարկութեանն գործոյ, զօրութեանն, միաբանութենն, ստեղծոյն, դրութեանն, թուոյն, յարմարութեանն, զմարգարէական բանն զայն խօսիցիս. "Երբէ զի մեծացան գործք քո տէր. զամենայն իմաստութեամբ արարեր,,։ Ցեսէր զիաւրդ օրհնեն ի ներքոյքս զնա առանց ձայնի և բերանոյ և լեզուաց։

"Պահեա անձն իմ զտէր,,։ Ինդէր արդեօք ընդ հոգւոյն խօսիցի։ Ո՞չ մի ի լեզուն խօսել դնա բանդագուշեացի ուրեք, զոր բազում անգամ կրեմք յաղօթսն. զի յերկոցունց կողմանց ձայնակցութիւն իցէ։ Վանզի յորժամ աղօթելով ոչ լսիցես բանիցն քոց, զիաւրդ նա լսիցէ պաղատանացն։ Յորժամ միաբն ասիցեն "պահեա անձն իմ զտէր,,, զայն ասեն ի ներքուստ խորոց սրտին բերիցեն պաղատանքն. զի և Պաւ-

գոս ասէ. “Աղմոսեմ հոգւով, սաղմոսեմ և մտօք,,։ Աղաքինի երաժշտական ոմն է հոգին, արուեստաւոր է. գործի է մարմնին, գքնարի կամ զփողոց կամ զտաւղի տեղի ունելով։ Այս սակայն երաժշտականքն ոչ յարաժամ ընդ գործիսն են. այլ երբեմն առնուն զնոսա և երբեմն ի բաց դնեն. զի և ոչ միշտ նոցա նուագելոցն ժամանակ է. յաղագս որոյ և ոչ միանչեանաւորապէս զգործիսն ի ձեռն առնուն։ Իսկ քեզ կամելով ասծ վարդապետել, եթէ յարաժամ պարտիս զնա օրհնել և բարբանել, միաւորեաց ընդ արուեստաւորին զգործին միանչեանաւորապէս։

Այս զի յարաժամ գովել է պարտ և արժան, լուր զինչ ասէ Պաւղոս. “Ընդունդհատ աղօթեցէք, յամենայնի գոհացարուք,,։ Այս զի անընդհատ պարտ է աղօթել, անընդհատ է և գործին ընդ արուեստաւորին։ “Վառեա անձն իմ զտէր,,։ Յառաջագոյն միով լեզուաւն զայս ասէր Դաւիթ. իսկ այժմ յորժամ վախճանեցաւ, բիւր լեզուաք զայս բարբառի, ոչ միայն առ մեզ, այլ և ամենայն աշխարհի։ Տեսեր զի ոչ մեռաւ, այլ կեայ. քանզի ոչպէս արդեաք մեռաւ, որ այսքան լեզու ունի և այսքանեաք բերանաք բարբառի։ Մեծ գովութիւն է արդարեւ. մանրիկ զմեր զանձն, և յորով ի մեզ ամբարիշտ զերկիւղածութիւնն։

Վասին ուսանել որքան է ասյ օրհնութեանն զօրութիւն։ Օրհնելով երեք մանկունքն այսպէս շինուցին ի Բաբելոն զնոսոյն. մանաւանդ եթէ ոչ շինուցին, այլ որ յաւէտ աքանչելագոյն էր՝ զաղորդաքեալ զնոսոյն իբրև զկաւ կոխեցին ոտիւքն։ Այս օրհնութիւն ի կապանն մտեալ առ Պաւղոսիս զկապանն ելոյծ, զդրունսն եբաց, զհիմունս բանտին շարժեաց, ի բազում հիացման զկապանապահն կացոյց։ “Ի մէջ գիշերին, ասէ, օրհնէին Պաւղոս և Շիղաս,,։ Այս ապա զինչ էզև։ Զինչ. նոր և հրաշափառագոյն. ամենեցուն կապանքն լուծան, կապեալքն զկապեալն լուծին. և սակայն կապանայ բնութիւն է զհաւատեալ կապեալն ունել և ընդ ձեռամբ առնել։ Իսկ այժմ կապանապահն արձակեալ առ ոտն անկաւ կապելոյն Պաւղոսի. քանզի վայրապար կապանայ բնութիւն է ունել զկապեալն. բայց կապանայ որ յաղագս Քրիստոսի այնքան է զօրութիւն,

մինչ զի զարձակեալսն ընդ ձեռամբ առնէ : Ի ներքինն բանան Էարկ զնոսա, և 'ի ներքս լեալք զարտաքինն դըրունսն բացին. զոտս նոցա սնդեաց 'ի կոձեղ, և ոտք նոցա կապեալք զայլոց զձեռս արձակեցին : Եւ ապա, ասէ, անկաւ առ ոտս նոցա բանտապահն զարհուրեալ դողալով և երկնչելով : Օ ինչ արդեօք եղև. ոչ դու կապեցեր, ոչ դու 'ի զգուշութեան ունէիր, ոչ դու 'ի ներքինն բանան արկեր : Այս, ասէ, այլ ոչ զոք երբեք այսպիսի կապեցի : Եւ զի զարմանաս, ով մարդ, եթէ զկապարանն եբաց որ և վերկինս բանալ էառ իշխանութիւն. քանզի "Օ՝ որս կապեսջիք, ասէ, յերկրի, եղիցին կապեալք յերկինս. և զորս արձակեսջիք յերկրի, եղիցին արձակեալք յերկինս ,, : Օ՝ մեղացն ելոյծ զկապանսն, զի աբանչանաս եթէ զերկաթոյն զկապանս լուծանիցէ. զդիւացն ելոյծ զկապանս, զոր ինս կապեալս ազատեաց, զի հիանաս եթէ զկապելոցն չղթայսն ելոյծ : Եւ տես զկրկին աբանչելին, ելոյծ զարձեալ և կապեաց. ելոյծ զնոցա կապանս, և կապեաց զսիրտսն. քանզի արձակեալք էին և ոչ գիտէին. եբաց և փակեաց. եբաց զկապարանին ըզդուրս, և փակեաց զաչս կապելոցն, զի մի զգացեն զբըռնացն բացումն, զի մի համարձակութեամբ վարելով՝ փախստեամբ 'ի բաց վազեսցեն : Ցեսէր զկապողն և զարձակողն, որ բանայր և փակէր :

Յաղագս այնորիկ և գիշերի եղև այն, զի առանց ամբոխի իրքն լինիցին և առանց ամենայն խռովութեան. վասն զի ոչ ինչ 'ի ցոյցս և 'ի պատուասիրութիւն առնէին առաքեալքն : Ընկաւ առ ոտս նոցա բանտապետն : Եւ զինչ Պաւղոս : Ցեսէր զնորա աբանչելին, տեսէր զնորա զհրաշափառագոյնն. տես զնորա զխնամակալութիւնն, տես և զմարդասիրութիւնն : "Վոչեաց, ասէ, և ասաց. մի՛ ինչ առներ քեզ չար, քանզի ամենեքեան աստ եմք ,, : Որ կապեացն զնա դառնութեամբ, ոչ ներեաց տեսանել[1] դառնապէս, ոչ եղև ոխակալ : "Ամենեքեան, ասէ, աստ եմք ,, : Ցես զանհպարտութիւնն. ոչ ասաց՝ ես զայդ հրաշալիս արարի, այլ զինչ. "Ամենեքեան աստ եմք ,, : Ընդ կապեալսն թուեաց զինքն առաքեալն : Այտես զնա, աբանչացաւ ընդ լեալսն, հիացաւ ընդ զարմանալիսն, գոհացաւ ցայ :

1 Յոյնն Դեսոնել :

Ընժանապատ արդարեւ բազում խնամակալութեան և մարդասիրութեան էր քանտապահն։ Ոչ կարծեաց խարդախութիւնս ինչ ըլեալն. և ուստի ոչ կարծեաց խարդախութիւն ըլեալն։ Ոչ ուստ գնոցա օրհնել զնա. բազում կախարդս ընկալաւ քանզի քանտապահ էր. այլ ոչ ոք ի նոցանէ երբեք այնպիսի ինչ արար, ոչ ելոյծ զկապանս և ոչ եղոյց խնամակալութիւն ինչ այնպիսի։ Վասնզի ընտրեաց կապել Պաւղոս, որում իշխանութիւն էր փախչել զի գնա ազատեսցէ ի վախճանէն։ Ի ներքս վազեաց՝ սուր ի ձեռն ունելով և ջահ. քանզի կամէր սատանայ սպանմամբն յառաջագոյն յափշտակել գնա քան զապաշխարութիւն. այլ պնդագոյն ձայնիւ զիրկութիւն նորա անձինն արագագոյնս ջահեցաւ Պաւղոս։ Ոչ ասն որոյ ոչ վայրապար ինչ կոչեաց, այլ մեծ ձայնիւ ասելով "Մի՛ նեղեքեան ասա եմք"։ Քանզեացաւ ընդ խնամակալութիւնն քանտապահն, անկաւ առ ոտս կապելոյն արձակեալն, և զինչ ասէր. "Տէարք, զինչ պարտ է առնել զի ապրեցայց"։ Դու կապեցեր, և դո՛ւ ի տարակուսանս ես. դու պնդեցեր զոտս ի կոճէդն, և դո՛ւ հայցես տեղի ապաշաւանաց և փրկութեան։ Տեսեր զերկրմութիւնն, տեսեր զիրոյթն։ Ոչ յապաղեաց, իբրև արձակեցաւ յերկիղէն. ոչ մոռացաւ զբարեգործութիւնն, այլ վաղվաղակի ի փրկութիւն անձինն ընթացաւ։ Խաւար էր և մեջ գիշերի, և ոչ ասաց խորհեսցուք տեսցուք, տիւ լինի. այլ վաղվաղակի ի խորհրդածութիւնս եկն։ Մեծ ոմն է այրս այս, գերազանցեալ քան զմարդկային բնութիւնս. տեսի զնորա զօրութիւնն, տեսի զնորա զմարդասիրութիւնն։ Նախ չարիս յինէն կրեաց. ընդ վերջինսն էր, զիս կապողս ի ձեռն առնելով կարեր ըմբռնել. ոչ միայն ոչ ինչ արար, այլ և հանդերձեալ խոստովել իմ զանձն իմ, և զսուրն անցուցանել ընդ փողս իմ՝ արգել։ Ցիւրաւի ասէ. "Տէարք, զինչ պարտ է առնել ինձ զի փրկեցայց"։

Ո՛չ ոչ միայն սքանչելիք առաքելոյն ձգէին զհաւատացեալսն, այլ և նախ քան զզարմանալիսն վարք նոցա։ Ոչ ասն այսորիկ ասէ. "Պայծառասցի լոյս ձեր առաջի մարդկան, զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զհայր ձեր յերկինս"։ Տեսեր զերկրմու-

թիւնն բանտապահին, տես և զՊաւղոսի ջերմութին. ոչ յապաղեաց, այլ ՚ի կապանս եր և ՚ի կոձեղ և ՚ի վերս, վաղվաղակի զնա ուսոյց և ընդ նմա զբանան զաւետեանն. և զինի հոգևոր աւազանին, յետ հոգևոր սեղանոյն եդ նմա առաջի և սեղան մարմնականս։ Այս ընդդէմ արդեօք շարժեաց զկապանաւորանն. ընդոստուցանել զբանտապահն կամէր առ ՚ի տեսութիւն եղելոյն։ Այլ զգալի կապանս կապելոյն, զի լուծցէ զիմանալի կապանս բանտապահի[1]։

Տես որքան է օրհնութեանն զօրութիւն, որքան զօրէ գովութիւն, որքան կարեն աղօթք։ Մի՛շտ մեծ է աղօթից զօրութիւն, այլ մանաւանդ ՚ի մերձակայ ժամանակիս. քանզի հանդերձ պահօք լեալ աղօթք, զօրագոյնս առնեն զպաշտամունն։ Յ.ԺԺ ողջախոհութի՛ մնաց յաւէտ է առ մեզ. այլ զարթուցեալ են մեր խորհուրդք, և զվերինսն զամենայն տեսանէ հոգի։ Ա՛ան այսորիկ միշտ ընդ պահն զաղօթան լծակցեցին զինքն։ Օ՛իսդ և կամ ե՛րբ։ "Մ՚ի զրկէք զմիմեանս, ասէ, բայց եթէ ինչ ՚ի միաբանութենէ, զի պարապիցէք պահոց և աղօթից,,. և դարձեալ այլուր. "Մ՚զգդ այդ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահօք,,. և դարձեալ այլուր. "Մ՚զօթելով, ասէ, և պահելով ՚ի վերայ եդ նոցա ձեռս,,։

Տես ամենայն ուրեք ընդ պահոցն և զաղօթան. և ևս զի յայնժամ վայելչագոյն և քաջահաճոյ ՚ի քնար ըէն առաքին ՚ի նուագերգութիւնն, մինչ ոչ են գինքեալ նեարդքն առաւելաստացութեամբ և արբեցութիւնք լուծեալ. այլ քաջալինդ խորհուրդ, ընդոստուցեալ միտք, զարթուցեալ հոգի։ Մ՚յսպէս մերձենալ առ Ա՛ած, և խօսել պարտ և արժան է միայն ընդ միայնում։ Մ՚ան զի եթէ սիրելեաց ինչ ունելով կարևոր իրս ասել՝ առանձինն առնուլով զնոսա աղաչեմք, որչափ ևս առաւել առ Ա՛ած զայս առնել պատշաճ է, մանաւանդ ՚ի շահս բանս ամենայն հանդարտութեամբ. և ամենայն իրօք դիպեսցուք բովանդակին, յաղագս ոյժ օգտակարագոյն մեզ զինդրուածոն առնեմք։

Ա՛ծ բարի են աղօթք յորժամ հանդերձ գոհայո-

1 Պաւղոսին առաք. 16։

զական մնօք և սէր ափեցելովք լինիցին։ Այլ զնաւդ լինիլն գոհացող. եթէ խրատիցեմք զանձինս ոչ միայն առնուլ, այլ և վրիպելոյն գոհանայցեմք զնա։ Վասն երբեմն տայ ած և երբեմն ոչ տայ. զերկոսին պիտանացու առնէ, որպէս զի թէ առցես և եթէ ոչ առցես, առեր՝ ոչ առնլոյն. եթէ դիպեացիս և եթէ վրիպեացիս, պատահես վրիպելոյն։ Վասն զի երբեմն ոչ առնուլն քան զառնուլն օգտակարագոյն լինի։ Այլ եթէ ոչ էր մեզ բազում անգամ ոչ առնուլն լաւագոյն, ամենայն իրօք արդեօք ընձեռէր միշտ. իսկ օգտակարացն ոչ հանդիպել լաւագոյն լինիլ պատահումն։ Յաղագս այսորիկ և յապաղել ունիմք մեզ բազում անգամ, ոչ կամելով զչերկարելն մեզ, այլ զի յամրութիւն տալոյն՝ զիշանչէնաւոր պարապումն մեր խնայեսցուք։ Վասն զի բազում անգամ առնելով զոր ինչ խնդրեմքն, յետ առնլոյն լուծանեմք զաղօթիցն փոյթ. կամելով նա չերկարել զպաղատանսն և զՀայցուածս մեր արհնութեամբ, չերկարէ զտուրն և յապաղէ։ Այսպէս և մանկասէր Հարքն առնեն զյոլովութիւն մանկանցն և որք առ մանկական խաղալիսն ընթանան. բազում անգամ խոստանան ընձեռել տուրս մեծամեծս և ունին չինքեանս. յաղագս այսորիկ երբեմն յապաղեն և երբեմն բոլորովին իսկ ոչ տան։ Վասնզի ե երբեք զի զգիտասակաւ զինդրուածսն Հայցեմք. իսկ որ զօգտակարագոյնսն մեր գիտէ ած, ոչ Հաւանի աղօթիցն մերոց. զգուսան մեր անպիտանալով մերով անօրինել մեզ։ Այլ զինչ զարմանալի եթէ մեք ոչ լինիցիմք լսելի, որ և Պաւղոսի նոյն եղև. քանզի և նա յոլովակի Հայցեաց և բազում անգամ վրիպեաց. և ոչ միայն ոչ դժուացաւ, այլ և գոհացաւ. և յաղագս այսորիկ ասէ. "Երիցս զտէր աղաչեցի,,։ Պաւղոս երիցս բազում ասէ։ Այլ եթէ բազում անգամ Պաւղոս Հայցելով ոչ էառ, զիմբրդ եղև յոչ առնուլ. զի ոչ միայն ոչ տաքնապեցաւ, այլ և պարծի ևս յաղագս ոչ առնլոյն։ Վասնզի ասէ լսելն "յաղագս այսորիկ երիցս զտէր աղաչեցի, և ասէ ցիս. բաւական են քեզ չնորհքն իմ, քանզի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի,,, 'ի վերայ էած. "Այ խորժելով պարծիմ 'ի տկարութիւնս իմ,,։

Տեսեր զբազմազանութիւն ծառային. Հայցեաց 'ի տկա-

բուԹենէն ազատանալ, և ոչ հաւանեցաւ ՚ած. և Պաւղոս ոչ միայն ոչ զբարեցաւ, այլ և պարծի և ս տկարուԹեամբն։ Այսպէս և մեք պատրաստեսցուք զմեր անձինս. եԹէ տացէ և եԹէ ոչ տացէ ՚ած զոր ինչ հայցեցեմք, յաղագս երկոցունց ընորհս կալցուք[1] զնոյ, քանզի զերկոսին մեզ օգտակարագոյնս առնէ։ Օ՚ի եԹէ տալոյն տէր է, և երբ տալոյն և զինչ տալոյն և ոչ տալոյն։ Ոչ գիտես դու զօգտակարագոյնն, որպէս նա հաւաստեաւ գիտէ։ Ասաղում անգամ ինդրես զնասակարս և զեղս հայցուածս. իսկ որ առաւել քոյոյ փրկուԹեանդ ինամոյն է, ոչ ՚ի հայցուածոն հայի, այլ նախ քան զայնոսիկ զօգուան քո ամենայն իրօք գիտէ։ Ասանզի եԹէ ըստ մարմնոյ հարք ոչ զամենայն զոր ինչ հայցեն մանկունքն՝ ընձեռեն, իբրև ոչ եԹէ արհամարհեն զնոսա, այլ զի յաւէտ ինամեն, և առաւել ՚ած որ յոյժ սիրէն, և առաւել քան զամենեսեան զօգուան մեր գիտելով զնոյն առնէ։

Ասդ պարապեսցուք աղօԹից յարաժամ, մի՚ի տուբջեան լեԹ, այլ և ՚ի գիշերի։ Ասուր զինչ ասէ մարգարէս այս. “Ի մէջ գիշերի յառնէի խոստովան առնել առ քեզ վասն իրաւանց արդարուԹեան քոյ,,։ Ասյր Թագաւոր և յայն հոգս զօրաց և քաղաքաց և ազատաց, զտնօրէնուԹիւնն ընձեռելով, խաղաղուԹեան հոգ տանելով, զպատերազմունս լուծանելով, զանձառւելի իրացն հոյլ տեսանէր միշտ առ ինքեան կացեալը, և ոչ դուշնաքեայ ինչ յապահովուԹիւն ունէր, ոչ միայն ըզտիւն՝ այլ և զգիշերն և յաւելոյր յաղօԹան։ Ցեսեր զԹագաւորն որ յայնքան ՚ի փափկուԹեան կեայր, որ այնքան ունէր հոգս, որ այնքանեօք իրօք եր պաշարեալ, և ոչ ՚ի գիշերն զաղարէր, այլ ընդ այնոսիկ որ ՚ի լերինն միայնացեալք են՝ հաւաստեաւ զաղօԹան կատարեր. որոմ ԴաւղուԹեան, ասա ինձ, հանդիպեսցուք մեք բազում յապահովուԹեամբ կելով, և զառանձնակ և զառանց իրաց վարս ընտրելով. ոչ զամենայն գիշերան քունեմք, այլ և ոչ ՚ի տունջեան հանդերձ պատշաճ արԹնուԹեամբ զօրինաւոր աղօԹան կատարեմք։

ԱսՀած զէն են աղօԹքն, մեծ զարգք են պաղատանք,

1 Պակասէր յօրինակին ընդհս կալցուք զնոյ. յաւելաւ ՚ի յունէն։

ամրութիւն և նաւահանգիստ և անկողոպտելի գանձ բարեաց։ Ո՛չ զմարդիկ ազաչելով, և ծախիկ յօրվէից կարօտանաւք և ծառայական փաղաքշանաց և բաղում հնարից և իրաց։ Քանզի եթէ ուղղորդ առ այնոսիկ որք տեսլեաւքն են տալոց գշնորհն՝ խօսիցիմք, հարկաւոր է յառաջագոյն զսպասաւորս և զպատառատես նոցա և զվերակացուս ընդուք և ամենայն իրօք ողոքել, և յայնժամ կարել՝ի նոցանէ գհայցուածսն առնուլ։ Բայց առ այդ ոչ այսպէս՝ի ձեռն այլոց աղաչել, այլ մեր իսկ անձամբըս հաւանի տալ գշնորհսն։ Այս աստ ոչ ինչ առնելով է ինչ շահել. իսկ՝ի մարդկանն և յերկոսեան բազում անգամ վնասիմք։

Այս արդ զի մեծ է շահն, և առաւել գիւրագոյն յայ հայցելն, մի՛ արհամարհեսցուք զաղօթսն։ Քանզի յայնժամ առաւել ընդ քեզ հաշտ, յայնժամ քեզ մանաւանդ տայ զոր ինչ խնդրեսն, յորժամ դու՝ի ձեռն քո մաղթեսցես, յորժամ մաքուր ընձեռեսցես զիւտս, յորժամ արձուն գնորհուրդս, յորժամ ոչ վայրապար ինչ խնդրեսցես որպէս առնեն յոլովք. լեզու նոցա խաւսի զբանս աղօթիցն, բայց հոգին բազում ուրեք՝ի տունս և՝ի գեհս և՝ի Ճանապարհս շուրջ թափառի։ Այսոքիկ ամենեքեան սատանայի մեքենայք են. վասն զի գիտեն եթէ յայնմ ժամանակի կարեմք Թողութեան մեզայ հանդիպել, կամելով զաղօթիցն մերոց նաւահանգիստ ապահանել, ՚ի նմին ժամանակի մերձ կայ առ մեզ՝ ընդդէմ հարկանելով զմեր զիւտս ասացուածովքըն, մինչ զի տուժեալք առաւել քան օգտեալք՝ ՚ի բաց գնասցուք։

Արդ զայս գիտելով, ով մարդ, յորժամ մերձենաս առ Ճաճ, զմտաւ ածէ առ ո՞ւմն. և բաւական է քեզ յարձնուելիւն արժանահաւատ որ[1] հանդերձեալ է տալ գշնորհն։ Նայեա յերկինն և իմա առ ով քո բանդ իցէ. քանզի եթէ ընդ մարդս ոք կամելով խօսել, որ սուղ ինչ քան զնա իցէ գերազանցեալ մարդկային պատուով, թէպէտ և քան զամենեսեան յոյլ է, ամենայն իրօք զինքն ընդոստուցանէ և զարձնուլ հրամայէ անձինն. և առաւել զմտաւ ածցուք մեք եթէ ընդ հրեշ-

1 Ցօրինակին գրեալ էր որ խօսի հանդերձեալ է և փալ։

տակաց տէրն խօսիմք, բաւական ՚ի զգուշութիւն պատճառս զանիսդանել առցուք։

Այլ եթէ պարտ է և միւս ևս ինչ հնարս ասել որով կարիցեմք ՚ի ծառայութենէն յայնմանէ փախչել, զայս առասցուք։ Խաղալ անգամ կատարելով զաղօթսն, ոչ ինչ լսելով զոր ինչ ասացաքն, երթեալ գնասցուք. եթէ իմանայցեմք զայս, վաղվաղակի գնոյն վերատին առցուք. և եթէ գնոյն կրեսցուք դարձեալ, և երիցս անգամ և կամ չորիցս գնոյն արասցուք, և ոչ յառաջագոյն ՚ի բաց կացցուք յաղօթելոյն, մինչև զամենայն պատճառանսն հանդերձ արթուն մնօք և զգուշացեալ խորհրդովք հեղուցումք առաջի աՀ։ Այլ եթէ զգայցէ սատանայ եթէ ոչ նախ ՚ի բաց կամք մինչև հանդերձ փութով և արթուն խորհրդովք զոյն ասիցեմք, ՚ի բաց կայ դարմանական, գիտելով եթէ ոչ ինչ առաւել լինին նմա ՚ի դրժանացն, քան եթէ բաղում անգամ հարկ առնել մեզ վերատին գնոյն աղօթս ասել։ Խաղալ վէրս առնումք ՚ի տունջեան, եղբարք, յընտանեաց, յօտարաց, ՚ի հրապարակի, ՚ի տան, յառակաց իրացն, ՚ի զբաղականաց, ՚ի դրացեաց։ Այնմ վիրաց ամենեցուն դեղ ՚ի վերայ դիցուք ՚ի ժամանակի աղօթիցն. քանզի կարող է ած եթէ հանդերձ արթուն խորհրդովք և բարբառեալ անձամբ և ջերմ մնօք մերձենայցեմք առ նա և զթողութիւն հայցեմք, ամենայն սխալանացն ընձեռէ մեզ թողութիւն։ Արդ ևս ամենեցուն մեզ հասանել ընդհանուր և մարգասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս. ամէն։

ՐՆԴԴԻՄ ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ ՑԱՌԱՋՆՈՒՄ ԱՒՈՒՐ ՊՆՏԵԿՈՍՏԻԿ[1]

Ի բաց եդաք զպահոցն բեռն, այլ մի ՚ի բաց մերժեսցուք զպահոցն շահս. զոյ հնարս և զբեռն գնել և զպտուղսն հնձել։ Ընդ աշխատութիւն հանդիսին, բայց մի անցցէ փոյթ ուղղութեանցն. հեռացեալ գնացին

1 Ցոյնն պակաս։

պահքն, այլ միասին երկիւղածութիւնն. մանաւանդ թէ և ոչ պահքն գնացին։ Ա. Այլ մի երկնչիք. զի զայսոսիկ ասելով ոչ այլ քառասնեռեակ ձեզ քարոզեմ, այլ զնոյն ձեզ զառաքինութիւն պատուիրեմք. անցին պահք մարմնականք, այլ ոչ անցին պահք հոգևորք. սա լաւագոյն է քան զնա, և նա յաղագս սորա եղև։ Որպէս յորժամ պահէիք ասէաք ձեզ՝ թէ է պահելոյն ոչ պահել, նոյնպէս և այժմ յորժամ ոչ պահէք՝ ասեմք ձեզ թէ է և ոչ պահելով պահել։ Վերեւս արդեօք առակ ինչ լեալ Թուխիկ ասացեալ. այլ և զլուծումն՝ի վերայ ածից խնդրողդ։

Ո. Իսկդ իսկ պահելոյն ոչ պահել. յորժամ որ՝ի կերակրոյն՝ի բաց կացցէ և՝ի մեղացն ոչ հեռանայցէ։ Ո. Իսկդ իսկ ոչ պահելոյն պահել. յորժամ որ՝ի կերակուրն վայելիցէ և՝ի մեղս ոչ հպիցի։ Ա. Յոյսիկ լաւագոյն քան զայն պահանն են. և ոչ լաւագոյնք միայն, այլ և թեթևք. յայն սակս զհիւանդութիւնս մարմնաւ կանս յոլովք բաղձալեն, զդժնդակ մարմնաւորումն։ Որ սով լցեալ, ասեն, առանց լուանալոյ ոչ հանդուրժեմ. զբրմնութիւնն զիս ապականէ. քանզի ուտել ոչ կարեմ։ Յոլովս այսպիսիս լսեի յայնժամ՝ի բազմից ասացեալս. իսկ յայսմ պահս ոչ ինչ է յայսցանէ ասել։ Այլ ելեալ՝ի բաղանիս, հաղորդեցեալ սեղանոյ, չափաւոր գինեաւ վարեցայս. և եթէ միս կամիցիս ճաշակել, ոչ որ է որ արգելու. յամենայնի վայելեա՝ի մարմնական կերակուրս, միայն՝ի մեղացն՝ի բաց կաց։

Տեսէր զիարդ քան զամենեսեան այս պահք գիւրագոյնք. ոչ զմարմնոյ տկարութիւնս պատճառել. մանրութիւնք հոգւոյն են ուղղութիւնքս։ Որոյ հնար ոչ ըմպելով գինի արբենալ, և ըմպելով գինի ողջախոհ լինել։ Նա զի է առանց գինւոյ արբեցութե, լուր մարգարէին որ ասէ. «Վայ որ արբեալդ ես և ոչ գինեաւ»։ Նա զիարդ իսկ առանց գինւոյ արբենալ. յորժամ ընդ անասնակ ախտն խառնիցէ զբարեպարիշտ խորհուրդս։ Որոյ հնար և ըմպելով գինի ոչ արբենալ. եթէ[1] չէր այնպէս, ոչ արդեօք զայն հրամայեր Պաւղոս գրելով Տիմոթեայ այնպէս. «Գինեաւ սակաւու վարեցիր յա-

1 Պակասէր յօրինակին երկ մի այսպէս. յաւելաւ՝ի յունէն։

զագա ստամքսիդ հիւանդութեանց ,, ։ Լանջն արբեցութիւն ոչ այլ ինչ է , բայց եթէ արտաքս կալ ի բնական մնացն , խոտորումն խորհրդոյն , ամայութիւն միտացն , աղքատութիւն իմաստութեան ։ Այս ոչ միայն արբեցութիւն գինւոյ առնէ , այլ և արբեցութիւն ի բարկութենէ և անարժան ցանկութեանց ։ Որ օրինակ զԵրկին առնէ տքնութիւնն , առնէ և աշխատութիւնն , առնէ և տրտմութիւն , առնեն և մաղձք ապականեալք , և զանազան են պատճառքն , այլ մի է ախտն . նոյնպէս և յայսոսիկ առնէ գինեաց արբեցութիւն , առնէ և ցանկութիւն , առնէ և տրտմութիւն , առնէ և մոռացութիւն , և պատճառքս են զանազանեալք , բայց հիւանդութիւն և ախտն մի է ։

Ի բաց կացցուք յարբեցութենէն . ոչ ասեմ ի բաց կացցուք ի գինւոյ , այլ հեռացեալք յարբեցութենէ . ոչ գինին առնէ զարբեցութիւնն , այլ անչափութիւնն . արարած է այ . իսկ այ արարած ոչ ինչ առնէ չար , այլ յօժարամտութիւնն չար՝ առնէ զարբեցութիւն ։ Ըստ գի է և այլ ազգ արբենալ և ոչ գինեաւ միայն , ըստ գինչ ասէն Պաւղոս . “ Ի գինեայք գինեաւ ,, , ցուցանելով թէ է և այլ ազգ արբեցութիւն ։ “ Ի արբենայք գինեաւ յորում պակշռութիւն է ,, . աքանչելապէս դուշնաքեայ բանիւ զամենայն զարբեցութեանն զամբաստանութիւն ասաց ։

Ոչինչ է “ մի արբենայք գինեաւ յորում է պակշռութիւն ,, ։ Պակշռեաւ մանկունս զայնոսիկ կոչեմք որք զՀայրենի ժառանգութիւնն ընդունելով , և զամենայն յանկարծակի արտաքս մղեցեն , և ոչ խորհելով ումմ պարտ և արժան իցէ տալ և երբ տալ , այլ վայրապար և հանդերձս և ոսկի և արծաթ և զամենայն զՀայրենի ընչեղութիւնն բաշխեն բոզաց և իգացելոց ։ Այն պիսի է արբեցութիւն . իբրև պակշռեալ ինն որ ըմբռնելով զմիտս արբեցելոց՝ գերէ զամենայն զխորհուրդն , և զամենայն զընութիւն իմաստութեանն առանց խորհելոյ և առանց իրիք ստուգութեան ի վերայ ձգելով հարկ առնէ ։ Որ արբենայն , ոչ գիտէ զոր ասէն պատշաճ իցէ և զոր լռել . այլ յարաժամ անդուռն է բերան նորա , նիգ ոչ կայ ի վերայ և ոչ պահապան շրթանց ։ Արբեալն ոչ գիտէ անօրինել զանձն իւր ի դա-

տաստանի, ոչ գիտէ ամբարել զիարթամուԹի մտացն. ոչ գիտէ զոմն ամբարել և զոմն ծախել, այլ ամենայն այն անծախիք[1] և արտաքս Ձանասպարհք։ Ամենայն տաՏակաւին է արբեցուԹիւնն, մանաւանի խորհրդոցն. արբեցուԹիւն ծիծաղելի ԹշուառուԹիւն, այպանելի հիւանդուԹիւն, դէմ անբժշկելի, դժնդակագոյն խելագարուԹիւն։

Ամենայն ուսանել զիարդ արբեալն քան զդիւահարն աւելի է։ Դիւահարին ողորմիք, և զնա ատեմք. նման ախտակից լինիմք, և սմա բարկանամք և զայրանամք։ Ընդէր արդեօք. վասն զի այն դրժուԹիւն, և այս ախտ յուլուԹիւն. այն դաւաճանուԹիւն Թշնամւոյն, և այս դրժուԹիւն խորհրդոց. և զնոյն իսկ զդիւահարին իբրև չարչարի արբեալն, նմանապէս դանդաղի, նոյնպէս Թմբրի, այնպէս շրջէ զբիբսն, նոյնպէս անկեալ կայ ի վերայ երկրի. նա փրփուր ի բերանոյն արձակիցէ, և սա լորձ նեխեալ ժահահոտուԹեամբ անբմբերելեաւ լցեալ. բարեկամաց Թախիծ այնպիսին, Թշնամեաց ծաղր, ծառայից արհամարհելի, կնոջ անվայելուչ, ամենեցուն բեռն, քան զնոյն ինքն զանասունս անասնագոյն. անասունքն այնքան ըմպեն որքան ծարաւիքն են, և պիտոյիքն զիարաքաւեն դադարեցուցանեն. բայց նա անարգելուԹեամբն զանց առնէ զցանկուԹեամբն, և լինի քան զանբանան անբանագոյն։ Այս այն և դժնդակագոյն, զի այնքան չար ախտիւ լցեալ և այնպիսի ԹըշուառուԹեամբ, ոչ ինչ բամբասանք լեալ կարծին. այլ յընչեղացն սեղանս հակառակուԹիւն է, և հանդէս յաղագս անամեծուԹեանն լինի նոցա, և առ իրեարս և ընդ վիճեն ամ առաւել զինքն ծանակիցէ, հակառակին ընդ միմեանս ամ առաւել ընձեռիցէ ծաղր, ամ յաւէտ լուծանիցէ զՔրիստոս, ամ մանաւանդ կործանիցէ զղօրուԹիւնն, ամ զՀաւատարակաց տէրն բարկացուցանիցէ յաձախապէս. և է տեսանել ասպարէզ սատանայական և հակառակուԹիւն։ Արբեալն հիքագոյն է քան զմեռեալն. նա անզգայ անկեալ կայ, առ բարի իրս և առ չարս անզործ. իսկ սա ի բարեացն գործ կապեալ է շրջմայիւք արբեցուԹեանն, և միայն ի չարեացն գործ է պատեհագոյն,

1 Ցոյնն ի ծախուած և ի վաճառուն էրնան։

և իբրև ՚ի դերեզմանի զոգին ՚ի մարմինն Թաղելով մեռեալ կրկ զմարմինն։ Ցեսե՞ր զնարդ քան զդիւահարն և Թշուառագոյն։

Ա՛խորժե՞ս Թէ որ քան զամենայն մեծ և Թշուառագոյն է՝ ասացից. արբեալ մարդ յարբայութենէն երկնից ոչ կարէ մնանել։ Ա՛վ զայս ասէ. Պաւղոս. "Ա՛ի խաբիք, ոչ պոռնիկք, ոչ շունք, ոչ գողք, ոչ աւելաստացուք, ոչ արբեցողք, ոչ իգացեալք, ոչ արուագիտք, ոչ լուտացողք, ոչ յափշտակողք զարքայութիւնն այ ոչ ժառանգեն,,։ Ուստի յոր պարկարգեաց զնա. ընդ պոռնկացեալսն և ընդ կռապարիշտսն, ընդ շնացողսն և ընդ հայհոյողսն, ընդ ագահսն և ընդ յափշտակողսն։ Եւ զինչ, ասէ, արբեալն և կռապարիշտն նմա՞ն իցեն։ Ա՛ի ինձ զայդ ասեր, ով մարդ. օրինս ընդերցայ ածայինս, յինէն զհամարն մի պահանջեր. յՊաւղոս հարց, և նա պատասխանի տայ քեզ. եթէ նման իցէ և եթէ ոչ նման ընդ տանջանացն, ոչ ունիմ ասել. այլ զի նմանապէս իբրև զկռապարիշտն յարքայութենէն երկնից արտաքս անկանի, յայժ զօրանամ ասել։ Եւ արդ այսոցիկ խոստովանելոց զինչ ևս յինէն հատարս չափոյ մեղացն պահանջեսցես. յորժամ արտաքոյ կացցէ արքայութեանն, յորժամ տմային լեզի ՚ի փրկութենէն, յորժամ ՚ի տանջանս առաքի, զի ևս ինձ չափ մեղացն և լծակս և կշռաս առաջի դնես։

Ա՛ժնդակ է արբեցութիւն։ Ա՛յ առ ձեզ ասեմ, մի լեցի. քանզի ամենայն իրօք հատանեալ եմ Եթէ մանքուր են միտք ձեր ՚ի ցաւոցն և յախտէն յայնմանէ. և նշանակ առողջութեան՝ աստ դեգերանքդ հանդերձ փութով ժողովեցդ, արթուն լեալութեանդ. ոչ ոք գինեաւ արբեալ՝ կարէ փափագել ածային բանիցն։ "Ա՛ի արբենայք գինեաւ յորում է պակշտութիւն, այլ լցարուք Հոգւով,,. այս արբեցութիւն բարի է։ Ցո զքո զանձնդ Հոգւով, զի մի խելագարեսցիս արբեցութենէն. յառաջագոյն ըմբռնեա զմիտսդ և զխորհուրդսդ, զի մի գայցէ տեղի չար և անամօթ ախտն այն։ Ա՛ման այնորիկ ոչ ասաց՝ ընկալարուք զՀոգին, այլ լցարուք Հոգւովն. միտքդ ՚ի վեր զմիտսդ իբրև զբաժակ Հոգւով լցես, զի մի ինչ ՚ի վերայ արկանել կարիցէ այնուհետև բանսարկուն. ոչ վայրապար ինչ պարտ է ընդունել զբ-

հոգին, այլ ընդ հոգւոյն սաղմոսիւք և օրհնութեամբք երջանիկ հոգևորօք, որով լցայքդ այսօր. վասն այսորիկ համարձակիմ յաղագս ողջախոհութեան ձերոյ։

Այս մեզ զբաժանին բարի արբեցութեան, և բաժակ արբեցութեան՝ որ զողջախոհութիւն առնէ և ոչ լքուսի. բաժակն հոգևոր, բաժակն իրիկական, բաժակն տերունեական արեանն. նա ոչ առնէ արբեցութիւն, նա ոչ լուծանէ զոյժն, այլ զարթուցանէ զքօրութիւնն. նա ոչ լքուցանէ զխելն, այլ պնդէ զնոսա. նա արթնութիւն առնէ, նա պատկառելի հրեշտակաց, ահաւոր դիւաց, պատուական մարդկան, փափաքելի տեառն։ Ձեւ գիտէր ասել Պաւղոս յաղագս հոգևոր բաժակին այնորիկ որ ի սեղանս էայս կայ. "Պատրաստեցեր առաջի իմ սեղան յանդիման նեղչաց իմոց։ Պարարեցեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո արբուցանէ զիս իբրև զօրաւոր,,։ Ձեւոյ զաւետեաց գլխոյհրդածութեանս զյարմարութիւն, սեղան և իւղ և բաժակ. "Բաժակ քո իբրև զօրաւոր արբուցանէ զիս,,։ Այս գի մի լսելով զարբեցութեանն անուն, վաղվաղակի երկիւղ և վարկանիցիս տկարութեան զոլ արարող, ի վերայ էած՝ եթէ զօրաւոր է և հզօր։ Այորօրինակ է արբեցութեանս այժ, ամբարել, հզօր առնէ և զօրաւոր, վասն գի հասեցաւ ի հոգևոր վիճակն. ոչ է խոտորումն խորհրդոց, այլ յաւելուած հոգևորական խորհրդոց։

Այսու արբեցութեամբ արբեսցուք, ի նմանէ ի բաց լեցուք՝ գի մի ամաչեսուցուք[1] զվերձաւոր զտօնս. քանզի այս տօնս ոչ յերկրի միայն է, այլ և յերկինս։ Այսօր յերկրի խնդութիւն, այսօր ուրախութիւն յերկինս. քանզի եթէ միոյ մեղաւորի դառնալ խնդութիւն լինի յերկրի և յերկինս, ևս առաւել ամենայն աշխարհ յաւիրշատակեալ ի ձեռաց սատանայի՝ ցնծութիւն է յերկինս։ Այժմ հրաւիրեն հրեշտակք, այժմ բերկրին հրեշտակապետք, այժմ սերովբէք և քերովբէք ընդ մեզ տօնեն զվերձաւոր տօնս. ոչ ինչ ամաչէն ընդ ծառայակիցս, այլ ուրախակից են մերոց բարեացս։ Վանզի թէ պետ և մեր է ընտրեն որ ի տեառնէ, այլ հաւասար և նոյն հեշտութիւն։ Այս գինչ ևս ասեմ զծառայակիցան,

1 Յօրինակին ամաչեցուսք գերյաւարս գծին։

ինքն տէրն մեր ոչ առնուէ ընդ մեզ տօնակից լինել. և զինչ պիտոյ է ասել՝ ոչ առնուէ, այլ և բաղձայ ևս ընդ մեզ տօնել։ Յա ուստի է այս յայտ. ինքն ասաց. "Փա֊փագելով ցանկացայ զտօնս զայս ուտել ընդ ձեզ,,. և եթէ զտօնս ընդ մեզ ցանկացաւ տօնել, քաջայայտ է թէ և զյարուԹիւնն։

Եւ ապ յորժամ հրեշտակք և հրեշտակապետք բերկրիցին և ամենայն երկնային զօրքն, և ինքն հրեշ֊տակացն տէր ընդ մեզ տօնակից լինի, զինչ ևս նուա֊զեսցէ այսուհետև մեզ 'ի բարեկրուԹիւնն քան. մի՛ ոք աղքատ լիցի տխրեալ յաղագս աղքատուԹեն, քան֊զի տօնս այս հոգևոր է. մի՛ ոք ձախ ամբարտաւանեսցէ յաղագս ընչեղուԹեանն, վասն զի ոչ յընչից անտի հեշ֊տալի տօնս յայս ընծայել կարասցէ։ Ո՛չ յարտաքին և յաշխարհական տօնսն ուր յոլով է անասպական և սե֊ղան լցեալ, ուր արբեցուԹիւն և շատկերուԹիւն, ուր արբեցուԹիւն և ծաղր, ուր ամենայն սատանայական առականքն, յիրաւի աղքատն տխուր և ընչեղն զուար֊ձացեալ. ընդ֊որ արդեօք. վասն զի միոյն փարԹամադոյն դնէ զսեղանն և յաւէտ վայելէ 'ի փափկուԹիւնն. իսկ աղքատն արդելեալ լինի աղքատուԹեամբն։ Այլ սուտ ոչ ինչ այնպիսի. մի սեղան դնէ Ճոխին և աղքատին. եթէ ընչեղ ես՝ ոչ ինչ յաւելու, և եթէ աղքատ ես՝ ոչ ինչ նուազ 'ի հաւասարուԹենէն առաջի կայցէ, քան֊զի ածային է չնորհն։ Միմն իսկ Թագաւորին որ զԹագն ունի և զծիրանին է զգեցեալ, որում ամենայն երկրի իշխանուԹիւն ընձեռեալ է, այնմ Թագաւորի՝ և աղ֊քատին որ յաղագս ողորմուԹեան նստիցի, մի սեղան մերձ կայ։ Եւ այս են տէրունական պարգևքն. ոչ պա֊տուաւորաց բաշխէ զհաւասարուԹիւնն, այլ յօժա֊րուԹեան և մտաց։

Յոմին հաւանձակուԹեամբ և Թագաւորն և աղքատն առ սեղանս առ այս գան հանդերձ նովին պատուով, 'ի բազում անգամ Թերևս աղքատն յոլով պատուով. ըն֊դ֊որ արդեօք. վասն զի Թագաւորն բիւր իրօք պատան֊դեալ է և բիւր յաչկածուԹեան բազում ուստեք մխրճի՝. և յոլով ստոլիի ընդ մեզս. իսկ աղքատն

1 Ա յդպէս յօրինակին։

կարևորաց կերակրոցն միայն հոգայ, և որ առանց իրաց և խաղաղական ընտրել զկեանսն իբրև ի նաւահանգստի նստելով, բազում համարձակութեամբ ի սեղանս յայս մերձենայ։ Դարձեալ ի տօնս յարտաքինս աղքատն ի տրտմութեան է և ընչեղն յուրախութեան, ոչ յաղագս սեղանոյն միայն, այլ և հանդերձիցն. քանզի զոր յաղագս սեղանոյն ախտանան, նմին և հանդերձիւ աղագաւ համբերեն։ Յորժամ առեանէ զփարթամն բազմապատիւ զգեցեալ պատմուճան, հիանայ, եղկելի յաւելեայն իրս զինքն ասէ. իսկ աստ և այն գժուարութիւնք ի բաց բարձեալ լինին, վասն զի յամենեսեան է հանդերձ փրկական աւազանն. զի "Ողք ի Քրիստոս մկրըտեցարուք, ասէ, զՔրիստոս զգեցայք.,,։

Ի համեստութեամբ զտօնս զայս արբեցութեամբ. ըզձոխս և զաղքատս, զծառայս և զտեառս նմանապէս պատուեաց. այլ երախտահատոյց լիցուք բարեգործին յաղագս ի մեզ լաւաբարութեան նորա. և հատուցումն բարի է առաքինութիւնն և անձն արիւն։ Այս տօն և կացուրդ ոչ ընչից ծախուց կարօտանայ, այլ յօժարութեան և մտաց բարեաց. այսոքիկ են ախք. ոչ ինչ մարմնական աստ վաճառի, այլ լսելութիւնս ածային բանից, աղօթք հարց, բարեբանութիւն քահանայից, համակամութիւն և խաղաղութիւն և ձայնակցութե, հոգևոր պարգևն, հոգևոր և վարձն։

Տօնեսցուք զտօնս զայս յորում յարեաւ Քրիստոս. վասն զի յարեաւ Յիսուս և զաշխարհ ընդ ինքեան յաղոյց. ինքն յարեաւ զնահու կապանս խզելով, և զմեզ յարոյց զմեղացն շղթայս լուծանելով։ Մեղաւ Ադամ և մեռաւ։ Այր և հրաշափառագոյն է այս. նա մեղաւ և մեռաւ, սա ոչ մեղաւ և մեռաւ։ Ընդէր արդեօք. զի որ մեղաւն և մեռաւ, յաղագս ոչ մեղուցելոյն և մեռելոյն կարասցէ ի մահու բանութենէ ջերծանել։ Այս պէս և յաղագս ընչիցն լինի. թերևս պարտական ոք իցէ և ոչ ունելով հատուցանել՝ ըմբռնի. և այլ ոք որ ոչ ինչ պարտիցի, կարող է ընձեռել, հատուցանելով լուծանել զպարտականն։ Այնպէս և Ադամայ եղև. պարտական էր Ադամ և ըմբռնեաւ ի սատանայէ, այլ ոչ ունէր հատուցանել. ոչ ինչ էր պարտական Քրիստոս և ոչ ըմբռնեաւ ի սատանայէ, բայց զի կարող էր հատուցա-

նել զպարտսն, եկն և հատոյց զմահ յաղագս ըմբռնե-
ցելոյն ՚ի սատանայէ, զի զնա արձակեսցէ։

Տեսեալ զյարութեանն զուղղութիւնս. կրկին մահու
մեռաք մեք, ասէ ուրեմն կրկնակի յուսացուք և զյա-
րութիւնն. նա մեկնակի մեռաւ, վասն այնորիկ զմի յա-
րութիւն յարեաւ։ Այս զիարդ է, ես ասեմ. մեռաւ Ա-
դամ հոգւով և մարմնով, մեռաւ և մեղօք և բնութ-
«Յաւուր յորում ուտիցէք ՚ի փայտէդ, մահու մեռա-
նիցիք»։ Այս սակայն ոչ ՚ի նմին աւուր մեռաւ[1], իսկ
բնութեամբն յետոյ. դժնդակագոյն է մեղօքն մեռա-
նել. այն մահ հոգւոյ էր, և այս մահ մարմնոյ։ Բայց
յորժամ լսիցես մահ հոգւոյ, մի կարծիցես զոգին մե-
ռանել, վասն զի անմահ է. մահ հոգւոյ՝ մեղք հոգւոյ և
պատիժք. յաղագս այսորիկ և Պրիստոս ասէ. «Մի
երկնչիք որք զմարմինն սպանանեն և զոգին ոչ կարեն
սպանանել. այլ երկերուք առաւել որ զհոգին և զմար-
մինն կարէ ՚ի գեհենի կորուսանել»։ կորուսեալն կայ
ուրեմն, բայց արտաքոյ դիմաց կորուսողին է։

Այլ որպէս ասէին, ՚ի մեզ կրկնակի է մահն. ասէ
ուրեմն և կրկնակի յարութեանն լինել պարտ և արժան
է. իսկ ՚ի Պրիստոսի մեկնակ է մահն, քանզի ոչ մե-
ղաւ Պրիստոս. բայց զի և նոյն ինքն մեկնակի մահն
յաղագս մեր, զի ոչ ինչ էր պարտաւոր մահուն այմ-
քանզի ոչ էր համարապարտ մեղացն, յաղագս այնորիկ
և ոչ մահու. այլ վասն այնորիկ նա յարեաւ յարու-
՚ի մեկնակի մահուանէն, և մեք կրկնապատիկ մեռեալքս
կրկին զմահն՝ կրկնապատիկ և զյարութիւնն յառնեմք։
Ո՞միւնն յարեաք առ այժմ ՚ի մեղացն, քանզի ընդ նմա
թաղեցաք մկրտութեամբն և ընդ նմին յարեաք ՚ի ձեռն
մկրտութեանն. մի այս է յարութիւն՝ ՚ի բաց վճարումն
՚ի մեղաց. երկրորդ յարութիւն այլ՝ յարութիւն մարմ-
նոյ։ Այս զմեծն, վստահացիր և յաղագս նուազին. սա
սաւաւել մեծագոյն է քան զնա, վասն զի յաւէտ մեծ է
՚ի մեղացն ազատ լինել, քան եթէ զմարմինն տեսանել
յարուցեալ։ Ա՛ման այնորիկ անկաւ մարմինն, զի մե-
ղաւ. և սկիզբն անկելոյ մեղք եկն, սկիզբն յառնելոյ ՚ի
բաց վճարումն ՚ի մեղաց։ Յարեաք զմեծ յարութիւնն՝

1 Ցայնմ ժամուս բնաւ[illegible], այլ մեղս մեռաս. այն նման։

զբար մահ մեղայն ընկենուլ ՚ի բաց, մերկացեալ զհին պատմուճանն. մի այսուհետեւ յաղագս նուազին անյուսացաք: Այս յարութիւն մեք կանխաւ յարեաք յոլոժամ մկրտելքն եղաք, և որք մկրտութեան երեկորն արժանի եղաք գեղեցիկ տնկոյս այսիկ: Նախ քան զերկիկ Քրիստոս խաչեցաւ, այլ յարեաւ զանցեալ գիշերս. նոյնպէս և սոքա նախ քան զերկիկ ՚ի մեղայն ըմբռնեալք էին, այլ այժմ յարեան. նա մարմնով մեռաւ և մարմնով յարեաւ, սոքա մեղօք էին մեռեալք և ՚ի մեղայ ազատեալք յարեան:

Երկիկը ՚ի գարնանային ժամանակի վարգս և շուշանս և զայլ ամենայն ծաղիկս մեզ տայ. իսկ ջուրք քան զերկիկ վայելչագունեղ տուրս մեզ ետուն: Եւ մի սքանչանար եթէ ՚ի ջրոյ բուսան ծաղիկքս. զի և ոչ երկիկ ըստ իւրում բնութեան, այլ ըստ հրամանի տեառն բազում պտուղս արտաքս ընծիւղէ: Ընձեռեաց և ՚ի սկզբանն ջրոյ բնութիւն կենդանի շարժունս. քանզի “Հանցեն, ասէ, ջուրք սողուն հնչող կենդանեաց,,. և հրամանն գործ եղև, և անշունչ բնութիւնն այն հնչաւոր կենդանիս արտաքս եբեր: Նոյնպէս և այժմ հանցեն ջուրք ոչ սողուն հնչող կենդանեաց, այլ հոգևոր հնարս: Հանին յապիժամ ձկունս անբանս և անձայնս. հանին և այժմ ձկունս հոգևորս և բանաւորս, ձկունս յառաքելոյն որսացեալս. քանզի “Լկայք, ասէ, և արարից զձեզ որսորդս մարդկան,,. զայս որս ասէր: Որ է արդարեւ որսոյս օրինակ. վասն զի ձկնորսքն ՚ի ջրոյն արտաքս հանեն, և մեք ՚ի ջուր արկանեմք և այնպէս որսամք:

Որ երբեմն և առ Հրեայս ասացան. ուսիր զինչ կայր աւազանն, զի ուսանիցիս զհրեական աղքատութենէն և զձախութենէն եկեղեցւոյ: Աւազան ջրոյ էր, և ինքնելով հրեշտակն շարժէր և խռովեցուցանէր զջուրսն. և ապա զինչ յուզման ջրոյն մնասներ մի ոք ՚ի հիւանդացն և բժշկեալ լինէր, և վաղվաղակի սպառեալ լինէր ընդ նմա. ոչ յաղագս աղքատութեան տուողին, այլ վասն տկարութեան ընդունողացն: Ինքնէր հրեշտակն յաւազանն և խռովեցուցանէր զջուրսն, և մի ոք բժշկեալ լինէր. և զհրեշտակացն տէրն ՚ի Յորդանէս, և յուզեաց և զաշխարհ ամենայն բժշկեաց: Մանն այսպիսիկ անդ զինչ աւազնոյն երկրորդին ինքնելով ոչ ընդու-

ներ զաժշկութիւնն, քանզի Հրեից տուեալ լինէր շնորհն տիարացն, աղքատացն. իսկ աստ յետ առաջնոցն զերկրորդն, յետ երկրորդին զերրորդն, յետ երրորդին զչորրորդն. եթէ զտասներորդն և եթէ զքսանեւրորդն և եթէ զհարիւրերորդն և եթէ զբիւրն և եթէ զաշխարհ ամենայն արկանիցես յաւազանն, ոչ ծախի շնորհքն, ոչ վատնի պարգևն, ոչ աղտեղի ջուրն. նոր է մաքրութեանս օրինակ։ Հանգի և ոչ մարմնական իսկ է. զի զմարմնականսն յորժամ յողովագոյնս լուանայցեն ջուրքն, յաւէտ զաղտն ընդունին. իսկ աստ որքան բազում լուանայ, այնքան մաքրագոյն լինի։

Տեսէր զմեծութիւն պարգևիս. պահէա զմեծութիւն պարգևիս, ով մարդ։ Ալէ է քեզ իշխանութիւն անզանազանաբար կեալ. օրէնս դիր քեզ հանդերձ հաստատութիւն յամենայն իրս. հանդէս և մարտ է[1] կեանքս այս, և որ հանդիսանայն՝ ամենայնի ժուժկալել։

Զայսմէնէ քեզ օրինակ առաքինի և զգուշագոյն ուղղութեան. որք անզանազանաբարք գոլ կարծին, ծնանին զմեզս, արատաբս հանցուք զայն ի մտաց. քանզի իրացն ոմանք են մեղք և ոմանք ոչ մեղք, այլ մեղացն պատճառ և սկիզբն. որպիսի ինչ՝ ծաղր ոչ են բնութիւն մեղք, և լինին մեղք յաճախապէս յառաջ բերեալք. քանզի ի ծաղրէ կատականք և ի կատականացն զազրաբանութիւնք, ի զազրաբանութենէ գարշելիք և յիւրացն գարշելեացդ պատիժք և տանջանք. ի բաց բարձ կանխաւ զարմանն, զի բարձեալ բովանդակ զախտն. քանզի եթէ զանորոշելին պահեսցուք, ոչ երբեք յարգելեալսն անկցուք։ Այնպէս զկանայս տեսանել անզանազան գոլ թուի բազմաց. այլ յայնմանէ անարգել ցանկութիւն ծնանի, և ի ցանկութենէն պոռնկութիւն, և ի պոռնկութենէն պատիժք և տանջանք։ Այնպէս և փափկանալն ոչ ինչ գժնդակ գոլ կարծի. այլ անգուստ արբեցութիւն, և բիւր չարիք յարբեցութենէն։ Ի բաց բարձցուք ամենայն ուստեք զսկզբանէնս մեզացն։

Յաղագս այսորիկ յաճախապէս վայելեք ի վարդապետութիւնս հանապազօր. վասն այնորիկ եօթն աւուրս ի կարգի ժողով կատարեալք՝ զհոգևոր սեղանս ձեզ մերձ դնելով, առնել ձեզ վայելել յաճախին բանս,

1 Պակասէր յօրինակին է կեանս այս. յաւելաւ ի յունէն։

մարզելով զձեզ հանապազօր, զինեմք հակառակ սատանայի. քանզի այժմ առաւել զայրացեալ է. զի որքան մեծ է պարգեւս, այնքան մեծ է և պատերազմն։ Օ՛ի եթէ տեսանելով ՚ի դրախտին ոչ հանդարտեաց, յերկինն տեսանելով զիմքրդ ժուժկալեսցէ, ասա ինձ. զայրացուցեր զգազանն, այլ մի՛ երկնչիր. մեծ զօրութի՛ առեր զսուսերն սրեալ, նուաւ խոցեա զօձն։ Ա՛ն այնորիկ ՚ած ներեաց նմա հակառակ զայրանալ ընդդէմ քո, զի նովին փորձիւ իրացն ուսցիս զզօրութեանդ քո զոյժ։ Այլ զոր օրինակ քաջ մանկամարդ զաղտեղեալ օք և զկղտաեալ զըմբիշ զանդարմանն առեալ՝ մարզելով և վարժելով ՚ի քաջասնութիւն ածիցէ, ոչ թողու դադարել այնուհետև, այլ ՚ի հանդիպն լինելն հրամայէ, զի նմա ուսուցէ ՚ի ձեռն փորձի իրին որքան ինչ ամբարեաց ՚ի նորա զօրութիւնն, նոյնպէս և Քրիստոս արար. կամէր և զթշնամին ևս ՚ի միջոյ ՚ի բաց առնել. այլ զի դու ուսցիս զչնորհին գերազանցութիւն, զհոգևոր զօրութեանն զմեծութիւն զոր առեր ՚ի մկրտութեանն, թողու զնա մրցել ընդ քեզ, զի յոլովս քեզ զպսակացն զպատճառս պատրաստեսցէ և ընձեռեսցէ։ Յաղագս այսորիկ եօթն աւուրս ՚ի կարգի վայելեք ՚ի վարդապետութիւնս, զի հաւաստեաւ ուսանիցիք զմարտն։ Այլ ազգ ևս, հարսանիք հոգևորք են լեալքս, և հարսանեացն մինչև յեօթն աւուրս առագաստքն կան ճնան. վասն այսորիկ և մեք յեօթն աւուրս զձեզ խրատեցաք աստ յաճախին առագաստս կալ ճնալ։ Այլ անդ յետ եօթն աւուր լուծանի. իսկ աստ եթէ ախորժեսցես՝ յարաժամ յաճախինս կայցես ճնասցես յառագաստս։ Այլ յարտաքին հարսանիսն հարան յետ առաջին ամսոյն և կամ երկրորդին ոչ է նոյնպէս ցանկալի փեսային. բայց աստ ոչ այնպէս, այլ որքան ժամանակն յառաջանայ, նոյնքան և ջերմագոյն սէր փեսային լինի, այնքան հարազատագոյն յարմարումն, այնքան հոգևորագոյն միաբանութիւնն, եթէ արթունք իցեմք։ Պարձեալ ՚ի մարմնականն յետ մանկութեանն ծերութիւն. իսկ աստ ծերութեանն մանկութիւն, և մանկութիւն ուր կատարած ոչ երբեք ունի եթէ կամեսցուք։ Ա՛ծ է[1] չնորհն, այլ առաւել ևս մեծագոյն

1 Պակասէր յօրին. Մեծ է ... եթէ [illegible]. յաւելաւ ՚ի յունէն։

եղիցի եթէ կամեսցուք. զի և Պաւղոս մեծ էր յորժամ մկրտեցաւն, այլ առաւել ևս մեծագոյն զինի այնորիկ եղև. յորժամ քարոզէր, տապնապեցուցանէր զԻսրայէլն. ապա՝ի գրախան յափշտակեցաւ, յերրորդ երկինս եղև: Որպէս զի իշխանութիւն ես և մեզ եթէ ախորժեսցուք աձեցուցանել զտուեալ շնորհն մեզ՝ի ձեռն մկրտութեանն. քանզի աձէ և փայլէ գործովք բարեաք, և պայծառագոյն մեզ ընձեռէ զլոյս: Այլ եթէ այսպէս լինիցի, բազում համարձակութեամբ՝ի փեսայարանն մանիցեմք ընդ փեսային, և յառաջակայ բարիսն սիրտս նորա վայելիցեմք: Որոյ լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում փառք հօր հանդերձ սուրբ Հոգւովն յաւիտեանս. ամէն:

ԱՒՐ ՀԱՆԴԵՐՁԵԱԼՈՆ ԼՈՒՍԱՒՈՐԻՆ, ԵԻ ԸՆԴԵՐ ԱԻԱԶԱՆՆ՝ ՎԵՐՈՑՒՆ ԻՆՆԴԵՍԱՆ ԵԻ ՈՉ ԹՈՂՈՒԻԹԵԱՆ ԱՍԻ, ԵԻ ԵԹԷ ՎՏԱՆԴԱՒՈՐ Է ՈՉ ՍՈՒՏՆ ՄԻԱՑՆ ԵՐԴՆՈՒԿ, ԱՑԻ ԵԻ ԵՐԴՆՈՒԿՆ, ԹԷՊԵՏ ԵԻ ԱՐԴԱՐ ԵՐԴՆՈՒԹԻՒՄԲ

Իբրև՛ զի ցանկալի և փափաքելի է մեզ նորոյ եղբարցս մերոյ սէր: Աղբայրասիրս զձեզ և նախ քան զերկունսն արդէն կոչեմ, և յառաջ քան զծնունդն զագակուղթիւնն առ մեզ ողջունեմ: Քանզի գիտեմ հաւատեաւ, գիտեմ յորքան պատիւ հանդերձեալ էք պալ և զորպիսի իշխանութիւն հանդերձեալ էք առնուլ. նախ քան զիշխանութիւնն սովորեցեալ մերձենալ՝ի ձեռն սպասաւորութեան զաւրեմնութիւն՝ի նոսա ամբարելով առ հանդերձեալսն: Օ նոյն և ես առնեմ այժմ. զի ոչ՝ի սակ ինչ իշխանութիւն հանդերձեալ էք գալ, այլ՝ի նոյն ինքն յարքայութիւն. մանաւանդ թէ յարքայութիւն ոչ՝ի վայրապար, այլ յերկնից արքայութիւնն:

Ա՛ման այսորիկ զձեզ աղաչեմ և պաղատիմ զի յիշեսջիք զիս յորժամ գայցէք յարքայութիւնն յայն. և զոր ինչ Յովհէփն ասէր տակառապետին, "Յիշեա զիս յորժամ բարի լինիցի քեզ,,, զնոյն և ես ասեմ ձեզ այժմ, յիշեցէք զիս յորժամ ձեզ բարի լինիցի:

Ել երազոց զայս Հատուցումն խնդրեմ՝ որպէս նա, զի ոչ անուրջս եկի լուծանել ձեզ, այլ զերկնից զնոր պատուիրել և աւետիս բերել բարեաց այնպիսեաց զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ոչ ՚ի սիրտ մարդոյ եկն՝ այնքիկ են զոր պատրաստեաց Ած սիրելեաց իւրոց։ Յովսեփ ասէր ցտակառապետն ցայն. "Երեք ևս աւուրք, և կացուսցէ զքեզ Փարաւոն ՚ի տակառապետութեանն քում„։ Ապա ես ոչ ասեմ երեք ևս աւուրք, և ՚ի տակառապետութիւն ածեալ լինիք Թագաւորի. այլ երեսուն ևս օր, և կացուսցէ զձեզ ոչ ևս Փարաւոն, այլ երկնից Թագաւորն ՚ի վերուստ գաւառին, յազատն Իսրայելի, ՚ի քաղաքին որ յերկինսն է։ Իսկ նա ասէր եթէ "Ցացես զբաժակն ՚ի ձեռն Փարաւնի„. իսկ ես ոչ ասեմ եթէ տացես զբաժակն ՚ի ձեռն Թագաւորի, այլ եթէ ինքն Թագաւորն ՚ի ձեռս ձեր տացէ զահաւոր բաժակն զլեառն բազում զօրութեամբ, և քան զամենայն արարածս է պատուականագոյն։ Իսրաքանչիւր զի ՚ի նուիրեցելոցն գիտէ զբաժակին այնորիկ զոյժ. գիտացէք և դուք սուղ ինչ յետոյ։

Ա՛րդ յիշեցէք զնա յոյժ գայցէք յարքայութիւն յայն, յոյժ՝ զԹագաւորական զպատմուճանն առնուցուք, յոյժ՝ զծիրանին զգենուցուք որ տէրունեան արեամբն է ներկեալ, յոյժ՝ զԹագն ընդունիցիք ՚ի գլուխ, որ քան զՀառապայթս արեգական աւրաւել և պայծառութիւն ունելով՝ ամենայն ուստեք առաքէ լինքենէ զլոյս։ Վանզի այսոքիկ են փեսային պարգեւք, մեծագոյնք քան զմեր արժանաւորութիւն, այլ արժանաւոր է նորա մարդասիրութեանն։ Յաղագս այսորիկ ձեզ աստուստ արդէն և նախ քան զնիճայինն զայն երանեմ. և ոչ միայն երանեմ, այլ և գովեմ զբարեմտութիւնն. զի ոչ իբրև զպղերգս ՚ի մարդիկանէ ՚ի վերջին շունչն ՚ի լուսաւորութիւնս եկիք, այլ արդէն իսկ աստուստ իբրև ծառայք բարեմիտք Հանդերձ ամենայն սիրով հնազանդել տեառնն պատրաստեցայք, զպատրանսյս ոգւոց ձերոց Հանդերձ յոլով Հեզութեամբ և յօժարամտութեամբ ընդ լծոյն այ եդիք և ընկալայք զքաղցր զլուծն, առէք և զբեռնն զթեթև։

Վանզի Թէպետ և ընդհէն զայդ՝ ձեզ և որք ՚ի վախճանի ՚ի խորհուրդն գան՝ է, այլ յօժարամտութեանն

լրք ոչ զուգահաւասարք, և ոչ պատրաստուԹի իրացն։ Նոքա ի մահիճս առնուն, իսկ դուք ի գոգ եկեղեցւոյ, որ է հաստարակաց ամենեցուն մեր մայր. նոքա ողբալով և արտասուելով, դուք զուարձացեալք և բերկրեալք. նոքա հառաչելով, և դուք դոհանալով. նոքա յոլով ինն ծանրագլխեալք ջերմամբ, իսկ դուք յաւետ լցեալք հոգևոր հեշտուԹեամբն։ Ալ ասն որոյ աստ ամենայն ձայնակից պարգևին, և անդ բովանդակ հակառակ ընդհինն. քանզի ողբ և սուգ որք ուսուցանեն զնոսա, և մանկունքն շուրջ կան արտասուելով և բարեկամք տխուրք, ծառայք սգով լցեալք, և բոլոր ձև տանն ձմեռնային ինն աղջամղջին աւուրց նմանի։ Իսկ եԹէ զնորին իսկ զանկելոյն զվիտան բանայցես, տրտմագոյն ևս քան զայսոսիկ գտցես։ Ո՛ի զոր օրինակ հողմք բազումք ընդդէմ իրերաց ընչելով ամբոխին և՛ի յոլով մասունս բզխորան կոտորատեն, նոյնպէս և խորհուրդքն յայնժամ պաշարեալք այնու դժնդակուԹեամբք յաշխատեցելոյն յոգիսն անկանին, և՛ի բազում հոգս զնորա խորհուրդն բաժանեն։ Յորժամ տեսանէ զմանկունսն, և զորքուԹիւն նոցա զնուաւ ածէ. յորժամ հայիցի՛ ի կինն, և զայրուԹիւնն յիշէ. յորժամ տեսանիցէ զծառայսն, և զամայուԹիւնն զտանն [1] զիտէ զապաստաւորուԹեանն. յորժամ յինքն եկեալ և զմերձաւոր կեանս իւր յիշէ՝ երգիծանի, զյոլով տրտմուԹենն զամով ընդունի։ Ա՛յսպիսի է անձն հանդերձելոյն՛ի խորհուրդն գալ։ Իսկ ապա՛ի մէջ ամբոխի և խռովուԹեանն այնորիկ մնանէ՛ի ներքս քահանային՝ քան զնոյն ինքն զտանն ահաւորագոյն, և քան զնախն որ հիւանդին են յարմարագոյնք։ Ո՛չ ինչ երկրորդ նա երևի քան զբժշկին զձայն, որ՛ի բաց հրաժարեցուցանէ զնորա կեանսն, նորա յուսահատուԹիւնն մեծագոյն ևս Թուի. քահանայինն մեծանեալն մահու նշանակիչ կարծի որ յաւիտենական կեանցն է պատճառ։

Նայց ոչ ևս մեծագոյն լեառն՛ի վերայ եդի զբարեացն. քանզի՛ի միջոցի բարեկամացն ամբոխի և՛ի պատրաստելն՝ բազում անգամ Թողով զմարմինն՛ի բաց վազէ հոգին։ Ո՛չ յոլովս և՛ի մերձաւորացն չձանաչէ, ոչ ձայն

1 Ցօրինակին գանձն. եդաւ ըստ յունին։

լսի, և ոչ պատասխանի տալ կարէ զբանն զայնոսիկ, որովք զերանելի զդաւանութիւնն առ Հաստարակաց ա-մենեցուն տէրն դնել վայել է. այլ իբրև զփայտ ան-ձայն կամ իբրև զքարն. որ լուսաւորիչն Հանդերձեալ իցէ, առաջի կայ՝ի մեռելոց ոչ ինչ զանազանեալ, զինչ՝ի խորհուրդն գալ է օգուտ յայնքան անզգայութեան:

Քանզի որ յաճախին և յահաւոր խորհուրդն յայն Հանդերձեալ են մերձենալ, զարհնուալ պարտ և արժան է և սթափ լինել, և յամենայն աշխարհական հո-գոց մաքուր, և յոլով ողջախոհութեամբ լցեալ և բա-զում յօժարամտութեամբ, զամենայն օտարոտի օրինս խորհրդոյն արտաքս սահմանել՝ի մտացն, և բոլոր ուս-տեք յօրինել զտունն, որպէս զի զնոյն ինքն զԹագա-ւորն Հանդերձեալ իցէ ընդունել:

Յայոքիկ են ձերոց մտաց պատրաստութիւնք, այս-պիսի խորհուրդք՝ի ձեզ, սոյն ձերոյ անձին յօժարու-թիւն: Զարժանաւոր Հատուցումն այսպիսի առաքինի բարուց Համբերեցէք յոյժ առնուլ, որ և ձերոց ընծայիցդ յաղթէ որ զՀնազանդութիւն ցուցանէք առնա: Այսց զի վայել է և ծառայակցաց մեզ ձեր ծառայակցացդ բերել ընծայ ինչ, և զայս՝ի մէնջ մատուսցուք. մանա-ւանդ Թէ ոչ մեր ինչ, այլ և այս տէրունական է. "Ա՞ զի զինչ ունիս, ասէ, զոր ոչ առեր. և Եթէ առեր, ընդ պարծիս իբրև զոչ առեալ,,:

Յդդ ախորժելի յառաջագոյն քան զամենայն ասել, ընդ՚որ արդեօք զանց առնելով Հարքն մեր զբովանդակ տարեւանն՝ յայսմ ժամանակի զխորհրդածութիւնն լի-նել մանկանց եկեղեցւոյ օրինադրեցին, և ի՞ր աղագաւ յետ մերոյ վարդապետութեան բոկացուցանելով և մեր կացուցանելով առանց պատմաչճանաց և առանց կօշկաց մերկս միայն առ երդմնեցուցչացն Հայիս առաքել: Ա՞ան զի ոչ վայրապար և ոչ սնոտի զձևն զայն և զժամ՝ մեզ նոքա տպաւորեցին. այլ ունին այսոքիկ երկոքեան խոր-Հրդական իմն բան և անՀաւելի. և զայս ձեզ կամիմ ասել այժմ: Այսց զի տեսանեմ զձեզ այլ իմն՝ի Հար-կաւորութիւնս ձեպեալ. քանզի կարևոր է ասել զինչ արդեօք իցէ մկրտութիւն, և ընդե՞ր՝ի կենցաղս մեր ե-մուտ, և որքան ընծայէ մեզ զբարիս: Այլ Եթէ ախոր-ժէք, նախ առաջին յաղագս անուանս մաքրութեան

խորհրդականիս այսորիկ խօսեացուք. զի ոչ է մի անուն, այլ և յոգունք և ամենատարփակք:

Ապրուեմ այս կոչի, աւազան գարձեալ ճննդեան. "Հանգի փրկեաց զմեզ, ասէ, աւազանաւ վերստին ծննդեանն և Թափմամբ Հոգւոյն Իւրոյ,,: Կոչի և լուսաւորութիւն. և զայս ինքն Պաւղոս գարձեալ նոյնպես կոչեաց. "Յիշեցէք զառաջնորդսն յոյս լուսաւորեալք բազում վտանգից համբերեցէք չարչարանացն,,. և գարձեալ. "Ընկարուեմիւն է մի անգամ լուսաւորեցեալսն, որք ճաշակեցին յերկնաւոր պարգեւէն և հաղորդք եղեն Հոգւոյն սրբոյ' անկանելով, գարձեալ նորոգիլ յապաշաւան,,: Կոչի և մկրտութիւն. "Որք 'ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցայք,,: Կոչի և Թաղումն. "Հանգի ընդ նմա Թաղեցաք 'ի ձեռն մկրտութեան 'ի մահն,,: Կոչի և Թլիփատութիւն. "Լրով Թլիփատեցարուք, ասէ, զանձեռագործ Թլիփատութիւն մերկանալով զանդամ մարմնոյ մեղացն,,: Կոչի խաչ. "Հանգի հին մարդն մեր խաչակից եղև, զի ընկըլցի մարմին մեղացն,,: Կոչի և այլ ևս յոլովագոյն անուանք քան զայս. բայց զի մի զբօսվանդակ ժամանակս յանուանս ընդհատին ծախիցեմք, բերք յառաջին անուանն եկեալք՝ և զնորա զնշանաւորութիւնն ասելով դադարեցուսցուք զբանս. առ այժմ վերագոյն փոքր ինչ զվարդապետութիւնս ընձեռեսցուք:

Ի աւազան հասարակ ամենայն մարդկան որ բազանեաքն լինի, որ զմարմնոյն զաղտ սովորեաց լուանալ: Ոչ և հրեական աւազան պարկեշտագոյն քան զայս, բայց քան զընդհատիս յաւէտ խանարհագոյն, զի և նա զմարմնական զաղտ մաքրէր. բայց ոչ վայրապար զմարմնական, այլ և 'ի տկարացեալ խիղճ մտացն մերձենայր: Այսան զի են յոլովք իրաց որք բնութեամբ ոչ են անմաքուրք, և խղճիւ տկար մտացն անմաքուրք լինին: Այս զոր օրէն նակ մանկանցն՝ պատկերք և այլ ամենայն խոշտք բնութեամբ ոչ են ահաւորք, այլ մանկանցն Թուի յաղագս տկար բնութեանն, նոյնպէս յայսոսիկ զորս ասացիք. որպիսի ինչ 'ի մեռեալ մարմինն հպել բնութեամբ ոչ է անմաքուր. իսկ յորժամ տկարն խղճիւ մտաքն բուռն հարկանիցէ, անմաքուր առնէ զմերձեցեալն: Այս զի ոչ բնութեամբ անմաքուր է իրն, ինքն որ զայսոսիկ հրա-

մեղեայ Աովսէս, յայտնեաց բովանդակ բերելով ընդ ինքեան մեռեալ զՅովսէփ, և մնայ մաքուր։ Ասն այսորիկ և Պաւղոս ընդ մեզ յաղագս անմաքրութեանն այնորիկ խօսեալով, որ ոչ բնութեամբ է լեալ, այլ յաղագս խղճին տկարութեան, այսպէս ասէ. "Ոչ ինչ խառնակ նոսիա, բայց եթէ համարեսցի ոք ինչ խառնակ ,,։ Ցեսանեմ զանմաքրութիւնն ոչ յիրացն բնութենէ, այլ՝ի տկարութենէ խորհրդոյն լեալ։ Եւ դարձեալ. "Ուտելին սուրբ է, բայց անմաքուր է մարդոյ որ հանդերձ գայթակղութեամբ ուտիցէ ,,. այն է պատճառք անմաքրութեանն։

Որդ զայսպիսի զաղտ մաքրեր հրէական աւազանն. իսկ ընդհակառակ ոչ այսպէս, այլ զձեռնարիտ անմաքրութիւնն որ հանդերձ մարմնոյն և սգալով բնութեամբ յորով համբարէ զաղտեղութիւնն։ Օ՛ի ոչ որք՝ի մեռելոյն մարմինս մերձենան, այլ որք՝ի մեռեալ գործսն հպին, առնէ մաքուրս։ Եթէ իգացեալ և եթէ պոռնիկ ոք իցէ, եթէ կռապարիշտ և եթէ գինով և իցէ գործեալ դժընդակութիւնս, եթէ զամենայն իսկ զնարդկան ունիցի զչարութիւն, մնանելով՝ի ջրոյս այսորիկ յաւազան, քան զամենայն Հառագայթս մաքրագոյն և յաճախչին ջրոյն եղանէ։ Եւ զի մի կոկովանս կարծիցես զասացեալս, լուր Պաւղոսի որ ասէն յաղագս աւազանիս այսորիկ զօրութեան. "Ոչ՝ի խաթիք, ոչ կռապարիշտք, ոչ պոռնիկք, ոչ շնացողք, ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ աւելտացուք, ոչ գողք, ոչ արբեցողք, ոչ թշնամանողք, ոչ յափշտակողք զարքայութիւնն ոչ ոչ ժառանգեացեն ,,։ Եւ զինչ է այդ առ Հառագայն, ասէ։ Վասն զի ինդիր է ցուցանել եթէ զայդոսիկ մաքրէ աւազանիս զօրութիւն. և արդ լուր՝ի կարգին. "Եւ գուք այսպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք անուամբն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Հոգւով Ս՛ով մերոյ ,,։

Որ՝եք խոստանայաք ձեզ մաքուր լինել յամենայն չարութենէն յաւազանն մերձենալով. իսկ բանս առաւելս ինձ եցոյց, ոչ մաքուրս միայն, այլ և արդարս և սուրբս լինել. զի ոչ ասաց թէ լուացայք միայն, այլ և սրբեցայք։ Օ՛ինչ քան զայս լինի հրաշափառագոյն յորժամ առանց աշխատութեանց և քրտանց և ուղղու-

թեանց զարդարութիւն լեալ տեսանիցէ ոք։ Յորիկ ՚ծածկին պարգեւիս մարգասիրութիւն՝ առանց քրտանց առնելոյ արդարութիւն։ Յանպէս եթէ թագաւորի թուղթ սակաւ ինչ գիրք եղեալ, զբիւր ամբաստանութիւն պարտականս արձակէ ազատս, և զայլս և ՚ի մեծապատիւ առաքէ, և սա առաւել ՚ծածկին ակնարկութիւնն ամենազօրն յամենայն չարեաց ՚ի բաց ազատեսցէ և յոլով մեզ շնորհեսցէ զարդարութիւն և բազում համարձակութեամբ լսուսցէ։ Այս զոր օրինակ փայլակն ինչ փոքր ՚ի յանբաւ խորս անկեալ ապականի և աներևելի լինի ՚ի յոլով ջուրսն ընկղմեալ, նոյնպէս և ամենայն մարդկային չարութիւն յորժամ յաւազանս աստուածային աղբերացն անկանիցին, քան զայն փայլակին արագագոյն ևս ընկղմի և աներևելի լինի։

Այս ընդէր եթէ զամենայն մեղսն, ասէ, Թողու մեզ աւազանն, ոչ աւազան Թողութեան մեզայ կոչի և ոչ աւազան մաքրութեան, այլ աւազան վերստին ծննդեան։ Պատասխանի զի ոչ վայրապար մաքրէ զմեզ ՚ի յանցանաց, այլ այնպիսի իրրև Թէ վերստին ծնեալք լինիմք. զի և վերստին իսկ զմեզ առնէ և յօրինէ, ոչ դարձեալ յերկրէ ստեղծանելով, այլ յայլմէ ՚ի տարեր և ջրոյ ընութեան գործելով։ Այս ոչ վայրապար ընկէզ զանօթն, այլ բովանդակ զնա դարձեալ վերստին ձուլէ. քանզի ընկէզեալն Թէպէտ և հաւաստեաւ մաքրեսցի, ունի ՚ի հինն հետոյն և զազտեղութեանն բերէ զնշխարս. իսկ որ ՚ի ձուլարանն անկանի, և բոցոյնքն նորանայ, զամենայն աղտեղութիւնսն ՚ի բաց դնէ, և զնոյն ընդ նոր արարեալսն ՚ի հնոցէն յառաջ եկեալ զձառագայթս արձակէ։ Արդ որպէս զպատկեր ինչ ոսկեղէն յոլով ժամանակաւ ծխով և փոշով և ժանգով աղտեղեալ՝ առեալ ուրուք ձուլելով մաքրագոյնս մեզ և փայլատակունս արձակեալ ցուցանիցէ, նոյնպէս և զբնութիւնս մեր զժանգոտեալ մեղացն ժանգով և բազում ծուխ ընկալեալ ՚ի սխալանացն և զգեղեցկութիւնն կորուսեալ զոր ՚ի սկզբանն ՚ի նմա եդ, առեալ վերստին ձուլեաց՝ իրրև ՚ի ձուլարան ինչ ընկենուլ ՚ի ջուրան, և զհոգւոյն շնորհն ՚ի վերայ արձակելով՝ նոր լեալն եցոյց, մինչև ընդ նմին իսկ զձառագայթս արեգակնայինս այնուհետև կարել բազում համարձակութեամբ հակառակել և պայծառա-

գոյն երևել, և զՀին մարդն խորտակեաց և նոր պատրաստեաց պայծառագոյն քան զառաջինն։

Այլ զայս խորհրդական մեքենութիւն մեզ զեկուցանելով մարգարէն կանխաւ ասէր. "Իբրև զանօթ բրտի փշրեսցես զնոսա,,։ Այլ զի որ յաղագս այսոցիկ է բան մեզ, վերագոյնն յայտնապէս ցուցանէ. "Որդի իմ ես, ասէ, ես այսօր ծնայ զքեզ. խնդրեա յինէն և տաց քեզ զՀեթանոսս ի ժառանգութիւն և կալուածս քեզ զերեսս երկրի,,։ Տեսեր զիարդ որ ի Հեթանոսաց եկեղեցին էր յիշեաց, և ամենայն ուրեք կարդեալ[1] զՔրիստոսի Թագաւորութիւնն ասաց. ապա ասէ. "Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ,,. ոչ ծանուս, այլ զօրաւորաւ "Իբրև զանօթ բրտի փշրեսցես,,։ Այս և խորհրդական[2] աւազանն պարունակի. քանզի ոչ ասաց վայրապար անօթ խեցեղէն, այլ անօթ բրտի։ Այսուամբ. խեցեղէն անօթք փշրեալք ոչ առնուն զկազմուածքն, յաղագս որոյ ի հրոյն լինի ի նոսա միանգամ ապաւորութիւն. իսկ անօթք բրտի ոչ խեցեղէնքն այլ կաւեղէնք, ուստի և անպրէն դարձուցեալք, առ վերստին ձևն ձգեալ արուեստաւորին իմաստութեամբ։

Օ՜ի յորժամ անբժշկելի թշուառութիւնս խօսի, ոչ անօթ բրտի ասէ, այլ անօթս խեցեղէնս. յորժամ կամէր ուսուցանել մարգարէն Հրեից եթէ թշուառութիւնք անբժշկելոց մահուանց դքաղաքն, հրամայեաց առնուլ կուժ խեցեղէն և խորտակել առաջի բազմութեանն ամենայնի և ասել, "Այսպէս կոտրիցէ քաղաքս և խորտակեսցի,,. իսկ յորժամ ախորժէր քաղցրագոյն ցոյս նոցա երկարել, ի բրտարանն իջուցանէր զմարգարէն, և ոչ ցուցանէր նմա խեցեղէն անօթ, այլ անօթ կաւեղէն ի ձեռն բրտի լեալ և ի վայր անկեալ, և ի վերայ ածէ ասելով. "Եթէ բրուտդ այդ զանօթ զապականեալ վերստին առնու և յօրինէ դարձեալ, ոչ առաւել և ես կարացից զի վայր անկեալն զձեզ վերստին ուղղել,,. ոչ զկաւեղէնս միայն լեալ ուղղել աւազանաւ վերստին ծննդեանն, այլ և զՀոգւոյն ընկալեալս զօրութիւնս և զկործանեալսն՝ Աշմարիտ ապաշխարութեամբ յառաջինսն հանել։

1 Յօր. կարդալ. եղաւ ըստ յունին։ 2 Յօրինակին խորհրդան։

Կայր ոչ է ժամանակ ձեզ յաղագս ապաշաւանացդ լսել բանս, մանաւանդ թէ և մի իսկ երբեք լիցի ժամանակ դեղոյն, այլ միշտ կալ ինալ զդեղեցկութիւնն և զպայծառութիւնն զոր հանդերձեալ էք առնուլ այժմ՝ անարատ պահել։ Կէր և յաղագս առաքինութեանն ձեզ խօսեացաք սուղ ինչ. քանզի կրթարանին անվնասագոյ է ըմբռնոյն գլորումն, և զի առ ընտանիս է մլիցումն, և որ զեմ զՀնարս տանին մարմնոյ նոցա վարդապետքն։ Կայց յորժամ հանդիպին ժամանակ լինի, յորժամ բանայցէ ասպարէզն, յորժամ տեսարանն՝ի վեր անդ նատցի, յորժամ նահատակապսակն մերձենացի, հարկաւոր լինի այնուհետեւ կամ ծուլանալով անկանել և հանդերձ բազում ամօթով՝ի բաց երթալ գընալ, և կամ փութացեալք պատկայն և յաղթանակաւոյն հանդիպել։

Կրմպէս և ձեզ աւուրքս այս կրթարանի ումեմն նմանեսցին. վարժից և հրահանգից դիցուք զվիտս յայամ հետէ արդէն իսկ յաղթող լինել դիւին այնմ։ Կանգնի ընդ նմա հանդերձեալ եմք մարտնչել, ուսցուք այսուհետեւ զմբռնանալնա նորա արդէն ուստի և զօրաւոր, ուստի դիւրով զմեզ դրժել կարէ. զի հանդիպին մերձ եղելոյ մի օտարոտի ինչ չար կրեսցուք, և մի ամբոխեալք լիցուք՝ նոր զինաւարանն տեսանելով. այլ արդէն իսկ՝ի մէջ մեր վարժեալք և զխարդախութիւնն ուսեալք, հանդերձ համարձակութեամբ բուռն հարցուք զմարտէնն նորա։

Կմենայն ուրեք զմեզ խարդախել սովորեաց, բայց մանաւանդ լեզուաւ և բերանով. զի ոչ ինչ է այնպէս պատեհապոյն գործի նմա՝ի խաբէութիւն և՝ի կորուստ մեր, իբրև զանարգել լեզու և զանդուն բերան։ Կնտի մեզ յաձախագոյն կործանումն, անտի գժնդակութիւն։ Կյն զդիւրագայթակղութիւնն որ լեզուին լինի, յայտնելով ինն ասեր. «Կոլովք անկան սրով, և ոչ որպէս ոմք անկան վասն լեզուի.»։ Կյն զդժնդակագոյն կործանումն յայտնելով զարձեալ ինքն այսպէս ասէ. «Կլեզուն յերկրէ լինի, քան եթէ գլորումն՝ի լեզուէ.»։ Կյն զոր ասէն այս է, լաւագոյն է անկանել և խորտակել մարմնով քան եթէ բան ինչ այնպիսի արտաքս Հանել որ զանձն մեր կորուսանէ։ Կյն ոչ ասէ անկումն միայն, այլ և պատուիրէ յոդնագոյն առնել լսնամ, զի մի ընկ-

Ձեսցիս, այսպէս լինի ասելով. "Այրա բերանոյ քումդ դուռն և նիպ ,,. ոչ զի դուռն և նիպս պատրաստիցեմք, այլ զի հանգերձ բազում զգուշութեամբ առ անվայել չապցին բանն զլեզուն փակիցեմք: Այս դարձեալ այլոյ յուցանելով եթէ հանդերձ մերով փութով և նախ քան զմեզն 'ի վերուստ կարօտանամք օգնականութեան, որպէս զի զասացուածն զայն արգելուցուս 'ի ներքս, առ ՅԱծ զձեռան 'ի վեր ձգելով մարգարէն ասէ. "Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի: Որ տեր պահպանութիւն բերանոյ իմոյ և դուռն ամուր շուրջ զշրթամբք իմովք ,,. և որ զօրագոյն ևս գարձեալ պատուիրէ ինքն. "Մ՚տացէ պահպանութիւն բերանոյ իմոյ և 'ի վերայ շրթանց իմոց կնիք ամենագօր ,,: Ցեսանեմք զի իւրաքանչիւր երկնչէր 'ի կործանմանէն յայնմանէ, ողջալով և խորհրդակից լինելով աղօթիցն յաձախապէս զլեզուն պահել:

Այս ընդէր, ասեն, եթէ այնպէս բերէ մեզ զսատակումն գործիս այս, եդ 'ի մեզ զսա 'ի սկզբանէն ՅԱծ: Այսն զի և յորում ոնի զօգտակարութիւն. և եթէ զգուշանայցեմք՝ օգտակարութիւն ևեթ լինի, սատակումն և ոչ մի ինչ: Այս լուր զինչ ասէ որ զառաջինն զայնսոսիկ սոսց. "Ի ձեռին լեզուոյ կեանք և մահ ,,: Այս Վրիատոս զոյն զայս յայտնէ ասելով. "Ի բանից քոց արդարասցիս և 'ի բանից քոց դատապարտեսցիս ,,. քանզի 'ի միջի կայ լեզուն, և առ երկաքանչիւր վարս դու ես տէր: Ցոյնպէս սուր 'ի միջ կայ. եթէ հակառակ պատերազմացն վարեսցիս, փրկական խաչն գործի քեզ եղև. ապա եթէ ընդդեմ քեզ զՀարուածն մղեսցես, ոչ երկաթի բնութիւն, այլ քո անօրէնութիւն լինի սպանման պատճառ: Ցոյնպէս և յաղագս լեզուոյ զմասն ածցուք. սուր է 'ի միջ կացեալ, սրեսս զնա հակառակ մեղացն քոց յանբասանութիւն, և մի ընդդեմ եղբօրն զվէրն մղեսցես: Այսն այնպիսիկ կրկնակի պատրաստ շուրջ պարսպեաց զնա ՅԱծ՝ առաքինացն ցանկով և շրթանցն պարսպաւ, զի մի դիւրաւ և առանց հարցաքննելոյ արտաքս փսխիցին անպատշաձ բանքն մեր: Ցոդ սահձեա զնա: Այլ ոչ ներկ և ողջախոհացս, սա տատանացն իբրև դահձաց ունելոյ մատնելով զնորա մարմինն՝ հրամայեաց և խոցանել. քանզի լաւագոյն է նմա

խածանիլ այժմ ատամամբք ՚ի մեղանչելն, քան եթէ հայցել յայնժամ կաթ ջրոյ, և տապակեալ ոչ պատահել մարդասիրութեան: Յոլովս և այլ մեղանչել սովորեաց լուտանալով, հայհոյելով, զարշելի բանս յառաջ բերելով, զպարտեալով, երդնլով և սուտ երդնլով:

Այլ զի մի զամենայն համօրէն [1] ձեզ ասելով պատանդիցեմ զձեր զվիտպ, մի օրէնս առ ժամն ձեզ դնելով որ յաղագս երդմանն և պահպանութիւն, զայն յառաջագոյն ասելով և հռչակեցուցանելով եթէ ոչ փախչիցիք յերդմանէ, ոչ ասեմ ՚ի սուտ երդմանց և եթէ, այլ և յերդմանցն որ յաղագս արդարութեանն լինի եթէ ոչ փախչիցիք, ոչ ևս յաղագս այլոց պատճառի ընդ ձեզ խօսեսցուք: Վասնզի յիմարութիւն է եթէ որ պրոց են վարդապետք ոչ յառաջագոյն ընձեռել մանկանցն զուսումն մինչև զառաջինսն քաջ գիտիցեն կառուցեալ զիշատակն, իսկ մեզ զառաջինն զուսմունսն ոչ կարացեալ ասել հաւաստեաւ՝ այլ դարձեալ առաջն արկանել, քանզի ոչ այլ ինչ է այս, այլ ՚ի կարաս ձակ արկանել ջուր: Արդ զի մի զմեզ ըմբերանիցէք, յանձնախապէս արարէք իւրիդ փոյթ: Վասնզի դժնդակ գոյք են այն մեղք և յոյժ չար, և առաւել դժնդակք զի ոչ Թուեցաւ դժնդակ. և վասն այսորիկ ՚ի նոցանէ երկեայց, զի ոչ ոք ՚ի նոցանէ երկեաւ. յաղագս այսորիկ անբժշկելի հիւանդութիւն, զի և ոչ հիւանդութիւն իսկ Թուեցաւ զոյ: Այլ իբրև խօսել ինչ վայրապար որ ոչ ունիցի բամբասանս, նոյնպէս և ոչ այնոքիկ մեղադրութիւն ինչ լինել կարծին, և հանդերձ բազում համարձակութեամբ անօրէնութիւնն յանդգնեալ լինի. և եթէ որ մեղադրէ, վաղվաղակի ծաղր զՀետ երթայ և կատականք բազումք, ոչ որք բամբասենն յաղագս երդմանցն, այլ և որք ուղղեալ յախտէն կամին: Ա՛ան այսորիկ յաձախագոյն յաղագս նոցա յերկարեմ՝ զբանս, քանզի որ ՚ի խորջն արմատն է՝ ՚ի վեր գլխել ախորժեմ և զբազմաժամանակեայ զբարն լուանալ. ոչ ասեմ զյաջերդմնութիւնն միայն, այլ և զնոսին իսկ զբարի երդմնեցնն կարձել պատուիրեմ:

Այլ այս անուն, ասեն, երդնու, այլ Հեզ և ՚ի քա-

1 Յօրինակին համառ:

հանապազութիւն կատարեալ, բազում ողջախոհութեամբ և երկիւղիւ կեայ։ Այլ ինչ զնա հեզ ասիցես և ողջախոհ և կատարեալ ՚ի քահանայութեանն. այլ եթէ կամիս, դիր զՊետրոս զնա կամ զՊաւղոս կամ զՀրեշտակ յերկնից լինել. զի և ոչ այնպէս ՚ի բաց գնամ ՚ի պատուականութենէ դիմացն։ Օ՛ի ոչ ծառայական ինչ օրէնս, այլ Թագաւորականս ընթեռնում յաղագս երդմանցն ես. յորժամ Թագաւորի ինչ իրք ընթերցեալ լինին, ամենայն ծառայիցն պատիւ դադարեսցէ։ Եթէ ունիս ինչ ասել եթէ Քրիստոս երդնուլ հրամայեաց, եթէ Քրիստոս ոչ պատուհասէ լեալ, զայն ցոյց և հաւանիմ։ Այլ եթէ այնքան փութով արդել և այնպիսի նախանձաւորութիւն յաղագս իրացն առնէ, մինչ զի ընդ չարս կացուցանել որ երդնուն, “ քանզի աւելին քան զայս, ասէ, ՚ի սատանայէ է,,, զինչ և ինձ կամ զայս անուն և կամ զայն ածես ՚ի մէջ։ Օ՛ի ոչ յուղութիւ ծառայակցացն իւրեր քեզ ածէ զվճռոն զայն, այլ ՚ի հրամանէ իւրոց օրինացն։ Հրամայեցի, ասէ, պարտ և արժան էր հաւանել, և ոչ զայս անուն առաջի արկանել, ոչ զայլոցն չէար խուզել։ Օ՛ի մեծն Պաւղոս մեզաւ յանցանս դժնդակս, անվա՞նգ արդեօք մեզ յաղագս այսորիկ մեղացն իցէն, ասա ինձ։ Այլ վասն նորին զգուշանալ է պարտ և արժան, և ընդ ուղղութիւնս սրբոցն նախանձել. ապա եթէ ծուլութիւնս ուրեք և կամ օրէնս ինչ առաջի դնես, հանդերձ բազում փութով ՚ի բաց փախչիմ։ Քանզի ոչ ընդ ծառայակիցս մեր բանս է, առ տէրն եղիցի, և նմա զվարան տացուք զամենայն կենաց մերոց։ Արդ առ այն ատեան պատրաստեսցուք. զի թէպէտ և բիւր անգամ սքանչելի ոք իցէ և մեծ, և զօրինացն զգայոքիւք զանց առնէ, տացէ ամենայն իրօք զՏատատեալ պատուհասն։ Ոչ միայն պարտ և արժան է դժնդակագոյն ցուցանել զմեզսն, այլ և հրապոյս ազատեալ լինցուք՝ խորհրդակից լինել։ Ունիս կին, ունիս ծառայս և մանկունս, բարեկամս, ազգայինս և դրացիս, ամենեցուն նոցա յաղագս այսոցիկ հրամայեաց զգաստանալ։ Չար է սովորութիւն և դժնդակ գայթակղութիւն և դժուարապահելի, և ակամայս բազում անգամ զմեզ և ոչ գիտացեալս արկանէ յախտս։ Որքան գիտիցես զսովորութեանն զօրութիւն, այնքան

'ի չար սովորութենէն ազատանալ չեպեցիր, և առ միւս ևս պիտանացու զախտն փոփոխեա։ Օ՜ի զոր օրինակ այժմ փութացեալ և որ պահէն և որ հոգայ և խորհի՝ կարէ յոլովակի ընկճել նա, նոյնպէս եթէ 'ի բարի սովորութիւնն զքեզ փոփոխեսցես ոչ երդնուլ, և ոչ ատկանայ յուանալով անկանել կարասցես երբեք կալ յերդման 'ի կործանումն։ Մեծ է արդարեւ սովորութիւն և զբնութեանն ունի զօրութիւն։ Երդ զի մի աշխատեսցուք, 'ի մերձաւորացն զայն շնորհ խնդրեաց, զի խորհրդակից լինիցին և պատուիրեսցեն մի երդնուլ և զմբռնեալսն յանդիմանեսցեն. քանզի 'ի նոցանէ քեզ լեալ պահպանութիւնն՝ և նոցա լինի խորհրդակցութիւն և պատուիրան յաղողութիւն։ Օ՜ի որ բամբասէ զայլ յաղագս երդմանց, ոչ դիւրով ինքն 'ի նմին վիհ անկանի. և ոչ իսկ է դուշնաքեայ վիհ յոքներդմնութիւնն, ոչ յորժամ փոքունց ինչ, այլ յորժամ վասն մեծամեծ իրաց լինիցի։ Իսկ մեք և յաղագս բանջարոյ երդնուսմբ և վասն երկուց դանդաց յամառելով և ծառայի բարկացեալ սպառնալով։ Օ՜ած ամենայն ուրեք կոչեմք վկայ. զմարդ ոք ազատ որ 'ի սոսկ պատուականութեան իցէ, թերևս ոչ համարձակիւր կոչել այնպիսեաց իրաց վկայ, եթէ յանդգնիւր՝ պատուհասիւր յաղագս թերնամանացն. իսկ զերկնից Թագաւորն, զհրեշտակայ տէրն վասն կերակրոյ և ընչից և յաղագս դուշնաքեայ իրաց խօսելով ձգես 'ի վկայութիւն, և զնմանէ այս ներելի։

Այս պրպես վճարումն մեզ 'ի չար սովորութենէն լինելոյ. զպահապանն որպես ասացի, շուրջ կացուցանելով, ասացեալ ինչ ժամանակ սահմանեսցուք անձանց առ յաղողութիւնն. տուգանս 'ի վերայ դնցուք, եթէ նախ քան զժամանակին անցանել ոչ ուղղիցեմք զայն։ Այս պրպան ձեզ ժամանակն բաւականասցի։ Այլ կարծեմ յոյժ արթուն եղելոց և սթափելոց և ողբ յաղագս իւրեանց փրկութեանն տքնիցին, առաւել քան[1] զտան օր կարօտանալ, որպես զի ամենևին 'ի բաց վճարել 'ի չար սովորութենէ երդմանցն։ Այս եթէ զաւսւրս ինչ երևեսցուք երդնուլ, դատաստան 'ի վերայ

1 Յօրինակին եդեալ էր այսօր փոխանակ բաւիցդ. զոր պարտ ջնջել։ և դաւ ըստ յոյնին։

մեր դիցուք և մեծ պատիժս և տուգանս սահմանեալս յաղագս զանցանելոյն։ Այլ զինչ են տուգանքն։ Օ՜ն ոչ ես սահմանեմ, այլ զձեզ առնեմ տեառս կամացդ։ Օ՜ի եթէ այսպէս զմեր իրս տնօրինիցեմք, ոչ միայն յերդմանցն, այլ և որ յաղագս այլոց նուազագոյն ժամանակս սահմանելով և դատապարտելով զանձինս դըժընդակ պատուհասիւք՝ եթէ երբէք անկցուք յայնպիսի իրս, մաքուրք առ տէրն մեր երթիցուք և՝ի հրոյ գեհենին ազատեալ լինուք և հանդերձ համարձակութիւ կացցուք առաջի բեմին Քրիստոսի. որում լիցի ամենայնն մեզ հասանել Տէրհօր և մարդասիրութիւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՅԱՌԱՋՆՈՒՄ ԱՒՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՆՆ ԽՕՍԵԼՈՎ ՅԱՂԱԴՊ ԵՐԴՄԱՆՑՆ ՉԱՅՑ ԱՍԱՑ Ի ՆՈՑՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԵԱԼ, ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՎ, ԹԷ ՈՉ ԵՐԴՆՈՒԼՆ ՄԻԱՅՆ, ԱՅԼ, ԵՒ ԲԱՐԻՈՒԹ ԵՐԴՆԼՈՎՆ ՊԱՏԻՒՈՒ ՈՒՆԻՄՔ. ԵՒ ԹԷ ԱՅՑԵԼԱՊԷՍ ԳՐԻՍՏՈՍ ՅԵՐԿՈՐԴՈՒՄ ԱՒՈՒՐՆ ՅԱՐԵԱՒ *

Քալածիցէ՛ք արդեօք՝ի բաց՝ի բերանոց ձերոց զչար երդմանցն սովորութի՛ւ։ Վասնզի ոչ մոռացայք յաղագս որոյ խօսեցայ ես առ ձեզ, և ոչ վասն որոյ դուքն ինձ խոստացայք. պատճառս այդորիկ աղագաւ զի ես խօսեցայ և դուք խոստացայք, ոչ բանիւ, այլ գովութեամբ ասացեալոցն, մեծագոյն է այս խոստումն քան որ՝ի ձեռն բանիցն է։ Օ՜ի որ բանիւ խոստանայ, բազում անգամ լեզուէն հաւանի. իսկ որ գովէ զասացեալսն, ոգւովն առնէ զհաւանութիւնն։ Ո՜ղջեցէ՛ք արդեօք զլեզուդ ձեր՝ի չար աղանդոց, փախուցէ՛ք արդեօք զժանտ ախտն՝ի քահանայական գաւառէդ. ես կարծեմ եթէ ջնջեցէք։ Վասնզի զմեծ թագաւորն հանդերձեալ էք ընդունել, և՝ի յոլով վարդապետութիւնս և՝ի հոգևոցս վայելիցէք յիմաստունս հարցս. և ժամանակ բազում

* Թէպէտ և յայն ընագիր այսր Ճառի կորուսեալ եցէ, այլ հարա- զատութիւն նորա և անտի իսկ յայտ է զի զոր խոստացան՝ի նա- խընթացին յէջ 137 ասել յաղագս պատճառի որոշման ժամանակի մկրտութեան և այլոց կարևոր գի- տելեաց, կատարէ՝ի սմա յէջ 149։

և տուեալ սահմանն ՚ի կատարածն այսուհետև եհաս, և դուք դիւրերասանակք և հաւանողք։ Վասնզի հաւանիք միշտ առաջնորդաց ձերոց և հպատակիք յայդ ամենայն, կարծեմ վստահանալով թէ ուղղիցէք զբնաւն։

Այլ ոչ ախորժեմ յերկուանալով կաղակարծել, այլ գիտել հաւաստեաւ. քանզի յորդորագոյնս այնպէս զխորհրդական բանիցս բուռն հարկանէի, զհոգս յաղագս երդմանցն ՚ի բաց դնելով, և հանդերձ բազում համարձակութեամբ ձեզ առաջնորդէի՝ առ սարսափելի խորհրդածութիւնս այս մուծանել յանմոռանելիսն, ցուցանել զսրբութիւն սրբութեանցն և որ ինչ անդ ամենայն, ոչ սակաւ ոսկի մանրանայ ունելով, այլ մարմին տէրունական զհայն երկնային. ցուցանէի ձեզ ոչ տապանակ փայտեղէն՝ քարեայ տախտակս ունելով և օրէնս, այլ մարմին անարատ և սուրբ, որ զնոյն ինքն ունի զօրինադիրն. ցուցանէի արդեօք ՚ի ներքս ոչ անաբատ ոչխար զննեալ, այլ զգառն այ զննեալ զենումն խորհրդական, յորմէ և ինքեանք իսկ հրեշտակքն դողան տեսանելով. ցուցանէի արդեօք ձեզ ոչ զՀարոն ՚ի ներքս մտեալ հանդերձ ոսկեհուռն պատմուճանաւ, այլ զմիածինն մտեալ, զնախնեակս մերոյ բնութեանն ունելով, նմին հօրն ցուցանել զմեծութիւն ուղղութե։ “Վասնզի ոչ եթէ ՚ի ձեռագործ սրբութիւնս եմուտ Քրիստոս յօրինակս ճշմարտութեանն,,, այլ ՚ի նոյն ինքն յերկինն այժմ երևեալ երեսացն այ։ Ընդ վարագոյր ոչ այնպէս որպէս ունէր հրեական տաճարն, այլ յաւէտ ահաւոր։ Այս լուր որպիսի զինչ է այս վարագոյր, զի ուսցիս որպիսի էր անդ սրբութիւն սրբութեացն, և որպիսի է աստ։ Վասնզի “ունիմք, ասէ, բազում համարձակութիւն ՚ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի վարագուրաւ, այս է մարմնով իւրով,,։ Ցեսէր զիարդ այս քան զայն վարագոյր ահաւոր է։

Յայս խորհրդածութիւնս ախորժէի այսօր առաջնորդել ձեզ. բայց զի՞նչ կրեցից, ոչ ներեն ինձ երդմանցն հոգք, հալեն զիս անձն։ Այս գիտեմ զի բազումք ստգբտանեն զառաւելութիւն ասացելոցս, ըսելով եթէ մանրեմ զիս անձն. վասն զի փոքր ինն կարծեն զմեզն։

Բայց յաղագս դոլինի իսկ առաւել ողբամ, զի այլ յանցանք են մեծամեծք և Թուին դժնդակք, սպանութիւն և շնութիւն. և են չարք և կարծին չարք. իսկ երդումն է դժնդակ, բայց ոչ Թուի գող չար: Յաղագս այսորիկ ողբամ, և զարհուրիմ 'ի մեղացն. քանզի այսօրիկ են սատանայական խորդախութեցն՝ ծածկաբար 'ի ներքս ածել զմեզն, և որպէս սովորական կերակրով զմահացուն, նմանապէս 'ի կարծիս մարդկան ծածկեաց վերդումն: Այլ արդ զինչ. յերդմունս զամենայն վարդապետութիւնս ծախիցեմք. և ոչ երբեք. վասն զի և կարծեմ գոլ զոմանս յօրինեալս: Օ՜ որ օրինակ սերմանողին որ ելն սերմանել, ոչ ամենայն սերմն 'ի փուշ անկաւ և ոչ բովանդակ յապառաժ, այլ յոլով և 'ի բարի երկիր սերմանեցան, նոյնպէս և անկարողութիւն է նորին վարդապետութեանն եղելոց յայսքան 'ի բազմութիւնս և ոչ քնաւ լինել պտուղս: Այլ արդ զի յոլովք ուղղիցին և ոչ ամենեքեան, բաժանեսցուք և մեք զբանս: Պարտ և արժան է ոչ յարմարեցելոցն և ոչ ամենևին իսկ լսել խորհրդական բանիցս. բայց զի մի գժրեսցին նոքա, ընդհեսցուք յուշացելոցն յառաքինութիւնս. քանզի յոյժ լաւագոյն է ընդհել նոցա յաղագս փութացելոցն, քան եթէ զառաքինիսն զրկել վասն պղերգացն:

Յիշել կամիմ զպարտսն ձեր զոր յառաջնում խօսան խոստացայ և ոչ ընձեռեցի, առ կարևորս ձեպեցուցանելով զմեզ բանին: Այլ զինչ են պարտքն այն: Խընդրեի առ ձեզ՝ ընդէր արդեօք հարքն մեր զամենայն ըզստուգոյն ժամանակաւ զանց առնելով, յայսմ ժամանակի օրինադրեցին զձեր զանձինս ածել 'ի խորհուրդս յայս, և եթէ ոչ վայրապար և ոչ մնոտի ժամանակիս յայսմ պահպանութիւն եղև, քանզի միշտ է նոյն ընդհ և ոչ երբեք խափանի. վասն զի ածային է ընդհ, ունի ինն խորհրդական և պահպանութիւն: Այլ ընդէր այժմ օրինադրեցին զտճոս զայս հարքն: Այժմ մեր Թագաւորն յաղթեաց պատերազմի որ առ բարբարոսն էր, վասն զի բարբարոսք են և քան զբարբարոսս վայրենիք ամենայն դևք. այժմ զմեզն ելոյծ, այժմ զմահ շինջոյց և զսատանայ հնազանդեցոյց և զդերեալսն էառ, այժմ զյաղթանակին զայնորիկ զնիշատակս տօնեմք ըզմերձակայ զօրս. յաղագս այնորիկ օրինադրեցին հարքն

զԹագաւորական պարգևս բաշխել. քանզի այս է յաղԹականացն օրէնք: Ա՛յսպէս և արտաքին Թագաւորք առնեն, զօրաւոր յաղԹանակացն յոլով պատուով պատուեն. այլ այն պատիւք անպատուԹի՛ւ լի են: Ո՛րանզի ո՛ր պատիւ են տեսարանք և որք՝ի տեսարանին գործք և խօսք. ո՛չ ամենայն ամԹով լցեալ և բաղում ծաղր. բայց այս պատիւ պատուողին մեծապարգևուԹեց արժանաւոր է:

Յաղագս այսորիկ օրինադրեցին, զի քեզ չիշեցուցեն՝ի ձեռն ժամանակիս գյաղԹուԹիւնն. զի՝ի յաղԹանակս լեալ ունիք պայծառ հանդերձս զգենուլով մուտանիցեն՝ի պատիւ Թագաւորին. և ոչ վասն այնորիկ միայն, այլ զի և ժամանակիս հաղորդիցիք տեառն: Խաչեցաւ, ասէ, ՚ի փայտին, խաչեցիր և դու՝ի ձեռն մկրտուԹեան. վասն զի խաչն է մկրտուԹիւն և մահ, մահ մեղացն, և խաչն հնոյ մարդոյն: Այս ըստ զինչ ասէն Պաւղոս, զիարդ զերկոսեան ասէ յաղագս մկրտուԹե՛, զի մահ մեղացն է և խաչ. “Ա՛ԹԷ անգիտանա՞ք զի որք՝ի Ք՛րիստոս մկրտեցաք, ՚ի մահ նորա մկրտեցաք,,. և դարձեալ. “Հին մարդն մեր խաչակից եղև, զի խափանեսցէ զմարմին մեղացն,,: Այս զի մի լսելով զմահ և զխաչ զարհուրեօքիս, ՚ի վերայ էած՝ ԹէԷ մեղացն է մահ և խաչ:

Տեսո՛ր զիարդ խաչն մկրտուԹիւն է. ուսիր զի և զխաչն մկրտուԹիւն կոչեաց Ք՛րիստոս. զի փոխ առեալ քեզ և երախտիս առնելով զանուանն զմկրտուԹիւնն քո կոչեաց խաչ, և զխաչն զիւր կոչէ մկրտուԹիւն: Այս ո՛ր է այս, ասէ. “ՄկրտուԹիւն ունիմ մկրտել,, զոր դուք ոչ գիտէք: Այս ուստե՞ր յայտ է ԹէԷ յաղագս խաչին ասէր: Ա՛երձեցան առ նա որդիքն Ո՛ձեդեայ, մանաւանդ ԷԹէ մայր որդւոցն Ո՛ձեդեայ, աղաչելով ԷԹէ “Այս զի նստցին մի յաջմէ և մի յահեկէ,,: Ա՛օր է խնդիրս այս, ԹէպԷտ և առանց այցելուԹեան էր: Այս զինչ Ք՛րիստոս. “Կարո՞ղ զբաժակն ըմպել զոր ես հանդերձեալ եմ ըմպել, և զմկրտուԹիւնն զոր ես մկրտիմ մկրտիցիք,,: Տեսանո՞ս զի մկրտուԹիւն զխաչն քո կոչեաց: Այս ուստե՞ր է այս յայտ. “Կարո՞ղ, ասէ, զբաժակն ըմպել զոր ես հանդերձեալ եմ ըմպել,,: Բաժակ զբարչարանն ասէ, յաղագս որոյ և ա-

սէր. "Հայր եթէ կարողութիւն է, անցցէ բաժակս այս ինձնէն,,։

Յետոյ զնարդ զմկրտութիւնն խաչ կոչեաց. և կոչեաց այնպէս, ոչ զի ինքն մաքրեալ լինէր. քանզի ՚ի պէտս արդեօք որ մեղս ոչ արար և ոչ նենգութիւն էր ՚ի բերան նորա. այլ վասն զի արեամբն որ հոսեցաւ անտի՝ զամենայն աշխարհ մաքրեաց։ Յաղագս այսորիկ և Պաւղոս ասէ. "Տնկակիցք եղեալք նմանութեան մահու նորա մկրտութեամբ,,։ Ոչ ասաց մահուն, այլ նմանութեամբ մահու նորա. քանզի մահ է և այն և այս, այլ ոչ նորին իրի. վասն զի դա մարմնոյ մահ, և սա մեղաց, յաղագս այսորիկ նմանութեան մահու։

Եւ արդ զինչ, մեռանիցիմք միայն ընդ տեառն և ՚ի տիրականն հաղորդիցիմք. մանաւանդ զի և ոչ այն իսկ է տիրական հաղորդել տէրունեան մահուն։ Սակայն փոքր ինչ ներեա, և տեսցես ՚ի վայելչութիւնն հաղորդեալս։ "Օ՜ի եթէ մեռաք ընդ նմա, ասէ, հաւատամք թէ և կեցցուք ընդ նմա,,. վասն զի միանգամայն թաղումն և յարութիւն ՚ի մկրտութիւնն. ՚ի նմին ժամանակի թողու ՚ի խոնարհ գնին մարդն, և առնու զնորն և յառնէ, որպէս յարեաւ Քրիստոս փառօք հօր։ Յետոյ զնարդ զարձեալ յարութիւն ասէ։

Այլ ընդէ՞ր արդեօք մեր յարութիւնն և թաղումն և մարմին ՚ի նմին ժամանակի. վասն զի միանգամայն թաղումք և յառնեմք, իսկ տէրունականն յամեաց զի յերրորդումն աւուրն յարեաւ։ Արդ ընդէ՞ր մեր յարութիւնն յանկարծակի, և տեառն յամրագոյն. զի ուսցիս եթէ ոչ յաղագս տկարութեան էր յամրութիւնն. քանզի որ զծառայն յարուցանել կարէ ՚ի միւմ վայրկենի, և զս առաւել զինքն կարէր յարուցանել։ Այլ ասն էր յամրութիւնն, ընդէ՞ր յերրորդումն աւուր. զի ՚յաճելով ՚ի մահուն և հեղգութեամբն՝ առանց յերկուածանալոյ յարութեանն ցոյցք լինիցին։ Օ՜ի եթէ այնքան ցոյցք յարութեանն եղեն, և այժմ են ոմանք մարդիկ որ ասեն՝ եթէ առ աչօք չարչարեցաւ, եթէ ոչ էր լեալ այնքան յամրութիւնն՝ զինչ արդեօք ոչ ասէին նոքա։ Օ՜ի ոչ բանիւ յարութեանն միայն կամեցաւ սատանայ դրժել, այլ և հաւատով մահուն. վասն զի գիտէր հաւատեաւ եթէ նոր դեղ աշխարհի փրկական մահն

էր. և արտաքս հանել ՚ի հաւատոյն յայնմանէ զմարդիկ փութայր, զի ՚ի բաց բառնայցէ զիրկութիւնն. յաղագս այնորիկ յամէր տէրն ՚ի յարութեանն։

Այլ մերձեցեալ Հրեայքն ասէին՝ տուր մեզ զինուորս զի պահեսցուք զդերեզմանն։ Ո՛վ լքեալ թեանն. տեսեր երբէք, ով հրեայ, զմեռեալ ընդ պահպանութիւ. զի եթէ հաւասար այլոց իցէ մեռեալդ և լոկ մարդ խաչեցեալդ, վասն էր օտար և անկարծելի առնես զիրսդ, ընդէր զարհուրիս և դողաս և պահապանս հաւաքես։ Այլ սակայն և ոչ զայն արգել ՚ած. այլ ներեաց պահել, "զի ՚ի գործս ձեռաց իւրոց կապեսցի մեղաւորն,,։ Այրբա ասէին՝ տուր մեզ զինուորս, զի մի գողացին աշակերտքն իւր զնա և ասիցեն թէ յարեաւ։ Այս դիպեցաւ հակառակ նմին. առին զզինուորսն, զի մի ՚ի յառնելն նորա ասիցեն թէ աշակերտքն նորա գողացան զնա և ոչ յարեաւ։ Այս որք հակառակ վկայութեանն հնազեցան, ՚ի վկայութիւն յարութեանն եղև. զիարիա. նիչս յարութեան իւրոյ վկայս արար յարութիւն ՚ած, զի ՚ի բաց հատցէ զպատասխանիս նոցա յաւուր յայնմիկ։ Այրդ եթէ ընդէր ՚ի ժամանակիս յայսմիկ խոր. հրդածել հրամայեցոյն հաքն, բաւականապէս ինձ թուի զոր ՚ի ձեռն ասացելոցս ձեզ յանդիման կացուցաք։

Կամիմ և միւս ևս պարտս ձեզ ընձեռել, եթէ ոչ ՚ի լսելութեանս իցէք աշխատեալ, և ասել եթէ էր աղաղաւ մերկս և բոկս զձեզ աստուստ առ երդմնեցուցչացն ձայնս առաքեմք։ Օ՛ի և աստ նոյն պատճառ դարձեալ էր. և վասն զի պատերազմի յաղթեաց թագաւորն, և գերիս էառ. և զի այս է գերեացն ձև, լուր Հրեիցն զինչ ասէր ՚ած. "Օ՛որ օրինակ գնաց ծառայ իմ Այսայի մերկ և բոկ, նոյնպէս գնասցեն որդիքն Իսրայէլի մերկք և բոկք ՚ի գերութիւն,,։ Այրդ ախորժելով այժմ յիշեցուցանել կամիմ [1] ձեզ զառաջինն բանաւորութիւնն սատանայի. ձևովդ առաքէ զքեզ առ ՚ի յիշատակ չարագործութեանն հնոյ։ Այ ան այդորիկ ոչ բոկք և ոչ մերկք միայն կացաք, այլ և զձեռս յետուստ կողմանէ ունելով. զի և այդքիկ խոստովանեսցի ՚ած տերութիւն, առ որ այժմ մերձեցաք, աւար էք և ՚ի կապուտ ամե.

1 Յօրինակին պակասէր կամիմ։

նեքեան դուք։ Այլ զօրս զայս Յասայիաս յիշէ ՚ի հե-
ռուստ, և նախ քան զլուացն պատահումն յառաջաձայ-
նէ այսպէս. “Ինքն հզօրի մանաւանդեսցէ զաւար,,. և
դարձեալ. “Արկն քարոզել գերեաց զթողուԹիւն,,.
և ՚Ի սաւիԹ ընդ նմա զգերուԹենէս զայսմանէ մարգա-
բէանալով ասէր. “Ելեր ՚ի բարձունս, գերեցեր զգե-
րուԹիւն,,.

Այլ մի՛ ինչ տրտմեսցիս լսելով զգերուԹիւնն, զի
ոչ ինչ է քան զայն գերուԹիւն մեզ երանելի. քանզի
մարդկան գերուԹիւն յաղտատուԹենէն ՚ի ծառայուԹե
ածէ, իսկ սա ՚ի ծառայուԹենէ յաղտատուԹիւն փոխո-
խէ. և մարդկանն զրկէ ՚ի գաւառէ և յօտարուԹիւն
տանի, բայց այս գերուԹիւն արտաքս հանէ յօտարու-
Թենէ և ածէ ՚ի գաւառ ՚ի վերինն Երուսաղէմ. մարդ-
կան գերուԹիւն զրկէ ՚ի մօրէ, սա առ մայրն հասարա-
կաց ամենեցուն զմեզ ածէ. նա յազգականաց և ՚ի քա-
ղաքացեաց որոշէ, և սա առ վերինն քաղաքացիսն ածէ.
քանզի “քաղաքակից էք սրբոցն,, ասէ։ Արդ զձեզ
զայդ բան ունի։

Ա՛ման ՚ի՛ր և երդմնեցուցչացն ձայնք. ահաւորքն այ-
նոքիկ և սարսափելիք յիշեցուցանեն զհասարակաց տէրն,
զտանջանս, զպատիժս, զգեհենն յաղագս անամօԹու-
Թեան դիւացն. վասն զի օչխար անդրոշմ է երախայն,
և ամենասուն ամայի, և առ դրաց օԹևան ամենեցուն
առաջի կացեալ պատրաստաբար, աւազակաց յարձա-
կումն, գազանաց ապաւէն, դիւաց բնակուԹիւն։ Ա՛ման
զի բարւոք Թուեցաւ Թագաւորին յաղագս յոլով մեղ-
քասիրուԹեան իւրոյ զամէն տունն զայն զամայի, զա-
ռանց դրաց, զապաւինուԹիւն աւազակացն՝ ԹագաւորիՀ
ապարանս լինել. յաղագս այնորիկ առաքեաց յառաջա-
գոյն պատրաստել օԹևանին, մեզ վարդապետել և վնո-
սա զերդմնեցուցիչսն։ Այլ մեք որ վարդապետեմք, զորմն
զնարխալեաց առնեմք զօրաւորս ՚ի ձեռն վարդապե-
տուԹեանս. քանզի “Ա՛մենայն, ասէ, որ լսէ զբանս
իմ և առնէ զնոսա, նմանեսցի առն խմաստնոյ որ շինեաց
զտուն իւր ՚ի վերայ վիմի,,. զգուշագոյն արկանեմք զՀի-
մունս մինչև մերձ գայ Թագաւորն։ Այլ ուրեք աղ-
տեղուԹիւն ինչ կամ տիղմ տեսանեմք, արտաքս պե-
ղեմք. քանզի այն է սոլորուԹիւն մեղաց, ժահահո-

տութիւն և անմաքրութիւն։ Ապ զի արդ զնոցա բնութիւնն Պաւղոս ասէր. «Արբև զբեռն ծանր ծանրացաւ ի վերայ իմ. նեխեցան և փտեցան վէրք իմ,» Եթէ արտաքս պեղեմք զժահահոտութիւնն և ամբարեմք վիւղն հոգևոր. իսկ երդմնեցուցիչքն ի ձեռն ահաւորութեն ջուր խուզեն, մի գուցէ գազան, մի օձ, մի կարիճ, մի իժ։ Վանդի զինի զահաւոր զձայնն զայն լսելոյ, թեպետ և չար է գազանն՝ վտանգի, ոչ թաքչի և ոչ որջանայ, այլ ի վեր գայ և փախչի, թէպետ և ոչ կամի։

Խորժէի և միւս ինն ասել զոր ոչ խոստացայ, և հարկաւոր է ասել։ Ընդէր մեք հաւատայեալք և ոչ նուիրեալքդ երախայք. քանզի վատթար է, արդարեւ ծիծաղելի՝ պատիւ ընդունելով և ոչ զանուն պատուոյն գիտել։ Ո՞րինչ կրեցից. ի վերայ կացին ինձ գարձեալ երդմնիչքն հոգք, և գյամրութիւնս կոչէ և զբանս ձգէ առ ինքն։ Ասան այսորիկ զայս ի յառաջիկայ բանսն յայտնեմք. Յերդմանցն ի սովորութիս գարձցուք այժմ։

Ժնդակ է երդումն, ուր սիրելիք, գժնեայ և ընտասակաւ դէզ, սատակիչ անձանց, չար վէր, ծածկեալ կէզ, անյայտ ուտիչ գաղտաբար զբոյնն յոգիսն արկանէ, նեռ սատանայական, տեգ հրայեալ, սուր երկայրի, սուսեր սրեալ, մեղք անսերելիք, չարութիւ որ վճռութիւն ինչ ոչ ունի, վիհ խորին, գահավիժութիւ խիստ, որոդայթ զօրաւոր, վարմ ձգեալ, կապանք՝ լուծումն ոչ կարելով ընդունել, խեղդարկութիւն անելունելի։ Նահանջիր ինչեն այդոքիկ. և հաւատացեալք եթէ դժնդակ է երդումն և քան զամենայն մեղս չար. հաւանեցարուք աղաչեմ, և եթէ ոք անհաւանի՝ զզոյցն արդէն իսկ ընձեռնեմ։ Ո՛չ որով և ոչ մի ոք ի մեզայն վարի, զայն սխալանս նա ունի. քանզի զայլով պատուիրանաւն զանցանելով ի բաց վճարեալ լինիմք ի պատժոյն, իսկ զերդումն բազում անգամ պահելով և զանցանելով նմանապէս պատժիմք։

Մերևս ոչ իմացայք զասացեալսդ. հարկաւոր է յայտնապոյնս զնոյն գարձեալ ասել։ Նազում անգամ երդուաւ ոք գործել իրս անօրէնս, և անկաւ յանլուծանելի խեղդն. հարկաւոր լինի այնուհետև կամ պահելով զերդումն անօրինել, և կամ ոչ պահելով զնա ի սուտ երդմնութիւնն անկանել։ Ա՛ւ լինի յերկոցունց

կողմանց գահավիժումն իւն, յերկոցունց կողմանց մահ անհրաժարելի, եթէ պահեն զպատուիրանն և եթէ ոչ պահեն։ Ոչ ինչ արդեօք սատակիչ քան զյանցանսդ զայդ, յորժամ եթէ պահիցէ և եթէ ոչ պահիցէ։

Այլ զի ուսցիս թէ այս այսպէս է, և բազում անգամ անցանելով զերդմանէն միայն՝ այլ պահելով զերդումն՝ պատուհասիդ վինքեանս համարապարտս արարին, ես ձեզ պատմեմ իւն այսպիսի ասացից։ Երովդէս զծննդեանն օր երբեմն կատարէր. և զօր յորում ծնաւ՝ կամելով առնել պայծառագոյն, ի ներքս էած զգուստս Թագուհւոյն կաքաւել, ոչ գիտելով եթէ մանաւանդ ամաչեցուցանէր զնա. քանզի պարտ և արժան էր գոհանալ զմարդասիրէն Այ, զի զոչին զնա արար, զի գՀոգին ետ, զի զնա ի ներքս էած ի պարկեշտ ատացուածոցս յայոց ի տեսարան, և տեսող արար գեղեցիկ ապրարչութեանս այսմիկ և աքանչելւոյ. պատշաճագոյն էր օրհնութեամբք և գովութեամբք ի տէրն պատուել զօրն. իսկ նա անպատուութեամբք պատուեաց։ Վա՜ զի զինչ քան զկաքաւեցն է անպատուականագոյն։ Այնմ աւուր կաքաւեաց դուստր Երովդիադայ։

Ուարուք արք և կանայք օրք այնպիսի կաքաւանօք և այնպիսի երգովք զձայն ձեր պատուէք. ոչ փոքր չարիք են այնոքիկ, թէպէտ և թուի անզգանազանելի գոյ. յաղագս այնորիկ են մեծամեծ չարիք, զի կարծի անողոքշելի գոյ, և ոչ ի յոյզ նախախնամութեանն վայելէ. քանզի մեծ հիւանդութիւն՝ նախախնամութեան դիպելով շինչի, իսկ որ փոքրն թուի լեալ՝ յաղագս նորին արհամարհեալ լինելով մեծ լինի։ Ո՞ ինչ ասես, ի տուն հաւատացելոց իշխէ՞ որ կաքաւիչս մուծանել. և ո՞չ զարհուրիմ գուցէ հուր ի վերուստ անկեալ բոցակիզեսցէ զամենայն։ Ո՜ այս և առ կանայս ասեմ զի զարս ողջախոհացուցին, և յայսպիսի հեշտութեանց ի բաց տարցին։ Այնմ աւուր ահաւոր կաքաւեաց դուստրն Թագուհւոյն։ Որ՞ն եաճ, յորքան ողջախոհութիւն զկեանս մեր փոփոխեաց։ Ուարուք, հաւատացեալք, առ որպիսի փեսայ մերձենայք, որ զկեանս մեր զանամօթացեալ այսպիսի պատկառանօք և ողջախոհութեամբ և պարկեշտութեամբ կազմեաց. զի զօր ինչ Թագաւորք յայնժամ ոչ պատկառէին առնել, այժմ և ոչ վատթար աղախին որ ախորժեսցէ հանդերձել։

Կաքաւեաց յայնժամ նա, զկնի կաքաւելոյն միւսոյն ձեղ դժնդակագոյնս գործեաց. քանզի հաւանեցոյց զանմիտն զայն խոստանալ հանդերձ երդմամբ տալ նմա զոր ինչ և խնդրեսցէ: Այսպէս և զյիմարն երդուաւ առնել. զոր ինչ խնդրիցէ, վայրապար երդուաւ տալ: Եւ զինչ ևս, զգլուխ նորա իսկ խնդրել զինչ կարօտանայր, կամ եթէ զթագաւորութիւնն զամենայն: Այլ ոչ ինչ յայսցանէ նա զմտաւ եած. քանզի ՚ի վերայ կայր սատանայ զորոգայթն զօրաւոր առնելով. և յորմէ հետէ զերդուաւն կատարեր և դներ զորոգայթն և զվարսին ձգեր ամենայն ուստեք, յայնժամ ՚ի վերայ ածէր զՀայցուածն զայն, զի անխափանելի լինիցի ըմբռնութիւն: "Տուր ինձ, ասէ, ՚ի վերայ սկտեղ զգլուխ Յովհաննու մկրտչի.,: Ընդամէնն է խնդիրն և անմիտ տուրքն և ձեռասակար. երկոցուն այսոցիկ երդուանցն էր պատճառք: Եւ զինչ ևս պարտ էր առնել: Յիշեցէք արդեօք զի ասացին ևս եթէ և պահելով զպատուիրանն և զանցնելով՝ նմանապէս պատժիմք. տալ պարտ և արժան էր զգլուխն մկրտչին, այլ անըմբերելի էին պատուհասքըն. և ոչ տալ, ընդունէր զսուտ երդմանցն քամահանան: Տեսէր զկարդ յերկաքանչիւրոց կողմանց է գահավիժութիւն: "Տուր ինձ, ասէ, ՚ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի.,: Ո՛վ պիղծ խնդրոյն. և սակայն հաւանեցոյց և կարծեաց ըմբերանել զծածկին զլեզուն զայն, այլ և նա մինչև ցայժմ գոչէ. քանզի հանապազօր յամենայն եկեղեցւոջ լսէ ՚ի Յովհաննու աւետարանին աղաղակելով և ասելով "Ոչ է արժան քեզ ունել զկին Փիլիպպոսի եղբօր քոյ.,: Լհատ զգլուխն, այլ ոչ եհատ զձայնն. կարկեաց զլեզուն, այլ ոչ պապանձեցոյց զյանդիմանութիւնն: Տեսէք զինչ առնէ երդումն, զմարգարէին հատանէ զգլուխն: Տեսէ՛ր և զպատրանն, երկիր ՚ի սատակմանէն. տեսէ՛ր զբոդոգայթն, մի՛ անկանիր:

Այլ հարկաւոր է այսուհետև խնայել, զի մի խոբին լինիցի հատուցումն. հարկաւոր է այսուհետև դադարեցուցանել զձեռն և զերկաթ արեամբ շաղախեալ և զբանս յերդմնահարութենէն ՚ի լուծիւն հանգուցանել: Ոչ այս յիշեսջիք և ոչ երբեք մեղանչիցէք՝ թէ և կատարելով զերդումն և ոչ կատարելով նմանապէս

տանջիք։ Ա՛ռ են այժմ ոմք ասենն թէ իրաւացի եր-
դումն. քանզի ո՛ւր իակ են արդար, յորժամ օրինադան-
ցութիւն է. ո՛ւր իրաւացի, յորժամ ՅԱԾ արգելու և դա-
տառնես։ Այլ ներեցէք այսուհետև պատել[1] մեզ ըզ-
վերջդ. քանզի և պատանն վտանգաւոր[2] իմն է։ Դժըն-
դակ է և սուտ երդնլոյն պատուհասք և նախ քան զվար-
դապետութիւնս մեր, այլ և դժնդակագոյն յետ վար-
դապետութեանս այսորիկ. քանզի եթէ ոչ էր եկեալ
և խօսեցեալ ընդ նոսա, ասէ, մեզ ինչ ոչ ունէին. բայց
այժմ պատճառս ինչ ունին յաղագս մեղացն իւրեանց։

Ձայս և առ ձեզ ասել, թէ և ոչ մի պատասխանիք
ձեզ այսուհետև դիպիցի։ Այժմ մկրտութիւն, թէ
և սուտերդմնութիւն գոյ և եթէ զիրաւացի երդնուլն,
եթէ պոռնկութիւն, եթէ չնութիւն, եթէ զամենայն
չարութիւն, ՚ի բայ ընկենու և մաքրէ հանդերձ բա-
զում հաւատոյ[3]։ Լոյծ ձեզ և յառաջիկայն
զմաքրութիւնն զայն պահել, յամենայն ազտոյ ՚ի բայ
վճարեալք, և մեզ կարել համարձակութեան իմիք հա-
ղորդել աղօթիւք ձերովք. քանզի իշխանութիւն է ձեզ
և յաղագս վարդապետաց աղօթել այսուհետև, զի
յետ սուղ ինչ մեզ յերկնից հանդերձեալ էք երևել,
և քան զաստեղս պայծառագոյն ևս փայլել։ Լոյծ ա-
ղօթիւք ձերովք հաղորդել ամենեցուն մեզ համարձա-
կութեամբ առաջի բեմին Քրիստոսի. ընդ որում փառք
հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս. ամէն։

ԽՐԱՏ ԱՒ ՈՐՍ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԷԻՆ ՄԿՐՏԵԼ. ԵՒ ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ ՈՐ
ԱԻԵԼՈՐԴ ՁԱՐԴԱՐԻՒՔ ՁԱՐԴԱՐԵՆ ՁԻՆՔԵԱՆՑ, ԵՒ ՎԱՍՆ ՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՑ
ԱՑԼԱԶԳԵԱՑ ՈՐ ԿԱՊԵՆ Ի ՁԵՌՍ ԻՒՐԵԱՆՑ ԵՒ ՑՈՏՍ ԿԱՄ Ի ԳԼՈՒԽՍ,
ԵՒ ՁԻ ՕՏԱՐ Է ԱՑՍ Ի ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ՔՐԻՍՏՈՍԻ

Ո՛յ յառաջագոյն ասացեալսն սիրոյ ձերոյս, այժմ
նախ մերձ եղէ զպատուէն խնդրել ՚ի ձէնջ. զի ոչ թէ
վասն այսորիկ ասեմ թէ լուիցէք միայն, այլ զի յիշես-
ջիք հանապազ զասացեալսն, և զնոյն հանդերձ գոր-

1 Յօրինակին պոռնել։ 2 Յօրինակին վտառ։

ծովք տայցեք մեզ ցուցումն. մանաւանդ ոչ եթէ մեզ միայն, այլ նմա որ զանձաւելիսն մատց մերոց քննէ: Վասն որոյ և հնչումն ասի, զի յամենեցունց մեր՝ի միում հնչեսցի բանն: Այլ մի աքանչանայք եթէ զինի տասն աւուր եղելոց ձեզ եկաք խնդրել զերմանցն զպըտուղ. քանզի կարողութիւն է և՝ի միում աւուր ընդ արկանել սերմանցն և զհասկն առնուլ. ոչ եթէ յիւրմէ զօրութենէն միայն, այլ յոյ հրամանացն կարողացայ: Յայսպիսի ջանս կոչեաց զձեզ, զի ոչափ և ընդունեցայք զասացեալսն, և գործով կատարեսջիք[1]: Օ այս աւեմ առ՝ի խրատել և՝ի խորհրդակից լինել ձեզ, զի մի երբեք անգէտ լինիջիք. այլ մինչ տատ եմք, քաղցը ունելով զյոյս, զառաջինսն մեր քննեսցուք, և փութասցուք՝ի բրաբիոնն՝ զհետ երթալ վերին կոչմանն: Բաստցուք արդեօք և զայս, ըստ անուան մերում և այս մեծի պարգևացս քննեսցուք. քանզի անգէտ լինել մեծագոյն իշխանութեանս՝ ծուլագոյն առնէ զպատուողն. իսկ որք իմանանն՝ գոհացողս կացուցանէ և փոյթ գործէ: Իսկ այլք այսն և գարշելի մաքս այնչափ վայելեն յոյ պատիւն, որ ոչ և զանուանն անգամ ձանաչեն: Այլ զինչ ասեմ զայսմ պարգևացս. եթէ առ հասարակ զաղգի մերոյ իմացուք զանուն, մեծ առցուք առ՝ի յաւաքինութիւնն վարդապետութիւն և միխիթարութիւն: Իսկ մարդ է անուանս այս, և մի արտաքոյ ասք զսա սահմանեսցուք, այլ որպէս և ածային գիրն հրամայեաց:

Օ զինչ արդեօք իցէ մարդն ոչ թէ որ ձեռս և ոտս մարդոյ ունիցի, և ոչ զի բանաւոր է, այլ որ բարեպաշտութեամբ և առաքինութեամբ և առ ածն ձամարձակութեամբ ձգնի: Այս արդ վասն Յոբայ զինչ ասէ. "Այր, ասէ, մարդ ոմն քնակեալ յԱւսիտ երկրի": Ոչ զնա յայսմանէ գրէ յարտաքին սահմանաց, և ոչ դարձեալ թէ ունէր ոտս ձեռս և լայն եղնգունս, այլ զիմաստասի բարեպաշտութիւնս եդեալ ասէ. "Արդար ձնմարիտ ածապաշտ, զատեալ և մերկեալ յամենայն իրաց չարաց", ցուցանելով թէ այս է մարդ. և որպէս միւս գիր ասէ. "Արկիր՝ի տեառնէ և պահեա զպատուիրանս նորա, զի այս է ամենայն մարդ":

1 Պաւլոսին առաք. 9:

Այլ եթէ մարդն անուն այսչափ յառաքինութիւնս միսիթարութիւն ունի, բազում մանաւանդ հաւատովքն[1]: Ա՛ման այսորիկ կոչես հաւատացեալ, զի հաւատասցեն յԱծ, և հաւատովին ի նմանէ առցես զարդարութիւն, զսրբութիւն, զսրդեգրութիւն, զարքայութիւն ՚ի, զամենայն պարգեւս հոգևորս վստահութեամբ: Այլ այս ամենայն քեզ ՚ի նմանէ առաջի եդեալ, զսրբութիւն, անբիւծաբութիւն, աղօթք, զդաստութիւն և զայլ ամենայն առաքինութիւնս: Այլ զինչ ասիցեմ ողորմութիւն. թէ և բաժակ մի ցուրտ ջուր տայցես, և զայս ստուգութեամբ պահեսցէ, և յայնմ աւուր հանդերձ բազում առաւելութեամբ տացէ քեզ: Այլ այս իսկ է զարմանալի, զի ոչ միայն պահէ զբարիսն, այլ և բազմապատիկ յաւելու ՚ի տալն:

Օ՛նոյն և քեզ հրամայեաց ըստ զօրութեան քումմ աձեռնցանել զոր հաւատացարն. առեր սրբութիւն՝ բազմացո, և զարդարութիւն զոր ՚ի մկրտութենէն պայծառացոյն գործեա, և զինորհն փայլատակեա յոգիդ. որպէս և Պաւղոս արար, աշխատութեամբ և ջանիւ և յօժարութեամբ աձեղոյց զամենայն բարութիւնսն զոր և էառ: Այլ դու զայլ լեր գթութեանն ՚ի, զի ոչ զամենայնն աստ ետ քեզ և ոչ յամենայնէ զատոյց, այլ է զոր ետ և է զոր խոստացաւ: Այլ ընդէր արդեօք ոչ զամենայնն աստ ետ, զի յուցցես զհաւատս քո յանուն Նորա. զի զոր ոչ ետ, միայն հաւատացես խոստմանն Նորա: Ա՛ստ որում և ոչ եթող անդ զամենայն, այլ ետ զինորհս հոգւոյն և զարդարութիւն, զի այսու պարգեւօք թեթեւացեալ զգաւս քո և ՚ի հանդերձեալն բարւոյ յոսով հաստատեսցէ:

Ա՛ման որոյ և նոր ՚ի մկրտութենէդ հանդերձեալ ես կոչել. զի նոր քեզ լոյս ծագեսցէ միշտ, որ եթէ կամիս՝ տեսանես, ոչ երբեք շիջանի: Ա՛յս լոյս՝ եթէ կամիմք և եթէ ոչ՝ ետկեսցէ զիւրեր. իսկ լոյսն այն խաւար ոչ ետես. «Օ՛ր լոյսն, ասէ, ՚ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար ոչ եղև նմա հատու»: Այլ այսպէս աշխարհ պայծառանայ յորժամ ընդունի զծագումն արեգական, որպէս հոգիք մեր ընկալեալք զինորհս ՚ի հոգւոյն սրբոյ լուսաւորին և

1 Իմա հաւատովքն:

պայծառանան։ Այլ զի ուսանիցիս ստուգապէս զերացդ բնութիւն, յորժամ եկեսցէ գիշեր, բազում անգամ չուան տեսեալ՝ օձ կարծեմք, և տերև շարժեալ՝ իբր ՚ի թշնամւոյ փախչիմք. իսկ յորժամ օր ծագէ՝ ոչ այսպէս, այլ ամենայն զոր ինչ և է՝ այն երևեսցի։ Ոչոյն և տեսանեմք յոգիս մեր երևեալ. յորժամ չնորհք Հոգւոյն սրբոյ եկեսցէ, զխաւարն հալածէ ՚ի մտաց մերոց, և ուսանիմք զերացն ստուգութիւն, և լինիցի մեզ հեշտ և դիւրին՝ որ յառաջագոյնն ահեղ էր. ոչ ՚ի մահուանէ երկնչիմք, գիտելով ստուգիւ յայսմ ՚ի տուրբ խորհրդոյս զի ոչ է մահն մահ, այլ քուն և հնձումն առժամանակեայ. ոչ աղքատութիւն ինչ իցէ, ոչ ցաւք և ոչ այլ ինչ յայսցանէ, վասն Հայեցեալք զի յառաւելագոյն կեանս երթիցեմք, յանարատ և յանապական ստուգեալք յայսմ ամենայնէ սառամանեայ չարութենէ։

Ի՚ի այսուհետև յանցաւորս կայցուք մեռացուք, մի վասն փափկութեան սեղանոյ, մի վասն բազմակատար Հանդերձից. քանզի ոմնիս Հանդերձս պայծառս և լուսաւորս, ոմնիս սեղանս Հոգևորականս, ոմնիս փառս վերնականս, քանզի ամ ինչ Այ՚ե լինիցի քեզ և սեղան և Հանդերձ և տուն և գլուխ և արմատ։ “Ընդ՚ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ եք,,։ Ահա զիարդ եղև քեզ Հանդերձ։ Այսմիս դիտել թէ որպէս լինիցի քեզ սեղան. “Որ ուտէ զմարմին իմ, ասէ, նա կեցցէ վասն իմ,,։ Լինի քեզ և տուն. “Որ ուտէ ՚զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես ՚ի նմա,,։ Լինի քեզ և արմատ. “Այս եմ որթն, ասէ, և դուք ոստ,,։ Լինի և եղբայր և փեսայ և բարեկամ. “Այսուհետև եղբարց իմոց,, ասէ. և “Ոչ կոչեցից զձեզ ծառայս, այլ բարեկամս,,[1]. և թէ “Հաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Ած,,[2]։

Այս ամենայն դիտելով, եղբարք, Հատուսցուք պարզևս բարի գործօղին մերմ՝ Հաճելի Ճգնութիւն, ծանրութիւն զպատարագին որ ՚ի վերայ մեր զմեծութիւն. իսկ եթէ զինչ ընկալաւ ձեռնդ, և մի երբեք ընդունիր Հալկանել զոք, և մի ձգեսցես ՚ի կաշառս պատուել զդա, ամաչեա ՚ի վիրաց մերոց. տես զպատիւ ձեռինդ, և մա-

1 Պակասին տողք 4։ 2 Պակասին տողք 6։

քուր զդա յազահութենէ և ի յափշտակութենէ և յամենայնի պահեսցես։ Ա.յլ և բերանովդ զգուշացիր մաքուր պահելով զվեղուդ ի գարշելի և յանարգ բանից, ի հայհոյութենէ, յերդմանէ, ի զանցանելոյ, ի բամբասանաց, ի ստախօսութենէ և յայլոց ամենեցունց յայսցանէ[1]։

Ի հարսանիս կոչեցար, օվ սիրելի, մի և իցես աղտեղի հանդերձիւ. այլ ի յայն հարսանիսն ի միմեանց առցուք զգեստս, քանզի ի հարսանիս յայս յարդարուն կոչեցան մարդիկ. իսկ դու և թէ քան զամենայն մարդիկ աղքատ իցես, խնդրեա այլուստ պայծառագոյն ըզգեստ և մաքուր, և այսպէս երթիցես յայն հրաւէր։ Ա.յդ որ ի հոգևորական հարսանիս հրաւիրեալդ ես և յընթրիս թագաւորականս, իմա թէ յորում հասակի իցես և ըստ արժանւոյն հանդերձ պատրաստեա։ Ա՛ա նաւանդ զի ոչ գնելոյ պէտք իցէն, այլ նա ինքնին տայցէ քեզ, զի մի պատճառեսցես զաղքատութիւնդ։ Ա.յդ պահեա զհանդերձս զայս զոր և առեր. ապա եթէ կորուսանես, այլ ոչ կարիցես գտանել. զի այսպիսի հանդերձ այլ ոչ երբէք վաճառի քեզ. տես թէ որք արտաքոյ մնացին հարսանեացն, ոչպէս բախեին զկուրծս։

Ա՛ան որոյ նախ ասացի, և այժմ ասեմ և յասելոյ ոչ դադարեմ. եթէ ոք ի ձէնջ ի յանցանաց ոչ ուղղիցէ և ոչ հաստատեսցէ յանձն իւր զառաքինութիւնս դիւրաւ և յօժարութեամբ, մի եկեսցէ ի մկրտութիւն։ Ա՛անզի զառաջագոյն մեզն զամենայն կարող է ջնջել մկրտութիւնս. ապա եթէ փոքր մի և դարձեալ յանցանք, որպէս թէ ոչ հանդիպեցաք՝ ի նոյն դարձցուք, և լինի մեզ դեղն կենաց՝ վէրքս։ Ա՛րբազի մեծ է ընդ ինս, նոյնչափ առաւել են տանջանքն որք զինի մկրտութեանս մեղանչեն[2]։

Ա՛րդ եթէ հոգիդ քո նկարագրեալ է նախ քան ըզգալն ի հոգին սուրբ մկրտել. իսկ նա առեալ ջնջէ ըզչար գրեալսն ի քեզ սովորութիւն, եթէ երդումն, եթէ ոխակալութիւն, եթէ ստախօսութիւն, եթէ անարգանս, եթէ բանս գարշելիս, եթէ ծաղրածութիւն, եթէ այլ ինչ սոյնպիսիս. ի բաց լեր յայնմ սովորու-

1 Պաւլոսի տուղ 18։ 2 Պաւլոսի տուղ 26։

թենէ և մի կանխեր դարձեալ անդրէն զկնի մկրտութեանն։ Զանգի մկրտութիւնս զառաջագոյն մեղս ջնջէ, իսկ զսովորութիւնն դու ինքնին ուղղեացես. զի յորժամ տարցին զքեզ յօծումն, փայլեսցես Թագաւորական պատկերաւն, և մի այլ երբեք առցես վերս և սպիս յոր տաւս քեզ յայ գեղեցկութիւն։

Յանաքեցո արդ զբարկութիւն, չիջո զսրտմտութիւն. եթէ ոք քեզ մեղանչեցէ կամ զքեզ անարգեցէ, արտասուեա վասն նորա և մի խռովեսցիս, ցաւակից լեր և մի բարկասցիս, և մի ասասցես եթէ 'ի հոգի իմ գործեաց անիրաւութիւն. զի ոչ ոք մեղանչել կարէ հոգւոյ և յոչինչ իրս, եթէ մեք ոչ մեղանչեմք։ Այս թէ արպէս՝ ես ասացից։ Այո ոք զգոյս քո, ոչ եթէ 'ի հոգիդ մեղաւ, այլ յինչս. եթէ խցե և լինիցիս ոխակալ, դու մեղաւր 'ի հոգիդ քո, այլ ընչիցն ապականութիւն ոչ ինչ վնաս գործեաց, մանաւանդ թէ օգտեաց իսկ. ապա եթէ դու զբարկութիւն ոչ թողեր, տալոց ես անդ ըզպարտաւորութիւն յիշաչարութեանն։ Համբաւեաց զքեզ ոք և անարգեաց, ոչ ինչ մեղաւ հոգւոյդ քումմ, այլ և ոչ մարմնոյդ. իսկ դու եթէ ընդդիմադարձեալ բամբասեցեր և անարգեցեր, նմա դու ոչ արարեր վնասս, այլ կորուսեր զհոգիդ քո։ Այս զայս ամենեցուն ձեզ պարտ է իմանալ՝ եթէ քրիստոնեի և հաւատացելոյ հոգւոյ ոչ ոք է որ մեղանչել կարէ, և ոչ ինքն սատանայ։

Այս ոչ միայն այս է աքանչելի զի այլոմ անձեռնադրկելի արարեալ է զմեզ Աստ և 'ի խորհրդածութենէ անբմբռնելի, այլ զի և յաւաքինութեան գործս աջողակս պատրաստեալ է զմեզ. և արդեւ ինչ ոչ է եթէ կամիցիմք, եթէ աղքատ իցեմք, եթէ տկար մարմնով, եթէ անպիտան 'ի մարդկանէ, եթէ աննշանք 'ի հանդէսս, եթէ ծառայք։ Զանգի ոչ աղքատութիւնն, ոչ հիւանդութիւն, ոչ մարմնոյ տկարութիւն, ոչ ծառայութիւն և ոչ այլ ինչ այսպիսի խափան լինի երբեք։ Այս զինչ ասեմ աղքատ կամ ծառայ կամ անշնան. թէ և 'ի բանտի իցես, և ոչ այն երբեք արգել ինչ լինիցի քեզ առ 'ի յաւաքինութենէն։ Այս թէ զնարդ՝ լսեր։

Տրամեցոյց ոք զքեզ և բարկացոյց, թող նմա զբարկութիւնն. միթէ յայս՝ կապանք կամ աղքատութիւն կամ անպիտանութիւն արգել լինիցի։ Այս զինչ ասեմ

արդել. նա և օգնէ իսկ և գործակից լինի առ ի ցանքեցուցանել զնախանձ սրտին: Տեսեր զայլ ոք ի բարի կայեռնս, մի՛ զբարկիս, և ասա դարձեալ ոչ արգել լինիցի քեզ աղքատութիւն: Դարձեալ յորժամ պարտ իցէ քեզ յաղօթս կալ և հակել, զուարթամիտ լեր և այնպէս առնիցես: Չեզ և հանդարտ կամիցիս լինել, միշտ զամենայն զգաստութիւն և զպարկեշտութիւն ածզնաւ, և ոչ այսպէս խնդրէ արտաքոյ օգնականութիւն: Յոր այս մանաւանդ բարձր առաքինութիւնս ոչ մեծութեան, ոչ զօրութեան, ոչ փառաց և ոչ այլ ինչ յայսցանէ ունիցի կարիս, բայց միայն ոգի մաքուր և սուրբ, այլ առաւել ոչ խնդրէ:

Տես արդ զնորհացս առատութիւն և զոր ի սմանէ լինիցի քեզ. եթէ հաշմ ոտիւք ոք իցէ, եթէ հատեալ ձեռօք, եթէ կոյր աչօք, եթէ ախտաժէտ մարմնով, եթէ ի յետին տկարութիւնս և ի հիւանդութիւնս անկեալ իցէ, ոչ ինչ յայսցանէ զպարգևական ընդոհս արգելուցու. հոգի միայն խնդրէ սրբասէր լի հաւատով, որ յօժարութեամբ ընդունի:

Յարտաքին զինուորութիւնս զմարմնոյ չափ գտեսակ և զանձին բարեձև զհասակ և զքաջութիւն քննեն և խնդրեն որք հանդերձեալ են ածել զնոսա ի զինուորութիւն: Յոր ոչ միայն այս է պիտոյ, այլ և ազատութիւն խնդրի, քանզի զծառայս արտաքսեն յայսմանէ. իսկ երկնաւոր թագաւորն ոչ ինչ յայսցանէ խնդրէ, այլ և զծառայս ընդունի և խառնէ յիւր զինուորութիւնն զծերս և զախտաժէտս, զկաղս և զկոյրս և զմեռեալն որ հաշմ է մարմնով, և ոչ ամաչէ. զինչ քան զայս մարդասիրութիւն լինիցի և քաղցրութիւն: Այս զոր ի մէնջ պարտ է լինել՝ զայն խնդրէ. իսկ նոքա՝ զոր ոչ է ի մէնջ: Դարձրահասակ և ցած ոչ է ի մէնջ, ծերբածեր և մանուկ և կին և այլ այսպիսիք. իսկ խոնարհ և հանդարտ կամ ընդունական և որ ի սուտ մերձ է՝ մերոյ բնութեանս է: Յոր զայս միայն խնդրէ ի մէնջ ածզ, որոյ մեք եմք տեարք, և մանաւանդ յիւրաւի իսկ. զի ոչ եթէ յիւր պէտս ինչ, այլ վասն մեր բարեգործութեան կոչէ ի շնորհն, իսկ թագաւորք վասն իւրեանց սպասաւորութեան. նոքա ի պատերազմ մտանեն սպառազինեալք զպայական, իսկ այս մարտ հոգևո-

բական ։ Որ հանդերձեալն է՛ի տեսական ժողովէն յայն ածիլ, ոչ նախ զնա՛ի պատերազմ կարգեն՝ մինչև քաջ զօրագլուխն և առաջի ամենեցուն աչաց ածիցեն զոմն վեցիւղ թէ մի օր զնա անգոնիցէ. և ոչ է այս հոգևոր, այլ մարմնական է մարտն, վասն որոյ և աշխարհ ըստ ազգի խնդրեն ։ Իսկ այս ոչ է այսպէս, այլ նորին հակառակն. ոչ է մարտնչել ձեռօք յորժամ՛ի պատերազմ մտանիցեմք, այլ իմաստասիրութեամբ հոգւոյ և մտաց առաքինութեամբ այլ ազգ յօրինի քան զոր անդ զօրապետք առնեն. ոչ այնպէս ածէ զոք և ասէ, այլ ըզհակառակն դուէ մեծապէս՝ եթէ ամենայն մարդիկ և դեւք հանդերձ սատանայիւ կայցեն դմա ասօղ, ոչ հանից զդա և ոչ պիղծ վարկայց, այլ յոսոխաց այսոց զատուցեալ և՛ի չարեաց ազատեալ՝ այսպէս ածէ՛ի պատերազմ ։ Ընդ զօրավար ոչ գործ վճարէ ընդ պատերազմողն առ՛ի յաղթութիւն, այլ կացցէ՛ի միջին միայն. իսկ աստ զօրապետս բարեպաշտութեան մարտակից լինիցի և օգնական, և մեծակից մարտնչելով ընդ սատանայի ։

Ոչ այս միայն է աքանչելի զի Թողու զմեզս մեր, այլ զի և ծածկէ և ոչ յայտնէ և՛ի լոյս ածէ, և ոչ հարկէ զոք գալ՛ի մէջ հանդիսի և ասել զյանցանս, այլ ինքեան միայն պատասխանի առնել հրամայէ և առ նա խոստովանել ։ Իսկ արտաքին դատաւորք թէ զոք ըմբռնիցեն կողոպտիչ աւազակ կամ տնահատ և խնդրեն՛ի նմանէ ասել զյանցանս և Թողուլ նմա զտանջանս, ամենայն յօժարութեամբ ընդունելոք զայս, զի յօժարութիւն փրկութեան հայելով և զամենեն արհամարհելով. իսկ աստ ոչ է այսպէս, այլ Թողու նախ զյանցանս և ոչ առաջի մարդկան հրապարակել. այլ զայս խնդրել միայն, զի Թողութիւն առցէ ։ Ցեսէր զմեծութիւն պարգևիս ։ Օ՜ լսող ոչ իցէ այս գաղտնի, նա՛ի բարեգործէն մեզ դիւրաբաւական Համարի զոր՛ի միջոյ վկայութիւնն միայն. մեք՛ի հաշտ առնել զնա զայլ խնդրեմք վկայք առ՛ի ցոյց առնելով աքանչանալ ։

Ընդ նմա միայնոյ զգաստասիրութիւն յուցցուք և զոր՛ի միջոյ զամենայնն ։ Եւ նախ քան զայլ գնացս վարուց պղերգուս մեր սանձեսցուք՛ի բազմախօսութենէ. զի “որ հանապազ բարբառի, ոչ ձողպրի՛ի մեղայ ,, ։ Եթէ կա-

միջոս օգտակար ինչ ասել, բայց զչքնաղդ. ապա թէ ոչ կարի յօգուտ իցէ քանն՝ լռեա։ Ի նստել և ի գոր-ծել ձեռաք քո՝ սաղմոսեա. այլ եթէ ոչ կարիցես բե-րանովդ պաշտել, ի միտդ արասցես զպաշտօնն. մեծ խօտակից են մեզ պաշտամունք սաղմոսաց, և աստ ան-վտանգս ապրեցուցանէ զհոգիս մեր։ Այլ նոցա է այս, ասեն, որք ի վանս նստիցին։ Այլ չէ այդպէս. ոչ եթէ տեղին իցէ աջողակ, այլ օրինակ ստուգութեան հոգւոյն և բարուցն համեստութիւն և բարեմտութիւնն բերէ զայս։ Պաւղոս յարութեստանոցս զարուեստան առնելով, այլ յիւրոց առաքինութեացն ոչ ինասեցաւ։

Ա՛ի դու այսուհետև՝ ասիցես՝ զինդրդ կարիցեմ այս-պէս լինաստասիրել ձեռարուեստ գոլով և աղքատ. քան-զի մեծութիւն է խափանիչ գործոյ բարեաց, իսկ աղ-քատութիւն մեզ է ի պարկեշտութիւն յաջողակ. որ-պէս զի մեծութիւն որ ոչ ի միտ առնուցու, արգել և խափան լինի։ Յորժամ զբարկութիւն պարտ է ած-զուլ, յորժամ շինօրհնել զչարութիւն և զնախանձ, յորժամ արտաքսել զսրտմտութիւն, յորժամ աղօթս մատուցանել, յորժամ ի հանդարտութիւն և ի հե-զութիւն ածել, և ի զգաստութիւն և ի սէր փոխար-կել, իսկ աղքատութիւնն ոչ լինի արգել, այլ և պատ-ճառ այսմ ամենայնի. զի ոչ արծաթոյ աստ պէտք են, այլ ուղիղ վարուց և բարի բարուց ցուցանելոյ։ Այլ ողորմութիւնս առնելոյ պէտք են ընչից. սակայն և սա չաղքատութեան առաւելապէս պայծառանայ. զի և որ զերկու լումայսն ած ի գանձանակին, քան զամենայն մարդիկ աղքատ էր, և ամենեցուն գեր ի վերոյ եղև։

Այսուհետև մի զմեծութիւն հարստութեան մեծ կարծեսցուք, և մի զոսկի քան զկաւ մեծարդոյ ինչ վարկցուք. քանզի նիւթոյ պատիւ ոչ ի բնութենէ իւ-րեանց, այլ ի մերոյ մտաց է։ Իսկ եթէ քննեսցէ ոք, երկաթ քան զոսկի կարեւոր է. քանզի ի կենցաղոյս պէտս ոսկի ոչ լինի մեզ ի տեղի երկաթոյ, այլ երկաթ բազում և ազգի ազգի պէտս գործոյ կազմէ մեզ և բիւրս արուեստից առ ի գիտել կատարէ։ Այս զինչ ասեմք զոսկւոյ և զերկաթոյ առ իրեարս զընտրութիւնս. քան զազամգին քարինս՝ ի քարանց լոկոց ունիմք զպէտս. յայնց ականց ոչ երբէք լինի մեզ օգուտ, իսկ յայսցա-

նէ տանտէրն բնակարանս տանից և պարիսպս և քաղաքս կացուցանեմք։ Ոչ դու ցոյց ինձ եթէ զինչ օգուտ ունիցիս ի մարգարիտսն յայն, յորժամ զգենուս հատս մարգարտի մեծագինս, և բիւրք աղքատաց սովագնեալս տագնապին, որում ասես պատասխանուցս արժանի իցես կամ քաւութեան։

Կամիս զարդարել զպատկերդ քո. մի մարգարտօք, այլ զգաստութեամբ և պարկեշտութեամբ. այսպէս հնար. հալի տեսանէ այր քո զերեսս քո. իսկ զարդն այն ի նա խանձորդութիւն և ի կասկած ածցէ, ի թշնամութի և ի հակառակութիւն։ Իսկ ողորմութեան և զգաստութեան զարդն զամենայն չքար կասկած լուծանէ, և քան զամենայն զգեստս պայծառագոյն երևեսցիս քեզ նակչաց քոց. մի ոչ այսպէս գեղեցկութիւն բնակութեանս զուարթ առնէ զպատկերդ, որպէս տեսակ հեզութեան և կացք և գնացք պարկեշտութեան։ Կին որ որչափ գեղեցիկ իցէ, առանց այսոցիկ առն խրտմ քան զամենայն որ գարշելի երևեսցի. իսկ որ ոչ ունիցի կին վայելուչ, և ըստ համեստութեան գութ ունի առնս այր իւր, քան զամենեսեան գեղեցիկ երևիցիմն. մի ոչ ի տեսակէ բնութեանս, այլ ի կացից կենաց լինի վճիռս։ Գեղեցկացո զպատկերդ քո խմաստութեամբ ի սէր առն քո. խոկա միշտ յիմաստասիրութիւն, ի զգաստութիւն, ի հանդարտութիւն։ Ոչ այս է վարք առաքինութեան, այսինչ ոչ եթէ զմարդ միայն, այլ և զՔրիստոս տակս հաձելի քեզ առնել կարող ես. այսինչ և զնոյն ինքն զնա ուրախ առնես գովաբանեալ ի կեանս քո. և յորժամ նա ընդունի, և առն ծագէ ընդունել։ Կանգնի եթէ իմաստութիւն և երկիւղ մարդոյ լուսաւորէ և զուարթ առնէ, բազում մանաւանդ առաքինութիւնք պայծառ և լուսաւոր առնէ զպատկերն կնոջ։

Իսկ եթէ կարծիցես՝ եթէ մեծ պատիւ է զարդս այս, ասա ինձ, զինչ օգուտ լինիցի քեզ մարգարիտս այս ի յաՀեզական յաւուրն յայն. և զինչ պարտ է ասել զօրն զայն, մի և հասեալ ժամանակս զայս ամենայն ցուցանել քեզ։ Յորժամ զթագաւոր կամեցայք անարգել, և ի գատաստանս ածայք և հանդիպեցայք վերջին հեղութեան, յայնժամ մարք և կանայք զվերուին զգեստս պայծառս և զոսկեհուռս ի բաց դնելով, և զմարգա-

բիտա և զամենայն զարդս զսակեղէնս, լակ և գծուծ զգեցեալք ձորձա, և մնիխիր ՚ի վերայ սփռեալ և առ դուրս գտաւորին Հոլոֆեռնէսի՝ այսպէս գտատպարտողաց եւ լեհեիք։ Եւ յորժամ յայսմ գտատտանի ոսկի և մարգարիտ և զանազան զգեստք մնային և բազում չարիս յառնելոյ[1], ապա մնասանդ յանկաշառ և յահեզական վճռին լինիցի այս։ Օ՛ինչ ունիցիս ասել, ասա ինձ, յորժամ Թագաւորն կոչէ զքեզ վասն այսր մարգարէի և ոսկւոյ, և ածէ ՚ի մէջ զաղքատս որք սովոք ապականեալք են, որոց պարտ էր զՏեառնէն տալ կամ դէթ տատանորդս բաշխել նոցա։ Ա՛յդ ասեմ և զայս, Թէ և Հանապազ գոյր վայելեալ յայսմիկ, սակայն ՚ի մահու ՚ի քաց կամք. իսկ առաքինութիւնք լի է ամենայն զգուշութիք, և փոփոխումն և անկումն ոչ ունի. այլ աստ զմեզ զգուշութիք պահէ և անդ մծատկից լինի։

Ասեմ ստանալ մարգարիտս և մեծութիւն որ ոչ երբէք անցանէ. զարդ քո զամենայն մերկացիր և տուր ՚ի ձեռս Քրիստոսի աղքատաց. նա պահէ քեզ զամենայն մեծութիս, և յորժամ յարուցանէ զնարմին քո՝ յայնժամ առաւել տացէ քեզ մեծութիւն և զարդ և մեծազոյն Հանդերձս բազում պայծառութեամբ, մինչ զի անցաւորս այս գծուծ և այսն երևեսցի. իսա զքոյին Հաճոյական խորհուրդս և մի սխալեսցիս։ Ա՛յսն ևր ստանաս զզարդս զայս. ապաքէն զի չուանամանք և պըղընձագործք և որք ՚ի փողոցս նստիցին տեսցէ՞ն և սքանչասցին։ Ա՛ն ամաչես և պատկառես նոցա ցուցանել, և զոչս անարժան Համարիս ՚ի խօսս՝ վասն նոցա զայս ասեմեայն առնես. և որչափ ծաղր այսն իցէ ցոյցս այս։ Ա՛ծ զմտաւ և յիշես զձայնն զայն զոր ասացեր յօրն մկրտութեան. Հրաժարեմ ՚ի սատանայէ, և որ ՚ի կարգին է։ Ա՛նզի միշտ խռովութիւնք և ամբոխ Հոգւոյդ և զարդ մարգարտին և Հրապարակ սատանայի։ Ա՛նէր ասկի, ոչ զի զմարմնդ կապեսցես, այլ զի զաղքատս զգեցուսցես և կերակրեսցի։ Հանապազ ասասցես՝ եԹէ Հրաժարեմ ՚ի քէն սատանայ. այս ձայն եղիցի քեզ պահապան վեՀապոյն, եԹէ գործովք ցուցանիցես զնոյն։

Օ՛այս և ձեզ որ խորՀրդածեալդ կք գալ ՚ի մկրտու-

1 Պահպանն տողք 2։

թիւն՝ արժան է ասել. այս ձայն պայման է առ տէրն քո։ Այլ որպէս մեք յորժամ ծառայս կամիցիմք գնել, նոցա առաջ ի ծառայութիւն հանդերձեալ են՝ հարցանեմք եթէ զօրանայք ծառայել և կալ ի կամս մեր, այսպէս և Քրիստոս առնէ. յորժամ ի ծառայութիւն հանդերձի ածել զքեզ և առ իւր առնուլ, նախ հարցանէ եթէ կամաս քո կարէս զառնութիւն թողուլ և զիաստութիւն և զվիսութիւն. և զայս ուխտիւ առնու ի քէն, ոչ եթէ ըստ իւրում կարեաց է տէրութիւն նորա։ Այլ զգոյշ լեր ով մարգասիրութեանն. մեք նախ քան զառ զքինն՝ հարցանեմք ընդ որս գնել կամիցիմք, յորժամ յանձն առցեն կամաւ զոր հարցանեմք՝ ապա տամք զքինն. իսկ Քրիստոս ոչ այսպէս, այլ զքինն տուեալ վասն մեր ամենեցուն զպատուականարիւնն իւր, «Ինոց գնեցայք», ասէ, և ոչ այսպէս զմեզ ակամայ հարկէ ծառայել նմա. եթէ ոչ առնուցուս, ասէ, ինարհս չինեն և ոչ զանձն քո կամիցիս գրել տէրունական, ոչ հարկեմ և ոչ նեղեմ։ Այլ մեք մանաւանդ ոչ կամիմք չար ծառայ գնել. և եթէ գնեմք չար, ոչ կամօք գնեմք և այսպէս տամք զքինն. իսկ Քրիստոս գիտէ զամենայն, անպիտան ծառայս գնէ և անօրէնս, և այնպիսի ծառայի այնքան զօրաւոր գինս տայ. և մանաւանդ բազում աւետելութեամբ, զորոյ զմեծութիւն՝ ոչ բանիւ և ոչ մտօք ոք կարացեալ գիտել, ոչ եթէ զերկիր տայ և զծով, այլ որ ի վեր է քան զամենայն զանձն իւր ետ, և այսպէս գնեաց զմեզ արեամբն իւրով։[1] Այլ զկնի այսր ամենայնի ոչ վկայս մեզ և ոչ ձեռագիր ինդրեաց, այլ բաւականացաւ նուազ ձայնիւ զոր ասեմք յօժարութեամբ մտաց մերոյ՝ հրաժարեմք ի քէն սատանայ, և առնումք այսու զամենայն։ Արդեօք զայս հանապազ ասացուք՝ հրաժարեմք ի քէն սատանայ. զայս կտակ ուխտի տալոց եմք անդ։

1 Յաւելու օրինակն մեր զհատուածս զայս, որ չկայ ի յոյնն. Եւ առաքել նա արքեալ, էի խնամարհեցաւ յերկինէ որ էնն կակիչ հօր, և էաւ մարդին ծառայի ըստ բնութեան մարդկան. պմարդինն ածաղոյց և վասն մեր խաչեցաւ ածմարհուն խրով, և գծառայս ապաքէց։ Իսկ ած և ածմ, ոմն ըստ բնութեան խաչեցաւ և ոմն անարատ բնութեամբ ի հրեն գլարատանս արատ բնութեամբ։ Այսպէս էպ գին ծառայից որ պարհաւրեցուանք գլուղն. այսպէս գնեաց գմեզ։

Ա՛րդ հրապարակ սատանայական է տեսիլ Հանդիսի և կառավարութիւն և ամենայն մեղայ տեսակ, այլ և խորհուրդ աւուրց, յորոց չամենեցունց պարտ է ձեզ հրաժարել։ Բազում անգամ եկեսցէ որ՝ի տուն իւր և տեսանէ մարդ օտար, անտես կամ կրօնաւոր[1], ասէ անդէն՝ եթէ այս եղև ինձ սիրելոյն չարեաց։ Ա՛յս է հրապարակ սատանայի և հրապոյրք կորստեան. քանզի ոչ եթէ Հանդիսումն մարդոյ չար առնէ զօրն, այլ որ՝ի մեզ կայ։ Յորժամ ելանես՝ի տանէ քումմէ, ՚ի մի ինչ իրաց պահեսցես զքեզ, զի մի՛ Հանդիպեսցի քեզ մեղք. այս է որ գայթակղեցուցանէ զքեզ, և առանց այսր և ոչ սատանայ կարող է ինձ պատճառել քեզ։ Օ՛ինչ ասիցես. մարդ տեսանես և նախատեսս և խորես և զսատանայական զվերս ոչ տեսանես թէ արդէն պատերազմի ընդ քեզ, որում չես ինչ մեղանչական. և դու զիաւրդ կացուցանես քեզ Թշնամի զեղբայրն, վասն որոյ և ոչ մի ինչ ունիս պատճառս իրաւանց։ Ա՛րդ ած զվհշնամին սիրել հրամայեաց, դու և զոր ոչն է մեղանչական քեզ՝ Թշնամի անուանես, և ոչ իմանաս եթէ որչափ ծաղր իցէ այս և որչափ ամօթ, մանաւանդ թէ որչափ վտանգ։

Ա՛սեմ և այլ ծաղրական քան զայս. և ընդ ձեր առաջեմ և պատկառիմ, այլ հարկիմ ասել վասն ձերոյ փրկութեան։ Ա՛թէ հանդիսի կոյս, ասէն, եղև օրն առանց գործոյ. ապա եթէ պատնիկ հանդիսի, աջողակ է, ասեն, և ընդունելի և լցեալ բազում Հոխութեամբ։ Ա՛յլ մի, աղաչեմ, վասն այսր ծածկեցէք զերեսս ձեր և յերկիւղ իմանարհեցարուք. բայց մի այժմ բանիւք միայն, այլ և գործովք ցուցանիջիք։ Ցես աստ թէ արդէն սատանայ թագուցեալ է զնենգութիւն իւր, զի՝ի ըզգաստութենէ դառնամք, և ուստի կորուստ է՝ այնմ հանդիսիմք։ Ա՛թէ ոչ լաւ՝ի Քրիստոսէ զի ասէ. “Ով հայի՝ի կին մարդ առ՝ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա՝ի սրտի իւրում.,,։

Ա՛յս տեսանեմ զամենս ոչ զարձեալ յայսմ գործոյ. ըստ այսմ քննութեան խորհի սատանայ այլ Հանապազ հաւ ածել զնոսա՝ի մեզ։ Կանայք յերկունս մերձեալ՝ զդահեկան զՔղեքսանդրի զնակեդոնացւոյ կամ զդրամ

1 Յոյնն կաղ։

'ի գլուխս և յոտս կապեն։ Ո՞ր են յոյսք մեր, ասաս ինձ, որ զկնի խաչին և մահուն տերունական՝ 'ի հելլենացի Թագաւորին պատկեր ունիմք զոյս փրկութեան։ Ո՞չ գիտես Թէ որչափ ուղղեաց խաչն Քրիստոսի, ըզմահ քակեաց, զմեղս շինջց, զդժոխս աւարեաց, զդեմ եբաց, զսատանայի զօրութիւնն եկոծ, և մարմնոյ առաջնութեան ոչ է արժանահաւատալի. զի եզերս ամենայն յարոյց, և դու 'ի նա ոչ համարձակիս, և որո՞ւմ արժանի իցես ասա ինձ։ Ո՞չ եթէ կապես միայն, այլ և երգով 'ի նա մերձեալ՝ զդրայիցդ[1] արբեալ և խայտառակեալ մուծցես 'ի տուն քո։ Այս ոչ ամաչես և ոչ պատկառիս, յետ այսչափ իմաստասիրութեան յոյս մերձենաս 'ի չարաչար պատրանս սատանայի։ Ինչ յորժամ եկեալ խրատեիք զնոսա, ակն ունին պատասխանել. ասեն. քրիստոնեայ է կինն որ զայս երգէ. և Թէ չէ այլ ինչ երգել, բայց միայն զանուն ՅՍ։ Ա՛ան որոյ մանաւանդ ասեմ զայս և դառնամ 'ի նոցանէ՝ որ զանուն ՅՍ յանարգանս խառնեցին, որ ասեն Թէ քրիստոնեայ է և զհելլենացւոցն ցուցանէ. նա և դեռ զանուն ՅՍ բարբառին, այլ սակայն դեռ են, և այսպէս ասէին ընդ Քրիստոս. "Կխեւիք զքեզ ով ես սուրբդ ՅՍ,. այլ սակայն ըմբերանեաց զնոսա։

Ա՛ան որոյ աղաչեմ, 'ի պատրանացս յայսցանէ մանրբեցարուք, և որպէս ղգաւազան զբանս զայս ունելով։ Ա՛չ որպէս ոչ է պարտ առանց կօշկի և հանդերձի ելանել 'ի փողոցս, այնպէս և առանց բանիս այսմիկ մի երբեք ելանէք արտաքս. այլ յորժամ հանդերձեալ ես ելանել ընդ սեամն դրան քո, նախ զայս բարբառեա զբանս. հրաժարեմ 'ի քէն սատանայ, և որ զկնի այսրիկ, և դասեալ եմ ընդ Քրիստոսին և խոստովանիմ միաբանեալ ընդ նմա։ Ա՛չ մի երբեք առանց ձայնիս այսորիկ ելցես. սա եղիցի քեզ գաւազան, այս զէն, այս աշտարակ անյաղթելի։ Ո՞չ յոյս բանիւս և զխաչն նկատրեա 'ի վերայ պարանոցի քումմ և պատկերի քումմ։ Ո՞չ ոչ եթէ մարդկան միայն հանդիպիս անշնաս, այլ Թէ և նա ինքն սատանայ հանդիպեսցի քեզ՝ ոչ կա-

1 Յունական ձայնիւդ վարեալ Թարգմանչին, փոխանակ ասելոյ զպատառանս։

ըն վերսեալ քեզ յորժամ տեսանէ զքեզ այսու սպառազինութեամբ զարդարեալ և ամրացեալ։ Այս պես զանձն քո արդէն պարտ է խրատել, զի յորժամ գինեքն առցես, յայնժամ պատրաստական[1] գինուոր լ֊ցես Քրիստոսի, և կացուսցես յաղթութիւն ընդդէմ սատանայի, և լինիցես հանճարձակ յաղթել նորին երևմանցն և կալ հաստատուն յամենայն վտանգս, աստէն առնուլ զոհութիւն ի մարդկանէ, և յայնմ ի կեանս զարդարութեան պսակն։ Որում լիցի ամենեցուն մեզ հանդիսիլ շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մեր֊ոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ԱՌ ԱՑՆՈՍԻԿ ՕՐՔ ԽՆԴՐԵՆՆ ԸՆԴԼԸ ՈՉ Ի ՄԻՋՈՑ Ե ԲԱՑ ԵՂԵԻ ՍԱՏԱՆԱՑ, ԵՒ ԹՔ ՈՉ ԻՆՉ ՋՄՆԶ ՎՃԱՆԴԼ ԵՒ ՎԱՏՆԶ ՆՈՐԱ ՁԱՐՈՒԹԻՒՆՆ ԹՔ ՋԳՈՒՇԱՑՆԱՑՑԵՄՔ, ԵՒ ՑԱՂԱԴՍ ԱՊԱՇԱԻԱՑՆԱՑ

Խոհակ ցանկացաւ երբեմն Ձէշ ի ձեռաց որդւոյն ուտել, և զորդին յորս առաքեաց ի տանէն. բայց այս Խոհակ փափաքելով Ձէշ ի մերոց ձեռացս ընդունել, ոչ զմեզ ի տանէն արտաքս առաքեաց, այլ ինքն առ մեր սեղանս ընթացաւ։ Ո՞ քան զայս բարեգութ լինի֊լի արդեօք, ո՛ խոնարհ, ո՛ այսքան ջերմ ցուցանել զսէրն արժանի արացէ և այսքան գինջանել ներեացէ։ Յաղագս այսորիկ և մեք զձայնիս այնգութիւն և զգօրութիւն աշխատութեան առաջի արկանեմք յառաւօտին խօսից, տեսանելով զՀայրենի դէմս՝ մուռացաք վաղվաղակի զդանդաղումն, թևաւորք եղեաք հեշտութեամբ, տեսաք զպայծառ զալիսս, և լուսով լցան անձինք մեր։ Այսո֊ր այսորիկ հանդերձ յօժարութեամբ զսեղանս մերձ գնեմք, զի կերեսաւ՝ զմեզ օրհնեսցէ։ Այլ է աստ գաղութիւն և նենգութիւն որպէս յայնժամ. այլ ոմն հրամայեցաւ ի ներքս բերել. և ես բերի։ Արդ օրհնեա զմեզ, սո՛ւրբ Հայր, օրհնութեամբ հոգևոր, զոր ա֊մենեքեան աղաչեմք առնուլ միշտ, որ ոչ քեզ միայն,

1 Յօրինակին պարպան. եդաւ ըստ յունականին։

այլ և սոցա ամենեցուն պիտանացու. աղաչէ զՀաստատակաց ամենեցուն մեր տէրն յերկայն ձգութիւն կատարելոյ զկեանս քո հաստատեալ. վասն որի այս ինձ և սոցա քան զքօղ երկնի պատուականագոյն և հարկաւոր է:

Այլ ժամ է այսուհետև արդ գնել զսեղանն: Այո զինչ են այսոքիկ. նշխարք յառաջագոյն ասացեալսն ձեռամբ սիրոյդ: Ո՞ան զի գեռ ևս տակաւին որ յաղագս սատանայի բանն էր շարժեալ, յառաջագոյն զերկուս զատուրս խօսեցաք, զոր առաւօտուց առ՝ի խորհուրդ ածեալն ասացաք, յորժամ յաղագս հրաժարելոյ և հեռանալոյ խօսեցաք ընդ նոսա: Այս առնեմք իբրև ոչ եթէ հեշտալի ինչ մեզ որ յաղագս սատանայի բան իցէ, այլ զի զգուշագոյն մեզ վասն սատանայի վարդապետութիւնն լինի: Վասնզի թշնամի է և պատերազմող. մեծ ամրութիւն է զթշնամեացն գիտել յայտնապէս: Այսպէս յառաջագոյն եթէ բռնութեամբ ուներ և ոչ հարստութեամբ, ոչ հարկաւորել և ոչ բռնադատել զոք. քանզի եթէ այս էր, զամենեսեան արդեօք էր կորուսեալ. և այսոցիկ առակ ածաք զկոյսն, յորս ոչ կարացին յանդգնել գևքն նախ քան զՀրամանն տեսանէն, զանդեայն Յոբայ և զՀօտեն. զի և ոչ զնոսա յանդգնեցաւ ապականել սատանայ մինչ՝ի վերուստ զՀրամանն կառ: Այդ մի զայս նախ առաջին ուսաք եթէ բռնութեամբ մեզ ոչ տիրէ և ոչ հարկաւորութեամբ: Այլ երկրորդ զկնի այսոցիկ յաւելի եթէ և խաբէութեամբ ունելով և ոչ այնպէս յարատեւ յաղթող լինի. և դարձեալ զնոյն ինքն զըմբիշն զՅոբ՝ որում հակառակ բիւր մեքենայս շարժեաց՝ և ոչ այնպէս հերքեաց, այլ և պարտեալ և ս՝ի բաց գնաց:

Այժս և մնդիր նուազ այլ է այսուհետև: Այս ոք իցէ այս: Ո՞ի թէպէտ և ոչ բռնութեամբ տիրէ, ասէ, այլ պատրանօք, և այնպէս լուսագոյն էր զնա ապականել. քանզի թէպէտ և յաղթեաց Յոբ, այլ խաբեցաւ Ադամ և մոլորեցաւ. և եթէ բարձեալ էր՝ի միջոյ միանգամայն, ոչ Ադամ ընկճէր երբեք. իսկ այժմ կալով միտալով յաղթի՝ի միջոկ ումեքէ և հերքեի զբազումս. յոլովք և յաղթեն նմա, այլ բիւրուց և նա յաղթէ և պատրէ. եթէ՝ի բաց էր բարձեալ զնա՝ի միջոյ, ոչ արդեօք և ոչ բիւրքն կորնչէին:

Ա՛ւ արդ զինչ առ այս ասասցուք. եթէ յաւէտ պատուականագոյնք են քան զյաղթահարեալսն յաղթողքն, թէպէտ և ամենք յոգունք և կկոք սակաւք իցեն. քանզի "Լաւ է մի որ առնէ զկամս տեառն քան զբիւր անօրէնս,, : Երկրորդ անգամ եթէ 'ի բաց բարձեալ էր դիմամարտն այն որ յաղթողն լինելոց էր, դժուեալ լինէր յաղթեալս նոցա: Վասնզի եթէ թողցես կալ միաւ հակառակամարտին, պղերգացեալքն ոչ յաղագս առաքինեացն, այլ վասն իւրեանց ծուլութեանն դրժեն. և եթէ 'ի բաց բառնաս զհակառակորդն, առաքինիքն յաղագս ծուլացելոցն ՚ի նահ կրթուեալ, զի և ոչ ևս արդեօք զիւրեանց ցուցանիցին զօրութիւն, և ոչ պատկառին Հանդիպելոյն:

Վերեւս ոչ արդեօք իմացաք զնոսացեալս. Հարկաւոր է այսուհետև յայտնագոյն ասել զարձեալ: Երկուցի մի որ ընդդիմամարտ, լիցին և երկուք ըմբիշք ընդ նմա մըրցել Հանդերձեալք, և այն ըմբիշք երկոքեան յօրոմայնամարտութենէ եղիցին ապականեալք, պղերգք և տկարք և անջիւղք. այլ որ ուրեմն փոյթ, քաջառողջ, 'ի հանդիսարանին վարժեալ, բազում կրթութեամբք զամենայն զմարտին որ 'ի նահատակութիւնն է ցուցանելով: Արդ եթէ 'ի բաց բառնաս զընդդիմամարտն, զո՞ր 'ի նոցանէ թէ չնամանիցես. արդեօք զպղերգն և զխամն, եթէ զիոյթն և որ այնքան աշխատեցաւն. քաջայայտ է եթէ զիոյթն. քանզի մինն յաղագս ծուլելոյն զրկեցաւ 'ի բաց բարձեալ ընդդիմամարտին. իսկ պղերգքն ոչ ևս վասն առաքինութեան վնասեցան ինչ, այլ յիւրեանց իսկ ծուլութենէ 'ի վայր կործանեցան:

Այսոցիկ և սիւս ևս լուծումն ինդրոյս այսմ, զի ուսոյիս եթէ ոչ սատանայ, այլ իւրաքանչիւր ուրուք ծուլութիւն ամենայն ուրեք ընկճէ զոչ զգուշացեալսն: Այսոյկ սատանայ յոյժ չար, չար ոչ բնութիւ, այլ յօժարութեամբ և բարուք. և զի ոչ է չար բնութեամբ սատանայ, 'ի նոցունն իսկ յանուանցն ուսիր. քանզի բանասարկու յաղագս 'ի մէջ արկանելոյ ասի, արկանէ բանս ընդմարդոյ առ Աստ. "Աչ, ասէ, ձրի պաշտէ զքեզ Յոբ. այլ առաքեա զձեռն քո և մերձեցո յորս ունին, եթէ ոչ 'ի դէմ զքեզ օրհնեսցէ,, . Էարկ զարձեալ բանս առ մարդն յայ. "Ելո՛ւր անկաւ յերկինէ և եկեր, ասէ, զոչխարսն,, : Ծուլացաւ զնա Հաւանեցուցանել թէ 'ի

վերատա յերկինից պատերազմն այն ՚ի վերայ Հասեցաւ, և ընդդիմացուցանէր զծառայն տեառն և զտէրն ծառայեն. ահաւասիկ եթէ ոչ ընդդէմ ամբոխեաց, այլ յանդգնեցաւ միայն և ոչ զօրեաց, զի յորժամ տեսանիցես զայլ ոք ծառայ ընդդիմացեալ տեառն՝ զ՚դամ, և Հաւատացեալ նմին իսկ նորա բանսարկութեն՝ ուսցիս եթէ ոչ յիւրմէ ՚ի զօրութենէն, այլ ՚ի նորա պղերգութենէն և ՚ի ծուլութենէ այժ կաս։ Զդ բանսարկու յաղագս այսորիկ ասի. իսկ բանս արկանել և ոչ արկանել, ոչ բնութեան է, այլ կրօք լեալք և ոչ լեալք. և այսպիսիկ ոչ զբնութեան ունին զկարգ և ոչ զգայութեանն։ Կ՚ուեմ զի յայսմիկ գժուարըմբռնելն է բանս այս յաղագս գոյութեան և վիպասածոյ. բայց են ոմանք որ և նրբագոյնս լսել կարեն, յաղագս օրոյ և մեք ըզբանս զայս ասացաք։

Զ՚ասպժէքը և ՚ի միս և աս անուն եկիր, և տեսանիցէք զնա ոչ գոյութեան և ոչ բնութեան է, այլ յօժարութեան։ Զաբ [1] կոչի. և չարութիւն ոչ բնութեան է, այլ յօժարութեանն. զի երբեմն և նա լինի և երբեմն ՚ի բաց լինի։ Զս մի ինձ զայն ասիցես եթէ ՚ի նմանէ յաւժամ կայ ինայ. զի և ՚ի նմանէ ոչ ՚ի սկզբանն, այլ զինի այնորիկ եղև, յաղագս որոյ և ապստամբ ասի. և բազում մարդիկ չարք լեալք, միայն նա ըստ գերազանցութեան ասի չար։ Զս ընդէր արդեօք այնպէս կոչի. զի ոչ ինչ ՚ի մէնջ զրկեալ, ոչ մեծ և ոչ փոքր մեղադրութիւն ունելով, տեսանելով պատուեալ, վաղվաղակի յաչառեաց զնա ՚ի բարւոյն։ Զս արդ քան զայն գժնդակագոյն չարութիւն զինչ այլ լեալ, յորժամ թշնամի և պատերազմող և ոչ մի ունիցի իրաւացի պատճառ։

Ո բաց կայցէ այնուհետև բանսարկուն. և ածեալ անցուսցուք ՚ի մէջ զարարածս, զի մի կարծեսցես եթէ սատանայ մեզ պատճառ չարեաց է թէ կամեսցուք ըզգուշանալ. զի ուսցիս եթէ տկարն յօժարութեամբն և յուլացեալն և պղերգն՝ և առանց սատանայի կործանի և ՚ի վերհ բազում անգամ զինքն արկանէ։ Զանազանկոն չար է, գիտեմ ես, և խոստովանեալ է այս յամե-

1 Հաւատացք պահասէր յօրինակին Զաբ ՚ի լուէ ... յօժարութեանն. յաւելաւ ՚ի յունէն։

նեցուն. այլ Հաւատեաւ Հայեցարուք յայս յոր Հանդերձեալս եմ ասել այժմ. զի ոչ վայրապար ինչ է այս, յաղագս որոյ յորմէից բազում անգամ լինին բանք, և վասն որոյ յաւէտ կռիւ և պատերազմ ոչ Հաւատացեալոց առ անՀաւատս, այլ Հաւատացելոց առ Հաւատացեալս. վասն զի այս է ցաւոցն լի:

Ա՛րդ բանսարկուն խոստովանեալ է յամենեցունց թէ չար է որպէս և ասացի. զի՞նչ յաղագս ստացուածոյս ասացուք զեղեցկիս և սքանչելոյս այսորիկ. մի արդեօք արարած չար իցէ. և ո՞ այնպէս պիղծ, ո՞ այնպէս անզգայ և խելագարեալ, մինչ զի ամբաստան լինիցի զարարածոյս. և զի՞նչ յաղագս սորա ասեմք, քանզի ոչ է չար, այլ բարի, և ա՛յ իմաստասիրութեանն և զօրութեանն և մարդասիրութեանն է գործ: Ա՛ռը զիարդ ընդ նմա մարդարէն սքանչանայ ասելով. "Ա՛րձակ թէ մեծացան գործք քո, տէր. զամենայն իմաստութեամբ արարեր,,: Ա՛ն ըստ իւրաքանչիւր ոք կանոց, այլ տեղի ետ անհասանելի իմաստութեանն ա՛յ: Ա՛յս զի պիտանացու զա և այնպէս գեղեցիկ և մեծ արար, լուր այլում ումեմն որ ասէ թէ "Ի մեծութեան 'ի գեղեցկութենէ ստացուածոցս Հաւատարապէս արարիչն տեսանի,,: Ա՛ռը և Պաւղոսի որ ասէն. "Ո՛րանզի անտեսանելիքն ա՛յ ստացուածով աշխարհիս արարածոյ իմացեալ լինին,,: Ո՛յք իւրաքանչիւր ոք 'ի սոցանէ զեկոյց 'ի ձեռն որոց ասացին՝ թէ սա մեզ յաճգիտութիւն առաջնորդէ, զի և սա իսկ առնէ մեզ Ճանաչել զտէրն:

Ա՛յս արդ զի՞նչ. եթէ տեսանիցեմք զգեղեցիկս և ըզՀրաշալի զսոյն՝ լեալ ամբարշտութեան պատճառս յոլովից, բաղբաղիցո՞ւք ինչ զսա. և ոչ երբէք, այլ զնոսա՝ որ ոչ վարին 'ի պատշաճ գեղոյս: Ա՛յս մեր ամբարշտութեան պատճառ է սա՝ որ ոչ առաջնորդէ մեզ յաճգիտութիւն: "Ա՛տաւրեցան, ասէ, խորհրդովք իւրեանց իմաստասէրքն, և ամբարշտեալք պաշտեցին զստացուածս քան զԹէ զստացիչն,,: Ա՛ռ ուրեք ստատնայ անդանօր, այլ արարածս միայն 'ի մէջ առաջի կայ վարդապետարան յաճութեանն: Ա՛յս զիարդ ամբարշտութեան եղև պատճառ. ոչ յաղագս իւրոյ բնութեան, այլ վասն պղերգութեանն զի[1] անփոյթք եղեն: Ա՛յս արդ

1 Պահասէր յօրինակին զի անփոյթ եղեն, յաւելաւ 'ի յուշէն:

զինչ. Ի բաց քարձցուք և զարարածս, ասա ինձ։

Եւ զինչ ևս ասեմք յաղագս ստացուածոյս, յանդաման եկեալք Ի մեր. քանզի և զառաս գտանեմք կոըբսահան պատճառ, եթէ հայիցեմք, ոչ վասն իւրոյ բնութեան, այլ յաղագս մերոյ պատճառին։ Վախեալն զհաստատեցաւ զի տեսանելով վարուցեալս ըզտէրն. այլ եթէ ոչ զերկեկապէս վարեացես ակամբն, չնութեան քեզ լինիցի պատճառ։ Եզուտուաւ զի բաւ ըեբանեացես, զի օրհնեացես զտէրն. և եթէ ոչ զերկեկապէս վարեացես, հայհոյութեան քեզ լինիցի պատճառ։ Զեռն տուաւ զի կարկառեացես յաղքատն. այլ եթէ ոչ արձուն իցես, յաւելաստացութիւն գնասա ձգես։ Ամբ տուան զի ընծայիս Ի բարի գործս. և եթէ յուլանաս, չար գործս նոքօք կալցիս. զի զտկարն ամենայն ինչ ՀԱսակ։

Տեսանեմս զի զտկարն և փրկական դեղքն Ի մահ արկանեն, ոչ վասն իւրեանց բնութեանն, այլ յաղագս նոցա պղերգութեանն։ Ի բաւ զերկինն ածՀ, զի սբանչանալով ընդ գործն՝ երկիր պագցես արուեստաւորին. և ամենք զարարիչն Ծողով նմին երկնի երկիր պագին. այն Ի նոցա յուլութենէն և յանմտութենէ։ Այլ զինչ ևս ասեմ զարարածս և զանդաման. զինչ քան զըզխաչն փրկաւէտ լինիցի. այլ խաչն այն գայթակղութի եղև տկարաց. "Վանզի բան խաչին, ասէ, կորուսեալցն յիմարութիւն է, այլ փրկեալցս զօրութիւն այ,,. և դարձեալ. "Վարօղեմք զնաչեցեալն Հրէիցն գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն,,։ Ի քան զՊաւղոս և քան զառաքեալսն առաւել վարդապետ ունիցի. այլ նոքին առաքեալքն յոլովից հոտ մահու եղեն. "Ամանց, ասէ, հոտ Ի մահուանէ Ի մահ և ամանց հոտ կենաց Ի կեանս,,։ Տեսանեմս զի տկարն և Ի Պաւղոսէ Հնասի, իսկ զօրաւորն և ոչ Ի սատանայէ զրկի։

Վխորժեմս զի յաղագս Վբրհատոսի զբանս հրահանգեացուք։ Օ զինչ փրկութեանն այնմ հաւասար, զինչ քան զգալուսան պիտանացու. բազմից եղև յաւելուած տանջանաց. քանզի "Ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի ոչ տեսանողք տեսցեն և տեսանողքն կուրասցին,,։ Օ զինչ ասես։ լոյս կուրութեանն պատճառ եղև. ոչ, այլ տկարութիւն աչացն զլոյս Հոգւոյ ընդունել ոչ

կարայ։ Ցեսանէօ զի տկարն ամենայն ուստեք ՚ի նմանէ, և զօրաւորն բոլոր ուստեք օգտի. ամենայն ուրեք յօժարութիւն է պատճառ, բոլոր ուրեք բարքն տէր։

Ա՛սան զի սատանայ, եթէ կամիս ուսանել, և սիտանացու իսկ է մեզ, յորժամ ՚ի պատճառ նուաւ վարիմք, և մեծապէս զմեզ օգտէ, և շահիմք ոչ դուշնաքեայ ինչ։ Լե զայս յուցաք ՚ի Յոբայ, պարտ է և ՚ի Պաւղոսէ ուսանել. քանզի յաղագս պոռնկացելոյն ասէ ելով այսպէս ասէ. "Ա՛ասնեցէք զայնպիսին սատանայի ՚ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի ,,։ Ահա և վրկութեան պատճառք սատանայ եղև. այլ ոչ իւրոյք բարուքն, այլ յաղագս արուեստին առաքելոյն։ Օ՚ի զոր օրինակ բժիշկք իժս առնլով և զսատակող անդամն ՚ի նոցանէ ՚ի բաց Հատանելով՝ զգաղտնականան[1] կազմեն դեղս, նոյնպէս և Պաւղոս արար, որքան ինչ սիտանացու էր ՚ի տանջանացն պահանջմանէ, ՚ի բաց եհատ ՚ի սատանայէ, և զայլն եթող։ Օ՚ի ուսցիս եթէ ոչ սատանայ վրկութեան էր պատճառ, այլ կորուսանել զմարդն Ձեպէր և կլանէր, իսկ առաքեալն ՚ի ձեռն իւրոյ իմաստասիրութեանն զժանտախտականն եհատ, լուր յերկրորդումն Թղթին զինչ ասէ յաղագս պոռնկացելոյն. "Հաստատեցէք ՚ի նա զսէրն, մի գուցէ առաւել տրտմութեամբ ընկղմիցի նա, և զկիսիմք ՚ի սատանայէ ,,. կանխաւ յաւիշատակեսցուք, ասէ, ՚ի կորկորդէ դազանին զմարդն։ Իբրև դահճաւ բազում անգամ վարեցաւ սատանայիւ առաքեալն. իսկ դահիճքն տանջէին զյանցաւորսն, ոչ որքան կեալ կամին, այլ որքան դատաւորքն հրամայեն. քանզի այն են դահճացն օրէնք, ըստ ահնարկելոյ դատաւորին տանջել։

Ցեսա՛ր յորպիսի արժանաւորութիւն էլ Պաւղոս, որ մնալին էր զգեցեալ, անմարմնոյն իբրև դահճաւ վարեցաւ. Թէպէտ և Հասարակաց տէրն ասէ սատանայի յաղագս Յոբայ պատուիրելով այսպէս. "Ա՛երձեսցիս ՚ի մարմին նորա. բայց ՚ի Հոգի նորա մի հպեսցիս ,,, սահմանս նմա տալով և չափս չարչարանաց, զի մի յանդուգն գազանն անամօթաբար ՚ի վերայ յարձակիցի. զնոյն և առաքեալ առնէ, մատնելով նմա զպոռնկեաւն՝ ասէ. "Ի սատակումն մարմնոյ ,,. այս է՝ յոգին մի մեր-

1 Իմա Ռէ՛ուակէս. զի ՚ի յոյնն ՚ի գ՚ապան բառէ կազմեալ է։

ձենար։ Յետոյ զիշխանութիւն ծառային. արդ մի այսուհետև երկնչիցիս ՚ի սատանայէ, թէպէտ և անմարմին է. այլ ընդդիմացար, և ոչ ոք քան զընդդիմակացն տկարագոյն է, թէպէտ և ոչ մարմին զգեցեալ է. որպէս և ոչ ոք զօրաւորագոյն, քան որ էթէ ՚ի հաւատս ձակուիթեանն վայելէ, թէպէտ և մարմին ունիցի։

Ա՚յս ամենայն ասացան ինձ այժմ ոչ զի զսատանայ ՚ի բամբասանացն ՚ի բաց վհատիցեմ, այլ զի ազատեցից զձեզ ՚ի պղերգութենէ. վասն զի յոյժ իսկ ախորժէր նա զմեր յանցանացն յինքն ձգել զպատճառան, զի յուսովքն այնպիւք կերակրեսցի, և զամենայն տեսակ չարութեանն ՚ի վերայ բերելով՝ յաւէտ աձեցուցանեմք հակառակ մեզ զտանջանսն, և ոչ միւսմ թողութեան հանդիպիցիմք՝ փոխադրելով ՚ի նա զպատճառն, որպէս և ոչ դնա դիպեցաւ։ Այլ մի զայն արասցուք, այլ ծանրացուք զանձինս. գիտասցուք զվէրն, զի այսպէս և զդեղն ՚ի վերայ դնել կարասցուք. քանզի որ զցաւն անգիտանայ, և ոչ զմի ինչ առնէ հիւանդութենն խնամակալութիւն։

Ա՚եղաք բաղում անգամ, գիտեմ և ես, քանզի առնեքեան ընդ սպառնալիօք եմք. այլ ոչ եմք զրկեալ ՚ի թողութենէ, և ոչ արտաքս անկաք յապաշաւանայ. վասն զի դեռ ևս տակաւին ՚ի հանդիսարանի եմք և ՚ի նահատակութիւնս սպաշխարութեան կեանք։ Ա՚ՀՒ ես, և ՚ի վերջին ձանապարհ երթեալ հասեր. մի կարծեր և մի այնպէս արտաքս ընկեցեալ զքեզ, այլ զմեռաւծ զառաքելն ՚ի խաչին ազատեալ. զինչ քան զժամն զայն դուշնաքեայ յորում պսակեցար. և սակայն բառական եղեն նմա ՚ի փրկութենն։ Ա՚անձկ ես. մի վըստահանար, մի կարծեր հասարակաց ինչ ունել գաշինս. քանզի օր տեառն իբրև զգող գիշերի այնպէս գայ։ Յաղագս այնորիկ անյայտ մեզ արար զկատարածն, զի յայտնի արասցուք զփոյթն և զնախախնամութիւնն։ Ա՚չ տեսանես տարաժամն հանապազօր յափշտակեալս. յաղագս որոյ և պատուիրէ ոմն առելով. "Ա՚ի կալ մնալ գառնալ առ տէրն, և մի յապաղեր օր յօր. մի գուցէ առ մեզս[1] քո սատակիցիս.,, Ո՚ՀՐն զայն պատուիրան

1 Ա՚յդ է հարազատ բան Սիրա- նմանաձայնութենէ յունականին քայ Ե·8· իսկ յօրինակիս եդեալն շփոթեալ թարգմանչին այդպէս որպէս ռեղս ասպանիչս, թերևս ՚ի ընթերցեալ էցէ։

կալցի, և մանուկն զայս խրատ։ Այլ՝ ի զգուշութեա՞ն իցես, ընչի՞ց իցես և զուարճացեալ փարթամութեամբ, և ո՛չ ինչ քեզ լինիցի դժնդակութիւն, լուր զինչ ասէ Պաւղոս. «Յորժամ ասիցեն խաղաղութիւն և ամրութիւն, յայնժամ յանկարծակի նոցա՝ ի վերայ գայ սատակումն»։ Արագում փոփոխմամբ լցեալ են իրքն. ոչ եմք տեարք վախճանին, լիցուք տեարք առաքինութեն. մարդասէր է տէրն մեր։

Կամիք ասացից և զապաշխարութեան Ճանապարհն. յոլովք ոմանք են և ազգի ազգի և բազմազան, և ամենեքեան յերկին տանին։ Այսու առաջին ապաշխարութեան Ճանապարհ՝ յանցանացն ստգտանք. քանզի «Ասա դու զմեզս քո յառաջագոյն, զի արդարասցիս». յայգաց որոյ և մարդարէն ասէ. «Այսայի՝ ես պատմեցից զանօրէնութիւնս իմ տեառն, և դու՝ ի բաց բարձեր զամբարշտութիւնս սրտի իմոյ»։ Այս դու բամբասես զմեզն, բաւական է այն տեառն՝ ի պատասխանիս. քանզի որ ստգտանէ զմեզն, դանդաղկոտ լինի՝ ի նոյնս դարձեալ անկանել. չարժեա՝ ի ներքուստ զոսկին զխիղճ մտացն, զի մի անդ ամբաստան ունիցիս։ Այ՝ի Ճանապարհ ապաշխարութեան բարի այս է, և միւս ևս քան զայս ոչ ինչ նուազ, ոչ օրակալ լինել թշնամեացն, տեւել բարկութեան, Թողուլ ծառայակցացն զսխալանսն. վասն զի այնպէս Թողցի և մեզ՝ ի տէրն լեալք։ Այս երկրորդ յանցանացն մաքրութիւն. վասն զի «Այնմ Թէ Թողուցուք պարտականաց ձերոց, և Հայրն ձեր երկնայինն Թողէ ձեզ»։

Այժմէն ուսանել և զերրորդ Ճանապարհ ապաշխարութեան. աղօթք եռացեալ՝ ի հաւաստի և՝ ի խրբին սրտէ զայն առնեն։ Այ՛ն տեսեր զայրին որ զանաժամ զդատաւորն յինքն դարձոյց. իսկ դու ընդունելի տէր ունիս, Հանդարտ և մարդասէր. նա Հակառակ Թշնամեացն խնդրեր. դու ոչ Հակառակ Թշնամեացն խընդրես, այլ յաղագս քո անձին փրկութեան։ Այս եԹէ զերրորդն կամիցիս ուսանել, զողորմութիւնն ասեմ, քանզի յոլով զօրութիւն ունի նա և անՀաւելի. զի և Այաբուդոդոնոսորայ որ յամենայն տեսակս չարութեան եՀաս, ասէ Դանիէլ. «Այորհուրդ իմ Հաճոյ քեզ լիցի. զմեզս քո ողորմութեամբ քաւեա և զանօրէնու-

թիւնս քո պիտոյք անանկաց,,։ Օ ինչ լինիցի զոյգ այնմ մարդասիրութեան. յետ բիւր մեղանացն, զկնի այնքան անօրէնութեան պատմէ[1] և հաշտի ընդդիմադարձին, եթէ մարդասէր առ ծառայակիցն իւր լինիցի։ Այս նուաստանալն և խոնարհամտելն ոչ ինչ նուազ քան զասացեալս վատնէ զմեղացն բնութիւն. և վկայ մաքսաւորն, որ զուղղութիւնս ինչ ոչ ունէր ասել, փոխանակ ամենայնի զխոնարհութի ընծայէր, և զծանր բեռն մեղացն ի բաց դնէր։

Այս հինգ Ճանապարհ ապաշխարութեան ցուցեալ. առաջին զյանցանացն ստդտանս, երկրորդ թողութիւն ամենեցուն զմեղանս, երրորդ զաղօթիցն, չորրորդ զողորմութեան, հինգերորդ զխոնարհութեանն։ Այդ մի դատարկանար, այլ ընդ ամենեսեան ընդ այնոսիկ հանապազօր Ճանապարհորդեաց. զի և դիւրինք են Ճանապարհքն, և ոչ ունիս պատճառել զաղքատութիւն. այլ թէպէտ և քան զամենեսեան աղքատ իցես և զօրամոտութիւն թողուլ և նուաստանալ կարասցես և աղօթել չարաժամ և ստդտանել զմեզն, և ուրեք խափան աղքատութիւնն չլինի. և զինչ ասեմ աստ, զի և ոչ չայնմ Ճանապարհի ապաշխարութեանն՝ չորում զինչն ծախեմք, զողորմութիւնն ասեմ, զի և ոչ անդ խափան ե ինչ մեզ չողորմութեան աղքատութիւնն։ Այս չայսոսիկս զայս երկու խերևէնքն արկեալք։

Ասեալք այսուհետև զբժշկութիւն մերոյ վերայն, չաճախապես ի վերայ դիցուք զդեղս զայս, զի ի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն չաւիտեանս չաւիտենից. ամէն։

1 Խմա և խոսփանոյ ըստ չոյն ձայնին։

ԵՔԵ Ի ԾՈՒԼՈՒԹԵՆԷ Է ՁԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ՓՈՒԹՈՑ ԱՌԱՔԻՒՈՒԹԻՒՆ, ԵՒ ՈՉ ԻՆՁ ՈՉ ՁԱՐ ՄԱՐԴԻԿ ԵՒ ՈՉ ԻՆՔՆ ՍԱՏԱՆԱՑ ՅԱՐԹՈՒԱՆՆ ՎՆԱՍԵԼ, ԿԱՐԼ. ԵՅՈՑՑ ԱՑԼՈՒՍՑ ԱՄԵՆԱՑՆ ՈՒՍՏԵՔ ԵՒ ՅԱՂԱՄԱՑ ԵՒ ՅՈՎՐԱՑ

Ա՛ԵՔ նախ քան զերիկեան օրն որք յաղագս սատանայի բանք էին, առ ձեր սերդ շարժեցաք. և այլք յառաջ քան զերեկ եղելոյ բանի յայնպիսեայ աստ՝ ի տեսարանի նստեալով ընդ սատանայական տունն Հայկին. նոքա ընդունին զերջոյ պատնկայն, և դուք Հաղորդք լինիք Հոգևորական լսելութեանս. ուստեն նոքա զանմոքբուԹիւն բանսարկուին, կերակրեալ լինիք դուք Հոգևոր կերակրովս։ Ա՛ որպեօք զնոսա պառակտեայ առ ի, և որպեօք զնոսա տրոհեայ յածխային Հօտէս. զնոսա որպեօք բանսարկուն խաբեայ. զիմդ և զձեզ ոչ պատրեայ։ Ա՛արդիկ էք և դուք և նոքա, զնոյն ցանկութիւն՝ ի բնութեանդ ունիք, և ընդդէմ ոչ՝ ի նոսին և նոքա ընդ ձեզ։ Ա՛ սան զի յօժարութիւնն ոչ նոյն էր ձեր և նոցա, վասն այնորիկ նոքա՝ ի խաբէութեան, և դուք արտաքոյ մոլորութեանն։ Դարձեալ ոչ զատանայ ազատել կամիմ՝ ի բամբասանայ զայս ասելով, այլ զձեզ՝ ի մեզայ՝ ի բայ վձարել փութամ։

Ձար է բանսարկուն, խոստովանիմ և ես, այլ ինքեան է չար, և ոչ մեզ եթէ հակիցեմք։ Ո՛ է այնպիսի իսկ է չարութեանն բնութիւն, ստացողացն միայն է սատակիչ. իսկ առաքինութիւնն ընդդէմ նմին ոչ զատայողն միայն, այլ և զմերձաւորսն օգտել կարէ։ Ա՛ւ զի ուսցիս եթէ չարն ինքեան ևեթ է չար, իսկ բարին ընկերաց և ինքեան բարի, վկայութիւն քեզ ընձեռեմ առաքեալ. "Ա՛րդեակ, ասէ, եթէ չար լինիս, միայն պեղեսցես զչարիսն. և եթէ իմաստուն, քեզ և ընկերին"։

Ա՛ստեղեան որք՝ ի տեսարանին են. այլ դուք ոչ խաբեցայք։ Ա՛ՀԾ են իրացն ցոյցք, յայտնի յանդիմանութիւն և խորհուրդ անչերկուանալի՝ ամենայն սրբեք յօժարութեանն լինել տէր։ Ա՛յսոքիւք և դու վարեսցիս օրինակօք և ցուցիւք։ Ա՛յնժ տեսանիցես զմարդ չարու-

թեամբ կեցեալ և զամենայն զչարութիւն ցուցեալ, և բամբասիչ զնոյ զնախախնամութիւնն և ասիցէ՝ եթէ բախտի և ձակատագրին հարկաւորութեան և դիւացն բռնաւորութեան զմեր բնութիւնս մնասնեաց, և ամենայն ուսոտեք զպատճառն յինքենէ՛ի բաց տանիցի յաբարիչն, և յայնմ ամենայնի՛ի նախախնամողն փոխխեալ բերիցէ, կարիեաց զնորա բերանն, մի բան՝ այլ գործ ցուցանելով զծառայակից ոք որ առաքինութեամբ և հեզութեամբ կեցցէ։ Այլ են պետք երկայն բանից, և ոչ է պիտոյ պատրաստել ստեղծուած ինչ և կամ մտածութիւնս, ուր՛ի ձեռն գործոց ցոյցքն լինին։ Այսպա նմա՝ թէ և դու ծառայ և նա, և դու մարդ և նա. ՛ի նմին աշխարհի բնակիս, ընդ նովին երկնաւ, նովին կերակրով կերակրիս. ընդէր դու՛ի չարութեան և նա յաոաքինութեան։

Այսն այնորիկ խակ և ՚ած եթող զչարսն ընդ բարիսն խառն լինել, և ոչ այլ երկիր ետ չարացն, և ոչ յայլում աշխարհի զչարիսն բնակեցոյց. այլ խառնեաց զսոսա ընդ նոսա, յաւէտ պիտանացու իմն գործելով։ Օ՛ի բարիքն ընտիրք երևեսցին՛ի մէջ խոփանողացն զսոսա ուղղակի կելով, և՛ի չարութիւն ձգեալքն առաքինութեան խնամ տանէին։ “Այանգղ պարտ է, ասէ, հերձուածողք լինել՛ի ձեզ, զի ընտիրքն երևելի լինիցին՛ի ձեզ,,։ Այսպա ուրեմն և վասն այսորիկ չարացն նեբեաց՛ի մէջ բարեացն լինել, զի նոքա առաւել պայծառացին։

Տեսանէս զշահն որքան է. բայց ոչ՛ի չարացն է օգուտն, այլ՛ի բարեացն քաջարութենէ։ Այսն այսորիկ և ընդ Այոյ զարմանամք, ոչ զի արդարն էր և ոչ զի կատարեալ միայն, այլ զի յապգին յայնմիկ՛ի խոտորեցեալսն և՛ի չարի ողջ պահեաց զառաքինութիւնն, յորժամ ոչ զոք ունէր օրինակ առաքինութեանն, յորժամ ամենեքեան՛ի չարութիւն զինա ձգէին։ Այս ամենեցուն նոցա ընդդէմ եկաց, որպէս ոք ուղեգնաց յօրում բաղմութեամբ բերեալ լինէր չարձակմամբ զՀաւառին նոցա զնալով Ճանապարհ։ Այսն որոյ և ոչ վարկպարապն առաց “Այոյ այր արդար կատարեալ,,, այլ յաւել “յապգին իւրում,,՛ի խոտորեցելում և՛ի բաց հրաժարեցելում, յորժամ և ոչ ոք էր առաքինութեանն։ Այրդ բարեացն՛ի չարացն այս է շահ։ Այն-

պէս և ծառք ՚ի հողմոյ ընդդէմ շարժեալք ուժգնագոյնք լինին։

Ասացի ես լինն և չարացն շահ ՚ի հակառակութենէ արդարոցն. պատկառեն անձնէն շառագունեն ՚ի նոցանէ. Թէպէտ և ոչ կան ՚ի չարութենէն, այլ սակայն զանխանալ փութան զչանգնութենէն յորս համարձակին։ Ահ ես փոքր և այս՝ ոչ ունել համարձակութիւն չարութեանն. վասն զի այլոցն վարք ոսոխք նոցա չարութենէն լինին։ Ասուր զինչ ասէին յաղագս արդարոցն. "Ոչ անկր ես մեզ և տեսանել զնա,, Ահ սուղ սկիզբն ես ուղղութեան առ ժամանակ մի և դժուարել ընդ նորա ընդ մերձաւորութիւնն. քանզի ոչ եթէ խոցոտիչին զնոսա դէմք արդարոցն, ոչ արդեօք զանխիսի իրս բարբառէին. իսկ զչարեցն և դժուարեցն խղճիւ մտացն ՚ի մերձաւորութենէն ես նորա, ոչ ես փոքր խափան՝ ոչ հանդերձ համարձակութեամբ չարութեամբն կեալ։ Ցեսէր որքան օգուտ ես և բարեացն ՚ի չարացն, և չարացն ՚ի բարեացն. վասն այնորիկ ոչ որոշեայ զնոսա Աստ, այլ եթող խառն կեալ ընդ իրեարս։

Կոյն բան ես մեզ և յաղագս սատանայի. քանզի նորին աղագաւ և զնա եթող աստ գոլ զի զօրաւորագոյն գործեսցէ, զի պայծառ արասցէ զզմբիւնն, զի մեծագոյն իցէ նահատակութիւնն։ Ասդ յորժամ ասիցէ ոք՝ ընդէր զբանսարկուն եթող Աստ, զայս բանս ասասցես նմա՝ եթէ զարթուն և որք զգուշանայցեն, ոչ միայն ոչ վնասէ, այլ և օգտէ ևս, ոչ իւրով յօժարութեամբն, այլ նոցա արութեամբն որք նորա չարութեամբն ՚ի պատշաճն վարեցան։ Զի և ընդ Յոբայ մարտեաւ, ոչ յաղագս այնորիկ զի զնա պայծառագոյն արասցէ, այլ ընկճեսցէ։ Ահ նոքին և չար ես, զի այնպիսի և բարս ունի և յօժարամտութիւնս. բայց սակայն ոչ ինչ ինասեաց զարդարն, այլ և օգտեցաւ ևս նա ՚ի պատերազմն, որպէս և ցուցաք, զի և դևն զչարութիւնն և արդարն զարդարութիւն յայտնեցին։ Ասլ և կործանէ զյոլովս, ասեն։ Յաղագս նոցա տկարութեան, և ոչ վասն իւրոց զօրութեան. զի և այս ցուցաւ յոլով բանիւք։ Զքո ինքեան ուղղեաց զբարսդ, և յումեքէ երբեք ոչ ընկալցիս ինասս, այլ և մեծագոյնս ևս շահեսցիս ոչ ՚ի բարեացն միայն, այլ և ՚ի չարացն։

Յաղագս այնորիկ, որպէս յառաջն ասացի, ընդ մի-մեանս ներբեայ կեալ ՚ած մարդկան, և մանաւանդ զառաբիսն ընդ չարսն, զի և զնոսա յիւրեանց առաքինութենէն փոփոխեսցեն: Լուր զինչ ասէր աշակերտացն Վրիստոս. "Մանեցայուք արքայութիւն երկնից կնաք, որոյ առեալ խմոր Թագոյց յերիս գրիւս ալեր,,: Որպէս զի զխմորոյն զօրութիւնն ունին արդարքն, զի առ իւրեանց նմանութիւն զչարն փոփոխեսցեն: Ա՛յլ սակաւք են արդարքն. զի և խմոր փոքր է. այլ ոչ ինչ սղութիւն ՚ձնասէ զղանգուածն, քանզի սակաւն այն զամենայն զալիւրն յինքն դարձուցանէ ՚ի ձեռն եղելոց յինքեան զօրութենէն: Նոյնպէս և զօրութիւն արդարոյն ոչ քանակութեամբ Թուոյ, այլ հոգւոյն չնորհաւ զոյժն ունին: Երկոտասանք էին առաքեալքն, տեսէր զնւրդ փոքր էր խմորն. աշխարհ ամենայն յանհաւատութեան, տեսէր որքան է զանգուածն: Ա՛յլ նոքա երկոտասանքն զամենայն աշխարհ առ ինքեանս դարձուցին: Խմոր և զանգուած նորին բնութեան են, այլ ոչ նորին զօրութեան: Յաղագս այսորիկ եԹող ՚ի մէջ արդարոց զչարն. զի զոր օրինակ նորին բնութեան են արդարոյն, նոյնպէս և նորին յօժարութեանն լինիցին:

Ա՛յս յիշեցէք, այսքիւք ըմբերանեցէք զհեղգացեալն զլցծան զդանդաղկոտն զվերհերոտն յառաքինութեանն աշխատութիւնս, որք զհասարակաց տեառնէն ամբաստանեն: "Մեղար, ասէ, լռեաց,,. մի դներ ՚ի վերայ զերկրորդ մեղն չարագոյնս: Ոչ այնքան չար է մեղանչելն, որքան յետ մեղանչանացն զտեառնէն չարախօսել: Օձանիր զպատճառս մեղացն, և ոչ զայլ ոք գտցես, բայց զքեզ զանցուցեալդ: Ա՛մենայն ուրեք բարւոյ յօժարութեան պէտք են: Ցուցի ձեզ զորս ոչ սոսկ խորհրդովք, այլ ՚ի ծառայակցացն որք ՚ի նմին աշխարհի կեցին. նովին օրինակաւ և դուք վարեսջիք: Ա՛սպէս և հասարակաց մեր տէրն դատի: Ուսարուք զցոյց օրինակիս այսորիկ, և ոչ ոք զձեզ կարասցէ խաբել:

Պատնկի՛ ոք, ցոյց նմա զմիւս ևս ոք պարկեշտ. ապահի՛ ոք և յափշտակէ, ցոյց նմա ոք զողորմութիւնն ընձեռէ: յաչաղանջ՛ ոք կեայ և նախանձու, ցոյց նմա որ մաքուր է յախտէն. ՚ի սրտմտութենէ՛ ոք ըմբռնեալ, որ իմաստասիրութեամբն կեայ՝ ՚ի մէջ ածէք: Վան-

զի ոչ է պարտ և արժան ՚ի հին պատմութիւնն եւեթ ընթանալ, այլ և ՚ի մերձակայից առնուլ զօրինակին. զի և այսօր ՚ա՛յ չնորհատո՛ւ սակաւք են քան զառաջինսն ուղղութիւնք։ Ընդհատա՛մ է և սո՛ւտ վարկանի զգիրսն, ո՛չ հաւատայ եթէ Յոբ այնպիսի էր, ցոյց նմա զայլ ոք մարդ՝ որ արդարոյն կենացն է նախանձաւոր։

Այսպէս և տէրն զմեզ դատի. ծառայակիցս կացուցանէ զնոդ ծառայակիցսն, և ոչ յիւրմէն բերէ ՚ի դատաստանէն զվճիռն, զի մի՛ ոք սկսանիցի դարձեալ, որպէս և այն որ զառաղանդսն հաւատաց, և փոխանակ առաղանդին զամբարտաւանութիւնն մատոյց, “Այթէ խիստ ես,,։ Պարտ էր հառաչել զի ոչ կրկնապատիկ արար զառաղանդսն, այլ դժնդակագոյնս ևս զմեզսն գործեաց, զամբաստանութիւնն հակառակ տեառնն ՚ի վերայ դնելով իւրոյ անպործութեանն։ Այլ զի՞նչ ասէր. “Գիտէի զքեզ եթէ խիստ ես,,։ Ովվ թշուառական և հէք և չարաբարոյ և դանդաղկոտ, պարտ էր զքումմէ վատութենդ ամբաստան լինել, և ՚ի քաց բառնալ ինչ յառաջինն մեղանացն. իսկ ՚ի տէրն զամբաստանութիւնն բերելով, փոխանակ տաղանդին գյանցանսդ կրկնապատիկ արարեր։

Ա՛ման այսորիկ ո՛ճ ծառայս և ծառայս կացուցանէ, զի սոքա զնոսա դատիցեն, և նոքա ՚ի տոցանէ դատապարտեալք՝ ոչ ունիցին այնու հետև ամբաստանել։ Յաղագս այսորիկ ասէ. “Գայ որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ,,։ Տեսէր զփառացն զանփոփոխութիւն. ոչ ասաց նմանութեան փառօք Հօր, այլ նոքիմբք փառօք Հօր. փառք որդւոյ, փառք Հօր իւրոյ, փառք Հոգւոյն։ “և ժողովեսցէ զազգս ամենայն,,։ Ընհատո՛ր է առեւանն, ահատո՛ր մեղաւորացն և յանցաւորացն. բայց որք գիտեն ինչ զինքեանց ուղղութիւնս, հաշտ և փափագելի։ “Եւ կացուսցէ զոչխարսն յաջմէ և զուլսն ՚ի ձախմէ իւրմէ,,։ Եւ սոքա և նոքա մարդիկ, ընդէր սոքա ոչխարք և նոքա ուլք։ Ոչ զի զայլայլութիւն բնութեանն, այլ զայլայլութիւն յօժարութեանն ուսցիս։ Ընդէր որք ոչ ետուն զողորմութի՛ւն ուլք։ Ա՛ման զի անպտուղ է կենդանին, ոչ ՚ի ծննդոյն և ոչ ՚ի մաղցն ՚ի ներքս բերել կարէ ստացողացն, ամենայն ուստեք ամպի յայնպիսի բերոյ յաղագս Հասակին տալաժամութեանն։ Ա՛ման այսորիկ

որք և ոչ մի ինչ պատուղ ողորմութեան չբերին, կոչեաց ուլս։ Իսկ որ յաջմէն էին՝ ոչխարք. 'ի նոցանէ յոլով շահըս 'ի յասլարարք բնութենէն, 'ի ծննդոյն, 'ի կամենէն։ Այս ինչ ասէ առ նոսա. "Դադարեալ ինս տեսէք և կերակրեցէք, մերկ և զգեցուցէք, օտար և ժողովեցէք,, ։ Դարձեալ առ այլսն զհակառակսն. և սակայն նոյն մարդիկ և սոքա և նոքա, նոյն յաղթանակք երկաքանչիւրոցն առաջի կային ուղղութեանցն։ Ինքն առ սոսա և առ նոսա էին հանդերձ նովին մերկութեամբ, և առ սոսա և առ նոսա հանդերձ նովին քաղցիւ, և օտար նմանապէս. ամենայն հաւասար սոցա և նոցա, և զինքդ կատարածն ոչ հասարակ։ Ի սան զի յօժարութիւնն ոչ թողայոյց, քանզի այն միայն զորոշումն առաւ։ Յաղագս այնորիկ նոքա 'ի գեհենն, և սոքա յարքայութիւն։

Ընդ եթէ սատանայ նոցա յանցանացն էր պատճառ, ոչ արդեօք այլոց յանցուցելոց զայլս հանդերձեալ էր չարչարել։ Ցեսէր ասա և զմեղուցեալն և զուղղութեան արարողն. տեսէր զնաւրդ տեսանել զծառայակիցն պատանձեցան։ Ընդ քեզ և յայլ կողմն զառակ բանիս ածցուք։

Այոյս էին, ասէ, տասն։ Դարձեալ ասա որք ուղղեցինն, դարձեալ և յանցուցեալքն, զի յանդիման իրեարց և զնոցա սխալանան տեսցես, և զսոցա զուղղութիւնն. վասն զի Համեմատութիւն[1] յայտնագոյն զայն առնէ։ Այս սոքա կոյսք և նոքա, և սոքա հինգ և նոքա. փեսային ծնայինն ամենեքեան։ Այս զնաւրդ ոմանք մտին և կէսք ոչ մտին։ Ի կէսքն անմարդիք էին, և ոմանք մարդասէրք և հեզք։ Ցեսէր դարձեալ զյօժարութիւն կատարածին պատճառեալ, և ոչ զսատանայ. տեսէր յանդիման միմեանց զդատաստանն և 'ի նմանութենէն բերեալ զվճիռն. ծառայակիցք զծառայակիցն դատին։

Կամիս ցուցից և յանմանիցն լեալ զհամեմատութիւնն. վասն զի լինի և յանմանիցն, որպէս զի դատապարտութիւնն յայտնագոյն լինի։ "Դքո նինուէացիք, ասէ, յարիցեն և դատապարտեսցեն զազգս զայս,, ։ Այս ևս նման դատեցեալքն։ Դանզի ոմանք քարբարոսք

1 Ծօրինակին գրեալ էր համաօգտութիւնն. եդաւ ըստ յունին։

և ամենք Հրեայք. կէաք որ ՚ի մարդապետական վարդապետութիւնս վայելեցին, և կէաք որ ոչ երբէք հաւասարեցին ճշմարիտ լեզուութեանն: Այլ ոչ այս միայն է զանազանութիւնն, այլ ևի անդր ծառայն չոգաւ, և այսր ինքն տէրն. և նա երթեալ կործանումն քարոզեաց, իսկ սա զարքայութիւն երկնից աւետարանեաց: Որոյ արդեօք իրաւացի էր առաւել հաւատալ. բարբարոսացն և անմտացն և որոց ոչ երբէք էր հաղորդեալ ճշմարիտ վարդապետութեանն, եթէ որք յառաջն ՚ի հասակէն մարդապետական գրուխք էին անեալք: Մինեցուն քաջայայտ է եթէ յաւէտ Հրէիցն: Այլ և հակառակ նմին սոքա անհաւատացին տեառնն որ զարքայութիւնն քարոզեաց, և նոքա հաւատացին ծառայակցին զկործանումն պատմողն. զի մեծապէս և նոցա հեղգութիւնն և սոցա չարաբարութիւնն երևեցոյր:

Ո՞ի դև էիր, մի սատանայ էիր, մի բախտ, մի ձակատագիր. ոչ իւրաքանչիւր որ ինքեան չարութեան և առաքինութեան պատճառ եղև. զի եթէ նոքա ոչ էին հանդերձեալք պատժապարտք լինել, ոչ արդեօք ասէր «դատապարտեացեն զազգս զայս,,. ոչ արդեօք և Թադէոսն հարուցոյ դատապարտել զՀրեայսն ասէր: Ո՛ի ոչ յոգունք միայն գլխովս գատին ցանիժամ, այլ Թերևս մի մարդ զբովանդակ բազմութիւնն. յորժամ որոց հնար էր յաւէտ մոլորել՝ երևեցոյն ճշմարտութեանն առանց խաբէութեան, և որոց առաջին օրինակաւ յաղԹող լինել պատշաճ էր՝ պարտեալք դիպեցոյն: Այս վասն այսորիկ զՅդամ և զՅովը յիշեցաք, հարկաւոր է դարձեալ վերստին երԹալ ՚ի նոյն ձառ, որպէս զի գնշխար բանին ընձեռիցեմք:

Ընդ Յդամայ լոկ բանիւք մարտեաւ, ընդ Յովբայ ՚ի ձեռն իրաց. վասն զի զմինն յամենայն ընչեղութենէն մերկացոյց և ՚ի մանկանցն զրկեաց, և ՚ի միւսմէն ոչ փոքր ինչ և մեծ ՚ի բաց էառ: Ա՛նաւասանդ եթէ գնոյն իսկ զբանն քննեսցուք և զդրժանացն զօրինակս: «Ա՛ստուածեալ, ասէ, օձն ասաց կնոջն. զի է զի ասաց Ա՛ստ՝ մի ուտիցէք յամենայն փայտէ որ է ՚ի դրախտիդ,,: Ա՛յո օձ, և անդ կին առ Յովբայ: Ա՛խ[1] առաջին յոյժ հանդիպե-

1 Ցայնմ ասպ բաղամ խոխր է ընդ մէջ խորհրդաւորութեան. փանչ:

լոյն է միջոցն. քանզի ոմն ծառայ և ոմն հաղորդ կենացն, միւն օրնական և միւսն հնազանդեալ. այլ զնա՝ հնազանդեալն և որ ի ծառայութեանն էր՝ խաբեաց. իսկ զմիւսն և ոչ հաւասարորդ կենացն և օրնականն դատել կարաց: Բայց տեսցուք զինչ ասէ. "Օ՛ի է ի սմա՝ ոչ կերիջիք յամենայն փայտէ,, : Ոչ ասայ զայս ՚ձեզ, այլ զհակառակ նմին: Տես զչարագործութեի բանաարկուին. ասայ զոչ ասացեալն, զի ուսցի զասացեալն: Այս զինչ կինն. կարկել էր պարտ և արժան և ոչ ինչ տալ՚ի բանէն, անմտութեամբ խօսեցաւ ըզխրատն տէրունական. յաղագս այնորիկ ետ նմա բռնաՀարութիւն[1] զօրաւոր:

Տեսանէս ողբան չար է վայրապար թշնամեաց և դըժոհոց զինքեանս ընձեռել. դորին աղաչաւ և Քրիստոս ասէր. "Մի տայք զսրբութիւնս շանց, և մի արկանէք զմարգարիտս խոզից, զի մի դարձեալ երգիծուցանիցեն զձեզ,, : Այս եղև Աւային. ետ զսրբութիւն շանն, խոզին. կոխեաց նա զբանն, և դարձեալ կործանեաց զկինն: Այս տես՝ չարագործէ. "Ոչ մահու մեռանիցիք,, ասէ: Ըստանօր լինէ հայեցարուք, զի կարողութիւն է տեսանել մերկ զխաբէութիւն. քանզի վաղ վաղակի զթշնամութիւնն և զպատերազմն կանխաւ քարոզեաց առ ՚ձեզ, արագ արագ ընդդէմ բարբառեցաւ: Լսեի եթէ նախ քան զայդ սխորժոզ ուսանել զխրատն ուսուցեր, զկնի այդոցիկ հակառակ ասողիդ ընդդէր զհետ չոգար: Բայց ՚ձեզ, "մահու մեռանիցիք,, . ընդդէմ այդոցիկ դա խօսեցաւ և ասայ "ոչ մահու մեռանիցիք,, : Օ՛ինչ պատերազմ քան զայդ յայտնագոյն. ուստի այլ ուստեք էր ուսանել զթշնամին և զպատերազմողն, քան եթէ աստի յորմէ ընդդէմն բարբառեցաւ ՚ձեզ: Պարտ և արժան էր փախչել՚ի պատրանացն, պատշաճ էր՚ի բաց վազել յորոգայթէն: "Ոչ մահու մեռանիցիք, ասէ. քանզի գիտէր ՚ձեզ թէ յորում աւուր ուտիցէք՚ի նմանէ, բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զ՚ձեզ,, : Յուսամ մեծի խոստմանն և զորս՚ի ձեռն էր, ՚ի բաց հան զբարիսն: Ձաւթձեաց առնել ՚ձեզ, և ընկեց ընդ մահու բռնութեամբ:

1 Ցօրինակին գրեալ էր բանահարութիւն. յոյնն առիթ, պատճառ:

Աստի՛ Հաւատացեր, ով կին, քանսարկուին. զինչ տեսեր բարի. ո՛չ եր բաւական արժանի Հաւատալոյ օրինադրին, զի նա ՚ած ստեղծիչ և արարիչ, և դա բանսարկու և Թշնամի։ Այլ ասեմ Թշնամի. օձ լոկ զդա կարծեցեր գոլ։ Օ՛ օձն, ասա ինձ, այդքան զուգախառնուԹեա՞ն արժանաւոր առնել եր պատշաճ, մինչ զի և զտերունեան խրատն պատուել դմա։

Տեսանե՛ս զի կարողուԹիւն եր դիտել զխաբէուԹինն, այլ ոչ կամեցաւ կինն։ Այլ սակայն ՚ած բաւականս ետ զբարեգործուԹեանն իւրոյ ցոյցս, և ՚ի ձեռն գործոց զինամակալուԹիւնն եցոյց։ Վասնզի յոչնչէ ստեղծ ըզմարդն և զոգին փչեաց և ըստ կերպարանի արար, իշխան՚ի վերայ ամենեցուն երկրայնոց կացոյց զնա և օգնական հնարչեաց, զդրախտն տնկեաց և զպտուղ այլոց ծառոցն հրամայեաց, ՚ի միմի միայն ասաց ոչ մերձենալ և յայտնապէս վայելչապէս արգելու։ Սակ բանսարկուն գործով ոչ սուղ ինչ և ոչ մեծ եցոյց բարի, այլ լոկ բանիւք հպարտացոյց զկինն, և հնչեալ զնոտի յոյսն այնպէս խաբեաց։ Այս սակայն քան զ՚ած զբանսարկուն արժանի հաւատալոյ գոլ կարծեաց, և քան զոր ՚ի ձեռն գործոցն եցոյց զբարեմտուԹիւն. որ զսոսկ բանսն մատոյց ևԹԷ, այլ և ոչ ինչ, հաւատաց կինն։ Տեսանե՛ս զիարդ յանմտուԹենէ միայն և ՚ի ծուլուԹենէ, այլ ոչ ՚ի բռնուԹէ խաբէուԹինն եղև։ Այս զի ուսանիցիս զայս յայտնագոյն, լուր զիարդ գիրք ամբաստանեն զկնոջէն։

Վասնզի ոչ ասացին ԵԹԷ պարտեալ, այլ տեսեալ զիպյան զի գեղեցիկ եր՝ եկեր։ Արդէս զի անարգել տեսանելեացն են բամբասանքն, և ոչ խաբէուԹեանն միայն որ եր ՚ի սատանայէ. քանզի չիւրմէ ցանկուԹենէն չաղԹեցաւ, և ոչ ՚ի չարուԹենէ դիւին։ Յաղագս այնորիկ և ոչ ՚ի ԹողուԹեանն վայելեաց. այլ ասացեալ ԵԹԷ "օձն խաբեաց զիս,,, և այնպէս զվերջինն դատաստանն ետ. զի ՚ի նմա եր ոչ անկանելն։

Այս զի ուսանիցիս յայտնագոյն զայս, բեր ՚ի Յովբ զբանն ածցուք, ՚ի չաղԹեցելոյն ՚ի զօրացեալն, ՚ի պարտեցելոյն ՚ի չաղԹողն. զի այնպէս առաւել մեզ տայէ զչափարուԹիւն ընդդէմ ամբառնալ զձեռս բանսարկուին։ Ընդ օձն եր որ պատրեր, և զօրացաւ. և ասաց կինն, և ոչ կարաց. և սակայն կինն յոյժ հաւատարմա-

գոյն քան զնա։ Իւ Յովբ յետ կորստեան ընչից, զկնի մահուան մանկանցն և յիմ ստացուածոցն մերկանալ մերձենայր մեքենայիւքն։ Այլ անդ և ոչ մի ինչ յայսցանէ էր, ոչ մանկունք մեռան, ոչ կորոյս զինչս Ադամ, և ոչ 'ի վերայ աղբոյ նստեր, այլ 'ի դրախտին փափկութեան բնակեր և 'ի ծառս յամենաւայելուչս վայելէր, յաղեխրս և 'ի գետս և յայլ ամենայն ընդարձակութիւնս. ոչ ուրեք աշխատութիւն, ոչ ցաւք, ոչ տրտմութիւնք, ոչ հոգք, ոչ թշնամանք, ոչ լուտանք և ոչ բիւր չարիքն որք վտանգեցին զՅովբ։ Իւ սակայն ոչ ուրեք յայսցանէ եղելոց անկաւ և կործանեցաւ։ Ո՞չ քաջայայտ է եթէ յաղագս պղերգութեանն։ Արդէս և միանն և ամենեցունն այսոցիկ 'ի վերայ կացելոց և ծանրացելոց եկաց միայ առաքինաբար և ոչ անկաւ. ո՛չ և աստ յայտ է զի և սա վասն արթնութեան անձին։

Արդ յերկաքանչիւր կողմանց, ով սիրելի, մեծ պըտուղ շահեսցիս։ Իւ փախուցեալ յԱդամայ նախանձուէն՝ տեսանելով որչափ 'ի յուրութենէն ծնան չարիք։ Նախանձեցիր ընդ Յովբայ երկիւղածութիւնն, ուսանելով որքան 'ի փութոյն բուսանին բարիք։ Յամենայն ժամ զայն զմտաւ ած, և ամենայն ցաւոց և խռովութեանց բաւական միխիթարութիւն ընկալցիս։ Վանգի իբրև 'ի հաստարակայ տեսարանի յաշխարհիս կացեալ երանելի առաքինոյն ընդ ամենեսին խօսի 'ի ձեռն հանդիպելոց ախտիցն նմա՝ ամենայն առաքինապէս ժուժկալել որք 'ի վերայ անկանիցին, և ոչ ումիք տեղի տալ եկելոց դժնդակութեանցն։ Վանգի ոչ է, և ոչ իսկ է, և ոչ մի մարդկային ախտ՝ որ ոչ կարիցէ միխիթարութիւն ընդունել անտի. զի որ յամենայն աշխարհի սըսկսեալ են չարչարանքն, այսօրիկ միանգամայն եկեալք 'ի միասին տագնապեցին զնա։ Արդ զինչ արդեօք լինիցի թօզութիւն, որ ոչ կարիցէ զմտան 'ի վերայ եկելոյն յայնցանէ դժնդակութեանցն հանգերձ գոհութեամբ ընդունել, յորժամ նա ոչ զմտան միայն, այլ զի բովանդակ իսկ երևի զամենայն զմարդկան զչարիս ընկալեալ։

Իւ զի մի ստգտանիցես զդերազանցութեն բանիս, թէ զիւրաքանչիւր որ զ'ի վերայ եկեալն նմա զիւոյմանան[1]

1 Յօրինակին ձեռագրեան. յայն ձիւր, տրտրանդ։

զայսոսիկ ածցուք ի վերայ։ Այս եթէ ախորժես, որ քան զամենայն անմահութիւն Թուի գոլ, նախ առաջին ի մէջ բերցուք՝ զաղքատութիւնն ասեմ և որ ի նմանէ են ցաւքն. վասն զի զայս ամենայն ուրեք ամենայն մարդ ոչ ակն ։ Այս ո՞ զաղքատագոյն քան զՅովբ եղև, որ քան և ոչ ի բաղանիսն ընկեցեալ էն և ի հնոցի խիճ վազանջէն և պարզաբար քան զամենայն իսկ մարդիկ աղքատագոյն էր։ Վասն զի սոքա գոնէ հանգերձս ունին պատառոտուն. իսկ նա մերկ նստէր, և հանգերձ ոչ նէր միայն որ ի բնութենէ մարմնոյս է զգեստ ժխտակ փոսութեամբ, և զայն ամենայն ուստեք ապականեալ բանսարկուն։ Այս դարձեալ այս աղքատք գոնէ ընդ յարկաւ են նախադրեալն ի բաղանիսն, գոնէ խոտով ծածկին. բայց նա արտաքոյ միշտ օթևակայեալ կատարէր, և ոչ զսոկ ինչ յարկի միսիթարութիւն ունելով. և որ մեծագոյնն ևս է, զի սոքա յոլով ինչ զինքեանց գիտեն զարութիւն։ Վասնզի զայս ըստ իւրաքանչիւր ումեք պատահելոյն նմա զմտաւ ածելով՝ մեծամեծ նմա ըզցաւսն առնէր և առաւելագոյն զտարակուսանսն գործէր՝ և ոչ զպատճառս եղելոցն գիտել։

Այլ սոքա որպէս ասացի, յոլովս ինչ ունին զինքեանս բամբասել. և ոչ է փոքր այս ի միսիթարութիւն՝ ի թշուառութեանն գիտել զինքեանս չիրաւի պատժեալ։ Բայց նա և յայսմ միսիթարութենէ զրկեալ էր, և վարս ցուցանելով առաքինութեամբ լի՝ ընդ վերջին յանդգնեալսն համբերեր չարեաց։ Սոքա որ առ մեզ են աղքատքս, ի վերուստ ի սկզբանն կրթեցան ի թշուառութիւնն. իսկ նա առանց հրահանգելոյ կրեաց զաղքատութիւնն, յանկարծակի ընկալեալ ի փարթամութենէն զփոփոխումն։ Օ՜ որ օրինակ զպատճառն գիտել զեղելոյն մեծ է միսիթարութիւն, նոյնպէս ոչ ինչ նըւազ քան զայն որ կրթեալն է յաղքատութիւն ի սկզբանն՝ աղքատութեանն տանել. յորոց չերկոցունց արդարն այն էր զրկեալ, և ոչ այնպէս անկանէր։

Ցեսո՛ր զնա ի վերջին եկեալ յաղքատութիւն, զկնի որոյ այլ ոչ ևս է գտանել։ Օ՜ի քան զմերկին և որ ոչ ունիցի յարկ ո՛ արդեօք լինիցի աղքատագոյն։ Այնա՜ւանդ թէ և ոչ յամենայն յատակին վայելէր տէր. զի ոչ ի վերայ հողոյ, այլ յաղբեւոյ վերայ նստէր։ Այլ

յորժամ տեսանիցես զքեզ յաղքատութեան լեալ, զմտաւ ած զարդարոյն զկիրս, և վաղվաղակի կանգնեցիս, և զամենայն խորհուրդս արամութեան՝ի բաց մղեցես։ Ա՛ի այս է թշուառութիւն, որ բովանդակ՝ի միասին յաւիտենից պատճառք լինէին, թուին մարդկան։

Ա՛ուս ևս զկնի այնորիկ, մանաւանդ եթէ նախ քան զայն՝ վկեզք։ Ա՛ո՞ք այնպէս ախտացաւ երբէք. ո՞ այնպիսամբ հիւանդութեան համբերեաց. ո՞ զայնպիսի հարուածս ընկալաւ, կամ զայլ ոք եթէս ընկալեալ։ Ա՛ն ոք է։ Ա՛ր սակաւ սակաւ նորա մարմինն խորշեալ լինէր, և աղբերս որդանց ամենայն ուստեք բղխեր յանդամսն, և մշանջենաւոր էր հոտութիւն այն, յորով ժահահոտութիւն՝ամ ուստեք, և մարմինն առ փոքր փոքր ծախեալ, և այնպիսի ապականութեամբ վատնեալ, մինչ զի անախորժելի զկերակուրն առնէր, և սով օտար իմն և անկարծելի էր, զի և ոչ՝ի տուեալ կերակուրսն կարէր վայելել։ “Ա՛նխութիւն, ասէ, տեսանեմ զկերակուր իմ.,,։

Ա՛րդ յորժամ՝ի հիւանդութիւնս անկանիցիս, ով մարդ, յիշեաց զմարմինն զայն և զանպատմն տուրսն. քանզի տուրքն եկին և մաքուրք, և այսքան ունկին վերս։ Ա՛ւ եթէ՝ի պատերազմ ուրեք առաքիցիս, և անդ անիրաւապէս առանց միոյ իրիք պատճառի սրկեալ՝ի փայտի քերեսցեն զկողդ, մի ինչ թշնամանս վարկանիցես զկրան, և մի ցաւոյն տեղի տայցես՝ զսուրբն զայն զմետաւ ածելով։

Ա՛յլ բաւական ունէր, ասեն, նա զմխիթարութիւն և զսփոփանս, գիտելով եթէ ած զայն՝ի վերայ նորա ածէր։ Ձաւէտ այնոքիկ խռովեցուցանելին և ամբոխելին զնա, զի զարդարն ած և որ ամենևին էր՝ի նմանէ սպասաւորութիւն ընկալեալ՝կարծէր պատերազմել, և սպատճառս ինչ իրաւացի գտանել եղելոյն ոչ ունէր։ Ա՛սէ յորժամ ուսաւ յեսոյ զպատճառան, տես որքան երկիւղածութիւն եցոյց։ Ա՛նզի յորժամ ասայ նմա ած, “Ա՛յլ ազգ զիս կարծես խօսել, բայց զհայրդ ես բևեռացիս,,, հիացեալ ասէր. “Ձեռն եդից՝ի վերայ բերանոյ իմոյ. միանգամ խօսեցայ, և յերկրորդումն ոչ յաւելից,,. և դարձեալ. “Ա՛ինչև՝ի լուր ականջաց լսեի զքէն յաւաջագոյն. իսկ այժմ ակն իմ տեսս զըզ-

քեզ։ Յաղագս որոյ վատթարեցի զանձն իմ և հալեցայ. վարկանիմ զնս հող և մոխիր ,,։

Ա.ըդ եթէ բաւական զայն ՚ի միխթարուԹիւն կարծիցես, կարես և դու զնոյն միխԹարուԹիւն ունել։ Ա՛ն զի Թէպէտ և ոչ յաղագս այ կրեացես ՚ի դժնդակուԹեանցն, այլ ՚ի մարդկան չարուԹենէ, գոհասցիս, և ոչ ինչ հայհոյեացես որ կարողն է խափանել, և Թողացուցանէ յաղագս զքեզ փորձելոյ, որպէս Թէ յաղագս այ չարչարեալ պակիս. նոյնպէս և դու նոցին վարձուց դիպեացիս. զի որք ՚ի մարդկանէն եկին ՚ի վերայ քո ԹըշառուԹիւնքն՝ առաքինաբար ժուժկալեցեր, և որ կաՌչէն զայն ՚ի քէն տպզելուլ և ոչ կամեցաւ՝ գոհացար զնմանէ։ Ա՛յս աղքատուԹիւն և հիւանդուԹիւն, և երկոքին հանդերձ վերջին սաստկուԹեամբ տեսեր ՚ի վերայ եկեալս արդարոյն։

Ա՛մենս ցուցից քեզ և որ ՚ի բնուԹենէն է պատեբաղին, որ և քան զնոյն սաստիկն առաւելագոյն եղաւ յառաքինուԹեան վերայ։ Ցանո որդի կորոյս, զտանեսեան յանկարծակի, ՚ի նմին ծաղկի հասակին զտասանեսեան, որք յոլով առաքինուԹիւնս ցուցանէին, և ոչ ՚ի հասարակաց բնուԹեանս օրինաք, այլ բնաւորք և ողջմեղի մահու։ Ո՞վ ունիցի այնպիսի ԹշուառուԹիւնս ասել։ Ա՛յ և ոչ մի մի։ Ա.ըդ յորժամ կորուսանիցես որդի և դուստր ՚ի միասին, ՚ի վեր ընԹա առ արդարն այն, և ամենայն իրաք յոլով միխԹարուԹիւն գտցես քեզ։

Ա՛յս այն դժնդակուԹիւնք միայն դիպեցան արդարոյն արդեօք։ Ա՛յլ և բարեկամացն լքանել և մատնել, այպանուԹիւն և լուտանք, խաղ առնել և ծաղր։ Ա՛յս յամենեցունց կատականս ընդունել ՚ուր արդեօք էր համբերելի. քանզի ոչ այնպէս ԹշուառուԹեանցն բռնուԹիւնք, որպէս ՚ի նոսին իսկ ՚ի վտանգսն խոցոտել սովորեցին զմեր անձինս։ Ա.յլ և յոլովք իսկ բազում ուսաւեք ՚ի վերայ կային և լուտային զնա, և տեսանես զնա ընդ այն դժուարեալ և ողբալով ասէր. “ Ա.ըդ և դուք ևս ՚ի վերայ եղեք իմ,,. և անողորմն զնոսա կոչէր և ասէր՝ եԹէ “ Ա՛ըացան զնս մերձաւորք իմ, և ծառայք իմ հակառակ խօսէին ինձ, և զորդիս Հարճից իմոց կոչէի, և նոքա ՚ի բաց փախչէին։ Ա՛յլ այլք, ասէ, Թքանէին յիս, և զրոյց առնեցուն եղէ. և նոյն ինքն, ասէ, պատմու-

Հանս իմ գարշելոյդ զիս ,, : Ա՛յսոցիկ և ոչ լսել ժուժալ է, Թող Թէ 'ի ձեռն իրացն ունիցի Համբերել և : Աղքատութիւնն վերջին, հիւանդութիւնն անբմբելի որ և անկարծելի, մանկանցն կորուստ այնքանեաց և այնպիսեաց և այնու օրինակաւ, Թշնամանք և լուտանք և կատականք յամենայն մարդկանէ : Ամենք կատակէին և այլք Թշնամանէին, կէսք արհամարհէին, ոչ Թշնամիք միայն, այլ և բարեկամք. ոչ բարեկամք ևԹ, այլ և սարուկք. ոչ միայն այսոցիկն և լուտայինն, այլ և գարշէին. և ոչ յերկուս և յերիս և 'ի տասն աւուրս, այլ 'ի բազում ամիսս. որ և նման միայնումն դիպեցաւ, զի և ոչ 'ի գիշերոյն հինչ ունէր միխԹարութիւն, այլ քան զտանջելոյն գժնդակութեանցն յաւելուածս մեծամեծք էին գիշերային երկիւղալից երևոյԹք : Այլ զի չար և 'ի քունն համբերէր վտանգից, լուր զինչ ասէր. "Ընդէր զիս զարհուրեցուցանես երազովք, և անրջովք զիս պակուցանես ,, : Ա՛վ ոք երկաԹի մարդ և անդամանդեայ որ այսքան գժնդակութեանց համբերեաց. քանզի եԹէ մի ոք էր՝ ըստ հնաբեան անժուժալի էր, զնաւ ած ԹԷ միանգամայն այնքան եկեալ 'ի միասին՝ սրքան յարուցանէին մրրիկս : Այլ սակայն նա ամենայնի այնմ համբերեաց, և յամենայնի որ հինչ դիպեցան նմա իրքն՝ ոչ հինչ մեղաւ :

Այլ եղեալին այսուհետև նորա չարչարանքն դեղ մերոց չարեացն, և գժնդակ ալեկոծութիւնն այն մերոց վշտացս նաւահանգիստ. և յիւրաքանչիւր ումեք 'ի դիպուածսն մեր զնաւ ածցուք զսուրբն, տեսանելով զմի մարմին որ զամենայն աշխարհի ընկալաւ զչարիս առաքինասիրաց, մեք 'ի մխիթարսն կացցուք մեսացուք : Այլ երբ եւ առ մայր որ բարեգութ որ ամենայն ուստեք զձեռս կարկառեալ և զմանուկն զարհուրեալս ընդունիցի և սփոփիցէ, այնպէս առ դիրսն առ այնս ապաւինեացուք. և որ քան զամենայն յերկարագոյնն է մեզ տեսանել ամենեցուն բաւական առնելով զմխիթարութիւն, այնպէս երԹեալ գնայցեմք :

Ապա եԹէ ասիցես, նա Յովբ էր և վասն այնորիկ հանդուրժեաց, ես ոչ եմ իբրև զնա, մեծագոյնս ևս ասես ինձ զքո ամբաստանութիւն և զարգարոյն զքովութիւն. քանզի յաւէտ իրաւացի էր քեզ համբերել,

քան եթէ նմա։ Այլ ընդէր արդեօք։ Զի նա նախ քան զնորհեան և յառաջ քան զօրհնեան, յորժամ ոչ յոլով ինչ էր առաքինութեանն հաւատումն ինն, և ոչ այսքան հոգւոյն ընդոյ, յորժամ գժուարամարտ էին մեզ քըն, յորժամ անհնձքն զօրանային, յորժամ մահ էր ահաւոր։ Իսկ այժմ դիւրագոյն եղև մեզ մարտն զկնի Քրիստոսի գալստեանն ամենեցուն այնոցիկ ի քաց բարձելոց։ Արդէս զի և ոչ մի ինչ պատասխանի մեզ զկնի այսքան ժամանակի և այսպէս աձեցման և այսքան պարգևաց յայ տուելոց մեզ, եթէ ոչ կարիցեմք ի նոյն ժամանել ի նորա չափն։

Զայս ամենայն զմտաւ ածելով, զի և մեծամեծք էին նորա գժնդակութիւնքն, և յորժամ գժուարագոյն էր հանդիսն՝ յայնժամ մերկացաւ և մարտեաւ, համբերեցուք ի վերայ ամենայն եկելոցն մեզ առաքինաբար և բազում գոհութեամբ հանդերձ, զի կատացուք և նորա պսակացն հանդիպել։ Արասց լիցի ամենեցուն մեզ հասանել հնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր փառք հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՅԱՂԱԳՍ ՓՆԱՐԱՆԻՆ ԵԻ Ի ԽԱԶՆ

Բազում անգամ խնդրեցի յիս ինքեան ընդէր արդեօք հարքն մեր զաղօթարանացն տամբք որ ի քաղաքիս էն զանց առնելով, արտաքոյ քան զքաղաքս մեր այսօր և աստ ժողովել օրինադրեցին. քանզի ոչ վայրապար և ոչ ընդունայն ինձ զայս առնել։ Յաղագս որոյ և զպատճառն խնդրեցի և գտի այ հնորհաւն իրաւացի լեալ և դիւրաբան և վայելչական մեծաւօր տօնիս։ Այլ զի՞նչ է պատճառն։ Լսայէ յիշատակ կատարեմք. իսկ խաչեցեալն արտաքոյ քաղաքին խաչեցաւ, վասն այնորիկ արտաքոյ քաղաքիս զմեզ ածէն. քանզի հովուի զհետ, ասէ, երթիցեն ոչխարքն. ուր ինպատուոյ է, անդ էն և զինուորքն. և ուր անկած, անդ և արծուիք։ Արդ արտաքոյ քաղաքիս յաղագս այսո-

րիկ. մանաւանդ եթէ յառաջագոյն ցուցաք յաղագս դորին և յԱծայելն գրոց. զի մի ինչ կարծիցէք եթէ մեր իցեն ասացեալքս, զՊաւղոս ձեզ վկայ ածից: Այլ զինչ ասէ նա զզնհիցն. "Ոգոց արիւնն 'ի սրբուԹիւն սրբուԹեցոյ մտանէր, նոցին մարմինքն այրեցեալ լինէին արտաքոյ բանակին,,: Յաղագս այնորիկ և Յն զի սրբեսցէ զժողովուրդն, արտաքոյ դրանն չարչարեցաւ: Ելդ եկ ցուք առ նա այսուհետև արտաքոյ բանակին՝ բերելով զլուտանն Քրիստոսի: Հրամայեաց Պաւղոս և ասաց՝ ելցուք առ նա. հնազանդեցաք և ելաք: Ելարտաքոյ վասն այնորիկ ժողովելոք:

Այլ ընդէր 'ի վկայարանիս յայսմիկ և ոչ յայլում, քանզի ՚ոյ էնորհաւ յիւրաքանչիւր կողմանց քաղաքս մեր նշխարօք սրբոցն պարսպեալ է: Ելդ ընդէր արդեօք այսր և ոչ յայլ վկայարան ժողովէն զմեզ հարքն: Այստ մեռելոց ամենեցուն բազմաԹիւն կայ. և զի այսօր առ մեռեալս ելջ Յիսուս, յաղագս նորին և այս տեղի քնարան անուանի. զի ուսցիս եԹէ վախճանեալք որ աստ կան՝ ոչ մեռան, այլ 'ի քուն են: Ո՞ւ ասն զի նախ քան զգալուստն Քրիստոսի, մահ՝ մահ կոչեցեալ էր. "Յորում աւուր ուտիցէք 'ի փայտէդ, մահու մեռջիք,,. և դարձեալ. "Ընձեն որ մեղիցէ, նոյն և մեռցի,,. և "Մահ մեղաւորաց չար է,,. և "Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց,,. և "Մահ՝ առն հանգիստ,,: Ոչ մահ միայն, այլ և դժոխք կոչեցեալ լինէին. "Բացին, ասէ, դժոխք զանձինս իւրեանց,,. և "Ակայն ՚ած փրկեսցէ զանձն իմ 'ի ձեռաց դժոխոց յորժամ ընդունիցն զիս,,. և դարձեալ Յակոբ. "Իջուցանիցէք զծերուԹիւնս իմ հանդերձ տրտմուԹեամբ 'ի դժոխս,,:

Ո՞չ այս անուանս ունէր վախճանն մեր յառաջագոյն: Այլ յորմէ հետէ եկն Քրիստոս, ոչ ևս կոչի մահ, այլ քուն և հանգիստ. զի և Քրիստոս ասէ. "Ղազարոս բարեկամ մեր ննջեաց,,. և ոչ ասաց մեռաւ. և սակայն մեռեալ էր: Այլ զի ուսցիս եԹէ անուն օտար էր քնոյն, լուեալ, ասէ, աշակերտացն ամբոխեցան և ասացին. "Ահա ննջեաց, կեցցէ,,: Ելդ՞նպէս ոչ գիտէին զինչ էր ասացեալն: Այլ դարձեալ Պաւղոս. "Ոսկ արդ ննջեցեալքն 'ի Քրիստոս կորեան արդեօք,,.

առ նոսա զայս ասէր. և դարձեալ այլուր. "Մէք կեն-
դանիքս ոչ ժամանեսցուք ննջեցեալցն,,, յաղագս մե-
ռելոցն ասելով։ Եւ դարձեալ այլուր. "Բրի որ ի քուն
եաղ,,։ Եւ զի ուսցիս եթէ յաղագս մեռելոցն ասէ, ի
վերայ էած. "Եւ կանգնեցիր ի մեռելոց,,։ Տեսեր ա-
մենայն ուրէք քուն կոչեցեալ զմահ. յաղագս այսորիկ և
տեղիս այս քնարան անուանեցաւ։ Պիտանացու է մեզ
անունս այս և յոլով իմաստասիրութեամբ լի։

Բրդ յորժամ բերիցես այսր զմեռեալն, մի կոծես-
ցես զնա. քանզի ոչ ի մահ, այլ ի քուն ածես զնա.
բաւական լինի քեզ անուն տեղւոյն ի միխիթարութիւն
Թշուառութեանն։ Ասիր ուր ածես. ի քնարան։ Եւ
երբ. յետ մահուանն Վրիաստոսի, յորժամ Ջիւք հա-
տան մահու. որպէս զի ի տեղւոյս և ի ժամանակիս բա-
զում պատուոյ միխիթարութեան կարես շահել։ Ա՛նա-
ւանդ առ կանայս բանս այս մեր յերկարեսցի, վասն զի
ախտակից[1] իմն է ազգդ այդ, և առ Թշուառութիւնս[2]
դիւրանկանելի. այլ բաւական ունին դեղ բաղձանաց
զտեղւոյս անուն։ Ա՛ս այսորիկ այսր ժողովիմք այսօր։

Վանզի այսօր ի դժոխս շրջեցաւ տէրն մեր. այսօր
զպղնձի զդրունսն խորտակեաց. այսօր զնիգս երկաթիս
փշրեաց։ Ո՛ւր հաւաստեաւ զասացեալսն. ոչ ասաց՝ ե-
բաց զդրունսն պղնձիս, այլ խորտակեաց զդրունսն պղնձ-
ձիս. զի անպիտան լինի կապարանն։ Ա՛ն ի բաց եբարձ
զնիգսն, այլ փշրեաց, զի տկար լինի պահպանութիւնն.
քանզի ոչ դուռն և ոչ նիգ, թէպէտ և մտցէ ոք՝ ոչ ար-
գելեալ լինի։ Եւ յորժամ Վրիաստոս խորտակէ, ո՛վ
այլ ոք այնուհետև ուղղել կարացէ. վասն զի զոր տէր
ած խոտորեցուսցէ, ո՛վ ուղղեսցէ այնուհետև։ Օ՛ի և
Թագաւորք յորժամ հանդերձեալ իցեն արձակել ըզ-
կապեալս, առաքելով Թուղթս, ոչ այնպէս առնեն, այլ
Թողուն և զդրունսն և զբանսն, յայտնելով եթէ մնա-
նել անդրէն դարձեալ հարկաւոր է, կամ արձակելոցն
և կամ այլոց ոմանց փոխանակ նոցա։

Ոսկ Վրիաստոս ոչ այնպէս, այլ ցուցանել կամելով
եթէ վախճան ունի մահ, խորտակեաց զնորա զդրունսն

1 Ցերից օրինակ. մին ախտակիր է։ Էխարով անկանի. Թերևս առ անդ-
2 Օրինակ մի առ ցանկոտնիկեան խոնիկեան։

պղնձիս։ Այլ պղնձիս անուանեաց իբրև ոչ եթէ ի պղնձոյ էին դրունքն, այլ վկայտաբերութիւնն անվանելի, և զաստանալի և զմահու զբռնութիւնն յայտնելով։ Այս զի ուսցիս եթէ պղնձի և երկաթի զկայտաբերութիւնն և զանտեղիտալին յայտ առնեն, լուր զինչ ասէ առ ոմն խիստ. "Ջ լուք քո երկաթիք և Ձակատ քո պղնձի"։ Այլ իբրև եթէ ջիլ ունէր երկաթի և կամ Ձակատ պղնձի, այլ վասն զի անամեթ դէմս ունէր անկակղանալի և լիրբ։ Խորժէս ուսանել զնորդ էր անամեթի և անկակղանալի։ Յայնքան ժամանակի ոչ ոք զնա հաւանեցոյց՝ թողուլ և ոչ զմի որ յերկրպագելոյն, մինչև ինքն հրեշտակաց տէրն իջեալ հարկ արար։ Այսխ առաջին կապեաց զզօրաւորն, և ապա զկարասի նորա յափշտակեաց. յաղագս որոյ ի վերայ ածէ. "Ոչ անձն խաւարինս անտեսանելիս բացից"։ Պարձեալ վասն զԺոխոց բանս։

Այս զինչ էցեն խաւարայինքն անտեսանելիք։ Այն է մի ասացեալն, այլ կրկնապատիկ իմացեալ լինի. քանզի է խաւարային վայր, այլ տեսանել ոք թերևս կարէցէ Հրագի կամ լուսոյ տանելով անդր. այլ դԺոխոց տեղին աղջամղջին է և անվայելուչ, և ոչ երբեք զլուսոյ բնութիւն ընկալաւ. վասն այնորիկ խաւարինս անտեսանելիս ասէ. մինչև էջ ինքն արդարութեան արեգակն, այն որ լուսաւորեաց և զդԺոխոս արար երկիին. քանզի ուր Քրիստոս, անդ երկիին։ Պանձս խաւարայինս։ Այլ աղագաւ գանձս կոչէ զդԺոխոս. բազում ընչեղութիւն ամբարեալ էր անդր մարդկային բնութենէ և այլ. յաղագս որոյ և ասէն. "Եր Ձախանայն յամենեսեան և որ ի վերայ ամենեցուն որ կոչեն զնա"։ Ոչ զոր օրինակ թագաւոր ոք՝ աւազակապետ գտանելով որ ընթանայ ի քաղաքս, յափշտակէ ամենայն ուստեք և յայրս ծածկէ, անդր ամբարելով զընչեղութիւնն, կապելով զաւազակապետան չարչարանաց մատնէ և զգանձս նորա փոփոխէ ի թագաւորական շտեմարանս, նոյնպէս և Քրիստոս արար. կապեաց զաւազակապետն և զկապանապահն սատանայ, միանգամայն և զմահ, և զընչեղութիւնն զամենայն՝ զմարդկան ազգ ասեմ՝ փոփոխեաց ի տէրունական ի շտեմարանն։ Յաղագս այսոցիկ և Պաւղոս գոչէ ասելով՝ եթէ "Փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի և փոփոխեաց յարքայութիւն

որդւոյն իւրոյ սիրելւոյ ,, ։ Այս այն է հրաշալի, զի ինքն Թագաւորն ՚ի վերայ եկաց, Թեպէտ և Թագաւոր է ։ Օ՚ր ոչ աք արդեօք ՚ի Թագաւորաց արժանի արար երբեք, այլ ՚ի ձեռն սպասաւորաց արձակեն զկապեալսն ։ Այլ աստ ոչ այնպէս, այլ ինքն Թագաւորն եկն առ կապեալսն. ոչ ամաչեաց ՚ի կապարանէն և ոչ ՚ի կապեղոյն. քանզի զոր ստեղծն, ՚ի նոցանէ ամաչել ոչ էր հանդերձեալ. և խորտակեաց զդրուռնան, փշրեաց զնիգսն, ՚ի վերայ եկաց դժոխոց, անապատ զպահպանութիւնն զամենայն արար, և զկապանապահն առեալ կապեաց. այսպէս առ մեզ եղ ։ Առնաւորն գերեալ լինէր, հզօրն կապեալ. մահ ինքն ընկենոյր զվէնն, մերկ առ ոտս Թագաւորին ընԹանայր ։ Տեսէր զհրաշալի յաղԹութիւնն ։ Այսոցիկ քեզ և այլ ևս աքանչելագոյն. ուսիր զօրէնս յաղԹութեանն, և յայնժամ առաւել հիասցիս. զի ո՛չ թոյլ յաղԹեաց սատանայ, ՚ի ձեռն նոցին պարտեաց զնա Քրիստոս, և զնոյն զնորա զվէնն առնլով՝ այնքա՛ւք նման հերքեաց ։ Այս զիա՛րդ, լուր ։ Կայս և փայտ և մահ՝ պարտութեանն մերոյ էր նշանակ. կայս էր Այս, ոչ ևս զի՛տէր զայր ։ Փայտ էր ծառն, և մահ պատուհաս Ադամայ ։ Այլ ահա գարձեալ կայս և փայտ և մահ՝ յաղԹութեան նշանակք. փոխանակ Այսոյ՝ Աբրիամ. փոխանակ փայտին գիտութեան բարւոյ և չարի՝ փայտ խաչին, և փոխանակ մահուն Ադամայ՝ մահն Քրիստոսի ։ Տեսէր որովք յաղԹեաց, ՚ի ձեռն նոցին և ինքն սպարտեցաւ ։ Զառաջին յաղԹեաց սատանայ Ադամայ. խաչին կոխեաց Քրիստոս զսատանայ ։ Փայտ՝ մին առաքէր ՚ի դժոխս, միւսն և զերԹեալսն անտի վերստին կոչէր. դարձեալ փայտ՝ մին զգերեալսն մերկ ծածկէր, իսկ միւսն զյաղԹողն մերկ բևեռեալ ՚ի բարձրաւանդակին ամենեցուն ցուցանէր ։ Ա՛հ՝ մին և որ զվնի՛ն նորա դատապարտէր, և միւսն և նախ քան զնա լեալսն փոխէր ։ ,, Ո՛ խօսեսցի զզօրուԹիւնս տեառն ,, ։ Ի մահուա՛նէ եղեաք անմահք ։ Ա՛յս խաչին ուղղուԹիւնք ։

Ել էին արժանաւորք մեզ զվնքն, ոչ կայաք ՚ի պատերազմին, ոչ ընկալաք վէրս. և ոչ տեսաք զմարտն, և զյաղԹութիւն առաք ։ Այո՛ատակուԹիւնքն տեառն, և պսակքն մեր. վասն զի և մեր է յաղԹութիւնն, այլ հաչակեսցուք իբրև զնուաղս զյաղԹական երգն. ամե-

նեքեան այսօր ասասցուք օրհնելով զտէրն. "Ընկալաւ մեզ յաղթութիւն. ուր են դժոխք խայթոցք քո,,: Ո՛այս մեզ խաչն յօրինեաց: Այսչ հակառակ դիւաց, յաղթութիւն ընդդէմ մեզաց, սուսեր սուր որով զօձն խոցեաց Քրիստոս: Այսչ հօր կամք, և միածնին փառք, և հոգւոյն ցնծութիւն: Այսչ հրեշտակաց զարդ, եկեղեցւոյ ամրութիւն, պարծանք Պաւղոսի, սրբոց պարիսպ, լոյս ամենայն աշխարհի: Ո՛ի զոր օրինակ՝ի խաւարաւ ծածկեալ տան ջահ որ լուցանիցէ, և ուղղորդ կանգնելով զամենայն տունն լուսաւորէ, նոյնպէս և Քրիստոս զամենայն զմեզ յերկրէ՝ի բաց վարեաց. և զոր օրինակ ջահ՝ի վերայ գլխոյն գերագոյն զլոյս ունի, նոյնպէս և խաչն՝ի վերայ գլխոյն զարեգակն արդարութեան ունէր, որ պայծառացուցանէր: Ո՛նա տեսանելով բևեռեալ աշխարհ սարսեաց և շարժեցաւ երկիր. պատառեցան վէմք, և ոչ պատառեցան հրէական զգայութիւնքն. ցելաւ վարագոյրն, և ոչ ցելաւ չարաճճիութիւն[1] նոցա:

Այլ ընդէր պատառեցաւ վարագոյրն. զտէրն տեսանելով խաչեցեալ: Որ ախորժեսցէ, ասէ, կոխեսցէ զսրբութիւն սրբութեանցն. այսուհետև զինչ օգուտ է ինձ, այնպիսի պատարագք արտաքոյ ընծայեցան. զինչ շահ ինձ՝ի կտակէն, որ օգուտ յօրինացն. անոտի և ընդվայր ընծա իրատեցի այսքան ժամանակ: Ո՛այս և մարգարէն գոչէր ասելով. "Ընդէր խրոխտացան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան՝ի մնոտս,,: Այլ ասան եթէ "Երբև զոչխար՝ի սպանումն եկն, և երբև զորոջ առաջի կտրողի,,: Այս կրթեալ յայնքան ժամանակս՝ի մարգարէութիւնն, ՝ի մերձենալ իրին՝ յայնժամ անհաւատացին: Ցեսեր զիարդ խօսեցան ընդունայն: Յաղագս այնորիկ պատառեցաւ տաճարին վարագոյրն, զյաւիտենական ամբոյթիւնն յայտնելով որ զկնի այնոցիկ լինելոց էր:

Ո՛նա՝ի խաչին բևեռեալ, տեսցուք երեկորին զենեալ և սպանեալ զգառն հանդերձ պատուով, արդ մերձեսցուք այսուհետև հանդերձ ամենայն պաղատանօք և աչիւ: Ո՛չ տեսեք զհրեշտական զիարդ մերձ կայ-

1 Երկու օր· լոր յայնակցութիւն:

ին ունայն գերեզմանին. այլ վասն զի բոլորովին ընկալաւ զմարմինն տէրունական, յոլովս որոշէն և տեզս զպատիւն: Երեշտակք որք գերապանց են քան զմեր բնութիւնս, հանդերձ այնքան պատկառանօք և երկիւղիւ մերձ կային գերեզմանին. իսկ մեք ոչ յունայն գերեզման հանդերձեալ եմք մերձենալ, այլ՝ի նոյն ինքն՝ի տեղանն որ զգառնն ունի, ամբոխիւ և խռովութեամբ մատչիցիմք. և որ մեզ լինիցի այնու հեաւ ներուաճն Աստուածութեան:

Ահ վայրապար զայս ասեմ, այլ զի զյոլովս տեսանեմ յերեկորինս յայսմ ամբոխեալս և բարբառեալս, ՚ի վերայ իրերայ կալով և վազելով լուտանս, և մանաւանդ պատիժս ինքեանց քան եթէ փրկութիւն առնեն, այսր աղագաւ պատուիրեմ զբանս զայսոսիկ: Կանգնի յորժամ կայ առաջի սեղանոյն քահանայն, զձեռս յերկինս ձգելով կոչէ զՀոգին սուրբ, և աղաչէ մերձ գալ և միաւորել ընդ առաքելակայնն, բազում հեղութիւն, յոլով լուութիւն, յաւէտ բարեկարգութիւն. յորժամ տայ զընծորհս Հոգին, յորժամ իջանէ, յորժամ միաւորի ընդ առաքելակայնն, յորժամ տեսանես զոչխարն զենեալ և կատարեալ, յայնժամ ամբոխ, յայնժամ խռովութիւն և հակառակութիւն, յայնժամ զթշնամանս՚ի ներքս ածես, ասա ինձ, և զիա՞րդ կարասցես՚ի զենումանս վայելել հանդերձ խռովութեամբ՚ի սեղանս յայս հպելով: Ահ ես բաւական մեզ զի հանդերձ մեղօք մերձենամք, այլ և ոչ՚ի նմին իսկ՚ի ժամու շահիցն ժուժկալութիւնք առանց սխալանաց, այլ զմիմեանս խածատութեամբ և աքացութիւք:

Ընդէր ձեպիս, ով մարդ, վասն էր փութաս զոչխարն տեսանելով զենեալ: Կանգնի եթէ զբովանդակ պիշերն էր զենուածն զայս տեսանել, ունէիր արդեօք յագուածիրքն, ասա ինձ. զբովանդակ գօրն ժուժկալեցեր և ըզյոլով մանն պիշերոյն, և զայնքան աշխատութիւնս՚ի միում վայրկենի մանանե՞ս: Օ մնաս ած զինչ ես առաջիկայս, և ուստի հաս զպատճառն զենուածոյս: Ի փրկութենէ քումմէ. զենաւ յաղագս քո, և դու լքանես զնա զենեալ տեսանելով: "Աւր անկած է, ասէ, անդ և արծուիք,,: Իսկ մեք և ոչ արծուիք, այլ իբրև շունք մերձենամք. այսքան՚ի մեզ անասնութիւն, այսքան հա-

կառակուԹիւն։ Իմա զինչ է առն հեղեալն. արիւն որ զձեռագիրսն քոց մեղացն ջնջեաց. արիւն որ զանձն քո մաքրեաց, որ զաղտն լուաց, որ զպիտուԹիւնս և զիշխանուԹիւնս խայտառակեաց համարձակուԹեամբ նըշաւակելով ՚ի խաչին։

Այս զինչ է՝ խայտառակեաց ՚ի խաչին համարձակուԹիւ, նշաւակեաց ՚ի խաչին։ Յոլով քաջուԹիւ, ասէ, ունի զյաղԹուԹեանն օրինակ. բազում առաւ կախեալ է ՚ի բարձրուԹենէ ՚ի վերայ խաչին։ Օ՛ի զոր օրինակ Թագաւոր քաջ՝ դժնդակ պատերազմի յաղԹելով, ըզգրահս և զվահան և զղէն զապստամբին և զղինուորացն զպատերազմեցելոցն ՚ի վերայ բարձու փայտի ՚ի տեղւոջ յաղԹուԹեան գնիցէ, նոյնպէս և Քրիստոս պատերազմին յաղԹելով որ ընդ սատանայի էր, և զամենայն զինս նորա, զմահ, զանկՃս, զմեզս կախեաց ՚ի վերայ բարձրուԹեան խաչին իբրև յաղԹականի ուրումն, զի ամենեքեան գյաղԹանակն տեսանիցեն, վերին զօրուԹիւնքն որ յերկինսն են, ՚ի խնդարհ մարդիկ ՚ի վերայ երկրի, նոքին իսկ չար դևքն հերքեալք։

Այս արդ զի յայսքան պարգևս վայելեցաք, զանձինս ըստ կարողուԹեան արժանաւորս արասցուք գործեցեալոց բարեացն մեզ, զի և արքայուԹեանն երկնից դիտեսցուք ընդհօք և մարգասիրուԹեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբովն հոգւովն յաւիտեանս. ամէն։

Ի ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ա՛յսօր տէրն մեր ՚ի խաչին, և մեք ծոնս առնեմք. զի ուսցես եԹէ խաչն ոմն է և ժողով հոգևորական։ Քանզի յառաջն և ես խաչդ՝ անուն էր դատապարտուԹեան, իսկ այժմ իբր պատուական եղև. յառաջ նշան էր դատապարտուԹե, իսկ այժմ գործի փրկուԹե։ Այս իսկ բիւր բարեաց եղև մեզ պատճառք. նա զմեզ ՚ի մեղուԹենէ հրաժարեցոյց, նա որք ՚ի խաւարի նստէին՝ լուսաւորեաց. նա զմեզ զԹշնամիքս ընդ ոյ հաշտեցոյց, զոտարս ընտանեցոյց, զհեռաւորս մերձաւորս արար։ Այս է

Թշնամութեն կործանուածն, խաղաղութե զգուշութե և բիւր բարեաց գանձ։ Ալ ան այնորիկ ոչ մոլորիմք յանապատի, զի զձանապարհն ձշմարտութեան ծանեաք. ոչ ևս այսուհետև արքունական փողոցայն արտաքոյ գտանիցիմք, քանզի զգուռն մտին գտաք. ոչ երկնչիմք 'ի հրամուխ նետից սատանայի, քանզի զաղբիւրն գտաք։ Ալ ան այնորիկ չեմք յայրութեան, զի զփեսային ընկալաք. ոչ երկնչիմք 'ի գայլոյն, զի զհովիւն քաջ ունիմք. "Ես եմ, ասէ, հովիւն քաջ,,։ Ալ ան այնորիկ ոչ երկնչիմք 'ի բռնաւորէն, զի հուպ եմք առ արքայն. վասն այնորիկ ոտն ուրախութեան առնեմք, և խաչին յիշատակ կատարեմք։

*Ա.յսպէս և Պաւղոս վասն խաչին հրամայեաց առնել ոտն. "Ա.ղաստաւք մեք, ասէ, զոտնս զայս մի 'ի խմորս հինս, այլ յանխմոր սուրբութեան և ձշմարտութե,,. Նա և զպատճառն ևս յաւել և ասաց՝ եթէ "Օ.ատիկ մեր զհնաւ Քրիստոս,,։ Ցեսանէս զի վասն խաչին առնեմք ոտնս, զի 'ի խաչին զհնաւ Քրիստոս. քանզի ուր պատարագ է, անդ թողութի մեղաց. և ուր թողութի մեղաց, անդ հաշտութիւն տէրունական, ոտն և ուրախութիւն։ "Օ.ատիկ վասն մեր զհնաւ Քրիստոս,,։ Այս ո՞ր զհնաւ, ասա ինձ. 'ի վերայ բարձրութեան խաչին։ Այր էր սեղան պատարագին այնորիկ, քանզի և պատարագն նոր էր և զարմանալի։ Այս ինքն պատարագ էր և քահանայ, պատարագ ըստ մարմնոյ և քահանայ ըստ հոգւոյ. ինքն մատուցանէր և ինքն ընդունէր, մատուցանէր ըստ հոգւոյ և մատչէր ըստ մարմնոյ։ Այս լուր եթէ ոչպէս զերկոսին զայս Պաւղոս եցոյց. "Օ.ի ամ քահանայապետ որ 'ի մարդկանէ լինին, վասն մարդկան գլուխ կան նոքա առ Աստ. վասն այնորիկ հարկ է նմա զի ինքն ինչ մատուսցէ. ահաւասիկ նա մատուցանէ զինքն,,. և այլ լուր ասէ՝ եթէ "Քրիստոս մի անգամ մատոյց զանձն իւր պատարագ, զի զբազմաց մեղս բարձցէ. իսկ երկրորդ անգամ առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ որք ակն ունիցին նմա 'ի փրկութիւն,,։ Ա.ռանիկ անդ մատուցաւ՝ ուր ինքն զինքն մատուցանէր։ Ցեսէր ոչպէս պատարագ և քահանայ և սեղան եղև խաչն։

Այս ընդէր, ասեն, 'ի տաճարին ոչ մատեաւ պատարագն, այլ արտաքոյ քան զքաղաքն և զպարիսպն. զի

կատարեսցի այն որ ասացաւն՝ Թէ "Ընդ անօրէնս համարեցաւ,,։ Ընդէր՝ ի վերայ բարձու՝ ի ներքոյ երկնից զենաւ և ոչ ընդ յարկաւ. զի զօդոյն զբնութիւն սըրբեսցէ. վասն այնորիկ՝ ի բարձունս և ոչ ընդ յարկաւ, այլ ընդ յարկաւ երկնից։ Արբեր օդն՝ ի բարձր տեղոջն ուր զենոյր որոջն. սրբեր երկիրն, ծորեր լիջաներ արիւնն՝ ի կողինն՝ ի վերայ նորա։ Ա՝ ասն այնորիկ ոչ՝ ի հրեշտականն տաճարին, զի մի գողացեալ Թագուսցեն զբենութիւնն Հրեայքն, և մի առեալ կարծիցեն Թէ վասն ազգին այնորիկ միայն մատոյց զպատարագն։ Ա՝ ասն այնորիկ արտաքոյ քան զքաղաքն և զպարիսպն, զի իմացիս եթէ տիեզերական է և ամենայն երկրի է պատարագն, զի իմացիս եթէ միաբան ամենեցուն է սրբութիւնն, ոչ եթէ մասնական ինչ որպէս Հրեից։ Օ՝ի Հրեից վասն այնորիկ հրամայեաց նա զամենայն երկիր Թողուլ և՝ ի միում տեղւոջ մատուցանել պատարագ և յաղօթս կալ, քանզի յայնժամ ամենայն երկիր աղաւեղեալ էր՝ ի ծուխ և՝ ի ձենձեր և յայլ ամենայն պղծութեանց որ՝ ի զոհից հեթանոսաց՝ ի վերայ երկրի մատչէր։ Այսպ մեզ այսուհետև Վրիստոս իբրև եկն, զամենայն երկիր սրբեաց, և ամենայն երկիր աղօթատոց եղև։ Ա՝ ասն այնորիկ և Պաւղոս Համարձակագոյնս պատուիրէ և ասէ, այսուհետև առանց երկիւղի յաղօթս կալ ամենայն ուրեք. "Կամիմ, ասէ, եթէ յաղօթս կացցեն ամենայն ուրեք, Համբարձցեն զսուրբ ձեռս,,։ Ցեսեր զնարդ սրբեցան ամենայն երկիր։ Ա՝ ասն այնորիկ ամենայն ուրեք Համբառնալ զսուրբ ձեռս պատուէր տայ, զի ամենայն երկիր սուրբ եղև, սրբագոյն քան զսրբութիւնան որ՝ ի ներքս էին. զի անդ անասուն ոչխար մատչէր անբան, իսկ աստ Հոգևորական. զի որչափ մեծ է պատարագն, այնչափ առաւել է սրբութիւն։ Ա՝ ասն այնորիկ և տօն ասի խաչն։

Կամիս տեսանել և զմիւս կնոջ կարգ ուղղութեանն։ Օ՝ի դրախտն հինգ հազար ամ աւելի փակեալ և աղխեալ էր, այսօր մեզ երեայ զնա. և միւս կնոջ զառաջինն՝ ի ներքս եմոյծ։ Այսօր պարգևեաց մեզ առաջին գառառն. այսօր բարձրացոյց և Եհան զմեզ՝ ի Հայրենի քաղաքն, և զբնական տունն Հնորհեաց ամենայն բնութեան մարդկան։ "Այսօր ընդ իս եղիջիր,

ասէ, յադին դրախտին ,,: Ահա զինչ ասիցես արդեօք. 'ի խաչ ելեալ և բևեռեալ ես, և զդրախտն խոստա-նաս: Ա՛յո, ասէ, զի 'ի խաչին զզօրութիւն իմ պիտա-յես: Ահաղի իրքն արտմականք էին, և մի հայեսցիս 'ի տեսիլ խաչին, այլ զզօրութիւն խաչելոյն իմասցիս 'ի խաչին. զի զարմանք այն են, որ մանաւանդ զզօրու-թիւն նորա ցուցանեն: Ահաղի ոչ եթէ մեռեալ յա-րուցանէր, ոչ ծովու և հողմոյ սաստեր, և ոչ զդեւս հա-նէր, այլ 'ի խաչ ելանէր և ընդ խաչին բևեռէր, թշնա-մանէր և ընդ երեսս թքեալ լինէր, այպանէր և բամ-բասեալ լինէր:

Այս իրրև զայս ամենայն կատարէր, զչարութիւն մը-տաց աւազակին փոխէր, զի յերկուց կողմանց զնորա զօրութիւնն գիտասցես. զարհուրեցուցեալ զամենայն արարածս, զվէմն պատառեալ, և որ քան զվէմն ևս ան-զգայագոյն էր՝ ձգէր առ ինքն և պատուէր. "Այսօր, ասէ, ընդ իս եղիջիր յադին դրախտին ,,, յորժամ քե-րովբէն փակեալք պահէին զդրախտն. քանզի նա և քե-րովբէին իսկ տէր էր: Ասոյ հրոյ շուրջ պատէր, ասէ. այլ նա և գեհենին բոցոյ և կենաց և մահու իշխան է: Այս ոչ Թագաւոր աք երբեք յանձն առնու զայնպիսի ինչ ընկեր զծառայ իւր և պատուակից ընդ իւր առնուլ և 'ի քաղաք մտանել. իսկ Ահրիստոս զայս առնէր և 'ի մեծ գաւառն արքունական ընդ իւր զաւազակն մուծա-նէր, ոչ զի կոխան արասցէ զդրախտն և կամ անարգի-ցէ ոտիւք աւազակին, այլ զի առաւել ևս պատուեսցէ զդրախտն: Ինչ արդ այնպիսի ունելով տէր, զի այս-պէս[1] արասցէ՝ որ և զաւազակին արժանի առնէ վայելել 'ի դրախտն, և զմաքսաւորս և զպոռնիկս տանի յար-քայութիւնն երկնից, որ զմաքսաւորս և զպոռնիկս այն-պէս յարգէ և արժանացուցանէ այնմ պատուոյ և պար-գևաց: Ահաղի և ընդ բժիշկն յայնժամ առաւել զար-մանալի յորժամ տեսանեմք զմարդ կարեվէր և անհնա-րին ցաւօք բժշկեալ 'ի նմանէ և ածեալ հաստուցեալ յառողջութիւն, նոյնպէս և ընդ ամ զարմանալ յիրա-ւի է յորժամ զվէրս անբժշկականս առողջացուցէ, յորժամ զմաքսաւորս և զպոռնիկս յայնպիսի առողջու-

1 Օրինակ մի 'ի հինգ օրինակաց այդ կայէ:

թիւն հանցէ՝ զորս և արժանիս ցուցցէ արքայութեանն երկնից։

Այս զինչ արդեօք այնպիսի երախտիս եցոյց աւազակն զի զրախտին արժանի լինիցի յետ խաչելութեանն։ Ընդ կամիս եթէ կարճառօտիւք ասասցիս զառաքինութիւն նորա։ Ո՛չ յորժամ Պետրոս՝ի խնդարկ անդ ուրանայր, յայնժամ նա՝ի վեր անդ խոստովանէր։ Այս այսու ոչ եթէ զՊետրոս ինչ բամբասեմ, քաւ լիցի. այլ զառաքինութիւն աւազակին կամիմ ցուցանել։ Ո՛չ աշակերտն ոչ կարաց համբերել սպառնալեաց անկած աղջկանն. իսկ աւազակն տեսանէր ամբոխ բազմութիւն և լսէր զձայն աղաղակին որ շուրջ առեալ կային մինչեգնեալք, հայհոյութեամբ և այպն առնելով զքարընկէց բարբառն, և նա ոչ հայէր յայն և ոչ զմտաւ ածէր զանարդանս խաչելոյն. այլ հաւատացեալ մնաքն զամենայն Թողոյր, անցանէր զտկարականս և զխափանական, և Հանապէր զտէրն երկնից, և նմա երկիր պագանէր և ասէր. "Յիշեա զիս տէր, յորժամ գաս արքայութիւդ քով"։

Մի վայրապար անց և անց արտացոյք զաւազակաւն, և մի ամօթ վարկցուք վարդապետ առնուլ զնա մեզ, զոր ոչ ամօթ Հատարեցաւ զնա տէրն մեր նախ՝ի դրախտն մուծանել. և մի ակնածեսցուք վարդապետ առնուլ զնա՝ որ յառաջ քան զամենայն բնութիւն մարդկան արժանաւորեցաւ երկնային կոչմանն. այլ մի ըստ միոջէ հաւատեաւ փորձեսցուք, զի խնայցուք զնաչելոյն զօրութիւնն։ Ո՛չ ոչ ասաց իբրև ցՊետրոս՝ Թէ "Լկ զկնի իմ, և արարից զքեզ որսորդս մարդկան"։ ոչ ասաց ցնա իբրև ցերկոտասանսն՝ Թէ "Լսջիք յերկոտասան աթոռն դատել զերկոտասան ազգ Իսրայէլի"։ Ո՛չ և բանից անգամ երբեք արժանի չէր լեալ։ Ոչ զարմանք ցուցեալ, ոչ զմեռեալս յարուցեալ, ոչ զդևս հալածեալ, ոչ ծովու սաստեալ, ոչ վասն արքայութեանն Հառեալ և ոչ վասն գեհենի, և յառաջ քան զամենեսեան խոստովանեաց. և այն զի և ընկերն իւր Թշնամանէր զնա։

Ո՛չ և միւս ևս աւազակ էր խաչեալ ընդ նմա, զի կատարեսցի բանն այն՝ Թէ "Ընդ անօրէնս Հանդիսացաւ"։ Կամէին Հրեայքն նմա զիմադարձ լինել սքանչելեացն. այլ յամենայն կողմանց Հնմարտութիւնն լա-

սաւորէր և ամէն դիմագարձեալ կամաց նոցա։ Ա֊չնա֊մանէր զնա միւս աւազակն։ Տեսանէ՞ս զերկոսին ՚ի խա֊չին, զերկոսեան ՚ի բարս աւազակութեան, երկոքեան ՚ի չարութեան, այլ ոչ երկոքին ՚ի նմին անդէն. քան֊զի միոյն զաղքայութիւնն ժառանգէր, իսկ միւսն ՚ի գե֊հենն առաքիւր։ Այոյնպէս և երկուց աշակերտաց և աշա֊կերտքն, Յուդաս և երկոտասանքն. այլ նոքա ասէին, "Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք քեզ զզատիկն,,, իսկ նա ՚ի մատնեչն պատրաստէր և ասէր. "Օ՛րինչ կամիք տալ ինձ և ես մատնեցից զնա ձեզ,,։ Այ֊նոքա ՚ի սպաս պաշտամանն և յածայլին խորհուրդն պատրաստէին, և նա ՚ի մատնեչն փութայր։ Այոյնպէս և այսօր աւազակ և աւազակ, միւն Թշնամանէր և միւսն երկիր պագանէր, միւն հայհոյէր և միւսն ևս փառաւորէր և ասէր. "Ո՞վ երկնչիս դու յայ,,։

Տեսանե՞ս զվստահութիւն աւազակին, հայիս և ընդ համարձակութիւն ՚ի խաչին, տեսանե՞ս զխոնարհութիւն ՚ի խոշտանգանսն և զզգաստութիւն ՚ի տանջանսն։ Օ՛ի և յիւր միտս էր և զգաստ էր, պրկեալ ՚ի բևեռաց ան֊տի, ոչ ընդ այս ոչ զարմասյի։ Իսկ նա ոչ միայն ՚ի միտս իւր էր, այլ և զիւրն Թողեալ ընդ այլոց հոգաբարձէր, և վարդապետ լեալ ՚ի խաչին գտանէր և սաստէր և ա֊սէր. "Ո՞վ երկնչիս դու յայ,,։ Ա՛յ հայիր, ասէ, ՚ի ներքինն դատաստանս. զի այլ դատաւոր է, ասէ, անտես և անմատոյց, որոյ անաչառ է դատաստանն։ Ա՛յ ընդ այդ հայիր որ ՚ի խոնարհ դատեցար. զի վերինն չէ այդ պիսի։ Օ՛ի յայս ՚ի ներքնում դատաստանիս արդարք բազումք դատապարտին, և անիրաւք զերծանին և փըր֊ծանին, և ձեռասակարք խնային և անպարտքն տանջին։ Օ՛ի կամայ և ակամայ բազում անգամ մեղանչեն դա֊տաւորք, կամ Թէ անզիտակք արդարութեանն և խա֊բեալք, և կամ Թէ գիտակք և լընչից և ՚ի կաշառաց յաղԹեալք՝ բազում անգամ զարդարութիւնն ընդ ա֊նիրաւութեանն փոխանակեն։ Իսկ անդ ՚ի վեր ոչ ինչ այնպիսի է. զի ՚ամէն դատաւոր արդար, և դատաստանք նորա որպէս ղղյս ծագեսցեն, ուր ոչ գոյ խաւար և ան֊գիտութիւն։ Օ՛ի մի ասիցէ Թէ դատեցար անդ ՚ի խո֊նարհ և պարտաւորեցար, ածեալ հանէ զնա ՚ի վերին դատաստանն, յիշեցուցանէ նմա զերկիւղ ահագին բե֊

մին. միայն, ասէ, անդ՝ի վեր հայեաց և ոչ դատապար-
տիս՝ի վերին դատաւորէն և ոչ ընդ մահապարտեալն
պարտաւորիս, այլ ընկալցիս զվերին կարգեալ դատա-
տանն:

Տեսեր զիմաստութիւն աւազակին, հայեցար ընդ
միտս և ընդ վարդապետութիւն նորա, յանկարծակի՝ի
խաչէն յերկինս համբարձեալ: Որբափ ըմբռնանէր զնա
և ասէր. "Ո՛չ գիտես զի՝ի նմին պատժի եմք,,. ՝ինը-
մին, այսինքն՝ի տանջանս. զի որովք զնայն Քրիստո-
նես, ոչ ապաքէն զանձն քո անարգես: Որպէս զի որ՝ի
մեղս իցէ և զայլս բամբասիցէ, ոչ յառաջ քան զնա
զինքն պարտաւորէ. նոյնպէս և որ՝ի խեղութեան աք
իցէ և զայլս խեղութեամբ Քրիստոնիցէ, ոչ յառաջ
քան զայլս նախ զինքն Քրիստոնեայ: "Ո՛չ՝ի նմին դա-
տաստանի եմք,,: Ա՛ռաքելական օրէնս ընթեռնոյր նման,
աւետարանական բանս ասէր ընդ նման. "Ո՛չ դատիք,
զի մի դատապարտեսջիք,,: "Ո՛չ՝ի նմին դատաստանի
եմք,,: Ո՛րչափ գործ գործես, ով աւազակ. զայդպիսիս
պատասխանի տալով Հաւատար առնես զնա աւազակին:
Որչ, ասէ, այդպէս. այլ յուղղութիւն կամիմ ածել
զնա: Ա՛րկ այնուհետեւ զկարծիսն, որ սորին զհետ գայ:

Ա՛յս զի մի վասն Հաղորդական տանջանացն՝ իմանայ-
սես թէ և մեղացն Հաղորդս արար զնա, անդէն իսկ
վաղվաղակի ուղղէ զնա և ասէ. "Ո՛ւր յիրաւի, ասէ,
ըստ արժանեացն զոր գործեցաք և կրեցաք,,: Տեսա-
նէս զխոստովանութիւնն կատարեալ. տեսեր զիարդ մեր-
կացաւ զմեղսն՝ի խաչին: "Ա՛յս դու նախ, ասէ, զմեզս
քո զի արգահասցիս,,: Որ զոր էր որ յորդորէր, և ոչ զոր
այն որ բռնադատէր. այլ ինքն զինքն նշաւակէր և ա-
սէր՝ թէ "Ո՛ւր յիրաւի և ըստ արժանն զոր արարաքն՝
և կրեսցուք, և սա այնպիսի ինչ ոչ գործեաց չար,,. և
յետ այնորիկ ասէր. "Յիշեա զիս տէր յարքայութե-
քումն,,: Որ Համարձակէր յառաջ ասել՝ յիշեա զիս
յարքայութեան քումն, մինչև՝ի ձեռն խոստովանու-
թեանն՝ի բաց ընկենոյր զմեղացն բեռնն: Տեսանէս
զպիսի է խոստովանութիւնն: Խոստովան լինէր և
զղջախտն բանայր. խոստովանեաց և Հրաման առ Հա-
մբձակութեան, յաւազակութենէ զարքայութիւնն
խնդրէր:

Տեսանէս որչափ բարեաց պատճառ եղև մեզ խաչն։ Օ արքայութենէն յիշեցուցանէր։ Օ ինչ տեսանէր արդեօք այնպիսի ինչ ի նմա, զևեռաք և խաչին տեսիլ։ Ա՛յս աւանիկ, ասէ, Թէ խաչն արքայութեան է նշանակ. վասն այսորիկ կոչեմ զնա արքայ, քանզի զնա տեսանեմ ի խաչ ելեալ. և Թագաւորի փառք այն են յորժամ ի վերայ զօրաց իւրոց մեռանիցի։ Ա՛յս իսկ ասէր Թէ "Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց,,։ Ա՛ասն այսորիկ կոչեմ զնա արքայ. "Յիշեա զիս յարքայութեան քումմ,,։

Տեսանէս զի արքայութեանն նշանակ կոչի խաչն։ Կամիս ուսանել և այլուստ ևս զնոյն։ Ա՛ն Եթովպ զնա յերկրի, այլ ընդ իւր վերացոյց յերկինս։ Ա՛ւ արդ ուսաւ յայտ իցէ այս։ Օ՛ր ընդ նմա գալոց է յերկրորդ և ի փառաւորական գալստեանն. զի ուսցիս Եթէ ոչպէս վայելուչ է խաչն, վասն որոյ և փառս զնա կոչէ։

Ա՛յլ միա դիցուք Եթէ զիարդ խաչիւն գայցէ. Հարկ է այսուհետև զայս հանդիսիւ ցուցանել։ "Ա՛Եթէ ասիցեն, ասէ, Թէ ահա յշտեմարանս է Ք՛րիստոս, կամ Թէ ահա յանապատի, մի երԹայցէք անդր,,։ Ա՛ասն երկրորդ փառաւորական գալստեան նորա ասեմք, վասն սուտ քրիստոսացն, վասն սուտ մարգարէիցն, վասն նենգիւն. զի մի ոք զրիաեալ ի նորա գուռն անկցի։ Ք՛ան զի յառաջ քան զՔ՛րիստոս նեռն գալոց է, և մի ոք յորժամ զՀովիւն խնդրիցէ՝ գայլ ի գուռն անկանիցի, վասն այսորիկ ասեմ քեզ զնշան Հովուին գալստեան։ Ա՛ասն զի առաջին գալուստ նորա ի ծածուկ էր, մի կարծիցես Թէ և միւսն այնպիսի լինիցի, զայս նշան ետ։ Օ՛ր այն բազմաց անյայտ էր, և չիրաւի, քանզի եկն խնդրել զկորուսեալն. իսկ անդ ոչ այնպէս, այլ ոչպէս կամ զիարդ՝ ասէ. "Ա՛որպէս ծագէ փայլակն յարևելից և երևի մինչև ի մուտս արևու, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ,,։ Յանկարծ վաղվաղակի երևեսցի ամենեցուն, և ոչ ոք կարօտ լիցի հարցանել Եթէ աստ իցէ Ք՛րիստոսն կամ անդ։ Ա՛որպէս Ճառագայթի արեգականն ոչ կարօտիմք հարցանել Թէ երբ ծագիցէ, նոյնպէս ի լինել դատաստանի նորա ոչ կարօտիմք հարցանել Թէ եկն Ք՛րիստոս։ Ա՛յլ խնդիր այս է Թէ խաչիւն գայցէ. և մի ոք մոռասցուք զխաստուածն։ Ա՛յլ

լուր այսուհետեւ ըստ կարգի : Յայնժամ, ասէ : Աբր. "Յորժամ գայցէ, ասէ, արեգակն խաւարեսցի և լուսին մի տացէ զլոյս իւր ,, : Ա.Յիշեալ առաւել պայծառագոյն է լոյսն այն, զի և զպայծառական աստեղս ծածկեսցէ : "Յայնժամ, ասէ, աստեղք թօթափեսցին, և յայնժամ յայտնեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս ,, : Ցեսէր զփառս նշանին, այսինքն զխաչին : Արեգակն խաւարի և լուսին չտայ զլոյս իւր, և նա երևի և լուսաւորէ, յայտ է եթէ քան զլուսին լուսաւոր է և քան զարեգակն պայծառ : Այս իբրև Թագաւոր ոք որ կամիյի ի քաղաք մտանել, գունդք զօրաց յառաջանան, դրօշակիւքն և նշանաւորքն՝ որ բարձեալ ունին ի վերայ ուսոց իւրեանց՝ նշանակեն զմեծատոհմութիւն, նոյնպէս և ի գալստեան տեառն յերկնից յառաջանան գունդք հրեշտակացն և հրեշտակապետացն, բարձեալ բերեն զնշանն ի վերայ ուսոց իւրեանց և զարքունական գալուստն մեզ պատմեն : "Յայնժամ շարժեսցին ամենայն զօրութիւնք երկնից ,, : Ով այս վանն հրեշտակացն ասէ. զօրութիւնք կոչի զնոսա յայնժամ, և երկիւղ յոյժ : Ապա եր արդեօք կարգեսցի դատաստանն այն, ասա ինձ. քանզի ամենայն մարդկային բնութիւնս դատելոց են և առաջի կալոց ահաւոր բեմին : Այս վանն եր արդեօք զօրացեն հրեշտակք և կամ սարսիցեն, քանզի ոչ եթէ նոքա դատել գտանին : Ա.յլ որպէս առաջի իշխանի միոյ և սաստիկ դատաւորի ոչ եթէ որ յանցաւորքն միայն իցեն՝ կայցեն առաջի դողալով, այլ և որք ի սպասաւորս պաշտօնէից են և զանձին բիծ ինչ չգիտիցեն՝ սարսեալ և դողացեալ լինին վանն ահի դատաւորին, նոյնպէս և յայնժամ կարգ բնութեանս մերոյ մտեալ ի դատաստան՝ և նոքա որ ոչ զանձին մեծս ինչ գիտիցեն հրեշտակք՝ զարհուրին և դողան վանն առաւել երկիւղական դատաւորին :

Ա.յլ ընդէր յայնժամ խաչին գայցէ, և ընդէր նա վաս երևի. զի ուսոյին զիւրեանց անմոռնալիւնն զլացող խաչահանուանքն, վանն այնորիկ զնա նշան անառիկ լըրբութեան նոցա յուցանէ, և վանն այնորիկ զնա ընդ իւր բերէ : Լուր մարգարէին որ ասէ. "Յայնժամ կոծեսցին ազգք երկրի ,, առ ի տեսանել զդատախազն և ձանձրանալ զյանցանս իւրեանց : Այս զի դարձեալ զարմանաս

եթէ վխաչն ընդ իւր բերիցէ. նա և զվէրսն ևս ցուցա-
նէ. "Յայնժամ, ասէ, տեսցէն զոր խոցեցինն ,,: Այս
որպէս առ Թովմայիւն արար, և կամէր զթերահաւա-
տութիւն աշակերտին յանդիմանել, վասն այնորիկ ցու-
ցանէր նմա զտեղիս բևեռացն և զվէրսն և ասէր "Բերկ
զձեռս քո և տես եթէ ոչխ ոսկր և մարմին ոչ ունի ,,,
այնպէս և յայնժամ ցուցանէ նոցա վխաչն և զվէրսն,
և ցուցանէ թէ այն է նա որ 'ի խաչն եղ:

Այս ոչ եթէ խաչիւն միայն, այլ և 'ի նմին ձառէ խա-
չին զանչափ մարդասիրութիւն նորա պարտ է գիտել:
Յորժամ 'ի խաչին բևեռեալ էր, և ծաղր և այպն առ-
նէին և ընդ երեսս թքանէին, ասէր. "Հայր, թող սո-
ցա զի ոչ գիտեն զինչ գործեն ,,: Խաչեալն 'ի վերայ
խաչահանուացն աղօթս առնէր. իսկ նոքա հակառակ
նորա ասէին. "Եթէ որդի ես Ա, էջ 'ի խաչէդ ,,: Կա
վասն այնորիկ ոչ իջանէր, զի որդի Ա էր. վասն այս-
րիկ զի խաչեցի վասն մեր: "Էջ 'ի խաչէ այսր, ասէին,
և հաւատասցուք 'ի քեզ ,,: Այդ բարուրք են և պատ-
ճառք թերահաւատութեան: Այլ քան զիջանելն 'ի
խաչին մեծ ինչ գործեայ. քան զիջանելն 'ի խաչին մեծ
էր 'ի գերեզմանին յառնելն, որպ զիշն 'ի դուրան կայր.
քան զիջանելն 'ի խաչ անտի առաւել մեծ էր զմե-
ռեալն զպատեալն զի աղար չորեքօրեայ կապանօքն հա-
նել 'ի գերեզմանին: Ոչքա ասէին. "Եթէ որդի ես
Ա, փրկեա զանձն քո ,,. իսկ նա զամենայն ինչ առնէր,
զի զթշնամիս իւր սպրեցուսցէ. "Մոռ, ասէ, սոցա ըզ-
մեղս, զի ոչ գիտեն զինչ գործեն ,,: Այս ապա զինչ, ե-
թէ ոչ նոցա զմեզս եթէ ոչ: Եթէ զղջացեալ և ապաշ-
խարեալ էին . . . .[1]

Այսմն լեր տեառն քումմ խաչելոյ, որ վասն խաչա-
հանուացն ՀՀայր իւր աղաչէր: Այս զինչդ, ասէ, կա-
րիցեմ նմանիլ տեառն իմոմ: Եթէ կամիցիս, կա-
րացես. զի եթէ անհնար էր, զինչդ ասէր եթէ "Ա-
սարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ հոգւով ,,. եթէ
անհնար էր նմանիլ, ոչ կարէր ասել Պաւղոս՝ եթէ
"Նմանողք լերուք ինձ, որպէս և ես Քրիստոսի ,,: Ըստ
ոչ կարասցես նմանիլ տեառն քումմ, նման լեր ծառայ-

1 Պաւղոսի առաք. 16:

ակզին, զՊետիանոսէ ասեմ զառաքելոյ. զի նա տեառն իբրեւ նմանեաց։ Օ՛ի որպէս Քրիստոս միշտ՝ ի մէջ խաչահանուացն էր, Թողոյր զիաչն, չառնէր ինչ փոյթ զանձնէ իբրեւ, այլ վասն խաչահանուացն աղաչէր ըզհայր, նոյնպէս և ծառայն՝ի մէջ քարկոծչացն էր և քարակոխ չամենեցունց լինէր և ընդունէր չամենեցունց զձիպս քարանցն և զցաւս վիրացն որ՝ի նոցանէ նմա լինէր և ասէր. "Տէր, մի՛ համարիր սոցա զայս մեղս"[1]։ Այլ զի գիտասցես եթէ չօժարութեամբ և փութով կայ չաղօթս, ոչ եթէ ընդ վայր յոտն կայր և կամ կրկնեալ խոնարհէր, զներ ծունր և ասէր, այլ բազում զղջմամբ և բազում գթով։

Կամիցիս ցուցից քեզ և այլ միւս ծառայակից նորին որ առաւել ևս չարչարանս կրեր քան զնա. Պաւղոս ասէր. "Ի՛ Երեից հնգից չարչարեցայ, մի անգամ քարկոծ եղէ, երից նաւակոծ եղէ, զտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ"։ և միւսանգամ ասէր. "Ճախտիւք խնդրեի ես ինքնին նզով լինել՝ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց և ազգատոհմի իմոյ ըստ մարմնոյ"։

Կամիս և զայլ ազ գիտել ոչ՝ի նորոց, այլ՝ի հինս կատարանաց[2]։ Ահեղն և հանդարտն Մովսէս քարկոծեալ՝ի Երեից անտի, բազում անգամ անարգեալ և թշնամանեալ, ասէր. "Եթէ Թողուս սոցա զմեղս՝ Թող. ապա Թէ ոչ՝ և զիս ջնջեա՝ի գպրութենէն զոր գրեցեր"։ Տեսանէս աւանիկ զայլոց փրկութիւն նախ քան զիւրն խնդրէր յայ։ Ահ ինչ յանցեաւ, և զի կամիս հաղորդել հարուածոց նորա։ Օ՛ի ոչ ինչ զգամ իմոյ անզորութենէս յորժամ զայլս տեսանեմ չարչարեալ։ Նաւականն և մեզ յառակ օրինակի[3]։ Քրիստոս ասէր. "Հայր Թող սոցա զի ոչ գիտեն զինչ գործեն"։ և Պետիանոս ասէր. "Տէր, մի՛ համարիր սոցա զայս մեղս"։ և Պաւղոս ասէր. "Ճախտիւք խնդրեի ես ինքնին նզով լինել՝ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց և ազգատոհմի իմոյ ըստ մարմնոյ"։ և Մովսէս ասէր. "Եթէ Թողուս սոցա զմեղս՝ Թող. ապա Թէ ոչ՝ և զիս ջնջեա՝ի գպրութենէն յորում գրեցեր"։

Արդիւք արդեօք Թողութեան արժանի լինիցի այն-

1 Գործոց ութ. 4։ 2 տողք 5։ 3 տողք 24։

պիսին, ասա ինձ, որ տէրն ծառային հրամայէ ՚ի հնոց
և ՚ի նորոց կտակարանաց և յորդորէ յաղօթս կալ ՚ի
վերայ Թշնամեաց, և մեք դիմադարձք լինիմք առ ՚ի
չկալ յաղօթս ՚ի վերայ Թշնամեաց մերոց: Այլ ձեզ,
ով եղբարք, աղաչեմ. զի օրչափ աւելի են օրինակքն,
սոյնչափ եթէ ոչ նմանիցեմք՝ տանջանքն: Այծ և առ-
նել աղօթս ՚ի վերայ Թշնամեաց քան ՚ի վերայ սիրե-
լեաց. զի ոչ օգուտ է այս քան զայն: "Եթէ սիրէք,
ասէ, զսիրելիս ձեր, ոչ ինչ մեծ առնէք, զի և մաքսա-
ւորք զնոյն առնեն,,: Սակ յորժամ զԹշնամիան սիրի-
ցեմք, այ նմանող լինիմք ըստ մարդկան կարի, "որ զա-
րեգակն իւր ծագէ ՚ի վերայ չարաց և բարեաց,,: "Եւ ե-
թուք, ասէ, նմանողք հօրն ձերոյ որ յերկինս է,,. զի և
աղքատութեանն երկնից արժանաւոր լինիցիմք ՚ի Քրիս-
տոս Յի ՚ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

ՅԱՂՈՒԹՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Յաղագս գործոց ընդ ձեզ յառաջադոյն խօսեցայ և
միածնին փառաց, կարկեղով զրք զնորա պատիւն քակեն
և ՚ի ծնողին զնա օտարացուցանեն. բայց այսօր զբաւոյա-
կան բարսն կամիմ հրահանգել, յաղագս բարուց և ա-
ռաքինութեանց զամենայն զպատուիրանս առնել: Ամա-
սանդ եթէ ոչ է բարեյական միայն, այլ և գործական
քանս այս. քանզի յաղագս յարութեան ՚ի պատճառան
միտել պատրաստիմք: Այս պատճառ զննազան իմն է,
և ՚ի գործս միանգամայն զմեզ յարմարել, և զվարս մեր
յօրինել, և այ նախախնամութեամբն յամենայն ամ
բարեաւանութենէ ՚ի բաց վճարել: Ոչ ի զոր օրինակ
եթէ ոչ հաւատայցեմք, զկեանս մեր կործանեմք, և բիւր
չարեաց կոչումն ՚ի վարս մեր արկանեմք, և զդեր ՚ի վե-
րոյն ՚ի ստորև առնեմք, նոյնպէս և եթէ հաւատամք,
զրք յաղագս նախախնամութեանն քանք են ՚ի մեզ
համբարձ, և յոլով առաքինութեանցն պատրաստ
մեզ առնել, և հանդերձ բազում փութով զչարութիւն
փախուցանել, հանդարտութեամբ զամենայն և խաղա-
ղութեամբ ընդ:

Օ՛ի որ ոչն վաստահանայն ՚ի յառնել և վարկս տալ ընդ ատի գործեցելոց իւրոց, այլ մինչ ՚ի մերձակայ կենցաղս զմեր իրս կալ մնալ կարծիցէ, և յաղագս այլոց ինչ ոչ լինել, առաւել ոչ տանի առաքինութեան խնամ։ Այսպէս զի որպէս արդեօք՝ որ և ոչ մի ինչ հատուցումն յուսոյ յինքեան կալ առաջի աշխատութեանցն յուսայ, միաբդ և ՚ի չարեացն ՚ի բաց կայցէ, որ ոչ ինչ վաստահանայ անկանել ընդ տանջանօք փոխանակ չարաչար գործեցելոցն ՚ի նմանէ. այլ մատնելով զինքն անառակ ցանկութեանց՝ յիմ տեսակ չարութեան երթայ։

Իսկ որ վասն հանդերձեալ գատաստանին զինքն առնիցէ ընդ երկիւղիւ, և զահաւոր գատաստանն առաջի աչաց իւրոց ունիցի և զանհրաժարելի համարսն և զանփախչելի վճիռսն, ամենայն իրօք հնարիցի ողջախոհութեան և ցածութեան համբերել և այլոց առաքինութեանց, յանարգելութենէ և յանդգնութենէ և յայլ ամենայն չարեաց փախչելով. այլ և զամբաստանսն լեալս այ նախախնամութեանն՝ բազում համարձակութեամբ ըմբերանել կարասցէ։

Օ՛ի յորժամ տեսանէն ոմանք զՀեզսն և զողջախոհսն և որք արդարութեամբն կեան՝ խեղդեալք չաղքատութենէ և տարժանեալք և ոչ միում ումեք պատահել վերակացութեան՚ի մարդկանէ, իսկ որք կախարդութեամբ և բազում այլովք չարեօք լցեալք՝ ձոխութեամբ թաթաւուչք, փափկանան պայծառ պատմուճան զգենուլով, հոյլք ծառայից զՀեզ երթան, և բազում զօրութեամբ հրաշալիք են, վայելեն ՚ի թագաւորայ յաճախապէս ստացեալ զհամարձակութիւնն, և ապա չաղաղ այնոցիկ յոլովք ամբաստանեն զնոյ վերակացութենէն ասելով. Որ են այս իրք նախախնամութեան, ուր արդար գատաստանն. ողջախոհն և Հեզն ՚ի չարչարանս, անարգեալն և ապականեալն ՚ի բարիս. սա աքանչացեալ լինի, և նա արհամարհի. սա վայելէ ՚ի կերակուրս բազումս, նա չաղքատութեան և ՚ի վերջին չարիս է։

Իսկ որ չաղաղս չարութեան իմաստասիրել գիտէ, դիւրաւ զհայհոյութիւնն արգելցէ, և որք առ այնոսիկ դժուարին՝ ասէ. դադարեցէք հակառակ արարչին ձերոյ զլեզուդ սրել. զի ոչ մինչ ՚ի մերձակայ կենցաղս

մեր իրք կան ճան, այլ ՚ի միւս և ս կեանս ձեպիմք ՚ի յաւէտ երկայնադոյնս և որ մանաւանդ սպառուած ոչ ունին, և անդ ամենայն իրօք աղքատ այն՝ որ հանդերձ արդարութեամբ եկաց, փոխանակ այնպիսի աշխատութեանց առ՚ի հատուցումն, իսկ անարդելն և կախարդն յաղագս չարութեանն և տարաժամ փափկութեանն տաղ՚ի դատաստան։

Ա՚րդ մի՛ վասն մերձաւորացս միայն վարկցուք զնա խանձամութիւնն ոչ; այլ և վասն հանդերձելոցն։ Ա՚երձակաց՝ հանդէս և մարտ և ասպարէզ է, իսկ հանդերձեալքն՝ յաղթանակք և պսակք և մրցանակք։ Ա՚ւ զոր օրինակ ըմբշին ՚ի հանդէսն քրտամբք և փոշով և տապով բազմաւ, աշխատութեամբք և տաժանմամբք մերձցել է պարտ և արժան, նոյնպէս և արդարոյն ասա յոլովից համբերել վայել է և զամենայն ընդունել առաքինաբար, վասն զի հանդերձեալ է պայծառապէս առնալ զպսակն անդ։

Ա՚պա եթէ չարացն բարաւորութիւնք ամբոխեսցեն զոմանս, և յաղագս այնոցիկ դարձեալ զմտաւ ածցեն զոյն՝ զի զոր օրինակ աւազակք և գերեզմանակրկիտք և այրասպանք և չարք որք ՚ի ծովու նաւեն, նախ քան ՚ի յատեան գալ՝ ՚ի յոլով փափկութիւնս վայելեն, ինքեանց շահ զօտարացն թշուառութիւնն առնելով, և զանիրաւ ընչեզութիւնն ստանալով՝ հանապազօր արբենան, իսկ յորժամ ընդ դատաւորին վճռաւ լինին՝ փոխանակ ամենեցուն այնոցիկ դատաստան, նոյնպէս և նոքա որք զւռազան գնեն և զքէշնամանաց[1] սեղանն մերձ դնեն ինքեանց և զյօնան ՚ի վեր պրկելով՝ հարթուցանեն զմարդիկ ՚ի հրապարակին և զաղքատսն քարշեն, յորժամ միածին որդին ոչ եկեսցէ հանդերձ հրեշտակօք իւրովք, և ՚ի վերայ բեմի նստիցի և զաշխարհ ամենայն մերկ ՚ի մէջ ածիցէ, և ամայացեալք յամենայն պաճուճանաց ՚ի ներքս մտցեն, ոչ զոք օգնական և ոչ առ այնոցիկ վերակացու ունելով՝ առանց ամենայն թողութեան ՚ի հրեղէն գետն երթիցեն։

Ա՚րդ մի այսուհետև զայնպիսիսն երանեսցես, այլ արտասուեաց յաղագս հանդերձելոց պատուհասին. և

1 Ցոյն պղպեղ։

մի զարդարն աւաղեսցես վասն աստ աղքատութեանն, այլ երանեաց հանդերձելոց բարեացն ձխուԹեանն ա-ղագաւ, և որ յաղագս յարուԹենն բան է՝ ի քո միտդ արմատացո. զի եԹէ բարի իցես, ընտրեալդ յն և լինիցես հանդերձելոյն յուսոյ սակս՝ մեծագոյն յորդորումն առնելով. և եԹէ անարգել ոք իցես, ահիւ հանդերձելոյն տանջանաց ՚ի չարուԹենէն ողջախոհագոյն և ըզքեզ կազմեսցես:

Յաղագս այսորիկ և Պաւղոս յաձախապէս քարոզէ որ յաղագս յարուԹե բանն է, որպէս և այսօր լսեալք զգուշեն նորա և ասել. «Կանղի գիտեմք զի եԹէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, տաճար յայ ունիմք անձեռագործ յաւիտենական յերկինս»: Ապա եԹէ վերագոյն զբանս ՚ի մէջ ածցուք և տեսցուք ուսոյն ձեռնարկեսցի որ յաղագս յարուԹեան բանս: Ո՛չ ոչ վայրապար և ոչ որպէս դէպ եղեւ՝ զայս վարդապետուԹիւն շարժէր, այլ միանգամայն ցուցանել կամէրով զՀանդերձելոյն և զնահատակս բարեպաշտուԹեանն զօրացուցանել: Ապա զի այժմ յաղագս այ ընդհնին ՚ի բազում խաղաղուԹեան վայելեմք. զի և Թագաւոր բարեպաշտուԹեամբ կեայ, և իշխանք զՀաշմարտուԹիւն ծանեան. ռամիկք, քաղաքք և ազգք ՚ի մնջորուԹենէ ՚ի բաց վՀարեալք՝ Քրիստոսի ամենեքեան երկրպագեն:

Նայց ՚ի սկզբան քարոզուԹեանն այն ինչ սերմանն բարեպաշտուԹեանն անկեալ՝ յոլով էր պատերազմն, զանազան և ազգի ազգի: Իշխանք և Թագաւորք, ընտանիք և ազգակիցք և ամենեքեան ընդ հաւատացեալս մնարտչէին, և ՚ի նմին իսկ ՚ի բնուԹենէս պատերազմ յառաջ գայր. հայր զորդի մանեկը և զդուստր մայր և ծառայ զտէր: Ո՛չ ոչ քաղաք միայն և գեօղք, այլ և տունք բազում անգամ ընդդէմ ինքեանց բաժանեին, և քան զամենայն ազգային մարտն դժնդակագոյն էր որ յայնժամ ունէր խռովուԹիւնն. զի և ինչք յափշտակեալ լինէին, և ազատուԹիւն մանեալ, և յաղագս նոցին իսկ կենացն վտանգ ՚ի վերայ կախեալ էր, ոչ բարբարոսաց յարուցելոց ՚ի վերայ մեր, այլ նոքին կարծեցեալքն վերակացուքն և իշխանք քան զամենայն պատերազմողս դժնդակագոյնք՝ իշխեցեալոյն ՚ի վերայ

յառնէին։ Եւ զայս Պաւղոս յայտնելով ասէր՝ եթէ “Յոլով ձգանց համբերելով չարչարեցայք, երբեմն թշնամանօք և նեղութեամբ տեսարան լեալք, և երբեմն հաղորդք եղէք որք այսպէս շրջեցաքս. քանզի և կապանաց իմոց չարչարակիցք եղէք, և զյափշտակութիւն ստացուածոց ձերոց խնդութեամբ ընկալայք”։ Եւ գաղատացւոյն ասէր. “Ընդէ՞ր չարչարեցայք զուր, եթէ իսկ մնասի”։ Եւ թեսաղոնիկեցւոյն և փիլիպեցւոյն և ամենեցուն պարզաբար որոց առաքէր թուղթս, յոլովագոյնս այսպիսիս վկայէր։

Եւ ոչ այն միայն էր դժնդակագոյն զի բաղում պատերազմ շարժեալ լինէր և մշտնջենաւոր, այլ զի և ի նոսին իսկ ի հաւատացեալսն դէպ լինէր գայթակղութիւն լինել՝ հեռք և հակառակութիւնք և նախանձք։ Եւ զայս Պաւղոսի յայտ արարեալ ասէր. “Ընտաքոյ մսոքդ և ի ներքոյ երկիւղ”։ Եւ այս քան զայն պատերազմ դժնդակագոյն էր և իշխեցեալոցն և վարդապետացն. ոչ այնպէս ի թշնամեացն ի վերայ յարձակմանէ երկնչէր Պաւղոս, որպէս ի ներքոյ կօրծանմանէն և լրնտանեացն անօրէնութենէ։ Վասնզի մի ոք պոռնկեցաւ ի կորնթացիսն, և զամենայն ժամանակն զայն կատարեաց ողբալով, և զաղխն իւր հնձէր և երիցս կականէր զնոյն։

Օ՛րինչ ոչ նուազագոյն քան զատացեալս ոչ յաձախապէս ի վերայ բերէր՝ հաւատացելոյն զօրհնան ասէ, զհրամանացն բնութիւն յոլով քրտամբք և աշխատութեամբք լի։ Վասն զի ոչ դիւրին և յարմարեալ էր ձանապարհն յոր գնոսա ածէին առաքեալքն, այլ խոշոր իմն և դժուարուղեալ, և խնամատարի ումեմն և արթուն եղելոյ կարօտեալ անձին և զգուշացելոյ ամենայն ուստեք. յաղագս որոյ Վրիստոս նեղ և անձուկ զնա կոչեաց։ Վասն զի ոչ էր պարտ և արժան ընդարձակութեամբ կեալ, որպէս առ հեթանոսսն գարշութեամբ և արբեցութեամբ և շատկերութեամբ և փափկութիւ՛ և բազմապաշտ լինելով. այլ վայել էր և ի ցանկութեանց փախչել և զբռնութիւնն սանձել և ի վատթար ցանկութեանցն ի բաց դառնալ և զինչն արհամարհել և անտես առնել, զփառսն կոխել, և քան զնախանձ և զյաչաղանս պէր ի վերոյ լինել։ Յոբիկ որ-

քան ընձեռանն աշխատութիւնս, զիտեն ոչք հանապազ ընդ նոսա մնաւսին։

Օ՜ինչ քան զվատթար ցանկութիւնն գժնդակ գոյն, ասա ինձ, որ իբրև զշուն կատաղեալ յաձախապես ՚ի վերայ մեր վազէ և հանապազօր զմեզ խանդէ, և կարօտանայ յարաժամ արիւնեղելոյ անձին։ Օ՜ինչ և քան զչքնարկութիւն քաղցրագոյն, և ՚ի զրկողէն վրէժ չառնուլ, բարեգործել զարտմեցուցանողսն և օրհնել զուրացողսն, և ոչ բան դառն հանել երբէք արտաքս. և զողջախոհութիւն ոչ միայն ՚ի գործան միայն, այլ միտքն ՚ի խորհուրդսն ՚ի նոսին ցուցանել պարտ և արժան է։ Օ՜ի ոչ ՚ի պագչտեալ գործոցն և եթ, այլ և ՚ի դիմացն յայնպիսեացդ վայել է ՚ի բաց կալ, մի ինչ վայելել տեսանելեօքս գեղեցկադէմ կանանց. որպէս զի և փոխանակ տեսութեանցն այնոցիկ զվերջինն դատաստանն հանդերձեալ իցեմք ընդունել։ Այս զի բազում է պատերազմ յարտաքսոցն, յոլով երկիւղ և ՚ի ներքուստ, յաձախ և աշխատութիւն յառաքինութեցն գործս։

Այլ և միւս ևս չորրորդ՝ անհմտութիւն հանդերձելոցն, անգիտանալ զմեծ հանդիսն զայն. քանզի ոչ ՚ի նախահարցդ զբարեպաշտութիւն փոխանորդեալ առին առաքեալքն, այլ ոչք ՚ի թուլութեան և ՚ի փափկութենէ և յարբեցութեան և ՚ի վատթարութեան և ՚ի պակշոտութեան կին մնեալք։ Եւ սուղ ինչ և այս դժուարութիւն նահատակութեանցն էր, ոչ ՚ի վերուստ և ոչ ՚ի նախահարցն խրատեալք զիմաստասիրութիւնն զայն, այլ այն ինչ նախ առաջին ՚ի հանդիսն յայնոսիկ արձակեալ զնոսա։

Այս յորժամ այսքան էր դժնդակութիւն նահատակեցելոցն, յայնժամ միթէ արկ զնոցա զաշխատութիւնն յաձախապէս, և որ յաղագս յարութեան բանն է՝ շարժէր. և ոչ այնու միայն յորդորել և շարժել զլսողսն, այլ և պատմութեամբ իւրոց չարչարանաց. յաղագս ոչ բոյ նախ քան զանկանել ՚ի յարութեանն բանս՝ զիւր չարչարանն պատմէր ասելով այսպէս. “Յանկնային նեղեալք, այլ ոչ վհատեալք. տարակուսեալք, այլ ոչ անյուսացեալք. հալածեալք, այլ ոչ լքեալք. գայթակղեալք, այլ ոչ կորուսեալք.,,։ Այս զհանապազորդեան

մահան ասէ, զի իբրև կենդանւոյն ինն մեռեալ չըջէին, ՚ի մահ մատնեալք հանապազօր. և յորժամ որ յա-րութեան բանս էր՝ շարժէր. "Կանգի հաւատամք, ասէր, թէ որ յարոյց զտէր Յիսուս ՚ի մեռելոց, և զմեզ ՚ի ձեռն Յիսուսի յարուսցէ և մերձ կացուսցէ ձեօք հանդերձ. յաղագս որոյ ոչ զչարիմք՝ մեծ միխիթարութիւն ունելով ՚ի նահատակութիւնն զհանդերձելոյն յոյս,,։

Եւ ոչ ասաց առ նոսա՝ վասն որոյ մի զչարիք, այլ թէ "յաղագս որոյ ոչ զչարիմք,,. ցուցանելով զինքն ՚ի միջնէնաւոր նահատակութիւնն լեալ։ Կանգի յոլովիակատն հանդիսն ըմբիշն ՚ի ներքս մտցի, իսկ մանկամարդն ՚ի հեռուստ նստելով՝ բանիւքն ՚ի ներքս տանի զօգնականութիւնն, այնքան միայն առնելով խնամակալութիւն մարտուցեալին՝ որքան խօսելով օգնել. բայց մերձ կալ և զձեռացն կռուակցութիւն ոչ յորդորեն օրէնքն նմա։ Իսկ ՚ի բարեպաշտութեան գործոցն ոչ այսպէս, այլ միանգամայն և մանկամարդ և ըմբիշ. վասն այնորիկ և ոչ արտաքոյ ուրեք մրցարանին նստելով, այլ ՚ի նոսին իսկ մեռեալ ՚ի նահատակութիւնն մտցէ, որք հանդերձ նովաւ նահատակին ասելով "Յաղագս որոյ ոչ զչարիմք,,։ Եւ ոչ ասաց՝ վասն որոյ ոչ զչարիմ, այլ "յաղագս որոյ ոչ զչարիմք,,, գովաբեքք զնոսա կանգնել կամելով։ Օ՛ի "թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքինն նորանայ օր ըստ օրէ,,։

Ձես զՀոգևոր խնամատութիւնն. յորդորեաց զնոսա որովք չարչարեան լինէր՝ ասելով. "Յամենայնի նեղեալք, այլ ոչ վհատեալք,,։ Յորդորեաց և յարութիւն Քրիստոսի ասելով՝ թէ "Որ յարոյցն զՅիսուս, և զմեզ յարուսցէ,,։ Ասէ և այլ միխիթարութեան օրինակ շարժէր այնուհետև։ Զի ասն զի յոլովք ՚ի մարդկանէ կարճամիտք ոմանք են և տկարք և տաղտկոտք. թէ և հաւանեալք են յաղագս յարութեան, յերկայնութենէ ժամանակին վհատեալք՝ տաղտկան և անկանին, այլ լիմն նոցա օրինակ յարութեան ընձեռէ վարձ և հատուցումն։ Եւ զինչ է այն. "Թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքինն նորանայ օր ըստ օրէ,,. արտաքինն մարդ զմարմինն կոչելով, և ներքինն մարդ զոգին ասելով։

Եւ զոր ասէն այսպիսի է. նախ քան զյառնելն և յա-

ռաջ քան զվայելելն ՚ի հանդերձեալ փառսն՝ առտ ար-
դէն փոխանակ աշխատութեանցն ոչ սուղ ինչ առեր ըզ-
հատուցումն, նովին՝ նեղեցեալ անձամբն նորանալ, պար-
կեշտագոյնք լինելով և երկիւղածք, զրկանաց համբե-
րել յերկարագոյնս, հաստատունք և զօրաւորք։ Օ՜ որ
օրինակ այնոքիկ որք զմարմնական նահատակութիւնն
մերկին նախ քան զպատկան և զյաղթանակն, ՚ի նմին խակ
՚ի հրահանգիչն և ՚ի կռուոյն մեծ առնուն զվարձն, զի
առողջագոյնս և զօրաւորս զիւրեանց զմարմինն ՚ի ձեռն
կրթութեանն կազմելով՝ յամենայն ախտից ՚ի բաց փախ-
չին, նոյնպէս և ՚ի նահատակութիւնս առաքինութենն
նախ քան զորդւոյն ՅՍ գալ և յառաջ քան զհատու-
ցումն մեզ առնուլ՝ մեծ աստուստ զպտղոյն վարձս շա-
հիմք, զանձինս մեր իմաստասիրագոյնս յարմարելով։

Վանգն որք յոլովակի նաւեն ընդ ծով և բիւրուց
ալեկոծութեանց համբերեն և ընդ բազում գազանս
մարտնչին և յոքանչ ձմեռնային բռնոյն համբերեն, նախ
քան զվաճառականութեանն շահս՝ ոչ փոքր ինչ ՚ի հե-
ռի ուղեգնացութենէն շահին զպտուղս, համարձակե-
լովք և իշխելովք ՚ի խորն մտանել, հեշտ ախորժակօքն
ընդ խորն անցանելով առնել զուղեգնացութին։ Այն-
պէս և ՚ի մերձակայ կեանս որ բազում նեղութեանց
համբերէ յաղագս Վրիստոսի և յոլով գժնդակութիւք
չարչարի, նախ քան զարքայութիւնն երկնից մեծամեծ
վարձս առնու՝ համարձակութիւն առ Ած ստանալով.
անդուստ այնուհետև և բարձրագոյն զիւր անձն ունի,
մինչ զի զամենայն գժնդակութիւնան ծաղր առնել։ Այս
զի յայտնագոյն ասացեալս լինիցի, առակաւ զսա կամիմ
երևեցուն առնել։

Այն ինքն Պաւղոս բիւր գժնդակութեանց համբե-
րելով՝ ոչ սուղ ինչ և աստէն կառ զհատուցումն ծաղր
և այսպէս առնելով զբանաւորսն, ընդդէմ կալով մեղ-
լոցն, անտես առնէր զչարչարանսն. առ երկաթս և առ
խորս և առ գահավիժութիւնս և առ ՚ի վերայ յարու-
ցեալ խռովութիւս և գրժանս և առ ամենայն իսկ գժնդ-
գակութիւնս անպարհուրելի կայր միայր. որում զինչ
արգելօք լինիցի հաւասար։ Վանգի զանվարժան և որոց
ոչ ինչ դեպ եղև կրել գժնդակութիւնս, որ ինչ և պա-
տահէ՝ ամբոխել սովորեաց. մանաւանդ ոչ և նոքին իրքն

միայն, այլ և սոսկ վստահութիւն. և զինչ ասեմ սոսկ վստահութիւն, հովանիքն զարհուրեցուցանեն զերկեւս և զանկիւնս։ Սոսկ որ յամենայնէն մերկանայ և այնպէս մնանէ, թէ և բիւր ինչ չարչարիցի, քան զամենայն այնոսիկ դեր՝ի վերոյ է։

Ահ փոքր է և այս սոսկ, և ոչ որպէս դեպ իցէ վարձ, յորժամ ոչ ինչ զնա՝ի մարդկայնոցս կարէ տրտմեցուցանել. յորժամ որ այլոյն ահաւոր՝ այն դիւրաւ արհամարհելի նման լինիցի. յորժամ յորոց այլքն սոսկան և պակչին, նա հանդերձեալ իցէ զայն ծաղր առնել՝ի ձեռն զերազանցեալ համբերութեանն։ Վասնզի եթէ զմարմին երանեմք, որ կարէ զցուրտ և զտօթ առանց տրտմութեան բերել և զսով և զկարօտութիւն և զուզեզնացութիւն և զայլ տաժանմունս, և առաւել ոչ այն երանել պարտ և արժան է, որ զօրէ կարողապէս և առաքինաբար զամենայն դժնդակութեանցն ընդունել զարկածս, և պահել անծառայելի յարաժամ զիւր ըզխորհուրդն։ Ոչ ինպիսին քան զթագաւորան է թագաւորագոյն. վասն զի զնոսա և սպասաւորքն և սիրելիք և ընտանիք բազում անգամ կարող լինելով անիրաւել՝ դաւաճանեն և չարագործեն. բայց որ զայնպիսի զանձն ունի, որպէս առացի այժմ, ոչ թագաւոր, ոչ սպասաւոր, ոչ ծառայ, ոչ բարեկամ, ոչ թշնամի և ոչ ինքն բանաւորկուն ձնասել կարասցէ։ Վասնզի որպէս արդեօք որ հրահանգեցաւն՝ ոչ ինչ՝ի կարծեցեալոցն՝ի դժնդակութեանցն գոլ վտանգ։

Ոչ ինպիսի էր երանելին Պաւղոս, և յաղագս այնոցիկ ասէր. "Ո՞ զմեզ որոշեսցէ՝ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւն, եթէ անձկութիւն, եթէ սով, եթէ մերկութիւն, եթէ հալածումն, եթէ սուր. որպէս և գրեալ է՝ եթէ վասն քո մեռանիմք զօրօր օր. վարկաք իբրև ոչխարք՝ի սպանդ. այլ յայնոսիկ յամենեսեան առաւել յաղթեմք՝ի ձեռն Յիսուսի Քրիստոսի որ սիրեացն զմեզ"։ Օ՜նոյն և աստ զեկուցանելով ասէր. "Ակնկալութիւն և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքինն նորանայ օր ըստ օրէ"։ Ցկարագոյն մարմինս լինի, ասէ, այլ կարողագոյն և զօրաւոր հոգին, մանաւանդ և թևաւոր։

Այս զօր օրինակ զինուոր ճանուննս ունելով զղէնս,

Թէպէտ և յոյժ քաջ ոք լիցի և պատերազմող, ոչ կա կարէ լինել ընդդիմամարտասցն ահաւոր. զինուցն ծանրութեամբ, ոտիցն արագութեամբ և մանկանցն զօրութեամբ և պատերազմողացն հմտութեամբ վատթարանայ։ Այսպա եթէ թեթևագոյն առնուցու և դիւրընձեռելիս, զօրէն ամենայն թռչնոց՝ ի վերայ յարձակի ընդդիմակացայն։ Նոյնպէս և որ զմարմին իւր ոչ արբեցութեամբ և ոչ հանգստեամբ և ոչ փափկութեամբ պարարէ, այլ պահօք և աղօթիւք և յոլով նեղութեանց համբերութեամբ՝ թեթևագոյն և անօսր կազմելով, իբրև զթռչուն լինի՝ ի վերուստ լինել՝ այնպէս հանգերձ բազում յարձակմամբ՝ ի դիւացն բանակ անկանելով՝ դիւրաւ՝ ի վայր բերէ զընդդիմակայ զօրութիւնն և ընդ ձեռամբ առնէ։ Այնպէս և Պաւղոս յոլով վերս առնելով, և՝ ի կապարան անկեալ և՝ ի փայտի կապեալ, զմարմինն տկարագոյն ունէր ցաւոցն ձնշեալ, բայց զոգին զօրաւոր և քաջասիրտ. և այնպէս հզօր, մինչ զի կապեալն ձայնիւ սաստեցոյց զհիմննս կապարանին, և զբանտապահն արձակ կապեալն յոտս իւր էած, և զգեղեցկն փակեալս եբաց։

Ոչ փոքր լինչ մխիթարութիւն եւս մեզ Պաւղոս և նախ քան զյարութիւնն լատագոյն մեզ լինել և իմաստասէրս՝ ի փորձութիւնս. վասն այսորիկ ասէ. «Այնզօրութիւնք զհամբերութիւն գործեն և համբերութիւն զընտրութիւն և ընտրութիւն զյոյս, իսկ յոյս ոչ ամաչեցուցանէ»։ Եւ դարձեալ այլ ոմն ասէ. «Այսչափ անփորձ անընտիր է, և անընտիրն և ոչ միոյ բանի արժանաւոր»։ Արդեօք զի և ոչ փոքր լինչ պտուղս շահիմք՝ ի նեղութենէն նախ քան զյարութիւնն, զանձն ընտիր ունելով և ողջախոհ և յամենայն երկչոտութենէ՝ ի բաց վճարեալ։ Յաղագս այսորիկ ասէ՝ թէ «Արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքինն նորանայ», զանօրէնութիւն զամենայն արտաքս վարելով և զվատթար ցանկութիւնսն հնձուցանելով, քան զընչաւորութիւնս և զփառասիրութիւնս և քան զամենայն միանգամայն զապականեալ խորհուրդսն գեր՝ ի վերոյ հանդիպեալ։ Օ՜ի զոր օրինակ անձն որ յընդարձակութենէ վայելէ և՝ ի դատարկութեան՝ դիւրաւ յախտիցն յայսցանէ վասնի, նոյնպէս և որ յաղագս բարեպաշտութեն

միշտ անպարապ լինի և ոչ երբեք պարապուին ածէ ի մանալ վասն ՚ի մարտն Հոգւոյ, և յամենայնէ յայն մանէ վճռաբեալ լինի : Վասն այսորիկ ասէ՝ թէ "Նոր բանայ օր քան զօր ,, :

Այս դարձեալ միսիթարելով զանձինս վասնգեալս ՚ի գժնդակութիւնս որ ՚ի վերայ գան, և ոչ գիտեն իմաստասիրել ՚ի ձեռն հանգերձեալ յուսոյն, զնոսա յարուցանելով այսպէս ասէր. "Վանդի առաժամայն թեթև նեղութեանս մերոյ զառաւելութիւն յաւիտենական ծանր փառացն գործէ ՚ի մեզ, ոչ գիտելով մեր զտեսանելիս, այլ զանտեսանելիսն. զի երևելիքս առ ժամանակ մի են, իսկ ոչ տեսանելիքն յաւիտենականք ,, : Օ որ ասէն այսպիսի է. մանաւանդ և աստ հանձարեղս առնելով զանձինս մեր և իմաստասիրապոյս, և զկնի այնոցիկ բիւր մեզ առնէ զհանգերձեալ բարիսն, ոչ զուգամիտ աշխատութեանցն, այլ առաւել քան զմարտսն և ըստ քանակութեան և ըստ որպիսութեան : Այս զայնոսիկ զերկոսեան և զգերազանցութիւնն յայտնէ և զվերանգան, և զախտիցն առնէ համեմատութիւն, և ընդդիմադրութիւն ժամանակիցս և յաւիտենականին, որ թեթևագոյնս է՝ զծանրութիւն, և նեղութեան՝ զըզփառան : Վանդի նեղութիւնն, ասէ, առժամանակեայ է և թեթև. իսկ հանդիսան, մանաւանդ թէ ոչ առաց հանդիսա՝ այլ փառս, որ յաւէտ մեծագոյն է քան զըզհանդիսան, յաւիտենականք և միանձնաւորք և մեծք : Վանդի ծանրութիւն աստ՝ ոչ որ աշխատութեամբ և ծանրաբեռն է՝ ասէ, այլ զբազմակատարն և զպատուականն ըստ յոլովից սովորութեանն՝ որք զբազմապատիկն ծանրապատիկ կոչել սովորեցին : Յորժամ ասէ ծանրութիւն փառաց, զմեծութիւնն ասէ :

Այլ մի զայդ միայն վարկանիր, ասէ, զի տանջիտ և հալածիտ, այլ և զպատկան և զհատուցումին. վասն զի յոլով մեծագոյնք և պայծառք քան զմերձակայս էնոքա, և վախճան ոչ ունին և ոչ սպառուած : Այլ այսոքիկ, ասէ, հմմուտ եմք են, բայց նոքա յուսով. և սոքա երևին, իսկ նոքա ոչ երևին : Այլ եթէ զօրասոյ իցես, աներևոյթքն քեզ քան զերևելիսն են յայտնագոյնք, և զնոսա մանաւանդ քան եթէ զսոսա կարես տեսանել. վասն զի այսոքիկ անյայտին, իսկ նոքա միան :

Յաղագս որոյ ’ի վերայ էած ասելով. “Ա՛ռ գիտեմք զտեսանելիսս, այլ զանտեսանելիսն. զի երևելիքս առ ժամանակեայք են, և յաւիտենականքն աներևոյթք,,։

Այլ եթէ ասես, զիա՞րդ կարացից զաներևոյթսն տեսանել և զմերձակայս ոչ տեսանել, ’ի կենցաղականացս յայսցանէ ’ի հաւատ զքեզ ածել հնարիմ։ Ոչ և ոչ յաշխարհի իրացս զժամանակեայսս զայս տեսցէ ոք զիւրաւ, եթէ ոչ զաներևոյթն նախ քան զերևելիսս տեսանիցէ։ Որպիսի՞ ինչ ասեմ. վաճառական համբերէ ձմեռնայինս մրրկաց և ալեկոծութեանց ’ի վերայ յաւուցելոց, նաւաբեկութեանց և բիւր այլոց դժուարուԹեանց. այլ վայելէ յընչեղութեանն յետ մրրկացն, զբեռն ամբարելով յոլով գործէ զշահն։ Ա՛յլ սակայն ձմերօրնքն յառաջագոյն, և ամբարքն յետոյ. և ալեկոծութիւնքն և խորքն երևին յեղանել ’ի նաւահանգըստէն, բայց շահք ոչ երևին, քանզի տակաւին յաւսով է։ Ա՛յլ սակայն եթէ ոչ առանձինն առ աներևոյթն առ այն հայէր, և ոչ մերձակայն ’ի ձեռին լինէր. զի և ոչ յաւսով ձեռնարկէր ’ի մերձակայն և յերևելին։

Նոյնպէս և մշակ լծէ եղինս և արօր ձգէ և ակօս սպառէ և սերմն յերկիր ընկենու և զամենայն զոր ունի ծախէ, և ցրտոյ և սառամանեաց և անձրևաց և այլոց ամենեցուն հարկերէ յոլով աշխատութեանց. և զկնի այնպիսի վաստակոց վաստահանայ վարսաւորեալս տեսանել զանդաստանն և լի գկալն։ Ա՛յլ և աստանօր նախ առաջին էր աշխատութիւնն, և զկնի վարձն անյայտ և աներևելի, իսկ աշխատութիւնն յայտնի և երևելի. և նա յաւսով, բայց սա ’ի ձեռս։ Ա՛յլ սակայն և նա եթէ ոչ յառաջագոյն յաներևոյթն հայեսցի՝ յանյայտն և յանտեսանելին մարմնաւոր աչօք, ոչ միայն ոչ լծեսցէ եղինս և ոչ արօր ձգեսցէ և ոչ սերմն ’ի վայր ընկեսցէ, այլ և ոչ շարժեսցի իսկ երբէք ’ի տանէն ’ի գործն յայն։

Այլ արդ ոչ պարտ ոչ իսկ արդեօք յիմարութիւն ’ի կենցաղական յիրսս նախ քան զերևելիսս զաներևոյթսն տեսանել, և նախ քան զվարձան համբերել աշխատութեանցն, և յառաջագոյն զդժուարինսն զամենայն ընդունել վաստահանայ երբեմն որ ’ի նոցանէ լինի շահն, յաներևելեացն յաւսով յորդորեալ՝ այնպէս բուռն հարկանէ զերևելեացն, իսկ յիածայինսն յերկուանալ և ան-

հաւանել, և նախ քան զաշխատութիւնն ոչ հաւատալ Հատուցմանց, և քան զերկրադործն և զնաւավարն կարձամիտ երևել. զի ոչ միայն ըստ այմ քան զնոսա երևեսցուք վատթարք յերկուանալով ի հանդերձեալն, այլ և ըստ միւսումն ևս ոչ ինչ նուազ քան զսոյն։

Այլ ո՞ր է այն. զի սոքա ոչ յոք յաղագս վախճանին համարձակեաւ լինին, և սակայն և ոչ այնպէս ի պատկաւն ի բաց կան. ոչ արժանի հաւատալոյ ունին երաշխաւոր և ոչ նմանող զոք։ Ա՛ան զի մշակ բազում անգամ յետ սերմանն ընկենլոյ և զարմանելոյ զերկիրն և վարսաւորեալս տեսանելոյ զանդաստանն, կարկտի կամ ժանգոյ կամ մարախոյ և կամ այլոյ իրիք այնպիսեաց ի վերայ եկեալ հարուած՝ արտաքս անկաւ յաշխատութեանն հատուցմանէ, և զկնի յոլով քրտանց ունայն ձեռաք ի տուն դառնայ։ Այլ վաճառական զարձեալ յետ բազում խորոց լեալ ածէ զնաւն առ նմին իսկ բերան նաւահանգստին. բազում անգամ անկանելով ի վերայ հողմք՝ առ վիմի ուրեք ի խորտակել զնաւն, աշխատութեամբք ելանէ ապրեցուցանելով զմարմինն մերկ։ Այլ պարզաբար իսկ յամենայն ի կենցաղականս յոլովից բազում անգամ ի վախճանին Հաշուառութեանց այսպիսեաց հանդիպել դեպ լինի։

Ասացի ի նահատակութիւնն ոչ է այս. այլ հարկաւոր է ամենայն իրաք որ հանդիսանայն և սերմանէն ըզբարեպաշտութիւնն, բազում աշխատութիւնս ընդունելով հանդիպել կատարածին։ Ո՛չ ոչ օգոյ անհաւատութեանց և ոչ հողմոյ մրրկելոյ զաշխատութեանցն հատուցմունս հրամայէ ՅԱ, այլ յերկինս ամբարի ի շուքմարանս գանձուց։ Ա՛ան այսօրիկ և Պաւղոս ասէր՝ թէ «Լեզուք ի՛ն զկամքերութիւն գործէ, և հանգերութիւն ընծայութիւն, և ընծայութիւն զոյս, իսկ յոյս ոչ ամաչեցուցանէ»։

Ընդ մի այսուհետև ասիցես՝ թէ անելեւմտիք են հանդերձեալքն. քանզի եթէ ախորժեսցես հատատեաւ հարցանել, քան զոր ի ձեռաղ է՝ յաւէտ երևելագոյնք են։ Այլ զսոյն զայս գարձեալ ցուցանելով մեզ Պաւղոս, զնոսա յաւիտենականս կոչէ և զսոսա ժամանակեայս, ժամանակիսն զապականութիւն նոցա յայտ-

նելով։ Ա՝ ասն զի նախ քան զերևելն Թուչին և՛ ի բաց ընթանան, և յառաջ քան զկալ ինալ արագընթաց լինի նոցա փոփոխումն, անհատատալի է ստացուածն։ Այլ զսոյն յընչեզուքիւն և՛ ի փառս և՛ ի զօրութիւնս և՛ ի մարմնոց զեղեցկակազմութիւնս, նոյն և յուժեղութիւս և յամենայն պարզաբար յաշխարհականս պատահեալս տեսցէ ոք արդեօք։

Ա՝ ասն այսորիկ և մարդարէն կատակելով զփափկայեալն և որ յինչսն մխեալք են և յայլ ամենայն երևելիս իբրև կայուն, ասէ. "Ա՝ արկան զայն, և ոչ իբրև փախստական"։ Ո՛չ զոր օրինակ զատուերէ ոչ պոյ ումեք բուռն հարկանել, նոյնպէս և ոչ զկենցաղականս իրացս. այլ ամենք՛ ի վախճանին քակտին, և կէսք նախ քան զկատարածն քան զամենայն ուղիս սրագոյն ցնդին։

Այլ Հանդերձեալքն ոչ այսպէս. ոչ գիտեն զփոփոխումն, ոչ ընդունին զհոտորումն, ոչ ձանձրանան զծերութիւն, ոչ ընդունին զայլայլութիւն. այլ առյաւտան միշտ և՛ ի նմին իակ՛ ի քաջալայեալս ինան կան ինան։ Արդեօք զի Թէ աներևոյթ և անյայտ իցէ ասել և անհատատի՝ զերձակայ զիրան, որք ոչ կան ինան ընդ ստացողն, այլ փոփոխեն զտեարսն, և հանապազօր յայսցանէ՛ ի միւսն ևս փոփոխեալք վազեն, և դարձեալ՛ ի նոցանէ յայլ ոմն։

Ո՛չայս ամենայն յայտնելով մեզ Պաւղոս՝ այսր առաքաւ զերձակայս ժամանակեայս, և զհանդերձեալսն յատիենականս կոչելով, որ յաղագս յարութեան բանն է՝ դարձեալ շարժէ այսպէս. "Այանգի գիտեմք զի եԹէ երկրային տաձար մերոյ խորանիս քակտեսցի, շինուած տաձարի ունիմք յայ անձեռագործ յաւիտենական յերկինս"։ Տես դարձեալ և աստ զիարդ բանիւքն վարի տիրաբար, և՛ ի ձեռն նորին անուանցն երևեցուցանէ զմնացն զօրութիւն։ Այանգի ոչ վայրապար խորան զմարմինս կոչեաց, այլ առժամանակեայ զերձաւոր կեանսս մեզ եցոյց, և՛ ի լուսաւորչն փոփոխումն յայտնելով պայծառապէս ասէ. Ընդէր հառաչես և արտասուես, սիրելի, վասն զի հարկանիս և հալածիս և՛ ի կապարան արկանիս։ Ո՛չ ողբաս զմնացուորս չարչարանս զայս. պարտիւր աղօԹել բովանդակ

իսկ մարմնոյդ լուծումն լինել. մանաւանդ եթէ ոչ վայ-
բապար մարմնոյ, այլ որ 'ի մարմնի են ապականութիւք:
Եւ զի ցուցցէ եթէ մանաւոր չարչարանքս այսոքիկ
ոչ միայն զմեզ տրտմեցուցանել ոչ պարտին, այլ և
զուարձացուցանել և ա, ցուցանէ՝ թէ ընդհանրական և
կատարեալ 'ի բաց բարձումն գործ աղօթիցն մեզ՝ է 'ի
ձեռն մահուան լուծումնն, այսպէս ասելով. "Քան-
զի յայսմ հառաչեմք զի զբնակութիւնն մեր որ յերկ-
նից է՝ զգենուլ ցանկամք,,: Յաձախ խորանի՝ կամ ըզ-
մարմինն 'ի ձեռն երկոցունց անուանցն կոչէ, կամ տա-
ձար խորանի զտունս յորս բնակեմք, զքաղաքս, զձև
մերձաւոր կենցաղոյս: Եւ ոչ պարզաբար ասաց՝ գիտեմ,
այլ գիտեմք. և զլսողսն մերձ առնելով զբարս, ոչ յա-
զագս երկբայական[1] իրաց խօսիմ, ասէ, և ոչ վասն ան-
գիտութեանց, այլ յաղագս որոց արդէն իսկ զհաւատոն
ընկալաք՝ 'ի Քրիստոսի յարութիւնն հաւատալով. վասն
այնորիկ և խորանս ասէ որ ատեն իրք, և բանիւ տի-
րաբար վարի: Եւ ասաց 'ի բաց բարձաւ և ապականե-
ցաւ, այլ քակեցաւ, ցուցանելով եթէ քակի, զի պայ-
ծառագոյն կանգնեսցի և լուսաւորագոյն:

Եւ ապա իբրև աշխատութեանց և հանդիսից արար
զհամեմատութիւնն յորպիսութենէն, 'ի ժամանակէն,
նմանապէս և ատ առնէ. որ անկանի՝ զմարմինն խորան
կոչէ, և որ յառնէն՝ տաձար, այլ յաւիտենական, այլ
երկնային. և 'ի ժամանակէն և 'ի տեղւոյն ցուցանէ զգե-
րազանցութիւնն. քանզի սա երկրային, և նա երկնայ-
ին: Եւ այժմ մարմնոյ կարօտանայ և բնակութեան յա-
զագս տկարութեան մարմնոյ, իսկ յայնժամ ինքն ան-
դամ լինիցի մարմնոյն և բնակութիւն, ոչ ինչ կարօ-
տեալ յարկի և ծածկութից ոմանց, փոխանակ ամե-
նայնի բաւական լեալ նոցա անապականութիւնն:

Եւ ցուցանելով զառաւելութիւն զառաջինկայից բա-
րեացն ասէ. "Յայսմ հեծեմք,,: Եւ ոչ ասաց՝ հե-
ծեմ, այլ հաւասար առնէ զկեանն, "քանզի յայսոսիկ
հեծեմք,,, կամելով զնոսա յիւր իմաստասիրութիւնն
ձգել և իւրում դասուղութեն առնել հաղորդս: "Քան-
զի յայսոսիկ հեծեմք, զի բնակութեանն մերոյ որ յեր-

1 Պակասէր յերկոսին օրինակաւն երկբայական. յաւելաւ 'ի յունէն:

կինս է՝ բաղձամբ ,, : Եւ պարզաբար ասաց զգենուլ այլ ՚ի վերայ զգենուլ . “ միայն եթէ զգեցեալք՝ ոչ մերկ գտանիցիմք ,, : Զոմանի իմն անյայտ գոլ ասացեալն . բայց լինի յայտնագոյն ՚ի ձեռն որ ՚ի կարգի ՚ի վերայ ածեալն է :

“ Զանգի որ եմք ՚ի խորանին՝ ծանրացեալք հեծեմք , զի ոչ կամիմք մերկանալ , այլ զգենուլ ,, : Զստանձօր որք զմարմնոյն բնութիւն բամբասեն և ամբաստանք զմերմ մարմնոյս լինին , կարևոր վէր եւ : Զ ասն զի ասէ՝ թէ հեծեմք և մերկանալ չկամիմք . զի մի՛ կարծիցես եթէ իբրև ՚ի չարէ փախչիցի ՚ի մարմնոյն և ՚ի գժնդակ ուռմեքէ ՚ի պատճառէ , ՚ի թշնամոյ և ՚ի պատերազմողէ , լուր զիարդ ուղղէ զապարատանութիւնն : Զախ առաջինն՝ ասելով եթէ “ հեծեմք , զի զբնակութիւնն մեր որ յերկինս է՝ ՚ի վերայ զգենուլ փափագեմք ,, . քանզի որ զգեցեալն լինի , այնմ յորում էն՝ այլ իմն զգեցեալ լինի : Զայ ապա ասելովն “ հեծեմք ծանրացեալք յաղագս ոչ կամելոյ մերկանալ , այլ ՚ի վերայ զգենուլ ,, : Զայ զոր ասէն այսպիսի է . ոչ զմարմինս ՚ի բաց դնել ախորժեմ , ասէ , այլ զապականութիւնն . ոչ զմարմինն , այլ զմահն : Զայլ է մարմին և այլ մահ և այլ ապականութիւն . ոչ մարմին ապականութիւն է , և ոչ ապականութիւն մարմին . ապականացու է մարմին , այլ ոչ ապականութիւն մարմին . և մահկանացու է մարմին , այլ ոչ մահ մարմին : Զանգի մարմին գործ եղև ՚ով , իսկ ապականութիւն և մահ ՚ի մեղայ ՚ի ներքս մտին : Զորդ զծառոյն ՚ի բաց մերկանալ կամիմ , ասէ , և ոչ զընտանին . և օտարոտի է ոչ մարմինն , այլ ապականութիւնն : Զայ յաղագս այսորիկ ասէ . “ Եւ ախորժեմք մերկանալ ,, զանապականութիւն : ԶՄիշակ է մարմինս ապականութեան և անապականութեան . մերկանայ զապականութիւն , և զգենու զանապականութիւն . ՚ի բաց ընկենու զոր էառ ՚ի մեզանէն , և ստանայ զոր էառ ՚ով ՚ինքնէն :

Զայ զի ուսցիս եթէ զմերկանալն ոչ յաղագս մարմնոյ ասէ , այլ վասն ապականութեան և մահու , լուր վազվաղակի ՚ի վերայ ածեցելոցն : Զանգի ասելով “ ոչ կամիմք մերկանալ , այլ ՚ի վերայ զգենուլ ,, , ոչ ասաց՝ զի ընկղմի մարմին ՚ի մարմնոյ , այլ եթէ “ զի ընկղմի մահկանացուս ՚ի կենացն ,, . այս է զի ապականելոցի , զի կոխիցէ . որպէս զի զկորուստն ոչ մարմնոյ ասէ , այլ մահու

և ապականութեան։ Ա՝ան զի՝ ի վերայ գալով կեանքն ոչ զմարմին ապականէն և ծախէն, այլ զածեալն՝ ի վերայ նորա զապականութիւն և զմահ։ Ա՝պա ուրեմն և հեծութիւնն ոչ յաղագս մարմնոյ, այլ վասն՝ ի վերայ կացելոյ ապականութեանն է։ Վ՝անզի մարմին ծանր է և բեռնաւոր և դժուարաբեռն. ոչ յաղագս իւրոյ բնութեանն, այլ վասն զկնի եղելոյ՝ ի նմա մահուն. ոչ զի մարմին է, այլ զի ապականացուն է։ Ա՝յսքան է նորա բարեառհմտութիւն, մինչ զի և՝ ի նմին իսկ յապականութենէն զպատիւն զիւր ցուցանէ։ Ա՝ ան զի հովանիք առաքելոյն զանմարմին զօրութիւնս՝ ի բաց հալածէին, և փոշին և աճիւն նոցա յաղթող լինէր դիւացն, և հանդերձքն որ՝ ի մարմինս նոցա մերձեցեալք էին՝ զհիւանդութիւնս՝ ի բաց բառնային և առողջութիւն՝ ի վերայ ածէին։

Ա՝ի ինչ լնձ խօղ և մաղձ ասիցես և քիրան և աղտ և զայլ ինչ զոր բամբասողքն մարմնոյ խօսին. զի ոչ մարմնոյ բնութիւն էր այս, այլ զկնի եղելոյ ապականութեան։ Ա՝պա եթէ կամիցիս ուսանել զնորա զառաքինութիւն, զմտաւ ած զանդամոյն ամենեցուն զաեղծուածս, զձևս, զգօրութիւնս, զառ իրեաւր ձայնակցութիւնն և զամենայն բարի օրինօք իմաստասիրեալս ամենեցուն զքաղաքակցութիւնս ընկալեալ, և հաւասարեաւ տեսցես զանդամոյն առ միմեանս գյարմարութիւն։

Ւսկ եթէ՝ ի վեր և՝ ի վայր ընդ սոյնս անցանելով զապականութիւն նորա և զախտսն յերկարեսցես, և ոչ աստանօր տարակուսիմ՝ ի պատասխանին։ Ո՝չ ի ոչ միայն և ոչ մի ինչ միաս չեղև աստուստ, այլ և յոլով շահ աղգի մարդկան. և յայտ աստի է զի՝ սուրբքն ամենայն հանդերձ կենօքս զհրեշտակական առաքինութիւնս ցուցին, և ոչ մի ինչ նոցա միաս անտի եղև յառաքինութեան յընթացսն։ Ւսկ որ յամբարշտութիւնն հայէին, ոչ սուզ ինչ խափանումն ընկալան զմարմնոյն ապականութիւն՝ ոչ յերկարաձգագոյնս ինչ երթալ իւրեանց անօրէնութեամբն։

Վ՝անզի եթէ զապականացուս զայս և զաւրչարելի զմարմին զգեցեալք յոլովք՝ ի մարդկանէ զնծութիւնն երևութացան, և յաղագս այնպիսի ինն կարծիս դնելոյ ինքեանց յոգոնս հնարեցան իրս, եթէ ոչ չարչա-

ըելի ունէին մարմին և ապականացու որ յանդիմանէր զնոցա տկարութիւնն, զի արդեօք ոչ մեղրեցուցանէին յանմտացն։ Արդ յորժամ ամբարշտութեանն, որ է վերջին սահման չարութեան, խափանիչ երևի լեալն, և սրբոցն ընձեռէ զոգւոյն արուեստիւն ցուցանել, որովհետև թողութեան արդեօք հանդիպեսցին որք բամբասեն և չարահամբաւեն զնա։ Ո՛չ և ոչ զայն ունիս ասել ինչ յաղագս նորա, այլ թէ և ՚ծգխտութեանն մեզ պատճառք նա եղև։ Վասնզի եթէ անտեսանելիքն ՚ի ստացուածոյ աշխարհիս արարածովք իմացեալ տեսանին, և հաւատ ՚ի լսելոյ, քաջայայտ է թէ աչօք և ականջօք պաշտպանեալ հոգի զարարիչն իւր ծանեալ զՅԾ։ Այս յաղագս այսորիկ Պաւղոս գոչէ ասելով. “Ալէ կամիմ զնա մերկանալ, այլ ՚ի վերայ նորա զգենուլ զանմահութիւնն ,,։

Այս մի ասեր՝ զիաղդ կարողութիւն է զարձեալ յառնել այսմ մարմնոյ և լինել անապական։ Ո՛չ յորժամ ՚ոյ զօրութիւնն գործեսցէ, զիարդն մեզ մի կացցէ։ Այս զի՞նչ ասեմ զՅ, զքեզ ինքն գործօնեայ արար յարութեանն, երբեմն սերմանեօքն և երբեմն արուեստիւքն և երբեմն հալական նիւթովքն։ Վասնզի և սերմն եթէ ոչ յառաջագոյն մեռցի և նեխեսցի և ապականեսցի, ոչ ծնանի զհասկն։ Արդ որպէս տեսանես անդ զհատն ապականեալ և լուծեալ և ոչ յերկուանաս յաղագս յարութեանն, այլ յոյս քեզ առնես յայնմագոյնս, զի եթէ կայ մնայ ոչ ապականեալ՝ ոչ յառնէ երբեք, նոյնպէս զմտաւ ածէ և յաղագս քո մարմնոյդ. յորժամ տեսանես զապականութիւնն, յայնժամ հանդերձիս յաղագս յարութեանն իմաստասիրել։ Վասն զի մահ ոչ այլ ինչ է, այլ յապականութէ այնուհետև ՚ի բաց բարձումն. ոչ զմարմին պարզաբար, այլ զապականութիւն նորա ծախէ մահն։

Ո՛յս և ՚ի հալական նիւթն տեսանել սպատահէ. քանզի ասկեխառն իմն հող առնուն յայնոսիկ հմտագոյնքն և ՚ի ձուլարան արկանելով ասկի գործեն. և աւազ և այլ իմն նիւթ խառնելով՝ ապակի մաքուր առնեն։ Այս արդ որպէս է հրոյն զօրութիւն, նոյնպէս և ՚ոյ ընորհն ոչ կարիցէ առնել, ասա ինձ. և ո՞զայս յանդգնեսցի ասել և որոյ որպէս դէպ եղև ունել միասն։

Օ Յիսուս՝ ի սկզբանն զքեզ արար, զմեռաւ ած, և մի յեր-
կուանալ յաղագս յարուԹեանն։ Ոչ հող զքեզ առ և
ստեղծ. և զինչ գԺուարագին քան՝ ի հողոյ ունել մար-
մինս և երակս և մորԹ և ոսկերս, նեարդս և ջիլս և
հնչերակս, և պարզաբար զգործական մարմինս, աչս, ա-
կանջս, ունչս, ոտս, ձեռս, և իւրաքանչիւր ումեք՝ ի նո-
ցանէ առանձինն և հասարակ եդ զգործն, որ ապակա-
նացու լեալ՝ գործէ զնա անմահ։

Ո՞չ տեսանես զիարդ միատեսակ է երկիրը, զանազան
և բազմատեսակ մարմինք ըստ գործոյ, ըստ գունոյ և
ըստ ստեղծուածոյն և ըստ բնուԹեանն և ըստ այլում
ամենայնի։ Օ Յիսուդ յաղագս հանդերձելոյն յերկուա-
նաս, ասա ինձ։

Այս զինչ պարտ և արժան է ասել յաղագս մարմնոյ՝
զվերին զօրուԹիւնն և զերկնային զօրսն, զՀրեշտակս
և զՀրեշտակապետս, զգեր՝ի վերոյ դասեալսն. զիւրա-
քանչիւր զի՝ նոցանէ զիաւդ արար, ասա ինձ զօրի-
նակն։ Ո՛չ ոչ ունիս ասել, վասն զի բաւական եղև նո-
ցա կամելն միայն։ Այս արդ որ զայնքան զօրս անմար-
մինս գործեաց, զմարդոյ մարմին զապականեալ նորա-
ցուցանել դարձեալ ո՞չ կարիցէ և՝ի պատիւ ածել։ Այս
ո՞ այնպէս անզգայ որ այնպէս յերկուանայն և զյարու-
Թիւնն՝ի բաց բառնայ։ Վասն զի եԹէ ոչ յառնէ մար-
մին, ոչ յառնէ մարդ. զի մարդ ոչ է հոգի միայն, այլ
մարմին և հոգի. և եԹէ հոգի միայն յառնէ, կիսատա-
սաւթ կենդանին յառնէ և ոչ բովանդակ։ Այս այլ ազգ
ևս, յաղագս ոգւոյն յարուԹիւն և ոչ ընկալցի իսկ տի-
բաբար. վասն զի յարուԹիւն՝ի վայր անկելոյն և քա-
կեցելոյն է. և հոգի ոչ լուծանի, այլ մարմին։

Օ՞ինչ է “Այս եԹէ միայն զգեցեալք, ոչ մերկք
գտանիցիմք,,։ Խորհուրդ մեծ և անձառելի մեզ աս-
տանօր զեկուցանէ։ Օ՞ինչ է այն զոր և առ կորնԹա-
ցիսն՝ի ԹղԹին ասէր՝ եԹէ “Ո՛չ մեռնեքեան յարիցուք,
այլ ոչ ամենեքին. փոխիսկեսցուք յանհատ՝ի քԹԹել
ական՝ի վերջին փողն,,։ Այս վասն զի ընդհանրական
ամենեցուն և հասարակաց է յարուԹիւնն բարեպաշ-
տաց և ամբարշտաց, չարաց և բարեաց մարդկան, զի մի
յայնոսիկ կարծիցես անիրաւ ինչ լեալ զդատաստանն,
և մի ասիցես՝ի քեզ ինքեան՝ զինչ արդեօք իցէ այս,

ես որ փութացայս և այնքան ձգնեցայ՝ յառնեմ, և հե-
թանոսն և ամբարիշտն և որ կուռցն երկիր սպագանէր և
զՔրիստոս անգիտանայր, և նա յառնէ նմանապէս և
՚ի նմին պատիւս վայելէ. զի մի զայս ասելով ամբո-
խեացիս, լուր զինչ ասէ. “Լեր զգեցեալք, ասէ, զո-
նապականութիւն և զանմահութիւն, ոչ մերկք գտա-
նիցիմք,,: Այս զնաւղդ է հնար, ասէ, զգենուլ զանապա-
կանութիւն և զանմահութիւն, և մերկ գտանել: Յոր-
ժամ ՚ի փառացն գտանիցիմք ամայիք, և ՚ի համարձա-
կութենէն որ առ Աստ՝ զրկեալք: Վասնզի և մարմինք մե-
զաւորացն անապականք յառնեն և անմահք, այլ պա-
տիւն այն նոցա Թոշակ տանջանաց լինի և պատժոց. զի
անապականք յարուցեալք՝ յամենայն ժամ պղծին. վասն
զի անշէջ հուրն այնպիսեաց մարմնոց կաթստանայ, որ
ոչ երբէք ծախեսցին: Այս վասն այնորիկ ասէ եթէ
“զգեցեալք ոչ մերկք գտանիցիմք,,: Վասնզի ոչ այս
միայն է խնդրելի զի յառնիցեմք և զգենուցումք զան-
մահութիւնն, այլ զի յարուցեալք և զգեցեալք զան-
մահութիւնն՝ ոչ մերկք գտանիցիմք ՚ի փառացն և ՚ի
համարձակութենէն որ առ Աստ է, զի մի հրոյն մատնի-
ցիմք: Ա՝ ասն այսորիկ ասէ՝ Թէ “զգեցեալք ոչ մերկք
գտանիցիմք,,:

Այս ապա դարձեալ արժանի հաւատոյ առնելով յա-
ղագս յարութեանն զբանն, ասէ Թէ հանդերձեալ և
խոնարհել մահկանացուն ՚ի կենացն, ՚ի վերոյ կաց.
“Ալր գործեաց զմեզ ՚ի սոյն բայս՝ Աստ է, որ եւ զաւ-
հաւատչեայ հոգւոյն,,: Ի սկզբանն, ասէ, վասն այսո-
րիկ զմարդն եստեղծ, ոչ զի կորիցէ, այլ զի յանապա-
կանութենն Աստուծոյ: Ալսպէս զի և յայն-
ժամ մահուն լինել Թոշացոյց, և հանդերձ այսպիսի
ինն կամաք ներեաց, զի ողջախոհացեալ և տանջանօքն
լաւագոյն լեալ՝ կարասցէ դարձեալ առ անմահութիւնն
աճել վերստին:

Այս ՚ի սկզբանն առ այս այս խորհուրդք և կամք էին
զօրացեալ, և հանդերձ այսպիսի վճռաւ զառաջինն ըզ-
մարդն ստեղծ. զայս մեզ վաղվաղակի և ՚ի նոցունց իսկ
զեկոյց յառաջինն Աստուծոյն: Վասնզի եթէ ոչ էր
կամեցեալ զգրուսս յարութեանն մեզ բանալ, ոչ ար-
դեօք Թողլոր զվերն՝ որ զամենայն առաքինութիւնն

եցոյց և սիրելի նորա եղև՝ կրել ինչ չարչարանս։ Իսկ այժմ ցուցանելով եթէ առ այլ ինն կեանս Հանապազորդեմք, և այլ ինն յաւիտեանս ամբարեալ ե արդարոցն, որ ունի զհատուցմունսն և զպատկան գառաջիկայս, գառաջինն լեալ արդարն ոչ առնելով աստէն զվարձն զոր աշխատեցաւն, այլ ներեաց երթալ, գոչելով ամենեցուն որովք չարչարեցաւն, և ասելով եթէ զինի ասա կենացս է ինն հատուցումն և վարձ և փոխառութիւն։ Յաղագս նորին և զհնով փոխադրեաց և զնղնա յափշտակեաց, զեկուցանելով մեզ որ յաղագս յարութեան են կարծիք։

Խաւական էր ի հաւանութիւն և արարողին զօրութիւն. իսկ եթէ տկարագոյն ոք իցէ, և կամեսցի այլ ինչ ցոյցս առնուլ և գրաւական հանդերձեալ յարութեանն, և զայն հանդերձ յոլով առատութեամբ ետ ած՝ զհոգւոյն ընորհս առանց մախանաց յաճախապէս եհեղ ի մեզ։ Ալ այն այնորիկ և Պաւղոս առնելով արժանի հաւատալոյ յարութեանն աղագաւ բան ի Կրիտոսի յարութենէն՝ յոյ լեալ զդործեցեաւն, ի վերայ ածէ և զայս զերծորդն ասելով՝ թէ և գրաւական ետ մեզ, ոչ ընչից, ոչ ոսկւոյ և արծաթոյ, այլ զգրաւական հոգւոյն։ Նա գրաւական մասն է ամենայնի հաւատոյ։ Որպէս և ի վաճառսն որ զգրաւական ընդունի և յաղագս ամենայնի վստահանայ՝ այնուհետեւ և հաւատայ, նոյնպէս և դու առնելով գրաւական, զհոգւոյն ընորհս ասեմ, մի և յերկուասցիս յաղագս յառաջիկայ բանեացն։ Կանգնի որ զմեռեալս յարոյց, զկոյրս բժշկեաց, զկաս հալածեաց, զբորոտս սրբեաց, յախտիցն ուղղեաց, որ զմահ ելոյծ, որ այսքան և այսպիսի կարացն առնել ի չարչարելն և ի մահկանացու մարմնի, որմէ Թողութեան հանդիպեսցի յերկուացեալն յաղագս յարութեան։ Կանգնի եթէ միոչ ոչ ևս ժամանակ յարութեանն մերձ լեալ էր, այլ տակաւին ևս հանդիսքն ի ներքս կային՝ այնքան սպառք քեզ հատոյց ած, զմտաւ ած ոքան այդեօք ի ժամանակի յաղթանակացն տայ քեզ բարիս։

Կպաս եթէ ոք ասիցէ, այլ ոչ տեսանեմք այժմ զչլեալ նշանսն զայնոսիկ և ոչ մեք այնքան ունիմք զօրութիւն, զայն ասեմք՝ թէ ոչ ինչ զանազանի և այժմ յա-

ռաջագոյն եղելոյն։ Եւ զի յառաջագոյն յառաքելոյն եղև, վկայեն ամենայն ուրեք եկեղեցիք յաշխարհի, յաղագս որոյ զօրք և աղինք և քաղաքք ընթանային առ ագէտսն և ձկնորսան։ Եւ արդեօք զաշխարհ ունէին առանց ուսման ագէտքն և աղքատք և աղկաղկքն և տըկարքն, թէ ոչ՝ ի վերուստ զնշանացն զօգնականութիւն ունէին։ Այլ սակայն և ոչ դու ամպի եղեր՝ ի հոգւոյն ընդոհէ, այլ յոլով տակաւին մնայ և այժմ պարգևին այնորիկ նշանակ, զորս Թուեցից՝ յաւէտ ևս մեծագոյն և աքանչելի։ Վասնզի ոչ է հաւասար զմարմին վախճանեալ յարուցանել, և զանձն մեռեալ մեղաց՝ ի բաց ածել՝ ի կորստենէ յայսմանէ՝ որ՝ ի ձեռն մկրտութեան լինի. ոչ է զուգահաւասար զհիանդութիւնս կորուսանել զմարմնոյ, և զմեղացն բեռն խորասոյզ առնել. ոչ է զոյգ զմարմին տապացեալ ողջացուցանել, և զոգի ըզխաւարեալ լուսաւորել։ Օ՛ի եթէ ոչ էր գրաւական հոգւոյն ընդոհի, և այժմ՝ ոչ ևս արդեօք հաստատեալ կայր մկրտութիւնն, ոչ լինէր թողութիւն մեղաց, ոչ արդեօք արդարութիւն և սրբութիւն, ոչ արդեօք զորդեգրութիւն ընդունէաք, ոչ՝ ի խորհուրդս վայելէաք, մարմին և արիւն խորհրդական ոչ արդեօք լինէր հոգւոյն ընդոհ. ոչ քահանայս ունէաք, և ոչ էր իսկ կաթողութիւն ձեռնադրութեանս այսմիկ լինել առանց ընդոհին անկելոյ՝ ի մեզ։ Եւ այլ յոլովս ունիցի ոք թերևս զհոգւոյն ընդոհի նշանակս ասել։ Արդէս զի և դու զգրաւական հոգւոյն ունիս, և զմեռելութիւն հոգւոյդ՝ ի բաց եդիր և զկուրութիւն խորհրդոյ, և զանմաքուր կեանս մերկացար։

Զորդ մի այսուհետև յերկուասցուք յաղագս հանդերձելոյն այսպիսի գրաւականս առնլով. այլ ամենայն ուստեք որ յաղագս յարութեան բանն է՝ հաւաքեսցուք, և վարս արժանաւորս աւանդութեանցն այնոցիկ ցուցցուք, զի և անախտ բարեացն հանդիպեսցուք՝ որ ըստ բան գերազանցել և ըստ միտս մարդկային՝ անճառ խոստմանցն պարգևք։ Արոց լիցի ամենեցուն մեզ հասանել ընդոհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՍՈՒՐԲՆ ՄԵԼԻՏՈՍ ԱՆՏԻՈՔԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ Ի ԲԱԶՄՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՈՑՆ, ՈՐՔ ԵԿԱՆ ՄԻԱԲԱՆ ՏՄՆԵԼ ԶՕՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐԱ, ՈՐ Է ՅԱՄՍԵԱՆՆ ՓԵՏՐՈՒԱՐԻ ԺԳ.

Ընդ ամենայն տեսակս ժողովրդեանս շրջեցուցանեմ զանձ ինձ, և զամենայն քաղաքս աստ եկեալ տեսանեմ, և ոչ ունիմ եթէ զով երանեմ յառաջագոյն, զսո՛ւրբն Աելիտոս որ այսքան և այսչափ զինի մահուան իւրոյ վայելէ պատուոյ, եթէ զսերդ ձեր որ այդչափ զինի վախճանի նորա յաղագս Հօտատիրին ձերոյ ցուցանէք բարեմտութիւնս։ Այլ նման իսկ, որ այդքան զօրացաւ Թողուլ առ ձեզ ամենեսեան սէր զԹուխեան. երանելի էք և դուք, զի ընկալայք այդպիսի սիրով զմարմին նորա, և ամբողջ պահելով մեացիք առնա։ Վասն զի աՀաւանիկ նման իսկ հինգ ամ անցեալ է յորմէ հետէ առ իւր փափագելին Յիսուս երթեալ գնաց Հայրապետան ձեր, և իբրև թէ երկիւղ կամ եռանդ զնա տեսեալ էք մարմնով կենդանի, այնպէս ջերմեռանդն զԹալի սիրով ընդառաջեցիք նմա։

Սակս այսորիկ ցանկալի նա իսկ, զի այսպիսի ծնաւ որդիս. տենչալի էք և դուք, զի այնպիսի ժառանգեցիք Հայր։ Այլաբնի է ուրմանն և աքանչելի. բայց և պատուն արժանի է արմատոյն։ Այս զոր օրինակ արմատ ծառոյ ծածկեալ 'ի ծոց երկրի՝ ինքն ոչ երևի արմատն, իսկ 'ի ձեռն պտղոյն ցուցանէ զքաջաբերութիւն զօրութեան իւրոյ, սոյն օրինակ և երանելին Աելիտոս 'ի պահարանի յայսմիկ ծածկեալ կայ. նա ինքն մեզ մարմնական աչօք ոչ երևի, իսկ 'ի ձեռն ձեր զպատուն ցուցանէ և զզօրութիւն շնորհաց իւրոց։ Զգոյշ և մեք լեալք, բաւական է միայն տօնս այս՝ զի առաւելապէս և պայծառագոյն գոչէ քան զփոշ զջերմագոյն ձեր ջան և ըզփոյթդ վեռանդնոտ և զսրբոյն Աելիտոսի զշնորհեսիրութիւնն։

Օ՜ի այնպէս բորբոքէ զմիտս ձեր ջերմեռանդութիւն սիրոյ նորա առ տենչանս նորա, որպէս զի 'ի գոյն և 'ի սուկ անուանն ջերանայք և յարուցեալ լինիք յիշելով զանուն

նորա : Սակս այսորիկ և ես այժմ ոչ վայրապար, այլ յարմարագոյն և ձեռնեալ և յաճախապէս զանուագ զայդ ՚ի բանս ձառից իմոց յարմարեմ. և զոր օրինակ որ հիւսէ պսակ ոսկեղէն, և ապա ՚ի ներքս շարէ մարգարիտ և ականս պատուականս, և նոքօք պայծառագոյն առնէ զպսակն, սոյնպէս և ես իակ զգուշասանութեան պսակն հիւսեմ երանելի գլխոյն այսօր, և իբրև պատուական մարգարիտ իմն և ակն մեծագին զանուն նորա յաճախապէս ՚ի բանս իմ երևեցուցանեմ, ակն ունելով զի տեսչական և պայծառագոյն կազմեցից անուամբ նորա զգուշասանութիւնս : Օ՜ի այսպէս օրէն է սիրոյ և այսպէս է սովորութիւն, մինչ զի և սոսկ անուանն գիրկս արկանեն ցանկացողքն և ջեռեալ լինին առ անունն, որպէս և դուք իակ բազձայայք ՚ի վերայ անուան երանելոյս այս :

Ի սկզբանէ յորժամ մտեալ ՚ի քաղաքս ընդունեցայք, իբրաքանչիւր որ որդւոյ իւրում զանուն նորա կոչեր, և ՚ի ձեռն անուանն իւրաքանչիւր որ զնա ՚ի տուն իւր մտեալ վարկանէր[1], և մարք մանկանցն զանց առնէին զանուամբք հարց իւրեանց, զհնուց և զնախնեաց, և զանուն զերանելոյն Ա՜ելիտոսի գնէին ծնեալոց իւրեանց որդեկաց : Վ՜անգի յաղթեր բնութեանն՝ երկիւղածութեանն բազձանք, և նորածնեալոցն այնու հետև ոչ եթէ զբնական[2] գորով գթոյ միայն ունէին առ նոսա ծնողքն, այլ և վասն այնր անուան գթոյ փափագելի եր բնականացն : Վ՜անգի զանուանն զայն աղբի զարդ և տանց հաստատութիւն և կոչեցելոց փրկութիւն և փափագանաց սիփուճն համարէին : Օ՜ր օրինակ բազումք որք ՚ի խաւարի նստիցին, և լուցեալ ջահ ՚ի մէջ ածիցեն, և բազումքն լուցեալ ղլասեբոս իւրեանց և տանի իւրաքանչիւր որ ՚ի տուն իւր, սոյնպէս և անուանն այն իբրև գլոյս իմն ՚ի նսեմի անկեալ ՚ի քաղաքս յայս՝ իւրաքանչիւր որ որպէս Հրագ վառեալ զանուն երանելոյն տաներ ՚ի տուն իւր, և իբրև զգանձանակ բիւրապատիկ բարութեանց այնպէս զանուանակցութենն ձգէին յանձինս իւրեանց : Այս եր երկիւղածութեան վարդապետութիւն եղեալն, յաճախապէս հարկաւորեալ յա-

1 Միան վերնադրէր : 2 Ա՜յսպէս յերիսոն օրինակն :

նուանէն յայնմանէ՝ յիշելով և զսուբբն զայն ունելով
'ի մտի. քանզի յանապօրոյն ախտից փախուցանող և
պատսպարան բարի խորհրդոց ունելով զանուանն։ Այս
այնքան բազում եղև այս, մինչ զի ամենայն ուրեք և
'ի մուտս և 'ի փողոցս և յագարակս և 'ի Ձանապարհս,
զի ամենայն ուստեք շրջահնչեալ ունիցիք զանուն սրբոյն։

Այս ոչ եթէ միայն առ անուանն կրեցիք զայս, այլ և
առ օրինակ և նշան մարմնոյ նորա. զի զոր վասն անուանն
արարէք, զնոյն և վասն պատկերի նորա արարէք։ Քանզի
զի 'ի յուպս և 'ի մատանիս և 'ի սեամս և յորմս առա-
գաստի և 'ի սենեակս և ամենայն ուրեք զսուբբ պատ-
կերս նորա նկարեցեալն բազում. որպէս զի ոչ միայն լուր
անուան սրբոյն, այլ և տեսութիւնն տայր տեսանել
զօրինակ մարմնոյ նորա, և կրկին լիմն ունիցին սիրտքն
յաղագս գնալոյ նորա և հեռանալոյ 'ի նոցանէ։ Քանզի
զի 'ի մատանին նորա 'ի քաղաքս, եղիցի արտաքս թշնա-
միքն Ձհմարտութեան՝ վազվազակի հալածելով զնա. և
ած թոյլ եւս, ըստ որում և զառաքինութիւն նորա և
զարիութիւնն ձեզ յուցանել կամիր։ Քանզի եմուտ
'ի քաղաքս զոր օրինակ և Աւսէսս Այգիպտոս. 'ի հեր-
ձուածոց մերոցն ազատեաց զքաղաքս, և զիտեալ
անգամն որ էր անբժշկելի՝ 'ի յայլ մարմնոյն հատեալ
'ի բաց ընկեց, և անսպառ ամբողջ զառողջութիւն 'ի
վերայ կաճ բազմութեան ժողովրդեան եկեղեցեացս։

Խոկ թշնամիք Ձհմարտութեանն ուղղութեանն ոչ
նեղեցին. զթագաւորն յայնժամ շարժեցին, և արտա-
քոյ Հանին զնա 'ի քաղաքէս. ակն ունիցին եթէ յաղ-
թեցաք Ձհմարտութեանն, և եթէ յետս դարձուցաք
զեղեալ ուղղութիւնն։ Այս եղև նոցա հակառակ այն
որում ակն ունիցին. և առաւել երևեցաւ նախանձդ
ձեր, և նորայն պայծառացաւ և փայլատակեաց ցոյցք
վարդապետութեանն և իմաստութեանն։ Որպէս զի և
ոչ այնպէս բազմադակ զերեսուն օր կարաց Հաստատել
զձեզ և հիմնաւորել 'ի նախանձ Հաւատոյ, և անդէն
զինի այնորիկ բիւր Հարուածս առեալ և անսասանելի
կացեալ 'ի վարդապետութիւնն յայն. իսկ ձեր ջերմե-
ռանդ երևեցաւ, զի ոչ բազմադակ զերեսուն օրն ըն-
կալաք ստուգապէս զերեմանս բանին զոր 'ի նմանէ ար-
կաւ առ ձեզ, և այնպէս 'ի խորս մտաց ձերոց Հատեք

ակօսս, և ևս անդր առաքեցէք զարմանն, և այնուհետև ոչ մի ինչ երկեսցէք ի վերայ եկելոց փորձանացն։

Երբժան իսկ է և ոչ զայնու զանց առնել զոր յաղագս Հալածանացն անցք անցին։ Յորժամ իշխան քաղաքիդ զկառան վարէր, և եմուտ ի մէջ փողոցին նստեալ ի վերայ, և եկեալ նստեալ նա մօտ ի սուրբն, և իբրև զտաղաստարափս քարինքն գային ի վերայ գլխոյ իշխանին, զի ոչ ներէին զորշնէլն ի քաղաքէս, այլ կամէին զի ի կենացս յայսցանէ ի բաց անկանիցին քան եթէ ի վարդապետէն որոշեալ լինիցին, զինչ ասա յայնժամ արար երանելին։ Ցեսանելով զգազանն քարանցն, ի վերայ արկեալ զձորձս իւր և Թագուցանէր զգլուխ իշխանին ի հարուածոց քարանցն. ըստ որում ի միասին ընդ հանդարտութիւնն առաւել ամենէին Թշնամիքն, և զաշակերտսն իւր խրատէր և ուսուցանէր Թէ յաղագս զրկոզաց անյիշաչար լինել պարտ է. և ոչ եթէ նոցա միայն չար առնել ոչ է պարտ, բայց և այլ վտանգից եկելոց ի վերայ նոցա պահապան լինել դէպ և պատշաճ է և ի բաց հարկանել հանդերձ բազում Հեպով։

Որ ոչ սոսկացաւ յայնժամ որ զքաղաքին տեսանէին զխռովական զգուեցն, և զվարդապետին զծայրայնն իմաստութիւնն և զհանդարտութիւնն և զհեզութիւնն, և ոչ զարմանայր. քանզի և եր իսկ զարմանալի զինչ յայնժամ անցք անցին։ Խովիւն հալածեցաւ, և ոչխարքն ոչ ցրուեցան. նաւուղիղն արտաքսեցաւ ի նաւէն, և կուբն ոչ ընկղմեցաւ. մշակն հալածեցաւ յայգւոյն, և այգին առաւելապէս պտղաբերէր։ Այսան զի որ ընդ միմեանս կապեալ լինէին սիրով և խաղաղութեամբ, ոչ ի վերայ եկելումն փորձանաց և ոչ ի վերայ յառնել վտանգից և ոչ յերկարութիւն ձանձրացմանն և ոչ բազմութիւն ամաց և ոչ այլ ինչ կարաց շարժել զնոսա ի միաւորութենէ երանելի հօտատէրն։ Ի նա վտանգն այնր հալածեցաւ ի քաղաքէս, զի հեռասցի յիւրոց որդեկացն. իսկ նա դէպ եղև լինել հակառակ այդպիսիկ։ Ամենաւանդ առաւել այնդակազմեաց զնոսա ի սիրոյ, և զամենայն քաղաքս առեալ ընդ ինքեան գնաց ի Հայս։

Երդ մնացին նորա ի գաւառն յայն հաստատեալք, և միտք և խորհուրդք նորա որպէս Թևօք իմիք Թեթևա-

ցեալ շնորհօք Հոգւոյն սրբոյ, հանապազ և յարաժամ առ ձեզ տեղի առնոյր, և զամենայն ժողովս զայս վերաբերէր՝ի գործով գթոյ ազեաց իւրոց։ Արդ յայնժամ և դուք հանդիպեցայք. նատելով ձեզ առաջի, և՝ի քաղաքիս շրջելիք, և սիրով Հոգւոյն զօրհանապազ՝ի հայաստան Քրիստեաւ լինելիք, և զսուրբ զկերպարանն տեսանելով, և զքաղցրագոյն և զերանելի ձայնն լսելով այնպէս զառնայիք անդրէն։ Այսն այսր պատճառի Թոյլ ետ ձեզ վաղվաղակի հալածական լինել՝ի քաղաքէս յայսմանէ, որպէս յառաջագոյն ասացի, զի զձեր հաստատուն հաւատս ցուցցէ Քրիստոսն որք մարտնչէին ընդ ձեզ, և զնորա զհանձարեղ զվարդապետութիւնն. և այս յայտ անդուստ եղև։

Արդ զկնի առաջին հալածելոյն անդրէն դարձեալ, ոչ եթէ երեսուն օր միայն, բայց և ամիսք և տարի և երկուս և այլ առաւել ասա չրջեցաւ։ Վասնզի շատ և բազական ետուք ցոյցք յաղագս հաւատոյ հաստատութեան, ետ ձեզ՝ած առանց երկիւղի վայելել անդրէն հարքն ձերով. քանզի մեծապէս փափկութիւն է վայելել այն սուրբ և հրաշափայլ կերպարանաւն։ Օ՛ի ոչ միայն ուսուցանելովքն և պատմելով, բայց և տեսութիւնքն բազական էր զամենայն առաքինութիւնս վարդապետութեան ածել՝ի յոգիս տեսողացն։ Այս՝ի գալն նորա ամենայն քաղաքս՝ի ձանապարհն դիմէին. ոմանք մերձ գային և յոտն մերձենային և զձեռն համբուրէին և զձայնն լսէին, և այլքն՝ի բազմութեանցն արգելեալ լինէին, միայն հեռագոյն տեսանէին զնա, և իբրև թէ բազական՝ի տեսութենէն ընկալեալ էին զօրհնութիւնս, և զայն ոչ սուղ ինչ համարէին քան զայնոսիկ որ մերձ էին նմա, և այնպէս հաւատարմացեալ ի սրբախոսութեամբ գառնային՝ի քաղաքս։

Այս որպէս յաղագս առաքելոյն եղև, նոյնպէս և յայնժամ եղև։ Օ՛որ օրինակ՝ի ժամանակս առաքելոյն այնոքիկ որ ոչ կարէին մերձ լինել նոցա, ՝ի տուսերս նոցա տարածէին զինքեանս, զի թէպէտ և հեռագոյն մերձենային՝ զնոյն ընդունէին յանձինս իւրեանց, զնոյն որպէս նոքա որ՝ի մարմնոյ նոցա մերձենային և այնպէս գառնային առողջացեալ, նոյնպէս և յայնժամ որք ոչ կարէին առաջի մատչել, իբրև զվառս հոգևորս առա-

քեալ ՚ի սուրբ գազաթանէն յայնմանէ և առ այնօսիկ որք հեռագոյնքն էին, այնպէս լինէր նոցա իմացութիւն, որպէս զի ամենայն օրհնութեամբ ՚ի տեսութենէն միայն լցեալ այնպէս երթային։

Իսկ յորժամ կամ եղէա ամենեցունցն ՚ի կոչել զնա այնուհետև ՚ի մերձակայ կենացս և դասել զնա ՚ի դասս հրեշտակաց։ ոչ վայրապար ինչ եղէա, այլ նախ կոչէր զնա գիրն և նամակ թագաւորին, զի ՚ած շարժէր զթագաւորն։ Կոչեաց զնա ոչ ՚ի մօտաւորս կամ ՚ի մերձաւոր կայս ուրեք, այլ ՚ի թրակացւոյն աշխարհի. զի և գազատացիք և բիւթանացիք և կիլիկեցիք և կապադովկացիք և որք ՚ի թրակացիան մերձ բնակեալ էին ազգին զբարութիւնս մեր. զի յամենայն երկրէ եալիսկոպոսունք իբրև զնախատիպ պատկեր տեսանէին զորբութիւն նորա, և օրինակս հաստատունս ըստ առաջին սպասաւորութեանն ՚ի նմանէ առնուին, նա և կարգս կանոնաց սրպէս պարտ է անօրինել եկեղեցեաց, և օգնականութեամբ զնորայն հաստատուն և ստուգապէս։

Յորդ վասն մեծ ահաւոր քաղաքին և վասն նախագահութեան թագաւորին բազումք յոլով ուստեք ՚ի տիեզերաց անդր հեղեալ գային յայնժամ։ Իսկ եկեղեցեաց եալիսկոպոսունք որք երկար ժամանակաւ ՚ի ծփանաց ՚ի բաց ելեալ էին յիշխանութէ եկեղեցեաց, առին խաղաղութիւն և հանդարտութիւն. քանզի նա մեկ թագաւորին անդ կոչէր զամենեսին։ Յայնժամ այնուհետև սա անդ նախ գոլով երթեալ։ Յոր զոր օրինակ յաղագս երից մանկանցն եղէա, յորժամ հանդերձեալ էին վերաքարոզ լինել ամենայն տիեզերաց և առնուլ պսակս, շինուցանել զզօրութիւն հրոյ հնոցին, կոխել զհպարտութէն բռնաւորին, և զամենայն զկերպս ամբարշտութեան յանպիտանել, յայնժամ ՚ի տիեզերաց յամենայնէ թաւերս նստեալ նոցա. զի յամենայն երկրէ սատրապք և զօրագլուխք և զօրապետք և գաւառապետք կոչեցեալ էին վասն այլ պատճառանաց, և էզեն տեսողք նահատակացն այնոցիկ։ Այնպէս և յայնժամ դեպ եղէա լինել, որով պայծառագոյն լինէր տեսիլ երանելւոցն. վասն այլ պատճառանաց կոչեցան եպիսկոպոսունք, որք զամենայն եկեղեցիս տիեզերաց տըն տեսէին, և ՚ի գալն նոցա տեսին զսուրբն գայն։ Իսկ յոր-

ժամ տեսին, իմացան սուրպասիկս զնորա վերկիւղածութիւնն, զիմաստութիւնն, զնախանձն հաւատոյ, և զամենայն առաքինութիւն առ նա ըստ քահանայական չափու կատարման աւարտեալ տեսանէին, յայնժամ ապա կոչեաց զնա ՚ի ձեռն ձայնի. և զնաց առ Թագաւորն ամենեցուն։

Իսկ այս եղև, քանզի անխայեաց ՚ի քաղաքս մեր. զի եթէ ատ էր զՀոգին աւանդեալ, բաղում և անբաժանելի էր լեալ սուգ նորա առ ջերմագութ[1] սէրդ ձեր։ Զի ոմ ներէր տեսանելով զերանելին զայն յորժամ զյետին շունչն տայր և առնոյր. կամ ոմ կարէր համբերել տեսանելով զարտևանունս նորա վերացեալ յառաստաղից աչացն, կամ զբաղցրաբուխ բերանն փակեալ և զյետին խօսսն նուաղեալ. ոմ տեսանէր զայս և ոչ սոսկայր ՚ի վերայ սաստիկ վշտացն այնոցիկ։ Այդ զի մի լինիցի այդ՝ տնօրինեաց ՚ձ ՚ի գալառս օտարս աւանդել զՀոգին, զի ժամանակս ինչ ՚ի մէջ անցեալ և սուգ ինչ ընդելեալ՝ զանբերելի զվիշտն հատանիցաք, և յորժամ տեսանիցաք գալով զմարմին նորա զվեռեալ՝ ոչ հեղձուցանիցաք զանձինս մեր յողբս և ՚ի կոծումն մեռց, որպէս և եղև իսկ։ Զի յորժամ զսուրբ մարմին նորա ընկալաւ քաղաքս մեր, սուգ և կոծ առ սաստիկ յոյժ. բայց փութապէս փարատեաց զողբսն և ըզկոծն զադարեցոյց, նախ վասն ասացեալ պատճառիս, և դարձեալ զոր հանդերձեալս եմ ասել։

Քանզի մարգասէրն ՚ձ ողորմեցաւ մեզ ՚ի վիշտն, և վաղվաղակի այլ հօտապետ երևեցոյց մեզ, որ հաւատեաւ զկերպարանս նորա բերէր, և զպատկերս առաքինութեան նորա զամենայն ցուցանէր, և յաթոռն նորա եղեալ՝ վաղվաղակի զվշտական պատմուճանն ՚ի մէնջ ՚ի բաց մերկացոյց և զՀեծումն փարատեաց, իսկ զերանելոյն յիշատակն առաւել նորոգեաց։ Այս զվիշտն Թաւամեցուցանէր, բայց աւելչաքն ուժգնին բորբոքէր, և անչափ տխրութիւնն յոյժ ՚ի բաց բարձաւ. որ և ՚ի վերայ բնական սիրելեաց ոչ այսպէս սովորեցաւ լինել։ Զի թէ մայր որդի կորուսանէ կամ կին այր պատկառելի, որչափ զգերեզմանն նորոգ և յայտնի տեսանէ,

1 Մխեան առ՝ ջերմեռեր գոնէս յեր։

բոլոքոքի կարօտան, և փափագումին ուժգին լինի յոգին նոցա. իսկ իբրև ժամանակ մի անցանէ, Թուլանայ և ընդ նմին փարատի ուժգին վիշտն և անձուկ վիշատակին։ Իսկ այսը երանելոյ այսմ ընդդէմ եղև. կարի յոյժ տիրուԹիւնն ի բաց Հալածեցաւ, բայց յիշատակին ոչ նուազեաց ընդ տիրուԹեանն, այլ կարի յոյժ աձէ օր ըստ օրէ։ Այս վկայք դուք էք որ զկնի այսքան ժամանակի զոր օրինակ մեղու շուրջ զխորխոջն Թռուցեալ պատի, նոյնպէս և դուք շուրջանակի պատեցայք զմարմնով երանելոյն Եղիտոսի։ Այս պատճառ՝ ոչ եԹէ քնական գուԹն որ առ նա էր, այլ իրաւունք ուղիղ խորհրդոյ նորա. վասն այսորիկ ոչ շինաւ մնհուամբն և նուազեաց ժամանակօք, այլ աձէ և ի մեծագոյնս առաւելու, ոչ եԹէ ձեզ տեսողացդ միայն, այլ և այնոցիկ որ ոչ են տեսեալ։ Այս է սքանչելի, զի որք կրսերք էին ի կենդանութեան նորա և անգիտաք տեսուԹեան նորա, նոքա առաւել բորբոքեին ի տենչանս փափագման նորա։ Զոմանք իսկ երիցունք առաւելուք ի վերայ այնոցիկ որ ոչ տեսեալ էին զնա, այսու պատճառաւ զի ընդ նմա շրջեցայք և զբանս նորա զքաղցունս լուայք և վայելեցիք ի նորա միաւորուԹենէ։ Իսկ այնք որ ոչ էին տեսեալ զնա, առաւելոյն քան զձեզ. զի քան զձեզ որ տեսեալք էք, ոչ նուազ վասն նորա երևեցուցին զգուԹ և զտենչանս։

Ընդ աղօԹեացդ համօրէն մեք ամենեքեան, իշխանք և իշխեցեալք, արք և կանայք, ծերք և տղայք, ծառայք և ազատք, և զերանելին զԵղիտոս հաղորդս արասցուք աղօԹից մերոց. քանզի այժմ առաւել գոյ նմա հաճարձակուԹիւն առ տէր և ևս ջերմաջերմ գուԹ զոր ունի առ մեզ, զի արժանի արասցէ զմեզ զամենեսեան. զի որպէս աստ մերձ եմք ի մարմին նորա, նոյնպէս և անդ կարող լիցուք լինել մերձ ի յաւիտենական յարկս նորա, և հասանել բարուԹեանցն խոստացելոյ մեզ որ կայ և Ճնայ։ Որոյ լիցի մեզ ամենեցուն արժանի լինել շնորհօք և մարդասիրուԹեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում՝ հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանուԹիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՆԵՐԲՈՂՅԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՍՈՒՐԲՆ ԻՎՆԱՏԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԱՆՏԻՈՔԱՑ, ՈՐ ՎԱՍՑԵԱՑ Ի ՀԱՅՈՄ ՔԱՂԱՔԻ, ԵՒ ԶԿՆԻ ՎԱՍՑՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑՆ ՆՇՈՒԱՐՔ ՆՈՐԻՆ ՇՆՈՐՀԵՑԱԻ ԱՆՏԻՈՔԱՑԻՈՑ ՔԱՂԱՔԻՆ

Պատուասէր կէնատեարքն ստէպ բազմախորհրդիկս և զանազանս պատրաստեն սեղանս, որպէս զի զինքեանց ախորժակս ցուցցեն, և այլ ևս վասն զի պարկեշտութեամբ կազմեալ սեղանոյն ի բազմակատար պէտս ըղձիւրասիրութիւնն սրտիւքն երևեցուցանեն: Այսպէս և ընորհք հոգւոյն սրբոյ զինքեան զօրութիւնն ցուցանելով պարգեւէ մեզ, և բազում ուրախութիւնս վասն սիրոյն ՚ի ուսուցանելով յայտնէ մեզ, և ցուցանէ զինքեանց զմարտիրոսաց Քանս առաջի մեր սեղան:

Այսու երիտասարդ աղջիկն այն կոյս սուրբ և երանուհի վկայն Պեղեգիա բազմահիւրասիրութեամբն կերակրեաց զմեզ. և դարձեալ այսօր երանելիս այս և աբիւական վկայս Իգնատիոս զնորին տօնս ընկալաւ: Այլ այլ և այլ են ըստ պատկերին նկարագրի, բայց մի է սեղանն. ըստ մարտին փոփոխեալ են ՚ի միմեանց, բայց մի է պսակն. պէսպէս են պատերազմունքն, բայց մի է բրաբիոնն:

Յարտաքին պատերազմունս վասն զի մարմնական է ցաւ որ առնու զնոսցումն սուսերի, յիրաւի արանց միայն պատահեցաւ. իսկ այս հոգևոր պատերազմն ոչ է այսպէս, այլ հասարակաց ամենեցուն պատահեցաւ, և կանացի բնութեան բացաւ ասպարէզս, և համօրէն ազգիս մերոյ եղաւ օրէնս և հրապարակս: Ոչ արանց միայն ՚ի սմին սեղակազմեալ, զի մի երբեք որ զանկար բնութիւն հնոջ ունիցին՝ փախիցեն, և ըստ պարագրեալ գեղոյ պատկերոյ պատճառիցեն ՚ի մահու: Այսն որոյ ոչ միայն կանայք քաջալերեցին, զի մի զարանց ազգս յամօթ արասցեն, այլ յայտնեալ յերկոցունց բազումք են որք քարոզեցան առ մեզ պսակեալք. և զի ուսանիցիս եթէ ըստ այսմ գործոյ ՚ի Քրիստոս Յիսուս ոչ առուի և ոչ իգի բնութիւն և ոչ տկարութիւն մարմնոյ և ոչ չափ հասակի և ոչ այլ ինչ յայտնեալ կարող է ար-

դել լինել այնոյիկ որք բարեպաշտութեամբ ընթանան ի Հանապարհս բարւոյ, եթէ յօժարութեամբ և արիաբար և իմաստնական արթնութեամբ և ահիւ Ջերմութեամբ և հրացեալ արմատով Հոգւոյ մերոյ Հաստատեալք են։ Ա՝ման որոյ աղջկունք և կանայք, արք և երիտասարդք, ծերք և տղայք, ծառայք և աղատք և ամենայն արժանաւորութիւնք և ամենայն Հասակք և Համբրէն բնութիւնս մեր յայսմ պատերազմի պնդակազմեալ՝ յայնցանէ ոչ երբեք յաղթահարեցան, այլ արիաբար մարտեան և յաղթեցին։

Ա՝րդ ժամ է այսմ առ ի պատմել զերանելւոյս այսորիկ զուղղութիւնն. այլ խոովեաւ միտք իմ և զարհուրեալ յոյժ առ ի գիտել զինչ ասացից՝ զառաջինն թէ զերկրորդն թէ զերրորդն, այսչափ բխեալ մեզ բանիւք բազմութիւն բարեբանութեան սուրբս այս ըստ օրինակի գետոց գնացից. վասն այսորիկ տօչորիմ նմանողի լինել առ ի պատմել։ Ա՝ր ի բուրաստանս ծաղկոցայ երթիցէ և տեսանէ անդ զբազմութիւն վարդից, և առաւել զմանուշակի և զշուշանի զանչափութիւն և զայլոց ծաղկանց զբազմութիւն պէսպէս և բազմատեսակ, տկարանայ ի կարծիս մտաց ընտրութեան ար առաջինն իցէ կամ ար երկրորդն. իւրաքանչիւր գեղեցկութիւն ծաղկանցն ծածկէ զաչացն տեսութիւն։ Ա՝յսպէս և մեք ի Հոգևորական յայս դրախտ Ա՝ստուածոյ ուղղութեանցս մտեալ՝ ոչ եթէ ի ծաղկանց բազմութիւն Հայել, այլ զպտուղս Հոգւոյն սրբոյ պէսպէս և բազմադիմի տեսանեմք ի Հոգի սորա, ուստի զարհուրեալք ոչ լինիմք Հասու թէ ուր յառաջագոյն դիցուք զմիտս զիւրաքանչիւր տեսութեան բանալ զկերպ և նայել յիւրաքանչիւրոյն վայելչութիւնս, այլ յափշտակէ նախ զտեսութիւնս աչաց մերոյ Հոգւոյս։

Ա՝ւաւի ինձ առաջակաց առ ի մինչ եկեղեցիս, յորում արիաբար այսպիսի ստոյգ օրինաղրութեամբ Հաստատեաց կարգս, զայսոսիկ ասաց։ Ա՝րդեօք և Ա՝բրիստոս յառաջ կամեաւ իւրով Հրամայեաց զմեծագոյն սահմանս և զկարգ վերատեսչութեան, այսպէս զբարի առարչին Հրամանս սա ինքն քահանայ վկայս՝ իւրով գործով եցոյց մեզ։ Ա՝յս զԱ՝բրիստոսի ասացեալն լուեալ՝ եթէ «Ո՝վքիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց

իւրոց ,, սուրբս այս քահանայապետ զանձն իւր եդ վասն հօտից իւրոց, և զօրութեամբ նմանակից եղև աւաքելոցն, հարազատ դաստատութեամբ բխեաց ջհոգևարական աղբիւրէն: Արդ զի շրջեցաւ ընդ նոսա յաճենայն տեղիս, և անպատմելի և պատմելի հետոց նոցա հաղորդ եղև, յիրաւի ասեմք ունել զնոցին վարսն և լեալ նոցին փառացն արժանի: Ահա գարձեալ եհաս ժամանակ խնդրել զզօրութիւն սրբոյս, և զանձն որ մերձ է առ մեզ և վերատեսուչ ամենայնի, և ջերմաբար զաստուածային հարցմունսն տեսանեմք, և որպէս տեսանելի պատուեմք զանտեսանելի վկայս: Իսկ յետ այսպիսի կարգաց հեշտեաւ զմարմինն իւր 'ի բաց դնելով, որպէս ոք զհանդերձ զի մերկանայցէ:

Արդ զինչ յառաջադոյն ասացուք, զառաքելական զվարդապետութիւնն զոր քարոզեաց և եցոյց յամենայնի, եթէ զմերձաւոր կենացս զարհամարհութիւնն, եթէ զստուգութիւն առաքինութեանն և զոր տնօրինութեամբ առաջնորդեաց եկեղեցեաց: Օ՜ր յառաջ օրհնաբանեսցուք, զվկայութեա՞նն հանդէս, եթէ զաոաքելութեանն, եթէ զեպիսկոպոսութեանն. քանզի երջորդ հիւսեալ պսակս չնորհիւ հոգւոյն սրբոյ և այսպէս կապեցաւ 'ի նորին գլուխն, մանաւանդ և բազմահիւսակ: Օ՜ի եթէ զպսակս զայսոսիկ զիւրաքանչիւրն ստուգութեամբ զննեսցէ ոք և շօշափեսցէ, գտանէ անդ և այլ պսակս բխեալ 'ի մէջ:

Արդ եթէ կամիցիք, յառաջագոյն զեպիսկոպոսութեանն կոչումն քանիւ յառաջ բերցուք, որ թուի թէ մի է պսակն: Ասեր այսուհետև քննեսցուք զբանս, և տեսանիցէք աստ երկուս և երիս և առաւել ևս յայսմիկ լինել մեզ խնացումն չնորհացն: Ալ եթէ միայն այսչափ առաջնորդութեան արժանի եղեալ սուրբ և զարմանալի այրս այս, այլ և 'ի սրբոցն յայնցանէ յայս ընկիղեն ձեռնարկէր, և ձեռք երանելի առաքելոցն 'ի սուրբ գլուխս սորա մերձեալ էին. որ չէ փոքր բարեբանութիւն բանս այս, բայց առաւել 'ի վերուստ հանդիպեցաւ չնորհացն: Ալ եթէ միայն տեղւոյ եւս առատապէս յինքեան գալ չնորհացն հոգւոյն սրբոյ, այլ մանաւանդ մարդկային բնութեանս ըստ ամենայն առաքինութեան 'ինոյն վկայեալ: Այս թէ արդարև է՝ ես առացից: Այ Տիտոս գը-

բեաց երբեմն Պաւղոս. յորժամ զՊաւղոս ասացից, և զՊետրոս ասեմ և զՅովհաննէս և զՅակոբոս և զամենայն դասք առաքելոցն: Որպէս Ի քնարի բազում լսեք իսկն՝ բայց մի են ձայնակցութեամբ, այնպէս և դասք առաքելոցն ըստ նմանութեան պատկերաց քաժանեալ են Ի միմեանց, բայց մի է վարդապետութիւնն, զի և մի խակ է հնարագիտութիւն ընդՀայց հոգւոյն սըրբոյ որ եռացուցանէ զհոգիս սրբոցն. վասն որոյ Պաւղոս յայտնապէս ասէ. "Ես Էի և եթէ նոքա այսպէս քարոզեցաք,,: Պետրոս գրեաց առ Տիտոս և ետես եթէ զի՛ ոք արասցէ եպիսկոպոս. "Պարտ է, ասէ, եպիսկոպոսին անարատ լինել որպէս Ոյ տնտեսի, մի յանդուգն, մի բարկացող, մի Ընչամանող, մի Հարկանող, մի զօշաքաղ. այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, տուրբ, ժուժկալ. վերակացու լինել Հաւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող իցէ և զայլս մըխիթարել ողջամիտ վարդապետութեամբն և զհակառակորդսն կշտամբել,,: Ետ այսմ բանի և առ Տիմոթէոս ասաց. "Էթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ, բարիոք գործոյ ցանկայ. պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր, հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ, մի Ընչամանող, մի Հարկանող, այլ հանդարտ, մի կռուող, մի արծաթասէր,,: Տեսանեմք թէ որչափ ստուգութեամբ առաքինութիւնք խնդրին յեպիսկոպոսէ: Որպէս կենդանագիրը իմաստուն ազգի ազգի դեղոք վայելչապէս ընդ միմեանս խառնելով կազմիւք ղգեղեցկութիւն արքայական պատկերի օրինակաւ կենդանագրեալ և ամենայն ստուգութեամբ նմանակերպ յօրինեալ պատկեր և ամենեքեան յայնմ պատկերի ստուգիւ զննանն գրեն կենդանագրեալ Ի նմա խառապին, այսպէս և երանելին Պաւղոս իբրև զԹագաւորական պատկեր գրի և զնմանութիւն նորա պատրաստէ պէսպէս առաքինութեան դեղոք խառնեալ, նշանակեաց մեզ զկերպարան առաքինութեան և եպիսկոպոսութեան, զի իւրաքանչիւր ոք Ի նոցանէ յայնմ յառաջին պատկեր առաքինութեան Հայել այնիւ ստուգութեամբ զամենայն կրօնս յինքեանց Հաստատեսցեն:

Ուստ այսպէս թուի եթէ զայս ամենայն երանելին Պետրոս ստուգութեամբ ախտեալ ունէր յանձին իւ-

բում անարատապէս անպակաս և անթերի, ոչ յան-
դուգն, ոչ բարկացող, ոչ թշնամանող, ոչ հարկանող,
ոչ կռուող, անարծաթասէր, սուրբ, ժուժկալ, վերա-
կացու ըստ բանին վարդապետութեան հաւատոյն, հեզ,
ցած, պարկեշտ, հանդերձ այլ ամ առաքինութեամբք
զոր Պաւղոս ուսուցանէ: Այլ ուստի՞ կայցէ ինէ այս ա
մենայն. յայնցանէ որ ասացաւ ի նոցունց, զի և նոքին
իսկ էին որ ձեռնադրեցին. զի այսպէս իրատէին զայլսն
և փորձելով առնէին զորս հանդերձեալն էին յայսմ
յառաջադրութեան յաճառս հանել: Արդ եթէ ոչ
էին տեսեալ զայս ամենայն առաքինութիւն ի սիրտ
այսմ վկայի տնկեալ, ոչ էին կայսմ ձեռնարկութիւն
սկսեալ. քանզի գիտելով ստուգապէս թէ որչափ կայր
վտանգ որք դիւրաւ և ըստ հանդիպմանն զայնոսիկ առ-
նէին գալ ի ձեռնադրութիւն: Այլ զայս յայտնեաց դար-
ձեալ Պաւղոս առ Տիմոթէոս գրելով. "Ձեռն վաղ
վազակի, ասէ, յորում վերայ մի դնիցես և մի լինիցես
հաղորդ մեղաց օտարաց": Զինչ ասես, ով Պաւղոս.
պլք մեղան, և ես լինիմ հաղորդ դատապարտութեան
և տանջանաց: Այո, ասէ, քանզի չարի գիշխանութիւն
տայցես. որպէս ուրուք չարացեալ խռովութեամբ՝ պատ-
բաստէ զի ի ձեռին սուր սրեալ զի գործեսցէ զապակա-
նութիւն որ խռովեաւն է՝ նա է պատճառ մնհանն որ ըզ-
սուրն ընձեռեաց, այսպէս մարդոյ որ չար է կենօք իւ-
րովք, որ զայս իշխանութիւնս տացէ՝ զամենայն մե-
ղաց գործն այնորիկ և զհամարձակութիւնն ի գլուխ
իւր կուտեսցէ. զի զարմանն դիցէ յամենայն տեղիս,
այսինքն պատճառ բուսանելոյն է որ տնկեացն: Ցեսա-
նէս թէ որպէս կրկին առ մեզ երևեցաւ պատկ եպիս-
կոպոսութեան, պայծառագոյն արարեալ սկիզբն և զոք
ձեռնադրեցին զսա յայս իշխանութիւն, զամենայն ա-
ռաքինութիւն ցուցանելով վկայք եղեն:

Կամիք զի և այլ առաքինութիւն յայտնեացուք ձեզ՝
պատկ յայսմ ի սրբոյ բխեալ. քննեացուք զժամանակն
յորում նախ այսմ սկիզբն եղև: Ել է նման այժմ
սպասաւորել եկեղեցեաց և յայնմ ժամանակի, որպէս
չէ նման յօրինուած և հրահանգ ձանապարհաց այժմ
որպէս յառաջագոյնն. զի չէ պիտոյ դիւրել զդժուա-
րութիւն ձանապարհին, հատանել զլերինս և զվէմս և

զարգելը ամենայն և պատրաստել ՚ի քարի, և ոչ կարօ-
տանալ Հանդերձ բազում Հանապարհորդօք Հանապար-
Հորդեալ ընդ գազանօք լցեալ տեղիս որք ոչ երբեք ըն-
դունելին Հանապարհորդ։ Այլ այժմ ընդհօքն ՚այ չէ
ինչ մի գայթակղութիւն եպիսկոպոսաց, այլ խաղաղու-
թիւն և օգնականութիւն յամենայն կողմանց, և Հան-
գիստ ընդունին ամենեքեան ըստ բանին բարեպաշտու-
թեան որ տարածեալ է ՚ի ծագս աշխարհի, և որք ՚ի
թագաւորութեան են՝ ՚ի մէնջ ուսեալ զՀաւատս՝ պա-
հեն սուգ թեամբ։ Յայնմ ժամանակի չէր այսպէս.
այլ ուր և տեսանէր որ, յամենայնի պատերազմունս և
մեքենայս և վտանգս. իշխանք և թագաւորք և ժողո-
վուրդք, քաղաք և աղգք, ծանօթականք և օտարք ըզ-
Հաւատացեալսն Հալածել և նենգել խորհէին։ Այլ ոչ
եթէ միայն այս էր վտանգ, այլ և որք զՀաւատսն ու-
նէին բազումք որք ՚ի տկարութիւնս անկեալ էին՝ խրնդ-
րէին զգործութիւն. և բազումք թէ և կանգուն էին, ոչ
էր այլ ուստեք խնամոյ։ Սակ ըստ արտաքին պատերազ-
մաց ոչ պակասէր տրտմութիւն վարդապետաց, այլ մա-
նաւանդ յաւելոյր բազում և առաւել. և որք էին յար-
տաքին պատերազմունս, բազում և առաւել փափա-
գութիւն ունելով կենաց վասն յուսոյն և խոստման
վարձուցն՝ և այնու միսիթարէին։ Ո՛ան որոյ և առա-
քեալքն յորժամ գարձան յատենէ անտի, խնդային
զի ապտակեցան ՚ի նոցանէ. ըստ որում և Պաւղոս գո-
չելով ասէ. “Ուրախ եմ ընդ չարչարանս իմ և պար-
ծիմ ՚ի նեղութիւնս որ վասն Քրիստոսի,,։ Այս զի կեն-
քեանց և եղբարցն վէրք ոչ տային Թոյլ նոցա առնուլ
Հանգիստ, այլ որպէս վէմն ծանուսն ՚ի գլուխս ան-
ձանց նոցա կապեալ ատեպ ՚ի դանդաղանս արկանէին։
Այլ որ գիարդ ասէր Պաւղոս. “Ուրախ եմ ՚ի չարչա-
րանս,,. և թէ “Ո՛ հիւանդանայ և ես ոչ հիւանդա-
նամ,,. և գարձեալ ասէ. “Երկնչիմ զի մի երբեք ե-
կից և ոչ որպէս կամիմ գտից զձեզ, և ես գտանիմ ձեզ
որպէս և դուք ոչ կամիցիք,,. և թէ “Լկատն առնիցէ
զիս ՚ած և սուգ առնուցում վասն բազմաց ՚ի ձեզ մե-
ղացեալց և ոչ ապաշխարելոց ՚ի վերայ պոռնկութեան
և պղծութեան զոր գործեցին,,։ Այս զիարդ, արտա-
սուօք Հանապազ տեսանիս և միշտ ողբաս վասն ընտա-

նեաց և սոսկաց և զողաց վասն ամենայն հաւատացե-
լոց։ Ա. յո, ասէ։ Արդեպ ընդ նաւապետս զարմանամբ
ոչ յորժամ ծովիս լռեալ կայցէ և երևելին կղզիք՝ կարե-
ցէ զնաւեալսն ապրեցուցանել, այլ յորժամ խռովու-
թիւնք լինի և բարձրանայ ալիք ծովուն, և նոցին՝ի խորն
մտանելով և բազում մրրիկ պատեալ զնաւեալսն ներ-
քոյ և արտաքոյ, և յայնժամ ուղղիցէ զնաւն բազում
պատրաստութեամբ. այսպէս և որ յայնժամ վերակա-
ցութեամբ ձեռնաբկելին յեկեղեցիս, ընդ որ պարտ է
սոսկալ և զարմանալ մեծաւ առաւելութեամբ քան որք
այժմ սպասաւորեն, յորժամ բազում էր պատերազմ
ներքոյ և արտաքոյ, յորժամ տակաւին մատաղ էր բոյս
հաւատոյս իբր զնորածին տղայս, յորժամ շատ և բազ-
մապատիկ խնդրիւք եկեղեցեաց բարեխնամութիւն, և
իմաստնական հոգոյ պիտոյ էր զհանդերձեալսն միայն
զնել յոգիս իւրեանց։

Օ՛ և Ձմարտապէս ուսանիցիք Թէ որչափ պսակաց
էին արժանաւորք որք յայնժամ զեկեղեցիս վստահա-
ցեալ էին, և Թէ որչափ ցաւս և վտանգս կայր առաջի՛
և նոցա համբերութեամբ ընկալեալ զամենայն կայլին
առաջոյ, էս զՔրիստոսին բերեմ վկայութիւն, և զոր
՛ի մէնջ ասացեալս է՝ մի՛ ի մէնջ համարել զայս, այլ
զմիտս ձեր՛ ի լոր այսոցիկ սնդեցէք։ Ձտես զբազում
առ հինգն գալով, ի ձեռն առաքելոցն կամեցաւ ցուցա-
նել նոցա Թէ քան զնոսա առաւել գործեցին մարգա-
րէքն, ասէ. «Ա. յլք վաստակեցին, և դուք՛ ի վաստակս
նոցա մտիք.»։ Ձե զինչ առաւել գործեցին մարգարէքն
քան զառաքեալսն։ Ա. յլ քանզի կանխագոյն նոքա ըզ-
բանս բարեպաշտութե՛ սերմանեցին, և զանձինս մարգ-
կան որք առանց ուսման էին ամենևին՛ ի Ձմարտութի՛
սովորեցուցին։ Ա. ման զի չէ հաւասար զինի բազում
վարդապետաց ղՀետ գալ և ուսուցանել, և յառաջա-
գոյն արկանել զսերմ բանին։ Վանզի զխորհրդական
իրս լսել և ընթեռնուլ բազում անգամ և սովորու-
թիւն լինել՝ բազմից առնել ընդունական, և ոչ տագնա-
կալի, այլ հեշտ թուեսցի. իսկ զառաջինն լսել՝ ըզ-
միտս լսողացն զարհուրեցուցանէ որք ունկն դնիցեն, և
բազում վտանգս հասուցանէ ուսուցանողացն։ Ա. յսպէս
եղև Ա. Թէնս, ՛ի մտանելն Պաւղոսի անդ՝ զարհուրե-

ցոյց ղտոլըն, ըստ որում դարձուցեալ զբանն տրանջկին և ասէին. "( )տար իցս բերես 'ի լեզիս մեր,, զոր չկք մեր լուեալ։ Այլ այժմ ոչ է բազում վաստակք և գործք, այլ եկեղեցիս առաջնորդութիւն պարգևէ որք սպասաւորեն նմա։ Այնցայնք թէ զիարդ կամ որպէս երկիցս և երիցս և բազմապատիկ էին ցաւք և նեղութիւնք և պատերազմունք և ահ ահեպ ահեպ գալով 'ի վերայ։ Այս չէ և չէ իսկ պարտ դադարեցուցանել զբանս գժուարանաց, կամ ասել զամենայն զոր համբերեին սուրբքն յայնժամ։

Այսոցիկ և զսրբոյդ պսակն որ յեպիսկոպոսաց տուաւ մեզ։ Այս զիաւրդ· զի յիւրոց հայրենեաց կամեցաւ գալ առ մեզ։ Այանգի ցաւագին սրտիւ յեօթնհարիւր և յինսից առաջակաց եղեալ սմա, և ապա այսչափ քաղաքի ձեռն արկեալ և ժողովրդեան իշխել իբրև քան բիւրուց՝ որչափ յառաքինութիւն և յինաստութիւն ցանկ լինել այսպիսի առն։ Այպէս և 'ի զինուորութիւնս թագաւորական գնդի ոչ բազմաց իցէ վերակացու լինել, այլ մանաւանդ որ յոյժ իմաստունքն են 'ի զօրապետաց՝ նոքա ձեռնարկեն զօրացն այնոցիկ, այսպէս է և 'ի քաղաքս տեսանել, որ վերագոյն են մնօք քան զբազումն 'ի մարդկանէ և հաձելի իշխանս՝ նոցա վստահասցին քաղաք։ Այրդ քան զայսոսիկ այլ բազմապատիկ եր քաղաքիս տեսչութիւն 'ի բանն այ, զոր և գործովք իւրեանց երևեցուցին։ Այր ամենայն աշխարհայ վարդապետն եր Պետրոս, որ իշխանն եր բանալ և փակել զերկինս, որ զամենայն ասել և առնել հրաման էառ, նա բազում ժամանակս ատ կալ ախորժեալ· այս նմանութ[1] փոխանակ ամ աշխարհի է քաղաքս մեր։

Այրդ ածեալ յիշեցի զՊետրոս, և հինգերորդ յայսմանէ տեսի պսակս հիւսեալս· այսինքն է զի զինի նորա ընկալաւ սկիզբն այսմ աթոռոյ։ Այպէս որ զմեծ վեմ առեալ 'ի հիմանէ տան, և այլ վեմ փոխանակ նորա փութայ արկանել 'ի տեղւոջն, եթէ ոչ հանդերձեալ է շարժել զամենայն շինուածն և հնացեալ աւերի գործ և հինն շինուածոյն, այսպէս և Պետրոս հանդերձեալ եր յայսմ կենաց հեռանալ՝ զայլ ոմն փոխանակ Պետ-

1 Իմա որպէս արդարեւ։

բոսի վարդապետ՝ի փախարկութիւն մատոյց ընդհանր, զի նման նման կացցէ՝ի շինուածի նորա, և մի յետ փոխադրութեան հաւատոյն առաքելոյն՝ ցած և հնացեալ և փլատ լինիցի շինուածն։

Այս հինգ ասացաք պատճառս, ՚ի մեծութենէ յառաջաւորութեան, յիշխանութենէ ձեռնադրութեան, ՚ի դժուարութենէ ժամանակին, ՚ի չափու մեծի քաղաքին և յառաքինութենէ որ տուաւ սմա վերատեսչութիւն։ Այս ամենայն հիւսեցան, զոր պարտ է վեցերորդ և եօթներորդ ասել և ևս առաւել քան զայս. բայց զի մի զամենայն տօնիս իրս զնորին վարուց և վասն եպիսկոպոսութեանն արիական ջանուց կատարեսցուք զբանս և անկցուք՝ի պատմել զվկայութիւն սորա, քեր այսուհետև՝ի սորին Աղնութիւնս ածցուք զբանս։

Տարածեցաւ երբեմն յայնմ ժամանակի պատերազմ չար ընդդէմ եկեղեցեաց, և բռնաւորք չարաչարք ընդ երկիր սփռեցան, և՝ի միջոց յափշտակէին զամենեսեան՝ի հրապարակաց և՝ի փողոցաց անտի զայնոսիկ որք՝ի խաչելութենէ անտի փոխոխեալք էին և՝ի Աքսորութիւն ընթանային, որ՝ի դիւականն պաշտամանցն՝ի զատ կային և զՔրիստոսն ոճ Աստուածին և որդւոյ նորա միածնի երկիր պագանէին, վասն որոյ ընդ համբերական սքանչացան նոցա պարտ է սքանչանալ և պատուել, ըստ ո՛րում տանջեալ լինէին և բիւր հալածանօք վէրս և հարուածս ընկալեալ ամենեքեան որք զՀաւատոյ ուղղափառութեան խոստովանէին, մանաւանդ և ս բազմապատիկ որք առաջի եկեղեցեաց կային ընդհանուր քարկոծեալ էին, չարագործ բանսարկուն ստեպ վասն նոցա կատարէր վտանգս, զայսոսիկ խորհելով ակնկալեալ առ. եթէ զՀովիւն կառափեալ ընկեցից, զՀօտն դիւրաւ յափշտակել կարօղացայց։ Այլ որ Հաստատեցոյն զայս իմաստութիւն իմաստնոց, յամենայն՚ի գործս նոցա կամեցաւ յուցանել թէ մարդիկ են և օգնականք իւրում եկեղեցեաց, այլ ինքն իսկ է որ յօրինէ զամենայն. ուստի որ ամենայն Հօտից Հօտապետ է, նոցա որք Հաւատան Աքսորութեամբ յանուն նորա՝ տեղի ետ այսմ լինել, զի յորժամ յափշտակէին զնոսա՝՚ի բարեպաշտութենէ ոչ պակասէին և ոչ շիջանէին՚ի քարոզութենէ բանին, մանաւանդ և ս առաւել յորդէին.

զի այսիւ ուսոյի վասն գործոց նոցա ինքն իսկ քանսար-
կուն և որք այսու սպասաւորք էին ամենեքեան նորա՝
զի ոչ էր ի մարդկանէ առ ի մէնջ օգնականութիւնն,
այլ ի վերուստ յերկինից ունելով զարմանն և զպատ-
ճառն զառ ի մէնջ վարդապետութեան, և ՚ինծ է որ
ընդ ամենեսեան շրջի և համօրէն զեկեղեցիս ժողովէ,
և ընդ ՚ինծ մարանչել ոչ իցէ երբեք յաղթել։

Իսկ չարադործ քանսարկուն ոչ միայն զայնսոսիկ յա-
ղոյց, քայց և այլ չարիս նիւթեաց որ ոչ էր պակաս քան
զայս. ոչ եթէ ՚ի քաղաքս միայն ուր հաստատեալ էին
եպիսկոպոսք՝ կռիւել զնոսա, այլ և այլովք իրօք պատե-
րազմ սկսեալ արար, զի որք իբրև յանապատի էին
պարկեշտութեամբ ամրացեալ, ամենայն ուստեք ժա-
մանակ գտեալ առնուլ փութայաւ զի այնու տկարագոյնս
գործեսցէ զատանելովքն զոր բազում ջանիւք ՚ի բարի
Հանապարհ ելեալ յուսացան սուրբքն, զոր և առ երա-
նելիս այս գործեաց յետ ամենահնար տանջանացն։

Օ՚ի յայսմ քաղաքիս մերմէ առ ՚ի Հռոմ հրաւի-
րեաց զսա՝ հեռագոյն գործել նմա զընթացս Հանապար-
հին. խորհէր զի երկարութեամբ Հանապարհին և բազ-
մութեամբ աւուրցն զխմաստութիւն նորա ՚ի բաց ըն-
կենուլ ակն ունէր. ոչ գիտէր եթէ Հանապարհակից
ունէր զՔրիստոս կցորդեալ յայնչափ Հանապարհորդ-
դութիւնսն, որով մանաւանդ Հզօրագոյն լինէր, և աս-
տուածային զօրութիւնքն որ էր ընդ նմա՝ առաւել պար-
գևէր զցուցումն սքանչելեացն. քանզի զեկեղեցիսն ՚ի
Հանապարհի իւրում բազմապատիկ Հաստատէր և ու-
սուցանէր։ Այլ քաղաքք բազումք ընդ առաջ ելեալ առ
՚ի լսողունել զՔրիստոսէացն, և բազում պատուովք և
անուշահոտ խնկօք պատուէին զմեսա սրբոյն և նովին
սիրով սրբոյն յուզարկաւորք լինէին, և մեծաւ ջանիւ
ցանկային աղօթից և աղաչանաց նորին արժանի լինել։
Այլ այսմ բարեաց ամենեքեան Հանդիպեցան և ընկա-
լան զմխիթարութիւն հնարհաց, տեսեալ զսուրբն այն-
չափ յօժարութեամբ ընթանալով ՚ի մահ. և յիրաւի
իսկ, քանզի փութայր ՚ի կոչումն արքայութեանն երկ-
նից։ Այլ այսու գործովք ուսանէին Հանդերձ նորին
քաջալերական յօժարութեամբն և պայծառութեամբն,
զի ոչ էր մահ յոր ընթանայր, այլ Հեռաւորութիւն

յաստեաց և փոխադրութիւն առ ի յերկինս ելա-
նել։ Եւ զայս ուսուցանէր բանիւ յամենայն քաղաքս՝
ընդ որ անցանէր՝ հանդերձ գործովք։

Վասն եղև լինել այսմ և ի հրեաստանի յորժամ
զՊաւղոս կապեցին և առաքեցին ի Հռոմ. ակն ունէին
զնա ի մահ արձակել, իսկ նա որոց անդ բնակեալ էին
և Հրէից վարդապետ առաքեցաւ, նոյն իսկ և Իգնա-
տիոսի եղև։ Ել եթէ որոց ի Հռոմ բնակեալ էին մի-
այն, այլ և որք էին ի քաղաքս բազումք շուրջանակի՝
երևեցաւ վարդապետ սքանչելի. ուսուցանէր արհամար-
հել զայս կենցաղս և ոչ մերձենալ ի տեսանելիսս, զը-
հանդերձեալսն պատմէր և յերկինս փութացուցեալ
ձեռեր զամենեսեան։ Օ այս և առաւել քան զայս վասն
գործոց նոցին խրատէր և ուսուցանէր. որպէս զարե-
գակն յարևելից ելանէր և ընթանայր յարևմուտս, մա-
նաւանդ և քան զարեգակն պայծառագոյն էր սա։ Օ ի
նա ի վերին օդս ընթանայ՝ զգալեացս բերելով զլոյս,
իսկ Իգնատիոս ի խնարհ փայլեաց իմանալի լուսով
վարդապետութեամբն, ի հոգիս բազմաց ծագեաց զը-
լոյս փառաց անվախձան կենացն։ Արեգակն յարևմուտս
երթալով թագուցանէ զինչոյլս իւր և եկեսցէ գիշեր.
իսկ սուրբս այս յարևմտից կողմանս եկեալ առաւել
պայծառագոյն փայլմամբ ծագեցաւ. զի որք ի Հանա-
պարհի հանդիպեցան նմա, բարեգործեցան մեծապէս.
և յորժամ ի քաղաքն եմուտ, զնծային իմաստութենին
անդ ուսուցանելով հաստատեաց զնոսա։ Ա՝ ասն որոյ և
ասէ տեղի ետ անդ զկեանս իւր կատարել, զի ի սորին
կատարմանն վարդապետութիւն բարեպաշտութեանն
եղիցի ամենեցուն որոց բնակեալ էին ի Հռոմ քաղաքի։

Դուք այժմ, ով անտիոքացիք, ոչ միոյ ուսման ունելով
կարիս, զի ոչ ունիմք թերութիւն հաւատոյ, այլ յայնժամ
ի Հռոմ բնակեալ էին բազմութիւն ամբարշտաց, որոց ա-
ռաւելապէս խնդրելի եր փրկութիւն։ Ասա որում և Պաւ-
ղոս և Պետրոս և որք զնոյա ամենեքեան անդ կա-
տարեցան. վասն զի արեամբ կռոցն պղծեալ եր քա-
ղաքն, սոցին արեամբն սրբեցաւ։ Եւ այլ ազգ ևս, զի
զչարութիւնն խաչելելոյն Քրիստոսի հանդերձ գոր-
ծովք ջնջհէին և ուսուցանէին և հաւանեցուցանէին
զնահիկեան Հռոմայ՝ եթէ ոչ էին հանդերձ այսչափ փա-

փափմամբ զկեանս զայս արհամարհեալ, եթէ ոչ կին զինքեանս ածեալ ՚ի յայս համարձակութիւն, քանզի առ Քրիստոս որ խաչեցաւն՝ հանդերձեալ էին ելանել և զնա յերկինս տեսանել։

Ահա եր այս և սքանչելի յարութեանն ցուցումն. զի որ սպանաւն Քրիստոս, այսչափ յետ մահուն իւրոյ եւ յոյց զօրութիւնս, որպէս զի կենդանի մարդկան արասցէ զհայրենիս զտուն զսիրելիս և զազգականս և բնաւէնն զայս կեանս անտես առնել վասն առ ՚ի նա խոստովանութեանն. իբր զպատակս և զնեղութիւնս զվտանգս և զմահ փոխանակ այսոց կենաց բարի համարէին։ Այս ամենայն ոչ է վասն մեռելոյ, այլ յարուցելոյ և կենդանւոյն սքանչելիքս այս։ Այլ զինչ իցէ այժմ պատճառ, զի յորժամ կենդանին էր՝ ամենեքեան որք ընդ նմա էին առաքեալքն՝ ՚ի յահէ տկարացեալք եղեն, և յորժամ մահացեալին զվարդապետն՝ փախեան ամենեքեան. իսկ յորժամ մեռաւն, ոչ միայն Պետրոս և Պաւղոս, այլ և Իգնատիոս որ ոչ էր տեսեալ զնա և ոչ էր լեալ ընդ նմա բնակցութեամբ, այսչափ վասն նորա յօժարութիւն եցոյց, որ և զանձն իւր ՚ի մահ մատնեաց վասն նորա։ Օ այս իմանալին ամենայն բնակիչքն հռոմայեցւոց՝ թէ ահա տեղի անդ վախճանել սրբոյն։ Այս է պատճառն և յայսմ օրինակ վախճանելոցս փորձիմ և զայս ցուցանել։

Օ՛ի ոչ եթէ արտաքոյ պարսպին ՚ի խորխորատ ուրեք և ոչ յանկիւնս գատաւորութեան զգատապարտութեան զվճիռ ընկալաւ զմահու, այլ ՚ի մէջ քաղաքին։ Այլ տեսանէին զնա ամենեքեան և զօրինակ համբերութեան վկային և զգազանացն ՚ի նա թողլոյ. զի յայնս ամենայնի կացոյց զյաղթութիւն ընդդէմ սատանայի, և զտեսանողսն զամենեսեան նախանձորդս առնէր իւրում քանուցն։ Ոչ եթէ միայն մեռանէր երանելիս այս, այլ հանդերձ բազում փափագմամբ մեռանէր. ոչ եթէ սրպէս ՚ի կենաց հանդերձեալ էր բաժանել, այլ թէ ՚ի կեանս առաւելագոյնս և հոգևորականս հրաւիրեալ այսպէս համարձակութեամբ հայէր ՚ի գազանսն։

Այս ուստի յայտ եղև այս։ Ի բանիցն յորժամ հանդերձեալ էր մեռանել՝ ասացաւ։ Ասեալ էր զի այս օրինակ տանջանացս նման մնայր, “Այս ժանեօք գազա-

նաց աղաչեալ լինիմ,, ասէ։ Օ՛ի այսպէս էին առա-
ջեալքն, որք Թէպէտ և չարչարէին ըստ առաջելոյն, մե-
ծաւ փափագմամբ ընդունէին զչարչարանսն. և այնպէս
ընդդէմ յօժարութիւն նոցա, յորժամ բազում և չարա-
չար լինէին եղեալքն, զոր այժմ և առ սա ինքն հա-
սեալ տեսաք։ Օ՛ի ոչ մահուամբ միայն, այլ և յօ-
ժարական ցանկութեամբ փութայր նմանել առաքե-
լոյն. լուաւ զի ապտակեալ վնասա՝ ուրախութեամբ ըն-
կալան, կամէր և սա ինքն նովին ուրախութեամբ հա-
մեմատ լինել առաքելոյն. վասն որոյ խնդալով ասէր
Համբերել գազանացն, և զդժնդակ և զխիստ ժանիս
նոցա ընտանի և քաղցր համարէր։ Նա այս յիրաւի իսկ
զի բռնաւորն՝ի գեհենին հրաւիրէր, իսկ բերանն այնմ
դազանաց յարբայութիւնն առաքելին. քանզի նոքօք կա-
տարեաց զկեանս իւր, և այսպէս եղ յերկինս և դասե-
ցաւ ընդ պսակեալսն։

Նա այս ամենայն անօրինութեամբն այ եղև, որ և
դարձեալ առ մեզ երեր զվկայն և՝ի քաղաքս բաժա-
նեաց զերջանիկ նորա զընորհն։ Նորա զհոտումն արեանն
ընկալան, և դուք, ով անտիոքացիք, նորա սուրբ ոսկե-
բօքն պատուեցայք. դուք առէք հանգիստ վերատես-
չութեամբն, և նոքա հանգեան նահատակութեամբն.
տեսին նոքա զնա պատերազմեալ և յաղթեալ թշնա-
մւոյն և պսակեալ՝ի վերուստ, և դուք հանապազ զե-
րանելիս այս ընդ ձեզ ունիք. պակաս ամօք զնա ՚ձ՝ի
ձինջ հեռացոյց, և դարձեալ բազում փառօք զնորհեաց
զնա ձեզ։ Նա որպէս սին փոխ ինչ առեալ յումեքէ և
դարձեալ բազում յաւելուածով հատուսցէ, սոյնպէս
և ՚ձ՝ զպատուական գանձս զայս դոյզն ամօք՝ի ձինջ
առնուլ և քաղաքին այնմիկ ցուցանելով՝ դարձեալ զնա
հանդերձ բազում պայծառութեամբ պարգևեաց ձեզ։
Նդաքեցէք եպիսկոպոս, և ընկալայք վկայ. առաքեցէք
հանդերձ աղօթիւք, և ընկալայք հանդերձ պսակօք. ոչ
եթէ դուք երկաբեանդ միայն, այլ և ամենայն քաղաք
որ՝ի միջի ձերում։ Օ՛խտիդ և որով օրինակաւ. քանզի
զի գային և մերձենային ամենեքեան բնակել և տեսա-
նել զնշխարս սրբոյն։ Ո՛վ Թէ որչափ պատաբերեաց ըզ-
փափագութիւն ամենեցուն և զիսյեմ, կամ որչափ ցնծալ
և որչափ զոհաբանութիւն յամենայն կողմանց մատու-

ցանել պսակելոցս այսմիկ։ Որպէս[1] նահատակ քաջ՝ի մարտի յաղթեալ, նոյնպէս և զսուրբս զայս իւրաքանչիւր քաջաք՝ի Հռոմէ բարձեալ յուսոյ բերին մինչև՝ի քաղաքս յայս, և օրհնելին զնծաւ նավաւ և ծաղր առնելին զատանայ որ յիւրում մարտին յաղթեցաւ։ Իսկ յայնմհետև մինչև ցայսօր զքաղաքս մեր մեծացոյց. զի որպէս գանձանակ որ հանապազ առնուր ընուն՝ ոչ ունի զպակասութիւն, այսպէս և երանելիս այս Իգնատիոս զսրս առ նա համարձակութեամբ գալին օրհնել՝ի նմանէ։

Իսկ մեք ոչ եթէ այսօր միայն, այլ զամենայն աւուրս առ սա ընթանամք և զպտուղս հոգևորս առնումք՝ի սմանէ[2]։ Ա՛ան որոյ աղաչեմք զձեզ, եղբարք, եթէ ոք՝ի տրտմութեան իցէ կամ՝ի հիւանդութեան կամ՝ի փորձութեան կամ յայլ ինչ երկրաւորական նեղութիւնս կամ՝ի մեղս դժուարինս, հանդերձ հաւատովք աստ եկեսցէ և զայնոսիկ զամենայն՝ի բաց դիցէ և առասանիցէ զսուրբս զայս[3], որով հանդիպեսցի անշարժ բարութեանցն՝ի Քրիստոս Յիսուս՝ի տէր մեր, որ է օրհնեալ յաւիտեանս։

Ի ՊԵՏՐՈՍ ԵՒ Ի ՀԵՂԻԱՍ

Սակաւք են այսօր առ մեզ եկեալքս. և զինչ արդեօք իցէ պատճառ։ Յիշատակ վկայից կատարեմք։ Այլ հեռաւորութիւն ճանապարհին՝ի պղերգութիւն էարկ. մանաւանդ եթէ ոչ հեռաւորութիւն ճանապարհին, այլ ծուլութիւն զնոսա խափանեաց։ Օ՛ի զոր օրինակ զփոյթն և որոց զարթուցեալ են յօժարութիւնքն՝ ոչ ինչ կարէ խափանել, նոյնպէս և զայլսն և զընկողմանեալսն ամենայն ինչ կարէ խափանել։ Ա՛ի ըկայքն զիւրեանց զարիւնն յաղագս Ա՛ծմարտութեանն հեղին, դու և ո՛չ զդուշնաքեայ ճանապարհս արհամարհել կարես։ Ա՛յրա զգլուխն եդին յաղագս Քրիստոսի,

1 Հատուածգ Որպէս . . . օրհնել՝ի նմանէ զնացեալ է կեսով չափ։
2 Պակասին տողք 14։
3 Պակասին տողք 25։

դու և ոչ արտաքոյ քաղաքիս հանդիպել ախորժես յաղագս տեառն։ Ցերկին յաղագս քո մեռաւ, և դու յաղագս քո ինքեան դանդաղիս։ Յիշատակ վկայից, և դու պղերգանաս և ընկողմնեալ կաս։ Պարտ և արժան էր քեզ գալ և տեսանել զատամնայ պարտեալ և զվկայն յաղթողս և զնոճ փառաւորեալ և զեկեղեցի պսակեալ։

Ա՛յլ պատճառք իմն է նոցա. մեղաւոր եմ, ասէ, և ոչ կարեմ պատահել անդ։ Ա՛յն ինքն զայդ մեղաւոր ասես գոլ, դորին աղագաւ եկեսցես, զի մի արտաքս անկցիս յարդարութենէ։ Ո՞ք է՝ի մարդկանէ առանց մեղաց, ասա ինձ։ Ա՛սան այգորիկ պատարագ և եկեղեցի, յաղագս դորին աղօթք և պահք. վասն զի յոլովք են վէրք անձինդ, և դեղքն այնոցիկ գտանին, և ըստ իւրաքանչիւր վիրաց անձին յարմարագոյն դեղ պատրաստեսցեայ։ Ա՛նխիս եկեղեցի պատարագ կատարեալ, զպաշտաման Հարցն, զՀոգւոյն սրբոյ զվերակացութիւն, զվերկայիցն զյիշատակս, զժողովս սուրբս և զայլ ամենայն նոցին հաւասար, որք կարեն զքեզ՝ի մեղացն վերստին կոչել յարդարութիւն։ Ա՛յ պատահեցեր յաղօթս վերկայիցն, զմի ոնիցիս զթողութիւն ասա ինձ։ Ա՛յ ինչ՝ի ժմդակացն՝ի մէջ, և դու խափանիս յոր՝ի միաբանութենէ առ վկայս։

Ա՛ստղ թերևս հոգք կենցաղականաք զքեզ արգելին։ Ա՛յս մեծագոյն մեղադրութիւն. զիրքր ժամանակն ոչ ետուր՝ի փոխ ա՛յ, զի առնուիր զբովանդակ օրն։ Ա՛ղաւոր եմ, ասէ, և ոչ կարեմ։ Ա՛յ զի մեղաւոր ես, դորին աղագաւ մուտ՝ի ներքս։ Ա՛նթէ ոչ գիտես զի և նոքին իսկ որք սեղանոյն են սպասաւորք՝ ընդ մեղս են բևեռեալք. մարմին են զգեցեալ, և ընդ արեան շաղեալք, ոսկերօք կապեալք։ Ա՛յս մեք իսկ որք յաթոռս նստիմք և վարդապետեմք, ընդ մեղս զանգեալ եմք. այլ ոչ յուսահատիմք յա՛յ մարդասիրութենէն, և ոչ անմարդութիւն ինչ՝ի մեզ մերձեցուցանեմք. ամենեքեան մարդիկ եմք՝ի նոցունց տարերց ստեղծեալք, և ոչ հրաժարեմք՝ի վարդապետութենէն՝ի խորս ա՛յ մարդասիրութեանն հայելով։ Ա՛յս դուք մեղաւորեալք, եթէ մնանէք, ոչ այնքան մեղադրութիւն, վասն զի ընդ վարդապետօք էք. մեք որքան առաւել եմք պատուօք, այնքան յաւէտ և մեղադրութեամբ. քանզի այլ է ուսո-

զին մեղանչել, և այլ վարդապետին։ Այս սակայն ոչ հրաժարեմք յայտանել, և ոչ պատճառանօք խոնարհութեան՝ ի պղերգութիւն անկանիմք։

Այս այս ըստ այ նախախնամութեանն եղև՝ նոցին իսկ քահանայիցն ընդ մեզօք անկանել։ Զուր, զիարդ վարդապետք և քահանայք եթէ ոչ մեղանչէին, և ոչ՝ ի ներքոյ անկեալ կային ախտից կենցաղոյս, որպիսի՞ զմարդիկ հանդերձեալ էին լինել առ այլսն առանց ներելոյ։ Այլ վասն այնորիկ զնոսին իսկ զքահանայսն կալեաց ծառայեալս պատրաստեաց և զիշխանսն, զի որով ինքեանք ախտանան, թողութիւն ընձեռեսցեն այլոց։ Այս միշտ այնպէս դարմանեաց Աստ, ոչ միայն այժմ, այլ և՝ ի հնումն. և որոց հանդերձեալ էր հաւատալ զԺողովրդն և զեկեղեցին, նոցա ներեալ ընդ մեզօք անկանել՝ զի յիւրեանց յանցանացն մարդասիրագոյնք լինիցին առ այլս։ Զի եթէ ոչ մեղանչէին նոքա, և ոչ իսկ միով իւիք ունէին տալ թողութիւն մեղուցելոցն. այլ անմարդութեամբ վարեալ՝ զամենեսեան հնձէին յեկեղեցւոյն։

Այս զի այսոքիկ այսօրինակ, և ոչ կեղակարծելով՝ ինչ խօսիմ, քեր՝ ի նմին իսկ՝ ի տեսութենէն հաւանեցուսցուք զձեզ։ Պետրոս հանդերձեալ էր հաւատալ զփրկանս եկեղեցւոյ, մանաւանդ թէ հաւատացեալ իսկ զփականս երկնից. հանդերձեալ էր հաւատալ և զկիրս Ժողովրդեանն։ Այս զի՞նչ նմա տէրն. "Զոր կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս"։ Լինելոց էր Պետրոս անընդունել և խիստ. եթէ ունկնդրութիւն, զի՞ր թողութիւն գտանէին՝ ի նմանէ վարդապետեալքն։ Այլ վասն այնորիկ հնարեցան Աստուածային չնորհքն ընդ մեզօք իւիք անկանիլ Պետրոսի, զի որով ինքն ախտացեալ, մարդասիրագոյն լիցի առ այլսն։ Այս տես ընդ ո՞րում մեզօք ներեաց անկանել առաքելոյ, անշարժ հիմանն և անյողդողդելի վիմին, առաջնորդին եկեղեցւոյ, անկուռելի նաւահանգստին, անդրդուելի աշտարակին։ Պետրոս՝ այն որ ասէր ցՔրիստոս. "Եթէ դէպք լինին ինձ ընդ քեզ մեռանել, ոչ

1 Միւսն վաղահաստիւ։

Թողից զքեզ ,,։ Պետրոս՝ որ ասծային յայտնութեամբն զՀնամարհան խոստովանեաց, “ Դու ես որդի այ կենդանւոյ ,, , նա եկեալ՝ի գիշերին յայնմիկ յօրում մատնեցաւ Քրիստոս, և կացեալ մերձ առ խարուկին ջեռնոյր, աղջիկ ոմն մատուցեալ ասէր ցնա՝ եթէ “ Դու երեկ ընդ առնդ ընդ այդմիկ էիր ,, . և Պետրոս ասէր . “ Ոչ գիտեմ զայրդ զայդ ,, ։ Իվ Պետրոս , այդ է ղոր խոստանայիրն . ոչ Թագաւոր , ոչ տանջանարան և ոչ ինչ յայնպիսեացն տեսեր , այլ վայրապար ղիտոքր աղջկան ղբանս լսելով և յօրացուածի խոտորեցաւ ։ Ուրանաս , Պետրոս. զոչեցար՝ մինչ չև տանջանարանք, մինչ չև չարչարանք , ոչ վերք , ոչ սրտմտութիւք , ոչ իշխանք , ոչ սուրք սրեալք և ոչ հրամանն առաջի կացեալ , ոչ Թագաւորաց սպառնալիք, ոչ մահ սպառնացեալ, ոչ բանդք և առեանք, ոչ ծով , ոչ այլ ինչ յայսպիսեաց , և արդէն ուրացար . “ Ոչ գիտեմ զայրդ զայդ ,, ։ Եւ դարձեալ աղջիկն նմա . “ Եւ դու երեկ ընդ առնդ ընդ այդմ էիր ,, ։ Իսկ նա ասէ . “ Ոչ գիտեմ զայրդ զայդ ,, ։ Իվ է որ ասէդ ցքեզ՝ զի ուրանաս ։ Ոչ ոք՝ի կարևորացն , այլ կին . մանաւանդ Թէ ոչ կին , այլ դռնապան՝ի բաց ընկեցիկ[1] , գերի և ոչ միոյ բանի արժանաւոր . դա Հարցանէ , և դու ուրանաս ։ Իվ նոր իրացն . աղջիկն զՊետրոսն զայն . մի բազ մատուցեալ զՊետրոսի զՀաւատն ամբոխեաց ։ Պետրոս սիրն առաջնկայցն ոչ Հանդուրժեաց սպառնալեաց աղջկանն . այլ խօսեցաւ միայն , և նա դրդուեցաւ . բան աղջկան մերձեցաւ , և սիրտն շարժեցաւ , առաջամարտիկն դրդուեցաւ ։ Օ՜հ տեսեր , ով Պետրոս , զի ուրանաս ։ Օ՜ աղջիկ վատԹար և զդռնապան ։ Ի դմանէ՝ տագնապեալ ուրացար ։ Եւ սակայն դարձեալ երիցս , “ Եւ դու երեկ ընդ առնդ ընդ այդմ էիր ,, . և նա ուրացաւ երիցս անգամ ։ Եւ այնպէս Հայեցաւ՝ի նա այնուհետև Քրիստոս՝ի չիշատակս աՀել առացելոյ ։ Եւ նորա խնացեալ սկսաւ լալ և ապաշխարել յաղագս մերոյն ։ Սակայն մարդասէրն Աստ եԹող նմա զիեղն , վասն զի գիտաց եԹէ մարդկայինն իցս կրեաց ։

Այլ զոր ասէին , յաղագս այնորիկ խնամակալութիւն եղև այնպէս և Պետրոսի Թողացաւ մեղանչել ,

1 Մխիան բացակիեցիկ ... միան առաջինաց ։

վասն զի հանդերձեալ էր հաւատալ ժողովուրդ քա-
զում, զի մի ապաւում իցէ անմեղ լինելոյին, և առանց
Թողութեան առ իւր եղբարսն լինիցի։ Ընկաւ ընդ մե-
ղաք, զի զմտաւ ածելով զիւր յանցանան՝ զտեառն Թո-
ղութիւնն ներեսցէ այլոցն մարդասիրութեան աղագաւ.
զի ըստ այ նախախնամութեանն յարմարեալ, որպէս
զի և նա Թողցէ զմեղսն որ հանդերձեալ իցէ զեկեղե-
ցին հաւատալ. սիւնն եկեղեցեայ, նաւահանգիստն հա-
ւատոյ, Պետրոս վարդապետն աշխարհի Թողացաւ մե-
ղանչել, զի նորա Թողութիւնն պատձառք այլոց մարդա-
սիրութեանն լինիցի։

Ասացէք ինձ վասն կր ասացան։ Ով և մեք քահա-
նայքս որ յանԹոս նստիցիմք, մեղաք եմք կապեալք։
Այս նորին աղագաւ ոչ հրեշտակ ոք հաւատացաւ զքա-
հանայութիւնն, ոչ հրեշտակապետք. վասն զի անմեղք
են, զի մի զմեղուցեալս ժողովրդեանն բոցակէզ առնի-
ցեն. այլ մարդ ՚ի մարդկանէ հաւատացաւ զաԹոռս
զայս, որ և ինքն մեղաք և ցանկութեամբք ե կապեալ.
զի յորժամ առնուցու ոք յանցաւոր, յիւրմէ ՚ի սխա-
լանացն մարդասիրադոյն լինիցի առ նա։ Վասնի եԹէ
հրեշտակ էր քահանայն և ըմբռնէր զոք պոռնկացեալ,
վաղվաղակի սատակէր զնա, զի ինքն ընդ սխալիւն ընդ
այնսու ոչ ե անկեալ։ Այս եԹէ առեալ էր զիշխանու-
Թիւն հրեշտակին՝ ոչ ուսուցանէր, այլ դարձեալ ՚ի բաց
բարձեալ լինէր նա ոչ դոլն այնպիսի։ Ալ ասն այնորիկ
մարդ նստի, զի գիտելով զյանցանսն և զմոռձ առնելով
ներեսցէ յանցուցելոյն, և ոչ շարժեսցի սրտմտութիւք
և դատաստիկասցի[1] եկեղեցի։

Այլ ընդէր[2] մինչև ՚ի Պետրոս հաստատեսցի այն
պատձառան. յայնոսիկ և սուղ ինչ բանիւ յայլ ոք ե-
լանեմ ՚ի զիմացն։ Ոչեր ինձ ՚ի մէջ ածից և զիշխաս
զմարգարէն զայն, զերկրային զհրեշտակն և զերկնային
զմարդն. որ յերկրի գնայր, և ՚ի նոսին իակ Թաեաւ ՚ի
կամարն երկնից. որ ջրոյն շառաւարանապետ էր, որոյ լե-
ղուն գանձարան եղև ջրոցն և փականք երկնից. աղ-
քատն և ձախն, տգէտն և իմաստասէրն. աղքատ, վասն
զի մեծագոյն իմաստասիրութիւն ստացաւ. և փարթամ,

1 Պակասէր դոպռլիասդ. և զկնի 2 Այս ընդէր. յաւելան ՚ի յունէն։

զի զամպա երկնից՝ ի լեզուի իւրում ունէր։ Այլ նա խիստ առ յանցաւորսն եղև այնքան, մինչ զի աղօթել՝ անձրև ոչ տալ յերկիր։ Այլ զինչ ասէր. “Կենդանի է տէր թէ լիցի անձրև, եթէ ոչ բերանով իմով,,։ Օ՜ինչ առնես, ով Հեղիաս, զինչ հրամայես. և աղաչէս ըզտէրն և կատարէ զքո բանն. “Կենդանի է տէր եթէ լիցի անձրև, եթէ ոչ բերանով իմով,,։

Որ իցէն հերձուածողքն որք ասեն եթէ որդի աղօթէ։ Թշուառականք և անամօթք։ Հեղիաս հրաժեշտ, ծառայն հրաման տայ, և տէրն աղաչէ. և ո՞չ որպէս Յղնայի ընդհէք նմա զպատիւն. ո՞չ ախորժէք որպէս ծառային նոյնպէս և տեառնն զուգամանութիւն ընձեռել։ Ո՞չ աղօթեաց և ոչ պաղատեցաւ, այլ բան չընդարտութեան ասաց և զերկին փակեաց, ոչ աղօթելով Հեղիաս։ Այլ զինչ ասէր. գիտեմ զտէրն եթէ լսէ ինձ, քանզի յաղագս նախանձու առնեմ։ Այվ նոր իրացն. տեսէր զտէրն բարեմտութեամբ ի ծառայէն յաղթեալ. զի Հեղիաս յաւէտ ի նախանձուէ զայն առնէր։ Ցեռանէր զվատթարութիւնն լեալ. տեսանէր զչարութիւնն հանդերձ բազում հասարձակութեամբ օրինաւորեալ։ Վիշեր ունէր զաշխարհ ամենայն, և ամենեքեան սխալէին. բազանդակ աշխարհի էր նաւաբեկութիւնն, ոչ ջրոյ, այլ պակշտութեան. ողջախոհութիւն ի բաց խլեալ էր, և անարգելութիւն առագանայր[1]. առաքինութիւն հալածական լինէր։ Իւղրք և լերինք և անտառք և օդք գարշանային, արեգակն ձենձերօք լցեալ լինէր, երկիր պղծեալ լինէր, և արատածք ամենայն գարշանայր ի կռապաշտութենէն։ Իբրև ի գիշերի գնային ամենեքեան՝ ոչ ինչ հայելով յաթարածս. քար տեսանէին, և իբրև ՚այ երկիր պագանէին. զիայտ նմին նման կարծէին։ Վիշեր անձուկ էր. զարարածս տեսանէին, և իբրև արարչի երկիր պագանէին։

Հեղիաս միայն էր որ ունէր զճշդագ առաքինութեան, իբրև ՚ի վերայ գագաթան լերին յիմաստասիրութեան նստեալ ունէր զճշդին. և ոչ ինչ օգտէր հրամանսն, զի ՚ի ժամանակին զնոսա կործանեալս տեսանէր։ Որ-

1 Մեռան առագանայր և վինի գառագաչեալն։

լեր, առատանար, ողբայր; բանս խօսեր՝ ոչ ոք լսեր, աղաչեր՝ ոչ ոք անսայր։ Նախանձուէն այնուհետեւ զնոսա տուգանել[1] զնոսա կամեր և՛ի խրատել. զի գնեհ այնպես սովոյ խաբչեալք, զամենեցուն զարարիչն ծանիցեն։ Այլ զինչ ասեր. "Կենդանի է տէր եթէ եղիցի անձրեւ, եթէ ոչ բերանով իմով.,,։

Այլ բան մարգարէին, և օդ ապականեցաւ. երկին պղնձի եղեւ, ոչ զգնութիւնն փոխոխելով, այլ զօրութիւնն սանձեցաւ. վաղվաղակի զտարերս փոփոխեաց։ Այնկաւ բան մարգարէին իբրեւ զեղ հրոյ՛ի ծոց երկրի, և ամենայն ինչ արագ արագ չորանայր և ապականեալ լինէր։ Ցեսանէր այնուհետեւ զղալարի ցամաքեալ, ըզծառս և զտունկս պտղաւորս և անպտուղս՛ի դաշտս՛ի ծովեղերս յանկարծակի գօսացեալս, և զամենայն զկեն դանիս՛ի հատակի խամրեալս. ողբումն մանկանց, կականումն տղայոց և բաղում յուսահատութիւն։ Այի բան էր մարգարէին, և տես ողբան գործեաց. ամենեքեան մեռանէին, գազանք, անասունք, արք, կանայք, մանկունք, կենդանիք, թռչունք ամենայն. իբրեւ հակառակարհական նաւաբեկութիւն ինն լինէր, և թշուառութիւն զամենայն երկիր ընդունէր։ Ոչ ոք զերծանէր, այլ ամենեքեան երաշտութեամբ մեռանէին. տունկք և ծառք գօսանային. աղբերք և լիճք և գետք և ամենայնին միանգամայն կորնչէր։ Հակառակարհական նաւաբեկութիւն ընդունէր զերկիր, ոչ ջրով, այլ երաշտութեամբ։ Կապէր զերկինն, և տեսանէր այնուհետեւ զբնութիւնն ամենայն ամիսիւեալ. և ամենեքեան մեռանէին ծածառաք բարկութեամբն և կորնչէին։

Այս ոչ ինչ էր փոյթ Աղիայի յաղագս ուրուք, վասն զի[2] արբեալք ամենեքեան էին խնդրոցքն բոլորեքեան տարաժամ հատակաւ։ Օ, ինչ առնես. որպէս թէ եւ իտաասարդքն յանցեան, ընդէր տղայքն խրատին. եղիցի եթէ մարդիկդ մեղան, ընդէր և անասունքդ ընդ նոսին մեռանէին. այդքան անգթութիւն ես զգեցեալ։ Ոչ ինչ քեզ փոյթ յաղագս մարդկան. ոչ կին ոնիս և ոչ որդիս և ոչ փոյթ ինչ առնես կորուսելոցդ։ Այս զինչ

1 Սիւան ընդոստոստանել։
2 Զայնն վասն զի նախանձոտ ար. բէաւ էր. նմին իրի ամենեքեան փարաձամ հատակաւ կորնչէին։

նմա ասէ. "Երթ, ասէ, մերձ՛ի գետն Յորդան, և պատրաստեա ապրուստ կերակրել զքեզ անդ ,,։

Պատճառ ախորժելով ածեմ զԵղիայն՝ի մէջ, զի ցուցից նմա եթէ օրինօքն զօրինական[1] քակեն և ինքեանք ընդ ինքեանս մարտնչին. զի ոչ կատարելապէս և ոչ աչմարտութիւն էին, այլ սուտերը էր այն, և այս ճշմարտութիւն. կերպարանք այն, և այս նոյն ինքն իրքն։ Պատուէրք զԵղիա և յուսայք գալ նմա, յաղագս որոյ բազում ունիք բան և մարգարէ կոչէք, և զիա՛րդ նա յապրուստ կերակրեալ լինէր։ Յանգի ապրուստ անմաքուր է ըստ օրինացն, և նոքին իսկ օրէնքն ասացին պիղծ զոլ զապրուստն. և զիա՛րդ կերակրեալ լինէր մարգարէն յանմաքրոյն։ Յանգի եթէ օրէնքն անմաքուր ասացին զապրուստն, ամենայն իրօք որ յապրուստն կերակրեալ լինէր՝ անմաքուր էր։ Այլ այս ոչ էր, ՛ի բաց տալ, մի լիցի։ Այլ Եղիա էր յապրուստն կերակրեալ, ոչ ինչ անմաքուր յոյ յարարածս կարծեմ լեալ։

Յորժամ անտի վասն զի ժամանակին էանց, և գետն այնուհետեւ ցամաքեցաւ, արդեալ՛ի կերակրոյ ապրուստն, և ասէ ցնա. "Երթ՛ի Սարեփթայ սիդովնացւոյ, և անդ զքեզ կերակրեցից ,,։ Յորժամ ըստ անօրէնութեան իմն առնէր ածէ. վասն զի ոչ դիտէր Եղիա զնոսա զլեալն՝ ՛ի միում տեղւոջ նստեալ։ Այլ տեսաներ զՏամաշխարհական Թշուառութիւնն՝ զիարդ ամենայն ցամաքեցաւ, զիարդ լիճք և աղբերք և տունկք և ծառք պտղաբերք և անպտուղք, զիարդ ծովեզերեայ անդաստանք և այլքն ամենայն, զմանկանցն զմահ, ըզմարդն կականութիւն, զամենայն աշխարհն զչարիսն զայնոսիկ։ Յարուցանել զնա ածէ և առնել զանբաւ Հանապարհն անցանել անտի՛ի Սարեփթայ սիդովնացւոյ. զի տեսանելով զայն ամենայն Եղիաս, աղաչեսցէ զտէրն իւր տալ անձրեւ։ Յարուցանել զնա և առաքէ զերկայն Հանապարհն զայն, իբրեւ ոչ եթէ անդ կերակրել զնա ոչ կարէր, այլ կամելով ցուցանել Եղիայի զթշուառութիւնն, զի աղաչեսցէ զնա յաղագս անձրեւոյ։ Կարէր և առանց նորա տալ անձրեւ, այլ ոչ կամեցաւ Թշնամա-

1 Մխան. զօրինականն։

նել զծառայն իւր, չարեացն պատճառ զնա ցուցանել, և բարեացն զինքն ՝ած, այլ եկաց մնաց ծառային պատասխանաց: Այս ոչ այնպէս անապայր, այլ խաւտիեամբ ինն վարելով գնայր զհանապարհն զանգիտութիւն ցգործել, ոչ ինչ յաղագս ուրուք փոյթ առնէր, որպէս յառաջագոյն ասացի, նախանձու արբեալ:

Ընդէր ապարատանես, ով Հեղիաս. ընդէր այդքան զգեցեալ ես զանմարդութիւն: Երբեա տուր ինչ, և յանգիմանեսցիս դու ընդ մեղօք լեալ: Յաղագս յանցանաց բնակչացդ զերազտութիւն կոչեցեր, զերկին փակեցեր, զընթացս բնութեանն արգելեր, և ոչ պատասել յաղագս եղելոցդ ախորժես: Յետ ոչ բաղում ինչ ժամանակի յանդիմանեսցիս և դու ընդ պատճառանօք մեղայ, և մարդասիրութեանն տեառն հանդիպելով՝ մարդասիրագոյն լինիս առ ծառայակիցսն:

Այսօր ինձ յաղագս նոցին այսոցիկ է անցանել ընդ բանս, եթէ ընդէր ոչ հրեշտակ քահանայ եղև, այլ մարդ, զի մի յանմեղէն սատակեալ լիցին մեղաւորք: Օ՛ի եթէ հրեշտակ էր, որ ոչ մեղանչէր, սատակէր զյանցաւորեալսն. նորին աղագաւ մարդ, զի ներեսցէ՝ յիւրոց կարեացն տեղեկացեալ՝ հոմանզգեացն: Այս ՚ի մէջ ածի, եթէ մեծամեծացն որոց հանդերձեալն էր ժողովուրդ քաղուժ հաւատալ, թողացոյց անկանել ընդ մեղօք, և զկնի այնոցիկ թողութիւն նոցա ընձեռեաց. զի որով ինքեանք խրատեցան, մարդասիրագոյնք լինիցին: Այս Պետրոսի ընդ այնպիսի յանցանօք լինել անապայ և մեղանչել, և ապաշխարանօք ջնջել զմեղս՝ այ մարդասիրութեանն էր: Այս ապա եկայք յՀեղիաս և ընկալայք զնորա նորա ուղղութեանցն, եթէ ՝ած կամիչ մարդասիրել և ախորժէր տալ անձրև, այլ հայցէր զնազատանս ծառային:

Այս ապա զինչ ևս: Այանց Հեղիաս ընդ քումանդակ Հանապարհն և չոգաւ ՚ի Սարեփթայ սիդովնացւոյ, և տես անդ կին մի որ քաղէր փայտ: Տայր սակաւն տես զՀեղիայի մարդասիրութիւնն և զիմաստասիրութիւնն, հայեաց դարձեալ և ՚ի նորա հաւատան. և այլ միւս ևս ընկալաւք զնորա խորս առաքինութեանն: Այ ասաց ցՆա՝ ՚ուր զիս առաքես և այսքան վտանգից ընձեռես համբերել. առ այրին ընդ անալ առաքեցեր զիս ՚ի վերջին սո-

վին։ Ա՛յնմէ ա՛ջ իջեն ամբ փարթամք, որ կարող են զաղքատութիւն իմ մխիթարել. այլ ընդ այսքան երկիր գնացեալ, այրուձի հանդիպեցայց, նմին իսկ թշուառութեանցն. զի ոչ միայն այրի, այլ և աղքատ։ Օ՛մբատաւ ած զիարդ ոչ ինչ յայտպիսեացս ասաց. վասն զի վտահ էր յիւր տէրն՝ յանկարելիսն առնել զկարողութիւն։ Ողջոյն ի Պարեխթայ սիդոնացւոյ, և ահա այրին քազէր պայտ։ Օ՛ն և գնաց, ով Հեղիսա, զի և հայիս ընդ այրիդ. տեսեր զնախատուքն աղքատութենն, տեսեր զհանապարհ տնանկութեանն. մի՛ ինչ հարցաներ զխորութենէ չափաւորութեանն, մի՛ հարցաներ զաղկաղկութենէնն։ Ո՞ւր մնանես, Հեղիսա. տեսանես զնա փայտաքաղ, և կերակո՛ւր հայցես ի դմանէ։ Բայց սակայն ունելով գրաւական զբանն տեառն, երթայր խօսել ընդ այրւոյն։ Նա զինչ ասէր. “Տո՛ւր ինձ սակաւ ինչ ջուր զի արբից,,։

Տեսե՛ր զիմաստութենն Հղիսայի. ոչ արագ արագ ի զօրաւորսն գիմեաց, այլ յանապատոյին. ոչ ասաց՝ տուր ինձ հաց, այլ տուր ջուր։ Նախ առաջին հայցեր զջուրն, նկատեալ զի եթէ քաւական իցէ զջուրն ընձեռել, կարող լիցի և հաց ևս տալ։ “Տո՛ւր ինձ, ասէ, ջուր սակաւ ինչ,,։ Նա երթեալ այրւոյն բերէր նմա։ Նա առը Հեղիսա, և այնպէս համարձակեալ “Դո՛ ինձ, ասէ, պատառ հացի և կերայց,,։ Իսկ նա ասէ. “Կենդանի է տէր, եթէ կայցէ իմ, բայց ափով ալիւր ի սափորի և սուղ ինչ ձէթ ի կամիսակի, զոր արարից և կերիցուք ես և մանկունք իմ և մեռցուք,,։ Նա զինչ Հեղիսա. “Նրթ, ասէ, և արա ինձ միայնումդ նկան և կերայց, և ապա արասցես մանկանցն քոց և կերիցեն,,։ Օ՛ինչ առնես, ով Հեղիսա. եղիցի եթէ հաց կամիս, ընդէ՞ր միայն հայցես. ո՞չ Թողուս գոհանալ զի ընդ մանկունսն կերիցես. դու կամիս ուտել, և զաղմուխն մանկանցն հեղձուցանե՞լ ի սովոյ։ Ա՛յլ բարեզգածել, ասէ, ախորժեմ զնոսա. վասն զի գիտեմ զառատութիւն տեառն իմոյ։

Բայց սակայն այրին ոչ ինչ յայտպիսեացս էած զմբաւ անարժանագոյն. ոչ ասաց՝ դու ես որ զսուտս արկեր, և նշխարօք սովոյս կամիս կերակրել։ Նա ոչ ասաց՝ զայսքան աշխարհ Թողեր, առ ինս եկիր սովով սպանա-

նել զմանկունս իմ. և դու պատճառ եղեր սովոյս։ Ա.յլ աբրահամեան ոմն կինն մեռեալ սգոյր ըստ բանին Աստուծոյ։ Այլ էր տեսանել քան զԱբրահամ յաւէտ զկինն օտարասիրագոյն։ Ասաս զի նա յղիութեամբն զհրեշտակս ընկալաւ. իսկ ծա զմեզ և զկեանս ընծայեալ՝ կերակրեաց զմարգարէն։ Այլ էր տեսանել զընտութիւնն առ ոտն կոխեալ և զօտարութիւնն պատուեալ. զգոթեան՝ի բայ ընկենոյր, և զմարգարէն ընդունէր. զանդակ յոյսվութեան մանկանցն գերեզմանն գործեաց. որքան՝ի յօժարութեան այրոյն այնորիկ էր՝ վախճանեցան մանկունքն, բայց որքան ՚ի մարգասիրութեանն՝ կենդանիք էին և զօրանային։

Ա.յ պիտեմ զիարդ գովեցիք զայրին. զիարդ զորդիան արհամարհեաց և զօտարասիրութեանն զհետ չգաւ. զիարդ ոչ բնութիւնն նման հարկ ածաւ, և որպէս մայր ոչ փոփոխեցաւ. զիարդ գութքն ոչ լուծան տեսանելով զհոյսն մանկանցն զբողբոջեսեան ՚ի սովոյ ապականեալս. այլ գեր ՚ի վերոյ քան զամենայն եղև և զմարգարէն ընկալաւ։

Երբև հաս մարգարէն և եկեր, զիսխատրկնան այնուհետև ընձեռեր։ Աերմանեաց օտարասիրութիւն այրին, և վաղվաղակի զհասկ բարեպաշտութեանն զաւդպացեալն հնձեաց։ Օ ինչ ասեր. "կենդանի է տէր. սափոր ալերն ոչ պակասեսցէ, և կամիսակ իւղոյն ոչ նուազեսցէ,,։ Այս լինելր այրոյն աչն հնձան, և ձախն կալ. ոչ որայքն որք հարկաւորապէս զգաստութ ընձեռէին, այլ բանիւ մարգարէին այրին կերակրեալ լինէր։ Հնձան և կալ՝ այրոյն տունն եղև. ոչ անձրև, ոչ ցօղ, ոչ ժամանակք աշնանայինք, ոչ ամառն, ոչ տօթ, ոչ օրինաւորեալ[1] հարկաւորութիւն ժամանակաց. այլ մի և եթ բան մերձեցեալ, և զիւր զընտութեանն իսկ ՚ի ներքս բերելով մատակարարէր այրոյն զառատութիւն։

Այս ապա անտի, զի Համառօտեցից զբանս, չոգաւ առ Ա.քաաբ թագաւոր։ Ա.յեմ այժմ զնորա զուղղութիւն, զի տեսցես զնա մեղսագեալ, և ՚ի չորհիւն ընկալեալ զմարգասիրութիւն։ Այս զինչ նման Ա.քաաբ. եթէ "Ահա ես որ խոտորեցուցանեմ զՄոպայել,,։ Իսկ Եղիա ա-

1 Միւսն օրինակաւորեալ։

սէ. "Ահա ես, այլ դու և տուն հօր քո,,: Եւ յորժամ
'ի լերինն նստէր, և ջոգաւ առ նա յիմնադետան և ասէ.
"Ա՛յրդ ՚ոյ, էջ. Թագաւորն պէտս ունի քեզ,,: Եւ
զինչ նման Էղիւսա. "Եթէ այր ՚ոյ եմ ես, իջցէ հուր
յերկնից և կերիցէ զքեզ և զհինսունս քո,,: Եւ ապա
յորժամ եկին 'ի խորհուրդ աղօթիցն, և ածին զքուրմն
ամենայն Բահաղու, և ասէ ցնոսա. "Բարեկ դուք
բագինս առանձին, և ես միայն. և դիք 'ի վերայ փայտ
և արջառ մի, և հուր մի դնիցէք. և ես արարից նոյն-
պէս. և կոչեցէք զանուն ՚ոյ ձերոյ, և ես զանուն ՚ոյ ի-
մոյ. և եղիցի ած որ լսիցէ հրով՝ նա է ած Աշմարիա,,:
Եւ արարին քուրմք ամենայն Բահաղու սեղան և սկը-
սան կոչել. և իբր յորով աղօթից եղելոց՝ և ոչ ոք էր որ
լսէր, կատակեաց զնոքօք և ասէ. "Կոչեցէք բարբառե-
ցարուք մեծապէս,. մի՛ դուցէ 'ի քուն իցէ աստուածն
ձեր,,. վասն զի ոչ գոյր ձայն և ոչ լսելութիւն: Եւ
յորժամ էանց վեցերորդ ժամն, ասէ. "Ո բաց կա-
ցէք զի ես աղօթեցից: Ա՛յրար սեղան և ասէ, բերէք
ջուր և հեղէք շուրջ զսեղանովն, և ասէ. կրկնեցէք և
երեքկնեցէք,,: Նայց տես զի և զայն ընդէր առնէր Է-
զիսա: Ա՛ն զի սովորութիւն էր մկրտութեանն՝ նմա-
նեցուցանել զիւր իրս Աշմարտութեանն. որպէս առնեն
բազ կանայք, յառաջագոյն ժամանելով զաղատան կո-
չեն բազ, որպէս զի մի՛ ինչ ունիցին նոքա թշնամանել
զնոսա:

Ա՛յլ սակայն Էղիսա և յայնոսիկ խնամառասիրէ լինի:
Օ՛ինչ: Նա հանդերձեալ եմ ասել, տեսող էս եղէ.
'ի բագինս քրմանցն ծակք էն 'ի ներքոյ սեղանոյն, և
գուբ անցայտ է 'ի ստորեւ. իմանեն անդր մկրտութէն
գործանեալք, և ընդ ծակսն ընդ այն 'ի ներքուստ ըզ-
հուրն արտաքս վառեն 'ի զոհսն, մինչ զի բազմութէն
մկրտել և կարծել երկնային գոլ զհուրն: Օ՛յ մի և
Էղիսա այնպիսի ինչ թուեցաւ առնել, և զի ուր իցէն
ծակքն՝ յանդիմանեսցէ զուրն, ախորժելով զմկրտու-
թիւնն յանդիմանել, առնէր զսեղանն, աղօթէր և ա-
սէր. "Տէր ած, լուր ինձ հրով այսօր, լուր ինձ ջրով,,:
Տեսէք զերեսանակակալն տարերցս: Եւ ահա 'ի կոչէն
նորա՝ վաղվաղակի էջ հուր յերկնից և եկեր զզոհն:
Եւ զինչ ասէր ցԱհաբատրն. "Կալ զքուրմն ամենայդ

և սատակեաց զդուստր ,,։ Եւ առեալ սատակեաց զնոսա
չորեքհարիւր և յիսուն այր զբուրման Յահաղու։
Իսկ զայնմ Յեզաբէլ կինն Յքաաբու և առաքէր առ
Եղիաասելով. ,,Յայսպէս արասցեն ինձ աստուածքն
և այսպէս յաւելցեն, եթէ ոչ վաղիւ եդից զանձն քո
իբրև զմի ի սպանելոցն ,,։ Եւ զինչ Եղիա որ այս-
պիսի և այսքան։ Ոչ ինձ դիտաւորութիւն յուցանել
եթէ ընդ մեզօք անկաւ։ Այսեմ զմեղն, ոչ ոսոխ լի-
նելով արդարոյն, այլ քեզ զպատճառս փրկութեան
հնարիմ. զի յորժամ տեսցես զնոսա յանցուցեալս, մի
յուսահատեսցիս ի քէն, այլ յայ մարդասիրութիւնն
ապաւինեսցիս. յորժամ մեղիցես, առաւել ևս յու-
սայցես ի փրկութիւնն։ ,,Յայսպէս արասցեն ինձ աս-
տուածքն իմ և այսպէս յաւելցեն, եթէ ոչ վաղիւ ե-
դից զանձն քո իբրև զմի ի վախճանելոցն ,,։
Ոտաւ Եղիաս և փախեաւ Անհապարհ առաջ քա-
ոասուն։ Ով յերկարաձգութիւն բանի, ով երկիւղին
գերազանցութիւն։ Օ կնոջն բան լուաւ, և քառասուն
աւուր Անհապարհ գնալով փախեաւ. ոչ զմի օր կամ
զերկուս կամ զերիս. այլ բան կնոջն եմուտ ի մարգա-
րէն, և ոչ գիտեր զինչ գործէր, այնքան փախստեամբ
երթալով։ Օ կին եղև քեզ, ով Եղիաս. դու ես որ
զերկինս փակեցեր և զանձրև սանձեցեր, որ օդոց հրա-
մայեցեր և զհուր կոչեցեր, որ խողխողեցեր զբուրման,
որ ասացեր Յքաաբու՝ ,,Ոչ ես որ խոտորեցուցանես
զԻսրայէլ և տուն հօր քո ,,, որ ասացեր՝ ,,Կենդանի է
տէր եթէ եղիցի անձրև ի վերայ երկրի, բայց եթէ բե-
րանով իմով ,,, որ զտուն այրուց հնձան և որայս արա-
բեր. որ օդոյն հրամայեցեր, և զառոյն բանան լսելով
փախեաւ, և մի կին զքեզ զերի տանի։ Այրկու դղեակք
քաղաքաց ի կնոջէ ի վայր անկան. Պետրոս յաղջկա-
նէն զարհուրեցաւ, և սա յԱզաբելէ. ընդ նովին մե-
զօք անկան երկոքեան։ Եւ փախեաւ Եղիաս Անհա-
պարհ ցաւուրս քառասուն։ Ովր է նախանձն քո յոր-
ժամ ասէիր՝ կենդանի է տէր եթէ լցցի անձրև, եթէ
ոչ բերանով իմով. յորժամ զՅքաաբ Թաւաւոր յան-
դիմանէիր, յորժամ զհուրն կոչէիր. այնքան արարեր
սքանչելիս, և միոյ բանի կնոջ ոչ համբերեցեր. յոր-
ժամ ոչ ահորժէիր զքո տէրն աղաչել, զի տացէ անձրև

'ի վերայ երկրի։ Քանզի ասէր ցքեզ՝ դու ազաչեայ գնա։ Աղերս և առանց քո ընձեռել, բայց ոչ կամեցաւ. զի օրպէս չարեացն եղեր առիթ, նոյնպէս և բարեացն։ Որ֊ծեցեր գործ լի անգթութեամբ. այլ ՚ես գիտեր զի օրպէս ամենեցուն նա է արարիչ և ստեղծող, նոյնպէս և բոլորեցուն հնազամ տանի. կամէր զքո զանմարդութիւդ անձաճարել, և դու կացեր մնացեր 'ի նմին։ Ցքեր ցքեզ. ես գիտեմ զքշուառութիւնն զքեզ, գիտեմ զողբումն զմարդ։ Ու սակայն յոլով ազաբասանութեամբ ունէիր իբրև զանմեղ, այժմ ցուցցիս և դու ընդ մեզ անկեալ, ներելով այդոյիկ ՚ես. զի յորոց ինքն մար֊դասիրութեան դիպեսցի, և առ այլս մի անմարդի լինցի, այլ մարդասէր[1]։

Քանուտ բանն 'ի մարգարէն իբրև սաստիկ հիւսիսի։ Ո՞ւր են, ով Հեղիաս, համարձակութեանն այնորիկ իբր, ո՞ր բերանն ահաւոր, ո՞ր լեզուն երասանակակալ տարերց, գանձ անձրևաց։ Ցլ սակայն որպէս յառա֊ջադոյն ասացաք, զայս առներ յաղագս հնորհին զօրա֊նալոյ. վասն որոյ և յանդիմանի յայ։ Ցեսէր զնարդ ընդ փոքր մեզօք ներեցաւ անկանել, զի զբովանդակ մար֊դասիրութեանն պատմուճան զգեցցի։ Ուրատեցար այ֊սուհետև, ով Հեղիաս, լեր մարդասէր իբրև զհէրն քո։

Ցեսէր զնարդ ընդ տուզ յանցանօք թողացոյց անկա֊նել սեանցն այնոցիկ և աշտարակաց, զի մի նոցա անմե֊ղացելոյ՝ զամենեսեան յեկեղեցւոյ 'ի բաց Հատանիցեն։ Օ՛ի յորժամ տեսանիցեն զզբ սխալեալ և կամիցին ան֊գթութիւն ինչ ցուցանել յաղագս ինքեանց, յիշեսցեն զմնաւ ածելով զնրեանց զմեզսն, և զնոյն մարդասի֊րութիւնն ընձեռեսցեն նոցա որոց ինքեանք դիպեցան։ Օ՛այս ասացաք ոչ զարդարոյն ամբաստանելով, այլ ձեզ Ճանապարհ փրկութեան պատրաստելով. զի յոր֊ժամ յանցանիցեք, մի յուսահատիցեք 'ի փրկութե֊նէն ձերմէ։ Ցացաք զնոցա նախ առաջին զառաքինու֊թիւնն, և ապա 'ի ներքս ածաք զդուզնաքեայ սխա֊լանսն։ Օ՛ի եթէ մեզաւոր իցես՝ մի լքցիս յեկեղեցւոյ, և եթէ արդար՝ և այնպէս մի վերջասցիս, զի բնակիչ ունիցիս քեզ զգրոցն ծանօթութիւնն, և յիշեսցես

1 Պաւասին տուք 43։

յաղագս արքայութեան երկնից և բարեացն զոր պատրաստեաց մեզ Աստ: Որոց լինի ամենեցուն մեզ արժանի լինել ընդհանուր Քրիստոսի Այ մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն:

ՅԱԲՐԱՀԱՄ ԵՒ Ի ՊԱՏԱՐԱԳՆ

Տեսէք զսիրն պնդակազմ և զծերութիւնն զարգացեալ. թուլացեալ էր նորա պնդութիւն մարմնոյն, և ջղալինդ էր ոյր հաւատոյն զօրութիւն: Կոյսիսի են եկեղեցւոյ ուղղութիւնք, տկարութիւն մարմնոյ ոչ ինչ ապականեն. վասն զի զարդ եկեղեցւոյ ցածուն սիրք են, և յայսոսիկ յաւէտ հրճուի եկեղեցի: Կանգի յարատաքին իրան ծերն անպիտան է և ոչ ի մի իրս ինչ է պատեհագոյն. այլ ամենայն ուրեք ի թուլութեան վայելէ յաղագս տկարութեանն, ոչ ինչ կարէ պիտանացու լինել ի հարկաւորն: Որպիսի ինչ ասեմ, ոչ կարէ ծերն ի պատերազմ կարգել զինքն, ոչ ի ձի եւնել և ոչ ի նիզակ շկահել, ոչ վահան շարժել, ոչ աւրեգական ջերմութեան համբերել և ոչ զմեծութիւն ձանապարհի գնալ, ոչ դժնդակ սովոյ համբերել և ոչ ծանրութեան ամբոխից. այլ ի հանդարտագոյն տեղւոջ նստի, ջատագով ունելով զանիւն:

Օգնոյն և ի նստան տեսցէ զոր արդեօք. ոչ կարէ ծերն ի վերայ ղեկաց նաւին նստել, ոչ զնորս հատանել, ոչ ղեկավարել, ոչ զառագաստան կոխել և ոչ հակառակեալ հողմոյն ընդդիմանալ, ոչ դժնդակ բռնոյ հանդուրժել և ոչ այլ ինչ ի նոյնպիսեացն առնել ըստ, այլ նստի ի նաւին, ի հասարկին ունի զթողութիւն: Օ այս և յերկրագործն է տեսանել. ծերն ոչ արօրագրել կարէ և ոչ ակօս հատանել և ոչ հրահանդող լինել զուարակացն և ոչ զօրաւոր եղանց բերել զբռնութիւն, ոչ ըստ օրէնսն զպատերազմ և ոչ զչերմութեանն զծանրութիւն, ոչ զբերդին դժուարութիւն և ոչ այլ ինչ որ յերկրագործութեանն իրս պիտանացու է. այլ նստի ի տան՝ ջատագով ունելով զանիւն: Այլ ոչ և եկեղեցւոյն այնպիսի իրք. այլ յորժամ ծերացին, յայնժամ

առաւել պիտանացուք գտանին. վասն զի ոչ մարմնոյն քաջայաղթութիւն, այլ հաւատոյն ոյժ խնդրի։

Ա.յսպիսի եր Ա.բրահամ թուլացեալ մարմնովն, այլ քաջալինդ և հզօրագեղ սիրտ հաւատոյն. ձեր եր, և՛ի վերջին ալևորութեանն ընդ բնութեանն մարմնոյն և զաղթանակ մարտին մեծապես հաստատեր. ձեր եր, այլ քաջայաղթոյն քան զերկաթ և քան զանդամանդ կարծրագոյն։ Այս յորժամ եր՛ի մանկութենն, ոչ ինչ այնպիսի կազմեաց. իսկ յորժամ զանց արար ժամանակ հասակին, յայնժամ զմիցականակ յաղթութեանն կանգնեաց. և՛ի վերջին ալևորութեան եր, այլ խափան ինչ ալևորութիւնն ոչ եղև։ Յաղագս որոյ և ասէ գիտելով զքաջայաղթութիւն նորա, երևեցնման։ Այս զինչ ասեր. "Այլ յերկրէ քումմէ և յազգակցութենէ քումմէ և՛ի տանէ հօր քո, և եկ յերկիրը զոր ցուցից քեզ.,,։ Չնաշանդեցաւ Ա.բրահամ. թէպետ և ձեր եր այնուհետև և տկար մարմնով, ոչ ասաց՝ ուր երթամ՛ի վերջին ծերութեանս, մնա զքանեմ թողում զտունն հօր իմոյ, զերկիրը յորում ծնայ, ուր յղփութիւն ընչից և պայծառութիւն ծնողաց, ուր ստացուածք բազմապատիկք և բարեկամաց բարեաւորութիւն։ Ցրտմէր առ մերձակայն, քայց ոչ հրաժարեր՝ հնազանդել։ Այս որ սքանչելին եր, ոչ ասաց նման՝ յոր տեղի, այլ անորիշ անուամբ մերկացոյց զնորա յօժարութիւնն։ Կանգի եթէ եր ասացեալ նման՝ եթէ յերկիրը զբեզ ունիմ տանել, որ բիւր զկաթն և զմեղր, գտաներ Ա.բրահամ ոչ ձայնի ոչ հնազանդեալ, այլ երկիրը քան զերկիրը ընտրեալ։

Ա.յդ եւ Ա.բրահամ ոչ գիտելով ուր երթայր։ Ցեսջ սկիզբ ամենայն յուղղութիւն. այսոքիկ են ասացեալ մեր իրք. ոչ անկարութիւն[2] ծերութեան զնա՛ի վայր կործանել, ոչ ժամանակ թաւշամեցուցանել. քանզի ոչ՛ի մարմնի է ալևորութիւն, այլ յոգւոջ. յաղագս որոյ անծերանալի է։ Նոցեալ զնաց Ա.բրահամ ոչ ինչ առնելով՛ի պատրաստականացն, այլ տակաւին՛ի տաղաւարս բնակեր. ոչ անհաւատեաց և ոչ հոգացաւ, վասն զի ունի գրաւական արժանի հաւատոյ զիւղջին ձայն։

1 Պահասէր յօրինակին հրաժարէր։ յաւելաւ՛ի յունէն։

2 Յօրինակին ընկերանիւն. հգաւ ըստ յունին։

Եւ ինքն առանց ծննդոց, և ոչ ունէր մանուկ. այլ և ոչ Սառա կին նորա. և էառ աւետեաք որդի զԻսահակ։ Յորժամ բնութիւնն հրաժարեաց, յայնժամ շնորհն պարգեւեցաւ։ Հայեաց Ա՛բրահամու իմաստութիւնն այնուհետեւ, և տես զալեացն զգուշութիւն, տես զծեծոյն զգուշութիւն. էառ արժանի հաւատոյն վարձ ընդ հնազանդութեանն, այլ ոչ գիտէր զայն. զի եթէ էր գիտացեալ, ոչ ինչ արժանի հաւատոյ առնէր։ Եւ զի ուսցիս եթէ ոչ յաղագս այնորիկ հնազանդեցաւ, տես զիարդ և զնա հրամայեալ սպանանել՝ ոչ անհաւանէր, այլ զբնութիւնն՝ի բաց ընկենոյր և զծաղիրութիւնն ողջունէր. գութքն՝ի վայր անկանէին, և՝ի կոչողէն ոչ կայր՝ի բաց։

Եւ զինչ առնէ ՝ած. “Ա՛բրահամ, առ դու զորդիդ քո զԻսահակ զոր սիրես, և զդա հան ինձ ողջակէզ՝ի միոյ լերինն զոր քեզ ասացից ,,. և ոչ զլեառնն նմա յայտնեաց, այլ անորիւ անուամբ լերինն յաւետ՝ի հոգս զնա էարկ։ Ասայ սակայն յայնցանէ և ոչ մի ինչ զԱ՛բրահամ ոչ ամբոխեաց, մանաւանդ թէ և խոովեցոյց իսկ. վասն զի վշտանայր իբրև զմարդ, այլ ոչ վտանգեաւ լինէր մեղաւքն. ալեկոծեալ լինէր իբրև զհայր, և ոչ ընկղմէր իբրև զծածաւր. գութքն խաղչէին, այլ հաւատն յաղթէր։ Ա՝ի ինչ ինձ ասեր եթէ ոչ վտանգեցաւ Ա՛բրահամ. զմտաւ ած զիարդ բորբոքեալ լինէր գթովք վառեալ։

Տես զխոնարհութիւնն Ա՛բրահամու, և ոչ Սառայի ասէր. վասն զի երկնչէր մի գուցէ խափանիցէ ըզկատարումն խորհրդոյն։ Օ՛ի եթէ էր ասացեալ, իրաւացի էր նմա դժուարել և ասել՝ ՛ռւր տանիս զորդիդ իմ զոր անկարծելի առի, զոր ըստ աւետեաց ընկալայ, զոր փոխանակ հիւրասիրութեանն առի, զոր՝ի վերջին ծերութեանս շնորհեաց ինձ ած, ՛ռւր զդա տանիս, ՛ռւր զդա առնուս. ոչ զք քեզ երևեցաւ. զիարդ ած քեզ երևէր և խնդրէր զորդիդ զոր անյուսաբար եաս ինձ. ինքն շնորհեաց և ինքն առնու. և եթէ առնոյց աղաչաւ եաս զդա, լաւագոյն էր ոչ տալ. քանզի ոչ է այնքան ցաւ ոչ ունելն, քան առնուլն և կորուսանելն։

Օ՛մտաւ ած զԱ՛բրահամ բորբոքեալ և տապացեալ և՝ի բնութենէն վարանեալ, և զարգանդն նորա գալարեալ

և զաղիան այլայլեալս. վասն զի ցաւակիցք են կռնապք յայնպիսի իրս։ Օ՜ի որքան հնատք են և ցաւակցադինք, հանդերձեալ էր բռնադատել զԱբրահամ, և խափանեալ լինէր պատարագն և խորհուրդն անկատար։ Օ՜ինչ արդեօք ոչ առնէր Սառա յաղագս յափշտակելոյ զորդին իւր, զի անգործ արասցէ զչեալն. զի որ անյուսաբար զորդին էառ, հանդերձեալ էր խողխողել. և որ՝ի նմին ինքն՝ի ծերութեանն պարգեւեալ նմա՝ ՚ի զենուին երթայր. Հօրն ձեռք զմանկապանութիւնն հանդերձեալ էին գործել։ Ո՜չ ևս ժուժայր այնմ Սառա, այլ սաստիկ մարտ առնէր ընդ Աբրահամու. և ՚ի լինել կռուոյն, հարկաւոր էր դարանակալութեան իմիք զէտ երթալ. և յերթալն զէտ դարանակալութեան, խափանումն խորհրդոյն լինէր։

Այլ ոչ ասէր Աբրահամ կնոջն, զի մի՛ հակառակութիւն լինիցի. և զի մի՛՚ի լինել հակառակութեանն՝ ՚ի կռիւ եկեսցեն իրքն. և մի՛՚ի մարտ եկեալց իրացն՝ ՚ի բաժանումն յաղագս որդւոյն դիմեսցեն. և՚ի բաժանումն դիմելով յամեսցին պատուիրանքն. զի մի՛՚ի յամել պատուիրանին՝ իրքն յապաղեսցին. և զի մի՛՚ի յապաղել իրացն՝ անկատար՚ի խորհուրդն լինիցի։

Այլ իմաստասէր Աբրահամ ըմբռիչն և ընդ քնութեն մարդանչէր և ընդ գութեան կռուէր և հակառակ բնական իրացն զինէր. ոչ վայրապար լսէր, այլ զհրամանին այ զկերպարան աւետեաց ընդունէր, և վաղվաղակի առնոյր զորդին։ Աբխոժելով դեգերիմ՚ի բանս։ “Աբդու զորդիդ քո զսիրելի զոր սիրես զԻսահակ, և հան զնա՚ի միոյ լերին զոր ասացից քեզ,,։ Ի՛վ անուանցն որք զհնուրն բորբոքեին։ Այս առեալ Աբրահամու զԻսահակ և զէշն և զերկուս պատանիսն անցեալ գնաց, և ժամանեալ՚ի տեղի զոր ասէր ցպատանիսն. “Աստարուք դուք աստ, և ես և պատանեակս երթիցուք մինչև ցայնդր և դարձեալ եկեսցուք առ ձեզ,,։ Ակամայ մարգարէացաւ Աբրահամ, ածային ընորհին նմա զօրաւիղն լեալ։ Խօղխողել զորդիդ քո երթաս, և ասես դառնամք առ ձեզ։ Արուք կամըր թաղուցանել՚ի պատանեացն, նա վիմբ մարգարէացաւ. եդ զիսյան՚ի վերայ ուսոց Իսահակայ, և առեալ հուր ելանէր՚ի լեառնն։

Այս զինչ ասէր Իսահակ ցհայրն. “Հայր. և նա ա-

սէ՝ զի որդեակ։ Ահա հուր և ահա փայտ, ուր է ոչխար ի բաղարապտուզն։ Ահա և երկրորդ մարգարէութիւն. ոչ կարեմ այնպէս զբանիւքս զանց առնել, և ոչ թո- ղուլ զլեալն։ Ամառ ած զանուանս որք հանդերձեալ էին յիրացն ամայանալ. նա զսա հայր և սա զնա որդի, և առ ժամն միայն էին անուանքն, վասն զի հանդեր- ձեալք էին մերկանալ։ Ամառ ած զինչ չարչարանս ընդունէր Աբրահամ կոչեցեալ հայր ի Յահակայ զոր պատրաստեալն էր զենուլ. հայր, ասէ։ Լիարդ ոչ խորտակեցան անդամքն, զիարդ ոչ ախտացան միտքն լսելով յորդւոյն՝ հայր։

Այլ սակայն եհան և կտպեաց զՅահակ, և էառ զսուրն աջոյ ձեռամբն զի զենցէ զորդին իւր։ Ով աջոյն հակառակ որդւոյն զինեցելոյ. ոչ ունիմ զիարդ բանիւ յանդիման կացուցից զքեզ։ Որպէս ոչ ընդարմացաւ ձեռնն, զիարդ ոչ անկաւ սուրն ի ձեռանէն, զիարդ ոչ լուծաւ բոլորովին և լքաւ, որպէս բաւական եղև կալ և տեսանել զՅահակ կապեալ, զիարդ ոչ ճնշաց յան- կարծակի մեռեալ, որպէս ջլդքն նմա սպասաւորեցին, զիարդ կամքն եղեն նմա բաւական. ոչ ունիմ զիարդ բանիւ յանդիման կացուցից զքեզ։

Որք միանգամ հարք էք կամ մարք, եկայք ձեռն կար- կառեցէք, օգնեցէք բանիս. վասն զի տկարանամ յիրս, և ներեցէք ինձ. այլ դուք մարտակիցք լինիք։ Հինգ կամ վեց որդիս ունիք և դստերք. և յորժամ մի որ ի նոցանէ հիւանդանայցէ, շուրջ գայ հայրն զմահճօքն՝ համբուրելով զոտն զձեռն զաչն, գիրկս արկանելով, զտիւն գիշեր վարկանի և զլոյն խաւար, ոչ տարերան փո- փոխելով, այլ տրտմութբն դժուարեալ ոչ զուարճա- նայ յայլն. անկողինք կակուղք պատրաստեալք, բժիշկք մերձ նստին, բաղում սպասաւորութիւն հիւանդին, և խարշն բովանդակ հայրն։ Եթէ յղփութիւն ինչ իցէ ատացուածոց, հրաժարէ ի նմանէ. և եթէ բիւր հոգ ունիցի, զամենեսեան հալածէ ի բաց. ոչ կարէ սթափել ի տրտմութեանն արբեցութենէ. ի տխրանայն լու- ծանին բոլոր անդամքն, և ամենայն աշխարհ անբժշկե- լի է նորա չարեացն։ Նմանապէս և մայրն հերարձակ շրջի կածելով և տապանալով վտանգի բոլորովին, հայ- ցէ զօրութիւն ի բաժանեսցէ զդայն, մանաւանդ զի

զաւանդակն իսկ ընկալցի զի հիւանդացեալ մանուկն ազատեսցի յախտէն. ոչ ինչ նմա մերձաւոր կենցաղս, ոչ ինչ և հանդերձեալն, այլ քան զամենեսեան զայնոսիկ պատուականագոյն վարկանի զնա: Ել ունիմ զիարդ յանդիման կացուցից զախտն. ներեցէք ինձ, զախտս բնութեանն քանիւ կամիմ յանդիման կացուցանել:

Օ մտաւ ածˊ զՅբրահամ որ զայսոսիկ կրեր և իմաստասիրեր. կոխեր զբնութիւնն, և պատուիրանն քան զգութիս աղեացն զօրաւորագոյն լիներ: Ել շտանայր, որպէս յառաջագոյնն ասացի, իբրև զմարդ, և իմաստասիրեր իբրև զաստեր. և լիներ տեսանել զԱահակ կենդանի վկայ, մեռեալ և ոչ մեռեալ: Վանղի որքան յօժարութեանն էր՝ մեռաւ, և որքան այ մարդասիրութեանն՝ ոչ մեռաւ. կերպարան այն տեառնն և պատկեր. կերպարան՝ զի եկեսցէ Ձշմարտութիւնն. ստուեր էր այն՝ զի եկեսցէ ստուգութիւնն[1]: Այս միածինն և սա միածինն. նա ի վերայ ուսոց զփայտն, և Վրիստոս ի վերայ ուսոց զխաչն. նա ոչ ինչ մեղուցեալ հանդերձեցաւ մեռանել, և որդին ածˊ ոչ ինչ մեղուցեալ խաչեցաւ. նա զենաւ և ոչ զենաւ, և միածինն որդին այ սպանաւ մեռաւ և ոչ մեռաւ: Վանղի որքան ի յօժարութեանն էր մեռաւ, և որքան ի կեղս իրացն ոչ մեռաւ. որդին այ ի մարմնի մեռաւ, այլ ածութիւնն առանց չարչարելոյ մնաց:

Ասիշտ ածˊ յորժամ հանդերձեալ էր իւր մեծս և անհաւատալիս գործել ի մարդիկ, յառաջագոյն ժամանէ և զստուերն նորա կենդանագրէ. զի յորժամ եկեսցէ Ձշմարտութիւնն, մի ցնորեսցին յաղագս նորա, և զի կերպարանաւն մի անհաւատեսցին: Որպէս ինչ ասեմ, հանդերձեալ էր կոյսն ծնանել, և անհաւատալի է իրն. զիաթդ կոյսն ծնանիլ, արտաքոյ[2] բնութեան էր լեալն, անյարմարագոյն բնութեանս ծնունդն. ո՛չ յաւիտենից ետես կուսի ծնանել: Ել զի մի յոքն անհաւատութիւն դիմեսցեն Հրեայքն, կանխաւ ժամանէ և նախատպէ ի Վառա զՁշմարտութիւնն: Օ՛ի յորժամ տարակուսեսցին թէ զիարդ կոյս ծնանի, յիշե-

1 Պաւլոսին տողք ՅՏ:

2 Յօրինակին գրեալ էր անաբ. եդաւ ըստ յուհին:

լով ասացեն՝ եթէ զնմանէդ Աստուած ծնաւ. մանաւանդ եթէ զնոյն զայն բան յիշեսցեն՝ զնմանէդ երկիր կայս էր և ծնաւ. արօրագործեալ ոչ էր, որ երկրագործէր զնա՝ ոչ ոք էր, անձրեւ ոչ եկն ի վերայ, բանջարք ոչ բուսան, ակօսք ի նմա ոչ պատառեցան, սոսկ էր, զսերմանցն սփռումն ոչ ընկալաւ, ցօղ ոչ զուարձացոյց զնա։

Արդ ասա ինձ զնմանէդ կայսն զբիւր ազգս ծաղկանց բուսոյց. ոչ ունիս մեկնել, այլ ասես՝ որպէս կամեցաւ Աստ։ Ոնոյն օրինակ և յաղագս կուսին յորժամ տա բակուսիս, ուսիր մի քննել յորժամ Աստ գործէ, մի հարցաներ ըստ բնութեանն յորժամ բնութեանն արուեստաւորն գործիցէ։ Արա՝ ընձիւղեսցէ երկիր, և վաղվաղակի եմուտ բանն յորովայն երկրի և ընդոստոյց զնորա զերկունսն, և արագ արագ կայսն ծնանէր։ Ի բան էր որ յառաջ եկն, և բիւր ազգս ծաղկանց բուսոյց, և երկիր առնոյր զիւր զարդն բանիւն։ Ու լինէր վաղվաղակի ի տեսանել զերկիր զուարձացեալ, զթռչուն, զսողուն, զջրայինս, զցամաքայինս, զեղտիւրս, զծաղիկս, զծառս, զորթ, զձիթենի, զբիւր ազգս ծառոց զկանուխս զանազանս, ի դաշտս, ի ծովեզերս, ի լճեզերս, մերձ ի գետս, առ աղբերս, ի դաշտայինս, ի լեռնայինս։ Ի բան էր որ գործէր, և երկիր զիւր քաջավայելչութիւնն առնոյր։ Եկեսցէ ինձ, ով հրեայ, զայս. այլ ոչ ունիս։ Ցեսանեմ սրպէս մոլորութիւն յինքենէ ընկձի։

Հայեաց հաւատեաւ, որպէս ասացի, եթէ յորժամ հանդերձեալ է Աստ առնել իրս ինչ որ Թուիցին մարդկան անհաւատալի, կանխաւ զօրինակն և զատուերն զեկուցանէ, զի մի յանկարծակի եկեալ Աստուածութիւնն յանհաւատութիւն զնոսա արկցէ։ Պարտ և արժան էր որդւոյն Այ գալ և մկրտել զմարդկան ազգ, զհին մարդն հեղձուցանել և զնոր մարդն նորացուցանել, զմեղս հեղձուցանել և զօրհնութիւնս ի վերայ ածել, զնզովսն ապականել և զարդարութիւնն շնորհել և զմարդիկ հրեշտակս առնել. զընացողն հանդերձեալ էր առնուլ և որդի առնել, որպէս և արարն, զոչ արժանի երկրիս պատրաստեալ էր առնուլ և արժանաւոր երկնի առնել։

Ու զի այս աքանչելիք մեծամեծք էին և անհաւատալիք յոլովից, զնմանէդ նոյն բնութիւն զմի մարդն հեղձուցաներ և զմիւսն արդարացուցաներ, զմեղսն ապա-

կանէր և զարդարութիւն վերսին ածէր ՚ի վերայ, զի մի ասիցեն Հրեայք առասպելք են քրիստոնէից երք, զիաւրդ կարողութիւն ե նմին ջրոյ զմինն հեղձուցանել և զմիւսն կենագործել. մի ե ջուր, և զիաւրդ կարէ երկուս զօրութիւնս ունել: Այլ զինչ կանխաւ առներ ած, զի լքութիւն Հրէից յանդիմանեսցի: Որդիքն Յոբայելի վշտանային Աղեգիպտոս ընդ գործ և ընդ աղիւս քևեռեալք և ընդ այլ տարժանմունս. գոչէին ողբալով և ասելով. ո՞ զմեզ փրկեսցէ ՚ի ծառայութենէ եգիպտացւոց, կորեաք սատակեցաք ՚ի չար գործս:

Այս ապա զինչ. լուաւ Նոցա ած և առաքեր զՄովսէս, նշանօք և զարմանալեօք զնա զինեալ: Այլ Մովսէս բերելով Հակառակ Փարաւնի զտանջանս, բանակս չար մարախոյ ՚ի վերայ էած, ջրեկինն Հրամայեաց և եկն, զջուր յարիւն փոփոխեաց, խաղաւարտս արար երալ ՚ի մարդկան և ՚ի չորքոտանիս: Այս յորժամ զինի Հարուածոցն այնոցիկ ոչ ետ տեղի ՚ի Փարաւոն, մահ ՚ի վերայ անդրանկացն ածէր ած: Այս զի կարՀաւատացեալ զանս, վասն զի պարտ և արժան է Համառօտել, զի մի չաղեալք ՚ի նմին ոչ կարասցուք կատարել զպատՀառն, եւ՚ին Աղեգիպտոսէ և եկին մերձ ՚ի ծովն:

Օ՛հներ զՀետ նոցա Փարաւոն Հանդերձ յորմէ կառօք և ձիովք. և յորժամ տեսանէր Իսրայել զբանակն երինչեր: Այրին յերզր ծովուն: Այս ասեր ած ցՄովսէս. “Օ՛ի գոչես առ իս,,. և սակայն ոչ ինչ ասեր Մովսէս: Ա՛յլ ած եմ, ասեր, ոչ ՚ի շրթանցն լսեմ, այլ որ ՚ի սրտին՝ Հանապէմ. զի ուսցիս եթէ ոչ յաղաղակելն են աղօթք, այլ ՚ի կամն. “Օ՛ի գոչես առ իս,,: Ե՛ր շրթունք նորա չիսկային, բայց սիրտն գոչեր. քանզի աղօթք ՚ի բարի կամացն խնդրին, այլ ոչ յուժգին աղաղակելն: “Օ՛ի գոչես առ իս,,. զգաւազանդ որ ՚ի ձեռին քում Հգեա ՚ի վերայ ջրոյդ, և անց դու և ամենայն Իսրայել: Զգեաց Մովսէս զգաւազանն որ ՚ի ձեռին իւրում, և եՀար զջուրն, և անկարգաբար բերուն ջրոցն ցամաքեցաւ և զիւր բնութիւնն մոռացաւ: Այնզի այսպիսի են տարերք, յորժամ ակնարկեսցէ ած, նոքա զիւրեանց բնութիւնն մոռանան և զզօրութիւնն սանձեն: Օ՛ի իբրև աղախին ոք բարեմիտ ծովին՝ ըզտեառն ծառայն տեսանելով, Հաւաներ և Հնազանդեր.

լսեր ոչ 'ի յոր փայտէն պատկառելով, այլ յաղագս այնորիկ՝ որ հանդերձեալն էր 'ի փայտին խաչիլ։ Եւ տեսս զկերպարանն և վաղվաղակի իմացաւ զՀնմարտութիւնն և տեղի ետ. անց, ասէ, դու և ամենայն ժողովուրդդ Իսրայէլի։ Ո՛չ ետ չոգան եգիպտացիքն հալածելով զնոսա, վարաւն և կառքն և ձիքն։ Եւ ապա յանցանել որդւոցն Իսրայէլի յառաջինն 'ի կայանն, զայր Ջուրն և ծածկէր զեգիպտացիսն։

Երդ ասա ինձ, ով հրեայ, զիարդ Ջուր միրտութիւնն երկուս զօրութիւնս ունի, զմինն հեղձուցանէ և զմիւսն կենդանացնէ։ Այս ինձ զիարդ ծովն այն մի էր բնութիւք, և զոմանս եսպան և զոմանս չեսպան, զկէն հեղձոյց և կիսոցն Հանապարհ եղև, և սակայն մի էր անկարգաբար հոսումն Ջրոյն. զիարդ ոմանց ծառայաբար տեղի ետ, և առ ոմանս բարբարոսական օրինակի նմանեցաւ։ Երկնեաց ինձ զայն, ով հրեայ, որ ոչ հաւատաս խաչին, զիարդ նոյն Ջուրն զնոսա հեղձոյց, և զոսա փրկեաց։ Մի էր Ջուրն, մի ծովն. զկիսոցն և զոտն չեթաց, և զկիսոցն և ոչ զհետն եթող, այլ զամենեսեան առնլով ծածկեաց Ջրովն և հասարակաց գերեզման գործեաց ամենայն զօրուն եգիպտացւոց։ Երդ ասա ինձ զայդ, որպէս եղև։

Ցեսանէս զիարդ ստուերն էանց, զի հաւատասցի Հնմարտութիւնն. զիարդ այն ստուերն և այս Հնմարտութիւն, այն հովանի և այս իրք։ Ցեսանէս զոր ասացի թէ յորժամ հանդերձեալ է ոճ գործել ինչ իրս օտարս, 'ի ձեռն օրինակացն յառաջագոյն կենդանագրէ. զի այնպէս եկեալ Հնմարտութիւնն դիւրընկալ լինիցի։ Եւ զի մի դժուարեսցի ոք ինձ, հարկաւոր է կերպարանին նուազագոյն լինել քան զՀնմարտութիւնն[1]. ապա եթէ էր ինքնակատար, ոչ ևս ստուեր, այլ Հնմարտութիւն։ Այնհաւ ժամանեաց յայնժամ ստուերն, և եկն այժմ Հնմարտութիւն իրացն և եցոյց մաքուր զկերպարանն. այն օրինակք, և սոքա իրք. որպէս և ոչխարաւն եղև։

Հանդերձեալ էր արեամբն Քրիստոսի ազատանալ աշխարհ, և 'ի նզովից 'ի բաց վճարել։ Եւ զի այս աքան-

1 Հատուածդ զՀնմարտութիւնն . . . զոտս 'ի պապրոսպռնէ պակասի 'ի յոյնն։

չելիք դարձեալ մեծք էին և անհատատալիք, չարաբա-
րոյ անձանց Հրէից կանխաւ նշանակեր ՚ած և յառա-
ջագոյն տպաւորեր ոչխարաւն։ ՚Քանզի զեգիպտացւոցն
զանդրանիկս Հանդերձեալ էր կորուսանել, զի մի ընդ
նոսա սպանցին և յիսրայէլացւոցն, վասն զի խառնա-
կեալ էին տունք եգիպտացւոցն ընդ տունս որդւոցն Իս-
րայէլի. և ապա զինչ առնէր։ Ասէր Մովսէս. Մի գու-
ցէ սատակիչ Հրեշտակն ընդ նոսա սատակիցէ և զոր-
դւոցն Իսրայէլի զանդրանիկս։ Եւ զինչ առ նա ՚ած.
“Պատուիրեա որդւոցն Իսրայէլի, և առցեն ոչխար ա-
նարատ արու տարեւոր ըստ ազգակցութեան իւրեանց.
և եթէ ոչ լիցին բաւական, ասէ, դրացի զդրացի կո-
չեսցէ և ազգակից զազգային, և այնպէս առնուցուն
զոչխարն, ոչխար անարատ արու տարեւոր. և զենէք,
ասէ, ըստ ազգակցութեանն և ըստ տանց հայրենեաց.
զմին կերիջիք հրով խորովեալ, և մի ինչ ՚ի նոցանէ
թողուցուք, և զարիւնն շաղախեսջիք ՚ի վերայ սեմոյն.
և կերիջիք այսպէս. գօտիս ունելով ընդ մէջս ձեր և
կօշիկ յոտս և ցուպք ձեզ ՚ի ձեռս ձերում և Հրագունք
ձեր լուցեալք ,,։

Իվ նոր իրք. յոտն կալով կերիջիք, ընդէր արդեօք.
ուղեգնացի ձև էր։ Մէջք ձեր գօտեաւ. և այս Հանա-
պարհորդի ձև։ Ցուպք ՚ի ձեռս ձեր. և այս ձև ուղե-
գնացի։ Հրագունք լուցեալք. ընդէր. վասն զի երեկոյ
ժամանեաց։ Ի ման էր այնպէս ուտէին իբրև ղուղե-
գնացս. ընդէր, ես ասացից. յաղագս օրինակին և Հրէ-
սարտութեանն։ Ի ման զի բազում անգամ Հարաւ վա-
բաւն և ոչ արձակեաց գնոսա։ Ասէր ցնոսա Մովսէս.
Հարկանի այսօր և արձակէ. Հարկանէր և ոչ արձակէր.
և դարձեալ տանջէր և ոչ արձակէր. ինն անգամ, և
ոչ արձակեաց։ Ի տանեւորդութեն Հանդերձեալ էր ար-
ձակել, զՀանապարհորդաց ասէր առնուլ զձև. զի յետ
ուտելոյն ոչ է ձեր Հաղորդութիւն ինչ ընդ եգիպտա-
ցիսն։ Ընդ առէք, ասէր, ոչխար անարատ արու տա-
րեւոր, և զենէք զնա և օծէք արեամբն նորա զսեամն
ձեր. զի ՚ի գալ Հրեշտակին, Թէպետ և յաղագս ձեր
ոչ խնայեսցէ։ Եւ այնոքիկ ոչ յաղագս Հրեշտակին լի-
նէր, այլ վասն արեանն որ զիսն փրկեաց։ ՚Քանզի ո՛ր-
պէս ոչ արդեօք Հրեշտակն զընտրողութիւն եգիպտա-

յետոյն և Հրէիցն Ճանաչէր. որ զանդրանիկն գիտաց, զեգիպտացիսն և զերբայեցիսն Ճանաչել ոչ կարէր։

Ասդ յորժամ թշնամանիցէ զքեզ և ասիցէ՝ յաբիւն յուսաս, և դու ասա ցնա. ոչ ամաչէս, լիրբ. դու արեամբ ոչխարի փրկեցար, և ես արեամբ տեառնն ոչ փրկիցիմ։ Հրեայքն ուտելով Ճեպիհն ելանել յԱդիպտոսէ, և քրիստոնեայ ուտելով փութասցի՛ ի բաց վհատել յաշխարհէս. վասն զի և Պաւղոս այսպէս քեզ հրամայէ. "Օ զգեցարուք զսպառազինութիւն ՚ի. զգեցարուք զզրահան արդարութեան. զգեցուցէք զոտս ՚ի պատրաստութիւն աւետարանին խաղաղութեան,,։ Կո. շիկք և անդ և ասա։ Ասովսէս ուղեգնացաց և Պաւղոս իբրև զինուորաց. նոքա յերկրէ յերկիր, վասն այնորիկ Ճանապարհորդք. իսկ ես յերկրէ յերկինս, սորին աշխատաւորդ։ Ասան զի զՃանապարհն իմ աւազակք ունին, դևք լինէ պատահէն. յաղագս այնորիկ ունիմ զհամարձակութիւնն մերկացեալ, նորին աղագաւ ըզզրահան արդարութեան, վասն նորին և զգօտին Ճշմարտութեան։ Ասանզի ոչ եմ ուղեգնաց միայն, այլ և զինուոր. "Կեղ և անձուկ է Ճանապարհն որ տանի ՚ի կեանսն,,։

Ասդ տես զիարդ ձևացուցանէ Պաւղոս, և որպէս ձևացուցանէ Ասովսէս, զիարդ զդալիսս և որպէս զհոգևորսն, զիարդ զնոցնս ասէ։ Պուեթասցուք այսուհետև Ասբրահամու նմանել, զի և հանդիցուք ՚ի նորա գոգն ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

ԱՌ ՈՐՍ ԹՈՂԱՒՆ ԶԺՈՂՈՎՆ. ԵՒ ՅԱՂԱԳՍ ՈՉ ՉՃՆՑ ԱՌՆԵԼՈՑ ՉՎԵՐԱԳԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԳՐՈՑ, ԵՒ Ի ԳԻՐ ՄԵՀԵՆԻՆ, ԵՒ Ի ՆՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼՈՆ

Օ Լինչ այս. որքան յառաջէ մեզ տօնս, այնքան և ժողովն նուազ լինի։ Ասայց մի՛ տատամսեսցուք մեք որ մերձ եմք. նուազ լինիմք բազմութեամբ, սակաւք թուով, ոչ սուզ յանկութեամբք։ Նուազ լինիք. զի ընտիրքն երևելիք լինիցին ՚ի ձեզ, և ուսանիցիք մխ սովորութիւն և մխ բաղձանօք ածային քանից գան այսը, մխ յանկու-

թեամբ տարևորական ծանին, և այք փափագանօք հոգևորական ասելութեանս։ Այնոցիկ քաղաքս էր աստ յառաջնում կիւրակէին լի յարկ, ալեաց նմանեալ լիներ բազմութիւնն որք երթային և գային. բայց ինձ քան զամենայն յոլովութիւն ցանկալի է ձեր խաղաղութիւնդ, ինձ քան զամբոխ և զխռովութիւնն զայն պատուականագոյն է ձեր հանդարտութիւնդ։ Յայնժամ մարդիկ մերձ եկեալ թուէր, իսկ այժմ միտս երկիւղածութեամբ լցեալ։

Այլ եթէ որ զժողովս զայս սակաւամարդ և զյոլովս յաղքատաց խմբեալս, և զայն ժողովս բազմամարդ և զյաւէտ ի ձոխացն հաւաքեալս, եթէ զերկոսին զժողովս զայսոսիկ իրրև լծակցաւ կշռոց կամեսցի որ կշռել, գոցէ միտեալ զսա. քանզի թէպէտ և նուազ է թուով, այլ պատուականագոյն է յօժարութեամբ։ Այոյնպէս և ի կշիռս լինի. եթէ որ տասն սատեր ոսկւոյ առնլով ի միում նժարի դնիցէ, և ի միւսումն ևս նժարի հարիւր պղնձի, հարիւր պղինձքն յինքեան հակեն զձգական, բայց տասն ոսկի սատերք բնութեանն դերազանցագոյն յոլովագոյն ևս ձգեն, ծանրագոյնք և պատուականք են ըստ բնութեան բանի. որպէս զի և սակաւ թուով քան զյոլովն պատուականագոյն լեալ և կարևոր։

Բայց զի՞ ձեզ օրինակս ի սովորական իրացս բերեմ. պարտ է և արժան է զնոյն ինքն զայ զկամն յաղագս այնոցիկ ի մէջ բերելով երևեցուցանել։ Օ՜ինչ ասէ. "Լաւ է մի որ առնէ զկամն տեառն, քան զբիւր անօրէն,,. քանզի է բազում անգամ մի մարդ պատուականագոյն քան զբիւր։ Այլ զի՞նչ ասեմ է մի մարդ յոլովակի որ արժէ զաշխարհ. մանաւանդ եթէ ոչ միայն զաշխարհ արժէ, այլ կարևորագոյն ևս քան զաշխարհ և պատուականագոյն. և զայնորիկ զվկայութիւն ի Պաւղոսէ բանիցն բերեմ։ Պանդղ զմարդիկ յիշեաց զաղքատս, զհալածականս, զձախտառականս և զչարչարեալս, այսպէս ասէ. "Ը՞ր ընթացան մաշկօք, մորթամոլք այծից, կաւրօտեալք, նեղեալք, վտանգեալք, զորս ոչ արժէ աշխարհ,,։ Օ՜ինչ ասես. զկաւրօտեալսն և զհալածեալսն և որք ոչ ունին գաւառս, զնոսա ո՞չ արժէ աշխարհ. ո՞չ տեսանես որքան որոց ընդդէմ կացուցեր։

Տեսանեմ, ասէ, կարի քաջ. և դորին աղագաւ ա-

սեմ եթէ ոչ արժէ աշխարհս զնոսա։ Վասնզի զդա-
հեկանացն զայնոցիկ զբնութիւնն գիտեմ յայտնապէս.
զերկիր և զծով և զթագաւորս և զիշխանս և զամե-
նայն միանգամայն զբնութիւնս մարդկան, և երկուս
կամ երիս աղքատս այսպիսիս ընդդէմ կշռեալ վստա-
հանալով ասեմ՝ թէ աղքատքն միտեն ի բաց։ Նախա-
ծեալք լինին ի գառաւէ, այլ ունին գառաւա զվերինն
Երուսաղէմ. աղքատութեամբ շրջէին, այլ ձոխք էին
բարեպաշտութեամբ. մարդկան էին թշնամիք, այլ ոչ
բարեկամք։ Ոչ ոքէ էին սոքա։ Հեղիաս և Եղիսէոս և
ամենեքեան որ իբրև զնոսա։ Ոչ մի ինձ զայն ասես թէ
և ոչ կարևոր կերակրովք յղփանային. այլ զի բերանն
Եղիայի զերկինս փակեաց և եբաց, և մշկիեակ նորա
զՅորդանան անդրէն դարձոյց։

Ո այնոսիկ զմնաւ ածեմ, հրձուիմ և վառնգիմ.
զուարճանամ յաղագս ձեր որ մերձդ էք, և վառնգիմ
վասն նոցա որք ոչ են մօտ. ցաւեմ յոյժ և երկնեմ և
խորտակիմ և տրտմիմ։ Վասնզի սէր որ և որ յոյժ անցաւ
իցէ՝ ոչ վառնգիցի, զյոլովս տեսանելով ի սատանայի
փոյթն վայելողս։ Ոչ սակայն եթէ հաւասար վայելէին,
և ոչ մի էր մեզ ներումն Թողութեան և ոչ պատաս-
խանիք. իսկ յորժամ և գահէ զմեզ, պակասեալ է ա-
մենայն բան մեր։ Վասնզի հանապազօր կոչէ և ոչ ոք
դանդաղի, ոչ ոք խոսկ, ոչ ոք զանպատուութիւն զի-
բացն պատճառէ, այլ իբրև գօտեպինդք և արձակեալք
յամենայն հոգւոյ այնպէս ընթանան ամենեքեան. ոչ
ծերն յալեաց պատկառէ, ոչ մանուկն տեսանէ զբոյ
բնութեանն և զյանկութեանն, ոչ ձոխն զպատիւն իւր
ամաչեցուցանել վարկանի. իսկ եթէ յեկեղեցի գալ
լինիցի, իբրև ի բարձրութենէ իմեքն և ի պատուոյ
անկանել այնպէս դանդաղի, և զկնի այնորիկ փքայ իբ-
րև ոչ ինն ջնորհելով. և ի տեսարանն փուճայ ուր
պակշռութեանն են տեսութիւնք և լսելութիւնք, և
ոչ կարծէ ամաչեցուցանել զինքն, ոչ զձոխութիւնն իւր
և ոչ զքաջատոհմութիւնն։

Վամէի գիտել ուր են այժմ որք յաւուրն յայնմիկ
զմեզ խանդէին. քանզի վառնգ էր նոցա մերձաւորու-
թիւնն. ախորժէի գիտել զինչ գործիցեն, կինչ քան
յայսոքիկ հարկաւորագոյնս պարապիցեն. անպարապու-

թիւն և ոչ ի, բայց ամբարտաւանութիւն միայն. և զինչ լինիցի քան զայս մելեկանագոյն: Ա՛ր աղագաւ մեծամեծս խորհիս, ով մարդ, և կարծես մեզ ինչ հնարել եթէ մերձ եկեալ այսր լսիցես յաղագս փրկութեանդ քոյոյ և յոր սակս. վասն ընչեղութեան, յաղագս կերպաս հանդերձից. և ոչ աճիցես զմտաւ եթէ որդանցն էն այն նիւթքն և բարբարոս մարդկան գիւաք. զի և բողբ նոյնաւ վարին, և իգացեալք և գեղեզմանակրկիտք և աւազակք: Ո՛չ անիր զարդարութեն ընչեղութիւն, և թերևս ինչես չընդունայն ամբարտաւանութենէդ, դիտես զընութեանս տկարութիւն. հող և մոխիր ես, գաղաղ և փոշի, ծուխ և ստուեր, խոտ և ծաղիկ խոտոյ: Ո՛չ յապիսի քնութեանս կենակից ես և մեծամեծս խորհիս. և զինչ քան զայս ծիծաղելի իցէ:

Ո՛չ բազում մարդկան իշխես. և զինչ չայնմանէ օգուտ, յորժամ մարդկան իշխես և չախտից գերեալ ես և ծառայ: Ո՛ր օրինակ եթէ 'ի տան տերկայ ննջիցէ և վերս առնուցու, և արտաքս ելեալ 'ի հրապարակս մեծամեծս խորհիցի այլոց իշխանութեամբ. հարկանէ զքեզ տնտիպառութիւնն, վիրաւորէ պակշտութիւնն, ամենայն ախտիցն ծառայ ես և մեծամեծս խորհիս, վասն զի համազգեաց իշխես: Ա՛ւ երանի թէ նոցա իշխէիր և նոցին էիր զուգապատիւ:

Ո՛չ զձոխութիւն լինչ չարախօսելոյ զայս ասեմ, այլ որք չարաչար փարթամութեամբն վարին. զի ոչ ընչեղութիւնն է չար եթէ 'ի պատշաճ իրս նոմաւ վարիցիմք, այլ ապարատանութիւնն և ամբարհատաճութիւն: Ա՛յն չար է ընչեղութիւնն, ոչ էր արդեօք Յոբ արդար, անարատ, ճշմարիտ և յուծապաշտ. եթէ չար էր փարթամութիւնն, ոչ արդեօք ամենեքեան աղաչէաք երթալ 'ի գոգն Ա՛բրահամու, որ ունէր երեքհարիւր և ութատան ընդածինս: Ա՛րդ ոչ-ևս փարթամութիւն՝ այլ անօրէն նորա պէտքն էն չար. և զոր օրինակ յառաջագոյն յաղագս արբեցութեան խօսեալով ոչ զգինի բամբասեցի, քանզի ամենայն ստացուածք բարի է և ոչ ինչ խոտան հանդերձ գոհութեամբ ճաշակեալ, նոյնպէս և այժմ ոչ զընչաւետսն ստգտանեմ և ոչ զինչան բամբասիցեմ, այլ զչարաչար վարեցեալսն նոքօք չարք-

շտուԹիւնս ծախեալս։ Յաղագս այնորիկ կարասիք ասեն, զի մեք գնասա ՚ի կիր արկցուք, և մի՝ նոքա զմեզ. վասն այնորիկ ատացուածք ասեն, զի մեք գնասա ատացուք, և մի՝ նոքա զմեզ։ Հիմ զծառայն ունիս տէր, ընդ՚որ հակառակ դարձուցանես զկարգն։

Ոչ այլ ախորժես ուսանել զինչ այժմ առնիցեն որք զժողովն լքանելով լինչ իրս իցեն. տապաղն խաղան, կամ լիրս լինչ այնպիսի դեգերիցին յաշխարհականս՝ որ խռովուԹեամբ լե՛ն. եԹէ ատ էին, ՚ի խաղաղուԹեան և ՚ի նաւահանգստի էին. ոչ գաւառապետ որ եկեալ խռովեցուցանէր գնասա, և ոչ վերակացու ամբոխեր. ոչ ծառայ որ յաղագս կենցաղական իրաց շտապեր, և ոչ այլ ոք զայրացուցանէր. այլ ՚ի բաղումս հանդարտուԹեան լինելով վայելէին յաճախին լսելուԹիս։ Ո՛չ ուրեք ատ ալէկոծուԹիւնք, ոչ խռովուԹիւնք. այլ բարեբանուԹիւնք և աղօԹք հոգևորք և փոխոխումն յերկին, և աստուստ արդէն զգրաւական աղբիւրն երկնից առեալ երԹան։ Հիմ զառատ սեղանս զայս Թողուլ ՚ի ծանրագոյն ՚ի միւսն ևս զքեզ տանիս, և գնաւահանգիստն լքանելով զխաղաղուԹիւն ընդ խռովուԹեան փոխանակես. ոչ մերձ լինել աղքատաց որք յայնժամ էին ատ՝ դժնդակ իրք են. այլ ոչ այնպէս իբրև ոչ մերձ լինել փարԹամանցն։ Ընդէր. վասն զի աղքատքն ունին ինն կարևոր անպարապուԹիւն հանապազօրեայ գործոյն՝ ՚ի ձեռն առնելով զկենացն պէտս. կամ մանկամանուԹեանն խնամ տանին; կամ հիւանդ գան. և եԹէ ոչ աշխատին, կենցաղոյս իրք ՚ի նոցանէ ՚ի բաց հրաժարին։

Ո՛յսոսիկ ասեմ ոչ պատասխանիս յաղագս նոցա յօրինելով, այլ ցուցանելով զիարդ մեծամեծ մեղադրուԹեանց ընչեղքն են արժանաւորք. որքան յաձախագոյնս վայելեն յընդարձակուԹեանն, և ոչ լինչ յայնցանէ ունին։ Ցեսէք զ՚երեայսն զնծամարտսն զընդդիմակացս հոգւոյն սրբոյ, զաստաւիզսն քան զնոսա որք ոչն են աստ. ամենեքեան չարք ևս են։ ՚Ւսոյա եԹէ ասիցեն քահանայքն, զեօԹն օր դատարկացարուք կամ զտան կամ զքսան կամ զերեսուն, ոչ լինչ ընդդէմ ասեն, Թէպէտ և քան զայն դատարկուԹիւն ոչ լինչ գոյ չար. զդուրս փակեն, և ոչ հուր լուցանեն, և ոչ ջուր

բերեն, և ոչ այլ ինչ ՚ի պէտս նոյնպիսիս ձեռնարկել ներեն. այլ է նոցա դատարկութիւն շղթայ, և սակայն ոչ հակառակ ինչ ասեն: Սակ ես այնպիսի ինչ ոչ ասեմ, ոչ զեօթն օր դատարկանալ և ոչ տասն. այլ զերկուս ժամն միայն փոխ առուր ինձ յաւուրն, և զայլսն դու կալցիս, և ոչ զայն ինչ զչափն ՚ի ներքս բերեմ: Ա՛ա նայեանդ թէ ոչ ինձ տաս զփոխն զերկուս ժամն, այլ քեզ ինքեան. զի միխթարութիւն ինչ աղօթից զՀարցն ընկալցիս, զի օրհնութեամբ լցեալ գնասցես աստի, զի ամենայն ուստեք ամրացեալ երթիցես, զի հոգևոր ըզքէնն առցես, անմարտնչելի լիցիս և անըմբռնելի ՚ի սատանայէ:

Օ ինչ հրաշալի, ասա ինձ, քան թէ աստ դեգերիլ. և եթէ զւսվանդակ օրն ասա պարտ էր լինել, զինչ պարկեշտագոյն և ամրագոյն քան զայն, ուր այսքան եղբարք, այսքան Հարք, ուր հոգին սուրբ, ուր Յիսուս ՚ի մէջ և Հայրն Յիսուսի. զինչ այլ քան զայս խնդրես, զմի ժողովարան, զմի խորհրդարան, որպիսի ժողով: Այսքան բարիք ՚ի սեղանի, լսելութիւնս ՚ի յընդունելութիւնս, և դու յայլ դեգերեալ հայիս. և զմի արդեօք ունիցիս ներումն Թողութեան:

Օ այս ոչ զի դուք լսիցէք՝ ասեմ, քանզի և ոչ պէտք իսկ ունիք դեղոյս այսոցիկ՝ դուք որ գործով ընկալեալք զառողջութեանն հնազանդութիւն, որք ՚ի ձեռն փութոյ ՚ի փափագանս վայելեցէք. այլ ասացի առ ձեզ, զի լսիցեն նոքա ՚ի ձէնջ: Ա՛ի ասէք եթէ վայրապար բամբասեաց զոչ եկեալսն այսր, այլ զամենայն իսկ վերստին նոցա պատմեսջիք զբանս. յիշեցուսջիք զՔրեայան, յիշեցուսջիք նոցա զկենցաղական իրս, ասասջիք որքան փոյթ յաղագս աշխարհական իրաց ցուցանեն, ասասջիք որքան լաւագոյն է ժողովս, Ճառեսջիք որքան վարձս յարմարի այսր ժողովելոցս: Սկանզի եթէ բամբասեաց ևեթ ասիցէք, և եթէ ոչ ասիցէք թէ որպէս սպգտի, զարտմտութիւնն ընդոստուցանէք և զվերսն գործէք, բայց զդեղն ՚ի վերայ ոչ դնէք. իսկ եթէ ուսուցանիցէք թէ ոչ իբրև զձենամի չարախօսեցի, այլ իբրև զաւրեկամ վտանգեցայ, հաւանեցուցանէք զնոսա՝ եթէ վէհագոյն են հարուածք բարեկամաց քան եթէ զկամակոր համբոյրս թշնամեաց. և կալցեն հանդերձ յո-

լով չարախօսութեամբ զբամբասանսն. քանզի ոչ ՚ի բանս, այլ ՚ի միտս ասողին Հայկն։ Կ՚նայիս բժշկեցէք զերզարս ձեր։ Կ՚ենք փրկութեան պարտականք եմք ձեզ մերձ եկեղեցի, և դուք ոչ եկեղեցի այլ։ Կէ կարեմք առ նոսա մերձենալ մեք. Հալիք առ նոսա ՚ի ձեռն ձեր և մերում վարդապետութեանս. կամուրջ մեզ լինի առ նոսա ձեր սէրդ. արասջիք մերում քանիցս ձերովք լեզուովք անցանել ՚ի լսելիս նոցա։

Կ՚ասի թէ բաւականապէս ասացի յաղագս միասին լսոյն ՚ի ժողովոյս, և ոչ ինչ պիտի յաւելուածս յաւելուլ։ Կ՚այր հնար և այլ ասել. այլ զի մի զամենայն ժամն յայն ծախիսեմք զնոսա ստգտանելով, և զձեզ ոչ ինչ օգտելով զեկեալդ այսր, բեր և ձեզ առաջի դիցուք օտար կերակուր։ Կ՚այր ասեմ, ոչ ըստ Հոգևորական սեղանոյն, այլ ըստ ձերում լսելեացդ։

Կ՚ասեցաք ընդ ձեզ յառաքելական բանից յառաջնում առուրս և յաւետարանական՝ յորժամ յաղագս Յուդային խօսեցաք. խօսեցաք և ընդ ձեզ ՚ի մարգալեկանաց. այսօր կամիմ ՚ի գործոց առաքելոց ասել. վասն այնորիկ ասացի կերակուր օտար։ Կէ օտար, վասն զի կարդի ՅԾայլն գրոցն է. և օտար, վասն զի Թուի Թէ անընդել իցեն ձեր լսելիքդ յայդպիսի լսելութիւս։ Յոլովից գիրքս այս և ոչ ծանօթ իսկ են. քազմաց Թուի յայտնի, և դարձեալ անտես առնի. և լինի ոմանց անծանօթութիւն, և ոմանց գիտութիւնն՝ և պղերգութեն պատճառք։ Կ՚ղդ զի և անծանօթքն ուսցին, և որք կարծեն յայտնապէս գիտել՝ Թէ յոյժ խորին միտս ունի, Հարկաւոր է զերկոցունց զծուլութիւնն ուղղել այսօր։

Կ՚այց պատ և արժան է յառաջագոյն ուսանել ո՛ զդիրս զայս գրեաց. քանզի այս է առաքինի խնդրոյ կարգաւորութիւնն, նախ առաջին զգրողն գիտել, մարդ որ իսկ արգեօք, Թէ ՅԾ. եթէ մարդ, ստուգանեսցուք. քանզի “Կ՚ի զոր կոչէք, ասէ, ձեզ վարդապետ ՚ի վերոյ երկրի,,. զի եթէ ՅԾ, ընկալցուք. զի ՚ի վեր անդ է վարդապետութիւնն մեր. և այսոքիկ պատիւք են տեառնախս այսորիկ մի ինչ ՚ի մարդկանէ տեսանել, այլ յայ ՚ի ձեռն մարդկան։ Կ՚արատ է այսուհետև քննել զդիրս սմ գրեաց, և երբ գրեաց, և յաղագս որոյ, և եր ազգաւ ՚ի տոհմի օրինադրեցաւ զդիրս զայս ընթեռ-

նուլ. քանզի Թուխ լինաՀ Թէ ոչ միշտ լսիցէք ՚ի տաբաՀ-
ընԹերցեալ զգիրս զայսոսիկ:

Այս զայս պիտանացու է գիտել. զկնի այսոցիկ խընդ-
րել պատշաՃ է ընդեր զայս վերագիր ունիցի՝ "Պործք
առաքելոց,,: Որ և ոչ զվերագրօքն վարկպարագլի պի-
տոյ է զանց առնել, և ոչ վաղվաղակի ՚ի նոյն ինքն մը-
տանել ՚ի գիրսն. այլ յառաջագոյն տեսանել զանուն
գրոցն: Որ զոր օրինակ ՚ի մեզ գլուխն ծանօԹագոյն
առնէ զայլ մարմինն, և գեմքն գեր ՚ի վերոյ կացեալ ե-
րևելի զնա գործեն, նոյնպես և վերագրուԹիւնն գե-
րագոյն քան զանկուածն կալով ՚ի վերայ Ճակատուն՝ ե-
րևելի մեզ առնեն զգիրսն: Որ տեսանիք և ՚ի Թագա-
ւորական պատկերսն, զի ՚ի վեր անդ կայ պատկերն, և
զԹագաւորն ունի գրեալ. իսկ ՚ի խանարՀ ՚ի խարսխին
գրեալ են Թագաւորին նահատակուԹիւնք, յաղԹու-
Թիւնք, իրաց ուղղուԹիւնք: Այնպես և ՚ի գիրսն է
տեսանել. գրեալ է Թագաւորական պատկերն ՚ի վե-
րոյ, և ՚ի ստորեւ գրեալ լինի յաղԹուԹիւնն, առա-
քինուԹիւնն, ուղղուԹիւնք ամենայն: Այնպես և ըզ-
ԹուղԹն յորժամ ընդունիմք՝ առնեմք. ոչ վաղվաղա-
կի լուծանեմք զկապն և ոչ Ճեպով զի ներքս գրեալն
ընԹեռնուիք. այլ նախ առաջին յարտաքին վերագրու-
Թիւնն յառիմք, և անդուստ ուսանիմք զառաքողն, և
Թէ պարտ իցէ ընդունել: Այս արդ ոչ իցէ արդեօք յի-
մարուԹիւն յաշխարՀական այսքան վարիլ փուԹով, ոչ
խոովիլ և ոչ ամբոխիլ, և ըստ կարգի յիւրաքանչիւրս
ոք երԹալ. իսկ աստ գԹել և վաղվաղակի ՚ի վերայ ըն-
Թանալ ՚ի սկզբանն: Կամիք ուսանել որքան է վերա-
գրուԹեանն ուժ, որքան զօրուԹիւն, որչափ ամբարեալ
կայցեն գանձք ՚ի վերագրուԹիւնս գրոցն. լաւարար, զի
մի արհամարՀիցէք զվերագրուԹիւն Ճաշակին գրոցն:

Այժմ՝ երբեմն Ա՛Թէնս Պաւղոս. ՚ի սմին յայտ
՚ի գիրսն է գրեալ պատմուԹիւնն. եգիտ ՚ի քաղաքին
ոչ Ճաշակին գիրս, այլ բազին Հաստատեալ մեՀեան կր-
ռոցն. եգիտ զվերագիրն որ ունէր այսպես, "Ընծանո-
ԹիւնՆոյ,,. և ոչ զանց արար, այլ ՚ի վերագիրէ բազնին
զբազինն կործանեաց: Պաւղոս սուրբ որ զՀոգւոյն շը-
նորՀս ունէր՝ ոչ զանց արար զբազինն վերագրուԹեաՆ,
և դու զվերագիրէ գրոցն զանց առնես. նա ոչ եԹող զոր

գրեցին աշէնացիքն կռապարիշտք, և դու զոր գրեայ Հոգին ոչ կարծես հարկաւոր լեալ. և զմի թողուածիւն ունիցիս: Բայց տեսցուք որքան շահ ի վերագրէն է: Յորժամ տեսանիցես վերագիր ի բացնի գծեալ, որ այնքան ընձեռեայ զօրութիւն, ուսցիս եթէ ևս առաւել վերագիր ածային գրոց զայն առնել կարեն: Նմուտ ի քաղաքն, եգիտ բագին յորում էր գրեալ "Ընծայ նօթին այ,,: Ո՞րչէ պարտ և արժան էր առնել: Հեթանոսք էին ամենեքեան, ամբարիշտք բոլորեքեան. զինչ պարտ էր առնել: Յաւետարանէ խօսել, այլ ծաղր առնէին. իսկ ի մարգարէից և յօրինաց գրոց, այլ ոչ հաւատային:

Նա ապա զինչ արար. ի բագինն ընթացաւ և զինուք պատերազմողացն զնօսին ըմբռնեաց: Նա այս է զոր ասէրն. "Նզէ ընդ ամենայնի համ, ընդ Հրեայսն իբրև զՀրեայ, ընդ անօրէնս իբրև զանօրէն,,: Նտես զբագինն, ետես զվերագիրն, ամբարձաւ հոգւովն: Ոչ ոք զի այնպիսի է հոգւոյն շնորհ, ամենայն ուստեք առնել շահել փութացեալոցն ի նա. այսպիսի է հոգևորական զէնք. "Ոչ մարմնաւոր են զէնք մեր, ասէ, զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի,,: Նտես զբագինն և ոչ երկեաւ, այլ փոխոխեաց զնոցա միտն. և զոր օրինակ ի պատերազմի զօրավար տեսանելով զինուոր ի կարգի պատերազմողացն քաջ և մեծ, և ունելով զվարսիցն զգենուռն ի յիւր դասն փոխեսցէ և պատրաստեսցէ յաղագս ինքեան պատերազմել, նոյնպէս և Պաւղոս արար. իբրև ի մարտի պատերազմողացն զվերագիրն գըտանելով ի բագնին գրեալ, յիւր դասն փոխոխեաց, զի Պաւղոսիւ ընդ աշէնացիսն կռուիցի, այլ ոչ աշէնացւովքն զՊաւղոս ընկենուցու: Սուսեր աշէնացւոցն սուր պատերազմողացն վերագիրն այն. այլ նորին սուսերաւ զպատերազմողացն զգլուխն եհար: Նէ էր այնպէս հրաշալի, եթէ իւրովք զինուք էր ըմբռնեալ ըզնոսա, քանզի այն ըստ կարգի բանի իմն երևէր. բայց նոր և հրաշափառագոյն այն լինի, յորժամ զպատերազմողաց զգէնս՝ նոցին մեքենայիցն ի վերայ բերելով կործանիցէ, յորժամ զսուրն զոր հակառակ մեզ բարձեալ ունիցին՝ այն նոցա գլխարևոր վէրն ի վերայ ածիցէ: Նման զի այս իսկ հոգւոյն զօրութիւն է. այսպէս և

Պաւղոսի արար երբեմն, եւ մերկ՝ի զինուցն, զի երևեսցի մերկ այ ընդէն: Ա՛ի ինչ, ասէ, մարդկային լեզի յորժամ ած յաղագս մեր պատերազմի: Այլ մերկ՝ի զինուց և կործանեաց զաշտարակն զայն: Այս ապա զի ոչ ունէր զէն, յափշտակելով զնորին զՅովհաննու ըզսուսերն, եհատ զգլուխ բարբարոսին. նոյնպէս և Պաւղոս յարար վերնագրով այնուիկ: Այս զի յայտնագոյն լեցի և յաղթութեանն օրինակ, և զօրութիւն վերնագրին ասացից ձեզ: Այգիտ բազին մի յորում գրեալ էր "Ընծանօթի այ,,: Այս ոմն էր անծանօթ ած. այլ Քրիստոս որ՝ինոցանէ անծանօթ ած: Ցեսանէս զիարդ հանձարով փոփոխեաց առ ինքն զնմաստն. տեսանէս պրպէս գերեաց զվերնագիրն, ոչ՝ի չարիս գրողացն, այլ՝ի փրկութիւն նոցա և՝ի նախախնամութեի: Այս զինչ, աթենացիքն արդեօք յաղագս Քրիստոսի գրեցին զայն: Ա՛յսեմ. եթէ վասն Քրիստոսի գրեալ էր աթենացւոցն, ոչ էր այնպէս սքանչելի. այլ այն է՝ զի նոքա այլ ազգ գրեցին, իսկ սա այլազգաբար փոփոխեաց:

Ա՛յայց նախ առաջին հարկաւոր է ասել՝ըր աղագաւ աթենացիքն գրեցին "Ընծանօթի այ,,: Յո՞ր սակս գրեցաւ: Ա՛ազում աստուածս ունէին նոքա, մանաւանդ թէ յոլով դևս. վասն զի "ամ աստուածք հեթանոսաց դևք են,,. գաւառականս և օտարս որպէս և զմարդիկ: Ցեսանէք ո՛րքան ծաղր էին իրքն: Ա՛թէ ած իցէ, ոչ ևս օտար. քանզի ամենայն աշխարհի տէր է: Ո՛այնոսիկ զոմանս՝ի հարցն առեալ ունէին և զոմանս՝ի մերձաւոր ազգացն, որպիսի ինչ՝ի սկիւթացւոցն յեգիպտացւոցն՝ի Թրակացւոցն. և եթէ արտաքին ուսմանցն հրմուտք էիք, զայնոսիկ զամենայն պատմութիւնս ընթեռնուի ձեզ: Այս զի ոչ՝ի սկզբանն զամենայն ընկալան, այլ փոքր փոքր՝ի ներքս մտին՝ի նոսա, ոմանք առ հարքն և ոմանք առ հասուածս և կէսքն առ նոցա իսկ զարուն խմբեալք ասէին: Ո՛ր օրինակ զնոսա անգիտանայաք, և զկնի ընդունելով ծանեաք զնոսա, նոյնպէս՝ի դէպ է անգիտանալ զոք որ իցէ ած. և մեք ոչ ձանաչէիք, և սպասաւորութիւն նորա զանխլանայ՝ի մէնջ: Այս ապա զինչ. զի մի լինիցի այն, շինեցին բազին և գրեցին "Ընծանօթի այ,,, այսպիսի իմն ասելով վերագրաւն. եթէ իցէ ոք ած այլ՝ որ ոչ ծանօթ իցէ մեզ, և նմա սպաս

տարցուք։ Տես զգերազանցութիւն կրկնադիւութեն[1]. յաղագս որոյ և Պաւղոս սաստելով ասէր. "Լաւ ամենայնի կրկնադէս տեսանեմ զձեզ,,։ Օ՛ի ոչ ծանօթ դէս պաշտէք, այլ և ոչք ոչ են ձեզ ծանօթ։ Ա՛րդ նոքա յաղագս այսորիկ գրեցին "Ընծանօթի ՚ա,,. իսկ Պաւղոս մեկնեաց նոցա։ Յաղագս այլոյ ասելին, բայց Պաւղոս փոփոխեաց ՚ի Քրիստոս, գերելով զիմաստն ըստ ինքեան կացոյց ՚ի դաստն իւրում։ "Օ՛որ դուք անգիտութեամբ պաշտէք զնա, ես զնոյն պատմեմ ձեզ,,. քանզի անծանօթ ոչ այլ ոք էր, բայց Քրիստոս։

Լե տես զհոգևոր հանձարն. հանդերձեալք էին ստդտանել զնա՝ եթէ օտարացուիչ լիմն աղանդ բերես ՚ի լսելիս մեր, թէ նորաձև իմն ասես, ՚ած զոր ոչ գիտեմք՝՚՚ի ներքս բերես։ Կամելով ազատանալ յայնպիսի կարծեաց նորաձևութեանն, և ցուցանել թէ ոչ զօտար աք քարոզէ զ՚ած, այլ զոր կանխաւ առեալ նոցա սպասաւորութեամբ պատուէին, ՚ի վերայ էած և ասէ. "Օ՛որ դուք անծանօթաբար պաշտէք, ես զնա աւետարանեմ ձեզ,,։ Գուք, ասէ, յառաջագոյն ընկալայք. կանխաւ ժամանեաց սպասաւորութիւնն ձեր քան զիմ քարոզութիւնս։ Ա՛ի ինչ զիս բամբասէք այսուհետև եթէ օտար ՚ած ՚ի ներքս բերեմ. վասն զի զնա աւետարանեմ, որում դուքն անգիտութեամբ ծառայէք. թէպէտ և ոչ արժանաւոր օրինակաւ, սակայն բաւական տանիք. քանզի ոչ եթէ յայդպիսի մեհեանն շինի Քրիստոս, այլ ՚ի բազին հոգևոր կենդանի. բայց և յայդմանէ զձեզ յայտնեալ հանել կարեմ։ Ա՛յսպէս և ՚ի հնումն Իրեայքն սպաս տանէին. այլ ՚ի բաց կային ՚ի մարմնական սպասաւորութենէն և եկին ՚ի հոգևորականն հաւատացեալքն ամենեքեան։

Տեսէր զիմաստութեին Պաւղոսի, տեսէր զհանձարն, տեսէր զիաբդ զնոսա որսացաւ ոչ աւետարանաւ, ոչ մարգարէիւք և ոչ հոգևոր բանիւք, այլ վերագրօքն։ Ա՛ի զանց առներ այսուհետև, սիրելի, զվերագրօվք ՚ած այնին բանիցն. եթէ արթուն իցես և հսկիցես, և յօտարացն գոցես պիտանացու. ապա եթէ պղերգ ոք և յողն ան-

1 Յորն ունի δεισιδαιμωνία, δεισιδαίμων, որ է երկիւղածութիւն ՚ի դէպ, սնապաշտութիւն. Հայ Թարգմանիչն Թուի ընթերցեալ δεισιδαιμονία, δεισιδαίμων, փոխեալ է ՚ի կրկնադիւութիւն, կրկնադէս։

կեալ, և ոչ ՚ի գրոյն լինի քեզ առաւել ինչ։ Օ որ օրինակ որ գիտէն շահել՝ ամենայն ուստեք շահի, նոյն պէս և որ ոչն գիտէ շահել՝ թէպէտ և զանձ գտանէ, ունայն ՚ի բաց գնայ։

Ի խորժէքը թէ ասեմ ձեզ և այլ ինչ այսպիսիս ձեռնարկութիւն, և որպէս այլ ոմն այլովք մտօք խօսեցաւ, իսկ աւետարանիչն առ ինքն դարձոյց զասացեալսն զօրութիւն։ Հայեցարուք զի ուսանիցիք, զի և նա զերեաց զխնամոտն ՚ի հնազանդութիւն Քրիստոսի. զի ասացեալք թէ և զայլոցն գերել կարեմք, ևս առաւել ՚ի մերումն չահիցեմք և ձախանայցեմք։ Այսիսիսաս քահանայապետ էր տարւոյն այնորիկ, և այն ՚ի Հրեից չարութենէ եղև. ամաչեցուցանէին զքահանայութեանն պատիւ, և վաճառականս առնելով զքահանայապետսն. բայց յառաջագոյն ոչ էր այնպէս, այլ վախճանն միայն լուծանէր ՚ի քահանայութենէն զքահանայն. իսկ յայժամ և կենդանիքն լուծեալ լինէին ՚ի պատուոյն։ Քահանայապետ էր տարւոյն այնորիկ. զինէր զՀրեայսն հակառակ Քրիստոսի և ասէր՝ եթէ պարտ է նմա մեռանել, քամ՚ասել ինչ ոչ ունէր, յաչառանօք ծնկեալ էր. այնպիսիք էին նախանձք բարեգործութեանցն, այնպիսի փոխարէնս հատուցանէին, և զպատճառսն ուսուցանելով զգրժանացն ասէր. “Լաւ է թէ մի մարդ մեռցի, և մի բոլոր ազգս կորիցէ ,,։ Օ այս բանի զօրութիւն տես զինարդ ընդ մեզ եղև. զի ուսցիս եթէ բանն էր քահանային, իսկ իմաստքն կարացին լինել հոգևորք. “Լաւ է թէ մի մարդ մեռցի, և մի ամենայն ազգս կորիցէ։ Օ այս ոչ ասաց յինքենէ, ասէ, այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ ,, յաղագս Յիսի մեռանել ոչ միայն վասն Հրէից, այլ և յաղագս բոլոր ազգացն. վասն այնորիկ ասէր. “Լաւ է թէ մի մարդ մեռցի, և մի բոլոր ազգս կորիցէ ,,։ Ցեսէր զնածային զօրութիւնն զինարդ զնեզու թէնայեցաւն հարկեցուցանէ յաղագս Աշմարտութեանն խօսել։

Արդ զի մի զանց առնիցեմք զվերագրաւ ածային գրոց, բաւականապէս այսօրիկ ասացան, եթէ լինիցեմք. կամ՚ի ասել եթէ ով գրեաց զգիրս, և ուրբ և որ ազագաւ գրեցաւ։ Այլ առ այժմ զայս ընկալցուք. զայն եթէ ածն կամեսցի, յառաջակայսն ամենայն իրօք յայտնեսցիս ձեզ։

Ի խորժէի այսուհետև առ նոր լուսաւորեալն զբանս ածել. նոր լուսաւորեալս ասեմ, որք ոչ միայն նախ քան զերկուս կամ քան զերիս, այլ և յառաջ որք ոչ քան զտասն աւուրս լուսաւորեցան, այլ և որք նախ քան ըզտարի և յառաջ քան զյոլով ժամանակս. քանզի և զնոսա այսպէս պարտ և արժան է կոչել: Որք բաղում փոյթ ցուցանեն յաղագս իւրեանց անձանց, իշխանութիւն է և զնոսա զկնի տասն ամի նոր լուսաւորեալս կոչել, թէ զնորութիւնն որ 'ի լուսաւորութենէ ամբողջ պահիցեն. քանզի ոչ ժամանակ զոք առնէ նոր լուսաւորեալ. կարողութիւն է և զկնի երկուց աւուրց կորուսանել զպատիւ անուանն՝ որ ոչ զգուշանայ:

Ի սյսմ ձեզ օրինակ ասացից, զիարդ նոր լուսաւորեալ ումն էր և վաղվաղակի կորոյս զկնի երկուց աւուրց և զշնորհ նոր լուսաւորութեանն և զպատիւ: Քեմ զօրինակն, զի տեսանելով զկործանումն՝ զգուշանայցէք ձերումդ փրկութեանն. վասն զի ոչ միայն հատատուն կացեալքն, այլ ընկձեցեալքն զձեզ պարտ և արժան է ուղղել և բժշկել: Ի՝ ումն մոգ փոխոխեցաւ, ասէ. մերըտեալ ժուժկալէր առ Փիլիպպոսի՝ տեսանելով զնշանս. այլ զկնի սակաւ ինչ աւուրց վաղվաղակի չոգաւ վերըստին յիւր առաջին չարութիւնն գտանել: Ո՞րինչ այնուհետև նոր լուսաւորեցեալսն ասէր Պետրոս. "Ի դառնութիւն մեղաց և 'ի կապանս անիրաւութեան տեսանեմ զքեզ լեալ. վասն որոյ աղաչեա զաեր թերևս թողցի քեզ չարութիւնդ այդ,,. ոչ ևս երևեալ 'ի հանդէս, և վաղվաղակի կործանեցաւ անկեալն 'ի կործանումն: Արդ զոր օրինակ գոյ հնար յետ երկուց աւուրց ընկենուլ և կորուսանել զանուն նոր լուսաւորութեանն և զշնորհն, նոյնպէս և զկնի տասն ամի և կամ քան և մինչև 'ի վերջին օրն է կորուսանել զպայծառ և զպարկեշտ զանուն զայս և զկոչս: Ի այսոցիկ վկայէ Պաւղոս, 'ի ծերութեանն մեծապէս պայծառացեալ. վասն զի մանկութիւնն այն ոչ 'ի բնութենէ եղև, և 'ի ծերութիւն ոչ ըստ բնութեան ընթացից գայ, այլ երկոքեան յօժարամտութեանն լինին տեարք. և յօժարամտութեանն մեք եմք տեարք, և 'ի ծերանալն և կալ մնալ մանուկ 'ի մեզ լինել:

Զանգի մարմնոյ Թէպէտ և Ձեսլիցի և զնաւ հնա-

լինի և ոչ ոք տոչնկիցէ զմարմինն, և եթէ առնիցէ ՚ի տան կալ մնալ, և եթէ ոչ լինիցէ աշխատութեամբք գնա և յոլով գործովք ամենայն իրօք, ըստ բնութեանն օրինաց ժամանէ նմա ծերութիւնն։ Այլ Հոգւոյն ոչ այսպէս. այլ եթէ ոչ մնաւեսես գնա, և ոչ լինես ցես կենցաղական տաժանմամբք և աշխարհական հոգւովք, կայ մնայ միշտ պայծառ նորութեամբն փայլեալ։ Ո՛չ տեսանէք զաստեղս երկնից զայնոսիկ որ յերկինս են. վեց հազար ամ է այսուհետև գի երևին մեզ, և ոչ ոք ՚ի նոցանէ մնատգոյն եղև։ Արդ եթէ ուր բնութիւն[1] է այնպէս պայծառ եկաց մնաց լոյսն, ուր յաժառանգութիւն իցէ ոչ առաւել ևս մնասցէ այնպիսի որպէս ՚ի սկզբանն փայլեաց. մանաւանդ եթէ ախորժեսցուք, ոչ այնպիսի ևեթ կայ մնայ, այլ և պայծառագոյն ևս լինի, մինչ գի և ընդ նմին իսկ ընդ Յառագայթս արեգականն կարէ հակառակել։

Կամէի ուսանել զկարդ իշխանութիւն է գինի ժամանակի լինել նոր լուսաւորեալ. լուր գինչ ասէ Պաւղոս առ Տիրդիկն որ նախ քան զյոլով ժամանակս լուսաւորեցան. "Ոյոս երևեսջիք իբրև լուսաւորք յաշխարհի, զբանն կենդանութեան ունելով ՚ի պարծանս ինձ,,։ Ո՛երկացայք գհին և զպատառուն հանդերձն և օծայք հոգևոր իւղովն, ազատք եղէք ամենեքեան. մի ոք այսուհետև յառաջին ծառայութիւնն երթիցէ վերըստին։ Պատերազմ է մերձակայս և հանդէս. ոչ ոք ծառայ նահատակի, ոչ ոք ստրուկ գինուորի. այլ և եթէ ըմբռնիցի ծառայ, հանդերձ տանջանօք արտաքս ելանէ յայսմ ընտիր գինուորացս։

Այլ ոչ միայն ՚ի գինուորականն է այս, այլ և յոլովք պիտանի հանդէսն նոյն այս սովորութիւն ունի. քանզի յետ երեսուն աւուրց աստ տանին գնոսա, շուրջ ըզքաղաքաւն շրջեցուցանեն, և ՚ի նստել ամենայն տեսողացն գոչէ քարոզն՝ մի՛ ոք սորա ոսոխ իցէ. որպէս գի գնա ՚ի բաց լուծցէ ՚ի ծառայութեան կարծեաց, և այնպէս ՚ի հանդէսն մտանեն։ Արդ եթէ սատանայ ոչ ընդունիցի զծառայս յիւր հանդէսն, գիմարդ դու ծառայ լինելով մեղացն յանդգնիս ՚ի նահատակութեան։ Արիս

1 Յօրինակին բնաւորիւնն. եղաւ ըստ յոյնին։

տասի գալ։ Ընդ քարոզն բարբառի՝ մինէ ոսոխ ոք իցէ սորա. իսկ ասա՝ Քրիստոս ոչ այնպէս աղաղակէ, այլ թէպէտ և ամենեքեան ոսոխք իցեն նորա նախ քան զմկրտութիւնն, ասէ՝ ես ընդունիմ զնա, և եղծանել զաւազակութեանն իրս՝ առնեմ ազատ և ի հանդիման մուծանեմ։

Տեսէր զմարդասիրութիւն նահատակարդին. ոչ խընդրէ զառաջինան, այլ յետ այնորիկ զուղղութիւնն պահանջէ։ Ծառայ էիր, բիւր ոսոխ ունէիր, զխիղճ, զմեղանս, զդէս զամենայն. ոչ ոք ի նոցանէ, ասէ, հակառակ քո չարժեաց զիս, և ոչ զմտաւ ածի եթէ արժանաւորս լինիցիս նահատակութեանց իմոց. ընկալայց զքեզ ի մշտարանն ոչ յաղագս քո արժանաւորութեն, այլ վասն իմոյ մարդասիրութեան. ձնա այսուհետև ի նմին, և նահատակեցիր եթէ ընթանալ դէպ լինիցի և եթէ մրցել և եթէ բռնամարտիկ լինել. մի անյայտաբար՝ և մի վայրապար և մի մնոտի։ Ուր զինչ արար Պաւղոս. վաղվաղակի յաւազանէն ելանելով՝ անդէն արագ արագ ի մկրտութենէն նահատակելով. քարոզէր՝ թէ նա է Քրիստոս որդի Աստուծոյ, և շփոթէր զՀրեայն անդէն ի սկզբանն։

Այլ թերևս ոչ կարասցես դու քարոզել, և ոչ ունիցիս վարդապետական բան. վարդապետեա գործովք զառաքինութեանն իրս պայծառ վարուք. քանզի «փայլեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զբարի գործս ձեր և փառաւորեսցեն զՀայր ձեր յերկինս»։ Ոչ կարես վտանգել զՀրեայն ձայնիւ. շփոթեա զնոսա առաքինութեամբ, ամբոխեա զՀեթանոսս փոփոխմամբ. զի յորժամ տեսանիցեն որ նախ քան զայդ պակշռատեալ և չար էիր, զծոյլդ և զապականեալդ ի յանկարծակի փոփոխեալ, և զկնի փոփոխման ցուցանել զառաքինութիւնն, շփոթեսցին և ասասցեն որպէս և զկուրըն երբեմն ասէին Հրեայքն՝ նա՛ է, ոչ է նա[1]։ Տաղնապելոց բանք էին այնոքիկ, յերկուանալ յաղագս ծանօթին, ամբոխելն առ իրեարս ընդունայն, ոչ հաւատալ և ոչ աչաց իւրեանց։ Ի բաց ընկեաց նա զմարմնական կուրութիւնն, ի բաց ընկեսցես դու և զհո-

1 Յովհաննէին յայտաբեր. եգաւ ըստ յաւնին։

գևոր կուրուԹիւնդ. Հայեցաւ նա յարեգակինս յայս, Հայեցցիս և դու յարեգակն արդարուԹեան. ծանեար զտէրն. արժանի ծանօԹուԹեանն այսուհետև գործեսցուք, զի և արքայուԹեանն երկնից Հանդիպեսցուք շնորհօք և մարդասիրուԹեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր Հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՎԵՐՆԱԴԻՐ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ. ԵԻ ԵԹԷ ՊԱՏՈՒԱԿԱՆԱԳՈՑՆ ԵՆ ԱՌԱՔԻՆ ՎԱՐՔ ՔՆՆՆԱՆՍ ԵԻ ՉՍՔՆԱՉԵԼԻՍ ԱՌՆԵԼ ԵԻ ՈՒՆԵԼ. ԵԻ Ի՞Ի ՉԱՆԱՉԱՆԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ Ի ՆՇԱՆԱՑ

Յետ բազում ժամանակի առ մայրս մեր դարձեալ վերստին եկաք, առ ցանկալիս և բաղձալի ամենեցուն եկեղեցիս, առ մայր մեր և եկեղեցեաց ամենեցուն. մայր է[1] մեծ եկեղեցին, բայց սա և նորա է մայր։ Ոչ միայն զի աւուրբք երիցագոյն է, այլ զի և յառաքելական ձեռացն հիմնեցաւ. յաղագս այսորիկ յոլովակի կործանելով յաքնակի կանգնեցաւ, և աւերեալ յաղագս անուանն Քրիստոսի՝ դարձեալ ուղղեցաւ զօրուԹեամբն Քրիստոսի. քանզի ոչ առաքելական ձեռքն ևԹէ հիմնեցուցին զնա, այլ և տէրն առաքելոց պատուեաց զսա՝ նոր և հրաշափառագոյն հրամանաւ պատրաստի օրինակաւ։ Օ՜վ ոչ այսպէս փայտս և քարինս շինեաց զպարիսպն, և ոչ փոս արտաքուստ շուրջ գործեաց, և ոչ խոչս ցցեաց և աշտարակս կանգնեաց և այնպէս զսա ամրացոյց, այլ երկուս բանս միայնս սոսկս խօսեցաւ, և այնոքիկ բաւական եղեն սմա փոխանակ պարսպի և աշտարակի և փոսոյ և ամենայն ամրուԹեան։

Եւ որ բանք էին արդեօք այնոքիկ որ այսքան ունին զօրուԹիւն։ «Ի վերայ վէմիդ այդորիկ, ասէ, շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց մի զօրեսցեն առնա»։ Այս պարիսպ, այս պատնէշ, այս ամրուԹիւն, այս նաւահանգիստ և ապաւէն։ Դու ինձ աստանօր զպարսպին զանվԹարուԹիւնն տես. զի ոչ ասաց ԵԹԷ մարդ-

1 Հաստատագ մայր է . . . և նորա է մայր ձեք յայժմու յոյնն։

կան դրժանք միայն ոչ հերքիցեն նմա, այլ և ոչ նոյն ինքն մեքենայքն դժոխոց։ "Դրունք, ասէ, դժոխոց ոչ պարտեսցեն զնա,,։ Այլ զինչ իցէ արդեօք դրունք դժոխոց. ինձ թուի եթէ անյայտ է ասացեալն. ուստուք զինչ է դուռն քաղաքիս, և այնպէս տեսցուք զինչ է դուռն դժոխոց։ Դուռն քաղաքիս է՝ի ներքս Հանապարհ որ՝ի քաղաքս ածէ. ապա ուրեմն և դուռն դժոխոց է վտանգ որ՝ի դժոխս տանի։

Այլ զոր ասէն այսպիսի է. եթէ այնպիսիք տագնապք՝ի ստորեւ պատառեսցին և անկցին որ՝ի նոյն դժոխս զձեզ ընկենուլ, անյողդողդելի եկեղեցի կացցէ մնասցէ։ Այր կարող և ոչ թողուլ զփորձ առնուլ նմա դժնդակ նուաճեանցն, և ընդէր արդեօք ներեաց։ Ոչ՝ի մեծագոյն է քան արգելուլ զփորձուածիւնն՝ թողայուցանել գալ՝ի վերայ փորձուածեանցն, և ոչ մնալ դժնդակագոյն ինչ չարչարանս ածել՝ի վերայ եկեղեցին. զի ընտրագոյն զնա գործեսցէ, ներէ գալ փորձուածէցն. քանզի "նեղուածիւն զհամբերուածիւն գործէ, իսկ համբերուածիւն զհաճոյուածիւն,,։ Ոչ՝ի զզօրուածիւն իւր յոյս կամակարուածեամբ ցուցցէ, ՝ի նոցուն իսկ՝ի դրացն մնհոս յորվակի յափշտակեաց զնա. վասն այնորիկ և ալեկոծուածեանցն անսաց լինել, և ընկղմել նաւին ոչ անսաց։ Այսպէս և ընդ նաւուղիղն զարմանալի. ոչ յորժամ առանց մրրկայ նաւիցէ, և ոչ յորժամ յերտուսատ կողմանէ ունելով զհողմն ապրեցուցանիցէ զնաւն, այլ յորժամ՝ի ստամբակել ծովուն և յալեացն ամբոխել և՝ի ձմերայնոյն մրրկել զարուեստ հողմոյն բռնուածեան հակառակ կարգիցէ, և՝ի միջոցէ ձմերայնոյն յափշտակիցէ զնաւն։ Նոյնպէս և Վրիստոս արար. իբրև զնաւ՝ի ծովու զեկեղեցի յաշխարհի նաւելով բերեալ եթող. ոչ ելոյծ զալեկոծուածիւնն, այլ յափշտակեաց՝ի մրրկացն. ոչ զնատոյց զծովն, այլ ամրացոյց զնաւն. և՝ի յառնել ամենայն ուստեք բազմաց իբրև ալեկոծուածեանց զպրպացելոց, մարտնչելով ընդ նմա այսոցն չարուածեան իբրև ընդ դժնդակ հողմոց, և ամենայն ուստեք ամբոխելով ձմերայնոյն, բազում խաղաղուածիւն եկեղեցւոյ արար. և հրաշալի այն է՝ զի ոչ միայն ձմեռն ոչ ընկղմեաց զնաւն, այլ և մեղկեաց և զձմեռն նաւն։

Վասն՝ զի հալածանք յոլովակի ոչ միայն ոչ ընկղմեցին զեկեղեցի, այլ քան և յեկեղեցւոյ։ Ո՛չ խորհուրդ և որոշ օրինակաւ և ուսոյ[1]։ Ի հրամանէն յայնմանէ զոր ասացն «Ոչրունք դժոխոց ոչ հերքեսցեն նմա»։ Որքան աշխատեցան հեթանոսք զի զգեանն զայս լուծցեն, զի անտիրական արասցեն զՀրամանն, և ոչ կարացին լուծանել. վասն զի այ էր Հրամանն։ Եւ զոր օրինակ աշտարակ անդամանդեայ քարանց հաստատեալ և երկաթեաւ կապեալ հաւաստեաւ պատերազմողքն ամենայն ուստեք մարանչելով ոչ զչինուածն յողողդեն և ոչ զյարմարութիւնն լուծանեն, այլ՝ի բաց գնան՝ աշտարակին ոչ ինչ վնասելով և ոչ ջար ինչ առնելով, զիւրեանց զօրութիւնն՝ի վայր կործանեն, նոյնպէս և բանն այն իբրև աշտարակ իմն բարձր՝ի մէջ աշխարհի ամրութեամբ պարսպեցաւ, հեթանոսք ամենայն ուրեք մարտընչելով ընդնմա՝ հզօրագոյն երևեցուցին, և յիւրեանց ուժոյն լքանելով այնպէս սատակեցան։

Ո՛չինչ ոչ հնարեցան հակառակ հրամանին այնմիկ. գունդս պատրաստէին, զչինս շարժէին, թափաւորք զինեալք լինէին, ամբոխ՝ի վերայ յառնէր, քաղաքք զայրանային, դատաւորք բարկանային, ամ՛ տանջանաց տեսակ հնացեալ լինէր, և ոչ մի ինչ մնացեալ լինէր պատժոցս օրինակ, հուր և երկաթ և գազանաց ժանիք, վախք և ընկղմութիւնք և վիհք, փայտ և անիւ, խաչ և հնոց, և ամ՛ որ երբեք ուրեք երևեցաւ տանջանարանք՝ բռնադակիք՝ի մէջ բերեալ լինէր. սպառնալեաց ծանրութիւն անընդ բերելն, պատուոց[1] խոստմունք անձառք. որպէս զի այնու օրինակաւ զարհուրեցուցանել, և միւսոյնի մեղուել և պատրել։ Եւ մի ինչ ոչ խաբէութեան և ոչ բռնութեան մնացեալ լինիւր տեսակ. զի և հարք զմանկունս մատանէին, և որդիք՝ի հարց անծանօթանային. մարք զերկունս մոռանային, և բնութիւնս օրինք խոտորեալք լինէին։ Այլ սակայն հիմունք եկեղեցւոյ և ոչ այնպէս սասանեցան. այլ՝ի ձեռն աղգակցութեանն այնորիկ պատերազմին գայր, և՝ի պարիսպ նորա ոչ մերձենայր յաղագս բանին այնորիկ ասացելոյ՝ թէ «Ոչրունք դժոխոց ոչ յաղթեսցեն նմա»։

Եւ մի ասէր եթէ բան էր, այլ այ բանն. զի և զեր-

1 Յօրինակին պապոց. եդաւ ըստ յուշին։

կին բանիւ հաստատեաց ՚ած, և զերկիր բանիւ հիմնեցոյց՝ զնախատս զայս և զծանր բնութիւն ՚ի վերայ կախուղ և հոսանուտ բնութեանն բերեալ արար, և զծով զանբեւրելի՝ որ այնքան ունի ալեկոծութիւն տկար պարսպաւ ամենայն ուստեք աւազաւ պարսպեաց ՚ի ձեռն բանի։ Զի որ բանիւ զերկին հաստատեաց, զերկիր հիմնեցոյց, զծով շուրջ պարսպեաց, զի հրաշանաս եթէ որ քան զերկին և զերկիր և զծով պատուականագոյն է զնա կեղեցի՝ բանիւն այնուիկ պարսպեաց։

Այլ արդ զի այսպէս շինուածս անսասանելի և պարիսպս անկործանելի՝ տեսցուք զնարդ արկին հիմունս աւաքեալքն, քանի ինչ ՚ի խոր փորեցին, որպէս զի անշարժ լինիցի շինուածն։ Ոչ փորեցին խոր, և ոչ կարօտացան այսպիսի ինչ աշխատութեան. վասն զի հին գտին հիմն և սկզբնական զմարգարէիցն։ Զի որ օրինակ այր ոք հանդերձեալ տաճար մեծ շինել, յորժամ գտանիցէ հիմն հին հզօր և անխախտելի՝ ոչ յողդողդէ զհիմն և ոչ շարժէ զքարինան, այլ թողու կալ հնալ անշարժս, և այնպէս ՚ի վերայ առնէ զնոր և զառժամայն շինուածն, նոյնպէս և առաքեալքն հանդերձեալք շինել զայս մեծ շինուած՝ որ ամենայն երկրի հաստատեալ է եկեղեցի, ոչ փորեցին խոր, այլ գտանելով զհին զհիմն զմարգարէիցն՝ ոչ խախտեցին և ոչ դրդուեցին զշինուածն և զվարդապետութիւնն, այլ թողով զնա կալ հնալ անշարժ՝ այնպէս ՚ի վերայ եդին զնորեանց վարդապետութիւնն զնորս զայս եկեղեցւոյ հաւատս։

Այլ զի ուսցիս եթէ ոչ շարժեցին զհին հիմն, այլ ՚ի վերայ նորա շինեցին, լուր նմին իսկ իմաստուն Հարտապարապետին Պաւղոսի, որ ասէ մեզ զշինուածոյն հաստատութիւն. քանզի նա ինքն է իմաստուն Հարտապարապետ, "Իբրև իմաստուն Հարտապարապետի հիմն եդի,,։ Այլ տեսցուք զնարդ եդ զնոյն ինքն զհիմն. ՚ի վերայ, ասէ, այլոց հնոյ հիման մարգարէիցն։ Ասաւ՝ այդ յայտ է, ասա. "Ոչ ևս եք ստարբք, այլ քաղաքակիցք սրբոց, շինեալք ՚ի վերայ հիման մարգարէից և առաքելոց,,։ Ցեսո՛ր հիմն, և հիմն զմինն մարգարէիցն ՚ի ներքոյ և զմիւսն առաքելոց գեր ՚ի վերոյ քան զնա։ Այս և զարմանք[1] զի ոչ վաղվաղակի զհնի մարգարէիցն առա-

1 Յօրինակին հրաման. յոյնն հրաշալի։

քեալքն, այլ յոլով ժամանակ եղև 'ի միջի։ Ընդ-
դէմ ար-
դեօք. զի և հմուտ շինողք այսպէս առնեն. յորժամ
արկանեն զհիմն, ոչ վաղվաղակի 'ի վերայ դնեն զշի-
նուածն, զի մի կակուղ և առժամայն լեալ հիմանն գործ՝
տկարասցի զորմէն ծանրութիւն առնել. յաղագս այ-
սորիկ Թողուն բաղում ժամանակս իրել քարանցն. իսկ
յորժամ տեսանեն հաւաստեաւ պնդեալս, յայնժամ
'ի վերայ դնեն և զորմէն ծանրութիւն։ Այսպէս և
Քրիստոս արար. ներեաց հաստանալ հիման մարգա-
րէիցն, 'ի լաղացն յանձինս լինել հաստատուն վարդա-
պետութեն. և յորժամ ետես քաջապինդ զշինուածն,
յորժամ արմատացեալ զաւանդն քահանայականս,
որպէս զի կարասցեն զծանրութիւնս նորոյ խմաստասի-
րութեանս բերել, յայնժամ յղեաց զառաքեալսն՝ 'ի
վերայ հիման մարգարէիցն զորմն եկեղեցւոյն յարու-
ցանել։ Յաղագս այսորիկ ոչ ասաց շինեալք 'ի վերայ
հիման մարգարէիցն, այլ 'ի վերայ շինեալք. քանզի 'ի
վերայ շինեցան։

Այլ տեսցուք զիարդ շինեցան. և ուստի գիտաս-
ցուք։ Ուստի այլ ուստեք. 'ի գրոց գործոց առաքելոցն,
յաղագս որոյ և յառաջին աւուրսն ընդ ձեզ խօսեցաք։
Ծանուցեալ եմ և սակաւ ինչ պարտս ձեզ անտի պարտիմք,
զոր հարկ է հատուցանել այսօր։ Այս զինչ իցեն պարտ-
քըն. զնոյն ինքն զդոյն վերագիր մեհնել ձեպիմք. քան-
զի ոչ սուտ ինչ է և անյայտ, որպէս յոլովք կարծեն,
այլ պետս ունիմք հարցաքննութեան։ Այս զինչ է վե-
րագիրն գրոյն. "Գործք առաքելոց"։ Ոչ թուի յայտ-
նի գոլ. ոչ կարծի ծանօթ և երևելի ամենեցուն։ Այլ
եթէ ձեռն գայցէք առացելոցս, տեսջիք ոգքան են խորք
վերագրոյս այսորիկ։

Զանգի ընդդէմ ոչ ասաց՝ աքանչելիք առաքելոցն. հիմ
ոչ գրեաց՝ նշանք առաքելոց, զօրութիւնք և հրաշք ա-
ռաքելոց, այլ գործք առաքելոց։ Այլ և ոչ նոյն են
գործք և զարմանալիք, և ոչ նոյն գործք և հրաշք և զո-
րութիւնք. այլ յատկ զանազանութիւնք այսոցիկ եր-
կոցունց։ Գործք են ինքեանց փութոյն ուղղութիւն.
իսկ նշանք՝ ածային պարգևին շնորհք։ Զեսեր ոգքան է
միջոց գործոյ և նշանաց. գործք են մարդկային քրտանց
աւարտք, նշանք են ոչ մարդասիրութեանն յայտնու-

թիւն. գործք ՚ի մերմէ յօժարամտութենէ զսկիզբն ունի, նշանք յայ ընորհէն զնախաձանապարհն ունի. և միւնն է ՚ի վերուստ հոսումն, իսկ միւսն ՚ի ներքուստ բարբուսս: Գործք յերկոցունց նիւթին, և ՚ի մերմէ փութոյն և յաճապային ընորհէն. իսկ հրաշք մերկ ցուցանեն ՚ի վերուստ զընորհքն, ոչ ինչ մերում քրտանցն կարօտանալով: Գործք են հեզ լինել, ողջախոհ, չափաւոր, սրտմտութեան ժուժկալել, ընդ ցանկութիւնս մարտն չել, ողորմութիւն առնել, մարդասիրութիւն ցուցանել, յամենայնի կրճատութիւն յառաքինութիւնս: Յայտնիկ գործք են աշխատութիւնք և քրտունք մեր: Ախանչելիք են զգեա ՚ի բաց հալածել, զկուրացելոց զաչս բանալ, զզորոտեալ մարմինս մաքրել, զանդամալոյծս պլնդել: Տեսիլ որքան է միջոց գործոյն և սքանչելեացն, առաքինուէ և նշանացն, մերոյ փութոյն և ՚ի ընորհէն:

Ախորժեմ և միւս ևս քեզ ցուցից զանազանութիւն. քանզի պարտ է մեզ զամենայն զբանն ուսուցանել այսօր: Ո՞ արմանալիք և նշանք մեծք են և սարսափելիք, և քան զմեր բնութիւնս գերազանցեն. իսկ գործք և առաքինութիւնք նուաղք են քան զնշանսն, այլ պիտանացուք և շահաւորագոյնք. քանզի աշխատութեանց են հատուցմունք, և փութոյն վարձ: Այլ զի ուսցիս եթէ գործ քան զնշանս առնել լաւագոյն է և պիտանացու, գործ բարի և առանց նշանաց որք յօրինեն զնա՝ յերկինս տանի. բայց հրաշալիք և նշանք առանց առաքինութեան ոչ կարեն ՚ի նախադրունսն յայնոսիկ առաջնորդել ումեք:

Այլ զիարդ, ես ցուցից. դուք Հայեցարուք ՚ի պակս զնախագահութիւնս գործքն ունին զվարձուցն հատուցման. զիարդ զարմանալիք և նշանք ոչ ապրեցուցանեն զարատրողն. բայց գործք ըստ ինքեան լինելով ոչ ինչ ումեք կարօտանան ՚ի փրկութիւն ստացողացն: “Յոլով ասիցեն ինձ, Վհրիստոս ասէ, յայնմ աւուր՝ տէր տէր, ոչ յանուն քո մարգարէացաք,,. այս նշանք և սքանչելիք. “ոչ անուամբ քով զեւս հանաք և զօրութիւնս յոլով արարաք,,: Տեսանես ամենայն ուրեք նշանք և սքանչելիք. ոչ ուրեք գործք, ոչ ուրեք առաքինութիւն: Տեսցուք զինչ ասէ ՚ած. վասն զի մերկք են զարմանալիքն, ոչ ուրեք առաքինութիւն, “Արթայք լինին, ոչ գի-

սեմ զձեզ որ գործէքդ զանօրէնութիւն ,, : Լ՚ոմէ ոչ գիտես զդոսա , զիարդ գիտես եթէ գործեն զանօրէնութիւն . զի ուսոյիս եթէ “ ոչն գիտեմ զձեզ ,, ոչ է անծանօթութեան , այլ առելութեան և ՚ի բաց դառնալոյ : “ Ոչ գիտեմ զձեզ ,, . էր աղագաւ , ասա ինձ . “ զի առնուամբ քով զդևս Հանաք ,, : Յաղագս այդորիկ զձեզ առեմ և ՚ի բաց դառնամ , ասէ , զի և ոչ պարգևօքն լաւագոյնք եղէք , զի այնքան վայելեցէք ՚ի պատիւն և ՚ի նայիք ՚ի չարիսն . “ երթայք յինէն , ոչ գիտեմ զձեզ ,, :

Այլ ընդէր իսկ անարժանք յառաջագոյն ընդունէին զՀոգին , և ապականեալքն կենօք նշանս ցուցանէին և յաճախին պարգևսն վայելէին , և գեղեցիկ առաքինութեանն խնամ ոչ տանէին : Ո՞վ այելչին յաղագս ՚ոյ մարգասիրութեանն , ոչ վասն ՚ի՚երեանց արժանաւորութեանն . վասն զի պարտ և արժան է ՚ամ ուրեք սերմանել զբարեպաշտութեանն բան , սկիզբն և նախահանապարհ Հաւատոյն էր : Ո՞ր օրինակ երկրագործ ոք քաջ նորատունկ ծառ ՚ի խորշ երկրի այն ինչ տնկելով , մինչդեռ մատաղն է՝ բազում խնամակալութեան արժանաւոր առնէ , ամենայն ուստեք ամրացուցանելով պարսպէ քարամբք , փշովք , զի մի ՚ի հողմոց աղաւաղեսցի և մի ՚ի պաճարաց վանեսցի և մի յայլ իմեքէ դժրանաց և ՚ի վնասուէ . իսկ յորժամ աեսցէ արմատացեալ և ՚ի վեր ընթացեալ , ՚ի բաց առնու զպատրիսան , զի բաւական է այնուհետև ծառն ինքեան իսկ ոչ ինչ կրել այնպիսի՚ չարչարանս : Նոյնպիսի իմն յաղագս Հաւատոյս եղև . յորժամ նորատունկ էր և մատաղ , յորժամ այն ինչ ՚ի մարդկան յոգիս էր տնկեալ , յոլով խնամակալութեան արժանաւոր լինէր ամենայն ուստեք . իսկ իբրև Հաստատեցաւ , ՚ի բարձրագոյնն ընթացաւ , յորժամ զամենայն ելից , ՚ի բաց եթարձ այնուհետև զպարիսպն և զամրութիւնն : Յաղագս այնորիկ ՚ի սկզբանն և անարժանիցն Հոգիք տուեալ լինէին , վասն զի պետս ունէր մատաղութիւն Հաւատոյն այսպիսումբ օգնականութեան . իսկ այժմ և ոչ արժանաւորացն տուեալ լինին , զի զօրութիւն Հաւատոյս ոչ ևս այնմ մարտակցութեան կարօտանայ :

Այլ զի ուսոյիս եթէ ոչ ատելին նոքա , այլ Հիմարտապէս նշանս առնէին , և անարժանից մարդկան Հոգիք

առեալ լինէին. զի առ ասացեալսդ և յայլ ինն յօրինեսցի, պատկառելով յայ պարգևէն նոքա 'ի բաց մնասցեն զարուեստիւն: Յուզաս որ յերկոտասանիցն՝ յանհեցուն խոստովանի զի նշանս առնէր և դևս հանէր և մեռեալս յարուցանէր և բորոտս սրբէր. այլ սակայն արտաքս անկաւ յաքեայութենէն երկնից, և ոչ կարացին զերծուցանել զնա նշանքն, վասն զի աւազակ և գող և տեառնն մատնիչ եղև:

Զդդ զի նշանք ոչ կարեն ապրեցուցանել առանց բարի առաքինութեան և մաքուր կենաց, և Տէր աստեաւ յայտնեաւ ցուցաւ. իսկ առաքինութիւն ոչ ունելով զնշանացն մխիթարութիւն և ոչ մարտակից առնելով զնա, այլ ինքն ըստ ինքեան երևեալ զօրեաց մնանել յաքեայութենէն երկնից, լուր նմին իսկ Հրիտոսի որ ասէ. "Նկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զաքեայութենի 'ի սկզբանէ աշխարհի,,. և՛ վասն. զի մեռեալս յարուցին և զբորոտս մաքրեցին, զի զգէս հալածեցին. ոչ. իսկ և՛ աղագաւ: Պաղցեալ զնս տեսէք և կերակրեցէք, ծարաւի և արբուցէք, մերկ և զգեցուսկք, օտար և ժողովեցէք. ոչ ուրեք հրաշալիք, այլ ամենայն ուրեք առաքինութիւնք: Օ՞ր օրինակ անդ ամենայն ուրեք նշանք և վաղվաղակի պատիժք, վասն զի մերկք եին աքանչելիքն յառաքինութենէն, նոյնպէս և աստ քնաւ ուրեք առաքինութիւնք և ոչ ուրեք հրաշալիք և արագ արագ փրկութիւն. վասն զի կարէ քաջ առաքինութիւն և ըստ ինքեան ապրեցուցանել զտտացոն իւր: Յաղագս այսորիկ երանելիս այս աքանչելի և առաքինիս Պ ուկաս այսպէս գրեաց զդիրս "Պօրծք առաքելոց,,, և ոչ զարմանալիք առաքելոյն. և սակայն նշանք արարին: Զյլ այնոքիկ ժամանակաւ եղեն և անցին. իսկ այսոքիկ 'ի բոլոր ժամանակի ամենեցուն երևելի և պատշաճ օրք ապրելն հանդերձեալ են:

Զդ զի ոչ առ նշանս, այլ առ գործս առաքելոցն է նախանձ մեր, յաղագս այնորիկ գրեաց զդիրս այսպէս: Օ՞ր մի ասիցեն պղերգքն, յորժամ գնասա մերձ կոչցեմք 'ի նմանութիւն առաքելոցն և ասիցեմք՝ նմանողքեր Պետրոսի, նախանձեաց ընդ Պաւղոսի, լեր իբրև Յովհաննէս, զհետ երթ Յակովբայ. զի մի ասիցեն՝ ոչ

զօրեմք, ոչ կարեմք. նոքա մեռեալս յարուցին, նոքա բորոտս մաքրեցին, ըմբերանեալ զանաւթի պատասխանիս մեր, լռեա, ասէ, և կարկեցիր, ոչ զարմանալիք, այլ առաքինութիւն մուծանէ յարքայութիւնն երկնից։ Ա. Ախանձեա այսուհետեւ ընդ առաքինութիւն առաքելոցն, և ոչ ինչ ունիցիս նուազ քան զառաքեալսն. քանզի ոչ նշանս առաքեալս արարին, այլ վարքն մանրք։ Ա. Ո՛ւ զի ուսցիս Թէ ոչ սքանչելիքն՝ այլ առաքինութիւնքն արար առաքեալս, և այս է ծանօթութիւն առաքելական պատկերին և կերպարանի աշակերտացն, լոր Քրիստոսի որ զայս յայտնէ մեզ. քանզի տպաւորեալ զաշակերտացն զպատկերս և ցուցանելով զինչ իցէ արդեօք առաքելական ծանօթութիւնն՝ այսպէս ասէր. "Ա. յսու ծանիցեն ամենեքեան եթէ աշակերտք իմ էք,,։ Յայսմ, յորմէ՞. 'ի սքանչելիս առնել, 'ի ըզմեռեալս յարուցանել. ոչ, ասէ. այլ յորմէ՞։ "Յայսմ ծանիցեն ամենեքեան եթէ սիրեցէք զիրեարս,,։ Ւսկ սէր ոչ հրաշալեացն, այլ առաքինութեանն է. քանզի "լուսին օրինաց սէր է,,։ Ցեսո՛ր զծանօթութիւնն աշակերտացն, տեսո՛ր զպատկերն առաքելական, տեսո՛ր զկերպարանն, տեսո՛ր զօրինակն. մի՛ ինչ առաւել խընդրեր, քանզի տերն յայտնեաց եթէ սէր տպաւորէ զաշակերտսն. եթէ ունիս զսէրն, եղեր առաքեալ և առաջնին առաքելոցն։

Ա. խորժե՞ս այլեւս զայս ուսանել, Պետրոսի ասելովն "Պետրէ, սիրե՞ս զիս առաւել քան զդոսա,,։ Ա. յսմ զուգահաւասար ինչ ոչ գոյ 'ի հանդիպել արքայութեն երկնից յորժամ զՔրիստոս երևեսցուք սիրել, որպէս սիրէն իցէ պարտ և արժան։ Ա. ո՛ւ զինչ արդեօք իցէ այս, կամ զի՞նչ առնելով կարիցեմ սիրել յաճախագոյն քան զառաքեալսն. արդեօք զմեռեալս յարուցանելով կամ այլ հրաշալիս ցուցանելով. ոչ երբեք։ Ա. յլ զինչ առնելով. նախ իսկ սիրեցելոյն լսիցուք. "Եթէ սիրես զիս առաւել քան զդոսա, արածեա զոչխարսդ իմ,,։ Ա. հա և աստանօր առաքինութիւն հաճոյանալ. խնամակալն լինել, ցաւակից լինել, վերակացու, ոչ զինքեան խնդրել, այլ զայնն ամենայն զոր Հովիւն պարտ իցէ ունել. այսոքիկ ամենայն առաքինութեանն և ուղղութեց, ոչ սքանչելեաց, ոչ նշանաց։ Ա. յլ նոքա, ասեն, կա-

զագս այդորիկ այնպիսիք եղեն։ Ել վասն հրաշալեացն, այլ յաղագս առաքինութեանն, և սնաւի յաւէտ պայծառացան. վասն այնորիկ ասէ ցնոսա. փայլեսցէ լոյս ձեր առաջի մարդկան. ոչ զի տեսցեն մարդիկ զհրաշսն, այլ զգեղեցիկ գործս ձեր, և փառաւորեսցեն զՀայրն ձեր որ յերկինսն է։ Ցեսանեմ ամենայն ուրեք զառաքինութիւնն պայծառացեալ, զգեղեցիկ վարս զարմացեալ։

Կամիս յուսոյց քեզ և զնոյն ինքն զՊետրոս զայս ըզգլուխս առաքելոցս, և առաքինութիւնս յուցեալ մեծապէս, և սքանչելիս արարեալ դերազանցապոյս քան ըզմարդկային բնութիւնս, և երկոքեան մերձ առ միմեանս կացեալ քեզ՝ զարմանալիքն և առաքինութիւնքն, և յառաքինութենէն մնաւանդ քան թէ՝ ի նշանացն պատուեալ, լուր նմին իսկ պատմութեանն. "Պետրոս և Յովհաննէս ելանէին՝ ի տաճարն յինն երորդ ժամու աղօթից"։ Ո՞վ զանց առնէր վայրապար զպատմութիւդ. այլ վազվազակի՝ ի վերայ կաց յառաջաբանիդ և ուսիր զնարդ եր միշտ սէր և ձայնակցութիւն և համակամութիւն, և որպէս ամենայն ուրեք հաւասարէին նոքա իրերաց, և կապեալք կապանօք ածային սիրոյն զամենայն գործէին՝ ի սեղան և յաղօթս և՝ ի գնացս և յայլումն բոլորի առ միմեանս երևէին։

Այլ եթէ սիւնքն այնոքիկ որ բաղում համարձակութիւն ունէին առ Ած, իրերաց օգնականութեան կարօտացեալ լինէին և միմեանց մարտակցութեամբ յօրինէին զկրան, որչափ և առաւել մեք տկարք և թշուառականքս և ոչ միւմ բանի արժանաւորք՝ միմեանց օգնականութեան կարօտացուք։ "Ձանգի եղբայր յեղբօրէ օգնեալ, իբրև զքաղաք ամուր"։ և զարձեալ. "Ա՛յա զինչ գեղեցիկ կամ վայելուչ, այլ բնակել եղբարցն՝ ի միասին"։ Ա՛յդորիկ աղագաւ Պետրոս և Յովհաննէս՝ ի միասին էին և զՅիսուս ունէին՝ ի մէջ. վասն զի "Ուր իցեն, ասէ, երկուք ժողովեալ յանուն իմ, անդ եմ և ես՝ ի մէջ նոցա"։ Ցեսանեմ որքան է՝ ի միասին լինել. ոչ վայրապար էին՝ ի միասին, վասն զի և այժմ ամենեքեան՝ ի միասին եմք, այլ՝ ի միասին լինել պարտ և արժան է կապանօք սիրոյն, զթող յօժարութեամբն. և զոր օրինակ մնդմինք մեր այժմ մեծ են յիրեարս և պնդեն՝ ի միասին, նոյնպէս և զսիրոս՝ ի միասին պնդել է պատշաճ։

Պետրոս և Յովհաննէս ելանէին, ասէ, ի տաճարն։ Եւ զաղաւաս այսուհետև ելանէք ի տաճարն աղօթել. վարագոյրն ապականեցաւ, սուրբքն սրբոյն բարձան, ընդ նմին և ի միում վայրի երկրպագութիւնն. Պաւղոս բարբառի ասելով. "Յամենայն տեղւոջ ամբառնալ ըզսուրբ ձեռս,,։ Ընդէր նոքա ի տաճարն ընթանայցեն աղօթել. դարձեալ ի տկարութիւնն հրէական չոգան. ոչ, մի լեցի։ Եւ զի զինջանեն ըստ տկարացն՝ զայն բան ընդուն զՊաւղոսի զոր ասէն. "Եղէ ընդ Հրեայսն իբրև զՀրեայ,,. զինջանեն ընդ տկարսն, զի մի իցեն միայն տըկարքն այնոքիկ։

Եւ այլ ազգ ևս, անդր ժողովեալ էին ամենայն քաղաքն։ Եւ զոր զոր օրինակ քաջ ձկնորսք յայն խորշս գետոյն երթան ուր ամենայն ձկունքն ժողովին, զի հանդերձ դիւրութեամբ դիպեսցին որսոյն, նոյնպէս և առաքեալքն Հոգևոր ձկնորսքն յայն խորշս Հեպէկին յորում ամենայն քաղաքն հաւաքեալ լինէր, զի անդ զաւետարանական ուռկանն պարզելով բազում դիւրութիւ դիպեսցին որսոյն։ Օ այս առնելով նմանէին վարդապետին. քանզի և Քրիստոս ասէր. "Հանապազօր ընդ ձեզ եմ ի տաճարին,,։ Եւ ընդէր ի տաճարին. զի որք ի տաճարին իցեն՝ ըմբռնեսցէ. նոյնպէս և սոքա երթայեն ի պատճառս աղօթելոյ, այլ զվարդապետութիւնն հանդերձեալ էին սերմանել անդ։ Ի տաճարն աղօթել երթային. պահեա զժամ աղօթիցն զինեալ ըլլոյդն, և ոչ մի ժամ աղօթից առ նոսա խորեալ լինչ լինէր։ Վասկայն ասացի ձեզ յոգնակի յաղագս ժամուն այնոքիկ՝ թէ ի նմա դրախտն բացաւ և աւազակն եմուտ, ի նմա նզովքն բարձան, ի նմա զենութիւն աշխարհի պատարագեցաւ, ի նմա խաւար լուծաւ, ի նմա լոյս պայծառացաւ զգալի և իմանալի։ Յիններորդ ժամու, յորժամ այլք ի ձաշոյ և յարբեցութենէ ննջէին ի քուն խորին, յայնժամ նոքա սթափք և յարուցեալ յոլով բաղձանօք եռայեալք յաղօթս Հեպէկին։

Եւ եթէ նոքա յաղօթից կարօտանային և պաղատանաց այնպէս յերկարաձգեալ մաղթանաց և աղօթից այնպիսեաց հաւաստեաց, որ այնքան ունէին համարձակութիւն, և ոչ ինչ դիտէին զչարութիւնն իւրեանց, զինչ արասցուք մեք բիւր չարեօք լցեալքս, և ոչ դնեմք.

'ի վերայ զաղօթիցն դեղ։ Մեծ զէն են պաղատանք։ Խորժեսս ուսանել թէ զիարդ մեծ զէն են աղօթքն. զվերակացութեամբն աղքատաց զանց առնէին առաքեալքն, զի յաւետ պարապումն յաղօթսն ունիցին։ "Կացուցէք, ասէ, 'ի ձէնջ արս եօթեն վկայեալ, և մեք աղօթից և սարկաւագութեան բանին պարապեսցուք,,։

Բայց զոր ասէի՝ մի արտաքս անկցուք 'ի պատճառէն՝ եթէ համանգամայն Պետրոս գործ եցոյց և սքանչելիս արար, և 'ի գործոցն առաւել գովի։ Նչէին 'ի տաճարն աղօթել, և ահա կաղ յորովայնէ մեր իւրոյ բարձեալ կայր առ դրան տաճարին։ Ի նմին իսկ յերկանց հաշմութիւն բնութեանն էր, և մեծագոյն քան զբժշկան[1] արուեստն հիւանդութիւնն, զի մեծասէս ցուցցի Քրիստոսի շնորհն։ Նա կաղ անկեալ կայր առ դրան տաճարին. տեսանելով զնոսա 'ի մտանելն՝ հայէր 'ի նոսա ողորմութիւն հայցելով առնուլ 'ի նոցանէ։ Իւ զինչ Պետրոս. "Հայեաց 'ի մեզ,,։ Բաւական էր 'ի դիմացն ցոյցք անստացուածութեանն. ոչ ինչ էին պէտք բանի և ոչ պատասխանւոյ և ոչ վարդապետութեան. զգեստք ցուցանեն քեզ զանստացուածութիւնն։ Նյս բռնադակ առաքելական ուղղութեանն է, զի զայնոսիկ ասիցես աղքատի, զի մի յարմարիցես զաղքատութիւնն, զի ասիցես նմա՝ թէ ոչ ունիմ ոսկի և արծաթ, համբերեայ և տեսցես մեծագոյն ընչեղութիւն։ "Նրծաթ, ասէ, ոչ գոյ իմ. բայց զոր ունիմն զայս քեզ տամ. յանուն Յիսուսի Քրիստոսի արի և գնա,,։ Տեսէր զաղքատութիւնն և զընչեղութիւնն. աղքատութիւն ընչից և վարձատրութիւն շնորհաց. ոչ ելոյծ զաղքատութիւն ընչիցն, այլ ուղղեաց զաղքատութիւն բնութենն։

Տես զհեղութիւն Պետրոսի. "Հայեաց 'ի մեզ,,։ Ոչ թէնամանեաց, ոչ լուտացաւ, ոչ ընդդէմ եհար որ յորովակի առնեմք մեք այնոցիկ որք դիպիճն 'ի մեզ իբրև պարտս իմն 'ի նոցանէ պահանջելով՝ գործ հրամայեմք նոցա, և եթէ 'ի քուն են՝ բամբասեմք։ Մթէ յայնոսիկ կարգեցար, ով մարդ. ոչ հրամայեաց քեզ ըզպատարկութիւնն ստգտանել, այլ զաղքատութիւնն ուղղել. ոչ արար զքեզ ոսոխ չարութեանն, այլ բժիշկ

1 Յօրինակին գտանայական. եգաւ ըստ յունին։

իւրաքանչիւր ումեք որ ՚ի վիշտն եղեն. ոչ զի թէնատա-
նեսցես զՀեղգուԹիւնն, այլ զի օժանդակեսցես անկե-
ղոյ. ոչ զի մեղադրեսցես զբաղտն, այլ լուծցես զսոքն:
Իսկ մեք զհակառակն առնեմք. Թողեալ զտալով ընչից
մխիԹարուԹիւն զմերձ եկեալսն, խարխարեմք զվէրսն՝
զամբաստանն ՚ի վերայ ածելով: Նայց ոչ և Պետրոս
այնպէս, այլ խօսի. քանզի "Յոնաարհեղո, ասէ, յաղ-
քատս զունկն քո և պատասխանի արա նմա հանդար-
տագոյն խաղաղուԹեամբ,,: "Ոսկի և արծաԹ ոչ գոյ
իմ. բայց զոր ունիմն զայս քեզ տամ. յանուն Յիսու-
սի Քրիստոսի արի և գնա,,: Յերկու են ատեն, առա-
քինուԹիւնք և նշանք. առաքինուԹիւն՝ "արծաԹ և
ոսկի ոչ գոյ իմ,,. քանզի առաքինուԹեանն է սրհա-
մարհել զերս, ՚ի բայ ընկենուլ զինչս, քամահել զմեր-
ձակայուԹիւնս. իսկ նշանք՝ յարուցանել զկաղն, ուղ-
ղել զանդամն հաշմեալս: Ունի առաքինուԹիւն և զար-
մանալիք:

Ընդհանօր տեսցուք այսուհետև ՚ի Պետրոս զի պար-
ծի: Օ՛ինչ ասաց, եԹէ սքանչելիս արարաք. և սա-
կայն էր արարեալ յայնժամ զարմանալիս. բայց ոչ ա-
սաց զայս, այլ զ՛ինչ. "Յաւասիկ մեք Թողաք զամենայն
և եկաք զքէն քո,,: Տեսէր զառաքինուԹիւնս սքանչա-
ցեալս և զանստացուածուԹիւնն գովեալ. տեսէր զա-
ռաքինուԹիւնն, միանգամայն և զսքանչելիսն և զվարձն
պսակեալս: Ուր ապա զինչ Քրիստոս. զայն ընկալաւ
և յարգեաց. քանզի ասեմ ձեզ, ասէ, եԹէ դուք որ
Թողէք զտունս և զայլն ամենայն: Ոչ ասաց որք յա-
րուցիք մեռեալս. այլ դուք որ Թողէք զինչս ձեր, նըստ-
ջիք յերկոտասան աԹոռս. և ամենայն որ որ Թողուց
զտացուածս իւր, ՚ի նմին պատուի վայելեսցէ:

Ո՞չ կարես յարուցանել կաղ որպէս Պետրոս. այլ
կարես ասել իբրև զՊետրոս՝ արծաԹ և ոսկի ոչ ու-
նիմ: Այլ եԹէ զայս ասես, մերձ լինիս ՚ի Պետրոս. յա-
ւէտ եԹէ ոչ առնիցես, այլ ասիցես: Ո՞չ կարես զգո-
սացեալ ձեռն բժշկել. այլ կարես զքո ձեռնդ գօսացեալ
յանմարդուԹենէ՝ ձգել մարդասիրուԹեամբ. վասն զի
"Ա՛ի լեզի, ասէ, կարկառել յառնուլ, և տալ կարկա-
ռել,,: Տեսանե՞ս զի ոչ գօսուԹի՞ն կարկամէր ձեռն.
ձգեա այսուհետև զդա մարդասիրուԹեամբ և ողոր-

մուԹեամբ։ Ո՛չ զօրես հանել զևս. այլ արտաքս հան զմեղսն, և մեծամեծ վարձս ընկալցիս։ Ցեսո՛ր զիարդ ամենայն ուրեք առաքինուԹիւն և ուղղուԹիւն յաձախապագն գովուԹիւն ունի և առատագոյն հատուցումն քան զնշանան։

Նոքա ախորժես, և այլևս զսոյս ցուցցուք. մերձեցան առ նա եօԹանասունն աշակերտքն և ուրախանալով ասացին. "Տէր, յանուն քոյ դևք մեզ հնազանդին։ Նա ասէ ցնոսա. մի բերկրիք՝ եԹէ դևք հնազանդին ձեզ, այլ զուարձացարուք զի անուանք ձեր գրեցան յերկինս ,,։ Ցեսանե՞ս ամենայն ուրեք առաքինուԹիւն հրաշացեալ։

Նոքա այսուհետև միաբանեսցուք զասացեալս վերըսոյն։ "Յայսմ ծանիցէն ամենեքեան եԹէ աշակերտք իմ էք, զի սիրեցէք զիրերաս ,,։ Նմա յառաքինուԹենէն և ոչ 'ի նշանացն է ծանօԹուԹիւն աշակերտ լինելոյ։ "Պետրոս, սիրե՞ս զիս առաւել քան զդոսա. հովուեա ոչխարաց իմոց ,,։ Նմա և միւս ևս ծանօԹուԹիւն, և այս դարձեալ յառաքինուԹենէն։ Երրորդ ծանօԹուԹիւն. "Արի ցնծայք եԹէ դևք ձեզ հնազանդին, այլ խնդացէք զի անուանք ձեր գրեալ են յերկինս ,,. և այս դարձեալ առաքինուԹեանն ուղղուԹի։ Կամի և զերրորդ օրինակն այսուիկ ուսանել. "Փայլեսցէ, ասէ, լոյս ձեր առաջի մարդկան, զի տեսցեն զբարի գործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայրն ձեր երկինս ,,. և աստանօր աւասիկ գործք երևին։ Նա յորժամ ասէ դարձեալ "Որ զոք եԹող զտուն կամ զեղբարս կամ զքոյրս, հարիւրապատիկ ընկալցի և զկեանս յաւիտենական ժառանգեսցէ ,,, զառաքինուԹիւն գովէ և զհաւատն վարս։

Ցեսո՛ր ծանօԹացեալս զաշակերտսն սիրելով զմիմեանս, և առաւել քան զառաքեալսն սիրել զԻրիս տոս հովուելով եղբայրսն երևի, և որք պարտին զուարձանալ՝ ոչ զդևս հանելով, այլ 'ի յերկինս գրեցեալ հրամայեաց ուրախ լինել, և որք զձեռ փառաւորեն՝ պայծառ գործովք յուցեալք. որք կենացն հանդիպեցան և հաւիւրապատիկ զայնոսիկ ընկալան, յաղագս զմերձակայս արհամարհելոյ դիպեցան պարգևին։ Նոցա ամենեցուն նմանեալ, և կարես աշակերտս լինել. և որք սիրենն

զՔրիստոս՝ ընդ այնոսիկ հանարեալ լինիս և յերկինս գրիս, և փառաւորել զնա և՛ի յաւիտենական կեանսն վայելել. և ոչ ինչ լինի քեզ խափան առ՛ի պատահել ամենայն բարեաց, ոչ նշանս և եթ առնելով՝ զասացեալ զառաքինութիւնն ունիցիս:

Օ՛ և զնոյն իսկ զանունդ զայդ զՊետրոս ոչ՛ի նշանայ և՛ի հրաշից էառ, այլ՛ի նախանձուէ և՛ի հարազատ սիրոյ. ոչ վասն զի մեռեալ յարոյց և ոչ զկաղ բժշկեաց՝ այնպէս կոչեցաւ, այլ վասն զի հաւատ և հարազատ խոստովանութիւն եցոյց՝ զանունս զայս ժառանգեաց. «Դու ես վէմ և՛ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ»: Ընդէր. ոչ զի սքանչելիս արար՝ այլ զի ասաց «Դու ես Քրիստոսն որդի՝ այ կենդանւոյ»: Ցեսանե՞ս զի և նոյն ինքն Պետրոս կոչել ոչ՛ի զարմանալեացն, այլ՛ի ջերմ նախանձուէն էառ սկիզբն:

Բայց զի զՊետրոս յիշեցի, եմուտ յիս և միւսոյ ևս Պետրոսիս յիշատակ՝ հասարակաց հօրս և վարդապետի. որ զնորա ունելով զառաքինութիւն, ժառանգեաց զնորին աթոռ: Քանզի է մի և այս գերազանցութիւն մերոյ քաղաքիս, զի զգլուխ աշակերտացն ընկալաւ վարդապետ՛ի սկզբանն. վասն զի պարտ և արժանի խակ էր որ նախ քան զամենայն աշխարհ քրիստոնէութեամբ պսակեցաւ, զառաջին առաքելոցն առնուլ հովիւ. բայց առնելով զնա վարդապետ, ոչ իսպառ ընկալաք, այլ ընձեռեցաք Թագաւորականին Հռովմայ. մնանաւանդ թէ իսպառ իսկ ընկալաք. զանարմինն Պետրոսի ոչ ունելով, զՀաւատան նորա ունիմք. զոր օրինակ զՀաւատան սրբոյն Պետրոսի ունելով, զնոյն ինքն զՊետրոս ունիմք: Այնպէս և՛ի նորա նախանձն հայելով, զնա համարիմք տեսանել. զի և զՅովհաննէս Հեղնաս կոչեաց Քրիստոս, իբրև ոչ եթէ Հեղնաս էր Յովհաննէս, այլ զի ոգւով և զօրութեամբ Եղիայի եկն՝ Հեղնաս ասացաւ: Այնպէս և սա, վասն զի՛ի գաւանութիւն և՛ի հաւատն Քրիստոսի մերձ լեալ՝ յիրաւի և անուանն նմին արժանաւոր եղև. քանզի առաքինութեանն ազգակցութիւն և զհաւասարութիւն անուանն առնէ:

Զօրթ եսցուք աւելնեքեան՛ի Պետրոսի ծերութիւնն սմա հասանել, զի և առաքեալն՛ի ծերութեանն ըզկեանս վախճանեաց: «Յորժամ ծերասցիս, ասէ, յայլ

ժամ գօսի ածիցեն քեզ և տարցին ուր ոչ կամեսցիս ...։ Այնդրեսցուք և սմա երկայն ալեւորութիւն, զի սորա եւ կարողութիւնծերութեան զմեր մանկութիւնս մանաւանդ հոգևոր յօրինեալ առնէ, որ լեցի միշտ յառողութեան պահիլ աղօթիւք այծորիկ և այսր պետրոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՍԱԿԱՒՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՑՆԵԼՈՑՆ ԵՒ ՅԱՄՐՈՒԹԻՒՆ ՊԱՀՂՈՍԻ ԿՈՉՄԱՆՆ, ԵՒ ԶԻ ՕԳՏԱԿԱՐԱԳՈՑՆ Ի ԶԿՆԻ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ

Պարտեաք այսոքիկ ներելի, արդեաք այսոքիկ համբերելի. հանապազօր մեր ժողովս ի նուաղութիւն ամփոփի. և լի է քաղաքս մարդկամբ, ունայն է եկեղեցիս ի մարդկանէ. լցեալ հրապարակք և տեսարանք և ձեմարանք, անապատ տունս. մանաւանդ թէ պարտ և արժան իսկ էր զչմարիտն ասել, անապատ է քաղաքս ի մարդկանէ և լի է եկեղեցիս մարդկամբ։ Վասնզի մարդիկ ոչ որ ի հրապարակն՝ է պարտ կոչել, այլ որ յեկեղեցւոջս էք զձեզ. ոչ զնոսա զպղերգսն, այլ զձեզ զիւութեացեալսդ. ոչ զնոսա որք ի յաշխարհականսն բերանաբացեալք են, այլ զձեզ որք զՀոգևորսն քան զաշխարհականսն նախապատիւ արարէք։ Այլ ոչ ոք զմարմին մարդոյ և զձայն ունիցի՝ մարդ իցէ, այլ որ զՀոգի մարդոյ և զսէր ունիցի՝ նա է մարդ։ Իսկ մարդկային անձին ոչ ինչ այնպիսի է նշանակ՝ որպէս սիրելն զնմանայինն բանս. որպէս և ոչ այնպէս անասնական և անբան անձին օրինակ և նշանակ է՝ իբրև արհամարհել զնոյ զբանսն։

Կամիք ուսանել զի որք զնմանայինն լսելութիւնս արհամարհեն, և զմարդութիւն իսկ ի ձեռն արհամարհանայն այնոցիկ կորուսանեն և ի քաջատհմութենէս յայսմանէ արտաքս անկանին. ոչ զիմ բանս ասեմ ձեզ, այլ զմարգարէական ասացուածն պատմեմ՝ որ զիմ բանս հաստատէ. զի տեսջիք որք ոչ նմանայինն բանիցն փափաքեն, և ոչ մարդ լինել կարեն. զի տեսանիցէք եթէ անապատ է ձեր քաղաքս ի մարդկանէ։ Նմանայինն

Յասպիաս, հրաշափառագոյն երևմանդ տեսողն, որ ըզսրովբէից արժանի եղև տեսանել միանգեաւ ի մարմնի եր, որ զիսորհրդական նուագերգութիւնն զայն լուաւ, նա ի քաղաքն Երեից ի մայրաքաղաքն մնեալ ի բազմամարդն Յրուսաղէմ ասեմ, ի մէջ հրապարակին կալ, և ամենայն բազմութիւնն շուրջ զնովաւ կային, կամելով ցուցանել թէ որ ոչն լսէ մարգարէական բանիցն ոչ է մարդ, գոչէր ասելով. "Եկի և ոչ գոյր մարդ. կոչեցի և ոչ ոք էր որ լսէր,,: Այս զի ոչ յաղագս ամպարտութեանն մերձաւորացն, այլ վասն պղերգութեան լսողացն զայն ասէր, ասելովն "Եկի և ոչ գոյր մարդ, կոչեցի և ոչ ոք էր որ լսէր,, ի վերայ էած. որպէս զի մերձ էին ականջք, այլ ոչ համարեալ մծտաւորք, զի մարգարէին ոչ լսէին. յաղագս այնորիկ զի եկն և ոչ գոյր մարդ, կոչեաց և ոչ ոք էր որ լսէր, առ տարերս դարձուցանէր և ասէր. "Լուր երկիր և ունկն դիր,,: Այս, ասէ, առ մարդիկ առաքեցայ որ միտս ունին. այլ զի ոչ բան և ոչ զգայութիւն ունին, վասն այդորիկ որք ոչն ունին զգայութիւն՝ ընդ տարերս խօսիմ, ի բամբասանս՝ որք զգայութեամբն են պատուեալ և ոչ վարին պատուոյն: Այնպէս և միւս մարգարէն ասէ Յրեմիաս. զի և նա ի մէջ բազմութեան Երեից կալով ի նմին քաղաքի, որպէս ոչ ուրեք մերձ եղելոյ այսպէս բարբառէր. "Լնդ որո՞մ խօսեցայց և վկայեցից. անթլփատք են ականջք իւրեանց և ոչ կարեն լսել[1],,:

Լրդ եթէ զորս հուպն էին վասն զի ոչ հայէին հանդերձ փութով ի բանն՝ և ոչ մարդիկ ասացին գոլ մարգարէքն, զինչ արդեօք ասասցուք մեք յաղագս որոց ոչ միայն ոչ լսենն, այլ և ոչ մերձենալ ի քահանայական դրունսն հանդուրժեն. որք մոլորեալք են արտաքոյ ճշմարտին հօտիս այսորիկ, հեռիք ի մայրենի տանէս յայսմանէ՝ ի փողոց և ի հրապարակս իբրև անառակք և ծոյլ մանկունս դեգերին: Օ՛ի և նոքա լքանելով զհայրենի զտունն արտաքոյ թափառին մանկան խաղկօք զբօղոր օրն զբօսանան. յաղագս այնորիկ և յազատութենէն և ի կենացն յաճախակի արտաքս անկանին այնպիսի մանկունքն: Վանզի մանկին ի մարդե-

1 Պակասին տողք 11:

լուզայն և յաւաղակաց ձեռս, և մահու պատիժս բազում՝ անպատ յաղագս Յուլութեանն ընդունին։ Որ նեղուիլ զնոսա՝ ի բաց կապտեն զսակի զարդն, կամ՝ ի հոսանս գետոց հեղձուցանեն, և կամ յորժամ մարդասիրագոյնս ինչ վասն նոցա խորհիցին, յօտար գաւառ տանելով զաղատականն վաճառեն։ Ոչնչացն և սոքա կրեն. վասն զի հեռի՝ ի հայրենի տանէս և՝ ի նորա գնացից մոլորին, պատահեն բերանոց հերձուածողացն և լեզուաց չխմարտութեան թշնամեացն. և ապա իբրև մարդեղութիւնք առնուով զնոսա նոքա, և զսակին զարդ հաւատոյ՝ ի բաց կողոպտելով հեղձուցանեն, վաղվաղակի ոչ՝ ի գեա ընկենուով, այլ՝ ի պղտոր ամբարշտութեանն իւրեանց յաղանդս ընկղմելով։

Այլ ձեր է այսուհետև նախագահութիւն առնել եղբարցն այնոցիկ վրկութեան՝ աճել զնոսա առ մեզ, եթէ ամբոխիցեն և եթէ սատակիցեն յամառական սատակութեամբ և պղերգական կամօք. այլ դուք յարդարեցէք զանկատարութիւն նոցա անձանցն. զինի է՝ որպէս զի լինիցին նոքա մարդիկ։ Օ՜ որ օրինակ որ[1] փուշս և բանջարս ընդ անասունս Ճարակեսցեն՝ ոչ ասեմք մարդիկ զոլ, նոյնպէս և որ զմարդկայինն և որ զյանկագոյնն մարդկան անձինն ատեան զկերակուրն՝ որ յԱծային բանիցն է, և յաշխարհական խաւեքս և յամառակցութիւս լցեալս գարշութեամբ նստիցին և զանօրինութեանց բանս Ճարակեսցեն, ոչ երբեք ասեմք մարդիկ լեալ։ Այլ զարդ ըստ մեզ ոչ միայն որ զհացն ուտէ, այլ որ նախ քան զկերակուրն զայն՝ ի հոգևոր բանիցն Ճաշակիցէ՝ այնպիսին է։ Այս զի նա է մարդ, լուր Տէրհատսի որ ասէ՝ եթէ "Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ՝ ի բերանոյ Աստուծոյ"։ Որպէս զի կրկնակ է մարմնոյս մերոյ կերակուրն, միսն նուազ և միւսն լաւագոյն. և յաղագս այսորիկ յաւէտ խնամակալեցէք, զի և զոգին կերակրել, և մի՛ անտես առնելով զնա հաշեցեք սովով։

Ձեր է այսուհետև առնել մեզ զքաղաքս լի մարդկամբ. բայց վասն զի այժմ անպատ է՝ ի մարդկանէ մեծս այս և բազմամարդ, և իրաւացի է գաւառիս զայս

1 Պահասէր յօրինակին Զոր օրինակ որ. յաւելաք՝ ի յուսէն։

պիսի Հանդամանակս՝ի ներքս բերել, և զեղբարան ձեր ձգել։ Այլ զիա՞րդ զնոսա ձգիցէք արդեօք. եթէ առ տուստ ցնոսա տանիցիք ինչ։ Օ՞ի և՝ի սեզան յայնժամ Հաւանիմք վայելել, ոչ յորժամ զովքն միայն զսեզանն, այլ և յորժամ՝ի կերակրոց նորա որ արտաքոյն են մնացեալ՝ ունիցիմք ինչ ընձեռեալ։ Օ՞այս և դուք արարէք այժմ, և յերկուց մի ամենայն իրօք լինիցի. կամ Հաւանեցուցանէք զնոսա առ մեզ գալ, և կամ եթէ կացցեն մնասցեն՝ի նմին յամառութեան՝ ձերովք լեզուովքդ կերակրեսցին, մանաւանդ եթէ եկեսցեն այսր։ Վասնզի ոչ ախորժեսցեն՝ի շնորհաց կերակրել. այլ զի զայնոսիկ առնէք և արարէք և առնիցէք, յոյժ վստահանամք, և Հաւատամ զի և ես յաձախակի զայս պատուիրելով ոչ նուազեմ. և դուք լցեալ էք ամենայն դիտութեամբ, կարող էք և զկրեսաս խրատել։

Ա՞մէն ես այսուհետև առաջի ձեր դնել զսեզանս մեր զանարգս զայս և զաղքատ. որ թէպէտ և յոլով աչխատութեամբ լի է, սակայն ունի անոյշ կերակուր զձեր լսողացդ զյօժարութիւն և զփափաքումն. քանզի հնչետալի զսեզանն ոչ միայն կերակրոցն պատուականութիւն առնէ, այլ և կոչեցելոցն ցանկութիւն։ Ա՞յսպէս պայծառ սեզանն անարգ երևի, յորժամ ոչ քաղցեալ կամ՝ք առ նա մերձեսցին կոչեցեալքն. նոյնպէս և վատթարն քաղմապատիկ ցուցանի, յորժամ քաղցեալս ընդունիցի զկերոյսն. որպէս եթէ ոք և այլ ազգ զմտաւ ածիցէ եթէ ոչ բնութեամբ կերակրոցն, այլ բաղձանօք կերոյացն քաղմապատիւ սեզանն լինիցի՝ այսպիսի իմն ասէ. "Յանձն յագեալ խորխօք խաղայ, և անձին կարօտեալ՝ գառն քաղցր լինի, քաղցր երևի.,։ Ա՛ն բնութիւն առաջի եդելոցն փոփոխի, այլ փափաքումն կերոյացն գողանայ զգայութիւն։ Այ եթէ գառն քաղցր երևի յաղագս ցանկութեան կոչելոյն, ա՛րդեօք և առաւել նուազս այս քաղմապատիկ երևեսցի։ Ա՛մէն որոյ թէպէտ և մեք վերջին աղքատութեամբ կեցցեմք, սակայն պատուասէր Ձաշատուացն նմանեմք, ըստ իւրաքանչիւր ժողովելոց կոչեմք զձեզ՝ի մեր սեզանս, և առնեմք զայս ոչ՝ի մեր ընտանի Ձխտութիւնս վստահանալով, այլ՝ի ձեր լսելութիւնդ Համարձակիմք։

Ա՛րդ զվերագրին զպատճան զամենայն Հատուցաք ձեզ,

զվերապիրն ասեմ զառաքելական գործոյն. կարգաւոր
է այսուհետև բուռն հարկանելով զկիրքըն գործոց ա-
սելով ձեզ զինչ արդեօք է. "Օ առաջին բանն զոր ա-
բարի յաղագս ամենեցուն, ով Ընտուածասէր, զորոց
սկսաւ Յն առնել և ուսուցանել,,. այլ Պաւղոս ոչ ներէ
մեզ յարմարութեամբ վարիլ կարգիս այսորիկ, առ ինքն
և յիւր ուղղութիւնն զմեր լեզուս կոչելով: Վասնզի
բաղձամ զնա ի Դամասկոս տանելով տեսանել, ոչ եր-
կաթի կապանօք կապեալ, այլ տերունեան ձայնիւն.
փափաքեմ տեսանել որսացեալ զայն ձուկն զմեծ, որ
զամենայն զծովն ամբոխեր և բիւր ալեկոծութիւն ընդ-
դէմ եկեղեցւոյ յարուցանէր. յանկամ զնա տեսանել
որսացեալ ոչ կարթիւ, այլ տերունական բանիւն:

Օ ի զոր օրինակ ձկնորսք ի վերայ բարձր վիմին նըս-
տելով զեղեգն ի վեր համբառնալով ի բարձրաւանդա-
կէ զկարթն ընկենուն ի խորս, նոյնպէս և Վրիստոս
տէր մեր որ եղեալ զՀոգևոր ձկնորսութիւնն իբրև ի բարձ-
բաւանդակ վիմի յերկինս նստելով, զօրէն կարթի զըղ-
ձայն արձակեաց ի վերուստ ասելով. "Սաւուղ Սա-
ւուղ, ընդէ՞ր զիս հալածես,,, այնպէս որսացաւ զձուկն
զայն զմեծ. և որպէս ի ձկանն յայնմ եղև զոր որսա-
ցաւ Պետրոս ըստ հրամանին տեառն, այնպիսի իմն և
աստ գիպեցաւ. և զի այս ձուկն գտաւ սատերս ունե-
լով ի բերան, սատեր անարատ. վասն զի ունէր նա-
խանձ, այլ ոչ գիտութեամբ: Այս յաղագս այնորիկ գի-
տութիւն ընտրհելով նման ՚ՁՁ՚ փորձ և ընտիր արար ըզ-
գահեկանն: Այս որպէս որսացեալ ձկանցն լինի,
նոյն-
պէս և աստ եղև. զոր օրինակ նոքա ի վեր ձգեալք ի
խորոյն վաղվաղակի կուրանան, այնպէս և սա ընդունե-
լով զկարթն և ի վեր ձգեալ արագ կուրացաւ. այլ այն
կուրութիւն զամենայն աշխարհ տեսանող արար: Օ այս
ամենայն տեսանել բաղձամ:

Վասնզի եթէ բարբարոսական պատերազմ ձեզ ի
վերայ հասանէր և ի մարտին պատերազմողքն բիւր վը-
տանգս ընձեռէին, և ապա զօրավար բարբարոսացն որ
բիւր մեքենայիւք մարտնչէր և զամենայն զմեր իրս չփո-
թէր և յոլով տպշնապօք իսկ զբանն ընդյղ, սպառնայր
և զնոյն ինքն զքաղաքն կործանել, և ծառայութիւն մեզ
ի վերայ յարուցանել խրոխտացյր, յանկարծակի ի թա-

զաւրէն մերմէ կապեալ գերի ի քաղաքս մեր մնա-
նէր, ոչ ամենեքեան հանդերձ կանամբք և մանկամբք
ի տեսութիւնն այն ընթանայաք։ Այլ զի և այժմ պա-
տերազմ խմբեցաւ Երկիցն, որք զամենայն ամբոխեն և
շփոթեն և յոլով մեքենայս ի վերայ բերեն եկեղեցւոյ
ամրութեան։ և գլուխ և պատերազմողացն Պաւղոս որ
քան զամենեսեան առնէր մեծամեծս և խօսէր, և զա-
մենայն տագնապեցուցանէր և խռովէր, կապեաց տէր
մեր Յիսուս Քրիստոս թագաւորն, կապեաց և գերի
ի ներքս էած՝ որ զընաւս շփոթէր, եւցուք այսօրհեան
ամենեքեան ի տեսութիւնն յայն, զի տեսանիցեմք զնա
գերի ածեալ։

Օ՛ի և հրեշտակք յայնժամ ի յերկնից տեսանե-
լով զնա կապեալ ի ներքս ածեալ՝ խայտային, ոչ միայն
զի զկապեալն տեսանէին, այլ զի իմանային ոչքանս մաղ-
դիկ հանդերձեալ էր ի կապանաց արձակել Երկնէին.
ոչ զի զձեռանէ ածեալ տեսանէին, այլ զի զնոսա ա-
ծէին ոչքան հանդերձեալ էր նա յերկրէ ի յերկինս
օժանդակելով հանել։ Որպէս աղագաւ զուարճանային,
ոչ զի զկուրացեալն տեսանէին, այլ զի գիտէին թէ որ-
քան հանդերձեալ էր ի խաւարէ արտաքս հանել. քան-
զի երթ, ասէ, ի հեթանոսս, և ազատեսցես զնոսա ի
խաւարէ, և փոփոխեսցես յաղբայութիւն սիրելոյն Որդւոյ։

Ա՛ստն այսորիկ զառաջաբանն Թողլով ի մէջ հասա-
նել ձեպիմք. քանզի Պաւղոս և Պաւղոսի ցանկութիւնն
հարկ արար մեզ վաղել զայսպիսի վազս։ Այերեցեք,
մանաւանդ թէ մի՛ներեցէք, այլ նախանձեցարուք ընդ
այսպիսի սէր։ Օ՛ի որ ի գարշելի ցանկութիւնս ան-
կեալ կացցէ, յիրաւի թողութիւն հայցէ. իսկ որ այն-
պիսի ուժգին ցանկայ, սձնեսցի սիրոյն, և զյոլովս ա-
րասցէ հաւասարորդս փափաքանացն, և բիւր սիրակիցս
պատրաստեսցէ Իւր։ Օ՛ի եթէ էր ի ձանապարհս ի
գնալ և գործով յառաջանալ, զառաջինն ասելով և ի
միջինսն ժամանել, ոչ արդեօք զսկիզբն Թողեալ վազ-
վաղակի ի միջոցն գայաք. վասն զի հարցն օրէնքն հրա-
մայեն զինի յիմանակին ի բաց դնել զլիս զայս, և ի
կատարածի ածնիս այսորիկ՝ վախճանի և գրոցս այսորիկ
ընթերցուած, երկեայ մի գուցէ յառաջաբանին դե-
զերելով մեք և յերկարելով՝ զանց առնիցէ զմեօք պատ-

մուԹեանն յարմարուԹիւն։ Յաղագս այսորիկ զընԹացս
'ի սկզբանն 'ի միջոց ձեռնարկել առնեմք, բուռն Կարկա-
նելով զկղզեան պատմուԹենէն. և իբրև զգլուխ յե-
տուստ կողմանէ ունիմք զառաջաբան պատմուԹեանս
լուծանել, և կալ ինալ ձեզ 'ի սկզբանն Ճանապարհիդ։
Վանզի պատմուԹեան գլուխ սկսանելով, վատահանամ
այսուհետեւ ընդ ամենայն իսկ անցանել, ԹեպԷտ և
տօնս անցցէ։ Ոչ ոք զմեզ տարաժամուԹեամբ կա-
րասցէ սոգտանել. ԿարկաւորուԹիւն կարգիս 'ի բամ
բասանաց տարաժամուԹեան ազատեսցէ զմեզ. վասն
այնորիկ յառաջաբանէն 'ի միջս ընԹացաք։ Ո՛չ ոչ Ճա-
նապարհաւ գնալ առ Պաւղոս գալ, այլ զանց առնելին
զմերով լեզուաւ գիրքս և զգրուանս փակելին, 'ի նմին իսկ
'ի յառաջաբանէս արարիչ յայտ, ԹեպԷտ և արդէն
իսկ եղև երևելի։

Ո՛չ եԹէ զվերապէրն միայն ձեզ ընԹեռնլով և առ-
նելով կէս տօնիս Էանց, եԹէ 'ի խորս նորին իսկ գրոցն
յառաջաբանէն սկիզբն առնիցեմք և զբանն ընդարձա-
կելով ձեռնարկիցեմք, մրքան ժամանակս ծախիցեմք
մինչև ժամանեսցուք 'ի Պաւղոսի պատմուԹիւն. մանա-
ւանդ եԹէ 'ի նմին իսկ յառաջաբանէն յայտնի առնել
ձեզ Կարկեցայց զայս։ "Ո՛ առաջին բանն արարի վասն
ամենեցուն, ով Թէոփիլոս,, ։ Վանզի ինչ կարծէք
ասասնօր խնդիրս։ Նախ առաջին էր յիշեցուցանել, և
հիմ աղագաւ զառաջինն գիրսն. երկրորդ ընդդէր բան կո-
չէ և ոչ աւետարան. և սակայն Պաւղոս զնա աւետա-
բան կոչէ այսպէս ասելով. "Որոց գովուԹիւնն յաւե-
տարանին յամենայն եկեղեցիսն,,. յաղագս Պ ուկայ
ասէ. երրորդ վասն էր ասէ "յաղագս ամենայնի զոր
արար Ցիսուս,,։ Վանզի եԹէ Յովհաննէս սիրելին
Ցիսուսի որ այնքան վայելեաց ՀամարձակուԹիւնս,
որ 'ի վերայ սուրբ լանջացն Նորա արժանի եղև անկա-
նել, որ անդուստ ընկալաւ զաղբիւրս Հոգւոյն, ոչ իշ-
խեաց զայս ասել, այլ այնքան վարի զգուշուԹեամբ ա-
սէ "Ո՛չ եԹէ զամենայն զոր արար Ցիսուս՝ գրեալ
էր, կարծեմ ԹԷ և ոչ աշխարհս տանէր զգրեալ գիրսն,,
զինքդ իշխեաց ասել եԹէ զառաջինն բանն զոր արարն
յաղագս ամենեցուն, ով Թէոփիլոս, զոր արար Յի-
սուս զինչ արդեօք ձեզ Թուիցի խնդրելիս այս։ Այս անդ

ասէ՝ զօրաւոր Աստուածասէրդ, Հանդերձ գովուԹիւ զա-
նուն. իսկ ասա պարզաբար՝ ով Աստուածասէր, մերկ
զանուն առանց գովուԹեան ասէ. զի և ոչ վայրապար ՚ի
սրբոյն ասի: Այլ Թուի ինձ ԹԷ և զայս մանաւանդապէս
ինչ ցուցաք, զի և ոչ դիր մի և նշան վայրապար ինչ կա-
ցեալ ՚ի գիրս ե տեսանել:

Աղդ եԹէ յառաջաբանին այն խնդիրք գտանին, մր-
քան ինչ ժամանակս Հանդերձեալք էաք ծախել ՚ի կար-
դի զամենայն ասել: Ոմն որոյ այս էր Հարկաւորու-
Թիւնն՝ Թողլով զմիջոցն և զանց արարեալ՝ առ Պաւ-
ղոս գալ: Այնդիր և զխնդիրսն ասելով՝ զուծմանն ՚ի
վերայ ոչ բերաք. սովորեցուցանել զձեզ կամիմք մի յա-
րաժամ ծամեալ ընդունել զկերակուրն, այլ յաճախա-
կի և ձեզ ՚ի վերայ ածել զուծումն խնամատիցն, զոր առ-
նեն աղաւնիք: Վանզի և նոքա զձագն մինչդեռ տա-
կաւին Լս ՚ի բոյնն կայցեն մնայցեն, բերանով[1] իւրեանց
մնուցանեն. իսկ յորժամ կամիցին զնոսա արտաքս Հա-
նել ՚ի բունոյն, և տեսցեն զԹևս Հաստատեալս, ոչ Լս
այնուհետև նոյնպէս առնեն, այլ բերեն զՀասն բերա-
նով և ցուցանեն, որպէս զի ինքեանք զինքեանս կերակ-
րեսցեն. և յորժամ ձեռօքն վստահանան մերձ եր-
Թալով առնուլ, մարքն Թողլով զկերակուրն յատակն
ընկենուն, նոցա հրամայեն ժողովել. նոյնպէս և մեք
առնեմք, առնլով զՀոգևոր կերակուրն ՚ի բերան՝ կոչե-
ցաք զձեզ որպէս ցուցաքդ ձեզ ըստ սովորուԹեան ըզ-
լուծումն. իսկ յորժամ մերձեցայք և վստահանայիք
ընդունել զբանն, Թողաք զի դուք ձեզէն իսկ Հաւա-
տասջիք զնմանսն:

Ոմն այնորիկ զյառաջաբանն Թողլով՝ առ Պաւղոս
Հեղինէ. և ասեմք ոչ որքան օգտեաց զեկեղեցի, այլ
և որքան վնասեաց. քանզի կարևոր է և այս բան: Ա-
սեմք որքան մարտեաւ ընդ բանի քարոզուԹեանն, որ-
քան պատերազմեցաւ ընդ Քրիստոսի, զիարդ Հալա-
ծեաց զառաքեալսն, որպէս զպատերազմողացն խորհէր,
զիարդ քան զամենեսեան յաճախագոյն ընձեռեալ տագ-
նապ եկեղեցւոյ:

Այլ մի՛ որ ամաչեսցէ լսելով զայսոսիկ յաղագս Պաւ-
ղոսի. քանզի ոչ են նման բամբասանք, այլ գովուԹեայ

1 Պակասէր յօրէն. Բերանով իւրեանց մնուցանեն. յաւելաւ ՚ի յունէն:

պատճառք. չարախօսութիւն ոչ է, որ յառաջագոյն չար է և զկնի լինիցի պիտանացու. այլ յառաջագոյն փոքր լինելով, զկնի եթէ փոխոխեցի ՚ի չարութիւն. վասն զի ՚ի վախճանին միշտ ամենայն իրօք դատեալ լինիմ։ Օ՜ի և նաւուղիդք եթէ ՚ի բիւր նաւաբեկութեց զերծանիմ, և յորժամ կամիցին ՚ի նաւահանգիստն դիմել հանդերձ բեռամբ լցեալ՝ զնաւն խորտակիցեն, ոչ ասեմք բարւոք գործունեայս՝ ծածկելով զանցեալսն ամենայն վախճանին. և ըմբիշք դարձեալ եթէ բիւր անգամ յառաջագոյն պարտեսցին, և յորժամ յաղագս պսակացն իցէ մրցումն և զօրասցին, ոչ զրկեմք ՚ի գովութեանցն որ ՚ի յաղթութեան յաղագս առաջնոյ իրացն։ Նոյնպէս և Պաւղոսի արասցուք, քանզի և նա բիւր նաւաբեկութեանց համբերեաց. բայց յորժամ ՚ի նաւահանգիստն կամէր մտանել, լցեալ բեռամբ ՚ի ներքս էած զնաւն։ Իւր զոր օրինակ Յուդաս ոչ ինչ օգտեցաւ որ յառաջագոյն աշակերտն էր և յետոյ մատնիչ եղև, նոյնպէս և սա ոչ ինչ վնասեցաւ յառաջ հաւածելովն և զկնի այնորիկ եղև աւետարանիչ։

Կատարելութիւնք են այսոքիկ Պաւղոսի. ոչ զի կործանեաց զեկեղեցի, այլ զի ինքն գործեալ չինեաց. և ոչ զի հաստատեաց զբանն, այլ զի յողդողդելով զնա ինքն դարձեալ ամրեցոյց. ոչ վասն զի պատերազմեցաւ ընդ առաքեալսն, այլ զի մարտուցեալ ընդ առաքեալսն յառաջագոյն՝ առաւել քան զնոսա աշխատեցաւ զկնի. և ոչ զի օգտեաց զՀօտն, այլ յետոյ պաշտպանեաց նմա։ Օ՜ինչ քան զայս հրաշափառագոյն լինիցի արդեօք։ Եւ գայն լինելր Կուիւս. որ զարիւն ոչխարացն ըմպեր, ոչ նաւազեաց զարիւնն հեղուլ յաղագս ոչխարացն փըրկութեան։ Խորժէս ուսանել զիարդ զարիւն ոչխարացն էալը, ՚ի պէս շաղախեալ յարեանն էր լեզու նորա. “Իսկ Պաւղոս, ասէ, տակաւին փքեալը սպառնալեօք և սպանմամբ աշակերտացն տեառնն,,։ Իսկ նոյն որ սպառնամբ և սպանութեամբ ամբառնայր և զարիւն սրբոյն հեղոյր, լուր զիարդ զարիւնն եհեղ յաղագս սրբոյն. “Օ՜ի ընդ մարդոյ, ասէ, դազանաձոր տեցայ Յիսուս,,. և դարձեալ. “Հանապազօր մեռանիմ,,. և դարձեալ. “Համարեցաք որպէս զոչխար ՚ի սպանումն,,։ Իւր զոյս ասէր որ մերձն կայր յորժամ

հեղեալ լինէր արիւնն Ստեփաննոսի, և հաճոյակից էր սպանման նորա։ Յետոյ զիարդ գայլն հովիւ եղև։

Մի այսուհետեւ ամաչեցէք՝ լսելով եթէ յառաջադոյն հալածիչ էր և հայհոյիչ և լուտացող. տեսէք զիարդ մեծագոյնն նման զգուշութիւնն արար առաջինն չարաբաստութիւնն։ Ոչ ասէի ձեզ յառաջին ժողովն՝ եթէ որ նախ քան զխաչն եղէն նշանք, զկնի խաչին մեծագոյնք և եղէն. ոչ յուցի ձեզ ի նշանացն և ի բարեմասութէ աշակերտացն. և զիաւրդ յառաջադոյն Պրիստոս հրամայեալ յարուցանէր զմեռեալս, իսկ յետոյ և հովանի ծառայից նորա զնոյն առնէր. զիաւրդ յայնժամ ինքն աբանչելագործէր, զկնի ծառայք նորա անուամբ նորին վերացեալ մեծամեծ և առնէին. ոչ ասացի ձեզ յաղագս Թէհնամեացն՝ զիաւրդ զրգուեցոյց զնոցա զիտութէնն, որպէս կալան զաշխարհ ամենայն, զիաւրդ մեծամեծ նշանք զկնի խաչին էին քան յառաջադոյն քան զխաչն. եղբայր նորին և սա է՝ որ այսօր ի ներքս եմուտ քանն։

Ապա զի զինչ քան զՊաւղոս մեծագոյն նշանք եղև. կենդանի զնա Պետրոս ուրացաւ. իսկ մեռեալ Պաւղոս դաւանեցաւ, և մեռեալս յարոյց։ Ամէն քան զերիս նշանս եւս առաւելագոյն էր զՊաւղոսի բարսն գիտել և ի բաց բառնալ. վասն զի անդ բնութէնս յարմարեալ լինէր, և ոչ ինչ հակառակ կայր հրամանատուին. իսկ աստ յօժարամտութէնն էր հաւանելոյ և ոչ հաւանելոյ տէր. ուստի յաւէտ զօրութիւն քան զյառնէլն յուցանի։ Ապա զի քան զբնութէնն ուղղէ մեծագոյն և վեհագոյն ուրեմն քան զայլ ամենայն նշանս եղև Պաւղոսի հնազանդէլն Պրիստոսի զկնի խաչին և գերեզմանին. զի և նորին իսկ աղագաւ ներեաց Պրիստոս զամենայն թէհնամութէնն յուցանել, և յայնժամ կոչեաց որպէս անբամբաս արասցէ զզօրութեանն իւրոյ զգոյշ և զվարդապետութեանն բան։

Վանզի Պետրոս յաղագս նորա ասելով՝ թերևս կարծեցեալ լինէր, որում էր ինչ ոք արդեօք յանամբիծին ասել. զըրբացելոյն ասեմ, զի և անդ յայտնագոյն և ես յոյգքն։ Նա յիրաւի իսկ զնա ուրացաւ հանդերձ երդմամբ. այլ սակայն զնոյն զնա խոստովանեալով զկնի, և զանձն իւր ի վերայ նորա եդ։ Արդ եթէ ոչ էր յարուցեալ, ոչ արդեօք զկենդանին ուրանալով յետոյ յա-

զապս ոչ ուրանալոյ բիւր մահուց համբերելը. վասն որոյ և Պետրոսի յայտնի են ցոյցք յարուԹեանն։ Այլ սա կայն զնմանէ Թերևս ունելին ինչ ասել անամենեքին, վասն զի աշակերտ նորա էր, զի և՝ ի սեղանն հաղորդեցաւ ընդ նմա, և զերիս ամն շրջեցաւ ընդ նմա, և՝ ի վարդապետուԹիւնն վայելեաց, և փաղաքշեալ՝ ի նմանէ սպասեցաւ, յաղագս այնորիկ զյարուԹիւն նորա քարոզէր։

Իսկ յորժամ զՊաւղոս տեսցես որ ոչ գիտէը զնա, որ ոչ լուաւ՝ ի նմանէ և ոչ հաղորդ վարդապետուԹենն նորա եղև, և զինի խաչին պատերազմէր և ընդ նմա և սպանանէր զհաւատացեալսն՝ ի նա, որ զամենայն ամբոխէր և խռովեցուցանէր, յանկարծակի փոփոխեալ և քարոզուԹեանն վաստակօք զամենայն Քրիստոսի սիրելովք զանց առնէր, զինչ ունիցիս այսու հետև լրբուԹեան պատճառս, ասա ինձ, անհաւատալով յարուԹեանն բանի։ Վանզի եԹէ ոչ յարեաւ Քրիստոս, ո՞ քան զայն զխաչն և զանմարդին զպատերազմինն և զվայրենացեալն ձգեաց և առ ինքն կած։

Այսա ինձ, ով հրեայ, ո՞ զՊաւղոս հաւանեցոյց գալ առ Քրիստոս. Պետրո՞ս, այլ Յակոբո՞ս, այլ Յովհա՞նէս. այլ օգնա ամենայն զարհուրեալ՝ ի նմանէ և սարսափելին, և ոչ յառաջագոյն միայն, այլ և յորժամ սիրելին եղև, և Խառնաբայ առեալ զձեռանէ կած յաւրսաղէմ, երկնչէին տակաւին հալել՝ ի նա. պատերազմի լուծեալ լինէր, բայց երկիւղն դեռ ևս կայր մեծապէս յաղագս նորա։ Այդ եԹէ՝ ի հաշտուԹեանն տակաւին երկնչէին՝ ի նմանէ, զիա՞րդ հաւանեցուցին զնա. քանզի հալել և մօտ կալ և բանալ զբերան և կամ երևել իսկ ամենևին ոչ հանդուրժէին։

Այլ ոչ են այսոքիկ, ոչ են, ոչ մարդկային փութոյ էին լեալ իրքն, այլ ածային ընտրէին։ ԱյեԹէ մեռեալ էր Քրիստոս, որպէս ասէիր, և երեԹեալ աշակերտքն զողային զնա, զիա՞րդ մեծապոյն ևս նշանք եղեն զինի խաչին, զիա՞րդ առաւել ցոյցք զօրուԹեն եղեն։ Օ՛ի ոչ միայն փոփոխեաց զպատերազմինն և զառաջնորդն ձերոյ կռուոյն. և սակայն զայն միայն ԹէՀ արար, մեծի զօրուԹէր զպատերազմինն և զձշնամին առնուլ գերի. իսկ այժմ ոչ զայն ևԹէ գործեաց, այլ և յաւէտ մեծապոյս քան

զնոյն։ Ո՛չ միայն փոփոխեաց զնա, այլ զի և այնպէս փոփոխեաց, այնպէս ընտանի արար, այնպէս ձգեաց ի բարեմտութիւնն իւր, մինչ զի զամենայն իսկ նման ընձեռեաց. քանզի "Նշոյլ ընտրութեան է ինձ նա՝ բառնալ զանուն իմ առաջի հեթանոսաց և թագաւորաց"։ և առաւել քան զառաքեալն հաւանեցոյց զամենեսեան վաստակել յաղագս եկեղեցւոյ որ յառաջագոյն ի նմանէ պատերազմեալ լինէր։

Կամիս ուսանել զիարդ զնա փոփոխեաց, որպէս ընտանեցոյց, զիարդ զնա ձգեաց, որպէս յառաջին սիրելիսն հաճարեցաւ. ոչ ումեք այնքան ի մարդկանէ վստահացաւ ասել զանձնառելիսն, որքան Պաւղոսի։ Նա ուստի է այս յայտ. "Լուայ բանս անձառս, ասէ, զոր ոչ է արժան մարդոյ խօսել"։ Ցեսէր զԵկնամին զպատերազմն որքան բարեմտութիւն եցոյց. յաղագս այսորիկ հարկաւոր էր և զառաջին վարսն նորա ասել, վասն զի զայ զօրութիւնն և զմարդասիրութիւն ցուցանեն մեզ։ Ո՛մարդասիրութիւն՝ զի կամեցաւ որ այնքան չարիս գործեաց՝ փրկել և առ ինքն ձգել, և զզօրութիւնն՝ զի ախտաժելով զօրեաց. և զՊաւղոսի զանձն այսոքիկ ցուցանեն մեզ՝ եթէ ոչ ինչ յաղագս ստահակութեան առնէր, և ոչ մարդկային կարեօք ըմբռնեաւ իբրև զՊրեայսն. այլ նախանձու ջեռեալ՝ և ոչ զօրզղակի; այլ սակայն նախանձու, զոր և ինքն գոչելով ասէր՝ թէ "Ոչ ան այնօրիկ ողորմութեան դիպեցայ, զի անգիտանալով արարի և անհաւատութեամբ"։ և ընդ այ մարդասիրութիւնն հիանալով ասէր. "Ո՛չ յիս նախ առաջին ցուցցէ զամենայն երկայնմտութիւն յօրինակ հանդերձելոցն հաւատալ ի նա ի կեանսն յաւիտենականս"։ և այլուր դարձեալ ասէր՝ եթէ "Ո՛չ գործ զօրութեանն նորա զոր մնաւանդ եցոյց ի մեզ հաւատացեալս"։

Ցեսէր զիարդ զմարդասիրութիւնն ցուցին զնա և զզօրութիւնն և զիւրոյ բարուցն զնշանութիւն առաջին վարքն Պաւղոսի։ Ո՛նոյն և գաղատացաւոյն գրելով ի վկայութիւն էած. զի ոչ մարդով փոփոխեցաւ, այլ աստուածային զօրութեամբն։ "Եթէ մարդկան հաճոյ լինէի, ասէ, Քրիստոսի ծառայ ոչ արդեօք էի"։ Նա ուստի է յայտ եթէ ոչ մարդկան հաճոյ լինելով ի քարոզութիւնն փոփոխեցաւ. "Լուայք, ասէ, զիմ զգը-

նայն որ երբեմն ՚ի հրէութեանն, զի ըստ առաւելու-
թեան հալածիչի զեկեղեցին և կործանիչի զնա ,, : Եւ
արդեօք եթէ մարդկան հանդերձեալ էր հաճոյ լինել,
փոխանակ էր ՚ի հաւատն : Ապա այսորիկ և պատիւ
ունէր ՚ի Հրէից, և ՚ի բազում իշխանութեան վայե-
լէր և նախագահութեան էր արժանաւոր . ոչ արդեօք
՚ի վտանգաւոր կեանն գայր առաքելոցն որ Հայհոյու-
թեամբ լինէին և թշնամութեամբ . որպէս զի այն յան-
կարծակի փոխիսուն և այլայլութիւն Պողոսի զՀրէից
պատիւն , զառանց պատերազմի կեանն փոխոխել ընդ
առաքելոցն կենաց՝ որ բիւր մահուանս ունէր , մե՛ծ եղեն
ցոյցք՝ ոչ յաղագս մարդկային ինչ պատճառանաց փո-
խեցաւ Պաւղոս : Ապա այսորիկ և մեք ախորժեցաք
զառաջին վարսն նորա ՚ի մէջ ածել և ցուցանել զնորա
հրացեալ նախանձն հակառակ եկեղեցւոյ . զի յորժամ
տեսցես զյաւէտ յօժարութիւնն յաղագս եկեղեցւոյ ,
աքանչասցիս ընդ արարիչն ամենեցուն և փոխոխիչն Աստ :
Այրին աղագաւ և աշակերտաց Պաւղոսի զառաջին մեղ
հաւատառեաւ կազմեաց և յորով յայտնութեամբ, այս-
պէս ասելով . “ Իսկ Պաւղոս տակաւին փքայր սպառնա-
լով և սպանմամբ աշակերտացն ,, :

Կամիմ ես սկսանել զյառաջաբանն այսօր , ախորժիմ
արկանել զիս ՚ի սկիզբն միայն պատմութեանն . այլ զմե-
տաւ ածի որքան վաղվաղակի մեզ շարժեալ լինիմ խոն-
դիրքն . զՊաւղոս զանունս զայս ՚ի Թուղթս այլ ինն ա-
նունն տեսանեմք գրեալ . “ Պաւղոս ծառայ Յի՛ Քրիս-
տոսի կոչեցեալ առաքեալ , և Տոքթենէս . Պաւղոս կո-
չեցեալ առաքեալ . Ի՛նա ես Պաւղոս ասեմ ձեզ ,, . այժմ
ախորժելով Պաւղոս և ամենայն ուրեք Պաւղոս կոչի :
Ընդէր արդեօք Սաւղոս և զինի այնորիկ Պաւղոս կոչե-
ցաւ : Եւ ե՛ս լուկ խնդիրս , քանզի ՚ի Պետրոս ընթանայ .
զի նա յառաջագոյն Սիմոնն էր կոչեցեալ , և զինի այ-
նորիկ անուանեցաւ Կեփաս . և որդիքն Ովբեդեայ Յա-
կովբոս և Յովհաննէս՝ որդիք որոտման փոխոխեալ ա-
նուանեցան : Ի՛նչ ոչ ՚ի նորում միայն , այլ և ՚ի հնումն
պատեմք զԱբրահամ յառաջ Աբրամ ասացեալ , և
զինի Աբրահամ. և Յակոբն նախ Յակոբն էր կոչե-
ցեալ , և յետ այնորիկ Իսրայէլ. և Սաւա յառաջա-
գոյն Սարա ասացեալ լինէր , և ապա Սաւա . և բա-

զուտ խնդիրս ընձեռէ մեզ անուանցս փոխադրութիւն, զոր երկեայ մի գուցէ բազում հոսանս գետոց յանկարծակի արձակելով հեղձուցից զվարդապետութեես քան։

Օ՛ի զոր օրինակ զերկիր որ խնաւութիւն ունի, ուր և փորեսցէ ոք՝ աղբիւրք ամենայն ուստեք բղխեն, նոյնպէս և յանդաստանի ՅԾայինն գրոց ուր և փորեցեաւ՝ գետս եղեալս տեսցես ամենայն ուստեք. զամենեսեան զայսոսիկ զուգիս Թողուլ այսօր ոչ սուղ ինչ հարկաւոր է։ Յաղագս որոյ Թողուլով զմեր հոսանս, արձակեմ զձեր սերդ առ ՅԾայինն աղբիւրն նախաԹուացս այսոցիկ և վարդապետացդ՝ ի մաքուրս յայս և յըմպելի և ի քաղցր ջուր, որ ի նմին իսկ գայ յիմանալի վիմէն։ Պատրաստեսցուք այսուհետև զմիտս մեր յընդունելութիւն վարդապետութեանս և արբցուք զհոգեւոր ջուրն։ Լեսի մեզ աղբիւր ջրոյ խաղացելոյ ի կեանս յաւիտենական. որում լեսի մեզ հանդիպել ջնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում փառք հօր հանդերձ սուրբ հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՅԱՂԱԳՍ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ, ԵՒ Ի ԲԱՆՍ ԱՌԱՔԵԼՈՑՆ «ԵԹԷ ՊԱՏՃԱՌԱՆՍՕՔ ԵՒ ԵԹԷ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԳՐԻՍՏՈՍ ԳԱՐՈՁԻ»

Օ՛վարիսեցին և զմաքսաւորն յիշեցաք յառաջագոյն, և երկուս կաս բանիս լծեալ յառաքինութենէ և ի չարութենէն զիւրաքանչիւր որ ցուցաք որքան ի խնարհութենէն շահ և որքան յամբարտաւանութենէն վնաս։ Այն արդարութիւն եր զգեցեալ, և զպահս և զտառապանորդս ոչ պակասեցոյց. և միւսն ընդ անիրաւութիւն լծակցեալ յառաջագոյն ժամանեաց քան զփարիսեցւոյն լծակցութիւնն, Թէպէտ և զերասանակալն ուներ վաստ արագոյն։ Այնպէս զինչ քան զմաքսաւորն է վաստ արագոյն. այլ սակայն զի խորտակեաց զիւր զանձն և մեղաւոր զինքն կոչեաց, գերազանցեաց քան զփարիսեցին՝ որ զպահսն ասէր ունել և զտառապանորդս և յամենայն չարութենէ չի բաց վճարումն։ Այնդէր արդեօք. զի Թէպէտ և յաւելաստացութենէ և ի

յափշտակութենէ էր ազատ, այլ զմայրն չարեաց ամենեցուն զամբարտաւանութիւնն և զբարձրավզութիւնն ունէր արմատացեալ յոգւոջն։ Յաղագս այնորիկ և Պաւղոս աղաղակէ և ասէ. "Խրատեսջիւր որ զգործ իւր փորձեսցէ, և յայնժամ ապա յինքն միայն զպարծանսն կալցի և ոչ յընկերն.,։ Իսկ նա ընդ ամենայն երկիր անցանելով եկաց 'ի մէջ, և քան զամենայն մարդիկ վինքն ասէր լաւագոյն. որ Թէպէտ և քան զտասն միայն և կամ քան զհինգ և կամ քան զերկուս և կամ զմի վինքն առաջի դնէր, և ոչ այն էր ներելն. իսկ սա այժմ ոչ միայն առաջի եղ քան զաշխարհ, այլ և ամբաստանեաց և զամենեցուն, յաղագս այնորիկ վերջացաւ յընթացսն։ Ձե զոր օրինակ նաև որ 'ի բիւր ձմեռնային մրրկաց փախչիցէ և ապա 'ի նմին իսկ 'ի բերան նաւահանգստին յանձաւի ուրեք խորտակեալ՝ զամենայն որ 'ի նմա կայցէ գանձն կորուսանէ, նոյնպէս և փարիսեցին այն վտանգից պահօղն համբերութեաց և այլոցն ամենեցուն առաքինութեանց, այլ զի զլեզուն ոչ արգել 'ի նմին 'ի նաւահանգստին ընդ նաւաբեկութեամբ անկաւ։ Ա՝ան զի յաղթիչն յորոց շահել էր պարտ և ալժան, այնքան վնասեալ 'ի բաց գնալ ոչ այլ ինչ էր, քան եթէ նաւաբեկութիւն ընդունել։

Օ այսոսիկ գիտելով, սիրելիք, Թէպէտ և 'ի նոյն ինքն 'ի գագաթն առաքինութեան 'ի վեր ելանիցեմք, քան զամենեսեան զանձինս վերջինս վարկցուք, ուսեալք զի և 'ի նոցունց իսկ յերկնից ամբարտաւանութիւնն կարէ 'ի վայր ընկենուլ զոչ զգուշացեալսն, և 'ի նմին 'ի խորոց մեղացն 'ի վեր հանել 'ի բարձունս զօրէ խոնարհութիւնն որ զինքն նուաստացուցանել գիտէ։ Ձա առաջին քան զփարիսեցին զմաքսաւորն կացոյց. իսկ միւսն ևս՝ զբարձրավզութիւնն ասեմ և զամբարտաւանութիւն՝ անմարմնական զօրութեանցն յաղթեաց բանսարկուին։ Խոնարհութիւն և իւրոց մեղացն ծանօթութիւն 'ի դրախտն զաւազակին եմոյծ նախ քան զառաքեալսն։ Ձե եթէ որք զիւրեանց զմեղսն խոստովանին՝ այնքան ինքեանց ամբարեն զհամարձակութիւն, որք յոլով զանձանց գիտիցեն զբարիս և նուաստացուցանեն զանձինս իւրեանց՝ ոչքան պսակաց ոչ հանդիպեսցին։ Օ՛ւ եթէ յորժամ մեղք զգեցեալ իցեն ըզ-

խոնարհութիւն՝ և այսպէս դիւրաւ ընթանայ, մինչ զի զարդարութեամբն որ զամբարտաւանութիւնն ունի՝ յաւաչէ և զերազանցէ, իսկ եթէ ընդ արդարութեանն զնա միաւորեսցես՝ ոչ ոչ հասանիցէ, ընդ որ երկինս ոչ անցանիցէ, և առ նմին ինքն կայցէ առ ամենեցունն ոյ աթոռոյն՝ի մէջ հրեշտակացն հանդերձ բազում հանճարակութեամբ։ Վարձեալ եթէ ընդ արդարութեան ամբարտաւանութիւն լծակցեսցի, իւրով սաստկացեալ ծանրութեամբն՝ի վայր ձգել զնորա համարձակութիւնն զօրէ. և եթէ ընդ մեղացն և ս իցէ շաղեալ, ոչբան՝ի վայր արկանել կարիցէ՝ի գետնեան որք ունինն զնա։

Օ այսոսիկ ասեմ ոչ զի անփոյթ առնիցեմք զարդարութենէ, այլ զի փախչիցիմք յամբարհաւաճութենէն. ոչ զի մեղեցուք, այլ զի չափաւորեսցուք զանձինս։ Վ ասն զի հիմն է մերոյ խնամատարութեանս խոնարհութիւնն. Թէպէտ և բիւր՝ի վերայ չինեսցես եթէ ողորմութիւն, եթէ աղօթք, եթէ պահս, եթէ զամենայն առաքինութիւնս, և նա ոչ իցէ՝ի ստորև անկեալ, ամենայն անոտի և ընդունայն գտանի, և կործանի դիւրաւ ըստ այմ չինուածոյ որ՝ի վերայ աւազոյն ունէր զհիմնն։ Վանզի ոչ ինչ է և ոչ մի՝ի մերոց ուղղութեանցն որ ոչ նմա կարօտանայ, և ոչ ինչ է որ առանց նորա կալ կարէ. այլ եթէ զպարկեշտութիւն ասիցես, եթէ զկուսութի, եթէ զընչից արհամարհանս, և եթէ զինչ և իցէ, ամենայն անմաքուր պիղծ և գարշելի է՝ խոնարհութեանն՝ի բաց եղելոյ։ Վրդ ամենայն ուրեք զնա մերձ առցուք բանիւք և իրօք և խորհրդովք, և հանդերձ նուաւ զամենայն չինեսցուք։

Վայլ յաղագս խոնարհամտութեան բաւական ասացաւ, Թէպէտ և ոչ արժանաւոր նորա ուղղութեանցն, զի և ոչ ոք իսկ ըստ արժանաւորութեանն գովել զնա կարացէ, այլ առ իմաստութիւն ձերոյ սիրոյդ ասացի։ Վ ասն զի քաջ գիտեմ զի և՝ի սակաւուց ասացելոցն հանդերձ յոլով փութով զնա ձգեք։ Վայց զի հարկաւոր է և զառաքելական Ճառն զայսր աւուր ընթերցեալն, որ բազմաց ընձեռել կարծեն պղերգութեան պատճառս, առնել երևելի և յայտնի, զի մի՛ ցուրտ ինչ պատասխանիս փրկութեան անտի շահեսցին իւրեանց ուղղութեան, բեր և զայն ասացուած՝ի մէջ աՃցուք. “Վ-

թէ պատճառանօք և եթէ չհամարտութեամբ Քրիստոս քարոզի ։։ Այս յոլովք յերջանկեցին վայրապսպը, և որպէս դէպ է՝ ոչ զյառաջագոյնն և ոչ որ ըզկինին է ընթեռնուլ, այլ՝ի յարմարութենէ այլոց անդամոյն՝ի բաց Հատանեն, ՚ի սատակումն իւրեանց անձանց յուլացելոցն առաջի արկանեն։ Ա ման զի յանդգնին զնոսա յառողջ հաւատոյն արտաքս Հանել, և ապա տեսանել զարհուրեալս և զողացեալս, եթէ ոչ է առանց վտանգի զայն առնել. և կամելով զերկիւղն նորա լուծանել՝ զառաքելական զսաստուածս զայս՝ի մէջ ածեն ասելով. “Եթէ պատճառանօք, եթէ չհամարտութեամբ, միայն Քրիստոս քարոզեսցի ։։ Այլ քարոզի և յաւէտ միշտ սորա և նորա. քանզի ասէն քարոզեսցի՝ օրինադրի է, իսկ ասէն քարոզի՝ չհանդիպեաւն պատմէ։ Այս զի ոչ օրինադրէ Պաւղոս հերձուածս ինչ լինել, այլ՝ի բաց տանի զամենեսեան որք Հայհոյն յայսպիսի իրս, լուր զինչ ասէն. “Եթէ ոք ձեզ աւետարանեսցէ քան զոր առէքն, նզովեալ լիցի եթէ ես, եթէ հրեշտակ յերկնից ։։ Ոչ արդեօք նզովէր զինքն և զըհրեշտակն, եթէ զիրան անվանակս գիտէր։ Զարձեալ, “Ահանձեցուցանեմ զձեզ ընդնախանձուն, ասէ. քանզի յարմարեցի զձեզ առն միում կոյս սուրբ մերձ կացուցանել Քրիստոսի. բայց երկնչիմ մի գուցէ որպէս օձն զԵւա խաբեաց, այնպէս ապականիցին միտք՚ի պարզամտութենէն որ՚ի Քրիստոս է ։։ Այս և զպարզամտութիւնն եդ, և զխոհականութիւնն ոչ ետ. քանզի եթէ էր խոհականութիւն, վտանգ ինչ ոչ էր. և եթէ վտանգ ոչ էր, ոչ արդեօք երկնչէր Պաւղոս. և Քրիստոս ոչ զոյութինն հրամայէր պրել, եթէ իրքն անպանապանք էին յայսոսիկ և յայն, այլ հայել ամենեսեան պարզաբար։

Ո՞ինչ արդեօք իցէ ասացեալն։ Պարբ ինչ՚ի վերագոյնն զպատմութիւնն ձեզ պատմել ախորժեմ, եթէ պարտ իցէ գիտել յորպիսի իրս էր Պաւղոս յորժամ զայս առաքէր։ Ինչ իրս էր յայնժամ. ՚ի կապարանսն և՚ի չղթայս և՚ի վիշտս անբմբերելիս։ Այս ուստի այս յայտ. ՚ի նմին ինքն՚ի Թղթոյն, վասն զի վերագոյն քան զայս ասէ. “Պիտել ձեզ կամիմ, եղբարք, զի որ ինչ իմ իրք են, մանաւանդ՚ի յառաջադիմութիւն աւետարանին եկին. մինչ զի կապանացս իմոց երեւելի լինել՚ի

Վաթսուն ի քառասնից արքունեան և յայլ ամենեսին և առ բազում եղբարս, որք վստահանան կապանաւքս ի մէնջ առաւելապէս աներկիւղ զքանն խօսել ,, :

Ելոյծն էր որ զնա ի բանտ էարկ : Օ ի որպէս առաքակ ի տուն մտեալ ի քունելն ամենեցուն զգողոսեան կողոպտէ , և յորժամ ձրագ ոք լուցանիցէ , և զձրագն անցուցանէ , զի հանդերձ համարձակութեամբ առնուլ և յափշտակել կարիցէ , նոյնպէս և Ելոյծն յայնժամ իբրև զառաքակ ոք և զորմահատու ի քունելն ամենեցուն խոր լիճն և անդգալի քուն , զգողոսեան յափշտակէր , զամուսնութի խախտելով , զտունս կործանէր՝ զամենայն տեսակ չարութեան ցուցանելով . իսկ յորժամ Պաւղոս զձրագն ելոյց յամենայն աշխարհի զվարդապետութեանն բան , և յանդիմանէր զնորա չարութիւնն , փութացաւ զքարոզութիւնն չիջուցանել և զվարդապետութիւնն ի բաց բառնալ , զի հանդերձ իշխանութեամբ ինքն զամենայն առնել կարիցէ , և կապեալ զսուրբն զայն էարկ ի բանտ : Յայնժամ զայս գրեաց երանելին Պաւղոս :

Ո՛ արդեօք ոչ սքանչանայցէ , ո՛ ոչ զարմանացի ընդ աքաղքինին և ընդ երկնաբերձ անձնն . կապեալ և բանտարգեալ յայնքան հեռաստանէ փիլիպեցւոցն առաքէր : Վ իտէք որքան ինչ է հեռաւորութիւն մակեդոնացւոցն ի Հռովմայ : Ո՛չ ոչ երկայնութիւն ճանապարհին, ոչ ժամանակի յոլովութիւն , ոչ իրաց նեղութիւն ; ոչ վըտանգ և ի վերայ իրերաց դժնդակութիւնքն , և ոչ այլ ինչ զսէրն և զյիշատակն արտաքս մերժեաց զաշակերտացն . այլ ոնէր զնոսա զամենեսեան ի մտի . և ոչ այն պէս ձեռքն նորա շղթայիւքն կապեալ էին , որպէս ընդ դուխս աշակերտացն հոգին կապեալ և բևեռեալ էր . որպէս և զայս յայտնելով ի յառաջաբանի թղթին առէր . “ Յաղագս ունելոյ ինձ զձեզ ի սրտի իմում ի կապանս իմ, և ի պատասխանիս և ի հաստատութեան աւետարանին ,, : Այս որպէս Թագաւոր յաթոռն ելանելով ընդ առաւօտան և նստեալ ի Թագաւորական պարանան՝ բիւր Թուղթս ամենայն ուստեք ընդունի , նոյնպէս և նա իբրև ի Թագաւորական ապարանն ի կապարանին նստեալ՝ յաւէտ յանձախութեամբ ընդունէր և առաքէր Թուղթս որ ամենայն ուստեք աղինք նո-

բա իմաստութեանն զիւրեանց անձանց զիրս զեկուցանէին. և այնքան առատել ևս զի և ոչ առանց հագոց ինչ քան զԹագաւորսն անօրինեալ, որքան և մեծագոյն ևս զիշխանութիւն էր հաւատացեալ։

Այլ ոչ եթէ զհռովմայեցւոց գաւառն միայն յարմարէր, այլ և զբարբարոսս զամենեսեան. զերկիր և զծով բերեալ ի նորա ձեռս եդ ած։ Այս զայս յայտնելով Հռովմայեցւոցն ասէր. «Ես կամիմ զձեզ անպիտանալ, եղբարք, զի բազում անգամ յօժարեցի գալ առ ձեզ, և խափանեցայ մինչև ցայժմ. զի պտուղ ինչ գտից ի ձեզ որպէս և յայլ հեթանոսս. քանզի հելլենացւոց և բարբարոսաց, իմաստնոց և անմտից պարտական եմ»։ Արդ հանապազօր հոգայր, զինչ կորնթացիք, զինչ մակեդոնացիք, որպէս փիլիպեցիք, զիարդ կապաւինայիք, որպէս գաղատացիք, որպէս ասիացիք, զիարդ որք ի Պոնտոս քնակեալ են, զիարդ ամենայն մարդիկ։ Այլ սակայն Թէպետ զերկիր ամենայն ի ձեռն առեալ էր, ոչ յաղագս բովանդակ հեթանոսաց միայն հոգայր, այլ և վասն միոյ մարդոյ։ Այս երբեմն յաղագս Ընեսիմեայ Թուղթ առաքէր, երբեմն որ առ կորնթացիսն պռոնկեաէն էր. զի ոչ զանգիտեր եթէ մի և որ մեղաւն և կարօտ էր վերակացութեանն, այլ Թէ մարդ, մարդ՝ պատուականագոյն ևս կենդանի, յաղագս որոյ և ոչ ի միածինն Հայր խնայեաց։

Վասնզի մի ինձ ասիցես եթէ ծառայ էր այս անուն և աւազակ և գող և բիւր չարեօք լցեալ, և եթէ աղքատ ի բաց ընկեցեալ և անարգ և ոչ միոյ բանի արժանաւոր. այլ զմտաւ ած զի և յաղագս նորա Վրիստոս մեռաւ. և բաւական է քեզ այս յամենայն նախախնամութեանն պատճառս։ Զմտաւ ած որպիսի ոք նմա լինել իցէ պարտ և արժան զոր այնքան Վրիստոս պատուեաց, մինչ զի և ոչ յարիւնն իւր խնայեաց։ Այլ և ոչ Թագաւոր ոք եթէ յօժարեր յաղագս ուրուք զենուել զինքն՝ խնդրէաք արդեօք այլ ինչ ցոյցս մեծ քան զայն լինել և արժանաւոր փութոյ ի Թագաւորութենն. ես ոչ կարծեմ. վասն զի բաւական էր վախճանն ցուցանել զվախճանեցեալն յաղագս նորա զերկն։ Ասկ այժմ ոչ մարդ, ոչ հրեշտակ, ոչ հրեշտակապետ, այլ ինքն երկնից տէրն, ինքն միածին որդին այ մարմին զգենուլ

եւ զինքն յաղագս մեր։ Եւ ոչ զամենայն արասցուք եւ հնարեսցուք, որպէս զի յայտքան պատիւս զբոլոր մարդիկ վայելել արասցուք մերով նախահօգուտ եաժմէն։ Եւ զմի ընկալցուք զպատասխանիս, զմի Թողութիւն։ Օձայս և Պաւղոս ցուցանել ասէր. "Մի կերակրոյն քով զնա կորուսաներ յաղագս որոյ Քրիստոս մեռաւ,,։ Օ՛ի որք արհամարհեն զեղբարս և իբր զոչ կարս անտես առնել կամիին, պատկառեցուցաներ և՛ի փոյթ ածէր, և հաւանեցուցաներ խնամ տանել ընկերին, փոխանակ ամենայնի զտեառնն մահ առաջի դներ։

Ընդ նատելով՛ի կապարանին՝ փիլիպեցւոցն առաքեր այնքան՛ի հեռաստանէ։ Քանզի այսպիսի է այ սէրն. ոչ յումեքէ՛ի մարդկայնոց իրացն խզի, և՛ վերուստ՛ի յերկինից ունելով զարմանն։ Եւ զինչ ասէր. "Գիտել ձեզ կամիմ, եղբարք,,։ Ցեսո՛ր զնախախնամութիւն վարդապետին յաղագս աշակերտացն. լուր և զհոգս աշակերտացն յաղագս վարդապետին, զի տեսցես եթէ այն էր որ առնէր զնոսա զօրաւորս և անկաւոելիս կապել ընդ միմեանս։ Քանզի եթէ "եղբայր յեղբօրէ օգնեալ իբրև զքաղաք ամուր,,, ևս առաւել այնքան կապեալք սիրոյն կապանօք՝ զամենայն անդրէն զարձուցանէին զչար դիւին ղգրժանս։ Եւ զի Պաւղոս կապեալ էր ընդ աշակերտսն, և ոչ ցուցանէր ինչ պէտք էն զայն մեզ և ոչ մի բանի, զի և կապեալ յաղագս նոցա հոգայր և հանապազօր վասն նոցա մեռանէր։

Եւլ զի և աշակերտքն ընդ Պաւղոսի հաւատեաւ էին կապեալք, ոչ արք միայն, այլ և կանայք, լուր զինչ ասէր յաղագս փիլեմայ քեռ սպասաւորի եկեղեցւոյն կենդրացւոց. "Օ՛ի ընդունիցիք զդա՛ի տէր արժանապատուապէս սրբոց. մերձ կայցիք դմա յոր ինչ իրս ձեզ պէտս ունիցի, որ օգնական եղև յոմանց և ինձ ինքեան,,։ Այց աստանօր մինչև յվերակացութիւնն վերկայեաց զնորա զփոյթն։ Ասէ Պղիսկիլա և Ակիւղաս և՛ի մահ յաղագս Պաւղոսի դիմեցին. և վասն նոցա գրէ այսպէս ասելով. "Ողջունեն զձեզ Ակիւղաս և Պղիսկիլա, որք յաղագս իմոյ զիւրեանց պարանոցն եդին,,։ Եւ յաղագս միւսոյ ուրումն գարձեալ նոցին գրելով ասէր՝ եթէ "Երձեցաւ մինչև՛ի մահ նահատակեալ հոգւով, զի զձեր նուաստութիւնն լցուկ

առ իս սպասաւորութեամբն ,, : Տեսեր զիարդ սիրէին զվարդապետն , որպէս նախ քան զիւրեանց անձանց զնո- րա Հանդիսան դիտէին . յաղագս այնորիկ ոչ ոք եղև նոցա յաղթող յայնժամ :

Այս ասեմ ոչ զի լուիցուք միայն , այլ զի և նմա- նեսցուք . և ոչ առ իշխեցեալսդ ևեթ , այլ և առ իշ- խանս մեզ բանս յերկարի . զի և աշակերտքն յոլովս վասն վարդապետացն խնամակալութիւնս ցուցանիցեն , և վարդապետքն զնոյն զՊաւղոսի սերն՝ առ որս ընդ նո- քօքն իցեն՝ ունիցին . և ոչ առ մերձաւորսն միայն , այլ և առ որս՝ի բացեայն են : Զի և Պաւղոս իբրև՝ի միւմ տան բնակեալ յաշխարհի ամենայնի՝ այնպէս վասն ա- մենեցուն փրկութեան հոգայր , և զիւր զամենայն իրս թողեալ , զկապանս , զվէրս , զնեղութիւնս , զվտանգս , դիտեր և Հարցանէր Հանապազօր զիարդ աշակերտացն իրք ունիցին . և՝ի բազում անգամ յաղագս այնորիկ ևեթ առաքեր երբեմն զՏիմոթէոս և երբեմն զՏիւքի- կոս . և յաղագս նորա ասէր , “Զի ծանեայ վասն ձեր և միսիթարեսցէ զսիրտս ձեր ,, . իսկ յաղագս Տիմո- թէոսի , “Նաքեցի ղդա առ ձեզ ոչ ևս ունելով ժոյժ , մի գուցէ փորձեսցէ զձեզ փորձիչն ,, : Եւ զՏիտոս դար- ձեալ այլուր , և զիւս ոմն այլ ուրեմն : Ասան զի ինքն կապանացն Հարկաւորութիւք բազում անգամ՝ի միւմ տեղւոջ ըմբռնեալ՝ առ նոսա երթալ գթովքն ոչ կա- րեր , ՝ի ձեռն աշակերտաց մերձ լինէր՝ի նոսա :

Արդ և յայնժամ՝ի կապանս էր և գրէր փիլիպե- ցւոյն՝ եթէ “Ողանուցանել ձեզ կամիմ , եղբարք ,, : Աշակերտն եղբարս կոչէր . վասն զի այնպիսի սէր զամենայն անհաղթութիւն՝ի բաց Հանէ , և զգերա- զանցութիւն և զպատիւ ոչ գիտէ . այլ թէպէտ և քան զամենեսեան բարձրագոյն իցէ՝ առ ամենեսեան զիջա- նէ նուաստանալովն , որպէս և Պաւղոս առնէր : Այլ լուիցուք զինչ կամի ծանուցանել նոցա . “Զի իմ իրք , ասէ , յաւէտ՝ի յառաջադիմութիւն աւետարանին ե- կին ,, : Զի՝ամբդ , ասա ինձ , և որո՞վ օրինակաւ . ՝ի կա- պանաց գրէօք արձակեցար . ՝ի բաց եդիր զշղթայսդ և Հանդերձ Համարձակութեամբ քարոզես ՝ի քաղա- քիդ . և յեկեղեցի մտեալ յոլովս և յաճախագոյն բան յերկարեցեր յաղագս Հաւատոյն և բազում աշակերտս

առնելով անցեալ գնացեր. Թերևս արդեօք մեռեալք յարուցեր և աքանչացան ընդ քեզ. Թերևս բռնութեամբ սրբեցեր և հիացան ամենեքեան. դևս արդեօք հալածեցեր։ Ոչ ինչ յայդցանէ, ասէ։ Այլ զիմդով եղև յառաջադիմութիւն աւետարանին։ "Ինչ զի և կապասացս իմոց յայտնի լինել ի Բրիտոս յամենայն արքունիսս և առ այլս ամենեսեան,,։ Ո՞ինչ ասես, այդ է յառաջադիմութիւն, այդ աճումն, այդ ամբարձումն քարոզութեան, զի ամենեքեան ուսան եթէ կապեալ ես։ Այո, ասէ։ Ասր ի կարգին, զի ուսցիս եթէ կապանքն ոչ միայն խափան ոչ եղեն, այլ և պատճառք ևս առաւել համարձակութեան. "Ինչ զի յոլովք յեղբարց ի տէր համարձակեցան կապանօքս իմովք, առաւել ևս վստահանալով աներկիւղ զբանն խօսել,,։

Ո՞ինչ ասես, ով Պաւղոս. ոչ արհաւիրս արկին կապանքդ, այլ համարձակութիւն. ոչ երկիւղ, այլ փափաղումն. ոչ ունկն ասացեալքս զկարգ։ Պիտեմ և ես. զի և ըստ մարդկային իրաց կարգաւորութեան այսմիկ ոչ դիպեցան, ասէ, այլ գեր ի վերոյ քան զընութիւն են լեալքս և ծածկին[1] ընդհանուր գործ։ Ոչ ման այնորիկ որ այլոցն զարհուրել առնէր, այս նմա զքաջալերութիւն ընձեռէր։ Ոչ ման զի զզօրավարն եթէ ստոյգ ոք և ի բանտ արգելցէ, առնէ երևելի, զի այնու հետև ի փախուստ դարձուցանէ զզօրականսն ամենեսեան. և զՀովիւն եթէ ի հօտէն ի բաց հալածէ, հանդերձ բազում իշխանութեամբ վարէ զոչխարսն։ Այլ ոչ առ Պաւղոսի այսպիսի իրս, այլ հակառակնմին ամենայն։ Ո՞ զօրավարն կապեալ էր, և զզօրականքն ամենեքեան յօժարամիտք լինէին, և հանդերձ բազում համարձակութեամբ ընդդէմ վազէին. զՀովիւն բանտարգել առնէին, և զոչխարսն ոչ վարէին և ոչ ցրուէին։

Ո՞ եռեսն ոլաւ եթէ ի վարդապետացն գժնդակութիւնս առաւել ևս զմխիթարութիւն առնուցուն աշակերտքն։ Ո՞ իմիրդ ոչ արդեօք երկեան, որպէս ոչ զարհուրեցան, զիմիրդ ոչ ասացին Պաւղոսի "Ինժիշկ, բժշկեաց զքեզ,,. ի բաց վճարեա զանձն ի վտանգիցն, յայնժամ ապա և մեզ զբիւր բարիսդ աւանդեսցես։

1 Յաւելու ի յունէն ածային ընդհանուր գործ։ Ասի այնորիկ. յօրինակին գրեալ էր միայն ած։

Օ՜ իմոյդ զայս ոչ ասացին, ընդէ՞ր ոչ։ Ալ ան զի էին իրատեսեալք ՚ի հոգւոյն ընորհայ՝ եթէ այնոքիկ ոչ ՚ի տըկարութենէ լինին, այլ ՚ի Քրիստոսի ներելոյն, զի և մեծապէս ձշմարտութիւնն պայծառասցի կապանօք և բանտիւք, ներելութեամբք և վտանգիւք աձեցեալ և ՚ի յոգնագոյն մեծութիւնն ամբարձեալ։ Քանզի եթէ խափանէին զԱւաղոս կապանքն և երկնչոտագոյնս զնա առնէին և կամ որ նմա պատշաձ էին իրքն, պարտ և արժան էր տարակուսել. իսկ եթէ մնասանդ քաջալերել պատրաստէին և զառաւել փառս ածէին, հիանալ էր արժան և սքանչանալ՝ զիարդ իրօք զրք անպատուութիւն ունէին, փառք աշակերտացն լինէին. և որովք արհամարհս առնէր, քաջալերութիւն և միխիթարութիւ ամենեցուն նոցա լինէր։ Քանզի ո՞ չ զարմանայ ընդ նա յայնժամ, տեսանելով զշղթայսն ունել, և զիւսն առաւել ևս յայնժամ հալածել. զի յորժամ տեսանէին զնա ՚ի կապարանին յամեալ, յայնժամ առաւել փախչէին դնքն։ Ալ այնպէս զԹագաւորական գլուխն պայծառ Թագն առնէ, որպէս զնորա ձեռքն շղթայքն, ոչ ըստ իւրում բնութեանն, այլ ըստ ծածկեցելում շնորհին որ ՚ի նմա։

Ալ ան այնորիկ և յորով միխիթարութիւն լինէր աշակերտացն։ Քանզի տեսանէին զմարմինն կապեալ և զչեղուն ոչ կապեալ, զձեռսն պնդեալ և զբանն արձակեալ և քան զձառագայթս արեգական արագագոյն յաշխարհ ամենայն ընթացեալ։ Այս նոցա միխիթարութիւն լինէր, ՚ի ձեռն գործոյն ուսանէին եթէ ոչ ինչ ՚ի մերձակայից է ժնդակ։ Օ՜ի յորժամ ածայրին ցանկութեամբ և փափագանօք ոգին հարազատաբար ներկեալ հանդիպեսցի, և ոչ առ մի ինչ դառնայ առ մերձակայս. այլ որպէս մոլեալքն ՚ի հուր և յերկաթ և ՚ի գազանս և ՚ի խորս և յամենայն համարձակին, նոյնպէս և նոքա մոլութիւն իմն գեղեցիկ և հոգևորական մոլեալք, մոլութիւն որ յողջախոհութենէ լեալ է, զամենայն զերևելիսս արհամարհէին։ Ալ ան այնորիկ կապեալ տեսանելով զվարդապետն, յաւէտ խայտային զուարձանային, ՚ի ձեռն գործոյ հակառակորդացն տալով զցոյցն՝ եթէ ամենայն ուստեք են անըմբռնելիք և անձեռնարգելիք։

Ա՛րդ յայնժամ մինչդեռ յայնպիսի իրս էր, ոմանք ի թշնամեացն Պաւղոսի կամելով զպատերազմն բորբոքել զժնդակագոյն և մեծ, զբռնաւորին առ նոս առնել զթշնամութիւնն պատճառէին, և նոքա քարոզել զուղիղ և զառողջ հաւատն յաղագս զվարդապետութիւնն մեծապէս աձեցուցանելոյ։ Այլ զայն առնէին ոչ զհաւատն սերմանել ախորժելով. այլ զի ուսեալ ի բերանի եթէ քարոզութիւնն աճի և աւանդութիւնն առնայ, վաղվաղակի զՊաւղոս ի վիհ արկանիցէ։

Այս էին երկու վարդապետութիւնք յայնժամ, Պաւղոսի աշակերտացն և թշնամեացն նորա, ոմանց ձգմարտութիւն քարոզողաց, և կիսոցն հակառակութեամբ և առ Պաւղոսի ատելութեան։ Այս զայս յայտնելով ասէր. "Ոմանք մախանօք և քինու զՔրիստոս քարոզեն,,, երևեցուցանելով զթշնամին. "և ոմանք ընտրութեամբ,,, վասն իւրոյ աշակերտացն ասէր։ Այս դարձեալ վասն նոցա. "Ոմանք հեատութեամբ,,, թշնամիքն՝ ոչ սրբութեամբ և ոչ ողջախոհութեամբ, "կարծելով նեղութիւնս յարուցանել ի վերայ կապանաց իմոց. և կէաք ի սիրոյ,,. դարձեալ զայս յաղագս եղբայց իւրոց. "գիտելով եթէ ի պատասխանիս աւետարանիս կամ։ Այլ սակայն զինչ. ամենայն օրինակաւ եթէ պատճառանօք և եթէ ձշմարտութիւն Քրիստոս քարոզի,,։ Որպէս զի մնոտի և ընդունայն առ հերձուածն զայս բանս առնուք։

Վասնզի որք յայնժամ զՔրիստոս քարոզէին, ոչ[1] աղանդ ապականեալ քարոզէին, այլ զառողջ և զուղիղ հաւատն. զի եթէ աղանդ ապականեալ քարոզէին և այլ ինչ քան զՊաւղոս, ոչ էր հանդերձեալ մեզի[2] գտանել նոցա խորհուրդն։ Այս զինչ խորհէին. ի յաձել հաւատոյն և ի բազում լինել աշակերտացն Պաւղոսի, ի մեծագոյն պատերազմ զներսն զարթուցանել։ Իսկ եթէ այլ ինչ աղանդ քարոզէին, ոչ արդեօք յոգունս առնէին զՊաւղոսի աշակերտսն. և ոչ առնելովքն ոչ զայրացուցանէին զառնաւորն։ Ա՛րդ ոչ զայն ասէ եթէ ապականեալ աղանդ ի ներքս մուծանէին, այլ եթէ պատ-

1 Պակասէր յօրինակին ոչ աղանդ ապականեալ խօսէին. յաւելաւ ի յունէն։

2 Յօրինակին գրեալ էր մեզի. յոյնն ոչ մեզ նոցա պէտ կամինն։ Եւ զինչ կամին։

Հառն որով քարոզէին՝ ապականեալ էր։ Նա այլ ինն էր պատճառ քարոզութեանն, և այլ նոյն ինքն քարոզութիւնն ոչ լեալ ամբողջ. քանզի քարոզութիւնն ոչ լինէր ամբողջ, յորժամ վարդապետութիւնն լի իցէ մոլորութեամբ։ Իսկ պատճառ ոչ լինի ամբողջ, յորժամ քարոզութիւնն ամբողջ իցէ, և ոչ քարոզէն ոչ յաղագս այ քարոզիցէն, այլ առ թշնամութեան և առ նորհս ումանց։

Արդ ասէ՝ հերձուածս ի ներքս ոչ մուծանէին, այլ զի ոչ յուղիղ պատճառէ և ոչ յաղագս երկիւղածութեան քարոզէին. քանզի ոչ զի զաւետարանն աձեցուսցեն, այլ զի ի մեծագոյն վտանգ զնա արկանիցեն. և վասն այնորիկ զնոսա բամբասէ։ Նա տես զիարդ հաւաստեաւ զայն եդ. «Կարծելով, ասէ, նեղութիւնք ի վերայ բերել կապանաց իմոց»։ Եթէ ասաց՝ բերին նեղութիւնս ի վերայ, այլ կարծիցեն բերել, ասէ, զմտաւ ածէին։ Նոցոյ զի թէպէտ և նոքա զմտաւ ածէին, այլ ոչ ինքն այնպէս զտանէր, այլ և խնդայր ևս ի վերայ քարոզութեանն առնման, զոր ի վերայ ածելով ասէր. «Նայց ընդ այս զուարճանամ, այլ և խնդացից ևս»։ Արդ եթէ մոլութիւն ինչ ունէր քարոզութիւնն և հերձուածս ի ներքս մուծանէին նոքա, ոչ կարէր զուարճանալ Պաւղոս. այլ զի առողջ և ոչ օտարօտի էր վարդապետութիւնն, յաղագս այսորիկ ասէր՝ հրձուիմ և բերկրեցայց ևս։ Օ՛ի թէպէտ և զինքեանս կորուստ նէին նոքա ի թշնամութենէ զայն առնելով, սակայն զիմ իրս և ախտից աձեցուցանէին։

Տեսէ՛ր զրքան էր Պաւղոսի զօրութիւնն, զիարդ և ոչ իւիք ի սատանայի մեքենայից ըմբռնեալ լինէր. և ոչ միայն ոչ ըմբռնէին զնա, այլ և նոքիմբք այնոքիւք ինքեանք ըմբռնեալք լինէին։ Նաղում էր բանսարկուին չարագործութիւն և սպասաւորացն իւրոց խոտոռամանկութիւն. վասն զի ձևով զնացս խոտորէին, չիջուցանել զքարոզութիւնն խոհալով։ Արդ «որ ըմբռնէ զիմաստունս ի խորագիտութեան իւրեանց»,, ոչ նեղէր այն լինել չարժաժամ։ Նա զայս երևեցուցանէլով Պաւղոս ասէր. «Նայ ի մարմնի հարկաւորագոյն վասն ձեր։ Օ՛այս վստահացեալ գիտեմ, եթէ մնացից և անսացից ձեզ ամենեցուն»,. քանզի ի մեր-

ձաւոր կենաց հանել փափագեն, բայց ՝ած ոչ ներէ վասն ձեր։

Օ՜ այս ամենայն հաւատաեաւ յիշեցէք. զի որք վայրապար և որպես դեպ իցէ գրովք վարիցին ՚ի սատակումն ընկերաց, կարող իցեմք ուղղել։ Կարիցեմք և յիշել զաստուածայն, և զայլն ուղղելով յաղօթս միշտ ապաւինիմք, աղաչելով զ՝ած՝ որ տայ բան իմաստութեե, տայե և հանճար լսելոյ և պահպանութիւն զգուշաւոր այսմ հոգևոր և անձեռնաբիկելի աւանդութեան։ Օ՜ի զոր ոչ կարեմք բազում անգամ մերով փութոյն ուղղել, զայն յարմարել կարասցուք աղօթիւք, պաղատանօք ասեմ հանապազորդեամբք։ Այն զի միշտ և անընդհատ աղօթել պարտ է որ ՚ի նեղութեան իցէ և որ յանդորրու, որ ՚ի վանգս և որ ՚ի բարիս, որ յանդորրու և ՚ի բազում բարիս, անշարժ նման բարիքն մընասցեն, և մի երբեք փոփոխեալ անկցին. իսկ որ ՚ի նեղութեանն և ՚ի բազում վտանգս, զի քաղցր ինչ ինքեան տեսցէ զփոփոխումնն։ [1] Խաղաղութեանն աղաչեա զ՝ած՝ հաստատուն կալ մեսլ խաղաղութեանն. և ամենայնի մրրիկս եթէ տեսանիցես շուրջ կացեալս, աղօթեաց զարձեալ առ ՝ած անցուցանել զալեկոծութիւնն և խաղաղութիւն զարձեալ ՚ի մրրկացն առնել։ Այլ ել եղեն աղօթքն, զոհացիր վասն զի լուաւ քեզ. ոչ եղեն լսելն, մնա ՚ի նմին զի լուիցին։

Օ՜ի թէպէտ և յապաղէ երբեք զտուրսն ՝ած ոչ սակաւով և ոչ ՚ի բաց զարձուցանելով, այլ յապաղմամբ տրոցն միջնոլենաւոր զքեզ առ ինքեան լինել ախորժէ։ Որպէս և հարք բարեգութք առնեն, զի և նոքա զպղերգից մանկանցն հանապազօրեան դեղերումն առ ինքեանս առնել տրոցն յապաղմամբ հնարին։ Օ՜ ինչ քեզ պէտք միջնորդաց առ ՝ած, և ոչ յոլով շուրջ ընթացից, և կամ աղաքել զայլս. այլ թէպէտ և ամայի իցես, եթէ առանց վերակացուի, և դու ՚ի ձեռն քո իսկ աղաչեսցես զ՝ած, հանդիպեսցիս ամենայն իրօք։ Այ այսպէս այլոց աղաչանացն վասն մեր հաւանել սովորեաց, որպէս յորժամ մեք ինքեամբք աղաչիցեմք, թէպէտ և

1 Պակասէր յօրինակին որ ՚ի վտանգս և որ ՚ի բարիս, որ յանդորրու և ՚ի բազում. յաւելաւ ՚ի յունէն։

բիւր չարեօք իցեմք լի։ Վասնզի առ մարդկան եթէ քա-
զումբ անգամ իցեմք ընդդիմացեալք, յորժամ առա-
ւօտուց և միջօրէին և ընդ երեկոյն երեք իցիմք արտմեցե-
լոյն առ մեզ խնդութեամբ դիմեք պատահելով՝ լուծա-
նեմք զնոցա թշնամութիւն, յաւէտ ևս առ ՚ած լինի այս։

Ա.յլ անարժան իցես ; լեր արժանաւոր յերկարմամբ
յաղօթեան։ Օ՚ի և անարժանին կարողութիւն է ար-
ժանաւոր լինել յամերկումն, և մեք ինքեամբք առաւել
քան եթէ ՚ի ձեռն այլոցն աղաչելով հաւանեցուցանեմք
զ՚ած, թէպետ և զտուրսն բազում անգամ յամեցու-
ցանէ, ոչ զմեզ տարակուսեցուցանել կամելով, և ոչ
ունայն ձեռօք ՚ի բաց առաքել՝ այլ զի մեծագոյն ևս բա-
րեաց պատճառ լինիցի մեզ, զերկիս զայսոսիկ առակաւն
որ այսօր մեզ ընթերցաւ՝ հնարեցեալ առնել երևելիս։

Վերձեցաւ քանանացին առ տէրն յաղագս դստերն
դիւահարի աղաչելով, և գոչէր, ասէ, հանդերձ մեծ
ուժով. “Ողորմեաց ինձ, տէր, դուստր իմ չարաչար դի-
ւահարի ,,։ Ա.յլազգի կին և բարբարոս և կրօնից խո-
րագէտացոյն արտաքոյ։ Օ՚ինչ այլ. շուն և անարժան
առնոյ զհայցուածսն. քանզի “Ոչ է բարւոք առնուլ
զհաց մանկանց և արկանել շանց ,,։ Ա.յլ սակայն զե-
զերելոյն եղև արժանաւոր. զի ոչ միայն ՚ի մանկանցն
քաջատոհմութիւն էած զնա շունն, այլ և հանդերձ
յոլով գովութեամբ առաքեաց ասելով. “Ով կին, մեծ
է քո հաւատդ ,,։ Վ՚ի՞նչ այլ ցոյցս խնդրեսցես զմեծ-
անձնութեան կնոջն։ Տեսեր զիարդ յամերկումն եղև ար-
ժանաւոր անարժան կինն։

Կամիս ուսանել եթէ ՚ի ձեռն մեր մանաւանդ, քան
եթէ այլովք աղաչելով զնա հաւանեցուցանեմք։ Ա.զա-
զակէր քանանացին, և մատուցեալ աշակերտքն ասեն.
“Ա.րձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր ,,. և նոցա
ասէր. “Ոչ ուրեք առաքեցայ, բայց առ ոչխարս կորու-
սեալս տանն Իսրայէլի ,,։ Իսկ կինն յորժամ լինքն մեր-
ձեցաւ և եկաց մեզ աղաղակելով “Ա.յո տէր, և շունք
ուտեն ՚ի փշրանաց սեղանոյ տեառնն իւրեանց ,,, յայն-
ժամ զչնորհն ետ և ասաց. “Լղիցի քեզ որպէս և կա-
միս ,,։ Տեսեր զիարդ յորժամ նոքա աղաչէին, ընդ-
դէմ հարկանէր. իսկ յորժամ կարօտեալն պարգևին
գոչեաց, հաւանեցաւ։ Վ՚ոցա ասէ. “Ոչ առաքեցայ առ

ոք, բայց առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի ,,. և կնոջն, ,,Աճ և հաւատա, ասէ. եղիցի որպէս և կամիս ,,, և արձակեաց։ Իսկզբան և՛ի յառաջաբանի հարցուածոցն և ոչ պատասխանի տայր. իսկ յորժամ միանգամ և երկիցս և երիցս Թախանձեաց, յայնժամ ետ գնոցն. վախճանաւն զքեզ հաւանեցոյց եթէ յապաղեր զտուրսն, ոչ զի նմա ընդդէմ հարկանիցէ, այլ զի ամենեցուն մեզ ցուցանիցէ զհամբերութիւն կնոջն։ Զանզի եթէ նմա ընդդէմ հարկանել ախորժէր, Թերևս և ոչ՛ի վախճանին տայր. և՛ի սկզբանն՝ ոչ արդեօք զիտեաք զզօրութիւն կնոջն։ ,,Եղիցի քո, ասեն, զի աղաղակ գՀետ մեր ,,։ Ասաք գնմանն, ասէ, լսէք. բայց ես զիտեմ տեսանել, գիտեմ զինչ հանդերձեալն է. ոչ կամիմ զծածկեալ գանձն նորա մնացեալ Թողուլ՛ի գաղտնիս. այլ անսամ և լռեմ; զի գնա յայտնեցից և՛ի մէջ եդից և ամենեցուն արարից երևելի։

Զդէզ զայս ամենայն ուսեալք, Թէպէտ և՛ի մեզս իցեմք, և առնուլ անարժանք, եթէ առանց վերակացուաց և առնիք՝ մի հրաժարեսցուք, գիտելով եթէ մեծ վերակացութիւն է ինքն ինքեամբ մերձենալ առ Աստ հանդերձ բազում յօժարութեամբ։ Եթէ յամեցուցանիցէ և եթէ յապաղէ՝ մի վհատեսցուք, ուսեալք զի յամրութիւնն և յապաղումն՝ խնամակալութեան և մարդասիրութեան է։ Այլ եթէ այսպէս հաւանեցուսցուք զանձինս և հանդերձ վշտացեալ անձամբ, ջերմ և զարթուցեալ մտօք, և այսպիսեօք որպէս և քանայնացին աղաչեաց գնա՝ Թախանձիցեմք, եթէ շունք իցեմք և եթէ զինչ և իցէ գործեալ գժնդակութիւնս, զմեր չարիսն՛ի բաց մերժեմք, և այնքան ևս առնումք համարձակութիւն, մինչև այլոց վերակացու լինել. որպէս և քանանացին այն, զի ոչ միայն ինքն՛ի համարձակութիւնն վայելեաց և՛ի գովութիւնն, այլ և ըզդստրն յանարգելի գժնդակութեանց կարաց յափշտակել։ Ահ է և ոչ մի ինչ քան զաղօթս ջերմս և հարազատս զօրաւորագոյն։ Գոքա և զմերձաւոր գժընդակութիւնն լուծանեն և յայնմ ժամանակի ազատեն՛ի տանջանաց։ Զդէզ զի և զմերձաւոր կեանսս գիւրութեամբ յօրինեսցուք և անդր համարձակութեամբ երթիցուք, բազում փոյթ և յօժարութիւն միշտ յա-

զօձմն յուշցուք, վասն զի այնպէս կարասցուք հանդիպել առաքինակայ բարեացն։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն Քրիստոսի՝ որ մերոյ. որում փառք յաւիտեանս. ամէն։

ԾԱՂԱԳՍ ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱԳՈՑԺ ՈՒՆԵԼՈՑ ԶՄԵՂԱՆՍ ԵՂԲԱՐՑ, ԵՒ ՈՉ ՀԱԿԱՌԱԿ ՊԱՏՕՐԵԼ ԹՇՆԱՄԵԱՑ

Արանեմ զձեր փայծդ, սիրելիք, որով՝ ի հայրենի տունս՝ ի միասին ընթանայք. յայդ փութոյ և զառողջութիւն ձեր որ ըստ հոգւոյ է՝ ունիմ տեսանել։ Քանզի բժշկարան աքանչելի եկեղեցւոյս վարդապետանոց է. բժշկարան ոչ մարմնոց, այլ հոգւոց. վասն զի հոգևոր իսկ է, ոչ զվերս մարմնոյ, այլ զյանցանս մեռաց ուղղել. և մեղանացն այնոցիկ և վիրաց դեղ՝ բան է։ Այս դեղք ոչ բանջարոյ որք յերկրէ, այլ՝ ի բանից երկնայնոց խառնեալ են. զոա ոչ բժշկաց ձեռք, այլ մարգարէիցն լեզուք յօրինեցին։ Այսան այնորիկ բաւական է, ոչ բազմութեամբ ժամանակաց աղօտանայ, և ոչ զօրութեամբ հիւանդութեան յանդիմանի։ Քանզի բժշկացն դեղք զերկոսին զայսոսիկ զնուազութիւնս ունին. մինչդեռ նոքքն են, կորուսանեն[1] զզօրութիւն իւրեանց. իսկ յորժամ բազում ժամանակ անցցէ, իբրև ծերացեալ մարմինք տկարագոյնք լինին. յաձախակի զնոսա և զժուարութիւն հիւանդութեանց յանդիմանէ, վասն զի մարդկայինք են. բայց ձեզայնին դեղքն ոչ այսպէս, այլ և բազում ժամանակի եղելոց՝ ի վերայ՝ զիւրեանց ոյժն զանձնայն ունին։

Որմէ հետէ եղև Ադամ, յայնմ հետէ և սկիզբն պրոց. այնքանս բժշկեցին զմարդիկ, և զիւրեանց զօրութիւնն ոչ ընկեցին՝ ի բաց, և ոչ ախտ ինչ յաղթող երբեք եղև նոցա։ Այս դեղս ոչ է արծաթ տալն և առնուլ, այլ յօժարամտութիւն և հաւատալ սէր ցուցանելով, զամենայն առնելով երթեալ գնայ. վասն այսորիկ ընչեղք և աղքատք նմանապէս՝ ի բժշկութեանս յայսմ վայելեն։ Քանզի ուր[2] հարկաւոր է ինչ տալ,

1 Յօրին. պակ. կորուսանէն զզօրութիւն իւրեանց. յաւելաւ՝ ի յունէն։

2 Պակասէր ուր. յաւելաւ՝ ի յունէն։

փարթամք ընդունին զօգտութիւն. իսկ աղքատք բազում անգամ զրկեալ ի շահից ի բաց գնան, ոչ բաւական լինելով նորայինքն ի դեղոյն պատրաստութիւն։ Այլ աստ վասն զի ոչ է արծաթի տալ, այլ զհաւատան ցուցանել և զյօժարամտութիւն. և այս է բժշկութիւն վարձ։ Նոխք և աղքատք նմանապէս հաղորդին յօգտութիւնս. մանաւանդ թէ ոչ զուգապէս հաւասարին ի շահն, այլ յոլովակի առաւելագոյն վայելելով փարթամն[1] աղքատն ի բաց գնայ։ Ընդէր արդեօք. վասն զի ընչեղն յոլով հոգովք ըմբռնեալ է, և ունի զամբարտաւանութիւնն, և ամբարհաւաճեալ ի ձոխութենէն տաղտկանայցէ, կենակից է և պղերգութեան, ոչ հանդերձ բազում ստուգութեամբ և ոչ յաւէտ փութով զդեղս լսելութեան գրոց ընդունի։ Իսկ աղքատն ի փափկութենէ և ի շատերութենէ և ի յոլութէ ի բաց վճարեալ, զամենայն ժամանակ ի ձեռացն գործ և յարդարութեանն յաշխատութիւն ծախէ, և յոլով իմաստասիրութիւնս. անդուստ ի հոգին հաւաքէ, այլ և տևող և քաջղօրը լինի, և հանդերձ յաձախութիւք ընդունի զհաւատարութիւն ասացելոցն. ուստի յոլովապէս ընձեռելով զվարձն, բազմապատիկ շահելով զպերտուղն անցեալ գնայ։

Եւ զընչեղացն ամբաստան զայս ասեմ, և ոչ զաղքատս պարզաբար գովեմ. քանզի ոչ ընչեղութիւնն է չար, այլ չարաչարն վարել ընչիւքն. և ոչ աղքատութիւնն բարւոք, այլ գեղեցիկն վարել աղքատութեամբն։ Զանջեալ լինէր ընչեղն այն որ առ[1] աղարաւն էր, ոչ վասն զի փարթամն էր, այլ վասն զի վայրագ[2] և անմտրդի։ Գովեալ լինէր և աղքատն ի գոգն Ղազարոսի, ոչ զի աղքատն էր, այլ զի հանդերձ գովութեամբն աղքատութեանն տանէր։

Հայեցարուք հաւաստեաւ յայս բան. քանզի բաւական ձեզ ամբարել զիմաստասիրութիւնն կարէ, և զամենայն ապականեալ խորհուրդս արտաքս հանել, ընձեռէ և յաղագս էիցս ուղիղ ունել դատողութիւն։ Զի բայն ոմանք են ընութեամբ բարիք և ոմանք ընդդիմք, և կնաք ոչ բարիք և ոչ չարք, այլ զմիջին կարգն ունե-

1 Յօրինակին խոնարհ։ 2 Յօրին. գիպակ. եգաւ ըստ յունին։

լով. բարի է ընութեամբ բարեպաշտութիւն, բարի է առաքինութիւն, չար վատթարութիւն. իսկ ընչեղութիւն և աղքատութիւն ըստ ինքեանց ոչ այսոքիկ են և ոչ այնոքիկ, այլ յօժարութեամբ վարեցելոյն չար և կամ բարի լինի: Այսպէս եթէ առ մարդասիրութիւնն վարեսցիս ընչեղութեամբ, եղիցի նա քեզ բարւոյ իրացն պատճառ. ապա եթէ յափշտակութիւնս և յաւելաստացութիւնս և ի թշնամանս, ի հակառակութեան դարձուցեր զպէտսն. բայց ոչ փարթամութիւնն է պատճառ, այլ որ ի թշնամանս փարթամութեամբն վարի: Այսպէս և յաղագս աղքատութեանն. եթէ առաքինաբար զնա ընկալցիս գոհանալով զտեառնէ, եղիցի քեզ պատկի պատճառ իրքն. իսկ եթէ հայհոյեսցես այնոքիւք զարարիչն և բամբասեսցես զնորա նախախնամութիւնն, չարաչար դարձեալ նորա իրօքն վարեցար: Արդեպ և անդ ոչ փարթամութիւնն աւելաստացութեանն էր պատճառ, այլ որ անիրաւապէս նովաւ վարեցար, նոյնպէս և աստ ի հայհոյութեանն ոչ զաղքատութիւնն բամբասեմք, այլ որ ոչն ախորժեաց ողջախոհաբար իրին տանել. քանզի ամենայն ուրեք գովութիւն և պարսաւանք բարւոյ և յօժարութեանց մերոց են: Բարի է ընչեղութիւն, բայց ոչ պարզաբար, այլ յորում ոչ են մեղք. և դարձեալ չար է աղքատութիւն, ոչ վայրապար, այլ ի բերանս ամբարշտաց, վասն զի գժտարի և հայհոյէ, զի զայրանայ և չարախօսէ զարարչէն:

Արդ մի այսուհետև բամբասեսցուք զընչեղութիւն և մի չարեսցուք վայրապար զաղքատութենէն, այլ որք ոչն կամիցին նոքօք վարել գեղեցկապէս: Այսպէս այնոքիկ ի մէջ կան իրք: Բայց զոր ասէի, երբ այց անդրէն վերստին յառաջին պատճառն՝ եթէ ընչեղն և աղքատն հանդերձ նովին իշխանութեամբ և համարձակութեամբ որ աստէն դեղք վայելեն. բազում անգամ թերևս և հանդերձ յոյժ սաստկութեամբ աղքատն:

Այս ոչ այս միայն է պարտականութիւն դեղոյն, զի զոգիս բժշկէ, զի ոչ ժամանակաւն ասլականի, զի ոչ ի հիւանդութենէն յաղթի, զի ձրի առաջի կայ շահ բժշկութեանն. այլ ունի և միւս իմն ոչ նուազագոյն քան զայսոսիկ զբարիս, զոր զեկեալն ի բժշկարանս յայս ոչ հրապարակապոյժ առնեմք մեք: Այսպէս որ

յարտաքին բժշկարանն երթան, զյոլովս ունին վիրացն իւրեանց տեսողս. և եթէ ոչ բանայցէ յառաջագոյն զվէրսն, ոչ դնէ բժիշկն ի վերայ ղեղն։ Այլ ասա ոչ այնպէս. այլ բիւրս տեսանելով զախտացեալսն[1], զանխլաբար առնեմք զբժշկութիւնն նոցա։ Այնմ ոչ ի մէջ ածեմք զմեղուցեալսն, և ոչ հրապարակագոյժ առնեմք զնոցա յանցանսն. այլ հատարակաց ամենեցուն առաջի դնելով զվարդապետութիւնն, լսողացն խղճի մտացն թողումք զնուրաքանչիւր ոք, զի յասացելոցս յարմարագոյն դեղ վիրին ընկալցի։ Ո՛չ ի յառաջանալ բան վարդապետութեանն՝ի լեզուէ ասողին ունելով ամբաստանութիւն չարութեան և գողութիւն առաքինութեն, բամբասանս վատութեն և գողութիւն ողջախոհութեն, պարսաւանս ամբարտաւանութեանն և գողութիւն ցածութեանն, իբրև բազմազան իմն և ամենապատիկ գեղն ի բովանդակէն հատատաել. իսկ զօգտակարագոյնն և զպիտանացուն առնուլ ինքեան իւրաքանչիւր ումեք լսողացն է։ Ո՛չ յառաջ բերեալ լինի յայտնապէս, և յիւրաքանչիւր ուրուք ի գիտակցութիւնս մտացն զանխլաբար նատիցի, և զինքեան բժշկութիւնն ընձեռէ, և նախ քան զհաչակեցուցանել զմեղս՝ զառողջութիւն բազում անգամ՝ի վերայ ածէ։

Լուայք երկիւղ զնարդ գողեցի զաղօթից զօրութիւն, և բամբասեցի ողբ հանդերձ ծուլութեամբ աղօթէն, ոչ ողբ ի նոցանէն հրապարակագոյժ արարի։ Այս ողբ գիտէին զինքեանց զիսոյթ, ընկալան գողութիւն պաղատանացն, և եղեն առաւել ևս փոյթք գողութքն. իսկ որ զնիհիճ պղերգութեանն գիտէին, ընկալան զարձեալ զսպառնալիսն և զտաղտկութիւնն ի բաց եդին։ Այլ ոչ զայնոսիկ և ոչ զսոսա գիտեմք, և անգիտութիւնս այս երկոցուն պիտանացու է։ Ո՛չ արդ, ես ասեմ։ Յորժամ զգողութիւնս լսիցէ զաղօթից և գիտէ զնուր փոյթն եթէ յորով վկայութիւն ունի[2] ի գողութեանց, յամբարտաւանութենէ զայթակղի. իսկ այժմ զանխլաբար ունելով զգողութիւնն, յամբարհաւաճութենէ ի բաց վճարեալ է։

1 Ցօրինակին պաշխարեալսն. և դաւ ըստ յունին։

2 Պակասէր յօրինակին ուխ. յաւելաւ ի յունէն։

Պարձեալ որ գիտէ զիւր զծուլութիւնն, լսելով զամ բաստանութիւնս զայս լինի լաւագոյն ՚ի բամբասանացս յայսցանէ, զմարդ աք վկայ սպառնալեաց ոչ ունելով։ Այլ այս զնա ոչ դուշնաքեայ ինչ օգտէ. քանզի յա զագս երկնչելոյ ՚ի բազմացն կարծեաց ցորքան զանխնա նալ կարծիցեմք, թէպետ և չար իցեմք, փութամբ լի նել բարիք. իսկ յորժամ ամենեցուն լինի յայտնի և զմոռացման կորուսանեմք զմխիթարութիւն, անամօթա գոյն և առաւել պղերգք լինիցիմք։ Այլ իբրև վերք մեր կայեալք և ՚ի ցուրտ օդ յաձախապէս դեգերեալ դժըն դակագոյնք լինին, նոյնպէս[1] և հոգի մեղուցեալ եթէ առաջի բազմաց յանդիմանեացի զոր մեղաւն՝ անամօ թագոյն և ս լինի։

Այլ զի մի այն լինիցի, զանխնալաբար բանս զքեզ բժըշ կի։ Այլ զի ուսցիք եթէ զանխնալսեալ այս վարդապե տութիւն յորով շահս ունի, լուարուք. ասէ Քրիստոս. ,,Եթէ մեղցի եղբայր քո, յանդիմանեա զնա,, ոչ ՚ի միջ քո և բազմութեանն, այլ ,,՚ի միջ քո և նորա միայ նոյ,,. անվկայ եղիցի ամբաստանութիւնն, զի գիւրա գոյն առ նմա փոխոխումն լինիցի։ Եւ ասաբ բարի է հաւաստա բապէս առ ամենեսեան առնել զկարան և ոչ հոչակե ցուցանել. բաւական լուցի գիտակցութիւն, շատացի գատաւորն այն։ Եւ այսպէս սպառնացի զմեղուցե լոյն, որպէս խիղճ մտացն իւրոց. գառն ասոխ է նա, որ հաւաստեաւն իսկ գիտէ զյանցանսն։

Եւրդ մի և ս դիցես վեր ՚ի վերայ վկուի հրապարակա գոյժ առնելով զյանցուցեալն, այլ հաստատակաց ընձե ռիմ իրատ։ Որպէս և մեք առնեմք այժմ, որպէս և Պաւ զոս արար անվկայ պատրաստելով որ առ կորնթացիսն յանցուցեալն էր զամբաստանութիւնն. ,,Յաղագս այ սորիկ, ասէր, եղբարք իմ, կերպարանեցի զայս յիս և յԱպաղոս,,։ Ոչ պետ և ոչ նա և ոչ Ապաղոս էին որք բաժանեցին զբաղմութիւնն և զեկեղեցին յերկուս հատին, այլ սակայն ծածկեաց զամբաստանութիւնս, և իբրև կերպարանօք ամենեքին եւր և Պետրոսի և Ապաղոսի անուամբքն զդատապարտելոյն դէմն ծածկեաց. իշխանութիւն նոցա տայր փոխոխումն ընդունել ՚ի յա

1 Պակ. յորին. նոյնպէս . . . անամօթագոյն ևս լինի. լցացաւ ՚ի յունէն։

բութենեն յայնմանէ։ Եւ դարձեալ. "Մի գուցէ՛ի գան իմ առ ձեզ խոնարհեցուսցէ զիս Աստ, և սգացայց զյողովս յառաջագոյն մեղուցեալս և ոչ ապաշաւեալս՛ի չարութենէն և զոր գործեցին ,,։ Եւ աստանօր ոչ բնա-ւորաբար ասէ զյանցուցեալսն, զի մի յայտնագոյն առնելով զամբաստանութիւնն՝ անուամբ առնիցէ զմեղուցեալսն անձինս։ Այսպէս և մեք հանդերձ այսքան խնայելով զյանդիմանութիւնս առնեմք, նոյնպէս և դուք առնայք փութով ընկալլիք զուղղութիւնն և հաւատեալ յառացեալս հայեցարուք։

Յօսեցայ երէկ ընդ ձեզ յաղագս զօրութեան աղօթից. ցուցի զիարդ սատանայ յայնժամ դարանակալ լինի, վասն զի չարագործ է։ Գիտէ զի մեծ շահ յաղօթիցն ժամանն լինի մեզ, յայնժամ առաւել խորդսխէ զմեզ՛ի բաց մղելով՛ի խոստովանութեանցն, զի ուղղայն ձեռաք՛ի առն դարձցիմք։ Եւ զոր օրինակ յիշխանան յորժամ որք զբարեկարգութիւնն և որ շուրջ զնովաւ են իրք թշնամանաբար ունիցին առ հանդիպեալսն, գաւազանաք՛ի բացուստ զնոսա հալածեն, արգելուն մերձ գալ ողբալ և մարդասիրութեան պատահել, նոյնպէս և սատանայ յորժամ տեսանէ մերձ եկեալ առ դատաւորն՝ մատուցեալ՛ի բաց հալածէ ոչ գաւազանաւ, այլ ծուլութեամբքն։ Վասն զի գիտէ իսկ յայտնապէս՝ եթէ միայն մերձենացին զդատաստեալքն և զանցանսն ասասցեն և ողբասցեն ջերմ հոգւով, բազում թողութիւն առնուլ երթեալ գնասցեն։ Վասն զի մարդասէր է Աստ. յաղագս այնորիկ յառաջագոյն ժամանէ և՛ի բաց տանի՛ի պալատանացն զնոսա, զի մի ուրեք վասն որոյ պաղատինն՝ դիպեսցեն։ Այլ սպասաւորք իշխանացն հանդերձ բռնութեամբ հալածեն զդիպեալսն. իսկ նա ոչ բռնութեամբ և ոչ հարկ առնելով, այլ պատրելով զմեզ՛ի պղերգութիւն արկանէ. վասն որոյ և ոչ թողութեան եւք արժանաւորք՝ կամաւ զմեզ ղրկելով՛ի բարեացն։

Այս է մնայ և անձին հանդերձ փութով աղօթքն, լայս անչէջ և յաւիտենական. վասն այնորիկ բիւր հեղեղս՛ի խորհուրդս՛ի միտս մեր յայնժամ արկանէ չարն. և զորս ոչ երբեք զմնաւ ածաք, զայնոսիկ ժողովելով՛ի ժամ աղօթիցն՝ ՛ի վերայ հեղու անձանց մերոց։ Եւ

զոր օրինակ Հողմ յորվակի ընդդէմ անկանելով չի-
ջուցանէ զՀրագի լոյն վառեալ, նոյնպէս և սատանայ
յորժամ տեսանէ զլոյս աղօթիցն ՚ի մէզ բորբոքեալ,
բիւր Հոգովք աստի և անտի ամբոխէ, ոչ յառաջագոյն
՚ի բաց կայ մինչև շիջուցանէ զլոյսն։

Ա՛յլ որպէս որք զՀրագուռնան լուացանեն՝ առնեն, նոյն-
պէս և մեք արասցուք։ Այլ զինչ նոքա առնեն։ Յոր-
ժամ տեսանեն Հողմն սաստիկ, մերձեցեալ զմոմն ՚ի
վերայ Հրագի ծակոյ դնելով պարսպեն զՀողմոյն ՚ի ներքս
զմոմն։ Վասնզի յորքան արտաքուստ ՚ի վերայ անկա-
նի, հաւասարամասն է կռիւն բոցոյն առ Հողմն հան-
դերձ համարձակութեամբ ձգելով պատրուգանն զիւղն
լինքն. ապա եթէ անկայի ՚ի ներքս Հողմն, յայնժամ
յերկոցունց կողմանց անկանելով յաղթող լինի բոցոյն։
Նոյնպէս և աստ առ մեզ լինի. յորքան ընդ մեզ արտա-
քուստ մարտնչիցին, կարեմք ընդդէմ կալ. բայց յոր-
ժամ բանայցեմք նմա զդրունս խորհրդոց և ՚ի ներքս
ընդունիցիմք զԵշնամին, ոչ ևս կարեմք այնուհետև ոչ
սուզ ինչ հակառակ կալ. այլ ամենայն ուստեք շիջու-
ցանելով զմեր յիշատակ իբրև Հրագի՝ շիջուցեալ թո-
ղու զբերանն բանս բերեալ մնոտիս։ Ա՛յլ որպէս նոքա
զմոմն ՚ի վերայ դնեն Հրագին, նոյնպէս և մեք դիցուք
զխորհուրդս ՚ի վերայ մտաց մերոց և ծածկեացուք ըզ-
չար այսոցն զմուտս, զի մի՛ շիջուսցէ զլոյս ոգւոց մերոց։

Յիշեցէք զերկոսեան զառակս զայս զգինուորացն և
զիշխանին և որ յաղագս Հրագիս է. քանզի վասն այ-
նորիկ ասեմ ձեզ զառակս յորս շրջիմք մեք, զի և աս-
տի ՚ի բաց գնացեալք և ՚ի տան լինելով, որք ՚ի ձեռս
են իրքն՝ յիշատակ առնուցուք զասացելոցն։ Մեծ են
զինք աղօթք, մեծ ամրութիւն։

Ա՛ուաւ երէկ զիարդ երեք մանկունքն կապեալք լու-
ծին զՀրոյ զօրութիւն, զիարդ մարտեան ընդ բոցոյն, որ-
պէս եղեն յաղթող Հնոցին և զզօրութիւն տարերն
պարտեցին։ Ա՛ուարուք և այսօր զիարդ առաքինին և
մեծն Սահակ սմին իսկ յաղթող եղև մարմնոյս քնու-
թեան, զամուլութեան կապանս լուծելով. “Ա՛ղաչեր, ա-
սէ, Սահակ յաղագս Ռեբեկկայ կնոջ իւրոյ,,։ Ա՛յ-
սոքիկ ձեզ այսօր ընթերցեալք եղեն։ Երէկ յաղագս
աղօթից բան, և այսօր զարձեալ ցոյց պաղատանաց։

Ցեսէք զնարդ հոգւոյն ընդհ տնօրինեաց, ձայնակից եւ բիւրեան բանին եղև այսր աւուր ընթերցուածս. "Կ՚զաչէր Իսահակ յաղագս Հռեբեկայ կնոջ իւրոյ, վասն զի ամուլ էր ,,։

Ի զայս նախ առաջին արժանաւոր է խնդրել էր ազգաւ ամուլ էր, աքանչելի վարուք և բազում ողջախոհութեամբք լեալ և նա և այլն։ Ո՛չ ինչ ունիմք բուռն հարկանել զկենաց արդարոցն և ասել՝ մեղանաց գործ էր ամլութիւնն. և ոչ նա եթէ էր ամուլ, այլ և մայրն Իսահակայ Սառա, քանզի ամուլ էր Սառա որ ծնաւն զնա. և ոչ մայրն նորա և կինն ամուլք էին միայն, այլ և կինն Յակոբայ Ռաքել։ Ո՛չ ինչ կամիցի արդեօք ամլոցն այնոցիկ պար. ամենեքեան արդարք, ամենեքեան չար վկայեալք, ամենեքեան առաքինութեամբ կեցեալք։ Ո՛րանզի վասն նոցա ասէր. "Կաս եմ ած Աբրահամու և ած Իսահակայ և ած Յակոբայ ,,. և Պաւղոս ասէ. "Յաղագս որոյ ոչ ամօթ համարի ած՝ կոչիլ նոցա ած ,,։ Յոլով է գովութիւն նոցա ի նորուսն, յօրինսն և ի հնումն, ամենայն ուստեք պայծառք և ընտիրք. և բոլորեքեան ամուլ կանայս ունէին, և անորդութեամբ բազում ժամանակս կատարեցին։ Ընդ յորժամ տեսանիցես այր և կին առաքինութիւնք կեցեալս, յորժամ տեսցես ած ասէր, սուրբ, բարեպաշտութեան ինամ տարեալս, մի կարծիցես մեղայ լեալ զանորդութիւնն հատուցումն։ Ո՛րանզի բազումք են այ տնօրինութեան բանք և մեզ անձառելիք, և յաղագս ամենեցուն գոհանալ պարտ և արժան է. միայն զայնոսիկ աւաղեսցուք որք չարութեամբն կեան, ոչ որ յոլով մանկունս ոչ իցէ ստացեալ։ Բազում անգամ առնէ ած օգտակարագոյնս, և մեք զպատճառն եղելոյն ոչ գիտեմք. վասն այսորիկ ամենայն ուրեք պարտ է զարմանալ ընդ նորա իմաստասիրութիւնն և փառաւորել զնորա զանբաւ մարդասիրութիւնն։ Բայց այս բան ի տուչութենէ զմեզ խրատել կարէ։

Պարտ և արժան է զպատճառն ասել յաղագս որոյ էին ամուլ կանայքն այնոքիկ։ Այս զինչ է պատճառն։ Ո՛վ յորժամ տեսցես զհասարակաց մեր տէրն զի կուսէն ծնանելն, մի անհաւատասցիս։ Հրահանգեա, ասէ, զքո միտգ արգանդով ամլոյն. զի յորժամ տեսցես զչ-

կապեալ արգանդն և զփակեալ և առ որդեծնութիւնն բացեալ՝ ոյ չնորհաւն, մի՛ աքանչասցիս լսելով թէ կոյս ծնաւ. մանաւանդ եթէ զարմասցիս և հիասցիս, այլ մի՛ անհաւատասցիս աքանչելեացն։ Յորժամ ասէ ցքեզ Հրեայն՝ զիաթրդ ծնաւ կոյսն, ասա նմա՝ զիաթրդ ծնաւ ամենն և զառաքեալն։ Երկու խափանմունք էին յայն ժամ, տարաժամութիւն հասակին և անպիտանութիւն բնութեանն. իսկ կուսին մի խափանումն եւեթ, ոչ հաղորդել ամուսնութեան։ Յառաջագոյն Հանապարհ առնէր կուսին ամենն։

Եւ զի ուսցիս եթէ յաղագս այնորիկ ամենքն յառաջանային, և զի հաւատասցի՛ւ կուսէն ծնեալն, լուր բանիցն Գաբրիէլի որ առ նայն էին. քանզի յորժամ եկն և ասաց նմա «Ցու յղասցիս և յորովայնի ընկալցիս և կոչեսցես զանուն նորա Յիսուս», հիացաւ կոյսն և աքանչացեալ ասէր. «Ո՞ւր թրդ լինիցի ինձ այդ, վասն զի զայր ոչ գիտեմ»։ Եւ հրեշտակն զինչ. «Հոգին սուրբ եկեսցէ՛ւ ի քեզ»։ Ի՛ւ խնդրեր զընութեն կարգաւորութիւն, ասէ, յորժամ գեր՛ւ ի վերոյ քան զբնութիւն է լեառն. մի՛ հայցեր զամուսնութիւնս և զերկունս, յորժամ մեծագոյն քան զամուսնութիւն ծնելդ եանն իցէ օրինակ։ «Եւ զիաթրդ լինիցի այդ», ասէ, «քանզի զայր ոչ գիտեմ»։ Յաղագս այսորիկ եղիցի այդ զի զայր ոչ գիտես. քանզի եթէ զայր գիտէիր, ոչ արգելօք արժանաւոր լինէիր սպասաւորութեանն և արբանեկութեանս այսմ. որպէս զի՛ ի ձեռն սրոյ անհաւատեոգ, դովին հաւատաս։ Ի՛ւ արգելօք արժանաւոր լինէիր երբէք սպասաւորութեանն և արբանեկութեանն, ոչ վասն զի չար է ամուսնութիւն, այլ զի լաւագոյն է կուսութիւն. իսկ տեառն մուտք Հանապարհին պարկեշտագոյնք պարտ և արժան էին լինել քան զմերս, վասն զի Թագաւոր է, և Թագաւորքն ընդ պանծալի Հանապարհ մտանեն։ Պարտ էր և հաղորդել մերում ծնելդեանն և զանազանիլ՛ ի մերմէն։ Եւ երկոքին այնոքիկ եղեն առ մեզ. առանց ամուսնութեանն ծնանիլ՝ մեծագոյն է քան զմեզ, իսկ յղանալն յորովայնի և ծնանիլ՝ մարդկային բնութեանս է։ Այլ առանց ամուսնութեն լինել զծնունդն՝ պարկեշտագոյն քան զբնութիւն մարդկան, զի և զգերազանցութիւնն և զհաւատարութիւնն առ մեզ ուսցիս զծնեալդն։

Այլ գիտեա ինձ վնասատուԹիւն եղելոյն. ոչ գերազանցուԹիւնն որ առ մեզ լինելուԹիւնն է՝ և ազգակցուԹիւնն զգերազանցուԹիւնն ազօտացոյց, այլ երկոքեանն ցուցեալք լինէին ՚ի ձեռն Ամ իրաց. և միոյն բովանդակ ունէր զմերս, իսկ զմիւսն և փոխոխեալ որ առ մեզ է: Այլ որպէս ասէի, եԹէ յաղագս այնորիկ ամուլքն յառաջեցին, զի հաւատասցի կուսին ծնունդ, և զի նա առաջնորդեսցէ առ հաւատոյն պատմուԹիւնն և խոստմանն այնորիկ, լաւ զինչ ասէ հրեշտակն. "Եւ դուն պիտի տեսնես ՚ի վերայ քո և զօրուԹիւն բարձրելոյն հովանասցի քեզ,, այնպէս, ասէ, ունիս ծնանել: Որ՝ հայիր յերկիր, մինչև յերկինից գայ զօրուԹիւն. հոգևոր է շնորհն որ լինի, մի խնդրեր ինձ բնուԹիւնս և օրէնս և ամուսնուԹիւնս. այլ մեծագոյն քան զայս նորա քանքն էին:

Կամիք զի միւս այլ ընձեռեսցուք ձեզ ցոյցս: Դուն ինձ պահեա զիարդ ամուլն այն առաջնորդի ՚ի հաւատ սորա: Ամն զի մեծ էր յայտնուԹիւնն քան զմիտս կուսին, լաւ զիարդ և ՚ի նուաստագոյնս իջցոյ զբանն, ՚ի ձեռն զգալեացն նմա առաջնորդելով. քանզի "Ահա, ասէ, և ազգայինն յղացաւ որդի ՚ի ծերուԹեանն իւրում. և այս ամիս վեցերորդ է կոչեցեալն ամուլ,: Ցեա զամուլն և յաղագս կուսին: Այլ եԹէ ոչ, ընդէր իսկ նմա ասէր զծնունդն ամլոյն, էր աղագաւ և "՚ի ծերուԹեանն, ասէր վնասնէ, ընդէր ՚ի վերայ ածէր "զկոչեցեալն ամուլ,. ՚ի ձեռն այսր ամենայնի ՚ի մի ժողովէր նմա զյայտնուԹիւնն, զի հաւատասցէ աւետեացն. վասն նորին և զհասակն ասէր և զամուլուԹիւն բնուԹեն. յաղագս նորին՝ ժամանակի յղուԹեանն եկայ ինաց: Այլ ոչ ՚ի սկզբանն նմա վազվազակի աւետարանեայ, այլ ինաց զի վեցամեայ ժամանակն լինիցի երաշխաւոր, և առանց յերկուանալոյ յղուԹեանն ցոյց:

Այլ տես զարձեալ զնմանատուԹիւնն Գաբրիէլի. ոչ յիշեցոյց նմա զԱառն և ոչ զՆեբեկա և ոչ զՎաթել. ԹԷպէտ և նոքա ամուլք էին և պառաւեալք[1] և աքանչելիք լեալք, այլ հին պատմուԹիւնք էին: Այլ քան առաջինք՝ նորք և առժամայնք և որ ՚ի մերում գարուս պա-

[1] Ցօրինակին պառաւեալ. եդաւ քան յուն:

տահէ լինել, մանաւանդ զմէզ ի հաւատ զարմանալեաց ածել սովորեցին. վասն այնորիկ Թողով զայնս յինքեն իմանալ, նման զաղգակիցն ՚Ի Նղիսաբեթ առաջի եղ, զի ի նմանէ առ իւր իսկ զծնունդն ածիցէ զսաքսռալին զայն զպարկեշտագոյնն: Ուանզի ի մէջ մերոց և տեղեաւնական ծննդեանն ամուլն էր, քան զմին նուաստագոյն և քան զմիւսն մեծագոյն. նուաստ քան զկուսին և մեծ քան զմերս: Յաղագս այսորիկ իբրև կամիջաւ իւիք ի մէջ Նղիսաբեթի՝ որ զբնութեամբ երկունք էին՝ յառաւել քան զբնութիւնն ածէ զմիտս կուսին:

Ուամի և առաւել ևս ասել և այլ բանս վարդապետել՝ յաղագս այր ամուլք Հռեբեկա և Ռաքել էին. այլ ժամանակս ոչ անսայ, փութացուցանելով զբանս յաղօթիցն զօրութիւն: Ուանզի վասն այնորիկ զայս ամենայն շարժեցաք, զի ուսանիցիմք եթէ սրպէս զամլութիւնն կնոջն ելոյծ Նահակ աղօթիւքն և պաղատանօք այնքանեայ ժամանակի. "Նղաչէր, ասէ, Նահակ յաղագս Հռեբեկայ կնոջ իւրոյ, և լուաւ նմա Ած,,: Նյս մի զի վաղվաղակի կայ եթէ աղաչէր և լուաւ, կարծիցես եթէ վաղվաղակի կարդայ առ Ած և Ձեպով լսել եղև. քանզի յոլով ժամանակ ծախեաց ՚Ի պաղատանն այ: Նյս եթէ ախորժէք ուսանել քանի՞ ինչ, ես ձեզ ստուգութեամբ զայն ասացից. քսան ամաց թիւ ծախեաց յաղաչանն այ: Նյս ուստի՞ է այս յայտ. ՚Ի նմին իսկ ՚Ի կարգէն: Ուանզի կամելով դիրք զՀաւատն և զհամբերութիւն և զնմանութիւն ցուցանել զարդարոյն, և ոչ զժամանակն լռեաց, այլ և զայն յայտնի մեզ արար զանխափաբար, որպէս զի յարուցանիցէ ըզմեր պղերգութիւնս. և ոչ եթող լինել աներևելի: Ուր զիարդ զանխափաբար մեզ զժամանակն յայտնեաց: "Նահակ էր, ասէ, քառասուն ամաց յորժամ էառ զՀռեբեկա դուստր Բաթուէլի ասորւոյ,,: Ռւսաւ քան ի ամաց էր յորժամ զկինն էած. քառասուն, ասէ, ամաց էր յորժամ հարսանիքն եղև: Ռւսցուք այսուհետև երբ եղև հայր, և քանի ամաց էր յորժամ ծնաւ զՅակոբ, և կարասցուք գիտել քանի ժամանակ եկաց մնաց ամուլ կինն, և զայն ժամանակս աղաչէր առ Ած: Ուանի՞ ամաց էր յայնժամ յորժամ ծնաւ զՅակոբ. "Նյ, ասէ, Յակոբ ունելով աջովն զգարշապար եղբօր

իւրոյ. և վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Յակոբ, և զիւսն ևս Իսահակ։ Իսահակ էր ամաց վաթսնից յորժամ ծնաւ նմա Հռեբեկա։ Արդ եթէ յորժամ էած զկինն քառասուն ամաց էր, և յորժամ ծնաւն վաթսուն, քաջայայտ է թէ 'ի միջոցին ամուլ եկաց ծնայ կինն, և զայն ամ ժամանակս աղաչէր առ Աստուած Իսահակ։

Եւ արդ ոչ ամաչիցեմք և սուզանիցիմք՝ զարդարն տեսանելով քանն ամ ծնացեալ և ոչ 'ի բաց կացեալ, իսկ մեք թերևս յառաջնում խնդրեն և կամ յերկրորդումն հրաժարեմք. և սակայն նա բազում հաւատաձակութիւն ունէր առ Աստուած, բայց ոչ դժուարէր յաղագս յապաղանաց տալոյն, այլ եկաց ծնայ ժուժկալելով. իսկ մեք բիւր մեղաց լցեալ, չար խղճի կենակիցք, և ոչ մի ինչ բարեմտութիւն առ տէրն ցուցանելով, եթէ ոչ նախ քան զաղաբեաւէն լսիցեմք, անդրէն դառնամք դիմաւարիմք, 'ի բաց կամք 'ի խնդրելոյն. վասն այնորիկ ունայն ձեռաց միշտ գնամք։ Ո՞ քանն ամ յաղագս միոյ իրաց պաղատեցաւ առ Աստուած արդարն այն. մանաւանդ եթէ ո՞ քանն ամիս միայն։

Երեկ ասէի թէ յոլովք են որ հանդերձ պղերգութեամբ աղաչեն յօրանչելով և քոչքոտելով և ձկտելով. բայց այսօր և միւս ևս միտս գտաք լեալ յաղօթս՝ սատակիչ քան զայն։ Վասն բազումք 'ի բերանս զինքեանս ընկենուլով և ջերմ արտասուս հեղուլով դառնապէս 'ի ներքուստ հառաչեն, և զձեռս կարկառեն, և յոտս փոյթ ցուցանիցեն, ջերմութեամբ սիրտս և յօժարամտութեամբ հակառակ վարին իւրեանց փրկութեն։ Ո՞չ յաղագս իւրեանց մեղացն պաղատին առ Աստուած, և ոչ թողութիւն խնդրեն յանցանացն իւրեանց, այլ զիւրեանց զայն զամենայն ընդդէմ թշնամեացն շարժեն. զայն առնեն որպէս թէ ոք սուր սրիցէ և ոչ հակառակ պատերազմացն վարիցի զինուն, այլ յիւրում պարանոյին ցցէ։ Այսպէս և նոքա ոչ յաղագս թողութեան իւրեանց մեղացն, այլ վասն փորձութեան թշնամեացն աղօթիւք վարին. որ է ընդդէմ յինքեանս զսուրն ցցել։

Սմացաւ և զայս չարն, զի ամենայն ուստեք զանձինս կորուսանիցեմք 'ի ձեռն պղերգութեանն և փութոյ։ Վասն ոմանք յաղօթսն դանդաղելով զայրացուցանեն զտէրն, արհամարհանս ածեալ յուղղութեամբն. իսկ սա

փոյթ և զարթուցեալ. և զինչ լինիցի, ոչ կարեմ լուծանել զփոյթն, և ոչ՝ ի դանդաղանս ուրկանել. յանօրէնութիւն փութանալն վարիլ պատրաստեմ, քանզի ընդդէմ Թշնամեացն աղօթել անօրէնութիւն է։ Այնմէնայ օրէնսն անցեալ գնաց ոչ ինչ շահելով՝ ի փութալն, այլ առաւել և ևս ինաստուց համբերելով քան զպղերգացեալն։ Յաջիկ են հնարք սատանայի, զամանս պղերգութեան և զամանս նուիրն իսկ փութանալն կորուսանել, յորժամ ոչ ըստ օրինացն լինիցի։

Այլ և նոցին իսկ բանից պաղատանացն պարտ և արժան է լսել, զի տեսանիցէք զբան լի են ամենայն, և զիարդ մանկական մնացեալ են բանք։ Ալ ըհէ ինդրեա, ասեն, ՚ի Թշնամեացն իմոյ. ցոյց նոցա Թէ ահ ունիմ ես։ Ալ այնպէս ուսանին, ով մարդ, եթէ ահ ունիմք՝ յորժամ զայրանամք և սրտմտիմք և դժուարիմք, այլ յորժամ հեզք և հանդարտք և ցածք իցեմք և ամենայն իմաստութեամբ կրօնաւորիմք։ Այնպէս և ահ ասաց. “Պայծառասցի լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայրն ձեր որ յերկինսն է,,։ Ալ զմաւ ածես՝ Թշնամանք են զահ ինդրել հակառակ Թշնամեացն։ Այս զիարդ իցէն, ասէ։ Ալ ան զի նա ասաց “Ալօթեցէք յաղագս Թշնամեաց ձերոց,,, և զայն զօրութիւնն զայն ՚ի ներքս եմոյծ։

Իսկ դու յորժամ զօրինադիրն աղաչես լուծանել զիւր օրէնսն և պաղատիս ընդդէմ օրինադրել ինքեան, և որ զքեզ արգել ընդդէմ Թշնամեացն աղօթել՝ հայցես լսել քեզ հակառակ աղաչողի Թշնամեացն, ոչ աղօթս զայն առնես և ոչ պաղատանս, այլ Թշնամանես զօրինադիրն, և արբեցութեամբ յանդգնիս առ Հանդերձեալն տալ քեզ բարի յաղօթիցն։ Օ՜ իմոյդ կատաղութիւն է աղաչողին լսելի լինել, ասա ինձ, յորժամ որ Հանդերձեալն է լսել՝ բարկացուցանես։ Օ՜այն առնելով ՚ի վիհ զքս փրկութիւնն մտես և ՚ի վախից արկանես՝ զքՀնամին յանդիման արկանելով Թագաւորին. քանզի Թէպետ և ոչ ձեռօք զայն առնես, այլ բանիւք զնա հարկանես. զոր և ոչ ծառայակցացն առնել իշխէիր, Հանդուգնակեցար առաջի իշխանին զայն առնել, Թէպետ և բիւր ուղղութիւն իսկ քո արարեալ, ՚ի մահ

վաղվաղակի առնուլն իրօք ածեալ լինիս։ Այլ արդ ե-
թէ առաջի իշխանի ոչ համարձակիս զհամապատիւն
թշնամանել, յանդիման ևս առնելով զայն կատարեա՛
ասա ինձ՝ ո՞չ սարսափիս և ո՞չ զարհուրիս ՚ի ժամանակի
աղօթիցն և պաղատանացն վայրենանալ այնպէս և դա-
զանանալ և մեծամեծ չարութիւնս յուցանել, քան թէ
որ զհարիւր դահեկանն պահանջեաց։ Այլ զի նման հա-
ւասար թշնամանես, նմին իսկ պատմութեանն լուր։

ՙի՛ւր տաղանդս պարտեր ումն, ասէ, տեառն, և ոչ
ունելով հատուցանել՝ աղաչէր երկայնամտել, զի վա-
ճառելով զկին իւր և զընտանիս իւր և զմանկունս՝ լու-
ծանէ զպարտսն տէրունականս։ Տեսանելով զնա ողբա-
լեալ տեառն, ողորմեցաւ և զբիւր տաղանդն եթող
նմա։ Ելեալ գտանէր զայլ ծառայ որ պարտէր նմա հա-
րիւր դահեկան. խեղդելով պահանջէր հանդերձ բա-
զում խակութեամբ և անմարդութեա՛ն։ Լուեալ զայն
տեառն էարկ զնա ՚ի կապարանն, և զոր յառաջագոյն
եթող զպարտսն զբիւր տաղանդացն, եգ զայն դարձեալ
՚ի վերայ նորա, և յաղագս ՚ի ծառայակիցն խակութե-
ան նման զպատիժն։

Դու ինձ և զայն տես որքան չարաբարոյ և անզգայ
եղեր հակառակ աղօթել թշնամեացն։ Այս ոչ զտէրն
աղաչէր պահանջել, այլ ինքն պահանջէր զհարիւր դա-
հեկանն. իսկ դու զտէրն ՚ի պահանջումն յայն յանա-
մեթ և յարգելեալ կոչես։ Այնոցա ոչ յանդիման տեառն,
այլ արտաքոյ ուրեմն զծառայակիցն խեղդեր. բայց դու
՚ի նմին իսկ ՚ի ժամու աղօթիցն առաջի թագաւորին կա-
լով զայդ առնես։ Այս արդ եթէ նա ոչ զտէրն աղաչեաց
՚ի պահանջումն, և զկնի ելանելոյն զայն առնէր, և ոչ
միւմ՝ թողութեան ոչ դիպեցաւ, դու զտէրն յարգե-
լեալ յայն ՚ի պահանջումն յարուցանելով զմի տանջանս
ոչ տացես, ասա ինձ։ Ա՛յլ այսուհետև՛ են քո միտք
յիշատակաւ թշնամութեանն և փքացեալ, և ընդոստու
սիրտ, և զարմեցուցանելն յիշելով ոչ կարես զայ-
տումն զնաւուցանել զխորհրդոցն. այլ հակառակ կար-
գեա այսմանն այնմիկ որ քոյ մեղացն յիշատակ և ըզ-
հանդերձեալ տանջանացն զերկիւղ. յիշեա քանի ինչ
պարտական ես դու տեառն, և զի փոխանակ այնոցիկ
ամենեցուն դատաստան պարտիս նմա, և զօրասցի ամե-

նայն իրօք ՚այ ահն քան զայն բարկութիւն. վասն զի և յաւէտ սաստկագոյն է սա քան զնորա իսկն: Յիշեա զչէհենն և զանջանան և զպատիժսն ՚ի ժամու պատաստասցես, և ոչ ՚ի միտ առնուլ կարասցես զԹշնամին: Խորտակեա զմիտս, նուաստացո զանձնդ յիշատակօք քոց սխալանացն, և ոչ ինչ վտանգեսցէ զքեզ բարկութիւն: Այլ այն առաւելն են չարեացն պատճառք զի զայլոց զմեղսն հանդերձ բազում հաստատութեամբ խոշտեմք, և զմերն յոլով պղերգութեամբ զանցուցանեմք. հակառակ նմին էր պարտ և արժան առնել զի զմեր չարիսն անմոռաց ունել, և զայլոցն ոչ երբեք ՚ի միտ առնուլ:

Այլեկ զայս արասցուք, և զայծ արասցուք հաշտ և յընկերացն դադարեսցուք անմահ բարկանալոյ, և Թշնամիոչ երբեք ոչ զոք կացցուք. և եթէ ունիցիմք, վաղվաղակի զԹշնամութիւնն լուծանիցեմք, և մերոյ մեղացն արագ արագ ընկալցուք զԹողութիւն: Ո՛վ զոր օրինակ ընկերին սխալալ լինելով չԹողացուցանէ զնոյն մեղացն զտանջանան լուծանել, նոյնպէս որ մաքուր է ՚ի բարկութենէ, մաքուր ՚ի յանցանացն լինի վաղվաղակի: Ո՞րպէս եթէ մեք չարք և սրտմտութեան ծառայեալք՝ յաղագս ՚այ ՚ի բաց զամենայն ինչ որ առ մեզ է անտես առնիցեմք զյանցանսն, և առաւել մարդասէր և բարին և յիմ սխալից մաքուրն զանցուսցէ զմեր սխալանսն առ ընկերն բարեմտութեամբ, և զմեր մեղս Թողուլ զհատուցումն մեզ ընձեռեսցէ: Որում լիցի ամենեցուն մեզ հասանել ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԽՕՍՔ ՑԵԻՏՐՈՊԻՈՍ ԻՇԽԱՆ, ՈՐ ՑԱՀԷ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՊԱՒԻՆԵԱԼ ԵՂԵՒ ՑԵԿԵՂԵՑԻՆ

Պիշա, առաւել ևս այժմ, ՚ի դէպ է ժամանակ ասել. "Անայնութիւն ունայնութեց, ամենայնն մնոտի է,,: Որ է այժմ պայծառութիւն իշխանութե պատ-

մուհանին. ոբ փայլակեալ ջահըն. ոբ կայծուման և պարքն, և ատաքն արմուենեաց և կայծուղքն. ոբ սպասքըն և պահակքն. ոբ քաղաքիս ամբոխքն և ձիըն. Թայք բարեբանութեանն և 'ի տեսարանան փաղաքշանքն: Ոչ մենայն այնոքիկ կորեան. և 'ի ընչել հողմոյն յանկարծակի զտերևն 'ի բաց Թափեաց, և մերկ մեզ ղծաուն եցոյց, և 'ի նմին իսկ յարմատոյն չարժեալ. վասն զի այնպիսի ինն եղեն հողմոյն արկածք, մինչ զի արմատաքի խլել սպառնացաւ և 'ի վեր կորզել և նորին ղրդուեցեալ ծառոյդ տերևքն:

Ոբ են այժմ ստեղծական բարեկամքն. ոբ դէմք փաղաքշանաց. ոբ գինեըբուքն և ընԹրիքն և հայակոյն գովութիւնք և որ 'ի բոլոր յաւուրն հեղեալ լիներ անապատին և զանազան խրախարանայն արուեստք և զօրութեանն սպասաւորք, որ զամենայն առ չնորհս առնեն և խօսին: Գիշեր էր այն ամենայն և երազ, 'ի տունջեան լինել սպականեցաւ. ծաղիկ էր գարնանայլին, յանցանել գարնանայնոյն՝ ամենայն խառիեցաւ, ստուեր և անց, ծուխ և լուծաւ, պղպջակք էին և պայԹեղին, սարդիոսատայն և պատաւեցան: Յաղագս որոյ զարձեալ զՀոգևոր զերդն զայն երգեացուք յաՀախապես 'ի վերայ ասելով. "Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ մնոտի է,,: Օ այս ասացուած յորում և 'ի հանդերձս, 'ի գուհս և 'ի տունս, յելս և 'ի մուտս, և նախ քան յամենայնի՝ յիւրաքանչիւր ուրուք 'ի միտս զրել պարտ և արժան է, և յամենայն ժամ յայս կրկնել: Ոչ ան զի յոլով է իրացն խաբէութիւն, և կեղպարանքն և կեղծաւորութիւնն ձշմարտութիւն առ յոլով Թուի գոլ. զայս Հանապազօր յընԹրիս և 'ի ձաշս, 'ի ժողովս ասել իւրաքանչիւր ումեք մերձաւորին է պատշաձապէս, և 'ի մերձաւորէնհամանապէս լսել՝ եԹէ "Ունայնութիւն ունայնութեանց, ամենայնն մնոտի է,,:

Ոչ ասէի քեզ յաՀախապես եԹէ սրտական է ընչեղութիւն, և դու ինձ ոչ անսայիր. ոչ ասէի քեզ եԹէ չարաբարոյ ծառայ է, և դու ինձ ոչ ներէիր. ահա քեզ այժմ իրացդ վորձ եցոյց՝ եԹէ ոչ սորուկ փախստական միայն, այլ և պրատպան՝ նա քեզ այժմ դողալ և զարհուրել պատրաստեաց: Ոչ ասէի քեզ յաբաժամ, և սասանէիր ինձ զՀնամարհան ասողն: Ոչ՝ եԹէ զքեզ ես

յաւէտ սիրեմ քան զփառաքուշն, և ոչ ընդունելիս զբանս իմ զայնոսիկ՝ եթէ աւժանի հաւատալոյ են վէրք բարեկամի քան զնատիւբ համբոյրս թշնամեաց։ Եթէ իմոց վերայն էիր անսայեաւ, ոչ արդեօք համբոյրքն նոցա զնահդ զայդ քեզ ծնանէին. վասն զի իմ վէրք զողջախոհութիւն գործեն, և նոցա համբոյրքն անբժշկելի հիւանդութիւնս պատրաստեն։

Որ մատուռակքն, որ բարեպարիշաքն որք՝ ի հրապարակս բիւր գովութիւն առ ամենեսեան շարամանեին. փախեան, ուրացան զքո զբարեկամութիւնն. զգուշութիւն ինքեանց՝ ի ձեռն քո անգիտութեանդ շահին, և ոչ մերձ լինել իշխեն։ Այլ մեք ոչ այսպէս. և յայնժամ դժուարեալք՝ ի յանդիմանութենէն ոչ՝ ի բայ կացաք, և այժմ զանկեալդ բժշկեմք և ողջեմք։ Պոտերազմեալս՝ ի քէն եկեղեցի զգոյշ տարածեալ ընկալաւ զքեզ, և խնամակալեան՝ ի քէն տեսարան՝ յաղագս որոյ մեզ զայրանայիր՝ մատնեաց և կորոյս։ Այլ սակայն ոչ դադարեցաք ասել՝ հիմ զայդ առնես, մինչեւ յուցանես զքաղաքս և վախից՝ ի վայր բերես. և զանց առնէիր զամենայնիս։ Զիրենթացքն որ զքո ընչեղութիւն վատնեցին, սուր քեզ սրեցին. բայց եկեղեցի որ՝ ի քումմէ՝ ի տարաժամ բարկութենէն վայելեաց, ամենայն ուրեք ընձանայ և յորոգայթին յափշտակել զքեզ չեպի։

Ոչ այս ասեմ, ոչ՝ ի վերայ ելանեմ անկելոյդ և կործանելոյդ, այլ որք կանդ՝ զգուշագոյնս կամիմ առնել. ոչ խարխարեմ զվերսն վիրաւորիդ, այլ որք ոչն են վիրաւորեալք՝ յառողջութեան պահել զգուշանամ. ոչ ընկղմեմ զվիրաւեալն, այլ որք առանց մերկաց նաւեն՝ խրատեմ զի մի լինիցին խորասոյզք։ Այս զնածդ այս լինիցի. եթէ փոփոխեացին՝ ի մարդկային մնաց և չկրաց։ Այսն զի եթէ գիտակ զփոփոխուածն, ոչ ևս ընդունի զփոփոխուածն։ Այլ սա զի ոչ չինքեանէ և ոչ՝ ի հարցն եղև լաւագոյն, զոր այսուհետև հաճոյք լեալ օգտեցարուք՝ ի նորա թշուառութենէն։ Ահա ինչ քան զմարդկային իրս յանկարծակի է. յաղագս որոյ զինչ և ասիցէ զբ անուն վատթարութեան նոցա, նուաղագոյն քան զձշմարտութիւն գտանի. եթէ ծուխ, եթէ ստուեր, եթէ խոտ, եթէ անուրջ, եթէ ծաղիկ գարնանային, և

որ ևս գԺնդակապոյնն է զի ընդ ոչընչին իբրեանց ևս յոլով ունին զգահավիժութիւն։

Այսն զի ո՛ եղև բարձրագոյն քան զսա. ոչ ընդ ա-մենայն աշխարհ էանց Ճոխութեամբ. ոչ առ նոյն իսկ մեծամեծացն գլուխս եղ. ոչ և որոց զԹագն ունէին՝ ահաւոր էր. ոչ ամենեքեան՝ի սմանէ դողային և զար-հուրէին։ Այլ ահա եղև քան զկնապետսն ևս հիքա-գոյն, և քան զտորուկն ողորմելի, և քան զայնոսիկ որ՝ի սովոյն հալշեալ աղքատքն աղքատագոյն. հանա-պազօր տեսանէ մուր սրեալ և վիհ և գահիճս և՝ի մահ տարուն։ Այս եթէ հեշտութիւն ինչ եղև երբէք, ոչ յիշէ։ Օ՛րինչ ասեմ զհեշտութիւնն զայնոսիկ. և ոչ սին ինչ Ճառագայթից զգայ, այլ՝ի միջօրէի իբրև՝ի գիշերի զխաւարայինն կարծէ. այնպէս աչք կուրա-ցեալք։ Անաւանդ եթէ ողբան և հակառակեսցուք, ոչ կարասցուք բանիւ յանդիման կացուցանել զխոտա՝ որոց համբերել նմա՝ի դէպ է, յորժամ հատանել զգլուխ յուսայ։

Այս զինչ պարտ է ասել՝ի մերոց բանիցն. սոյն այս իբրև զպատկեր ինն յայտնապէս զրեցաւ։ Այսն զի յառաջնումն աւուրն յորժամ եկին առ սա՝ի Թագա-ւորանիցն[1] բանութեամբ կամելով՝ի բաց ձգել, և փա-խեաւ առ ածային սպասս, տօսախեաց զէմք սորա էին, և քան զմեռեալն ոչ ինչ լաւագոյն անկեալ կայր. կո-կաջումն առանձն, և դողումն և սարսափումն ամենայն մարմնոյն, ձայն հատեալ և լեզու լքեալ, և ձև այնպի-սի՛ որ և զքարեղէնն անձն կարէր խանդաղատեցուցանել։ Օ՛այսոսիկ ասեմ ոչ թէ նմանելով և ոչ՝ի վերայ ելանելով թշուառութեանց սորա, այլ զձեր միտս կակ-ղացուցանել կամիմ և յողորմութիւն ածել և շատա-նալ լեալ պատժոցն։ Այսն զի այնպիսիք ինն են առ մեզ մարդիկ խաչք և ժանտացուցիչք, մինչև զմեզ ևս բամբասեն զի զնա ընկալաք՝ի մեր այսր. զանգիտելի նոցա բանիւքս կակղացուցանել կամելով հոչակեցուցա-նեմ զսորա զկիրսն։

Ընդէր զայրանաս, ասա ինձ, սիրելի։ Այսն զի չե-կեղծիս փախեաւ, ասէ, միշտ պատերազմողդ եկեղե-

[1] Այսպէս յօրինակին, յոյնն՝ի Թագաւորական ապարանիցն։

ցեայ։ Պօղին աղագաւ պարտ և արժան է փառաւորել զնա, զի եթող զդա ի՛ջանել յայսպիսի Հարկաւորութիւն, մինչ զի և զզօրութիւն եկեղեցւոյ և զմարդասիրութիւն ուսանել։ զօրութիւն՝ յորոյ այսքանեաց փոփոխմանց համբերեաց յաղագս պատերազմելոյն ընդ եկեղեցւոյ. և զմարդասիրութիւնն՝ զի զվահանն ի բաց ընկէց, և ընդ թևովք իւրովք ընկալաւ զնա և յամենայն զգուշութեան կացոյց, ոչ ինչ ոխակալ լինելով յաղագս առաջնոյն և ոչ միոյ իրաց, այլ տարածեալ զգոգ մարդասիրութեանն՝ քան զամենայն յաղթութիւս երևելագոյն ցուցանէ զնոր զյաղթութիւնն։ Այս զհետ թանոսս պատկառեցուցանէ. այս պայծառ զօրա դէմն ցուցանէ, զի զպատերազմողն գերի առնելով ինայէ, և ամենեցուն ամայի տեսանելով՝ միայն իբրև զմայր բարեգութ ի՛ներքոյ վարադուրին իւրոյ կոչոյց, և ընդդէմ թագաւորական բարկութեանն կաց և անսմբերելի առելութեանն. այս սեղան, այս զարդ։

Որ զարդ, ասեն, հարկաւորութեան աւելաստացողիդ և յափշտակողիդ՝ զսեանց սեղանոյդ բուռն հարկանել։ Որ ասեր զայդ. վասն զի և պոռնիկն մերձեցաւ յոտս Քրիստոսի, յոյժ պիղծն և անմաքուրն. և ոչ ինչ էին բամբասանք Յիսուսի լեալքն, այլ սքանչելիք և օրհնութիւնք մեծամեծք. վասն զի ոչ ինչ զմաքուրն ՚ի պատէր անմաքուրն, այլ զպիղծն՝ մաքուրն և անարատն ՚ի ձեռն մերձաւորութեանն մաքուր գործեաց։ Որ ո՛ խոակալ լինիր սմա, ով մարդ, ծառայ եմք խաչելոյն որ ասեր. "Ով գոյա զի ոչ գիտեն զինչ առնեն,,։ Օ՛ի այսր փախստեամբդ զոր գրովք[1] և զանազան օրինակօք լսեաք, ՚ի ձեռն գործոյ ուսաք զոր արարն, զօրինսն եղծեալ նախ առաջին ինքն ՚ի ձեռն որոց չարչարեցաւն, և եղև աշխարհի տեսարան։ Ո՛ռութեամբ աստ արձակէ ձայն. մի առնէք նոյնպէս, զի մի զնոյնս կրիցէք։ Այս վարդապետ երևեցաւ ՚ի ձեռն թշուառութեանցն։

Որ եծամեծ պայծառութիւն արձակէ լինքեանէ սեղանս այժմ. մանաւանդ ահաւոր յայսոցանէ երևեալ, զի զառիւծս կապեալ ունի, զի և թագաւորական պատկերին զարդ լինի, ոչ միայն յորժամ ՚ի վերայ աթո-

1 Յօրինակին դրաւ։

ոյն նատի զծիրանիան զղեցեալ և Թագաւորին եղեալ Թագաւորն, այլ և յորժամ առ պատուանդան Թագաւորին բարբարոսք զձեռս յետս կապեալ իցեն, և գբլուխք ՚ի վայր խոնարհեալք կայցեն։

Այլ զի յոյժ հաւանական քանիս վարիմ, գուք էք վկայք փութով և ՚ի միասին ընթանալով։ Ա՛ան զի պայծառ մեզ այսօր զտեսարանս և վայելուչ զժողովս գործեցեք. և որքան յաճախին ծանին բազմութիւն տեսանիք, այնքան այժմ զժողովս տեսանեմք։ Այս այժմ լաւութեամբ զամենեսեան կոչեաց, քան զփող պայծառագոյն ՚ի ձեռն իրացն արձակեաց ձայն։ Այսք և հարսունք զառագաստս Թողով, կանայք և արք զգուեհս ունայնացուցանելով ամենեքեան այսր ՚ի միասին ընթանայք, զի զմարդկային բնութիւնս տեսանիցէք յանդիմանեալ, և զկենցաղական իրացն զժամանակեայս մերկացեալ, և զպոռնկայ դէմսն որ երկիւղ և եռանդ պայծառութեամբ փայլէին, այնպիսի բարեգործութեամբ յաւելաւտացութեանցն յայնցանէ քան զամենայն պառաւս խորշակարկամութիւնս ունելով զաղբագոյն և բևեալ, իբրև ՚ի սպնդոյ ումեքէ փոփոխեալ, ՚ի վերայ շփուճն և դրախանքն[1] ՚ի բաց մաքրեալք։

Ա՛յսոքիկ են գժուարութեանն զօրութիւն, որ զպայծառս և զերևելիս քան զամենեսեան վատթարագոյն արար երևեալ։ Ա՛յժմ թէ ընչեղ ոք մնանէ այսր, մեծապէս շահի. յայնքան ՚ի գագաթանէ ՚ի վայր անկեալ, որ շարժէր զաշխարհս ամենայն, և այժմ զսպեալ է՝ քան զնապաստակ և զգօրտ երկչոտ ևս լեալ, և առանց կապանաց ընդ սիւնս բևեռեալ՝ փոխանակ շղթայիւ ահիւ շուրջ պնդեալ, զարհուրեալ և զողացեալ զնստուցանէ զայտուճն և քակէ ՚ի վայր զամբարձուճն. իմաստասիրել քեզ պարտ առնէ յաղագս մարդկայնոցս. մեկնեսցի[2] իրօք ուսեալ զոր գիրք ուսուցանեն մեզ։ Ո՛ ինչ արդեօք. թէ «Ա՛ենայն մարմին խոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. ցամաքեցաւ խոտն և ծաղիկն թօթափեցաւ,,. որպիսի ինչ, թէ «Իբրև

1 Ա՛յդպէս յօրինակին. Թերևս գրահանդն։

2 Ի յունականէն եղաք զՀատուածգ Հինեսցի. . ասասցանէն Հեղ, որ խանգարեալ Թուէը յօրինակին մերում այսպէս ամենեցուն չէան Բհանէց ասելով գրեալ պայսպիսի իրօք ասանիմ։

զնոսա վաղվաղակի ցամաքեսցի, և իբրև զբանջար դալարեսցի վաղվաղակի անկցի ,,. և եթէ "Արդ ընդունայնաթեան նմանեսցայ ,,. և եթէ "Իբրև զծուխ ենն աւուրք իւր ,,. և որ ինչ այսպիսիք են ։

Այլ եթէ աղքատ գտանիցէ, զդեմս զայս տեսանելով՝ ոչ աւազէ վինքն և ոչ վտանգի յաղագս աղքատութեան. այլ հնարս ևս խոստովանի աղկաղկութեանն, զի տեղի եղիւ նմա անկողոպտելի և նաւահանգիստ առանց ալեկոծութեան և պարիսպ ամուր ։ Այս բիւր անգամ զմտաւ ածելով զայս ախտս, կայ ճնայ աստ ։ Ցեսանէս զի ոչ սուղ ինչ շահ եղև փարթամացն և աղքատացդ, նուաստից և բարձրացելոց, ծառայից և աղատաց՝ ի սորա այսր փախստենէս. զիարդ իւրաքանչիւր օք առնելով դեզ յաստի դիմացս միայն երթեալ գնաց ։

Կակղացուցէք արդեօք զձեր զմիտսդ. հանեք արդեօք արտաքս զսրտմտութիւնն. շինուցէք արդեօք զանմարդութիւնն. ՚ի ցաւակցութիւն արդեօք յաւէտ ածաք ։ Ահա կարծիք են, և յայտնեն գէմք ձեր և արտասուացդ աղբերք ։

Այս արդ զի ձերդ ապաւաժուտդ եղև թանձրահող երկիր և պարարտ անդաստան, բերեալ զպտուղ ողորմութեան, բազացանելով և զհասկն զուարձացեալ ցաւակցութեամբն յուցանելով, առաջի անկցուք թագաւորին, մանաւանդ եթէ աղաչեսցուք նախ առաջին զմարդասէրն՝ ձեզ կակղացուցանել զբարկութիւն թագաւորին, առնել զսիրտ նորա կակուղ, որպէս զի բռնադակ մեզ տացէ հնարս ։ Քանզի և ահա յօրէն յայնմանէ իսկ յորմէ սա փախեաւ այսր, ոչ սուղ ինչ եղև սրտմտութեանն փոփոխումն. զի յորժամ գիտայ թագաւորն եթէ յանկողոպտելի յայն փախեաւ, թէպէտ և ամենայն զօրականն զարհուրեցուցանէր լցեալք բարկութեամբ և ՚ի սպանումն զնա հայցէին, հեռի և ՚ի բաց եկայ՝ զզօրականացն զնստուցանելով զսրտմտութիւն, արժանաւոր վարկանելով ոչ միայն զյանցանսն յիշել, այլ եթէ և ուղղութիւն ինչ ՚ի սմանէ եղև՝ զմբուռ աճել և յաղագս այնպիսեացն հնարս ունել, իսկ վասն այլ ազգ եղելոցն՝ իբրև մարդոյ վրիպանացն ներել ։ Այս յորժամ դարձեալ ՚ի վերայ կացին վրէժ առնուլ

փոխանակ թշնամանաց թագաւորին, աղաղակելով ՚ի վեր վազելին և զտեղան շարժելով զմահն յիշեցուցանելին, աղբերս արտասուաց արձակեալ այնուհետեւ և ՚ի հանդարտագոյն աչաց իւրոց՝ յիշեցուցանէր զնաճային սեղանս յոր փախեաւ, և այնպէս զնատուցանէր զբերտմունքիւնն։

Այլ սակայն և մեք ՚ի մէնջ յաւելցուք որպ աղաչաւ արժանաւոր է թողութեան։ Օ ի եթէ թագաւորն թշնամանեալ ոչ եղև ոխակալ, զուք ոչ ինչ այնպիսի կրեալով՝ այդքան բարկութիւն ցուցանէք. և զիարդ ՚ի լուծանել տեսարանիս այսորիկ ՚ի խորհուրդն մերձենայցէք և զոհացողականն զայն զոր հրամայիւք՝ ասել "Թող մեզ զպարտս մեր որպէս և մեք թողումք պարտապանաց մերոց,,, որ և ոչ ինչ է ձեզ պարտական՝ պահանջէք դատաստան։ Օ բիւրաց մեծապէս և թշնամանեաց, և ոչ մեք ընդդէմ ասելիք այժմ։ Այլ ոչ է ատենի ժամանակ այժմ, այլ ողորմութեան և գթութեան և ներելոյ. ոչ վճիռ հատանելոյ և դատելոյ, այլ բարերարութեան և հնարհի։

Այդ մի՝ զի փքասցի և մի գժուարեսցի. այլ մանաւանդ աղաչեսցուք զմարդասէրն ՝ած ընձեռել սահմանեալ ժամանակ և ՚ի սպառնալեաց սպանմանէն յապրշտակել, զի լուասցի սա ՚ի յանցանաց իւրոց։ Այս առ հասարակ մերձեսցուք առ թագաւորն յաղագս եկեղեցւոյս, վասն սեղանոյս՝ այր մի ՝ած յին սեղանոյս հնարհել աղաչեսցուք աստ. զի և նա զմեզ ընկալցի, և ՝ած նախ քան զթագաւորն գովեսցէ և մեծացուսցէ զմեզ՝ տալով զմարդասիրութեանն հատուցումն մեզ։ Օ ի զոր օրինակ զանմարդին և զխիստն ՚ի բաց մերժէ, նոյնպէս և զմարդասէրն և զբարեգութն ընդունի։ Այս եթէ արդար իցէ, պայծառագոյն և սա զպակաս յօրինէ. ապա եթէ մեղաւոր, հանդերձ թողութեամբ զանց առնէ զյանցանսդ առ ծառայակիցսն ցաւակցութեամբ, զհատուցումն զայս նման ընձեռելով. քանզի "Օ ողորմութիւն կամիմ, ասէ, և ոչ զզոհս,,։ Այմենայն ուրեք ՚ի գիրս ըզսոյն զայս տեսանեմք հայցեալ. զայս և լուծումն մեզայն ասէ լինել։

Օ նոյն և մեք այժմ սմա յողորմութիւն գործեսցուք, զի այնպէս զմեր յանցանսն լուծանիցեմք, և զե-

կ'ելլեյին զարդարիցեմք, և Թագաւորն այնպէս մարդա-
սէր զմեզ գտանեսցէ, որպէս և յառաջագոյնն ասացի, և
ամենայն բազմութիւնն գտանեցէ, և ծագիք աշխարհի
ընդ մարդասիրութիւն և ընդ ցածութիւն քաղաքիս մե-
ծոյ սքանչասցին, և ուսանելով ամենայն ուրեք յերկրի
զլեալն քարոզեսցեն զմեզ։ Եւ արդ զի այսքան վայե-
լեցաք 'ի բարիս, անկցուք առաջի, պաղատեսցուք. յա-
փշտակեսցուք 'ի վերայ կայելոց վտանգիցն զդերիս,
զփախստականս, զծառայս. զի և մեք հանդերձելոց բա-
րեացն հանդիպեսցուք 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր,
ընդ որում հօր և հոգւոյն սրբոյ փառք և պատիւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն։

ԽՕՍՔ ՑՈՐԾԱՄ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ, ԵՐ ԱՆԿԱՆԵԼ.*

Արդասէր մեզ Ժողովս, և պայծառ մեզ տօնս է
այսօր. ծով ալէկոծութեամբ լցեալ, այլ ոչ ամբոխեալ
'ի խռովութենէն։ Քանզի եկեալ այսր մայրն խաղա-
ղութեան շինուցանէ զամբոխս, զի լցցի առացեալն յե-
րանելոյն Դաւթայ. "Արդ զՅիսուէն ասէ մարդ, և
մարդ ծնաւ 'ի նմա, և ինքն հիմնեցոյց զնա բարձրեալն։"
Բայց հայեցարուք յիս հաւատարուք, զի պղերգագոյն
իմն է բանս. բաղաքք զիս պաշարեն, օրդեակք. ահա
անկանիմ, և զինչ արարից։ Կաբ և նաւուզիղք և տէրք
պատրաստեալք, և ես անցեալ նստիմ 'ի վերայ երկա-
ցուննոյ խեղոյ նաւին, 'ի հին և 'ի նոր կտակարանաց, և
զեկօքն մերձենամք յամբոխն, ոչ զեկօքս այսոքիւք ե-
րեւելեօք, այլ խաչին բեւեռօք փայտին մարմնչելով զը-

* Ընդ երիցայականսն Թերևս դասելի էր առաջիկայ Ճառդ յա-
ղագս անյայտ և անկցորդ հաւուա-
ծոյ նորա և խնասելոյն, եթէ չկայր
'ի միջի յոյն բնագիրք նորա 'ի կար-
գի հարազատացն. սակայն և այն-
պէս Թերակատար մասամբ յու-
նականին 'ի կիպոյ և անդր, և ինա-
ցորդ մասանցն ոչ Հշդրիտ համա-
ձայնութեամբն ընդ մերոյս կար-
ծիս տայ անդերձ լինել 'ի համար-
ձակութենէ օտար ձեռաց, կամ
հատուածոց նորա ոմանց վերա-
կաւ Թէ յանդգնաբար շինեցեալ
ընդ այլում Ճառի։ Միւսն այսու
օրինակաւ շատացեալ առ ժամս,
ստուգեացի ժամանակաւ 'ի բազ-
մութենէ օրինակաց որ հարա-
զատն էցէ։

խաղաղութիւն ընձեռեմ։ Որդեակք իմ, զինչ արարից. երթս աւանդութիւնս ձեզ տամ, հաւատս, ողջախոհութիւն, փոքրութիւն։ Այլ կամիցիք հաւատալ Համբերել, նմանողք լերուք Աբրահամու, որ ակարացեալն էր հասակաւ, և պաղուկքն առյդ։ Այլ ախորժիցիք պարկեշտանալ, լերուք նմանողք Յովսէփու վաճառեցելոյն Յեգիպտոս, և՝ի սուտս հարշեալ զեգիպտացին աղատեաց։ Յարեաւ՝ի վերայ անդ եգիպտացի բռնն ասելով «Որ նեա ընդ իս,,։ զարշելի բանիւ զարդարն ապականէր։ Այլ անդ յայնժամ եգիպտացի կէն, իսկ այժմ ատ եգիպտացի այր։ Այլ ոչ նա ընկճեաց զնա, և ոչ սա կաղապտէ այժմ զկնէղեցիս. քանզի երևեցաւ և աղաւաղն իմոյ ողջախոհութիւն, և բարբարոսին անարդելութիւն։ Այլ եթէ կամիք փորձանաց Համբերել, նմանեցարուք Յոբայ որ պատերազմեաւն լինէր և ծաղկեալ. պատերազմեաւն զուարճանայր, և պատերազմողն խաբեալ լինէր։ Որդեակք իմ, աւազակ ոչ երթայ ուր աւազ և քար և եղէգն կայցեն, այլ ուր ոսկի և արծաթ և մարգարիտ. նոյնպէս և բանաւորկուն ոչ երթայ ուր պառնիկ և քոզ, այլ ուր բարի անօթ։

Այս արդ զինչ. երկդ լնձ ասէիր Հայր բարեմիտ, և այսօր չարաբարութիւն՝ի վերայ արկանես. երկդ զիս երեքտասաներորդ առաքեալ, և այսօր Յուդաս յառաջ ընթացաւ. երկդ ընդ ազատիս իմոյս նստէր, և այսօր իբրև զգազան՝ի բաց վազեաց։ Այլ թող նոցա զի ոչ գիտեն զինչ առնեն։ Լամիմ, որդեակք, սփռել զլեզուս իմ առ Քաղուհին. Յեզաբէլ ամբոխէ, և Ջեղիսա փախչի։ Այնչ արտաքս քան զահմանս զիս մերժեն, Այղիայն նմանեամ. եթէ՝ի ծով զիս ընկենուն, ծառայակցին և մարգարէին Յովնանու. եթէ՝ի ոհղմ, Երեմիայի. եթէ՝ի գուբ, Դանիէլի. եթէ քարկոծեն, Ստեփանոս. եթէ սղոցեն, Եսայեայ. և երանի Թէ փայտեղէն սղոցաւ միայն, զի՝ի խաչին տանկութեան վայելեմ։ Երկիր մարմնացեալ պատերազմի ընդ անմարմնականին. և որ հանապազ ընդ առն քնակեալ է, մարտնչի ընդ Սրբիատոսի կնոջ. և որ հանապազ՝ի բաղանիս և՝ի լուանիս, պատերազմի ընդ մաքրոյն և ընդ լուացեալն։ Այլ սակայն և ինքն առանց առն նստցի, զի ըստ կենդանւոյն առն կէն այրն արար։ Այլ ուր իսկ Եսայեայ

մարգարէին որ ասէ, և Յղիայի՝ որ բարի և անապատ քան զամենայն սուրբս, նաև կատարելեանն, նուագապանին աշխարհի, ուրախութիւն խաղաղութեանն զինչ ասէր նուագերգելով. "Ի տարուընջ յորում մեռաւ Ոզիա արքայ, ի՛ Հակառն նորա եղ բարձրութիւն,. զաղթութիւն գոնոյ անպատուութեանն լցաւ: Եւ ո՞ զքեզ յորդորեաց զԹագաւորն Թշնամանել, որ տեղութիւն և կամ որ փառք քեզ: Երանելին Պաւլոս մարգարէ երգելովն "Յառջև Թագաւորաց խօսէի և ոչ ամաչէի,. Պատգամ քարոզն խաղաղութեան, խորհրդակարն և քան զԹագաւորս Հոխագոյն, "Եթէ մարդկան հաճոյ լինէի, ասէ, Քրիստոսի ծառայ ոչ ևս արդեօք էի,: Եւ արդ զինչ արասցուք. ասացից և յաճելոյ ոչ գաղարեցից. ինձ ոչ է դանդաղելն, և ձեզ զգուշալն: Ճ արժէսցին մեր մարմինք և կացցեն Տնօտատան մեր խորհուրդք: Այս բանք ինձ ուղղութեանց են. բազում ինչ ձեզ Թողացուցի, բայց զիմորձութիւնն որ այսօր զիս պաշարէ՝ ոչ մոռացայց:

Ամէնք ուսանել զիմորձութեանս օրինակ: Յորժամ մեբձեցաւ բանսարկուն ընդ հրեշտակս յերկրպագութիւն տեառն ՅՍ, ի՛ նմին ժամու Հարցանէր ցնա ՅԾ. "Ասաւ՞ եկիր, բանսարկու,: Քատանօր ինձ զՀերձուածողն զանյոյս, Թէպէտ և անկանիմ, որք զվերինն խուզեն: Իսկ արդ անգիտանայր արդեօք ՅԾ յայտ վայրի. "Ասաւ՞ եկիր,: Ոչ անգիտանայր, այլ զնորա բարն սանձահարէր. վասն զի ասէր ՅԾ. "Հայեցայր մնաք քովք ընդ ծառայ իմ Յոբ, այր արդար և անբասբաստ, Հեռացեալ յամենայն չար իրաց. ոչ ոք է իբրև զնա ի վերայ երկրի,: Ցերն գովեր, և ծառային պատկեալ լինէր: Եւ ընդդէմ արդեօք զնա մատնես սատանայի: Ա՛ան զի ոչ գիտեն մարդիկ որպիսի նահատակ ունիմ. մատնեմ զնա անմաքրոյն, զի ի՛ ձեռն պղծոյն գեղեցիկ անօթն երևեսցի: Եւ զինչ սատանայ պիղծն և զատութիւն ծնող բերանն. "Յառեաց զձեռն քո և մերձեցիր ի՛ նա, Թէ ոչ ի դէմ իսկ օրհնեսցէ զքեզ,: Ով բանսարկու, միթէ և անդ դրախտ Ա՛ինչգեռ նա խօսէր, այլ հրեշտակ գայր բերելով զեղանցն կտրատեան դոյժ. և ի՛ նորա խօսելն միւս ևս սին գալով, զամենայնի զկորստեանն. և զարձեալ այլ

ումն ասէր՝ հաւր ևՀ յերկինից յանկարծակի. և միւս ևս ումն՝ եթէ տունն կործանեցաւ և եսպան զմանկտնան. և այլ հրեշտակ գարձեալ ՚ի նորա խոսէին հասանէր առ լոկն՝ եղ և փախիր Հեգոլ: Ւսանասրկան կործանել կամէր զնաւահանգիստն, բայց նորա խաղաղութիւնն յաղթէր խաւարին: Ւյս զի ուսանիցիք եթէ ոչ այլ ոք և այլ էր, այլ ինքն սատանայ ինքեանք, զինչ ասէր. Ւեթէ ասացից նմա՝ եղ, զարհուրի: Ա՛յլ մինչդեռ մին խոսէր, և միսն ՚ի վերայ զիրսն քերէր, զի գոնէ վիրաւորեսցէ զնա:

Օ ինչ և այս անօրէն Թագուհի. ոչ մի անգամ եթէ ասէ ինձ եղ, այլ զմի մի առ իս առաքէ իշխանս, դատաւորս, զօրավարս և զայլ ամենայն մեծամեծս: Ա՛յլ ինձ ինչ զայսմանէ ոչ է փոյթ. զինչ ինձ անտի լինիցի. սարդ է և զարդի սատոյն առաքէ: Օ ինչ գոթեսցի Յովը, անշարժ աշտարակն, նուագարանն խաղաղութեան, բերանն Հօր, փառքն որդւոյ, ցնծութիւն Հոգւոյն, փառն աշխարհի. որ զկաւեղէն լեզուն ունելով՝ Հոգևորացն էր քաղաքացի, մեղաւորաց միխթարութիւն, ընչեզայ ամրութիւն, աղքատաց սփոփանք. "Տէր եղ և տէր էառ. որպէս տեառն Թուեցաւ, նոյնպէս և եղև. եղիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեանս,,: Հերովդիա գաս կաքաւէ և զՅովհաննու գլուխն խնդրէ և բառնայ զգլուխն ՚ի վերայ սկաւեղաձև սկահի, և արիւնն Ա՛բելի գոշէր. Յեզաբել աղաղակէ: Ա՛րքան էին փառք մկրտչին: Ակաւ Յիսուս նշանապարծել. բորոտք սրբեալ լինէին, կոյրք տեսանէին, տեառատեաք բժշկեալ լինէին, և յաղբերէն ծածկեալ լինէին աղբերք ախտից: Ակաւ Հերովդէս խռովել՝ վայ եղուկ, Յովհաննէս յարեաւ: Ա՛վ լերք և անտմօթ, կենդանի զնա Թշնամանեիք, և ՚ի մեռեալսն երկնչիս և զարհուրիս: Ւյս զինչ որդեակք. սատանայ ապականեցաւ կորեաւ: Ա՞ր ընթացայցէ, յաղթէ ինձ արդարն. եթէ առ բարեկամն նորա առաքինիս, որք այժմ չարաչարն եկին ՚ի ժողով. եկն արտաքս Հանապարհ գոթել: Ւյս զինչ և ես, որ դեակք. "Ւսղիցի անուն տեառն օրհնեալ,,: Ւ աւագոյն էր արեգական շինանել, և ոչ բանիցս այսոցիկ սպառումն լինել: Ւրկինն և երկիր անցանէ, այլ բան տեառն մնայ յաւիտեան:

Եւ ցինչ սատանայ՝ Պակասեցայ կորեայ. ոչ ըն-
Թացայց, ցինչ ասորիս. եթէ առ հինն զինն իմ առ
կինն, որով այժմ պատերազմի ընդ իմեմ եկեղեցւոյս.
՚ի դրախտէն Հանի, ասէ, և յաղբեւսց աշխատութիւն
ունիմ Հանել: Եւ ոչ գիտէ անատնձն եթէ աղբիւրն
քան զարեգակն ևս պայծառացան: Ել աղբիւրն, մի լի-
ցի. այլ արդարոյն Նահատակեցելոյ պայծառութիւնքն
երևեցան: Եւ ինն կինն, խորասոյզ ջրոյն, որ ինն սղեալ,
ընակիցն դժոխոց, ստութեանն գուստ, Պղտմայ Հա-
նողն, պահապան դրախտին, պատերազմողն, սատակիչն,
ցնաս խաղաղութեանն: Եւ ցինչ. "Պատ բան ինչ առ
տէր և վախճանեցիր,,: Ով լերդ գու, ոչ ինչ չարչա-
րիս, և զնաւդ խորտակել պատրաստես. յորժամ առ
քեզ կացին մնացին կերպաւք Հանդերձք, ամղանք տա-
րածեալք, ծառայք և աղախնայք, ուղտք և էշք, ոչ-
խարք և արջառք, Թակոյկք և տաշտք, սկտեղք զանա-
զանք, Հանդերձք ազգի ազգիք, յայնժամ ոչ ասէիր՝
առա բան ինչ և վախճանեցիր:

Եւ արդ "Եթէ զբարիսն ՚ի ձեռանէ տեառն ընկա-
լաք, չարեացն ոչ Համբերեսցուք,,: Եւ ցինչ չարիք
իակ, ալ լերդ. ոչ երկու ամբ, ոչ երեք, ոչ չորք, ոչ հինգ,
ոչ տասն. սուգ և ժամանակ փորձութեանս, և որ Համ
բերէն ՚ի սպառ՝ կեցցէ: Օ ցինչ լինիցի, որդեակք. ահա
մերժիմ, և զձայնս իմ ոչ ևս լսիցէք: "Այլ եթէ
հրեշտակ յերկնից ձեզ աւետարանեսցէ քան զոր ըն-
կալայքն, նզովեալ լիցի,,: Ծաղից ինչ ձեզ, որդեակք,
փոքր խնամատութիւն: Վարձութիւն ձեզ յորժամ է-
կեսցէ՝ "Եղիցի անուն տեառն օրհնեալ,,: Եւ ցինչ
Յովը. նատեր ՚ի վերայ աղբևաց. ոչ առնոյր երկաթ և
քերեր զԹարախն, այլ խեցեաւ քերէր: Եւ ընդէր խե-
ցեաւ. կատուլ զկատն շինուցանէր: Վեղութիւնք յոր-
ժամ գայցեն ձեզ, "Եղիցի անուն տեառն օրհնեալ,,:
Ձարիք ՚ի դժնդակ Թագաւորութենէն, բաղայք պատ-
րաստեալք յանօրէն մարդկանէ յորժամ Հասանիցեն
առ ձեզ, "Եղիցի անուն տեառն օրհնեալ,,: Այսպէս
և զիտաւս և զպատիս յորժամ տացէ Ած, ասասջիք "Ե-
ղիցի անուն տեառն օրհնեալ,,. ի առեալ զգուշացիք
լինիջիք: Վանգի և Յովը մինչ փարեամն էր փառա-
բանէր, և յորժամ աղքատացաւն գոհանայր. ոչ Ած-

խութիւնն յամբարտաւանութիւն և ոչ աղքատութիւն՝ ի պերճութիւն էարկ. այլ յամենայն ժամ պատը, "եղիցի անուն տեառն օրհնեալ,,: Այս է իմ թագ, այս պսակ, այս ինձ ուրախութիւն, այս իմ խաղ, այս գովութիւն, և յամենայն ժամ եղիցի ինձ զայս ասել "եղիցի անուն տեառն օրհնեալ,,, և զոհ անարիւն պատարագել տեառն ՚ի: Քանզի զգաստացեալ ըզբանս ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

ՑՕՂՈՒԱԾ ՎԵՐՈՑԻՆ ԿՈՉՄԱՆ ԻՒՐՈՑ

Յորժամ կամաւ Աբրահամ յափշտակեաց զիա բուածն, զկեղեցիկ և զսիրուն կինն չար և բարբարոս ե դիպատացին, անիրաւ աչօք տեսանելով գնորա գեղեցկութիւնն, և չնութիւն միանգամայն ախորժելով գործել, յայնժամ ՚ի սկզբանն ոչ խափաներ ՚ած, զի ցուցի արդարոյն արդարութիւն, և հնօրէն ողջախոհութիւն և բարբարոսին անարգելութիւն և ՚ի մարդասիրութիւնն: Արդարոյն արութիւն, վասն զի բերէր գոհանալով զլեառն. հնօրէն պարկեշտութիւն, զի անկանելով ՚ի բարբարոսական ձեռն զպարկեշտութիւնն պահեաց. բարբարոսին անարգելութիւն, զի յօտարին վերայ յարձակեցաւ. և ՚ի մարդասիրութիւնն, զի յետ յուսահատելոյ մարդոյն զպսակին էառ:

Եւ յայնժամ առ բարբարոսաւն. բայց եղև և այսօր յեկեղեցւոջն նոյն: Դպիրապացի նա, եպիսկոպոսի և սա. նա ունէր պաշտպանս, և սա օժանդակս. ոչ ապահանեցաւ Աբրահամ, և ոչ պղծեցաւ եկեղեցի. մի գիշեր միա որոշեաց, մի օր սա եմուտ. և ոչ մի գիշեր թողացաւ, այլ զի ունիցի զանկակից ողջախոհութիւնն. Թէ և ՚ի ներքս մտանէր, ոչ ամպահանեալ լինէր բարբուցն ողջախոհութիւն. Թէպէտ և չնացողն պատրաստեաց և իրքն կատարեցան և յոլովք չընտանեացն գրկին: Ոչ ատպատեցան հնարքն, և կատարումն ոչ եղև. երևեցաւ նորա չարութիւնն, և ՚ի մարդասիրութիւն: Այլ բարբարոսն այն յայնժամ ձանձրացեալ զյան-

յանան խոստովանեալ զանօրէնութիւնն, ևման ևս ասաց Ա. բրահամ. "Օ՛ինչ արարեր զայս. ընդէր ասացեր եթէ քոյր իմ է, և սուտ ինչ նուաղ յանցեալ առ դա.,,: Ապայ սա զինի անօրէնութեանն յամառեալ ՚ի Թշուառական և հեթ, "Ի՛եղար, դադարեաց,,. մի յաւելուր մեղս ՚ի վերայ մեղացդ: Այլ նա ելեալ՝ ընդդիմութիւն ունէր բարբարոսական, իսկ եկեղեցի ունի ընչեզութիւն ՚ի բարուցն՝ ուստի ողջախոհագոյն երևեցաւ: Տեսանէք զհնարս բարբարոսին: Հաներ զհովիւն, ընդէր և զհօտն պատակեցեր. որոշեցեր զնաւսւղին, ևման էր և զրկեն խոտակեցեր. ՚ի բաց տարար զայգեգործն, հիմ զորթն խլեցեր, ընդէր բարբարոսական իրաց նմանեցար: Ա. բարեր զամենայն, զի ուսցիս եթէ հօտ է ասա ՚ի Ա. ՚Քրիստոսէ հովուեալ: Ա. տաբայ է հովիւն, և հօտն ընամաւալ լինի. առաքելականն բանն կատարէր, "Ա՛Հ՚ի մերձաւորութեանն իմում միայն, այլ առաւել ևս այժմ ՚ի հեռաւորութենէս հանդերձ ահիւ և դողութիւ զձեր փրկութիւն գործեցէք,,:

Այս զայս ողառնալով իւրաքանչիւր զի ՚ի նոցանէ զի բռնաւորին սիրելի էր և բաղձալի: Յայտնելով ոչ ինչ իշխանի ՚ի քաղաքիս, ատ զդա արտաքս: Ա՛ւ զիս արտաքս, զի ուսցիս զորդւոյդ իմոյ զքաջատհմութիւն, զղինուորացդ իմոյ զզօրութիւն, զղինուցն այժ, զթագսոյն զերևելութիւն, զայ իմոյ զինամակալութիւնն, զսիրոյն մեծութիւն, զօդնականութեանն զօրութիւն, զդահութեանն ծաղիկ, զյաղթութեանն յայտնութիւն և զպատուոյ ծաղր: Ալ նոր և հրաշախառադոյն իրացն. հովիւն արտաքոյ, և հօտն խայտայ. զօրավարն հեռի, և զինուորքն զինին: Ա՛ւ ևս այնուհետև եկեղեցի միայն ունէր զզօրականան, այլ և քաղաքն եկեղեցի եղև. քահանայքն դատաստարանին, և հերձուածողքն հայհոյին: Ա. յտպէս և առ ՚Քրիստոս. յորմէ հետէ ՚ի խաչին բևեռեցաւ, խոստովանեցաւ: Ալ նոր և հրաշախառադոյն իրացն: քահանայքն սպանին, և մեղքն երկիր պագին:

Ա՛ի ինչ ազանչացուսցէ այս զեկեղեցի. զի եթէ ոչ այս էր լեալ, Ձնոսութիւն ձեր ոչ լինէր երևելի: Ա՛պա և Յովբ արդար էր, այլ ոչ երևէր մինչև ՚ի վերան և յորդոնան. այլ և պատասխանի առնէր նման ած

ասելով, "Ո՛րկանին զիս այլ ազգ ինչ հալցանել զքեզ, այլ զի արդար երևեսցիս,,: Պատերազմեցան նոքա և յայտնեցին զգանձն. պատերազմեցան սո- քա և պարտեցան: Ո՛չ իմիրդ պատերազմեցան, վա- ղերբք. ոչպէս պարտեցան, աղօթիւք: "Լիթ ոք ապ- տակեսցէ զքեզ յաջ ծնօտս, դարձո նմա և զմիւսն,,. և դու բիր բերեն յեկեղեցի առնելով պատերազմ: Ուր խաղաղութիւն է ամենեցուն, անդ պատերազմի սկիզբն. և ոչ՝ի տեղւոջէն պատճառեցեր, հէք Թշուառական. ոչ՝ի քահանայութեանն պատուոյ և ոչ յիշխանութենն մեծութենէ: Ո՛ւսաւարանն արեամբ լցաւ. ուր մեղայն է լուծումն, անդ արեան հեղումն: Ո՛ւսաւարանն արեանց եղև գերի. նոր պատերազմ: Յապաւոր՝ի ներքս մտա- նէ, ընկենու զվահանն և զԹագն արտաքոյ գնէ. դու՛ի ներքս մներ առնելով բիր: Այս և զնշանակ Թագաւո- րութենանն արտաքոյ Թողուլ՝ի ներքոյ լինի յորկային. դու զատացաւած պատերազմի անդր մնծանես: Այլոց սակայն զՀարանն ինչ ոչ ինաւեցեր, քանզի կայ մնայ՝ զգեղեցկութիւնն իւր յուցանելով: Յեսին հերձուա- ծոզք զնարա զգեղեցկութիւնն, տեսին Հրեայքն և փո- փոխեցան. տեսին զմեծ պայծառութիւնն զայն:

Ո՛և զի յաղթեցեք միայն, այլ զի և այնպէս յաղթե- ցեք, և զի իմ ոչ եղէալ մերձ յաղթեցեք: Լիթ ճատ ևի լեալ, բաժանելի զյաղթութիւնն ընդ ձեզ. քա- ջութիւնն երևեցաւ, այլ սակայն և այս իմ է գովու- թիւն: Բաժանեմ ընդ ձեզ զյաղթութիւնն, զի այդ- պէս զձեզ ունայն, մինչ զի և հեռի լինելով հօրս՝ զձեր քաջութիւն յուցեք: Ո՛չ զոր օրինակ քաջ ըմբիշք և՝ի բացեայ լինելով մանկամարզաց՝ զիւրեանց զօրու- թիւնն յուցանեն, նոյնպէս և քարեաշխութիւն ձերոյ հաստատուի և հեռի վարպապետս լինելով՝ զքաջատի- նութիւն և զբարեդիմութիւն յուցէք:

Այս զինչ պէտք են բանից. քարինք գոչեն, որք ձայն արձակեն: Լիթ՝ի Թագաւորական ապարանն և լեռ՝ ժողովուրդ կոտանդնիանապօլսոյ: Լիթ յանապատս և յանշէնս. ամենայն ժողովուրդ զգալութիւնդ զայդ զձեր գրէ: Ժողովուրդ որ ինչ ասնի ոչ, այլ հաստատ, ժողովուրդ զի հայրասէր է, ժողովուրդ զի վարպապե- տասէր: Լիրանելի է քաղաքն ոչ յարձակս պատկերի և

ասկեղէն ձեղուանց, այլ ձերով առաքինութեամբդ, որ ընդդէմ փայլեաց աշխարհի, և կարացին այդպէս հզօրապէս աղօթք ձեր յաղթել. և թերևս յիրաւի, քանզի հանդերձ բարեբանութեամբ և արտասուօք աղօթեցէք։ Ցօրս նետաս, և դուք արտասուս. նոքա բերս, և դուք աղօթք. նոքա սրտմտութիւն, և դուք հանդարտութիւն։ Ձարմն ոչ մտանեցաւ, դու զինչ կամիս առնել. դուք աղօթեկիք, և նոքա Ձալածէին։ Ալբ իցեն այժմ. մի զինս շարժեցաք, մի աղեղունս լարեցաք, մի նետս ձգեցաք. նոքա ինքեանքը փախեան, իբրև սարդիսաստնս սատառեցան, և մեք իբրև զվէմ կացաք մնացաք։ Ցրանեղի եմ ես յաղագս ձեր։

Վիտէի թէ որպիսի ունիցիմ զՁոխութիւնն. բայց այժմ յաւէտ հեռի եմ, և քաղաքդ փոփոխեալ լինի։ Ա ման միոյ մարդոյ խորք ժողովոյ քաղաքս լինէր։ Ալբ և կանայք և մանկունք տարաժամ հասակօք, կանայք բառնալով զտղայն՝ արհամարհէին զալիս ծովուն. ոչ ծառայ զարհուրէր ի տեառնէ, ոչ ծեր տկարանայր ի հասակին, և ոչ կանայք ի բնական տկարութենէն։ Ցկեղեցի էր անդ, եկեղեցի և աստ, եկեղեցի ամենայն ուրեք յաղագս ձեր։ Ցս զթագուհին պարեալ առէք. քանզի ոչ թագուցանեմ զնորա նախանձն. ոչ զթագաւորութիւնն ողբեմ. զի թէպէտ և ի ինեըքս ծածկեալ է, այլ արտաքոյ երևի։ Հանեալ լինիկ և յայնժամ. պարտ է և զտրամականան ասել, զի ուսանիցէք զհարգ տարեալ լինիկ յայնժամ, որպէս չգոյ. "Ալբ սերմանէին արտասուօք, և ցնծութեամբ հնձեսցեն. երթալով երթային և լային, որ առեալ տանէին զսերմանիս իւրեանց. գալով եկեսցեն բերկրանօք, որք բարձեալ բերիցեն զսրսայս իւրեանց,,։

Ա յս բանք եղեն ինձ։ Հանդերձ արտասուօք յուշակեցէք զնս, և ոչ յետ բազում ժամանակի՝ զինի միոյ աւուր ամենայն լուծաւ։ Ցս զինչ ևս. արևելք եղեն յաղագս ձեր, զի երևեսցի ձեր Համբերութիւնն վասն իմ, զի և ՚ձ ինքն ի սկզբանն ելոյծ։

Ա սելով ձեզ զօրինակն ամենայնի, անցի միայն ընդ խորան զեկեղեցին բառնալով. վասն զի սէր ոչ նեղի. ա լեկոծութիւնք էին յորովք, այլ խնդալութիւն եղև. ոչ նեղեալ լինէր նաև, և "ոչ դուք վտանգիկք,,։ Տա-

ըեալ լինէի, և զձեր իրս հոգայի. որոշեալ մարմնով, կապեալ էի ընդ ձեզ բարուք։ Օ՜ՅԱծ ազաչէի յերկնաւն. նոտէի միայն, և զձեր իրս հոգայի խորհելով յաղագս հեռանալոյն. յանկարծակի անցի արտաքոյ սահմանայն լեալ։ Ի՜ստուածապաշտ Թագուհին կիր առաքեաց յառաջնումն աւուրն. զնոյն իսկ ասացիոյ ըզբանսն, վասն զի պարտ և արժան է զնորա բանսն ասել. Ի՜ կարծեացի քո սրբութիւնդ եթէ գիտացի ինչ ի գործելոյդ. անպարտ եմ ես յարենէ քումէ, բայց չար մարդիկ և ապականեալք մտօք խաւարեցուցին. զայդոսիկ խնդ արտասուացս վկայէ ածէ։ Ի՜վ ածայրն երբ, որպիսի փութով հեղոյր զարտասուսն իւր. դաշինք լինէին նուէրքը անձեռագործ ՚ի նուիրելով զարտասուսն իւր և զխոստովանութիւն և զմեծ բարեմտութիւն, ոչ յաղագս քահանային միայն, այլ և վասն եկեղեցւոյն և յաղագս բազմութեանն պատակտելոյ։ Խաղում ինչ առաքէր ասելով. Ընչեմ զկրտութիւնն. յընչեմ զի ՚ի քո ձեռացդ իմ մանկունքս վկրտութեան դիպեցան։ Օ՜ՅՍոսիկ Թագուհին։ Խոկ քահանայքն յաղագս սպանութեան զայս ասելով, որ և երբեմն սբանչելի եղև, ամենեքեան անդիտանային զտեղին յորում դադարեալ էի։

Ի՜ւ նա որպէս յաղագս իւրոյ որդւոյն դողալով ամենայն ուրեք շրջէր ոչ մարմնով, այլ զինուորս առաքելով։ Օ՜ի ոչ յայն տեղի միայն առաքեաց, այլ և ամենայն ուրեք. զի մի նենգութեամբ սպանցի, ասէր, և մի բարձցի ՚ի միջոյ, և կորուսանիցեմք զորսն խնդրելի։ Ի՜ւ շրջէին որսորդքն յամենայն տեղիս սփռելով, զի ըմբռնեալ տանիցեն ՚ի ձեռս նորա։ Օ՜ Թագաւորական ծընդեան բուռն եհար, հաղորդ զայրն առնելով կամայն իւրոյ. որպէս Սառա զԱբրահամ, նոյնպէս և նա զայրն. Կորուսաք զքահանայն, ածցուք զնա վերստին. ոչ է մեզ և ոչ մի յոյս Թագաւորութեանս, եթէ ոչ զնա դարձեալ առցուք։ Ի՜սկայտ և այլ ազգ հնարեցաւ յաւադ ջագոյն լինձ, այլ ազգ հաւասարեաց, զկնի այնորիկ գործակցօք պաղատելով հայցէր, արտասուս հեղլով զԱծ աղաչէր և զգուշն յուցանէր ՚ի մեր կողմն բարեմտութեամբ հանդերձ, որովք զմեզ ընկալաւ, իբրև սգաստ նելով իմն հանդերձեալ գնալ իրան ընդ մեզ։ Ի՜սկ և

ինքն, փուԹամ զի և ոչ զայն զբանս մոռացայց, զո-
վեմ զբարեմտուԹիւնս ձեր, գովեմ զհայր զեկեղե-
ցւոյս, զսնուցիչն որբոց, զյուսոյն աղքատաց. որքան ինչ
նուաւս փառք ՚ի եղէն, և փառք սմին եկեղեցւոյս: Ա-
րեկ առաքեաց առ իս զայս բանս ասելով. Աղօթք իմ
լցան. կատարեցան ուղղուԹիւնք. պսակեցայ առաւել
քան եԹէ Թագաւս՝ ընդունելով զքահանայդ. եւտու
զգլուխդ մարմնոյն, զնաւուղիղդ նաւին, զփեսայդ հար-
սինն:

Ակնամիքն ընացողք ամաչեսցեն. եԹէ կեամ՝ ուրա-
խուԹեամբ կեամ, և եԹէ մեռանիմ՝ ոչ ևս փոյԹ ե
ինձ: Զայցի և զմարդասիրուԹիւն ուղղուԹեցն: Ո՛չինչ
արարիչ, զինչ ձեզ հատուցից արժանաւոր փոխարէնս
ընդհիւծ: Զարժանաւոր ինչ ոչ կարեմ, բայց զոր ունիմ
տամ: Ունիմ, պատրաստաբար ունիմ հեղուլ զիս յա-
զագս ձերոյ փրկուԹեանդ: Ունէ զոր ունի այդպիսի որդիս
որպէս ես. ես քունեմ, և հասկքն զուարձանան: Ունէ
ինչ են ինձ պէտք աշխատուԹեանս. ես դադարեալ եմ,
և ոչխարքն գայլոյն յաղԹողք լինէին[1]: Զի յաղագս
այսոցիկ ամենեցունն ամենեքեան փառս առաքեսցուք Հօր
և որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

ՎՀԻՒ ԿԱՆԱՆՑԻՑ ԿՆՈՋՆ

Յայժ են խոտորուԹիւնք, այլ զձեր յօժարուԹիւն
փուԹոյն չկարաց արգելուլ. բաղում են փորձուԹիք,
այլ զգուԹն ձեր ոչ մեղկեցին: Ունէ պարապէ եկեղեցի
առ ՚ի պատերազմել և յաղԹել, առ ՚ի մատնել և չարչ-
տել. զի որչափ այլք մարտնչին, նա առաւել ևս աճէ և
զօրանայ. զի Թէպէտ և ալիքն կոծեն, իսկ վէմն անշարժ
կայ: Ո՛ տուընջեան վարդապետուԹիւնք և ՚ի գիշերի
աքնուԹիւնք, տիւ ընդ գիշերոյ նախանձի. անդ ժողովք
և աստ ժողովք. գիշերն զհրապարակն եկեղեցի արար.
յօժարուԹիւնն ձեր քան զհուր ջերմագոյն է. ոչ կք

1 Պահասին տողք 57:

կարօտ վարդապետութեան առ՝ի ցուցանել զիմոյն։ Որ ոչ պանչասցի և կամ ոմն ոչ զարմասցի։ Ոչ եթէ միայն որ էհինն նուաղեցան, այլ և որք չէհինն աստ՝ յաւելան։ Ինպիսի ինչ են փորձութեանցն հանդէպ. որպէս և ցոդ՝ի յերկիր զի իջանէ և բուսուցանէ զսերմանիս, նոյնպէս և փորձութիւնքն յորժամ մտանեն՝ի մարդն, զսրթուցանէ զյաժարութիւն . . .[1] մանկունս անտես առնել։

Երեկ մեզ Պաւղոս սեղան պատրաստեալ առաջի դնէր, և այսօր Յատթէոս. երեկ խորանակարն, և այսօր մաքսաւորն. երեկ հայհոյիչն, և այսօր քարոզիչն. երեկ հալածիչն, և այսօր վարդապետն։ Ոչ հայհոյիչն ոչ կաց ինաց հայհոյիչ, այլ եղև առաքեալ. և յափրշտակող ոչ ինաց ագահ, այլ եղև աւետարանիչ։ Սեմ զառաջինն բիծն, և յետ այսորիկ զառաքինութիւնն. զի ուսցիս թէ որչափ է փոխհատանն օգուտ, զի մի երբեք՝ի փրկութենէն քումմէ հրաժարեսցես։ Այդպատերքն մեր նախ՝ի մեղացն երևելիք էին, և յետ այնորիկ յարդարութենէն ընտրեցան, մաքսաւորն և հայհոյիչն, գլխաւորական չարք։ Օ՜ինչ իցէ մաքսաւորութիւն. յափշտակութիւն օրինաւոր, բռնութիւն հաճարձակութեան, անիրաւութիւն օրինաւոր ջատագով։ Ինացայք զոր ասացիս. օրէնք բժշկեն, բայց ապա և սպանողք լինին. ոչ եթէ թեթևացուցանեն միայն ըզցաւսն, այլ և սպանանեն։ Օ՜ինչ է մաքսաւորութիւն. մեղք առանց ամօթոյ, յափշտակութիւն առանց պատճառանաց չար քան զաւազակն։ Օ՜ի և աւազակն թէպէտ և յափշտակէ, սակայն և ամաչէ. իսկ սա և լըսի և ցափշտակելոյն։

Այլ նա աւանիկ մաքսաւորն յանկարծակի աւետարանիչ լինէր։ Որպէս և կամ թէ որպիսի իրօք՝ լուր. "Ելցանէր Յիսուս, ասէ, և տեսս զՅատթէոս զինքստեր՝ի մաքսաւորութեանն, և ասէր՝ եկ զկնի իմ„։ Ով բանի զօրութիւն. ընկենոյր զկարճն, և զգերին զինաւոր վառեալ ցուցանէր, և զիաւն ասկի։ Պատր հպէր՝ի նա կարճն, և յառնէր վաղվաղակի երթայր զկնի նորա։ Ի խոր՝ի յանդունդս էր՝ի չարութեանն, և յան-

[1] Թուղթ մի պակասի յօրինակէն՝ տողք 34։։

կարծակի բարձրանայր ՚ի կամարն առաքինութեանց. մի ոք վերպետցի յիւրմէ փրկութենէն։ Օ՜ի ոչ է չարութիւն ՚ի բնութեանն. կամօք պատուեցաք և աղաւտութեամբ։ Աքսաւոր իցես, կարես լինել աւետարանիչ. հայհոյիչ իցես, կարես լինել առաքեալ. աւազակ իցես, կարես մտանել ՚ի դրախտն։ Ընդ որ կալ տեառնն քումմ, զի ոչ մի չարութիւն ինայց զոր ոչ կարիցէ լուծանել ապաշխարութիւնն։ Այսն այնորիկ և զղջաւորականն չարութեան ընտրեաց Քրիստոս, զի մի իսպառ կորիցես։

Մի ասեր ինձ թէ կորեայ այսուհետև և չիք հնար ինձ, և մի ասեր ցիս եթէ մեղայ և արդ զինչ գործեցից։ Բժիշկ ունիս որ հեռի է ՚ի ցաւոց. բժիշկ ունիս որ կամօք բժշկէ, որ կարէն և կամի. ոչ յոչնչէ արար զքեզ զի իցես. իսկ յորժամ իցես և թիւրիցիս, առաւել ևս կարէ ուղղել։ Այլ նախ հող առ յերկրէ և ըստեղծ զմարդն. որպէս զՀողն մարմին արար. որպէս ջիղս, որպէս ոսկերս, որպէս մորթ, որպէս երակս, որպէս ունչս, որպէս աչս, որպէս արտեւանունս, որպէս յօնս, որպէս լեզու, որպէս կուրծս, որպէս ձեռս, որպէս ոտս, որպէս զայլն ամենայն։ Այլ հող էր նիւթն, ոչ մի բնութիւն էր. և եմուտ արուեստն, և աղգի աղգի գործեաց զարարածս։ Մի՛թէ կարիցես ասել զՀանգամանս թէ որպէս արար. նոյնպէս և ոչ զՀանգամանս իրացն կարես ասել թէ զիարդ սրբեսցիս։ Օ՜ի թէ հուր յորժամ անկանի ՚ի փուշ՝ ծախէ և այրէ, որչափ ևս առաւել կաճքն ՚ի զմեղս մեր ջնջէն և կորուսանեն և արմատաքի խլեն, և անմեղիս զյանցականն նման առնեն։ Մի խնդրեր զՀանգամանսն և մի քններ զբեւեան, այլ հաւատա ՚ի զարմանն։ Մեղայ, ասէ, յոյժ և բազում։ Նա ոմն իցէ առանց մեղաց։ Այլ ես, ասէ, ևս չար և աւելի քան զամենայն մարդ։ Ընդ սա է քեզ այն պատարագ որ ասէն՝ թէ "Նա զու նախ զանօրէնութիւնս քո զի արդարասցիս"։ Օ՜մնաւ ած թէ մեղար, և սկիզբն առնես քաւութէն. տրտմեաց ՚ի սուգ մուտ, արտօսր արկ և ապաշաւեաց, և ձեռն տուր և առաջնորդ առ զապաշխարութիւնն և հպեաց առ աղբիւրն։

Օ՜ինչ ասեր մաքսաւորն և աւետարանիչն. "Գնաց Յիսուս, ասէ, և եկն ՚ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի.

և ահա, ասէ, կին մի ,, : Օ արմանայ աւետարանագիրն՝ թէ ահա կին մի. զկին զկնի սատանայի ցուցանէ, որ ի դրախտէն փախուցեալ եանց, ասէ, զիս եհան, մայր մեղայ, սկիզբն անօրէնութեանց. այս կին այն է որ գայ՝ այնր ծնունդ: Ալ նոր իրք և զարմանալիք. Հրեայքն փախստական լինէին, և կինն զկնի երթայր: "Կ'ահա կին մի, ասէ, 'ի սահմանաց անտի ելանէր և գայր, աղաչէր զնա և ասէր. տէր, որդի Դաւթի, ողորմեա ինձ ,,: Վարողիչ լինէր կինն, զաճուձութիւնն և զտեսչութիւնն խոստովանէր. տէր՝ զաճուձութիւնն կոչէր. որդի Դաւթի՝ զմարդկական տեսչութիւնն: Ողորմեայ ինձ, ասէ: Հայեաց ընդ խնամտական անձնին. չգոյ չիս, ասէ, գործ բարի կենաց, ոչ օգնիմ վարս ապաւինութեան, յողորմութիւն ապաւինիմ, յանցաւորաց նաւահանգիստն. յողորմութիւն յուսամ, յանփոխն յանքննին փրկութիւն:

Այլ զինչ եառես այնպիսի չարեաք լի և անօրէնութիւն, զիաւրդ իշխեաց մերձենալ առ նա: Դու տես զկնոջն զնմանաւթիւնն. ոչ աղաչէր զՅակոբոս, ոչ աղաչէր զՅովհաննէս, ոչ անկանէր առաջի Պետրոսի. այլ հեռ ձոյր անցանէր ընդ դունդն: Ես պիտոյ է ինձ, ասէ, միջնորդն, այլ առնում ինձ զապաշխարութիւնն ջատագով և առ նոյն աղբիւրն մերձենամ, և ասեմ թէ վասն այնորիկ եմ, վասն այնորիկ մարմին առ, զի ես ընդ նըմա խօսեցայց: Ալ անչափ մարդասիրութիւն. անդ 'ի վեր քերուածք դողան 'ի նմանէ, և աստ 'ի խոնարհ պատնիչն ընդ նմա խօսէր: Ողորմեայ ինձ: Դան լուր եր, և անչափ անդունդք փրկութեան էին: Ողորմեայ ինձ. վասն այնորիկ իջեր, վասն այնորիկ մարմին առեր, վասն այնորիկ եղեր իբրև զիս: Ընդ 'ի վեր ահ և դողութիւն, և աստ 'ի խոնարհ համարձակութիւն: Ողորմեայ ինձ, չէ պիտոյ ինձ միջնորդ. ողորմեայ ինձ, զի ես ողորմութիւն խնդրեմ: Օ զինչ ցաւէ. "Դուստր իմ, ասէ, չարաչար մոլեգնի ,,. բնութիս տանջի, դութս վարժի, եւլի բարեխօս դատերն իմոյ. ոչ առեալ կրէ ըզհիւանդութիւնս, այլ կրէ զհատատս: Պատուաճ է, 'ի հեռաստանէ տեսանել: "Դուստր իմ չարաչար մոլեգնի ,,: Սուգ չար, խոցոտմունք բնութեանն զարգանդն պատուռէր, ալիք շարժմանն 'ի դութն կային: Օ զինչ

ասարիից կամ յո՞ երթայց։ Ա՛ւ ընդհէր ոչ ասէր Թէ ո՞ղորմեաց դատերն իմոյ, այլ ողորմեաց ինձ։ Ա՛ւա, ասէ, ի տկարութեան ունի զախտան, չգիտէ զինչ ցաւէ նման և ոչ զգայ ախտիցն. առաջաստ վշտաց ունի զանցաւորութիւնն, աւելի ևս զանդոյութիւնն։ Ինձ ողորմեաց տեսողիս Հանապազորդ չարեացն. բազմութիւն վշտաց ունիմ՝ ի տան իմում. յո՞ անցից, յո՞ դնացից. յանապա՛տ, այլ ոչ կարեմ Թողուլ զնա միայն. այլ ի տո՛ւն իմ, այլ զԹշնամին ի ներքս գտանեմ, ալիք ի նաւահանգստի, հրապարակ վշտաց եղև։ Ո՞ւրէ՞ զնա կոչեցից. մեռեա՛լ, այլ խղտե՛. կենդանի՞, այլ չգիտէ զինչ գործէ. ոչ կարեմ գտանել անուն որ Թարգմանեսցէ զախտան։ Ողորմեաց ինձ. զի Թէ մեռեալ էր դուստրն իմ, ոչ այս անցք անցանէին ընդ իս, Թաղէի՝ ի ծոց երկրի զմարմինն, և ժամանակ՝ ի վերայ անցեալ մոռանային զսուգն և Թէ Լանայի՝ ի վշտացն։ Ա՛րդ այժմ մեռեալ Հանապազորդ՝ ի տան ունիմ, տեսիլ նշաւակ է ինձ, յաՀախեցուցանէ ինձ զվէրս և յաւելու ինձ ցաւս։ Ո՞րպէս կարիցեմ տեսանել զաչս շրջեալ, զձեռս Թիւրեալ, ըզգէսս արձակեալս, փրփրեւ և կրձտել, և զդահիճն չար՝ ի ներքս ունի. և զի տանջի գիտեմ, և զվէրսն տեսանեմ, բայց տանջիչն չերևի, և լինիմ տեսող օտար չարեաց, և լինիմ տեսող բնութեանս իմոյ որ զիս խոցոտէ. ողորմեաց ինձ։ Ձալաչար են ալիքս, ցաւք և երկիւղ, ցաւք բնութեանս և ահ դիւացն։ Ո՛երձենալ չկարեմ և ոչ ունել. մղէ զիս ցաւս և մերժէ զիս ահս. ողորմեաց ինձ։

Ա՛յլ հայեաց ընդ կինն խնաստուն. ոչ չոգաւ առ կախարդս, ոչ կոչեաց զգէտս, ոչ զիր պահպանական ընդ անձն արկ և ոչ զՀմայական կանայս՝ ի վարձու առ՝ զայնս որք վարժինն՝ ի դիւաց և լուծանեն զվէրսն. այլ Թողոյր զդիւացն արդաստեարսն [1], և գայր առ փրկիչն ողջոց մերոց և ասէր. «Ողորմեաց ինձ, դուստր իմ չարաչար տանջի...» Կ՛հանէք ապաքէն և դուք որ որդւոց Հարք լեալ էք՝ օգնեցէք բանիս իմոյ, և որ մարք էք՝ պատրաստեցայք, զի ոչ կարեմ Թարգմանել զվիշտն որում

1 Ա՛յդպէս երկաԹագիրն. այլ որ. արգասիքն, յունական ձայնիւ վարեալ Թարգմանչին ἐργαστήριον արուեստանոց կամ գործարան։

համբերեր կինն։ Աղօթեաց ինձ, զի զուստր իմ չարաչար տանջի։ Տեսեր զերկայնմտութիւն համբերութեան։ Այս և ոչ բան մի տայր նմա պատասխանի։ Այլ անչեզի իրք. աղաչէր ժառն, ողբայր զտառապանս, բազմացուցանէր զողբան, պատմէր զցաւն. և մերդասէրն չտայր պատասխանի։ Կանոն լեալ կայր, կինն պաղատէր, և բժիշկն զդեղն չդնէր վաղվաղակի։ Օ՜րինչ են իրքն, զինչ են զարմանքն. այլոց ընդ առաջ ընթացեալ գաս, և կինն որ զինի փութացեալ գայր՝ի բաց հալածես։ Ամաց զբժշկին զնմաստութիւնն. "Այս և պատասխանի ոչ տայր նմա,,։ Այն է՛ր ոչ տայր. ոչ եթէ՝ի բանն հայէր, այլ զաներևոյթն միտս քննէր։ Այլ տայր նմա պատասխանի։

Այս ասպա իբրև ոչ առնոյր վճիռ, մատեան աշակերտաց նորա և ասէն ցնա. "Երթակեա զկինդ, զի հանապազ աղաղակէ զկնի մեր,,։ Այս ասպա նա զինչ ասէր. դուք արտաքին ձայնին միայն լսէք, իսկ ես զներքինն խորհուրդն քննեմ. մեծ է բարբառ սրտին քան զաղաղակ բերանոյն։ Երթակեա զնա, զի աղաղակէ զկնի մեր։ Իսկ միւս առեւտրանպիրն "առաջի մեր,, ասէ։ Ընդդէմ միմեանց է ասացուածն, այլ ոչ ստեն և ոչ զմի. զերկոսեանն առնէր կինն։ Այս յառաջ զկնի աղաղակէր. իսկ յորժամ չտայրն պատասխանի, առաջոյ կուսէ գայր անցանէր, իբրև շուն լրբեալ լիզայր զոտս տեառնն իւրոյ։ "Երթակեա, ասեն, զնա,,. տեսողք ժողովէր, հրապարակս կուտէր. զմարդկեղէնն ամենեն տեսանէին նորա և ասէին. իբրև զայծ մարդասէր տուր փրկութիւն կընոջն. արձակեա զնա, զի աղաղակէ զկնի մեր։ Այս ապա զինչ տայր պատասխանի Յիսուս առ այն. "Այս առաքեցայ եմ առ ոք. բայց միայն առ մնլորեալ ոչխարս տանն Իսրայելի,,։ Այս յորժամ առնէր պատասխանի, և ս չար զայրացուցանէր զվերսն. բժիշկ էր զի հատցէ, ոչ զի բաժանեսցէ, այլ զի ամիսթիսեսցէ։

Այլ ասա ունկնդիր լերուք ինձ մնադիւրութեամբ և պատրաստեցէք զմիտս ձեր. խնդիր է՝ի խոր, քննել կամիմ։ "Այս առաքեցայ ես առ ոք, բայց միայն առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի,,։ Երկա է առնեայն. վասն այսորիկ մարդ եղեր մարմին առեր, այնչափ տեսչութիւնս գործեցեր, զի զմի միայն անկիւն երկրի ապ-

բեցուսցես, և զայլս կորուսեալս անտես արասցես. և այսպէս աշխարհդ ամ զրկեսցին, սկիւթացիք, Թրակացիք, Հնդիկք, մարք, կիլիկեցիք, Դամիրք, Լսորիք, փիւնիկեցիք և որչափ երկիր ի ներքոյ երկնից և արեգական է: Եւ ման Հրեից միայն եկիր, և զհեթանոսս կորուսեալս անտես արասցես, և ոչ փոյթ արասցես ման ծխոյն Հենձերոյ, և անփոյթ արասցես ման թշնամանոցաց հօր քո և կռոյն երկրպագուաց և զգիւաց պաշտուիչս: Այսպա ընդդէմ ասիցէ նահապետն քո ըստ մարմնոյ՝ եթէ "Լսնդրեա յինէն և տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ զամենայն ծագս երկրի,,. նոյնպէս և Լսսայի սրովբէիցն տեսող վկայէ և ասէ. "Հղիցի, ասէ, արմատն Յեսսեայ, որ կանգնելոց իցէ իշխան հեթանոսաց. ի նա հեթանոսք յուսասցին,,. իսկ Յակոբ ասէ. "Ոչ նուազեսցէ իշխան Յուդայ և մի պետ յերանաց նորա մինչև եկեսցէ այն որում պատրաստեալն իցէ, և նա է յոյս հեթանոսաց,,. և Մաղաքիաս ասէ՝ թէ "Ի ձեզ փակեսցին դրունք պղնձիք, և ոչ փակեսցեն որ առաջի կայ նոցա. յարևելից մինչև ի մուտս արեւու անուն իմ փառաւորեալ է ի հեթանոսս, և յամենայն տեղւոջ պատարագ մաքուր տեառն սուրբ պատարագ,,. իսկ Դաւիթ. "Ամենայն ազգք, ծափս հարէք, աղաղակեցէք առ Ած ի ձայն ցնծութեան. զի տէր բարձրեալ և ահաւոր, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի. Համբարձաւ Ած օրհնութեամբ և տէր մեր ձայնիւ փողոյ,,. և միւսան ևս. "Արարէք լերուք հեթանոսք ընդ ժողովրդեան Նորա,,: Եւ յորժամ եկիր ոչ վաղվաղակի զմտան կուժեցեր, զգլխաւորականսն հեթանոսաց, զբռնութիւնն սաստանայի, զզօրութիւնն գիւաց: Ո՛չ իշեր և մարգարէս կուժեցեր զնոսա: Դու զմտան կուժես, և մարգարէքն ման հեթանոսաց ասէին. յարուցեալ ի դժոխոց ասես ցաշակերտսն "Երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ,,. և արդ կինն յորժամ եկեալ չուառական և տառապեալ վասն դստերն իւրոյ աղաչել և զվիշտն պատմել, յայնժամ ասես. "Ո՛չ առաքեցայ ես առ ոք, բայց միայն առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի,,: Եւ յորժամ Հարիւրապետն մատչէր առաջի, ասէիր

“Այս եկիր և բժշկեցիր զնա,,, յորժամ աւազակին՝ թէ “Այսօր ընդ իս իցես ի դրախտին,,, յորժամ անդամալուծին “Որի առ զմահիճն քո և երթ ի տուն քո,,, յորժամ ազարուն ասէիր “Ազարե, եկ արտաքս,,, և ելանէր չորեքօրեայն արտաքս։ Ո՞ բորոտս սրբես, զմեռեալս յարուցանես, զանդամալոյծս հաստատես, զկոյրս բժշկես, զաւազակս փրկես, զպոռնիկն քան զըզկոյն զգաստագոյն առնես, և նման ինչ ոչ տաս պատասխանի։ Ո՞ ինչ էր նորա օրինակն. զինչ իցեն զգալմանքն և սքանչելիքն։

Այեաց բարեքիւ, զի ուսցիս զկնոջն քաջութիւնն և զտեառնն զիմաստութիւնն և զհոգաբարձութիւնն. զի գիտասցես զառ ի յապայ օգուտսն, զի ուսցիս զշառնուլն յանձն՝ մեծութիւն տուչութեան հնարիցէր. զի յորժամ աղօթիւք խնդրեսցես և չառնուցուս, մի երբեք ձանձրանայցես և հեռասցիս։ Այլ հայեաց և ունկն դիր սրտի մտօք, զի յորժամ յեգիպտացւոյ բռնութենէն հրաժարեցին հարքն և ի ձեռաց Փարաւոնի ապրեցան, ընդ անապատն երթային և կամէին մտանել յերկիրն քանանացւոց ի կռապաշտ մարդկանն և յամբարշտաց, առ երկրպագուսն քարանց, առ պաշտօնեայս ծառոց բազում ամբարշտութեամբ լի, պատուէր տայր նոցա ՚ած զայս օրէնս և ասէր. “Ի՛ մտնուլ յորդւոյն նոցա փեսայ և մի տալ զդստերս իւրեանց հարսունս նոցա, մի վաճառ առնել ընդ նոսա ոսկւով և մի հաղորդել ընդ նոսա սեզանով և մի միաբանել ընդ նոսա և մի ինչ յայնպիսի իրաց. զի ամբարիշտ է ազգն, տանիմ զքեզ անդր ժառանգ նոցա,,։ Որ՞ օրէնս տայր նոցա և ասէր. մի գնեսցես ի նոցանէ և մի վաճառեսցես նոցա, մի կին առցես և մի վարձանս տայցես. այլ քնակեսջիր տեղւոջ մօտ առ նոսա, և կարգաւ բաժանեալ լինիլ։ Ո՞ի ինչ հաղորդել քեզ ընդ նոսա, մի վաճառ առնել, մի գնել և մի գնոյ տալ, զի մի հարազատութիւն բարեկամութեն յամբարշտութիւն գլորուին պատրաստեսցէ. այլ թշնամի լինիլ ընդ նոսա։ Ո՞ի ինչ լինի քո հաշիւ ընդ քանանացին. մի ոսկի ի նոցանէն առցես և մի արծաթ և մի հանդերձ, մի զդուստր քո նոցա հաստատեսցես, և մի որդւոյ քումմ ի նոցանէ կին առցես, այլ միայն առանձինն վաստեալ և որշեալ կեցցես. լեզու յաղգս ունիս որովորշել

կարիցես. և օրէնք տուան քեզ, վասն որոյ և օրէնք իակ ցանգ կոչին. որպէս և այգւոյ շուրջ ցանգ ածեալ, այնպէս և Հրէիցն օրէնքն, զի մի անցեալ խառնակիցին ընդ քանանացիան։ Վասնզի ամբարիշտք էին խառնակ ապականութեամբ յօրէնս բնութեան. կուռց երկրպագուք՝ քարանց և փայտից, զեղծ թշնամանողք, որդւոց և դստերաց զոհիչք, հօր և մոր անարգիչք, յամենայն ինչ փոխեալք, յամենայնի այլայլեալք ի դիւաց պաշտանց. վասն այնորիկ շուրջ օրինօք պարսպեաց զնոսա իբրև ցանգով՝ որ ասէ, Թէ "Ի յգի անկեցի և ցանկով պարսպեցի,,. օրինօքն, ոչ եթէ փշովք, այլ պատուիրանօք որով փակէր և որոշէր զնոսա։ Վնաւարգք էին քահանայիքն և գալշէվիք, ամբարիշտք և պիղծք, ժանտք և աղտեղիք. զի պատասխանի անգամ գարշելին նոցա տալ Հրեայքն որք զօրէնսն պահէին և կատարէին։ Վասնզի և կինն այն ի քանանացւոց էր. "Այս ահա կինն մի, ասէ, ի սահմանացն նոցա եղեալ,, գայր և անկանէր առաջի Վրիստոսի, և Վրիստոս ասէր. "Որ ոք ի ձէնջ յանդիմանեսցէ զնա վասն մեղաց,, եթէ անցեր երբեք ըստ օրէնսն։ Վասնզի մարդ էր և զմարդկան հանդէս ցուցանէր։

Ընկնիցիր լերուք բանիս զգուշութեամբ, թող անկից զոստայնս ի չափու։ Վասնզի կինն քանանացի էր և ի սահմանացն նոցա, անդ էր կատաղութիւն և մոլեգնութիւն և ամբարշտութիւն, և բռնութիւնք բանսարկուին և դիւաց մոլեգնութիւնք, և բռնութիւնք խառնակութեան, և յանմտութիւն անասնական իմացեալք, ի դիւաց կատաղութիւնս. վասն այնորիկ չէրամայէր Նոցա մերձենալ ի քանանացիսն. վասն նորին իակ և ցանգով փակէր զնոսա. իակ իբրև եկին Վրիստոս ընդ մարդկան, առ ջէն և վաղվաղակի թլփատեցաւ, պատարագ մատոյց, և զայլ ևս զամենայն ինչ արար և կատարեաց, քանզի կամէր լուծանել զօրէնսն, և զի մի ասիցեն՝ եթէ ոչ կարաց կատարել զնա՝ վասն այնորիկ եղեծ զնա, նախ կատարեաց և ապա եղեծ. զի մի կարծիցես եթէ չէր բաւական, աղաղակէր և ասէր՝ Թէ "Որ ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց,,։ Այլ վասն զի օրէնքն չէրամայէին մերձենալ առ քանանացիս, զի մի սկսցին մեղադիր լինել և ասել Հրեայքն՝ վասն այնորիկ ոչ հա-

ատտացաք ՚ի քեզ, զի անօրէն ես և լուծեր զօրինսն, յաշխարհն քանանացւոց մտեր և ընդ քանանացիսն խառնակեցար, յորում օրէնքն չհրամայէին խառնակել։ Ա՝ան այնորիկ ոչ տայր պատասխանի։ Ցես ար- պէս դատախազէ զօրինացն և ոչ խափանէ զփրկութիւն, զՀրեայս ըմբերանէր և զկինն սիրէր։ "Եւ պատաս- խանի ոչ տայր ,,։ Ա՝ի ինչ պատճառէք, ասէ. ահա չիօ- սիմ, ահա չտամ պատասխանի. ահա նեղութիւն և զիմ հանդէս ոչ ցուցանեմ, ահա ընկղմումն և նաւավարս ՚ի միջի ոչ ցածուցանեմ զալիս վասն ձերոյ զլացման, զի մի պատճառս ունիցիք։ Ա՝յս կինն զբազմութիւնս տե- սողաց շուրջ առ իս ժողովեաց և չառնու պատասխանի, զի մի ասիցէք թէ յօժարէ ՚ի քանանացիսն և անց զօ- րինօք, և զայն պատճառս դնիցէք առ ՚ի չհաւատալ յիս։ Ա՝ան այնորիկ չտայր հինօքն պատասխանի, զի ձայն զլացման լինէր ՚ի Հրեայսն։

Եւ զայն առնէր ոչ իբրև նման այն վայելէր, այլ վասն նոցա խանարհէր։ Վ՚ասնզի և յորժամ զբորոտն սրբէր՝ ասէր. "Երթ մատո զպատարագն քո զոր հրամայեաց Մովսէս ,,։ Ա՝քանչելի իրք. դու սրբեցեր և առ օրէնսն Մովսէսի յղէս։ Ա՝յո, ասէ։ Ընդէր. վասն Հրէիցն, ասէ, զի մի սկսանիցին մեղադիր լինել թէ անցի զօրի- նօքն։ Օ իմիրդ. յորժամ բժշկեր զբորոտն՝ այլ ազգ ինչ բժշկեր. "Երթ, ասէ, բորոտ մի անկեալ առաջի նորա աղաչէր զնա և ասէր. տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ձգեաց զձեռն իւր, հասոյց ՚ի նա և ասէ. կամիմ, սրբեաց ,,։ Ա՝յտ օրինացն չէր պարտ մեր- ձենալ ՚ի բորոտն։ Օ՚ի յորժամ գայր զօրագլուխն Ա՝կէ- սանն ասորի առ Ա՝ղիսէ մարգարէ բորոտութեամբ լի, ասէ ցնա աշակերտն իւր. ահաւանիկ զօրագլուխն ար- տաքոյ կայ։ "Երթ, ասէ, և ասա ցնա՝ թէ երթ լուա ՚ի Յորդանան գետ ,,. և արտաքս չիշխէր ելանել և տե- սանել զբորոտն և մերձենալ ՚ի մարմին նորա։ Սրբեր Ա՝ղիսէ զբորոտն, վասն զի սրբելոյ էր տէր մեր զբորոտութիւնն և զմեղս, զի մի կարծիցեն Հրեայքն թէ նման Ա՝ղիսէի սրբէ, նա չիշխեաց մերձենալ, իսկ սա մերձեցաւ. "Կամիմ, ասէ, սրբեաց. և ձգեաց զձեռն իւր և մերձեցաւ ՚ի բորոտն ,,։ Եւ ընդէր ձգեաց. զի զքեզ ուսուսցէ թէ ոչ է ծառայ ընդ իշխանութեամբ

օրինաց, այլ տէր և իշխան օրինացն։ Որպէս պահեաց զօրինսն. "կամիմ, ասէ, սրբեաց. և վաղվաղակի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն,,։ Որպէս զի ոչ գտանէր զարագութիւն իրացն ասել աւետարանիչն, ասէ զվաղվաղակին յարելով. ոչ կարէ գտանել զբանն Տեառն փութոյն, և ոչ հրամանին զարագութիւնն։ Որպէս զիմրդ "վաղվաղակի,,. ելանէր բանն և փախուցական լինէին ախտքն, մերժէր բորոտութիւնն և լինէր սուրբ բորոտն։ Ա՝ ասն այսորիկ ասէր՝ թէ "Երթ ցոյց զքեզ քահանային, և մատո զպատարագն զոր հրամայեաց Մովսէս 'ի վկայութիւն նոցա,,։ Որ. Երեխցին, զի մի ասիցեն թէ անցի ըստ օրէնսն։ Այս բժշկեցի, ասէ, և ես հրամայեմ մատուցանել զպատարագն ըստ օրինացն, զի յայնմ աւուր յարուցեալ կայցէ բորոտն դատախազ վնասանէ՝ թէ ինձ հրամայեաց ըստ օրինացն մատուցանել զպատարագն։ Ուանզի բազում ինչ վասն Երեխցին առնէր, նոյնպէս և անդ։

"Ողորմեաց ինձ, ասէ, զի դուստր իմ չարաչար մռնգնի. և նա ոչ ինչ տայր պատասխանի։ Յառաջ մատուցեալ աշակերտաքն նորա և ասէին ցնա. արձակեա զսա զի աղաղակէ զկնի մեր,,։ Այս ապաննա զինչ ասէր. "Ոչ առաքեցայ ես ուրեք, բայց առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի,,։ Այս զի մի ասիցեն՝ թէ զմեզ Թողեր և այլսուր չոգար, և վասն այսորիկ չՀաւատացաք 'ի քեզ, ասէ Հաւասիկ 'ի հեթանոսաց դան առ իս և չընդունիմ և 'ի ձեզ փախստականս լեալ Տպիմ. "Ակայք առ իս որ վաստակեալք և ծանրեալք էք,. և չպային։ Ընդ այս այպանեալ զարմանայր մարգարէն. "Յորովհետև զոր ոչ ծանեայ, ծառայեաց ինձ և 'ի լուր ականջաց լուաւ ինձ։ Յայտնի եղէ որք զիս ոչն խնդրէին, գտայ որք զիս ոչն ճանաչէին,,. ուստի և քանանացին։ "Երձակեա զնա զի աղաղակէ զկնի մեր,,։ Ցեսցուք զի ասէ. "Ոչ առաքեցայ ես առ որ, բայց միայն առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի,,։ Ոչ միայն 'ի բաց մերժելոյ էին քանքն, և չասէր թէ 'ի բաց կաց, այլ եթէ ոչ ինչ ունիս Հաղորդութիւն առ իս. ոչ եկիր վասն քո, այլ վասն Երեխցին եկիր. "Ոչ առաքեցայ ես առ որ, բայց միայն առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի,,։

Այս կինն իբրև զայն լսեր, գայր անկանէր, երկիր պա-

գանէր և ասէր . “Տէր օգնեա ինձ ,, : Եւ նա ոչ տայր պատասխանի . այլ տես զպատասխանին . “Ողջ , ասէ , բարւոք առնուլ զհայ մանկանց և արկանել շանց ,, : Իւվ հոգաբարձուԹիւն ԹԺիլին , յանձն չառնլովն՝ զնա յինքն ամփոփէր . “Ել է բարւոք , ասէ , առնուլ զհայ մանկանց և արկանել շանց ,, : Օ՛ր մանկանց զՀրէիցն : Այս Հրէիցն ամԹն էր . զի մանկունք յորջորջելով շունք կոչեցան , զորմէ և առաքեալ ասէ . “Տեսէք զշունսն , տեսէք զչար մշակսն . զգոյշ լերուք ի կրճատական պարծանաց անտի ,, : Օ՛ի նոքա են որ ի ԹլփատուԹենէն են . իսկ հեԹանոսք շունք կոչեցան , և եղեն որդիք : “Որդիք իմ , ասէ , զորս դարձեալ վերստին երկնեմ , մինչև նկարեսցի Քրիստոս ի ձեզ ,, : ՊտղուԹիւնն՝ Հրէից յամբաստանուԹիւն է : “Ել է բարւոք առնուլ զհայ մանկանց և արկանել շանց ,, : Եւ ապա կինն զինչ տայր պատասխանի . “Այո , ասէ , տէր ,, : Իւվ բռնուԹիւն կնոջ , ոմն յամառուԹիւն անձինն . ԹԺիլին ոչ ունի յանձին , և կինն ասէ՝ այո տէր : Ել եր լիրք և անամԹ , այլ զիրկուԹիւնն կամէր ստանալ : “Ել է բարւոք առնուլ զհայ մանկանց և արկանել շանց ,, : Եւ նա զինչ ասէր . այո տէր . շուն կոչես զիս , բայց ես զքեզ աղաչեմ . դու ԹՀնամանես զիս , իսկ ես զքեզ փառաւորեմ : “Այո տէր , զի և շունք կերակրին ի փշրանաց սեղանոյ տեառն իւրեանց ,, : Ի՛ իմաստուԹիւն կնոջն . յառակէն իմանայր զանն : Շ՛ ունն կոչես զիս , իբրև զշուն կերակրեա զիս . ոչ հրաժարեմ ի ԹՀնամանացդ , ընկալայ զկերակուր շանց . և ասէր իրս ինչ որ ըստ սովորուԹեանն լինէր : Պտու զքո բանդ հաստատեա . շուն կոչեցեր զիս , տուր ինձ փշրանս . ջատագով եղեր խնդրոյն իմոյ՝ չՀանելով յանձին , գոնեա զոր առերդ յանձն՝ զայդ տուր : “Այո տէր , զի և շունք կերակրին ի փշրանաց սեղանոյ տեառն իւրեանց ,, :

Եւ ապա զինչ արդեօք , որ չՀանէր յանձին , որ Հաւածէրն , որ վարատէրն , որ ասէրն ԹԷ “ոչ է բարւոք առնուլ զհայ մանկանց և արկանել շանց ,, , որ ասէրն “ոչ առաքեցայ ես առ ոք , բայց առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի ,, : “Իվ կին դու ,, : Պտղիչ վաղվաղակի լինիս , քարոզիչ նորա յուցանիս . ոչ Հալածէիր , ոչ՝ի բաց մերժէիր : Ա՛ ման այնորիկ զայն առնէի իսկ : Օ՛ի եԹէ՝ի

սկզբանն իսկ վհարեալ էր զնա, ոչ կարէիր ուսանել զնորա հաւատսն. եթէ յառաջնումն առեալ էր, երթայր ՚ի բաց մեկնէր վաղվաղակի, և գանձուն նորա չլինէիր տեղեակ. վասն այնորիկ ընդերկարեցի զտուրն, զի ցուցից զնորա հաւատսն: Ասաւած ասէր. "Ով կին դու,,:

Ուրեմն օրհնեալքն խոնարհութեամբ: Յորժամ ասիցեմ, աղաչեա զՅԾ, խնդրեա ՚ի նմանէ, անկիր աւրաջիկ նորա, ասէ՝ աղաչեցի մի անգամ և երկիցս և եւրիցս, տասն և քսան անգամ, և ոչ լուաւ: Ի ձանձրանայես մինչ չև առնուցուս. երկիւղ խնդրոյն տուրք խնդրողին է: Յայնժամ հեռասջիր, յորժամ առցես. մանաւանդ և մի յայնժամ, այլ կաց միտ. թէպէտ և ոչ ևս իցես առեալ, այլ զի առցես. և յորժամ առնուցուսն, գոհասջիր զի առեր: Այլ մնանեն կալ յաղօթս բազումք, և կարգեալ ասեն բիւր բանս և ելանեն արտաքս, և չգիտեն զինչ ասացին. զղօթունսն շարժեն, և ականջօքն չլսեն: Դու ոչ լսես քո աղօթիցն, և զՅԾ կամիս թէ լսիցէ: Դրի, ասէ, ծունր. և զի եդիր ծունր, վասն զի միտք քո արտաքս բանդագաղեալ չջլին. մարմինդ քո ՚ի ներքս, և շունչդ արտաքոյ. ղղթամբքդ ասեիր, և միտք քո թուէին զվաշխս և զՀանգամանակս, ըզտուրս և առ վաճառաց, զգեօղս, զտացուածս, զմիաբանութիւն սիրելեաց: Վասնզի չար է բանսարկուն, գիտէ թէ ՚ի ժամ աղօթիցն մեծամեծ ինչ իրք կարեմք վհարել, յայնժամ գայ մերձենայ և հպի: Առաջի անգամ կամք յորսայս ղօղեալ ՚ի մահիճսն, և զմտաւ ինչ ոչ ածեմք. մնանեմք կալ յաղօթս, և բիւր խորհուրդք յուղին և հանեն զմեզ ունայն առանց օգտի:

Այս իմացեալ՝ յաղօթսն նմանողք լիցուք կնոջն քանանացւոյ. այր և կին ընդնա հայեցոյն: Այլ ոչ ունիմ, ասէ, դուստր մոլեգնեալ. այլ ունիս ձանձն մեղական: Ինչ ասէր կինն քանանացի. "Աղօրմեաց ինձ, զի դուստր իմ չարաչար մոլեգնի,,. ասա և դու. աղօրմեաց ինձ, զի անձն իմ չարաչար տանջի: Ունիմ և դևն մեղայ. զի գիւահարն աղօրմելի լինի, իսկ որ մեղանչէն՝ ապականի. նա ԹաղուԹիւն ընդունի, իսկ սա առանց պատասխանի տալոյ լինի: "Աղօրմեաց ինձ,, ասէ. փոքր էր բանն, և անդունդք կէին մարդասիրութեան. զի ուր

ողորմութիւն է, ամենայն ինչ դիւրին է։ Ովհաիկա և արտաքոյ իցես, աղաղակեա և ասա՝ ողորմեայ ինձ. թէպէտ ոչ չարժիցես զչրթունսդ, այլ մտօքդ աղաղակեսջիր. քանզի և լուա չրթանց ըսէ Տէր. ոչ խնդիր է տեղւոյ, այլ բարուց։

Վանդի և Լիբեմիա միևչդեռ ի գուբ տղմին կայր, զՏէր յինքն ձգէր. Դանիէլ ի գուբ առիծուին էր, և զՏէր ընդ իւր հաշտեցուցանէր. երեք մանկունք ի մէջ հնոցի հրոյն, և զՏէր յօդնականութիւն կոչէին. աւազակն ի խաչին, և ոչ խաւիանէր զնա խաչն, այլ բանայր նմա դրախտն. Յոբ յաղբեւսն կայր, և զՏէր ի բաւութիւն պատրաստէր։ Ովհ ի բաղանիս իցես, յաղօթս կացջիր. տաճար ես Աստուծոյ, մի խնդրեր տեղի. միայն զմիտս ուղղս խնդրէ Տէր։ Լերէմ առաջի դատաւորի կայցես, աղօթս մատուսջիր։ Օմէն առաջի էր և զինի եպիստացիքն և Մովսէս ի մէջ նոցա. նեղ էր տեղի աղօթիցն, այլ լայն և ընդարձակ էին աղօթքն։ Ոչնի անկեալ եպիստացիքն զհետ երթային, և ի միջնի աղօթքն, և Մովսէս չբարբառէր, և ասէր ցնա Տէր. "Ոչ՝ աղաղակես առ իս,, ոչ ինչ աղաղակէր, և նա ասէր՝ զի՞ աղաղակես. բերանոյդ չբարբառէր, բայց սրտիւն աղաղակէր։ Լու դու յորժամ կայցես առաջի բռնաւոր և մտեղին դատաւորին և կամ առաջի գահակաց, յաղօթս կաց առ Տէր, և աղօթքն զալոս բարկութեանն ցածուցանեն։ Դատաւորն առ քեզ դիմեալ, և դու առ Տէր ապաստանեալ. իշխանն հուպ առ քեզ, և դու առ տէրն քո կարդա։ Մի՛ թէ մարդ իցէ զի երթիցես տեղւոյ ի տեղի. Տէր յամենայն ժամ մերձ է թէ կամիցես կարդալ առ նա։ Ո՞ մարդոյ հարցանես թէ զինչ գործէ, ի քուն կայ՝ ասեն. զինչ առնէ, չարարապէ՝ ասեն. և որ սպասաւորն իցէ, չկամիցի տալ պատասխանի։ Լակ առ Տէր ոչ այնպէս. զի ուր և երթիցես և կարդայցես առ նա, վազվազակի ըսէ քեզ. ոչ դուռն և ոչ բարապանս և ոչ միջնորդ և ոչ սպասաւոր. ոչ կարես ինչ խափան գտանել առ ի նմանէ։ Լայց ասա միայն՝ ողորմեայ ինձ, և Տէր մերձենայ առ քեզ. զի "Մինչ չև ևս աղաղակեալ իցէ քո առ իս, ասացից երթ ահա եսիկ եմ,, Մի՛վ բան լի ընտանութեամբ։ Լէ տամ քեզ, ասէ, կատարել զաղօթսն, և առնուս վաղվաղակի զհատուցումսն։

Ա՛յմանողք եղիցուք կնոջն քանանացւոյ որ ասէր՝ ողորմեաց ինձ, զի դուստր իմ չարաչար մոլեգնի։ "Ահ կին դու, մեծ են հաւատք քո. եղիցի քեզ որպէս և կամիցիս դու,,։ Ո՛ւր իցէն հերետիկոսքն. միթէ ասաց եթէ Թող աղաչեցից զՀայր կամ ողորեցից զՔնոջն իմ. ա՛զօթք ինչ պիտոյ եղեն. ոչ։ Ընդէր. քանզի մեծ էին հաւատքն, մեծ էր ամանն և մեծ չնորհս ընկալաւ։ "Ահ կին դու, մեծ են հաւատք քո,,. զի ոչ զմեռեալս յարուցանել տեսեր, ոչ զբորոտս սրբել, ոչ՝ի մարդարէից ուսեալ և ոչ յօրինաց տեղեկացեալ, ոչ զծով տեսեր սանձեալ. Հինամանեցար յինէն և անդոանեցար. յոյսահատ արարի զքեզ, և դու ոչ հեռացար, այլ կացեր և համբերեցեր։ "Ահ կին դու, մեծ են հաւատք քո,,։

Այս արդ մեծ յեկեղեցի՝ի Պարսից, լսես զնմանէ զի ասէ՝ Թէ ով կին դու, մեծ են հաւատք քո. նոյնպէս՝ի Պարթաց, ՚ի բարբարոսաց, ՚ի Հնդկաց, ՚ի Մաւրոսաց[1] և ընդ ամենայն աշխարհ որ՝ի ներքոյ արեգական են՝ ոչ մինչ այլ պատմեն, բայց զոր Քրիստոսն ասաց, և ոչ լսի բանն որ ասէ՝ Թէ "Ահ կին դու, մեծ են հաւատք քո. եղիցի քեզ որպէս և կամիս,,։ Այս ոչ ասաց՝ եթէ բժշկեսցի դուստրն քո, այլ Թէ որպէս կամիս բժշկեա. լեր բժիշկ. քեզ տամ արկանել ձեռն՝ի դէղն, երթ դու դիր, "եղիցի քեզ որպէս և կամիս,,. կամքդ քո բժշկեսցեն զնա։ Կանանացի կինն կամք բերաժըշկէր, և որդին ՚այ կամք ոչ բժշկեսցէ։ "Եղիցի քեզ որպէս և կամիս,,։ Ահ հրամայեր կինն և ոչ սատեր դիւին. այլ կամէր միայն, և կամք կնոջն բժշկին և զդևն հանէին։

Ո՛ւր իցեն այնք որք իշխեն ասել եթէ՝ի ձեռն աղօթից Քրիստոս կատարեր զայն. "Եղիցի քեզ որպէս և կամիս,,։ Տես զզօրութիւն բանին Թէ որպէս և զիարդ հօրն իւրոյ նմանէ. զի յորժամ զերկինս առնէր ՚ած, ասաց՝ եղիցի երկին, և եղև երկին. եղիցի երկիր, և եղև երկիր. և եղիցի արեգական, և եղև արեգական։ Ահա մանաւ զօրութիւնն հաստատեր։ Այս նա նոյնպէս ասէր. "Եղիցի քեզ որպէս և կամիս,,. մերձաւորութիւն բանին զմիաբանութիւն բնութեանն եցոյց։ "Այս կի-

1 Յօրինական վրիպակաւ մտեալ է Մաւրոսաց կամ Տաւրոսաց։

անց գուստրն նորա ,,. երբ. ոչ յայն ժամէ հետէ յոր-
ժամ եկն մայրն նորա , այլ յառաջ քան զգայն նորա .
երթայր գտանել մելեգնեալ , և գտանէր զգաստացեալ
և սթբեալ և բժշկեալ ըստ կամաց իւրոց : Այդպէս այսր ա-
մենայնի գոհասցուք զնա , զի նման են փառք յաւիտենից .
ամէն :

Ի ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԲԱՆՆ . « ԵԻ ԵՂԵՒ Ի ՏԱՐԻՈՂՆ ՅՈՐՈՒՄ ՄԵՌԱԻ ՈՂԻՆ
ԱՐԲԱՑ » . ԵՒ ԹԷՊԷ ՈՉ ԺԱՄԱՆԱԿԱԻ ԵՒ ՁԳՐՈՎ, ՄԻՈՎ, ՁՈՆՑ ԱՒԵԼՆԻ,
ՓԱՌՑ Ի ՁԳՐՈՑ

Ո՛ղջ արշաւանաւք , ի միասին ընթացեալք զձեզ տե-
սանելով ի գրոց լսելութիւն : Ո՛ւ զոր օրինակ քաղցր-
նուլ մարմնական քաջողջութեան է , նոյնպէս բանից
փափագել հոգւոց առողջութեան է նշանակ : Ամդամ
յաղագս այսորիկ , բայց երկնչիմ գուցէ արժանի բաղ-
ձանաց ձերոց ոչ կարացից ընձեռել : Այսպէս և մայր
բազմագութի վշտանայ յորժամ ընդ ատեամբն ունիցի
մանուկ , և զկաթնաղբերն ոչ կարիցէ առատապէս տալ
նմա . այլ սակայն թէպէտ և կարօտեալ ունիցի , զտիւնն
ընձեռէ . և նորա առեալ ձգէ և ծծէ , և բերանովն զցըր-
տացեալ զտիւնն ջեռուցանէ , և առաւելագոյն քան որ-
չափ իցէն՝ արտաքս ձգէ զկերակուրն . իսկ մայրն վտան-
գի պրկմամբ սատանայն , այլ ոչ ի բաց մղէ զմանուկն ,
վասն զի մայր է և զամենայն ախտիւժ կրել յաւէտ՝ քան
եթէ տրտմեցուցանել զծնեալն : Այդ եթէ մարք ի մեզ
կոնդն այնպէս իցեն բարեգորովք , ո՛րչափ և առաւել
մեզ առ ձեր սէրդ կալ և ճնալ պարտ և արժան է .
վասն զի և քան զընութեանս ջերմագոյն և ան հոգւոյն
ցաւք : Ո՛ւ թէպէտ և յոլով ագքատութեամբ մեր սե-
զանս է լի և ոչ այնպէս ի ձէնջ թագուցանեմք , այլ
զամենայն ի մէջ բերեալ դնեմք ձեզ առաջի . և եթէ
նուազք են այսոքիկ և անարգք , այլ սակայն զոր ունիմք
տամք : Ո՛ւ և որ զտաղանդն զայն հաւատացաւ , ոչ
վասն զի հինգ ոչ ընծայեաց տաղանդս՝ յաղագս այնո-
րիկ բամբասեցաւ , այլ վասն զի թաղեաց զոր կառն և
պատուհասեցաւ . վասն զի խնդրել չկայ և ի մարդկա-

նէ ոչ սակաւ կամ յոլով արկանելն է, այլ ոչ ուրեք քան զկարողութիւն ընչից իւրոց զընծայսն վաղագոյն բերել։

Ուսյք յառաջագոյն յորժամ ընդ ձերում սիրելութեանդ խօսել արժանի եղաք, յընթեռնուլ ձեր ըզսաղմոսն զայն որ զմեղաւորն ի քահանայական սրահից արտաքս հանէ. հրեշտակաց և վերին զօրութեանցն բաբեանել հրամայէ զողորմեցուն ՚ած։ Կամիք այսօր և նմին իսկ խորհրդական երգոյն լուիցուք՝ մերձ ուրեմն կացեալք անդր։ Ինձ թուի։ Վասնզի եթէ պիղծ մարդիկ յորժամ պարս կարգիցեն, ՚ի հրապարակս ՚ի խորին խաւարն և յանտեսանելի գիշերս պոռնկական երգս և գեղգեղեալ նուագս երգիցեն, զամենայն քաղաքս մեր ընդոստուցանեն և առ ինքեանս գարձուցանեն, մեք զերկնային դասուցն և զվերին պարուցն զթագաւորէն զամենեցուն զայսոցիկ ոչ արդեօք ընդանայցեմք լսել ՚ած այնն և երանելոյ ձայնին այնմ. և որ լինիցի մեզ թողութիւն։

Այլ զիա՞րդ իցէ, ասեն, ՚ի նոյն ինքն ելանել յերկինս կարողութիւն է։ Ահա՛կ և ոչ մարմնով, այլ միտք. և եթէ ոչ մերձաւորութեամբ, այլ խորհրդով։ Այսան մի մարմին հողեղէն է և ծանր և ՚ի խոնարհ բնաւորեցաւ կալ միալ. բայց հոգի ՚ի հարկաւորութենէն չայսմանէ ՚ի բաց ազատեալ է, ՚ի բարձրագոյն և ՚ի հեռաւորագոյն պարսն դիւրաւ թռչի. և եթէ ՚ի նոյն ինքն կամեսցի յաշխարհիս յոլորտս երթալ և կամ յերկինս ելանել, խափանիչ ոչ ոք է. այնպէս նման թեթև խորհրդոյն ետ թռանել ՚ած։ Այլ ոչ միայն թեթևագոյն ետ նման թևս, այլ և աչս ջնորհեաց որ առաւել քան զմարմնոյ նորա տեսք են։ Վասնզի մարմնոյ աչք եթէ յոլնայն յօդ հայեսցին, մինչև ՚ի բազում հեռաւորութիւն յառաջանան. իսկ եթէ դոյզն ինչ մարմին առաջի անկցի, իբրև զհասանս ինչ բերեալ, ապա ընդդիմահար լինելով անդրէն ՚ի յետոյն դառնայ. բայց հոգւոյն աչք եթէ որքա՛ կամ պարխաչք կամ լերանց մեծութիւնք կամ նոցին իսկ երկնից լայնութիւնք նոցա դիպեսցին, ընդ ամենայն դիւրաւ անցանեն։

Այլ սակայն այսպէս երագութիւն և սրատեսութի՛ ունելով հոգի, ոչ է ինքն ըստ ինքեան բաւական յերկ-

նայնոյն տեսութիւն, այլ կարօտանայ օժանդակին իւրում: Արասցուք այսուհետև որպէս առնեն որ զԹագաւորական ապարանսն ցանկան տեսանել: Եւ զինչ առնեն նոքա. խնդրեալով որք զբանալին դրսոյն ունիցին, և առ նա մերձեցեալք խօսին և աղաչեն, բազում անգամ արծաթս ևս ընձեռեն, որպէս զի տացէ նոցա ըզշնորհն: Մերձեսցուք և մեք առ մի ոք որ զերկնային դրունսն ունին, խօսեսցուք պաղատեսցուք, փոխանակ արծաթոյ յօժարութիւն ցուցցուք և Ձեմարիտ սէր: Եւ եթէ զայն վարձ առցէ նա՝ զձեռանէ ունելով զմեզ ամենայն ուրեք շրջեսցանէ. ոչ ցուցանէ զապարանսն միայն, այլ ինոյն ինքն զԹագաւորն նստեալ և զգեղմն ամենայն մեծակայս նմա, զգեղապետսն մերձ և զբիւրաւոր զՀրեշտակսն, զՀազարս Հրեշտակապետացն զամենայն մեզ ցուցանէ Հաւաստեաւ՝ որպէս մեզ տեսանել կարողութիւն է:

Եւ ոմն ոք է նա որ զայն մասն Հաւատացաւ, ընդ որ սխորժեմքն մեք մնանել: Այսոյիսս մեծաձայն քան զամենայն մարգարէս. ընդ նմա Հարկ է այսուհետև խօսել: Մյլ զՀետ եկայք Հանդարտ յարմարութեամբ և Հանդերձ բազում Հեզութեամբ գնալ. մի ոք Հոգս ունելով աշխարհականս մտեսցի, մի ոք զբօսեալ և մի զարհուրեալ. այլ զայս ամենայն արտաքոյ դրսոյն դնելով բոլորեքումքիք այնպէս մտցուք՝ ի նեղքս, որպէս յաւետ խաղաղութեամբ է լի և անձառ խորհրդովք: Մյդ Հայեցարուք, վասն զի գրոց ընթերցումն երկնից է բացումն:

"Եւ եղև՝ ի տարւոջն յորում մեռաւ Ոզիաս Թագաւոր, տեսի զտէր նստեալ յաթոռ բարձր և վերայեղ,,: Տեսէք զբարեբարոյ ծառային զսէր. վաղվաղակի զմեզ առ աթոռն Թագաւորական եմոյծ. ոչ ընդ Հեռաւոր Ձանապարհս յառաջագոյն ածելով, այլ միանգամայն զդրունսն բանալով դէմ յանդիման զԹագաւորն նստեալ եցոյց: "Եւ սերովբէք, ասէ, կային շուրջ զնովաւ, վեց Թևք միոյ և վեց Թևք միոյ. երկուքն ծածկէին զերեսս և երկուքն զոտս, և երկուքն Թռուցեալ աղաղակէին ընդէր առ ընդէր և ասէին. սուրբ սուրբ սուրբ տէր սաբաւաւթ,,: Ճշմարտապէս սուրբ է, որ այնպիսի խորհրդոց արժանի արար զբնութիւնս մեր, և

այնպիսի անձառելեաց արար զմեզ Հաղորդս։ Այսուհ
զնա առնու և դողումն ի մէջ երդոյն այնոցիկ։ Այլ զինչ
հրաշալիք, եթէ զկաւեզնս և որ յերկրէ եմք, մինչ զի
և զնոսին իսկ զգօրութիւնսն զայնս զմերին զհրեշտա-
կայն միշտ մեծ հիացումն ունի։ Ոմն այնորիկ զար-
ձուցանեն զդէմսն, և զԹևսն փոխանակ պարսպի արկա-
նեն առաջի՝ ոչ հանդուրժելով բերել զձառագայթսն
որ անտի արձակէին, Թէպէտ և խոնարհութիւն էր ե-
րևեալն։

Այլ զիա՞րդ ոչ ժուժային։ Ո՞նձ զայդ ասես. ասա զրք
զանձառելի և զերանելի զընութիւնն հարցաքննեն, զրք
յանիշխելիսն յանդգնին։ Սերովբէքն և ոչ զխոնար-
հութիւնն զայն կարացին տեսանել. մարդ համարձա-
կիցի՞ ինչ ասել, մանաւանդ զնոսա ածել իշխեցո՞ զբը-
նութիւնն զայն զմաքուր, և կամ կարիցի՞ յայտնապէս
և հաստատուն գիտել։ Օ՜ արհուրելիր երկիւղ, և հիա-
ցիր երկիր. մեծագոյն քան զայս է նոցա յանդգնութիւն.
զի զոր յայնժամ ամբարշտեին նոքա, զնոյն և այժմ
ամբարշտեն սոքա։ Ա՜րարածոյ երկիւղ պագանեն. և զոր
նմանապէս զնոսա ածեն սոքա այժմ, ոչ որ ի մարդկա-
նէ ոչ ասել և ոչ լսել յանդգնեցաւ։ Օ՜ինչ ասես,
նուաստութիւն էր երևեալն այդ. առ խոնարհութեան։
Այլ եթէ որ յոլով համարձակութի՞ն ունէր առ ինձ Ասա-
նիել, զհրեշտակն որ առ նա խոնարհեցաւ՝ ոչ հանդուր-
ժեաց տեսանել, այլ գլորեցաւ և ի բերանս անկեալ
կայր, և ամենայն յօդք մարմնոյնորա ի գիմանի ի յայն-
մանէ էին լուծեալք, զի զարմանսա եթէ սերովբէքն
հիանային և ոչ կարէին զխառն զայն տեսանել։ Օ՜ի
և ոչ այնքան ի Գաբրիէլէ է առ հրեշտակս միջոց՝ որ-
քան յայդ առ զօրութիւնսն այնոսիկ։ Այդ զի մի և մեք
առաւելապէս ի հիացումնս յայսոսիկ դեգերելով ի
Թմբրութիւնս արկանիցեմք զձեր անձինսդ, բեր անդ-
բէն ի սկզբան պատմութեանն դարձցուք՝ ծանծաղա-
գոյն պատմութեամբքն առաջնորդելով ձեզ։

“Այլ եղև ի տարւոջն յորում մեռաւ Ոզիաս Թա-
գաւոր ,,։ Պարտ և արժան է յառաջագոյն խնդրել ըն-
դ՞ը արդեօք զժամանակին մեզ մարգարէս նշանակէ. զի
ոչ վայրապար և ընդունայն զայս առնէ։ Ոմն զի մար-
գարէիցն բերանք այդ բերանք են, և այդ բերան ոչ վայ-

բաղար ինչ ասէ։ Ա՛ի լուիցուք և մեք վարկպարապն։ Օ՛ի եթէ որք զսակին հանեն և ոչ զդուշաքեայ փո-
ղին աշխատարհեն, այլ յորժամ զսակւոյն երակաց բուռն հարկանիցեն՝ գիտեն հաւաստեաւ զօձանան, ո՛րչափ և
մեզ՝ի գիրսն առնել զայս է արժան։ Այս սակայն յոս-
կեհանան յոյժ դժուարասալն խնդրելեացն է գիւտ. վասն
զի և փոխոխումն ոսկւոյն քան զլինելն ոսկի ոչ այլ ինչ
է՝ բայց երկիր, և հաւաստարութիւն քնութեանն գողա-
նայ զինդրոզացն գեմն. և սակայն ոչ այնպէս՝ի բայ
կան նոքա, այլ զամենայն հաւաստութիւն ցուցանեն,
և գիտեն ձեմարտապէս զինչ է երկիր, զինչ է ոսկի։
Ասկ՝ի գիրս ոչ է այսպէս. զի և ոչ ընդ երկրի խառնա-
կեալ կայ ոսկի, այլ մաքուր է ոսկին. "Ա՛րծաթ հրա-
ցեալ ընդարեալ յերկրէ,,։ Այս ոչ են ոսկեհանաց գոր-
ծոց իմիք կարօտեալ գիրք, այլ գանձ պատրաստական
ընձեռեն խնդրողացն զընչեղութիւն։ Հաւաստի է՝ի
վերայ կալն միայն և իմանալն, և գբարանցն վաղվաղա-
կի տեսանեն զպայծառութիւնն։

Ա՛յսոքիկ ինձ ոչ վայրապար ասացան, և ոչ վարկպա-
բաղն զբանս զայսոսիկ երկարեցի, այլ վասն զի են ոմանք
՝ի մարդկանէ անարուեստք՝ որք յորժամ զնճայլին գիրս
՝ի ձեռն առնուն, և թիւս ժամանակաց՝ի կարգի կա-
ցեալս տեսանեն և անուանս, զանց առնեն վաղվաղակի.
և որք սագտանենն՝ ասեն ցնոսա, անուանք ևեթ են և
ոչ ինչ ունին պիտանացու։ Օ՛ինչ ասես. ած խօսի, և
դու ասես ոչ են պիտանացու ասացուածքս։ Այս եթէ
զսոսկ վերագիր միայն տեսանիցես և ոչ՝ի վերայ ան-
ցեալ կայցես փութով, և որ՝ի ներքս գանձն կայցէ ոչ
յուզիցես։ Այս զինչ ասիցեմ ժամանակս և վերագրու-
թիւնս և անուանս. ուսիր որքան զօրութիւն ունի և
միոյ գրոյն յաւելուած, և դադարեացիս յարհամարհե-
լոյ զբովանդակ անուանան։ Նայրապետն մեր Ա՛բրա-
համ, վասն զի մեզ առաւել քան եթէ Ա՛բեհիմ յար-
մալի, նա Ա՛բրամ կոչեցեալ էր յառաջագոյն որ թարգ-
մանեալ լինի անցանող, և զինի այնուհետև Ա՛բրահամ ա-
նուանեցաւ և հայր ամենայն աղգաց. և միոյ գրոյն յա-
ւելուած այնքան արդարոյն զնշխանութիւն ընձեռեաց։
Օ՛ր օրինակ Թագաւորք ոսկի տախտակս կարկառեն
իշխանացն որք ընդ իւրեանս՝ք են՝ զնշանակ իշխանու-

թեանն, նոյնպէս և ՚ի՛ արդարոյն այնմիկ յայնժամ նշանակ պատուոյն էտ զգիրն զայն։

Նայց յաղագս անուանցն յայլում ժամու. իսկ որքան շահ է զժամանակն ձանաչել և որչափ ինաս ոչ գիտէն՝ հարկաւոր է ասել. և նախ առաջին յաչխարհական իրացս յայսցանէ ցուցից ձեզ։ Կտակք գրեալք են որ յաղագս ամուսնութեան և վանն պարտուց և յաղագս այլոց վճռաց. եթէ ոչ զիշխանին ժամանակն ՚ի վերուստ ունիցին յառաջագոյն գրեալ՝ յամենայն ՚ի զօրութենէ իւրեանց ամենայնք են։ Վանզի այս է նոցա օրէն, զոր որ զհակառակութիւնս ՚ի բաց բառնայ և յատենից վճարէ և զթշնամին բարեկամ առնէ։ Յաղագս այսորիկ և գրելով զգիրն զայն, իբրև զՀրագ ՚ի վերայ աշտանակի՝ այնպէս ՚ի վերայ հակառակ կտակին գրեն, զի երևեսցի ամենեցուն որ ՚ի ստորև գիրն է. և եթէ զայն ՚ի բաց բառնաս, ընդդէմն ՚ի բաց բառնաս զլոյսն, և խաւար ամենայն և բազում խռովութեամբ ընաս։ Կորին աղագաւ ամենայն տուրեւառութիւնք և առ սիրելիս և առ թշնամիս և առ ծառայս՝ և եթէ գաւառապետս և անօրէնս լինիցի, կարօտանայ այսմ զգուշութեան. և ամենայն ուրէք զամիսս և զտարիս և զաւուրս ՚ի ստորև գրեմք։ Այս արդ եթէ յաչխարհականս այսքան է իրացն զօրութիւն, յածայինսն որչափ ևս առաւել մեծագոյն և պիտանացու. քանզի և զմարգարէութիւնն ցուցանէ մարգարէութիւն. զի և ոչ այլ իսկ ինչ է մարգարէութիւն, այլ հանդերձեալ իրացն նախաձայնութիւն։ Այս արդ որ զժամանակն անգիտանայ ասացելոց բանիցն և կամ պատահելոց իրացն, զիաւրդ կարասցէ ցուցանել հակառակասիրին զմարգարէութեանն զարժանաւորութիւն։

Պատուա մեզ և առ հեթանոս հանդէպ և յաղթութիւնք՝ յորժամ երիցագոյնս զմերս երևեսցուսնեմք քան զնոցան. ասաի մեզ և առ Հրեայս բազում ցոյցք յաղագս Աչմարտութեան են. առ Հրեայսն հնգբս և թշուառականն, որք յաղագս ժամանակաց անգիտութեան զմեծ սխալանսն յանցեան։ Վանզի եթէ էին լուեալ Հայրապետին որ ասէր "Ալ նուազեսցէ իշխան ՚ի Յուդայ և ոչ առաջնորդ յիրանաց նորա մինչև եկեսցէ, յորում կայն Սիլոյ,,, և պահեալ էր Հաւատս

տեառ զգալատեանն ժամանակ, ոչ արդեօք հանդերձեալք էին անկանել ՚ի Քրիստոսէ ՚ի Լեռն ապաւինելով։ Արդէս և ինքն իսկ Քրիստոս առաջ յառաջագոյն նոցա. "Եթէ ես եկից յանուն հօր իմոյ և ոչ ընկալայք զիս, եթէ այլ ոք եկեսցէ յանուն իւր՝ զնա ընդունիցիք,,։ Ցեսէ՛ր որքան յանցանք յանգիտութենէ ժամանակացն եղև։ Արդ մի այսուհետև արհամարհեսցես զայսքան օգտակարութիւնս։ Օ՜ի զոր օրինակ սահմանք և արձանք յանդաստան վիճակացն ոչ ներբեն խառնակումն ընդունել, նոյնպէս և ժամանակք և տարիք իւրացն ոչ տան ընդ միմեանս ամբոխումն ունել. այլ որոշեալով զնոսա յիրերաց՝ զպատշաճագոյն կարգն իւրաքանչիւր ումեք ՚ի վերայ դնեն, և ՚ի բաղում ամբոխից զմեզ ՚ի բաց վճարեն։

Պարտ և արժան էր ասել ձեզ ո՛ր էր Աղիաս և երբ Թագաւորեաց և ումմէ ումեք և որքան եղև նորա իշխանութեան ժամանակ և զիարդ ՚ի կենացն զբաւեցաւ։ Այնուամենայնիւ արժանաւոր է ինձ լռել այսուհետև, վասն զի հարկաւոր է յանբաւ խորս պատմութեանցն արկանել զբանս։ Այլ որք ընդ այն խորս հանդերձեալ իցեն անցանել, ոչ աշխատեալց նաւավարացն՝ այլ առանց տալոյ ժամման բուռն հարկանել պարտ է զձանապարհն։ Այսր աղագաս նաւահանգիստք և կղզիք ամենայն ուրեք ՚ի ծովէն ընձիւղեալք, զի և նաւուղիղ և նաւավարք հանդիպեսցեն, միւն զղեկն ՚ի բաց դնելով, և միւսն զթևան։ Այսպէս ամենընդունակ տունք և օթևանք բնաւ ուրեք ՚ի ձանապարհն իմայեալք եղեն, զի բեռնակիրք և ամենայն ուղեգնացք անաւասունք յաշխատութենէն զադարեսցեն. յաղագս նորին և վարդապետական բանի լռութե՛ն առմանեցաւ, զի մի զմեզ տաժանիցեմք յոլովագոյն ասացուածովք, և մի զձեզ տաղտկացուցանեմք։ Այս զայս ժամանակս զիտէ Յովհաննէս այսպիսի իմն ասելով. "Ժամանակ է լռելոյ և ժամանակ խօսելոյ,,։ Արդ եղիցի այսուհետև մեզ ժամանակ լռութեան, զի ժամանակ լինի խօսելոյ վարդապետիս։ Վասնզի մերքս նմանեցան գինւոյ զոր առաջանայն ՚ի հնձանէ առնուն. իսկ սորայս նման է հին գինւոյ և յաւէտ անուշի՝ որ առաւելապէս ընձեռէ զօրութիւն և օգտակարութիւն ընդունողացն. և առաւարա-

նականն այն եղև այսօր, զկնի վատթար դիւսոյն լատադոյսա՝ի ներքս բերեալ լինի։ Այլ զոր օրինակ զայն զկնի ոչ որթ եբեր յայնժամ՝ այլ զօրութիւնն Քրիստոսի արար, նոյնպէս և զտորա բանս ոչ մարդկային միտք ճնանէին, այլ Հոգւոյն ընտրէ։ Այլ արդ զի առատ և Հոգևոր է ըմպելիս, Հանդերձ փութով ընկալցուք և ամենայն ղգուշութեամբ պահեսցուք. զի ոտոգեալք յաւերժական՝ի ժամու բերրցուք զպտուղն պարգևողին այսմ ամ. ընդ որում փառք Հօր Հանդերձ սուրբ Հոգւովն յաւիտեանս. ամէն։

Ի ԲԱՆ ՄՆԱՑՈՐԴԱՑՆ ՈՐ ԱՅԼ ԵՒՆ «ԲԱՐՁՐԱՑԱՒ ՍԻՐՏՆ ՈՋԻԱՑ»։ ԵՒ ՑՂՂԱՑՈՒ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆՆ. ԵՒ ԵՒՆ ՊԱՐՏ Է ՈՉ ՎԱՏԱՀԱՆԱԼ, ՅԱՌԱՋԻՆՈՒԹԻՒՆ, ԵՒ ՈՐՔԱՆ ՉԱՐ Է ԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ

Ողջունեալ է ածե, և յաղթիս մերում ընծայեցան վկայք, արժանաւորք եղեաք և մեք տեսանել զմարդիկ յաղագս Քրիստոսի սպանեալս. արիւն սուրբ հեղեալ որ զամենայն եկեղեցիս ոտոգանէ. արիւն ցնդեալ՝ դիւացի ահարկու և հրեշտակաց ցանկալի և մեզ փրկութիւն։ Արժանաւոր եղեաք տեսանել մարդիկ վասն բարեպաշտութեան մարտուցեալս, յաղթողս, պսակեալս։ Ոչ տեսանել միայն արժանաւորք եղաք, այլ և վնասին իսկ զմարտիցն զմարմինս ընդունել. և առ մեզ զգալ կեալն ունիմք այժմ։ Այլ որ յաղագս վկայիցն է բան՝ թողցուք նախանձելումն ընդ վկայսն Հասարակաց վարդապետիս. մեք վասն Աղիոյ ասացուք ձեզ այժմ, զգուշանալ պարտսն Հատուցանելով և զժամանակեայ երկուսից լսելեացդ լուծանելով։ Քանզի երկնեայ իւրաքանչիւր որ՝ի ձէնջ, քաջ գիտեմ, լսելով զպատմութիւնն զայն, և մեք զերկուսին յերկարեցաք ոչ ախորժելով երկարաձգել զցաւսն, այլ զազձանան աՀեցուցանել փութացաք. բայց արդ ահա ձեզ երեւին մեր կոչունքս։ Քանզի որք ձախակեան կերակրեն զմարդիկ, Թէպէտ և լցեալ տեսանեն զկերոյն, կարեն Թերևս բազմապատիկ պատրաստութեամբք ընդոստուցանել զփափաքութիւն նոցա. բայց զաղքատացն սեղան և ոչ մի ինչ այն-

պէս կարէ երևեցուցանել պայծառ, որպէս զի պարտ և արժան է քաղցելոց հանդիպել ոգի հանդերձեալն էն ձաշակել անդ։

Ա՛րդ ոմ՛ն ոք է Աղեսս և ծոյր զաւակ և ծոյց Թագաւոր և ծոքան Թագաւորեաց և ծոքան ուղղութիւնս արար, ծոքան յանցեաւ և զնաթոգ ի կենաց զրկեցաւ։ Օ՛այս ամենայն ասեմ ձեզ այժմ, մանաւանդ ոգոքան կարծողութիւն է ասել, զի մի յոլովութեամբ հեղձուսցուք զիւշատակս ձեր՝ որ լինի և Հրապի հրոյ։ Ա՛նգի եթէ սգաս պէս կաթեցուսցես պատրուգին զնուդն, բաւական ընձեռես հրոյն զկերակուրն. ապա եթէ յանկարծակի հեղցես, և զբեալ բոցն շիջուցանես։

Ա՛յս Աղեսս Թոռն էր Դաւթայ, Թագաւոր Երկից. Թագաւորեաց չիսուն և երկուս ամս։ Ա՛յս յառաջնումն քաջահաճոյ, բայց չետոյ անկաւ ի մեղս։ Ա՛եծագոյն քան զնոր զարժանաւորութիւնն խոստեղով, ի վերայ վազեաց քահանայական իշխանութեանն։ Ա՛յսքան չար է ամբարտաւանութիւն. քանզի հաւանեցուցանէ զնոր բռքանչելս ոք անծանօթանալ զինքն, և զինի բազում աշխատութեան զամենայն առաքինութեանն դանձ ունայնացուցանէ։ Ա՛յս այլ ամենայն չարիք ի պղերգանէն մերում յաղթել սովորեցին, բայց սա յոյզղութիւնն բուսանի. վասն զի ոչ ինչ այնպէս զՏպարտութիւն ծնանել սովորեաց իբրև զբարի գիտակցութիւնն, եթէ ոչ զգուշանայցեմք։ Յաղագս այսորիկ և Ա՛բիսա ասս գիտելով եթէ զինի ուղղութեանդ մնանէ ախտն այն ի մեզ, աշակերտացն ասէր. "Յորժամ զամենայն ինչ առնիցէք, ասասջիք եթէ անպիտան ծառայք եմք.,։ Յորժամ հանդերձեացի մնանել ի ձեզ գաղանն, յայնժամ ի ձեռն բանիս փակեսջիք, ասէ, զդրուսնս ձեր ի դէմ նորա։ Ա՛յս ոչ ասաց՝ յորժամ զամենայն առնիցէք, անպիտանք եղիջիք. այլ դուք ասասջիք՝ եթէ անպիտանք եմք։ Ա՛յս մի զարհուրիր, զի ոչ ի քումմէ գաւոդութենդ բերեմ ի վերայ զմձիւն ես. քանզի եթէ դու զքեզ անպիտան ասասցես, ես իբրև պիտանացուս պահեմ զքեզ։ Ա՛յնպէս և այլուր ասէ. "Ա՛յս դու զմեզս քո յառաջագոյն, զի արդարասցիս.,։ Յարտաքին առեանն զինի ամբաստանութեան մեղուցելոյն՝ մնհ. իսկ յիմնոյին առենին յետ ամբաստանութեան յան-

յանապին՝ պատկ ։ Ա ման որպ և Պողոմն ասէ . “Ա՛ի արդարասուցաներ զքէզ առաքի տեառն ,, ։ Բայց ոչ ումեք ՚ի սոցանէ լուաւ Աղիսա . այլ եմեալ ՚ի տաճարն և խուսնկս ծխել կամեցաւ , և քահանային արգելուլ ոչ անասյր ։ Ընդ ապա ընչ ՚ասծ . երևեցոյց ՚ի Զաքարէ նորա բորոտութիւն , զերբք դէմն յանդիմանելով և խրատելով , եթէ ՚ասծային իմն է տեառնն , և ոչ առ մարդ էր պատերազմ նորա ։ Ընդ յաղագս Աղիայ այսոքիկ ։

Բայց բեր վերսին պատմութեանն լուիցուք . քանզի վասն այսորիկ և ես կանխաւ ժամանեալ սակաւուք պատմեցի ձեզ զդիպուածն զամենայն , զի յորժամ լուիցէք ՚ի գրոց որք պատմենն՝ զնետ նորա երթայցեք հաւաստեաւ ։ Ա՛յլ հայեցարուք . “Ընդ արար , ասէ , Աղիսա ուղղութիւն առաքի տեառն ,, ։ Ա՛եծամեծք էին նորա առաքինութիւնքն , յաղագս որոյ և վկայեաց նմա . զի ոչ միայն արար զուղղութիւնն , այլ և առաքի ՚այ , ոչ ՚ի ցոյցս մարդկան իբրև զայնոսիկ զՀրեայսն որ առաքի ողորմութեանն փղձին , և որք պահօք զերեսան ապականէին , և զաղօթսն ՚ի Հանապարհակիցսն առնէին . քան զորս ոմ որք լսցի թշուառականագոյն , զի վասն գինի համբերելով ՚ի հատուցմանէն զրկին ։

Օ՛ ընչ գործես , ով մարդ . ընկերանդն հանդերձեալ ես համարս տալ զգործոցն քոց , և զայլ ոմն կոչես վճկայ իրացն քոց . զայլ ոմն ունիս գատաւոր , և զնմն նրստուցանես տեսող ։ Ա՛չ տեսանես զերասանակալսն՝ որք ՚ի նատել քաղաքիս ամենայնի ՚ի վեր անդ ՚ի հակառակութիւնս ձիոյն , զամենայն զմտաւոր զասպարիզին զանց առնեն , և անդ Հեղին զՀակառակարուեստիցն զկառս կործանել՝ յորում վայրի տեսանեն զԹագաւորն նատեալ , և քան զամենայն դէմն զմիոյն զաչս արժանի Հաւատալոյ վարկանին ։ Իսկ դու զՀրեշտակաց Թագաւորն քում ընթացիցդ նահատակադիր տեսանելով , զնա Թողեալ ՚ի ծառայակցացն դէմն ապաւինիս ։ Ոչորին աղագաւ զկնի բիւր մարտիցն անպատիկ անցեալ գնաս , յետ յորով քրտանցն առանց յաղԹանակի երԹեալ առ նահատակադիրն ։ Բայց ոչ Աղիսա այնպիսի ոք էր , այլ առաքի տեառն զուղղութիւնն առնէր ։

Ընդ զհարդ այնպէս Հանդերձ ատուգութեամբ առաքինասցեալ , ընկՀեցաւ և ՚ի վայր անկաւ ։ Ընդ դոյն և

ես զարմանամ և տարակուսիմ, մանաւանդ եթէ ոչ է իակ արժանի տարակուսանաց այնքան զի մարդ էր դիւրագթելի ի մեղս և առ չարութիւնն երագամիտ։ Եւ ոչ այս ևեթ է դժնդակ, այլ զի և զձանապարհ գնեզ և զանձուկ ճանապարհորդել հրամայն առաք, որ յերկոցունց կողմանց ըմբռնեալ է գահավիժութեամբք։ Զոր յորժամ յօժարութեան դիւրութիւն և ճանապարհին դժնդակութենէ խմբեսցին ի միասին, մի ինչ աքանչանար յաղագս յանցանացն։ Օ որ օրինակ ի տեառնէն որք ընդ չուանսն ի ներքուստ ի վեր ձգեալն ելանել և իջանել հանդերձեալք են, եթէ փոքր ինչ թերատեսցեն՝ թիւրեալք անկանին ի վայր ի կաքաւարանն և կորնչին, նոյնպէս և որք զձանապարհս զայս[1] գնան, եթէ զուշաքեայ ինչ պղերգասցին, ի վախից անկանին։ Օ ի քան զայն չուան՝ ճանապարհս այս նեղ է և ուղղորդ և յաւէտ զառ ի վեր և բարձրագոյն յոյժ, ի նոյն ինքն յանդի յերկինս. և յայնժամ մեզ լինի սխալելն առաւել գնացն, յորժամ ի վեհագոյնն և առ նոյն ինքն գագաթն հասանեմք. քանզի որք ի բարձրաւանդակին կան, սաստիկ է զողումն, և մի ևեթ զգուշութեամբ մնացեալ լինի՝ ոչ յառել ի ստորև և ոչ զերկիր տեսանել. վասն զի դժնդակագոյն իակ անդ ցնորն լինի։

Եւ յաղագս այսորիկ յաճախապէս մեզ մարգարէն գոչէ ասելով. "Ի կատարածի մի ապականեր,,. զծուլացեալ զանձն մեր զգաստել, և որ հանդերձեալն էր ի վայր անկանել՝ կալ մնալ և ժուժկալել, քանզի ի սկզբանն ոչ բազում միխիթարութեանց կարօտանամք։ Ընդէր արդեօք. զի ամենայն ոք է, թէպէտ և քան զլաւագոյնս ծուլագոյն իցէ, հանդերձեալ զկրայն բառն հարկանել, յոլով փոյթ ի նախաշաւիղն ցուցանել առաջադութեամբ յօժարամտութեանցն և նոր տակաւին և զօրութեամբն. իակ յորժամ ընդ բազում մնան հանապարհին անցանիցեմք և խաւիղն յօժարամտութիւնքն ի մեզ և զօրութիւնն աղօտանայ և ի վայր անկանել հանդերձիմք, յայնժամ մարգարէս մեզ ի դէպ ժամանակի մերձ կայեալ իբրև մահակ իմն ըզբանս զայս կարկառեալ ասելով. "Ի կատարածի մի ապա-

1 Յաւելու երկաթագիր ձառընտիրն և պրոէսպոհէբէալ։

կաներ ,,. զի և սատանայ յայնժամ ուժգնագոյն մար-
տնչէ :

Այլ զոր օրինակ որք ՚ի ծովու նաւեն, ոչ յորժամ տեսանեն ընկղմիչքն ելեալս ՚ի նաւահանգստին զնաւն՝ յայնժամ ՚ի վերայ յարձակին, վասն զի զնոսա օգուտ նոցա՝ ունայն ընկղմել զնաւն. այլ յորժամ անդրէն գայցեն լի զբեռն ունելով, յայնժամ զամենայն զվերքինսայն չարժեն ՚ի վերայ : Այսպէս և չար դևն այն յորժամ տեսանէ յոլովս ժողովեալ, զպահս զաղօթս զողորմութիւնս զպարկեշտութիւնս, նա զամենայն ա-ռաքինութիւն, յորժամ տեսանէ լի զնաւն մեր բազ-մապատիկ բարեպաշտութեան քարամբք՝ յայնմ ժա-մանակի ամենայն ուժտեք փորելով ղգանձն, որպէս զի առնիս իսկ բերան նաւահանգստին ընկղմիցէ, և մերկ առաքեսցէ այնուհետև ՚ի նաւահանգիստն յայն. յա-ղագս այսորիկ մարգարէն պատուիրէ ասելով ամենե-ցուն. “Ի կատարածի մի ապականեր ,,. զի և զինի դար-ձեալ կործանմանն այնր դժուարակոչ վերստին կանգ-նուն լինիցէ: ՚Ասղի “Որ երթայն ՚ի խորս չարեաց, արհամարհի ,,:

Այլ և ՚ի սկիզբն կործանեցելոցն Թողութիւն առ-նեմք ամենեքեան յաղագս անհմտութեանն. իսկոր յետ բազում ընթացից ընկճիցի, ոչ որ դիւրով արժանի Թո-ղութեան վարկանի. պղերգութեան յայնժամ կործա-նուն լեալ Թուիցի: Այս ոչ յայս միայն, այլ զի և քա-զումք են որ գայթակղին կործանմանէ նորա. որպէս զի և այսոքիւք աննեղելի նորա մեզքն լինի : Օ այս գիտե-լով մարգարէին լուիցուք, և ՚ի կատարած մի ապակա-ներ : Ա՝ ման այսորիկ և Այսկսիել գոչէ ասելով. “Ընթ-ցիր զինիցի որ արդար, և զինի փոխոխեալ յանցանիցէ, ոչ յիշեսցին նմա արդարութիւնք իւր. ՚ի մեղս իւրում մեռցի ,,. զի և նա երկեաւ յաղագս կատարածին : Այս ոչ ասաց միայն, այլ ՚ի հակառակէն ցուցանէ յոլով զի-րացն զօրութիւն լեալ: “Ընթ-ցիր զինիցի որ, ասէ, մեղաւոր, և ապա փոխոխեալ լինի արդար, ոչ յիշեսցին մեզք իւր. արդարութեամբն իւրով կեցցէ ,,: Ցեսանե՞ս և սատա-նայ յաւէտ կատարածին արարեալ նախանձութի-. զի մի արդարն վաստհանալով յարդարութիւնն իւր և խոնարհեալ ՚ի պղերգութիւնս կործանեսցի և կորիցէ,

երկեցուցանէ զնա կատարածաւն. և մի մեղաւորն յուսահատեալ՝ ի յանցանսն յարաժամ մնասցէ և՝ ի կործանմանն, կանգնէ զնա՝ ի ձեռն կատարածին: Յորով մեղաւ, ասէ, մի յուսահատիցիս. քանզի ես վերստին ձանապարհ, եթէ հակառակ սկզբանն ցուցցես զկատարածն: Դարձեալ արդարոյն. յաձախ ուղղեցեր, այլ մի վստահանար. քանզի դիպի և անկանել, եթէ ոչ մինչև խափառ զուգահաւասար զիրացն ընկալցիս: Ցեսէք զիարդ զիրացն զծուլութիւնն և զիւսոյն ևս զյուսահատութիւնն՝ ի բաց եբարձ:

Բայց ոչ ումեք յայտնէ լուաւ Աղիսա, յաղագս ոյոյ վստահայեալ՝ ի վայր անկաւ կործանումն դժնդակագոյն և անբժշկելի: Օ՛ի և ոչ ամենայն զլորումն հասեալ մեզ զվերն գործէ. այլ՝ ի մեղանացն ոմանք ընդբամբասանօք եւեթ անկեալ կան, և ոմանք զվստանգաւոր տանջանս ընդունին: Օ՛ի և ոչք ոչ անապային եղբարց՝ ի հասարակաց ընթերցին՝ Պաւղոս սաստելով ասէր այսպէս. "Օ՛այս պատուիրելով ոչ գովեմ,,: Ցեսանե՞ս մինչև՝ ի բամբասանան ձգեալ զմեղն, և զպարսաւանսն ունելով պատուհաս: Բայց և ոչ յորժամ յաղագս պոռնկութեան խօսի, նոյնպէս առնէ. այլ զիա՞րդ. "Եթէ ոք զտաձարն ՚այ ապականէ, ապականէ զնա Ած,,: Պատանօք ոչ պարսաւանք և ոչ ստգտանք, այլ գժնդակագոյն պատիժք:

Գործ և Սողոմն զմեղացն զանազանութիւն, զզուղութիւն ընդ պոռնկութեան համեմատելով այսպէս ինն ասէ. "Այլ ինչ զարմանք են եթէ ըմբռնեսցի ոք՝ ի գողութեան. գողանայ զի զանձն իւր քաղցեալ լցուսցէ. իսկ որ շնայն, առ պակասութեան մնացն կորուստ անձին իւրում պատրաստէ,,: Յանցանք են և այս և այն, այլ մին նուազ և միւսն մեծ. վասն զի մին ունել թուի յաղքատութենէն ինն պատճառ, իսկ միւսն և յամենայն պատասխանութեց զրկեալ:

Այնպա ունի, ասեն, ՚ի բնական ցանկութենէն զհարկաւորութիւնն: Այլ ոչ ներէ նմա վիճակեալ կինն, ՚ի վերայ կայ՝ ի բաց բառնալով՝ ի թողութենէն վնաս: Ամն այսորիկ ամբանութիւն և օրինաւոր վայելումն, զի մի ինչ յայտնէ ունիցի ասել այսն. նորին աղաչաւ օգնական նմա տուաւ կինն, զի զմոլեկան բնութիւն

յածուցանէ և չիջուցանէ զյանկուԹեանն ալէկոծուԹիւն։ Օ՜ի զոր օրինակ նաւուղղող զ՚ի նաւահանգստին գոլ ծելով նաւաբեկուԹիւն՝ ոչ պատահէ ԹողուԹեան ի վեր, նոյնպէս և մարդ յետ զղուշուԹեանն որ յառնուԹենէ, եԹէ զայլոց գողանայցէ զանուանուԹիւն կամ զկին որ հարցաքննելով տեսանիցէ, ոչ ևս դիպի պատահանեայ, ոչ առ մարդիկ և ոչ առ Ած, Թէպէտ և բիւր անգամ ասիցէ զընուԹեանն հեշտուԹիւն։

Որ իսկ մանաւանդ լինի յանկուԹիւն, ուր երկիւղ և ահ և վիշաք և վտահուԹիւն այնքան չարեաց, ուր ատեանք և պատուհասք և դատաւորի սրտմտուԹիւն, սուր և գահիճք, վիհ և հալածուին. յորոց ՚ի ստուերային գողայ և զարհուրի այնպիսին, որմէնն և քարանձն իբրև ձայնս արձակեալս. զամենեսեան տեսանէ և կեզակարծէ, ՚ի ծառայից և ՚ի դրացեաց, ՚ի բարեկամաց և ՚ի Թշնամեաց, զամենեսեան գիտակ՝ որք ոչ ինչ գիտեն՝ վարկանի։ Անաւանդ եԹէ կամիս և զայնոսիկ ՚ի բաց բառնալով՝ Թէ և ոչ որ տեսանէ զյանդգնուԹիւնն, այլ ինքն միայն հանդերձ Թշնամեցեալ կնաւն բերէ իմն ՚ի խղճէ մեռցին զառն յանդիմանուԹիւն զոր ամենայն ուրեք կրէ ոսկս։ Օ՜ի զոր օրինակ չինքենէ ոչ որ փախչի, նոյնպէս և ոչ ՚ի դատաւորի այլ յանդիմանուԹենէ։ Այլ որա ատեանն ոչ ընչիւք ապականի, ոչ փաղաքշանօք Թուլանայ, քանզի ՚ձայնն իմն է և չայ ՚ի մեր հոգիս հատատեալ։

Արդարեւ որ չնայն, պակասուԹեամբ մտօք իւրովք կորուսա անձին իւրում մԹերէ։ Այլ ոչ որ գողանայն, ՚ի պատուհասէն Հողոպրի. պահանջի գատաստան, այլ նուազագոյն. զի համեմատուԹիւնն այն ոչ ՚ի հակառակ կարգսն մղեն զիւրն հաւատարեալս, այլ Թողուզմեզ կալ ՚ձնալ ՚ի քում տեղւոջն, և ՚ի նոսա նուազուԹիւն մեծանէ և առաւելուԹիւն։

Պարտ Թէ ոչ իմնացայք զատացեալս, Հարկաւոր է այսու հետև յայտնագոյնս ասել։ Արտաքս է ամենանուԹիւն, այլ լաւագոյն է կատուԹիւն. և ոչ վասն զի լաւագոյն է կատուԹիւն՝ յաղագս այնորիկ չար է ամենանուԹիւն, այլ նուազագոյն է քան զնա, բարւոք է և ինքն։ Այնպէս և ատ. չար է գողուԹիւն, այլ վատնարագոյն է չնուԹիւն. և ոչ վասն զի չարագոյն է չնուԹիւնն՝ բա-

բուք է պողոթիւն, այլ փոքր քան զնա, չար է և ինքն։ Տեսիր զմեղսն զանազանութիւն։ Տեսցուք այսուհետև զոր յանցանս սա մեղաւ։

Ասէ, "բարձրացաւ սիրտն իւր,,։ Չար է վէրն, վասն զի ապարատանութիւն է. և ապարատանութիւն ամենայն չարեաց աղբիւր է։ Այլ զի համառօտաբար ուսցիս զախտին զայնր զչարութիւն, լուր. այլ մեղք՝ի մեր բնութիւն զառնան, իսկ ամբարտաւանութիւն զանմարմին զօրութիւն՝ի վայր ձգեաց՝ի վերուստ և ընկեաց. քանզի զսատանայ որ ոչն էր յառաջագոյն սատանայ լեալ, զնա սատանայ արար։ Այլ եթէ զԱդամիան ածցուք՝ի վկայութիւն՝ որ ասէ նոյնպէս յաղագս նորա, "Յերկինս եղից, եղեց նմանող բարձրելոյն,. ոչք զայլաբանութիւնս ոչ հեշտութեամբ ընդունին, ապաքէն առնեն զվկայութիւնն մեր։ Իսկ եթէ զՊաւղոս մերձ կացուսցուք նմա ասել, ոչ ոք այնուհետև ինչ կարէ ասել ընդդէմ։ Այլ զինչ Պաւղոս, Ցիմնթեայ գրելով եթէ որոյ արդ իսկ սկիզբն աւարեալ էին քարոզութեանն՝ ոչ է պարտ և արժան՝ի մեծ եպիսկոպոսութեանն ածել յարժանաւորութիւն, այսպէս ինն ասէ. "Մի՛ մանաւանդ, զի մի՛ հպարտացեալ՝ի դատաստանս անկանիցի սատանայի,,, զի մի՛ զնոյն մեղանչելով ընդ նմա՝ զնոյն ընդ նմա տանջեսցի։

Այլ ոչ ասաի և եթէ յայտ է այս, այլ և յայնցանէ որ առ հնուումն քան զամենայն մարդ եղելոյմ խորհրդակից եղև չար դևն այն։ Օ՛ի զոր օրինակ բարեացն է սովորութիւն զնոյն ընկերացն պատուիրել որով ինքեանք եղեն բարիք, նոյնպէս և չարաց սովորութի՛ է՝ զայն պատմել մերձաւորացն՝ի ձեռն որոց ինքեանք եղեն վատթարք։ Վասն զի է մի և այս չարութեան նոցա տեսակ, զի միմեանս որութի՛ վարկանին իբրեանց տանջանացն զայլոց կորուստ։ Այլ զինչ խորհրդակից սատանայ լինէր Աստծոյ. վերհագոյն քան զիւրոյ բնութեանն առնուլ զմտածութիւն, և՝ի զուգածութիւնն վստահանալ։ Օ՛ի եթէ զիս յերկինս այս ընկեց, և ս առաւել զաս՝ի դրախտէն արտաքս հանցէ։ Յաղագս որոյ և Սողոմոն ասէ. "Աստուած ամբարտաւանից ընդդէմ կացի,,. և ոչ ասաց թէ ած զամբարտաւանս թողու կամ լքանէ և կամ յիւրմէ օգնականութէն մերկացուցանէ, այլ հակառակ

կապի, ասէ. և ոչ եթէ պատերազմի ինչ նման և կամ կռուոյ պէաք են առ Հպատոսն. վասն զի ո՛ր քան զամբարտաւանն լեցի տկարագոյն: Ո՛րպէս որք զաչս կորուսանեն՝ ամենեցունն առաջի կան ՚ի չարչարանս կրելոյ, նոյնպէս և ամբարհաւաճ՚ն զած ոչ ձանաչելով. քանզի "Ակիզբն, ասէ, ամբարտաւանութե՚ ոչ գիտել զտէր,,. և մարդկան դիւրըմբռնելի է՝ ՚ի լուսոյն յայնմանէ արտաքս անկեալն: Այլ եթէ զբարւոյ էր, ոչ արդեօք պատերազմի պէտք էին այ առ նա. քանզի որոյ կամքն բաւական եղեն զամենայն ՚ի մէջ ածել անյուսանել, և առաւել ՚ի սատակումն նոցա էր բաւական: Այլ ես՛ր ազգաց, ասէ, հակառակ կապի. վի զսատկութե՚ թերնամութեանն ցուցցէ որ առ ամբարտաւանն է: Այդ վի չար է վէր ամբարտաւանութեանն և յայտնանէ և յայլնստ յոլով ուսանէք է յայտ:

Այս եթէ ախորժէք, զնոյն ինքն զպատճառն ուսցուք յորմէ վէրն եղև: Ա՚ան վի սովորութիւն է գրոց յորժամ հանդերձեալ իցեն զուտքն ամբաստանել, ոչ զբերթալանս նորա միայն ասեն, այլ և զպատճառս մեղացն ուսուցանել մեզ: Ո՛այս առնեն՝ զառողջան զգուշագոյնս կազմելով, վի մի՚ ի նոյնս անկանիցին: Այսպէս և բժիշկ առ հիւանդացեալսն մտանելով՝ նախ քան զախտսըն զհիւանդութեանցն զաղբիւրս հետազօտեն, որպէս վի ՚ի վերուստ զչարն վնաոուցանել կարասցեն. քանզի զարմատոյն վնասելով որ զչառաւիղսն միայն կամի հատանել, ոչ ինչ այլ՝ բայց եթէ մնալատակ: Այս ոմր գիրք զայնցանս և զպատճառս մեղացն ասացին: Ա՚մբաստանելով նախ քան զքրիստեղէն եղելոյ յաղագս ոչ յարմարական խառնակութեանցն, լուր զիարդ առնէ զպատճառան. "Ցեսեալ որդւոյն ՚ոյ զդստերս մարդկան վի գեղեցիկք էին, առին զնոսա ինքեանց ՚ի կանայս,,: Այս արդ վրնչ, գեղեցկութիւնն է մեղացն պատճառք: Ա՚ի լեցի, քանզի ՚ոյ իմաստութեանն է գործ. իսկ ՚ոյ գործ և ոչ երբէք լինի չարութե՚ պատճառք: Ա՚յլ տեսանէ՚ն. և ոչ այն: Ւսկ վրնչ. չարաչարն տեսանել, քանզի այս ապականեալ յօժարութեանն է. յաղագս այսորիկ և սուն իմաստուն պատուիրէ ասելով. "Ա՚ի ուսանիր զայլոց գեղեցկութիւն,,: Ա՚յլ ասաց մի տեսաներ, վասն վի պատահէ և ՚ի դիպուածոյ լինի այս լինել. այլ մի ուսա-

նիւ, ասէ, որ խնամով հայելն է և զնոսղ տեսութիւն, որ հանդերձ զեզերանօք պչնուն է և որ յապականեալ յանձնէ և ի բաղձալելոյ ի բաց բառնայ։

Այլ զինչ ինձ, ասէ, յայնմանէ լինիցի։ Յայնմանէ սիրելութիւն երբեմն զՀոգւոյ բոլոքոլի. զի զոր օրինակ Հոգւոյ յորժամ զիտոյ իմիքեն և կամ զցօղնոյ բուռն Հարկանիցէ՝ ոչ կայ միայ ժամանակ ինչ, այլ մերձեալ ինիւթն պայծառագոյն զբոյն վառէ, նոյնպէս և Հոգւոյ յանկութեանս որ ի մեզ է, յորժամ ի ձեռն աչաց ի գեղեցկագիտ պատկեր և ի պայծառ մտոի, վաղվազակի զտեսողացն ընդ զանձինս։ Մի Հայեցիս ի ժամանակեայ հեշտութիւնն որ ի տեսութենէ, այլ զյաւիտենական վանդն դիտեսջիր որ ի ցանկութենէն լինի։ Քանզի մեծ զՀարուածն գնելով չինքեան ի բաց վազէ յոլակի. բայց ի վիրէն ոչ փախչի, այլ կայ և միայ և կարուսանէ։ Այս զոր օրինակ եղջերու տեսանելով նետ ի կարևոր տեղւոջ ի մարմինն, թէպէտ և փախչիցի յորոզդացն ձեռաց՝ ոչ ինչ օգտի այնուհետև, նոյնպէս և անձին ընկալեալ զնետ պակշռեալ փափաքանացն և աւելագործ տեսութեանն, թէպէտ և զնացն նետն թողուլ անցեալ գնայ, սակայն ինքն ապականի և կորնչի, ամենայն ուրեք զպատերազմովն զՀետ յարմարեալ ունելով։

Այլ պարէս ասէին, վասն զի ոչ յաղագս երկայնադոյն գոլաքանութեանցն եղելոց Հոգւոյն է, թէ գիրք և պյանցանս և զպատճառս նոցունց ասել սովորէցին, լուր և ասա զինչ ասէ վասն Ոգւոյ։ Ել զի բարձրացաւ սիրտ նորա՝ զայս միայն մեզ վարդապետէ, այլ և ուսոմ Համբարձման յաւել։ Այս ուսոմ Համբարձաւ. յորժամ Հզօրացաւն, ասէ, Համբարձաւ սիրտ նորա։ Ել կարայ բերել զՀզօրութեանն զմեծութիւն. այլ զոր օրինակ ի շատկերութենէ լինի այտուին, և յայտնանէ ծնանի տապ, և անտի բազում անգամ մահ, նոյնպէս և աստ ի յոլովութենէ իրացն շուրջ արկածից ապաբասանութիւն եղև. զի որ մարմնոյ այտուին է, նոյն և Հոգւոյ ամբարտաւանութիւն, և ապա յանբարհաւատութենէն աւելացանք՝ ոչ նման յանկապտնից իրաց։

Օ այս ոչ վայրապար յերկարեցաք, այլ զի մի երբեք նախանձելի լեալ կարծիցէք որք ի զբութեանն

են, զիտելով որքան իրքն զիւրաքանչիւրք են. և զի մի երբեք որք յաղքատութեան և յանկակղութեան[1] են՝ թշուառական վարկանիցիք, իմանալով թէ առաւելագոյն անտի զգուշութիւն է։ Յաղագս որոյ մարգարէն գոչէ ասելով. "Լարի է ինձ զի նուաստացուցեր զիս,,։ Տես որքան՝ ի բարձրութենէն եղև չար. "Լքարձաւ, ասէ, սիրտ նորա մինչև յապականել,,։ Եւ զինչ իցէ՝ մինչև յապականելն։ Ի չար մտածութեանց ոմանք և ոչ ամենևին իսկ՝ ի մեր անձինս ելանեն, եթէ յաճախապէս շուրջ ամրացուցանելով զմեզ զգուշացուցանիցեմք, և ոմանք ծնանին՝ ի ներքս յարմարելով՝ ի մեզ և բուսուցանելով. բայց եթէ յառաջագոյն ըմբռնեսցին հեղձնուն վաղվաղակի և՝ ի վայր թաղին։ Եւ ոմանք ծնանին և աձեն և առ չար գործս արտաքս ելանեն, և զամենայն զառողջութիւն զանձանց մերոց ապականեն, յորժամ՝ ի բազում ծուլութեան լինիցիմք։ Օ այս ասէր նա, եթէ "Լարձրացաւ սիրտն Ողիայ,,, և ոչ եկայ ինաց՝ ի ներքս ապարտասանութիւնն և ոչ շինաւ, այլ արտաքս վազեայ և՝ ի չար գործն ելանելով զամենայն առաքինութիւնս նորա ապականեաց։

Երդ երանելի է որ ոչ իսկ բնաւին ընդունի զչար մտածութիւնն, որպէս և մարգարէն ասէ. "Տէր, ոչ բարձրացաւ սիրտ իմ,,. ոչ ասաց բարձրացաւ և զնըստուցի զնա, այլ և ոչ՝ ի սկզբանն ամբարձաւ. այս է՝ անկոխ յարաժամ պահեցի զանձն իմ՝ ի չարութենէն։ Երանելի նա է. իսկ զկնի նորա, մտեալ՝ ի ներքս զնոր-հուրդս վաղվաղակի՝ ի բաց մղել, և ոչ ներել առաւելապէս յամել՝ ի ներքս, զի մի զչար գործսն՝ ի մեզ ձաւրակեացեն։ Երթ մինչև ցայսքան յուշանայցեմք, է՝ ի ձեռն Աստուծային մարգասիրութեանն և այսմ պղերգութեան միխիթարութիւն, և յոլովք յանձառ բարութենէն յայնմանէ և՝ ի մեծէ այնպիսի վերաց պատրաստեցեք դեղս։

Բայց քեր այսուհետև զբանս դադարեցուսցուք, զի մի յորժամ՝ ի սկզբանն երկեաք՝ լինիցի այժմ, և յաճախութիւն ժանտացուցանիցէ զյիշատակս ձեր. յաղագս որոյ աւարտել զբանս հարկաւոր է։ Յայսպէս և մարքն

1 Երկաթագիրը ձառընտիրն յաղվաղոթիեան։

առնեն, յորժամ միրգ ինչ կամ ալանդեր և կամ այլ ինչ նոյնպիսի 'ի մանկանցն գոգ արկանիցեն. զի մի 'ի ծուլութենէ մանկանցն անկցի ինչ 'ի տուելոցն նոցա, շուրջ զսպելով ամենայն ուստեք զպատմուճանն ընդ գօտեաւն հարկանեն զգուշութեամբ. զնոյն և մեք առնեմք, յերկարագոյն ձգելով զբանս՝ շուրջ ամփոփեմք և յիշողականի մնայ առանդեմք։ Ոչայք զկարդ ոչ մեզ առ մարդկան ցոյցս պատ և արժան է առնել, և որքան չար է ծուլութիւն, միանչ զի և որ զգուշութիւն է կեցեալ՝ դիւրաւ ընկղմէ։ Ոչանեայք և որքան փութոյ կարօտեմք մեք, և յաւէտ 'ի նմին իսկ 'ի կենաց կատարածին, և զկարդ ոչ անյուսանալ փոխոխեցեալսն, և ոչ վստահանալ որոյ զուղղութիւնն արարեալ իսկ և պղերգանալ։ Ոչօսեցաք յաղագս զանազանութեան մեզոյն ընդ ձեզ, յաղագս ոչ բերանաբաց լինելոյ 'ի պայծառ մարմինս, և որքան չար է յայնմանէ՝ ցուցաք։ Ոլբ վասն ամբարտաւանութեանն ձեզ ասացան՝ յիշեսջիք, և որք յաղագս չար խորհրդոյն։

Ո՚այս պահելով երթիցուք 'ի տուն, մանաւանդ թէ զայս պահելով ընկալցուք և զկատարելոյ և զբարւոյ վարդապետիս զպատուիրանն։ Ոչանզի մերս որպէս մանկապունից իմն զվարդապետութիւն ունի, իսկ սորայս իբրև ծերացելոց մնաք զարդարէ. և մերքս նման են առուսոյ որ շօչմամբ բերեալ լինի, իսկ սորայս նմանեցաւ աղբերի՝ որ գետս արձակէ հանդերձ բաղում հանդարտութեամբ, ձիթոյ գնացից առաւել նմանելով՝ քան եթէ ջրոյ։ Ոնկալցուք այսուհետև զջուրն, զի եղիցի մեզ աղբիւր ջրոյ խաղացելոյ 'ի կեանսն յաւիտենական. որում լիցի ամենեցունն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Որիստոսի. ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Բնե այսօր որ յաղագս Աղիայ պատմութեն է՝ Հատուսցուք ձեզ զպարտսն, և ձեզնէն ի վերայ գիտուք բանին՝ մի գուցէ և մեք ծաղր լինիցիմք իբրև զայն որ յաւետարանին ասի՝ զաշտարակն կամելով շինել և ոչ կարաց։ զի մի՛ որ և զմնջղ երբեք ի մերձաւորացս ասիցէ. "Այս այր սկսաւ շինել և ոչ կարաց,,։ Արդէս զի յայտնագոյն լինիցի ձեզ ասացեալքս, սուղ ինչ ի յառաջագոյն ասացեալսն վերստին առցուք։ զի մի առանց գլխոյ բանս մեր ի հոգևոր տեսոլս մտցէ, այլ զիւր զդեմն ընդունելով ծանօթ լինի տեսողացն. քանզի նոյն ինքն լինի որոց ոչ լուան՝ ուսումն, և որոց լուանն՝ յիշողութիւն։

Յառաջագոյն ասացաք եթէ որպէս բարեպաշտ Աղիաս, և զիարդ եղև վատթար և ուստի, և մինչ ցորքան յամբարտաւանութիւնս կործանեցաւ. այսօր հարկաւոր է ասել զիարդ եմուտ ի տաճարն, զիարդ չանդգնեցաւ ի խունկ ծխել, որպէս արդեօք քահանայն, զիարդ ոչ անսաց նմա և որպէս յինքն ձգեաց զնզ բարկութիւնն և զիարդ բորոտութեամբ զկեանսն կատարեաց, և էր աղագաւ մարգարէն զաւուրս կենացն Ոզոզիայ զվախճանն յիշեաց այսպէս ասելով. "Ի տարւոջն յորում մեռաւ Աղիաս Թագաւոր,,։ Վասնզի այս է յաղագս որոյ զամենայն ի սկզբան պատմութիւնն շարժեցաք. և արդ հայեցարուք։

"Եւ եղև, ասէ, յորժամ զօրացաւ Աղիաս Թագաւոր, բարձրացաւ սիրտ նորա մինչև յապականել, և անիրաւեցաւ ի տէր Աստ իւր,,։ Եւ զինչ է օրինակ անիրաւութեանն. "Եմուտ, ասէ, ի տաճարն խունկ ծխել ի վերայ սեղանոյ խնկոցն,,։ Այլ յանդգնութեանն, այլ լրբութեանն. ի նոյն իսկ ինքն ի քահանայական անմտանելւոյն յանդգնեցաւ, ի սրբութիւն սրբութեանն վաղեաց, որ տեղի ամենեցունն էր անկոխ բայց ի քահանայապետէն միայնոյ, զայն պղծել ձեռնարկեաց։ Հասկնայ է անձն որ միանգամայն անծանօթանայ չիւրմէ փրկութենէն, ոչ ուրեք ի մոլորութեանն կայ միայ,

այլ զերասանական իւրոյ փրկութեանն Թողացուցանելով՝ անբան ախտիւք ամենայն ուրեք բերեալ լինի։ Այլ զոր օրինակ ձի խստերախ զանձս՝ ի բերանոյ արտաքս հանելով՝ զՀեծեալն ընկենուլով՝ ի միանայն յորն՝ քան զամենայն հոգւոյ ուժգնագոյն լինի բերեալ, և պատահելոյն է անժուժալի՝ ոչք՝ ի բաց փախչին ամենեքեան, ունել և ոչ ոք զամարձակի, նոյնպէս և անձն զատուածայինն երկիւղն արտաքս մղելով և զերասանականն ընկենուլով զմարհուրդ՝ յամենայն տեղիս չարութեան ընթանայ, մինչև՝ ի կորստեան խորխորատն անկանի՝ գահավէժ առնելով զնա փրկութենէն։ Յաղագս որոյ պարտ և արժան է յաճախապէս զնա ընդդէմ հարկանել, և իբրև սանձօք ամօքիք բարեպաշտութեանն մտածութեամբք զանբան յարձակումն անպրէն ըմպահակեցուցանել. զոր Պղտաս ոչ արար, այլ՝ ի նոյն ինքն՝ ի գերագոյնն քան զամենայն իշխանութիւս անօրինեցաւ։ Ա՛ման զի և քահանայութիւնն քան զթագաւորութեանն իշխանութիւն մեծ է և նազելի։

Այս մի ինձ զծիրանիսն ասիցես և մի զթագն և մի զպատմուճանն զսակեշուքս. ամենայնն այն քան զգարնանային ծաղիկս վատթարագոյն է. քանզի "Ամենայն փառք մարդոյ, ասէ, իբրև զծաղիկ խոտոյ,, Թէպէտ և զնոսն ինքն ասիցես ինձ զթագաւորական փառսն։ Այս մի զայն ասասցես. այլ եթէ ախորժես, զքահանայիսն առ թագաւորն զգանազանութիւնն տեսանել՝ որ երկոցունց տուաւ զջափն իշխանութեանն հարցաքննեա, և յոյժ բարձրագոյն քան զթագաւորն տեսցես զքահանայն նստեալ։ Ա՛ման զի Թէպէտ և պայծառ մեզ եւ լեւեցի թագաւորական աթոռն քարամբքն որ՝ ի նմա կառուցեալ և որ շուրջ զնա պնդէ ոսկին, այլ սակայն՝ ի վերայ երկրի վիճակեցաւ անօրինել, և առաւել ինչ ոչ ունի քան զայս իշխանութիւն. իսկ քահանայական աթոռն յերկինս է հաստատեալ և անդ որ են իրք՝ սպասաւորել հրամայեցաւ։ Այս ո՞ զայս ասէ. ինքն որ երկնից է Թագաւոր. "Օրդոյ կապիցէք, ասէ, ՝ի վերայ երկրի, եղիցին կապեալ յերկինս. և զոր արձակիցէք, եղիցին արձակեալ յերկինս,,։ Օ՛ինչ պատուոյ զուգահաւասար լինիցի. յերկրէ զակիզըն դատաղութեան երկինն առնու։ Ա՛ման զի դատաւորն յերկրի

նատի, և տէր ջհետ երթայ ծառային. և զրոս սա՛ի խոնարհ աստ դատի, զնոյն նա՛ի վեր հաստատէ։ Եւ՛ի մէջ ՚այ և մարդկային բնութեանս կայ քահանայն, զանտի պատուան իմացանէ առ մեզ, և զմեր պաղատանսն հանէ անդր. բարկացեալ՝ զնա անդր հաւատար բնութեանն հաշտեցուցանէ, և ընդդիմակացեալս զմեզ յապրշտակէ՛ի նորա ձեռացն։ Յաղագս այսոցիկ և զնոյն ինքն զթագաւորական գլուխն ընդ քահանային ձեռօք բերեալ եդ ՚ած, խրատեալով զմեզ՝ եթէ սա քան զնա մեծագոյն իշխան է. վասն զի նուաղն՛ի լաւագունից օրհնի։ Եւ զի որ յաղագս քահանայութեանն է և որքան արժանաւորութիւնն մեծութեան, պլուտ ժամանակի. առ այժմ տեսցուք զանիրաւութեանն սատակութիւն զթագաւորին, մանաւանդ եթէ զատահակին։

Եմուտ՛ի տաճարն տեառն, և եմուտ, ասէ, Հզաքիաս քահանայ զկնի։ Մինթէ վայրապար ինչ արդեօք ասէի եթէ մեծագոյն է քան զթագաւորն քահանայն. զի ոչ իբրև զթագաւոր որ հանդերձեալ էր արտաքս վարել՝ այլ իբրև զատրուկ և զաղարաբարոյ ծառայ այնպէս իմն հանդերձ սատակութեամբ եմուտ զկնի իբրև զքաջ շուն՛ի վերայ յարձակեալ ժանտ գազանին, զի զնա՛ի տերունական տանէն արտաքս ածիցէ։ Զեսեր զանձն քահանային լցեալ բազում համարձակութեամբ և բարձրագոյն իմաստութեամբ. ոչ հայեցաւ յիշխանութեանն ծանրութիւն և ոչ զմտաւ էած եթէ որքան ինչ իցէ զանձն որ ցանկութեամբ արբեալ է՝ արգելուլ. ոչ լուաւ Սողոմոնի որ ասէն. "Սպառնացումն թագաւորի նման է սրտմտութեան առիւծու,. այլ՛ի ձըշմարիտ թագաւորն երկնից հայեցաւ, և զբեմն զայն զմեծաւ էած և որ անդ պատուհասքն են. այսպիսի խորհրդովք զինքն ամրացուցանելով՛ի վերայ դիմեաց սատակին։ Պիտեր, քաջ գիտեր եթէ սպառնացումն թագաւորի նման է սրտմտութեան առիւծու այնպիսիկ՝ որք յերկիր հային. բայց մարդ որ զերկինն տեսանէ, և պատրաստէ զոգին իւր՛ի ներքն՛ի քահանայապետին կալ ինալ, և զնծայելն օրէնս թ զնամանեալ տեսանիցէ և ոչ լինիցի վրէժխնդիր, քան զամենայն չուն վատթարագոյն է։ Ա՛ան զի ոչ ինչ է տկար՝ քան որ զայ օրինաքն զանց առնէ՝ որպէս և ոչ որ զօրաւոր՝ քան որ վրէժ-

ինդիր՝ ածային օրինացն լինի, զի որ վմեղս առնէ, ծառայ է, Թէպէտ և բիւր անգամ ունիցի՝ ի գլուխ ըզԹագն. իսկ որ զարդարութիւն գործէ, և քան զնոյն ինքն զԹագաւորն է Թագաւորագոյն, Թէպէտ և քան զամենեսեան իցէ վերջին։

Օ այսոսիկ ինքեան իմաստասիրելով առաքինին այն եմուտ ՚ի հետ Թագաւորին։ Ընդ նմա մտցուք և մեք, Թէ ախորժէք, և տեսցուք զինչ ընդ Թագաւորին խօսեցի. քանզի իշխանութիւն է, և ոչ փոքր ինչ քան օգտակարութեան, յանդիմանեալ տեսանելով զԹագաւորն։ Նա զինչ ասէր քահանայն. "Ել է իշխանութի՛ ծխել քեզ, Ղևիա, խունկ տեառն,,։ Ել անուանեաց զնա Թագաւոր և ոչ իշխանութեանն անուամբ կոչեաց, վասն զի յառաջագոյն զինքն արտաքս ընկէց՚ի պատուոյն։ Ցեսո՛ր զհամարձակութիւն քահանային, ուսիր այսուհետև զհեզութիւնն։ Ի սան զի ոչ համարձակութե՛ն միայն կարօտանամք յորժամ յանդիմանել հանդերձեալ իւիք, այլ և հանդարտութեանն առաւել քան Թէ համարձակութեանն. և ոչ յումեքէ՚ի մարդկանէ այնպէս՚ի բաց դառնան մեղուցեալքն՝ որպէս որ յանդիմանէն հանդերձեալ է. և բաղաս՚ի վերայ արկանել ցանկան, զի՚ի բաց վազեսցեն և՚ի պատուհասէն փախչիցեն. վասն այնորիկ պարտ և արժան է ունել զնոսա հեզութեամբ և ցածութեամբ։ Ո՛չ անզի ոչ միայն զձայն արձակելով այնպիսւոյն, այլ և երևեցն ծանր է յանցուցելոցն. քանզի "Ո՛ւռնը է մեզ, ասեն, տեսանել զնա,,։ Ա՛յսր աղագաւ պատշաճ՛ է յաւէտ հանդարտութիւն ցուցանել. վասն սորին և ձեզ բանս՚ի դէմն հած զմեղուցեալն և որ ուղղէն զնա կամիր։ Ի սան զի իմաստուն բժիշկք յորժամ հանդերձին զապականեալ անդամն հատանել, և կամ քարինս որ՚ի գնացս ինչ խնուցուն՝ արտաքս ձգել, և կամ զայլ ինչ զբնութեան սխալանս ուղղել, ոչ յանկիւն ուրեք առնելով զաշխատեբն զայն առնեն, այլ՚ի մէջ հրապարակի գնելով գնոսա, և տեսարան զանցաւորսն մերձ կացուցանելով՝ այնպէս ածեն՚ի վերայ գհատուածն։ Օ այն առնեն ոչ մարդկային թշուառութեանց յանդիման կամելով ցուցանել գնոսա, այլ զտեսողսն այլովք մարմնովքն խրատեն սաստկապէս իւրեանց առողջութեանն առնել նա-

խախնամութիւն։ Այնպէս և դիրք առնեն. յորժամ զոք ի յանցագործս առնուն, ի բարձր քարոզութեան վերայ զնա դնելով, ոչ ի մէջ գոհեցից, այլ ի մէջ երկրի, և զաշխարհ շուրջ տեսողս կացուցանելով՝ այնպէս զբժշկութիւնն ցուցանեն, խրատելով զմեզ զգուշապոյս լինել մերում փրկութեան։ Ցեսցուք այսահետև զիարդ ձեռնարկէ զնա քահանայն ուղղել։

Յայնժամ ոչ ասաց՝ ով վատաշուէր և ամենապիղծ, զամենայն կործանեցեր և խառնակեցեր, ի վերջին ամբարշտութիւն վաղեցեր։ Այլ ոչ երկայնադոյն ձգեաց զբարեխօսութեանս բանս, այլ զոր օրինակ զբժիշկ հատանէն՝ համառօտաբար առնել զայն փութան, ապագութեամբ հատմանն զողանան զցաւոյն զդայութիւնն, նոյնպէս և նա սակաւաբանութեամբ զթագաւորին զայսումն հատանէր։ Օ՛ի որպէս վիրայն սուր, նոյնպէս և մեղայն յանդիմանութիւն. և զհեզութիւնն հանդերձ այլովքն ի ձեռն սակաւաբանութեանն մեզ ցուցանէ։ Այս եթէ ախորժես զհատանումն քանիցն տեսանել, և ուր զերկաթեն ծածկեաց, լուր. "Այ է արժան, ասէ, քեզ ծխել խունկ տեառն, այլ քահանայից որդւոցն Ահարոնի սրբեցելոց,,։ Ընդանօր ետ զվէրն։ Օ՛ խարդ, ես ասեմ։ Ընդէր ոչ պարզաբար քահանայիկն, այլ յաւել զԱհարոնն։ Ա՛յն քահանայ Ահարոնն քահանայապետ եղև, և յանդգնել եղև ի ժամանակին յայնմիկ այսպիսի յանդգնութիւն. քանզի Նադաբ և Աբիհու և Կորհ մերձ կացեալք հանդերձ այլովք ոմանքք յանդգնեցան արտաքս հանել զնա յիշխանութենէն՝ ձեռնարկեցին ձգել. այլ զոմանս երկիրն պատառեալ եկուլ և զկեսն հուր ի վերուստ իջանելով առչորեաց։ Օ՛այն պատմութիւն նմա յիշեցուցանել կամելով յիշատակեաց զԱհարոնն՝ որ անխրատեալն լինէր. որպէս զի զկանխատես զքշտաւորութիւնն զանցուսցէ ի մտացն նորա։ Այլ սակայն ոչ առաւել եղև, և ոչ ի քահանայիկն, այլ յաղագս թագաւորին յանդգնութեան։ Ընդզի պարտ և արժան էր գովել զառաջեալսն և չարչ խոստովանել խոհրդակցին. իսկ նա սրամտեցաւ և զկատարածն գործեաց դժնդակապոյն ևս։ Օ՛ի ոչ այնպէս են չար մեղքքն, որպէս զկնի մեղանացն անաւմնութիւն։ Այլ ոչ Աւելիմ այսպիսի ազ. այլ զիաւրդ. զկնի առքաստա-

նուիրեանն 'ի Կ.Պոլսոյ եկոյ յաղագս Կերասպետեայ, "Եղայ տեսուն այ,, ասէ : Ցեսէր զնորատակեալ սիրան, տեսէր զնուաստացեալ զանձն, տեսանէս զիարդ և զլըրումն սրբոյն պիտանացու է : Կամ զոր օրինակ պայծառ մարմինքն 'ի հիւանդութիւնն յոլով գեղեցկութեան մեզ ցուցանէ նշմարանս, նոյնպէս և սրբոյն անձինք և 'ի նմին 'ի գլուխն զիւրեանց առաքինութեանն նշանակ բերեն : Վասկատ և 'ի մեջ թագաւորականացն բամ բասեալ լինէր նա 'ի մարգարէէն յոլովից մերձ եղելոց, իսկ սա 'ի ներքս յանմոռանալիսն առանց վկայութեան ունելով զյանդիմանութիւնն. այլ և ոչ այնպէս եբեր զպատուհան :

Կամ առա զինչ. անբժշկելի մնայ : Կամ ոչ երբեք, յաղագս այ մարգասիրութեանն : Կամ որպէս լուսնոտին զոր աշակերտքն ոչ կարացին հանել զդեւն՝ Կրիստոս ասէ, "Կերկք ինձ այոր զայն,, , նոյնպէս և աստ քահանային ոչ զօրել՝ որ քան զամենայն դև դժնդակագոյն է ախտն՝ զմեզն հանել, ինքն ած այնուհետև յաշխատեալն ձեռնարկէր : Կամ զինչ առնէր. բորոտութիւն սրձակէր 'ի ձակատ նորա. և արտաքս ելանէր այնուհետև, որպէս որք 'ի մահն ածեալք լինէին ջուան 'ի վերայ բերանոյն ունելով՝ նշանակ դատապարտութեան վճիռ, նոյնպէս և նա զանպատուութեան նշանակ 'ի վերայ ձակատացն բերէր. ոչ դահճայն վնաս ձգեալ, այլ նորին բորոտութեանն փոխանակ զահճայ գլխիվայր մեկնելով : Կամ զքահանայութիւնն առնուլ, որ և զթագաւորութիւնն կոտոյր. եամեա լինել նազելի, և եղև դարշելի : Կ՚ասն զի քան զամենայն ոտիկս անմաքրապոյն եր անպատուութեամբ. այսքան չար է ոչ կալ ինալ 'ի տաճեալ չափն մեզ յոյ. և թէ պատուեմք զիտութեամբք ո զայս առնէ : Կչ տեսանես զայս զծով զիարդ է բռնութեամբ անբմբռնելի, որքան կոտանելի աչեօքն. այլ սակայն 'ի մեծ բարձրութիւն ամբոխեալ և ամբարձեալ, և հանդերձ յոլով բարկութեամբ յոտաձգ է կեալ, յորժամ եկեալ առ եղեալ նմա սահմանն յոյ, զալեկոծութիւնն լուծանելով դարձեալ առ ինքն անդրէն դառնայ : Կնպէտ և քան զաւազն ոչ ինչ է ախտ բազմն, բայց ոչ նա է որ արգելուն, այլ հղօղին երկիւղն : Կամ եթէ ոչ ողջախոհացուցանէ զքեզ այս, օ-

բինակ Աղեաս եղև՝ այժմ խրատեսցէ զքեզ առաչեան։
Ա ման զի զբարկութիւնն տեսաք զայ և զարժանա-
ւոր Հատուցումն, բեր և զմարդասիրութիւն նորա և
զյաւէտ հեզութիւնն ցուցցաք։ Ոչանգի ոչ միայն որք
յաղագս բարկութեան բանքս էն՝ ցուցանել կ սպատ-
շաձ, այլ և որք վասն քաղցրութեանն, զի մի յանյու-
սութիւնս արկանիցեմք զլսողսն՝ և մի՛ ի ծուլութիւն։
Ա յսպէս և Պաւղոս առնէր, յերկաքանչիւրոյն խառնէր
զպատուիրանն՝ այսպէս լիմն ասելով. “Տես զքաղցրու-
թիւն և զսաստկութիւնն այ,,. զի և ահիւ և քաղցր
յաւսովքն կանգնեսցէ զանկեալսն։ Տեսէր զխոնարհու-
թիւնն այ, տեսէր զքաղցրութիւնն։ Ա՛մէն ուսանիցիմք
ամ էր արժանի Աղեաս։ Որո՞ էր արժանաւոր։ Ա՛յն
գամայն և ըստ նախադրութեան անցանելով տաճարին
հանդերձ այնքան լըբութեամբ՝ բիւրուց շանգեաց և
վերջին պատժոց և տանջանաց։ Ոչանգի եթէ առա-
ջինքն այսպէս յանդգնեալք այնքան եռուն պատասխա-
նի որք ընդ Դաւթանայ և Ա՛բիրոնի և ընդ Կորխայն
էին, ևս առաւել սմա այսպէս պատիժս առնուլ էր
պարտ, որ և ոչ թշնաւառութեամբքն ողջախոհացաւ։
Ոչայց ոչ արար այսպէս ած, այլ նախ յառաջագոյն նման
բանս խօսեցաւ որք յաւէտ հեզութեամբ լինն էին՝ ի
ձեռն քահանային. և զոր Աբրիատաս պատուիրեաց մարդ-
կան առնել յորժամ՝ ի միմեանս մեզանչիցեն, զնոյն և
ած առ մարդն արար։ “Յորժամ, ասէ, մեզանչիցէ քեզ
եղբայր քո, երթ յանդիմանեա զնա՛ ի մէջ քո և նո-
ցա միայնոյ,,։ Ա՛յսպէս և զԹագաւորն յանդիմանեաց
ած։ Նա՛ Աբրիատաս ասէ. “Ա՛ծ ոչ լուիցէ քեզ, եղիցի
քեզ իբրև զՀեթանոս և զմաքսաւորս,,։ Ոչայց ած գե-
րազանցելով քան զմարդասիրութեան իւրոյ զօրինան՝
և ոչ այնպէս զնա՛ ի բաց եհատ. որ ոչն լուաւ և սպառ-
նացաւ ևս՝ և ոչ մերժեաց, այլ դարձեալ մերձենայ և
խրատէ օրինակաւ՝ որ ուղղութիւնս յոլովս ունէր՝ քան
եթէ պատիժս. վասն զի ոչ շանդի արձակեաց՝ ի վե-
րուստ և ոչ բոցակիզեաց զանամօթ գլուխն, այլ բորո-
տութեամբն խրատեաց։ Նա՛ յաղագս Աղեայ այսոքիկ։
Ոչայց ես միւս ևս յաւելցուք դադարեցուցից զբանս։
Նա՛ զինչ է այս։ Օ՛ր կանխաւ և՛ ի սկզբանն խնդրե-
ցաք, ընդէ՞ր յարտաքին իրս և՛ ի մարգարէութիւնս ա-

մենեքեան սովորեցին զԹագաւորայն կենաց ժամանակ յիշել, սա զայն Թողեալ զմահուն ժամանակ յիշէ զԱզիայ այսպէս ասելով. "Այլ եղև 'ի տարւոջն յորում մեռաւ Ազիաս,, : Այլ սակայն հնար էր զԹագաւորութեանն նորա ժամանակ ասել՝ որպէս սովորութիւն էր ամենայն մարգարէից. այլ ոչ արար զայն : Այլ էր աղաչաւ ոչ արար : ( )րինք էին հինք զբորոտեալն քան զքաղաքն արտաքս վարելով, որպէս զի և ոք 'ի քաղաքի իցեն լաւագոյնք լինիցին, և նա ոչ ևս առաջի կայցէ կամողացն Թէհամանել՝ այսն և կատականաց պատճառք. այլ արտաքոյ քաղաքի ճեալով՝ առագաստ Թշուառութեանն կացի զամբարութիւնն : Այնոցիկ և Թագաւորին էր հատուցեալ պարտ և արժան յեա բորոտութենէն. բայց ոչ ժուժկալեաց ոք 'ի քաղաքին էին յաղագս իշխանութեանն նորա պատկառեալք, այլ եկաց ճնաց 'ի տան իւրում ծածկաբար : Այս այն զայրացոյց զնա, նայն և զմարգարէութիւնն խափանեաց. և որպէս առ Ազեաւն եղև, բան պատուական էր, և ոչ էր տեսութի որ արշիլը :

Այս ինձ և աստանօր դիտեա զնոյ մարդասիրութիւնն. ոչ կարծանեաց զքաղաքն և ոչ կորոյս զընակիչսն, այլ զոր ինչ առնէն բարեկամք առ Համաբարոյ բարեկամն, յորժամ ունին իրաւացի ինչ մեղադրութիւն՝ լուսնթ նշանակէն, զնոյն և ած առ ազգն այն արար՝ որ մեծամեծ տանջանաց և պատուհասից էր արժանաւոր : Այս, ասէ, արտաքս Հանի զնա 'ի տաճարէն, իակ դուք և ոչ 'ի քաղաքէդ. ես կապելով զնա բորոտութեամբն երբև զոամիկ ոք մանանեցի, դուք և ոչ այնպիսումն յաղթող եղէք, և զդատապարտեալն չինէն ոչ անսացէք 'ի քաղաքէդ արտաքս Հանել. զնոյս ոք արդեօք Թագաւոր Հեզ նեբեաց, եԹէ զՀրամայեալն արտաքս ածել 'ի նմանէ՝ 'ի ներքս 'ի քաղաքին տեսանէր բնակեալ : Այլ ոչ այն պիսի ինչ արար, քանզի ած է և ոչ մարդ : Յորժամ վախճանեցաւ նա՝ պակասեալ ընդ կենաց նորա և որ առ նոսա բարկութիւնն էր, և զմարգարէութեանն դրբոնն եբաց, և դարձեալ առ նոսա վերստին եկն :

Այս և յօրինակ Հաշտութեանն դիտեա զնոյ մարդասիրութիւնն. քանզի եԹէ ոք քննէր զկատաւցի բանն, և ոչ յայնժամ Հաշտել էր պարտ : Ընդէր արդեօք.

վասն պի ոչ նոցա ուղղութիւնն եղիւ գլխիս հանել, և ոչ նոքա առեալ գնա՛ի բաց վարեցին, այլ վախճան օրինաց բնութեանն՝ի վերայ եկեալ՝ի քաղաքին գնա արտաքս եհան յայնժամ։ Նոյց ոչ հաւատացաքանէ մինչև ցայսքան առ մեզ ած, այլ զմի ևեթ հայցէ՝ զձև առ մեզ հաշտութեանն։ Յաղագս այսր ամենայնի գոհացցուք գնմանէ, և փառաւորեսցուք զանձառելի մարդասիրութիւն նորա։ Որում լինի և մեզ արժանաւոր լինել ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբոյ հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ԲԱՆՆ «ԵՒ ԵՂԵՒ Ի ՏԱՐՒՈՑՆ ՅՈՐՈՒՄ ՄԵՌԱՒ ՈՋԻԱՅ»։ ԵՒ ՎԱՍՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Զպղիւ ուրեմն վասն Պղհայ հատաք անցաք զանդընդալից ծովուն ղալմատութիւն, Հազիւ հազ իսկ վճարեցաք. ոչ վասն ընդերկար Ճանապարհին ասեմ, այլ վասն ձեր ՃՃնդիրութեանդ առ մեզ աշխատելոյ։ Քանզի և նաւավար յորժամ ունիցի ընկերս պատուադիրս և պատուակիցս, և քաղաքս ցանկալիս երեալ տեսանել, ոչ եթէ՝ի միում աւուր անդ զՃանապարհն վճարէ, թէպէտ և միում աւուր իցէ ուղին, այլ յաւուրս բազումս և՝ի ժամանակս՝ի հարկէ յիւրաքանչիւր նաւահանգիստս զիստան ղեկաւն գնաւն մերձեցուցանէ՝ ըստ ամենայն քաղաքս երանել և տեսանել, զի հնարհեսցէ ընկերացս իւրոց զփափագումն ցանկութեանցն։ Արդեպես և զոր մեք արարաք. այլ ոչ եթէ՝ի կղզեաց՝ի կղզիս դիմեմք երթալ, ոչ՝ի խաղս, ոչ՝ի նաւահանգիստս, և կամ քաղաքս ցուցանել, այլ զարանց լուսաց զառաքինութիւնս և՝ զանկերծին հեղգութիւնս, զլքութիւն թափուրացս և զքահանայից՝ի բանս զլուսահոգութիւնս, զբարկութիւնն այ և զմարդասիրութիւնն, զերկոսեանն յօգուտ հեղեալ։

1 Յօրին. անկեալ էին բառքդ և զանկելոցն ... զՔահանայից՝ի բանս. յաւելան՝ի յունէն։

Այլ որովհետև եկաք հասաք ՚ի Թագաւորական քաղաքն Երուսաղէմ, առ աղագս մերոյ, ուր անդ են սեղովքն և անդ են քերովբէքն, անդ են հազարք հրեշտակապետաց, անդ են բիւրք հրեշտակաց, անդ աթոռ արքունական՝ ուր ոչ կարէ մերձենալ պիղծ և կամ աղտեղի։ Վասն և յերկնաւորսն խորհուրդն կամիմք մերձենալ պատմելոք, մի որ պիղծ և անարժան պատմուեա. մանաւանդ թէ ամ պիղծ և աղտեղի ՚ի բաց հեռասցի, և զաղօթիսն և զաղտեղութեի արտաքս ՚ի բաց ընկեցեալ՝ այսպէս ՚ի ներքս մտցի։ Վասն և այն որ հանդերձս աղտեղիս զգեցեալ էր, վասն սորին իրաց ՚ի բաց հալածեցաւ ՚ի հարսանեացն, և ՚ի տերունական առաքաստէն մերժեաց հայրն փեսային. ոչ եթէ հանդերձս աղտեղիս ունէր, այլ նովին սովորութեամբ մեզայն հանմարձակեցաւ մտանել ՚ի հարսանիսն։ Այլ ոչ ինչ ասաց ցնա թէ ընդէր՝ ոչ ունիս պատմուճան հարսանեաց, այլ թէ իբրև ոչ ունիր զպատմուճան հարսանեաց՝ որպէս մուերք այսր։ Զանոյս Յովհաննէս կոչիւր, ասէ, մեր բացիկ, ոչ ինչ ամօթ համարեցաւ զքո անանկութիւնդ, չգարշեցաւ ՚ի քումմէ աղտեղութենէդ, այլ յայտ վաստ արութենէ հրաժարեցուցի զքեզ և մուծի ՚ի հարսանիս տերունական և արժանի արարի զքեզ, ընդ բեացն արքունականաց, ՚ի վերապոյն պատիւ ձգեցի զքեզ՝ որ չար տանջանաց էիր արժանի. զոր և երախտեաքն[2] ոչ եղեր յառաջադէմ, այլ կացեր մնացեր ՚ի սովորական չարիսն. թէպետ մանեցեր զփեսայանուէրսն[3], անարգեցեր զփեսայն. ՚ի բաց երթ այսու հետև, և հատո զայն սիսի պատիժ անզգայութեան։ Օ մտաս ածցէ այսու հետև իւրաքանչիւր ոք ՚ի ձենջ, նոյնպէս զխոշտանգումն դիցէ առաջի աչաց իւրոց, զի մի զնոյն բարբառ լսիցէք. և զամենայն խորհուրդս՝ հոգևորական վարպետութեանն անարժանիս ՚ի բաց մերժեալ՝ և ապա այսպէս ՚ի տերունական սեղանն հաղորդեսցի։

«Այլ եղև, ասէ, յամին յոթներորդ մեռանել Ողիս արքայ, տեսի զտէր նստեալ ՚ի վերոյ աթոռոյ վերացեալ և ամբարձեալ»։ Այթէ զնարդն եաես՝ ոչ գիտեմ. զոր ե-

1 Ընդէր ոչ ունիս պատմուճան հարսանեաց, այլ ՚ի յաւելան ՚ի յունէն։

2 Միւսն երախտեացն. և զնոսին

3 Միւսն զփեսայութիւն։

տեան՝ ասայ, իսկ եթէ ոչպէս՝ լռեայ. ընդունիմ զա-
սացեալն, և չընդեմ զլռեալն. հայիմ ընդ յայտնեալ-
սըն, և զծածկեալն ոչ խուզեմ. վասն այնորիկ և ծած-
կեալ իսկ է: Պատմուհանք ասկեհուան են պատմութիք
գրոց, առ Ջուր ասկի և Թեզանն ասկի. ոչ աղաւաղեմ իբ-
րև զասարդիոստային զունկն իմովք խորհրդովքս տկարու-
թեան: "Ա՛ի փոխեր, ասէ, զսահմանն զոր հաստատե-
ցին հարքն քո,,: Արդ եթէ զսահմանն փոխել չէ բա-
րւոք, զիա՞րդ զոր ՚ած եդ՝ փոխեացուք: Կամիս ուսանել ե-
թէ ոչպէս է տեսանել զ՚ած, լըր և դու մարգարէ: Ա-
զիա՞րդ հնար է, ասէ, առն կանամբոյ և հայրորդոյ և հո-
գաբարձու մննդեան գոլով: Ձի անհնար, զի և նոյն
ինքն կին ունելը և երկուց որդւոց հայր էր, այլ ոչ ինչ
այն խափանելը. քանզի ոչ ինչ արգել կամ կրճիւն է ա-
մուսնութեն ընդ երկինս համբառնալոյ. ապա եթէ միաս
և կամ խափան էր մեզ կին, ոչ ՚ի սկզբանն արարեալ
կոչէր զնա օգնական:

Ա՛այց կամիմ՝ ասել եթէ առ ՚ի զինչ է նատելն ՚այ.
քանզի ոչ եթէ ՚ած նստի, զի այս կերպարանք մարմնա-
կանք են, իսկ ՚ածութիւնն անմարմնական է: Կամիմ ա-
սել եթէ զինչ արդեօք իցէ աթոռն ՚այ. զի ոչ եթէ ա-
թոռով սահմանեալ է ՚ած, քանզի անսահման և ան-
պարագիր է ՚ածութիւնն. այլ վասն այնորիկ երկնչիմ
ի՛ եթէ յայտ զբաղեալ վարդապետութեանս՝ և յա-
պաղեալ գտանիցիմ վասն պարտուցն: Քանզի զամե-
նեսեան տեսանեմ վասն սերովբէիցն բերանաբացս պըր-
շուցեալս. և ոչ եթէ այսօր միայն, այլ և յառաջնմէ օ-
րէ անտի՝ յորս խոստացաքն ասել. զի՝ որպէս բազմու-
թիւն ջուրց զբաղում վայրս յորձանաձիգ յարձակմամբ
հատանել անցանել, այսպէս բանն զամենայնիս զմեր ի-
մացուածովք և փաթթացեալ ընթանայ առ պատմուխս:
"Ա՛ւ սերովբէիք կային, ասէ, շուրջանակի գնովաւ,,:

1 Հատուածգ միւնչև ընդունայ առ պապմոսրիխան չիտոի էր յերեսին ևս օրինական և ոչ ձեգբաւիւ համաձայն յունականին. զոր եդաքդ՝ երկամասիսը օրինակի է ընդհեր-գուած. իսկ յայլոց երկուց միւն ունի այսպէս զի որպէս ևս. գբասմոս-րիխան մարգիան բազմոսրիխան յարձանիդ յարձակման հատանէ անցանել բանն զմիւնայն մեր բազմոսրիխան. իսկ միւսն. զի որպէս ևս բազմոսրիխան մարգիան գբասմոս յարձանաձիգ յարձակմանն հատանէ անցանել բանն զմիւնայն զմեր բազմոսրիխան, զի իմասցին և խոսրովածել ընդունայն առ պապմոսրիխանն:

Ի հաւասիկ սերովբէքն, յորմէ հետէ փախաքէիք ամենեքեան տեսանել. տեսէք այժմ, և գկարօտութիւն փափաքանն լցէք. այլ մի շխոթմամբ և մի փոյթ մնաք, որպէս յելս և ի մուտս աղքունեացն լինիցի: Այս գի անդ յիրաւի ինչ են այդպիսի իրք, գի ոչ անսան միմեանց սպասաւորքն տեսանելով զմիմեանց երեսս. այլ մինչ չև տեսեալ զամենայն ի կարգի ասլա հարկ լինի միոյն ընդ միւսն անցանել. եակ աստ չէ այդպէս, այլ հաստատեալ կացուցանէ ձեզ բանն զաեսիլն մինչև ամենայնն վճռեսցի որչափ և կար իցէ իմանալ:

"Այս սերովբէքք կային շուրջ գնովաս,,: Յառաջ քան զպատիւ բնութեանն՝ ուսոյց մեզ ի մերձաւորական տեղւոյն զպատիւ նոցա: Այս ոչ եթէ նախ ասաց եթէ գինչ սերովբէքն, այլ ասէ՝ անդ կային. գի այս պատիւ քան զայն լաւագոյն է: Այս ոչ այնպէս ցուցանէն զմեծ զօրութիւնան սերովբէքին, որպէս գՀպատուութիւնս զարքունական աթոռոյն: Այս զսպասաւորս զայսպիսիս նշանառորս պատուաւորս վարկանիմք զորս տեսանեմք հոսպ և շուրջ առ թագակապս ձիւնագոյն սպիտակամազ կառաձիգ ջորւոյն արքունականաց. նոյնպէս և քան զայլ անմարմնական զօրութիւնան նոքա ի վեր են որք մերձ են առ աթոռան: Ա՛ան այնորիկ և մարգարէն եթող զասելն վասն բնութեան պատուոյն իւրեանց, նախ յաւագ մեզ պատմ վասն պատուոյ տեղւոյն, գիտացեալ թէ սա մեծ զարդ է և պատիւ քան զայն և բնութեան նոցա գերազգութիւն, և այն են փառք և պատիւ, նա և ամենայն վատահութիւն շուրջ զաթոռովն երևեալ: Օ՛ի զայս և գհրեշտակայն է գիտել. քանզի և զնոսա կամեցաւ Աստուած ցուցանել մեծս և պատուականս. և ոչ ասաց թէ հրեշտակք իցեն՝ և լռեաց, այլ թէ "Այս հրեշտակք նոցա Հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ որ յերկինսն է,,: Օ՛ի որպէս անդ առ ինձ քան գՀրեշտակական պատիւն մեծ է տեսանել զերեսս Հօր, նոյնպէս և քան զսերովբէէից պատիւն մեծ է շուրջ զարքունական աթոռովն բնակել և ի մէջ իւրեանց ունել զնա: Ա՛րդ զայսպիսի պատիւ և քեզ դիւր է ստանալ եթէ կամեսցիս. քանզի ոչ եթէ ի սերովբէէին միայն ի միջի է, այլ և ի մեր և ի նոցա եթէ կամեսցիս. "Օ՛ի ուր իցեն, ասէ, երկու կամ երեք ժողովեալ յա-

նաեն իմ, անդ եմ ես՝ ի մէջ նոցա ,, . և “Ցէր մեծ է առ իսրայէլ սրտիւք, և զհոգւով հեզս կեցուցանէ ,, : Ալ ասն այսորիկ և Պաւղոս աղաղակէ առեալ. “Ով լինին խորհեցարուք, ուր Քրիստոս է ընդ աջմէ ոյ նստեալ ,, : Ցեռանէն սրպէս զմեզ կարգեաց կացոյց ընդ սերովբէիսն և մեբձաւորս արար արքունական աթոռոյն :

Այս զարձեալ ասէ, եթէ “Ալ ես Թևք միոյ ,, : Այս զինչ կամեսցին արդեօք նշանակել մեզ Թևքն, բայց եթէ զվերնականն և զսարձրականն և զԹեմեւականն և զվազվազատու բնութիւնն իւրեանց : Ալ ասն այսորիկ և Պաւբրիել երագաձև Թևաւք ումանց երևէր. ոչ եթէ վախճան՝ անմարմնական զօրութեանն էր այն, այլ զի ցուցցէ մարդարէին Թէ՝ ի բարձանց տեղեաց էջ, և զգվերինն բնակութիւն եթող և եկն : Ապրդ զնաղդ. կամիք և զԹիւս Թևացն լսել. վասն այնր ոչ ինչ կարօտ է առ՝ ի մէնջ մեկնել, նա ինքն զինքն մեկնեաց բանն ըզպէտս նոցա մեզ ցուցանելով : Ով “Երկուքն, ասէ, ծածկէին զերեսս իւրեանց ,, . որպէս և Իսիք[2] պատրուա կաւ կրնակի ծածկէն զերեսս առ՝ ի չհանգուցանել այնց փառաց պայծառագործն[3] Ջառագայթից. վասն որոյ և զոտն ծածկէն վասն նորին երկիւղ : Ասսի և մեք սովոր եմք, յորժամ յերկիւղ խնդք զարհուրեալ ըմբռնիմք, սմենայն կողմանէք զնարմինս ծածկեմք : Այս զի ասես եթէ զնարմին, ուր և ոգիքն վնոյն կիրս կրեն յերևել Ծայրական տեսլեան ինչ ապգելով զգօրութիւնն՝ ձգէ և՝ ի ներքս՝ ի խոր անկեալ ապաստանի, որպէս պարապաւ իւք մարմնովն յամենայն կողմանց ինքն առ ինքն խրծ պի : Այ մի աք լուեալ զահ և զերկիւղ սպասմանն, ծանր և դժուարին և սաղտակ Թուեացի. քանզի յետ սպասմանս այսորիկ և դիւրագոյն քաղցրութիւնն և անհաս զուգեալ է և միաբանեալ :

“Այ երկուքն, ասէ, Թռչէին ,, : Այս այս նշան է իւրեանց Հանապազ՝ ի բարձունս Թռչնոյն և ոչ երբէք՝ ի խոնարհ հայել : “Այ աղաղակէին մի առ մի և ասէին սուրբ սուրբ սուրբ ,, : Այ բարբառն զարձեալ

1 Ցոյն բնագիրն է πτερὰ ՚ի՛ն. հայ Թարգմանչին Թուի ընթեր ցեալ πέρας և փոխեալ՝ ի վախճան :
2 Յօրինական դրեալ էր ինձն. գաւ ըստ յոյնին :
3 Օրինակ մի ճառագայթագեղ պայծառութեանն . . . յերևելական ծայրեան :

մեծ օրինակ է մեզ աքանչելեաց. զի ոչ եթէ վայրապար ինչ օրհնէին, այլ աղաղակէին. և ոչ եթէ աղաղակաւ ինչ ընդ վայր, այլ հանապազ զայս առնէին: Վասնզի որ ինչ երևելի է մարմնով, թէպէտ և 'ի վեր քան զամենայն վայելչութիւնս է, յայնժամ միայն զարմացուցանել կարէ զմեզ, յորժամ 'ի տեսիլ երեսաց նորա պշուցեալ նկատեմք. իսկ յորժամ հայիցիմք և զնիցեմք աւելագոյն տեսլեամբ, սովորութեամբն զզարմանան փոքրկացուցանեմք, և մեզ զկերպարանս մարմնոյն գրոշմեմք: Վասն այսորիկ և պատկեր թագաւորական, որ այժմ եդեալ և կանգնեալ իցէ լուսաւոր և պայծառ և վայելուչ երանգօք և նկարուք, իբրև տեսանեմք՝ զարմանամք, և յետ միոյ կամ երկուց աւուրց ոչ այնքան: Այլ զի և սակաւ արքունական պատկեր, ուր և անդէն իսկ ձառագայթից արեգականն զնոյնկրեալ իմանամք, որ ոչ ինչ է այլ պայծառագոյն քան զնա: Այսպէս և ամենայն մարմնական տեսիլք սովորութեբն փոքրկացուցանէ զզարմանան. իսկ ՚ի փառացն ոչ այնպէս, այլ ամենայն հանդէպ: Զի որչափ մծատաւորին ՚ի տեսիլ փառացն զօրութիւնքն, նոյնչափ առաւել քանչելիքն և զարմանքն յաճախեն. վասն այսորիկ յորմէ հետէ եղեն մինչև ցայժմ տեսանելով զայն փառան, ոչ երբեք դադարեցին հիացմամբ աղաղակել. այլ որպէս ՚ի մեզ կիրս կրի սակաւժամանակեան անդ ընդդէմ տեսլեանս մերոյ որոտման փայլատակման, և այն հանապազ ՚ի նոսա կիրս կրին, և անդադար իմն աքանչելեօքն փափագմամբ նուիրին: Զի ոչ եթէ միայն աղաղակէին, այլ և առ միմեանս զնոյն առնէին, որ յօժարութիւն[1] փութոյ զարմանալեաց է նշան: Զի 'ի թնդիւն որոտման և 'ի շարժուածն երկրի ոչ միայն զարհուրիմք և 'ի վեր վազեմք, այլ և առ միմեանս աղաղակեմք: Զնոյն և սերովբէքն առնէին, և վասն այսորիկ ընդեր առ ընդեր աղաղակէին և ասէին սուրբ տէր:

Իսկ արդ ծանեաք արդեօք զբարբառս զայս, եթէ մեր է սրամտութիւն և մեր է քրովբէիցն վասն Քրիստոսի որ եբարձ 'ի միջոյ գկրծիսն, և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի առնելով զերկուսին մի: Զի նախ

1 Այսպէս երևքին օրինակքն. իսկ յոյնն ասէ որ սոսկալի զարմանալեաց:

յերկինս միայն երգէր օրհնութիւնս այս. արժանի առնել և առ մեզ ինքեանէ զերգս օրհնութեանս։ Այսոքիկ և մեծս այս քահանայապետ յորժամ առաքէ կայ սրբութեան սեղանոյն և զանառաւոր պաշտօնն մատուցանել և զանարիւն պատարագն, ոչ վայրապար ըզմեզ ՚ի փառաբանութիւնն հաղորդէ և կոչէ, այլ նախ յառաջ զքրովբէիցն ասէ և ապա զսրովբէիցն յիշեցուցանէ, և ապա ամենեցունն այսպէս հրամայէ տալ ըզփառս զարհուրական[1] բարբառով, և զուգական վերին գնդաւն յիշեցուցանէ, և զմեր միտս և զխորհուրդս յերկրէ յերկինս փութայ համբառնալ։ Այլ ոչ թէ միայն աղաղակէ առ իւրաքանչիւր առ մեզ, և ասէ եթէ ընդ սերովբէիցն կաց, և ընդ նոսին զթևսդ համբարձ, և ընդ նոսին շուրջ լեր զաթոռովն տերունականաւ։ Այլ զինչ մեծ է եթէ ընդ սերովբէիցն կացցես. զի զայն որ ոչ իշխեաց մերձենալ սերովբէն, զայն համարձակութեամբ ետ քեզ ՚ած։

“Արաքեցաւ առ իս մի ՚ի սրովբէիցն և ունէր ՚ի ձեռին կայծակն հրոյ, առեալ ունելեօք ՚ի սեղանոյ անտի եբեր մերձեցոյց ՚ի բերան իմ.,,։ Վասնզի այն սեղան այսմ սեղանոյ է կերպարան և օրինակ, և այն հուր այսմ հրոյ հոգևորի։ Այլ ոչ իշխեաց սերովբէն մերձենալ ձեռօք, այլ ունելեօք. իսկ դու ձեռամբ ունիս։ Իսկ եթէ զարժանն կարասցես իմանալ որ առաջի կայս, զսրովբէիցն զմտաւ ածցես, զի այս առաւել է քան զայն. ապա եթէ զայդ զմարդասիրութիւնն իմասցիս, որ ոչ և առ տկարութիւնս ամենի համարի ինքեանէ հնարհօք ՚ի վերայ այսր որ առաջի մեր կայ։ Ո՞չ այս խորհեաց, ավմարդ, և զառաւելութիւն պարգևացն զմտաւ ածելով զարթիկ երբեմն և հրաժարեա յերկրէ և համբարձիր յերկինս։

Այլ ծանր է մարմին և ՚ի խոնարհ բռնադատէ։ Այլ ահաւասիկ ընթացուցանեն պահք և թեթևացուցանեն և բարձրացուցանեն և ամբառնան զոգւոյն թևս և թեթև առնեն զհոգւոյ և զմարմնոյ բեռինս, թէպէտ և ծանրագոյն ևս քան զկապար առցեն զմարմինս։ Այլ պահոյն առ այժմ կացցէ մնասցէ վարդա-

1 Երկաթագիրն ՚ի պարտաւորեան վերջաբառն զտգիանաւոր յիշեցուցանէ։

պետութիւն, և տեսչութիւն խորհրդոյն ՚ի մէջ եկեսցէ՝ վասն որոյ և պահքն իսկ են։ Օ՛ի որպէս ձակատամարտի կռուողական ոմանցիական մարտիկ կռուոյն պրասակն է վախճանն, նոյնպէս և պահոցն սուրբ պատասրապն է կատարումն. ապա եթէ զայն ոչ ուղղեսցուք առ սուրբքն այնոքիւք, ընդ վայր և վայրապար աշխատ առարեալ զանձինս, առանց պակի և առանց յաղթանակի յախոյանական տեղւոյ պահոցն լոկ գնասցուք։ Ա՛ման այնորիկ և հարքն կարգեցին զասպարէզ պահոցն առ ՚ի պետս, զի սրբեսցին ժամանակաւ ապաշխարութեան. զտեսցուք և սրբեսցուք զանձինս, և այնպէս մերձեսցուք առ սրբութիւնս։

Ա՛ման այնորիկ և ես ահա աղաղակեմ և ասեմ և մեծաբարբառ բողոքեմ, աղերսեմ և աղաչեմ, մի խիղճ մտոք, մի նենգ խորհրդովք մերձենալ առ ահաւոր սեղանն. քանզի ոչ է այս օգուտ և ոչ միաբանութիւն թէպետ և բիւր անգամ մերձեսցուք ՚ի սրբութիւնս մարմնոյ նորա, այլ պատիժք և տանջանք և մահապարտութեան յաւելուածք։ Ա՛ՙի այսու հետեւ մեղաւոր ոք հպեսցի. նահանջ և զնա իսկ կարձեմ ՚ի սեղանոյս. արդ մի ոք մեղաւոր ինայեալ հպեսցի։ Ա՛ման այսորիկ ահա յառաջագոյն ասեմ, զի մի ոք յորժամ հասցէ արքունական ընթրիքն և մեծ երեկն՝ յայնժամ ասասցէ եթէ անպատրաստ եմ ՚ի մտանել. և ապա արգելեալ՝ ասասցես եթէ զայս յառաջագոյն արժան էր պատուիրել. զի թէ յառաջ զայս լուեալ էի, ապաքէն փոխէի յայսմանէ, ապաքէն զանձն սրբէի և ապա հպեալ մերձենայի։ Ա՛յդ զի մի ոք զայս պատճառս դիցէ, վասն այնորիկ արդէն իսկ բողոքեմ և աղերսեմ՝ բազում իրօք հանդիսայեք ապաշխարութեամբ։

Վ՛հաւատ զի ամենեքեան ընդ պատուհասիս եմք, և ոչ ոք կարէ պարծել եթէ սուրբ իցէ սրտիւք. այլ ոչ այս միայն է դժուարին եթէ սիրտ սուրբ ոչ ունիմք, այլ թէ իբրև չունիցիմք սիրտ սուրբ, և ոչ որ կարողն է առնել սուրբ՝ մերձենայցեմք առ նա։ Օ՛ի կարէ՝ թէ կամի, և կամի լաւ և այ քան զմեզ։ այլ ակն ունի փոքր մի պատճառս տալ ՚ի մէնջ, զի վստահացեալ՝ զմեզ պահեսցէ։ Ա՛՚ոք քան զնաքսաւորն եղև մեղաւոր. այլ քանզի ասաց՝ եթէ թողութիւն արա ինձ մեղաւորիս, էջ արդարա-

յեալ քան զփարիսեցին։ Այլ տես քանի զօրութիւն ունէր բանն այն. զի ոչ եթէ ասէին սրբեաց, այլ բարբ կատարին՝ որով զբանն զայն ասաց. մանաւանդ եթէ ոչ բարբն միայն, այլ յառաջ քան զբարբն՝ ըստ մարդասիրութիւնն։

Արդ զինչ աշխատութիւն է, ասա ինձ, և կամ որպիսի՞ ինչ վաստակք, որպիսի՞ քիրտն՝ մեղաւորին զինքն հատանեցուցանել թէ իցէ մեղաւոր, և յանձ զայս ասել։ Տեսանե՞ս զի ոչ ընդ վայր ինչ ասէի թէ սակաւ պատճառս կամի՛ մինչ գտանել, և զամենայն կատարել ի փրկութիւն մեզ։ Այլ աշխարհեացուք այսուհետև, և լացցուք և կոծեսցուք։ Օ՛ի եթէ դուստր ուրուք վախճանեսցի, զաղաւոմ աւուրս և զժամանակս կենաց իւրոց ի սուգ և ի տրտմութեան լինի. իսկ մեր զոգիս կորուսեալ ոչ լամք և սգամք, ի փրկութենէ վերեալք ոչ կոծիմք։ Այլ զի՞ ասեմ զհոգի և զփրկութիւն. ըզտէրն բարկացուցանեմք զայնպիսի զհեզ և զխոնարհ, և ոչ յերկիւղ ինքեանս ածեմք։ Օ՛ի ոչ եթէ իբրև զտեարս տեսուչս և հոգեբարձուս միայն, այլ առաւել քան զհայր որդեսէր և զմայր գթած, քան զամենայն գութ վերագոյն է ընտանութիւն տեսչութեան նորա։ “Արիթէ մոռացի՞, ասէ, կին զմանուկ իւր, և կամ՞ ոչ գթասցի ի ծնունդս որովայնի իւրոյ. զի թէպէտ և մոռասցի կին զայս, բայց ես զքեզ ոչ մոռացայց, ասէ տէր,,։ Օ՛ի որ հատատայն՝ յառաջ քան զհատանեցուցանելն պարտ է նմա խնդալ եթէ հրաման ունի է. բայց ապա իրօք ևս ցուցից և եդից առաջի։ Օ՛ի երբեմն Աստուածեկա հրամայէր որդւոյն զղողումն օրհնութեանցն կեղծաւորել կերպարանօք. և իբրև ապոյժ զսպեաց զնա յամենայն կողմանց, և զդէմն եղբօրն երևեցուցանէր, և իբրև ետես եթէ ոչ այնպէս քաջալերի, կամեցաւ զամենայն երկիւղ որդւոյն ի բաց մերժել. “Ի վերայ իմ լիցին, ասէ, անէծքն այն, որդեակ,,։ Արդարեւ մեր բանք գթալ յօրդի։ Իսկ Քրիստոս ոչ եթէ ասաց միայն, այլ և արար իսկ. և ոչ խոստացաւ միայն, այլ և եղև իսկ. և Պաւղոս աղաղակէ և ասէ՝ եթէ “Քրիստոս փրկեաց զմեզ յանիծից օրինացն՝ եղեալ վասն մեր անէծք,,։ Արդ զայնպիսին բարկացուցանեմք, ասա ինձ. և ոչ այս չար է քան զդէհէնն հնոյն և քան զանմահական որդնն և քան զանշէջ հուրն։

Իսկ յորժամ կամիցիս մերձենալ առ սուրբ սեղանն, այնպէս զմտաւ ածջիր եթէ և Թագաւորն մերձ առ քեզ է. և արդարեւ հուպ իսկ է և զիւրաքանչիւր քննէ զսիրտս, թէ ոք փութով սրբութեամբ, թէ ոք պիղծ մտօք և խիղճ խորհրդովք, աղտեղի և զաղխոյ գործովք եթէ գտանիցէ, զայնպիսին նախ յառաջ դատաստանի մտաց իւրոց տայ ի ձեռս։ Այսպէս եթէ նախ առեալ խոշտանգիցէ ի ձեռն մտացն, լաւացուցանիցէ և կազմիցէ, հոլի դարձեալ առնա. ապա եթէ առանց ուղղութեան կացցէ մնասցէ, հրամայէ այնուհետեւ մատնել չիւր ձեռս զանագորոյնն և զանմիտն։ "Չէ և երկիւղ է անկանել ի ձեռս այ կենդանւոյ"։ Վասն եթէ կակծեցուցանեն զձեզ բանքս. բայց զինչ արարից. եթէ ոչ կակծական եղից զդեղն, վէրքն ոչ բժշկին և սրբին. և եթէ զխիտան դիցուք, դուք ոչ կարէք հանդուրժել։ Այդ վարան է ինձ ամենայն ուստիք. բայց սակայն այսուհետեւ հարկ է կարձել զձառս, քանզի բաւական է որ ասացաւ ի կարգ ուղղութեան հնազանդելոյն։ Այլ զի մի միայն ձեզ, այլ և այլոց ևս լիցի չօգուտ, բեր այսուհետեւ երկրորդեսցուք զբանս։

Ասացաք վասն սերովբէիցն թէ որպիսի է պատիւ նոցա հուպ կալ առ աթոռոյն արքունականի, և եթէ մարդ զպատիւն զայն կարէ ստանալ։ Ասացաք և վասն թևոցն և վասն անմատոյց փառացն այ, և զայն թէ խոնարհութեան և մարդասիրութեան է. յաւելաք և զպատճառս բարբառոյն և զիջանչենաւոր սքանչելեացն, և զիարդ անհանգիստ տեսլեամբքն զանդադար փառաբանութիւնս սրովբէիցն. յիշեցաք և թէ յորում տեղւոջ կարգեցաք, և կամ թէ ընդ ումբ զմեր տէրն փառաւորեցաք. վասն ապաշխարութեան յաւելաք զբանս. և կատարումն՝ թէ որչափ չար է ի սրբութիւնն մերձենալ խիղճ մտօք՝ զայն ցուցաք, և եթէ ոչ է հնար ապրել ի գեհենէն որք զայնպիսիսն գործեն։ Այս և կին յառնէ լուիցէ, և որդիք ի հօրէ, և ծառայ ի տեառնէ և զրաց ի զրացւոյ և սիրելի ի սիրելւոյ, և առաւել զայս ի թշնամիս պատմել, զի և նոցա փրկութեան եմք պարտապան։ Ի եթէ զգլխոեալ զրաստ նոցա յարուցանել հրամանն առաք, և զմոլորեալն դարձուցանել և առաջնորդել հրամայիմք, որչափ ևս առաւել զհոգի նո-

յա զմոլորեալ պարտ է դարձուցանել և զղջորեալն կանգնել։ Օ՛ի եթէ այսպէս զմեր և զընկերային մատակարարեսցուք զիրկութիւն, կարասցուք համարձակ վստահութեամբ կալ առաջի բեմին Քրիստոսի, ընդ որում հօր և սուրբ հոգւոյն փառք այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԹՕՈՒՔ ՅԱՆՑԱՑՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԻՆ ԵՒ ՅԱՄՈՒԽՈՑ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՅԱՂԱԳՍ ՈՉ ՉԱՐԱԽՕՍԵԼՈՑ

Օ՛ուարձանայ անդէորդ յորժամ քաջաբուտ և պղնդակամ տեսանիցէ զիւր զարջառոյն հոյլս. բերկրի և միակ յորժամ ծաղկեալ և քաջազուարճ զիւր անդաստանն տեսանիցէ։ Այլ ոչ անդէորդ յաղագս արջառոց և ոչ երկրագործ վասն արմտեաց այսպէս հրճուի, որպէս էս այժմ խնդամ և ցնծամ զգեղեցիկ կալս զայս հոգևոր որպիւք լցեալ տեսանելով։ Օ՛ի յորժամ յայսքան լեալս և յայսպիսիս սերմանի բարեպաշտութիւն, հարկաւոր է վաղվաղակի և կանուխ բուսանել հնազանդութիւն հասկին։ Վասն զի յորժամ զպարարտ և զթանձրահող անդաստան ակօսաբեկ առնիցէ ոք, թէպէտ և ոչ առատ ձեռօք արկանիցէ զսերմանիսն, բազում ընկալցի զարմտիսն, զի բնութիւն անդաստանին զսակաւութիւն սերմանցն իւրով զօրութեամբն բազմացուցանէ։ Նոյնպէս և յորժամ յոգիս ոք քաջհաւանս և բարեպաշտութեամբ լցեալ սերմանիցէ, թէպէտ և սուղ ինչ արկանիցէ զվարդապետութեանն սերմանս, առատս տեսցէ զհունձսն, լցուցին իմաստութեամբ զասողին աղքատութիւն ծածկելով։

Ա՛յս և յորսորդութիւնն ձկանց լինի. քանզի թէպէտ և անհմուտք հանդիպիմն արուեստին ձկնորսքն, և՛ի խորշս ուրեք արկանիցեն զուռկանսն՝ որ բազում ձըկունս ունի, դիւրաւ որսոյն պատահեն. յոլովութիւն խմբեցելոյ ձկանցն ծածկէ զնոցա զանհմտութիւն։ Այդ եթէ յորսն յայնպիսի, որք ձկունս հանդերձեալ են որսալ, յոլովութիւն ըմբռնեցելոցն յուռկանսն՝ բազում անգամ միսիթարէ զանուսումնութիւնն, յաւէտ և ս

յայամ՝ ի ձկնորսութեան որսոյս պատահեսցէ։ Ա՛ման զի այն ձկունք յորժամ տեսանեն ընկեցեալ զգործիան, վազվազակի՝ ի բաց վազեն և արտաքս փախչին. իսկ դուք հակառակ նմին առնէք. յորժամ տեսանէք յա֊րուցեալ և զվարդապետութեան ուռկանն սփռեալ, ոչ միայն ոչ՝ ի բաց վազէք և ոչ արտաքս սրանայք, այլ՝ ի ներքս ընթանայք՝ ամենայն ուստեք խմբեալք, զմեր֊ձաւորն իւրաքանչիւր ոք մէկ և նետէք, յառաջագոյն ինքն ձեզի վազել և՝ ի ներքս անկանել՝ ի գործիան։ Յա֊զագս այսորիկ ոչ երբէք ունայն՝ ի վեր ձգեցաք զուռ֊կանն, ոչ վասն մերոյ չմտութեան, այլ յաղագս ձե֊րոց փափազանացդ։

Ա՛րդ բաւականապէս զձեզ և առաջն կերակրեաց որ փորձ և մաքուր ոսկի բղխեաց լեզուն, աղբերս մեղու ունելով՝ ի բերան. մանաւանդ եթէ զամենայն մեղու ծածկէ հեշտութիւն հոգևոր վարդապետութեն քաղց֊րութեամբ։ Ա՛նայց զի ըստ յարմարական ձերոյ խնա֊տասիրութեանդ և ոչ զաղքատութեանս խնդ և զգի֊տութեան բանս անպատուէք, այլ աքանչանայք ընդ այն՝ որ յոլով ունի զառատութիւն, փափագեք և մերում անարգութեանս, յարեայց բազում յօժարութեամբ հատուցանել ձեզ զպարտսն, զոր յառաջագոյն խոստա֊ցայ և ոչ հատուցի. քանզի երկայնութիւն վարդապե֊տութեանն արտաքս մերժեաց զմեզ՝ ի կատար ածել։ Ա՛ւ զինչ էին պարտքն այնոքիկ, հարկաւոր է յիշեցու֊ցանել ձեզ զսկիզբն փոխոյն, որպէս զի յայտնագոյն ձեզ՝ ի պատճառէն լինիցի վարդապետութիւնն։

Ա՛նդրեցաք այժմ էր աղագաւ անյայտագոյն քան զը֊նորս հինն կտակարանքն. և թերևս յիշէք նախ. և մի պատճառ առ վայր մի ասացիք զգաղանութիւն լռոյացն, և վկայ՝ ի մէջ ածցուք զՊաւղոս որ ասէն եթէ “Ծած֊կոյթ ունին օրէնքն. և եթէ նոյն ծածկութիւն յընդ֊թերցուածին հինն կտակարանացն կայ՝ ինչ ոչ մերկա֊ցեալ, զի “Ի բրիստոսիս խափանի„։ Յուցցուք և եթէ զոր օրինակ Մովսէս ունէր պատրուակ օրինադիրն, նոյն պէս և օրէնքն ունէին զանյայտութիւնն. բայց ոչ օրի֊նադրին է մեղադրութիւնն և ոչ օրինացն ամբաստա֊նութեան ծածկոյթ, այլ տկարութեան լռոյացն։ Ո՛չ ոչ յաղագս ինքեան ունէր Մովսէս զպատրուակն, այլ

վան ոչ կարելոյ համբերել փառաց երեսաց նորա. և յորժամ դառնայր առ տէր, ՚ի բաց բառնայր զպատրուանն։ Այսպէս և օրինքն վասն զի ոչ երբեք կարէին ուսանել զկատարեալ վարդապետութիւնն և զնի իմաստասիրութեամբ յաղագս Քրիստոսի և նորոյ կտակիս, զի ամենայն գանձքն այնոքիկ ՚ի հինն կտակարանն ամբարեալ կային և ծածկոյթ ունէին, զիջանելով ըստ նոցա՝ մեզ պահէր զնոխութիւնն ամենայն, զի յորժամ եկեսցէ Քրիստոս և դարձցուք առ նա, ՚ի բաց բարձցի պատրուակն։ Ցեսանէք յորքան ՚ի պատիւ էած զմեզ Քրիստոսի գալստեան ՚ի կարգն Ադամայ հանելով։

Այլ թերևս ասիցէ ոք արդեօք. և վասն ընդ ի սկզբանէ չայնժամ, եթէ ոչ էր հանդերձեալ նոցա յայտնի լինել ասացեալն, յաղագս որդեօք, զի որ գինի այնոցիկն իցեն՝ պիտանացու լինիցի։ Այո արգարեւթեան արժանաւորութիւն է այս, ոչ յորժամ զերձակայ իցս պատմեսցէ, այլ զհանդերձեալն նախաձայնեսցէ. մանր գարեւթիւն է և յորժամ ծածուկս ինչ ասիցէ, և յետ պատահելոյ իրացն լինի յայտնի. և նախ քան զելն ոչ լինել բնաւին։ Արդէս զի և յայնժամ ասացեալ լինէր գաղտնաբար և ոչ ուրեք էին հանդիպեալ իրքն, և յաղագս նորին անյայտացոյն էին ասացեալքն։

Այլ զի ուսանիցիք եթէ մարգարէութիւն թէպէտ և ոչ նախ քան զգալոյն ժամանակս ասիցի, և ծածկաբար ասի, անյայտ լինի, կալով ինձանզ դիպուածոյ իրացն, ՚ի նոցունց յաշակերտացն զայս ձեզ արարից երևելի։ «Հակեցէք զառաջս զայս», ՚ի բերից ասէր Քրիստոս։ Այսուհանդերձ զառաջս զայս Քրիստոս ասէր, զի նոքա Թշնամանէին, ասէին նոքա. «Ո՞ինչ նշան ցուցանես մեզ զի գայդ առնես»։ Այս առ այն ասէր. «Հակեցէք զառաջս զայս, և յերից աւուրս կանգնեմ զսա։ Այս ասէր վասն տաճարի մարմնոյն»։ Այս մարգարէութիւն իմն էր, քանզի չէ ևս էր պատահեալ խաչին և ոչ քակուածն տաճարին և ոչ երեքօրեայ յարութիւնն զոր ինքն արար։ Այս տես զիարդ զերկոսին հաւատեաւ զեկոյց, զյանդգնութիւնն նոցա և զզօրութիւնն իւր. այլ սակայն ոչ գիտէին զասացեալսն։ Այս զՔրիստոսէն գիտանալ ոչ ինչ էր զարմանալի. այլ ասէ՝ թէ և ոչ աշակերտք նորա իմացան մինչև յարեաւ ՚ի մեռելոց, և

յայնժամ Հաւատացին զրոյն և բանին զոր ասաց Նոցա Յիսուս։

Տեսանէ՞ս զի և աշակերտքն կարօտանային զի՛ ձեռն դիպուածոյ իրացն յայտնի լինիցի մարդարէութիւնն, յաղագս այնորիկ մեզադրութեն ինչ ոչ լինէին Հրեայք՝ ոչ իմանալ զմարգարէութիւնն վասն Քրիստոսի նախ քան զՔրիստոսի գալուստն. քանզի գալուստն յայտնի Հանդերձեալ էր լինել և երևելի։ Ուրեմն իսկ Պետրոս ասէն. "Ով ոչ էր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեզս ոչ ունէին,,։ Ընդէր ոչ ունէին մեզս, եթէ մարգարէութիւնքն կանխաւ ասէին և յառաջագոյն զեկուցանէին։ Այլ ոչ էին յայտնիք և ոչ երևելիք նախ քան զգալուստն Հաւատեցելոցն կանխաւ։ Վասնզի եթէ յայնժամ երևելիք էին նոցա և յայտնիք, քաջայայտ էր թէ և նախ քան զգալուստն նորա մեզս ունէին. ապա թէ մեզս ոչ ունէին, յայտնի է թէ յաղագս անյայտութեանն և ծածուկ լինելոյ. զի և ոչ պահանջեալք լինէին յայնժամ՝ի Քրիստոս զՀաւատան յառաջ քան զՔրիստոսի գալուստն։ Այս ընդէր կանխաւ ասեր յայնժամ։ Ո՞վ յորժամ գայցէ, անդուստ ունիցին զվարդապետան որ՝ի ներքս ածիցեն զնոսա, և տեսանիցեն եթէ ոչ նորաձեւութիւնք ինչ են ասացեալքն և ոչ առժամայն անօրէնութիւն, այլ՝ի վերուստ այնոքիկ և կանուխ ժամանակաւ քարոզեալք. ոչ ինչ փոքր էր այս առ՝ի լսողսն դունելոյ զՀաւատան։

Այդ մի այս է անյայտութեանն պատճառ, զոր յօլովիք ցուցեալ յառաջին խօսեմն. և զի մի գարձեալ ըզձեզ խանդեցից զնոյնս ասելով, Հարկաւոր է յայսցանէ՝ի բաց կալ, և զիւսն ևս ասել որ ոչն է անյայտ և անծանօթ, քայց դժուարագոյն ձեզ առնէ զհին կտակարանն։ Ո՞վ այլ է ոչ ինչ բոլորովին գիտել որ՝ի ներքսն կայցէ և տեսանել զծածկութեանն՝ի վերայ, և այլ գտանել զստացեալսն, այլ Հանդերձ աշխատութեամբ։

Այս զինչ իսկ երկրորդ պատճառն յաղագս որոյ զըժդուարագոյն հինն կտակարանքն քան զնորս են։ Ձէ գաւառային ձայնիւ ունիմք զհին կտակարանն առ մեզ գրեալս, այլ յայլմէ լեզուէ յարմարեցաւ, և այլուստ ունիմք զնոսա ընթերցեալս մեք։ Վասն զի երբայեցւոց ձայնիւ՝ի սկզբանն գրեցան, իսկ մեք Հելլենացւոց ձայ-

նիւ առաք. և յորժամ լեզուն Թարգմանեսցի, յոլով ունի զգժուարութիւնս։ Ոչ զայս գիտեն որք բազում լեզուական են հմուտք զիարդ ոչ է կարողութիւն զամենայն յայտնութիւն ձայնին յիւրում բնութեանն կացեալ՝ փոխխել ՚ի միւսն ևս Թարգմանելով ՚ի լեզուն։ Այս պատճառ դժուարուէ հնոց կտակարանացն եղև։

Ապա զի հարիւր ամաւ նախ քան զՔրիստոսի գալուստն առ Պտղոմեա Թագաւորաւն եգիպտացւոց յեբրայեցւոց լազական լեզուն փոխխեցան հինն կտակարանքն կարևոր բանիս պիտանացու։ Օ՛ի ցորքան ընդ միում ազգին ընդ երբայեցւոցն խօսէր, կայր միայր ՚ի յերբայեցւոց ձայնին. զի ոչ որ յայնժամ հանդերձեալ էր հայել ՚ի նոսա, այլոց մարդկան ազգք ՚ի վերջին գաղանութիւն վարեալք։ Ասկ յորժամ մերձեցաւ գալ Քրիստոս և զաշխարհս առ ինքն կոչել, ոչ ՚ի ձեռն առաքելոց միայն, այլ և ՚ի ձեռն մարգարէիցն, զի և նոքա մեզ օժանդակեն ՚ի հաւատոյն Քրիստոսի դիտութիւն, յայնժամ իբրև ՚ի ներքս մուտս ունիս և ձանապարհս պատրաստոյն փակեալ մարգարէութիւնն լեզուոյն անյայտութեամբ՝ առ մենայն ուստեք բանալ պատրաստեաց Թարգմանութիւն. զի ամենեքեան որք ՚ի հեթանոսացն ամենայն ուստեք ՚ի ներքս մտեալ հանդերձ բազում դիւրութեամբ զնոսա պարհս զայս գնայցեն, և ՚ի ձեռն սոցին կարիցեն առ Թագաւոր մարգարէիցն գալ և երկիր պագանել միածնի որդւոյն ՚ով։ Յաղագս այսորիկ սուզ ինչ յառաջ քան զՔրիստոսի գալուստն Թարգմանեցան ամենեքեան։

Ապա եթէ էր կացեալ միացեալ յեբրայական ձայնին միայն, և ասէր Պաւիթ «Հայեա յինէն և տաց քեզ զհեթանոս ՚ի ժառանգութիւն քեզ և կալուածս քեզ յամենայն ծագս երկրի,,, ուստի՞ հանդերձեալ էր գիտել զասացեալսն առ նոսին և կամ գաղտագոյն, մանկտունացին և կամ աթենացին, յանյայտութեան միացեալ գրոցն։ Պարձեալ Եսայիաս գոչէ. «Երբև զոչխար ՚ի սպանումն եկն, և իբրև զանմարմնոյ առաջի կըտրողի իւրոյ անձայն,,. և դարձեալ. «Հղիցի արմատն Յեսսեայ, և որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց՝ ՚ի նա հեթանոսք յուսասցին,,. և դարձեալ. «Ցցի երկիր գիտելով զտէր իբրև ջուրք բազումք որք ծածկեսցեն զծովս,,. և Պաւիթ դարձեալ ասէ. «Համբար-

ձաւ ՝ած յաղթական երգով, և տէր ՝ի ձայն փողոյ ,, . և դարձեալ. "Լսայց տէր տեառն իմում՝ նիստ ընդ աջմէ իմմէ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ,, ՝

Նա արդ զի յաղագս չարչարանացն և յարութեան և վերանալոյն և ընդ աջմէ նստելոյն և երկրորդ նորա գալստեանն և պարզաբար յաղագս ամենայնի որ ՝ի նոսա ասի կան՝ յառաջագոյն ասացին հին կտակարանքն, զի մի անճանօթ մնայցեն այնոքիկ ՝ի հեթանոսաց և որք յետոյ նոցա հանդերձեալ էին լինել, և անդիտանայցեն զմարգարէութեանն զօրութիւն, նախախնամեաց Այ շնորհն յառաջ քան զԼիստոսի գալուստն թարգմանել զգիրսն ոչ հեթանոսաց միայն, այլ և Հրէից, որք ամենայն ուրեք յաշխարհի էին սիրեալք, և զերբայական խօսեն այնուհետև ՝ի բաց ընկեցին որ պիտանացուս զնոսա արար: Վասն զի ահա հաւատացին որք ՝ի հեթանոսաց՝ տեսանելով զնշանսն. զՀրէայն զինքդ ունէին հաւանեցուցանել եթէ ոչ կարէին անդուստ տալ վարդապետ զմարգարէսն: Օ՛ի եթէ Լ՛ԹԷնս երթեալ Պաւղոս, ՝ի վերագիրն կարօտացաւ որ գրեալ էր ՝ի քաղնին, և զվարդապետութիւն անդուստ առնոսա արար, ընտանի զինուքն գիւրագոյն որսալ վատահացաւ, որպէս և եղև իսկ, և առաւել ընդ Հրեայն խօսելով՝ կարօտանայր մարտակից մարգարէիցն, որպէս զի մի զնա ստգտանիցեն, և եթէ նոքա իմն և հրաշալիս բերէ ՝ի լեզուս մեր:

Նա ընդէր, ասէն, ոչ էր մի ձայն, և յամենայն դրժուարութենէ ՝ի բացեայք վճարեալք: Մի ձայն էր յառաջագոյն, ուլ մարդ. և որպէս մի բնութիւն մարդկան, և մի ձայն ամենեցուն. ոչ գոյր այլալեզու, ոչ որ էր այլաձայն, ոչ որ էր հնդիկ, ոչ թրակացի, ոչ սկիւթացի, այլ ամենեքեան միով լեզուաւ խօսեալք: Նա զինչ եղև, ասէ: Նշարժանք պատուոյն այնմ երևեցաք մեք չարաբարոյքս միշտ առ բարեգործն: Օ՛ինչ ասես, և ձայնիւ անարժանք երևեցաք: Նա անասունք զիւրեանց ձայնս ունին ամենեքեան. բառաչեն ոչխարք, պապաչեն այծք, մռնչէ առիւծ, գոչէ ցուլ, խխնջէ ձի, ոռնայ գայլ, շչէ վիշապ: Իւրաքանչիւր որ յանբանիցն զընտանի բարբառն պահեաց, բայց ես միայն յիմնի

ձայնէն զրկեցայ. վայրենիք և ընտանիք, ձեռասուն և անընդել կենդանիք կային մեացին՝ ունելով վիճակեալ զիւրեանց ձայնն, և ես իշխանս նոցա անպատուիմ և արտաքս ընկեցայ ՚ի պարկեացն ՚այ: Օ՜ինչ այսքան մեղացն արդեօք. ո՞չ եկեն ինձ բաւական առաջին տանջանքն: Յա՛ ինձ զդրախտն և եհան արտաքս ՚ի նմանէ. կէի անտառապ կեանս և ՚ի ցաւոց ազատ, դատապարտեաց զիս քրտամբք և աշխատութեամբք. առանց սերմանն և առանց արօրոյ զամենայն տայր ինձ երկիր, հրամայեաց ինձ փուշ և տատասկ բուսուցանել, և միւսանգամ ՚ի նոյն յերկիր դարձցց զիս. մահու պատժեաց, զկանանցն ազգ էարկ ընդ երկամբք և ցաւովք: Ես էին բաւական այսոքիկ ՚ի պատուհաս, այլ և ՚ի ձայնէս ևս զիս արտաքս եհան և յայսմ պատուոյ զրկեաց, զի ՚ի հոմացեղիցս և ՚ի համազգեացս իբրև ՚ի գազանաց ՚ի բաց փախչիցեմ. ձայնս որոշելով պարսպէ զիս յընդունելութենէն:

Ա՛յլ հայեցարուք, յաղագս այդորիկ ահեղուցի զընդդիմադրութիւնն. զի յորժամ ՚ի վերայ ածիցէ զլուծումն, պայծառագոյն լինիցի յաղթութիւնն: Յթէ կամէր, ասէ, զիս արտաքս հանել յամենայնէ յայնմանէ, էր աղագաւ ՚ի սկզբանն տայր ինձ զայն: Ա՛խորժէք իսկ ՚ի զմին յայդմանէ ածիցէ զլուծումն ՚ի վերայ, ՚ի զմին իսկ ՚ի սակ ընդդիմադրութենէդ: Վ՚անգն այնքան է այ իրաւանցն յղփութիւն, մինչ զի նոյն վիճողին ընդդիմաբանութիւն ոչ ինչ ՚ի մէնջ առնլով բաւական է առ ամբաստանութեանն լուծումն:

Յթէ կամէր արտաքս հանել զիս յամենայնէ յայնմանէ, ընդէր ՚ի սկզբանն ետ ինձ զայն: Յա՛ ես զդոյն ասեմ. եթէ ախորժէր հանել, էր աղագաւ տայր: Յբրև զի ախորժէր ոչ արտաքս ընկենուլ, յաղագս այնորիկ ետ քեզ ՚ի սկզբանն: Յա՛ ապա զինչ եղև: Ես ասեմ եհան, այլ դու կորուսեր զառեալն: Ընդ նա զարմացեալ յաղագս մարդասիրութեանն, և զքեզ բամբասեաց վասն պղերգութեանն, զի զարգևն ոչ պահեցեր: Ես որ առնդեացն՝ է պատճառ, այլ որ զառանդն մատնեաց՝ բամբասանայ է պարտաւոր: Օ՜ի սիրէր և մարդասիրէր և կամէր երևեցուցանել՝ ընդհեաց և ետ, ոչ յոժամբէ թախանձեալ և ոչ բռնադատեալ, ոչ ընդ ուղ-

զոհիւնս ինչ քո զարմանալով, և ոչ քո աչխատու-
թեանց Հատուցումն տայր. այլ վաղվաղակի զքեզ ըս-
տեղծեալ՝ յիշխանութիւնն յայն հած արագ արագ, զի
ցուցցէ եթէ ոչ փոխարէն ինչ տայր և կամ երախտիս
Հատուցանէր զպարգևն, այլ մերկ ընդհէր։ Իսկ եթէ
ոչ պահեցեր զտուեալն, զքեզ ինքն բամբասեայ և մի
զտուող պարգևին։ Եւ արդ զայս միայն ունիցիմ ար-
դեօք ասել յաղագս տեառնն. բաւական էր և այս պա-
տասխանի. այլ անբաւ նորա բարերարութիւնն և ան-
Հաս մարդասիրութիւնն և այլ մեզ առատագոյն զկրա-
ւտնան ընձեռէ։ Ո՞վ ոչ զայս ևԷթ ասեմ՝ եթէ նա եւ
և դու կորուսեր. աղաս է և այսպէս՝ի մեղադրութեդ
տուողն, մանաւանդ թէ և մեծ աքանչանալոյ արժանա-
ւոր. զի կանխաւ գիտելով եթէ կորուսանես, ոչ զըր-
կեաց զքեզ՝ի պարգևէն։

Այլ սակայն միւս ևս յաւէտ մեծագոյն քան զայս
ունիմ ասել։ Եւ զինչ է այն. զի և յետ կորուսանելոյն
քոյ պղերգութեամբդ, դարձեալ ետ քեզ զկորուսեալն.
մանաւանդ եթէ ոչ զկորուսեալն միայն, այլ ևս մեծ
քան զայն. քանզի կորուսեր զղրախան, և ետ քեզ զեր-
կին։ Ցեսանէս զիարդ շահն մեծագոյն է քան զտու-
գանն, և արդէս առաւել իցէ փարթամութիւնս քան
զկորուսան. ետ քեզ փոխանակ դրախտին զերկինս, զի
և զիւր մարդասիրութիւնն ցուցցէ և զառատանայ խոցես-
ցէ, ցուցանելով թէպէտ և բիւր անգամ զմարդկան ազգ
դրժիցէ, ոչ ինչ լինիցի նմա առաւել՝ այ միշտ՝ի մեծա-
գոյն պատիւ զմեզ Հանելով։ Արդ կորուսեր զղրախտն,
և եթայ քեզ ՚ած զերկին. գատապարտեցար ազժամա-
նակեայ աչխատութեամբն, և պատուեցար յաւիտենա-
կան կենաւքն. Հրամայեաց երկրի զփուչ և զտատասկ բու-
սուցանել, և բուսոյց քեզ անձնդ զպտուղ Հոգւոյն։

Ցես զնոյ մարդասիրութիւնն որքան խոնարհեցաւ։
Եւ զի սովրութիւն է որք կորուսանեն ինչ յիւրեանց
ստայուածոց, թէպէտ և մեծ ինչ առնուցուն և բազմա-
պատիկ, և զկորուսեալն խնդրեն, ոչ Հաւանին նախ քան
եթէ առնուցուն զայն։ Եւ արդ զի կորուսեր զղրախտն,
ոչ զերկինն միայն ետ քեզ, այլ և զղրախտն և զերկինն։
«Այսօր ընդ իս լիցիս, ասէ, ՚ի դրախտին»,. զի մի մե-
ծագունիցն յաւելուածով միայն, այլ և զկորուսեալն

վերստին սատանալով Միխիթարեցի վտանգեալ անձնն։ Բայց եթէ բարւոք Թուեցի, ի նոյն ինքն եկեսցուք ի յառաջիկայն և տեսցուք զիարդ կորուսաք զառաջինն զձայնն. զի ոչ սուղ ինչ է ի զգուշութեան բանէ պատմուճիճն. վասն զի որ ուսանի զօրինակ առաջնոյ կորբատեանն, զգուշագոյն առ յապայն լինի։

Հարկաւոր է ձեզ զամենայնն ասել, եթէ ոչպէս մի ձայն էր ի սկզբանն ամենեցուն, և ի բազումս յետոյ փոփոխեցան. և մինչև յերբ մի էր, և երբ փոփոխեցաւ ի յոլովն, և որպէս արդեօք նոյն ինքն առաջինն խանգարեցաւ, և այլքն ի ներքս մնին յոգունք, և ընդէր խառնակեցան և յորմէ պատճառէ. և ապա յորում ի նոցանէ ի յոլովիցն ձայնիւ հնին կատարանքն կային. զի յազագս այնր ամենայնի զայս շարժեցաք յառաջնումն արդեօք և ի սկզբնագունին, եթէ զինի մնեալն։ Բայց մի երկնչիք. Թէպէտ և ոչ այսօր զամենայն կարացաւք ընձեռել, այլ ամենայն իրօք ձեզ հատուսցուք զինի։

Այս ընդէր արդեօք ոչ հանդերձեալք զամենայն տալ զլուանդակ պարտուցն խոստմանն՝ ընդերցաք ձեզ, զի վատահանալով ի հատուցումնն՝ յարաժամ ի մոխ զմեզ ունիցիք։ Օ ի եթէ ոսկի ոք փոխ տայցէ ումեք և պարտական ունիցի փոխոյն, ի սեղան և ի տան և ի հրապարակի և ի մահիճս և ամենուրեք զպարտականն իւր առաջի աչաց տեսանել և յերազի ի նմին դեգերի. և որ ընչից է ցանկութիւն, և նա ընդ ինչն փոխատուին առնել միշտ դեգերեալ հոգւովն։ Օ ի և մեք յաւսով հատուցմանն շահեցուք՝ յարաժամ ի ձերում միտս լինել, ի տան և ի հրապարակի և ուր և իցէք, յաղագս այսորիկ զպարտան խոստացաք. իսկ զհատուցումնն զամենայն ոչ առնեմք, զի վատահութիւք յապաղմանն պատճառս ի ձեզ յաղագս մերոյ յիշատակին Թողուցումք։

Մեծ ամրութիւն է մեզ ձերոյ սիրոյդ յիշատակ. մեծ բարի իրք ասեն ի սէր վայելել յայսպիսի բազմութեան։ Օ ի որ ի սէրն վայելէ, ամենայն իրօք և յաղթեան վայելեսցէ։ Այս այս եթէ ոչքան իցէ բարի, յայտ անտի է. Պաւղոս որ յերրորդ երկինն յափշտակեցաւ և զբանս զանձառելիս լուաւ, որ զամենայն զբնութեանս կարիս կոխեաց և յամրութեան էր այնուհետև, կարօ-

տանայր աղօթից աշակերտացն և ասէր. "Աղօթեցէք յաղագս իմ, զի փրկեցայց յանհաւատիցն ,,. և դարձեալ. "Աղօթեցէք զի ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ ,,: Այս ամենայն ուրեք ցուցանի նա և հայցեալ զաղօթս աշակերտացն և գոհացեալ զնոցանէ յետառնելոյն: Ոչ ի միոջ ասիցէ Թէ յաղագս խնարհուելոյն ապաւինէր ի պաղատանսն աշակերտացն, ցուցանէ զնոցա զօրութիւնն այսպէս ասելով յաղագս նոյ. "Որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ և փրկեսցէ գործակից լինելով և ձերոյ հայցուածոյդ յաղագս մեր. զի որ ի մեզ ընդհնէն է, յորովհետ գոհասցի վասն ձեր ,,: Այս արդ եթէ զՊաւղոս ի վտանգին զերծուցին բազմացն աղօթք, որչափ եւս առաւել պարտ և արժան է վստահանալ մեզ յայսմ վերակացութենէն շահել պտուղս:

Այս զի առանձինն տկարք եմք, յորժամ ժողովիմք՝ զօրաւորք լինիմք, և մանաւանդ հաւանեցուցանեմք զնա բազմութեանն մարտակցութեամբ: Այսպէս և Թագաւոր բազում անգամ մնանելով զոք ի մահ, միւսում եւթե աղաչողի Թերևս ոչ հաւանի յաղագս դատապարտեցելոյն. բայց ի բովանդակ քաղաքին յաղաղակեն՝ զոր ի վիհն կամէր արկանել՝ վասն յորովհետեան աղաչանացն դարձուցանէ ի դատապարտութենէն և վերըստին ի կեանս ածէ: Ինչափ է զօրութիւն բազմութեանն պաղատանացն: Այսոր իսկ և այսր ժողովիմք ամենեքեան, զի մեծապէս առ մեզ ձգիցեմք զնա. և զի առանձինն աղօթելով, որպէս յառաջագոյն ասացի՝ տկարք եմք, կապանօք սիրոյ հաւանեցուցանեմք զնա տալ մեզ զՀայցուածն:

Ոչ այս ոչ վայրապար ասեմ և ոչ յաղագս իմ միայն, այլ զի փութայցէք ի ժողովս, և զի միջ ասիցէ՝ ի տան ոչ կարեմ աղօթել: Այլ այնքան զօրութիւն ունին աղօթքն, որպէս յորժամ հանդերձ իւրովք անդամովք լինի, որպէս յորժամ բովանդակ մարմին եկեղեցւոյ միանդամայն առաքէ զպաղատանսն միով ձայնիւ, յորժամ քահանայք մերձ լցեն և զաղօթս բազմութեանն ի վեր առաքեսցեն:

Խորժէս ուսանել զզօրութիւն աղօթից յեկեղեցւոջ լեալ: Կապեալ էր երբեմն Պետրոս և բազում շղթայիւք վարակեալ. պաղատանք յարաժամ յեկեղե-

ցոյն առ նոճ լինելին յաղագս նորա, և վազվազակի ՚ի բաց վճարեցին զնա ՚ի կապանէն։ Ոչինչ արդեօք զօրագոյն լինիցի քան զայսպիսի աղօթս, որք սեանց և աշտարակաց եկեղեցւոյն օգնեցին. քանզի Պաւղոս և Պետրոս աշտարակք էին եկեղեցւոյ, զմիմեանս զկապանս լուծին աղօթք և զմիւսոյն զբերան բացին։

Այլ զի մի միայն ՚ի հանդիպեցելոյն որք հանապազօր կատարին և բազմաց լինին աղօթքն յեկեղեցւոջ՝ զզօրութիւնն ցուցցուք, զնոյն ինքն զպաղատանս ձեզ յիշեցուցանեմք։ Արդանդ եթէ որ միւսմ ումեք ՚ի բազմաց ՚ի ձէնջ հրամայէր առանձին աղօթս առնել յաղագս եպիսկոպոսի փրկութե՛ն, իբրաքանչիւր որ ՚ի ձէնջ հրաժարէր, որպէս թէ մեծ իսկ բեռն քան զիւր կարողութիւնն։ Այլ հասարակ ամենեքեան ըսէք զսարիաւաղին որ զայս հրամայէ և ասէ. “Աղաչեսցուք յաղագս եպիսկոպոսին և ծերութեան և օգնականութե՛ն, և զի ուղիղ համառօտեսցէ զբանն ճշմարտութե՛ն, և վասն որ առա և ամենայն ուրեք եկեղեցեաց։” Ոչ հրաժարել տայ ՚ի հրամանէն, այլ հանդերձ միաբանութեամբ առաքել ՚ի վեր զաղօթսն։ Ցեսո՛ր զձերոյ ժողովոյդ ըզզօրութիւն։ Արիտեն հմուտք խորհրդոյն զասացեալսս. վասն զի աղօթք երախայիցն ոչ ևս հրամային յայսոսիկ, զի չէ ևս ժամանեցին յայսպիսի համարձակութե՛ն. բայց ձեզ և յաղագս աշխարհի և վասն եկեղեցւոյ մինչև ՚ի ծագս աշխարհի սփռեալ և յաղագս որք խնամ տանին նոցա եպիսկոպոսաց, ամենեցուն հրամայէ առնել զպաղատանսն, որ զայնոսիկն սպասաւորէ և հնազանդի հանդերձ յօժարութեամբ, գործով վկայելով եթէ մեծ է եկեղեցւոյ աղօթից զօրութիւն ՚ի բազմութենէ միաբան ՚ի վեր առաքեալ։

Ասացի և յառաջիկայն երթիցուք վերստին եթէ մի ձայն էր յառաջագոյն։ Այլ ուստի էր յայտ եթէ մի ձայն էր։ “Այլ էր, ասէ, ամենայն երկիր մի շուրթն։” Ընդայտ է առացեալս. երկիր շուրթն ունիցի։ Այլ արդ զինչ, յաղագս ո՞ր ասիցէ։ Ոչ վասն անշարժուն և անդգալոյ երկրի ասէ, այլ հասարակ զամենայն մարդկան ազգն այսպէս կոչեաց, զընտանի իւրեանց բնութենէն յիշեցուցանելով ՚ի մերն յիշատակ էած ուստի եղենն։ Արդանդ կրկին է այս կենդանի, յերկուց բնութեանց

մարդ հաստատեալ կայ՝ ի զգալոյս և յիմանալոյն, ի հոգւոյն ասեմ և ի մարմնոյ, երկնից և երկրի ազգակցութիւն ունելով։ Ի ձեռն իմանալոյ բնութեանն հաղորդութիւն ունել ընդ վերինն զօրութիւնսն, և ի ձեռն զգալոյս ընդ երկրայինն իրս միաւորեալ է. կապ ինն է հաստատեաւ երկոցունց արարածոցս։ Յորժամ գործիցէ՞ նիչ՝ այ հաձոյ, հոգևոր ասի, և ոչ ի չնչոյս անուանի, այլ ի միտսն և մեծագունէն՝ հոգւոյն. զի և ոչ բաւական է մեզ չունչն յուղղութիւնս, և ոչ կարող իմանալ զաստացեալսն. "Կանգի չնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն"։ Որպէս մարմնաւոր կոչի որ մարմնոյ ծառայէ, նոյնպէս չնչաւոր կոչի որք զկրս հրամայեն մարդկային խորհրդոյ, և ոչ ընդունիցին զհոգւոյն զօրութիւն։ Այլ որպէս ասէի՝ եթէ ուղղելով հոգևորք ասիմք, և յորժամ մեզանչեմք և գլորիմք և գործեմք ինչ անօրէն մերում քաջատոհմութեանս, ի վատթարութենէն զմեզ կոչի՝ երկիր զմեզ անուանելով։

Արդ զի և աստ հանդերձեալ է զոմանց ամբաստանել զաշխարակին չինողաց յամբարհաւաձուիթիւն ամբարձելոցն, որք մեծագոյնք քան զկրկնանց արժանաւորութիւնն առին զմտածութիւնս, հանդերձեալ զնոցա զամբարտաւանութիւնն բամբասել, յաղագս այնորիկ յանարգութենէն զնոսա կոչեաց ասելով. "Նա էր ամենայն երկիր շուրթն մի"։ Նա զի ուսանիցիք եթէ այսպէս կոչի զմեզ յորժամ յանցանիցեմք, զԱդամ յետ մեղանացն նոյնպէս կոչեաց ասելով. "Հող ես և ի հող երթիցես"։ Նա սակայն ոչ էր հող միայն, այլ և զանմարմինն ունէր զոգի։ Նա էր աղագաւ հող կոչեաց զնա. վասն զի յանցեաւ։ Ո՞ի յորժամ ստեղծ զնա, ոչ կոչեաց այսպէս. այլ զինչ. "Աբասցուք մարդ ըստ մերում պատկերի և ըստ նմանութեան, և իշխեսցեն ձկանց ծովու և գազանաց երկրի, և եղիցի այնոցա և երկիւղ ի վերայ ամենայն երկրի"։

Տեսանեմ որպիսի գահերիցութիւնք էին բնութեան, որպիսի պատիւք, որպիսի գովութիւնք, այլ նախ քան զսխալանսն. իսկ յետ յանցանացն այնուհետև, "հող ես և ի հող երթիցես"։ Լուր և Աղաքեայ որ զսոյն զեկուցանէ, և մանաւանդ եթէ այ ի ձեռն մարգարէին. "Ահա առաքեմ առ ձեզ զԵղիա Թեղբացի"։ և վասն

էր առաքիչն. "զի գարձուսցէ զսիրտ հօր առ որդի,,։ Յաղագս զի հանդերձեալ էր զդատաստանն զահաւոր և զսարսռելի՝ ի վերայ հասուցանել, զի պատրաստեսցէ զնրան զի մի առանց ուղղութեանց առեալ՝ ի համարս դատաւորն դատեսցի. այլ զի եկեալ նա՝ յառաջագոյն ասիցէ եթէ մերձ է՝ ի դուրս գալուստն, և ողջախոհա-գոյնս առնիցէ զմարդիկ. վասն զի նախ քան զյոլով ժամանակս ասացեալքն՝ ի դանդաղումն արկանել սովորեցոյն. նորացուցանէ այնուհետեւ զյիշատակն՝ մեր, գայ մարգարէն այն։

Ասացն զի երկիր կոչէն մեղուցեալքն, զայս նախ առաջին յուցից։ "Արդէս զի գարձուսցէ զսիրտ հօր առ որդի,,, ՝ի վերայ հած. "Մի գուցէ եկեալ հարից զերկիրդ միանգամայն,,. և հարկանէ զյանցուցեալսն զորս երկիրն կոչէ։ Գարձեալ այլուր յաղագս Քրիստոսի պատմելով մարգարէն այսպէս ասէր. "Աղիցի արդարութիւն ածեալ ընդ մեջ իւր, և ճշմարտութեամբ պնդեալ զկողս իւր,,. իբրև ոչ եթէ կողք և մեջք իցեն այ, վասն զի անմարմին է ածութիւնն, այլ զարդար վճիռն և զառանց խաբելոյ դատաւորին դատաստան՝ ի ձեռն այսոցիկ մեզ երեւեցուցանէ. և եթէ ոչ ուրեք զրպարտողք այնուհետեւ և ոչ դրժողք և ոչ՝ ի ձեռն ընչից ապականութիւն և ոչ անգիտութիւն իրաւանց տեղւոյ ունիցի։ Ալ՝ զի այսոսիկ յատեանն և անպարտն տանջի և պարտաւորն՝ ի բաց փախչի, քանզի ապականեալ են ամենայն ուրեք իրաւունք. իսկ յոլժամ արդար դատաւորն և անխաբելին եկեսցէ, որոյ արդարութիւն է ածեալ ընդ մեջ իւր և ճշմարտութիւնք պատեալ զկողս իւր, իրաւանց ամենեքեան հաւաստեաւ հանդիպեսցին։ "Աւ հարցէ, ասէ, զերկիր քանիս բերանոյ իւրոյ,,։ Աւ զի ուսցիս եթէ ոչ յաղագս երկրի ասէ՝ այլ վասն մեղաւորաց, ՝ի վերայ հած. "Աւ հոգւով շրթանց սպանցէ զամբարիշտն,,։ Ցեսանեն զի և աստանօր զմեղաւորսն կոչեաց երկիր։

Արդ զայս գիտելով, յոլժամ լուիցես եթէ ամենայն երկիր է շուրթն մի, զմարդկային բնութիւնն իմա պարձեալ, վասն զի յիշեցուցանէ մեզ զընտանի մեր անարգութիւնն. այլ և մեծ իսկ է զնւր տկարութիւնն դիտել ումեք և համառել եթէ ուստի գոյացաւ։ Ասա-

ւական է այն վարդապետութիւն նուաստանալոյ բնութեանս ի մտածութիւնս. զամենայն ախտս կարէ վնասուցանել, և առնել խաղաղութիւն ի խորհուրդն։ Յաղագս այնորիկ պատուիրէ ոմն ասելով. "Հպեաց ի քեզ,, զմնաս ածելով զքո բնութիւնդ և զտեղեաւածդ, և բաւական է քեզ այդ զիջանելոյ միշտ։

Յաղագս այնորիկ արդարն այն Աբրահամ յարատեամ զոյս խորհուրդ ունէր յինքեան և ոչ երբէք մոռանայր։ Ընդ այ խօսեալ և յայնքան համարձակութեան վայելեալ և վկայեալ յառաքինութիւնն ասէր. "Ես հող եմ և մխիր,,։ Ես միս ոմն դարձեալ կամելով զամբարտաւանեալ զմարդն զնստուցանել, ոչ երկայն բանիւ ինչ շարժէ, այլ յիշեցուցանէ նմա միայն զբնութիւնն, և ապառնայ ուժգնապէս ասելով. "Օ՛ ամբարտաւանիցդ հող և մխիր,,։ Մի որ յետ մահուն ինչ երևիլ ասիցես. զնատ զդա կենդանացոյն. ոչ գիտէ այժմ եթէ հող և մխիր է։ Ցեսանէ զբաջավայելչութիւն մալմնոյն, տեսանէ զզօրութիւն, զսպասաւորութիւն փաղաքշացն, զճաշակիցսն զհետ երթեալս։ Հանդերձս զգեցեալ բազմապատիս, մեծութիւն իշխանութեան ունի, ծանրագոյն երևոյթք պատահին և առնեն նմա մոռանալ զբնութիւնն։ Գիտեմք զի հող և մխիր եմք ողջախոհքս. իսկ նա ոչ վատահանայ ի կատարածէն զցոյցն առնուլ, և ոչ գայ ի սահմանս և ի շրիմն նախահարցն, այլ զմերձակայս ևեթ տեսանել, ոչ ինչ ի հանդերձելոյն զմնաս ածէ. ուստի նմա արդէն իսկ աստուստ՝ եթէ հող և մխիր է։

Ակերեա ինձ, ասէ, և ուսուցից ոչ զայդ, այլ միս ևս ինձ յաւէտ վատթարագոյն, զի առցէ զդէղն։ Վասնզի ասելով "Օ՛ հպարտանայ հող և մխիր,,, ի վերայ էած՝ թէ "Ես ի կենդանութեան իւրում արհամարհեալ է փոր իւր,,։ Ծուի եթէ անյայտագոյն իցէ առաջեալս. ներքս անուանէ որ ինչ կայ ի ներքս, զփորսիան ասէ՝ զորովայնն լցեալ ազտով և յոլով անմաքրութեամբ և ժահահոտութեամբ. ոչ չարախօսէ զբնութեանէս, այլ ի խոնարհութիւն ածէ՝ թէ "և ի կենդանութեան իւրում արհամարհեալ է,,։ Ցեսէր զվատթարութիւն և զդիւրաւ վնաս կրել բնութեանս. մի կար ինար առաւ վախճանին, զի ուսցիս զքո տկարու-

թիւնդ. միևչդեռ կենդանի է, քննեա զմարդ, և մուտ բանիւ ՚ի նեղքս ՚ի նա և զամենայն զարհամարհուԹիւն նորա տեսցես։

Ասայ մի ՚ի վայր անկցիս. քանզի ոչ ատելով զմեզ, այլ խնամելով զմեզ ասյ արար այսպէս, մեծ պատճառս խոնարհուԹեան մեզ ընձեռելով։ Քանզի եԹէ մարդ հող և մխիթը կը, և իշխեաց ասել՝ եԹէ յերկինս ելից, եԹէ ոչ ունէր զբնուԹեանս սանձս՝ ուր արդեօք ՚ի գեբիվերոյն ոչ վազէր մտօք։ Զդ յորժամ զոք ամբարտաւանեալ տեսցես, զվիզն բարձրացուցանելով և ըզյօնան ՚ի վեր պրկելով ՚ի վերայ կառույն նոտիկի, սպառնայդ, ՚ի կապարան արկանիցէ, մահու մատնելով դըժիկէ, ասա նմա. "Օ՛ ամբարտաւանիկ հող և մխիթ. զի ՚ի կենդանուե իւրում արհամարհեալ ես փոր իւր,,։

Օ այսոսիկ ոչ յաղագս ռամիկ մարդոյ միայն, այլ և վասն նորին իսկ որ նստի ՚ի Թագաւորական աԹոռն՝ ես ասելն։ Զի ինչ զծիրանիսն տեսցես, մի զԹագն, մի զըզպատմուճանս զոսկեզնիս, այլ զնոյն ինքն զբնուԹիւնն խուզեա, և ոչ ինչ տեսցես աւելի ընկալեալ քան զամենեսեան. յաւէտ եԹէ ախորժես, և զծիրանիսն և զԹագն և զհանդերձսն և զամենայն իսկ զերեւոյԹսն զայնոսիկ շուրջ հարցափորձեա, և նոյա ամենեցուն դարձեալ տեսցես զերկիրս պատճառ լեալ. քանզի "Զամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ,,։ Զհա և քան զհող վաԹսարագոյն ևս երևեցան ամենայն պատմուճանքն այնոքիկ։

Տեսանեմ զիարդ զնստուցանէ զամբարտաւանուԹիւն, զիարդ քակէ զամբարհաւաճուԹիւնն զամենայն՝ մըտածուԹիւն նորին բնուԹեանս։ Զաւական է միայն զմտաւ ածել զինչ եմք և ուստի գոյացաք, և ամենայն քայքայի խորհրդոյն ամբարտաւանուԹիւն։ Յաղագս այսորիկ յերկուց բնուԹեանց պատրաստեաց զմեզ Աստ. զի յորժամ ամբարտաւանուԹեամբն փքասցիս, շինօսցէ զքեզ անարգուԹիւն մարմնոյդ, և յորժամ արժանաւոր ինչ չյիշ քեզ տուեցելոց պատուոյն խնայեսցես, ՚ի վեր տարցէ զքեզ առ երկնային զօրուԹեն նախանձ անձին[1] քաջատոհմուԹիւն։

1 Ցերկոսին օրինական աղբիւրն. հգաւ ըստ յունին։

Ա՛յ ՝ի քակուտն ամբարտաւանութեանն ևւթ պատեհագոյն է հետազօտութիւն բնութեանս, այլ թէ և այլ ինչ ցանկութիւն վտանգիցէ, եթէ ընչից, եթէ մարմնոյ յիմարութիւն և ՝ի պակշռոտութիւն կոչիցէ, պիտանացու է այս ՝ի մխիթարութիւն ախտիցն։ Յորժամ տեսանիցես կին գեղեցիկ պաճուճացեալ, ունելով աչս գեղազեղչս, այտս փայլեալս, զոր ոչ ոք կարիցէ զգեղեցկութիւնն բերել ՝ի վերայ դիմացն, բորբոքեսցէ զքո խորհուրդդ և զցանկութիւնն ածեցուցանիցէ, զմտաւ ածդ ի հող է աքանչացեալն և մխիթր որ բորբոքէն, և դադարեսցէ կատաղեալ անձնդ։ Ա՛երկայո ըզմտրեթ դիմաց նորա բանիւ, և յայնժամ տեսցես զամենայն զգեղեցկագիմութեան[1] նորա զվատթարութիւն. մի կայցես մերկացես յերևմանն միայն, այլ և որ ինչ ՝ի ներքան է՝ քննեսցէ խորհրդով, և ոչ այլ ինչ գտցես, բայց ոսկերս և ջիղս և երակս։ Ա՛յլ թերևս ոչ իցեն բաւական այսոքիկ. զմտաւ ածդ զնա այլայլեալ, պառաւեալ, հիւանդացեալ, կափուցեալ զաչսն և խորշոմեալ զայտսն և զամենայն ծաղիկն զայն թառամեալ, զմտաւ ածդ ընդ ինչ զարմանաս, և ամաչեա ՝ի քումմէ ընտրողութենէ. ընդ կաւ աքանչանաս և ընդ մխիթր, փոշին զքեզ բորբոքեն և զաղարն։

Ա՛յ ամբաստանելով զընութենէս զայս ասեմ, քաւ լիցի. ոչ չարախօսեմ և ոչ անարդութեամբ բամբասեմ, այլ դեղս ախտացելոյն պատրաստեմ։ Յաղագս այնորիկ ՝ած զնա պատրաստեաց անարդ այնպէս, զի և զկնի զօրութիւնն յուցանիցէ և զինամակալութիւնն առ մեզ ծանուսցէ, բնութեանս վատթարութիւ ՝ի նուաստութիւն ածելով, և զամենայն ցանկութիւն և զամբարտաւանութիւն մեր զիջուցանիցէ, զիմաստութիւնն զկնի յուցանելով, զի և ՝ի կաւ այնքան կարաց յօրանալ գեղեցկութիւն։

Արդէս զի յորժամ զգուշանամ զընութիւնն, յայնժամ զարդարեմ զարուեստ արարչին։ Օ՛ի զոր օրինակ ընդ պատկերագործն յայնժամ առաւել զարմանամբ՝ ոչ յորժամ յոսկւոյն գեղեցիկ մեզ յուցանիցէ զպատկերն, այլ յորժամ ՝ի կաւեղէն յառաջիկայ նիւ-

1 Մեւս օրինակն գեղեցկագոռոզութեան։

Թոյն յօրինեալ պատշաճագոյն զպատկերն գործիցէ, նոյնպէս ընդ քաջարուեստան ոճ զարմանաւոր և փառաւորեմք, զի ՚ի մխրոյ և ՚ի կատոյ անբաւ գեղեցկութիւն և զանձաւ իմաստութեան իւրոյ ցոյցս ՚ի մարմինս մեր ամբարեաց։ Ոչ զայն ոչ ՚ի մարմինս մեր միայն, այլ և յամենայն արարածս գործեաց. անարգս բազում ուրեք ածելով ՚ի մէջ զընութիւնն՝ զիւրոյ զարուեստին զօրինակս յայտնապէս եդ ՚ի նոսա, և ընդ քնութիւնս պանդխտանութիւն տկարութեանն խառնեաց. զի յաղագս արուեստին և գեղեցկութեանն սխրանայցես ընդ արարիչն, և վասն անարգ քնութեանն ոչ երկիր պագանիցես եղելոյն։

Պայծառ է արեգակն փայլելով, զամենայն աշխարհ լուսաւորէ, բայց ՚ի գալ գիշերոյ պակասէ. և ոչ ՚ի գիշերի միայն, այլ և ՚ի տունջեան։ Վասնզի այդր աղագաւ և ՚ի տունջեան պակասէ, զի զարմանայցես յաղագս արուեստին ընդ արարիչն, և ոչ պագցես երկիր վասն տկարութեան եղելոյն։ Տեսանես զերկինս զայս որպիսի մարմին է, զիարդ դեղեցիկ, որպէս պայծառ, և քան զմեր մարմինս լուսաւոյն ըստ երևմանն, այլ անչունչ է։ Տեսե՛ր և զոյց արուեստին և զտկարութեն յանդիմանութիւն։ Տեսանե՛ս զի և յերկոցունց քեզ ամրութիւն մերձ կայ. զի մի սոգտանիցես զարարիչն իբրև զտկար՝ գեղեցիկս արար, և զի մի երկիր պագանիցես եղելոյն իբրև ՚ի՝ տկարս զնոսա արարեալ մասամբ իւիք արուեստագործեաց։

Ո՛այսոիկ յիշեցէք յարուժամ։ Վասնզի յաղագս սորին զգիրս զայս մեկնեմք, ոչ զի ուսանիցիք և եթէ ըզգիրսն, այլ զի և զարարսն ուղղիցէք. և եթէ ոչ այն լինիցի, աւելորդ զգիրսն ընթեռնումք, վայրապար մեկնեմք։ Ո՛ի զոր օրինակ ըմբիշ ՚ի կռուարանն մտանելով օծա՛ւ՝ վայելից ՚ի ձեռաց մանկամարդին, եթէ ՚ի հասանել հանդիսին մոռոի յանդիմանեաց զարուեստն զայն՝ ընդունայն եմուտ ՚ի կռուարանն, նոյնպէս և այսր եկեալք ուսանելով զմարտն զամենայն և զմեքենայս սատանայի, եթէ ՚ի գալ ժամանակի նահատակութեանն ընկձիցէք կամ գեղեցիկ դէմս տեսանելով, կամ սէր բարեսիրութեամբ փքացեալք, կամ այլով իւիք չար խորհրդով ըմբռնեալք, մոռոի այսր մեկք։

Լ՚ըդ յիշեցէք զբանն որ յաղագս բնութեան մերոյ, մանաւանդ ոչ որք ասին ընդդէմ բնութեանս մերոյ, այլ հակառակ անարգել ցանկութեանցն. ոչ են բնութեանս բամբասանք ասացեալքս, այլ ցանկութենն բժշկութիւն խոսքն։ Լ՚ովաւ շինչանի բարկութիւնն, այնպէս ցածնու ցանկութիւնն, նովին ՚ի վայր անկանի ամբարտաւանութիւնն։ "Լ՚չ էր ամենայն երկիր շուրթն մի և ձայն մի ամենեցուն,,։ Լ՚հա զոր խնդրեաքն եթէ ոչ յաղագս երկրի է բանս, այլ եթէ ամենայն մարդիկ մի ձայն ունին՝ սովորութիւն է գրոց այսպէս կոչել զբանս, լեզու և շուրթն։

Կարէ որ է և զայն դիտել յաղագս հերձուածողացն որք քննողք լինին արարչութեանն, և ասեն եթէ չար է մարմին։ Ա՚ան զի չքար շարժմունս խորհրդոյն անդամոյ մարմնոյն կիրք կոչեն, որպիսի ինչ ասեմ, "Ա՚իրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի. լեզու իւրեանց սուր սրեալ,,, կարծեն ոմանք եթէ յաղագս լեզուաց ասացեալ իցէ զայս։ Ա՚չ ասացեալ վասն լեզուոյ, մի լիցի. քանզի ՚ին է գործ. այլ յաղագս սպանող բանից, որք սպանանեն զմարդիկ, ՚ի վերայ արկանելով դժնդակագոյնք քան զսուր. "Ա՚ եղուս իւրեանց սուր սրեալ,,, և դարձեալ, "Շ՚ր ըմբանջ նենգաւորօք սրտե՚ի սիրտ խօսեցան,,, ոչ վասն անդամոյ մարմնոյս ասէ, այլ յաղագս խորհրդեալ բանիցն։ Ա՚յոյնպէս և աստ "Լ՚չ էր ամենայն երկիր շուրթն մի,,, ոչ զայն ուսուցանէ եթէ ամենայն մարդիկ մի շուրթն ունէին, այլ շուրթն զձայն կոչեաց։ Վ՚անզի ասելով "Լ՚չ ամենայն երկիր շուրթն մի,,, ՚ի վերայ էած "և ձայն մի ամենեցուն,,։ Ա՚յոյնպէս և յորժամ ասիցէ "Վ՚երբեմն բացեալ կոկորդ իւրեանց,,, ոչ զկոկորդացն ամբաստան լինի, մի լիցի. այլ զբանիցն որք ելանեն անտի մեռեալ խօսիցն։ Ա՚ան զի գերբեզման է ընդունարան ոսկերաց և մարմնոց ՚մեռելոց. այսպիսիք իմն են և բերանք չարախօսաց արարչին. նոյնպիսի բերան և զաղտաբան խօսողաց մարդկան լուտակողացն, որք ժահահոտութիւնս և չար բանս յիւրեանց ՚ի կոկորդոյն արտաքս հանեն։

Ա՚նուշահոտութեամբ զնա լցո, ով մարդ. գանձ այս թագաւորական, և մի գերբեզման սատանայական. և եթէ գերբեզման իցէ, գոնէ փակեա, զի մի յառաջաս

ցի ժահահոտութիւնն։ Ցաւր մտածութիւնս ունիս, մի՛ յառաջ բերիր բանիւք. Թող ՚ի ներքս կալ ճնալ, և վաղվաղակի հեղձնուն։ Արդիկ եմք, բազում յոլովակի խորհիմք վատթար և գարշելի խորհուրդս։ այլ մի՛ ներբեսցուք բանիւք արտաքս ելանել մտածութեցն, զի Ճնչեալք ՚ի ներքս տկարագոյնք լինիցին և կորնչիցին։ Օ՜ի զոր օրինակ գազանք ամենաչարք և անպեղք ՚ի գուբ ընկեցեալք, Թէ խցցես զծագն ՚ի վերուստ՝ վաղվաղակի հեղձնուն, ապա Թէ ելս Ճանապարհի ինչ և յապահովանս ինչ ընձեռեսցես՝ յոլով տան նոցա մերխիթարութիւնս և ոչ Թողուն կորնչել, նոյնպէս լինի և չար խորհրդոցն. յորժամ ծնանի ՚ի ներքսն, Եթէ փակեսցուք զնոցա զարտաքս Ճանապարհն, վաղվաղակի ապականեմք. ապա Եթէ բանիւք զնոսա արտաքս բերիցեմք, զնոսա զօրաւորս գործեմք, յապահովանս ընձեռեալ լերծոյ, և ՚ի վատթար գործոյն խորհուրդ վաղվաղակի գարշելի բանիւքն կրթեալ անկանիմք։ Ալ ասն այնորիկ և մարգարէն ոչ պարզաբար գերեզման կոչեաց, այլ գերեզման բացեալ, զսոյն ինքն զայս ստգտանելով զոր ասացիս։ Օ՜ի և ոչ միայն զինքն ամաչեցուցանել որ զգարշելի բանն խօսի, այլ և զմերձաւորսն և որք հաւպ լինին ՚ի նա՝ ընդ յոլովութեամբ ժանտախտի։ Այս զոր օրինակ Եթէ գերեզման բանայցեմք՝ ժանտախտիս ըզքաղաք ընդմք, նոյնպէս և գարշելի բանիւք հանդարձակութեամբ խօսեցեալք՝ զմերձաւորսն զամենայն չար ախտիս ընդուն։ Յաղագս այսորիկ պարտ և արժան է դուռն և նիգ և սանձ ՚ի վերայ դնել բերանոյ։

Լ՚երդ զի մի ձայն էր յայնժամ ամենեցուն, յայսցանէ մեզ ցուցաւ. Հարկաւոր է այսուհետև ասել ընդէր յոլովք ՚ի ներքս մտին։ Լ՚ալ առ վայր մի զբարոյական բանն հրահանգեսցուք. խրատեսցուք զի զուս մեր սանձս ունել, և մի՛ վայրապար զամենայն արտաքս բերել ՚ի մերտայ, մի՛ չարախօսել զեղբարց, մի՛ զմիմեանս խածանել և ուտել. զի քան զխածանողսն զմարմինս չարագոյնք և՜ս են որք բանիւք զնոյն առնեն. նա ատամամբք խածանել զմարմինն, և սա բանիւք խածանել զոգին, խոցոտել զմտածութիւնսն և անբժշկելի առնել զվէրն. յաղագս որոյ մեծամեծք կան ճնան պատիժք և տանջանք, որքան դժնդակագոյնս ՚ի ներքս դնեն զխոցուածն։

Այլ ոչ յաղագս այսորիկ միայն արտաքս անկանի՛ ի Թողութենէն որ չարախօսէն, այլ զի ոչ իրաւացի ինչ և ոչ անիրաւ ունի պատճառս ասել զչարութենէն իւրոյ։ Վասնզի այլ ամենայն մեղք Թէպէտ և անբանս ունին զպատճառս, այլ սակայն սուղ ինչ Թուին Թէ ունին. որպիսի ինչ, պոռնիկին զցանկութիւնն ընտ, գողն զաղքատութիւնն լուծանել, այրասպանն զբարկութիւնն դադարեցուցանել. իսկ որ չարախօսէն՝ և ոչ մի ինչ պատճառս ունի ասել։ Վասնզի զորոյ ընչից զղջիւթիւն ստանայցէ, որով իւիք յոլովազոյն առնիցէ զփարթամութիւն. ոչ այլ ինչ է, բայց յաչառանաց պատճառ, ոչ իրաւացի և ոչ անիրաւ ունելով բաղայս. և յաղագս նորին զրկեալ է յամենայն Թողութենէ։

Ընդոծ ես չարախօսել, տամ քեզ պիտանացու պատճառս. կամիս չարախօսել, ասա զմեղայն քոց չար. "Ընսա նախ զանօրէնութիւնս քո զի արդարասցիս,, ։ Ցեսէր չարախօսութիւն որ ունի պսակ և գովութիւն և արդարութիւն։ Վարձեալ. "Ընդարն ինքեան ոսոխ է՛ի յառաջաբանէն,, ասէ։ Այս սակայն եթէ արդար՝ զիաՀդ չարախօս, և եթէ չարախօս՝ որպէս արդար։ Ընդարն ոչ է չարախօսութեան պարտաւոր. այլ զի ուսցիս, Թէպէտ և մեղաւոր ոք իցէ և չարախօսեսցէ զմեղայն՝ արդարն լինի, և յաղագս այսորիկ ասէ. "Ընդարն ինքեան ոսոխ լինի՛ ի յառաջաբանէն,,։ Յառեւանան երկու կողմանք են, և որ զպատասխանիսն տան, մինն պարտականայն, և միւսն որ ոչ իցեն պարտաւոր. և առաջաբանէն ամբաստանողին տուեալ լինի, որ ոչն ինչ ունի պարտս։ Իսկ աստ ընդդէմ նմին. դու որ պարտաւորդ ես՝ յափշտակեաց զյառաջաբանէն, զի անպարտ լիցիս. մի կար միասր ասոխին. Թէպէտ և՛ի պարտաւորացն ես, այլ նախ քան՛ի նմանել այնպիսի ինչ լես՝ դու չարախօսեաց զմեղայն։ Մուսեր է լեզու սրեալ. մի այլոց ածցուք՛ի վերայ զվերան, այլ զմեր միտութիւնն հատցուք։

Կամիս ուսանել եթէ սովորութիւն է արդարոյ ոչ զայլոց չարախօսել, այլ զինքեանց, լուր Պաւղոսի որ գոչէն. "Ո՞ նորհ ունիմ Քրիստոսի որ զօրացոյցն զիս, զի հաւատարիմ զիս համարեցաւ դնել զիս՛ի սպասաւորութիւնս, որ յառաջ հայհոյիչ և հալածիչ և Թշնա-

մանող էի,,։ Ցեսանէս զիարդ զինքենէ ամբաստանէ ։ Այլ դարձեալ. “Արիստոս էնի յաշխարհ զմեզ աւուրս փրկել, որոց առաջինն ես եմ,,։ Այլ դարձեալ այլուր. “Ով եմ բաւական, ասէ, Թէ կոչեցայց առաքեալ, վասն զի հալածեցի զեկեղեցին ՝այ,,։ Ցեսէր զիարդ ամենայն ուրեք չար զինքենէ խօսի. քանզի գիտէ զամբաստանու-Թեանս այսորիկ զշահ՝ Թէ արդարութիւն գործէ ։ Այլ յորժամ ինքն ինքեան չարախօս լինելոյ են պէտք, անխոյսաբար վարի ամբաստանութեամբ. իսկ յորժամ զայլս տեսանէ զայլոց չարիս դատել՝ տես որպիսի դժուարութեամբ հանդերձ զնոսա ըմբերանէ այսպէս ասելով. “Այսու հետև մի նախ քան զժամանակն դատիք մինչև եկեսցէ տէր որ լուսաւոր առնէ զդաղտնիս խաւարի և յայտնէ զխորհուրդս սրտից,,։ Այս պահեա զդատաստանն՝ որ զանձառելիս մտայն գիտէ. Թէպէտ և հաւատեաւ կարծիցես գիտել զմերձաւորին, սխալէ քո դատաստանդ. “Ո՞վ զիտէ, ասէ, զմարդոյն՝ Եթէ ոչ հոգի մարդոյն որ ’ի նմա է,,։ Այնքիք ’ի մեղուցեալոյն ապաշաւելով՝ քան զարեգակն պայծառագոյն փայլել ունին. քանզիք ’ի մեծամեծացն և յերևելեացն դաղաղ են և գերեզմանք բուեալք գոյին ։

Այսաւր զիարդ Պաւղոս չար զինքենէ խօսի հանդերձ սաստկութեամբ և գերազանցութեամբ զմեղացն՝ որոց ոչ հանդերձեալ էր համարս տալ՝ յաձախապէս յիշէր ։ Այնպէս հայհոյիչ և հալածիչ և Թշնամանող նախ քան զմկրտութիւնն էր, և զայն զչանցանս եղյծ մկրտութիւնն. այլ սակայն յիշէ զնոսա իբրև ոչ Եթէ բան ինչ հանդերձեալ էր յաղագս նոցա առնել, այլ զի ցուցցէ զայն մարդասիրութիւնն, Թէ որպիսի ոք էր և զինչ արար. ’ի հալածչէ արար առաքեալ ։

Այս արդ Եթէ նա զքնքչեալ մեզն յիշէ, և առաւել մեզ յետ մկրտութէ՛ յիշել է պարտ և արժան ։ Այնպէս զինչ պատասխանիք իցեն մեզ և կամ ո՞ր Թողութէ, յորժամ նա և որոց ոչ է պարտական՝ յիշէ յաձախապէս, իսկ մեք և ընդ որոց հանդերձեալ եմք պատասխանիս տալ՝ և ոչ զայն յիշեցուցանեմք մեզ ինքեանց, այլ Թողեալ զմերն զայլոց չարիան հարցափորձեմք ։ Այսր զիարդ և Այաաթէոս առաջին կենացն իւրոց լինի չարաիսօս. մանաւանդ զինքն կոչէ և ոչ ամենչէ զառաջին վարն

անուանել։ Ա՝ ասն զի ոչ ինչ ունէին չարաիսել զին-
քեանց յետ մկրտութեանն, զառաջինն յիշելին, խոստե-
լով զմեզ՝ այլոց չարեացն ոչ ինչ առնել բան, այլ զմե-
րսն, և յաձախապէս շուրջ գալ։

Վասնզի ոչ է իսկ և ոչ ինչ այլ դեղ այնպիսի առ՝ի
մեղացն՝ի բաց բարձումն, որպէս յաձախակի նոցա յի-
շատակն և մշտնջենաւոր նոցա ամբաստանութիւնն։ Այս-
պէս մաքսաւորն զբիւր չարիսն՝ի բաց կարաց դնել, զի
ասաց. «Վաւեր զիս զմեղաւորս.»։ Այնպէս և փարի-
սեցին յամենայն արդարութենէն արտաքս անկաւ, զի
Թողեալ զմտաւ ածել զիւր սխալանսն՝ զաշխարհս դա-
տապարտելն բանիւք. «Պոհանամ զի ոչ եմ իբրև զայլ
մարդիկ զյափշտակողս և զաւելաստայուս և ոչ իբրև
զայս մաքսաւոր.»։ Այրին աղագաւ Պաւղոս պատուիրէ
ասելով. «Վորձեսցէ իւրաքանչիւր զի զիւր գործն, և
յայնժամ լինիցէ միայն զպարտսն կալցի և ոչ լընկերն.»։

Ալխորժէս ուսանել և՝ի հնուսն սրպէս արդարքնամ
բաստանեցին զինքեանց, լուր նոցա և ձայնակից լեր
բարբառոյ նոցա։ Պաւղոս ասէր. «Ընօրհնութիւնք
իմ բարձրացան քան զղլուխ իմ. իբրև զբեռն ծանր
ծանրացան՝ի վերայ իմ.»։ և Դաւիթ գոչէր. «Ա այ
ինձ շաւտահասիս, զի մնդղ եմ և անմաքուր շրթունս
ունիմ.»։ Այրեք մանկունքն՝ի հնոցին զգնային. զմար-
միսն իւրեանց յաղագս այ մատնեցին, և ընդ վերջին
մեղաւորն զինքեանս թուէին՝ մեղաք անօրինեցաք ա-
սելով. և ոսկայն զինչ պայծառագոյն քան զնոսա, զինչ
մաքրագոյն. զի Թէպէտ և էին մեղս ինչ արարեալ, զա-
մենայն՝ի բաց ընջեաց բոցոյն այրը բնութիւն. բայց
ոչ յուղղութիւնն իւրեանց Հայէին, այլ զյանցանսն
զմտաւ ածէին։ Այնպէս և Պանիել յետ դիպ առիւ-
ծուցն, զինի բիւր տանջանաց Համբերելոյ, և նա զին-
քենէ չարախօսեր, և զընկերսն և ոչ ոք։ Այս ընդ՚որ ար-
դեօք. զի որ զայլոյն խօսի չար՝ զայրացուցանէ զտէրն,
և որ զինքենէ ամբաստանէ՝ քաւէ գյանցանսն և հաշ-
տեցուցանէ զտէրն, զարդարն արդարագոյն ևս գործէ,
և զմեղաւորն յափշտակէ՝ի յանցանաց և Թողութեան
արժանաւոր առնէ։

Ո՞չ այսօրիկ գիտեալ մի՛ զայլոյն, այլ զմեր չարիսն հե-
տազօտեսցուք, փեռեկեսցուք զմեր զնխիզն. վերսաին

ստասցուք զկեանս մեր զամ, զիւրաքանչիւր ոք՝ի յանցանացն մերոց քննեսցուք։ Այլ մի միայն մի խոսեսցուք չար, այլ և մի լուիցուք յայլոց խոսել զչարն, զի և ընդ այնր մեզադրութիւն կայ առաջի և մեծ պատուհաս. "Ո՛վ լուր մնոտի, ասէ, մի ընկալցիս,,։ Ալ ասաց՝ մնոտի լոյ մի հաւատայցես, այլ մի ընկալցիս զնա. խիղ զականջդ, պարսպեա զչարախոսութեանն զմուտս, ցոյց եթէ քան զչարախոսեալն ոչ ինչ նուազ և դու թշնամի ես և պատերազմող չարախոսին։ "Զմանեաց մարգարէին որ այսպէս ասէր. "Որ խոսէր չար գաղտ զընկերէ իւրմէ, զայնպիսին՝ի բաց հալածէի,,։ Ալ ասաց եթէ ոչ հաւատայի, ոչ ընդունելի զասացեալն, այլ՝ի բաց վարելի իբրև զթշնամի և զպատերազմող։

Այայց են ոմանք որք ցուրտ միսիթարութեամբ զինքեանս միսիթարեն, միշտ այսպէս ասելով. տէր, մի կայցուցաներ յիս զմեղս զայս, զի լոյ բանիս պարտաւոր եմ։ Ո՛չինչ պէտք պատասխանեաց, զինչ պէտք թողութեան այնորիկ. լռեաց և աղաւես՝ի մեզադրութենէն. մի ինչ ասեր, և մաքուր ես յերկիւղէն. ընդէր քեզ ինքեան իրս շաղես յայ և՝ի մարդկանէ։ Ընդէր պարտաւոր զքեզ ինքն առնես բամբասանացն, յորս սակս զբեռն ծանր կապես. ոչ իցէ բաւական քեզ յաղագս քո չարեացն համարս տալ, այլ և այլ ևս շեղջակուտես զմեղսն. աւելորդ այն պատասխանի. ոչ զլոյ բանն պարտիս, այլ զամբաստանութենէն բան պահանջիս։ Ուանզի եթէ լուեալ լռիցես, զլսելոյն ևեթ բան պարտիս. ապա եթէ լսելովն յայլս բերիցես և այլում ձառիցես, ոչ լսելոյ բանին ես պարտաւոր, այլ չարախոսութեն. "Ուանզի՝ի բանից քոց արդարասցիս, ասէ, և՝ի բանից քոց պարտաւորեսցիս,,։

Ո՛այսոսիկ ոչ յաղագս չարախոսելոյն երկուցեալ ասեմ և վկայեմ. քանզի նա զչարն լսելով ոչ ինչ դրժեցաւ և ոչ ճնասեցաւ. այլ եթէ սուտ են ասացեալքն զնմանէ, և վարձս ևս մեծամեծս ընկալցի. իսկ եթէ ճշմարիտ իսիք, և ոչ այնպէս դրժի՝ի քումմէ չարախոսութենէն. զի ոչ եթէ՝ի քումմէ լուտանացն բերիցէ յայնժամ զվնաս՝ի վերայ նորա դատաւորն։ Ալ թէ պարտ և արժան իցէ աքանչելի ինչ ասել, և մեծագոյնս ևս շահի առաքինութիւն զկայհայութիւնն բերելով որպէս և մաք-

սաւորն։ Նակ որ չարն խօսի, եթէ ձշմարիտ և եթէ սուտ չար ասիցէ զընկերէն, մեծապէս զրկի. և ի զըրպարտելոյն կորնչի, և ոչ ցուցանելոյ ինչ պէտք են։ Նայց թէ և ձշմարիտ ասելով, ծանրագոյն առնէ ինքեան զատեանն[1] հռչակելով զընկերոյն թշուառութիւնս և գայթակղութեանն պատճառ լինելով. զոր թագուցանելն էր պարտ և արժան, յայտնէ ամենայնն և քարոզէ զսխալանս ընկերոյն։ Օ՜ի եթէ զմի ոք գայթակղեցուցանել անհրաժարելի տայցէ զպատիժն, որ զբիւրս գայթակղեցուցանէ չար ձայնիւն՝ որքան ոչ կրեացէ պատուհաս. զի և փարիսեցին ոչ ստեաց, այլ ձշմարիտ ասաց՝ մաքսաւոր կոչելով զմաքսաւորն, այլ սակայն պատաստան եւս։

Օ՜այս գիտելով, սիրելիք, փախիցուք ի չար խօսելոյ. զի ոչ ինչ դժնդակագոյն քան զայն և ոչ դիւրին մեղք։ Նղիր. վասն զի քան զամենայն անօրէնութիւնս երագապէս գործի, և վաղվաղակի չափշտակէ զոչ ըզպուշացեալսն։ Ո՜չ մեղք և ժամանակի կարօտանան և ծախոյ և պարապելոյ և գործակցաց, և բազում անգամ ի յամրութեան ժամանակին ընդ մէջ հատանին։ Որպիսի ինչ ասեմ. ցանկացաւ ոք սպանանել և ապահել, յոլով իրաց պէտք լինին նմա. և ի յամենն՝ բազում անգամ լուծանի սրտմտութիւնն և ի բաց կայ ի չար բարկութենէն, ելոյծ զապականեալ բարն, ոչ յաւել զգործան ի խորհուրդն։ Նակ ի չարն խօսել ոչ այսպէս. այլ եթէ ոչ իցեմք յոյժ արթունք, դիւրաւ չափշտակիմք. ոչ ժամանակի, ոչ յամելոյ, ոչ ծախոյ և ոչ իրաց ուժեք մեզ պէտք լինին առ չարն ասելոյ. այլ բաւական միայն ախորժելն լինի, և վաղվաղակի ի գործ ելանեն խորհուրդք. լեզու միայն է որ սպասաւոր լինի։

Ո՜ւ արդ զի սրամիտ է չարն, և դիւրաւ շուրջ զմեօք կան մեղքն, չար են տանջանքն և պատիժքն, և շահ և ոչ մի ինչ ոչ փոքր ինչ և ոչ մեծ, հանդերձ բազում հատաստութեամբ փախիցուք յախտէն և զայլոցն շինջուսցուք զչարիս. մի հռչակեսցուք, այլ պատուիրեսցուք յանցուցելոյն որպէս և ՅՈՎ հրամայեաց. “Նթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա ա-

1 Ցօրինակին վանպատ. եղաւ ըստ յունին։

ասջի քո և նորա միայնոյ ... որպէս թէ առանց հրապա-
րակագոյժ լինելոյ յանդիմանելոյին դիւրագոյն արասցես
զբժշկութիւնն : Ա՛ի խածյուք և ի կորիցուք զայլոցն
վերս : Ա՛ի նմանիցուք Ձանձոյ , այլ ընդ մեղս նախան-
ձեսցուք . քանզի Ձանձքն ՚ի վերս նստելով խածանեն ,
և մեղուքն ՚ի վերայ ծաղկանցն Թռչին . վասն այնորիկ
մեղուք խորհուրդ մաճուցանեն , և Ձանձքն ցուս ՚ի վե-
րայ ածեն մարմնոյն յորս նստինն . և նոքա են գարշե-
լիք , իսկ մեղուք ցանկալիք և փառաւորք :

Ա՛րդ և մեք այսուհետև յաղթիւր առաքինութեան
սրբոցն Թռչել պատրաստեսցուք զանձինս՝ յաձախա-
պէս զանուշահոտութիւն զանտի ուղղութեանցն ստա-
նալով , և մի խածցուք զվէրս ընկերացն . այլ թէ տե-
սանեմք որք առնիցեն զայն , ըմբերանեսցուք , երկիւղիւ
տանջանացն զնոսա պարսպելով , զազգակցութիւնն յի-
շեսցուք որ առ եղբարսն է : Այս եթէ ոչ ինչ յայդցա-
նէ տայցեն տեղի , Ձանձն զնոսա կոչեսցուք . զի թշնա-
մանք անուանս այսորիկ ՚ի բաց արասցեն ՚ի չար կրթու-
թենէն զնոսա , և զի ՚ի վատթար պարապմանէն յայն-
մանէ ազատեալք՝ զամենայն պարապուն ՚ի քննութիւն
մերոց չարեացն ծախեսցուք :

Ա՛յսպէս զլուրեալքն կանգնեսցին , և մեղքն ոչ հրա-
չակեսցին : Այլ զի բեռանց չարիւն զմուսա ածեն յաձա-
խապէս , դիւրաբեկ զայնոսիկ ՚ի բաց զնեն յիշատակաւ
յանցանացն , և առ այլ ևս գործան դանդաղկոտք լինին .
իսկ որք զառաքինութիւնս սրբոցն յաձախապէս դիտեն ,
մեծ նախանձ առնուն առ նոցա նմանութիւնն . զի ՚ի
ձեռն այսոցիկ ամենեցուն բովանդակ մարմին եկեղե-
ցւոյ զմեզ ուղղեալ , կարասցուք հանդերձ լամբիք [1] այ-
սու յարքայութիւնն երկնից մտանել : Այսոյ լեցի ամե-
նեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , ընդ որում փառ միան-
գամեայն և հոգւոյն սրբոյ փառք իշխանութիւն և պա-
տիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

1 Յօրինակին էրդամբ . եդաւ ըստ յունին :

ՋԿՆԻ ԿԱՂԱՆԴԱՑՆ ՑՈՂՈՎՈ ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ ԵԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ, ԵԻ Ի ՂԱԶԱՐՈՍ ԵԻ ՈՐ ԱՒ ՆՈՎԱԻ ԸՆԶԵՂՆ, ՈՐ Ե ՏՕՆ ՀԵԹԱՆՈՍՑԱ *

Ո՛Ղիկեան օրն տօն սատանայական՝ արարած տօն հոգևոր. առ՛ի մէնջ զբանս ընկալարուք հանդերձ յո՛ւսով բարեմտութեամբ, և զյոգնագոյն մասն աւուրս սատ դադարեցէք, արբենալով արբեցութիւն որ չի և բա՛զում ողջախոհութի՛ւ ընդ Պաւղոսի պարեցէք։ Արկնա՛պատիկ ձեզ շահ եղե, զի յանառակ արբեցելոց պա՛տուէն վճարեցայք, և հրճուանօք բերկրեցայք հոգևո՛րօք, յաւէտ բարեկարգութիւն ունելով։ Նա՛շակեցէք՝ ի խառնելեացս ոչ որ ապականացու ունի, այլ՝ ի հո՛գևոր վարդապետութենէ լցեալ։ Պողոս եղէք և քնար հոգւոյն. այլքն սատանայի պարեն, իսկ դուք նուագա՛րանս և անօթս հոգևորս կազմեցէք զձե՛զ՝ ի ձեռն աստ դեղերանացդ. ընձեռեցէք հոգւոյն նուագել զանձինս ձեր, և որ՝ ի նմանէ ընորհքն են՝ շրջեացի՝ ի ձեր խո՛րհուրդս։ Աւստի և զամենայն յարմարանուագն հնչե՛ցէք, որ ոչ զնարդիկ միայն, այլ զվերինն զօրութիւնսն հրճուեցոյց։

Այդ բեր այսօր ընդդէմ արբեցութեան պինեսցուք զլեզուս, զդէջ և զհոսանուտ կեանս բամբասեսցուք. մեղադրեսցուք զոք՝ ի նմա զբոլոր օրն դեգերին, ոչ զի ամաչեցուսցուք զնոսա, այլ զի յամօթոյն ազատեսցուք զնոսա. և ոչ զի թշնամանեսցուք, այլ զի ուղղեսցուք. ոչ զի խայտառակեսցուք զնոսա, այլ զի՝ ի բաց զերծուսցուք յանառակ ծանականաց և՝ ի սատանայի ձեռաց։ Վասնզի որ յարբեցութե՛ զբոլոր օրն դեգերի, և փափկերութեան և շատկերութեան պինքն տացէ, ընդ նմին իսկ սատանայական բռնութեամբն լինի։ Նայց լոյսի ինձ առաւելութիւն՝ ի մերոցս բանից։ Այ՛թէ կայցեն ինասցեն՝ ի նմին պատուիրանի և թէ ոչ, ոչ այնպէս մեք՝ ի բաց կացցուք՝ ի նոցա խորհրդակցութենէն. զի և աղ-

* Ընդարձակ Ճառս՝ ի յոյնէնա- գրին՝ զեղեալ ե յօրինակին մե- ծամ աւելի քան զ200 տողս յայլ- լայլ տեղիս յորս զանց առնեմք նշանակել։

բիւրք Թէպէտ և ոչ ոք առնուցու ջուր ՚ի նոցանէ՝ բըղխեն, և ջրհորք Թէպէտ և ոչ ոք լմնիցէ ջուր ՚ի նոցանէ՝ զեզանին, և գետք Թէպէտ և ոչ ոք ձաշակէ՝ ընԹանան. պարտ և արժան է և ասողին Թէպէտ և ոչ ոք հայիցի՝ զիւր զամենայն ընուլ։

Օ ի և օրէնք իսկ կան մեզ ՚ի մարդասիրէն Աստուծոյ. որք զբան ՚ի վարդապետուԹէ ընկալաք, մի որ ինչ ՚ի մէնջս է՝ երբէք նուազեցուցանել և մի լսել, եԹէ լսէ ոք և եԹէ ստունդանէ։ Երեմիաս վասն զի յաւէտ սպառնայր Երկիցն, և զհանդերձեալ գժնդակուԹիւնն յառաջագոյն ձայնէր, և ՚ի լսելեացն կատակեալ լինէր և զբոլոր օրն ծաղր կայր նոցա, խորհեցաւ երբեմն ՚ի մարգարէուԹենէն յայնմանէ ՚ի բաց կալ, մարդկային իմն ախտանալով զայսպիսումն, և զլուտանան ոչ կարելով ընդունել, և ասէր. “Երդ ծաղր զամենայն աւուրս. ոչ խօսեցայց և ոչ անուանեցից զանուն տեառն. և եղև յիս իբրև զհուր բորբոքեալ յոսկերս իմ, և լքայ ամենայն ուստեք, և ոչ կարէի համբերել.,, Եւ զոր ասէն այսպիսի ինչ է. ախորժէի, ասէ, ՚ի բաց կալ ՚ի մարգարէուԹենէն, վասն զի ոչ լսէին Երեայքն. և միանգամայն զայս խորհելով, իբրև զհուր յանդամս իմ անկաւ հոգւոյն զօրուԹիւն, և զամենայն զնեղքս բռնակիզեր և շրջեր ծախելով և փաղաղելով զոսկերս իմ, այնպէս մինչ զի ոչ կարել զբռնակիզուԹիւնն զայն բերել։

Երդ եԹէ որ ծիծաղեալն լինէր և կատակեալ, յորժամ խորհեցաւ լսել ընդ այնպիսի տանջանաւք անկաւ, զրոմ ԹողուԹեան արժանի լինիցիմք մեք որ այնպիսի ինչ և ոչ երբէք կրեցաք, եԹէ յաղագս ոմանց պղերգուԹեանն կարձամտելով ՚ի վարդապետուԹենէս ՚ի բաց կայցեմք որ առ նոսա է, և մանաւանդ յորժամ այսքան են որք հային ՚ի բանս։ Օ այս ասեմ ոչ զիս ինքն միսիԹարելով և օխտիելով. վասն զի հաւանեցուցի զիմ զանձնս յորքան եմ կենդանի և կամք լիցին այ ՚ի մերձակայ կեանս զիս յերկարել, զվարդապետուԹիս զայսոսիկ լցից, եԹէ հայեսցի որ և եԹէ ոչ հայեսցի՝ ես զհրամայեալն առնեմ։

Օ ի և ձկնորս յորմէական ՚ի բռանդակ աւուրն զյանցանսն ունայն ձգելով, երեկորին հանդերձեալ ՚ի բաց գնալ բազում անգամ որ ՚ի բոլոր աւուրն փախեաւ ՚ի նմա

նէ ձեւին՝ որպացեալ երեմայ։ Այլ եթէ կամիմք յաղագս միշտ եղելոյ անհանդիպելութեանն ՚ի պատարկութեան կալ մնալ և յամենայն իրաց հեռանալ, բովանդակ կենցաղս մեր կորնչի. և ոչ միայն հոգևորքն, այլ և աշխարհական ամենայն սուզանին։ Օ ի և երկրագործ եթէ կամեսցի յաղագս յոլովակի անհարթութեան օդոյն եղելոյ՝ ՚ի մշակութենէն ՚ի բաց վազել, սովու մեռանիմք ամենեքեան։ Այլ նաւուղիղ վանն յաձախապէս եղելոյ ձմերանային փախչէր ՚ի ծովէ, աննաւելի մեզ լինէին խորքն և անպիտանք, և որ անտի կեանքն էին հեռանային։ Վիտեալով զայս ամենայն եթէ միանգամ կամ երկիցս և եթէ յոլովակի վրիպեացեն, ՚ի վախճանին դարձեալ գնային գործոյ բուռն հարկանէն, և ՚ի միում տարւոջ զբնաւ ժամանակին զտուգանսն ապրեցուցանեն։ Այլ վաճառական յոլով նաւաբեկութեանց բազում անգամ համբերելով՝ ոչ ՚ի բաց կայ ՚ի նաւահանգստութենէն, այլ և զնաւն ՚ի խոնարհ ձգէ, և նաւավարս ՚ի վարձու ունի, և ինչս փոխ առնուլով գնացին իրացն բուռն հարկանէ, թէպէտ և հանդերձեալն անյայտ իցէ։ Այլ իւրաքանչիւր ոք յոր ինչ և միսիցին ՚ի գործ, նոյնպէս առնել սովորեցին։

Այդ եթէ միակ և վաճառական այնքան փութով վարին յաշխարհականս որոց անյայտ է առաջնիկայն, մեք եթէ ասիցեմք և ոչ ոք լուիցէ և վազվազակի ՚ի բաց հեռանայցեմք, զմի ներքուստ թողութեան ունիցիմք այնուհետև, զինչ պատասխանիս։ Այլ սակայն նոցա ՚ի վրիպանսն ոչ ոք է որ զտուգանսն միսիմարէ։ Այլ մեք որ ասեմքս և խրատեմք, ոչ այնպէս. այլ թէ և արհամարհեսս զերեսն ՚ի լսողն՝ և ոչ ընդունիցի, և ոչ զպտուղ հնազանդութեանն բերիցէ, դու զվարձ խորհրդականութեանն ընդունիս յայլ, և այնքան առնուս հատուցումն ՚ի տունդպանէն նորա՝ որքան ընդունիցիր որ եթէ հնազանդեալ էր, զի զքոյն զամենայն լցեր։ Հաւանեցուցանել զլսողսն ոչ եմք պարտականք, այլ խորհրդակից եւեթ լինել. վասն զի պատուիրէն մեր է, իսկ հաւանեցն նոցա։ Այլ զոր օրինակ մեք եթէ ոչ պատուիրիցեմք, թէ և բիւր ինչ ուղղութիւնս առնիցեն նոքա, վարձն նոցին միայն առաջի կայ, բայց մեզ ինչ ոչ է շահ, զի ոչ եղեաք խորհրդակիցք խրատուն. նոյնպէս և

եթէ մեք խրատիցեմք և նոքա ոչ հայիցին, զամենայն զտանջանսն նոքա ընդունին, և մեզ ոչ ինչ լինիցին մեղադրութիւնք, այլ և յոլով ևս հատուցմունք վարձուց յայ, զի զամեն զամենայն լցաք։ Զբկանել և եթէ հրամայիմք զաթծաթձն ի սեղանատոս. ասա և խրատեա։ Ոչ լսէ, ասէ։ Զայլ դու զվարձն ունիս կատարելապէս. մի յառաջապոյն ի բաց կացցես, մինչև հաւանեցուսցես, մինչդեռ կենդանի ես. վախճան քեզ լիցի խորհըրդակցութեանն հնազանդութիւն որ զիսրատն ընդունի։

Սատանայ հակառակ փրկութեան մերոյ ընթանայ. ոչ ինչ ինքն շահի, այլ և մեծամեծ ևս վնասի ի փութոյն յայնմանէ. և սակայն այնքան ունի մոլութիւն, մինչ զի յոլովակի յանկարելի իրան ձեռնարկել. և գերել կամի ոչ միայն զայնոսիկ զոր վստահանայն իրօք ընկձել և խոտորեցուցանել, այլ և զամենեսեան։ Ոչ ի բաց եկայ ի Յովբայ զամենայն շարժելով և հանդարտելով կործանել զնա, և ոչ հրաժարէր ամենևին չար գնն այն պիղծ և ամենագարշ. և այն զի ամ այնքան յայտներ զարդարոյն այնորիկ զառաքինութիւն։ Ոչ արդեօք ամաչիցեմք շառագունիցեմք, սատա ինձ, եթէ սատանայ ոչ հրաժարէ երբեք ի մերմէ կորստենէն, այլ միշտ յուսալով այնքան մարանչի, իսկ մեք յետ բարւոյն փրկութենէ հրաժարիցեմք։ Այս նման նախ քան զփորձութիւնսն ի մարտն ի բաց կալ էր պարտ և արժան. վասն զի ամ վկայէր արդարոյն։ Այս սակայն ոչ հեռացաւ, այլ ի բազում մոլութենէն որ հակառակ մեզ է, և զինի այ վկայութեանն յուսացաւ յաղթել առաքինւոյն այնմիկ յայնժամ։ Այոյց մեզ ոչ ինչ է որ յանկուսութիւն արկանէ, և սակայն ի բաց կամք։ Սատանայ այ խափանելոյն ոչ հեռանայ ի մերմէ կուռոյն. զու ի բաց վազես զի ամ զքեզ յորդորէ և առնէ յօգնականութիւն անկանելոյն։ Ոտաւ սատանայ յայ որ ասէր. "Զայր արդար ձչմարիտ ամ ապաշտ, հեռացեալ յամենայն չարեաց,,. և եթէ ոչ ոք իբրև զնա ի վերայ երկրի. և զինի այնքանեաց և այնպիսեաց գաւանութեանցն կայր մնայր ասելով՝ Թերևս արդեօք յանձախութեամբ և մեծութեամբ ի վերայ ածելովք չարեօք կարացիր նմա յաղթել, և զմեծ զաշտարակն զայն կործանել ցիր։

Օ՛ինչ լինիցի մեզ թողութիւն, որ պատասխանիք, եթէ այնքան չար դիւին հակառակ մեզ վարեցեալ մոլորութեամբ՝ մեք և ոչ յոլով ինչ վասն փութոյ՝ ի փրկութիւն եղեալց մերոց՝ ի ներքս բերիցեմք, և այն զի ՚ծծ մեզ մնրտակից և օգնական լինի։ Յորժամ տեսանիցես խիստ և ստահակ զեղբայրն և ոչ հայելի ասացելոցն, թերևս ժամնանակաւ կարասցես համոզանեցուցանել։ Յնոյնպէս և Պաւղոս հրամայեաց. "Օգտակի տեառն ոչ է պարտ և արժան կռուել. այլ հանդարտ լինել առ ամենեսեան, խրատել զհակառակամարտսն, թերևս տացէ երբեք նոցա ՚ծծ ապաշաւանս ՚ի դիտութիւն ճշմարտութեան,,։

Ո՛չ տեսանէք զհարս զի բազում անգամ որդւոց նոցա ՚ի բաց հրաժարեցելոց մերձնալին արտասուէն, ողբան համբուրեն, որ ինչ իւրեանցն է գամ ՚ի ներքս բերէն մինչև ՚ի վերջին շունչն։ Օ՛նոյն և դու յաղագս եղբարցն արա. թէպէտ և նոքա ողբալով և արտասուելով ոչ զհիանդութիւնն ՚ի բաց վարեն, և ոչ որ ՚ի վերոյ եկեալ է մանն՝ անդրէն դարձուցանել կարեն, բայց զանձն հրաժարեալ ժուժկալութեամբ և համբերելով և յամելով կարես բազում անգամ ՚ի ձեռն ողբոցն ՚ի վեր ձգել և կանգնել։ Խրատեցեր և ոչ լուաւ, արտասուեա և տես յոլովակի, հառաչեա սակաւ ինչ, զի պատկառելով ՚ի քումմէ խնամակալութենէն՝ դարձցի ՚ի փրկութիւն։

Այլ զինչ պէտք են ասել յաղագս որոյ զվէրն բազում խրատուցն վերստին ստանան զինքեանս։ Օ՛ի և ոչք զանբժշկականն ախտանան, ոչ ՚ի բաց կալ է պարտ և արժան ծուլանալ, թէպէտ և յառաջագոյն դիտիցեմք յայտնապէս եթէ ՚ի փոյթ մեր վայելելով ոչ ինչ առաւել շահիցեն։ Այլ եթէ անհաւատալի ինչ ձեզ բանս այս թուեսցի, զորս Քրիստոս արար և ասաց՝ այնմ հաւանեսցուք. մեք զհանդերձեալն անգիտանամք. վասն որոյ ոչ յամառել կարեմք յաղագս լսողացն՝ եթէ հաւանեսցին և եթէ անհաւանիցին մերում ասացելոցն։

Այլ Քրիստոս զամենայն գիտելով յայտնապէս ոչ նաւաղեցաւ, թէպէտ և ոչ ոք լսէր ուղղել. նա մինչև ՚ի վախճան գիտէր զՅուդաս թէ ոչ էր ՚ի բայ կալոյ ՚ի մնանելոյն, և ոչ կամեաւ խրատելով և պատուիրելով

բարեգործութեամբք, սպառնալեօք, ամենայն օրինակաւ վարդապետութեանն խորշեցուցանել զնա ՚ի մատնիչն լինելոյ, և յաճախապէս ընդդէմ հարկանելր իբրև սանձօք ոմանք: Ոմանք զպն առնէր խրատելով ըզմէզ. զի թէպետ և կանխաւ գիտիցէ եթէ ոչ հաւանեսին եղբարքն, զամենայն որ առ ՚ի մէնջն է՝ ընութեամբ, որպէս զի աւարտեալ լիցի մէզ խորհրդակցութեն վարձ:

Եւ տես զիարդ յաճախապէս զնա իմաստութեամբ պատկառեցուցանէր. "Մի ոմն ՚ի ձէնջ մնանեսցէ զիս,,: և դարձեալ. "Ձէ յաղագս ամենեցուն ձեր ասեմ, ես գիտեմ զորս ընտրեցի, և մինդ ՚ի ձէնջ սատանայ է,,: Եւ ներէր զամենեսեան ՚ի արտմութիւն անկանել. որպէս զի մի յայտ յուցանիցէ զմատնիչն, և անամեթագոյն առնիցէ յանդիմանութեանն յայտնութեամբ: Եւ զի յայլոն տրտմութիւն և երկիւղ արկին ասացեալքն, որք ոչ ինչ գիտէին զինքեանց չարութիւն, լուր զիարդ իւրաքանչիւր որ տագնապելով ասէր. "Ցէր, միթէ ե՞ս եմ,,: Ձէ բանիւն միայն, այլ և իրօքն խրատէր զնա: Օ՛ի և զիւր զմարդասիրութիւնն եցոյց քազում անգամ ամենայնիւ զբօրոտս սրբելով, զգեա հալածելով, զհիւանդս բժշկելով, զանդամալոյծս պնդելով, զմեռեալս յարուցանելով. զամենեսեան բարեգործեաց, պատժեաց և ոչ զոք. յաճախապէս ասէր. "Ձէ եկի զի դատեցից զաշխարհ,,: Եւ զի մի կարծիցէ Յուդաս թէ բարի միայն գիտէր գործել Քրիստոս, և զայնր իմն զման ուսուցանէր նմա, զոր եթէ և տանջել կարէ և պատժել զմեզուցեալն:

Եւ տես զիարդ յայտնապէս այսոքիւք խրատեաց, որպէս նմա պատշաճ էր. ՚ի մարդկանէ և ոչ զոք պատժել և ոչ տանջել ներեաց. և զի ուսցի զտանջողական զօրութիւն նորա աշակերտն: Օ՛ի թէ էր պատժեալ, թուէր ընդդիմանալ ինքեան որ ասէրն՝ "Ձէ եկի զի դատեցից զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ,,: Վասն ձեալ եթէ ոչ էր տանջեալ զոք, առանց ուղղելոյ արդեօք կայր մեայր աշակերտն ոչ ուսուցանելով նորա ըզտանջողական զօրութիւնն: Եւ ապա զի՞նչ լինիցի. զի և զաշակերտն զարհուրեցուցանիցէ, և մի արհամարհեսցէ ՚ի հանդարտն լինել նորա, և ՚ի մարդկանէ մի ոք հարցի և մի ընդ տանջանօք և պատժովք անկցի, ՚ի թէ զե-

նուիրն յուսանէ զգօրութիւնն Քրիստոս ասելով. "Մի՛ ևս եղիցի՛ ի քեզ պատուհաս,,. և սակ բանիւն գօսացոյց զնա: Իւրոյ ամենայն մարդկան միասն միացին. և նա զիւր զօրութիւնն յուսանէր անկոյս կալեալ զպատիժսն: Նա աշակերտին Թէ էր հայեցեալ, մեծապէս արդեօք՛ ի պատժոյն յայնցանէ շահէր զմարդասիրութիւնն. բայց սակայն և ոչ այնպէս ուղղեցաւ: Իսկ ած գիտեալ ոչ զայն միայն՝ այլ և զկնի այնորիկ յոյժ մեծագոյն արար. յորժամ՝ ի վերայ չոգան հանդերձ սրօք և բրօք, զամենեսեան զնոսա կուրացոյց. վասն զի ասելն "զո՛ խնդրէք,, այնր յայտնութիւն էր զի ասացեալ էր Յուդայի յաձախապէս "զինչ կամիք տալ ինձ զի մատնեցից զնա ձեզ,,. կամելով և զԱրեսյան հաւանեցուցանելով և զնա՝ եթէ կամք դայր՛ ի չարչարանս. ոչ նոքա չարագործութիւնն կարաց յաղթել նմա. նոյն իսկ մատնիչն մինչդեռ ընդ ամենեսեան դայր, ասէ. "Օ՛ն խնդրէք,: Իւնպէս ոչ գիտեր զոր հանդերձեալն էր մատնել: Օ՛ի կուրացոյց զաչս նորա. և ոչ զայս միայն, այլ և յոյն ևս ընկեաց նովին ձայնիւն:

Նա զի ոչ այն հանդարտագոյնս ինչ արար զնոսա, և ոչ զսիրեցն զայն՛ ի մատնելոյն՛ ի բաց կացոյց, տես զիարդ պատկառելով յանամօթին յանձն մերձենայր և խօսեր բանս, որ բաւական էր և զքարեղէնն միտս կակղացուցանել: Օ՛ի յորժամ դիմեացն զնա համբուրել, զինչ ասէր. "Յուդաս, համբուրելով զորդի մարդոյ մատնես,: Նա ոչ այնու ամաչէր՛ ի մատնութէ ձևոյն: Օ՛ այնոսիկ ասէր մերձենալով և յիշեցուցանելով զառաջին ընդունելութիւնն: Նա սակայն այնքան արար Քրիստոս և ասաց, ոչ ինչ եղև լաւագոյն նա. ոչ յաղագս խրատողին ակարութեան, այլ վասն իւրոյ չարութեանն. բայց Քրիստոս գիտելով զայն ամենայն յառաջագոյն, ոչ նուազեաց՛ ի սկզբանէ մինչ՛ ի կատարած որ ինչ յինքեանէ էր զամենայն յուսանել:

Օ՛ի մեք Թէպետ և գիտիցեմք, յաձախապէս ևս միշտ հեղգացեալս զեղբարսն մեր ուղղել պարտիմք, Թէպետ և ոչ ինչ՛ ի խորհրդակցութենէն լինիցի շահ: Քանզի եթէ որ գիտեր զվախճանն այսպիսի լինելոյ յաղագս այնորիկ որ ոչն էր պատուհաս շահելոյ՛ ինորա խրատուէն՝ այնքան վարեցաւ խնամակալութեամբ, որմէ

Թողութեան արժանի լինիցիմք մեք յոյժ՝ ոչ զեւս իրացն գիտելով այսպէս յաղագս եղբարցն փրկութեան հեղգացեալք՝ եթէ առաջինն և երկրորդ խորհրդակցութեամբքն զնոսա լքանեմք։ Ասողութիւք զինի առասելոյն ամենեցուն, որ ըստ մեզ իցէն՝ զմառ ածցուք, զի հանապազօր ՚ած ընդ մեզ խօսել ՚ի ձեռն մարգարէից և առաքելոց յոյժ ստուգագանեմք, և սակայն ոչ ՚ի բաց կայ ՚ի խօսելոյ և յաղաչելոյ միշտ զբացերատանակեալ և զոք ոչս հայիմք։ Այս գոչէ Պաւղոս ասելով. "Յաղագս Քրիստոսի պատգամաւորիմք, որպէս թէ ՚ած աղաչելով ՚ի ձեռն մեր, վասն Քրիստոսի հաշտեցարուք ընդ ՚ած,,։

Այս եթէ պարտ է զարմանալի ինչ ասել, ոչ այնքան գովութեանց է արժանաւոր որ գիտէն՝ եթէ ամենայն իրօք հաւանեսցի ընդունող խորհրդակցութեանն, և խրատ զնա որպէս յոլովակին ասիցէ և վերիպելով, և ոչ այնպէս ՚ի բաց կայ։ Այլ զի պարտ և արժան է ոչ երբէք ՚ի բաց կալ յանկելոյն, թէպէտ և կանխաւ գիտիցեմք թէ ոչ հաւանին, բաւականապէս ցուցաւ։ Պարտ է այսու հետև ՚ի փափկացելոյն ՚ի բամբասանս երթալ. զի մինչ դեռ կայ միայ սրտմտութիւնս այս, և զվէր արբեցութեանն զոր յարբեցողացն Հոգիս գործեաց սաստանայ, տալ զդեղն ՚ի վերայ դնելոյ պատշաճ։

Արեկ զՊաւղոս ցուցաք որ ասէրն. "Եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, եթէ զինչ և առնիցէք, զամենայն ՚ի փառս ՚ած արասջիք,,։ Այսօր զՊաւղոս ցուցցուք ձեզ ոչ պատուիրելով միայն և խորհրդակից լինելով հեռանալ ՚ի փափկութենէ, այլ զի պատժէ և զ՚ պատուհասակ որք փափկութեամբն կեցցեն։ Քանզի ընչեղինն և Ղազարու և երկոցուն պատմութիւնն միմեանց դիպեալ, ոչ այլ ինչ՝ բայց եթէ զայսցանէ. այլ մանաւանդ մի վարկպարազի զայս ապացուք։ "Էր ոմն էր մեծատուն որ զգենոյր ծիրանի և բեհեզ, զուարճանալով հանապազօր պայծառապէս. և աղքատ ոմն որոյ անուն էր Ղազարոս, անկեալ կայր առ դրունս նորա վիրաւորեալ, և փափաքեալ փըրանալ անկելոյն ՚ի սեղանոյ փարթամին. այլ և շունք և եկեալ լիզուին զվէրս նորա,,։ Այն էր ազագաւ առակօք խօսէր, և թէ ընդէր զանձն յատակացն լուծանէր, և զինչ էր առակ և որ այսպիսիք իցեն, յայլ ժամանակ շտեմնարանեսցուք զայսոսիկ, զի մի ՚ի փութանալն բանիս հեռանայցեմք։

Բայց զայն առ այժմ ասասցուք, ո՛չ յաւետարանչացն է որ զառակս զայս ասացեալ՝ ի Քրիստոսէ գրեալ։ Այլ ոմ է. Ոչ ուկաս միայն, վասն զի զայս հարկաւոր է գիտել, զի յասացելոցն զոմանս չորեքեան ասացին և զոմանս առանձինն իւրաքանչիւր ոք։ Ոման էր արդեօք. զի և այլոյն մեզ հարկաւորք լինին ընթերցուածքն, և զի միաբանութեանն ընտրութիւն երևեսցի։ Ոմանզի թէ ամենեցուն բովանդակ էր ասացեալ, ոչ արդեօք հանդերձ փութով զամենեցունն ընդունէաք, բաւական լեալ միոյն՝ ի վարդապետել զբանն. և եթէ բոլորեցունց զամենայն այլափոխելով ասացեալ էր, ոչ ևս ձայնակցութեանն երևէր ընտրութիւն. յաղագս այսորիկ և հաւատարապէս ամենեքեան յոլովս գրեցին, և առանձինն իւրաքանչիւր ոք։

Օ՛ինչ ասէ Քրիստոս։ Այր ոմն էր ընչեղ, և բազում՛ չարութեան կենակից էր, և ոչ զմի՝ ի թշուառութեանց զգայր, այլ ամենայն նմա իբրև աղբերաց հոսեալ լինէր։ Այս զի ոչ՝ ի յանկարծեայ ինչ հանդիպէր նմա, ոչ տրտմութեան պատճառք և ոչ անհարթութեան կենաց, ինքն զայսոսիկ զեկոյց ասելով թէ հանապազօր ուրախանայր։ Այս զի չարութեան էր կենակից, յայտնի է և՝ ի վախճանէն զոր վճռակեցաւն, և նախ քան զկատարած յաղքատին անտես եղելոյ. զի ոչ նմա միայն որ՝ ի դրանն էր, այլ և ոչ այլում ումեք ողորմէր, նոյն իսկ ինքն էոյց։ Վասզի որ՝ ի դրանն յորժամ ընկճեցեալ լինէր, և առաջի աչաց զնա տեսանել հարկ լինէր, եթէ նմա ոչ ողորմեցաւ, յո՛վ որ՝ ի հանդերձելոյն խոնարհէր երբեք։

Բայց ոչ ինչ կրեաց այնպիսի, այլ և քան զայն որ ոչ յայ երկնչէր և ոչ՝ ի մարդկանէ պատկառէր՝ խիստ և անողորմ եղև։ Օ՛ր զնա պրուոյն հանդիպութիւնքն յաճախակի, թէպէտ և իսկ էր և վայրենամիտ, տալ զչորհն հաւանեցոյց և՝ ի պաղատանսն խոնարհեցոյց. բայց զսա ոչ կարաց նուաստացուցանել յաղքատին օգնականութիւն։ Ոչ՝ եպէտ և ոչ զոյգ էին հայցուածքն, այլ այս յայժ իրաւացի և դիւրագոյն. վասն զի նա հակառակ թշնամացն զնա թախանձէր, իսկ սա պաղատէր լուծանել զսոքա, և մի՛ անտես լինելով կորնչել. նա թախանձէր աղաչելով, և սա հանապազօր երևէր լուռ

թեամբ։ Յաւէտ այս բաւական է և առաւել կակղացուցանել. քանզի յորժամ թախանձիմք, յոլովակի զայրանամք. իսկ յորժամ զկարօտեալս օգնականութեամբ տեսանեմք՝ ի լուութեան կացեալ միշտ և ոչ դժուարեալ, այլ երևեալս ևեթ մեզ, թէպէտ և քան զքարինս իցեմք անզգայագոյնք, ՚ի ձևոյն առաւելութենէ պատկառեալք խոնարհիմք ՚ի նոսա։

Այլ միւս ևս և այսոքիկ ոչ ինչ նուազ էր աստանօր. զի և նոյն դէմքն ողորմելի էին աղքատին, սովոյ և երկայն հիւանդութեամբ հարշեալ. այլ սակայն ոչ ինչ յայտնեալ զանընդելին զայն կակղացոյց։ Այլ առաջին յարութեան նորա խակութիւնն, առաւելութիւն անմարդութեանն զոր ունէր. վասն զի ոչ է հաւասար՝ որ աղքատութեամբն կեայ և պաղատիցի՝ ոչ օգնել նմա, և այն զի յայնպիսի փափկութիւն սնեալը, և զայլս ՚ի սովոյ մաշեալ անտես առնէր։ Դարձեալ և ոչ է զոյգ միանգամ կամ երկիցս տեսանել զաղքատն և զանցառնել, և հանապազօր տեսանելով և յողորմութիւն և ՚ի մարդասիրութիւն ոչ ընդոստանել։ Այլ սակայն մին յարութեամբն կելով և անմարդութեամբ յամենայն բարեկեցութիւն վայելէր. իսկ արդարն և առաքինութեամբ էր լցեալ և ՚ի վերջին վտանգն էր։ Այս զի արդար էր Ղազարոս, աստանօր դարձեալ վախճանեցոյց և նախ քան զկատարածն աղքատութեանն համբերութիւն։ Ոչ թուեսցի ձեզ արդեօք զմերձակայ իրս տեսանել լցեալ ընչեղիս զշահն զոր առանց մրրկայ ունէր ամբարեալ. այլ մի ինչ զարհուրիցիս, քանզի ՚ի նա՝ սաբեկութիւնն փութայր յաղագս ոչ կամելոյ դնել զբեռն հանդերձ երկիւղածութեամբ։

Այ խորժէս եթէ և միւս յարութիւն զնորա ասացից քեզ՝ զհանապազօր փափկանալն։ Օ՛ի և այն յարութիւն էր, ոչ այժմ ևեթ յորժամ այսքան պահանջիմք իմաստասիրութիւն, այլ և ՚ի սկզբան ՚ի հնումն յորժամ այսքանուոյ իմաստասիրութեան ցոյցք չէին։ Այր զինչ յաղագս այսոցիկ ասէ մարգարէն. “Ով այ ոլքան ՚ի յար օրն, որ մերձենան և հպին ՚ի շաբաթս սուտութեան,,։ Այս զինչ իցէ՝ որ հպին ՚ի շաբաթս սուտ թեան։ Երեսք կարծեն՝ թէ ՚ի դատարկութիւն արուեալ նոցա շաբաթն. բայց ոչ է այն այսմ պատճառք,

այլ զի յաշխարհականացն զինքեանս ի բաց տանելով՝ զպատասխանն զամենայն ի հոգևորան ձախելով գործեցեն։ Եւ զի ոչ անգործութեան է շաբաթն, այլ հոգևոր գործոց պատճառ, ի նոցուն իսկ յիրացն քաջայայտ է. քանզի քահանայն կրկին գործ ի յայնմ առնէր, հանապազօր մեկնակ ընծայելով զըղհան՝ կրկնակի պատարագել հրամայի այն օր։ Եւ եթէ պարզաբար անգործութիւն էր, նախ քան այլոց՝ քահանային պարտ և արժան էր դատարկանալ։ Եւ զի Հրեայքն յաշխարհական իրացն ի բաց վճարեալք՝ ի հոգևորան ոչ ինչ հայէին, յողջախոհութիւն և ի հեզութիւն և լսել ածային բանից, այլ հակառակնմին առնէին, երբ գիծանէին կերակրովք, արբեցութիւք զեղխեալք փափկանային, լուր զիարդ վնասս բամբասեաց մարգարէն։ Վասնզի ասելով՝ "Ողբ մերձենան ի շաբաթս ոտութեան,,, ի վերայ էած. "Ողբ ննջեն ի փղոսկրեայ գահոյսն և փափկանան յանկողինս իւրեանց. ուտեն ուլս ի հօտից և որթս դիւեացիկս յանդոյ. ըմպեն պարզեալ գինի, և անոյշ իւղովք օծանին,,։

Սկսեալսը զշաբաթն, զի ի չարութենէն ազատեսցես զանձինդ. և դու նովաւ առաւել ևս գործես։ Օ՛ինչ արդեօք լինիցի քան զզեղխութիւնն զայն վատթարագոյն՝ ի վերայ փղոսկրեայ մահճայ ննջել։ Այլ մեղք և հեշտութիւն ունին, որպիսի ինչ արբեցութիւն և աւելաստացութիւն. իսկ ի փղոսկրեայ մահիճն ննջել զի՞ր հեշտութիւն ունիցի, զինչ միսիթարութիւն. միթէ կամի՞ն և քաղցը զբօսնն գործիցէ մահճայն գեղեցկութիւնն։ Ծանր և դժուարին են իրքն քան զամենայն. զի յորժամ զմտաւ ածիցես եթէ քո ի փղոսկրեայ մահիճն ննջելով՝ այլ ոք և ոչ զհացին վայելուշն առատապէս ունիցի, սպառանիկ զբեզ ի խիղճ մտացդ, ի վերայ յառնելով ոսոխ լինի անհարթութեանն այսմիկ։ Եւ եթէ ի փղոսկրեայ մահիճն ննջել բամբասանք են, յորժամ և արծաթով ևս շուրջ հյեն զգեցեալք՝ զինչ ունիցիմք պատասխանիս։

Կամիս զմահճայ գեղեցկութիւն տեսանել. ես քեզ այժմ ցուցանեմ, ոչ ղառամկի ուրուք և ոչ զղինուորի, այլ զթագաւորական գահոյից զբաջալայեալսն։ Անդ պետ և պատուասէր իցես քան զամենայն ոք՝ քաջ գի-

տեմ, զի քան զԹագաւորին գահոյս ոչ ախորժեցիս ունել վայելչագոյնս, և ևս մեծագոյն այսմ, զի ոչ որպէս Թագաւորի գեղ իցէ, այլ առաքինոյն և որ քան զամենայն վեհագոյնն էր, այլ մինչ ցայժմ ևս երգեցեալ ամենայն ուրեք յաշխարհի ցուցանեմք քեզ. զմահիճս զերանելւոյն ՚ի ԹաւԹայ ասեմ: Սրպիսիք են մահիճքն. ոչ արծաԹով և ոչ ոսկւով, այլ արտասուօք և խոստովանուԹեամբ ամենայն ուստեք զարդարեալ. և զայսոսիկ ինքն ասէ, այսպէս իմն ձայնելով. "Լուացից զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ Թացից,,. զի իբրև զմարգարիտ արտասուք այնպիսիք պայծառանան ամենայն ուստեք:

Այլ դիտեա ինձ զայծասէր զանձն զայն, վասն զի ՚ի տունջեան յոլով հոգք իշխանաց, դասապետաց, ազանց, ռամկաց, զօրականաց, պատերազմողաց, խաղաղասիԹեան, քաղաքական իրաց և որ ըստ նմանն էին, հեռաւորաց և մերձաւորաց, նեղչին զնա և ՚ի բաց առնչին զպարապսին. յորում ամենեքեան ՚ի ննջելն ծախեմք զժամն, նա ՚ի խոստովանուԹիւնն և յաղօԹսն և յարտասուս անցուցանէր: Այլ զայն ոչ զմի գիշեր ևԹէ առնէր և դադարեցուցանէր զարտասուն, այլ զամենայն գիշերս զնոյն առնէր. քանզի "լուացից զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ Թացից,,, զյորդուԹիւն արտասուացն երևեցուցանէր և զանընդհատուԹիւն: Յորժամ ամենեքեան խաղաղանային և ՚ի հանգստուԹեան կային, միայն նա առ Աստուած ՚ի յայն ժամ պաղատէր, և մերձ լինէր անքուն ակն առ ողորմածն և սպասեալ և որ գիւրն խոստովանէր զչարիսն: Զ.յնպիսի մահիճս և դու պատրաստեա: Զանգի արծաԹեղ շուրջ պատեալ՝ մարգկան նախանձ յարուցանէ և զարկուԹիւն ՚ի վերուստ բորբոքէ. իսկ այնպիսի արտասուս որպէս զՀաւԹին և զնոյն ինքն զգեհենին կրեն շինուցանել զՀուդն: Զ.խորժեա, և ես ցուցից քեզ զմահիճս զՅակովբայն, որ զպատակն ունէր իւր անկողին և քար ՚ի ներքոյ գլխոյն, յաղագս որոյ և զնմանալի զքարն եառես և զանդուխան զայնոսիկ, ընդ որս երանէին և իջանէին հրեշտակքն:

Այսպիսի զմահիճս զմտաւ ածցուք զի նոյնպիսիս տեսանիցեմք երազս: Զայս ևԹէ յարծաԹեղէն մահիճն

անկեալ կայցեմք, ոչ միայն և ոչ հեշտութեան պատուոյ շահիցեմք, այլ և տրտմութեաց ևս համեցեմք։ Քանզի յորժամ զնաւս ածիցես Թէ՛ի վերջին բքին՝ի մէջ գիշերի զու նկղիս՝ի մահիճս, իսկ աղքատն՝ի վերայ ապառնի անկեալ կայցէ՝ի նախադրունս բաղանեացն ցօղնով շուրջ ծածկեալ, սառուցեալ՝ի բքոյն, վտանգեալ՝ի սովոյն, Լեպիտ և քան զամենեսեան քարեզկն ի ցես՝ քաջ գիտեմ զի սոգտանես զքեզ ինքն. զի զու և առաւել քան զպետան փափկանաս, իսկ նա և ոչ՝ի պետոն վայելեալ ունի։ Այլ ոք, ասէ, զինուորեալ շահիցէ յաշխարհական իրս։

Ո՛չ զինուոր ես Հոգևոր. զինուոր յապառնի մահիճս ոչ նկղիչ՝ի փղոսկրեայ, այլ՝ի վերայ յատակի. ոչ օճանի իւղովք զքանզի բազանոցայն և ապականելոյն է այնպիսի փոյթ, որք՝ի խաղս անդ սատակեն զոգիսն. բայց քեզ ոչ զիւզոց Հոտ, այլ զառաքինուէն պարտ և արժան է բուրել։ Այլ ինչ քան զանձն զոյն անմաքուր լինիցի, յորժամ մաքրինն զապառնիսն ունիցի զանու շահոտութիւնս. քանզի՝ի ներքսն ապականութէ և անմաքրութէ օրինակ՝ մարմնոյ և հանդերձիցն անուշահոտութիւն լինի։ Ո՛չ յորժամ մերձեցեալ սատանայ խորտակիցէ զՀոգւոյն զօրութիւնս և բանզում վնասիւք ընու, յապառժամ և՝ի մարմնի նորին զապականութէ զաղտ տպաւորէ։ Ո՛ր օրինակ խլամբք և լրձամբք միշտ շաղախելով զՀանդերձան և զեռան և զդեմնն գարշեցուցանէ որ՝ի յուրգացն յաճախապէս Հոսի յինքեան շաղախելով, նոյնպէս և Հոգի չար Հոսանօքն այնքիւք զվատթարութիւնն՝ի մարմինն իւր ընդունի։ Այսան զի՛ր առաքինի կարծիցի և պիտանացու ինչ օրք զնուզոյն Հոտ բուրեն յինքեանց։ Խուրեացես զՀոգևորական անուշահոտութիւնն քո անձինդ, զի և զքեզ և զմերձաւորսն քո յաւէտ օգտեսցես։

Ո՛չ ոչ ինչ և ոչ ևս չար քան զփափկութիւնն։ Այս զինչ դարձեալ յաղագս նորա ասէ Աստուած. «Կնիրա՝ցայ ստուարացաւ և անպուշեաց զսիրեցեալն»։ Այս ոչ ասաց Թէ՛ի բաց եկաց. այլ Թէ անպուշեաց զսիրեցեալն, զվատաբարին լինել յայտնեաց մեզ։ Այս զարձեալ այլսւր. «Աստելով և ըմպելով հայեաց՝ի քեզ»։ Ո՛չ այնպէս փափկութիւնն՝ի մուտացումն ածել սովորեաց։

Այլ դու այսուհետև եթէ նահիցես ՚ի սեղան, յիշեսցես զի զկնի ուտելոյն աղօթել պարտ է. այնպէս չափաւորապէս լցցես զորովայնդ, զի մի ծանրացեալ անկարասցիս ծունր կրկնել և առ Ած պաղատել: Եւ տեսանէք զանաստուածս, զկնի մերոյն գարմանոյ յուզեցնաց թիւն արկանեմք և բեռնակիրս առնեմք, և զիւրեանց սպասաւորութիւնն վճարեն. իսկ դու զկնի սեղանոյն առ Ած գործ անպիտան և անպատեհագոյն լինիս, և զիարդ ևս իցես քան զնոյն զէշտ անպատուականագոյն: Այն է՛ր. զի յայնժամ մանաւանդ զուարճն լինել է պարտ և արժան և հսկել, զի յետ սեղանոյն ժամ աղօթից է: Այս որ գոհանայն՝ ոչ սխալակի, այլ սթափ և արթուն լինի: Ի սեղանոյն մի ևս ՚ի մահիճս, այլ յաղօթս երթիցուք, զի մի քան զանաստուածն անբանագոյնք լինիցիմք:

Այլ գիտեմք զի բաղումք ստգտանեն զաստացեալս, որպէս նոր ինչ անկարելի սովորութիւնս ՚ի ներքս ածիցեմք բանիւս: Արդապէս ևս զչար սովորութիւնն բամբասեսցուք, որով և պաշարին: Այլ զի յետ կերակրելոյն և ըմպելոյն ոչ ՚ի քուն և ոչ յանկողինս՝ այլ յաղօթս և յաճապին գրոց ընթերցուածս երթալ պարտ և արժան է, զայս առաւել յայտնագոյն եցոյց Քրիստոս. զի յետ անբաւ բազմութեանն կերակրոց յանապատին ոչ յանկողինս և ոչ ՚ի քուն զնոսա արձակեաց, այլ յաճապին բանից լսելութիւն կոչեաց: Այն զի ոչ զմայլեցուցանելով պատրաստեաց նոցա զորովայնն և ոչ յարբեցութիւնս արկ, այլ ընդ զպէտն՝ ՚ի հոգևոր կերակուրսն էած զնոսա: Այնպէս և մեք արասցուք, այնքան կերիցուք որքան կեանն միայն իցէ, ոչ որքան երգիծանել և ծանրանալ: Այն զի ոչ յաղագս այսորիկ եղեաք և կեամք՝ զի կերիցուք և արբցուք, այլ վասն այսորիկ ուտեմք՝ զի կեցցուք: Եւ կեանն յաղագս ուտելոյն, այլ կերլոյն վասն եղև ուտելն ՚ի սկզբանն. իսկ մեք որպէս թէ այնր աղագաւ եկեալ իցեմք յաշխարհ, այնպէս զբովանդակն յայն ծախեմք:

Այլ զի ուժգնագոյն լինի փափկութեան ամբաստանութիւն, և յաւէտ ըմբռնեսցին որք նովաւն կեան, քեր դարձեալ զբանս ՚ի Ղ աղարոս ածցուք: Այն զի այնպէս յայտնագոյն մեզ բանն լինի և խորհրդակցու-

Թիւնն, յորժամ ոչ քանիւք, այլ և իրօք տեսանիցեմք խրատեալս և պատժեալս ողք շատակերութեանցն պատրապիեին։ Ընդեղն այն՝ քանզի չարութեան էր կենակից և հանապազօր փափկանայր զգենուլ պայծառապես, դժնդակագոյն գործէր զտանջանսն, մեծ զՀուբն բորբոքէր, և անմխիթարելի զդառաստանն առնէր, և անտեսելի զպատիժն։ Իսկ աղքատն անկեալ կայր առ դրանն, և ոչ ինչ դժուարէր և ոչ հայհոյէր. ոչ ինչ այնպիսի ոչ ասաց և ոչ զմտաւ էած։ Զի ուսաւ է այս յայտ. 'ի տանելոյն զնա հրեշտակացն պաշտպանելով 'ի գոգն Ա.բրահամու և 'ի հանգստեանէն։ Զի եթէ լուտացող աք էր լեալ, ոչ այնպիսի պատիւս վայելէր։

Օ՛ի ամենայն աղքատութեանց՝ Ի աղաղու աղքատութիւնն 'ի յայն ժամ յաղթեաց, եցոյց ասելովն՝ թէ ոչ զիշխանն ուսէր որ 'ի սեղանոյն անկանէին։ Զի զի հիւանդութիւնն 'ի նոյն ինքն 'ի չարին ժամանեալ էր աղքատութեանն, և զայս դարձեալ եցոյց ասելովն՝ եթէ շունք զնորա վէրսն լիզուին. այնպէս ախտացեալ, մինչ զի և ոչ զշունսն կարէր հալածել, այլ ընդհակառակ մերձեալ կայր. 'ի գալն նոցա տեսանէր, բայց օգնել ինչ ինքեան ոչ կարէր. այնպէս լուծեալ էին անդամք նորա ծնգեալ հիւանդութեամբք, և այնպէս հաշեալ էր փորձութեամբք։

Տեսեր զախտաժէտութիւն սորա. պատանդէր զնորա մարմինն։ Իբրև յայն իմն էր եկեալ, զի վկայեսցէ այլոց բարեացն՝ այնպէս 'ի դրանն ընկեցեալ կայր. այնքան ևեթ կեայր՝ որքան զգալ զևւր չարիսն միայն կարէր։ Նաւահանգստին նաւաբեկութեանց համբերեր. մերձ էր աղբիւրն, և դժնդակ ծարաւով վշտանայր անձն։ Ցաջից ինչ նորագոյնս առ այսոքիւք զչարն։ Ոչ ոք ներ յայլ աք հայել՝ Ի աղաղոս։ Ի ատն զի մեք թէպետ և բիւր չարիս կրեցեմք, այլ ունիմք բաւական մխիթարութիւն 'ի նա հայելով և 'ի բազում սիրտիանս վայելեմք. քանզի հաւատարդոյս գտանել իւրեանց բարեացն և կամ չարեացն՝ յաւէտ բերէ վստահելոյն զմխիթարութիւն։ Իսկ նա ոչ զոք ունէր տեսանել, որ այնպէս ընդ նմա չարչարեցեալ։

Զի և միւս ևս ասել առ այսոքիւք, զի և ոչ յաղագս չարութեանն խնամատարիրել կարէր, այլ յայմ աշ-

խարհի վերձակայ իրան կալածը փակեալ. վասն զի նախ քան զչնորհն էր։ Իսկ եթէ այժմ զինի այսքան ծածկի. տալեան քաղցրալեան յուսոյ, և որ կանն և մնան յանցաւորացն պատիժք անդ, և պատրաստեալ բարեացն ոչք ուղղին զառաքինութիւն, այնպէս կարճամտելով ոմանք տաղտկալով անկեալ կան, զի և ոչ այնպիսի յուսով յօրինեն զառաքինութիւն, զինչ կրել արդեօք պարտ էր նմա՝ որ յայսպիսի հաստատութենէ վերիպեալ էր։ Օ՛ի նա ոչ ինչ ուրեք այսպիսի իմանալ կարէր այլ միայն և՛ի մերձակայ աշխարհս, և ոչ՛ի ժամանակի յայսմիկ՛ի յաւսմունս ուրեք չոգաւ։

Իսկ և միւս ևս առ այսոքիւք, զի և փառք նորա բամբասելք լինէին՛ի մարդկանէ, և մանաւանդ յանմտացն։ Վասնզի սովորեցին բազումք ասել. սա եթէ այ սիրելի էր, ոչ արդեօք տեսանէր յայսքան յաղքատութեան և՛ի չարիս զսա։ Իսկ յայսիսի իմն և Յովբայ և Պաւղոսի Հանդիպէր։ Վասնզի նմա ասէին. “Ա՛ի յալվակի քեզ խաչեցեալ եղեն աշխատութեամբ. զգօրութիւն քանից ոմ կարասցէ քեզ բերել։ Օ՛ի եթէ զսա միթարեցեր զյոլովս, և ծնգայ տկարացելոց եղեր այժ, այժմ եկին քեզ ցաւք. իսկ արդ երկիւղ քո ոչ է յանզգամութենէ,,։ Իսկ զոր ասէին այսպիսի է. եթէ էր ինչ՛ի քէն բարի գործեցեալ, ոչ արդեօք զայդ կրէիր զոր չարչարեցարդ, այլ զմեզանացն պատիժս զատաստան, և զանօրինութեանց։ Իսկ այս էր որ առաւել խոցէր զՅովբ։ Իսկ յաղագս Պաւղոսի բարբարոսքն զնոյն ասէին. վասն զի տեսին զքարբէն կախեալ զձեռանէ նորա, ոչ ինչ ախորժելի յաղագս նորա կարծէին. այլ՛ի վերջին յանդգնելոյն՛ի չարիս զնմանէ զմտաւ ածէին։ Իսկ յայտ էր յորոց ասէին. “Ամա որ՛ի ծովէն զերծաւ, ասէին, զատաստանն ոչ ներեաց կեալ,,։ Օ՛ի ոչ վայրապար ինչ և այս զմեզ սովորեաց ամբռնել։ Զի սակայն այնքանեաց եղելոց մըրկաց և՛ի վերայ միմեանց բերելոյ ոչ ընկղմեցաւ նաւն. այլ իբրև՛ի նաւահանգստի կացեալ, որպէս՛ի մխանջենաւոր ցօղս վայելեալ այնպէս իմաստասիրեր։

Վասնզի մի ինչ որ՛ի բազմապատիկ սեղանոն և զկերպաս հանդերձանն էր զգեցեալ և զտարկաւն դասս՛ի մէջ բերիցես, ոչք հալածուցանէին՛ի նմանել՛ի հրապա-

բակս զմարդիկն. այլ յայտնեա ինձ զնորա զխիղճն, և տես զյոլովութիւնն ի ներքս զամբոխիցն մեղաց, արհաւիրս հանապազորդեանս, զձմերայնոյն խաւարութիւս. իբրև յատենի զմիտան յաթոռ ելանելով խիղճն իբրև զդատաւորս նստելով, զխորհուրդսն շուրջ ցուցանել իբրև զգահիճն՝ պատրաստ զմտածութիւնս, և բեր յաղագս մեղանացն, և ապա բարբառի մեծապէս առանց ուրուք գիտելոյ. բայց զայսոսիկ որ լսոյն ե իրաւ, նման միայն է տեսանել: Ա՛ան զի ընայցուն թէպէտ և բիւր անգամ իցէ ձօխ, և ոչ զոք ունիցի ասոյ, ոչ դադարէ զինքեանէ ամբաստան լինել ի ներքս. և հեշտութիւնն ե առաջանայն, իսկ երկուքեան միանձնութիւնք: Ա՛ւ արդարքն դարձեալ թէ և բիւր ինչ կրիցեն գժբնդակութիւնս, քաղցր յուսով ատ կերակրին, հեշտութիւնս ունելով զմարքութիւնն և զանշարժ վճռատատութիւնն, և զինի այսոցիկ իբրև ի բարիսն փափուխն՝ որպէս և Ղ աղարոս:

Ա՛ի ինչ զայն ասեր ինձ թէ վիրաւորեալ եր, այլ զայն գիտես զի քան զամենայն ոսկի պատուականագոյն ի ներքս ունէր զՀոգին. մանաւանդ եթէ ոչ զՀոգին միայն, այլ և զնոյն ինքն զմարմինն. քանզի առաքինութիւն մարմնոյ ոչ բազմամասութիւն և քայքայութիւն ե, այլ այնպիսեաց տանջանաց ժուժկալել: Օ՛ ոչ եթէ որ ի մարմինն որ վէրս ունիցի գարշելի իցէ, այլ որ ի յոգւոջն բիւր վէրս ունելով՝ և ոչ միտ ի նոցանէ խնամակալութիւն առնիցէ, որպիսի էր ընչեղն այն ի ներքուստ վիրաւորեալ ամենայնիւ: Ա՛ւ զոր օրինակ զՂ աղարոսն լիզէին զվէրսն շունքն, նոյնպէս զնորա ըզմեղսն գևքն. որպէս սա սովեալ էր ի կերակրոյ, նոյնպէս նա սովեալ յամենայն առաքինութենէ երթեալ գնայր:

Ա՛րդ զայսոսիկ զամենայն գիտելով իմաստասիրեսցուք և մի ասասցուք, թէ սիրէր ՝ած զայս անուն՝ ոչ ներէր նմա աղքատ լինել: Օ՛ի և այն իսկ սիրոյ նշանակ է: "Ա՛նզի զոր սիրէ տէր, խրատէ խոշտանգէ զամենայն որդի զոր ընդունի,,. և դարձեալ. "Ա՛ղեակ, եթէ մեծեցեալ ծառայել տեառն, պատրաստեա զանձն քո ի փորձութիւն. ուղղեա զսիրտ քո, ժուժկալեա,,: Ի բայ հանցուք զայսոսիկ զկարծիս, զղեւական զանս

զայսոսիկ. քանզի «Օ աղքութիւն և յիմարաբանութիւն և խեղկատակութիւն մի՛ ելցէ ընդ բերանս ձեր»։ Այ՛ մեք զայսոսիկ առասցուք. և եթէ զայլ ոք տեսանիցէ որ այսպիսի ինչ խօսեցայի՝ ըմբերանեսցուք, տատանկասիս ընդդէմ կացցուք, կարկեսցուք զանամթերգուն։

Եթէ զոք տեսանիցիր, ասա ինձ, որ աւազակեր՛ի ձաղնապարհս, դարանակալ լինէր անցաւորաց, յափշտակէր յագարակաց, յայրս ծածկէր զօսկի և զարծաթ թաղեալ՛ի ներքս, և հոյլս անամնաց արգելոյր անդր, և հանգերձս և ծառայս բազում կր ստացեալ յանօրինութենէն յայնմանէ, երանելի՞ նմա արդեօք յաղագս հանգերձելոց դատաստանին։ Այլ սակայն ոչ ևս էր ըմբռնեալ և ոչ՛ի ձեռս սատանայի մատնեալ և ոչ՛ի կապարանս անկեալ, ոչ ասես ունէր և ոչ ընդ դատապարտութեամբ լինէր. այլ փոփոխայն արբենայր, ՛ի բազում հոխութեան վայելէր։ Այլ սակայն ոչ յաղագս մերձակայից և երևելեացս երանութիւն նմա, այլ յաղագս հանդերձելոյն և վստահացելոյն աւազէսք զայնպիսին։ Օ նոյն վասն ընչեղայն և աւելաստացուացն զմտաւ ածէ. աւազակք ոմանք են, ՛ի ձանապարհս դարանակալք լինին անցաւորաց, իբրև յայրս և ՛ի սորս յիւրեանց՝ ՛ի դարանս չարադործեն զայլոց ստացուածս։ Այ՛ այսուհետև երանեսցուք նոցա յաղագս մերձակայից, այլ եղկեսցուք վասն հանգերձելոյն, վասն ահաւոր դատաստանին այնորիկ, յաղագս անհրաժարելի տանջանացն։ Օ՛ի և աւազակք յոլովակի փախեան՛ի մնդկան ձեռաց. այլ սակայն զայնոսիկ պիտելով ոչ մեզ ինքեանց և ոչ թշնամեաց ևս ըղձանամք զնոցա ըզկեանսն և զնզովեալ չարութիւնն։ Այլ առ այ ոչ ես այնպիսի ինչ ասել. զի ոչ ոք փախիցէ՛ի նորա հրամանէն, այլ ամենեքեան բոլորովին որ աւելաստացութ՛ը և յափշտակութեամբ կեան՝ ձգեն յինքեանս զնոցա զանմահ գատաստանն զայն և որ ոչն առնի վախճան, զոր օրինակ և ընչեղն այն։

Օ այս ամենայն հաւաստեաւ գիտացեալք, մի՛ որոց հոխութեամբ, այլ ոք առաքինութեամբ կեան՝ երանեսցուք. և մի՛ ոք յաղքատութեան, այլ ոք՛ի չարութեան էն՝ եղկեսցուք. մի՛ զմերձակայս տեսցուք, այլ զհանդերձեալսն գիտասցուք. մի՛ զարտաքինն զգեսան,

այլ միաբանչիւր ուրուք զնիղձն և որ յուղղութեցն առաքինութիւն է և խնդութիւն՝ հետաղօտեսցուք, նախանձեսցուք ընդ ոմն ազարու ընչեղք և աղքատք։ Օ՛ի ոչ միում և կամ երկուց և կամ երից միայն, այլ յոլովից և բազմաց նահատակութեանց համբերեաց, աղքատութեանն, հիւանդութեանն, ամայութեանն, վերակացուաց տանն, յորում կարէր չիջուցանել զայնպիսի չարիս՝ ամենեցուն այնոցիկ համբերելով. որ՝ի փափկութենան վայելչին՝ անտես լեալ զինքն՝ի նոցանէ տեսանէր. ոչ միայն՝ի փափկութենան վայելեալս և չարութեամբ կեցեալս, և ոչ ինչ կրեալ դժնդակագոյնս. այլ զի և ոչ յայլ ոք ոմն ազարոյն էր հայել և ոչ յաղագս յարութեանն իմաստասիրել։ Այլ զկնի ասացելոց վշտացս ամենեցուն՝ կարծիս եւս չարութեան ունէր՝ի բազմաց յաղագս Քրիստոսութեանցն. և զի ոչ մինչև յերկուս և կամ յերիս աւուրս, այլ՝ի բովանդակ իսկ՝ի կեանսն իւրում զինքն յայնոսիկ՝ իսկ զընչեղն հակառակ սմին տեսանէր։

Օ՛ինչ ունիցիմք պատասխանիս, զի նա այնքան՝ի միասին զամենայն դժնդակութենս հանդերձ այնպիսի արութեամբ բերէր, իսկ մեք և ոչ զկէս այնոցիկ բառնամք։ Վասնզի ոչ ունիս ցուցանել և ոչ ասել զայլ ոք որ այսքան և այսպիսի կրեաց չարիս։ Այսն այնորիկ և զնա՝ի մէջ եգ Քրիստոս, զի յոր կողմն և անկանիցիմք՝ի դժնդակութենս՝ տեսանելով զնորա առաւելութեանն լեալ բառականապէս, ՝ի նորա իմաստասիրութենէն ընդունիցիմք միխիթարութիւն և սփոփանս. քանզի հասարակաց ամենայն աշխարհի վարդապետ առաջի կայ որք դժնդակագոյնս ինչ չարչարիցին, յինքն ընձեռելով ամենեցուն հայել և ամենեցուն նոցա յաղթել իւրով գերազանցեալ չարեօքն։ Յաղագս այսոցիկ ամենեցուն պահանջով զմարդասիրէն այ, զպտուղ շահիցն՝ի պատմութենէն օգտեսցուք. յաձախապէս զնա՝ի ժողովրդեանն և՝ի տան և՝ի գոմէս և յամենայն տեղիս զմնացաւ ածցուք. և հանդերձ բազում հաւատարութեամբ զամենայն որ յառակէն յայնմանէ է՝ ուսցուք զձոխութենն. զի և ընդ մերձակայս առանց տրտմութեան անցանիցեմք ընդ դժնդակութենս, և հանդերձելոց հանդիպեսցուք բարեացն. որոց լիցի մեզ ամենեցուն արժա-

նի լինել հնարհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՂԱԶԱՐՈՍ (ՃԱՌ Բ.)

Աքանչացայ ընդ սէրն ձեր յորժամ յաղագս Ղազարու յառաջագոյն չարժեցի զանձն, զի և զհամբերութիւն հոգւոյն ընկալայք, և ի խակութենէ և յանմարդութենէ ընչեղիս ի բաց դարձայք։ Եւ փոքր ինչ են և այսոքիկ գեղեցիկ օրինակք առաքինութեան. քանզի թէպէտ և ոչ արդէն միխիթիք յառաքինութիւնն, այլ եթէ[1] գովիցեմք զառաքինութիւնն՝ կարասցուք ամենայն իրօք ի նոսա միջամուխ լինել. և եթէ ոչ փախչելովք ի չարութենէն, այլ սակայն պախարակելով զնա կարասցուք ամենևին փախչել ի նմանէ։ Եւ արդ զի հանդերձ յոլով բարեմտութեամբ ընկալայք զանձն զայնոսիկ, քեր և զինացեալն ևս ընձեռեսցուք ձեզ։

Ցեսէք զնա ի պրան ընչեղին, տեսէք և ի գոգն Աբրահամու. տեսէք զնա ի շանթն լիզեալ, տեսէք զնա ի հրեշտակաց սպասաւորեալ. տեսէք յաղքատութեան յայնժամ, տեսէք և ի փափկութեան այսօր. տեսէք ի սովոյ վտանգեալ, տեսէք ի յոլով առատութեան. տեսէք նահատակեալ, տեսէք և պսակեալ. տեսէք զցաւն, տեսէք և զհատուցումն, Ճոխք և աղքատք. Ճոխք զի մի մեծ զընչեղութիւնն կարծիցէք առանց առաքինութեան, և աղքատք զի մի՛ չար ինչ վարկանիցիք զաղքատութիւնն. երկոցունց այդոցիկ վարդապետ սահեկայ։ Քանզի եթէ սա ընդ աղքատութիւնն ոչ ինչ տաղտկացաւ, զնո՛ր ունիցին թողութիւն ոք ի փարթամութեանն այնպիսի ինչ չառնիցեն. եթէ յաղագս սովոյ և այսպիսի չարեաց գոհացաւ, զինչ պատասխանի ունիցին ոք հանդերձ առատութեամբ ոչ ախորժեսցեն յայնպիսի առաքինութիւնս գալ։ Վարձեալ աղքատք յաղագս անկաղութեան զայրանան և գժուարին, զնո՛ր ունիցին զնե-

1 Պակասէր յօր. ԷՒԷ գովիցեմք պատուհասիցեն. յաւելաւ ի յունէն։

րուն յորժամ սա սովոյ և աղքատութեան, ամօթոյ-
թեան և ախտաժէտութեան հանապազ եր կենակից
՚ի տան Հոխի, և յամենեցուն անտես լեալ, և առ այլ
ոք որ այնպիսի ինչ կրեաց՝ ոչ ունէր հայել, այսպէս եր
և իմաստասիրել։

Յայսցանէ ուսցուք մի փարթամանցն երանել և մի
զաղքատն աւաղել. մանաւանդ եթէ պարտ իցէ զՀըշ-
մարիտն ասել, ոչ Հոխ է որոյ յոլովն է ստացեալ, այլ
որ ոչ բազմոց կարօտանայ. և զայս՝ սահմանն աղքատու-
թեան և ընչեղութեան պարտ և արժան է կարծել։ Այ-
թէ տեսանիցես զոք յոլովից ցանկացող, յամենայնէ զնա
նուազեալ կարծեա, թէպէտ և զընաւից է ստացեալ
զինչս. և եթէ տեսանիցես զոք ոչ յոլովից կարօտեալ,
քան զամենեսեան զնա Հոխագոյն վարկիր, թէպէտ և
ոչ ինչ իցէ ստացեալ. քանզի այնպէս բարւոք մտաց է
չափել զինչսն, և զաղքատութիւն և զՀոխութիւն հա-
մեմատել սովորեցաք։ Օ՜ որ օրինակ որ միշտ ծարա-
ւեալ է՝ ոչ ասեմք առողջս և յառատութենս վայե-
լեալս, թէպէտ և առ գետս կամ աղբիւրս անցեալ նըս-
տիցի, վասն զի զինչ օգուտ իցէ նմա ՚ի ջրոցն յղփու-
թենէ յորժամ ախտն անչիջանելի կայ ճնայ, նոյնպէս
և յաղագս ընչեղութեանն զմտաւ ածցուք. որք միշտ
բաղձանն և ծարաւեն այլոց, մի երբէք կարծեսցուք ա-
ռողջս, և մի յառատութեան իմիք վայելեալ։ Այլ զան
որ զիւր տենչանսն ոչ կարէ արդելուլ, այլ զամենեցուն
կամի ստանալ, զիարդ այնպիսին իցէ ՚ի քաջավայելչու-
թեան։ Այս որք իւրեանցն են բաւականացեալք, ժուժ-
կալեն յինքեանս՝ ոչ դիտելով զայլոց ստացուածս. թէ-
պէտ և քան զամենայն իցեն կարօտեալք, քան զբոլորս
Հոխագոյն պարտ և արժան է կարծել. զի որ ոչ այլոց
կարօտանայ, այլ զբաւականութիւն զմտաւ ածէ, քան
զամենեսեան ընչեղագոյն է։ Այսց ՚ի յառաջիկայ պատ-
Ճառն երթիցուք վերստին։

"Այդև, ասէ, մեռանել Ա ազարու և տարեալ եղև
՚ի Հրեշտակաց,,։ Այստանօր զչար ախտ Հանել կամիմ
արտաքս ՚ի ձերոց անձանց. վասն զի յոլովք ՚ի տխմարագոյն
կարծեն զոգիսն որ բռնութեամբ մահու վախճանին՝
դէս լինել։ Այէ է այս, ոչ է. զի ոչ ոգիք բռնութեամբք
վախճանելոցն դէպ լինին, այլ ոգիք պղծոցն որք ՚ի մեղս

կան, ոչ զբնութիւնն իւրեանց փոփոխելով, այլ յօժարութեամբ չար կերպարանին։ Ասա և Երեմիայն ասէր Տրիտոս. "Դուք որդիք սատանայի էք,, . իբրև ոչ եթէ 'ի բնութիւն նորա փոփոխեցան, այլ "զի զգանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել,, ասէ. և դարձեալ. "Ընտունդք իժից, ո՞ եցոյց ձեզ փախչել 'ի հանդերձեալ դատաստանէն. արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան. և մի վստահանայք ասել եթէ հայր ունիմք զԱբրահամ,, ։ Այն զի զազգակցութեան օրէն՝ յառաքինութենէ և 'ի չարութենէ գիտեն գիրք. և որում ումեք համապատիւ լինի, նորին որդի և եղբայր լեալասեն զնա գիրք։

Ասայց կը աղաչաւ սատանայ զչար աղանդս զայս եմայծ ։ Ովկայիցն զփառս յանդգնեցաւ յողղողել. վասն զի բռնաւորական մահու վախձանին նոքա՝ զայն արար, բայց ոչ կարաց. քանզի կան ինան զնւրեանց ըզպայծառութիւնն ունելով։ Այլ իմն դժնդակագոյն քան զայս գործեաց. զկախարդս որք և սպասաւոր էին նոքա, այսպիսի աղանդով հաւանեցոյց ։ Յաղագս այսորիկ և Պաւղոս Թէպէտ և Հմարիա էին՝ ըմբերանէր զնոսա, զի մի պատճառս առցեն 'ի Հմարտութենէն և զտուրիւն խառնիցեն, և դարձեալ արժանի հաւատալոյ լինիցին։ Ասանզի ասէին. "Ըբս այսոքիկ ծառայք ևս բարձրելոյ են,, . բայց զի բաղումք 'ի ոգիտացն որոշել ոչ գիտեն որ 'ի դիւացն ասացեալ լինի, միանգամայն փակեալ նոցա հաւատալ։ Ասանզի 'ի յանպատուհասելոյն ես, ասէ, առանց Համարձակութեան լռեա, կարկեցիր. ոչ է քո քարոզելդ, առաքելոյն է արժանաւորութիւնդ այդ։ Ո՞վ յափշտակես որ ոչ է քո. լռեա, անպատուհասիր։ Այնպես և Պե. ասէին ցնա դևքն. "Գիտեմք զքեզ ով ես,,, սատեր յոլով ուժգնութեամբ, օրինադրելով մեզ՝ մի երբեք հաւանել մեզ թէ և առողջ ինչ ասիցեն։ Որ ուսեալք այսուհետև մի հաւանեսցուք ամենևին. այլ Թէպէտ և Հմարիա ինչ բարբառիցին, փախիցուք 'ի նոցանէ և 'ի բաց դարձցուք։ Այն զի զառողջ և զիրկական աւանդն ոչ 'ի դիւաց, այլ յԱծայրն գրոցս է ուսանել։

Ասե զի ոչ ոգի 'ի մարմնոյ ելանելով ընդ դիւացն բնութեամբ լինի, լուր զինչ ասէ Պաւղոս. "Որ մեռա-

նին, ասէ, դադարէ ՚ի մեղաց ,,. այս է ոչ և այս մեղանչել։ ՚Ի նոյն եթէ մինչդեռ ՚ի մարմնի բնակեալ է հոգին՝ բռնութիւն ինչ ՚ի վերայ ածել ոչ կարէ սատանայ, քանզայսր է թէ և ոչ որ ՚ի բացն է գնացեալ։ Այլ արդ՝ զիարդ մեղանչէն, ասէ, եթէ բռնութիւն չկրիցեն։ Կամաք և ախորժակօք և զինքեանս մատնելով, այլ ոչ ՚ի հարկէ։ Այս զայսոսիկ յայտնեցին ամենեքեան որք յաղթողք եղեն նորա մեքենայիցն. զի և Յովբայ բիւրս հնարեցաւ, այլ ոչ կարաց հաւանեցուցանել՝ հայհոյութեան ինչ բան արտաքս արձակել։ Այսու և յայտ է զի ոչ հաւանելոյ նորա խորհրդակցութեանն՝ մեք եմք տեարք, ընդ հարկաւ և բռնութեամբ և ոչ ընդ միով իւիք անկանիմք ընդ նորա։

Ոչ յասացելոցս միայն, այլ և յառաջիկայիս քաջայայտ է, զի ՚ի մարմնոյ ոգիք ելանելով՝ ոչ և այս աստէն դեգերին, այլ վաղվաղակի տարեալ լինին։ ՚Ի նմանի ,,ելեալ, ասէ, նման մեռանել և տարաւ ՚ի հրեշտակաց ,,։ Ոչ արդարոցն միայն, այլ որք ՚ի չարութեանն կեան՝ տարեալ լինին հոգիքն։ Այս այս դարձեալ ՚ի միւսմի ընչեղէն յայտ է. քանզի յորժամ քաջաբերեցաւ անդաստան նորա, ասէր յինքեան. ,,Ո՛ւնչ արարից, քանկեցից զշտեմարանս իմ և մեծագոյնս շինեցից ,,։ Ոչ ինչ Թշուառական քան զայնպիսի բանս։ Արդարեւ աւերել զիւր շտեմարանն. վասն զի շտեմարանք անկողոպուտք ոչ որմք, այլ աղքատացն որովայնք են. իսկ նորա Թողեալ զայնոսիկ, ՚ի յորմն զբաղնոյր։ Այս ապա զինչ ասէ. ,,Ընդդամ, այսօր պահանջեն զոգիդ քո ՚ի քէն ,,։ Այսր տարեալ ՚ի հրեշտակացն, անդ խոշտանգիցեն. զոմանս իբրև զկապանաւոր արտաքս տանիցէին, և այլոց իբրև պակասաւորաց սպասաւորք լինիցին։ Այս զոր օրինակ ՚ի հանդիսարանին երբ բազում վերս ոք առնլով և արիւն շուրջ հոսիցի, զգլուխն պնդելով որք առաջի հանդիսարանին կայցեն՝ ընդունին հանդերձ յոլով բարեհամբաւութեամբք, ՚ի տուն տանին կայթելով և գովելով, հոչակեն և զարմանան, նոյնպէս և Ա զարոս տանէին երբեմն հրեշտակք. իսկ զմիւսոյն և զՆոզի պահանջէին ահաւորք ումանք զօրութիւնք ամենայն

1 Պակասէր յօր. Իսկ արդ.. բառնալիան վրիպեն. յաւելաւ ՚ի յունէն։

իրօք առաքեալք յաղագս նորին. քանզի ոչ ինքեանք հոգի՛ի կեանան յայնոսիկ երթեալ գնայ, այլ և ոչ կարողութիւն իակ է։ Վասնզի եթէ քաղաքէ՛ի քաղաք փոփոխելով՝ առաքնորդի կարօտանամք, ևս առաւել հոգի՛ի մարմնոյ հանդերձեալ՛ի բաց կալ։

Ասան զի միշտ խոցոտէ զմեզ խիղճ մեղանացն, յաւէտ ևս յայնմ ժամու յորժամ հանդերձեալ եմք աստուստ երթալ՛ի հարցաքննութիւն անդր և ահաւոր առեանն, յորժամ եթէ յափշտակեաց ոք, եթէ ագահեաց զուրուք, եթէ զրժեաց ումեք, եթէ թշնամի ուրուք եղև տարապարտ, և եթէ այլ ինչ գժնդակագոյնս գործեաց, ամենայն յանցանացն պար նորոգի, և առաջի աչացն կայ և զմիտան խոցոտէ։ Այս զոր օրինակ ոք՛ի կապարանի բնակեն, միշտ՛ի տրտմութիւնս և՛ի վտանգս են, յաւէտ ևս յաւուրն յայնմիկ յորում հանդերձեալքն լինին արտաքս ելանել, և առ դատաւորին դրունս գալ և զդատաւորին ձայն՛ի ներքուստ լսելով պապանձեալք լինին ահիւն և քան զմեռեալս ոչ ինչ լաւագոյնք անկեալ կան, նոյնպէս և հոգի մանաւանդ՛ի նմին ժամու մեղացն երկնչէ և փղձկի, բայց ևս առաւելագոյն յորժամ աստուստ յափշտակեալ անդր հանդերձեալ իցէ երթալ։

Առէք զայսոսիկ լսելով. ունիմ շնորհ ձերում լուծանդ յայսոսիկ, մանաւանդ եթէ գովութեդ. քանզի կայթումն և գովութիւն զիս պայծառապոյս առնեն, իակ լուծիւն ողջախոհապոյս զձեզ գործէ։ Վտեմ զի տրտմեցուցանեն ասացեալքս, այլ սաստիկ և անձառ ունի զշահն։ Ընդէղին այնորիկ եթէ զոք կալեալ էր որ զայսոսիկ նման պատուիրէր, և ոչ փաղաքուշքն որ զամենայն զշնորհսն առնէին, խորհրդակից լինէին և՛ի փափկութիւնս ձգէին, և ոչ ևս արդեօք՛ի գեհենն յայն երթեալ լինէր, և ոչ զանըմբերելի ըզտանջանսն զայնոսիկ ընդունէր, և ոչ զանհրաժարելիսն յետոյ ապաշաւեր։ Այլ վասն զի զառ՛ի շնորհն առնել ամենեքեան խոսեին ընդ նմա, մատնեցին զնա հրոյն։

Այսպէս թէ էր միշտ և հանապազ զայսոսիկ իմաստասիրել և յաղագս գեհենին խոսել. քանզի "յամենայն՛ի բանս քո յիշեա զվախճան քո, և յաւիտեան ոչ մեղնցես.,. և դարձեալ. "Պատրաստեա յելս ձա-

նապարհայ քոյ և պատրաստեցիր ՚ի Հանապարհ ,, ։ Եթէ զուրուք յափշտակեցեր , ՚ի բաց տուր . ասա որպէս Օ աքէոան՝ եթէ տամ չորեքպատիկ զյափշտակեալն ։ Եթէ ուրուք եղեր թշնամի , հաշտեցիր նախ քան զառեանն . զամենայն աստէն լոյծ , զի առանց իրաց տեսանես զբեմն զայն ։ Ինչգեռ աստ եմք , քաղցր յոյս ունիմք յարուԹեանն . բայց յորժամ երԹամք անդր , տեսցուք այնուհետև ապաշաւանաց ոչ ևս եմք , և ոչ ըզյանցանսն ՚ի մէնջ լուանալոյ ։ Պարտ և արժան է պատրաստել յաՀախապէս զելս Հանապարհացն աստի , եթէ երեկուն կամիցի կոչել զմեզ տէրն և եթէ վաղիւ , վասն զի անյայտ է Հանդերձեալն , զի ՚ի նահատակուԹիւնս միանձնաւորիցիմք առ ուղեգնացուԹիւնն այն քաջավայելուչք . որպէս և այս Պ աղարոս յարաժամ էր ՚ի ՀամբերուԹեան և ՚ի ժուժկալուԹեան , յաղագս որոյ և այնպիսի պատուով տարեալ եղև ։

Ներաւ և ընչեղն և Թաղեցւոյ . նա կենդանւոյն Թաղեալ էր , զի իբրև ՚ի գերեզմանի Հոգւին ՚ի մարմինն իւր էր Թաղեալ , և իբրև զգերեզման բարձեալ կրէր զմարմինն . որ իբրև մոլորուԹեամբ իւիք արբեցուԹեամբ և որովայնաժետուԹեամբն կապեալ՝ այնպէս անգործ գնաս և մեռեալ գործեաց ։ Այլ մի վայրապար զանց առնիցես զԹաղմամբն . անդանօր լինէ զմեռաւ ածդ զշուրջ արծաԹով պատեալ զսեղանն , զգահոյն , զամպհանն , զառանին զգենլիսն , զխուզս անուշունն , զխունկն , զյղլով անապականն , զփաղաքշոտն , զսպասաւոր սորուկսըն , զայլ ամենայն առ աչօք երևոյԹան , զշինչեալն և զխամրեալն ։ Ամենայն ուրեք մխիր , բնաւ ուրեք գազախ և փոշի , սուգ և ողբումն և Հառաչումն , օգնել ինչ ոչ կարելով այնուհետև , և ոչ զգնացեալ ոգին վերըստին անդրէն ածել ։

Յայնժամ զօրուԹիւն ոսկւոյն անկեալ յանդիմանեցաւ և բազում ստացուածոցն . զի յայնպիսի ապաւաւորուԹենէ մերկ և միայն տարեալ լինէր , ոչ ինչ առտի յաՀախուԹենէս տանել կարելով ընդ ինքեան , այլ ամայի անվերակացու . ոչ յօգնականացն , ոչ ոք ՚ի Հպատակ սպասաւորացն մերձ լինէր և Հրաժարեցուցանէր ՚ի տանջանացն և ՚ի պատժոցն յայնցանէ . այլ Հեռացեալ և որոշեալ յամենեցուն՝ միայն ընդունէր զՀա-

տուցումն, զժուարըմբռնելի պատուհասին համբերելով։ Ձշմարտապես «ամենայն մարմին խոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. որոնացաւ խոտն և ծաղիկն թօթափեցաւ, բայց բան տեառն մնայ յաւիտեան»։ Այն մահ և զամ զայնսիկ շինջայ. և իբրև զգերի ոք առեալ՝ տարաւ ի վայր խոնարհեալ ամենայն ի փափկութենէն, դողացեալ զարհուրեալ, յամենայն ի փափկութենէն յայնոսիկ իբրև յերազի վայելեալ։ Այս ապա աղաչող Հոխն աղքատին լինէր, և նորա սեղանոյն կարօտանայր՝ որ և ուրեմն սովեալն էր և առ բերանս շանցն անկեալ կայր։ Այլքն փոփոխեալ լինէր, և ուսանէին ամենեքեան Լհ զինչ ոք էր ընչեղն, և ով ոք էր աղքատն. և զի Ղազարոս քան զամենեսեան Հոխագոյն էր, և նա քան զբոլորեսեան անկաղկ։

Օ որ օրինակ ի խաղն զկերպարանս Թագաւորացն և կամ զօրավարաց կամ զաժշկաց կամ զատենական դպրաց կամ զհմաստակաց կամ զընուորաց առնլով մնանիցեն, և ոչ մի ոք յայնցանէ ինքեանք իցեն, նոյնպէս և ի մերձակայ աշխարհիս աղքատութեան և փարթամութեան կերպարանս ունին ևեթ։ Օ ի որպէս ի տեսարանի նստելով եթէ տեսանիցես զոք ի ստորեան խաղայեն, զպատիւս Թագաւորին երեսաց ունելով ոչ երանես նմա և ոչ Թագաւոր վարկանիս զնա և ոչ ըղձանաս լինել այնպիսի ոք, այլ գիտելով զի ի գահեկաց ոմն է, չուանամատն կամ պղնձագործ կամ այլ ոք այնպիսի, ոչ երանես յաղագս կերպարանին և զգեստուն, և ոչ յայնցանէ վերհացուցանես զնոցա քաղաքականութենէն, այլ քամահես զնա յաղագս այլոց վատթարութեանցն, նոյնպէս և աստ իբրև ի տեսարանի աշխարհի նստելով, և ի խաղ զբօսեալս տեսանես, յորժամ զգոլով զՀոխս տեսանիցես՝ մի Ձշմարտապես փարթամն վարկցիս, այլ զընչեղացն ունելով զկերպարան։ Որպէս և նա ի խաղն զԹագաւորի և կամ զզօրավարի կերպարանս կեղծաւորէր, և ինքն Թերևս ստրուկ էր, և կամ որք Թուզ կամ խաղող վաճառիցեն ի հրապարակն, նոյնպէս և ընչեղն այն Թերևս քան զամենեսեան աղքատագոյն իցէ։ Այս եթէ ի բաց առցես զնորա կերպարանն, և զկնիղ մնացն յայտնեսցես և ի խորհուրդն մտցես, յոլով գտցես անդ առաւու-

թիւն՝ աղքատութեան, և քան զամենայն մարդիկ անպատուականագոյն զնա։

Օ՛ի զոր օրինակ՝ի տեսարանս՝ի հասանել երեկոյին՝ի բաց գնան ոչք խմբեալքն նստէին, և արտաքս ելանելով՝ զձև կերպարանին՝ի բաց գնելով, ոչք թագաւորք և զօրավարք ամենեցուն Թուեցան, երևին այնուհետև սրպէս էնն, նոյնպէս և այժմ մահու մերձ եղելոց, և տեսարանիս այսորիկ լուծանելոյ, զՀոխոտութեան կերպարան և զաղքատութեան՝ի բաց գնելով՝ ամենեքեան անդր երթեալք, ՝ի գործոյն միայն երևին յայտնի՝ ոչք ՀՀմարտապէս ընչեղք և ոչք աղքատք, ոչք պատուականք և ոչք անփառք։

Խաղումն անդամ ոչք աստ ընչեղք էն, աղքատագոյն քան զամենեսեան գտանին անդ, որպէս և այս փաթաթամ։ Ալ ասն զի երեկոյ ժամանեաց, այս է մահ, և՝ի մերձաւոր տեսարանին արտաքս ել՝ի կենացս, և զկերպարանն՝ի բաց եդ, երևեցաւ քան զամենեսեան աղքատագոյն. և այնքան չքաւոր, մինչ զի և ոչ կաթիլ մի ջրոյ գոլ տէր. այլ յաղագս այնորիկ ժտէր, և ոչ այնպէս դիպէր Հայցուածոյն։ Օ՛ինչ քան զայն աղքատութիւն աղքատագոյն կայցէ արդեօք. "Ի՛մբարձ, ասէ, զաչս իւր առ Ի՛բրահամ և ասէ. ողորմեա ինձ և առաքեա զՈ՛ զարոս զի թացցէ զծայր մատին իւրոյ՝ի ջուր,,։ Ցեսա՛նէս որքան է նեղութիւն. մերձ էր առ նա և զանց առնէր, և՝ի հեռաստանէ այժմ աղաչէ զնա. զոր յոգնակի մտանելով բարութիւնս վայելեմ, ոչ ունիք համբերեմ անկարծելեացն. վասն էր փոխոխիմ յառաքինութիւն։ Ի՛յս աղքատ բարեպաշտութեամբ և արդարութեամբ կելով՝ բիւր դժնդակութեամբ չարչարի։ Խայց զայսպիսիկ յոլովք և այժմ ասեն։ Ի՛րդ արմատաքի՝ի բաց խլեսցեն զաղանդն, ցուցանէ նմա զի և չարութիւնք տանջանք կան, և պատիւ և պսակք յաղագս բարեպաշտութեանն վաստակոյ։

Խայց ոչ յաղագս այսորիկ միայն տեսանէր զնա, այլ զի զոր չարչարեցաւ աղքատն, զնոյն այժմ և ընչեղն կրեսցէ հանդերձ մեծ ևս գերազանցութեամբ։ Օ՛ի զոր օրինակ նմա դժնդակագոյն առնէր զտանջանսն՝ զինքն

1 Ցոյն առաքինաբնեան աղետաւորեան։

յաղքատութեան և զնա ՚ի բարութեէ տեսանելն, նման այժմ ՚ի գեհենին կալ և տեսանել զԱ աղարու փափկութիւնն, ոչ ՚ի քնութեամբ պատժոյն եթէ՝ այլ և յանդիմանադրութեամբն նորա պատուոյն անըմբռնելի ունիցի զպատուհասն։ Եւ որպէս զԱ դամ արտաքս հանեալ ՚ի դրախտէն՝ յանդիման դրախտին քնակեցոյց ՚ած, զի յաճախապէս տեսչութիւն նորոգեսցէ զչարչարանսն և հաւատացոյն նմա ընձեռեսցէ զանկանելոյն ՚ի բարեացն զգայութիւն, նոյնպէս և զնա յանդիման Ա աղարու քնակեցոյց, զի տեսցէ՝ և յորոց զինքն զըրկեաց։ Ա դաքեցի քեզ, ասէ, ՚ի գուռն Ա աղարոս զաղքատն, զի քեզ լինի վարդապետ առաքինութեան և մարդասիրութեան պատճառ. անտես արարեր զշահն, ոչ ախորժեցեր արժանաւոր իրս ՚ի կիր արկանել զիըրկութեանն պատճառ, վարեցիր այսուհետև այդոքիւք այնպէս ՚ի մեծամեծ չարչարանսց և պատժոց. զպատճառն զայն ուսանիմք, զի ամենեքեան որ ՚ի մինչ զրկին և դրժին, յանդիման երեսաց կալոց են։ Եւ սակայն սա զրկեալ լինելը յընչեղէն. ոչ զի զսորա էառ ինչ փարթամն, այլ զի յիւրոյն ոչ ընձեռեաց։ Եւ արդ Թէ որ յիւրմէն ոչ տայ՝ ասոխ ունի զոչ ողորմաւն ՚ի նմանէ, ապա որ զայլոցն յափշտակեսցէ՝ որքա՛ մ պատահեսցէ, յորժամ ամենայն ուստեք շուրջ զնովաւ կացցեն զըրկեալքն ՚ի նմանէ։ Ո՛չ և ոչ վկայութիւ իսկ անդ պէտք են, և ոչ ասելոյ, ոչ ցուցանելոյ և ոչ նշանակաց. քանզի ահա մարդ և գործք իւր։ Ա՛յլ և նոյն իսկ ինքն ոչ տալն ընչեղիցդ յընչից իւրոց յափշտակութիւն է։

Եւ Թերևս ձեզ հրաշալի ինչ Թուիցի ասացեալս. բայց մի՛ ինչ զարմանայք, քանզի վկայութիւն ձեզ յասուածային գրոց ընձեռեցից որ ասէ՝ Թէ ոչ որ զայլոցն միայն յափշտակեաց, այլ և որք զիւրեանցն ոչ տան այլոց, և այն յափշտակութիւն և աւերատացութիւն և զրկութիւն է. վասն զի քամթասելով զՀրեայսն ՚ած ՚ի ձեռն մարգարէին ասէր. «Ա՛ուսոյց երկիր զարմանս իւր, և ոչ ընծայեցեք զտասանորդսն, այլ յափշտակութիւն աղքատաց ՚ի տունս ձեր է»։ Ա՛ման զի երեխայրիսն, ասէ, զսովորական ոչ ընձեռեցեք՝ յափշտակեցեք զաղքատսին։ Ո՛պս ասէր ցուցանելով զի ընչեղք զաղքատացն ունին, Թէպետ և զՀայրենի ընդունիցին զընչե-

զուարճանն, և ուսոյն և դէպ իցէ հաւաքեցէք զինչն։ Եւ դարձեալ այլոյր ասէ. "Ո՛վ հեռացուցանես զկեանս աղքատին,,. որ զանապն՝ զայլոց զանապ. զայոյնն ասի յորժամ զայլոցն առնուլ ունիցիմք։ Մինչ յորժամ ո՞ զորմուարհիւն ոչ ընձեռիցեմք, զուգահաւասար զրկողս տանջիմք։

Տէրունական են ինչքն ուսոյն և ժողովիցեմք զնոսա. և նորին աղագաւ քեզ յոլովագոյն ունել ներեաց Աստ, ոչ՝ ի բազս և յարբեցուարհիւն և՝ ի շատկերուարհիւն և՝ ի բազմապատիկ հանդերձս և յայլ ամենայն՝ ի Թուլուարհիւնն ծախեսցես, այլ զի կարօտելոց զպնոսիկ բաշխեսցես։ Ոչ որ օրինակ ընդունակ ոք զԱստուածային զինչս առնուլով, և Թողեալ որոց հրամայեաց բաշխել յիւր՝ ի ծուլուարհիւնն ծախիցէ, դատաստան պահանջի և կորնչի, նոյնպէս և ընչեղն ընդունակ ոմն է՝ որ յաղագս աղքատացն հաւաքին ինչքն, և կարգեցեալ զպնոսիկ բաշխել իւրում ծառայակցացն կարօտելոց. և եԹէ աւելի քան զարժանաւորապէսն ծախեսցէ, անդ է տալոց զպատիժն. քանզի ոչ ունի զիւր, այլ զծառայակցացն իւրոց։

Մնայեսցուք այսու հետև յայնոսիկ իրրև յօտարաց, զի լեցի մեր։ Եւ զիաՀրդ խնայեսցուք՝ ի նոսա իբրև յօտարս։ Յորժամ ոչ յաւելորդ պէտս ծախիցեմք զինչն, այլ յաղքատացն պէտս ծախիցեմք զպնոսիկ։ Մինչպէտ և ամենևին Ճոխ իցես և աւելի քան զարժանն ծախիցես, պատուհաս տալոց ես որ հաւատաց քեզ զինչն։ Ապաքիկ և՝ ի մեծամեծ տունս լինին, քանզի յոլովք զիւրեանց շահմալանս ծառայից հաւատան. այլ սակայն որոց հաւատացեալն լինին, նոքա պահեն զտուեալսն և ոչ վատնեն զոր հաւատացանն. քայց յորժամ տեսցեն հրամայեն՝ բաշխել։ Նոյնպէս և դու արա. վասն զի աւելի քան զպէտն և ընկալար, ոչ զի միայն ծախեսցես զպնոսիկ, այլ զի ընկերացն բարի անօրէն լիցիս։

Պարտ և արժան էր և զպէտ զմտաւ ածել, հիմ արդեօք առ ոչ այնուհ արդարոյ զի՞ ազարտս, այլ՝ ի գոգն Աբրահամու տեսանէր։ Ստորասէր էր Աբրահամ. զի յանդիմանուարհիւնն լինիցի նորա օտարատեցուարհեն, պինր ազագաւ զնա ընդ նմա տեսանէր։ Նա և անցաւորացս սպառաւոր լինէր և յիւր տունն՝ ի ներքս ձգէր. իսկ

սա և որ ՚ի ներքս ՚ի տանն էր անտես առնէր, և այնքան ունելով զգանձն և զփրկութեան պատճառս՝ զանց առնէր հանապազօր, և ոչ երբէք վարեցաւ ՚ի պատշաճ իրս աղքատացն վերակացութեան։

Ոչայց ոչ և հայրապետն նոյնպէս, այլ հակառակ սմին. զամենայն օր առաջի դրանն նստելով որսայր զանցաւորսն զամենեսեան. և զոր օրինակ ձկնորս ցանց արկանելով ՚ի ծովն ՚ի վեր ձգել զձուկն, հանէ Թերևս երբէք ոսկի և մարգարիտ, նոյնպէս և նա ուսկանելով զմարդիկ՝ որսացաւ երբէք և զհրեշտակս. և հրաշալի այն էր զի ոչ գիտէր։ Օ՞ր և Պաւղոս զնա գովելով ասէր. "Օ՞հետ երթայք օտարսիրութեան, վասն զի ՚ի ձեռն այնոցիկ ոմանք զանխլաքաւ ընկալան զհրեշտակս,,։ Պե՛ղեցիկ ասէ՝ անգիտանալով. քանզի եթէ գիտութեամբ զնոսա էր ընկալեալ հանդերձ այնպէս բարեմտութե՛ր, ոչ լինչ մեծ էր և սքանչելի. այլ ամենայն գովութիւն՝ վասն զի ոչ գիտէր ոյք էին որ մերձ եկեալքն էին, և մարդիկ զնոսա պարզաբար ուղեգնացս կարծելով՝ հանդերձ այնպիսի յօժարամտութեամբ ՚ի ներքս կոչեաց։

Յո՛ւ դու այսուհետև եթէ զոք երևելի և պայծառ ունիցիս, յորով ցուցանելով զյօժարութիւնն, սքանչելի լինչ ոչ ես. վասն զի պատուականութիւն օտարին և օտարատեսին հարկ առնէ յորովակի զամենայն բարեմտութիւն ցուցանել։ Ո՛չ մեծ և հրաշալի յորժամ և զոր ՚ի դէպ իցէ և զընկեցիկսն և զտրտում հանդերձ բազում բարեմտութեամբ ընդունիցիս։ Ա՝ան այսորիկ ասէ. "Ա՝ղքան արարէք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ ՚ի հաւատացեալս յիս՝ ինձ արարէք,,. և դարձեալ. "Ո՛չ եթէ ոք գայթակղեցուսցէ զմի ՚ի տրպայս յայսցանէ, լաւ էր նմա եթէ կախեալ էր երկանաքար զպարանոցէ նորա,,։ Յո՛ւ ամենայն ուրեք ՝Ո՛րիստոսի յորով յաղագս փոքունց և տրպայց են քանք. զոր և Ո՛՚բրահամ գիտելով ոչ հարցափորձեաց զմերձ եկեալսն ոյք իցեն և ուստի, որպէս և մեք այժմ, այլ պարզաբար զեկեալսն զամենեսեան ընդունէր։ Ա՝ան զի որ զբարեմտութիւնն ցուցանէ, ոչ է պարտ և արժան ըզվարս կենացն հետազօտել, այլ զաղքատութիւնն ուղղել և զպէտսն լնուլ։ Ա՝՚ի ունի պատասխանի աղքատն՝ զկարօտութիւնն զկալն ինակն յաղագս պիտոյիցն, և մի

ինչ առաւել պահանջեր զնա. այլ Թէպէտ և քան զամենեսեան իջ չարագոյն և ի կարևոր կերակուրն տապակուսի, լուծցուք զնորա սուին։ Այսպէս և Պրիստոս հրամայեաց. "Յղերուք, ասէ, նմանողք Հօրն ձերում որ յերկինս է, զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և տեղէ անձրև յարդարս և յանիրաւս,,։ Այաւահանգիստ է վտանգելոց ողորմածն. և նաւահանգիստ զամենայն որք ի նաւաբեկութիւնս անկեալ են՝ ընդունի և լուծանէ զվիշտն, եթէ չարք և եթէ բարիք, եթէ ոչք և իցեն վտանգեալք, ի ներքս ի յիւր խորշսն ընդունի զամենեսեան։ Այնպէս և դու տեսանելով յերկրի յաղքատութեան նաւաբեկութիս անկեալ մարդիկ, մի դատեսցիս և մի համարս պահանջեսցես, այլ լոյծ զթշուառութիւնն։

Ընդ՚ը տագնապ նմա իրացն ընձեռեաս։ Ի բաց ազատեաց զքեզ ՚ած յամենայն աւելորդ հարցաքննութենէ և ի բազում իրս խուզելոյ։ Վանի՞ ինչ հանդերձեալ էին յոլովք ասել և դժուարել եթէ հրամայեալ էր յայ հաւաստեաւ զվարս կենացն և զգործն հետազօտել յառաջագոյն և ապա ողորմել. իսկ այժմ յայսմ ամենայնէ ի բաց եմք վճարեալ ի դժուարութենէ, ընդ՚ը աւելորդ հոգս ի մէզ ձգիցեմք։ Այլ է ատեան և այլ ողորմութիւն. ողորմութիւն յաղագս այնորիկ ասի, զի և անարժանեաց տայցեմք։ Սորին աղագաւ և Պաւղոս ասէ. "Օ՚բարիս արասցես առ ամենեսեան, յատկապէս առաւել առ ընտանիսն հաւատոյ,,։ Այթէ զանարժանսըն քննեմք և հարցափորձեմք, և ոչ զարժանաւորսն երբէք դիւրաւ ընդունիցիմք. իսկ եթէ անարժանից ընձեռիցեմք, ամենայն իրօք և արժանաւորսն ի մեր դուրս եկեսցեն. որպէս և երանելոյն Աբրահամու եղև, որ ոչ հետազօտելով և խուզելով ընդունէր զեկեալսն, կայրաց երբեմն և զհրեշտակս ընդունել։

Ընդ նմա այսու հետև և մեք նախանձեսցուք և ընդ Թոմային նորա Յովբայ։ Վանդի և սա նախասիրօն առաքութեանն հանդերձ ամենայն հաւատոյ եռանդիւ նմանեցաւ. յաղագս որոյ և ասէր. "Գնասցուք և մեք զի մեռցուք ընդ նմա,,։ Այս ոչ ասաց եթէ այլում ումեք փակեցաւ, այլ ամենեցունն պարզաբար բանայր զդուռն։ Այնպէս և մեք արասցուք, մի ինչ առուգաբանելով ա-

ռաւել քան զարժանն. քանզի և արժանաւորութիւն աղքատին՝ պէտքն լեալ են։ Ով որ և եկեսցէ առ մեզ այնպիսի իրօք երբեք մի ինչ քննեսցուք. զի ոչ եթէ բարուցն տամք, այլ մարդոյն. և ոչ վասն առաքինութեան, այլ Քրիստառութեանն աղագաւ նման ողորմիմք, զի և մեք 'ի տեառնէ զմեծ ողորմութիւնն ձգեսցուք 'ի մեզ, զի և մեք զարժանաւորութիւնն խոստով ջնջառայակցաց մերոց և սատագաբանել՝ զնոյն և մեզ ՅԱծ գործէ. և ախորժելով 'ի ծառայակցացն պահանջել հնազոս, մեք 'ի վերին մարդասիրութենէն արտաքս անկանիմք. "Ով ան զի որով դատաստանաւ դատիցեմք, ասէ, դատեցեալք եղիջիք,,։ Այլ 'ի պատճառն երթիցուք վերստին։

Տեսանելով զնա անդ 'ի գոգն Աբրահամու, ասէր. "Հայր Աբրահամ, առաքեա զՈ աղաւրոս,,։ Ընդ աղաւդաւ արդեօք ոչ առ Ո աղաւրոս զառանն երկարէր։ Ընդհանչէր և պատկառէր 'ի նոյնա իրացն, կարծէր օխակալ լինել նման ամենայն իրօք։ Վանզի եթէ ես, ասէ, յայնքան վայելելով 'ի բարիս, և ոչ ինչ զրկեալ՝ որ յայնպիսի չարիսն էր անտես արարի զայրն, և ոչ զիշխանն եւոու, և առաւել նա նոյնպէս անտես առնելով ոչ հաւանեսցի տալ զընորհս զայս։ Եւ զՈ աղաւդայ ամբաստանելով զայս ասելիք. զի և ոչ այնպիսի ոք էր նա, մի լեզի. այլ զի սա երկինչելով յայսցանէ ոչ կարդայ առ նա, այլ առ Աբրահամ ձայնեայ, զորմէ կարծէրն թէ անզիտանայ զլեալն. և զմտան զայն խնդրէր, զոր լեզուայ չանցն ներեայ բազում անգամ մատնել։

Այս զինչ նա. "Ողեակ, առեր զբարիսն քո,,։ Տես զսէրն, տես զիմաստասիրութիւնն արդարոյն. ոչ ասայ՝ անմարդի խակ և ամենաչար, յայնպիսի չարիս եղեր զայրն՝ մարդասիրութիւն յիշես այժմ և զողորմութիւն և զթողութիւն. ոչ առնչես, ոչ պատկառես։ Այլ զինչ. որդեակ, ասէ. վասն զի բաւական են, ասէ, նման տանջանքն, մի եւցուք 'ի վերայ Քրիստառութեանց նորա։ Այս զի մի կարծիցես եթէ օխակալ լինելով յաղագս անցելոցն արգել զՈ աղաւրոս յերթալոյն, որդի զնա կոչեայ։ Որոյ տէրս եմ՝, ասէ, զայս տամ քեզ. բայց առ այդր գալ՝ ոչ ե մեր այսուհետև։

"Առեր զբարիսն,,։ Ընդէր ոչ ասայ՝ ընկալար, այլ

առեր։ Խազում խորս խմաստից տեսանեմք մեզ աստա-
նօր բացեալս. յաղագս որոյ զամենայն ասացեալս մեզ
հաւաստեաւ պահեսցուք, զայժմոյս և զկանխաւ խօսե-
ցեալս ամենայն զգուշութեամբ ամբարեսցուք, և առ որս
հանդերձեալն եմք ասել՝ պատրաստապէս զմեզ յօրի-
նեսցուք։ Եթէ կարողութիւն է ձեր, զամենայն իսկ
յիշեսջիք. ապա թէ ոչ կարիցէք բովանդակ զամենայն,
աղաչեմ զայն յիշեսջիք յարաժամ, մի տալ՝ի չափշտա-
կութիւն զմեր ինչան, քանզի աղքատացայ է, և զրկուա-
նոցա կենացն լինի. զի ոչ զմեր, այլ զնոցա ունիմք։ Եւ
եթէ այնպիսի գտանիցիմք, ամենայն իրօք ընձեռիցեմք
զինչան, զքաղցեալսն կերակրելով զԿրիստոս կերակրե-
ցեմք, զի և աստ և անդ գոլով շահս մեծերելով կա-
րասցուք հանդերձելոց բարեացն հանդիպել. որոյ լիցի
ամենեցուն մեզ արժանի լինել ընդհօք և մարդասիրու-
թեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում
փառք հօր հանդերձ սրբով Հոգւովն յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն։

Ի ՂԱԶԱՐՈՍ (ՃԱՌ Գ.)

Ո՞ր դաշնաքեայ ինչ օգտեաց Ա ազարու առակն ըզ-
Հոխա և զաղքատս, ոմանց դիւրաբերել զաղքատութի՛ն
խրատելով, և ոմանց ոչ Թողացուցանելով մեծամեծս
ինչ խորհել յաղագս ընչեղութեանն. այլ՝ի ձեռնոցին
իսկ գործոցն վարդապետել, եթէ քան զամենեսեան ո-
ղորմելի է որ փափկութիւ՛ն կեայ, և ոչ ինչ յատացուա-
ծոցն ումեք ընձեռեսցէ։ Եւ՝ի մեր և այսօր զարձեալ զնմին
պատճառեալ բուռն Հարցուք. զի և որք զսակին Հանեն յերկ-
րէ, ուրանօր տեսանելով յոլովագոյն զսակսցն զօճառն՝
անդանօր բերեն. զարձեալ ոչ՝ի բաց կան յառաջագոյն,
մինչ զի զամենայն որ երևի՛ն՝ պեղեսցեն։ Եւ Թէ իցուք
վերստին այսուհետև ուր յառաջնում աւուրն Թողաք
զբանն, զի անդուստ զնա առցուք։

Եւ չի՛ Հնար և՝ի միում աւուր ձեզ զամենայն մեկնել
զառակն զայն. այլ ոչ որպէս յոլով ասացեալս՝ի բաց
զնայք յայսոսիկ ձեռեալք, այլ որպէս զի Հաւաստեաւ

զասացեալսն ընդունիցիք և պահիցէք, և առնուցուք ՚ի պահպանութէն յայնմանէ զգայութէի հոգևորական օգուտից։ Օ՜ և մայր բարեգութ յոյժամ ՚ի հաստատուն կերակուր կամիցի ածել զմանուկն, եթէ յանկարծակի արկանիցէ ՚ի բերանն զջամբն՝ ոչ ինչ օգտէ, ՚ի բաց պղպջակելով մանուկն զտուեալն, ցայտելով թանձր որ զանջօքն է հանդերձն. իսկ եթէ հանդարտապէս աղեբար ընձեռիցէ, կլանէ զտուեալսն առանց արտմութէ։

Արդ զի մի և դուք զտուեալն ՚ի բաց թքանիցէք, ոչ միանգամայն ՚ի ձեզ խանարհեցուցաք զվարդապետութեանս բաժակ, այլ ՚ի բազում աւուրս զնա բաժանեցաք. և որ ՚ի մէջ աւուրքն են՝ ՚ի հանգիստ ձեզ ընձեռեցաք ՚ի լսելութեանդ աշխատութէ, զի և սերմանեալն հաստատեսցի զգուշութեամբ ՚ի միտս ձերոյ սիրոյդ, և զորս հանդերձեալ եմք ասել՝ զօրաւոր և առոյգ անձամբ ընդունիցիք։ Յաղագս այսորիկ և զպատճառսն առաջիկայ Ճառիս յոլովակի կանխաւ ասեմք նախ քան զբաւզամ աւուրս, զի և որ ՚ի մէջ աւուրքս են՝ զգիրսն առնելով, ՚ի նոսա ընդ ամենայն ընթերցուածսն անցանիցէք և ուսանիցէք զինչ է որ ասացաւն և զինչ ինայեաւն իցէ, դիւրաւսմնասն առնելով զձեր զմիտս առ լսողութիւնն զկնի այն ասացելոցն։

Այլ զայս միշտ աղաչեմ և յաղաչելոյ ոչ դադարիմ, զի մի ատ լեթէ յասացեալս Հայիցիք, այլ և ՚ի տան լինելով՝ ածային գրոց ընթերցուածոց յաձախապէս պարապեսջիք։ Օ՜ այսոսիկ և առանձինն լինելով ընդ ձեզ ոչ նուաղեցի միշտ երաշխաւոր լինել։ Արդ զի մի որ ասիցէ զգուրտ բանն զայնոսիկ և զյոլով բամբասանսդ արժանաւորս, եթէ ընդ առեանս բևեռեալ եմ և զքաղաքաքի իրս գործեմ, կնոջ և մանկանց հոգ տանիմ, առուեստ ունիմ, տան վերակացու եմ, աշխարհական այր եմ, ոչ է ինձ զգիրս ընթեռնուլ, այլ այնոցիկ ոլք հրաժարեցին և ՚ի գլուխս լերանց երթալով ընդունիցին վարս կենաց Հանապազօր։

Օ՜ինչ ասես, ով մարդ, ոչ է գործ քո ընթեռնուլ վասն զի բիւրուք ես վարակեալ հոգով։ Արդ է առաւել քան թէ նոցա. վասն զի ոչ այնպէս նոքա պէտս ունին առ ածային գրոց օգնականութէիւն, որպէս դու որ ՚ի միջոցի շրջիս։ Վասն զի միայնացեալքն ՚ի գաւեհից և զրս

'ի հրապարակական ամբոխէ 'ի բաց վճարեալք զտագաւառս յանապատի հարկանելով, և ոչ առ մի ոք հաղորդութիւն ունին; այլ խնամատարիւքն հանդերձ ցածութիւք և հանդարտութիւք 'ի խաղաղութիւն յայնմիկ. իբրև 'ի նաւահանգստի նստելով 'ի բազում զգուշութէ վայելեն. մեք իբրև 'ի մէջ խորոց սասանեալք հոծ և խիտ, միշտ և հանապազօր կարօտանամք գրոց միսիթարութէ:

Այսքա հեռի 'ի կռուոյս անցեալ նստին, յաղագս ոչ րոյ և ոչ յոլովս ընդունին զվէրան. զոր յարաժամ 'ի մարտի կաս և յաճախս ընդունիս զվէրան, որոյ և առաւելագոյն պէտք են քեզ դեղոց. զի և կին զայրացուցանէ և որդի տրտմեցուցանէ և ծառայ 'ի տրտմութիւն արկանէ և թշնամի զրժէ և սիրելի յաչաղէ և գրացի խարդախէ և զինուորակից խափանէ, բազում անգամ և զատաւոր սպառնայ և աղքատութէ տխրեցուցանէ և ընտանեայ մահ սուգ գործէ և բարութիւն ամբարտաւանեցուցանէ և գժուարինք վնասուցանեն: Յոլով են և բարկութեանն, առաւել և հոգոյն, բազում տրխրանայ և տրտմութեանն, յաճախ քան անաւաւութէն և ամբարտաւանութեանն, պատճառք և կարիք ամենայն ուստեք զմեզ շուրջ պատանդեն, բիւր նեաս 'ի բնաւ կողմանց բերեն. յաղագս որոյ գրոցն սպառազինութեան պէտք լինին յարաժամ: Վանդի ծանիր, ասէ, զի 'ի մէջ որոգայթից շրջիս, և 'ի վերայ մարտկոցաց քաղաքի գնաս: Օձ և մարմնոյ իսկ ցանկութիւնք, որ 'ի միջոյին շրջին, հակառակ յառնեն, դեմք քաջավայելուչք և մարմին պայծառ 'ի ձեռն աչաց ընկենու 'ի վայր, և բանք զաղերք ընդ լսելիս մտեալ ամբոխեն յաճախապէս զխորհուրդս մեր, և երգ գեղգեղեալ զոգւոյն քաջասդութիւն կակղացուցանեն: Այս զինչ ևս ասեմ զայնոսիկ, զի որ քան զամենեսեան տկարագոյն թուի գոլ՝ իւղոյն հոտ բուրելով 'ի բազ կանանցն՝ յանցանելն առեալ գնայ գերի սոսկ պատահմանէն:

Այս յոլովք են որ պաշարեն զմեր անձինս, և պէտք լինին մեզ ճարպին դեղոց. զի և զլեալ վերան բժշկեսցուք, և զոչ լեալն՝ զհանդերձեալն լինել՝ կանխաւ գնըտուսցուք, 'ի հեռուստ զատանայի զնետսն չիջուսցուք և 'ի բաց մղեսցուք 'ի ձեռն յաճախապէս ընթերցուածոց գրոց: Այսան զի ոչ է և ոչ իսկ հնար ումեք զեր-

ծանել՝ թէ ոչ յաձախապէս վայելեսցի ՚ի հոգևոր վար-
դապետութիւնն։ Ա՛յլ սիրելի է և արդարեւ սիրելի
է եթէ միշտ ձաշակեաք ՚ի բժշկութենէս յայսմանէ,
կարեաք թերևս ապրել. իսկ յորժամ հանապազօր վի-
րաւորիմք, և ՚ի բժշկութեան ոչ ՚ի միում վայելեմք, ո՛ր
իրկութեան յոյս լինիցի։

Ո՛չ տեսանես զպղինձագործն զոսկեգործն և զար-
ծաթագործն ոյք չինչ և իցէ արուեստն զամենայն
զարուեստին զգործիս կատարելապէս ունիցին. և եթէ
սով հարկ առնէ, եթէ աղքատութիւն բռնագատէ, ա-
մենայնի ախորժեն համբերել յաւէտ՝ քան եթէ զա-
րուեստին զգործի վաձառել և կերակրել։ Յոլովք բա-
զում՝ փոխս առնուլ ախորժեն, և կերակրել զտունն և
զմանկունսն՝ քան եթէ յարուեստին գործեաց զիրքրա-
գոյն ինչ վաձառել. և թերևս յիրաւի, քանզի գիտեն
եթէ ՚ի բաց վաձառելով զայնօսիկ՝ անպիտան և նոցա
արուեստն այնուհետև, և ամենայն շահիւքն պատձառք
բարձեալ լինին. իսկ եթէ այնոքիկ ծնասցեն, կարողու-
թիւն և զառեալ փոխն ժամանակաւ երբեմն հատու-
ցանել արուեստիւն անդանդաղապէս վարեցեալ։ Ա՛յս
եթէ ժամանեսցեն զնոսա այլոց վաձառել, և ոչ մի ինչ
աղքատութեանն և սովոյն միթէ արուեստիւն այլ ուստեք
իմանալ կարեն։ Նոյնպէս և մեզ ունել ՚ի մտի պատ
և արժան է. զի զոր օրինակ նոցա գործիք արուեստին
են ուռն և սալ և կայծակալք, նոյնպէս և մեր գործիք
արուեստին են առաքելական և մարգարէական գիրք և
ամենայն ՚ձծաշունչ և օգտակար բանք։ Այս օրպէս նո-
քա զամենայն անօթս զոր առնուն ձօղելով սահեղձա-
նեն, նոյնպէս և մեք ՚ի ձեռն գործեաց զանձինս մեր ա-
րուեստակեմք և զթիւրեալն ուղղեմք և զհնացեալն նո-
րացուցանեմք։ Նոքա մինչ ՚ի ձեռն ևեթ զիւրեանց ա-
րուեստն ցուցանեն, և ոչ կարեն զնիւթանոցն[1] փոխո-
խել, և ոչ զարծաթն առնել ոսկի, այլ զտպաւորութիւնն
միայն փոխոխելով զայնօսիկ յօրինեն. բայց դու ոչ այն-
պէս, այլ ունիս իմն առաւելագոյն քան զնոսա. զի և
զիայտ անօթ առնելով, կարես առնել ոսկեղէն. և այ-
սոցիկ վկայէ Պաւղոս ասելով այսպէս. "Ի մեծ տան
ոչ են անօթք ոսկեղինք և արծաթեղինք, այլ և փայ-

1 Ա՛յդպէս յօրինակին. յոյնն զնիւթն անօթոցն։

տեղինք և քարեղինք. և եթէ ոք զինքն մաքրեսցէ յայսցանէ, եղիցի անօթ՝ ի պատիւ սրբեալ քաջ, պիտանացու յամենայն գործս բարիս պատրաստական ,, :

Ա՝ի ծուլացուք այսուհետև առանալ զգիրս, զի մի՝ ի կարևոր տեղւոջ զվէրն ընկալցուք. մի զգակի Թաղեացուք, այլ զանձեսցուք մեզ զհոգևոր գիրս : Ա՝ան զի ոսկի յորժամ առաւելն լինի, յայնժամ առաւել դըրժէ զտացողն. իսկ գիրք ամբարեալք յաւէտ ընձեռէ ունողացն զօգնականութիւն : Օ՝ի զոր օրինակ ուրացնօր կայցեն զինք Թագաւորականք, Թէպէտ և չիցէ ոք որ վարեսցի նոքօք, յորով անօրինեն՝ ի ներքս բնակեցեալոցն պահպանութիւն, ոչ աւազակք և ոչ մահաւոք և ոչ այլ ոք՝ ի չարագործացն յանդգնի մտանել՝ ի տունն, նոյնպէս և ուր իցեն հոգևոր գիրք, ամենայն սատանայական գործք անտի՝ ի բաց վհատեալ լինին, և բնակչացն առաքինութեանց բազում միութիւն լինի :

Ա՝յլ և նոքին իսկ ըստ ինքեանց գրոցն դէմք դանդաղկոտ զմեզ առ մեզսն իրս գործեն : Այս եթէ յանդգնիմք ինչ՝ ի հրաժարեալսն և անմաքուր զմեզ գործիցեմք, երթալով՝ ի տուն, և զգիրսն տեսանելով մանաւանդ զմեզ դատապարտէ խիղճն, և՝ ի նոյնպիսիսն անկանել դարձեալ՝ դանդաղկոտ լինիմք : Իսկ եթէ սրբութեամբ ինչ ատարտեմք իրս, առաւել ևս անտի առնումք զգուշութիւն. քանզի եթէ առնու ոք զաւետարանն՝ ի ձեռն, անդէն վաղվաղակի յարմարէ զվիտան զիւր, և տեսանելոյն միայն զնա՝ յաշխարհականացն ամենեցուն՝ ի բաց կայ : Իսկ եթէ ընթերցումն ևս հաւատութեամբ լինիցի իւրև՝ ի ներքս՝ ի քահանայականի ուրեմն հոգի կատարեալ, այնպէս մաքրի՝ ի ձեռն գրեցելոցն այնոցիկ :

Այ զինչ չահ, ասէ, եթէ ոչ դիտիցեմք որ անդն կայցէ : Ա՝անաւանդ եթէ և ոչ զգրեալսն գիտիցես, ՝ի նմին իսկ յընթերցուածոյն յաւել սրբութիւն լինի : Այ այլ ազգ ևս. անկարելի է զամենայն՝ ի կարգին անպիտանալ. յաղագս այսորիկ և հոգւոյն չարհ անօրինեաց մաքսաւորաց և ձկնորսաց և խորանապործաց և հովուաց տգիտաց և որ առանց գրոյ էին՝ նոցա յօրինել զգրեանսն, զի մի՝ ոք՝ ի տգիտացն յայն անխիլ ապաւինել՝ ի պատճառս, զի ամենեցուն դիւրիմանալի լինին

ասացեալքն, զի և ձեռնարուեստիկն և ծառայ և այլն կին և որ քան զամենայն մարդ անուսումնագոյն իցէ՝ շահեսցի ինչ և օգտեսցի ի լսելութենէն։ Այն զի ոչ ի մնափառութիւն որպէս արտաքնոցն, այլ ի փրկութիւն լուացին ամենեցուն զայնսոսիկ գրեցին՝ որք ի սկզբանէ չնորհի հոգւոյն սրբոյ արժանաւորք եղեն։

Առաքելին խնամատարքն և առենական գպիրքն և պատմագիրքն ոչ զհասարակաց օգուտն հայցէն, այլ որպէս ինքեանք միայն հրաշալիք երևեսցին՝ գիտեն. և եթէ պիտանացու ինչ ասասցեն, և զայն իբրև խաւարաւ օրինակաւ անյայտութեանն ծածկեսցեն։ Իսկ առաքեալքն և մարգարէքն զամենայնսորին հակառակն արարին, երևելի և յայտնագոյն զբովանդակ զիւրեանց բանսն յանդիման կացուցին ամենեցուն, իբրև հասարակ ամենայն աշխարհի վարդապետք, զի իւրաքանչիւր որ ինքեամբ ուսանել կարասցի չընթերցուածոյն միայն զասացեալսն։ Այս զայնսոսիկ նախաձայնելով մարգարէն ասէր. "Լուիցէն ամենեքեան ուսեալք յայ. և մի ասասցէ որ իւրաքանչիւր ցընկերն իւր՝ եթէ ծանիր զտէր, զի ամենեքեան գիտասցեն զնա փոքունց մինչև ի մեծամեծս նոցա,,. և Պաւղոս ասէ. "Այս, եղբարք, եկեալ առ ձեզ, ոչ ըստ առաւելութեան բանի խնամոտութեան պատմեցի ձեզ զխորհուրդն այ,,. և դարձեալ. "Բանն իմ և քարոզութիւնն ոչ հաւանական բանիւ մարդկային իմաստասիրութեամբ, այլ յայտնութեամբ հոգւոյն զօրութեան,,. և դարձեալ. "Այսմիկ զնմանատութիւն, և ոչ զնշխանացն զյաւիտենից զայսոցիկ զնախանձելեացն,,։

Օ զինչ ոչ իցէ յայտնագոյն յաւետարանին. ամենայն իսկ ով որ լսելով թէ երանի հեզից, երանի ողորմածաց, երանի որ սուրբ է սրտիւ, վարդապետի կարօտանայցէ զի ուսցի զասացեալսն։ Այլ և նշանքն և բանէլիքն և պատմութիւնք ամենեցուն ծանօթք են և յայտնիք, Պատճառք են այսոքիկ և բաղայք և պղերգութեանն ծածկոյթք։ Այլ իմանալոյ զգրեալսն, և զիարդ իսկ կարասցես իմանալ երբեք որ և ոչ վարկպարապն յառնես ի նոսա։ Այ ի ձեռս զգիրսն, ընթերցիր զպատմութիւնն զամենայն, և զծանօթագոյնսն ի մտի առնել՝ ընդ անյայտսն և ընդ անպիտելիսն յոլովակի անց-

ցես։ Այլ եթէ ոչ կարասցես յաձախութեամբ ընթերցուածոցն գտանել զասացեալսն, երթիցես առ իմաստնագոյնան առ վարդապետան զեկուցանել յաղագս ասացուածոցն, յոլովագոյն ցուցցես զփոյթն։ Այլ եթէ տեսանիցէ զքեզ ած այնքան վարեցեալ յօժարամտութիւն, ոչ անտես առնէ զքո զանգիտութիւնն, ինքն յայտնեսցէ ամենայն իրօք։

Այնչեա զներքինն եթովպացւոյ Թագուհւոյն, որ այր բարբարոս էր և բիւր հոգովք պատանդեալ և ամենայն ուստեք յոլով իրօք շուրջ պաշարեալ, թէպէտ և ոչ գիտէր զոր ընթեռնոյր, սակայն ընթեռնոյր ի կառն նստեալով։ Այլ եթէ ի Հանապարհի այնքան փոյթ ցուցանէր, զմտաւ ած զինչ ոք էր ի տան գաղարելով. զի եթէ ի ժամնակի ուղեգնացութեանն ոչ ներէր առանց ընթեռնոյ կալ ճնալ, և առաւել յորժամ ի տան նստէր. և եթէ ոչ գիտելով զոր ընթեռնոյրն ոչ ի բաց կայր յընթերցուածոյն, յաւէտ և զինի ուսանելոյն։ Այլ զոր ընթեռնոյրն ոչ գիտէր, լուր զինչ ասէր նմա Փիլիպպոս. "Արդեօք գիտիցես զոր ընթեռնուադ ,,։ Այլ նորա զայսոսիկ լուեալ ոչ շառագունեաց, ոչ ամաչեաց, այլ խոստովանեաց զանգիտութիւնն և ասէ. "Օ իմդ կարացից եթէ ոչ ոք ինձ առաջնորդեսցէ ,,։ Այլ և ած ունելով առաջնորդ զոք ընթեռնոյր, յաղագս այնորիկ վաղվաղակի ընկալաւ զվարդապետն։ Այլ ոչ է մերձ այժմ Փիլիպպոս, այլ Հոգին որ յորդոյեաց զՓիլիպպոս՝ մերձ է։

Այ՛ի արհամարհեսցուք զփրկութիւնն մեր, սիրելիք. "Այ՛նոյն փրկք ի խրատ մեզ գրեցան, յորս վախճան յաւիտենից աւարտեցաւ ,,։ Այ՛նծ զգուշութիւն առ ոչ մեզանչելն են գրոց ընթերցուածք. մեծ գահավիժութիւն և խորին վիհ՝ գրոց անգիտութիւն. մեծ մատնութիւն փրկութեան՝ ոչ ինչ յածային օրինացն գիտել։ Այ՛նոքիկ և զհերձուածոն ծնան, նոքին և զապականեալ վարսն ի ներքս մուծին, այնոքիկ զգեր ի վերոյն ի ստորև արարին։ Այ՛նհնարին է անպտուղ ի բաց գնալ ումեք որ յաձախապէս ընթեռնու, այլ վայելէ հանդերձ վերակացութեամբ։

Այ՛հա մի առակս որքան մեզ օգտեաց, որքան լաւագոյն զմեր զանձինս գործեաց. վասն զի յոլովք, քաջ

գիտեմք, զբաւական օգտութիւնն լսելութեամբ առեալ գնացին։ Եւ եթէ իցեն ումանք որ ոչ այնքան շահեցան զպտուղն, այլ սակայն ի նմին աւուր յոլովս լսանցն՝ լաւագոյնք եղեն ամենայն իրօք։ Եւ սուղ և ի միում աւուրն միայն ի մեզացն ապաշաւանս դիզելով՝ հայել ի վերին իմաստութիւնն, և ընձեռել յաշխարհական նացս գնել սակաւ ինչ դադարումն հոգոյն։ Եւ եթէ հանապազօր այսպիսի ժողով առնիցաք, և ոչ վերջանայաք յաճախապէս ի լսելութենէս, գործեալ լինէր մեծ իմն և առաքինի բարւոյ։

Ասեր այսուհետեւ որ ի կարգին է դարձեալ ընձեռեցուք ձեզ։ Եւ զինչ ի կարգին։ Գայեալ ընչեղին «Երանելոյ զի ազարտս զի կամեցաւ ծայրիւ մատինն և զովացուսցէ զլեզու իմ,,, լուր զինչ ասէ Քրիստոս. «Արդեակ, յիշեա զի առեր զբարիսն քո ի կեանսն քում, և Ղ ազարտս զչարչարանսն. և այժմ սա միխիթարի, և դու վտանգիս։ Եւ ի վերայ այդոցիկ ամենեցուն վիհ մեծ է ի մէջ ձեր և մեր հաստատեալ. որպէս զի որք ախորժեսցեն այսր անցանել առ մեզ՝ ոչ կարասցեն, և ոչ ասասի այդր անցանել,,։

Ողանուանք են ասացեալքս և յոլով ի մեզ հեղին ըզցաւսն, գիտեմ և ես. այլ որքան խոցոտ զնս խիղճն, այնքան օգտակ զմիտս խոցոտելոյն։ Երանի եթէ անդ այսոքիկ ասացեալ լինին մեզ որպէս և ընչեղին, ձշմարտապէս սուգ և ողբք և տրտմութիւնք, զի ապաշաւանաց ժամանակ ոչ ևս մնացեալ լինէր մեզ։ Այլ մինչդեռ աստ եմք զայսոսիկ լսեմք, ուր և զարթնուլ կարողութիւն է և զմեղս ի բաց լուանալ և յոքն ստանալ հանդարձակութիւն, և այլոց չար դիպուածովքն երկուցեալք փոփոխեսցուք, գոհանամք զմարդասիրէն Աստ՝ որ այլոց տանջանօք ընդոստացանել զմեր պղերգութիւնս և զարթուցանել զմեզ ի քնոյ։ Գայլագս այսորիկ ասի՝ զի մի նոյնպիսի ինչ կրեսցուք։ Երանելի եթէ կամէր տանջել զմեզ, ոչ յառաջագոյն ասէր. այլ զի ոչ կամի արկանել զմեզ ի պատիժն, վասն այնորիկ կանխաւ ասէ զպատուհասն, զի յօժարութեամբ ողջախոհացուցեալք՝ ի փորձէ իրացն փախիցուք։

Այլ ընդէր արդեօք ոչ ասաց՝ ընկալար զբարիսն քո, այլ առեր։ Գիշէք իսկ դուք, քանզ գիտեմ, զի աստա-

նօր խոր և անբաւ և մեծ խնամոք բացեալ լինին. քան
զի առերն՝ զպարտս իմն ցուցանել և յայտնի առնել, զի
որ առնուն՝ զպարտս առնուն։ Արդ եթէ պիղծ և խակ
և անմարդի էր ընչեղն՝ էր աղագաւ ոչ ասաց նմա՝ Թէ
ընկալար զբարիսն քո, այլ առեր՝ իբրև զիսխս և զպարտս։
Ո՛չ ինչ աստանօր ուսանիցիմք. զի Թէպետ և պիղծք ո-
մանք իցեն և՛ ի վերջին չարիսն վարեալք, բազում ան-
գամ մի ինչ կամ երկուս կամ երիս գործեսցեն բարիս։
Այլ զի ոչ կարծելով զայս ասեմ այժմ, այլ յայտ անտի
է, ո՛ քան զդատաւորն զանիրաւութեան չար եղև, ո՛ան-
մարգագոյն և ամբարիշտ, որ ոչ յայ երկնչէր և ոչ՛ի
մարդկանէ պատկառէր. այլ սակայն այնքան չարու-
թեամբ կելով՝ գործեաց իմն բարի, որ յաճախակի թա-
խանձէր զնա այրին՝ ողորմեցաւ նմա և հատանեցաւ չնոր-
հին և ետ զհայցուածն ընդդէմ դառնալով զկողոպտին
նորա։ Այնպէս դիպի պակշռտեալ ումեք լինել, այլ թեր-
ևս ողորմած. և կամ անմարդի, այլ պարկեշտ։ Այլ
եթէ պակշռտեալ և խակ իցէ, այլ սակայն՛ի կեանս իւ-
րում մի ինչ գործեաց բարի։ Ո՛նոյն գարձեալ և յա-
ղագս պիտանեացն պարտ է բազում անգամ զմտաւ ա-
ծել. զի որպէս վատթարքն գործեն ինչ պիտանացու
երբեմն, նոյնպէս և փոյթքն յառաքինութիւն մեղան-
չեն յոլովակի. քանզի “Ո՛ պարծի սիրտ սուրբ ունել,
կամ ո՛ համարձակեսցի մաքուր գոլ՛ի մեղաց,,։
Արդ զի գեպ էր և ընչեղն՝ Թէպետ և՛ի վերջին չա-
րութիւնսն էր զեղեսեալ՝ գործել ինչ մի բարի, և Զա-
զարոս Թէպետ և զծայրագոյն առաքինութիւնսն ցու-
ցանէր՝ մեղանչել փոքր ինչ, տեսանես զիարդ զերկո-
սեան զայնսոսիկ զեկոյց Հայրապետն ասելով՝ եթէ “Զոս-
առեր զբարիսն քո, և Զ ազարոս զչարիս,,։ Այս դու,
ասէ, եթէ բարիս ինչ գործեցեր, և պարտ էր քեզ առ-
նուլ վարձ, զամենայն զայն յայնմ աշխարհի առեր,
փափկանալով ձոխանալով, ՛ի քաջարութիւնս վայելե-
ցեր և՛ի յոլով բարիս. և սա Թէ չար ինչ գործեաց,
զբռնադակին էառ, սովով աղքատութեամբ՛ի վերջին
չարիս Թշուառացաւ։ Այս մերկ երկոքեան դուք այսր
եկիք. սա՛ի մեղաց, և դու յարդարութենէ. վասն այ-
նորիկ և սա մաքուր ունի զմիսի Թարութիւնս, և դու ան-
փոփոխելի տանջանաց համբերես։

Յորժամ սուղ և փոքր ուղղութիւնք մեր իցեն, սասպիկ և անձառելի մեզայն ծանրութիւնք, յայնժամ աստէն ի բարիան վայելեմք և ոչ ինչ կրեմք դժնդակութիւնս, և այսոքիկ բարեացն հատուցմունք լինիցին, ամայիք և մերկ ամենայնիւ երթեալ գնամք՝ զամենայն աստէն առնուլով։ Որպէս և յորժամ մեծամեծք իցեն ուղղութիւնքն յոքունք, նուազք և սակաւք յանցանքն, կրեմք իմն դժնդակութիւնս. և զնոյն զփոքրունն զայնոսիկ ի բաց դնելով՝ մաքուր և աւարտեալ անդ զբարեացդ գործոցն առնումք փոխարէն զհատուցումն։ Արդ յորժամ տեսանիցես զոք որ չարութեամբ կեցցէ և ոչ ինչ աստ չարչարի դժնդակապէս, մի՛ երանիցես, այլ արտասուեա և ողբա վասն զի զամենայն անդ ընդունելոց է զդժնդակութիւնս, որպէս և ընչեղն այն։ Վասնզեալ յորժամ տեսանիցես զոք խնամ տարեալ առաքինութեան և բիւր փորձութեանց համբերիցէ, երանի՛ և նախանձեա, զի յամենայն ի մեզաց այնպիսին աստէն քաւի, և բազում համբերութեանն վարձք անդ պատրաստին նմա, զոր օրինակ և Ղազարու եղև։

Վասնզի ոմանք ի մարդկանէ աստ միայն տանջեալ լինին, և ոմանք աստ ինչ ոչ չարչարին՝ այլ զամենայն տանջանս անդ առնուն այնպիսիքն, և կէսք և աստ և անդ պատուհասին, ոմ երկոցունց ի նոցանէ երանիցեմք։ Ցախ և առաջին, քաջ գիտեմք, աստ չարչարելոցն՝ որք ի բաց դնեն զմեղսն. երկրորդ զկնի նոցա դուք թերևս արդեօք որք ոչ ինչ աստ պատժիցին, այլ անդ ամենայն համբերեն խոշտանգանացն. բայց ես ոչ այնպիսեացն, այլ որք աստ և անդ պատուհասին։ Զի որ աստէն ըզպատիժն տայ, թեթևագոյնս զպայցէ անդ տանջանացն համբերել, անհրաժարելի զդատաստանն առնէ. որպէս և այս ընչեղս աստէն ոչ լուծանելով ի բաց զկուր զյանցանսն, այնպէս դժնդակագոյն պատժեալ լինէր անդ, մինչ զի և ոչ կամի միով փոքրկան կարելով պատահել։

Եւ այսոքիկ ով որ մեզանչէնն և ոչ ինչ աստէն կրեն չարչարանս, յոյժ առաւելագոյն աւաղեմ զայնպիսին՝ որք հանդերձ ոչ ինչ ընդունելով պատուհաս աստէն, և ընդարձակութեան և ի փափկութեան ևս վայելեցեն։ Զի զոր օրինակ որ ոչ աստէն դատաստան յանցանացն տայ՝ վտանգաւոր անդ առնէ զպատիժն, նոյն

պէս և որք յոլով փափկութիւնս վայելեն և ընդարձակութեան և ձոխութեան, ամբարս և պատճառս տանջանաց մեծագոյն անդր մներեն։ Պանդղ յորժամ մեզանչեմք և պատուիրք չիմ, նոյն ինքն այն յաւէտ մեծապէս զմեզ ի հուր արկանել կարէ. զի եթէ որ յերկայնմտութիւնն նորա միայն վայելէ և ոչ ի պատշաճ իրս վարի, դժնդակագոյն ունի զպատուհասն. յորժամ հանդերձ երկայնմտութեամբն և խնամն ևս ունիցի մեծամեծս՝ և կացցէ և ճնասցէ ի չարութիւնն, ո՞ վնաս զերծուսցէ յայնց տանջանաց որ անդ լինին։

Այլ զի որք յերկայնմտութիւնն աստ վայելեն՝ հաւաքեն բովանդակ ինքեանց անդր զչարն եթէ ոչ ապաշաւեսցեն, լուր զինչ ասէ Պաւղոս. “Ո՞ մտաւ ածցես զայս, ով մարդ, որ դատիս զայնոսիկ որք զայնպիսիսն գործեն, և առնես զնոյն, եթէ դու փախչելո՞ իցես ի պատաստանէն այ։ Կամ զառատութիւն քաղցրութենէ նորա արհամարհիցես, անդիտանալո զի քաղցրութիւնն այ յապաշաւանս զքեզ ածէ. այլ ըստ խստութենէ քումմ և ըստ անզեղջ սրտիդ գանձես քեզ բարկութիւն յաւուրն բարկութեան յայտնութեան արդար դատաւորութեանն այ.,,։

Արդ յորժամ տեսանիցեմք զոմանս փարթամս և փափկացեալս, իւղովքն բուրեալս, յարբեցութեան եբեկացեալս, ի զբօսութեան և ի փառս, և ի բաղում երևելի իրս և ի յամբարտաւանութիւնս և ի մեղս, և ոչ ինչ կրիցեն յաղագս այնոցիկ, յաւէտ զնոսա արտասուեացուք և ողբասցուք, զի մեղանչեն և ոչ տանջին։ Ապաքէն եթէ զոք տեսանիցես ջրգողութեամբ և փայծաղնացութեամբ վտանգեալ, կամ թէ ապականագործ ինչ ունիցի ախտ և բիւր վէրս ամենայն ուստեք, և ի վերայ ամենեցուն այնոցիկ արբենայ և փափկանայ և զախտն սաստկագոյն գործէ, ոչ միայն ոչ պատժեսցի և ոչ երանես յաղագս փափկութեանն, այլ վասն նոքին իսկ մնասանդ եղկես, նոյնպէս և յաղագս ոչուցն զնոսա ածէ։ Յորժամ տեսանիցես զմարդ չարութեամբ կեցեալ և ի յոլով բարութիւնս վայելեալս և ոչ ինչ դժնդակագոյնս չարչարի, նորին իսկ այնորիկ աղագաւ յաւէտ ողբա, զի դժնդակագոյն և ապականացու ախտիս պաշարեալ՝ զհիւանդութիւնն աստկացուցանէ,

սատկութեամբն և չուպատութեամբն չարագոյն ևս լինի։ Օ՛ի ոչ պատիժքն են չարք, այլ մեղքն են գժընդակք. նոքա չոյ՛ի բաց ոտշէն, իսկ պատիժքն հանդուցանեն առ ած զմեզ և լուծանեն զբարկութիւնն։ Յե ուսաի՛ է այս չայտ. լուր մարգարէին որ ասէ. "Ո՛խիթարեցէք մխիթարեցէք զժողովուրդ իմ քահանայքդ, խօսեցարուք՛ի սիրտ Երուսաղէմի, զի լինկալաւ՛ի ձեռանէ տեառն կրկին զչանցանս իւր ,,. և դարձեալ. "Ցուր մեզ զխաղաղութիւն, զի զամենայն հատուցեր մեզ ,,։

Յե զի ուսանիցիք եթէ ոմանք աստ և անդ տանջին, և կէսք աստ՝ և անդ ոչ, լուր զինչ ասէն Պաւղոս առ բաստան լինելով ոչք ոչ արժանաւորապէս հաղորդին խորհրդոյն։ Ո՛րանգի ասելով եթէ "Որ ուտէ և ըմպէ անարժանապէս զմարմինն Ո՛րիստոսի՝ պարտական է՛ի մարմնոյ և արեանն տեառն ,,, ՛ի վերայ կած վաղվաղակի. "Վ ան այնորիկ են՛ի ձեզ յողով հիւանդք և ախտաժէտք և ննջեցեալք բաւականք։ Եթէ զանձինս դատեաք, ոչ արդեօք դատապարտեալք լինեաք. բայց և այժմ դատեալք, ՛ի տեառնէ խրատիմք, զի մի ընդ աշխարհի դատապարտեալք լիցուք ,,։ Տեսանե՞ս զի աստէն տանջանքն յաիշտակէն զմեզ յանտի պատուհասիցն. և "Օ պռոնկեալն մատնեցէք, ասէ, սատանայի՛ի սատակումն մարմնոյ, զի հոգին ապրեսցի յաւուրն տեառն մերոյ ,,։ Յե՛ի Վ աղարու այս չայտ է. եթէ չար ինչ արար, աստէն լուանալով այնպէս չոգաս անդ մաքուր։ Յե յանդամալուծէն քաջայայտ է, որ ելեսուն և ութ ամ ունկեր զերկայնութիւն հիւանդութեանն, ՛ի բաց եդ զմեզն։ Յե զի չաղագս մեզաչն այնպէս անկեալ կայր, լուր զինչ ասէր Ո՛րիստոս. "Ո՛հա ողջ եղեր, մի ևս մեղանչեր, զի մի չար ինչ քեզ լիցի,,։ Ա՛րդ զի ոմանք աստ պատժին և զմեզն՛ի բաց գնեն, չայտ չայտգանէ է։

Յե զի ոմանք և աստ և անդ պատուհասին, չորժամ ոչ արժանի մեծութեան յանցանացն աստէն առնուցուն, լուր զինչ ասէ չաղագս սոգոմացւոցն Ո՛րիստոս. քանզի ասելով եթէ "Որ աք ոչ ընդունիցի զձեզ, թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ,,, ՛ի վերայ կած ասելով. "Հանդարտագոյն լիցի երկրին սոդոմայեցւոց և գոմորացւոց չաւուրն չայնմիկ քան քաղաքին այնմիկ ,,։

Դիւրագոյն ասելով զայն յայտնեաց Թէ և նոքա պատժին, այլ հանդարտապէս, վասն զի ասա ետուն դատաստան։

Այլ զի են ոմանք որք ոչ ինչ չարչարին դժնդակագոյն, անդ համբերեն ամենայն պատուհասիցն, յայտնեաց մեզ ընչեղս այս՝ անհրաժարելի ընդունել զպատիժն, և ոչ փոքր ինչ վայելեր՝ի միխիթարութիւնս յաղագս անգր ամբարելոյ զամենայն զպատուհասն իւր։ Որ օրինակ մեղուցեալցն որոց ոչ ինչ անկանին վասն գաւոր չարչարանք՝ի վերայ՝ մեծագոյն ընդունին անդ զտանջանսն, նոյնպէս և առաքինիքն որք յոլով աստէն կրեն զպատիժս, ՚ի բազում՝ պատիւս վայելեն անդ։ Այլ որպէս երկու մեղաւորք՝ եթէ միոյն աստ տանջի և միւսն ոչ, երանելի է որ պատժին քան որ ոչն չարչարի. նոյնպէս և արդարոց երկուց աստ՝ Թէ միոն յոլովից և միւսն գուշնաքեաց համբերիցէ նեղութեանց, երանելի է որ առաւելապէսն համբերիցէ, վասն զի իւրաքանչիւր ումեք հատուցանիցէ ըստ գործոց իւրոց։

Այլ արդ զինչ՞ ոչ իցեն ոմանք որք աստ և անդ՚ի գիւրութիւն վայելեսցեն։ Այնհնարին այդոքիկ, ով մարդ, և մի յանկարծելեացն. քանզի ոչ է և ոչ իսկ է, որ աստ յընդարձակութեան և՚ի բարութեան վայելէ և յամենայնի յաձախապէս փափկանայ, և զվայրապար և զանտի կեանսն կեայ, ՚ի պատիւ անդ վայելել։ Այնպէս և ոչ վտանգիցէ աղքատութիւնն, այլ սակայն ցանկութիւնն շտապէ և՚ի նմանէ պաշարեալ լինի, և ոչ փոքր այնօրիկ ցաւն. Թէպէտ և հիւանդութիւնն ոչ տագնապեցուցանէ, այլ տրտմութիւնն ոչ դադարեալ վտանգ շուրջ արկանէ. Թէպէտ և փորձութիւնք ոչ դայցեն՚ի վերայ նորա, այլ խորհուրդք չարք յաձախապէս՚ի վերայ յառնեն։ Այլ ոչ դադարեալ՝ սանձահարել զմարմինն առ՚ի վատթար ցանկութիւնսն, դադարեցուցանել զնաւթատուութիւնն, զնստուցանել զամբարտաւանութիւնն, ՚ի փափկութենէն՚ի բաց կալ, ՚ի խրատաւորութիւնս դեգերել. և որ ոչն այսպէս առնէ, անհնարին է այնպիսւոյն ապրել երբեք։ Այլ զի փափկացեալքն ոչ փրկին, լուր զինչ ասէ Պաւղոս. «Փափկացեալն կենդանւոյն մեռեալ է»։ յաղագս կնոջ այրւոյ ասէր։ Այլ եթէ վասն կնոջ այսպէս ասացաւ, առն ա-

զագաւ զինչ ոչ ասիցի. և զի ոչ է հնար դիւրագոյն կալով ումեք՝ պատահել երկնայնոյն, և Քրիստոս զայս յայտ արար այսպէս ասելով. "Լեղ և անձուկ է ճանապարհն որ տանի՝ ի կեանսն, և սակաւք են որ մտանեն ընդ նա":

Յե զիաջդ ասէ, "Ոտ իմ քաղցր է և բեռն իմ թեթև": Լթէ նեղ և անձուկ է ճանապարհն, զիաջդ դարձեալ զնա թեթև և քաղցր ասէ: Ո՞րին յաղագս բնութեանն փորձութեց, և միւսն վասն յօժարամտութեանցն ձեռնամուխ եղելոցն. քանզի է անըմբռնելի իմն բնութեամբ որ լինի թեթև՝ յորժամ հանդերձ յօժարամտութեբ ընդունիցիմք. որպէս և առաքեալքն տանջեալ դառնայինն հրճուեալ, զի արժանիք եղեն յաղագս անուանն անպատուիլ: Յե սակայն բնութե պատժոցն նեղութիւն և ցաւս սովոր են առնել, այլ յօժարութիւն չարչարելոցն և բնութեան իրացն յաղթեաց. յաղագս այսորիկ և Պաւղոս ասէ. "Լմենեքին որ կամիցին բարեպաշտութեամբ կեալ՝ ի Քրիստոս՝ ի Յիսուս, հալածեսցին". թէպէտ և մարդ ոչ հալածէ, այլ սատանայ պատերազմի:

Յե յորով պէտք են մեզ իմաստասիրութեան քաջութիւն, զի աղօթիւք հակիցեմք և արքնիցիմք, զի օտարացն ոչ յանկանայցեմք, զի զոր ունիցիմքն կարօտելոց բաշխիցեմք, զի յամենայն փափկութենէ հեռացեալք հրաժարիցեմք՝ որ հանդերձիցն և կամ սեղանոյն, զի յաւելաստացութենէն փախչիցիմք, զի յարբեցութենէն և՝ ի լուտալոյ և՝ ի լեզուանութենէ ժուժկալիցեմք, զի մի աղաղակիցեմք. քանզի "Լմենայն դառնութիւն և սրտմտութիւն, բարկութիւն և աղաղակ և հայհոյութիւն բարձցի՝ ի ձէնջ". զի մի զաղբաբանիցեմք, զի մի կատակիցեմք: Լե փոքր աշխատութիւն է այսոցիկ հաւատեալ զպահպանութիւնն ցուցանել:

Յե զի ուսցիս որքան է իմաստասիրեբն, և որպէս ոչ ունին իրքն հանդիստ, լուր զինչ ասէր Պաւղոս. "Ձրնշեմ զմարմին իմ և ծառայեցուցանեմ": Օ այս ասելով զեկոյց զբռնութիւնն և յաւէտ զվաստակն, որոց համբերեբն հարկաւոր է որք ախորժենն յամենայնի դիւրերասանակ կազմել զմարմինն: Յե Քրիստոս ա-

շակերտացն ասէր. "Յաշխարհի նեղութիւն ունիցիք. այլ վստահացարուք, ես յաղթեցի աշխարհի ,,: Նեղութիւնք այսոքիկ զհանդիսան ձեզ առնեն: Հանդիսարանք են մերձակայ կեանքս. 'ի հանդիսարանին և 'ի նահատակութիւնն ոչ ոք կարէ վայելել 'ի հանգստեան որ պատկերն հանդերձեալ է. որպէս թէ ոք կամիցի պըսակ ընդունել, զնխատ և զվտանգաւոր կեանս խնդրես, զի սուղ ինչ ժամանակ ատ աշխատեալ 'ի միջոցի՝ ջենաւոր պատիւս վայելեսցէ անդ:

Որքան 'ի վերայ անկանին տրտմութիք հանապազ, որպիսի իցէ անձն, մի թախծեսցի, մի դժուարեսցի, այլ մանաւանդ զոհասցի փառաւորեսցէ երկրպագցէ, որ ոչ թողացուցանէ փորձութեան 'ի վերայ գալ: Որքան արուժելիք[1] և նեղութիւնք իցեն, պարտ և արժան է նեղել զչար խորհուրդս և ոչ անսալ լեզուացն բարբառել ինչ անարժան. որպէս և երանելին Յովբ բիւր չարչարանս ընդունելով եկաց միայ զոհանալով զայ:

Կայց են ումանք զի յոր ինչ և գայթակղեսցին և կամ յումեքէ թշնամիցին, 'ի յանդգնութիւն և 'ի գլխայաւութիւն կամ յայլ ինչ նոյնպիսի ցաւս՝ հայհոյեն, և ցաւոցն հիւանդութեանց ոչ համբերելով 'ի շահէն զրկին: Օ ինչ առնես, ով մարդ. զբարեգործն և զփրկիչ, զվերակացուն և զնաւամղն հայհոյես. ո՞չ գգաս 'ի գահավիժութիւնդ անկանել, և 'ի վերջին վնաս կորըտեան զքեզ ընկենուլ: Արիթէ յորժամ հայհոյեսդ, թէ և ապիկն ինչ զախտդ առնիցես. սաստկացուցանես և զդա, և դժնդակագոյն զցաւդ առնես: Արանդր յաղագս այդորիկ իսկ սատանայ բիւր դժնդակութիւնս 'ի վերայ ածէ զի յայն վնաս զքեզ ինքուցանիցէ. և եթէ տեսանիցէ զիւրով զհայհոյութիւնն, աձեցուցանէ ըզցաւն և մեծագոյն առնէ, զի խոցոտեալ դարձեալ դըժուարացես. իսկ եթէ տեսանիցէ առաքինաբար բերելով, և որքան ցաւն սաստկանայցէ՝ այնքան առաւել գոհանայցես զնմ, 'ի բաց կայ վաղվաղակի 'ի մտաւ և վայրապար դարանակալ լինելոյն այնուհետև: Այս զոր օրինակ շուն 'ի սեղան մերձ կայեալ, եթէ տեսանիցէ որ ոտէն՝ յանձախաբար նմա ընկենուցու 'ի կերակրոյն

1 Թերևս անախորժելի՞. յոյնն անախնալ:

որ՝ի վերայ սեղանոյն կայցէ, կայ ինայ անդէն յարա
ժամ. ապա եթէ միանգամ և կամ երկիցս մեծ կա
ցեալ ոչ ինչ առնու՝՝ի բաց գնայ այնուհետեւ՝ի մտոի
դեգերանացն հրաժարելով։ Նոյնպէս և բանաստիւն
յաձախապէս բերանաբացեալ կայ առ մեզ. եթէ ըն
կեցցես իբրև շուն բան հայհոյութեան, ընդունելով
զարձեալ խարդախ. իսկ եթէ գոհասցիս, խեղդես
գնա սուրբ, և վաղվաղակի՝ի բաց մերժես և փախչել
պատրաստես։

Այլ թերևս ոչ կարիցես՝ի լուռ կալ՝ի ցաւոյն խոցո
տեալ, և ոչ ես արգելում՝ի բարբառելոյ. այլ փոխա
նակ հայհոյութեանդ գոհութեի, և փոխանակ դժուարութեանդ
բարեբանութեի։ Այսպատուվանութեիւն տեառն բարբառեա
մեծաձայն աղաղակելով, և այնպէս զքո զախտն թե
թևացո. ՝ի բաց կալով սատանայի յաղագս գոհութեն՝
և՝՝ի օգնականութեիւնն մերձ լինի։ Այսպա եթէ հայհոյ
ես, զի՝՝ի մարտակցութեիւնն՝՝ի բաց մերժես, և սատա
կագոյն գործես հակառակ քեզ զսատանայ, և առաւել
ևս զքեզ շահես ընդ ցաւս։ Իսկ եթէ գոհանաս, ըզ
դժուարութեիւնն՝՝ի բաց առնես զչար դիւին, և զքնա
ջողն՝՝ի զգաստութեիւնն ձգես առ քեզ։

Այլ թերևս՝՝ի սովորականս ինչ յարձակիցի լեզուդ
և զչար ինչ բան բարբառիցի։ Այլ յորժամ գիտես
ցէ, նախ քան զբան արտաքս հանել, խածչիր ատա
մամբդ զլեզուդ ուժգնապէս. օգտակարագոյն է արիւն
հոսիլ այժմ, քան եթէ յայնժամ կաթի միօջ տենչա
լով ոչ կարիցես միսիթարութեանն հանդիպել. օգտա
կարագոյն է դմա համբերել ժամանակեայ ցաւոցս, քան
եթէ յաւէժ և անհաւ տապակիցի անդ, որպէս ընչե
զին լեզու բարբառելով միսիթարութեան ոչ միւսմ գի
պեցար։ Ո՞չ թշնամին քո սիրել հրամայեաց ձեզ, և դու
՝՝ի սիրոյն քումմէ չար՝՝ի բաց դառնաս։ Ո՞չ զպժողն
օրհնել, զթշնամանողսն բարեբանել. իսկ դու զբարե
գործն և զվերակացուն չարախօսես ոչ ինչ զրկեալ։ Այ՝՝ի
եթէ ոչ կարեր լռեցանել զիտրձութեիւնն. այլ նեբեաց
զի ընտիր լինիցիս։ Այհա, առ, ՝՝ի վայր անկանիմ և կո
րընչիմ. ոչ՝՝ի փորձութեենդ, այլ՝՝ի քումմէ յօժարա
մտութեենդ։ Ո՞չ ինչ գիւրագոյն է, ասա ինձ, հայհոյ
ութիւն, եթէ գոհութիւն. ոչ միսն և զլեզուն թշնա

վիս քեզ և պատերազմեզս առնել և՛ ի տրամաբանութիւն ըզքեզ արկանել, զկնի այնորիկ և յոլովագոյն գործել ըզգուսան. իսկ միւսն բիւր պակաս քեզ և խնամատարութիւն և բիւր հրաշափառութիւնս յամենեցուն և մեծամեծ յայլ գհատուցմանն։ Այլ արդ ինքն աղաչաւ զօգտակարագոյնն և զդիւրինն և զախորժելին թողուլ, և զինաւակարի և զտրամեցուցանողն և զհաշմեցուցանողն փոխանակ նոցա ընդհետ երթալ։

Այլ այլ ազգ ևս, եթէ նեղութիւն և աղքատութիւն և փորձութիւն պատճառք հայհոյութեան լինին, բոլոր եղեցուն որք յաղքատութեանն էին՝ պարտ և արժան էր հայհոյել։ Իսկ այժմ վերջին աղքատութեամբքն կենդանի յոլովք՝ յարաժամ գոհանան. և այլք վայելեն՛ ի փարթամութեան և՛ ի փափկութեան, և ոչ նուազին եղբեկք՛ ի հայհոյելոյ։ Այսպէս ոչ իրացն քննութիւն, այլ մեր յօժարամտութիւնքն զայս և զայն գործեն։ Յաղագս այսորիկ և զառակս զայս ընդերցեալ, պի ուսցիս եթէ հայհոյչին ընդեղութիւն ինչ ոչ օգնէ, և որ զգուշանայն՝ և ոչ աղքատութենն վնասել կարէ։ Այլ զինչ ասեմ աղքատութիւն. թէպէտ և բազմանգամ իսկ միանգամայն խմբեացին մարդկան չարիք հակառակ ճաշակիլն և խնամատարի անձինն, ոչ երբեք յանդիմանեցեն և ոչ՛ ի բաց կալ հաւանեցուցանեն յառաքինութենէ. և այսոցիկ վկայ Պաւղոս։ Ասպէս լքեցելոյն և մերկեցելոյ ոչ փարթամութիւն և ոչ ողջութիւն, ոչ յարաժամ բարօրութիւն և ոչ այլ ինչ օգտել երբեք կարեն։ Ի սմանացուք այսուհետև եթէ աղքատութի և հիւանդութի և վշտաց՛ ի վերայ յարձակմունք հայհոյել հարկեցուցանեն. քանզի ոչ աղքատութիւն, այլ անմտութիւն. ոչ հիւանդութիւն, այլ արհամարհանք. ոչ վտանգից՛ ի վերայ յարձակումն, այլ կենցաղն ամայութիւն՛ ի հայհոյութիւն և յամենայն մեղս ածէ զոչ զգուշացեալսն։

Այլ ընդ՞ր, ասեն, ոմանք աստ տանջին, և կեսք անդ, և ոչ աստ ամենեքեան։ Այ՞ր վասն. եթէ այդպիսիկ էին, բոլորեքեան կորնչէաք. վասն զի ամենեքեան պատժասպառ եւք։ Պարձեալ եթէ ոչ ոք աստէն տանջեալ լինէր, ծուլագոյնք թերևս յոլովք լինէին, և բազումք ասէին ոչ գոլ նախախնամութիւն. քանզի եթէ

այժմ առնանելով զբազումս ի չարեացն պատժեալ՝ յա-
ձախապէս այնպէս հայհոյեն, եթէ ոչ էր այդ՝ զինչ ար-
դեօք ասէին, յոր վայր ոչ ելանէին չարութիւնքն. վասն
այնորիկ ած զմանս ասա տանջէ, զի պատժելով զնոսա
ի չարեացն մերժիցէ և թեթևագոյն անդ արասցէ, և
կամ կատարելապէս ի բաց աղատեսցէ ի նոցանէ. և
որք չարութեամբն կեան՝ ողջախոհագոյնս առնեն զայն-
պիսին պատիժքն։ Այլ զարձեալ զկնա ոչ տանջէ, զի
եթէ հայեացին յինքեանս՝ և երկիցեն, յայ երկայն-
մտութենէն պատկառելով՝ ի յաստի տանջանացն վճա-
րեսցին և յանտի պատուհասիցն. ապա եթէ կացցեն
ինասցեն, ոչ ինչ յանոխակալութէն այ օգտելով, այլ
մեծագոյնս ընկալցին տանջանս յաղագս ասստկացեալ
իւրեանց արհամարհանացն։

Այլ եթէ ասիցէ ոք՝ եթէ որք տանջին զրկին, քան-
զի կարէին թերևս ապաշխարել զայն ասասցուք. եթէ
կանխաւ գիտէր ած եթէ ապաշաւելոց էին նոքա, ոչ
արդեօք պատժէր. քանզի եթէ զոր գիտէն եթէ ա-
ռանց ուղղութեան կալոց ինալոյ՝ սակայն ներէ՝ յաւէտ
և զոր գիտէրն եթէ չահելոց ինչ են յերկայնմտու-
թենէն՝ թողոյր արդեօք ի մերձակայ կեանս, որպէս զի
վայելեսցեն սահմանեալ ժամանակաւ յապաշխարու-
թեան՝ բայց այժմ յափշտակելով զնոսա՝ թեթևա-
գոյն զանտի դատաստանն ասոի տանջանաքն դործէ։

Այլ հիմ ամենեցուն ոչ զայն առնիցէ չարեացն։ Ո՛վ ի
ահիւ այլոց տանջանացն որք ինասցենն՝ ողջախոհագոյնք
լինիցին, զայ երկայնմտութիւնն յարդելով և ի հեղու-
թենէն պատկառելով ի բաց կացցեն ի չարութենէն։
Այլ ինչ յայսցանէ լինի, ասեն։ Այլ և ած պատճառք այ-
նուհետև, այլ նոցա պղերգութիւնն որք ոչն ախորժեն
այնքան դեղովք ընդունել զբժշկութիւն՝ զոյս զիւրեանց
պատուհասն ի կիր արկանեն։ Այլ զի ուսցիս եթէ յա-
ղագս այնոցիկ զայս առնէ, խաւնեաց երբեմն զարիւնն
գալիլեացւոցն Պիղատոս ընդ զոհսն, և մատուցեալք
պատուէրին նմա զայն, և ասէ. «Ո՛վ ինչ կարծէք, եթէ
այն գալիլեացիք միայն էին մեղաւորք. ոչ, ասեմ ձեզ,
այլ եթէ ոչ ապաշխարիցէք, և դուք զնոյն ընկալջիք»։
Վարձեալ այլք ոմանք ուռ և տասանք Թաղեցւոն ընդ
աշտարակաւ ոմանք, և վասն նոցա զնոյն ասաց ասելով.

“Ո՞ւնչ կարծէք, եթէ այն գալիլեացիք միայն էին մեղաւորք. ոչ, ասեմ ձեզ,,. եւ յոյժ եթէ և կենդանիքն նոցին համարապարտ. ասելովն եթէ ոչ ապաշխարիցէք՝ և դուք զնոյն կրեսջիք, եւ յոյժ զի և նոցա ներեաց յաղագս սուտ կրել պատուհաս, զի կենդանիքն այլոց դիպուածովք զարհուրեալք ապաշխարեսցեն։

Եւ արդ զի՞նչ ևս. զի ես լաւագոյն եղէց, նա տանջի։ Ո՛չ յաղագս այդորիկ, այլ պարտի վասն իւրոց յանցանացն։ Զինի դիպուածն և զգուշացելոցն փրկութեան պատճառք, որք երկիւղիւ պատուհասիցն փոյթ զինքեանս առնեն։ Զոյսպէս և տեարք գործեն, զի որ ’ի ծառայիցն բազում անգամ տանջեն, և զայլն ողջախոհագոյն ահիւն առնեն։ Զդրդ յորժամ տեսանիցես զմինսն ’ի նաւաբեկութիւնս անկեալս և կամ ’ի տան թաղեալս և կամ ’ի գետոց հեղձեալս կամ այլով ինչիք օրինակաւ բռնութեան կենացն զրաւեալս, և զայլսն ևս նոյնպիսի իբրև զնոսա և կամ ևս չարագոյն մեղուցեալս, և ոչ ինչ գժնդակութիւնս ընկալեալ, մի ամբոխեսցիս ասելով վասն ի՞ր արդեօք զնոյն մեղանչելով, ոչ նոյնպէս չարչարեցան։ Զայլ զայն զմտաւ ածէ, զի միւսոյն ներեաց ’ի բաց կորնչել և մեռանել, հանդարտագոյնս կազմելով զնորա տանջանսն անդ՝ և կատարելապէս զնա ’ի բաց վճարելով. իսկ միւսումն ոչ ինչ ասաց այնպիսի չարչարանս կրել, զի նորա պատժովքն ողջախոհացեալ հեզագոյն լինիցի. ապա եթէ կայցէ ինձասցէ ’ի նոսին առանց մխիթարութեան՝ իւրով պղերգութեամբն չեզջակուտեսցէ զտանջանսն, և ասէ ոչ ինչ պատճառ լինի անբաւելի պատժոցն։ Զարձեալ եթէ տեսանիցես զարգարն վտանգեալ և կամ ըստ առաջինն ասացելոցն՝ մի թախծիցիս, զի և նմա պայծառագոյն զպսակն գործեն պատուհասքն և ’ի տանջանացն ազատեն. և ամենայն իսկ պատիժք եթէ զմեղաւորս խոշտանգիցեն՝ ’ի բաց հատանեն զմեղացն ծանրութիւնն, և եթէ զարգարս՝ պայծառագոյն զանձինս նոցա գործեն, և մեծամեծք շահ երկոցունն ’ի նեղութենէն ամբարին, եթէ գոհանալով և եթէ տանիցիմք. քանզի խնդրելին այս է։

Զայսոքիկ բիւր այսպիսեօք առակօք ածային կիրք են լեալ, զարդարս և զչարս գժնդակապէս չարչարեալս մեզ ցուցանեն. զի եթէ արդար իցես և եթէ

մեղաւոր, ունելով զօրինակն՝ բերցես առաքինաբար։ Ոչ միայն չարչարեալ դժնդակապէս, այլ և դիւրութեամբ աչողեալս քեզ ցուցանեն զչարան, զի մի նոցա աչողութեամբն ամբոխիցես, ուսանելով ի յընչեղին այնորիկ ի պատահիցն որպիսի հուր զինի այնոցիկ կայ միայ նոցա եթէ ոչ փոխոխեսցին աստէն։ Եւ ոչ իցէ և աստ և անդ ի հանգստեան վայելել, ոչ է. յաղագս այսպիսիկ աստ արդարք զտաժանելն կեանն կեան։

Եւ ընդէր, ասեն, Աբրահամ ևս այնքան կրեաց չարչարանս. ոչ ի գաւառէն արտաքս անկաւ. ոչ յընտանեացն ամենեցուն որոշեցաւ. ոչ յօտար երկրի սովոյ համբերեաց. ոչ իբրև զաւազակ յաճախապէս փոխխեալ լինէր ի Եգիպտոս, անտի ի Պաղեստինէ և անտի Եգիպտոս։ Զինչ ոք ասասցէ որ յաղագս կնոջն, որք ի բարբարոսաց պատերազմունք՝ սպանմունք՝ գերութիւնք ընտանեաց ազգայնոցն. բիւրք նոյնպիսիք այլք։ Եւ յորժամ զորդին ընկալաւ, ոչ քան զամենեսեան համբերեաց դժուարին իրաց, զգանկալին իւր և զաճեչալին ձեռօք իւրովք խողխողել հրամայեցաւ։ Եայց և նոյն ինքն զենեալն Եսահակ ոչ ամենայն ուստեք վարեալ լինէր ի սահմանակցացն, և ի կնոջէն զրկեալ որպէս և Հայրն, և անօրդի այնքան ժամանակս եկաց միայց։ Զինչ և Յակովբ ի տան նստեալն, ոչ քան զՀաւն դժնդակագունից համբերեաց։ Եւ զի մի զնամ՝ ասելով երկայնագոյն առնիցեմք զբանս, լուիցուք զինչ ասէր յաղագս բազմանդակ կենացն իւրոց. "Սուղք և չարք աւուրք իմ, և ոչ ժամանեցին հարցն իմոց"։ Եւ ո՞ր զօրդի ի Թադաւորական աթոռ նստեալ և յայնքանս վայելեալ ի փառս՝ ոչ մոռանայցէ զանցեալ Թշուառութիւնն. բայց սակայն այնպէս էր ծնեալ, մինչ զի ոչ և ի բարութիւնն յայնոսիկ մոռանայր ըզլեալ դժնդակութիւնն։ Զինչ և Պաւիթ, որքան համբերեաց ողբերգութեանցն. ոչ զնոյնս յաղագս ինքեան բարբառի ասելով այսպէս. "Սուղք ամաց մերոց եօթանասուն, և առաւելն քան զայսոսիկ՝ վաստակ և ցաւ"։ Զինչ և Երեմիաս. ոչ զօրն իւր նղովէր յաղագս իրերացն ի վերայ դժնդակութեցն։ Զինչ Սովսէս. ոչ զնոյնս ասէր, "Ապան զիս եթէ այդպէս հանդերձեալ ես առնել"։ Զինչ և Հեղիաս երկնաբերձ

անձն՝ որ զերկիւն փակեաց, ո՛չ զկնի յոլով աքանչելեացն ողբս կատարէր և ՚ի սէր. «Ի բաց առ զՀոգի իմ յինէն, զի ոչ եմ ես լաւագոյն քան զՀարս իմ»։ Այլ զինչ և ես պիտոյ են ասա իւրաքանչիւր ուրուք նոցա բառնիւ. զամենեսեան իսկ միանգամայն առնուլով Պաւղոս ասաց. «Ե՛ր ըզկեցան մաշկօք, այծիւ մորթովք, զրկեալք նեղեալք չարչարեալք, զորս ոչ արժէ աշխարհ»։

Այլ ամենայն իսկ հարկաւորութիւն է որ հանդերձեալն իցէ հաճոյ լինել ՚ի և ընտիր և սուրբ, և ոչ ըզհանգստեան և զդէզ և զլոյծ կենացն զհետ երթայ, այլ որ վտանգիւքն և դրժուարեամբ բազմաւ լի է և քրտամբք. քանզի «Ա՛ռ ոք սրակի, ասէ, թէ ոչ օրհնօք նահատակիցն»։ և «Ա՛մենայն որ նահատակի, ամենայնի ժուժկալէ և բանիւ և տեսութեամբ և ձայնիւ և լուտանօք և մնոտի համբաւուք և զազրաբանութեամբ»։ Անպէտ և փորձութիւն ՚ի վերայ ոչ գայցէ, արտաքուստ ինքն զինքն կրթէ հանապազօր պահօք, խոտորվանութեամբք, անարդ կերակրովք, պարզ սեղանաւ, ՚ի բազմապատիկ ամենայն ուտեսէ ՚ի բաց փախչելով. քան այլ ազգ ոչ է հնար հաճոյ լինել ՚ի՝

Ա՛ՀՀ ոք լինձ զցուրտ բանն զայն ասասցէ, թէ և աստ այս անուն ունի և անդ։ Ա՛նհնարին է այս ընդդէմացն և փախկացելոցն և յանցաւորաց հանդիպել. բայց եթէ պարտ և արժան իցէ զայս ասել, յաղագս վշտացելոցն է ասելի՝ որք ՚ի նեղութեանն են. զի և աստ ունին և անդ ունին ՚ի հատուցմանն վայելել. և աստ յուսովքն այնոքիւք կերակրեալք՝ և ոչ առնուն զգայութիւն մերձակայ չարեացս վատահութիւք հանդերձելոց բարեացն։

Ա՛յլ լուեալք և որ ՚ի կարգին։ «Ի վերայ ամենեցուն այդոցիկ վիհ հաստատեալ է, ասէ, ՚ի միջ ձեր և մեր»։ Յայտնի յայտ է, եթէ «Ա՛ղբայր ոչ փրկէ և ոչ փրկեսցէ մարդ, և ոչ տայցէ ՚ի զփրկանս իւր», եթէ հայր իցէ և եթէ որդի։ Արդի կոչեաց Ա՛բրահամ զընչեղն, և զՀօր իրս ցուցանել ոչ կարաց. հայր կոչեաց զԱ՛բրահամ փարթամն, և ՚ի բարեմտութենան յոյսովք պատշաճ էր վայելել որդւոյ՝ ոչ ըմբռնեալ. զի ուսցիս եթէ ոչ ազգակցութիւն, ոչ բարեկամութիւն և ոչ այլ իրք օգնել կարեն որ չիւրոյ կենացն է մատնեալ։

Օ՜այս ասեմ զի զյոլովս տեսանեմք որոց բազում անգամ պատուիրեմք զգուշանալ անձանց իւրեանց՝ արթուն լինել, պղերգանան և՛ի ծաղր զկարան արկանեն. դու ինձ, ասեն, վերակացու լինես յաւուրն յայնմիկ. քաջալերին և ոչ ինչ երկնչին։ Դարձեալ այլ ոմն՝ հայր վկայ ունիմ, ասէ. և միւս ևս ոմն՝ զնախահայրն եպիսկոպոս. այլ ոմն՝ զընտանիսն առաջի արկանէ։ Յուրտ են բանքս այսոքիկ. ոչ ինչ մեզ այլոց առաքինութիւնն օգնել կարէ։ Յիշեա զկուսանան որ հինգ կուսանացն ոչ ետուն յիւղոյն, այլ մոխին՛ի հարսնարանն, և արտաքս արգելան այլքն։ Մեծ բարիք են յիւր ուղղութեանն զոյս փրկութեանն ունել, քանզի բարեկամ ոչ ոք և ոչ երբեք այսմ մերձ կայ։ Օ՜ի եթէ աստէն Աբրեմիայի ասէր "Մի՛ աղաչեր վասն ժողովրդեանդ այդորիկ,,, աստ ուր տեառըք էին փոխոխումն ընդունելոյ, և առաւել անդ։ Օ՜ինչ ասես, հայր վկայ ունիս. նոյն այդ զքեզ առաւել դատապարտէ, յորժամ՛ի տանէ ունելով զառաքինութիւնն՝ անարժան զքեզ նախասհօրն վարուցն արարեր։ Մ՜յլ թերևս բարեկամ զոք ունիցիս աքանչելի և հրաշալի. և ոչ նա առ քեզ մերձ կացցէ յայնժամ։

Նա զլիմրդ ասէ, "Մ՜րարէք ձեզ բարեկան՛ի մամոնայէ անիրաւութեան, զի ընկալցին զձեզ յաւիտենական խորանան,,։ Մէ բարեկամութիւնն աստանօր առաջակայ լինի, այլ ողորմութիւնն. քանզի եթէ բարեկամութիւնն միայն վերակացու լինէր, պարտ և արժան էր ասել՝ արարէք ձեզ բարեկան. իսկ այժմ ցուցանելով եթէ ոչ բարեկամութիւնն վերակացու լինի, յաւել՛ի մամոնայէ անիրաւութեանն։ Նա թերևս ասիցէ ոք. կարեմ և առանց մամոնայի առնել բարեկան, և մտերմագոյն ևս քան զմամոնային։ Մ՜յլ զի ուսցիս եթէ ոչ ողորմութիւն է որ վերակացու լինի, և գործքն քո և ողորմութիւնն, և ոչ վայրապար՛ի սիրելութիւն սրբոցն, այլ՛ի բարեկամութիւնն որ՛ի մամոնայէ լինի՝ հաւանեցոյց զքեզ վատահանալ։

Օ՜այս ամենայն տեսանելով, սիրելիք, հայեսցուք՛ի յանձինս հանդերձ ամենայն հաւատոյ եռամբ. եթէ չարչարիմք զոհասցուք, և եթէ՛ի բարութեան յերկայնութիւնէ զգուշասցուք, և այլոցն չարչարանօք խրատեսցուք

ցուք ապաշաւանօք և զղջմամբ և յաձախապէս խոստովանութեամբք. եթէ յանցանք իսկ լեալ իցեն՝ ի մերձաւորս կեանս, ՚ի բաց դիցուք. և հանդերձ փութով զամենայն աղտեղութիւն զանձանց մերոյ ջնջեացուք. աղաչեացուք զնա արժանի լինել ամենեցուն՝ աստէն լուծանելով զմեզս և այնպէս երթալ անդր. զի մի ընդ ընչեղին, այլ ընդ Ղազարու ՚ի հայրապետին ՚ի գոգ վայելելով՝ անմահ բարեօքն զուարճասցուք: Որոց լիցի ամենեցուն հանգիպել չնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ի ՂԱԶԱՐՈՍ (ՃԱՒ Գ.)

Ո՞ղազարու զառակիս գիտատարած հարկաւոր է այսօր ընծեռել: Ոչ թերևս զամենայն ՚ի մէնջ աւարտեալ կարծիցեք. բայց ես ոչ ևս վարեցայց դիպուածով ձերոյ անգիտութեանդ, և ոչ ՚ի բաց կացից նախքան թէ զերևելին զամենայն առեալ գնացից: Ո՞չ և միակ զամենայն այգին կթելով, ոչ ՚ի բաց կայ մինչև զկոտղան ևս քաղիցէ: Ա՞յդ զի տեսանեմ ես իբրև ընդ տերևով ընդ գրովքն ծածկեալ տակաւին խմաստս, բերք և զայնոսիկ փոխանակ յատոցի բանիս վարեցեալ՝ դարձեալ հաւաստեաւ կթեացուք: Ա՞յդի մի անգամ կթեալ՝ կայ մնայ մերկ ՚ի պտղոցն՝ զտերևն ևթէ ունելով. բայց հոգևոր այգի ածային գրոց ոչ այնպէս. այլ թէ և զերևելին զամենայն առնուցումք, սաստկագոյն ևս գարձեալ կայ մնայ անդէն:

Յոլովք և նախ քան զմեզ յայս պատձառ ասացին, բազումք և ղկնի մեր ասասցեն. բայց ոչ ոք զամենայն զմեծութիւնն փակել կարասցէ: Վանզի այս է սեպհական գրոց բնութիւն, որքան առաւել բրեսցեն, այնքան յաձախապէս բղխեն[1] խմաստք ածայինք. աղբիւր է, որ ոչ երբեք նուազէ: Պարտ էր և խմում ժողովին

1 Պահասէր յօրինակին բղխեն խմաստք ածայինք. յաւելաւ ՚ի յուսէն:

ընձեռել ձեզ պատրան. այլ ոչ զգուշագոյն վարկայ զե-
րանելեաւս զ'ստբելաւ և որք սահմանակից աստ բր վը-
կայք են՝ զանց առնել զուղղութեամբն. վասն որոյ ըղ-
պարտան յերկարեցաք 'ի մերձակայ օրն, և զբանդակ
զպահանջումն բերցուք։ Յաւուհետև վասն զի հարց
զբարեբանութեն մեր հատուսցուք, ոչ որպէս արժանա-
ւոր է նոցա՝ այլ ըստ մերում կարողութեան, ընձեռես-
ցուք և ձեզ ըստ պատմութեն զայսոսիկ զնշխարս։ Այլ
մի պարտասիցէք մինչև 'ի վախճանն ժամանեսցուք, ան-
տի առնուլ զբանն ուր Թողաքն զնա յառաջնում ա-
ւուրն, զնաւար՝ արգելեալ զարդարս 'ի մեզատրացն։

Յանգի ասացեալ ընչեղին՝ առաքեա զի ազարտա,
պատասխանի տայր Աբրահամ. "Ահ իմ մեծ հատա-
տեալ է 'ի մէջ մեր և ձեր. որպէս զի որք կամիցինն ան-
ցանել՝ ոչ կարասցեն, և ոչ ասասի այդր անցանել որ ,,։
Այս ցուցաք յոլով ասացուածովք թէ արպէս զինի այ
մարդասիրութեանն՝ յիւր ուղղութիւնն զայս փրկու-
թեանն պարտ և արժան է ունել, ոչ զհարս և զհաւս
թուել, ոչ զաղգայինս և զբարեկամն և զդրացիս. քան-
զի "Աղբայր ոչ փրկէ և ոչ փրկեսցէ մարդ ,,. այլ որ-
քան աղաչեսցեն և պաղատեսցեն որք հանդերձ մեզօքն
աստի գնացին, զամենայն մնասի և ընդունայն խոսին։
Ոչ և կայքն աղաչեցին զհաստակակիցն յաղագս իւ-
րեց, և ոչ դիպեցան. և որ զտաղանդոյն զմինն թաղեաց,
յոլով պատասխանիս ետ, այլ դատապարտեցաւ. դար-
ձեալ և որք ոչ քաղցեալ զնա կերակրեցին և ոչ ար-
բուցին զծարաւեալն, և նոքա կարծէին յանդիտութենն
ապաւինել, ոչ Թողութեան և ոչ պատասխանեաց հինչ
դիպեցան։

Այլ ոմանք և ոչ ասել հինչ զօրեցին, որպէս այն որ
զաղտեղի հանդերձն զգեցեալ էր. զի բամբասեալ՝
լռէր։ Այս ոչ նա միայն, այլ և միւս ևս ոմն որ ընկերին
սիրալ եղև և զհարիւր դահեկանն պահանջեաց, և ա-
պա յաղագս այնորիկ 'ի տեառնէն մեղադրեալ վասն
խակութեան և անմարդութեան, ոչ հինչ ունէր ասել։
Ասասի յայտ է թէ ոչ որ անդ վերակացու լինի, եթէ
ոչ ունիցի գործս բարիս. այլ եթէ աղաչիցեմք և պա-
զատիցեմք և եթէ լսիցեմք, նմանապէս 'ի վերայ մեր
գալոց են տանջանքն և պատիժքն։ Լսուր զիարդ և սա

ինդրեաց երկուս ինդիրս յ[Ա]բրահամ, և յերկոցունցն վրիպեաց. նախ առաջին յաղագս իւր պատգամանն առնէր, "[Ա]զաքեա զ[Ա] աղարտս,, ասելով. և զինի՝ ոչ ևս վասն իւր, այլ եղբարցն աղագաւ. բայց և ոչ զմիոյնն հաւ զնդիրն. վասն զի առաջինն էր անկարելի, և երկրորդն աւելորդ յաղագս եղբարցն: [Ա]յլ սակայն նոցին իսկ բանիցն լուիցուք հանդերձ բազում փութով:

Օ՛ի եթէ իշխանք՛ի մէջ հրապարակի ածելով զդատապարտեալն, և զդահիճսն շուրջ կացուցանելով բերիցեն զպատժապարտն, հանդերձ բազում յօժարութեամբ ընթանան ամենեքեան ցանկանալով լսել զինչ դատաւորն հարցանէ, և կամ զինչ դատապարտեալն պատասխանի առնէ. և ևս առաւել աստ հաւաստեաւ լսել պարտ և արժան է զինչ դատապարտեալ ընչեղս այս աղաչէ ասելով, և զինչ դատաւորն պատասխանի տայ՛ի ձեռն [Ա]բրահամու: [Ա]նգղ ոչ հայրապետն էր որ դատէր, թէպէտ և նա խօսէր. այլ զոր օրինակ յարտաքին յատեանս յայսոսիկ յորժամ իցեն ոմանք պատժապարտք, աւազակք և մարդասպանք, հեռի՛ի դիմաց դատաւորին կան, զի և ոչ իսկ հրամայեն նոցա օրինաքն դատաւորին լսել զձայնն, հանդերձ այլովքն և այնոքիկ զնոսա անպատուեն, ՛ի մէջ ոմն սպասաւորէ հարցուածոց զդատաւորին և պատասխանեաց դատեցելոյն, նոյնպէս և յայնժամ լինէր. ոչ զնոյ խօսսն առնա՛լեր դատապարտեալն, այլ՛ի մէջ էր [Ա]բրահամ՛՝ի դատաւորէն սպասաւորելով դատապարտելումն: [Ա]ման զի ոչ յինքեանէ խօսէր, այլ և զաստծային օրէնսն նմա և զ՛ի վերոյստ բերեալ զվճիռն ասէր. յաղագս որոյ սա և ոչ ընդդէմ ասել ինչ ունէր:

Հայեցուք այսուհետև զգուշութեամբ հաւաստեաւ՛ի յասացեալսն: [Ա]նգղ մտադիւրութեամբ յերկարեմ յայսմ առակի, և զչորեակ օրն ունելով ոչ՛ի բաց կամ, վասն զի յոլով շահս՛ի պատմութենէս լեալս տեսանեմ ընչեղաց և աղքատաց, և յաղագս չարացն յաջողութեան և արդարոցն աղքատութեան և նեղութեամբ զբօսելոցն: [Ա]ման զի ոչ այլ ինչ այնպէս զյոլովս գայթակղեցուցանէ սովորեաց և խռովեցուցանէ, որպէս փարթամք չարութեամբ կելով՛ի բազում բարութենէն վայելելով. և արդարք առաքինութեամբք կեցեալք, ՛ի

վերջին հալածին յաղբատութիւն և 'ի բիւր յիրս՝ որ քան զաղբատութիւնն դժնդակագոյնք են։

Ա՛ւայց այս առակ բաւական է ընձեռել զդեղն՝ զընչեղն ողջախոհացուցանելով և զաղբատան միխիթարելով. զնոսա իրատես զի մի մեծամեծս ինչ խորհիցին յորժամ չարք լեալք ոչ տայցեն աստէն զդատաստանն, որպէս զի դժնդակագոյնք հանդիպելոց են անդ պատիժքն. և զնոսա միխիթարէ մի ինչ այլոց յաջողութեամբն տապնապել, և մի կարծել առ 'ի չնախախնամութենէ գոլ զմեր իրս յորժամ արդար ատ պատժի չարաչար, և չար և պիղծ այր միշտ 'ի յոլով բարութեան վայելէ. քանզի երկոքին ըստ արժանաւորութեանն առնոց են անդ, միոն զպատկն ըստ համբերութեանն և ժուժկալութեանն, և միւսն զպատիժն դժնդակ։

Օ՜ այս առակս գրեցէք, աղքատք, յորմ տանց ձեռոց. և եթէ ջնջեսցի 'ի մոռացմանէ, ձեռեալ դարձեալ գրեցէք 'ի ձեռն վերսահին յաջողութեան։ Ա՛ռնանդ եթէ, ընչեղք, և յաճախապէս ընթերցարուք, և լինի ձեզ վարդապետարան և պատճառք ամենայն վարդապետութեան։ Օ՜ի եթէ զայս յաւերժապէս գրեալ ունիցիմք՝ ոչ խնդալից իրք 'ի մերձաւոր կեանս հպարտացուցանել զմեզ կարեն, և ոչ տխրակամքնուաստացուցանել և կործանել։ Ա՛յլ զոր օրինակ զկենդանագրուն յորմն գրեալ տեսանեմք զձիս և զաղքատս, և ոչ ընդ նմա նախանձիմք և ոչ զաղքատան արհամարհեմք յաղագս ստուերին, այլ իրացն ճշմարտութենէն ոչ լինի տեսեալ, նոյնպէս ընչեղութեան և աղքատութեան և այլոցն ամենեցուն տրամնկանացն և հրաժեշտ լեաց՝ զընութենէն եթէ ուսանիցիմք, յիւրաքանչիւր ումեքէ 'ի նոցանէ եղելոցն անհարթութեանց 'ի բաց վճարիմք։ Ա՛ան զի քան զտուերս պատրագք են այսոքիկ. բայց զամբարձեալն և զառաքինին ոչ ինչ՝ ոչ պայծառքն և փառաւորքն ամբարհաւաճեցուցանել, և ոչ նուազքն և 'ի վայր անկեալքն ընստուցանել կարեն։

Ա՛յժմ ժամ է մեզ այսուհետև և զբանն լսել զընչեղին։ "Ա՛ղաչեմ զքեզ, ասէ, Հայր,,. այս է՝ պաղատիմ մաղթեմ։ "զի առաքեսցես 'ի տուն Հօր իմոյ զՂազարոս. քանզի են իմ եղբարք հինգ, զի վկայեսցէ նոցա, զի մի եկեսցեն 'ի տեղի տանջանացս այսոցիկ,,։

Յորժամ զևսիմ օդնականութենէն վրիպեաց՝ յաղագս այլոց առնէ զպատասխանս։ Տես զիարդ մարդասէր և ընտեղեղի՛ տանջանացն։ Որ զի՝ աղաւթս արհամարհէր յառաջագոյն, յաղագս այլոց հեռաւորաց հոգայ. որ զառաջի աչաց անկելոյնն զանց առնէր, զոր ոչն տեսանէր յիշէր, և հանդերձ բազում փուճաւոյ աղաչէ զի լիցի ինչ նացանախահոգութենի յաղագս աղատելոց որ ըմբռնելոցն էին գնասա չարիքն, և աղաչէր երթալ ՚ի աղաւթս ՚ի տուն հօրն ուր հանդիսարան և ասպարէզ բացեալ էր առաքինութեան։ Որպա տեսցեն զնա պսակեալ որք տեսին նահատակեալ. վկայք նորա աղքատութեանն և սովոյ և բիւր չարեաց, լիցին վկայք պատուոյ փառացն փոխմանն ամենայնի՝ զի յերկոցուն իրաց խրատեալք ուսցին՝ թէ ոչ մի ինչ ՚ի մերձակայ աշխարհիս մեր իրք անցեալ կան, այնպէս պատրաստեսցին, մինչ զի կարելի տանջանացս յայսցանէ և ՚ի պատժոցս փախչել։

Եւ զինչ Աբրահամ. “Ընկեր զի՝ ովսէս և զմարգարէսն,,, ասէ։ Ել դու այնպէս հոգաս յաղագս եղբարցն, որպէս արարիչն նոցա ամէն. բիւրս ՚ի վերայ նոցա կացոյց, վարդապետս՝ որք պատուիրեն, խորհրդակից լինին, խրատեն։ Եւ զինչ դարձեալ նա. “Ել, ասէ, այլ թէ ՚ի մեռելոց որ երթիցէ, նմա հաւատասցեն,,։ Այս են բազմաց բանք։ Որ են այժմ որք ասենն՝ ոմն եկն անտի, ոմն ՚ի մեռելոց յարեաւ, ո՞ասաց զդժոխոցն իրս։ Վանիցս ոչ զայս ՚ի չինքեան ասաց ընչեղն այն յորժամ փափկանայրն. քանզի ոչ վայրապար աղաչեաց յառնել ումեք ՚ի մեռելոց։ Այլ զի գրոց լսելով արհամարհէր ծաղր առնէր, մի գուցէ, ասէ, նոյնպէս և նոքա վարկանիցին. իսկ եթէ ոք ՚ի մեռելոց երթիցէ, ոչ ևս անհաւանեսցին նմա և ոչ ծաղր արասցեն, այլ մանաւանդ յաստացեալսն հայեսցին։

Եւ զինչ Աբրահամ. “Եթէ Ովսէսի և մարգարէիցն ոչ լսեան, և եթէ ՚ի մեռելոց ոք երթիցէ՝ ոչ լսիցեն,,։ Եւ զի այս ձշմարիտ է, զի որ գրոցն ոչ լսէ, և ոչ եթէ ՚ի մեռելոց ոք յառնէ՝ լսէ նմա, ցուցին գրեալքն. վասն զի Ովսէսի ոչ լսեան և ոչ մարգարէիցն, և ոչ զմեռեալսն տեսանելով յարուցեալս՝ հաւատացին. այլ երբեմն սպանանել զի՝ աղաւթս յանդգնէին, և երբեմն ՚ի վերայ առաքելոցն յարձակէին, և սակայն յոլովք յաբեան մեռեալք ՚ի ժամ խաչին։

Այլ զի այլուստ ուսոյին Թէ արժանի հաւատալոյ է գրոց վարդապետութիւն քան գյարութիւն մեռելոց, զի մեռեալ ամենայն ծառայ է, իսկ գորս գիրքն խօսին՝ զայնս տէրն խօսեցաւ։ Արդէս զի եթէ մեռեալ յարիցէ և եթէ հրեշտակ յերկնից իջցէ, քան զամենայն արժանի հաւատալոյ գիրք լիցին. զի որ հրեշտակացն է տէր, և մեռելոց և կենդանեաց, նա օրինադրեաց։

Այլ զի աւելորդս հայցեն որք խնդրեն Ի մեռելոց անտի գոլ, առ աստուածելովքդ և Ի մերձակայիցս է ցուցանել զառեներս զայսոցիկ իրս։ Ոչ հեն ոչ երևի անհաւատիցն. բայց հաւատացելոց քաջայայտ է և երևելի, այլ սակայն անհաւատիցն ոչ երևի։ Նմանապազոր լսեմք Թէ այս անուն տանջեցաւ, այս անուանն ստացուածք ամենայն Ի բաց բարձան, միւս ոմն ընդ ոսկեհանան գործէ, այլ ոմն հրով այրեցաւ, և միւս այլով օրինակաւ տանջանաց և պատժոց կորեաւ. և համայն զայսոսիկ լսելով անխրաւք և չարագործք և կախարդք ոչ ապաշխրեհանան։ Այլ զինչ ասեմ, եթէ և ոչ անկանելով յայսպիսի իրս ապաշխրհանան. յոլովք բազում անգամ ըմբռնեալ Ի նմին, փախեան Ի տանջանացն՝ փորելով զկապարանին զորմն Ի բաց Ձողպրեալք. բայց դարձեալ Ի նոյն իրս յանդգնեցան, և գժնդակագոյն ևս քան զայնս գործեցին։ Օ՛ի քան զորս խնդրեմք Ի մեռելոց լսել, քան զայն առաւել հանապազօր վնաս խրատեն։

Եթէ գիտեր ոք եթէ մեռեալք յառնելով կենդանեացն օգտեն, ոչ արդեօք Թողեալ և ոչ լքանէր զայն շահան. զամենայն ինչ մեղ օգուտ հնարի գործել։ Այլ առանց այդոցիկ եթէ յաճախապէս հանդերձեալ էին յառնել մեռեալք և զանտի զամենայն պատմել մեղ, և այն դարձեալ ժամանակաւ արդեօք արհամարհեալ լինէր. և առ այդոքիկ չար ևս աղանդ Ի ներքս մուծանէր սատանայ ընդ յոլով դիւրութեանն։ Կամէր բազում անգամ կուռս ցուցանել, կամ պատրաստել զմանս կեղծաւորել մեռեալս և Թաղեալս ցուցանել, և դարձեալ որպէս Թէ Ի մեռելոց յարեաւ՝ և Ի ձեռն նորա որքան ախորժէր հաւանեցուցանէր զպատահելոցն միտս։ Վասնզի եթէ այժմ ոչ ինչ այդպիսեաց եղելոց, անուրջք յոլովակի երևեալք կերպարանօք վախճանեցելոցն՝ զբազումս խաբեցին և ապականեցին, և առա-

ւել թէ այն լեալ էր և զօրացեալ ՚ի մարդկան միտս. ոպիսի ինչ թէ բազումք ՚ի գնացելոցն դարձեալ վերըս տին ելանէին, բիւր նենգութիւնս չար գնեն այն կազմեր, և յոլով մոլորութիւս յաշխարհ մուծաներ։ Ա՚ան այն արգելեալ փակեաց ՚ած զդրուռնն և ոչ թողացոյց ումեք ՚ի գնացելոցն վերստին գալ և ասել զնոտիսն, զի մի պատճառս առնլով յայնմանէ՝ նա զևւբան զամենայն ՚ի ներքս մուծանիցէ։ Վ՚անզի յորժամ մարգարէքն էին, սուտ մարգարէս յարոյց. և յորժամ առաքեալքն՝ սուտ առաքեալս. և յորժամ Վ՚րիստոս՝ սուտ քրիստոս. և յորժամ առողջ աւանդութիւնքն ՚ի ներքս մտին, զապականեալն ՚ի ներքս էած, զորոմն ամենայն ուստեք սերմանելով։ Ա՚րդեօք զի թէ և այն դիպեալ էր, և զայն ձեռնարկեր արդեօք կեղծաւորել ՚ի ձեռն իւրոյ գործոյն, ոչ զմեռեալս ձշմարտապէս յարուցանելով, այլ կախարդութեամբք իմն և խաբէութեամբք զտեսողացն զդեմն մոլորեցուցանել, և կամ զոմանս պատրասեալով՝ որպէս ժամանեակն ասացի՝ կեղծաւորել ըզվախճանն, զվերագոյնսն զամենայն ՚ի ստորև առնէր արդեօք և խաունակեր։

Ա՚յլ ՚ած զայս ամենայն յառաջագոյն գիտելով ՚ի բաց պարսպեաց զնորա խաբէութիւնն, և խնայելով ՚ի մեզ ոչ ումեք թողացոյց գալ երբեք անտի և խօսել կենդանեացս յաղագս անտի իրաց. խրատելով զմեզ՝ քան զամենայն հաւատալոյ արժանի վարկանել զծածկին գիրս, որք յաւէտ քան զմեռելոցն յարութիւն յայտնապոյնս մեզ ցուցանեն գիրս։ Ո՚չ աշխարհ զամենայն դարձոյց, զմոլորութի՛ խլեաց, զձշմարտութի՛ էած, ՚ի ձեռն ձկնորսաց և մաքսաւորաց արանց զայս ամենայն յօրինեաց, բաւական ցոյցս իւրոյ գալստեանն ընձեռելով մեզ։

Ա՚րդ մի այսուհետև միտք ՚ի մերձակայ կեանս զմեր իրս փակեալ կարծեսցուք. այլ հաւատամք թէ ամենայն իրօք դատաստան և հատուցումն է ամենայնի՝ որ աստ ՚ի մէնջ գործիցին և լինիցին։ Ա՚ան զի այնպէս յայտնի և երևելի ամենեցուն է, միչ զի Հրեից և հեթանոսաց և հերձուածողաց և ամենայն իսկ մարդոյ յաղագս այնորիկ ունել մտածութիւն։ Ո՚ի թէպետ և ոչ որպէս պատշաճ վասն յարութեանն իմաստասիրեն ամենեքեան, այլ սակայն յաղագս դատաստանին և տան-

ջանացն և անտի ատենիցն ամենեքեան միաբան էն՝ թէ
և իմն ասա եղելոցն հատուցումն անդ. և եթէ ոչ այս
էր, ըո աղագաւ զերկին ձգեաց, զծով տարածեաց, այս-
քան նախախնամութիւն եցոյց, եթէ ոչ միոյ ՚ի վախ-
ճան հանդերձեալ էր մեզ վերակացու լինել։

Ո՛չ տեսանես որքան կեցեալք առաքինութեամբ, և
բիւր գժնդակութեամբ չարչարեալք հրաժարեցին. և
այլք դարձեալ յոլով չարութիւն ցուցանելով՝ զայլոց
յափշտակեցին զինչս, զայրիս և զորբս հարստահարե-
ցին, ՚ի հպարտութիւնս և ՚ի փափկութիւնս և ՚ի բիւր բա-
րիս վայելելով չոգան անդ, և ոչ դատընաքեայ ինչ կրե-
ցին չարիս։ Այդ ՚ըո ասը սոքա փոխանակ առաջնին առաքի-
նութեանն առնուլ զհատուցումն, և կամ այլքն ընդ
չարութեանն տացեն դատաստանս, եթէ մինչև ՚ի մեր
ձակայս և եթէ կայցեն մեր իրք։ Այնթէ է ՚ած, որպէս և
է՛ իսկ, արդարեւ ամենայն ոք որ ասէ. եթէ արդար, և
սոցա և նոցա հատուսցէ ըստ արժանաւորութեանն, և
այսոքիկ խոստովանին յամենեցունց։ Այնթէ հանդերձ-
ձեալ իցէ սոցա և նոցա հատուցանել ըստ արժանաւո-
րութեանն, ատ և ոչ ոք ՚ի նոցանէ էառ, ոչ նա զչա-
րութեանն տանջանս, և ոչ սա զառաքինութեան հա-
տուցումն, քանզայայա է թէ մեռցեալ ոք ոմն է ժամա-
նակ՝ յորում զպատշաճագոյն հատուցմունս իւրաքան-
չիւր ոք ՚ի նոցանէ ընկալցի։

Յո՛ր սակս և ՚ի խորհուրդս մեր դատաւոր այնպիսի
յաւիտենական արթուն և սթափ կացոյց ած, զիմիջն
ասեմ. քանզի ոչ է և ոչ իսկ է և ոչ մի ոք դատաւոր
՚ի մարդկանէ այնպես արթուն իբրև զմեր խիղճն։ Այ ան
զի արտաքին դատաւորքն և ընչիւք ապականին և փա-
ղաքշանօք Թողանան և յաղագս երկիւղի կեղծաւորին,
և բազում այլ է՛ որ ժանտացուցանէ զնոցա ուղիղ վը-
ճիռն. բայց խղճին ատեանն ոչ ումեք այդպիսեաց տե-
ղի տալ գիտէ. այլ եթէ ինչս տացես և եթէ փաղաք-
շեցես և եթէ սպառնայցես և եթէ այլ ինչ գործիցես,
զարդարութեամբ վճիռն բերէ ընդդէմ յանցաւորելոց խոր-
հըրդոցն. և նոյն որ զմեղսն գործէ, ինքն զինքն դատա-
պարտէ, Թէպէտ և ոչ այլ ոք չարախօսէ։

Այս ոչ մի անգամ և ոչ երկիցս, այլ յոլովակի և յա-
րաժամ այնպէս առնելով կատարէ զկենցաղս. Թէպէտ

և բազում ժամանակ անցցէ, ոչ երբէք մոռանայ զլեալսն։ Ա՛յլ ի լինել մեղացն և նախ քան զլինելն և զկնի լինելոյն դառն[1] դատախազ յառնէ մեզ, և մանաւանդ զկնի լինելոյն. քանզի ի գործել զմեղսն հեշտութիւնքն արբեալք՝ ոչ այնպէս զդայցեմք. իսկ յորժամ լինին և առնու կատարումն, յայնժամ հեշտութեանցն սմենեցուն շրջելոց դառն ապաշաւանացն ի ներքս մտանեն խորհրդոցք, հակառակ երկանց կանանց։ Վասզի զնոսա նախ քան զծնանիլն ուժգին ցաւք և երկունք տագնապեցուցանելով վտանգեն. իսկ զկնի ծնանելոյն հանգիստ, ընդ մանկանն և ցաւքն արտաքս ելանեն։ Դայց ասա ոչ այնպէս. այլ միւոցն յղանամք և երկնեմք զապականեալ խորհուրդսն, զուարճանամք բերկրիմք. յորժամ ծնանիմք զչար մանուկն զմեղսն, յայնժամ աճեսանելով զվերս ծնելոցն վշտանամք, և յայնժամ կատարիմք քան ի կանանց երկանցն ևս դժնդակագոյնս։ Ձաղագորոյ աղաչեմ մանաւանդ իսկ մի ընդունել ի սկզբանն զապականեալ ցանկութիւնն. ապա եթէ ընդունիցիմք, հեղձուսցուք ի ներքս զսերմն։

Այլ եթէ այնքան ծուլանայցեմք միոչ զի լինել գործակ, սպանցուք զմեղսն դարձեալ ի ձեռն խոստովանութեան և արտասուաց որ ի մեզն է։ Ոչ ինչ է այնպէս սատակիչ մեղացն իբրև զամբաստանութիւնս և զտգրտանս։ Համբաւեցէր զմեղսն քո, ի բաց եդեր զբեռն։ Այլ ոմն զայս ասէ. ինքն դատաւորն ՅԾ. "Դյա դու զմեղս քո յառաջագոյն, զի արդարասցիս,,։ Ոմն կոչ աղաղակ ամաչես և շառագունես զյանցանս ասել, ասա ինձ. միթէ մարդոյ ասիցես որ թշնամանէ, միթէ ծառայակցին խոստովանիս որ հուպակեցուցանէ։ Ցեառն, խնամակալս մարդասիրին, բժշկին զվերդ ցուցանես. և եթէ ոչ ասիցես միթէ ոչ գիտէ որ և նախ քան զգործելն գիտէր։ Ասդ ընդէր ոչ ասես, միթէ ի քումմէ յամբաստանութէն ծանրագոյն ինչ լինիցին մեղքն. այլ մանաւանդ թեթևք և հանդարտագոյնք։ Ոմն այնմարիկ կամի քեզ ասել ոչ զի տանջեսցէ, այլ զի թողցէ. ոչ զի ուսցի որ գիտէն, այլ զի դու ուսցիս որքան պարտս քեզ թողուլ. ախորժէ քեզ ուսանել զմեծու-

1 Պակասէր յօր· դառն·· մանաւանդ վինի վինելոյն· լացաւ՝ի յունէն։

թիւն չնորհին, զի գոհութեամբ կատարեսցին, և զի դանդաղկոտ առ մեզն լինիցիս և յօժարամտագոյն յապաշխարութիւնն։ Լրեմ ոչ ասես զայսպիսուցն մեծութեի, ոչ ձանձրանաս զչնորհին զառաւելութիւնն։ Այլ առնեմ հարկ, ասէ, ի մէջ տեսանելին և բազում վկայս շուրջ կացուցանել. ինձ միայնոյ ասա զմեզն, զի բժշկեցից զվերոգ։

Այսոցիկ այնորիկ զխիղճն ի մեզ տնկեաց, որ քան զեհայրն և բարեգութ է. քանզի հայր մի անգամ և կամ երկիցս և կամ երիցս և կամ տասն անգամ սաստելով որդւոյ յօրժամ տեսանէ ինասկալ առանց ուղղութե, հրաժարեալ ի բաց ուրանայ, և ի տանէ արտաքս հանէ և յապշականութենէ հատանէ։ Սակ խիղճն ոչ այնպես. այլ եթէ մի անգամ կամ երկիցս կամ երիցս և կամ բիւր անգամ ասիցէ և ստունդանիցես, դարձեալ ասէ և ոչ ի բաց կայ մինչև ի վերջին շունչն. ի տան և առ սեղան և ի հրապարակի և յոգւոջ, բազում անգամ և յանուրջս գնասին զմեզանացն մերոց զկերպարանս և զերևոյթս մերձ կացուցանէ։

Ըստ սակս զնմանատութիւնն այ, ոչ միանգենաւոր զամբաստանութիւնն արար զխիղճ մտացն, քանզի և ոչ ընդունել իսկ կարէաք զբեռն յաձախապէս ստգտեալք. և ոչ այնպէս տկար, մինչ զի առաջին և երկրորդ պատուիրանսն հրաժարեալ։ Վասնզի եթէ յարաժամ զմեզ էր հանդերձեալ խոցել, թերևս խեղդեալք լինէաք ի տրտմութենէն. և եթէ մի անգամ և երկիցս յիշեցուցանելով ի բաց վարի ի սպառնալոյն, ոչ յոլով պտուղս օգտութեան հատաբէաք։ Զայսպես այնորիկ միանգենաւոր զնարա սպառնացումն արար, և ոչ խիտ և հած. ոչ միանգենաւոր, զի մի ի պղերգութիւն անկանիցիմք, այլ հանապազ մինչ ի վախճանն յիշելով արթնանք խրեմք. ոչ խիտ և հած և ոչ ի վերոյ իրեբաց, զի մի ի վայր կոծանիցիմք. այլ է հանգարտութիւն իմն զոր ունելով ի միսիթարութիւնս հանգչիցիմք։ Օ՜որ օրինակ ոչ բոլորովին վտանգել ի մեզն՝ սաստակիչ է և զվերջին անզգայութիւնն ծնանի մեզ. նմանապէս և յաձախապէս և առաւել քան զչափն վշտանալ միսաակար է։

Այսոցն զի առաւելութիւն սրտմտութեան պիտակ, և ի

բնական իմաստիցն արտաքս ընկենուլ և խորասոյզ առնել զՀոգին և առ ամենայն իրս անպիտանս գործել զգեղեցիկն։ Ա՛ան այսորիկ ներող 'ի մեզ զխիղճ մերս տայն զանդիմանութիւն եղեալ պատրաստեաց, քանզի չոյժ ապառումն է և քան զամենայն խայթոցս ուժգնագոյն զմեղուցեալսն սովորեաց ծակոտել։ Այլ ոչ յորժամ մեղանչեմքն մեք, այլ յորժամ այլքն յանցանիցեն, 'ի մեզ յառնէ սաստկապէս. քանզի պատնիչն և շուն և գող ոչ միայն յորժամ ինքն բամբասի, այլ և յորժամ զայլս յայնպիսի իրս զյանդգնեալսն լսէ յաղտախօսեալս՝ զինքն վարկանի խոշտանգեալ յայլոց 'ի պատուհաս զնոցա մեզացն առնելով զչիշատակ. և պատժեալ լինի այլ ոմն, բայց խոցոտի և նա որ ոչ ինչ պատուհասեցաւ՝ յորժամ զնոյն գործեալ է։ Օ՜ որ օրինակ և 'ի յուղղութիւնն այլք գովեալք և պատկերալք, որոց զնոյն ուղղութիւնն է արարեալ՝ ընդ նոսա հրձուի և ցնծայ, որպէս թէ ինքն մանաւանդ՝ քան եթէ նոքա գովեցան։ Ո՜վ իցէ քան զմեղուցեալն թշուառագոյն, յորժամ յայլոց 'ի խոշտանգանս ինքն սարսափի. և կենդանոյն յաւաքինութեանն երանելի, յորժամ յայլոցն գովութիւնն ուրախանայ և զուարճանայ՝ չիշատակ 'ի նոցա գովութիւնն առնելով զիւրոյ ուղղութեանցն։

Ա՛յսոքիկ ով իմաստութեանն գործ, այսոքիկ մեծամեծ նորա նախախնամութեանն նշանակ. խարխոխ ինն է ահագին խորհին սպառնացումն, որ ոչ ներէ մեզ 'ի կատարելապէս մեզացն 'ի խորս սուզանիլ. և ոչ 'ի նմին իսկ 'ի մեզացն ժամանակի միայն, այլ և զկնի բազում տարեաց շրջագայութեանց գիտէ մեզ յոլովակի չիշեցուցանել զմեզն։ Այս զայս 'ի նոցա իսկ 'ի գրոցն մերոց կացուցից յայտնապէս զցոյցն։

Ա՛ահաւասիկ երբեմն զՅովսէփ եղբարքն. մեզապղծել ինչ ոչ ունելով, այլ զերազս տեսանէր՝ որ զՀանդերձեալ փառսն նախաձայնէին։ «Ցեսի, ասէ, զորպան ձեր զի երկիր պագանիցին իմոյ մարդին»։ Այս սակայն յաղագս այնորիկ պահել զնա էր պարտ և արժան, որ պատկ ամենայն տանն Հանդերձեալ էր լինել և պայծառութիւն բովանդակ ազգին։ Ա՛յլ այնպիսիք են յաչս ընդ ընտանեան 'ի բարիսն պատերազմել, և յաւէտ ախորժէ բիւր անգամ կրել զմնդակութիւնս յա-

չաղկոտն՝ քան եթէ զընկերն տեսանել քաջահաձոյ լեալ, թէպէտ և յինքն գալ հանդերձեալ իցեն բարեփառութիւնքն. քան զի՞ ոք արդեօք Թշուառագոյն լիցի։ Օ՞ր նոքա կրեցին. տեսանելով զնա ՚ի հեռուստ եկեալ կերակուր բերեալ՝ միմեանց ասէին. “Լկայք սպանցուք զնա և տեսցուք զինչ են անուրջք նորա.,, ։ Լբրև յեղբօրէ ոչ պատկառեցեր և ոչ զընտութիւնն ծանեար, զոնէ ՚ի նմին սեղանոյն պատկառել պարտ և արժան էր, և ՚ի սպասաւորութեանն օրինակէ՝ զի ՚ի կերակրել եկն զքեզ։

Լայց տես զիարդ և ականջ մարգարէանան. “Լկայք, ասեն, սպանցուք զնա և տեսանեմք զինչ են նորա երազք.,, ։ Վանզի եթէ ոչ էր խորհեցեալ նոցա և զնենգութիւնն զայն կատարեալ, ոչ արդեօք ձանաչէին զերազողն զայնոցիկ զգօրութիւնն։ Օ՞ր ոչ ինչ էր հաւասար՝ ոչ ինչ չարչարանս կրելով յեզիպտացւոյն ելանել ՚ի գահ, և ՚ի ձեռն այնքանեաց խափանուածոյ և արգելմանց զայնպիսի պայծառութիւնն քուռն հարկանել։ Լթէ ոչ էր գաւաճանեալ նմա, ոչ արդեօք վաճառեալ լինէր և ոչ ցանկացեալ ՚ի տիկնոջէն. եթէ ոչ էր տենչացեալ տիկնոջն նմա, ոչ անկեալ լինէր ՚ի կապարանն և ոչ մեհենէր զերազն և ոչ պատահէր Թագաւորութեան այնպիսւոյ, ոչ գայլն նոքա ՚ի գին ցորենոյն և երկիր պագանէին ։ Վրպէս զի յորժամ սպանին զնա, յայնժամ առաւել գիտացին զնորա զերազն։

Լւ արդ զինչ. նոքա առիթք հանդերձելոց բարեացն նորա եղեն և երևելութեանն այնմիկ։ Լւ ոչ երբեք. այլ նոքա մնոյ, տխրանաց և ծառայութեան և վերջին չարեաց խորհեին մատնել զնա. բայց մարդասէրն Ա՛Ծ՝ գաւաճանողացն չարութեամբ ՚ի վաճառեցելոյն և ՚ի պրժեցելոյն ՚ի քաջահաձութիւնս վարեցաւ։

Օ՞ր մի պատահման իրք և միջոց փոխման իրաց հանդիպեալքն կարծեսցին, ՚ի ձեռն նոցին հակառակացն և խափանողացն այսոցիկ յարմարել զնախանեալն Ա՛Ծ, Թէնաւեօք նորա իբրև սպասաւորք ՚ի բարեփառութիւնս նորա վարելով. զի ուսցիս եթէ զոր ինչ Ա՛Ծ կամի՝ ոչ ոք քայքայէ, և զբաւիղ ձեռն նորա ոչ ոք անպրկէն դարձուցանէ. զի յորժամ կրեսցես գաւաճանութիւնս յոմեքէ՝ մի վհատիցես, այլ տեսանել ակնկալ զի ՚ի վախ-

Ձանին քաղցը առնայն դժուարութիւնն լինի, եթէ առաքինաբար ընկալցիս զդիպուածան։ Վասնզի ահա և մխանք զթագաւորութիւնն ծնան, և յաչառութիւն թագ և աթոռ ընծայեաց, և նոքին իսկ զրժողքն մղեցին զնա ի մեծութիւն իշխանութեանն այնորիկ. և զրժեալն թագաւորեաց, իսկ դաւաճանողքն ծառայեցին. նա երկիր պագեալ, և նոքա երկիր պագանէին։

Ա՛րդ յորժամ ի վերայ միմեանց գայցեն դժնդակութիւնքն, մի ամբոխիցիս և մի զչարիցիս, այլ համբերեա վախճանին. քանզի առնայն իրօք դիպեսցիս արժանաւոր ՚ի մեծապարգևութեանն, միայն եթէ զոհասնալով որ ՚ի մէջ ժամանակին է անցուսցես։ Օ՛ և նա յետ երազոյն այնոցիկ ՚ի վերջին չարխան վտանգեցաւ. վաճառեցաւ յեղբարցն, ՚ի տիկնոջէն զրժեցաւ, և զաղձեալ ՚ի կապարանն անկաւ, և ոչ երբեք ասաց յինքեան՝ զինչ են այսոքիկ, խաբէութիւնք երազոյն. այլ տաքս անկայ ՚ի գաւառէն, զրկեցայ յազատութենէն, յաշագս ՚ի ոչ անօգտի տիկնոջն որ ՚ի չնութիւն զիս կոչէր. և այսպէս ոչ օգնեաց ինձ և ոչ ձեռն ձգեաց, այլ եթող անկանել ՚ի կապանս և ՚ի խիտ և ՚ի հոծ թըշուառութիւնս. զկնի գերոյն ծառայութիւնս, յետ ծառայութեան զրժութիւն, զկնի զրժութեանն զպատուհասութիւն, յետ զպատուհասութեանն կամանաւրան։ Ասայց ոչ ինչ յայսցանէ զնա ամբոխէր, այլ կայր միայր յուսով վստահացեալ, և գիտէր եթէ ասացեալքն ոչ երբէք ՚ի վայր անկանէին։

Կարէր ՚ձ և ՚ի նմին աւուր զայնոսիկ նմա կատարել, այլ զի միւր զօրութիւնն ցուցանէ և զհաւատ նորա ծառայութեանցն, Թողու բազում ժամանակ ՚ի մէջ անկանել և յոլով լինել խափանումն, զի և զնորա ուսցիս զզօրութիւնն՝ որ կատարէր զպատուհասն յորժամ յանյուսութիւն անկանիցին իրքն, և զծառային տեսցես զհամբերութիւն և զհաւատ, և ոչ մի ինչ ՚ի պատահելոցն ՚ի մէջ բարի յուսոյն անկեալ։ Ա՛յլ զոր ասէին՝ երթայց անդրէն։

Օ՛ նոսա սով իբրև զինու զբ գլխիվայր մղէր. և մերձ կացեալք իշխանին Յովսեփայ կամէին գնել յորեան, և նա ասէր. "Վհատք եք,,։ Օ՛ ինչ արդեօք էր այս. կերակուր եկաք գնել, և յաղագս անձանց վտանգիմք։ Յի-

լաւի. վասն զի և նա կերակուր եբեր ձեզ, և կենացն աղագաւ վշտացաւ. բայց նա ձմարտութեամբ համբերեաց, իսկ դուք պատճառանօք չարչարիք. զի ոչ թշնամի էր, այլ զկերպարան հաւ զթշնամւոյ:

Վասն զի չարք առ նմա եղեն և դժնդակաբարոյք, զԱբենիամին ոչ տեսանելով ընդ նոսա երկեաւ վասն պատանեկին, մի գուցէ և նա զեղբօրն նորին կրեաց, հրամայէ զմի ոմն կապեալ և թողուլ անդրէն, և նոցա առնել զցորեանն և երթալ, սպառնալով նոցա մահ՝ եթէ ոչ զեղբայրն իւրեանց ածիցեն: Այս իրև այս լինէր, և ասէր նոցա՝ թէ թողէք զոք աստէն և զեղբայրն ձեր ածէք, ապա եթէ ոչ՝ մեռանելոց էք, զի՞նչ նոքա միմեանց. "Այո, քանզի՛ ի մեղս եմք յաղագս եղբօրն մերոյ որ աղաչէրն զմեզ,,: Տեսեր՝ զկնի որքան ժամանակի զմեղանսն ղայն յիշէին, և հօրն ասէին. "Պատան չար եկեր զՅովսէփ,,: Այն՛ի նայն իսկ՛ի Յովսէփ մերձ կացեալ, լսելով՛ի նոցանէ զմեղանսն յանդիմանելը: Օրինչ քան զայս հրաշափառագոյն լինի. ատեանս առանց յանդիմանութեան լինէր, և պատասխանիք առանց ամբաստանութեան և յայտնութիւն թարց վկայից. ինքեանք որք զկրսն գործեցին, զանձինս յանդիմանէին, և զգաղտնի լեալսն հոչակեցուցանէին:

Ո՛վ հաւանեցոյց, ո՛վ հարկ արար՛ի մէջ բերել որ նախ քան զայն ժամանակ յանդգնութիւն էր լեալ. ո՛չ քաջայայտ ի եթէ խիղճն որ յաճախապէս ամբոխէր, սպանեալն յայնժամ նատէր լռութեամբ դատելով զնոսա, և ոչ մի ինչ բերելով նոցա վճիռ պատուհասի, ինքեանք զդատապարտութեանն իւրեանց բերէին զվճիռ: Այս նոքա զայս ասէին. իսկ մի ոմն պատասխանի առնէ ասելով. "Ո՛չ խօսեցայ ընդ ձեզ և ասացի՝ մի այնիրաւէք՛ի պատանեակդ և մի ինչ առնէք դմա. ահա արիւն նորա խնդրի,, ասէր: Այսպէս ոչ ինչ յաղագս սպանման և մահուան այնօրիկ ասաց, այլ և զմիւս ևս զեղբայրն խնդրէր. բայց խղճին առեալ զժամանակն՛ի վերայ դիմեաց և տանջէր զնոցա խորհուրդսն, և առանց ուրուք Հարկ առնելոյ զյանդգնութիւնն խոստովանել պատրաստէր: Այսպէս և մեք քաջալաւ անգամ ախտանամք զանցեալ զմեղսն, ՛ի դժնդակութե՛ն և ՛ի խռովութե՛ն քննելով յիշեմք զառաջինն յանցանսն:

Աղդ զայս ամենայն գիտելով յորժամ գործիցեմք ինչ չար, մի կացցուք մեռասցուք Թշուառութեանցն և խռովութեանցն և վշտացն. այլ հանապազօր շարժեսցուք զաւետան զնորա, և զպատուհասն հակառակ մեզ բերցուք, և հնարեսցուք ամենայն օրինակաւ զպատասխանի տալ ՚ի. մի երբեք մեք յաղագս յարութեան և դատաստանի յերկուասցուք, և մի յորժամ այլքն ասիցեն՝ ներեսցուք, այլ ամենայն իրօք ՚ի ձեռն ասացելոցս զնոսա ըմբերանեսցուք: Աչ որպէս թէ հանդերձեալ իցեմք անդ զպատուհաս ընդունել յանցանաց, այնպիսի ատեան աստէն ՚ի մեզ հաստատեաց ՚ած. այլ և այս նոր մարդասիրութեանն է նշանակ: Ա՝ սան զի անդ հանդերձեալ է բան պահանջել ՚ի մէնջ ընդ յանցանացն, կացցէ աստ անաչառ դատաւոր. զի աստէն յաղագս մեղացն դատելով զմեզ և ողջախոհ առնելով՝ յափշտակեսցէ ՚ի հանդերձեալ դատաստանէն, զոր և Պաւղոս ասէ. “Աթէ զանձինս դատեաք, ոչ դատեալք լինիմք ՚ի տեառնէ „:

Աղդ զի մի յայնժամ տանջիցիմք և մի յայնժամ պահանջիցիմք, իւրաքանչիւր ոք ՚ի խիղճ մտացն իւրոց մտցէ, և զվարան իւր հարցափորձելով՝ ընդ ամենայն յանցանս իւր հաւաստեաւ անցցէ, և բամբասեսցէ զանձն իւր որ զայն գործեաց. տանջեսցէ զնորհուրդս, նեղեսցէ պատուհասեսցէ զիւր մեղսն և զմիտսն՝ դատաստան յինքենէ պահանջելով զմեղանացն ՚ի ձեռն մեղադրանացն, ՚ի ձեռն ապաշաւանաց, արտասուաց և խոստովանութեամբ. զի ամենայն օրինակաւ աստէն ՚ի բաց դնելով զմեզն բռնաւորակ՝ հանդերձ բազում համարձակութեամբ անդր երթիցուք: որոց լիցի մեզ ամենեցուն հանդիպել Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՑԱՍԱՅՈՒԱԾՈՍ ՊԱՒՂՈՍԻ ՑՂՂԱԴՈՍ ՆՆՋԵՑԵԼՈՑՆ « ՈՉ ԿԱՄԻՄ ՁՁԵԶ ԱՆԴԻՏԱՆԱԼ, ԵՂԲԱՐՔ, ՈՐՊԷՍ ԵՒ ԱՅԼԿՆ »։

Ա՛յուրս չորս ծախեցաք որ ըստ Ղազարու առակին էր ձեզ պատմելով, և զգանձն պեղեցաք զոր գտաք ի վիրաւորեալ մարմին ամբարեալ. գանձ՝ որ ոչ ոսկի և արծաթ է և քարինս բազմակատարս, այլ խնամատարութիւն և ալդարութիւն և համբերութիւն և ժուժկալութիւն բաղում։ Օ՛ի զոր օրինակ զգալի գանձս այս պատահէ, զվերոյ երևումն զի փուչք և քարինք ունին և երկիր խոշոր, բայց եթէ ոք զատորևան բրեսցէ՝ բազում[1] փարթամութիւնս, նոյնպէս և Ղազարու դիպեցաւ. ի վերոյ վերք, և ի ներքոյ անձառ փարթամութիւնք. լուծեալ էր մարմինն, այլ առաքինի և արթուն հոգին. և զառաքելական բանն զայն էր տեսանել լցեալ. “Ուրքան արտաքին մարդս մեր ապականի, այնքան ներքինն նորոգի,,։ Ո՛րոյ հնար և այսօր ի նոյն առակօքն և ընդ հերձուածողն կռուել, որ զՀին կտակարանս հայհոյեն և զՀայրապետացն չարախօսեն և հակառակ ամենեցուն արարչին ՅԻ ղեղուսն սրեն։ Ա՛յլ զի մի անդրալի ձեզ բանն լինիցի, զայն Հանդէպս յայլ ժամանակ պահելով, բեր յայս պատձառ զբանս ածցուք. ղի և սեղան միաեռակ լինելով անդրալի մեզ երևի. իսկ եթէ զանազանք իցեն, յաձախապէս ընդոստուցանէ զփափաքումն։ Այս ի լսելութիւնս այսոքիկ լինին, առ երանելին Պաւղոս յետ երկար ժամանակի վերստին երթիցուք. վասն զի ՀԱՀ իսկ մեզ այսօր առաքելական տեղին ընթերցաւ, և երգակից է առաջին ասացելոցն ընթերցեալս։

Ուստի Պաւղոսի այսօր որ գոչէրն և ասէր յաղագս ննջեցելոցն. “Ա՛ղբարք, ոչ կամիմ զձեզ անգիտանալ, զի մի տխրիցիք որպէս և այլքն որք ոչ ունիցին յոյս,,։ Ա՛յն աւետարանական էր Ղազարուն, և այս առաքելական հնչումն, այլ մի է ձայնակցութիւնն. քանզի և յայնմ

1 Ցօրինակին պակասէր բառս փարթամութիւնս. յաւելաւ ի յունէն։

առակին յոքունս յաղագս յարութեանն և որք անդ ա-
տեանք են իմաստասիրեցաք, և այժմ ՚ի նոյն պատճառ
դարձեալ բանս զմեզ կամ: Որպէս զի Թէպետ և զա-
ռաքելական երկիւղս բերիցեմք, այլ զնոյն դարձեալ և աստ
գտանիցեմք. զի և որ յայնժամ բանն էր ամենայն՝ այ-
սու փութայր խրատել զլսողսն, ոչ ինչ մեծապայծա-
ռութիւն զմերձակայ յաշխարհիս իւրս վարկանել, այլ
յայլ ինն յառաջանալ յոյս, և զանտի զատեանն հա-
նապազօր զմտաւ ածել, զահաւոր զբեմն և զանխաբե-
լի զդատաւորն: Ո՛յսոսիկ և Պաւղոս ՚ի ձեռն ըն-
թերցուածոյն մեզ խորհրդակից լինի այսօր. այլ հայե-
ցարուք. “Յաղագս ննջեցելոցն ոչ կամիմ զձեզ անգի-
տանալ, եղբարք, զի մի տրտմիցիք որպէս և այլքն որք
ոչ ունին յոյս. քանզի եթէ հաւատամք եթէ Յիսուս
մեռաւ և յարեաւ, նոյնպէս և նոքա զննջեցեալսն ՚ի ձեռն
Յիսուսի ածցէ ընդ նմա,,:

Ո՛այս նախ առաջին աստանօր արժան է ՚ի վերայ
կալով հարցափորձել, ընդէր արդեօք յորժամ յաղագս
Քրիստոսի խօսի՝ մահ կոչէ զնորա մահն, իսկ յորժամ
վասն մերոյ վախճանի՝ քուն զնա և ոչ մահ անուանէ:
Վանդի ոչ ասաց՝ յաղագս մեռելոցն. այլ զինչ. “յա-
ղագս ննջեցելոցն,,. և դարձեալ. “նոյնպէս և նոքա զննջե-
ցեալսն ՚ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա,,. և ոչ ասաց՝
զմեռեալսն. և դարձեալ. “մեք կենդանիքս մնացեալք ՚ի
գալստեանն տեառն, ոչ ժամանեմք ննջեցեալցն,,: Այլ
ոչ անդանօր ասաց՝ մեռելոց, այլ երիցս ասաց յիշելով
զնոսա, և երիցս անգամ քուն զնոցա մահն կոչեաց: Իսկ
յաղագս Քրիստոսի ոչ այսպէս. այլ զինքն. “Վանդի
զի եթէ հաւատամք եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ,,.
և ոչ ասաց՝ եթէ Քրիստոս ննջեաց, այլ մեռաւ: Այր
աղագաւ զՔրիստոսին մահ կոչեաց, և զմերն քուն:
Ո՛չ ոչ վայրապար և ոչ որպէս ՚ի դէպ ինչ այսպիսի
որոշմամբ բանիւք վարի, այլ մեծ ինն իմաստութեի յո-
րինէր. զՔրիստոսին մահ կոչեաց, զի զչարչարանսն հա-
ւատարմացուսցէ. և զմերն քուն՝ զի զվստահագն միսիթա-
բեսցէ: Վանդի ուրանօր յառաջեաց յարութին, վըս-
տահանալով կոչէ մահ. իսկ ուր յուսով էն իրքն, քուն
անուանէ, և ՚ի ձեռն նորին անուան միսիթարէ զմեզ և
քաղցր յոյս ՚ի մեզ ամբարէ. որ քուն էն՝ ամենայն ի-

բոք յառնէ. քանզի և ոչ այն ինչ է մահ, այլ երկայնապոյն քուն։

Ա՛ի ինչ ինձ զայն ասեը, զի ոչ խօսի, ոչ լսէ և ոչ տեսանէ և ոչ զգայ վախճանեալն. զի ոչ որ ինչքէն։ Այլ եթէ պարտ է հրաշալի ասել ինչ, որ քուն էն՝ և հոգին իմն քուն է. իսկ վախճանելոցն ոչ այսպէս, այլ արթուն է հոգին։

Իսկ վախճանեալն, ասէ, փտի և ապականի փոշի և գազաղ։ Այս զինչ այդ, սիրելի. յաղագս դորին այդպիսի խնդալ պարտ և արժան է. քանզի և որ հանդերձեալն է տուն չինել զխարխալեալն և զհին լեալն, արտաքս հանէ յառաջագոյն զընտանիսն և ապա քակէ զտունն և չինէ պայծառագոյն. և զարտաքս եղեալսն ոչ ոք արամեցուցանէ լեալն, այլ ուրախասցուցանէ և առաւել. զի ոչ քակումն տեսանէն յոր հայինն, այլ ըզհանդերձեալ չինուածիւն երևումեան որ ոչն տեսանի։ Այսպէս և ՚ի մեզ, զհոգիս արտաքս հանէ յառաջագոյն իբրև ՚ի տանէ իմեքէ, զի պայծառագոյնս չինեալով հանդերձ յոլով փառօք դարձեալ ՚ի ներքս ածցէ։ Այլ մի այսուհետև ՚ի կործանումն հայեսցուք, այլ ՚ի հանդերձեալ պայծառութիւնն։

Այս զարձեալ եթէ ոք ունիցի պղինձի պատկեր բազմաժամանակեայ ժանգով ապականեալ և բազումք յանդամոյն ջաղխեալք, խորտակելով զնա ՚ի ձուլարանն արկանէ, և հաւաստեաւ հանելով այնպէս պայծառագոյն ընձեռէ։ Այդ որպէս ՚ի հալարանին խորտակումն ոչ խանգարումն՝ այլ նորոգումն և պատկերին այնմ, նոյնպէս և մերոց մարմնոցս մահ ոչ կորուստ ինչ է, այլ վերստին նորոգութիւն։ Յորժամ տեսանիցես այսուհետև ՚ի ձուլարանի ՚ի վայր ցնդեալ զմեր մարմին և ապականեալ, մի անցեալ կացցես մինչ ՚ի տեսանելին և եթէ, այլ համբերեա վերստին ձուլելոյն. և մի չափով առակիս այսորիկ բաւական տացես, այլ ՚ի պայծառագոյնսն յառաջ անց քանիս։ Վանզի պատկերագործ զպղինձն արկանելով ոչ ոսկեղէն և անմահ ընձեռէ և զմարմինն, այլ պղինձի գործէ. բայց ոճ ոչ այնպէս, այլ կաւեղէն և մահկանացու արկանելով զմարմինս՝ տայ ոսկեղէն և անմահ քեզ զպատկերն. վասն զի զապականա-

ցու մարմին ընդունելով երկիր դիւրաճախ, անապական զնա և անվթարելի ընձեռէ։

Ա՛ի այսուհետև հայեցիս ՚ի կափուցումն աչացն և որ անձայնն անկեալ կայ. այլ ՚ի յարուցեալն և որ առնոցն է զփառան զանձառելիս և զսարսափելիս և զՀրաշալիս, և ՚ի մերձակայ դիմաց ՚ի հանդերձեալ յոյսն փոփոխեա զխորհուրդս։ Ա՛յլ զսովորութիւնն խնդրես, և յաղագս այնորիկ սգաս և ողբաս։ Նա զնաիրդ ոչ իցէ յիմարութիւն, թէ փեսային զդուստր տալով, որոյ առեալ ՚ի հեռի գաւառ անցեալ գնայր, և դեղեցիկ իրօք վարեսցին և գործովք՝ ոչ ինչ վարկանել գժնդակութիւն զնեալն, բարի իրացն համբաւով միխթարիլ ՚ի հեռաւորութեանն տրտմութենէ. իսկ աստ ոչ մարդոյ և ոչ ծառայակցի ուրուք, այլ նորին իսկ տեառն առնելով զպատշաճագոյնսն մորմոքել և ողբալ։

Նա զնաիրդ ոչ իցէ հնար, ասեն, վշտանալ որ մարդ իցէ։ Նա ոչ ես զայդ ասեմ. ոչ զտրտմութիւնն, այլ զչերկարաձգեալ տխրութեանն իրս ՚ի բաց բառնամ. քանզի տրտմելն բնութէն է, իսկ առաւել քան զչափն զայն առնել՝ մեղութեան և խելագարութեան և կանացի անձին է։ Ողբա արտասուեա, բայց մի վհատիցիս մի դժուարիցիս մի զայրանայցես. այլ գոհասցիս զառաղէն, զի զարդարեսցես զառեալն և կրկին պատիւ նմա առաքեսցես զպատանին։ Ա՛պա եթէ դժուարեսցիս, և զնա թշնամանեսցես և զառաղն նորա զայրացուցանես և զքեզ վնասես. իսկ եթէ գոհասցիս, զնա զարդարես և զառաղն փառաւորես և զքեզ օգտես։ Ա՛րտասուեա որպէս տէրն արտասուեայ զվաղարոս, չափս և օրինակս դնելով մեզ և սահման տրտմութեանն՝ ընդ որ անցանել ոչ է պարտ և արժան։ Ա՛յնպէս և Պաւղոս ասէ. "Յաղագս ննջեցելոցն ոչ կամիմ զձեզ անգիտանալ, զի մի տրտմիցիք որպէս և այլքն որք ոչ ունին յոյս"։ Տրտմեցիր, ասէ, բայց մի երբեք զհեթանոսս, որպէս անծանօթ լեալ յարութեանն երբեք անյոյս հանդերձեալ լոց բարեացն։

Ա՛մէն, հաւատացէք, և շառագունեմ, ընդ հրապարակս պարակս կանանց տեսանելով անամթեցեալս, որք զհերս փետեն, զայտս կեղեքեն և զծղիս կածեն՝ յանդիմանս աչացն հեթանոսաց լեալ այն։ Ո՛րինչ ոչ ասեն

նոքա, զմի բանս արդեօք ոչ խօսիցին։ Այսքա՜ն են որք յաղագս յարութեանն խնդաստասիրեն. ամենևին գեղեցիկ. ոչ յարմարին յաւանդութիւնն լեալքս. բանիւք ևեթ յաղագս յարութեանն ասեն, բայց իրօք զանգիտելոցն առնեն. եթէ վստահանային սոքա եթէ յարութիւն է, ոչ արդեօք զայս առնէին. եթէ հաւանեալք էին եթէ՝ի լաւագոյն կատարումն երթեալ գնայ, ոչ այսպէս արդեօք ողբային։ Ո՞չ այս և յոլովագոյն քան զսոյն անհաւատքն խօսին զողբան զայն լսելով։ Պատկառեսցուք այսուհետև և ողջախոհք լիցուք, և մի մեզ և տեսողացն այնքան վնաս գործեսցուք։

Այսո՞ր իսկ արտասուես այդպէս զգնացեալն, ասա ինձ՝ Եթէ չար էր, յաղագս դորին գոհանալ պարտ էր, զի՝ի բաց հատանն նորա չարութեանն իրք. այլ եթէ բարի և հեզ, և վասն դորին խնդալ պատշաճ է, զի վաղվաղակի յափշտակեցաւ նա՝ քան եթէ՝ի չարութիւն ինչ փոփոխեսցէ զնմանատութիւնն. չոգաւ՝ի տեղին յորում զգուշութեամբ այսուհետև կայ մնայ, և փոփոխումն ինչ գործել ոչ ևս է։ Այլ թերևս մանուկ էր. և դորին աղագաւ փառաւորեա զընդունողն, զի վաղվաղակի զնա՝ի լաւագոյն կատարումն կոչեաց. իսկ ծերացեալ, և յայդր սակս գոհացիր և փառաւորեա զառողն։ Պատկառեա դարձեալ և՝ի ձևոյ եկեղեցին, սաղմոսերգութիւնք և աղօթք և հարցն ժողովք և բազմութիւնք եղբարց այսքան. ոչ զի լացցես և ողբասցես և վհատիցիս, այլ զի գոհասցիս զառողջն։ Քանզի զոր օրինակ որք յիշխանութիւնն կոչին՝ յոլովք յաղարկին, նոյնպէս և զսուրբսն գնացեալ ասեն որք՝ի մեծամեծ պատիւս կոչին՝ հանդերձ յաւէտ բարեբանութեամբ յաղարկին ամենեքեան։

Հանգիստ է մահ, ՚ի քրտանց և՝ի հոգոց աշխարհականաց՝ի բաց վճարումն։ Յորժամ տեսանես զոք լինս տանեացն գնացեալ աստի, մի դժուարեսցիս, այլ ապաշաւելով՝ի քեզ ինքն եկեսցես և զնիոզձ մնացդ քըննեսցես. գիտասջիր զի և քեզ սուղ ինչ յետոյ նոյն կայ մնայ։ Լեր ողջախոհագոյն և ընկալ զերկիւղ յայլոց վախճանին, և զծուլութիւն զամենայն՝ի բաց հատ. զմտաւ ածդ զյանցանսն, ուղղեա զվերջանսն, գեղեցիկ առնա զփոփոխումն։ Քանզի այսոքիւք զանազանեցաք յան-

հաւատիցն, զատաստան այլ յաղագս գործոցն ունել։

Տեսանէ զերկին անհաւատն և երկիր պագանէ ՚ած կարծելով. տեսանէ զերկիր և սպաս տանի, և ընդ զգալիս ամենայն բերանաբաց է։ Խայց մեք ոչ այնպէս. այլ տեսանեմք զերկին, և ընդ արարիչն նորա հրաշանաւք. վասն զի ոչ զնա ՚ած, այլ գործ ՚ի հաւատամք. տեսանեմք զարարածս ամենայն, և ՚ի ձեռն նոցա առաջնորդիմք առ արարիչն։ Տեսանէ զընչեղութիւնն նա, և սխրացեալ հիանայ. տեսանեմ զփարթամութիւնն ես, և ծաղր առնեմ։ Տեսանէ զաղքատութիւնն նա, և սոսկայ. տեսանեմ զաղքատութիւնն ես, և բերկրիմ։ այլ ազգ ես տեսանեմ զկրս, և այլ ազգ նա։ Նոյնպէս և յաղագս մահու առնեմք։ Տեսանէ մեռեալ նա, և կարծէ մեռեալ զոլ. տեսանեմ մեռեալ ես, և քնոյ փոխանակ մահու տեսանեմ։ Այլ որպէս գրոցն են իրք, նոքումբք աչօք տեսանեմք զայնոսիկ՝ զիտակք գրոց և որք անգիտանան զգիրս, բայց ոչ նովքին մտօք. այլ որք ոչ գիտեն զգիրն, վայրապար կարծեն զտեսեալն. իսկ գիտակքն հանդերձ յոլով արուեստիւ հաւաքեն որ ՚ի նոսա կան միտքն։ Նոյնպէս և յաղագս իրացն է. նոքումբք աչօք տեսանեմք զդիպուածս իրացն, բայց ոչ նոքումբք մտօք և բարուք։ Ընդ մի այսուհետեւ որք յայլ ամենեսեան որշեալ եմք ՚ի նոցանէ, յաղագս մահու իրաց միաբանեսցուք ընդ նոսա։

Օ մտաւ ած առ ով չոգաւ, ընկալ միխիթարութիւն. ուր Պաւղոս է և Պետրոս, ուր հրեշտակացն ամենայն պար։ Ումն զիարդ յառնելոց է, հանդերձ որպիսի փառօք և պայծառութեամբ։ Օ մտաւ ած զի սգալով և ողբալով և ոչ զլեալ ողբումն կարես ուղղել, և զքեզ մեծապէս ճնասես։ Ումն ումմ նմանող լինիս զայն առնելով, և փախիր ՚ի հաւասարութենէ մեղացն։ Ումմ նմանիս և նախանձիս. ընդ անհաւատսն որք ոչ ունին յոյս, որպէս և Պաւղոս ասաց. "Օ ի մի տրտմիցիք, որպէս և այլքն որք ոչ ունին յոյս"։ Խայեաց և ՚ի բանից հաւաստութիւնն. քանզի ոչ ասաց՝ որք ոչ ունին յոյս անդ դատաստանին, այլ և ոչ մի ինչ ունին յոյս, և ոչ եթէ ած իսկ է գիտեն, և ոչ եթէ խնամ տանի մերձակայ իրացս, և ոչ եթէ զամենայն յածային իմն դատաստանէ։ Որք զայս ոչ գիտեն և ոչ կարծեն, քան զա-

մենայն գաղանս անբանագոյնք են. օրհնս և պատաս-
տանս և իրաւունս և բովանդակ պարզաբար զբարիսն
յիւրեանց անձանցն լեալս սահմանեն։ Քանզի որ ոչ
վստահանայն համարս ինչ տալ գործեցելոյն, յամե-
նայն առաքինութենէ՛ի բաց հրաժարէ, զընաւ զանի-
բաւութիւն ընդունի։

Օ այս զմտաւ ածելով, զանմտութիւն և զխելագա-
րութիւն հեթանոսացն խորհելով, փախիցուք՛ի նոցա
միաբանութենէն։ Քանզի յաղագս այդոցիկ և Պաւ-
ղոս զնոսա յիշեաց, զանմտութիւն զնոցա գիտելով յոր
կործանին. զի՛ի նոցա միաբանութենէն սեթափեսցիս,
և առ քո բարեմտութիւնդ եկեսցես վերստին։ Քա ոչ
ատամնօր միայն, այլ յոլովակի և յաճախապէս զնոյն
առնէր երանելին Պաւղոս. զի յորժամ և՛ի մեղացն
՛ի բաց հանել կամի, ցուցանէ ամ հաղորդք՛ի ձեռն յան-
ցանացն լինիցիմք, զի նմանութեամբք դիմացն խոցո-
տեալք՛ի հաղորդութենէն փախիցուք։ Աեսաղնիկե-
ցւոյն գրելով այսպէս ասէր. “Ուրաքանչիւր զի ոք
անօթն ստացի պատուով և սրբութեամբ. մի ախտիւ
ցանկութեան, որպէս և այլ հեթանոսք զնան ունայ-
նութեամբ մտաց իւրեանց,,. նոյնպէս և ատամնօր. “Ոչ
կամիմ զձեզ անգիտանալ յաղագս ննջեցելոցն, զի մի
տրտմիցիք որպէս և այլքն՝ որք ոչ ունին յոյս,,։ Ա՛ ատ-
ն զի ոչ բնութիւն իրացն, այլ մեր յօժարութիւնն տըր-
մեցուցանել սովորեաց զմեզ. ոչ մահ զնացելոցն, այլ
տկարութիւն ողբացելոցն։ Օ՛ի զհաւատացեալն և ոչ
մի ինչ՛ի մերձաւորաց տրտմեցուցանել կարէ. այլ նախ
քան զհանդերձեալ բարիսն և՛ի մծտաւորս որոշի յան-
հաւատից, ոչ փոքր ինչ բարիս առնլով՛ի Քրիստոսի
իմաստասիրութենէն, և մեծապէս զայս պատուղս շահե-
լով բարեմտութիւնս հաղորդեա և հրձուանս ունիցիս։
Յաղագս որոյ և Պաւղոս ասէ. “Մխդացէք՛ի տեր յա-
մենայն ժամ. դարձեալ ասեմ զուարճացարուք,,։ Ար-
պէս զի և նախ քան զչարութիւնն ոչ փոքր և զայս հա-
տուցումն ընկալաք՝ ոչ անկանել՛ի վայր և ոչ՛ի միոջէ
իմեքե՛ի դիպելոց դժնդակութեանց, այլ հանդերձեալ
յուսովն՛ի բազում մխիթարութիւնս վայելել։ Ա՛ զոր
օրինակ յերկոցունց կողմանց մեք շահիմք, նոյնպէս և
անհաւատն յերկոցունց կողմանց վնասի տանջանաք, յա-

զագս պատժոյն անհատատութեանն, և թախծանօք ի մերձակայ իրս, վասն ոչ ինչ վատահանալոյ յետ այսորիկ ի բարիս։

Արդ ոչ և այս յաղագս յարութեանն միայն պարտիմք գոհանալ ցայ, այլ և վասն յուսոյ յարութեանն՝ որ զողբացեալ անձինս կարէ միխիթարել, և հաւանեցուցանել յաղագս գնացելոցն վստահանալ՝ որպէս թէ յառնելոց իցեն դարձեալ և ընդ մեզ լինելոց։ Կանգնի եթէ վշտանալ ինչ պարտ և արժան իցէ և սգալ, զոր մեզքն կեան՝ զնոսա ողբալ պարտիմք և լալ, այլ ոչ զոր գնացինն աստի հանդերձ առաքինութեամբ։ Յայսմ և Պաւղոս առնէր. կորնթացւոցն առաքելով ասէր. "Ի գուցէ ի դալն իմում առ ձեզ նուաստացուսցէ զիս Աստ և սգայցեմ զյոլովս,,։ Ոչ ասաց զմեռեալս, այլ զյառաջագոյն մեղուցեալսն և ոչ ապաշաւեալս յանմաքրութենէ և ի պակշտութենէ զորս գործեցին. զայսպիսիսն պարտ է ողբալ։ Նոյնպէս և այլ ումն պատուիրէ ասելով. "Արտասուեա ի վերայ մեռելոյ, քանզի պակասեաց լոյս. լացիր ի վերայ անմտի, վասն զի պակասեաց իմաստութիւնն,,։ Զոր ինչ լացցես ի վերայ մեռելոյ, զի հանգեաւ. բայց յիմարին առաւել, քանզի մահ կեանքըն իւր են։ Արդ եթէ որ յիմաստութենէն պակասեալ է՝ յարաժամ ողբալոյ արժանաւոր է, ևս առաւել որ յարդարութենէն ամայի է և չածայրին լուսոյն արտաքս անկեալ. զայնպիսիսն սգասցուք մեք։ Այս սուգ ունի իմն և շահ. քանզի յաձախապէս զնոսա սգալովն ուղղեմք. բայց յաղագս գնացելոցն անմիտ միանգամայն և ձեռնակար է։ Ի այսմ հետև խոտորեցուսցուք ըզկարդն, այլ զմեղսն միայն ողբասցուք. իսկ զայնն առնայն եթէ աղքատութիւն իցէ կամ հիւանդութիւն կամ մահ տարաժամ եթէ դժուարութիւն եթէ զրպարտութիւն եթէ զինչ և անկանիցին ի վերայ մարդկան չարիք՝ զամենայն առաքինաբար ընկալցուք. քանզի դժնդակութիւնքն այն բազում պսակաց պատճառք լինին եթէ արթունք իցեմք։

Այս զիարդ է հնար, ասեն, որ մարդ իցէ՝ ոչ վշտանալ։ Օ հակառակ դորին՝ ասեմ ես. զիարդ որ մարդ է՝ վտանգի, բանիւ պատուեալ և խորհրդով և յաղագս հանդերձելոցն յուսով։ Այս ոմն զոր ոչ ըմբռնեցաւ ախ-

տիւս այսուիկ։ Յոլովք բազում անգամ և առ մեզ և առ նախահարքեն մերովք. քանզի Յովբ ՚ի բովանդակ պարու որդւոցն երթալ՝ լուր զինչ ասէր. “Ցեր եւս և տէր էառ. որպէս տեառն թուեցաւ, նոյնպէս և եղև„։ Հրաշալիք են և պարզաբար լսել զայս. բայց եթէ հաւատեաւ հարցաքննեսցես զամենայն, յայնժամ մեծագոյն ևս տեսցես զբանչելին։ Ել զկէտն էառ սատանայ և զկէտն եթող, և ոչ զյոլովս էառ և զսակաւն եթող. այլ զբովանդակ զպտուղն կթեաց և զծառն ոչ կարաց խորտակել. զամենայն ՚ի վերայ էած զծոռին հանդերձ ալեկոծութեամբ, և զնաւն ոչ կարաց ընկղմել. զբոլոր զօրութիւնն թափեաց, բայց զաշտարակն ոչ կարաց շարժել։ Ա՛յլ կայր ամենայն ուստեք հարեալ և անշարժ մնացեալ. տարափք բերեալ լինէին՝ նետքն, և զնա ոչ խոցոտէին. մանաւանդ եթէ ցցեալք լինէին ՚ի նմա, և ոչ վիրաւորէին։ Օ՜մեա՛ ած որպիսի ոք եր՝ այնքան մանկունս ետես կորուսեալս. զինչ ոչ էր բաւական յայնցանէ. ամենեքեան յափշտակեալ եղեն, բոլորեքեան յանկարծակի և ՚ի միում աւուր ՚ի նմին իսկ ՚ի ծաղիկ հասակի բազում առաքինութիւնս ցուցանելով՝ այնպիսի օրինակաւ տանջանաց լուծանել զկենցաղ. յետ այնքանեաց վերջին վիրացն ՚ի վերայ եկելոց բառնգեղծոյն և ծնողի անձկալիքն գնացեալք։ Վանգի յոր ժամ չար մանկունս կորուսանիցէ ոք, թէպէտ և կործանի յախտէն, այլ ոչ հանդերձ սաստկութե՛ն. վասն զի չարութիւն գնացելոցն ոչ թողացուցանէ զվտանգն։ Իսկ յորժամ առաքինիք իցեն, մնացական վէրն լինի, անվախձան մեզ յիշատակն և անմխիթարելի չարն. քանզի կրկին են խայթոցք, մին ՚ի բնութենէն և միւսն յառաքինութենէ գնացելոցն։ Նա զի առաքինիք էին՝ յայտ անտի էր, զի յոլովք նոցա առնէր խնամակալութիւն հայրն, յարաժամ ընծայէր յաղագս նոցա, երկընչելով վասն անյայտ մեղանաց. և քան զայս ոչ ինչ էր նմա պատուականագոյն։ Ա՛յս ոչ միայն զմանկանց զառաքինութիւն ցուցանէ, այլ և զՅովբ սիրելութիւն։ Օ՜ի յորժամ հայր էր և այնպէս բարեգութ, որ ոչ զբնութեանն սիրելութիւն եթէ ցուցանէր, այլ և զերկիւղածութեանն, և վախձանեալքն այնքան առաքինիք, երեքպատիկ լինէր տրտմութեանն բորբոքումն։ Վար-

ձեալ յորժամ ըստ մեռելոյն յափշտակիցին, ունի իմն միսի-
թարութիւն սիրտն, վասն զի մեռացեալքն զգնացելոցն
ջոխրութիւնան ծածկեն. իսկ յորժամ բովանդակ պարն
երթայցէ, յո՞ր կարասցէ հայել. բաղմորդին յանկար-
ծակի անօրդի եղև։

Զինի այսոցիկ է տեսանել դարձեալ և զհինգերորդ
վէրն։ Զո՞ր. յանկարծակի դյափշտակումն զամենեցուն.
քանզի եթէ յերիս աւուրս կամ՝ ի հինգ՝ զգնացեալն
կանայք և որք միանգամ յանկագոյնք են՝ ամենեքեան
զայն յաւէտ քան զամենայն ողբան, զի ձեռով և յան-
կարծակի յափշտակեցան՝ ի նոցա դիմաց վախճանեալ
քրն, և աս առաւել արդեօք նա վշտանայր, զի ոչ յերիս
կամ յերկուս աւուրս և կամ՝ ի միում զրկեցաւ։ Զ ասն
զի ժամանակաւ կրթեալ դժնդակութիւնն, թէպէտ
և ծանրըմբերելի է, վստահութեամբն թեթև լինի և
դիւրագոյն. իսկ անյուսալի պատահումն, թէպէտ և
թեթև, անյուսութեբն և յանկարծակի դիպուածովն
անըմբերելի լինի։ Զրդ յորժամ և ըստ ինքեան դժըն-
դակագոյն իցէ և առանց կասկածանաց պատահիցէ՝ յա-
ւելուածս առնու՝ ի նմա, զիարդ անըմբերելի լինէր և
ըստ ամենայն բան գեր՝ ի վերոյ անցանէր։

Զամին և զվեցերորդ հարուածն լսել՝ ի նմին իսկ՝ ի
հասակի ծաղկի զամենեսեան կոլոյս։ Զիտէք իսկ որ-
պէս տարաժամ մահք խածանեն և բաղմազան առնեն
զսուգն. բայց անդ ոչ միայն տարաժամ էր, այլ բռնու-
թեամբ. որպէս զի և այս եօթներորդ վէր է լեալ։ Զ ասն
զի ոչ ետես՝ ի վերայ մահճացն վախճանեալս զնոսա և
պրաւեալս, այլ տամբ թաղեալս։ Զո՞վ մեռաւ ած ով որք էր
որ բրէր անդ զհողն կամ՝ ի բաց հոլովէր զքարն, և ով
որք երբեմն որ զանդամն մանկանցն ձգէր, տեսանէր զու-
րումն զձեռն որ զտաշտն ունէր, և զմիւսոյն և զաջն՝ ի
վերայ սնակին կացեալ, և զնորին մարմնոյն զատակա-
նեալ զկերպարանն, զունգունն ջախեալ, զգլուխ խոր-
տակեալ, զաչս անչափացեալս, զվերապատակն ցնդեալ
և զամենայն կերպարանն միանգամայն ապականեալ,
և վիրացն զանազանութիւնն ոչ Թողացուցանէին հօրն
զանձկալոյն դիմաց զկերպարանս ճանաչել։ Զե՛ ոչ
փղձկիք զայս լսելով և արտասուէք։

Զմեռաւ ածէք ո՛վ որք էր նա որ զայսն տեսանէր.

քանզի եթէ մեք յետ այնչափ ժամանակի ոչ կարեմք առանց արտասուաց զողբերդութեանն զայն զլսելութիւն բերել, և այս զօտարաց զԹշուառութիւնս, որպիսի՞ էր անվանեցին[1] այն՝ տեսութեամբ առնուլ զամենայն՝ ոչ յօտարս[2], այլ յիւր չարիս խնամատարութիւն։ Վասնզի ոչ վկատեաց և ոչ ասաց՝ զինչ էն այս իրք, այս էն սիրելութեանն իմոյ հատուցմունք. յաղագս այսորիկ օտարացս քանայի զտունս, զի գերեզման զսա մանկանցս լեալ տեսից. այսր աղագաւ զամենայն զառաքինութիւն յուցի, զի այսպիսի մահու համբերիցեմք։ Այլ ոչ ինչ յայսցանէ ոչ ասաց և ոչ զմտաւ էած, այլ ընդունէր զամենայն առաքինաբար, և զինի այնքան խնամակալութեան նոցա զրկեալ։ Օ՜ի զոր օրինակ ոք հմուտ պատկերագործ ոսկեզէն պատկերս ստեղծանելով՝ հանդերձ յոլով հաւատութեամբ յօրինէ, նոյնպէս և նա բազում հմտութեամբ զնոցա զոգիսն զարդարէր ստեղծանէր և կազմէր։ Այլ որպէս մշակ ոք աշխատասէր զտունկ ինչ արմատնեաց և կամ ձիթենեաց ոռոգանելով պարապելով շուրջ ամրացուցանելով ամենայն օրինակաւ խնամակալութեամբ զդուշանայ, նոյնպէս և նա ոչ նուազէր իբրև զձիթենի իմն քաջապատուղ զիւրաքանչիւր ուրուք զոգի առաւել յառաքինութիւն և՝ի զարդացումն աճեցուցանէր։ Այլ ետես արմատաքի խլեալ զտունկն՝ չար այսոցն պատերազմաւ խլեալս և ողորմելի օրինակի վախճանին համբերեալս, և ոչ ինչ հայհոյութեան բան բարբառեցաւ, այլ և գոհացաւ ևս՝ տալով սատանայի վերս։

Այս եթէ ասիցես եթէ յոլով որդիս ունէր նա, այլ ոք Թերևս միածին զոք կորուսանէ՝ և ոչ է հաւասար սուգն, գեղեցիկ ասես, և վկայեմ զի ոչ է զուգահաւասար սուգն, այլ յոյժ առաւել էր Յովբայն։ Վասն զի որ շահ նման՝ի բազմամարդութենէն. հզօրագոյն ևս նմա զԹշուառութիւնն արար և դառն ցցաւն, զի յոլով մարմինս զվէրն ընդունելով։

Այս եթէ կամիս զմիւս ևս ումն տեսանել զսուրբ, որ միածին ունէր որդի և զնոյն և կամ յոլովագոյն ևս ա-

1 Իմա ագամանդեայ։

2 Պակասէր յօրինակին ոչ յօ-պօր։ Յաւելաւ՝ի յոմանէն։

բանքիւն եղեալ, յիշեա զՀայրապետն Աբրահամ՝ որ ոչ եաես զնահակ մեռեալ, այլ յաւէտ դառնադոյն և վհատագաւոր՝ ինքն զնա խողխողել Հրամայեցաւ. և ոչ ընդդէմ եկաց Հրամանին, ոչ դժուարեցաւ և ոչ խոսեցաւ այսպիսի ինչ՝ յաղագս անյողդողիկ Հայր արարեր, զի մանկատան գործիցես. լաւագոյն ոչ իսկ տալ ի սկզբանն՝ քան եթէ տալով այս օրինակաւ. դարձեալ զսա ի բաց բառնալով ախորժես առնուլ, ընդէ՞ր ինձ Հրամայես խողխողել և զաջս պղծել զիմ. ո՛չ յայս մանկանէ զաշխարհս ամենայն լցուցանել զարմիւքն խոստացար. զիա՞րդ զայտուէն տայես զարմանն խլելով, կամ որպես զաւակ խոստանայ՝ զորդիս սպանանել Հրամայելով. ո՛ զայս եաես, ո՛ լուաւ. պարտեցայ և խաբեցայ։

Այլ ոչ ինչ յայսցանէ ոչ ասաց և ոչ զմտաւ էած և ոչ ընդդիմացաւ Հրամանին. ոչ պահանջեաց Համարս, այլ լսելով “Որ զորդիդ քո զսիրելի զոր սիրեցեր զԻսահակ, և Համբեաս զդա ինձ ողջակէզ ի վերայ միոյ լերանց զոր քեզ ասացից,,, Հանդերձ այնքան յօժարութեամբ զՀրամանն կատարէր, մինչ զի առաւել ևս քան զՀրամայեաըն առնէր։ Վառզի և ի կնոջէն ծածկեաց, և զծառայս զանխուլ ի խնամարկ մեացեալ Թողոյր, և միայն զընծայն առնուլ ելանէր ի վեր. այնպէս ոչ ակամայ, այլ Հանդերձ յօժարամտութեամբ զՀրամայեաըն գործէր։

Օմտաւ ածէ որպիսի ոք էր, միայն ընդ միայնութիւն խոսելով ընդ մանկանն՝ ոչ ուրուք մերձ եղելոյ, յորժամ յաւէտ դուխքն ջեռնուին և սաստկագոյն սիրելութիւն լինէր, և այս ոչ ի միում և կամ յերկուս, այլ ի բազում առուրս։ Ոյան զի եթէ Հեպոյ առնէր զՀրամայեալն, Հրաշալի և մեծ, և սակայն ոչ այնքան սքանչելի. որպէս յետ բազում առուրց տանջեցեալ ի նա Հոգին և կրթեալ, ոչ ինչ մարդկային ախտանալով առ մանուկն։ Յաղագս այնորիկ և երկայնագոյն նմա Հանդիսարանն եղ ածէ և զասպարէզն յերկարեաց, զի Հաստատագոյն տեսցես զըմբիչն. վասն զի և էր իսկ Հնչմարտապէս մարտիկ, ոչ ընդ մարդկան մրցելով, այլ ընդ նմին իսկ ուժգոյն բնութեանն։

Որ բան մերձ կացուցանել կարասցէ զզօրութիւնն. կապեաց զմանուկն և ի վերայ շերտիցն եդ, զսուրն Հան

և ՚ի վերայ աճել զվէրն հանդերձեալ էր։ Օ՜ խնդդ, ասա ինձ, և կամ որո՞վ օրինակաւ, ոչ ունիմ ասել. ինքն միայն գիտէ որ զայն գործեաց. բան և ոչ մի յանպիման կացուցանել կարասցէ՝ զիարդ ոչ ընդարմացաւ ձեռն, զիարդ ոչ լքաւ ջլացն պնդութիւնն, որպէս ոչ ամբոխեցին զնա տենչալի մանկանն դէմք։ Յրժան է աստանօր հիանալ և ընդ Յահակայ. զի որպէս նա այդ, նոյնպէս և սա հաւաներ հօրն. կապեալ և ՚ի վեր հանեալ ՚ի սեղանն, և ոչ ասաց ընդ՚ը զայս առնես. այլ ՚ի ներքոյ անկեալ կայր հայրենի ձեռինն։

Այս էր միանգամայն տեսանել հայր և քահանայն զնոյն լեալ, և զոհ առանց արեան պատարագէր, ողջակէզ առանց հրոյ, մնհու և յարութեան օրինակ ՚ի վերոյ սեղանոյն լինէր։ Այսան զի եղեն զորդին և ոչ եզեն. ոչ եսպան ձեռամբ, այլ եսպան յօժարութեամբ, զի ՚ած յաղագս այնորիկ հրամայեաց՝ ոչ արիւն ախորժելով տեսանել, այլ յօժարամտութիւն քեզ ցուցանել, և զնահատակն զայն ՚ի մէջ ամենայն աշխարհի քարոզել, և խրատել զամենեսեան՝ որք զկնի այնորիկ Թէ և քան զմանկունս և զընութիւնս և զգոյս և քան զնոյն ինքն զանձն զայդ հրամանին նախապատուել և պարտ և արժան։ Այնանէր ՚ի խոնարհ կենդանի առնլով վկայ զՅահակ։

Օ՜ր ընկալցուք Թողութիւն, ասա ինձ, որպիսի պատասխանիս, եԹէ առաքինիքն այնորիկ հանդերձ այսպիսի յօժարամտութեամբ այդ հաւանէին և յամենայնի նման անասային, մեք դժուարիցիմք։ Վանգի մի ինձ զսուգն ասեր և մի զանըմբերելն Թշուառութիւնն. այլ զայն ինձ դիտեա, զի Թէպետ և դժնդակագոյն էր, այլ գեր՚ի վերոյ եղև։ Հաւատական էր հրամայեալն տաղնապեցուցանել զնոցա զխորհուրդն, ՚ի տարակուսանս արկանել, զհաւատն գողանալ որ յանցեալն էր։ Վանգի ոմ՚ոք ՚ի բազմաց ոչ արդեօք խաբէութիւն կարծեր զասացեալն՝ զոր յաղագս բազմութեանն նորա զաւակին խոստացաւ. այլ ոչ Յբրահամ։

Վ՚նպէս և ընդ Յովսէպ ՚ի վերայ Թշուառութեանն իմաստասիրութիւնն ոչ ինչ նուազ յաղագս այնոցիկ ընդգարմանալ պարտ և արժան է. զի յետ այնքան աառաքինութեանցն, զկնի բարեմտութեանն, յետ ոլոր-

մութեանն և մարդասիրութեանն, յետ ոչ ինչ զինքեան և ոչ զմանկանցն խիղճ չար գիտելոյ՝ այսպիսի սուգ ետես, այնպես և նոր հրաշափառագոյն, և ոչ ինչ թշնամանաբար յանդգնեցաւ, ոչ ախտացաւ որպէս յառաջք, և ոչ անմտութիւն վարկաւ զառաքինութիւնն, ոչ չարաչար խորհեալ յանցեալ ժամանակի: Որպէս և յաղագս երկոցունն այսոցիկ մանաւանդ ընդ նոսա և պարտ զարմանալ զի ժուժկալեցին 'ի տրտմութիւնն, և 'ի բարեպաշտութիւնն ոչ ինչ պնաստեցան: Այլ ոչ հրաշալնալ եւթէ արժան է, այլ և նախանձել և նմանիլ առաքինութեանն: Այս մի ոք ասասցէ՝ եթէ նոքա զարմանալիք ոմանք էին: Քանչելիք էին և մեծք. բայց մեք եւս առաւել քան զնոսա պահանջիմք իմաստասիրել որք 'ի հնումն հրահանգեցան առնեղբեանն. քանզի "Եթէ ոչ առաւելուցու արդարութիւնն ձեր, ասէ, յոլովագոյն քան զդպրացն և զփարիսեցւոցն, ոչ մտանիք յարքայութիւնն երկնից,,:

Արդ ամենայն ուստեք ողջախոհացեալք, զայս հաւաքելով և որ յաղագս յարութեանն ձեզ ասացաւ և վասն սրբոցն այսոցիկ, յաձախապէս երգեսցուք յանձինս մեր, ոչ միայն 'ի ժամանակի սգոյն, այլ և յորժամ մաքուր պահիցեմք 'ի վշտացն: Յաղագս այսորիկ թէպէտ և ոչ ինչ էաք 'ի տրտմութեան, այժմ զայս բանս շարադրեցի. զի յորժամ անկանիցիմք յայնպիսի ինչ թշուառութիւն, յիշելով զասացեալս՝ բաւականապէս վայելեսցուք 'ի մխիթարութիւնն: Քանզի և զինուորք 'ի խաղաղութեան զպատերազմականացն իրս կրթին. զի յորժամ մարտն 'ի վերայ գայցէ և ժամանակն զմտութիւնն պահանջիցէ, 'ի դէպ ժամու ցուցցեն զարուեստսն զոր 'ի խաղաղութեան յարմարեցին:

Այս մեք այսուհետև կառուց և զինս պատրաստեսցուք մեզ 'ի ժամանակի խաղաղութեան. զի եթէ երբեք պատերազմին 'ի վերայ հասցէ անբան ախտիցն կամ սգոյ կամ վտանգի կամ այլոց իրիք նոյնպիսեաց, զինեալք գեղեցկապէս և վառեալք ամենայն ուստեք՝ զչարին ըզմարտն հանդերձ յոլով համառութեամբ 'ի բաց մեկնեսցուք. ուղիղ խորհրդովք, հրամանօք Այ և օրինակօք բարեաց արանցն, և ամենայն օրինակաւ ամենայն ուստեք զմեզ պարսպեսցուք: Քանզի այնպես կարասցուք և զմերձա-

ւոր կեանս հանդերձ բարեմտութեամբ անցուցանել, և արքայութեանն երկնից հանդիպել ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի տէր մեր. ընդ որում փառք հօր հանդերձ սըրբով հոգւովն այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԽՕՍՔ ՈՐ Ի ՇԱՐԺՄԱՆՆ ԵՂԵՆ

Տեսէք զի՝ զօրութիւնն, տեսէք զի՝ զմարդասիրութիւնն. զզօրութիւնն՝ զի շարժեալ դղրդեաց զաշխարհս, իսկ զմարդասիրութիւնն՝ զի զանկեալն հաստատեաց. մանաւանդ զերկոսեանն, զզօրութիւնն և զմարդասիրութիւնն. քանզի շարժելն զօրութեան է, իսկ հաստատելն մարդասիրութեանն: Որպէս շարժելն մարդասիրութեան էր, զի շարժեաց զերկիր և հաստատեաց զաշխարհս, սասանելն և տատանելն զօրութեան էր, և որ մերձ ՚ի կործանումն էր՝ կանգնեաց և կացոյց: Որպէս շարժումնն անց, իսկ երկիւղն մնասցէ. խռովութիւնն անց և դադարեաց, բայց ահն մի անցցէ. խնդրուածս արարաք զերիս աւուրս, այլ մի լուծեալ քակեսցուք զըզփոյթ յօժարութեանն. վասն այնորիկ և շարժմանքն վասն վէհերը ժողովրդեանն. հեղգացաք և կոչեցաք զըզշարժումնն, փութասցուք և անդրէն յետս դարձուսցուք զբարկութիւնն. մի դարձեալ ծուլասցուք, զի մի դարձեալ ածցուք զպատիժս բարկութեանն: Կանգի ոչ կամի Աստ զմահ մեղաւորին, որպէս զդառնալ նորա և զկեալ:

Խնացայք զժամանակեայ[1] աղքի մարդկան: Ո՞ի յորժամ շարժումն լինէր, զմտաւ ածէի թէ ոմն իցէն յափըշտակութիւնքն և կամ ոմն ապահութիւնքն, ոմն իցէն բռնութիւնքն կամ ոմն ամբարտաւանութիւնքն, ոմն իցէն զօրութիւնքն կամ ոմն իցէն հարստահարութիւնքն, ոմն իցէն հալածմունք աղքատաց կամ ոմն ամբարհաւաճութիւնք մեծատանց, ոմն իցէն իշխանացն զօրութիւնք և կամ ոմն սպառնալիքն և արհաւիրք. ՚ի

1 Իմա գոյականաբար զանցառ- զարդին ղժամանակեան ազգի մարդ- բռնին. որպէս և երկուց օրինա- կան զանցս. յորմէ պիտի ի վա- կաց ղժամանակէ. զոր երկու այլք զանցոսի ի ազգ մարդկան:

մի ժամանակեան տկարագոյն եւս քան զսարդիոստայն անկեալ խախտեր, և ամենայն միանգամայն եղծաներ. դողումն և դղրդումն քաղաքիս, և ամենայն ուրուք զտաս արձակեալ՝ յեկեղեցիս փախստական լինելոյն։ Ի մտացայք, զի ԹԷ կամ լեալ էր ՚ի զամենայն տապալել, զի գործեալք արդեօք։ Օ՞այս ասեմ զի անձանձրոյթս և առանց հեղգանալոյ զձեր զիտս հաստատեցից։ Օ՞ի ՚ած յառաջագոյն կանխեաց զչարժումնն, զի երկիւղիւն զամենայն ուրուք զիտս հաստատեսցէ։ Շ արժեալ դղրդեաց, այլ ոչ կործանեաց. զի ԵԹԷ կամեցեալ էր գլորել, ոչ շարժեր. այլ քանզի ոչ կամէր, յառաջեցաւ իբրև քարոզիչ դղրդումնն առ ՚ի պատմել ամենեցուն զբարկութիւնն, զի ահիւն և երկիւղիւն լաւագոյնք լինցուք, մերժեալ ընկեցուք ՚ի մէնջ գործոց իրօք զպատիժս պատուհասիցն։

Նոյնպէս և զբարբարոսական[1] ազգայն արար. "Երթէք և աւուրք և Նինուէ կործանեսցի,,։ Նա ընդէր յառաջագոյն պատմես. քանզի ոչ կամիմ կործանել, ասէ։ Նա զի՞ ասես. զի մի առնիցեմ զոր ասեմն։ Յառաջագոյն գուշակ լինի բանն, զի կարձեսցէ զգործն։ "Երթէք և աւուրք, ասէ, և Նինուէ կործանեսցի,,։ Յայնժամ մարգարէն, և այժմ որպէս բարբառին[2] և աղաղակեն։ Օ՞այս ասեմ և յասելոյ ոչ դադարեցից առ աղբատս և առ մեծատունս. ՚ի միտ առէք ԵԹԷ որպիսի է բարկութիւնն ՚այ, և կամ ո՞րպէս նմա ամենայն ինչ հնարաւոր և դիւրին է, և կարձեսցուք զմեզ երբեմն ՚ի չար գործոցն։ Շ արժումնն ՚ի վայրկեան ժամանակին ժամուն յահէ երկիւղին իւրաքանչիւր այր ՚ի մտաց անկեալ լուծաներ, և զբոյսս[3] սրտին շարժեալ սասանէր։

Ի մտացարուք և զմտաւ ածէք զահագին զօրն զայն, ոչ ԵԹԷ փոքրժամանակեան ինչ, այլ գետք հրեղինք յորձեռանդք, սպառնմանքն բարկութեան, և բռնութիւն դատաստանին և ահաւոր բեմքն և անաչառ դատաստանն, և ամենայն ուրուք իւրաքանչիւր գործքն առաջի աչաց իւրոց կարգեալ կայցեն և ոչ ոք ինչ որ օգնեսցէ,

1 Ի վեց օրինակաց երեքն առ Բարբարոսական ազգն։

2 Օրինակ մի Բոխբոխին։

3 Յոյնն ղհիմառնս։

ոչ դրացի և ոչ մերձաւոր, ոչ ազգական և ոչ եղբայր, ոչ հայր և ոչ մայր, ոչ օտար և ոչ այլ ոք ուրեք, զինչ արասցուք յայնժամ, ասա ինձ։ Յանձախեցուցանեմ զահն, զի պատրաստեցից զիրկութիւնն. հատու քան զամենայն սուր երկայնոյ յօրինեմ զվարդապետութիւս, զի եթէ ոք ի մէնջ խղճայնեալ վերս ունիցի՝ բժշկեսցի։

Ո՛չ հանապազ ասէի և այժմ ասեմ, մինչև ցայն ժամն լերուք անձանձրոյթք, և բևեռեցէք զձեզ ընդ երկիւղն։ Յամենեսեան ասեմ, աւելի ևս հիւանդաց և աշխատելոց, և որդոյ ոչ կամիք ունկնդիր լինել բանիս վարդապետութեան. մանաւանդ զի յերկուց կողմանց օգտակար է բանս, հիւանդին զի առողջասցի, և առողջին զի անցաւ մնասցէ։ Մինչև յերբ ինչս ստացուածոց, մինչև յերբ մեծութիւն, մինչև յերբ ամբարտաւանութիւք մեծամեծ շինուածոց, մինչև յերբ տառապումն վասն անընչական հիւթին։ Ո՛չ եկն եհաս շարժումն և դղրդումն, զինչ օգտեսցէ մեծութիւն կամ վաստակք. երկաթին անկեալ քակին, ստացողն ստացուածովքն հանդերձ կորնչեր, ապարանքն շինողաւն իւրով. հասարակաց գերեզման լինէր քաղաքս, գերեզման յանկարծակի, ոչ ձեռակերտ արուեստականաց, այլ օրհասականն պատրաստութիւն։ Մեր են մեծութիւնքն կամ յափշտակութիւնքն, մեր են ագահութիւնքն. տեսանէ՞ս զի քան զսարդիոստայն տկարագոյն ևս եղէն և մեղկագոյն։

Այլ ասիցէ ոմն, Թէ զինչ շահիցիս որ ասես։ Ճաշիմ Թէ լսիցէ ոք, ես զիմն արարից. զի որ սերմանահանն է՝ սերմանէ։ Այլ, ասէ, սերմանահանն սերմանել, և ոմն անկաւ առ ճանապարհաւն, և ոմն անկաւ ի վերայ վիմի, և ոմն ի մէջ փշոյն, և ոմն յերկիրն պարարտ. երրորդ մասն կորեաւ, և մի մասն ապրեցաւ։ Այո իբր կորեաւ արդեօք երրորդ մասն, վասն այնորիկ հրաժարեսցէ՞ յանդոյն. այլ քանզի մի մասն ապրեցաւ, ոչ դադարեաց ի մշակութենէն։ Այո այժմ անհնար է ի մէջ այսչափ բազմութեան սերմն այսպիսի սերմանել Թէ չգերիցէ զպտուղն և հատուցանիցէ զարմինիւն. զի Թէպէտ մի և կամ ամենեքին չլսիցեն, սակայն կէս մի. Թէպէտ և կէս մի ոչ, երրորդ մասն մի. Թէպէտ և երրորդ մասն մի ոչ, գէթ տասներորդն, գոնեայ և մի

ոք ՚ի բազմութենէ ասոի լուիցէ. ոչ է փոքր և մի ոչինչ ապրեցուցանել. քանզի և բարւոք Հովիւն այն զինեաւն և զինն ոչխարն Թողեալ՝ առ մի մոլորեալն ընթանայր:

Ես անփոյթ առնեմ վասն միոյ մարդոյ, զի յարդական և կենդանական մարդն ՚ի Թէպետ և ծառայ իցէ՝ չէ արհամարհելի. ոչ եթէ պատիւ ինչ խնդրէ, այլ առաքինութիւն. ոչ զծառայութիւնն և ոչ զազատութիւն, այլ զանձն սուրբ: Ո՞վ ասիցես եթէ մին մարդ է. Թէպետ և մին մարդ իցէ, վասն որոյ երկինք ձգեցան և երկիր Հաստատեցաւ, արեգակն ծագեաց և լուսին ընթացաւ և օդք սփռեցան և աղբիւրք բղխեցին և ծով ծաւալեցաւ, մարգարէք առաքեցան և օրէնք տուան. և պարտ է և զայս ևս ասել, վասն այնորիկ և միածինն որդին ՚ի մարդ եղև. որ տէրն էր՝ սպանաւ և զարիւնն իւր եհեղ վասն մարդոյ, և ես անփոյթ առնիցեմ և արհամարհիցեմ, և զիարդ գտից Թողութիւն: Ես լսեցէք Թէ ընդ միոյ սամարացւոյ կինէ այնչափ բանս վարդապետութեան խօսեր Քրիստոս և բիւր բանս ասեր. և ոչ եթէ վասն զի սամարացի էր՝ արհամարհեր, այլ վասն զի Հոգևորական գանձ էր՝ ոչ անփոյթ առնէր. և ոչ վասն զի պոռնիկ էր՝ անտես առնէր, այլ վասն զի կամէր կեցուցանել՝ ոչ Հեղգայր. Հաւատ յոյժ ընդունէր, և վայելէր ՚ի խնամն:

Ես լսեմ զայս յասելոյ, Թէպետ և չիցէ ոք լսող. բժիշկ եմ, դեղ դնեմ բժշկութեան. վարդապետ եմ, ուսուցանել հրամայեցայ. նա և ուրեմն ասէ՝ Թէ "Ոչխար կացուցի զքեզ ՚ի վերայ տանդ Իսրայելի ,,: Ես ինչ յաւաջադէմ լինիցին, և զի առ իս. այլ սակայն ինձ վարձք են: Ես զայս աւելի քան զչափն ասացի. անհնարին է յայսպիսի բազմութեան միջի չգալ ումեք ՚ի կարգ ուղղութեան:

Ա՛յլ այն բարւոքք են անմիտ լսողացն. եթէ լսեմ, ասէ, Հանապազ և ոչ առնեմ, զինչ օգուտ է ինձ: Գնա՛ պետ և չառնիցես՝ լաւ, լաւ՝ զի և ՚ի լսելոյն ինչ մի յօգուտ լինիցի. Թէպետ և չառնիցես, զբարսն փոխիցես. Թէպետ և չառնիցես, ամաչիցես վասն մեղացն. Թէպետ և չառնիցես, զանձն դատապարտիցես. չառնելն այն իսկ է որ զանձնէն դատախազ լինիցիս և խիղճ ՚ի մտի դնիցես, ուստի՞ իցէ, ոչ պտուղ իմոց բանիցն իցէ:

Յորժամ ասիցես թէ վայ ինձ՝ եղուկ եմ, լուայ և չառնեմ, ասէլն իսկ վայ ինձ՝ սկիզբն է փրկութեան, և եղուկ ես՝ գլուխ յառաջադիմութեան: Մեղաւ, ղղջայ և ապաշխարեա, և լուծեր զմեղն. "Ընա դու յառաջ զմեղն քո, զի արդարասցիս,,: Յորժամ տրտմիցիս և սգայցես, գոցես զիրկութիւն, ոչ վասն ծննդական փըրկութեանն, այլ վասն տեառնն մարդասիրութեանն: Օ՛ի եթէ կայցեն յումեք մեղք, չէ փոքր միթէ արութիւն ղղջանալ և յոգւոց հանել: "Տեսի, ասէ, զի՝ի սուգ եմուտ և տրտմեցաւ, և բժշկեցի զձանապարհս նորա,,: Ա՛վ անչափ մարդասիրութիւն և բարերարութիւն զոր ոչ ոք կարէ մեկնել. տրտմեցաւ, ասէ, և բժշկեցի զձանապարհս նորա: Այս զինչ մեծ իցէ ղղջանալն. մեծ և ոչ ինչ, այլ ես պատճառս գտի:

Տեսո՞ք ո՛րպէս՝ի փոքր ժամանակէն մի զամենեսեան ամիրափեաց և ժողովեաց այսր. Հանապազ զերեկն զայն զմտաւ ածէք: Ա՛նդր բազումք ոմանք այլք վասն շարժմանն երկուցեալք էին, իսկ ես վասն իրաց շարժմանն: Ա՛մացա՛յք զոր ասացիս. զի ոմանք զարհուրեալ էին թէ մի երբեք քաղաքս տապալեսցի և մեռանիցիմք. և ես զայս զմտաւ ածէի թէ վայ ինձ՝ տէրն մեր ուրեմն բարկացեալ իցէ: Ա՛յլ եթէ մեռանելն ինչ չար է, այլ չար այն է զարարիչն բարկացուցանել. քանզի ոչ վասն շարժմանն երկնչէի, այլ վասն իրաց շարժմանն. զի բարուրք շարժմանն՝ բարկութի՞ւն, և ցաստման պատճառք՝ մեղքն մեր: Ա՛յ երբեք երկնչիր՝ի տանջանացն, այլ երկիր՝ի մեղացն՝ որ մայրն է տանջանացն: Ե՛ար ժի և դողայ քաղաքս, այլ քո միտգ մի՛ շարժեսցին. քանզի և վասն մարմնական քնութեանս մերում ոչ վասն այնոցիկ որ բժշկինն տխատիմք և դողամք, այլ զայնոսիկ որ զանբժշկական ախտն ախտանան: Օ՛ի որպէս են ցաւք և վէրք, նոյնպէս են և մեղք. և որպէս են հատուածն և կտրուածն և մեղք, նոյնպէս և տանջանք և հարուածք:

Ա՛մացա՛յք արդեօք զինչ ասացիս. միտ դիք, զի բանս Հալատարական խնամատուութեան կամիմ ուսուցանել ձեզ: Ընդի՛ր[1] վասն տանջելոյն սգամք և տխրիմք, և ոչ վասն

1 Ա՛յդպէս բառ միայ օրինակի Հաւանաձայն յուներէն. իսկ այլք Ընդ- դիմ՛, այլ վասն յանդգնութեան:

յանցականացն. զի ոչ այնչափ չար են տանջանքն, որ-քան չար են մեղքն. զի պատճառք տանջանացն մեղքն են: Օ՛ի որպէս և նեխեալ հինչ և փտեալ և հոտեալ վէրք և որդնալից թարախով՝ի վերայ մարմնոյ զան-կեալ իցէ և տարածեալ, և նա անհոգ և անփոյթ լի-նիցի վասն խղճայթեալ վիրացն, և միւս ևս այլ ընկեր նորին նոյնպէս իցէ, և՝ի ձեռաց բժշկաց հոգաբարձու-թեամբ դարմանեալ այրելով և կտրելով և չարաչար դե-ղովք մատուցեալ բժշկիցի, զո՞ՙի նոցանէ սգաս, ասա ինձ. որ հիւանդն էր և առ բժշկութիւնն մերձեցաւ, թէ որ հիւանդն իցէ և չլինիցի հուպ առ բժշկութիւնն. ապաքէն որ հիւանդն իցէ և չբժշկիցի:

Այսօրինակ թուեսցին քեզ և երկու մեղաւորք, մինն՝ի պատիժս տանջանաց, և միւսն ևս ոչ: Այ՛ ասիցես երբեք, թէ երանի նմա զի մեծատուն է, զորբս մերկա-ցուցանէ, զայրիս բռնադատէ և երբեք ոչ հիւանդա-նայ, այլ յափշտակութեամբ յառաջադիմի, վայելէ՝ի պատուի, ՙի բազում զօրութեան, ոչ զմարդկան ինչ կիրս կրէ, հիւանդութեանց երբեք զնա չիք նուաճեալ, ընդ երկայնական կեանս մինչև ցծերութիւն եկեաց, գունդք որդոյն շուրջ զնովաւ պատին, ծերութիւն պա-րարտութեան. զայնպիսին ողբա, զի ախտացաւ և չբը-ժշկեցաւ: Այլպէս թէ տեսանիցես ջղդողեալ զոք, կամ վայծաղնացաւ չարախտեան այտուաւն ուռայց զմարմինն, և ոչ ընթացեալ վաղվաղակի առ բժիշկն, այլ ցուրտ ըմպելեօք և անդէպ ձաշակօք հանապազօր բազմապա-տիկ պատրաստեալ սեղան առաջի դնիցէ, յարբեցու-թեան և յանառակութեան սպասաւորեալ, ոչ յաձա-խեալ բազմացուցանիցէ զցաւն. արդ երանի՞ տայցես այնպիսւոյն, եթէ չուառական համարիցիս: Այ՛պա թէ միւս ևս ընկեր նորա զնոյն ախտս ախտանայցէ, և ար-կեալ զինքն՝ի ձեռս խնամական բժշկաց և ընդունիցի չարաչար դեղս դառնութեան՝ի համբերութիւն ժուժ-կալութեան, առ ժամ մի յոյժ են ախտ ցաւոցն. բայց ապա զինի նորին վաղվաղակի ծնանին զառողջութիւն, և ոչ զսա երանիցես քան զմիւսն ևս: Այ՛ն յայտ իսկ է զի մինն հիւանդանայ և չբժշկի, և միւսն ևս հիւան-դացեալ առողջանայ: Այ՛յլ աշխատութիւնք մեծ են, ասէ, ՙի բժշկութենէ անտի. և զի առնէ քեզ այն, այլ վախճանն նոցա յօդուտ է:

Նոյնպէս և ՚ի սմին իսկ աշխարհի ՚ի մարմնոյ ասէ առ ղբանն և տար ՚ի ցաւան հոգւոց, զարձեալ միւսան զամ ՚ի մեղան, և ՚ի չարաչար զառնադեղ դեղոյն ՚ի տանջանան և ՚ի զատասատանն այ. զի որպէս ՚ի բժշկելն ՚ի զառնադեղն խարանք և կորուսին մարմնոյն, այսպէս և յայ տանջանքն։ Որպէս և հուր բաղում անգամ մեր ձեռնալոմն այրէ և զձարակ ցաւոյն խափանէ, և երկաթ գործւոյն զփուտն և զթարախարգելն պատառէ և արբէ, և առ ժամ մի վշտանայ ցաւօքն, և ապա յօգուտ և ՚ի շահ լինի, նոյնպէս և տանջանքն և խրատ և սով և ախտք և որ ինչ նման նոցին երևին եթէ չար իցեն, փոխանակ երկաթոյն և հրոյն որ հպի յոգիսն՝ զձարակ ցաւոյն առ դելոյ և լաւագոյն արասցէ։

Զարձեալ Թուեսցին քեզ երկու պռոնիկք և նշանակիցեն քանիս պատկերակերպ ինչ, մին մեծատուն և միւսան ևս աղքատ, ոմ որ ՚ի նոցանէ առաւել ևս յոյս փրկութեան գտանիցէ. յայտ է եթէ աղքատն։ Որ ՚ի այսու հետև ասիցես՝ Թէ պռոնկի և մեծանայ, և վասն այնը րիկ երանի տայցես նմա. այլ աւելի պարտ է քեզ գովել զայն Թէ պռոնկերն և աղքատանայր. իբր պռոնկերն և սովեր. ստանայր իբր վարդապետ բռնաւոր զհամբերութիւն աղքատութեան։ Յորժամ տեսանիցես զոք չար և անզգամ ՚ի բերկրանս առատութեան, լաց և ողբա զայնպիսին. քանզի երկու չարք են՝ ցաւք, և առանց բժշկութեան։ Որ զչարն ՚ի տառապանս և ՚ի տրտմութեան, բերկրեաց և միխթարեաց, ոչ միայն վասն այնը զի լաւագոյն լինիցէ, այլ զի զբաղում մեղաց իւրոց ըզբեռն ասէն թեթևացուցանէ։

Անհնդիր լերութ մտադիրութեամբ քանիս զոր ասեմն. զի են ոմանք ՚ի մարդկանէ որ աստ և անդր տանջելոց են. և են ոմանք որ աստ միայն և այլք անդ միայն։ Անհնդիր լերութ վարդապետութեանս և ՚ի միտ առցես զբանս, զի բազում տկարութիւնս ախտից մերոց ՚ի մտաց քոց։ Այլ թէ կամիցիք՝ նախնի ածցուք ՚ի մէջ զայն՝ որ անդ միայն տանջիցի և աստ վայելեալ փափկանայցէ։ Անհնդիր լինիցին մեծատունք և աղքատք զոր ասեմն, քանզի երկոցունց յօգուտ է բանս վարդապետութեան։ Այս զի աստ և անդ բաղում են որ տանջին, լուր Աբրիատոսի որ ասէ՝ եթէ "Յոր քա-

զաք կամ ՚ի տուն մնանիցէք, հարցջիք Թէ ո՞վ իցէ ՚ի նմա արժանի, և անդ մնասջիք մինչև ելանիցէք անտի. և իբրև մտանիցէք ՚ի տունն, ողջոյն տայջիք նմա և ա-ստասջիք՝ խաղաղութիւն տանս այսմիկ։ Եթէ իցէ տունն արժանի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր ՚ի վերայ նո-ցա. ապա Թէ չիցէ արժանի ողջունին, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։ Եւ որ ոչ ընդունիցին զձեզ և ոչ լսիցեն բանից ձերոց, յորժամ ելանիցէք արտաքոյ քաղաքին, Թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց։ Ամէն ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին սոդովմայեցւոց և գոմորացւոց յաւուրն դատաստանին քան քաղաքին այնմիկ»։ Յայն-մանէ իսկ յայտ է ՚ի սոդոմացւոցն և ՚ի գոմորացւոցն զի աստ դատեցան և անդ միւսանգամ դատելոց են. զի յորժամ ասէ՝ Թէ դիւրագոյն լիցի երկրին սոդոմայե-ցւոց քան նոցա, յայտ ցուցանէ Եթէ տանջին, այլ ոչ այնպէս որպէս նոքա։

Պարձեալ են ոմանք որ աստ միայն տանջին, որպէս որ պոռնկեցան. գրէր և առաքէր կորնԹացւոցն երա-նելին Պաւղոս և ասէր այսպէս, Թէ «Ընաւ ամենևին ընդՀէր լսի ՚ի միջի ձերում պոռնկութիւն, որ ոչ և ՚ի հեթանոսս այնպիսի չանուանի, իբրև զի Թէ զկին հօր իւրոյ ունիցի։ Եւ դուք հպարտացեալ էք և ոչ լայցէք և սգացարուք, զի բարձցի ՚ի միջոյ ձերմէ այն՝ որ զգործն զայն գործեաց։ Այլ ես Թէպէտ և մարմնով մեկուսի եմ ՚ի ձէնջ, սակայն հոգւով մերձ եմ առ ձեզ, զայդ այդպէս գատեցայ որպէս ՚ի ձերում միջի, այն որ զայն գործեաց՝ յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ժողովել ձեզ ՚ի միասին և իմոյ հոգւոյս ընդ ձեզ՝ զօրու-Թեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մատնել զայնպիսին ՚ի ձեռս սատանայի, զի ոգին ապրեսցի յա-ւուր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Նմանապիսի սա աստ տանջի և անդ չտանջի։

Կամիմ ցուցանել և զայն որ աստ յղփացեալ փափ-կանայր, և անդ ՚ի տանջանս էր։ «Էր ոմն, ասէ, մե-ծատուն»։ Վէպէտ և երազմտութեամբ յառաջանայ-ցէք առ ՚ի գիտել զպատմութիւնս, միասջիք և մեկնու-Թեան սորին. զի այս իսկ են ինձ ՚ի պարծանս և ձեզ ՚ի զովութիւն, զի մինչ չև Հառեալ է զառաւին՝ դուք ըն-Թացեալ մնօք՝ բանին Հանդիսիք. վարդապետս պատ-

ըստահաց զձեզ հանապազորդս բանին վարդապետու-
Թեան. այլ և որ ընդ ձեզ այսր միշտ մնանիցին օտարք
և տգէտք, մի՛ անց և անց առնիցէք զնոքօք, այլ մե-
ռո՛վ անսաք, զի և տխմարքն ևս իմացեալ իրատեսցին:
Վրանգն և եկեղեցւոյ անդամք և մարմին են, գլուխ և
ակն և գարշապար ունի: Օ՛ի որպէս և՝ի գարշապարին
յանկարծ փուշ ինչ հարկանիցի, ականջն ձգեալ վե-
րուստ՝ի վայր խոնարհեսցի առ անդամն մարմնոյ իւրոյ,
և ոչ ածիցէ զմտաւ՝ որովհետև՝ի բարձրագոյն վայրի
եմ՝ արհամարհեմ զանդամին իմ. այլ խոնարհեալ ձգտի
և Թողու զիւր բարձրութեան տեղին: Այս զինչ իցէ
յանդամոյն այլ ինչ կրտսերագոյն քան զգարշապարն,
և կամ քան զակնն գլխաւորական և պատուական. այլ
հաղորդութիւն անդամոյն զպատուականն առ անարգն
խոնարհեցոյց, և սէրն զամենայն ընդ միմեանս միաբա-
նեցոյց: Այսպէս և դու արասջիր. Թէպէտ և երագա-
միտ և պատրաստական իցես առ՝ի լսել, Թէ չունիցիս
զեղբայրն քո լծակից քեզ առ իմանալ, խոնարհեսցի
ակնն առ գարշապարն, վշտակից լինիցի տկարացեալ ան-
դամոյն իւրոյ, զի մի՛ քոյով երագութեամբն և նորա
մեղմութեամբն կարօտ լինիցի բանիս վարդապետու-
Թեան. այլ դու հոգ կալ՝ այ, մի՛ քոյով իմաստութիւն
նմա կորուստ նիւթիցես: Ա՝եծատուն իցես, ուրախ եմ
և ցնծամ ընդ այն. այլ միւսն ևս աղքատ է, մի՛ վասն
քո մեծութեանն կացցէ մնասցէ նա յաղքատութեանն.
տգէտ շփոթեալ միտս ունի, այլ խոնարհեաց առ նա և
հան՝ի նմանէ զփուշն անմտութեան:

Այս ապա զինչ ևս. էր ոմն, ասէ, մեծատուն, և հա-
նապազ ծիրանիս ագանէր, և սեղանն իւր լի էր ամե-
նայն բարեօք, Թակոյկք լի գինւով, յուրախութեան
հանապազօր: Այս այլ միւս ևս աղքատ ոմն, Ղ՝ազարոս
անուն էր նորա: Այս ո՛ւր իցէ անուն մեծատանն. և ոչ
ուրեք չերևի, առանց անուան էր: Ա՝րչափ էր մեծու-
Թիւնն, և անուն չգոյր իւր. որպիսի՛ իցէ մեծութիւնն
այն. ծառ լի տերևօք և՝ի պտղոյ նուազեալ. կաղնի բարձ-
րաձաղկ աճեցեալ որոյ ոչ գուցէ պտուղ. մարդ էր և
գործն չէր մարդոյ: Օ՛ի ուր մեծութիւն և յափշտա-
կութիւն իցէ, գայլ է. էր մեծատունն և գազան, զայն
պիսին առիւծ է տեսանել և ոչ մարդ, կորուսեալ զաղ-

գականուԹիւնն իւր անազատուԹեամբ չարուԹեանն իւրոյ։

Այլ ոմն, ասէ, մեծատուն մի, և հանապազ ծիրանի ագանէր, և՝ ի նելբոյ ոգիքն լի էին սարդիոստային. հոտ խնկոց հարկանէր, և՝ ի նելբոյ լի էր աղտեղուԹիւ և ժանտահոտուԹիւք. սեղանն իւր լի էր պէսպէս խորտկօք, Թակոյկք լի գինեօք առ՝ ի պարարել զծառայական մարմինն, և զոգիսն որ տէր և ազատն էր՝ սովական հացեալ անտես առնէր. ՝ի փլանել էր նորա տունն, գերեզման էր բռածեփ, և հոգիքն անդնդային աղջամղջով։ Այդ ունէր մեծատունն այն սեղան ամենաբիւր ամենաշատ, Թակոյկս լիաբուղխս զեղալից գինեաւ, սեղանաբուծս, աղերսաբարս շոգմոգս սատանայինս, զարաչար ամբոխս բազմուԹեան և զկատակուԹեան, զգայլս որք բազումս գերեն զտունս մեծատանց, վաձառականք պորտոյ իւրեանց. զնոցա զամբարհաւաձուԹիւն՝ իւրեանց խեղկատակուԹեամբն և այպն առնելովն և շոգմոգ խօսիւքն դիզեալ կուտակեցուցանեն, և զհարստուԹիւն մեծուԹեան ծախեն և ապականեն։ Եւ որ մեղանչեցէ վասն այնպիսեացն՝ Թէ գայլս անուանիցէ. զի իբրև զոչխար՝ ի մէջ առեալ զմեծատունն՝ հպարտացուցանեն և վիսեցուցանեն զնա գովուԹեամբն իւրեանց, և ոչ տան նմա գիտել զվէրս իւր, այլ կուրացուցանեն զմիտսն և աչեցուցանեն զհարուածսն։ Այս ապա իբրև հասանիցէ դարափոխ ժամանակին, փախստական լինին սիրելիքն, և վշտակիցք գտանիմք մեք որ խրատեմքս. նոցա դիմակքն փախչին, որով բազում անգամ եղեալ իսկ է։

Այլ մեծատունն այն որ ունէր սեղանաբոյծս և աղոքիչս, տեսիլ և կատականոց արարեալ զտուն իւր, զամենայն որ գինեաւ մեղկէր և մեռուցանէր, նա յաւուրս բարեկեցուԹեան էր։ Այս միսն ևս ՝ի ազարոս լի բոցոտուԹեամբ առ դրանն մեծատան նստեալ՝ ցանկայր փշրանացն որ՝ ի սեղանոյն անկանէր։ Այօտ էր առ աղբերն և ծարաւի էր. նա՝ի բազում բարեկեցուԹեան էր, և սա՝ ի սովոյ հաշէր և մաշէր։ Այս ոչ ընկեցեալ կայր. ոչ՝ ի հրապարակս և ոչ՝ ի գոԹս և ոչ՝ ի ձանապարհի և ոչ՝ ի մէջ վաձառափողաց, այլ առ դրան մեծատանն, ընդ որ հարկ էր հանապազ մտանել և ելանել մեծա-

սանն և տեսանել զնա ընկեցիկ. զի մի երբէք ասել կարիցէ՝ անցի և չտեսին աչք իմ։ Յանցս Հանապարհի իւրոյ անկեալ զնէր մարգարիտն ՚ի տղմին, և ոչ տեսանէր. բժիշկն առ դուրսն, և ոչ ողջանայր. նաւավարն ՚ի նաւահանգստին, և նա ծփալից ընկղմէր. զկատակս բուծանէր, և զաղքատս չկերակրէր։ Այլ եղև այս յայն ժամ, լինի և յայս ժամ ևս։ Ալ ասն այնորիկ իսկ այն գրեցաւ, զի որ վերջինքս իցեն ՚ի գրոց անտի խրատեսցին, և մի զայն կիր կրեսցեն զոր նայն կրեաց։ Այլ անկեալ կայր առ դրանն աղքատն. աղքատ էր արտաքոյ, այլ մեծատուն էր ՚ի ներքոյ. անկեալ զնէր ՚ի ցաւս բոլոտութեան մարմնոյ. գանձն՝ արտաքոյ կուսէ փուշ ունէր, և ՚ի ներքոյ մարգարտով լի։ Այլ զինչ ՚ինաս էր նորա ՚ի հիւանդութենէ մարմնոյն, իբր ողջ էր հոգւովն։

Ոչ իցէն զայս աղքատք և մի հաշուեսցին ինչ զաղքատութիւնն իւրեանց. լուիցեն և մեծատունք և փոփոխեսցեն զբարս չարութեանն իւրեանց։ Ալ ասն այսոքիկ նկարեալ են մեզ այս երկու պատկերաձեւքս[1] և կան առաջի, մեծութեանն և աղքատութեանն, անօղորմութեան և ժուժկալութեան, համբերութեան և ագահութեան։ Յորժամ տեսանիցես զաղքատն հիւանդ և արհամարհեալ, մի ասիցես եղուկ զնա. և յորժամ տեսանիցես զմեծատունն զարդարեալ և պաճուճեալ, մի տացես նմա երանի, այլ զմիտս առեալ ընթացս յառաջն. թէ զքեզ ՚ի հոգ արկեալ կշտամբեսցեն խորհուրդք մտաց քոց, ընթացս վաղվաղեա հաս ՚ի նաւահանգիստն. առ ՚ի պատմութենէն մխիթարութիւն. զմտաւ ած զԱ ազարոսն զարհամարհեալն և զանգոսնեալն. իմաց զմեծատունն զբարեկեցայն և վայելեալ ՚ի փափկութեանն, մի ինչ զքեզ աշխատ արասցեն՝ որ յաշխարհի ինչ վարք վարին։ Ահա հաստատուն և ուղիղ միտս ունիցիս, ոչ կարեն զքեզ ընկղմել ալիքն. և զիջանել յանդունդս նաւն, թէ ընտրեալ որոշեսցես մտօք զիրացն բնութիւն։ Այլ մի ասիցես եթէ նեղլի մարմինս իմ. միտք քո մի նեղեսցին և ճնասիցեն։ Այսացես՝ այս ոմն մեծատուն է, անզգամ և չար. և զի՞ փոյթ իցէ քեզ։ Ալ՚ի արտաքուստ զմարդն, այլ ՚ի ներքուստ փոր-

1 Օրինակ մի Նկարաձերպ։

ձեա։ Ահ տեսանիցես զծառ, զտերևն զինիցես, թէ զպտուղն Ճաշակիցես. ապաքէն զպտուղն։ Այնպէս և դու զմարդդ. Թէ տեսանիցես զմարդ, մի արտաքոյ, այլ ի ներքոյ կողմանէ. զպտուղն Ճաշակեսջիր, և մի զտեբևն չօշափիցես՝ մի երբէք վայրենի ձիթենի իցէ, և կարծիցես ընտանի իցէ. մի երբէք գայլ իցէ, և կարծիցես Թէ մարդ է։ Մի՝ ի զկերպարանս ընուԹեանն զինուիցես, այլ զկամս բարուցն. մի զդէմս, այլ զբարս. մի ըզբարսն միայն, այլ քննեա և զգործն. Թէ աղքատասէր իցէ՝ մարդ է, ապա եԹէ ի պոռնկուԹեան բանդագուշեալ Թաւալիցի՝ լոկ ծառ անպտուղ. ապա եԹէ չարաբարոյ իցէ, առիւծ է գազանամիտ. Թէ յափշտակող իցէ, գայլ է. Թէ խորամանկ իցէ, իժ է։ Այսպա, Թէ ես զմարդ խնդրեմ, և ըմ ցուցեր ինձ զմարդ գազան։ Այսիր Թէ զինչ են առաքինուԹիւնք մարդկան, և մի շփոԹիր և սահիր։

Ընդ անկեալ կայր ի աղարոս առ դրանն լի բորոտուԹեամբ սովամահ, և շունք գային լիզուին զվէրս նորա։ Ե ունքն քան զմարդն մարդասիրագոյն գտանէին, զվէրս նորա լիզուին և զԹարախն ի բաց սրբէին։ Այս նա անկեալ կայր իբրև զոսկի ի մէջ հնոցի, զուտ և սրբագոյն ևս լեալ. և ոչ ասէր որպէս բազումք յաղքատացայ, այս տեսչուԹիւն այ իցէ, անփոյԹ առնէ զմարդկանէ. ես յարդարուԹեան և աղքատ, և սա ի պղծուԹեան և մեծատուն։ Այչ զայսպիսի ինչ զմտաւ ածէր, այլ յայ անչափ մարդասիրուԹիւնն Թողոյր և ընկենոյր զհոգւն և նմա յանձն առնէր զինքն, երկայնամտէր և համբերուԹեամբ հանդիսէր, անկեալ դնէր մարմնով, և յարուցեալ ընԹանայր մտօքն, և Թռնոյր և վերանայր կամօք, զնպատակն յափշտակէր, չարեաց և բարեաց վկայն։ Այս ոչ տանէր և ածէր զմտաւ՝ Թէ սեղանաբոյծքն յառաստուԹեան վայելէին, և ես և փշրանացն չկնիմ արժանի։ Ընդ զինչ առնէր. գոհանայր և փառաւորէր զԱծ։

Այղև դէպ, ասէ, մեռանել երկոցունց. մեռաւ մեծատունն և Թաղեցաւ. մեռանէր և ի աղարոս, և ոչ ասացից վասն նորա եԹէ մեռաւ։ Վասզի մեծատանն մահն՝ մահ և գերեզման էր. իսկ աղքատին մահն՝ հեռաւոր ուղիք են և լաւագոյն փոխոխումն իմն և ի տե-

ղէպ նահատակութեան առ պարգևան ընծայք, յանհուն անդնդալից ծովէն ՚ի նահանգիստն, ՚ի նահատակութենէ ՚ի յաղթութիւն, ՚ի քրտանց ՚ի պսակ։

Ոգան երկոքեան անդ ուր Աշմարիտքն էն. քակեցաւ տեսիլն, և երևեցան դիմակք։ Օ՜ի որպէս ՚ի տեսլեան ՚ի հասարակ աւուր վարագոյրք և առագաստք ձգին, և մնա՜ նէն ՚ի ներքս բաղումք և կեղծաւորին դիմակօք և ՚ի դէմս իւրեանց երևեցուցանէն զնախնական առաստլէն և պատմէն զկրս հանդիսին. և ոմն լինի փիլիսոփայ, իբրու չիցէ փիլիսոփայ. և միւս ևս թագաւոր, իբրև չիցէ թագաւոր, այլ կերպարանս ունի վասն առ՚ի պատմել զգործ արուեստին. և միւսն ևս բժիշկ, որ և ՚ի փայտն անգամ չմարթիցէ ձեռն արկանել, այլ հանդերձ բժշկի արկեալ զիւրև թէ արդարեւ իցէ. մինն ևս ծառայ իցէ, և ա՜ զատ երևի. ընկեր նորին վարդապետ, և քնաւ ամենևին զգալութիւն ոչ գիտէ. զի որ ինչ միանգամ կերպա՜ րանէն, ոչ մի ինչ յայնցանէ Աշմարիտ երևի, երևեալ բժիշկ՝ իբրու չիցէ, դարձեալ միւսանգամ փիլիսոփոս՝ և ունի հերս վարսալից գիսակաս, և ցուցանի զի՜ նուոր՝ և հանդերձ զինուորի արկեալ զիւրեաւ։ Օ՜ի եթէ խաբէ և պատրէ կերպարանակաւ դիմակաւն, այլ ոչ ստէ բնութեանն, քանզի փոխէ զՀմարտութիւնն։ Յա՜ մինչ շուրջ նստեալ պատեալք զնովաւ ՚ի զբօսանս խաղոն՝ կան ՚ի միջի դիմակքն, ապա եթէ երեկն հա՜ սանիցէ, լուծցի և փարատեսցի տեսիլն և ամենեքեան հեռացեալ մեկնեսցին, անկանի նմանականն և խափա՜ նի դիմակն. և որ ՚ի ներքոյ փիլիսոփոսն էր, արտաքոյ գտանի պղնձագործ։ Յա՜ռաւ ՚ի բաց դիմակն, մեկնեցաւ խաբէութիւնն և յայտնեցաւ Աշմարտութիւնն. և գտա՜ նի որ ՚ի ներքս ազատն էր, արտաքոյ ծառայ. որպէս յա՜ ռաջագոյն ասացի՝ եթէ ՚ի ներքոյ խաբէութիւն էր, և առ ՚ի մերձենալ երեկին փարատեցաւ տեսիլն, և իրքն կեղծաւորական յուցանէին մեծութիւն և աղքատութի՜, իշխան և ընդ իշխանութեամբ և այլ ինչ որ նման սմին։ Իսկ ապա յորժամ երևեսցի օրն այն և եկեսցէ գիշերն այն ահագին, մնաւանդ առաւել տիւն, քանզի գիշերն մեղաւորաց է, իսկ տիւն արդարոց, յորժամ անցցեն կերպարանքն կեղծաւորութեան, յայնժամ քննեսցի իւրաքանչիւր ոք և գործքն իւր, և ոչ ոք իցէ և իշխա՜

նութիւնն իւր, և ոչ ոք և պատիւն իւր, և ոչ ոք և զօրութիւնն իւր, այլ ինքն միայն և գործքն իւր, և իշխանն և թագաւորն և այրն և կինն, յայնժամ զվարուց համարս խնդրեսցէ՛ի մէնջ ՚ած և զգործոց բարեաց, ոչ զառաւել պատիւ և ոչ զաղքատութեան տընանկութիւն, ոչ զարհամարհուածն բռնութեան։

Ինձ զգործն ցոյց, ասէ. Թէպէտ և ծառայ իցես, քան զազատն լաւագոյն գտանիցես. և կամ կին՝ քան զայրն առաքինի։ Յորժամ հեռացեալ մերժիցի դիմակն կեղծաւորութեան, յայնժամ յայտնեսցի մեծատունն և աղքատն։ Իւ որպէս աստ յորժամ քակեալ մեկնեսցի տեսիլ բազմութեան ռամկին, և ոք՛ի մէնջ որ անդ նստեր՝ տեսանիցէ որ՛ի ներքս փիլիսոփան էր՝ արտաքոյ պղնձագործ և դարբին, զարմանայ և ասէ՝ Թէ ոչ սա էր որ՛ի ներքս փիլիսոփան էր, և արտաքոյ տեսանեմ դարբին. ոչ սա՛ի ներքս թագաւոր էր, և արտաքոյ տեսանեմ իբրև զանարգ ոք. ոչ սա՛ի ներքս մեծատուն էր, և արտաքոյ աղքատ գտաւ։ Այնպէս և անդ լինելոց է։

Ա՛ան այնօրիկ ոչ յերկարեմ զբանս, զի մի վարատեցից զմիտս լսողին բազմութեամբ պատմութեանցս. այլ յերկուս դէմս զտեսիլ կեղծաւորութեան ցուցանել կամիմ, երկուս դէմս եդեալ առաջի. և երկոքունքն առաջնորդեմ ձեզ առ Ա՛ստուածարշն և առ՛ի տալ պատճառս գիտակ լինելոց. ընդարձակեցից զձեր միտս առ՛ի պատմել զմեծատուրականս, զի իւրաքանչիւր ոք ամենայն գիտասցէ զլաւութիւն իրացն։

Ա՛րդ երկու դէմք կերպարանաց էին այս, մինն ունէր զմեծատանն, և միւսն և զաղքատին. Ա՛ ազարուն էին դէմք աղքատին, և մեծատանն դէմք մեծատանց։ Ա՛դէմք էին որ երևէին և ոչ Ա՛ստուածութիւն իրացն։ Ա՛ոգան երկոքին անդր մեծատունն և աղքատն։ Ա՛ռեալ ընդունէին զԱ՛ ազարոս Հրեշտակք. յետ շանցն Հրեշտակք, յետ առ դրան մեծատանն գոյն Ա՛բրահամու, յետ սուղոյն լուութիւն անվախձան, յետ նեղութեանցն անդորրութիւնք անչափք։ Իւ նման զՀետ մեծութեն աղքատութիւն, զՀետ լուութեան սեղանոյն նեղութիւն և տանջանք, զՀետ ընդարձակութեանն վիշտ և ցաւք անժուժկալութեան։ Իւ տես զինչ եղևն. չոգան անդր

երկաքեան, և լուծեալ քակտեցաւ տեսիլն և յայտնեցան դիմակք և երևեցան այնուհետև երեսք ձշմարտութեան։

Իսկ տեսեր ղերկոսեանն, զմեծատունն ի տապ տապակի, և զԼազարոս ի գոգն Աբրահամու. բարեկեցացն յղփացեալ փափկութեամբն ասէր ցնախահայրն Աբրահամ։ «Ողորմեա ինձ, առաքեա զԼազարոսն, զի թացցէ զմատն իւր և անցցէ զշրթամիսք իմովք, զի պապակեալ այրիմ ի տապ տապակիս»։ Իսկ զինչ ետ նմա Աբրահամ պատասխանի. «Որդեակ, ասէ, դու ընկալար զբարիս ի կեանս քո, և Լազարոս զչարիս իւր. և արդ սա աստ մխիթարի, և դու այդր պապակիս։ Այլ ապա և վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. թէպէտ և աստի ոք կամիցի առ ձեզ գալ՝ ոչ կարէ, և ոչ այսի ոք՝ թէ այսր կամիցի անցանել»։ Զայեցարուք և ունկնդիր լերուք, յօգուտ է ձեզ բանս այս. զի թէպէտ և ահ յոյժ արկանէ, այլ առաւել ևս սրբէ և մեկնէ ի ցաւոց. պատրաստեաց և լուր որ ասիս։

Այսր ի տանջանսն մեծատունն, և Հայեցեալ տեսաներ զԼազարոս. զարմանք էին իրքն։ Զդրանն քուէմ կայր ընկեցեալ Հանապազօր, երկիցս և երիցս մնանէիր և ելանէիր և զնա ոչ տեսանէիր. և արդ յորժամ ի տապ տապակիդ ես, ի հեռաստանէ տեսանես։ Յորժամ ի մեծութիւնն յղփացեալն էիր, յորժամ ի կամն էր տեսանելն՝ ոչ յօժարէիր տեսանել զնա, և արդ ընդէր այդչափ սրակն իցես։ Զի առ դրանն քուէմ կայր, որպէս զնա մեռ առ քեզ չտեսանէիր, և այսօր ի հեռաստանէ տեսանես, և միւս ևս այլ զի վիհ մեծ ընդ մէջ է։ Իսկ զինչ ասէր ցնա. Թէ «Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ»։ Օ՛ի կոչես զնա Հայր, որոյ ոչ նմանեցեր մարդասիրութեանն։ Կա Հայր կոչէր, և սա որդեակ յորջորջէր. յորջորջանքն ազգականութեան էին, և օգնականութիւն ոչ ուրեք։

Այլ վասն այնորիկ իսկ ասէ զանունն, զի ուսցիս եթէ ազգ և տոհմ ինչ ոչ օգնէ և ոչ ազատութիւն լաւութեան, ոչ նահապետացն քաջութիւնք, այլ բարուցն առաքինութիւնք։ Ի՛ի ասէր ինձ՝ Թէ Հայր ունիմ Հիւպատոս. զԱւետս առաքեալն Թէ ունիցիս Հայր և եղբարս զմարտիրոսս, և եթէ դու չնմանիցես ինչ նո-

ցա վարուցն՝ ոչ ինչ լինի քեզ յօգուտ տահմայինն ա-
նուանել, այլ առաւել վնասակ և պարտաւորէ։ Այլ
իմ, ասէ, ողորմած է։ Այս քեզ վնաս օգուտ իցէ անո-
ղորմածիդ. զի նորա մարդասիրութիւնն յաւելուած
դատախազութեանց քոց չար բարուցդ լինիցին։ Օ ինչ
ասէր Յովհաննէս մկրտիչն ցժողովուրդն Հրէից. "Ա-
բարէք պտուղ արժանի ապաշխարութեան. մի ասիցէք
եթէ ունիմք Հայր զԱբրահամ,, ։ Ընտիր ունիս զնա-
հապետն. թէ նախանձեցար ընդ նմա՝ օգտեցար. ապա
թէ ոչ՝ դատախազ քո լինին առաքինութիւնքն նորա,
զի 'ի քաղցր արմատոյ պտուղ դառն բերես։ Այ եր-
բեք երանի տար առն՝ որ ունիցի ազգական արդար և
սուրբ, թէ ոչ իցէ նմանող նմա. և մի երբեք թշնամա-
նիցես զմարդ՝ որոյ լեալ իցէ ազգն իւր անպիտան։ Ա-
թէ ունիցիս մայր սուրբ, չէ ինչ քեզ յօգուտ. նոյնպէս
և մայր անպիտան և յոռի չէ ինչ վնաս. զի որպէս նո-
ցա առաքինութիւնքն չլինին ինչ քեզ յօգուտ՝ եթէ
ոչ նմանող նմին լինիցիս, նոյնպէս և չարութիւնք ան-
պիտանութեան չվնասիցեն ինչ զքեզ՝ թէ փոխիցես ըզ-
գործսն չարութեան. այլ որպէս անդ մեծ է պատիժ
պատուհասին, զի չինքեանց ունին զառակ օրինակին և
ոչ եղեն համեմատք քաջութեանց առաքինութեանն,
նոյնպէս և աստ առաւելագոյն են գովութիւնքն, քան-
զի մայրն ունէր պոռնիկ և ոչ նմանեաց պոռնկութեան
նորա, այլ 'ի գառն արմատոյ երևեցաւ պտուղ քաղցր։
Վասնզի ոչ նահապետացն ինչ անուն քաջութեան օգ-
նէ, այլ բարք լաւութեան խնդրին։ Այս զծառայն ազատ
կոչեմ, և տէր՝ որ 'ի նեղութեան վտանգին իցէ՝ թէ տե-
սից զուղիղ և զբարի զգործս նորա. ինձ և որ 'ի պա-
տուի փառացն են՝ անազատ երևին, թէ ծառայասիրք
իցեն։ Ո՞վ է ծառայ, թէ ոչ որ մեղս գործէ։ Օ՛ի այլ
ծառայութիւնք 'ի գոյական իրաց են, իսկ այս ծառայու-
թիւն ընտրական կամաց. քանզի և ծառայութիւն իսկ
'ի սկզբանէ ասացի եմուտ։

Ա՛ր զի է ծառայ 'ի նախնմէն. քանզի ոճծ յորժամ
ստեղծ զմարդն, ոչ արար ծառայ և ազատ։ Այլ զ-
դամ միոյն և զնա և զերկոսեան ազատս ստեղծ. և
ստացի իւրեւ ծառայութիւն։ Ընդ զբաժն օրինացն, խոտո-
րեցաւ 'ի կարգէ բնութեան ազգ մարդկան, և գնաց ըզ-

հետ յանկուվեան և յաձախեաց ի վիշտ թիւնս։ Այս ած զքրիստեղն՝ զհամաշխարհական քնութեանս մերոյ ընկղմումն, սահանք բացան և անդունդք բղխեցին, և ամենայն ինչ էր ջուր համատարած. և որ ինչ միանդամ էր ի վերայ երկրի, եղծանէր և ապականէր, երկիրս լինէր աներևոյթ. անդունդք անհուն ի ցաւմանէ բարկութեանն այ. և ամենայն ուրեք էին ալիք և սահանք, և լերինք և բարձունք և բարձրաւանդակք, այլ խորք ծածկէին զնոսա, երևէին անդունդք, և երկիր առևնայն սատակէր և կորուսանէր զազգն առհասարակ, և ինայր և ապրեր միայն իրրև զկայծակն մի ՚ւյց յաղդս մերմէ, կայծակն ի մէջ անվնդոց և ոչ շինաներ, պատուղ ինայր յազդս մերմէ ինքն, կինն և որդիք իր, և առնոյր ընդ իւր աղաւնիս և ագռաւս, գազանս, սողունս, թռչունս և որ այլ ինչ և յամենայն ազգաց մարդոյ ՚ի նեղքս, և բարձրացեալ վերանայր տապանն ՚ի մէջ ալեացն կատակելոց և ոչ ընկղմէր, քանզի ունէր նաւավար և Ճարտարապետ զարարիչ և զկազմիչ իւր. զի ոչ եթէ տախտակամած տապանն պահէր զնոսա, այլ աչն այ հզօր և աստիկ և աներևոյթ։

Այս տես զքանչելիսն այ. յորժամ հեղեղատեացս երկիր և յորժամ սատակեցան չարագործքն և յորժամ հանդարտեցան վիշաքն, յայտնեցան գլուխք լերանց, էջ զետեղեցաւ տապանն, առաքէր զաղաւնին։ Որ հուրդ էր գործն առ ՚ի յապայ լինելոց օրինակ. եկեղեցւոյ օրինակ էր տապանն, և Այս Քրիստոս, և աղաւնին սուրբ Հոգւոյն, տերև ձիթենւոյն մարդասիրութեանն այ։ Ընտանի ընդակեաց հաւն առաքէր, ելանէր գնայր ՚ի տապանն, այլ նա օրինակ էր, քայց սա Ճշմարտութիւն։ Որպէս տապանն ՚ի մէջ խորոց անդնդոցն ապրեցուցանէր զորս ունէրն, նոյնպէս և եկեղեցի փրկէ զմոլորեալս ամենայն. քանզի տապանն զոր ընկալանն՝ միայն ապրեցոյց, իսկ եկեղեցի առելի ինն գործէ և յաձախ յօրինէ։ Տես զոր ասեմն. առ տապանն անասունս և պահեաց նոյնպէս անասունս. առնու եկեղեցի մարդս անասունս, և ոչ միայն պահէ և ապրեցուցանէ, այլ և փոխէ և ՚ի գործս բարիս։ Ընկալաւ տապանն ագռաւ, և արձակեաց նոյնպէս ագռաւ. առնու եկեղեցի ագռաւ, և արձակէ աղաւնի. առնու եկեղեցի գայլ, և արձա-

կէ[1] ոչխար։ Օ՛ի յորժամ գայցէ մանուկն այսր մարդ յափշտակող կամ ագահ, և լսիցէ ՚ած֊ական և վարդա֊պետական բարբառոյն, փոխէ զբարսն և փոխանակ գայ֊լոյն ոչխար լինի. քանզի գայլն զայլոց յափշտակէ, իսկ ոչխարն և զիւր եւս ասրն ընծայեցուցանէ։

Լ՛Ջ ցածեաւ տապանն և բացան պատուհանքն. ելա֊նէր ՚ի այց արտաքս ագռեաւ ՚ի հեղձական ալեացն, տե֊սանէր զերկիրը քանդեալ և աւերեալ, տեսանէր զգե֊րեզմանն պատրաստական, զսիկն, զտիղմն, զչիւրիմն և զդիրս[2] մարդկան անդամակոյտ անկեալոյն խառն և շփոթ առենայնն, մարդոյ, ձիոյ և անասնոյ ՚ի աղեալ և ընկըղ֊մեալ զամենեսեան։ Ցեսանէր զողբսն, տեսանէր զեր֊կիրը լի գառնութեամբ, հաշէր և մաշէր ՚ի տրտմութե֊նէն, առենայն որ եղծեալ կորուսեալ, ոչ մարդ, ոչ ձի և ոչ այլ ինչ յանասնոց, բայց զերկինս և զերկիր տե֊սանէր միայն, ՚ի տրտմութեան ըմբռներ և պաշարեալ նեղէր ՚ի վշտացն. ըմպէր գինի և անկանէր ՚ի քուն քնոյ, ըմպէր զի մոռասցի զցաւս տրտմութեան։ Այլ ՚ի յորոյս ՚ի վերայ ընկողնոյն, իբրև բժշկի զինքն ՚ի ձեռս քնոյ մանուկ, զի մոռասցի զթախիծ տեսլեան. որում պարտ իսկ էր լինել, որում դուք իսկ հմուտ էք առն ծերոյ և արբեալ ՚ի գինւոյ և ծանրացեալ ՚ի քնոյ։ Պարտ է մեզ վասն արգարոյն Յատագովել՝ թէ ոչ էր այն անառակութիւն արբեցութեան և ոչ ախտ ցան֊կութեան, այլ երկոքումբք բժշկէր զցաւսն։ Օ՛այս և Սողոմոն գրէ և ասէ, եթէ "Գինի սգաւորաց և ար֊բեցութիւն որ ՚ի տրտմութեան իցէ՚՚։ Ա՛ան այնո֊րիկ և բազումք ՚ի մարդկանէ, մանաւանդ ՚ի բազում ծանօթից և ՚ի ղրացեաց, եթէ ուրուք որդի և կամ կին մեռանիցի, և քանզի բուռն են ախտքն և յաղթող են տրտմութիւնքն, և զօրութեամբ ըմբռնեն զյիշա֊տակս մտացն, առեալ որ զնա ՚ի տուն տանիցի, սփոփի֊ցէ և միխիթարեսցէ և արբուցանէ անառական գինի, և սահիցէ և կամիցի առնել ուրախութիւն, որալ կարի֊ցէ միխիթարել զցաւսն, գինոյն օրինակ և ծերունին այն յայն ժամն ՚ի սուգ տրտմութեան վանդեալ էր, և զի֊նեաւն իբրև դեղով զհիւանդութիւնն ցածուցանէր,

1 Երկաթագիրն ոչխար։ 2 Երկու օր։ պէս։

և 'ի պինդն 'ի քուն ըմբռնէր, և յերկոցունց յան-
ղգայէր փոքր ի։

Օ այս ասացի ղի իմասջիք եթէ ուսոի եմուտ ծա-
ռայութիւն յաչխարհ. որ տեսանէրն արհամարհանօք
զանարգանս հոր իւրոյ, որ յորջորջէրն որդի ըստ բնու-
թեանն և ոչ ըստ բարուցն, զարձեալ միւսանգամ ա-
սեմ՝ ոչ ինչ օգնէ ազատութիւն նախնեացն, այլ վարք
առաքինութեանց, մանաւանդ տեսանէր զանարգանս հոր
իւրոյ. որում վայելէրն ծածկել, որում վայելէրն զըս-
պել վասն ծերութեանն, վասն սգոյն, վասն տրտմու-
թեանն, վասն հայրութեանն, այլ նա ելեալ հրապա-
րակագոյժ բողոքէր, այպն առնէր կատակեր։ Նոկ միւս
ևս որդի նորին բնութեանն՝ որդի էր և բարուցն. առ-
նոյր ձորձս և յետս ընդդէմ գնայր [1] և ծածկէր զամ-
բողջ հոր իւրոյ։ Աթափեալ և զգաստացեալ՝ 'ւյ 'ի գինւոյն
և 'ի քնոյն՝ գիտէր և իմանայր զինչ գործեաց որդին
իւր, սկսեալ և սկիզբն արարեալ ասէր՝ թէ "Նիծեալ
լիցի Քանան մանուկ, և 'ի ծառայութեան կայցէ եղ-
բարց իւրոյ,,։ Նա զոր ասէրն վասն այնր ասէր՝ թէ ծա-
ռայեսցես եղբարց քոց, զի մերկացար զանարգանս հոր
քոյ։ Տեսանե՞ս զի 'ի մեզաց եմուտ ծառայութիւն, և
'ի սառամբակութենէ ծառայութիւն գտաւ։

Կամիս ցուցից քեզ և ազատութեան հանգամանս։
Ծառայ ոմն էր որոյ յորջորջէր Նեեսիմա անուն, սրա-
կան, փախչող [2]. նա եկեալ ապաստանէր առ Պաւղոս,
լինէր արժանի մկրտութեան, լուանայր և ջնջէր 'ի մե-
ղաց, կայր անկեալ առ ոտս նորա. գրէր ապա և Պաւ-
ղոս առ տէրն նորա՝ թէ "Նեեսիմա որ երբեմն քեզ
անպիտանն էր, այժմ քեզ և ինձ պիտանի է. ընկալ
զդա իբրև զիս,,. զինչ եղեալ. "զոր ծնայ 'ի կապանս
իմ,,։ Տեսէր զազատութիւնն, տեսէր զբարս ազնուա-
կանութեանն. քանզի ծառայ և ազատ լոկ անուն մի-
այն է։ Որչափ տեսլեք անկեալք 'ի հրապարակի կան
յորսայս արբեալք, և ծառայք նոցունց յոտն կան առ
նոսին զգաստութեամբ. զո՞ կոչեցից ծառայ, որ զգաստ
և սթափուն է, թէ որ արբեալ և սխալական է. զմարդո՞ն
ծառայ, թէ որ գերեալն է յախտիցն. զի նա ծառայ ար-

1 Երկու օր. յաւելան ոմն 'ի յետ։ 2 Օրինակ մի նոր ֆաղնոփ։

տաքուստ կոչի, և սա գերի ներքուստ։ Օ այս ասեմ և յասելոյ ոչ դադարեցից, զի ունիցիք միտս որովք կարիցէք ընտրել զկրս քնութեանս և մի պատրիցիք ՚ի բազում խաբէութեանց. այլ գիտել զինչ ծառայ, զինչ աղքատ, զինչ անազատ, զինչ երանելի, զինչ ախտ։ Օ ի ԹԷ զայս գիտիցէք որոշել, ոչ երբէք անկանիցիք ՚ի ծփանս։

Ա յլ զի մի ամենայն գործ աւելի քան զգործն լինիցի և հեռացուցեալ վերիպեցուսցէ զանան, վերստին դարձեալ սկիզբն արասցուք իրացն։ Այս և արդ ինքն մեծատունն այսուհետև աղքատ. առաւել ևս յորժամ մեծատունն էր՝ աղքատագոյն էր։ Օ ինչ օգուտ իցէ մարդոյ եթէ զտարի ուրուք ինչս ունիցի և գիւր ոչ. զինչ օգուտ իցէ որոյ ինչս ստացեալ իցէ, և զանձն իւր ոչ իցէ ստացեալ։ Օ ի ըմբռնիցես զայլոյն, և զքոյն կորուսանիցես։ Ունիմ, ասէ, գիւզս բազումս. և զինչ օգուտ իցէ քեզ զի անձն ուղիղ չունիս. կան ծառայք բազումք, այլ վարս բարիս չունիս. ունիս հանդերձ և պատմուճանս, այլ գերկիւղն զգուշութեան չես ստացեալ. զայլոյն ունիս և զքոյն չունիս։ Ասկ յորժամ զքումեք տացէ աւանդ առ ՚ի պահել, միթէ վասն այնր կարիցէ կոչել մեծատուն. ոչ կարէ։ Ընդէր. քանզի այլոյ է և ոչ իւր, և մանաւանդ զի աւանդ է. և երանի ԹԷ աւանդ միայն էր, և մի յաւելուածք տանջանաց լինէին։

Ա րդ տեսանէր մեծատունն զԼ ազարոս և ասէր. "Հայր Ա բրահամ, ողորմեաց ինձ,,։ Աղքատին են բանքն, տանջանկին և աղկաղկին։ "Հայր Ա բրահամ, ողորմեաց ինձ,,։ Օ ինչ խնդրես. ասէ. "Առաքեա զԼ ազարոս,,։ Օ որ բազում անգամ առ ոտն հարեր և անցեր, զոր ոչն կամէիր տեսանել։ "Առաքեա զԼ ազարոս,,։ Այս ուր իցեն մատուռակքն, ուր են բազմանկանքն, ուր են պատառաբոյծքն, ուր են փաղաքուշքն[1], ուր են շաղաւաշըԹունքն[2], ուր է ամբարհաւաճուԹիւնն, ուր է ամբարտաւանուԹիւնն, ուր է ԹԷ ոսկւոյն, ուր են պատմուճանքն ցեցակերք, ուր է արծաԹեն ժանգա-

1 Երկք օր. փաղաքուշն կամ փաղաքուշն։

2 Օրինակ մի շաղաշըրնանդն. այլ օրինակ շաղաշըրնանդն։

լից, ուր են նոր զարմանքն[1]. տերև էր, ձմեռն եհաս և զամենայնն միանդամայն ցամաքեցոյց. երազ էր գիշերոյ, և առ ի մերձենալ տունջեանն վերացեալ Թռաներ. ատեւեր էր, եկն եհաս Հնմարտութիւնն և բարձաւ ատեւերն։

"Լ՚ուաքեա, ասէ, զի՞ աղարտս,,։ Այլ ընդէր արդեօք զայլ ոք արդար ոչ տեսանէր, ոչ զնոյ, ոչ զՅակովբ, ոչ զի՞ ոչխ, ոչ զի՞սահակ, այլ զԼ՚բրահամ միայն. ընդէր. քանզի հիւրասէր էր Լ՚բրահամ և զՀնամատարհոդս ի տուն իւր ձգէր և տաներ. զի անողորմութենն նորա այնուհետև նորա հիւրասիրութիւն առաւել լինէր ամբաստան։ "Լ՚ուաքեա, ասէ, զի՞ աղարտս,,։ Լ՚ուեալ զայս երկիցուք և մեք. յորժամ տեսանիցեմք աստ զաղքատս, մի զանց և անփոյթ առնիցեմք, մի ընդ՞ի աղարտս բազումք լինիցին մեր դատախազք։ "Լ՚ուաքեա զի՞ աղարտս, զի մատամբ իւրով զոլացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ՝ ի տապ տապակիս,,։ Հրով չափով չափեաց, չափեսցի ձեզ. ոչ ետուր փշրանս, ոչ առնուս շինի մի։ Լ՚ուաքեա, ասէ, զի՞ աղարտս, զի մատամբ իւրով զոլացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ՝ ի տապ տապակիս։ Լ՚սէ ցնա Լ՚բրահամ. "Հրդեհակ, դու ընկալար զբարիս քո՝ ի կեանս քո և՞ աղարտս զարիս իւր, և սա աստ մխիթարի և դու այդր վշտանաս,,։

Վարձեալ և անդ ոչ ասաց եթէ առեր, այլ թէ ընկալար. յոյժ ընտրութիւն ունի յաւելուած կապին։ Ո՚ր բազում անգամ ասացի սիրոյ ձերում, և վասն սիւղաբայիցն թէ պարտիմք և զայն քննել. "Քննեցէք, ասէ, զգիրս,,. և յոտնշան մի անցցէ, ի բազում իմաստութիւն զարթուցանէ։ Ո՚չ ուսցիս եթէ յաւելուած գրոյ միոյ լինի անուան՝ ի կատարումն, նա լինքն Լ՚բրահամ հայր մեր Լ՚բրամ յառաջն կոչէր, և ապա ասէր ցնա Ած. "Լէ կոչեսցի քո այսուհետև անուն Լ՚բրամ, այլ Լ՚բրահամ կոչեսցի անուն քո,,. զայսն միայն յաւել, և հայր ազգաց բազմաց արար։ Լ՚րդ աճաւանիկ յաւելուած միոյ գրոյ քանի շահս եցոյց։ Ի՚ վայրապար այսուհետև անփոյթ արասցուք. ոչ ասաց թէ առեր զբարիս քո, այլ ընկալար. զի որ ընդունին, զայր-

1 Նոր օրինակն Տպղանէ։

տիան իւր ընդունի: Ի՛նչ գիր զոր ասեմն. զի այլ ինն է զոր առնուն, և այլ ընդունելն. քանզի ընդունի զայն ոք զոր յառաջ է ստացեալ, և առնու բազում անգամ զոր ոչն էր իւր ստացեալ: Ի՛նկալար, ասէ, զբարիսն քո և ՚ի ազարոս զբարիս իւր: Ի՛հաւանիկ մեծատունն զբարիսն ընդունելը և ՚ի ազարոս զբարիս իւր: Ի՛.յս ամենայն մեզ վասն այնց ասացաւ որք աստէն յայսմ աշխարհի տանջիցին և ոչ յայնմ, վասն որք աստ յղփացեալ փափկանան և ոչ անդ:

Ի՛ուարուք և գուք այսուհետև զոր ասեմն. «Ի՛նկալար, ասէ, զբարիսն քո, և ՚ի ազարոս զբարիս իւր»: Ոչ ասաց Թէ առեր, այլ ընկալար զանկան[1] զպարտն, զհասն քո, և ՚ի ազարոս զբարիս իւր: Ի՛նչ գիր խընդրոյս, զշինուածս ՚ի կատարումն շինեմ: Ի՛.յլ մի՛ ինչ շփոթիր ՚ի սկզբան առակիս. այլ յորժամ զայսպիսի ինչ ասիցեմ, կայզիք միասջիք մեկնութեանս. կամիմ զձեզ եթէ սրամիտք[2] իցէք, և[3] մի՛ ընդ վայր վեր ՚ի վեր յոգ անց և անց առնիցէք, այլ զի ՚ի խոր իջանիցէք ածեզէն գրոց, խոր ուր ոչ գոյ սասանումն խռովութեան, խոր որ քան զխաղաղութիւն զգուշագոյն. զի որչափ իջանիցէս ՚ի խորն, յայժ և առաւել զգուշութե՛ գտցես: Օ՛ի ոչ է սահանալից[4] ձկանաբեկ ստահակութեան ջուրց, այլ մեղմական խմաստութեան գութ:

Ի՛նկալար, ասէ, զբարիս քո ՚ի կեանս քում, և ՚ի ազարոս զբարիս. և արդ սա աստ միխիթարի, և դու այդր տանջիս: Խնդիր մեծ է այս. ասացի՛ Թէ որ ընդունի, զպարտն հատուցման իւրոյ ընդունի. իսկ արդ եթէ ՚ի ազարոս արդար էր, զպակս և էրն իսկ, եցոյց և ժամանակն և գոգն Ի՛.բրահամու, պատկն և նշան յաղթութեանն, հանգիստն և վայելուչն և ժուժկալութիւնն. իսկ մեծատունն մեղաւոր և ամենաչար, ստամբակ և խիստ, փափկասէր, արբեցող, բազմախորտիկ կերպ կերպ[5] լիաբուղխ սեղանատպատ, յայնպիսի գիջութեան և ՚ի պատնկութեան մնեալ: Ի՛նչ գիր. պարտապան էին

1 Երկաթագիրն զանի. այլ օր. զանկն:
2 Երկաթագիրն սրբափփ:
3 Օրինակ մի Ա ի վեր ՚ի վայր անց և անց:
4 Օրինակ մի սասանալից յինաբեկ. Խմաստասիրեան գործ:
5 Օրինակ մի կեպս կերպս. նոր օրինակն կերպակերպ:

նմա իրքն. զինչ պարտէին. զվրէժխնդրութիւնն, զզ-
տանջանսն, զցաւսն, ընդէր ոչ ասէր Թէ զայն առէր,
այլ ասէր՝ ընկալար զբարիս քո անդ. զկեանսն զայն ա-
սէր, և զ ազարտս զչարիս իւր։

Այլ ամենի կալ զմիտս քո, զի ՚ի խոր կամիմ իջա-
նել բանիս։ Զհանդամանսն ամենայն մարդիկ որ են՝ ո-
մանք ՚ի նոցանէ մեղաւորք են և ոմանք արդարք. և ՚ի
նոսա ընտրութիւն գտանի, ոմն արդար և միւսն ևս յա-
ւելագոյն արդար, միւսն ևս համբարձեալ բարձրագոյն,
և միւսն ևս առաւելագոյն քան զամենայն, որպէս աս-
տեղք զի են քաղումք, և արեգակն և լուսին, նոյնպէս
և յինսրութեանն արդարոյն. զի «Այլ փառք են, ա-
սէ, արեգականն և այլ փառք լուսնի և այլ փառք աս-
տեղաց»։ զի ոմն-առաւել ՚ի փառաց և միւսն ևս նուազ.
և որպէս մարմինք երկնաւորք և մարմինք երկրաւորք,
այլ մարմինք են երկնաւորաց և այլ երկրաւորաց. և որ-
պէս ՚ի տեսիլս մարմնոյ և ազգաց երևին, միւնն եղջերու
և միւսն ևս շուն, միւնն ևս առիւծ, ոմն գազան, ոմն իժ
և միւսն ևս այլ ինն այնպիսի, նոյնպէս և յանցաւորու-
թեանն մարդկան ընտրութիւն գտանի, ոմանք արդարք
են և ոմանք մեղաւորք. այլ և յարդարսն որոշմունք են,
և ՚ի մեղաւորսն յոյժ և անչափ. միտ դիր։

Օ՛ի թէպէտ և կարի աք արդար գտանիցի՝ հասեալ
յամենայն գլխաւորական վարսն, որպէս թէ հրաժա-
րեալ իցէ յամենայն մեղաց, ոչ կարէ սուրբ և յոտակ
արդար լինել. թէպէտ և բիւր անգամ արդար իցէ, սա-
կայն ապաքէն մարդ իցէ։ «Ով պարծեսցի, ասէ, Թէ
սիրտ սուրբ է նորա, և կամ ով համարձակիցի Թէ ա-
նարատ իցէ ՚ի մեղաց»։ Ոմն այնորիկ հրամայիմք իսկ
ասել ՚ի ժամ աղօթիցն «Թող մեզ զպարտսն մեր»։
զի սովորական աղօթիւքն յիշեսցուք Թէ և մեք ընդ
պատժովք մեղաց եմք։ Այս Պաւղոս անօթ ընտիր և
տաձարն ՚ով և բերանն Քրիստոսի, քնար Հոգւոյն, վար-
դապետն աշխարհ՚ից, որ ընդ ծով և ընդ ցամաք յա-
ծեալ շրջէր, որոյ զփուշ մեղացն խլեալ և զերծին ՚ածա-
պաշտութեանն սերմանեալ, որ քան զթագաւորս հարըս-
տագոյն էր և քան զմեծատունս հզօրագոյն, որ և քան
զղինաւորս բռնագոյն, որ քան զիմաստունս իմաստնա-
գոյն, որ և քան զձարտարսն ձարտարագոյն, որոյ ոչ ինչ

գոյր և զամենայն ինչ ունէր, որոյ ստուերն իւր զմահ լուծանէր և ձորձ[1] հանդերձին իւրոյ զհիւանդութիւնն փախստական առնէր, որ 'ի ծովուն նահատակէր և 'ի ղրախտն յափշտակէր, որ զԱբիսաս քարոզէր, նա ասէր՝ Թէ "Ոչ ինչ զանձին բիծ գիտեմ, այլ ոչ այսու արդարանամ, քանզի որ դատին զիս տէր է։ Որ պարծեսցի եթէ սիրտ սուրբ է նորա, և կամ ոմն համարձակեսցի Թէ անարատ իցէ 'ի մեղաց,,։

Արդ անհնարին է մարդոյ ամենայնիւ Թէ անմեղ իցէ։ Որ ի եթէ ասիցեն՝ արդար և ողորմած է, աղքատասէր է, այլ ունի զինչ և է յանձին իւրում պակասութիւն, եթէ վայրապար Թշնամանող իցէ, Թէ փառասէր իցէ և կամ Թէ այլ ինչ նման նմին, զի ոչ է պարտ զամենայն Թուել մի ըստ միոջէ։ Որ ոմն ողորմած է, այլ չէ զգաստ. Թերևս և զգաստ իցէ, այլ ողորմած չէ. զի մին յայնմ առաքինանայ, և միւնն ևս 'ի միւսումն անուանի լինի։ Վասնեզի և իցէ որ արդար և կայցէ 'ի նմա ամենայն ինչ բարի, և ամբարհաւաճութիւն վասն արդարութեանն, և խոտէ զիւր արդարութիւնն ամբարտաւանութեամբն։ Վարիսեցին ոչ արդար էր, ոչ պահէր երկիցս 'ի շաբաթուն. և զինչ ասէրն արդեօք. "Ոչ եմ, ասէ, իբրև զայլ որ յափշտակող ագահ,,. Թերևս և 'ի սուրբ մտացն յամբարտաւանութեանն հպարտացաւ, և որպէս ոչ ճշտեցին նմա մեղքն՝ ճշտեաց նմա ամբարտաւանութիւնն։ Ոչ արդ այսու հետև ամենայնիւ մարդ սուրբ։ Որ այս համարձակիմ և ասեմ, ոչ այնչափ չար ամենևին ոք իցէ՝ իբրու Թէ չգտանիցի 'ի նմա գէթ փոքր մի բարի ինչ։ Որպէս ոմն յափշտակող է և ագահ է և զրկող է, այլ Թէ երբեք և տուրս ողորմութեան տուեալ իցէ, կամ զգաստ իցէ և կամ քաղցր բանիւք, կամ միոյ մարդոյ օգնական եղեալ իցէ, կամ արտասուեալ և կամ զղջացեալ իցէ. զի ոչ արդարն առանց մեղաց՝ ագահ է, և ոչ մեղաւորն յամենայնի բարեաց լոկ և սոսկ գտանիցի։ Որ է չար քան զԱբաաբ. յափշտակեաց զրկեաց և եսպան. այլ սակայն յորժամ լուաւ յայն և զղջացաւ, ասէր ած ցնորս ինա. "Տեառ՛ր որպէս զղջացաւ Աքաաբ առաջի երե-

1 Օրինակ մի ձոռնա։

սաց իմոց ,, : Ցեսանէք յորպիսի յանդունդս չարութե-
գտանէր փոքր մի բարւոյ : Ո՛չինչ էր այլ չար քան զմատ-
նութիւնն Յուդայի մատնչի, որ գերեալ ըմբռնեալ
էր յարծաթասիրութեանն . այլ սակայն փոքր մի և նա
ղղջանայր յետ այնորիկ . “Մեղայ, ասէ, զի մատնեցի
զարիւն արդար ,, : Արդէս և ասէի յառաջ՝ թէ չէ ինչ
չար բնութեամբ, թէ ոչ գոյ տեղւոյ և բարւոյ : Ո՛չ ոչ-
խար ոչ կարէ երբեք լինել վայրենի, քանզի բնու-
ընտանի է . և գայլ ոչ լինել ընտանի, քանզի բնու-
վայրենի է : Այլ քակտին և խախտին օրէնք բնու-
այլ անշարժ կան և միշտ : Ա՛յլ ոչ այնպէս մեք, զի ոչ
ընդ բնութեամբ վատարանդեալ եմք, այլ ազատու-
կամաց պատուեալ եմք : Արդէս և ասէի իսկ թէ ոչ
բարիոք է և արդար բնաւ ամենևին՝ թէ ոչ փոքր մի
բիծ ինչ ունիցի . և ոչ չար այնչափ, որպէս թէ ոչ կայ-
ցէ փոքր բարի՝ ենտա : Ա՛յլ քանզի ամենեցունց փոխա-
լէն և հատուցումն լինի, թէ սպանանիցէ ոք կամ պատ-
նկեսցի կամ ագահիցէ, առնիցէ և փոքր մի բարի ինչ,
կայ և միայն նմա հատուցումն բարւոյն, ոչ վասն չարեացն
զոր արար առանց հատուցման լինի բարին . և դարձեալ
միւսանգամ թէ բիւր ինչ գործիցէ ոք բարի, առնիցէ
և փոքր մի չար ինչ, կայ և միայն նմա չարին հատուցումն:
Ո՛այս կալ, զայս պահեա պինդ և անշարժ, զի ոչ բա-
լինի է առանց մեղայ, և ոչ չարն առանց արդարութե:
Ո՛այս երկրորդեմ դարձեալ, զի հաստատեցից և
անկեցից և յոյժ ի խոր ալիկից զտունկն : Քանզի են ինչ
հոգք զոր արկանէ բանաարկուն բազում անգամ յան-
ձինս ձեր, և կամի գերել զձեր զմիաս և ապականել և
չընդունել զայս որ ի միջնէս ասի . վասն այսորիկ խոր-
մաւխ առնեմ զձայն : Ո՛չ թէ ասա իցես՝ զգուշութիւն
պահիցես, և եթէ արտաքս ելանիցես՝ չկարիցես կո-
լուսանել : Երբև քսակ մի ոսկւոյ լի կապիցեմ և կընդ-
քեմ, զի թէպէտ ես չիցեմ հուպ, գողն ոչ իշխիցէ
մերձենալ . նոյնպէս և ես, սիրելիք, առնեմ յաճախ և
անձանձրոյթ վարդապետութեամբս . կապեմ և կնքեմ
և ներկանեմ զձեր զմիաս, զի կարացից քակել զձեզ ի
ծուլութենէ, այլ գոչեցեալք բարբառեցաք ասա զլռու-
թիւն քան արտաքոյ զամբոխն : Ո՛չ թէպէտ և այս ո-
մանց շահաւոսութիւն ինչ կարծիցի, այլ հոգաբարձու-

թեան և սիրոյ է և գութ վարդապետութեան, զի մի անգոնեացի ոք ասացեալ։

Օ՜նոյնն ասել և երկրորդել ես ոչ ինչ դանդաղիմ, և ձեզ յօգուտ է։ Ասացանել կամիմ և ոչ վայրապար հանդիսեցուցանել. ոչ գոյ այսուհետև արդար առանց մեղաց, և ոչ մեղաւոր ոք յորում ոչ գոյ ի նմա բարի ինչ. այլ քանզի իւրաքանչիւր հատուցումն է, տես զինչ լինի։ Եղաւորն ընդունի զհատուցումն բարեաց իւրոց զհանդէպ և զկշիռ հատուցմանն, թէ ունիցի և փոքր ի ինչ բարի. և արդարն զաղտարութէ իւրոյ առնու և նա կշիռ զհատուցումն, թէպէտ և սակաւ ինչ գործեալ իցէ չար։ Այլ ապա զինչ լինիցի, զինչ առնիցէ ած։ Այր կուս կարգս որոշեաց և եդ զցաւս և զմեղս, զվարս աքաղքինութեան և զառ ի յապայ կեանսն յաւիտենականն. զի եթէ իցէ ոք արդար և գործիցէ ինչ չար և հիւանդանայցէ ինչ աստէն յախտս հիւանդութեան և մահիցի ի ձեռս մեղաց, մի շփոթիցիս, այլ իմաց քեզն և ասա՝ թէ սա արդար այր էր, այլ ուրեմն փոքր ի չար ինչ գործեալ իցէ և ընդունի աստէն զհատուցումն, զի մի անդ տանջիցի։ Կարձեալ թէ տեսանիցես զմեղաւորն յաւիտակող, ագահ, բիւր ինչ յիրս չարագործ, և ի փառս և յուրախութեան կեցցէ, մի զայրացեալ կսկծեսցիս՝ թէ սա մեղաւոր է բիւր չարիս գործեալ, զինչ սորա արարեալ իցէ ինչ ի բարի և ընկալեալ ունի զհատուցումն բարեաց. այլ զի մի անդ պահանջիցէ զվարձն իւր։ Ո՞ան այնորիկ որ արդարն իցէ, թէպէտ և չար ինչ անցք անցանիցէն ընդ նա, զի աստէն իսկ թեթևացուսցէ զմեղս իւր, և անդ երթեալ հասանիցէ արդար և սուրբ։ Այս կամ եթէ մեղաւոր ոք իցէ և գլուխ չարեաց, և բաղում ախտս առանց բժշկութեան ախտանայցէ յաւիտակելով և ագահելով, վասն այնորիկ վայելէ աստ ի բարեկեցութեան, զի մի անդ վարձս պահանջեսցէ։

Ո՞ան այսորիկ իսկ և Ո՞բրահամ ասէր՝ թէ ի Ա՞զարոս իցեն փոքր մի մեղք, և մեծատանն փոքր մի բան լի, ասէր՝ թէ աստ մի ինչ խնդրեր, քանզի ընկալար զբարիս քո անդ, և Ա՞զարոս զչարիս իւր։ Օ՜ի իմաց ցիս թէ ոչ ընդ վայրայամբայր[1] ինչ ասեմ, այլ այնպէս

1 Ա՛յդպէս երևաթագիրն. յայլս պակասի. յոյնն վայրապար։

որպէս և էն իսկ, լուր: Ընկալար, ասէ, զբարիս՝ի կեանս քումմ: Օ՞ր. արարիք՛ր ինչ բարիս. ընկալար զմեծու-թիւնն քո, զառողջութիւնն, զիշխանութիւն կենացն, զբանութիւնն, զպատիւն. ոչ ինչ ոք պարտի քեզ, ընկալար զբարիս քո: Իսկ ապա և Ղազարոս ոչ ինչ մեղաւ. և նա զչարիս իւր. յորժամ դու ընդունիկիր զբարիսն, յայնժամ և Ղազարոս զչարիս իւր. վասն այսորիկ նա աստ մխիթարի, և դու այդր տանջիս:

Ընդ յորժամ տեսանիցես զարդարն՝ի տանջանս, երանի տուր նմա և ասա. սա արդար է, թէպետ և բիծ ինչ ունիցի մեղաց, փոքր մի աստէն ընկալեալ զհատուցումն, և անդ հրաժարեալ սուրբ երթայ. ապա եթէ աւելի քան զմեղսն տանջիցի, յաւելուածք արդարութեան հատարեալ լինին նմա: Վասնզի հաշիւ և հատոր լինի անդ. և ասէ՝ ած ցարդարն՝ թէ այսչափ հատոր պարտիս ինձ: Ընդ ած հաւատաց նմա տասն դանդ, առնէ նմա ընդ այնր հատոր. թէ աղքատ իցէ, վաթսուն դանդ: Իսկ ասէ ցնա ած՝ եթէ զտասն դանդն հաշուիմ քեզ՝ի մեղս, և զչիսունն յարդարութիւն: Օ՞ր գիտասցես թէ զաւելիան յարդարութիւն հաշուի, Յոբ արդար էր և ամբիծ, Հիմարիտ, ածասպաշտ, զատեալ մեկնեալ յամենայն գործոց չարեաց, տանջեցաւ մարմինն նորա աստ, զի անդ զվարձս հատուցմանն պահանջիցէ: Օ՞ր ինչ ասէր նմա ած. "Ոչ զոր քեզ թուեսցի մարդ՝ի տանջել զքեզ, այլ զի արդար երեւեսցիս,,: Նոյնպէս և մեք համբերեսցուք փորձանաց աստ, զի անդ՝ի տեւունն ընկալցուք զհատուցումն հնօրհնէք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս. ամէն:

Ա.Ր Ա.ՆՆԱՄ.ՆԱՆ * ՅԱ.Ղ.ԱԳԱՍ Ա.ՆՀԱ.ՍԱ.ՆԵԼ.ԻՈՑՆ

Ի ԲՈՅ ԵՂԵԼՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՈՐ ՅԱՆՏԻՈՔ

ՀԱՐ ԱՌԱՋԻՆ

Ո՞վ ընչ այս. Հովիւն ոչ է մերձ, և հօտն հանդերձ յոլով բարեկարգութեամբ կայ: Հովուին է այս ուղղութիւն, որ ոչ մերձս եղելոյ հօտի՝ բազում փոյթ ցուցանէ: Ուստի յանբանան յորժամ որ յարձանի հանէ՝ ոչ լոկ մերձ, այլ՝ ի նեղըս ի փարախին հարկ է ոչխարացն. և եթէ առանց հովուի արտաքս քան զկայանն յառեսցին, յոլով մնղորութեաց հանդիպին: Այլ աստ ոչ լինէ այսպիսի. այլ և յոչն լինել մերձ հովուին՝ սովորական արօտիսին հանդերձ յոլով բարեկարգութեաք հանդիպիք: Յաւէտ թերևս հովիւն մերձ է, թէպէտ և ոչ մարմնով, այլ սիրով. ոչ մերձաւորութեամբ մարմնոյն, այլ բարեկարգութեամբ հօտիդ: Այս վասն այսորիկ առաւել ընդ նա զարմանամ և երանեմ, զի այդքան փոյթ ի ձեզ ամբարել զօրեաց: Այս և ընդ զօրավար յայնժամ աքանչանամք և երանեմք, յորժամ ոչ ի հուպն լինել նորա՝ զօրականքն բարեկարգք են: Պողոսն և Պաւղոս յաշակերտացն հայցէր ասելով. "Այսու հետև սիրելիք իմ, որպէս յամենայն ժամ հնազանդեցարուք, մի միայն ի մերձն իմում լինել, այլ յաւէտ և ի հեռաւորութենն իմում,,: Այսն զի ի հուպն լինել հովուին, թէպէտ և ի վերայ յարձակի գայլն հասնի, դիւրաւ ի բաց հալածի յոչխարացն. իսկ ոչ ի

* Այն է Անոմեան աղանդաւորքն և Եւնոմեանք՝ առ հասարակ յարիւսականաց՝ երևեալք ի չորրորդ դարու. յորոց ոմանք ի վերայ այլոց մնղորութեանց ասէին զորդին ած աննման հօր ըստ ածուԹեան, և այլք թէ մարմի հասանել իմանալ մաքք զէուԹիւնն այ. յայտգա որոյ կոչէցան Ճառքս Անհասիք, որպէս անհասանելի մտաց էուԹիւնն այ. որք և յերկոտասան Ճառից յունականին եօԹն միայն կան առ մեզ:

մերձն լինել՝ մեծ հոգս տանել հարկաւոր է հօտին, ոչ ուրուք եղելոյ որ պարսպի զնոսա. և առ այսոսիկ հուպ լինելոյ՝ բաժանի ընդ նոսա զփութոյն վարձս, և յոչն լինել մաւ՝ մերկ զնոցա ուղղութիւնն թողու երևել։

Օ այս և վարդապետան հեռի՝ ընդ ձեզ խօսի, և ուր իցէ այժմ՝ զձեզ և զձերդ տեսանել ժողովի. որպէս որ անդէն առնման զմերձակայսն՝ այնպէս զձեզ զհեռաւորսդ տեսանել այժմ։ Պիտեմ զնորա զերապեալ և զհրաշեալ սէրն, զջերմն և զանժուժելին, զոր յորվ՝ի խոստութեան միտն արմատացեալ ունի, և հանդերձ բազում փութով բժշկի. վասն զի գիտէ յայտնապէս՝ եթէ գլուխ այս է ամենայն բարեաց, արմատ և աղբիւր և մայր. և այսորիկ ոչ եղելոյ՝ յայլոյն մեզ օգուտ ոչ ինչ է։ Այս աշակերտացն պատկեր, կերպարան ՚ի ծառայիցն, ծանօթութիւն ՚ի առաքելոցն. "Յայսմ, ասէ, ծանիցեն ամենեքեան թէ իմ աշակերտք էք,,։ Յորմէ, ասա. զմեռեալն արդեօք յարուցանել, կամ զբորոտն սրբել, կամ՝ զդևս հալածել. ոչ. այլ զայնու ամենայնիւ զանց առնելով, "յայսմ, ասէ, ծանիցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք եթէ սիրիցէք զմիմեանս,,։ Այսու զի այն վերին շնորհայն և եթէ պարգև, իսկ այս մարդկային փութոյ ուղղութիւն։ Այս առաքինութիւն ոչ այնպէս զի վերուստ շնորհն նկատրագրել սովորեալ, որպէս զիւրոց վաստակոցն զուղղութիւն. յաղագս որոյ ոչ ՚ի նշանացն, այլ ՚ի սիրոյ ճանաչել ասէ զիւր աշակերտսն Քրիստոս։ Օ ի սորա մերձ եղելոյ՝ և ոչ մի ինչ մասն իմաստութեան պակասէ ՚ի ստացողէն, այլ զբովանդակն ունի ամենակատար և առաքինութիւն. որպէս և հեռին լինելով՝ անապատ յամենայն բարեաց է։ Յաղագս այնորիկ և Պաւղոս առքառնայ և բարձրացուցանէ բանիւ. մանաւանդ եթէ որքան և ասէ, ոչ երբեք յարժանաւորութիւն նորա հասանէ։ Օ ինչ արդեօք լինիցի նման հասասար որ զմարգարէս ՚ի միասին ունի և զօրհնան զաստեղսն, և առանց նորա ոչ զհաւատ և ոչ զպիտութիւն և ոչ զբիւր ծանօթութիւս և ոչ զնոյն ինքն զվկայութիւն և ոչ զայլ ինչ ՚ի ստացելոյն պահել կարասցէ։ "Վասն զի եթէ մնանեցից, ասէ, զմարմինս իմ յայրուն, զի պարծեցայց, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ,,։ Այս

պլուր դարձեալ թէ քան զամենայն մեծ է, և զաղաթն բարեաց, յայտնելով ասէր. "Եթէ մարգարէութիւնք իցեն խափանեսցին, եթէ լեզուք՝ լռեսցեն, եթէ գիտութիւն՝ խափանեսցի. բայց մնայ հաւատ, յոյս, սէր,,։

Այլ ոչ դուշաքեայ ինչ խնդիր, որ յաղագս սիրոյ է, ՚ի ներքս եմոյծ մեզ բանս մարգարէութեան խափանման. և ՚ի լռել լեզուացն չար ինչ ոչ է, զի ժամանակեայք են չնորհքն այնոքիկ. զիւրեանց զօրսն ընձեռեն մեզ, և լռութեամբ միասել զբանն և ոչ ինչ ոչ կարեն։ Այլ զի ասացեալ "եթէ մարգարէութիւնք իցեն խափանեսցին, եթէ լեզուք՝ լռեսցեն,,, ՚ի վերոյ գաճ "եթէ գիտութիւն խափանեսցի,,։ Այլ եթէ հանդերձեալ իցէ գիտութիւնն դադարել, ոչ ՚ի վհատոյնն, այլ ՚ի վատթարն մեզ յառաջադրութիւն իրացն լինի. զի առանց նորա և զմարդն իսկ զոլ բոլորովին կորուսաք։ "Այլ, ասէ, երկիր և զպատուիրանս նորա պահեա, զի այս է ամենայն մարդ,,։ Այլ եթէ այս է մարդ, երկնչելն յոյ ՚ի գիտութենէն լինի. և եթէ գիտութիւն հանդերձեալ իցէ խափանումն ընդունել, որպէս ասէն Պաւղոս, յայնժամ ամենևին կորնչիմք՝ գիտութեանն ոչ եղելոյ, և ամենայն իրք մեր քայքային, և քան զանբանն ոչ ինչ լաւագոյնք անկեալ կայցեմք, այլ և յաւէտ և վատթարագոյնք. վասն զի այսու առաւելեալ եմք քան զնոսա, որպէս և յայլն յամենեսեան ՚ի մարմ նակատս՝ յաւէտ ՚ի նոցանէ յաղթահարիմք։

Այս արդ զինչ իցէ զոր ասէն Պաւղոս և վասն ոյր "եթէ գիտութիւն՝ խափանեսցի,,։ Ոչ վասն ամենակատարին, այլ յաղագս մանուածոյին զխափանումն զայն ասէ ՚ի լաւագոյն Ճանապարհն յառաջանալ ասելով. որպէս զի մանուածոյին խափանեցելոյ՝ ոչ ևս իցէ մանուածական, այլ կատարեալ։ Օ՜ որ օրինակ հասակ մանկան խափանի, ոչ ապականեցելոյ հասակին, այլ և յայլ կատարեալ ելանելոյ, նոյնպէս և յաղագս գիտութեանն լինի։ Այսուհետև այս, ասէ, ոչ ևս եղիցի փոքր ՚ի լինել մեծին, այս է "խափանին,,. և զայս որով ՚ի կարգին է՝ յայտնագոյն մեզ յայտնեաց։ Օ՜ի լսելով եթէ խա-

փանի, մի ամենևին քակումն կարծիցես լեալ, այլ ա-
ձումն իմն և առ լաւագոյնն ամբարձումն. զի ասացեալ՝
խափանի, 'ի վերայ էած. "Ի մասնէ գիտեմք և 'ի մաս-
նէ մարգարէանամք. բայց յորժամ եկեսցէ կատարեալն,
յայնժամ 'ի մասնէս խափանեսցի,,. որպէս զի ոչ ևս
իցէ անկատար, այլ կատարեալ. ապա ուրեմն խափա-
նումն այն լուծումն է և մեծագոյն վերադրութիւն:

Վկայեա ինձ զՊաւղոսի վկայնձայն. ոչ ասաց մասն
գիտեմք, այլ "'ի մասնէ գիտեմք,,. զմասինն մասն ու-
նիմք: Ծանուն թէ բաղձայք լսել թէ որքան մասն ունիմք
և որքան պակասեալ է, և զնո՛ր արդեօք զառաւելն եթէ
գնաւաղն ունիցիմք: Այդ զի ուսցիս եթէ գնաւաղն ու-
նիս, և ոչ պարզաբար զսուղն, այլ զկարիւրորդ կամ
զբիւր մասն, լուր որ 'ի կարգին է. յաւէտ ևս զառա-
քելական զձայնն ձեզ ընթերցայց. առակ ինչ ասեմ որ
կարէ ձեզ յանդիման կացուցանել, և յառակէն կարո-
ղութիւն է գիտել որքան պակասեալ է և որքան զոր ու-
նիմք այժմ: Որքան է միջոց հանդերձելոյ գիտութեան
զոր տալոց է մեզ, և մերձաւորիս այժմու: Որքան առն
կատարելոյ առ ստնդիայ է միջոց, նոյնքան և հանդեր-
ձելոյ գիտութեան առ մերձակայսս է գերազանցութիւն:
Այս զի այս չնմարիտ է և այնքան է մեծագոյն, ինքն ա-
սացէ Պաւղոս. քանզի ասելով եթէ 'ի մասնէ գիտեմք,
և կամելով ցուցանել եթէ յորքան մասնէ, և եթէ
դուշնաքեայ է այժմուս, 'ի վերայ էած. "Յորժամ էի
տղայ, իբրև տղայ խորհէի, իբրև տղայ խոսէի, իբրև
տղայ իմանայի. իսկ յորժամ եղէ այր, զտղայութենն
խափանեցի,,: Ո՛տղայոյ ունին մերձակայքս զգիտու-
թիւն, և առն կատարելումն զհանդերձեալն հաւասա-
րեցուցանէ: Այս յորժամ ասաց՝ տղայ էի, զսնդիայն
և որ դեռ կամ ամէն կերակրի և 'ի ստինան դեռ է՝ մեզ
երևեցոյց: Այս զի գնոսա գիրք ասէն տղայս՝ լուր սաղ-
մոսին որ ասէ. "Տէր տէր մեր, զի՛ սքանչելի է անուն
քո յամենայն երկրի: Համբարձաւ մեծավայելչութիւն
քո 'ի վերոյ քան զերկինս. 'ի բերանոյ մանկանց տղայոց
սնդիաց հաստատեցեր զօրհնութիւն,,: Ծեսանե՞ս,
տղայ ամենայն ուրեք զսնդիայն ասէ:

Այս ապա յառաջագոյն տեսանելով հոգւոյն զհան-
դերձելոյն արանց զանսահմանութիւն, ոչ այնու առակաւ

միայն բաւականացաւ, այլ և երկրորդաւ և երրորդաւ զնոյն հաստատուն մեզ արար։ Նոյնպէս Պօղոսիկ առ Հրեայսն առաքեալ զերից նշանացն առնոյր զգոյացս, զի եթէ անհաւանեսցին առաջնումն՝ երկրորդի ձայնի լուիցեն, և եթէ զայն արհամարհեսցեն՝ յերրորդէն պատկառեալք ընկալցին զմարգարէն, նոյնպէս և սա երիս առակս դնէ. մի զմանկանցն ասէր՝ եթէ "Ցորժամ էի տղայ, իբրև զտղայ խմնայի,,. երկրորդ զՀայելէոյն զառակ, քանզի ասացեալ՝ յորժամ էի տղայ, ի վերայ էած. "Տեսանեմ այժմ հայելեաւ,,։ Ահա երկրորդ առակ մերձակայիս տկարութեան և անկատար գիտութեանն եղելոյ։ Երրորդ զարձեալ "առակսն,,. վասն զի մանուկ տեսանէ յոլով ինչ, լսէ և խօսի. բայց հաստատուն և ոչ ինչ, ոչ տեսանէ, ոչ լսէ և ոչ խօսի, և խորհի ոչ ինչ յօդաւոր. նոյնպէս և ես գիտեմ բազում, այլ ոչ գիտեմ զնոցա զօրինակ. զի ամենայն ուրեք է ես՝ գիտեմ, և զի բանն է ամենայն ուրեք, բայց եթէ զնարդ՝ ոչ գիտեմ. զի անսկիզբն է և անեղ՝ գիտեմ, և եթէ արպէս՝ ոչ գիտեմ։ Ոչ ընդունին խորհուրդքս գիտել զնարդ կարծեացի էութիւն գոլ՝ որ ոչ չինքեանէ և ոչ յայլմէ ումեքէ լեալ։ Գիտեմ զի զօրին ծնաւ, և եթէ զնարդ՝ անգիտանամ. գիտեմ զի հոգին ի նմանէ է, բայց եթէ արպէս ի նմա՝ ոչ գիտեմ։

Ասէ իսկն որք ամենայն գիտութեանց հասու լեալ ասիցեն, որք ի վէրս անգիտութեան են անկեալք։ Զի որք ի մերձակայիս ասեն ընկալեալ զամենայն, ի հանդերձելումն զինքեանս ամայիս ամենևին առնեն ի գիտութենէն։ Զանզի ես որ ասեմ եթէ ի մանկէ գիտեմ, թէպէտ և ասացից թէ խափանի գիտութիւնս այս, առ վերջագոյնն և կատարելագոյնն Հանապարհօդեմ, խափանելով մանաւանդ և լինելով կատարելագոյնս. բայց նա որ ասէն ամենակատար և բովանդակ և աւարտեալ ունի զգիտութիւնն, և ապա խոստովանի խափանումն լինել ի հանդերձելումն, անապատ զինքն երևեցուցանէ ի գիտութենէ այսմ խափանեցելոյ և ի միւսոյ ևս կատարելագունին ոչ ի վերայ եղելոյ, եթէ այս իցէ ըստ նոցա կատարեալ։

Տեսանէս զնարդ հակառակելոյնն աստ զամենայն ունել, աստ ոչ ինչ ունին և անդ յամենայնէ զինքեանս

արտաքս ընկենուն։ Ա.յսքան չար է ոչ կալ մնալ ՚ի ներքս ՚ի սահմանն զոր ՚ի սկզբանն մեզ կարգեաց ած։ Ա.յսպէս և Ա.զամ յուսով առաւել պատուոյն, և յորում էրն՝ արտաքս անկաւ։ Այնպէս և արծաթասիրացն լինի. յոլովք բաղում անգամ յոգունց բաղձալով՝ և ըզմերձակայն կորուսին. նմանապէս և նոքա վստահանալ աստ ունել զամենայն, և ՚ի մանկն արտաքս անկան։ Յաղագս որոյ պատուիրեմ փախչել ՚ի նոցա մոլորութենէն. քանզի վերջին մոլորութեան է յամառելն գիտել զինչ է բնութիւնն այ։

Այս զի ուսցիս եթէ վերջին մոլորութեան է այս, ՚ի մարգարէիցն քեզ արարից երևեցուի։ Վանզի մարգարէքն ոչ միայն զինչ է բնութիւնն՝ անգիտացեալք երևին, այլ և յաղագս իմաստութեանն այսորիկ որքան է արարածս՝ տարակուսին. Թէպէտ և ոչ բնութիւնն յիմաստութենէն, այլ իմաստութիւն ՚ի բնութենէն։ Այս յորժամ ոչ այնմ կարեն հասու լինել մարգարէքն հաւաստեաւ, որքանիցս արդեօք մոլորութեան է զնոյն ինքն զբնութիւնն կարծել կարող լինել յիւրեանց ՚ի խորհուրդսն ընդունել։ Ուիցուք զինչ ասէ մարգարէն յաղագս այնորիկ. “Ազանչելի եղև գիտութիւն քո յինէն,,։ Յաւէտ եթէ վերագոյն զբանն ընթերցցուք. “Լուսաւան եղիցի քեզ զի ահաւորապէս զարմանալի եւ. սքանչելի են գործք քո,,. և դարձեալ. “Օ արմանալի եղև գիտութիւն քո յինէն, զօրացաւ և ոչ հանդարտեմ նմա,,։ Օ՞ինչ իցէ ահաւորապէսն։ Վազում ինչ է զոր զարմանամք միայն, այլ ոչ հանդերձ բազում ահիւ. որպիսի ինչ զեաննց գեղեցկութիւն, զօրութիւն գանազրութիւն, զծաղիկ մարմնոց. տեսանելով սքանչանամք դարձեալ և ընդ ծովու մեծութիւն, և ընդ անբաւ խորս յորժամ յանդուգնս յառիցեմք, այլ հանդերձ երկիւղիւ։ Ա.յնպիսի ինն և մարգարէն յանբաւութիւն և յանհասանելի անդունդս այ իմաստութեն յառեալ և ցնորեալ հանդերձ բազում ահիւ ՚ի բաց գնաց գոչելով և ասելով. “Լուսաւան եղիցի քեզ զի ահաւորապէս սքանչելի եւ. զարմանալի են գործք քո,,. և դարձեալ. “Ազանչելի եղև գիտութիւն քո յինէն, հզօրացաւ և ոչ հանդարտեմ նմա,,։ Վոհանամ զքէն, ասէ, յաղագս այսորիկ, զի անհասանելի ունիմ առ։

Ա՛ յաղագս բնութեանն ասէ աստանօր, քանզի զայն՝ խոստովանել իբրև զանհասանելի՝ եթող. այլ վասն ա՛ մենայն ուրեք մերձ գոլոյ զՅԾ զայս ասէր, յուցանելով զի և ոչ զսոյն զայս գիտել՝ զիարդ ամենայն ուրեք հնար է: Նա՛ զի յաղագս այնորիկ ասէր, լուր որ՝ ի կարգին է. "Եթէ ելից յերկինս, դու անդ ես. Թէ իջից՝ի դժոխս՝ մօտ,,: Ցեսանես զի ամենայն ուրեք է մերձ. բայց սակայն մարգարէն ոչ գիտէ, այլ ցնորի և տարակուսի և ամբոխի, ՝ի միտ ևս ածել զնա առեալ:

Ո՛չ խորդ ոչ վերջին մոլորութեան իցէ, որք այնքան հեռի են՝ի նմանել՝ զնոյն ինքն զաստուածութիւնն ա՛յ հարցաքննել: Վասպէտ և նոյն ինքն է մարգարէս որ ասէ "Ո՛ անյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնի եղեր ինձ,,, այլ համայն զանյայտս իմաստութեան նորա ուսեալ՝ յաղագս նորա ասէ Թէ անբաւ է և անհասանելի: Վասնզի "մեծ է տէր, ասէ, և մեծ է զօրութիւն նորա և իմաստութեան նորա ոչ գոյ թիւ,,. այս է ոչ գոյ ըմբռնումն: Ո՛չինչ ասես. իմաստութիւնն անհասանելի է մարգարէին, և բնութիւնն մեզ հասանելի: Ասկ արդ ո՛չ արդեօք երևելապէս այն մոլորութի՛ւ է: Ա՛ստուածութիւն նորա ոչ բովանդակի, և զբնութիւնն պարունակեա՛ս: Ո՛այս և Նայիաս իմաստասիրելով ասէր. "Ո՛ազգականութիւն նորա ո՞ պատմեսցէ,,: Ա՛ն ասաց՝ ո՞ պատմեաց, այլ ո՞ պատմեսցէ. և զհանդերձեալսն փակեաց: Նա՛ Յոբ ասէ. "Ա՛քանչելի եղև գիտութիւն քո յինէն,,: Նայց Նայիաս ոչ յինէն միայն ասէր, այլ և յամենայն մարդկայնի բնութենէ՝ ի բաց փակեցաւ պատմութիւնն այն:

Նայց տեսցուք մի գուցէ Պաւղոս գիտասցէ՝ որ՝ի մեծագոյն շնորհսն վայելեաց: Նա՛ ինքն է որ ասէն. "Ի մանուկ գիտեմք և՝ի մանուկ մարգարէանամք,,: Նա՛ ոչ աստանօր միայն, այլ և այլուր ոչ յաղագս բնութեանն, այլ յաղագս իմաստութեանն և նա խօսելով որ՝ի նա՛ խախտմանութեանն երևեցաւ, ոչ ընդհանրականին վասն ասելով՝ որով հրեշտակաց և հրեշտակապետաց և վերին զօրութեանց նախախնամ, այլ զայն մասն նախախնամութեան հարցաքննելով՝ որով նախահօրդայ յերկիրն տուեալ մարդկան, և զօրին զայսորիկ գալձեալ զմանն ինչ. զի և ոչ զայս զբովանդակն քննել որով ծագէ զարե-

գալն, որով զոգիսն առնէ, ըստ որում զմարմինս սահեզ-
ծանէ, ըստ որում կերակրէ զմարդիկ ՚ի վերայ երկրի՝
որով ունի զաշխարհ, ըստ որում զտարեւորական կեր-
կուրան տայ. այլ զայս ամենայն Թողեալ և սուղ ինչ
զմանն նախախնամութեան նորա հարցաքննեալ, ըստ ո-
րում զՀրեայսն արտաքս մերժեաց և որք ՚ի հեթանո-
սացն էին ընկալաւ, և ՚ի սմին յայսմիկ փոքրիկ մասին
իբրև ՚ի մեծ և յանբաւ խորս ցնորեալ և անդունդս
անհնարինս տեսեալ՝ ՚ի բաց վազեաց վազվազակի և մե-
ծապէս գոչեաց ասելով. “Վ խորք մեծութեան և ի-
մաստութեան և գիտութեան ՝ով, իբրև զի անքննելի
են դատաստանք նորա,,. ոչ ասաց անհասանելի, այլ
անքննելի. և եթէ քննութիւն ոչ ունի, ևս առաւել
անհասանելի, անկարելի է մեզ. “և անհետազօտելի
Հանապարհք նորա,,:

Ուրդ գիտեա, հասանելի իցէ, ասա ինձ: Այս զինչ
ասեմ յաղագս Հանապարհացն. առաջիկայ յաղթանակն
մեզ անհասանելի է, քանզի “Ակն ոչ ետես զայն և
ունկն ոչ լուաւ և ոչ ՚ի սիրտ մարդոյ եղ զոր պատրաս-
տեաց Ած սիրելեաց իւրոց,,: Այս պարգևք նորա անհա-
սանելիք. “Ո՞ նորՀք ՝ով, ասէ, ՚ի վերայ անպատում
պարգևաց նորա,,. և “Յաղաղութիւն նորա գերազան-
ցէ քան զամենայն միտս,,: Օ՞ինչ ասես՝ դատաստանք
անքննելիք, Հանապարհք անհետազօտելիք, խաղաղու-
թիւնն գերազանց քան զամենայն միտս, պարգևն ան-
պատմելի զոր պատրաստեաց սիրողաց իւրոց և ոչ եղ՚ի
սրտի մարդոյ, ամենայնն անհասանելի, և ինքն միայն
հասանելի. և զո՞ր ոչ արդեօք ունիցի այս զմայրութեան
առաւելութիւն: Այլ զհերձուածողն և մի Թողուր ՚ի
բաց գնալ. ասա՝ զինչ ասէ Պաւղոս. “Ի մանէ գի-
տեմք,,. ոչ յաղագս բնութեանն ասէ, այլ վասն տնօ-
րէնութեանն, մանաւանդ՝ Թէ և յաղագս տնօրէնու-
Թեանն էր մեզ բանն, յաւէտ յաՀախապէս Համար-
ձակութեամբ զյաղթութիւնն ընձեռէր. քանզի եթէ
տնօրէնութիւնք նորա անհասանելիք, առաւել ևս ինքն:
Այս զի ասա ոչ յաղագս տնօրէնութեանն ասէ, այլ
վասն նորին իսկ ՝ով, լուր որ ՚ի կարգին է: Վանզի ասա-
ցեալ Թէ “՚ի մանէ գիտեմք և ՚ի մանէ մարգարէա-
նամք,,, ՚ի վերայ էած “այժմ գիտեմք ՚ի մանէ, բայց

յայնժամ գիտացից որպէս ծանուցեալն եղև ,, : Այս յումմէ եղև ծանուցեալ, յայլ եթէ 'ի տնօրէնութենէն : Վաղայատ է թէ յայլ, զի զայն [1] 'ի մասնէ գիտէր. և 'ի մասնէ ասաց՝ ոչ եթէ զմասն ինչ զնորա բնութեանն գիտէր և զայլն անգիտանայր, վասն զի պարզ է ած, այլ զի էր ած՝ գիտէր, և եթէ զինչ է բնութիւնն՝ անգիտանայր. զի իմաստուն է գիտէր, բայց եթէ որքան իցէ իմաստուն՝ անգիտանայր. թէ [2] մեծ իցէ՝ ոչ անգիտանայր, և եթէ որքան իցէ մեծութիւնն՝ զայն ոչ գիտէր. զի ամենայն ուրեք մերձ է՝ գիտէր, բայց եթէ հրապէս՝ ոչ գիտէր. և զի նախախնամ և ունի բովանդակ զամենայն և բովանդակի ամենայն ուրեք՝ հանդերձ հասատեաւ ոչ անգիտանայր, իսկ [3] թէ զնարդ զայն առնէր՝ անգիտանայր. և վասն այնորիկ ասէր. “ Ի մասնէ գիտեմք և 'ի մասնէ մարգարէանամք ,, :

Այլ եթէ ախորժէք, զՊաւղոս Թողցուք և զմարգարէսն. ելցուք յերկինս, թերևս անդ իցեն ոմանք՝ որք գիտիցեն զինչ է բնութիւնն այ. որք մանաւանդ թէպետ և գոցին գիտակք, ոչ ինչ է հաւասարութիւն առ մեզ. վասն զի յոլով է միջոց հրեշտակաց և մարդկան : Այլ սակայն զի խնամով ուսցիս թէ ոչ անդ որ գիտէ ստացական զօրութիւնքն այն, լուիցուք հրեշտակացն : Ո՞ինչ, արդեօք յաղագս բնութեանն այնորիկ անդ խօսեացին և առ ինքեանս խնդրեսցեն. և ոչ երբեք : Այլ զինչ. փառաւորեն, երկիր պագանեն, զյաղթական և զհոգևրդական երգս յաւէրժաբար առաքեն հանդերձ բազում սարսափմամբ : Կէսքն ասեն, “ Փառք 'ի բարձունս այ ,, . իսկ սերովբէք “ Սուրբ սուրբ սուրբ ,, և զաչս 'ի բաց դարձուցանեն, զի և ոչ խոնարհմանն այ հանդուրժել կարեն. և քերովբէքն “ Ըստ հնեալ են փառք նորա 'ի տեղւոջէ իւրմէ ,, : Այլ որպէս թէ տեղի ինչ իցէ շուրջ զնա. մի լիցի. այլ որպէս ասիցեմք մարդկաբար խօսեցեալք՝ ուրանօր և իցէ, և որպէս և իցէ. և եթէ զայս զգուշագոյն է զայ ասել, զի մարգկային լեզու ունիմք : Տեսանե՞ս [4] թէ որքան է 'ի վերագոյնն

1 Ըստ յօրինական զայն ալ 'ի մասնէ գէ- ներէր և ալ 'ի մասնէ ասաց. եղաւ ըստ յօրինին :

2 Պակասաւոր յօրինական ինչ մեծ իցէ՝ ալ անգիտանայր :

3 Իսկ ինչ զնարդ զայն առնէր :

4 Տեսանե՞ս. յաւելան 'ի յունէն :

երկիւղ, և որքան՝ ի ստուգս արհամարհեալ։ Ցորքա փա-
ռաւորեն, և սորքա հարցաքննեն. բարեբանեն նորքա, և
հետաքննեն սորա. նորքա[1] ծածկեն զաչս, և սորքա հա-
կառակեն հայել անամօթաբար յանպատուելի փառան։
Ո՞չ հառաչեսցէ արդեօք, ո՞չ ողբասցէ զնոցա խելա-
գարութիւնն և զվերջնին մոլորութիւնն։

Կամէի երկայնագոյն յառաջ ածել զբանս. բայց նախ
առաջնին յայս կռուարանս ինձ, օգտակարագոյն ձեզ
կարծեմ շատանալ առ այժմ ասացեալովքս. որպէս զի
մի յաձախութիւնք հանդերձելոց ասացուածոց՝ ի վե-
րայ եկեալ՝ սաստիկ հոսմամբ հեղեղեսցեն զայժմու ա-
սացելոցս զյիշատակ։ Ցմէնայն իրօք թէ ՚ած հրամայես-
ցէ, զայս պատճառս այսու հետէ մինչև՝ ի բազում ժա-
մանակս գործեսցուք։ Ցորմէ՝ ի վեր յառաջագոյն իսկ
զայս բան երկնէի, առ ձեզ ասել հանդերձեալ էի և
յապաղէի. վասն որոյ յորմէնս որք զայս ախտանային՝
տեսանէի հանդերձ հեշտութեամբ ինձ լսողս. և ոչ կա-
մէի խարխափանել զբանն, այլ արգելուի առ վայր մի
զլեզուս՝ ի մարտիցն. որպէս զի յետ ըմբռնելոյն զնոսա
հաւաստեալ, ապա մերկացայց՝ ի մարտն։ Ւսկ այժմ
զի ՚ով հնարհաբն՝ ի նոցանէ լուայ, որք աղաչէին և ասէին
յայս հանդէս միջամտել լինել, քաջալերեալ մերկայայ
այսու հետէ, և զղէնսն առի զխորհուրդս քակել և զա-
մենայն բարձրութիւն ամբարտաւանեալ ընդդէմ գի-
տութեանն ՚ով։ Ո՛չ այս գէն առի ոչ զի՝ ի վայր արկից
զընդդիմակացսն, այլ զի կանգնեցից զվայրանկեալսն։
Ցորպէս այս է գինուցս այսոցիկ զօրութիւն, գՀակառա-
կողն վիրաւորել գիտեն, և զբարեմիտ լսողն հանդերձ
բազում խնամով բժշկեն. ոչ տան վէրս, այլ բժշկեն
զխոցուածն։

Ո՛րդ զի մի զայրասցուք առ նոսա և մի սրտմտութիւն
առաջի արկցուք, այլ հանդերձ հեզութեամբ խօսես-
ցուք. վասն զի ոչ ինչ է քան զՀեզութիւնն և զհանդար-
տութիւնն զօրաւորագոյն։ Ցաղագս այսորիկ և Պաւղոս
բազում փութով այսմ իրի հոգ տանել հրամայեաց ա-
սելով. «Ցառային տեառն ոչ է պարտ կռուել, այլ հեզ
լինել առ ամենեսեան,,. և դարձեալ. «Ւհանդարտու-

1 Ն•ոա ծածկեն զաչս. յաւելաւ՝ ի յունէն։

թիւն ձեր ծանիցի ամենայն մարդկան ,,։ Օ ինչ օգուտ է, ասէ, եթէ զսիրելիս ձեր սիրիցէք. եթէ ՚ի մասին նոցա բարեկամութիւնն և առ հաղորդութիւն ամբարշտութեանն ձգիցեն, թէպէտ և ծնողք իցեն՝ ՚ի բաց վազեա, եթէ ակն է՝ փորեա։ Օ ի ,, եթէ ակն գայթակղեցուցանէ զքեզ՝ հան զնա ,,, ոչ յաղագս մարմնոյ ասաց։ Ոչ պակաս արդեօք. զի եթէ վասն մարմնոյ բնութեան ասէր, բամբասանքն յարարիչն երթեալ ելանէին։ Այլ ազգ ևս, ոչ զմին փորել էր պարտ և արժան. զի եթէ ձախն ինասցէ, նմանապէս գայթակղեցուցանէ զունողն։ Այլ զի ուսցիս եթէ ոչ վասն ականն բանն է, յաւել զայն. զի թէպէտ իբրև զաչ ականն ունիցիս զոք սիրելի, և զնա ՚ի բաց հան ՚ի քումէ սիրոյն եթէ զքեզ գայթակղեցուցանէ. զինչ օգուտ է ունել ՚ի ժանտութիւն այլ մարմնոյդ։

Արդ որպէս ասացի, եթէ ՚ի մասին բարեկամութիւնքն, փախիցուք, ՚ի բաց վազեսցուք. ապա եթէ ոչ ինչ զմեզ ՚ի բարութեան բանէն զրկիցեն, ձգեսցուք և յանկուսցուք առ մեզ զնոսա. և եթէ ոչ զնա ինչ օգտեսցես և առ ՚ի նմանէ ընդունեսցիս զնմանն, շահեա հատմամբն ՚ի նմանէ զկալ ինալն առանց խեղութեան։ Այս փախիր ՚ի նոցա բարեկամութենէն. փախիր միայն, մի մարտնչիր և մի պատերազմիր. այսպէս և Պաւղոս պատուիրէ ասելով. “ Եթէ կարողութիւն է ՚ի ձէնջ, ընդ ամենայն մարդկան խաղաղութիւն արարէք ,,։ Ոչ ասաց ես խաղաղութեանն ՚այ։ Այլ զգուշ հանելով և զործելով բարիս, յորժամ դիւրաւոր զնա կուշեցին, ոչ առաքեաց հուրս, ոչ սատակեաց զքշնամանողսն, ոչ այլեաց զչեզոն որ այնպէս անամօթ և չարաբարոյ էր. թէպէտ և զամենայն կարէր առնել, այլ ընդդէմ եհար զչարախօսութիւնն միայն ասելով. “ Այս դև ոչ ունիմ, այլ պատուեմ զառաքիչն իմ ,,։ Այս յորժամ ծառայ քահանայապետին զնա եհար, զինչ ասաց. “ Եթէ չար խօսեցայ՝ վկայեա յաղագս չարին, իսկ եթէ բարի՝ ընդդէմ զիս հարկանես ,,։ Ցկերն հրեշտակաց պատասխանի տայր և իրաւունս ցուցանէր ծառային. ոչ ինչ են պէտք երկայնագոյն բանից։ Այս բան յեղանակեա ՚ի միտս, և յաձախագոյն զդոյն կրթեա և ասա. “ Եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն չարին, իսկ եթէ բարի՝ ընդէր

զիս Հարկանես ,,։ Այլ զմտաւ ածէ զասողն և առ որ ասէրն և վասն էր. և եղիցի քեզ ածայրին իմն երգ յաւիտենական բանն այն, և կարասցես զամենայն զայսուհետեւ զնստուցանել։ Օ մտաւ ածէ զպատիւ Թշնամանեցելոյն, զանարգութիւնս Թշնամանողին, զգերազանցութիւն Թշնամանացն. քանզի ոչ լուտաց միայն, այլ և տանջեաց ևս. և ոչ եհար պարզաբար, այլ և ապտակեաց. և քան զայն Հարուածն ոչ ինչ գոյ անարգագոյն։ Այլ սակայն ամենայնի Համբերեաց, զի մտադիւրաբար ուսցիս դու ողջախոհանալ։

Օայսոսիկ մի միայն խնամատարեսցուք, այլ յորժամ և իցէ սոցա ժամանակ՝ յիշեսցուք։ Ովսկեգէզ ասացեալս, այլ գործով ցուցեալ զգովութիւնն։ Ի ման զի և մարտիկն իսկ՝ի կռուարանին հրահանգի, զի՝ի Հանդիսին ցուցցէ զկրթութեանն զօգտակարութիւն։ Այլ դու այսուհետև զաստի լսելութեանն՝ յորժամ՝ի վերայ եկեսցէ ժամանակ բարկութեանն, ցոյց զշահն, և զայս բան յաձախապէս ասա. ,,Աթէ չար ինչ խոսեցայ՝ վկայեա վասն չարին, ապա եթէ բարիոք՝ ընդէր զիս Հարկանես ,,։ Օայս գրեա՝ի միտդ. քանզի սորին աղագաւ և ես յոգնակի յիշեցուցանեմ ձեզ զբանս զայս, որպէս զի դիցին յոգւոջ ձերում ասացեալքս ամենայն, զի անջինջ մնասցէ յիշատակն և յիշատակէն օգուտն։ Ի ման զի եթէ ունիցիմք զբեալ զբանս զայս յընդարձակութեան մտաց մերոց, ոչ այնպէս քարեղէնն և չարաբարոյ և անզգայ իցեմք, մինչ զի անկանել երբեք՝ի բարկութիւն. զի փոխանակ սանձաց և ամենայն երասանակաց ղեղոյ մերոյ արտաքս քան զչաւին և զիրացոյն ելանել՝ կարասցեն արգելուլ բանքս այս, և ըզմիտսն զայսուհետեալս զինջուցանել և առնել յաւէրժաբար նուաստանալ և բոլորովին՝ի մեզ բնակեցուցանել զիաղաղութիւն, յորում լինի ամենեցուն մեզ վայելել ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում փառք հօր Հանդերձ սրբովն հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՑԱՌԱՋ ՔԱՆ ԶԲԱԶՈՒՄ ԱՒՈՒՐՍ ԱՌ ԱՆՆՄԱՆՍՆ ԱՄԱՅՑԵԱԼ, ԱՊԱ ՎՌ ՀՐԵԱՅՑ, ԵՒ ԱՊԱ ԴԱՐՁԵԱԼ ՑԱՂԱԴՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՒ ՎԱՆԱՑԻՑ ԵՂԵԼՈՑ ԲԱԶՄԱՑ, ԱՑԱԾ ԴԱՐՁԵԱԼ ԱՌ ԱՆՆՄԱՆՍՆ ՑԱՂԱԴՍ ԱՆՀԱՄԱՆԵԼՈՑՆ

Եւ եր այսու հետե առ անհաւատան Ննիմանոզս մեր կասցուք. Թէպէտ և զայրանայցեն անհաւատք առ այեալք, փախիցեն չիւրեանց, և ես փախչիմ յանուանէս. 'ի բաց կացցեն յանհաւատ մտացն, 'ի բաց կամ և ես 'ի Թշնամանելի անուանէս: Այլ եԹէ նոքա 'ի ձեռն գործոց զհաւատսն անպատուել և զինքեանս ամաչեցուցանել ոչ պատկառեն, զի և ես գժուարին յաղագս մեր որ բանիւքս զնոսա բամբասեմք զորս նոքա գործովք ցուցանեն: Այլ զի յառաջագոյն յայսպարէզ բանիցս այսոցիկ իմոք, որպէս և յիշէք իսկ, և զնմին զմարտէն բուռն հարաք, այլ որ առ Հրեայսն էր հանդէս՝ զմեզ վաղվաղակի ընկալաւ, և ոչ էր զգուշագոյն զմերով հիւանդ անդամօքն զանց առնել: Օ՜ի որք առ Ննիմանոզս են բանք՝ միշտ ժամանակ ունին. իսկ առ ախտացեալ եղբարսն մեր և որք զհրէականսն հիւանդանան, եԹէ ոչ յառաջագոյն ժամանեալ վաղվաղակի յափըշտակեաք 'ի հրէական տապոյն, ոչ ինչ օգուտ մեզ այնուհետև լինէր 'ի խրատուէ մեզացն 'ի ժամանակի պահոցն եղելոյ: Այլ յետ առ նոսա Հանդիսից դարձեալ ընկալաւ զմեզ գալուստ հոգևոր հարցն յոլով ուստեք այսր հասելոց. և ոչ յայնժամ 'ի դէպ էր ժամանակ ամենեցուն նոցա զօրէն գետոց ունայ 'ի հոգևոր ժողովն այս հոսեցելոց զմեր զբանն յերկարել: Այլ զինի նոցա գնալոյն՝ վկայիցն յիշատակք հանդիպեցան 'ի վերայ իրերաց յաձախապէս, և ոչ էր պարտ և արժան արհամարհել զնահատակացն զայնոցիկ բարեբանուԹիւն:

Օ՜այս ասեմ և հաշուեմ զի մի կարծիցէք 'ի դանդաղմանէ իմեքէ և՛իսպէրգուԹէ լինել յապաղումն հանդիսիս այսորիկ առ նոսա: Իսկ այժմ զի և առ Հրեայսն 'ի բաց վճարեցաք 'ի կռուոյն, և հարքն չիւրեանց գառաւան անցեալ գնացին, և 'ի բարեբանուԹիւնս վկայ-

իմն բաւականապէս վայելեցաք, բեր այսուհետև զժամանակեայ երկունս ձերոյ լսելութեանդ լուծցուք. քանզի քաջ գիտեմ զի քան զիս զառողջ ոչ ինչ նուազ իւրաքանչիւր ոք ի ձէնջ երկնէ յաղագս այնոցիկ լսել բանս։ Եւ պատճառ է ձեր քրիստոսասէր քաղաքս ի վերուստ, և զհայրենին զայն փոխանորդեցէք դուք զժամանակութիւն, ոչ երբէք անտես առնել զբարեպաշտութեանն աւանդութիւնս աղաղտելով։

Եւ ուստի է այս յայտ։ Ջնին ունիք ի հրեաստանէ երբեմն առ նախահարքն ձերովք պղտորելով զյստակ առաքելական վարդապետութեանն աւանդութիւնս. հրամայէին թլփատել և պահել զօրէնսն Մովսէսի, ի ներքս բերին լուծեամբ զայն նորաձեւութիւնս։ Այլ որք յայնժամ ի քաղաքիս մերում բնակեալք, իբրև քաջք ունիք շունչ՝ տեսանելով զգայլն ի վերայ յարձակեալս և զհօտն զամենայն ապականեալս, այնպէս ի վերայ վազեցին նոցա. ոչ նախ ի բաց կացին՝ հալածելով զնոսա ամենայն ուստեք և արտաքս վարելով, մինչև պատրաստեցին յառաքելոյն ամենայն ուրեք յաշխարհ առաքել վարդապետութիւն, պարսպել զնոսա, և որք զինի նոցա ամենեցուն հաւատացելոցն զնոյն շահ ամբարել։

Երդ ուստի՞ իցէ մեզ սկսանել առ նոսա զբանս, ուստի՞. ոչ այլ ուստեք, բայց եթէ յանհաւանութեանն ամբաստանութենէ։ Զայն զի զամենայն ինչ առնեն և հնարին, որպէս զի արտաքս մերժեսցեն ի լսողացն մտաց զՀաւատն, քան զոր զինչ արդեօք մեծագոյն ամբարշտութեան բամբասանք։ Ո՞ի յորժամ ասծ հրամայէ ինչ հաւատալ, պարտ և արժան է ընդունել զասացեալն և ոչ հարցաքննել յանդգնաբար։ Որ կամեսցի ի նոցանէ՝ կոչեսցէ զիս հաւատացեալ, կոչեսցէ և յիմար ի Քրիստոս. և ընդ այս դարձեալ իբրև ընդ պակ ցնծամք ընդ Պաւղոսի ի հաստարակաց անուանս յայամ. քանզի և նա ասէ. «Մեք յիմարք յաղագս Քրիստոսի»։ Քան զամենայն իմաստութիւն այս յիմարութի՛ իմաստնագոյն է. զի զոր ոչ կարաց գտանել արտաքին իմաստութիւնն, այս որ ըստ Քրիստոսի յիմարութիւնս է՝ ուղղեաց. սա զկաւար աշխարհի ի բաց հալածեաց. սա զլոյս գիտութեանն ի վերայ էած։ Եւ

զինչ իցէ յիմարութիւն ՚ի Քրիստոս. յորժամ զկատակել զնորհուրդս մեր ՚ի պատշաճ ժամանակի ընդոստուցանիցեմք. յորժամ անապատ և ունայն զիտս մեր յարտաքին խրատուցն առնիցեմք. յորժամ պարտ իցէ զՔրիստոս ընդունել՝ պարապեալ և մաքուր առ ՚ի յընդունելութիւն ՅԾային բանիցն յարմարիցեմք: Ո՞ յորժամ հրամայէ ինչ ՅԾ՝ զոր ոչ իցէ պարտ քննել՝ հաւատով ընդունել պատշաճ է. զի յաղագս այնքանեաց պատճառաց հետազօտելով պահանջել համարս և զօրինակ խնդրել՝ յանդգնեցելոյ և զվատնդս ՚ի բաց ընկենլոյ անձին է: Եւ զայս զարձեալ ՚ի նոցունց դրոց յանդիման կացուցանել Հանդիսացայց:

Ո՞աքարիաս ումն էր սքանչելի և մեծ այր. քահանայութեամբ պատուեալ յԱՅ, զվերակացութիւն հաւատացեալ ամենայն բազմութեանն: Եւ յայս Ո՞աքարիաս մնեալ ՚ի սրբութիւն սրբութեանցն ՚ի նոյն ինքն յանմատանելիսն, զոր միայն յամենայն մարդկանէ նմա ևԷթ օրէնն էր տեսանել: Եայեաց զնարդ բազմութէն ամենայն զուգահաւասարէր և սպասաւորէր յաղագս քահանայական յոլովութեանն ընծայելով ԱՅ, և հաշտեցուցանելով զտէրն ընդ ծառայսն: Իբրև միջնորդ ումն էր ԱՅ և մարդկան, եաես հրեշտակ ՚ի ներքս կացեալ. և զի հիացուցին գէմքն զայրն, ասէր նմա. “Մի երկնչիր, Ո՞աքարիաս, լսելի եղեն աղօթք քո և ծնցիս որդի „: Եւ ո՞ր է այս յարմարութիւն. յաղագս ժողովրդեանն աղաչէր, վասն մեղաց պաղատէր, Թողութիւն խնդրէր ծառայակցացն և ասէր. “Մի երկնչիր, լսելի եղեն աղօթք քո „. և լսելի լինելոյն ցոյցս առնէ. “ԸՆցիս որդի զԸՅովհաննէս „: Եւ զի և յաւէտ օտարազոյն. վասն զի յաղագս մեղաց ժողովրդեանն աղաչէր, և հանդերձեալ էր ծնանիլ որդի որ գոչելոց էր “Եհա գառն ԱՅ որ բառնայ զմեղս աշխարհի „, յիրաւի ասաց՝ լսելի եղեն աղօթք քո և ծնցիս որդի:

Եւ զինչ նա: Վանզի խնդրելին այս է՝ եԹէ քննել զօրինակ ՅԾային հրամանացն ներելի չէ, և եԹէ զասացեալն հաւատով ընդունել է պարտ և արժան: Եայեցար ՚ի հաստին իւր, յալիսն, ՚ի մարմինն տկարացեալ. Հայեցար և յամրութիւն կնոջն և Թերահաւատեաց, զօրինակն խնդրեաց ուսանել և ասէր՝ ուստի ծանեայց

զայդ · զիաՓրդ , ասէ , լինիցի այդ · ահա ես ալևորեցի և ծերացայ , և կին իմ ամուլ անցեալ զաւուրըք · Հասակ տարաժամ , բնութիւն անպիտան · զիաՓրդ ունիցի բան պատմեալդ : Այս որ սերմանեմ՝ տկար , անդաստանն անծնունդ : Այլ թերևս Թուիցի ոմանց Թողութեան արժանաւոր լինել զիրացն յաւմարութիւն խնդրելով և կարծել իրաւացի ինչ ասել · այլ ոչ յայ Թուեցաւ արժանաւոր լինել · և մանաւանդ յիրաւի : Ո՛չ յորժամ ՈՀ հրամայէ , խորհուրդս շարժել ոչ է պարտ և արժան , ոչ զիրացն յաւմարութիւն և ոչ զննութեանն ըզհարկաւորութիւն առաջի արկանել և ոչ այլ ինչ յայսպիսեացն · վասն զի քան զամենայն զայնոսիկ գեր ՚ի վերոյ է հրամանին զօրութիւնն , և ոչ յիմեքէ ՚ի խափանմանէ հատանի :

Ո՞ինչ առնես , ով այր · ՈՀ խոստանայ և դու ՚ի հասակ ապաստանիս և ծերութիւն առաջի արկանես · մի՛ զօրաւորագոյն իցէ ծերութիւնդ քան զնոսա՞ն՝ այ · մի՛ հզօրագոյն իցէ բնութիւնդ քան զարարիչ բնութեդ : Այ գիտես զի զօրաւորք են գործք բանից նորա : Ան նորա զերկինն հաստատեաց , քան նորա զարարածս յօրինեաց · նորա բանն զհրեշտակս արար , և դու յաղագս ծննդեանն յերկուանաս : Այ ան այնորիկ զայրացաւ հրեշտակին և ոչ յաղագս քահանայութեանն ներեաց , այլ նորին իսկ աղագաւ պատուհասեցաւ մեծապէս · զի առաւել քան զայլս պատիւ ունէր բանի , և ՚ի հաւատն քան զայլսն առաւելագոյն լինել էր պարտ և արժան :

Այս զինչ էր օրինակ պատուհասին : “Ահա լուցիս լռեալ ,, : Այ եղուկ քեզ , ասէ , սպասաւորեաց բանիդ անհաւատութեան , դոյն ընկալցի յանհաւատութենէդ զտանջանսդ , ահա լուցիս լռեալ՝ ոչ խօսելով մինչև եղիցին այդոքիկ : Ո՛մեր աՓ զմարդասիրութիւնն ՈՀ : Այերահաւատես յիս , ասէ , ընկալ այժմ զպատուհասդ · և յորժամ իրօք ընձեռեցից զգոյացն , յայնժամ լուծից զբարկութիւն · յորժամ ուսցիս եթէ յիրաւի պատժեցար , յայնժամ ՚ի բաց վՀարեցից ՚ի պատուհասէդ :

Այուիցէն Ան՝ինամանքն զիարդ բարկանայ ՈՀ ՚ի հարցաքննէն : Այս եթէ նա Թերահաւատեաց ՚ի մահկանացու ծնունդն՝ պատժեցաւ , դու զանՀաւելին և զգեղագոյնն հարցափորձելով զիաՓրդ փախիցես ՚ի պատու-

Տասն, ասա ինձ։ Կա ոչ հրաժարեաց, այլ ուսանել կամեցաւ և ոչ դիպեցաւ Թողութեան. զու գիտել բըռնադատես զամենեցուն անտեսանելին և անհասանելին, զի՞ ունիցիս զպատասխանիս, զի՞րս ոչ հաստատեացես ՚ի վերայ քեզ զպատիժն։ Այլ որ յաղագս ծննդեանն են բանք՝ մնասցեն ՚ի պատեհագոյն իւրեանց ժամանակին. այժմ Հանապարհաւ գնասցուք յառաջիկայ պատճառն զոր յառաջագոյն Թողաք զնշխարս, զսատակիչ արմատն խլել. ձեռնարկելով զմկրտն ամենայն չարեաց։

Ասաւ ՚ի նոսա աղաղակս այս բուռսաւ. ո՛ր է արմատ ամենայն չարեաց։ Հաւատացէք, սարսուռս զիս առնու յորժամ հանդերձիմ զայս խօսել զոր խորհին նոքա ՚ի միտս իւրեանց յարաժամ։ Այլ զինչ իցէ արդեօք արմատ չարեացն այնոցիկ։ Յանդգնեցաւ մարդ՝ ասել եթէ զնծծ գիտէ որպէս նա ինքն զինքն գիտէ։ Այս յանդիմանութեան ինչ կարօտանայցէ ցուցանելոյ. ոչ էր բաւական միայն յառաջ բերումն բանիցդ ցուցանել զնոցա զամբարշտութիւնն։ Վանգի մոլորութիւն իմն է այս յայտնապէս, խեղաթարութիւն աննեերելի, նոր ամբարշտութեան օրինակ։ Այլ ոք այսպիսի, ոչ ինչ ոչ երբեք ոչ ՚ի միտ արկանել և ոչ լեզուաւն արտաքս բերել յանդգնեցաւ։ Օ մտաւ ածծ, Թշուառական և հէք, ո՞ւ ես և զո՞ւ քննես. մարդ ես և զնծծ քննես. բաւական են մտածմունքդ սակ՝ ցուցանել զյիմարութեանդ գերազանցութիւն. մարդ հող և մխիր, մարմին և արիւն, խոտ և ծաղիկ խոտոյ, ստուեր և ծուխ և ընդունայնութիւն, և քան զայս տկարագոյն ևս։ Ո՞ՀՀ ինչ կարծիցես եթէ չարախօսութիւն իցեն բնութենն՝ ասացեալքս. քանզի ոչ ես զայսոսիկ ասեմ, այլ մարգարէքն իմաստասիրեն. ոչ անպատուելով զմեր զաղգս, այլ զինքուցանելով զանմոռաց զամբարհաւաճութիւն. ոչ անպատուելով զմեր բնութիւնն, այլ նուաստացուցանելով զկատաղեցելոյն զՏպարտութիւն։

Վանգի եթէ այսքան և այսպիսի ասացին նոքա, և սակայն երևեցան ոմանք որք սատանայի մեծաբանութեանն յաղթեցին. եթէ ոչ ինչ յայսցանէ ասացեալ էր, ո՛ւր արդեօք ոչ էին արտաքս յամբարտաւանութենէ վարեալք, ասա ինձ։ Ընդհին զդեղն ՚ի վերայ կացեալ՝ և տակաւին այտումն, և ո՛ւր արդեօք ոչ ծանրու-

Թեամբ և ամբարհաւաճումն Թեամբ լինելին ուռուցեալք եթէ ոչ այսքան և այսպիսի էր նոցա երևեցուցանել։ Ապա զինչ ասէր արդարն Հայրապետն յաղագս իւր. «Ոչայց ես հող և մոխիր»։ Ընդ այ խօսէր և ոչ ամբառնայր զինքն համարձակութեամբ. այլ նոյն ինքն այն չափաւորելն զանձն՝ հաւանեցոյց զնա։ Արքա որք և ոչ սուրերի նորա են արժանաւորք, քան զՀրեշտակս մեծագոյնս զինքեանս կարծեն, որ է վերջին մոլորութեան ցոյցք։ Օ՜ծ, ասա ինձ, քննես, զանսկիզբն զանյաղթելին զանմարմինն զանապականն, որ ամենայն ուրեք է մերձ, որ քան զամենայն գերազանցէ։ Ապա զինչ իմաստասիրեն մարգարէքն յաղագս նորա և զարհուրեցուցանեն. «Ա՛ հայր լերկիր և առնէ նմա դողալ»։ Հայր միայն և սասանեցուցանէ զայսպիսի և զայսքան երկիր։ «Ա՛ մերձենայ՝ ի լերինս և ծխին. որ սասանեցուցանէ զի՛ նեղքոյ երկինս՝ ի հիմանց, և սիւնք նորա սասանին. որ սպառնայ ծովոյ և ցամաքեցուցանէ զնա. որ ասէ անդնդոց անապատացիր»։ Ով ետես և փախեաւ, և Յորդանան յետս գնաց։ Լերինք խայտացին իբրև զխոյս, և բլուրք որպէս գառինս մաքեաց»։ Ամենայն արարածք դղրդին զարհուրին դողան. բայց նոքա և եթէ արհամարհեն անտես առնեն անարգեն զիւրեանց զփրկութիւնն, ոչ ասեմ՝ զամենեցուն զտէրն։

Յառաջնումն զնոսա վերին զօրութեամբքն ողջախոհացուցաք, հրեշտակօքն, հրեշտակապետօքն, սերովբեիւքն, քերովբեիւքն, և այժմ զգալի արարածովքս, և ոչ յայսցանէ պատկառեն։ Ա՛յլ տեսանես զայս զերկին զիարդ գեղեցիկ է, զիարդ մեծ, որպէս պայծառ աստեղաց պարուք պսակեալ է. արքան ժամանակս տևեաց։ Զանգի հինգ հազար և աւելի ևս ամանակս եկաց մինաց, և յոլովութիւն ժամանակին ոչ էած՝ ի վերայ նորա ծերութիւն. այլ որպէս ոք զօրաւորագոյն իմն և զըւարձանալով զմարմինն ծաղկեալ ունիցի և յարբունս հասակի զգեղեցկութիւն, նոյնպէս և երկին որպէս՝ ի սկզբանն վիճակեցաւ՝ զգեղեցկութիւնն պահեաց, և ոչ՝ ի ժամանակէն եղև տկարագոյն։

Ա՛յլ զայս զգեղեցիկ զմեծ զպայծառ զաստղածեալ զբանակդ, յայսքան ժամանակս կացեալ մնացեալ, ածն այն զոր քննես, և ընդ քո խորհրդովք բովանդակութիւ

արկանես, որպէս թէ աք ի խաղ տաղտուար ինչ առնիցէ՝ այնպէս հանդերձ զիւրումբք գործեաց։ Եւ զայս յայտնելով Յեսայի ասէր. "Ով կացոյց զերկինս որպէս կամար և ձգեաց զնա իբրև զխորան ի վերայ երկրի,,։ Կայց զերկիր կամիցիս տեսանել. այլ և զսա իբրև զոչինչ արար։ Ո՞վ ի վանն նորա ասէ. "Ով կացոյց զերկինս որպէս կամար և ձգեաց զնա իբրև զխորան ի վերայ երկրի,,։ Իսկ յաղագս սորա, "Որ ունի զոլորտս երկրի, ո արար զերկիր իբրև զոչինչ,,։ Ո՞ այսպիսի և զայսքան։ Ո՞մոտաւ ած զբերանց ծանրութիւն, զորքան ագգս, զորքան բարձրութիւնս և զյոլովութիւնս մսկոց, զքաղնի քաղաքս և զորքան չինուածոց մեծութիւնս, զորքան չորքոտանեաց զղազանաց զսողնոց զամենապատիկ յոլովութիւն ի վերայ միանանց իւրոց բերէ։

Եւ սակայն զայսոսիկս և զայսքան այնպէս դիւրաւ արար, մինչ զի մարգարէին և ոչ օրինակ ինչ դիւրութեանն կարելով գտանել, ասէ՝ զերկիրս արար իբրև զոչինչ։ Այն զի ոչ ի բաւական մեծութիւն և զեղկութիւն երևելեացս զարարչին յանդիման կացուցանել զզօրութիւն, այլ յոյժ ի չափոյ մեծութենէ ուժոյ արարչին պակասեալ գտանին այսոքիկ։ Մինայնի այլոցն գտանեն օրինակ մարգարէքն խրատու ըստ զօրութեան իւրեանց կարգալով յայտնել զինչ առաւել մեզ յաղագս Նորա զօրութեանն։ Եւ զինչ այն. ոչ միայն ի մեծութիւն յաւելուլ յարարածս, այլ և զօրինակ արարչութեանն ասել. զի յերկոցունց կողմանց՝ և ի մեծութենէ եղելոցս և յարարչութեանն դիւրութենէ կարասցուք արժանաւոր ինչ ըստ մերումբ զօրութեան մտածութիւնս առնուլ յաղագս Նորա զօրութենն։

Որ մի զմեծութիւնն միայն քններ զեղելոցս, այլ և զդիւրութիւն արարողին. զի ոչ յաղագս երկրի և երկնից այս, այլ և ի նմին ինքն ի բնութեան մարդկան, երբեմն ասելով, "Որ ունի զոլորտս երկրի և որք բնակեալ են ի սմա իբրև զմարախս,,, և երբեմն "Որ մինայն հեթանոսք իբրև զկաթիլ մի ի դուլէ են առաջի Նորա,,։ Ի վայրապար զանց առներ զբանիւս, տարածեա զասացեալն գեղեցկապէս և սիրեա։ Ո՞մոտաւ ած զամենայն հեթանոսս և զՍորիս և զկիլիկեցիս և զկապադովկացիս և որք յԱսքինն Պոնտոս բնակեալ

են, զԹրակացիս, զմահեդոնացիս, որք Յունաստան են ամենեքեան, որք Յունիս բնակեալ են ի մերում գաւառիս, որք ի կղզիս զբերեանացիս, զսարմատացիս, զՀնդիկս, որք ի Պարսից երկրին բնակեալ են, զանբաւ զազգսն զայն ամենայն զորոց և ոչ զանուանսն գիտեմք։ Յամենեքեան այս ազգք իբրև զկաթիլ մի ի դուլէ են առաջի նորա։ Քանզի որդի մանն ես դու կաթին այնորիկ, ասա ինձ, զի քննես զմեծ որում ամենայն հեթանոսք իբրև զկաթ մի ի դուլէ են. և զինչ պարտ և արժան է ասել յաղագս երկնի և երկրի և ծովու և մարդկան բնութեան։

Յլսեաք ի վերոյ քան զերկինս բանիւ և ի հրեշտական երթիցուք։ Պիտեք ամենայն իրօք զայս զի ալարածոցս այսմ երևելոյ մի հրեշտակ զուգահաւասար է, մանաւանդ թէ յոյժ պատուականագոյն։ Քանզի եթէ ըզմարդ արդար ոչ արժէ աշխարհս, յաւէտ ևս ոչ արժէ ցի զհրեշտակ, զի յոյժ մեծագոյնք իցեն հրեշտակք քան զարդարս. այլ սակայն բիւրք բիւրոց են հրեշտակք ի վեր և հազարք հազարաց հրեշտակապետք, աթոռք, տէրութիւնք, պետութիւնք և իշխանութիւնք և անբաւ գունդք անմարմնոյն զօրութեանց և ցեղք անհամարք։ Յե զայսոսիկ զամենայն զօրս հանդերձ այնպիսի դիւրութեամբ արար, զոր և ոչ մի բան յանդիմանն կացուցանել կարասցէ. վասն զի բաւական եղև նոքա կամելն առ ամենայն։ Յե զոր օրինակ առ մեզ ախորժակքս ոչ ընձեռեն աշխատութիւս, նոյնպէս և նմա գործելն զայնքանս և զայնպիսի զօրութիւնս։ Յե զայս մարգարէն երևելացուցանէ ասելով. "Օ ամենայն որքան կամեցաւ և արար տէր յերկինս և յերկրի"։ Ցեսա՜ նէս, ոչ միայն առ արարչութիւն երկրի, այլ և առ լինելութիւն վերինն զօրութեանցն բաւականացաւ կամելն և եթէ նորա։

Օայս լսելով ոչ ողբասցես զքեզ, ասա ինձ, և ի վայր թաղեսցիս յայդքան հպարտութիւն ածեալդ։ Օի զոր փառաւորել միայն և երկիր պագանել էր պարտ և արժան, զնա իբրև զմի ոք յանարգաց իրաց հարցաքննել հակառակես։ Յաղագս այսորիկ և Պաւղոս բազում խնամոտութեամբ լցեալն տեսանելով զանհաւասարելի գերազանցութիւնն Այ և զանարգութիւն մարդ-

կային բնութեանս, առ որս հետալծտեն զնորա զանօ-
րինութիւնն, սնատելով և հանդերձ բաղում դժուա-
բեալով ուժգնապէս ասէր. “Ով մարդ, դու ո՞ ես որ պա-
տասխանի տաս ՚ի յԱստուծոյ,,: Ո՞ ես, զմտաւ ածէ նախ զառաջին
զքո բնութիւնդ. զի ոչ ինչ է կարողութիւն անուն գը-
տանել որ յանդիման կացուսցէ քեզ զքո անարգութիւդ:

Այլ թերևս ասիցես, սուրբ եմ ազատութեամբ
պատուեալ: Պատուեցար ոչ զի վիճաբանեսցես ազա-
տութեամբդ, այլ զի պատուելովդ ՚ի հնազանդութիւն
վարեսցիս պատուողին: Պատուեաց զքեզ ՚ած ոչ զի թըշ-
նամանեսցես զնա, այլ զի փառաւորեսցես. և թշնամա-
նի նա, յորժամ զբնութիւն նորա քննես: Այնպէս և
թէ ոչ հետալծտել զխոստմունս նորա՝ փառաւորել է
զնա, հարցաքննելն և խուզելն՝ ոչ զկրաւանն միայն,
այլ և զնոյն ինքն զհրամայողն անպատուել է:

Այլ զի ոչ հարցաքննել զխոստմունս նորա՝ փառաւո-
րել զնա է, լսեր Պաւղոսի որ ասէր վասն Աբրահամու
և հնազանդութեան նորա և յամենայնի հաւատոյն.
“Այտես, ասէ, զիւր մարմինն մեռեալ, և ՚ի մեռելու-
թիւն արգանդի Սառայի հայեցաւ. բայց աւետեացն ՚ած
ոչ երկմտեաց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հա-
ւատովք,,: Ընդունելութիւն և հասակն ՚ի հրաժարումն ար-
կանէին, և հաւատն ՚ի քաղցր յոյսն յերկարէր: “Այլ
զօրացաւ հաւատովք, ետ փառս ՚ած, և հաւանեցաւ ե-
թէ որ խոստացաւն՝ կարող է առնել,,: Ցեսանէս զի որ
հաւանի, յաղագս որոյ ՚ած խօսի, փառս տայ ՚ած հա-
ւատալոյն նմա, և որ Աբրահաւատն՝ զանպատուելութիւն
իւր դարձուցանէ ՚ի գլուխ իւր: “Դու ո՞ ես որ ընդդէմ
պատասխանի տաս ՚ած,,:

Այս ապա կամելով յուցանել զմիջոց մարդկան և ՚ած՝
եղոյզ ոչ ողբան պարտ էր, այլ սակայն ՚ի տուեալ առա-
կէն կարողութիւն է և մեծագոյն ևս զանազանութեան
մատնութիւնս առնուլ: Օ՛րինչ ասաց. “Մթէթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն Թէ ընդէր զիս արարեր այս-
պէս. և կամ Թէ ոչ ունիցի իշխանութիւն բրուտն կա-
ւոյն ՚ի նմին զանգուածոյ առնել անօթս՝ զոմն ՚ի պա-
տիւ և զոմն յանպատուութիւն,,: Օ՛րինչ ասես, պ՞ոյն-
պէս պարտիցիմ ՚ի նեղբոյ կալ ՚ած որպէս կաւն բրտին:
Այո, ասէ, այդքան է միջոց ՚ած և մարդկան ողբան կա-

ւոյ և բրտի. մանաւանդ թէ ոչ այսքան ե միջոց, այլ և յաւէտ ևս առաւելագոյն: Վասնզի կաւոյ և բրտի բնութիւն մի ե որպէս ի Յոբայ ասացաւ. "Ապող ջընաւ կեալս ի տունս կաւեղէնս, յորմէ և մեք իսկ ինքեանք ի նմին կաւոյ եմք,,: Այլ եթէ լաւագոյն ինչ երևեսցի և քաջավայելուչ քան զնա, զանազանութիւնն ոչ յայայլութենե բնութեան, այլ իմաստութիւն արուեստաւորին արար զայս: Այլ զի ի կաւոյ ոչ ինչ հեռի ես կացեալ, և եթէ անհաւատես՝ հաւանեցուցանեն զքեզ դերեզմանք և տապանք. զի երթալով ի դամբարանս յառաջագոյն հրաժարեցելոցն, դիտասցես զի այս այսպէս լինի: Արդ կաւոյ և բրտի ոչ ինչ ե ընդ միջ. բայց ոչ և մարդկան այնքան ե միջոցն, որքան և ոչ բան յանդիման կացուցանել կարասցէ և ոչ միտք չափով տանել: Արդ որպէս նա զհետ երթայ ձեռաց բրտին, և ուր կամի նա՝ ձգէ և շուրջ բերէ, նոյնպէս և դու ըստ նմանութեան կաւոյն անձայն լեր յորժամ ած ինչ տնօրինել կամիցի: Ել ի բաց բառնալով զմեր զիշխանութիւն և ժանտացուցանելով զայս ասէր Պաւղոս. մի լիր այլ քաջութեամբ մտադիւրութեամբ զյոխորտութիւնն մեր պատանձեցուցաներ:

Այլ եթէ ախորժէք, տեսցուք զայն զինչ արդեօք կամեցան ուսանել նոքա, զի այնպէս սաստկագոյնս կալ կեաց: Ո՞չ ընութիւնն արդեօք քննեին, և ոչ երբեք. այլ յոյժ նուաղագոյն զանօրէնութիւնն խուզէին զայ. ընդէ՞ր այս անուն տանջի, և վասն է՞ր այս անուն ողորմութիւն ընդունի. է՞ր աղապաւ այս անուն ազատ է՞ի պատժոց, և միւսն՝ ի դժնդակութիւնս. միւն թողութե հանդիպեցաւ, և միւսն ոչ: Ո՞չ այս և զայսպիսիս հարցաքննէին: Այլ ուստի՞ է այս յայտ. ի վերագունիցն քան զայս: Վասնզի ասելով "Ապա ուրեմն ումո կամի ողորմի և ումո կամի խստանայ: Ա՞յս արդեօք ինձ, զի՞ և ևս մեղադրէ զի ախորժակացն նորա ո՞ եկաց ընդդէմ,,, ապա զայն ի վերայ հածե՝ թէ "դու ո՞վ ես մարդ, որ ընդդէմ պատասխանի տաս ինձ,,: Արդ որք զանօրէնութիւնն հարցաքննէին և խուզէին, ըմբերաներ Պաւղոս. և ո՛չ վերանելի զբնութիւնն զայն որ զամենայն տնօրինէ՝ հետազօտել ոչ վարկանիցիս արդեօք բիւր շանդեաց արժանաւոր. և զիա՞րդ ոչ իցէ այս վերջին մոլորութե:

Լուր մարգարէին որ ասէ, մանաւանդ թէ ՚ի ձեռն նորա. "Եթէ հայր եմ ես՝ ո՞ւր են փառք իմ, և եթէ աեր՝ ո՞ւր է պատիւն իմ,,. վասն զի որ երկնչին ոչ քննէ, այլ երկիւղ պահանջէ, ոչ հետազօտէ, այլ բարեբանէ և փառաւորէ:

Ասաւսցեն քեզ զայս և վերին զօրութիւնքն և երաշ նեալքն Պաւղոս. զի ոչ եթէ այլոց զայս սաստէր, ինքն ոչ անկեալ կայր այսպէս: Լուր զինչ փիլիպեցւոցն ա սէր, յուցանելով եթէ տակաւին մանաւորան[1] ունի ՚ի գիտութիւն. որպէս կորնթացւոցն գրելով ասէր. "Ի մանկ գիտեմք,, և զբովանդակէն ոչ ևս. այժմ բաւական հարաք, "Կղեմեսք, ես զիս ոչ համարիմ հասու լեալ,,: Օ՜ինչ յայտնագոյն քան զայս ձայն. քան զփող պայ ծառագոյն ևս գոչեաց, զաշխարհս ամենայն խրատելով՝ սիրել, գութ ունել առ տուողն չափով գիտութեանս, և ոչ կարծել եթէ զամենայն առեալ իսկ այժմ: Օ՜ինչ խօսիս, ասա ինձ. զՔրիստոս ունիս որ ՚ի քեզ խօսի, և ասե՞ս՝ ես ոչ վարկանիմ զիս հասու լեալ: Յաղագս այդորիկ ասացի զի զՔրիստոս ունիմ յիս որ խօսի. նա ինձ զայս ուսոյց: Որպէս և սոքա եթէ ոչ բողոքովին ա մայիք էին ՚ի հոգւոյն օգնականութենէ, և զզօրութիւն նորա զամենայն ոչ էր մերժեալ յիւրեանց անձանց, ոչ արդեօք Պաւղոսի յասել՝ ոչ վարկանիմ ես զիս հասու լեալ՝ սոքա յամենայնի հասու լեալ կարծէին զինքեանս:

Եւ ուստի յայտ է, ասեն, թէ յաղագս հաւատոյ զայս խօսեցաւ և գիտութեան և օրինաց, և ոչ վասն վարուց և առաքինութեան՝ եթէ անարդ զիս ինքն վար կանիմ վարուք և առաքինութեամբ: Օ՜այս մանա ւանդ յայտ արար ասելով. "Օ՜նհատակութիւն բարի նահատակեցայ, զընթացն կատարեցի, զհաւատսն պա հեցի. այսուհետև առաջի կայ ինձ արդարութեան պը սակն,,: Լուր որ զպսակն հանդերձեալ էր առնուլ և զընթացսն կատարեաց, ոչ արդեօք ասէր՝ ոչ վարկանիմ զիս ինքն հասու լեալ. այլ զգործելիսն և զոչ գործելիսն ոչ ուրեք յիւրմէ անդրեվրայ, այլ ամենեցունն քաջայայտ է և ծանօթ բարբարոսաց և պարսկաց և ամենայն ազգի մարդկան:

1 Դրեալ էր մարմաւորն ՚ի գիքսուինեան. ուղղագրեալ լծացաւ ՚ի յունէն:

Եւ զի յայտնագոյն ևս զոր ասեմ՝ արարիչ երևեալ ակն, զնորին ինքն զՀաւուին ընթեռնում զյարմարութիւն։ Վասնզի ասելովն «Ցեսէք զշունան և զգուշայարուք՝ի չար մշակացն»,, և բազում ինչ խօսեցեալ յաղագս եկամուտ հրկական վարդապետութեանն՝ի պատեհագոյն ժամանակի, ՚ի վերայ հած ասելով. «Ալ որ ինչ միանգամ էր ինձ շահ, զայս վարկանիմ տուգանս յաղագս Քրիստոսի. այլ և համարիմ իսկ զամենայն տոյժըս, զի գտայց ոչ ունելով զարդարութիւն յօրինացն, այլ յայն արդարութենէն և՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի»,։ Եւ ապա ասէ յորմէ հաւատոյ. «Ձա նաչել զինս և զզօրութիւն յարուցեան նորա և զհաղորդութիւն չարչարանաց նորա»,։ Օ՞ինչ իցէ՝ զօրութիւն յարուցեան նորա. լուր զինչ ասէ։ Յարուցեն ցուցաւ օրինակ։ քանզի յոլովք և նախ քան զինս յարեան բազում անգամ մեռեալք, բայց այնպէս և ոչ ոք։ Օ՞ի այլքն ամենեքեան յարուցեալք՝ դարձեալ լերկիր դառնային, և ժամանակ մի՚ի բաց վճարեալք՚ի մահուն բռնութենէ՝ ընդ նորա իշխանութեամբ դարձեալ ածեալք լինէին։ Իսկ մարմինն տէրունական յարուցեալ՝ ոչ յերկիր դարձաւ, այլ յերկինս եւ. զամենայն զօրութիւն թշնամւոյն ելոյծ. ընդ ինքեան զաշխարհ՝ամ յարոյց, և այժմ յաղքունական աթոռնստի։ Օ՞այս ամենայն զմտաւ ածելով Պաւղոս և ցուցանելով եթէ զայսքան և զայս ամենայն սքանչելիս խորհուրդ և ոչ մի բան յանդիման կարասցէ կացուցանել, այլ հաւատով միայն կարողութիւն է ուսանել և առնել յայտնի, ասէ. «Հաւատով ճանաչել զզօրութիւն յարութեան նորա»,։ Եւ արդ եթէ զյարութիւնն ոչ է կարողութիւն խորհրդոյ գտանել, ևս առաւել զծընունդն զվերին։ Վ՞ասն այնորիկ խօսելով Պաւղոս յաղագս խաչին և չարչարանացն ասէր, և զսյն՚ի հաւատոյն զօրութիւն դարձոյց. և ապա զայս բանս ամենայն շարժելով և յառաջանալով ասէր. «Այդպարք, ես զինս ոչ համարիմ հասու լեալ»,։ Վ՞ասն ասաց՝ ոչ համարիմ զինս տացեալ, այլ հասու լեալ։ Յայտնեաց եթէ տակաւ վասն ճանապարհի կայ հեռաւորագոյն, զայ և յառաջանայ, բայց զվախճանն զամենայնի ոչ է։ Օ՞նոյն և այլոց պատուիրէ ասելով այսպէս. «Որք միանգամ

կատարեալքս եմք՝ զայս խորհեսցուք, և զոր այլ նոյն-պէս խորհիցիմք՝ և զայն ձեզ ՚ած յայտնեսցէ ,, : Տեսա-նէս զի ոչ յաղագս վարուց և առաքինութեան է բանն, այլ յաղագս վարդապետութեան և հաւատոյ. քանզի առաքինութիւնք և վարք յայտնութեան ինչ ոչ կարօ-տանան, այլ վարդապետութիւն և գիտութիւն : Եւ այլուր յայտնէր զայս ասելով. “ Եթէ ոք կարծիցէ գի-տել ինչ, ոչ ևս գիտաց ,, : Եւ ասաց պարզաբար՝ ոչ գի-տաց, այլ որպէս պարտ և արժան է գիտել. ունի զգի-տութիւն, այլ ոչ գՀաւատսին և զաւարտեալն : Եւ զի ուսցիս եթէ այս է Հմարիտ՝ ոչ ինչ յաղագս վերագու-նիցն խօսիցիմք, այլ թէ ախորժես՝ ’ի խոնարհ առ ե-բեւելի արարածս զբանս ածցուք :

Ո՞չ տեսանես զայս երկին, զի զկամարի զկերպարան ամբողջ պահէ. և գիտեմք զայս երկին ոչ ’ի խորհրդոց, այլ զի յաճախին գրոց ուսաք և զի ’ի նոցանէ լուաք. բայց թէ զինչ իցէ բնութիւնն՝ անգիտանամք : Այսպա-թէ ոք բանադատիցէ և յամառիցէ, ասասցէ զինչ է բնութիւնն երկնի, սմանն արդեօք պաղեալ, եթէ ամպ խտեալ, եթէ օդ թանձրացեալ : Այլ ոչ ոք ունի յայտ-նապէս ասել և ոչ ինչ : Իսկ արդ տակաւին արդեօք ցու-ցանելոյ ինչ կարօտանայցեմք, ասա ինձ, առ ’ի յուսա-նել զմոլութիւն ոք զած ասէն գիտել : Օ երկնի զայ-սորիկ որ հանապազ երևի՝ զբնութիւնն ոչ ունին ասել, զանեղևութիւն այ հաւաստեաւ խոստանանն զբնութիւն գիտել : Եւ ո՛ իցէ այնքան անզգայ, մինչ զի ոչ վերջին մոլութիւն և բամբասանս ասիցէ զայն :

Յաղագս այսորիկ աղաչեմ զամենեսեան զձեզ, զի իբրև ’ի խելագարութիւնս անկեալս և ’ի դիւահարու-թիւնն՝ ըստ ձերում կարողութեանդ հնարեցարուք բժըշ-կել հանդերձ ցածութեամբ և հեզութեամբ խօսելով : Ա-ման զի յամբարտաւանութենէ ’ի նոսա աղանդն այն ծնաւ, և յոլով է մեզ նոցա այտուն. և որք միան-գամ այտուցեալ են վերք, ոչ ’ի վերայ դնելոյ ձեռին հանդուրժեն, և ոչ խոշոր շշափման համբերեն. յա-ղագս այնորիկ իմաստուն բժիշկք կակուղ սպնգով զայն պիսի զվերս զնաստուցանեն : Եւ արդ զի և ’ի նոցա հո-գւոյն վէր է այտուցեալ, իբրև կակուղ սպնգով ախոր-ժելի ջուր և ըմպելի այնպէս զաստուածային զամենայն ’ի

վերայ արկանել հնարեցարուք, զնստուցանելով զայտուքն և զամբարտաւանութիւն զամենայն քակտելով, եթէ թշնամիցեն, եթէ աքսորիցեն, եթէ թքանիցեն, եթէ զինչ և առնիցեն։ Ի թողեալ զբժշկութիւն, ով սիրելի. զի որ զմարդ խելագարեալ բժշկեն, հարկաւոր է բազում այդպիսեացդ հանբերել։ Այլ սակայն ոչ այնպէս՝ի բաց կալ պարտ, այլ վասն նորին իսկ մանաւանդ զնոսա աւազել և արտասուել, զի այնպէս է նոցա հիւանդութիւնն։

Ոչ այս առ զօրաւորն ասեմք որք դրժանս և ոչ մի կարիցեն՝ի նոցա ընդելութենէ ընդունել և ոչ միաս. բայց որ տկարագոյն ոք իցէ՝ փախիցէ՝ի նոցա մերձաւորութենէն, ՚ի բաց վազեսցէ՝ի ժողովոյն, որպէս զի մի բարեկամութեանն իրք միասատու պատճառք լինիցին։ Այսպէս և Պաւղոս առնէր. ինքն ընդ հիւանդացեալսն խօսէր և ասէր. "Լիզ ընդ լերեայս իբրև զլերեայ, ընդ անօրէնս իբրև զանօրէն,,։ Իսկ զաշակերտսն որք տկարագոյնքն անկեալ կային՝ի բաց մերժէր, պատուիրելով այսպէս և ուսուցանելով. "Պահանեն զբարս քաղցունս խօսք չարք,,. և դարձեալ. "Լինք՝ի միջի նոցա և որոշեցարուք ասէ տէր,,։ Վասն զի բժիշկ եթէ երթայցէ առ ախտացեալն, և զնա և զինքն օգտի. իսկ տկարն և զինքն և զհիւանդն միասէ՝ խառնելով ընդ ախտաժէտին. զնա ոչ կարէ օգտել, և յինքն ձգելով՝ի հիւանդութենէն դժնան։ Այս որպէս որք յաչացուս հայելով ընդունին յինքեանս ձգել ինչ յախտէն նոցա, ըստ նմին և որք ընդ հայհոյիչն հաղորդին՝ համբերեն, եթէ իցեն տկարք՝ բազում ամբարշտութենէ նոցա մանս յինքեանս ընդունելով։

Այս արդ զի մի մեծամեծս զանձինս միասեսցուք, փախիցուք՝ի նոցա ընդելութենէն. աղաչեսցուք և աղօթեսցուք առ մարդասէրն Աստ, որ կամի զի ամենայն մարդ կեցցէ և՝ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ։ Այսպատեսցուք զնոսա՝ի մոլորութենէն և՝ի սատանայի որոգայթէն, վերստին ածելով՝ի գիտութեանն լոյս յԱստ և՝ի հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

ՅԱՂԱԳՍ ԱՆՀԱՄԱՍՏԵԼԻՈՑ, ԵՒ ԹՔԼ ՈՉ ՆՈՒԱՍՏԱՆԱԼՆ ԱՍՏՈՒԾՈՑ
ԲԵՐԵԼԻ Է Ի ՍԵՐՈՎԲԷԻՑՆ

Աշխատասէր մշակք յորժամ տեսցեն ծառ անպտուղ և անընտանի՝ աշխատութեանցն նոցա ժանտացուցիչ, որ արմատոյն խոշորութեամբ և ծանրութեամբ հովանւոյն ապականէ զընտանի զտունկն, հանդերձ բազում փութով՝ ի բաց հատանեն զնա։ Վերուս երբեք և հոգմ եկեալ ուստեք՝ նոցա ձեռնարկութեանն օժանդակէ, անկանելով զսաղարթովք ծառոյն, և հանդերձ յոլով սաստկութեամբ դրդուեցուցեալ խորտակ զնա և յերկիր ընկենու, և զաշխատութեանն յօլով մասն՝ ի նոցանէ թեթևացուցանէ։ Արդ զի և մեք ծառ հատանեմք վայրենի և անընդել զՆնմանից զաղանդն, աղաչեսցուք զԾն առաքել մեզ զՀոգւոյն ջնորհ. զի քան զամենայն հոգմ ուժգնագոյն՝ ի վերայ անկեալ, յարմատոյն խլեսցէ զհերձուածս, և զյոլով մասն զաշխատութեան՝ ի մէնջ թեթևացուսցէ։

Վանզի ահա երկիր խոպանացեալ որ ոչ վայելէիցէ՝ ի միակայն ձեռս, բազում անգամ չար բանջարս և փշոց յաճախութիւնս և ծառս վայրենիս ընձիւղէ յիւրոյ դոյոյն. նոյնպէս և Նմանիցն յօլովակի ամայացեալ անձն, և՝ ի գրոյ զարմանս ոչ վայելեալ յհնքեանց և՝ ի նմին զատարկութենէն զանընտանի բուսոյց զհերձուածն։ Ոչ այս ծառ ոչ Պաւղոս տնկեաց և ոչ Ապողոս ջուր ետ և ոչ ԱԾ աճեցոյց, այլ տնկեաց տարաժամ հարցաքննութիւն, ոռոգեաց անմտութեան հպարտութիւն և աճեցոյց փառասիրութէն փափագումն։ Այլ զի մի խլեսցուք միայն, այլ և այրեսցուք զչար արմատն զայն, կոչեսցուք այսուհետև զնոյն ինքն որ՝ ի նոցանէ հայհոյի, և՝ ի մէնջ բարեբանի ԱԾ. և աղաչեսցուք զի և զչէզուս մեր առաւել ևս ընդոստուսցէ յընթացսն, և զմիտս մեր առ՝ ի յայտնագոյն բանալ զասացեալսն զնմանստս։

Վանզի վասն նորա և փառաց նորա է մեր ամենայն աշխատութիւն, մանաւանդ եթէ յաղագս մերոյ փրկ-

կութեան։ Օ՛ի զնծ ոչ ոք ոչ անպատուելով վշտանել կարէ և ոչ բարեբանելով պայծառագոյն երևեցուցանել. այլ կայ և մնայ միշտ յիւրում փառսն, ոչ բարեբանութեամբք աճեցեալ և ոչ նուաղեալ հայհոյութեամբք։ Իսկ մարդիկ ոչք փառաւորեն զնա արժանապէս, յաւէտ եթէ ըստ արժանւոյն և ոչ ոք կարէ, այլ ըստ իւրեանց կարողութեանն, զփառաբանութեան զալըստուզս ինքեանք օգտին, և ոչք հայհոյեն և անարգեն՝ զնոցանց փրկութիւնն ժանտացուցանեն։ Օ՛ի որ ձգէ քար ՚ի բարձունս՝ յիւր գլուխն ձգէ, յաղագս հայհոյեցաւն ոմն ասաց։ Վասնզի զոր օրինակ որ զքարն ՚ի բարձունս ձգէ՝ զերկինն զմարմինն հատանել ոչ կարէ և ոչ ՚ի բարձրութիւն նորա հասուցանել, և զվէրն ընդունի յիւր գլուխն՝ անդրէն առ ձգողն իջեալ քարին, նոյնպէս և որ հայհոյէ զերանելին զբնութիւնն զայն, զնա ինչ վշտանել երբէք ոչ կարէ՝ որ յոյժ մեծագոյնն է և բարձր՝ քան եթէ ընդունելն զվնասն, այլ հակառակ իւրում անձինն սուր սրէ՝ չարաբարոյ առ բարեգործն լինելով։

Ա՛րդ կոչեսցուք զնա զանձառելին զանբովանդակելին մտօք զնծ, զանտեսանելին զանհասանելին, որ յաղթէ զբնութեան մարդկային լեզուացն և զերազանցէ քան զմահկանացու մտաց զըմբռնումն, զանհետազօտելին զանքննելին հրեշտակաց, զանտեսանելին սերովբէից, զանխմանալին քերովբէից, զաներևոյթն պետութեանց իշխանութեանց զօրութեանց, և պարզաբար ամենայն արարածոց. յորդւոյ միայնոյ և ՚ի հոգւոյն ծանուցեալ։

Վ՛իտեմ զի ամբարտաւանութեան բամբասանս դնեն բանիս, վասն զի և վերին զօրութեանցն անհասանելի գոլ զնա ասացի։ Ա՛յլ ես յոլովագոյն բամբասեմ զնոյա մնջորութիւնն և զամբարհաւաճութիւնն։ Վասնզի ամբարտաւանութիւնն ոչ ասելն է թէ քան զերեղոցս զամենեցուն զըմբռնումն գեր ՚ի վերոյ է արարիչն, այլ ասելն՝ թէ որ վերին զօրութեանցն է անհասանելի, կաղողութիւն է նոցա յերկիր անկելոցն և այնքան ՚ի նոցանէ ՚ի բացէ կացելոց՝ իւրեանց խորհրդոցն տկարութեամբ բովանդակել և պարունակել։ Ա՛յց ես եթէ ոչ ցուցից զայս, յիրաւի ընդ ամբարտաւանութեն մեզադրութեամբք անկայց. և դուք եթէ յետ ցուցանեմ

լոյ վերին զօրութեանցն անհասանելի՝ յամառիցէք և հակառակիցէք գիտել զնա, ոչքանեաց վհից և ոչքանեաց վախից ոչ իցէք արժանաւորք. զի որ անմարմին զօրութեանցն է անտեսանելի, հանդերձ հաւատեաւ գիտել խոստանայք։

Ա՛րդ բեր այսուհետև ՚ի նոյն ինքն ՚ի ցոյցն երթիցուք, դարձեալ զբանն յաղօթսն դարձուցանելով. վասն զի բազում անգամ աղօթից յարմարութիւն տայ մեզ զխնդրոյն ցոյցս։ Արդարեւ առ նոյն ինքն “Թագաւորն Թագաւորաց և տէր տերանց, որ միայն ունի զանմահութիւն ՚ի լոյս բնակեալ յանմերձենալի, զոր ոչ ոք եհես ՚ի մարդկանէ և ոչ տեսանել կարող է, որում փառք և զօրութիւն յաւիտենական. ամէն,,։ Ա՛յս բանք ոչ իմ, այլ Պաւղոսի են։ Պաւղոս ինձ ուսիր զանձինն երկիւղածութիւն և զսէրն արմատացեալ. քանզի յիշելով զնա՝ ոչ նախ առաջին ներեաց ՚ի յարմարութիւն վարդապետութեանն ելանել, մինչև զպատշաճագոյն պարտսն հատոյց նմա՝ փառաբանութեամբ փակելով զբանն։ Վասն զի “եթէ յիշատակ արդարոյ հանդերձ գովութեամբ,,, եւս առաւել յիշելն զնա բարեհամբաւութեամբ։

Ա՛ռնէ զսոյն և ՚ի յաւաջաբան թղթոյն. սկսանելով զթուղթն բազում անգամ՝ յորժամ յիշէ զնա, ոչ նախ ՚ի վարդապետութիւնն յառաջանայ, մինչև տայ նմա զպարտսն փառաբանութենէ։ Ասէ, գաղատացուցն գրելով ասէր. “Շ նորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յայ հօրէ մերմէ և ՚ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, որ ետ զինքն յաղագս մեր, որպէս զի զերծուսցէ զմեզ ՚ի մերձակայ յաւիտենից ՚ի չարէս ըստ կամացն Ա՛ստուծոյ և հօր. ումեմ փառք յաւիտեանս,,։ Ա՛ւ արդ հօր միայն արդեօք առնիցէ զայս, և Քրիստոսի ոչ նոյնպէս։ Ասէ զի և միածնին զայս արար. քանզի ասելովն եթէ “Ա՛զօթէի նզով լինել ՚ի Քրիստոսէ յաղագս եղբարց մերոց և ազգականաց ըստ մարմնոյ,,, ՚ի վերայ կած. “Որոց որդեգրութիւն և կտակարանքն և աւետիքն. յորոց Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ՚ի վերայ ամենեցուն Ա՛ստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն,,։ Որպէս հօր, նոյնպէս և միածնին զփառաբանութիւնն նախ տալով, ապա ՚ի յարմարութիւն եկն բանին։ Վասնզի լուաւ յորդւոյ որ ասէր. “Ո՛ի ամենեքեան պատուեսցեն զորդի որպէս պատուեն զՀայր,,։

Այլ զի ուսանիցէք եթէ այս աղօթք լինձեռն մեզ զցոյցն, բեր զնա ՚ի մէջ ածցուք։ “Ովազաւոյն Թագաւորացդ, ասէ, և տէրն տերանց, որ միայն ունի զանմահութիւնն ՚ի լոյս բնակեալ յանմերձենալի,, ։ Զոտանաւոր կալով հարց ցհերձուածողն՝ զինչ իցէ արդեօք ՚ի լոյս բնակեալ յանհպելի։ Օ՞ի ուսցիս, զի եթէ տունն անմերձենալի է, սրբափ ևս առաւել բնակեալն ՚ի նմա ՚ին։ Օ՞այս ասէր ոչ զի տեղի և տուն շուրջ զնով կարծիցես, այլ զի բազում մեծադիւրութեամբ զանհասուն թիւն նորա ուսցիս. զի ոչ ՚ի լոյս բնակեալ յանհասանելի ասաց, այլ յանհպելի, որ քան զանըմբռնելին յաւէտ մեծագոյն է։ Ա՞ան զի անհասանելի ասէ, յորժամ քննեսցի և ոչ հասանիցի խնդրողացն զնա. իսկ անմօտելի՝ որ և ոչ հարցաքնութեանն ներկ ՚ի սկզբանն, յոր և ոչ մերձ ոք լինել կարասցէ։ Որպիսի՞ինչ, անհասանելի ասէն խորք՝ յորս ընկղմելով զինքեանս լուղղղք և ասստկապես բերեալք յանդունդս՝ զսպառուածըն անկարանան գտանել։ Իսկ անհպելի այն ասի, զոր ոչ զսկիզբն խուզել է կարողութիւն և ոչ քննել։

Օ՞ինչ առ այսոսիկ ասիցես այլ։ Ա՞արդկան է, ասէ, անհասանելի, և ոչ հրեշտակաց և ոչ գեր ՚ի վերոյ զօրութեանցն։ Իսկ արդ դու հրեշտակ իցես արդեօք, ասա ինձ, և ՚ի պար անմարմնոց զօրութեանցն կատարիցիս. ոչ ապաքէն մարդ ես և նորին բնութեան ընդ իս. Թերևս ղբնութիւնդ ևս մոռացար։ Դ՞ինչ մարդկան և եթէ անմերձենալի. Թէպէտ և այս ոչ կայ առաջի, և ոչ զայս ասաց Պաւղոս “՚ի լոյս բնակեալ յանմօտելի մարդկան,, ։ Սակայն եթէ ախորժիցէ, ըստ ներելոյ դիցուք, ոչ ապաքէն և դու մարդ ես։ Այլ արդ զինչ՝ հրեշտակաց անմերձենալի. մի՞ եթէ այս առ քեզ ինչ առ հակառակողդ իցէ և առ քննողդ, որ ասեսցէ եթէ մարդկային բնութեան հասանելի է բնութիւնն այն։

Ա՞ասց զի ուսցիս եթէ ոչ ինձ և եթէ, այլ և նոցին զօրութեանցն անմօտելի է, լուր Այսայեայ զինչ ասէր։ Յորժամ ասեմ զԱյսայիաս, զՀոգւոյն բանս ասեմ, վասն զի մարգարէն զՀոգւոյն զօրութիւնն բարբառէր։ “Այս եղև ՚ի տարւոջն յորում մեռաւ Ոզիա Թագաւոր, տեսի զտէր նստեալ ՚ի վերոյ աթոռոյ բարձու և ամբարձեալ, և սեղովքեք կային շուրջ զնովաւ, վեց

թևք միոյ և վեց թևք միւսոյ, երկուքն ծածկէին ըզ-
դէմս իւրեանց և երկուքն զոտս ,,։ Եւ աղաղակ, ասա
ինձ, ծածկէին զերեսս, առաջի արկանելով զթևսն.
վասն ի՛ այլոց իրիք, այլ զի ոչ հանդուրժէին բերել որ
յաթոռոյն վազէին փայլատակունք և զՃառագայթան
զայնսիկ։ Եւ սակայն ոչ զնոյն ինքն զլոյն զանապական
տեսանէին, և ոչ զվճիտ բնութիւնն. այլ նուաստու-
թիւն իմն երևէին։ Եւ զինչ իցէ խոնարհումին. յոր-
ժամ ոչ որպէս էն ՚ած՝ երևեսցի, այլ որպէս կարիցէ
տեսանիլ որ հայիցին՝ այնպիսի զինքն ցուցանիցէ չափե-
լով զտեսողացն զկարողութիւն դիմաց ՚ի ցոյցն։ Եւ զի
խոնարհումն էր, ՚ի նոցունն ՚ի բանիցն է յայտ. “Ցե-
սի, ասէ, զտէր նստեալ,,. և ՚ած ոչ նստի, վասն զի
մարմնոյ է ձևանալդ այդ. և “՚ի վերայ աթոռոյ,,։ Եւ
տուաջ աթոռով ոչ բովանդակի, վասն զի անպարունա-
կելի է ՚ածութիւնն։ Եւ սակայն զնուաստութիւն չհան-
դուրժէին ընդունել, թէպէտ և մերձ էին վայելեալք.
քանզի “ քերովբէք կային, ասէ, շուրջ զնովաւ ,,։ Ո՛ա
նստանդ նորին իսկ աղաղակ ոչ զօրէին տեսանել, զի
մերձաւորագոյնք էին։ Ո՛տաւորս ոչ տեղեաւ ասէ, այլ
ցուցանել կամելով հոգին սուրբ եթէ քան զմեր բնու-
թիւնս մերձաւորագոյն բնութիւն այն՝ և այնպէս ոչ
կարէին տեսանել զնա. “Եւ սերովբէք, ասէ, կային
շուրջ զնովաւ ,,. ոչ դարձեալ տեղի զեկուցանելով, այլ
ըստ տեղւոյն մօտաւորագոյնս զնոսա յայտնելով։ Ո՝ան
զի զանհասութիւնն ոչ այնպէս գիտեմք մեք որպէս այն
զօրութիւնք. որքան մաքրագոյնք, և խնամտանքն և տե-
սանողագոյնք են քան զմարդկան բնութիւնս։ Ո՝չ զոր
օրինակ արեգակնային Ճառագայթքն անմերձենալիք են,
և ոչ այնպէս գիտէ կոյրն որպէս տեսանողն, նոյնպէս և
զայն անհասութիւն ոչ այնպէս մեք գիտեմք որպէս և
նոքա. զի որքան կուրի և տեսանողն է միջոցն, նոյնքան
նոցա և մեր զանազանութիւն։ Որպէս զի և մարգա-
րէին լսելով ասել “տեսի զտէր ,,, մի կարծիցես եթէ
զբնութիւնն նորա ետես, այլ զնոյն ինքն զխոնարհումին,
և զայն տկարագոյն քան զվերին զօրութիւնսն. զի ոչ
կարաց տեսանել զնա որպէս քերովբէքն։

Եւ զինչ ևս ասացից յաղաղս երանելոյ բնութեան
այնորիկ, ուր և ոչ զհրեշտակաց բնութիւն կարողաց-

թիւն է մարդկան հանդերձ համարձակութեամբ տեսանել։ Այլ զի ուսցես եթէ ձչմարիտ է այս, զայր ՚ի մէջ ածից զնոյ սիրելի, որ բազում համարձակութիւն ունէր խնամոութեամբ և արդարութեամբ և ՚ի յոլով ուղղութիւնս վկայեալ՝ զսուրբն Դանիէլ. զի յորժամ ցուցից յինքեան տկարացեալ և լքեալ և յերկիւղ անկեալ ՚ի հրեշտակին մերձաւորութենէ, մի՛ զբ սխալանս և չար մտածութիս զայս կրել կարասցէ. այլ ցուցեալ հոգւոյն նորա համարձակութիւնն, բնութեանն նորա տկարութիւն յանդիմանի։ Արդ այս Դանիէլ պահեաց երիս եօթնեւերեակս աւուրց. հաց ցանկութեան ոչ եկեր, և ոչ գինի և ոչ միս եմուտ ՚ի բերան նորու, և ոչ իւղով օծաւ. և ապա ետես զտեսութիւնն զայն յորժամ պատեհագոյն էր անձն իւր առ այնպիսւոյ տեսութեան ընդունելութիւն, ՚ի պահոյն թեթևագոյն և հոգևորագոյն լեալ։ Այլ զինչ ասեր. "Արթարձի զաչս իմ և տեսի, և ահա այր զգեցեալ բաղին„ այս է պատմուճան ածային, "և մէջն իւր սնդեալ ոսկւով ովփազեաւ և մարմինն Թարսեաւ և դէմք իւր իբրև զտեսութիւն փայլատականց. աչք նորա իբրև ջահք հրոյ, բազուկք և կարթք իբրև տեսութիւն փայլող պղնձոյ, և ձայն բանից իւրոց իբրև զձայն բազմութեան։ Այլ ես միայն տեսի զերեւումն զայն. և որք ընդ իս էին ոչ տեսին, այլ թմբրութիւն մեծ անկաւ ՚ի վերայ նոցա, և փախեան զարհուրեալք. և ոչ մնաց յիս զօրութիւն, և փառք իմ յապականութիւն դարձաւ„։ Այլ աջակալեալ [illegible] երիտասարդն և երկիւղ գալատեան հրեշտակին իբրև զի որ վախճանիցի՝ այնպէս զնա ևս յոլովագոյնս արկանելով զդեղնութիւնն ՚ի վերայ և ծախելով զծաղիկ գեղեցկութեանն և վատնելով զվայելչ գոյն ամենայն երեւմանն, վասն այնորիկ ասէ. "Փոխեցաւ փառք իմ յապականութիւն„։ Օ՛ի զոր օրինակ երասանակալն զարհուրեցեալ և զերասանակն ՚ի բաց արձակելոյ զուլամբ՝ ձիքն ամենայն ՚ի վայր բերեալ լինին և կառքն բոլորովին կործանին, նոյնպէս և յոգիսն հանդիպել սովորեաց, յորժամ յահէ իմեքն և ՚ի հիացմանէ միտքն պաշարիցին. շփոթեալ իբրև զերասանակս ոմանս զիւր զօրութիւն ամփոփէ յերկաքանչիւրոցն զգայութեանց մարմնոյ, ամայիս Թողու զանդամն, և ա-

նապատրաստեալ նոքա ի զօրութենէ ունողին զնոսա՝ անկանին և ցնորին, զոր և Դանիէլ կրեաց յայնժամ։

Եւ զինչ ասա Հրեշտակն։ Յարոյց զնա և ասէ. «Դանիէլ այր ցանկալի, իմա զբանս զոյսոսիկ զոր ես խօսիմ առ քեզ, և կաց ի վերայ ոտից քոց, զի այժմ առաքեցայ առ քեզ»։ Եւ նա յարուցեալ դողալով յոտն կաց։ Եւ սկսեալ դարձեալ խօսել ընդ նմա հրեշտակին և ասել՝ եթէ «Յօրէ յորմէ եատուր զսիրտ քո վշտանալ առաջի ՚ի, լսելի եղեն աղօթք քո, և ես եկի ՚ի բանս քո»», դարձեալ՝ ի վայր անկաւ յերկիր որպէս և թաւկացելոյն դիպի։ Օ՜ի զոր օրինակ նոքա յարուցեալք և յինքեանս եկեալք՝ հայիցին յունեղն մերում զնոսա և ՚ի սրսկել զերեսաց ջուր ցուրտ թաւկանան դարձեալ ՚ի մերում ձեռս, նոյնպէս և մարգարէն կրեաց։ Դանիէլ հոգին զարհուրեալ, և զդիմացն մերձաւորութիւն ոչ բերեալ զծառայակցին, և ոչ լուսոյն այնմիկ կարացեալ հանդուրժել՝ ամբոխեալ լինէր, իբրև ՚ի շղթայէ իմեքէ ՚ի կապանաց մարմնոյն զինքն ՚ի բաց հատանել ձեպէր. այլ նա տակաւին ունէր։

Լուեցեն որք զհրեշտակացն տէրն հետազօտեն։ Դանիէլ յորմէ պատկառեցին աչք առիւծուցն, Դանիէլ՝ որ գեր ՚ի վերոյ քան զմարդկայինն մարմին զօրացեալ՝ ծառայակցին մերձաւորութեան ոչ համբերեաց, անշշունչ կայր. քանզի «Դալարեցաւ, ասէ, փորտի իմ ՚ի տեսութեան իմում, և շունչ ոչ մնաց յիս»։ Սորա որք այսքան հեռացեալք են յառաքինութենէ արդարոյն, զնոյն ինքն զբնութիւնն խոստանան գիտել հանդերձ ամենայն հաւաստութեամբ. զլեռնակայն և զաւազինն, որ զբիւր հրեշտական զսքնոսիկ արար, յորոց զմինն տեսանել Դանիէլ ոչ կարաց։

Այլ ածցուք զբանս յերկրորդ պատճառն և ցուցցուք թէ և վերինն զօրութեանցն անտեսանելի է ոճ, թէպէտ և նուաստանայցէ։ Ինդիր, ասա ինձ, զթևսն աւազի արկանեն սերովբէքն։ Եւ ոչ վասն միոյ այլ իրիք, քայց յաղագս առաքելականին «ի լոյս բնակեալ յանմերձենալի»», զոր գործովքն յառաջաձայնեն. և ոչ նոքա միայն, այլ և որ գեր ՚ի վերոյքն են քան զնոսա քերովբէքն։ Դանզի սերովբէքն մերձ կան, իսկ քերովբէքն աւելոտ են ոյ. իբրև ոչ եթէ աւելոտ ինչ կարօ-

տանայ ինձ, այլ զի զառաքինութիւն զօրութեանն ուսցես։ Ապա և միւսում ևս մարգարէին որ յաղագս նոցա խօսի. "Այլ եղև բան տեառն առ Յեզեկիել որդի Բուզեայ՝ ի վերայ Քաղդեացն։" Այս սա մերձ առ գետան Քիբրիս կայր յայնժամ։ Ի յորժամ կամիցի հրաշափառագոյն հանդէս ցուցանել ծառայից իւրոց ինձ, արտաքոյ քան զքաղաքն հանէ զնոսա ի մաքուր տեղիս յամբոխից. որպէս զի մի իւիք մի երևելեօք և մի ոք լսիցեն բախիցեն հոգիքն, այլ բովանդակ համարձակութիւք վայելեսցեն և երևելեօքն պարապելով տեսցեն։

Այս զինչ նա ետես։ "Էհա ամպ, ասէ, ի հիւսիսոյ կայր, և ճառագայթք շուրջ և հուր փայլատակեալ, և ի մէջ նորա իբրև զտեսութիւն սոնակալի և ճառագայթք ի նմա, և ի մէջ նոցին նմանութիւնք չորից կենդանեաց։ Այս այս տեսութիւն նոցա. նմանութիւն մարդոյ ի վերայ նոցա, և չորք երեսք միոյ և չորք թևք միոյ, և բարձրութիւն էր նոցա, և ահաւորք էին. և թիկունք նոցա լի աչօք շուրջ չորեցունց. և նմանութիւն ի վերայ գլխոյ նոցա գերագոյն, և թևք իւրաքանչիւր ուրուք, երկուքն ծածկէին զմարմինս. և ի վերայ հաստատութեանն իբրև տեսութիւն շափիղայ քարի. նմանութիւն աթոռոյ ի վերայ նորա, և ի վերայ նմանութեան աթոռոյ նմանութիւն իբրև տեսակ մարդոյ։ Այս տեսի իբրև զնմանութիւն սոնակալի ի տեսութենէ մէջոյն և ի վեր, և ի տեսութենէ միջոյն մինչև ի խոնարհ իբրև տեսութիւն հրոյ, և ճառագայթք նորա իբրև տեսութիւն ազեղան յորժամ իցէ յամպս յաւուր անձրևոյ։" Այս զինի այսորիկ ամենայնի կամելով ցուցանել եթէ ոչ մարգարէք և ոչ զօրութիւնքն այնորիկ յանապակ բնութիւնն մերձենան՝ ասէ. "Այս է տեսութիւն նմանութեան փառաց տեառն։"

Ցեսեր և աստ զնոսաւհումին։ Այլ սակայն և այն զօրութիւնք էին։ Ասաքէ յայտ. ի նոցունց անուանցն։ Ի զոր օրինակ հրեշտակ ասի զի չայ առ մարդիկ առաքի պատմող, և հրեշտակապետ զի հրեշտակացն իշխէ, նոյնպէս և նորա անուանս ունին՝ զիմաստութիւնն իւրեանց և զմաքրութիւն մեզ յայտնելով։ Այս որպէս թևք զբարձրութիւն երևեցուցանեն զընութեանն, զի և Վաբրիել թռուցեալ երևէր, իբրև ոչ եթէ թևք

կին հրեշտակապետին, այլ զի ուսցիս եթէ ՚ի բարձրա-
գոնիկ տեղեացն և դեր ՚ի վերոյ գնացիցն առ մարդ-
կային բնութիւնս գայր, նոյնպէս և նոցա ոչ այլ ինչ
զեկուցանեն քեզ: Այլ զոր օրինակ քեզ զբնութիւն
բարձրութիւն յայտնեն, և աթոռն զոյ ՚ի նոսա հանգ-
չելն, և աչքն զտեսանողութիւն, և մերձն լինել յա-
թոռն և յարաժամն զնա օրհնելն՝ զարթնութիւնն և
զհակումն, նոյնպէս և անուանքն՝ զոմանց զիմաստու-
թիւնն և զկիսոյն զմաքրութիւնն յայտնեն: Ւրանզի
զի՞նչ է քերովբէ. յաճախութիւն գիտութեան: Այ
զի՞նչ սերովբէն. բերան հրեղէն: Ցեսէր զկարդ զմաք-
րութիւն և զիմաստութիւնն անունն յայտնեաց: Այ
արդ եթէ ոք յաճախութիւն գիտութեան է՝ և ոչ ըզ-
խոնարհութիւն այ կարէն տեսանել հաւատաձակութեամբ,
ոք մանաւանդ գիտութիւնն իցէ, որպէս ասէն Պաւ-
ղոս, "Ի մանկ գիտեմք և ընդ հայելի և առակաւ,, որ-
քանի՞ ամբարտաւանութեան իցէ որ և ոչ նոցա է տե-
սանելի՝ զայն իւրեանց կարծեն ճանաչել և երևելի գոլ:

Այ զի ոչ քերովբէիցն և ոչ սերովբէիցն միայն, այլ
և ոչ իշխանութեանցն և ոչ պետութեանցն և ոչ այ-
լոյմ ումեք ստացական զօրութեանցն հասանելի է ՚ած,
և զայս կամիմ ցուցանել այժմ. այլ աշխատեցան ձեր
միտք ոչ յաճախութեամբ, այլ սարսափմամբ ասացե-
ցոյս: Ա՛ան զի դողայ և զարհուրի անձն բազում ան-
գամ ՚ի դեր ՚ի վերոյ տեսութիւնն դեգերելով: Յա-
զագս որոյ բեր զանձն յերկնայինսն ինքնուցուք ՚ի խո-
նարհ, և սիրելեացուք զզարհուրեալն ՚ի սովորական
միխթարութիւնն ապաւինելով: Այ զի՞նչ է այս. ա-
զօթել յաղագս որք ախտացեալն են այնպէս, զի բժըշ-
կեացին երբեք: Օ՛ի թէ որք ՚ի կղզիս և յոսկեհանու-
թեան են և ՚ի խիստ ծառայութեան և որք ՚ի դիւէ
լինելք հրամայիմք զած մաղթել, յաղագս այնպիսեացն
և առաւել. զի և գժնդակագոյն է քան զդիւին ամ-
բարշտութիւն: Ւունի թողութիւն մեղօրութիւնն այն.
բայց այն հիւանդութիւն յամենայն պատասխանեաց
զրկեալ է:

Ւայց զի յաղագս վտանգելոցն ՚ի դիւէ յիշեցաք զա-
զօթն, կամիմ ինչ և ընդ ձերում սիրոյդ խօսել, և
զգժնդակ ախտ եկեղեցւոյս ՚ի բաց հատանել. զի և մեծ

իսկ յիմարութիւն է եթէ զարտաքինսն հանդերձ այսքան խնամով բժշկեմք, և զմեր անդամսն արհամարհեսցուք: Այլ զինչ է ախտն: Խաղմութիւնս այս անձառելի՛ ի միասին խմբեալքս այժմ, որք հանդերձ այսպէս հաստատութեամբ հայկին յասացեալքս, յահաւոր ժամուն յայնմ յորում բազում անգամ խնդրեցի տեսանել, և ոչ կարացի. և յոյժ հառաչեցի, զի՛ ի ծառայակցին խօսել սաստիկ է փոյթն, և յերկարեալ յաոաջամտութեամբ զինքեանս մեղմով՝ մինչև՛ ի վախճան կան մնան. իսկ Հրիատոս երևել հանդերձեալ՛ ի վերայ ՚ծածկին խորհրդոյն, ունայն և անապատ եկեղեցիս լինի: Որս այս թողութեան իցէ արժանաւոր. պղերգութեամբն այնու և զգուշութիւնն զոր՛ ի փոյթ լսելութեանն առեք՝ կորսուանիք: Վանգի ո՛ ոչ սոգտանիցէ և զձեզ և զմեզ յորժամ տեսանիցէ զպատուղ լսելութեանդ վաղվաղակի՛ ի վայր թօթափեալ՛ ի ձէնջ: Օ՛ի թէ հանդերձ հաւաստութեամբ հայեիք յասացեալս, ՛ի ձեռն գործոց արդեօք ցուցանէիք զփոյթն. իսկ վաղվաղակի լսէն և՛ ի բայ վազել՝ նշանակէ ոչ մինչ ընդունել յասացելոցս և ոչ ամբարել՛ ի միտս: Օ՛ի թէ կայլին ՚ծայլին ասացեալքն յոգիս, ամենայն իրօք՛ ինեբքս զձեզ ունկնդիր, և առ սարսափելիսն բազում երկիւղածութեամբ զձեզ առաքէին: Այլ այժմ իբրև քնարերգակի ումեք լսելով, այնպէս ամենիքդ յամենայն օգտից՛ ի գադարել ասողին անցեալ գնայք:

Այլ զինչ իցեն ցուրտ յոլովից պատասխանիքդ: Ազօթել, ասեն, և՛ ի տան կարեմք. բայց խօսից լսել և վարդապետութեանն՛ ի տունս ոչ է կարողութիւն: Այսքան զքեզ, ով մարդ. աղօթել և՛ ի տան է կարողութիւն, այլ աղօթել այնպէս որպէս յեկեղեցւոջն՝ անկարութիւն է, ուր գոչումն միահամուռ առ ՚ծած առաքի: Եւ այնպէս լսէ յորժամ առանձինն զտերն աղաչիցես, որպէս հանդերձ եղբարքդն քովք: Այս է իմն առաւելեալ. զինչ. Համակամութիւն և սիրոյն կապ և քահանայից աղօթք, կարող են տկարագունիցն օժանդակել և՛ ի միասին ելանել՛ ի վեր յերկինս: Այլ այլ ազգ ևս, զինչ օգուտ՛ ի բանիցն լինիցի յորժամ աղօթքն ոչ իցեն լծակցեալք: Ասէ՛ աղօթքն և ապա բան. այսպէս և առաքեալքն ասէին. "Որ աղօթից և ապաստա-

րութեան բանին պարապեսցուք ,, : Այսպէս և Պաւղոս առնէր՝ յառաջաբանս թղթոցն աղօթելով , զի իբրև Հրեագի լցս՝ նոյնպէս և աղօթիցն լցս առաջնորդեսցէ բանին : Այն սովորեցուսցես զքեզ աղօթել հաւատեաւ , ոչ ինչ կարօտասցիս ծառայակցացն վարդապետութեան . քանզի ինքն Քրիստոս առանց առաջնորդի ուրուք լուսաւորէ զքո միտս : Այս եթէ աղօթք այսքան ունի զօրութիւն , և առաւել ընդ բազմութեանն . վասն զի մեծ է նորա զօրութիւնն և առաւել Համարձակութիւնն յաւէտ քան եթէ ի տուն և առանձինն : Այս ուստի է այս յայտ : Այնի իսկ Պաւղոսի լուր որ ասէն . “ Որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ , և ապրեցուսցէ . քանզի յուսամք թէ տակաւին և փրկեսցէ գործակցութեամբ աղօթիցդ ձերոց յաղագս մեր . զի որ ի մեզ ընդհն է՝ յոլովիւք ի դէմ բազմաց դոհասցի վասն մեր ,, : Այսպէս և Պետրոս ի կապարանէն զերծաւ , “ վասն զի աղօթք եկին յեկեղեցւոյն վասն նորա լեալ առ Ած ,, : Այս արդ եթէ Պետրոսի օգնեցին եկեղեցւոյն աղօթք , և զսիւնն զայն Հանէին ի կապարանէն , զիարդ դու արհամարհեսցես զզօրութիւնն զայն , ասա ինձ , և զմի ընկալցիս թողութիւն : Այս և նմին իսկ ով որ ասէն՝ թէ Հաւանիւ յորժամ բազմութիւնն Հանդերձ բարեմտութեամբ զնա աղաչեցէ : Այնդ Յովհաննու խօսեցեալ տնկով դդմենայն , յորում ոչ ինչ աշխատեցաւ և ոչ մնոյց զնա՝ ասէր . “ Այս ոչ խնայեցից ի Նինուէ քաղաք մեծ , յորում բնակեալ են առաւել քան զերկոտասան բիւր արանց ,, : Այ վայրապար զբազմութիւնն առաջի արկանէր , այլ զի ուսցիս եթէ Հանդերձ ձայնակցութեամբ աղօթելն՝ մեծ զօրութիւն ունի : Օ այս ձեզ և ի մարդկային պատմութենէ երևելի առնել կամիմ :

Այսր քան զտասն ամ ըմբռնեցան ոմանք յապստամբ բաց որպէս և դուք գիտէք . և ապա մին որ ի զօրաւորացն էր՝ պարտական ամբարտաւանութեանն երևեալ , գայլ ի բերան առնլով ածեալ լինէր ի մահուն Հանապարհ , յայնժամ ի ձիրն թագաւորին ամենայն քաղաքն ընթանայր , և ի գործարանին արգելուին , և Հաստատակամ ամենայն բազմութիւնն երթեալ յարիշտակէին ի թագաւորական բարկութենէն զդատապարտեալն , որ և ոչ

միւսմ Թողութեան էր արժանաւոր։ Այլ արդ եթէ զԹագաւորի սրտմտութիւն լուծանել կամելով Հանդերձ կանամբք և մանկտեամբք ընթանայք ամենեքեան, որչափ և առաւել եթէ զերկնից Թագաւորն Հանդերձ ձեալք Հաշտեցուցանել, և յափշտակել՝ ի բարկութենէ նորա ոչ զի ոք օրպէս յայնժամ և ոչ զերկուս և կամ զերիս և կամ զՀարիւր, այլ զամենեսեան որ յաշխարհի են մեղաւորք, և զվտանգեալն՝ ի դիւէ ազատել՝ ի բանսարկուին որոգայթից, արտաքոյ նատիք և ոչ ընթանայք ամենեքին՝ ի միասին, զի ՚ած՝ ի ձայնակցութենէ ձերմէ պատկառեալ՝ և նոցա Թողեալ զպատուհասն և մերոց մեղացն ներեսցէ։ Այլ եթէ՝ ի հրապարակս դիպեսյիս՝ ի ժամուն յայնմ, եթէ՝ ի տան և եթէ յանկնաբելն իրս, ոչ քան զամենայն առիւծ ուժգնագոյն և զամենայն կապանս խզեսցես և՝ ի հասարակաց աղօթիցն ընթանայցես։ Այս զոր ընկալցիս փրկութեան յոյս, ասա ինձ, ՚ի ժամուն յայնմ, սիրելի։ Ոչ մարդիկ միայն գոչեսցեն զսարսռալի զբարբառն, այլ և հրեշտակք անկանին առաջի տեառն, և հրեշտակապետք աղաչեն. ուրախին և զժամն իւրեանց մարտակից, զպատարագն օգնական։ Այս զոր օրինակ մարդիկ ոստս ձիթենեաց Հատանելով շարժեն Թագաւորաց, մանկունք աղօրմութիւն և մարդասիրութիւն նոցա յիշեցուցանեն, նոյնպէս և հրեշտակք յայնժամ փոխանակ ոստոյ ձիթենեաց զինքն ինքեան զերկրաւնական մարմինն առաջի դնեն, և աղաչեն զտէր յաղագս մարդկային բնութեանս մեծաբարբառ ասելով՝ եթէ վասն սոցա պաղատիմք զորս դու ժամանեալ այնպէս սիրել արժանի արարեր, մինչ զի և զանձն քո տալ յաղագս սոցա. վասն որոյ մեքս աղաչեմք, յաղագս որոց դու զարիւնդ քո Հեղեր. սոցա աղաչաւս պաղատիմք, յաղագս որոց դու զմարմինդ քո պատարագեցեր։ Վասն այնորիկ և զլլկեալս՝ ի դիւէ՝ ի ժամուն յայնմիկ կացուցանել սարկաւագն, և ձևով մարմնոյն առնել Հրամայէ զպաղատանսն. քանզի աղօթել նոցա ընդ Հասարակ ժողովելոցս եղբարցս ոչ է օրէն։ Յաղագս այնորիկ զնոսա կացուցանել, զի աղօրմեսցի նոցա և Թշուառութեանն վասն և անձայնութեանն իւրեանց՝ Համարձակութեամբն առ նոցա վերակացուն Թիւնն վարեսցի։

Արդ զայս ամենայն խնդրեալ ընթացսդ՝ ի ժամուն

յայնմ՝, զի ձգեսցուք ՚ի մեզ զոզոպմանութիւն, և չնորհս գոցուք ՚ի դէպ ժամու օգնականութեան։ Պոլեցեք զբանս, հանդերձ բազում աղաղակաւ և կայծմամբ զպատուիրանս ընկալաք։ Ա՛յլ եթէ որպէս գործով մեզ ցուցանիցեք զգովանութիւնդ՝ փութացարուք, ոչ է հեռի ժամանակ ցուցանելոյ յետ հնազանդութեան և պատուիրանիս՝ աղօթքդ. զայն գովութի խնդրեմ, զայն կայծառին որ գործովքն է։ Յուսայեցեք միմեանց կալ միաբ որպէս և կացէքդ. և եթէ ոք դրդուեսցի ՚ի կարգէդ, կալարուք հաստատութեամբ. զի և ընդ ձերոյ փութոյդ և ընդ եղբարց ինամակալութեան կրկնապատիկ առնուցուք զվարձան, հանդերձ յոլով համարձակութեամբ զպաղատանան հեղուցուք, և զնծ հաշտ առնիցեք աստ, և ՚ի հանդերձելումն կարիցեք հանդիպել բարութեանց չնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

ԱՒ ԱՆՆՄԱՆՍՆ ՑՈՂՈՓ ԱՆՀԱՄԱՆԵԼԻՈՑ

Բաւական էր ցուցանել յառաջագոյն մարդկան անհամանելի գոլ զնծ և հրեշտակաց և քերովբէից և սերովբէից, ՚ի բաց վճարեալք յիրացն, և ոչ մի ինչ բան յաղագս այլոց շարժել. բայց զի յօժարութիւն և փոյթ ամենայն մեզ ոչ զհակառակորդացն միայն պապանձեցուցանել զբերանս, այլ և զձեր սէրդ առաւելապէս ի մաճանացուցանել, դարձեալ զնմին պատճառէ բուռն հարցուք, և յաղագս այլոց իրաց զբանն ՚ի մէջ ածցուք։ Օ՛ի յայնոսիկ զեզերանքն ձեզ յաւէտ ևս առնէ զգիտութիւն, և մեզ պայծառագոյնս գործէ զյաղթանակն. և եթէ նշմարք իցեն մնացեալ, ՚ի բաց մաքրեսցէ. զի և զչար բոյսն ոչ ՚ի վերոյն պարտ և արժան է հատանել, քանզի առաւելագոյն ևս բուսանին՝ արմատոցն ՚ի խոնարհ մնացելոց, այլ ՚ի նմին իսկ ՚ի խորոց երկրին և ՚ի գոգոյն ՚ի բաց խլել, և ՚ի մերկ առաջի դնել Քերմութեն Ճառագայթիցն, որպէս զի դիւրագոյն Թառամիցին։

Ա՛յդ բեր յերկինս ՚ի վեր Հանցուք զձեզ դարձեալ բանիւ, ոչ Հարցաքննելով և ոչ Հետազօտելով, այլ ողբ

ոչն գիտեն զինքեանս, և ոչ ախորժեն գիտել զչափ մարդկային բնութեանս, զտարաժամ հակառակութենն լուծանել փութացեալք։ Յաղագս այնորիկ և բազում մնադիւրութեամբ ոչ զայ երևումն միայն, այլ և զհրեշտակին ցուցաք անըմբերելի լինել արդարոյն այնմ, և զպատմութիւնն զամենայն ձեզ ընթերցաք. և յաճախապէս ցուցաք զերանելին զԱնիել դեղնեալ դողացեալ և քան զթալկացեալսն ոչ ինչ լաւագոյն կալ ինալ՝ ոգւոյն Աստուծոյ խզել զմարմնոյն կապանս։ Ի զոր օրինակ աղաւնի ձեռնընդել և ընտանի՝ ի տան ուրեք բնակելով, յորժամ ահ իմիք զգասցէ՝ զարհուրեալ՝ ի ձեղունն թռչի, և ընդ պատուհանան արտաքս Աստուածարհն հայցէ՝ յերկիւղէն՝ ի բաց փախչել ցանկայեալ, նոյնպէս և ոգի երանելոյն այնորիկ յայնժամ՝ ի մարմնոյն ելանել Աստեր և յարտաքս ամենևին փութայր. եղեալ էր արդեօք և՝ ի բաց թռուցեալ և զմարմինն ածայի թողեալ, եթէ ոչ հրեշտակին բուռն հարկանելով վաղվաղակի զնմանէ՝ ի բաց էր վճարեալ յահէն և յիւր կայեանան վերստին դարձեալ ածեալ։ Յաղագս այնորիկ զայս ասացաք յայնժամ, զի ուսանելով ոքան հրեշտակ քան զմարդ զանազանեալ, և ծառայակցին գերազանցութեանէ՝ ողջախոհացեալք, և հակառակ տեառնն՝ ի մեղրութենէ՝ ի բաց ազատեսցին։

Արդարեւ զհրեշտակն տեսանել ոչ հանդուրժեաց որ այնքան համարձակութիւն ունէր, և սոքա այսքան հեռացեալք՝ ի նմանէ, ոչ զհրեշտակն, այլ զնոյն ինքն զհրեշտակաց տէրն քննեն. նա զառիւծուցն սրտմտութիւն վանեաց, մեք և ոչ աղուեսուց յաղթող կարեմք լինել. նա զվիշապն ընդ մէջ եհերձ, և քան զգազանին բնութիւն զօրաւոր գտաւ համարձակութիւնն զոր առաջ ունէր, մեք՝ ի դուշնաքեայ սողնոց զարհուրիմք. նա զթագաւորն իբրև զառիւծ սրտմտեալ ցածոյց, և զԱբեւգոդոնոսորայ բարկութիւնն որ քան զայմ բոց սաստկագոյն էր՝ ի բարբաոսական զօրան բերեալ՝ ի մէջ երևելով գնատոյց, և զիաւարեալսն զամենայն լուսաւորեաց։ Արդ նա որ լուսաւորեացն՝ զհրեշտակն տեսանելով եկեալ առ ինքն, դժնդակ խաւարաւ պաշարեալ լինէր, զոր արդեօք ընկալցին զպատասխանիս որք զերանելի բնութիւնն զայն հեռագոտեալ ձեռնարկեն։

Կայց և ոչ յայսմ վայրի զբանն դադարեցուցաք յայնժամ, այլ և յիմաստուն զօրութիւնն՝ի վեր հանաք զպատմութիւնն, ցուցաք զի՛ բաց դարձումն զաչացն, զառաջի արկանել թէոցն, զանընդհատ գոչումնն, զի՛ ի ձեռն ամենեցուն հիացումն և երկիւղ երևեցուցեն մեզ անմարմնական զօրութիւնքն այնոքիկ. զի այնքան են իմաստունք քան զմեզ, ոչքան և մերձաւորագոյնք են յանձառելի և յերանելի բնութիւնն յայն, նոյնպէս և յաւէտ քան զմեզ զանհասութիւն գիտեն. վասն զի գերազանցութիւն իմաստութեանն առաւելութիւն գործէ զերկիւղածութեանն։

Կ՚ըացաք ձեզ յայնժամ թէ զինչ է արդեօք անմերձենալին, և եթէ քան զանհասանելին յոյժ է մեծագոյն. և պատճառն յաւելաք՝ եթէ անհասանելին յետ քննութեանն անհասանելի երևի. իսկ անհպելին և ոչ ընդ հետազօտութեամբ իսկ անկանի և ոչ զձանապարհին սկիզբն ընդունի, յորժամ և զխորոցն զառակ կարօտացաք ածել։ Կ՚ըացաք եթէ ոչ ասաց՝ի լոյս անհպելի, այլ՝ի լոյս բնակեալ յանմերձենալի. և եթէ տունն անմերձենալի իցէ, և աս առաւել որ բնակեալն է ՚ած։ Ո՛չ այս ասէր Պաւղոս ոչ զի ընդ տեղեաւ բովանդակեցէ զ՚ած, այլ զի յոլովութեամբ շուրջ գալով զբանիւն՝ զանիմանալին և զանմերձենալին յանդիման կացուսցէ։ Ի մէջ ածեալ անցուցաք և զայլ զօրութիւնսն՝ զբերովբէսն, և ցուցաք զիարդ՝ի վերայ նոցա է հաստատութիւնն, զիարդ քարն սառնագոյն, որպէս նմանութիւն աթոռոյ և տեսակ մարդոյ և բոցաձև և հուր և աղեղն, և զինի այնորիկ ամենայնի ասէր մարգարէն. “Կ՚այ տեսութիւն նմանութեան է փառացն տեառն,,. և ամենեքումբք այնոքիւք ցուցաք զայ խոնարհումնն, և զնոյն զայն անբմբռներելի վերին զօրութեանցն։

Ո՛չ վայրապար զայս վերստին գլխաւորեմ։ այլ զի պարտս ձեզ գխոստմանցն զայնոցիկ պարտիմ, կամիմ ուսանել հաւաստեաւ զինչ հատուցի և զինչ մնացեալ իցէ։ Կ՚այսպէս և որ զփոխան պարտին՝ առնեն, զմուրհակն բերելով յորում բանն ամենայն գրեալ է, և ոչոց պարտին՝ զփոխան ցուցանելով զմնացեալն հատուցանեն։ Կ՚ես այժմ իբրև՝ի մուրհակ ինչ բացեալ գյիշատակս մտաց իմոց, որպէս մատամբ իւիք բանիւս

զտուեալսն յուշից, ՚ի միացեալն այսուհետեւ երթամ։ Եւ զինչ իցեն միացեալքն. զորս յուշանեմն եթէ ոչ իշխանութիւնք եւ ոչ տէրութիւնք եւ ոչ այլ ինչ որ ստացական զօրութիւն է՝ ունի զհաւատսն ՚ի զհաստատին։ Բայց եւ են իսկ զօրութիւնք եւ այլք զորոց եւ ոչ զանուանն գիտեմք։

Ո՛մոյ ածէք զամբարտաւանութիւն հերձուածողացն. զծառայիցն եւ ոչ զանուանն գիտեմք, եւ զտեառնն զնոյն ինքն զբնութիւնն հետազօտեն, հրեշտակք եւ հրեշտակապետք, աթոռք եւ տէրութիւնք, պետութիւնք եւ իշխանութիւնք։ Բայց ոչ այս զօրք միայն են յերկինս, այլ անբաւ աղգք եւ ցեղք անհամարք, զորս եւ ոչ ի բան յանդիման կացուցանել կարասցէ։ Եւ ուստի է այս յայտ եթէ առաւել քան զայսոսիկ իցեն զօրութիւնք զորոց եւ զանուանն ոչ գիտեմք։ Որ զոյն ասաց Պաւղոս, եւ զայս ասէ այսպէս յաղագս Քրիստոսի. «Որ ստոյգ զնա գեր ՚ի վերոյ քան զամենայն իշխանութիւնս եւ զպետութիւնս եւ զզօրութիւնս եւ քան զամենայն անուն անուանեալ ոչ միայն յաւիտենիս յայսմ, այլ եւ ՚ի հանդերձեալսն»։ Ցեսանէք զի են ոմանք անուանք անդ որք հանդերձեալք են ծանօթք լինել, որ այժմ անյայտք են։ Վասն այսորիկ ասաց. «Ոչ միայն ՚ի յաւիտենիս այսմ, այլ եւ ՚ի հանդերձեալսն»։ Եւ զինչ աքանչելի է եթէ զբնութեանն զհաւատսն գիտութիւնն ոչ ունիցին. ոչ ինչ է մեծ զայս ցուցանել։

Ո՛նօրինութեանն զյոլովս ոչ գիտեն վերինն զօրութիւնքն, նոքին իսկ պետութիւնքն եւ իշխանութիւնք եւ տէրութիւնք. եւ զայս դարձեալ ՚ի նոցունց յաւաքելական քանից ցուցցուք։ Ո՛ ոմանք զնօրինութենն նորա ընդ մեզ ուսան, այլ եւ ՚ի ձեռն մեր. «Որանզի այլոց ազգաց ոչ ծանուցաւ, ասէ, որպէս այժմ յայտնեցաւ առաքելոց նորա եւ մարգարէից, լինել հեթանոսաց ժառանգակից եւ մարմնակից եւ հաղորդս աւետեաց նորա»։ Երեքին էին տուեալ աւետիքն. «Եւ հետարանաւ, ասէ, որոյ ես Պաւղոս սպասաւոր»։

Եւ ուստի է այս յայտ եթէ այժմ ուսան վերինն զօրութիւնքն. քանզի ասացեալքն յաղագս մարդկան ասացան։ Երդ լուր. «Ինձ անարգիս քան զամենայն մարդկան տուաւ շնորհս այս աւետարանել հեթանո-

ասաց զանքննելի մեծութիւնն Քրիստոսի ,, : Օ՛րինչ է-
ցէ անքննելի . զոր ոչ է կարողութիւն հետազօտել : Ա-
յլեւս դարձեալ զկարդ խիտ և՛ի վերայ իւրեաց հարկա-
նէ՛ի նոսա զնեռան . քանզի եթէ առատութիւնն ան-
քննելի է , զիա՛րդ որ զառատութիւնն պարգևէ՝ անքննե-
լի չիցէ : “ Այս առ՛ի լուսաւորել , ասէ , զամենեսեան ե-
թէ զինչ է տնօրէնութիւն խորհրդոյն որ ծածկեալն
է առ ա՛ծ . զի ծանիցի այժմ իշխանութեանց և պետու-
թեանց՛ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութի՛ն
այ ,, : Ցեսանե՞ս որքան պատիւ մարդկային բնութեանս
եղև , զի՛ի ձեռն մեր և ընդ մեզ վերին զօրութիւնքն
ծանեան զանճառելի զթածութիւն :

Այս ուստի՞ է յայտ եթէ յաղագս երկնաւորացն այ-
նոցիկ ասիցէ , քանզի իշխանութիւն և պետութիւն՝ և
զդևս գիտէ կոչել ասելով . “ Ոչ է մեզ մարտ ընդ ա-
րեան և մարմնոյ , այլ ընդ պետութիւնս և ընդ իշխա-
նութիւնս և ընդ աշխարհակալս յաւիտենից այսոցիկ ,, .
մի՛ գուցէ և աստ զայն ասիցէ եթէ դևք զայս գիտացին :
Այս ոչ երբեք . այլ յաղագս վերին զօրութեանցն . քան-
զի ասելով պետութեանց և իշխանութեանց , ՛ի վերայ
հաճ՝ և որ յերկինս են : Ա՛ստ որոց և աշխարհակալս
զնոսա ասէ , ցուցանելով եթէ անգնալի է նոցա յեր-
կինս . և զապստամբութիւնն զամենայն՛ի մերձաւոր աշ-
խարհիս միայն ցուցանէ : Ցեսեր զիարդ ընդ մեզ և՛ի
ձեռն մեր ծանեան զայս :

Այլ՛ի պարտուցն հատուցումն այսուհետև զբանն
ածցուք , ցուցանելով եթէ ոչ գիտեն զնորա զօրութի՛ն
պետութիւնք և իշխանութիւնք : Այս զայս ոչ ասէ Պաւ-
ղոս , ոչ Դաւիթ և ոչ Եզեկիէլ , այլ միւս ումն անօթ
սուրբ , ինքն որոտման որդին , սիրելին Քրիստոսի Յով-
հաննէս , որ՛ի վերայ լանջից տեառն անկաւ և զա՛ծային
աղբերան անտի ընկալաւ : Այս զինչ ասէ նա . “ Օ՛ա՛ծ
ոչ ոք ետես՛ի մարդկանէ երբեք ,, : Ա՛ճառատապէս ո-
րոտման որդի , զի քան զվող պայծառագոյն արձակեաց
զձայն , որ բաւական է զամենեսեան զհակառակողս ա-
մաչեցուցանել : Ա՛յլ տեսցուք և զընդդիմանն :

Օ՛րինչ ասես , ով Յովհաննէս , ասա ինձ . “ Օ՛ա՛ծ
ոչ ոք երբեք ետես ,, : Այս զինչ արասցուք զմարգարէն ,
որք ասեն թէ տեսաք զա՛ծ . քանզի Դաւիթ ասէ . “ Ցե-

սի զներ նստեալ ՚ի վերայ աթոռոյ բարձու և վերամբարձելոյ ,, . և Պանիէլ դարձեալ . “ Տեսի մինչև աթոռք եդան և հինաւուրցն նստաւ ,, . և Ի՛նքիա . “ Տեսի զներ ՚ած Իսրայէլի նստեալ յաթոռ իւրում ,, . և միւս մարգարէ դարձեալ . “ Տեսի զներ զի կայր ՚ի վերայ սեղանոյն , և ասէ ցնա՝ Հար զՀաշտարարդ ,, : Այս յոլովս այսպէս է ժողովեալ վկայութիւնս : Այս զնաթրդ Յովհաննէս ասէ՝ զի՛ծ ոչ ոք ետես երբեք : Ո՛չ ուսցիս եթէ զՀաւատին՝ որ է հասուննն՝ և զհաստատունն գիտութիւն ասէ : Պանզի ամենայն այնոքիկ խոնարհմունք էին , բայց զվէ՛հ բնութիւն նորա ոչ ոք ՚ի նոցանէ ետես . և յայտ ՚ի զանազանապէսն զնա տեսանելոյն է : Ա՛ստն զի ՚ած պարզ է և առանց շարադրութեան և առանց ձևոյ . իսկ նոքա ամենեքեան ձևս տեսանէին ազգի ազգիս : Այս զայս դարձեալ ՚ի ձեռն միւսոյ մարգարէին երևեցուցանէ , հաւանեցուցանելով զնոսա եթէ ոչ զհաստատ բնութիւնն տեսին . “ Այս տեսութիւնս յաձախեցի , և ՚ի ձեռն մարգարէից նմանեցայ ,, . ոչ զնոյն ինքն զբնութիւնն զիմ ցուցի , այլ , ասէ , նուաստացայ առ տեսողացն տկարութեան : Յովհաննէս ոչ յաղագս մարդկան ասէ՝ թէ զի՛ծ ոչ ոք ետես երբեք . քանզի այս յայտ էր յասացելոցն յայնցանէ՝ ՚ի մարգարէական Ճառիցն ասեմ , որ ասէ՝ եթէ “ Տեսութիս յաձախեցի , և ՚ի ձեռն մարգարէից նմանեցայ ,, , և որ առ Ո՛սէեն եղև հրաժարումն . քանզի նա փափագեալ տեսանել զնա աներևակի , ասաց ՚ած . “ Ո՛չ ոք տեսցէ զերեսս իմ և կեցցէ ,, : Ա՛յսպէս զի այն էր մեզ յայտնի խոստովանեալ :

Ա՛յդ ոչ յաղագս մերոյ բնութեանն միայն ասէ , այլ և վասն վերին զօրութեանցն՝ զի՛ծ ոչ ոք ետես երբեք . սորին աղագաւ և զմիածինն ՚ի ներքս ած՛ ուսուցող վարդապետութեանս : Ո՛չ մի ոք ասիցէ թէ ուսաւ է այս յայտ , ՚ի վերայ է՛ած . “ Ա՛միածինն որ ՚ի ծոց Հօր նա պատմեաց ,, . արժանի Հաւատոց ՚ի ներքս մուծանելով զուսմանն վկայութիւն և զվարդապետ : Ա՛կայն թէ և զՈ՛սէեն մեզ յայտնել կամէր , աւելորդ էր ասել թէ միածինն պատմեաց : Ա՛յլ նախ քան զՅովհաննու ասելն որպէս ՚ի միածնէն լսելով , յայտնի մեզ մարգարէն ասաց որպէս լուեալ յՀոր . բայց զի նուազագոյն քան

զյայն ժամու ասացեալսն Հանդերձեալ էր մեզ յայտնել՝ Թէ և ոչ վերին զօրութիւնքն զնա տեսին, յաղագս այնորիկ ՚ի մէջ ածէ զմիածինն վարդապետ։

Տեսութիւն աստանօր զգիտութիւնն իմա։ Քանզի ոչ բիբք և աչք և կոպիք են անմարմնոյն զօրութեանց. այլ որ է ՚ի մեզ տեսութիւն, այս ՚ի նոսա գիտութիւն է։ Որպէս զի յորժամ լուիցես՝ Եթէ զնծծ ոչ ոք ետես երբեք, զայն իմա լսել՝ Եթէ զնծծ ոչ ոք երբեք ծանեաւ հաստատութեամբ։ Եւ վասն սերովբէիցն, յորժամ Եթէ ծածկէին զաչսն և զդէմսն պարսպէին, և քերովբէքն զարձեալ զնոցն առնէին, մի աչս և մի բիբս կարծիցես, քանզի մարմնոյ են այս ձևք. այլ ՚ի ձեռն այսցիկ զգիտութիւնն նոցա զեկուցանել հաւատա մարգարէին։ Եւ յորժամ ասիցէ զխոնարհումն նմա տեսանել ոչ հանգուրժեցին, ոչ այլ ինչ ասէ, այլ Եթէ ըզհաստատուն գիտութիւն նորա և զհաւատս ՚ի հաստումն նորա ոչ կարացին բերել, և ոչ համարձակութեամբ հայել ՚ի վճիտ և ՚ի մաքուր բնութիւնն. այլ և ոչ ՚ի նմին ՚ի նուաստութեանն։ Եւ անկատար տեսանելն՝ չձանաչէին և։

Ասէ այսորիկ և աւետարանչին գիտացեալ Եթէ ոչ է մարդկային բնութեան զայն գիտել, և ոչ վերին զօրութեանցն հասանելի է ած, զնոյն ինքն որ յաջմէ նորա նստի և զամենայն զայս հաստատուն գիտէ, ածէ ՚ի մէջ ուսմանս այսմ՝ վարդապետ։ Եւ ոչ պարզաբար ասաց որդի. զի Թէպէտ և զայս էր ասացեալ՝ բաւական էր պապանձեցուցանել զանամօթիցն զբերանս։ Ո՞ր որպէս բազում օձեալք՝ և մի օձեալ, նոյնպէս և յոլով որդիք՝ և մի է որդի. յաւելուած բանին մատն զգերազանցութեին բաւականապէս ցուցանէր զմիածնին։ Այլ սակայն ոչ շատացաւ այնու. այլ ասելով՝ ոչ ոք զնծծ ետես երբեք, ՚ի վերայ կած. «Միածին որդին որ է ՚ի ծոց Հօր՝ նա պատմեաց»։ Ասէ ասաց միածին, և ապա որդի. վասն զի յոլովք անուանն Հաղորդութեամբ հատանեն զնորա զփառսն՝ մի ՚ի բազմաց զնա կարծեցուսցէ, զի որդի անուն Հասարակ է ամենեցուն. որ է՞ սեփական նորա և առանձին՝ և ոչ ումեք յանկապոյն, եղ յառաջագոյն՝ զմիածինն. զի նովաւ հաւատասցեն Թէ և հասարակն այն ոչ է հասարակ, այլ առանձին և տի-

բական նորա, և ոչ ումեք այլոյն այնպէս որպէս նմա յանկագոյն։ Այլ զի յայտնի առացեալքն լինիցին, ընդ-արձակագոյն դարձեալ զնոյն առացից։

Որդի անուն պատշաճի և մարդկան, յարմարի և Որդւոյ. բայց մեզ պիտակաբար, և նմա տիրապէս. իսկ միածինն՝ նորա միայնոյ է, և ոչ ումեք յայլոցն է պիտակաբար յանկաբար յանկագոյն։ Որդի զի անուամբ որ ոչ ումեք է յանկագոյն՝ բայց նմա միայնոյ, և զիւան և աս որ յոլովիցն յարմարի՝ նմա առանձին իմասցի, վասն այսորիկ յառաջագոյն ասելով միածին՝ ապա ասաց որդի։ Այլ եթէ ոչ իցէ բաւական, ասացից Թանձր և մարդկային, որ բաւական է և զկերկիր անկեալն ի մտածութիւնս միածնին փառաց հանել։

Այլ զինչ է այն։ “Ի ծոց հօր.,,։ Ցանձրագոյն է բանս. այլ բաւական է ցուցանել զհարազատութիւնն եթէ ամենայնիւքեան ընդունիցիմք։ Որպէս լսելով զաթոռ և զընդ աջմէ նստել, ոչ աթոռ կարծիցես և ոչ տեղի շուրջ բերեալ, այլ աթոռոյն անուամբ զպատուոյն զանայլայլութիւն և զուգութիւն զեկուցանէ, նոյնպէս և զծոցն ասելով մի ծոց կարծիցես ի մի տեղի, այլ ծոցոյն անուամբ առ ծնողն զմերձաւորութիւնն յայտնէ և յանդիման կացուցանէ։ Օ՛ի և ոչ Հայր ներքոյ զորդին ի ծոց ունել, եթէ ոչ նորին բնութեան էր. և ոչ նա հանդուրժէր, եթէ նուազագոյն բնութեան էր, բնակեալ ի ծոց հօր։ Որդի իբրև զորդի և զմիածին ի Հայրենի ծոցն կացեալ ճանաչել, զամենայն զՀօրն հաւատեաւ գիտէ։ Յաղագս այսորիկ և բանիցս այսոցիկ կատարած աւետարանիչն, զի զՀաւատսն այ գիտութիւնն յանդիման կացուցանիցէ, որ է վասն հօր, զի յաղագս գիտութեան էր բանն։ Այսպէս եթէ ոչ էր այն՝ էր աղաւաղ զծոցն ասաց։ Օ՛ի ոչ մարմին է ած, որպէս և ոչ իսկ է, թէ ոչ զհարազատութիւնն և զմերձաւորութիւն առ ծնողն յայտնէ, վայրապար և ընդունայն զբանն կընկենոյր։ Ի լիի. քանզի ոչ ինչ մնասի է զոր հոգին բարբառի, այլ զմերձաւորութիւնն որգւոյն առ Հայր յայտնէ։ Ահ և ոչ վերին արարածքն զնա տեսանեն, այս է գիտեն հանդերձ հաւատոյ[1]թ, ախորժելով արժանի հաւատացելոց յանդիման կացուցանել զերացն վարդապետ, զայս բան եդ, զի իբրև որդւոյ և միածնի և բնա-

կեցելոյ ՚ի հայրենի ծոց՝ յաղագս ՚ամի հաւատասցես և մի՛ ինչ յերկուասցիս այնուհետեւ։ Եւ եթէ յամառիցիս ոչ և ոչ՝ անամօթանալ կամիցիս, և զյաւիտենական կեանքն զայս առեմ գոլ յայտնի։ Ո՛վ ի որպէս յայնմ բանի որ առ Մովսէսն ասացաւ “Ես եմ որ էն,, զյաւիտենականն զեկոյց, նոյնպէս և այնու բանիւ ասացելով “Ես է ՚ի ծոց հօր,, զիշանջենաւոր գոլ ՚ի ծոց հօր կարողութիւն է իմանալ։

Արդ զի ամենայն արարածոց անհասանելի է բնութիւնն ՚այ, այնուքիւք ամենեքումբք ցուցաւ. Մնացեալ է այսուհետեւ յայտնել՝ եթէ որդի և հոգին սուրբ միայն հանդերձ ամենայն հաւաստութիւք զնա գիտեն։ Այլ զայս ՚ի միւս ևս խօսսն յապաղեսցուք, զի մի յաճախութեամբ հեղձուսցուք զչիշատակս ասացելոցս, ՚ի սովորականն պատուիրանն դարձուսցուք զբանն։ Եւ ո՛ր իցէ մեզ սովորական պատուիրանն։ Ո՛վ ի աղօթս անընդհատս առնիցեմք արթուն միօք և զսաւթուն հոգւով. զի և յառաջնումն յաղագս այսոցիկ ասացեալ, տեսի պատրաստաբար հնազանդս զամենեսեան. և յիմարութիւն է զհեղգացեալսն բամբասել, և որք ուղղենն ոչ գոլել։ Արդ կամիմ գոլել զձեզ այսօր, չնորհ ձեզ հատուցանել փոխանակ հնազանդութեանն։ Եւ է չնորհս եթէ ուսուսցուք ձեզ ընդեր այն աղօթք լինին նախ քան զայլսն, և զվտանգեալսն ՚ի դիւէ որ չար մոլորութեամբն են ըմբռնեալք՝ մուծանել հրամայէ սարկաւագն յայնժամ, և խոնարհեցուցանել զգլուխն։ Նո՛ր աղագաւ զայս առնէ։

Ազար չղթայք և դժնդակք՝ դիւացն զօրութիւն է, չղթայք քան զամենայն երկաթ հզօրագոյն։ Արդ զոր օրինակ յորժամ դատաւորն յատեան հանդերձեալ է գալ և ՚ի վերայ բարձրաբանդակ բեմի նստեալ, կապանապահքն որք ՚ի կապանարանն են բնակեալք զամենեսեան արտաքս ածեն ՚ի տանէն, առաջի լարոցն և ատենին վարագուրաց նստուցանեն, խռուացեալ և աղտեղեալ վարսիւքն, պատառոտուն զգեցեալս, նոյնպէս և հարքն օրինադրեցին. Քրիստոս հանդերձեալ իբրև ՚ի վերայ բարձու նստեալ ՚ի բեմին, և ՚ի խորհրդեանս յայտմ երևեալ, զվտանգեալսն ՚ի դիւէ իբրև զկապեալս ումանս ՚ի ներքս ածել. ոչ զի պատուհաս պահանջիցին

զյանցանացն որպէս կապեալքն այնոքիկ, ոչ զի՛ ի տանջանս և՛ ի պատիժս ընդունիցին, այլ զի՛ ի բազմութեան և ամենայն քաղաքիս՝ ի ներքս մերձ եղելոց՝ ի հասարակս յաղագս նոցա պաղատանաց լինիցին, ամենեքեան՝ ի միասին՝ ի հասարակաց տեառնէն յաղագս նոցա հայցելով, և ողորմել աղաչելով հանդերձ ուժգին գոչմամբ։

Ա՛յդ յայնժամ աղաչեալք, մանաւանդ եթէ ըստգտանեաք ողբ թողուին զայսպիսի աղօթս և՛ ի ժամուն յայնմ՝ արտաքոյ դեգերիչին. իսկ այժմ որ՝ ի ներքս են՝ մեղադրել կամիմ, ոչ զկալ ինալ՝ ի ներքս, այլ զի մնալ՝ ի ներքս՝ քան որ արտաքոյ շրջինն՝ ոչ ինչ լաւագոյնք. անկեալ կան յահաւոր ժամուն յայնմ ընդ իրեարս խօսին։ Օ՛ ինչ առնես, ով մարդ. տեսանես այդքան կապեալս յեղբարցդ քոց մերձ կացեալս, և դու յաղագս ոչ ինչ օրինաւոր իրաց խօսիս. կամ եթէ դէմքդ միայն ոչ իցեն բաւական զարհուրեցուցանել զքեզ և յախտակցութիւն ածել։ Ա՛յլ եղբայր քո՛ ի կապանս, և դու՝ ի պղերգութեան. և զմի ունիցիս թողութիւն, ասա ինձ, այսպէս անցաւակից լինելով, այսպէս անմարդի, այսպէս խակ։ Ա՛ի գուցէ՝ ի խօսելն քում և՛ ի յօլանալ և՛ ի տաղտկալ՝ դու ոք անտի վազելով պարապորդ և մաքրեալ գտանելով զքո անձնդ, մտանիցէ բազում համարձակութեամբ անդուռն զտունդ գտեալ։ Զանազի ոչ էր պարտ և արժան հասարակ ամենեցուն աղերս արտասուաց արձակել՝ ի ժամուն յայնմ և Թացեալս տեսանել զամենեցուն զաչս, ողբք և հառաչմունք լինել յամենայն եկեղեցւոջս։ Օ՛ ի չետ հաղորդութիւնէ խորհրդոցս, զկնի վայելման Թողութեանս, չետ մերձենալոյս՝ ի Քրիստոս զօրեաց գայլն այն յափշտակել՝ ի հօտէս գառինս և ունի ընդ ինքեան. և դու տեսանելով զթշուառութիւնն ոչ արտասուես։ Ա՛ւ ոչ այսոքիկ պատասխանեաց իցեն արժանաւորք։

Ո՛չ ախորժես ցաւակից լինել եղբօրն. գոչեաց յաղաչս քո անձինդ, զարհուրեցիր և ընդոստիր։ Ա՛թէ զդրացւոյն քո տեսանելիր զտուն հրդեհեալ, ասա ինձ, թէպէտ և քան զամենեսեան ոք պատերազմող էր դրացին, ոչ արդեօք ընթանայիր շիջուցանել զհրդեհն, զարհուրելով մի գուցէ հուրն ձանապարհաւ գնալով և ըզքումմէ նախագրացն բուռն հարկանիցէ։ Օ՛ նոյն և յա-

զգաս վտանգելոյն ՚ի դիւէ զմեռաւ ած. քանզի բոց իմն է և հրդեհ չար դիւացն զօրութիւն։ Օ գուշացիր մի դուցէ և ՚ի քում անձնդ ժամանիցէ Ճանապարհաւ՝ գնալով դէն. և յորժամ տեսանիցես մերձաւոր, հանդերձ բազում Ճեպով փախիր առ տէրն քո. զի տեսանելով զքո ջերմութիւն և զընդոստուցեալ անձնդ, անգնալն նոցա վարկցի այնուհետև զվիտզ քո։ Ոչ զի եթէ տեսանիցէ յօրանչեալ և ծուլացեալ, իբրև ամայի օթեվսն վազվազակի մնանիցէ. ապա եթէ պնդեալ և զարթուցեալ և զնորուն զերկնից կախեալ, և ոչ ընդդէմ հայել իշխեսցէ այնուհետև։ Այլ զի Թէպետ զեղբարն արհամարհիցես, այլ ՚ի քո անձնդ խնայեա, և զքո զոգւոյդ զմուտս խիչ չար դիւին։

Այ ինչ այնպէս նմա զհակառակ մեզ Ճանապարհն պարապեալ սովորեաց, որպէս աղօթք և պաղատանք անհատք։ Օ յի և նոյն ինքն հրամայել սարկաւագին ամենեցունն և ասել. "ուղղորդ կացցուք, բարիոք կացցուք,,, ոչ վայրապար և ընդունայն օրինադրեցաւ. այլ զի զվայրանկեալ խորհուրդն վերստին ուղղիցեմք, զի զքաւինն որ յաշխարհական իրաց լեալ է ՚ի մեզ՝ արտաքս ընկեցցուք, ուղղորդ առաջի ՚ից կանգնել կարիցեմք զմեր անձինս։ Այր և բանն ձգէ յայս հրամայելով ուղղել լուսյուք Պաւղոսի որ նոյն օրինակ այսու բանիւ վարի. քանզի առ մարդիկ ՚ի վայր անկեալս և դժնդակութեանցն ՚ի վերայ եղելոց հրաժարեալս գրելով ասէր. "Օ լքեալ ձեռս և զլուծեալ ծունկս ուղղեցէք,,։ Օ ինչ արդեօք ասեմք, միթէ վասն ձեռացդ և ծնկաց մարմնոյ ասէր. և ոչ երբէք. զի ոչ ընդ սուրհանդակ մարդկան և ոչ ընդ բռնամարտիկս խօսէր, այլ զխորհրդոյն զզօրութիւն որ ՚ի ներքսն է կանգնեալ՝ բանիւքս այսոքիւք պատուիրէր։ Օ մտաւ ած առ ո՛ մերձ կաս, ընդ ո՛ հանդերձեալ ես կոչել զած. ընդ քեզոլբէսն։ Ոմն զպատուակիցն քո. բաւական են քեզ այսոքիկ յարթնութիւն, յորժամ զմտաւ ածդես եթէ զմարմին զգեցեալ և ընդ մոյ շաղեալ՝ ընդ անմարմին զօրութիւնսն արժանի եղեր օրհնել զհաստարակաց տէրն ամենեցուն։

Ընդ մի ոք այսուհետև լքուսցէ զյօժարութիւնն, ոճծայնոցն հաղորդեսցի և խորհրդական երգոյն. մի ինչ աշխարհական ՚ի ժամուն յայմմ, այլ զամենայն զերկ-

բայինան ՚ի մոացն արտաքս սահմանելով և բովանդակ զինքն յերկինս փոփոխելով, որպէս ՚ի նոյն ինքն յաթոռն փառաց մերձ կացեալ և ընդ սերովբէեան Թռուցեալ, այնպէս զամենասուրբ զօրհնութիւնսն մատուսցէ փառաց և մեծութեանն ՚ով։ Յաղագս այնորիկ և բարիոք կալ ՚ի ժամուն յայնմ հրամայիմք. քանզի կայն բարիոք ոչ այլ ինչ է, այլ այնպէս կալ որպէս պատշաճ է մարդոյ կալ առաջի ՚ով հանդերձ արթուն և զուարթացեալ անձամբ։ Այս զի առ նոյն ինքն Հոգին բանս ասի, և զայս դարձեալ Պաւղոս յայտնեաց ասելով. "Այսպէս կացէք ՚ի տէր, սիրելիք,,։ Օ՚ի զոր օրինակ աղեղնաւորն եթէ կորովի հանդերձեալ իցէ արձակել զնետն, նախ առաջին հոգ տանի կալոյն իւրում, յանդիմանն նպատակին հաւաստեաւ զինքն կացուցեալ նկատէ զնետաձգութիւնն։ Այսպէս և դու հանդերձեալ նետաձիգ լինել ՚ի չար գլուխ բանսարկուին, կայա՛ նի խորհրդոյդ հոգ տար յառաջագոյն, ուղղորդա՛ զինչ և անխափանս զքո հաստատելով զկայանն, զի կորովիա արձակիցես հակառակ նորա զնետն։ Այս յաղագս աղօթիցս այսոքիկ։

Այլ զի պղերգութեամբ յաղօթսն և այլ ինն իրս յաւէտ տրամութեամբ լի իմացաւ բանսարկուն, և զայս պարսպելի է գնորա Հանապարհն։ Այս զինչ է զոր չարագործեաց վատաշուէր դևն այն։ Տեսանելով զմեզ այսպէս իբրև զմի մարմին պնդեալս, և հանդերձ յոլով հաւատովութեամբ ընդ առաջեալս բևեռեալ, իջուցանել զոք յիւրոյ սպասաւորացն, ՚ի ձեռն խորհրդակցութեան և պատուիրելոյ միանգամայն ՚ի լինելս մերում յայամ լսելութեան ոչ իշխեաց. քանզի գիտէր եթէ ոչ ոք ՚ի ձէնջ ներեսցէ այնց խորհրդակցաց. այլ աւազակս ոմանս և քաջահատուս խառնելով ընդ բազմութեանն՝ պատրաստեաց յոլովից բազում անգամ ոք այսր էին ժողովեալ, զսակին զոր ունէին առեալ՝ գողացեալ. և այնքիկ յոլովակի և յոքունց աստ հանդիպեցան։

Այդ զի մի այս միշտ լինիցի և մի զյօժարութիւն լսելութեանս ընչիցն ՚ի նաւ շինօղացն բազում ժամանակաւ զայս կրելով, պատուիրեմ և խորհրդակից լինիմ ամենեցուն ձեզ, մի ոք ոսկի բառնալով մնացէ այսր. որպէս զի մի ձեր փոյթ ՚ի լսելութիւնս Թորշակ լինիցի

նորա չարագործութեանն, և մի փափագուիմն ատ դե-
գերանացդ ձերոց լեալ՝ ընչից զողութեամբ աղաւա-
ղեսցի։ Օ՛ի և բանսարկուն զայդ պատրաստեաց, ոչ զի
աղքատս զձեզ գործեսցէ, այլ զի ընչից կորստեամբ ՚ի
Թախանձանս զձեզ արկանելով, ՚ի բազում յաժարա-
մտութենէդ որ ՚ի լեզուութիւնս՝ ՚ի բաց տարցի։ Օ՛ի և
զՅովբ յամենայն ընչից մերկացոյց, ոչ զի աղքատ ա-
րասցէ զնա, այլ զի մերկացուսցէ ՚ի բարեպաշտութե-
նէն. քանզի փութալի է նմա ոչ յընչից զրկել զոք,
զի գիտէ եթէ ոչ ինչ է այն, այլ զի ընչից կորստեամբ
զանձն ՚ի մեղս արկանիցէ. և եթէ ոչ զայն կարասցէ
առնել, ոչ ինչ Համարի յարմարեալ երբեք։

Ա՛րդ գիտելով զնորա զբարսն, սիրելի, յոյժամ բարձ-
ցի ՚ի քէն ոսկի ՚ի ձեռն աւազակաց կամ թէ յայլմէ
իմեքէ պատճառէ, փառաւորեա զտէրն և առաւել ևս
լինիս շահեալ, և կրկին տայցես նմա զվէրն, զի ոչ զը-
ժուարացարն և զի գոհացարն։ Ա՛նզի եթէ տեսանէ
եթէ նուաստացուցանէ զքեզ ընչից կորուստն և հա-
ւանեցուցանէ զայնու գժուարել, ոչ երբէք ՚ի բաց կաց-
ցէ զնոյն գործելով. ապա եթէ տեսանիցէ եթէ ոչ մի-
այն ոչ հայհոյեցեր զարարիչն քո զԱծ, այլ և գոհա-
ցար ևս զնմանէ ՚ի վերայ իւրաքանչիւր ուրուք դիպեցե-
ղոց գժնդակութեանցն, ՚ի բաց կացցէ զփորձութիւնն
՚ի վերայ ածելոյ, գիտելով եթէ գոհացողութեան քեզ
լինին պատճառք գժնդակութեանցն իրք, և պայծառա-
գոյնս քեզ գործեսցէ զպսակն և առաւել ևս պչալեա-
նական։ Ասպէս և Յովբայն եղև. վասն զի ՚ի բաց բառ-
նալով զնորա զինչն և զմարմինն հարկանելով՝ եառես
գոհացող լեալ, ոչ ևս մերձենալ իշխեաց. այլ զվատ-
թարն և զանխերժելի ընդունելով զպարտութիւն ՚ի բաց
գնաց, պայծառագոյն գործելով զնոյ հաճատակն։

Ա՛րդ զայս և մեր իմացեալ, ՚ի միջէ միայն երկիցուք՝
՚ի մեզաց. բայց զայլն ամենայն առաքինաբար ընկալ-
ցուք, եթէ ընչից իցեն տուգանք, եթէ հիւանդութիւն
մարմնոյ, եթէ խռովութիւնք իրաց, եթէ գժուարիք,
եթէ զրպարտութիւնք, եթէ այլ ինչ այնպիսի ՚ի վե-
րայ ածիցէ գժնդակութիւնս. քանզի այսոցիկ բնու-
ոչ միայն ոչ վնասէ զմեզ, այլ և մեծապէս օգտէ. եթէ
հանդերձ գոհութեամբ այսմ տանիցեմք, յոգունս մեզ

գործէ զվարձս։ Յեսանէս զի և Յովք հանդերձ պատկօք համբերութեան և արութեան այնու՝ ընկալաւ կրկնապատիկ զկորուսեալն զամենայն։ Ոչայց քեզ ոչ կրկնապատիկ և երեքպատիկ, այլ հարիւրապատիկ եթէ բերիցես առաքինաբար, և զկեանս յաւիտենական ժառանգեսցես. որոյ լիցի ամենեցունց մեզ հանդիպել շնորհօքն Քրիստոսի Յն մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

ՑԱՂԱԳՍ ԱՆՀԱՄԱՆԵԼԻՈՑՆ

Յորժամ հանդերձեալ ոք իցէ զերկայնագոյն պատճառն բուռն հարկանել և որ յոլով բանից կարօտեալ իցէ, ոչ՝ի միում աւուր և կամ յերկուս և կամ յերիս, այլ յաւետ՝ի յոլովս, հարկաւոր կարծեմ այնպիսումն կատարել ոչ զամենայն միանգամայն, և ոչ՝ի միասին դնել՝ի լսողացն միտս զվարդապետութիւնն, այլ յոգունս կատարել զմասունս՝ թեթեւագոյն և դիւրընկալ որոշմամբն այնու առնել զբանին ճանրութիւն։ Վասն զի լեզու և լսելիք և իւրաքանչիւր ոք՝ի զգայութեանց մերոց չափս և օրինակս և սահմանս կացուցեալ ունին. և եթէ ոք ձեռնարկիցէ ըստ այնմ սահմանս ելանել երբեք, արտաքս անկանի և՝ի զօրութենէն յայնմանէ։ Օ՜ինչ քաղցրագոյն քան զլոյս, ասա ինձ, և զինչ հեշտալի քան զՀառապայթս. այլ սակայն քաղցր այս և հեշտալիս յորժամ առաւել քան զչափն յերկարեսցի յաչս մեր, դժուարելի լինի։ Յաղագս այսորիկ և ածգիշեր առաջնորդեաց լինել զկնի տունջեան. զի աչխատեալս առնելով զաչն, զնստուսցէ զկոպսն, զադարեցուսցէ զբիբսն, և հանգուսցէ զաշխատեալ՝ի մեզ զտեսանողական զօրութիւնն, և առ հանդերձեալ տուընջեանն տեսութիւնս պատեհագոյնս պատրաստեսցէ։ Այորիկ աղագաւ արթնութիւն և քուն ընդդիմակք իրերաց՝ չափաւորութեամբն միմեանց նմանապէս հեշտալիք են. քաղցր նմանապէս կոչեմք և զքուն, որ՝ի բաց տանի զմեզ՝ի լսանց։ Այոյնպէս և անչափութիւնն ամենայն ուրեք ժանտ և դժուարելի է. իսկ չափաւորն հեշտ

և պիտանացու և կամակ։ Յաղագս այսորիկ և մեք չորրորդ և հինգերորդ օր ունիմք այսուհետև յորմէ հետէ յաղագս անհասանելւոյն առնեմք բանս, և ոչ այսօր զնա աւարտել պատրաստեցաք. այլ զչափաւորութիւնն ձերումդ սիրոյ դասելով, դարձեալ հանգուցանել զիմաստ ձեր զմտաւ ածաք։ Եւ ոչ արդեօք յառաջնումն զբանն թողաք, հարկաւոր է անտի դարձեալ առնուլ. վասն զի մի իմն է վարդապետութեան յարմարութիւն։

Լսեաք յայնժամ եթէ որոտման որդին ասաց՝ թէ "Օ՜ճ ոչ ոք ետես երբեք, բայց միածին որդին որ է ի ծոց հօր՝ նա պատմեաց"։ Լսեսցո՛ւք հարկաւոր է ուսանել ուր զսոյն զայս պատմեաց միածին որդին ՝այ։ "Պատասխանի ետ Հրեիցն և ասաց. իբր ոչ եթէ զըհայր ոք ետես, բայց որ էնն յայ՝ նա ետես զհայր"։ Տեսութիւն դարձեալ աստանօր զդիտութիւնն ասէ. և ոչ ասաց պարզաբար՝ եթէ ոչ ոք ետես զհայր՝ և լռեաց, զի մի ոք յաղագս մարդկան միայն զայս ասացեալ կարծիցէ. այլ կամելով յուցանել եթէ ոչ հրեշտակք, ոչ հրեշտակապետք և ոչ վերինն զօրութիւնքն, ի վերայ ածելովն զայս յայտ արար. քանզի ասացեալ "Իբրև ոչ եթէ զհայր ոք ետես երբեք"՝ ի վերայ կաց. "Բայց որ էնն յայ, նա ետես զհայր"։ Ո՛չ թէ ասացեալ էր պարզաբար զՔ՜ճ ոչ ոք ետես, յորմէ՛ք ի լոռդայն թերևս արդեօք յաղագս մերոյ բնութեանս ևեթ կարծէին զասացեալն. իսկ այժմ ասելովն ոչ ոք, յաւել՝ բայց որդի, յաւելուած միածնին զամենայն արարածս ի բաց փակեաց։

Եւ արդ զինչ ասէ, թէ և զհոգին սուրբ. և ոչ երբեք, զի ոչ արարածոց է նա մասն. և ոչ ոքն՝ այս առ ի յորոշումն արարածոյն միայնակ։ Եւ ոչ եթէ յաղագս հօր ասիցէ՝ զորդի ի բաց մերժէ, և ոչ եթէ վասն որդւոյ՝ զհոգին արտաքոյ հանէ։ Եւ զի այս այսպէս է, աստուստ արդէն արարիչ երևելի. զի ոչ ոքն ոչ յանարգութիւն հոգւոյ, այլ առ ի զատուցումն արարածոց ասացաւ, յաղագս սորին դիտութեանս այսորիկ զոր միայն որդւոյն ասէ գոլ՝ լուիցուք, խօսելով Պաւղոս առ կորնթացիսն ասէր։ Եւ զինչ ասաց. "Ոչ ոք գիտէ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ ի նմանէ է. նոյնպէս և զՔ՜յ ոչ ոք գիտէ, եթէ ոչ հոգին ՝այ"։

Ա՛րդ որպէս ասա ոչ ոքն ասացեալ՝ ոչ արտաքս Հանէ զորդին, նոյնպէս և ՚ի Քրիստոսէ ոչ ոքն ասացեալ՝ ոչ ՚ի բաց մերժէ զՀոգին սուրբ։ Ասասի յայտ է եթէ ձըշմարիտ է ասացեալս։ Ո՛չ եթէ ասէին եթէ "ոչ ոք է՛ տես զՀայր, եթէ ոչ որ յայն է,, զՀոգին արտաքս մերժէր, աւելորդ էր Պաւղոսի ասէն՝ եթէ որպէս մարդ զինքեան գիտէ, նոյնպէս և Հոգին սուրբ զայն ստուգապէս գիտէ։ Ա՛յսպէս մի ասացաս, վասն զի զնոյն զօրութիւն ունի և զոյժ։ Չայեաց. "Ա՛ի ՚ձեզ, ասէ, Հայր յորմէ ամենայն, և մի տեր Յիսուս որով ամենայն,,։ Ա՛րդ եթէ միւն ասել զՀայր՝ ՚ի բաց Հանէ զորդի յաստուածութենէն, և մի ասել տեր զորդի՝ ՚ի բաց Հանէ զՀայր ՚ի տերութենէն. և սակայն ոչ [1] արտաքս Հանէ ՚ի տերութենէն զՀայր՝ մի ասել տեր Յիսուս. ապա և ոչ որդի արտաքս ելանէ յաստուածութէն ասէն մի ՚ձեզ Հայր։ Ա՛րդ եթէ ասիցեն եթէ յաղագս այնորիկ ասացաս մի ՚ձեզ Հայր, զի ՚ձեզ է և որդի և ոչ այնպիսի ՚ձեզ իբրև զՀայր, յարմարի զայն ասել յորմէ նոքայն եղեն զյաւելուածն. քանզի ոչ մեք ասեմք եթէ վասն այնորիկ ասացաս մի տեր Յիսուս Քրիստոս, զի տեր է Հայր՝ ոչ այնպիսի տեր իբրև զորդի։ Այս եթէ այս ամբաւշտութիւն է, և ոչ առաջինն ունի բան։ Ա՛յլ որպէս մի տերն ոչ ՚ի բաց մերժէ զՀայր ՚ի հաւասար տերութենէն, նոյնպէս և ոչ արտաքս Հանէ զորդի ՚ի Հնմարիտ և ՚ի հարազատ ՚ձեզութենէն, և ոչ Հօր միայնոյ զայն ցուցանէ։

Այլ զի ՚ձեզ է որդի և այնպիսի ՚ձեզ որպէս և Հայր, բայց կայ մեայ աւելի որդի, ՚ի նմին ինքն ՚ի յաւելուածոյն է յայտ։ Վասնզի եթէ ՚ձեզ անուն այս՝ Հօր միայն էր և զայլ ինչ գոյացութիւն ոչ կարէր յայտնել մեզ, այլ միայն զանձին և զառաջինն զայն, որպէս և առանձին նորա աւելի էր ծանօթագոյն, աւելորդ Հօրն յաւելուած կայր։ Ա՛ւ ասն զի բաւական էր նմա ասել ՚ձեզ, և Հանապազաք որպէս էր և ասացեալն. այլ զի ՚ձեզդ անուն Հասարակ է որդւոյ և Հօր, և ասելովն մի ՚ձեզ՝ ոչ յայտնէր թէ զումնէ ասէր Պաւղոս, յաղագս այնորիկ ասացեալ Հօրն յաւելուածով. զի յայտնեսցէ թէ վասն առաջինն էութեան և միածնին ասէ, որպէս ոչ բաւա-

1 Պակասէր յօրին. ոչ արդարև . . . զի ՚ձեզ Հայր. յաւելու ՚ի յունէն։

կան եղելոյ ՝ած անուն զնա ցուցանելոյ. զի և հասարակ է անուն նորա առ որդին։

Վասն անուանցն են ումանք հասարակք և ումանք առանձնակք. հասարակք զի զանայլևայլելին ցուցանեն բնութիւն, և առանձնակք զի զիւրաքանչիւր ուրուք նկատեսցեն զէութիւն։ Այսու զի հայր և որդի առանձինն են իւրաքանչիւր բնութեամբ. իսկ ՝ած և տէր հասարակ։ Այլ զի եղ հասարակ անուն զմի ՝ածն, կարօտացաւ և առանձնակին, զի ծանուսցէ զորմէ ասէն, որպէս զի մի լինիցի անկանել ՚ի Արիելի մոլորութիւնն. և զի ոչ ՝ած անուն մեծագոյն է քան զտէր, և ոչ տէր նուազագոյն քան զ՝ած, յայտ անտի է։ Այլ հնուամբ առնային ուրեք յաճախապէս հայր՝ տէր ասէ. “Տէր ՝ած քո տէր մի է,,. “Տեառն ՝այ քում երկիր պագցես և զնա միայն պաշտեսցես,,. “Այեծ է տէր և մեծ զօրութիւն նորա, և իմաստութեամբ նորա ոչ գոյ թիւ,,. և դարձեալ. “Ընանիցեն զի անուն քո տէր է, և դու միայն բարձրեալ ես ՚ի վերայ ամենայն երկրի,,։ Այս սակայն թէ նուազ էր քան զ՝ածն և անարժան բնութեանն այնմ, ոչ էր պարտ ասել “Ընանիցեն զի անուն քո տէր,,։ Այլ զարձեալ եթէ ՝ածն մեծ էր քան զտէր և պանծալի, ոչ էր պարտ ըստ նոցա զնուազն զօրդի ՚ի հօրէ եկեալ անուամբն հօր կոչել, եթէ միայն առանձին էր նորա։ Այլ ոչ է այս, ոչ է. զի և ոչ որդի քան զհայր նուազագոյն է, և ոչ տէր անուն քան զ՝ած վատթարագոյն է։ Յաղագս այսորիկ և վասն հօր և վասն որդւոյ անզանազանաբար վարին անուամբք այսոքիւք։

Ասդ որպէս լուարուք զհայր տէր կոչեցեալ, բեր ցուցուք և զորդի ՝ած. “Այհա կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Այմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ ՝ած,,։ Ցեսեր հօր անուն տէր, և որդւոյ ՝ած անուն։ Ոչ ի որպէս անդ ասէ “Ընանիցեն զի անուն քո տէր է,,, նոյնպէս և աստ ասէ “Կոչեսջիք զանուն նորա Այմմանուէլ,,. և դարձեալ. “Ծանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, և կոչի անուն նորա հրեշտակ մեծի խորհրդոյ ՝ած հզօր,,։ Վիտեաս ինձ զմարգարէիցն զհանճար և զհոգևոր իմաստութիւնն. զի մի պարզաբար ասելով ՝ած՝ կարծեսցեն յաղագս հօր ասել, զանօրինութիւնն զառաջինն յիշեն. զի ոչ հայր ՚ի կուսէ ծնաւ և

ոչ մանուկ եղև։ Եւ դարձեալ միւս ևս մարգարէ այսպէս ինձ ասէր յաղագս նորա. "Սա ՅԱԾ ՄԵՐ, ոչ ոք այլ համարեսցի ընդ նմա,, 'ի վերայ էած. "Եգիտ զամենայն ձանապարհս իմաստութեան, և ետ Յակոբայ ծառայի իւրում և Իսրայէլի սիրելոյ 'ի նմանէ. զկնի այնորիկ 'ի վերայ երկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ,,։ Եւ Պաւղոս. "Յորոց Քրիստոս ըստ մարմնոյ, որ է 'ի վերայ ամենեցուն ՅԱԾ օրհնեալ յաւիտեանս ամէն,,. և դարձեալ. "Ոմանցն պատնիկ կամ ապահ ոչ ունի ժառանգութիւն յաքթայութեանն Քրիստոսի և այ,,. և դարձեալ. "Ի յայտնութենէ մեծին այ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի,,։ Եւ Յովհաննէս նոյնպէս զնա կոչելով ասէր. "Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ ՅԱԾ, և ՅԱԾ էր բանն,,։

Այո, ասեն, այլ զայն ցոյց ծուր ընդ հօր զնա միաբանելով գիւրք՝ տէր զնա կոչեն։ Եւ ոչ զայս ևեթ ցուցանեմ, այլ զի և տէր զՀայր կոչեն, և տէր զորդի. և զի ՅԱԾ զՀայր կոչեն և ՅԱԾ զորդի, Հաւանգամայն զնելով զերկոսեան անուանն։ Եւ մի իցէ զայս գտանել։ Այսպէսվ երբեմն ընդ Հրեայս Քրիստոս ասէր. "Ո՞ւրիշ Թուի յաղագս Քրիստոսի. և նոքա ասէին ցնա 'Դաւթի որդի է. ասէ ցնոսա. և զիա՞րդ Դաւիթ տէր զնա կոչէ ասելով, ասաց տէր տեառն իմում, նիստ ընդ աջմէ իմմէ,,։ ԶԱյս տէր և տէր։ Այսուժէս ուսանել Թէ ուր ՅԱԾ և ՅԱԾ կոչէ՝ զՀայր և զորդի միանգամայն գնելով, լուր և մարգարէին Դաւթի և առաքելոյն Պաւղոսի, որք զայսոսիկ յայտնեն մեզ. "Այո՛ քո ՅԱԾ յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քո։ Սիրեցեր զարդարութիւն ևատեցեր զանօրէնութիւն. վասն այսորիկ օծ զքեզ ՅԱԾդ ՅԱԾ քո,,։ Եւ Պաւղոս դարձեալ զվկայութիւնս զայս 'ի մէջ ածելով ասէ՝ Եթէ "Այդ հրեշտական ասէ, ո արար զհրեշտակս իւր հոգիս. իսկ առ որդին, աթոռ քո ՅԱԾ յաւիտեանս յաւիտենից,,։

Եւ ընդէ՞ր, ասեն, զՅԱԾ Հայր կոչեաց և զորդի տէր։ Ել վայրապար և ոչ ընդունայն աստ զայս արար. այլ զի առ հեթանոսս էր բան նորա առ բազմաստուածութեամբն ախտացեալս, զի մի ասիցեն եթէ զմեզ բամբասեսկ յորովհ ՅԱԾս ասել և յոգունս տէրս, և ինքն ըմ-

քըռնի ընդ բամբասանաւքս այսոքիւք՝ ասելով և ոչ ասէ, յաղագս այսորիկ նուաստանալով առ նոցա տկարութիւնն՝ այլ անուամբ կոչէ զորդին, որ զնոյն ունի զօրութիւն։

Եւ զի այս Ճշմարիտ է, վերստին ընթերցցուք զնոյն ինքն զտեղին և գիտասջիք յայտնապէս, զի ոչ մեր են կարծիք ասացեալքս. "Յաղագս զոհից կռոցն գիտեմ զի ամենեքին գիտութիւն ունիք. գիտութիւն հպարտացուցանէ, բայց սէր շինէ։ Եւ յետ վասն կերակրոց կռոցն զոհից գիտեմք զի ոչ ինչ կուռքդ են յաշխարհի. զի ոչ ոք է այլ Աստ, բայց միայն,,։ Տեսանե՞ս զի և առ նոսա յերկարելով զայս ասէր որք բազում Աստս կարծէին. "Եթէ Թէպէտ և իցեն ասացեալ Աստք յոլովք և տէրք յոգունք, այլ մեզ մի է Աստ Հայր յորմէ ամենայն, և մի տէր Յիսուս Քրիստոս որով ամենայն,,։ Որով աղաչաւ և զմինն յաւել, զի մի զբազմաստուածութիւնն ի նեբբս աստեալ դարձեալ նոքա կարծիցեն. և մի Աստ զՀայր կոչեաց, ոչ արտաքս Հանելով զորդի յԱստութենէն. նոյնպէս և մի տէր զորդի, ոչ ընկենելով զՀայր ի տէրութենէն, այլ զնոցա տկարութիւնն ուղղէր, և ոչ մի ինչ պատճառս նոցա ախորժէր տալ։ Եւ այս պատճառ եղև, ոչ յայտնապէս և ոչ երևելի, այլ աղօտաբար իմն և գուն ուրեք ի ձեռն մարգարէիցն ծանօթանալ Հրէիցն որդին Այ։ Ոմն զի այն ինչ ի բազմաստուածութենէ մոլորութեանն ի բաց վհարեալք, եթէ դարձեալ Աստ և Աստ էր լուեալ ի նոյն ախտ անկանէին։ Յաղագս այսորիկ մարգարէքն ի վեր և ի վայր զսոյն ասէին եթէ "Այի է Աստ, և բայց ի նմանէ ոչ ոք է,,. ոչ զի զորդին անարգեացեն, մի լիցի. այլ զնոցա տկարութիւնն բժշկել կամին և հաւանեցուցանել առ ժամանակ մի ի յոլով աստուածոցն և յոչէիցն կարծեաց ազատել։

Ընդ յորժամ լուիցես մի, և՝ ոչ ոք, և որք այսպիսիք են, մի նուազեցուսցես զերկրորդութենէն փառս, այլ զմիջոցս նորա առ ստացուածս ուսիր բանիւքս այսքիւք։ Պանդի և այլուր ասէ. "Այ գիտաց զմիտս Տն,,։ Եւ զի զայս ասէ աստ, ոչ զԱստ և զՀոգին արտաքս Հանէ ի գիտութենէն, յառաջագոյն ցուցաւ ի վերին ասացուածոցն յորժամ զվկայութիւնն ի մէջ ածաք որ

ասէն. "Զանգի՞ գիտէ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ ՚ի նմա. նոյնպէս և ոչ զԱստուծոյ զոք գիտէ, եթէ ոչ հոգին Աստուծոյ,,. և դարձեալ այսպէս ասէ. "Զոք գիտէ զՀայրն, եթէ ոչ որդի,,: Զայսմանապէս և ասէ. "Իբրև ոչ եթէ զՀայրն զոք ետես, բայց որ էն յԱստուծոյ՝ նա ետես զՀայրն,,. քանզի միանգամայն հանդերձ հաւաստեաւ զնա գիտէ՝ ասէ, և զպատճառն յաւել վասն որոյ գիտէ: Զի զինչ է պատճառն. ՚ի նմանէ գոն. դարձեալ յայտնութիւն՝ հաւաստեաւ զնա գիտելն. քանզի յաղագս այնորիկ գիտէ զնա յայտնապէս, զի[1] ՚ի նմանէ է. և զի ՚ի նմանէ է անտի յայտ է, զի գիտէ զնա յայտնապէս: Զայն զի բնութիւն զգերազանցեալ բնութիւնն ոչ կարէ քաջ գիտել, թէպէտ և սուղ ինչ իցէ միջոցն:

Զսուբ զինչ ասէ յաղագս հրեշտակացն մարգարէն և վասն մարդկային բնութեանն, զի սակաւ ինչ է զանազանութիւն սորա և նորա ասելով. "Ո՞րինչ է մարդ զի յիշես զնա, կամ որդի մարդոյ թէ համարիս ինչ զնա. փոքր կացուցեր զնա սուղ ինչ քան զՀրեշտակս,,: Զայնա նապէս թէպէտ և դուշնաքեայ է միջոցն, այլ զի բազմութիւնն իսկ ընդ մէջ է, ոչ գիտեմք հաւաստեաւ զՀրեշտակացն բնութիւն. թէպէտ և բիւր իմաստասիրեմք, գտանել ոչ կարեմք:

Զի զինչ ասեմ զՀրեշտակացդ, ասր և ոչ զնոցն ինքեան զՀոգւոյս մերոյ զբնութիւն քաջ գիտեմք, մանաւանդ թէ ոչ որպէս և իցէ: Զի եթէ նոքա յամաւիցեն գիտել, Հարց զինչ արդեօք իցէ բնութիւն Հոգւոյ, օդ, եթէ հուր, եթէ շունչ, եթէ հուր: Զայլ և ոչ ինչ յայտցանէ ասի. վասն զի այսոքիկ ամենեքեան մարմինք են, իսկ նա անմարմին: Զի արդ զՀրեշտակս ոչ գիտեն և ոչ զիւրեանց ոգիս, և զամենեցուն զտէրն և զարարիչն Հակառակեն գիտել հաւաստեաւ. և զինչ քան զայս անմտութիւն լինիցի վատթարագոյն:

Զի զինչ ասեմ զբնութիւն Հոգւոյն. Եթէ արպէս ՚ի մերում մարմնիս է՝ և ոչ զոյն գոյ ասել: Զանգի զինչ արդեօք ունիցի զոք ասել. յարաձգիցի արդեօք ընդ մարմնոյն մեծութեան: Զայլ այս է անբանագոյն, վասն զի մարմնոյ է առանձինն այս: Զառաջս անգամ ձեռայ և

1 Պակասէր յօրին. զի . . . զնա յայսպէս. յաւելաւ ՚ի յոմանէն:

ոտից հատելոյ՝ բովանդակին կայ մնայ և ոչ ծայրակտուր լինի ընդ մարմնոյն խեղուածեան։ Այլ ոչ իցէ արդեօք ի բովանդակ մարմնի, այլ ի մասին ուրեք հաւաքեալ է. հարկաւոր է ուրեմն մեռեալ այլոց մասանցն գոլ, վասն զի անշունչն ամենայն իրօք մեռեալ է։ Այլ և ոչ զայս է ասել. բայց զի ի մարմնիս մերում է գիտեմք, և եթէ որպէս իցէ ոչ գիտեմք։ Վասն այսորիկ և զդիտուածին սորա արգել ած բազում մասուիրուածք, ըմբերանելով զմեզ՝ կալ և մնալ ի խոնարհ հաւանեցուցանել, և զմեր իրս մի՛ ինչ քննել և մի՛ հետազօտել։

Այլ զի մի՛ ի մտածուածեանց ինչ մերոց զայս յարմարիցեմք, բեր դարձեալ ի գիրս զանս ածցուք. "Իբրև ոչ եթէ զՀայր, ասէ, ետես ոք. բայց որ էն յայ, նա ետես զՀայր"։ Այս զինչ է այդ, ասեն, քանզի չև ևս նման զհաւաստի գիտուածինն այդ բան վկայեաց. այլ զի արարածքս ոչ գիտեն, յայտնեաց ասելովն՝ իբրև ոչ եթէ զՀայր ոք ետես. և զի որդի զնա գիտէ, և զայս գարձեալ յայտնեաց յաւելլով՝ որ էն յայ, նա ետես զՀայր։ Այլ եթէ հաւաստեաւ զնա գիտէ և այնպէս որպէս ինքն զինքն, չև ևս ցուցաւ այն։ Վասնզի անհնար է, ասեն, ոչ արարածոցս զնա յայտնապէս գիտել, և ոչ որդւոյ, այլ քան զարարածն քաջագոյն. բայց զՀաւաստի գիտուածինն և ոչ նման ունել։ Վասնզի եթէ տեսանէ զնա որպէս և էն՝ զգիտելն ասաց. բայց եթէ զնա հաւաստեաւ ձանաչիցէ և այնպէս որպէս ինքն զինքն, զայն ոչ յայտնեաց։

Ընդ կամիլք Թէ և զայս ի գրոց հաւատարմացուսցուք և ի նմին իսկ ի Քրիստոսի ձայնէ։ Ուխտաւք զինչ ասէր առ Հրեայսն. "Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր"։ Օ՜ինչ քան զայս գիտուածին հաւաստագոյն կամիցիս արդեօք։ Չարց ցվէճողն. գիտէ՞ հաւաստեաւ Հայր զորդի, և զամենայն զնորա ծանօթութիւնն ունի՞, և ոչ ինչ ի նմանէ զանխնայեալ յորդւոյն, այլ աւարտեալ է գիտուածինն։ Այո, ասէ։ Այսպս ուրեմն և յորժամ լսիցես Թէ որդին այնպէս գիտէ զնա որպէս և նա զորդի, մի՛ ինչ այլ խուզեր՝ այնպէս հանդերձ հաւասաուածեամբ գիտուածէն զոյգ եղելոյ։ Այլ և այլուր զայս երևեցուցանելով ասէր. "Ոչ ոք ձանաչէ զորդի եթէ ոչ Հայր, և ոչ զՀայր ոք գիտէ եթէ ոչ

որդի, և ում կամեսցի որդին յայտնել,, ։ Յայտնէ, և ոչ ոքան ինքն զինքն գիտէ, այլ ոքան մէք տանիմք ։ Ուստի և եթէ Պաւղոս զայս առնէ, և առաւել Քրիստոս. և նա ասէր իւրոց աշակերտացն. "Ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրև ընդ հոգևորս, այլ իբրև ընդ մարմնաւորս. իբրև տղայոց ի Քրիստոս կաթն ձեզ արբուցի և ոչ կերակուր, գի ոչ ևս կարէիք,, ։ Այլ կորնթացւոցն միայն, ասեն, ասաց ։ Նա արդ գինչ եթէ ցուցցուք՝ գի և այլոց ոմանց, զոր ոչ ոք ի մարդկանէ ուսաւ՝ գիտէը, անցեալ գնաց միայն յամենայն մարդկանէ գիտելոյ զայնօսիկ ։ Նա ոՀր զայս է գտանել ։ Նա կորնթացիսն ի Թղթին. ինքն է որ ասէն՝ եթէ "Ուայ անձառելի բանս զոր ոչ է արժան մարդոյ խօսել,, ։ Այլ սակայն և ինքն նա թէպետ և լուաւ զանձառելի բանսն զոր ոչ է արժան մարդոյ խօսել, մանաւանդ ունէր զգիտութիւն, և յոլով ի հանդերձելոյն նուաղեալ ։ Ուստի ինքն որ զայս ասաց, և զայն զեկոյց եթէ "Ի մանկ գիտեմք և ի մանկ մարգարէանամք ։ Նա յորժամ տղայն էի, իբրև զտղայ խօսէի, իբրև զտղայ խորհէի,. և "Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, իսկ յայնժամ դէմ յանդիման,, ։

Արդէս զի յայտնանէ մեզ ամենայն խարդախութիւն նոցա յանդիմանի, զի յորժամ զնոյն ինքն զընութիւնն անպիտանան, ոչ զի է, այլ թէ զինչ է, վերջին մոլորութեան է անուն նմա դնել. և սակայն եթէ յայտնի էր և ծանօթ, և ոչ այնպէս զգուշադոյն էր մեզ ի մերոց անձանց անուն ինչ դնել տեառն բնութեանն ։ Ուստի զի եթէ Պաւղոս ստորին զօրութեանց ոչ իշխեաց անուն դնել, այլ ասելով եթէ "Նստոյց զՔրիստոս ի վերոյ քան զամենայն իշխանութիւնն և զպետութիւնն և զզօրութիւնս և քան զամենայն անուն անուանեալ ոչ միայն ի յաւիտենիս յայսմ, այլ և ի հանդերձեալսն,, և ցուցեալ մեզ թէ են ոմանք անուանք զօրութեանցն զորոց յայնժամ գիտասցուք, ոչ համարձակեցաւ ինքն փոխանակ նոցա դնել, և ոչ զնոյն ինքն զայն հարցաքննել, որմէ Թողութեան արդեօք լինիցին արժանաւորք և կամ որո՞յ պատասխանեաց որք յաղագս տէրունական բնութեանն յանդգնին ։ Յորժամ զնոյն ինքն զիւրեանց բնութիւնն անպիտանան, իբրև ի խե-

լագարաց՝ ի նոցանէ՝ ի բաց դառնալ է պարտ և արժան։ Օ՛ի անել է ՝ած՝ յայտ է. և զի այս է նորա բնութիւն անուն, ոչ ոք մարգարէ ասաց, ոչ առաքեալ ոք զեկոյց, ոչ ոք աւետարանիչ. և մանաւանդ յիրաւի։ Օ՛ի ոք զնոյն ինքն զբնութիւնն անդիտանային, զհանդ զանուն նորա ասել համարձակեալք էին։

Այլ զինչ ասեմ յաղագս ՝ածայնին զրոց, ուր այնքան է յիմարութիւնն ամբարտաւանութեան և անօրէնութեանն գերազանցութիւն, մինչ զի և ոչ՝ ի ՃՀմարտութենէն մնըրեալ հեթանոսք յանդգնեցան երբեք այսպիսի ինչ ասել. քանզի ոչ ոք՝ ի նոցանէ համարձակեցաւ ՝ածայնին բնութեն սահման դնել և միով անուամբ բովանդակել զբնութիւնն։ Ոըք յաղագս մարմնոյ բնութեան խնամատարին, և ոչ այնմ աւարտեալ սահման եդին, այլ աղօտ իմն պատմութիւնս և վերագրութիւն առաւել՝ քան եթէ սահման։ Այլ զինչ իցէ խնամատուն նոցա քան։ Ոչ գիտեմ ուրեմն, ասեն, զոր պաշտեմն։ Յաւէտ և ոչ պատասխանի տալ առ այնոսիկ է արժանաւոր, այսքան ցոյցք՝ ի զրոց եղելոց՝ եթէ անկարութիւն է գիտել զինչ է բնութիւն ՝այ։

Այլ զի ոչ առ Թէնամութեան խօսիմք, այլ որպէս թէ զնոսա ուղղել, բեր ցուցցուք զի ոչ անդիտանալն զինչ է բնութիւն, այլ հակառակ ասելն գիտել, և անդիտանալ զ՝ած։ Այսա ինձ, եթէ երկու արք հակառակ կէին ընդ իրեարս գիտել զերկինի մեծութիւն, մինն ասէր՝ ոչ մարդկային ական հասու լինել նմա, իսկ միւսն յամառէր եթէ կարողութիւն է Թզաւ ձեռին ընդ ամենայն ընդ նա չափելով անցանել, զո՞ արդեօք ասէիր գիտել զմեծութիւն երկնի. որ յամառէրն գիտել քանի ինչ Թիզ ունիցի, եթէ որ խոստովանէրն անդիտանալ։ Այլ արդ եթէ երկնի՝ որ՝ ի քաց հրաժարէր գիտել զմեծութիւն նորա՝ մանաւանդ նա է որ գիտէ զմեծութիւն նորա, յաղագս ՝այ ոչ վարիցիմք նովին բարեպաշտութեաբ։ Այլ զիա՞րդ ոչ վերջին խելագարութեաբ է այս։

Այլ արդ զինչ այնքան պահանջիմք գիտելն եթէ է ՝ած և ոչ հետազօտելն զնորա զբնութիւն, լսեր զինչ առեր Պաւղոս. „Հաւատալ պարտ և արժան է որ մերձենայ առ ՝ած՝ եթէ է ՝ած,,։ Այլ դարձեալ մարգարէն բամբասելով զամբարշտութիւնս որումն, ոչ զայն մե-

զաղրկ եթէ ոչ գիտէ զինչ է ՝ած, այլ զի ոչ գիտէ թէ է ՝ած. քանզի ասէ. "Լսայ անզգայմն ՚ի սրտի իւրում՝ ոչ է ՝ած,,: Լսդ զոր օրինակ զնա ամբարիշտ առնէ՝ ոչ անգիտանալն զինչ է բնութիւնն ՝ոյ, այլ անգիտանալն թէ է ՝ած, նոյնպէս բաւական է առ բարեպաշտութիւն գիտենլն եթէ է ՝ած:

Լսյլ ունէին իմն հրահանգեալ և միւս ևս բան: Լյ զինչ իցէ այն: Լյացաւ, ասեն, հուր է ՝ած: Լսյդ իցէ բնութեանն յանգիմանակացութիւն, ասա ինձ. և ո՞ այդմ ներեսցէ որ և ՚ի գրոնս ՝ածային գրոյ իցէ երթեալ: Վանզի եղևցի և ըստ այդմ բանի և հուր ՝ած, զի և այդպէս է գրեալ "՝ած մեր հուր ծախող է,,. և դարձեալ "աղբիւր ջրոյ կենդանւոյ,,: Լայց ոչ հողմ և աղբիւր և հուր միայն, այլ հոգի և սիք և միտք մարդկայինք և յոլովք քան զայն ևս անտեղագոյնք. զի և ոչ ընդ ամենայն անցանել է պարտ և արժան բանիւս, և ոչ մոլորութեանն նոցա նմանել: Վանզի հոգի բազում ինչ յայտնէ. և զմեր հոգին՝ որպէս և Պաւղոս ասէ "Լ՝ատնեցէք զայնպիսին սատանայի, զի ոգին ապրեսցի,,. և հողմ՝ որպէս և մարդարէն ասէ "Հոգւով բրնութեամբ քո սատակեսցես զնոսա,,. կոչի և հոգևոր չնորհ այնպէս "Վանզի նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում,, ասէ. և դարձեալ "Լզթեցից հոգւով, ազթեցից և մտօք,,. կոչի և բարկութիւն նոյնպէս, զի և Լյացի ասէ. "Լ՚ե դու էիր որ խորհէիր խիստ հոգւովք քովք սպանանել զնոսա,,. կոչի և օգնականութիւն յ՚ոյ հոգի. "Հոգի երեսաց մերոց տեր Վրիստոս,,: Լսդ այս ամենայն մեզ ՝ած եղևցի ըստ նոցա, և ըստ այսքանեաց չաղեալ կայցէ:

Լսյլ զի մի բարբանջեսցուք՝ որ ոչ իցէ վկայաբանութեան կարօտեալ՝ ՚ի մէջ ածելով, բեր աստանօր որ առ նոսա լուծցուք զբանս, յաղօթս զայս ամենայն դարձուսցուք. զի ոչքան մեծապէս ամբարիշտ են, ոչք և առաքելագոյն յաղագս նոցա աղաչեսցուք և մաղթեսցուք ՚ի բաց կալ երբեք նոցա ՚ի մոլորութենէն: Վանզի այս է ընդունելի առաջի փրկչին մերոյ, որ զամենայն մարդ կամի զի կեցցէ և ՚ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ: Լսպա մի նուազեսցուք յաղագս նոցա պաղատանս առնել. վասն զի աղօթք մեծ զէն են, գանձ անսպառական,

առատ մեծութիւն, նաւահանգիստ առանց ալեկոծութեան[1], խաղաղութեան պատճառք և բիւր բարեաց արմատ, և աղբիւր և մայր են աղօթք, և քան զնոյն ինքն զարքայութիւնն զօրաւորագոյն։

Խաղաղ անպատ Թերևս որ զթագն 'ի գլուխն ունիցի, տապացեալ և 'ի մահիճս անկեալ կալով ջերմանալով, մերձ կան սպասաւորքն, ծառայք, զօրավարք. ոչ բժշկացն արուեստք, ոչ մերձաւորութիւն սիրելեացն, ոչ ծառայիցն սպասաւորութիւն, ոչ դեղոյն առատութիւն, ոչ բազմապատիկ պատրաստութիւնք, ոչ ընչից յղփութիւն և ոչ այլ ինչ 'ի մարդկայնոցս կարէ միթարել զանկեալն յախտաժէտութիւն։ Այլ եթէ որ համարձակութիւն առնելով առ Ած՝ մոցէ և բուռն հարցէ զմարմնոյն միայն, և մնքրապէս յաղագս նորա առցէ զաղօթսն, զամենայն զՀիւանդութիւնս մարմնոյն 'ի բաց փախուցանէ։ Այլ զոր ոչ կարաց վճարել ձախողութիւնն և սպասաւորացն յոլովութիւնն և հմտութեանն չանձաւ, թագաւորին մեծութիւն, զայն զօրեաց միոյ աղքատի յոլովակի աղօթք։

Զօթս ասեմ ոչ զսուտ զայս և զպղերգութեամբ լցեալս, այլ որ հանդերձ յերկարմանէն լինի և աչխատասցեալ հոգւով 'ի վեր ձգեալ մտօք։ Վասնզի այսքիկ են որ յերկինս ելանեն. և զոր օրինակ ջուրք ցօղքան 'ի հարթ երկրի վերայ բերեալ լինին և յոլով ընդարձակութիւնս ծաւալեն՝ ոչ ամբառնան 'ի բարձրութիւն, իսկ յորժամ ձեռք առուածացն զնոսա 'ի ստորև շուրջ սփռելով նեղեսցեն՝ Ճնշեալք այնուհետև քան զամենայն նետ արագագոյն 'ի բարձունս ձգին, նոյնպէս և մարդկային միտք ցողքան 'ի բազում ընդարձակութիւնս վայելեն, 'ի վայր ցնդին և հեղանին. իսկ յորժամ իրացն ամբոխք շուրջ կացեալք, և խնաւարհ զնոսա պատանդեսցեն նեղեալ, գեղեցկապէս մաքուր և քաջալինդ 'ի բարձունս առաքեն զաղօթս։ Այս զի ուսցիս եթէ այն աղօթք յաւէտ լսին որք հանդերձ նեղութեան լինին, լուր մարգարէին որ ասէ. "Այս տէր 'ի նեղութեան իմում կարդացի և լուաւ ինձ,,։

1 Երկաթագիր Ճառընտրի յաւելուած ի հատուածս արտաքոյ յոյնին. աղաթրակ բարբր և անհեղ (կամ աննենգ) 'ի բնամոյ, վհան նեփսիալ 'ի պաբերաղէ, վշտի անհապ 'ի սրոյ և անընդհատ (կամ անընդհատ). սուրբ պողոսփրի երիսայէ՝ որ էոթորե զանդամս անբերայն հակառակորդին։

Արդ ջեռուսցուք զխորհուրդն, նեղեսցուք յիշատակօք զանձանց մերոյ զմեղն. նեղեսցուք ոչ զի առաքակուսիցիմք, այլ զի լսելի լինել պատրաստեսցուք՝ զի արթուն արասցուք և ընդոստուցեալս և զնորին ինքն զերկնից բուռն հարեալ: Վասնզի ոչ ինչ այնպէս փախուցանէ զպղերգութիւն և զտաղտկութիւն, որպէս վըտանգք և նեղութիւն, որք ամենայն ուստեք ժողովեն զմիտսն և յինքեանս դարձուցանեն: Եղեալ այսպէս, աղօթելով բազում հեշտութիւնս յետ աղօթիցն՝ի քո անձնդ մուծանել կարասցես: Այլ զոր օրինակ ամպոյն խաւութիւն՝ի սկզբանն մթագոյն առնէ զօդն, իսկ յորժամ՝ի վերայ միմեանց յարձակիցէ զտարափն՝ի բաց դնելով զանձրևն ամենայն, խաղաղական և պայծառ գործէ զներքին տեղիսն, նոյնպէս և տրտմութիւնքն ցորքան՝իններքս ամբոխին, խաւարեցուցանեն զմեր միտս: Այլ յորժամ աղօթիւք և որք Հանդերձ նաքօք լինին արտասուքն՝ թափեսցեն և արտաքս ելցեն, յոքնագոյն՝ի ներքս յոգին ամբարեն զպայծառութիւն օգնականութեանցն այ՝ իբրև Հառագայթք հին՝ի միտս ծագեալ աղաչողին:

Այլ զի՞նչ իցէ արդեօք բազմաց ցուրտ քանն. ոչ ուրիմ Համարձակութիւն, ասեն, ամօթով լցեալ և ոչ քանալ զաչերան իմ կարեմ: Սատանայական է այս երկիւղածութիւն, ծուլութեան այս ծածկոյթք. քանզի փակել զդրունն Հանապարհին որ առ ած է՝ կամի քանսարկուն: Ոչ ունիս Համարձակութիւն. մեծ Համարձակութիւն զնոյն ինքն զայդ կարծեա՝ զոչդ ունել Համարձակութիւն. որպէս վերջին ամօթ և դատապարտութիւն է Համարեըն Համարձակութիւն ունել: Ով յոլովս արդեօք ունէիր ուղղութիւնս, և ոչ զքո ինչ ինչ քեան զչարի խիղճ գիտէիր, և կարծէիր Համարձակութիւն ունել, յամենայն աղօթիցն արտաքս էիր անկեալ: Այլ եթէ զբիւր յանցանացն բեռինս բերիցես՝ի խիղճ մտացդ, և զայդ ևեթ Հատանեցուսցես զքեզ ինքն եթէ քան զամենեսին վերջին ես, յոլովս ունիցիս առ ած Համարձակութիւն, թէպետ և ոչ իցէ այն խոնարհութիւն մեզաւորին՝ կարծել զինքն մեզաւոր:

Այլ խոնարհութիւն է յորժամ որ յոլովս և մեծամեծս գիտելով զինքեան ուղղութիւնս, ոչ ինչ մեծա-

գոյնս յաղագս նոցա զմտաւ ածիցէ. յորժամ ոք իցէ իբրև զՊաւղոս և կարիցէ ասել "Ես ինչ գիտեմ զինն,,, ասիցէ դարձեալ, "Յիսուս Քրիստոս եկն յաշխարհս զմեզաւորս փրկել, որոց առաջինն ես եմ,,: Այն է խոնարհութիւն որ'ի բարձրութենէ ողորմութեանցն նուաստացուցանէ զինքն կամօք: Այլ սակայն ՚ած յաղագս իւրոյ անձառ մարդասիրութեանն ոչ զխոնարհամիտսն միայն, այլ և որք բարեմտութեամբ զսխալանս իւրեանց ասիցեն, յանգուցանէ և ընդունի և լինի քաւիչ որք այնպէսն անկեալ կայցեն:

Այս զի ուսցիս եթէ որքան է բարի ոչ ինչ մեծամեծս յաղագս ինքեան ածել զմտաւ, կառս երկու արա բանիս, և լծեա զարդարութիւն և զամբարտաւանութիւն, և զմեղս և զնուաստութիւն. և տեսցես զկառս մեղացն յառաջեալս քան զարդարութեանն, ոչ իւրով զօրութեամբ, այլ յաղագս իւրոյ լծակցի խոնարհութեան. և զմիսն ևս դարձեալ վերջացեալ ոչ վասն տկարութեան արդարութեանն, այլ յաղագս ծանր և բեռնաւոր ամբարտաւանութեանն: Ի զոր օրինակ նուաստութիւն յաղագս իւրոյ բարձր գերազանցութեանն յաղթէ մեղացն ծանրութեան և ժամանէ առ ՚ած ելանել, նոյնպէս և ամբարհաւաճութիւն վասն յաւէտ ծանրութեան իւրոյ զօրանայ առ մեծութիւնն և արագագոյն արդարութեանն յաղթող լինի, և դիւրաւ զնա'ի վայր ունի:

Այս զի այս կառք թեթևագոյնք քան զնա են, յիշեա զփարիսեցին և զմաքսաւորն: Ի ծեաց փարիսեցին զարդարութիւն և զամբարտաւանութիւն այսպէս ասելով. "Որոհանամ զքէն զի ոչ եմ իբրև զայլս'ի մարդկանէ զյափշտակողս և զյաւելաստացուս և իբրև զմաքսաւորս զայս,,: Ով մեղրութեանն, ոչ եղև բաւական նոցա ամբարտաւանութեանն ամենայն մարդկան բնութիւն, այլ և մաքսաւորին որ մերձն կայր'ի վերայ վազեաց հանդերձ բազում անմտութեբ: Իսկ նա զինչ. ոչ ընդդեմ հարկանէր զթշնամանան և ոչ վշտանայր ընդ չար սխտաւորութեան, այլ ընդունէր զասացեալսն հանդերձ բարեմտութեբ. և լինէր թշնամոյն նեան նման դեղ և բժշկութեի, և լուտանքն գովութիւն և չարախօսութիւքն պսակ: Այսքան է շահ ոչ դժուարելն ընդ լնկերացն

Թշնամանան և ոչ գաղանանալ ընդ մերձաւորացն լու-
տանան։ Վանդի է և անտի մեծ ինչ շահել պատուղ և
վնհատոյն բարի, որպէս և մաքսաւորին եղև, որ ընդու-
նելով զթշնամանան՝ ի բաց եդ զմեղսն, և ասացեալ
քաւեաց զիս զմեղաւորս, էջ արդարացեալ քան զփիւտն.
բանն յաղթեաց դործոյն, և խօսքն զօրաւոր քան զկրսն
եղեն։ Այն զարդարութիւն էր զգեցեալ և զպատկն և
զտատանորդս, և միւտն բանս սուկ ասաց և զամենայն
ի բաց եդ զյանցանան. զի ոչ եթէ բանիցն և եթէ լսեր
ոճծ, այլ և ընդ միտսն յորոց ելանէին նոքա՝ հայհր. խո-
նարհս վնասս տեսանելով և խորտակեալս, ողորմեցաւ
և մարդասիրեաց։

Օայս ասեմ, ոչ զի մեղկացուք. զի թէ մաքսաւորն՝
որ զվերջինն չարեաց տեսակ ունէր՝ ոչ նուաստամտեաց
ինչ, այլ բարեմտութեամբ միայն զյանցանան ասաց, և
որպէս ասացն խոստովանեաց, այնքան բարեմտութիւն
ձգեաց յինքն յայ, մրքան որք մեծամեծս ուղղեսցեն,
և ոչ ինչ մեծամեծս վասն նոցա զմտաւ ածցեն, ընդու-
նիցին զօգնականութիւն։ Յաղագս այսորիկ աղաչեմ և
պաղատիմ խոստովանել յաձախապէս այ։ Օի ոչ ի
տեսարան ածեմ զքեզ ծառայակցացն քոց, և ոչ յայտ-
նել մարդկան հարկ առնեմ զսխալանան. զքար խիղճն
յայտնեա առաջի այ, և նմա ցոյց զվէրն և ի նմանէ ըզ-
դեղն հայցեա. ցոյց որ ոչն թշնամանէ, այլ բժշկէ. թէ-
պէտ և լսիցես դու, գիտէ նա զամենայն։ Ըդդ ասա զի
շահեսցիս, ասա զի ասասն ի բաց դնելով երթիցես
անդր մաքսդ ի յանցանացն, և յանընդհատելի հրապա-
րակագոյժն լինելոց յայնմանէ ի բաց վճարեսցիս։

Արեք մանկունքն ի հնոցին շրջէին, և զանձինս ե-
տուն յաղագս տեառն խոստովանութեան. և սակայն
զկնի այնքան և այնպիսի ուղղութեանց ասէին. "Ոչ
է մեզ բանալ զբերան, զի ամօթ և թշնամանք եղաք
ծառայից քոց,,։ Այս զի ևս բանայք զբերան։ Օի ըզ-
այն զայս ասիցեմք, ասեն, թէ ոչ է մեզ բանալ զբե-
րան, և տվաւ զտէրն առ մեզ ձգեսցաք։ Ըզթիկն զօ-
րութիւն զհրոյն զօրութիւնն շիջոյց, զառիւծուցն սրբու-
մտութիւնն սանձեաց, զպատերազմինս եղոյծ, զմարտս
դազարեցոյց, զձմեռնայինն մրրիկն ի բաց եթարձ, զգևան
հալածեաց, զերկնից դրունս եբաց, զիսպանս մահու

խղեաց, զհիւանդութիւնս փախստական ապար, զդըժ-
ժութիւնս անդրէն դարձոյց, զքաղաքս սատանեալս հաս-
տատեաց, և զ'ի վերուստ բերեալ հարուածսն և 'ի մարդ-
կանէ զդըժութիւնս և զամենայն պարզ դժնդակութիւնս
'ի բաց եբարձ։

Ա՛ղօթս ասեմ դարձեալ ոչ ողբ վայրապար 'ի բերանս
հարեալ կայցեն, այլ որ 'ի խորոց սրտին 'ի վեր ելանեն։
Օ՛ի զոր օրինակ ծառք ոքք միանգամ 'ի խոտս առաքեն
զարմատս, թէպէտ և բիւր անգամ ընդունիցին զհող-
մունս արիածսն՝ ոչ խլին, արմատոքն հաստատուն 'ի խո-
րոմն շուրջ պնդեալ, նոյնպէս և աղօթքն 'ի նեբքուստ 'ի
խորութենէ մտացն առաքեալ՝ արմատանան զդուշաբար
և 'ի բարձունս առաքին, և ոչ 'ի միջէ խորհրդոց արկա-
ծից խոտորին. յաղագս այսորիկ և մարգարէն ասէ. "Ի
խորոց կարդացի առ քեզ տէր,,։

Օ՛այս ասեմ ոչ զի գովիցեք միայն, այլ զի գո-
վելովդ և գործ ցուցանիցէք։ Օ՛յ թէ մարդկան ա-
սել զիւր զձշուառութիւնն և զժամանեալ չարիսն ող-
բերգարկել՝ բերէ ինձ վտանգելոյն միխիթարութիւն որ-
պէս սփոփանք ինձ յասելոյն լեալ, և առաւել եթէ
տեսանն յայտնեսցես՝ որ եդ զիւր անձն յաղագս մերոց
մերոց, առցես ինչ սփոփանս և միխիթարութիւնս յո-
լովս։ Ա՛րդ բաղում անգամ ծանրացուցանէ որ առ
նա լինին ողբքն, և զգալով անդրէն ընդդէմ հարկանէ
յողով անգամ և 'ի բաց մղէ. իսկ ա՛ծ ոչ այսպէս, այլ
և յանգուցանէ և առ ինքն ձգէ. և եթէ զբռնանդակ
զօրն ճնասցես յայտնելով նմա զձշուառութիւնն, յայն-
ժամ յաւէտ զքեզ սիրէ և հաւանի քոց պաղատանաց։
Ա՛ւ զայս ինքն Քրիստոս յայտնելով ասէր. "Ա՛կայք
ամենեքեան տաժանեալքդ և բեռնաւորքդ, և ես զձեզ
հանգուցից,,։ Ա՛ոչ, մի ստուգապատեսցուք. ձգէ յինքն,
մի փախիցուք. թէպէտ և բիւր մեղս ունիցիմք, և զայն
պիսիան կոչէ. քանզի "ոչ եկի, ասէ, կոչել զարդարս,
այլ զմեղաւորս յապաշխարութիւն,,։ Ա՛ւ ատ ձգող-
բաբեռնեալն և զվտանգեալն ոքք 'ի ծանրութենէ մե-
ղաց են վտանգեալք՝ ասաց. ա՛ծ միխիթարութեանց ասի
և ա՛ծ դթութեանց, վասն զի այն է միշտ գործ նորա,
զվշտացեալսն և զնեղեալսն միխիթարել և սփոփել։ Ա՛ւ
եթէ բիւր մեղս ունիցիմք, միայն տայցուք զանձինս, ա-

այն ընթասցուք առ Նա, մի՛ ի բաց կացցուք, և նովին իսկ փորձիւն դիտասցուք զասացեալսն զՀնամարտութիւնն, և ոչ ինչ զմեզ յէից տրամեցուցանել կարիցէ։ Այնժ ունելիմք յերկարեալս և հաւաստիս և զարթուցեալ զաղօթսն, զոր և եկեսցէ՛ ի վերայ, դիւրաւ նոքօք՛ ի բաց դաձնացնեմք։ Այս զինչ սքանչելիք եթէ զմարդկայինս խռովութիւնս լուծանել դիտեն աղօթիցն զօրութիւնք, ուր զի և զմեղացն բնութիւն չկրնացանեն և ապականեն դիւրաւ։

Ընդ որ Հանդերձ դիւրութեամբ և ընդ մերձաւոր կեանսս անցանիցեմք, և որքան գործեցաք զմեզ՝ ի բաց դնիցեմք, և Հանարձակութեամբ կայցեմք առաջի բեմին Քրիստոսի, զայս դեղ մհանկենաւոր պատրաստեցուք անձանց, յարտասուաց և՛ ի փութոյն և՛ ի ժուժկալութենէն ժողովելով զնա. և այնպէս յաւիտենականն վայելեսցուք յառողջութեան, և Հանդերձելոց բարեացն Հանդիպեսցուք, որոց լիցի ամենեցունն մեզ Հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր փառք միանգամայն Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՆՈՐՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ԱՍԱՑԱՒ ԱՌ ԱՆՈՄԱՆՍՆ ՑՕՂԱՆՈՍ ԱՆՀԱՍԱՆԵԼԻՈՑՆ

Մի օր ընդ ձեզ խօսեցայ, և յօրէն յայտնանէ այնպէս զձեզ սիրեցի, որպէս Թէ՛ ի սկզբան և՛ ի վաղուց Հետէ ձեր իցեմ մննդակից. այնպէս ընդ ձեզ կապեցայ սիրոյն կապանօք, որպէս Թէ անբաւ ժամանակաւ՛ ի ձերում ընդելութեան վայելեցի։ Այլ եղև՝ իբր ոչ Էթէ ես բարեմիտ ոք և սիրող իցեմ, այլ զի բազմագութք և ցանկացողք մանաւանդ ամենեքեան դուք էք։ Քանզի ո՞ չ զուարճասցի և զարմասցի ընդ ձեր ջերմ նախանձդ և ընդ անկեղծաւոր սէրդ և որ առ վարդապետան կ բարեմտութիւնդ և առ միմեանս Համարձակութիւն, որք ամենեքեան բաւականք են և զքարեղէն զանձինսդ՝ ձգել և յանկուցանել։ Յաղագս այսորիկ և

մեք քան զեկեղեցին զայն, յորում ծնաքն և մնաք և ուսաք, ոչ ինչ նուազ զձեզ սիրեմք. վասն զի քոյր ե նա նորա, և գործով զաղգակցութիւնն ցուցեք։ Այլ եթէ երիցագոյն ե ժամանակաւ նա, այլ ջերմագոյն ըստ հաւատոյն սա. քաղցր ե ժողովն անդ և պայծառ տեսանելն, այլ մեծագոյն աստ համբերութիւնն և յոլով արութեանն հանդէս։ Պայք ամենայն ուստեք ոչխարաց շուրջ յողան, և հօտս ոչ վատնի. խռովութիւնք և մրրիկք ձմերայնոյ և ալեկոծութիւնք շուրջ կան միշտ զիծծային նաւուս զայսու, և որք նաւեն ոչ ընկղմին. բայ հերձուածողաց ամբառնայ ամենայն ուստեք շրջանակելով, և որ 'ի մէջ են հնոցիս՝ հոգևոր ցօղս վայելեն։ Այսպէս հրաշափառագոյն 'ի մասին 'ի քաղաքիս յայսմ զանկեալ եկեղեցիս այս ե տեսանել, որպէս թէ 'ի մէջ հնոցի զուարճացեալ ձիթենւոյ, և սաղարթովք վարսաւորեալ և պտղովքն ծանրացեալ տեսանիցեմք։

Այլ արդ զի այսպէս բարեմիտք էք դուք և բիւր բարեաց արժանաւորք, բեր զխոստմունսն հանդերձ ամենայն հնորհիւ հատուսցուք։ Պանզի յառաջագոյն ձեզ խոստացաք յորժամ վասն Պաւթայ և Պողիաթու զիւնուցն իմաստասիրեաք առ ձեզ, ցուցանելով բանիւ որպէս միևն սպառազինութեամբ ոմանք մեծապէս ամենայն ուստեք ամրացեալ, և միւսն մերկ յամենայն զինուցն յայնցանէ հաւատոյն պարսպեալ էր, և միւսն վահանօք և զինուք, խակ միւսն 'ի ներքուստ հոգւոյն հնորհիւ փայլէր, յաղագս այնորիկ մանուկն զզօրաւորն հերքեաց, մերկն զզինեալն ըմբռնեաց, հովիւն զգինուորն 'ի վայր ընկեց, հովուական քարի բնութիւնն զպատերազմողին բնութիւն խորտակեաց և ապականեաց։ Արդ և մեք զքարն զայն առցուք 'ի ձեռին, զգլուխ անկեանն ասեմ զիմանալին. քանզի եթէ Պաւղոս իմաստասիրելով զնչխանութիւն յաղագս որ յանապատին էր վկայեն, ամենայն ուրեք և ոչ զմեզ որ բամբասեցէք որք զքարն զայն ըստ նմին օրինակի առնումք։ Ո՛ի զոր օրինակ առ Հրեայսն ոչ բնութիւն տեսանելի վկայեն, այլ զօրութիւն իմանալոյն զգետ արձակեաց զջրոյն այնոսիկ, նոյնպէս և առ Պաւթայ ոչ զգայլն, այլ իմանալի քարն զբարբարոսական գլուխն ընկեց 'ի վայր։ Այսպէս և մեք

յայնժամ խոստացաք ոչ ի մոռանալ մերոյ ա-
սել. «Ոչ զկնի զինուորութեան մերոյ ոչ է մարմ
նաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ. զհոգևորսդ քակեմք և զա-
մենայն բարձրութիւն հպարտացեալ հակառակ գիտու-
թեանն Աստուծոյ»: Եւ ի կործանելն զնոսա ոչ հրամայիմք
ամբարտաւանել. քակել՝ ոչ զինել յայսոսիկ ընկալաք
հրաման. քանզի խորհուրդք մահկանացուայ երկչոտք
ասին: Զարհուրեալն թեպետ և յամուր տեղւոջ իցէ,
ոչ երբեք քաջալերի, այլ երկնչի և դողայ. նոյնպէս և
որ խորհրդովքն է խոցեալ, թեպետ և ձեմարիտ իցէ,
հաւանութիւն և ոչ երբեք տայ անձին իւրում բաւա-
կան ի հաւատ:

Եւ արդ զի այսքան է խորհրդոցն տկարութիւն, բեր
ի գլուխ առ ընդդիմակացն բառն հարցուք զկռուայս: Եւ
ուստի սկսանելի մեզ բանս: ուստի արդեօք ախորժի-
ցէք, ի նորմն եթէ ի հնոյն: Զի ոչ միայն յառաքե-
լական և յաւետարանական բանս, այլ և ի մարգա-
րէիցն և յամենայն ի հնումն յոլով առատութեամբ
պայծառացեալ է տեսանել զփառս միածնին: Զաղագս
որոյ Թուխ ինձ ասէ առ նոսա ստուգաբանել. զի ոչ
միայն աստուստ առնեմք զբանս, այլ և զյոլով զայլ
հերձուածողան կործանեմք ի վայր, զԱրիոսիճ, զմա-
նիքեցիսն, զԱղեռնիոնան և զԵբիցն զամենայն հոյլս:
Զի զոր օրինակ առ Գաղատացի Պօղոսեան անկաւ ի
վայր և բանակն ամենայն փախեաւ, մահ միում մարմ
նոյն եղև և միում գլխոյն վէր, բայց փախուստն և եր-
կիւղն հասարակ ամենայն բանակին, նոյնպէս և առ մեզ
այժմ միոյ հերձուածոյն վիրաւորեցելոյ և յերկիր ան-
կելոյ՝ հասարակ ամենեցուն լինի փախուստ:

Մանիքեցիքն և որք ընդ նոսա զնոյն ախտանան, ըզ-
քարոզեալն Քրիստոս կործանն ընդունել. զքարոզողսն
զնա անպատուեն զմարգարէսն և զՀայրապետսն: Իսկ
Եբեայք դարձեալ հակառակ նմին զքարոզս նորա վար-
կանին ընդունել և պատուել զմարգարէսն ասեն, և ըզ-
նոյն ինքն զօրինադիրն և զքարոզեալն ի նոցանէ անպա-
տուեն: Արդ յորժամ ոչ ընդհաւն ցուցանեմք յոլով
ի հնումն նախաձայնեալ զմիածնին փառս, զամենե-
սեան զայնոսիկ զմածամարտ բերանոն կարասցուք ամա-
չեցուցանել և զնայհոյիչ լեզուս պապանձեցուցանել:

Վանզի յորժամ երևեսցին քարոզել զԱրիստոս հին կտակարանքն, զինչ լինիցի մանիքեցւոցն և որք իբրև զնոսա են՝ պատասխանիք, որ անպատուէն զնախաճայնեալ հատարակաց ամենեցուն տէրն. որ Թողութիւն և հրաժարումն Հրէիցն որք զաւետարանեալն ի մարգարէիցն ոչ ընդունին:

Նա արդ զի այսքան է յաղթութեանս յղփութիւն, ի հին գիրս զբանս ածցուք, և որ նախ քան զամենեսեան զնոսա է՝ ընթերցցուք, զլինելութիւնն ասեմ և ի լինելութեանն ի նոյն ինքն ի գագաթն ելցուք: Օ՛ և Արիստոս ասէր. "Լթէ հաւատայիք Մովսէսի, հաւատայիք արդեօք և ինձ, զի յաղագս իմ գրեաց նա.,: Նա ուր գրեաց նա վասն նորա, զայս արդէն ցուցանել Հանդիսացայց:

Յորժամ արարածս ամենայն բովանդակեցաւ, և զանազան աստեղացն պարու երկին պսակեցաւ, բազմապատիկ ծաղկօք Հակառակ զուարճանայր ի ներքուստ երկիր, լի էին լերանց գլուխք, լի դաշտք և ձորք և պարզաբոյր ամենայն երկրի վերերևութիւնս տնկօք և ծառովք, խայտային հօտք, խայտային և անդեայք, և երգեցող Հաւուցն պարզ իւրեանց բնական երաժշտականութիւնն ցուցանէր զոդոզ ընդով, լի էին խորք ծովային կենդանեօք, լի աղբերք և լիճք և գետք որ ի նոսա ծնանին ամենեքեան, և ոչ էր անկատար, այլ ամենայն աւարտեալ. Հայցեր մարմինն զգլուխն, քաղաքս զիշխանն, արարածս զթագաւորն, ասեմ՝ զմարդն: Նա Հանդերձեալ գնա ստեղծանել՝ ասէր. "Արասցուք մարդ ըստ պատկերիս մերում և ըստ նմանութեան,,: Ոնդ ո՞մ խօսեր. քաջայայտ է թէ ընդ միածնին իւրում: Ա՛ս ասաց՝ արա, զի մի կարծեսցես ծառայական Հրամանն լինել զառաջեալն. այլ արասցուք՝ զի ձեռով խորհրդակցութեան բանիցն զՀամապատիւն յայտնեսցէ:

Վանզի երբեմն ասի եթէ խորհրդակից ունի նա, և երբեմն եթէ ոչ ունի. ոչ գիրք ընդ ինքեանս մարտնչին, այլ զանձառելի բանսն յայտնեն մեզ երկաքանչիւրովքն այնոքիւք: Յորժամ զանկարօտութիւնն նորա յանդիմման կացուցանել կամին, ասեն նմա չունել խորհրդակից. իսկ յորժամ զՀամապատուութիւնն միածնին՝ խորհրդակից կալեն զորդին հօր: Նա զի ուսցիս եթէ այ-

սոքիկ են երկոքեան յորժամ խորհրդակից զսրդի կոչին մարգարէքն, իբրև ոչ եթէ հայր կարօտանայ խորհրդակցութեան, այլ զի զմիաճնին զպատիւ ուսցուք. և զի ոչ կարօտանայ խորհրդակցի, լուր դարձեալ Պաւղոսի որ ասէ. "Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեանն այ. իբրև՛ զի անքննելիք են դատաստանք նորա և անհետազօտելի ճանապարհք նորա. քանզի՞ ո՞ գիտաց զմիտս տեառն կամ ո՞ խորհրդակից եղև նմա,,։ Արդ սա զանկարօտութեի մեզ յանդիման կացոյց։

Իսկ Յասայի դարձեալ յաղագս միածնին այ խօսելով, այսպէս ինն ասէր. "Կամեսցին եթէ հրկեզք լեեալ էին. զի մանուկ ծնաւ մեզ, որդի և տուաւ մեզ. և կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ, սքանչելի խորհրդակից,,։ Նա զնոյն Պաւղոս ասէ. "Ո՞ գիտաց զմիտս տեառն և ո՞ խորհրդակից եղև նմա,,։ Օ՛ի և Պաւղոս, որպէս և յառաջագոյն ասացի, զանկարօտութիւնն հօր յանդիման կացուցանել ախորժէ. իսկ մարգարէս զհամապատասխանութիւն միածնին։ Յաղագս որոյ և անդէն ոչ ասաց՝ արա, այլ արասցուք. քանզի արա՝ հրաման է առ ծառայ լեալ։

Նա յայտ անտի է. մերձեցաւ երբեմն հարիւրապետն առ Յիսուս և ասէր. "Տէր, մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ գժնդակապէս չարչարեալ,,։ Նա զնոյն Յիսուս. "Նա եկեալ բժշկեցից զնա,,։ Հարիւրապետն ոչ համարձակեցաւ ձգել զբժիշկն ի տուն։ բայց խնամակալն և մարգասէրն ինքն խոստացաւ երթալ անդր, զի պատճառս տացէ նոցա, և իրօքն զառաքինութիւն իւր մեզ ցուցանիցէ։ Գանզի գիտեալով զոր ինչ հանդերձեալն էր ասել՝ խոստացաւ երթալ, զի ուսցիս զառաքինութիւն առնն։ Նա զնոյն ասէր. "Տէր, ոչ եմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես,,։ Ընդ հիւանդութեանն և ախտաժէտութեանն կարիք զիւր ներկիւզածութիւնն մնռանալ նմա արարին, այլ և թշուառութիւնս ճանաչէր զտեառնն գերազանցութիւն. յաղագս որոյ և ասէր. "Նա քանիւ և բժշկեսցի մանուկն իմ. քանզի և ես այր մի եմ ունելով ընդ ինձ զինուորս. ասեմ՝ սմա երթ և երթայ, և այլում եկ և գայ, և ծառայի իմում արա զայս և առնէ,,։ Տեսանէս զիարդ տեառն ընդ ծառայի կ խօսել։ Նպա ու-

բեին արասցուք՝ համապատուհասութիւն է. զի յորժամ տէր ընդ ծառայի խօսի՝ ասա ասէ, և յորժամ հայր ընդ որդւոյ՝ նրասցուք։

Այս զինչ, ասէ, եթէ հարիւրապետն այնպէս կարծեաց, այլ իրքն դոյնպէս ոչ ունին. միթէ առաքեաւք էին հարիւրապետն, մի աշակերտ՝ եթէ զնորա ընկալցուք զբանն. դէպ է նմա սխալել։ Վեղեցկապէս. և արդ զինչ. տեսցուք որ՝ի կարդին է։ Աղղեաց ինչ արդեօք զնա Քրիստոս, սաստեաց ինչ արդեօք իբրև վրիպեցեալ և ապականեալ աղանդ՝ի ներքս մտծանողի։ Նոյն ցնա արդեօք՝ զինչ զայդ առնես, ով մարդ. մեծամեծ կարծիս յաղագս իմ ունիս քան եթէ որ օրէն է. առաւել ինձ ընդհես քան եթէ որպէս պարտ է ինձ. ինքնիշխանութեամբ կարծես ինձ հրամայել, ոչ ունիմ զնախաքանութիւն։ Նոյնսին ինչ արդեօք ասաց ցնա. և ոչ ուրեք, այլ և հաստատեաց և զնորա զբանն, և առ որս զինին երթային՝ ասաց. "Նմին առեմ ձեզ, և ոչ յարպէսի այսքան հաւատս գտի,, Նրդ գովութիւն տեառն լինէր հաստատութիւն բանից հարիւրապետին. և ոչ և այսու հետև հարիւրապետին են բանքն ասացեալ, այլ հրաման է տէրունական։ Զի յորժամ նա գովէ զասացեալն, և հաստատէ իբրև զգեղեցիկ զասացեալս, իբրև զճշմարիտ հրաման ընդունիմ զայն. քանզի զտիրականն՝ի վերուստ էառ՝ի Քրիստոսի պատասխանւոյն։

Ցետանէս զնարդ ձայնակից է նորս հնոյն, զնարդ երկաբեան զինքնիշխանութիւն ցուցանիցեն զՔրիստոսի։ Այս զինչ. եթէ առնէր զմարդն, ասէն, իբրև զնուաղ գործակից առնէր։ Նրդ լուր որ՝ի կարդին են բանքն, և՝ի բաց կացցեն երբեք՝ի տարաժամ հակառակութենէդ։ Վանզի ասելով արասցուք մարդ, ոչ՝ի վերայ էած՝ ըստ պատկերի քում նուազիդ, և ոչ ըստ պատկերի իմում մեծիս. այլ զինչ. "ըստ պատկերի մերում,, ցուցանելով զՀօր և զորդւոյ զմիոյ բնութեան զպատկեր. քանզի ոչ ասաց՝ի կերպարանս, այլ՝ի կերպարան մեր. զի ոչ երկուք անհարթք, այլ մի, և նոյն հաւասար որդւոյ և Հօր պատկեր։ Յաղագս այսորիկ և ընդ աջմէ ասի նստել, զի զհամապատուհասութիւնն և զիշխանութեան անայլայլութիւն ուսցիս։ Նուազ գործակից

ոչ լինի աթոռակից, այլ մերձ կայ։ Զդդ՝ի նստելոյն զհամապատուութիւնն և զիշխանութեանն զանգանազանութիւն ուսիր, վասն զի տիրական իշխանութեանն է. իսկ մերձն կալ՝ ծառայական և հնազանդեցելոյ։ Լսուր զինչ ասէն Դանիէլ. "Տեսանէի մինչև աթոռք եդան և հինաւուրցն նստեր. բիւրք բիւրոց պաշտէին զնա և հազարք հազարաց մերձ կային՝ի նա,,. և դարձեալ Եսայիաս. "Տեսի զտէր նստեալ՝ի վերայ աթոռոյ բարձու և ամբարձեցելոյ, և սրծվքեք կային շուրջ զնովաւ,,. և Միքիաս. "Տեսի զէնն Իսրայէլի նստեալ՝ի վերայ աթոռոյ իւրոյ, և ամենայն զօրք երկնից կային յաջմէ նորա և յահեկէ,,։ Տեսանեմք ամենայն ուստեք զվերին զօրութիւնսն շուրջ կացեալս զնովաւ, և զնա նստեալ։ Զդդ յորժամ տեսցես յաջմէ նստեալ, մի սպասաւորական և նուաստ գործակից զնա գոլ կարծիցես արժանապատուութեանն, այլ զտիրական և որ զիշխանութիւնն ունի։ Յաղագս այսորիկ և Պաւղոս զերկոսեան զայսոսիկ բաժանէ ասելով այսպէս. "Ընդ հրեշտակսն ասէ. ո արար զհրեշտակս իւր հոգիս և զպաշտօնեայս իւր բոց հրոյ։ Իսկ առ որդին ասէ. աթոռ քո՜ն յաւիտեանս յաւիտենից,,. աթոռոյն մեզ զվերագաւորական իշխանութիւնն յայտնեայ։ Լսե արդ զի ամենեքումբք այսոքիւք բանս մեզ եղեալ ոչ սպասաւորական արժանաւորութեանն զորդի, այլ տէրունեան, իբրև տեառն նմա երկիր պագցուք և իբրև զուգապատուի Հօր. այսպէս և ինքն հրամայեաց ասելով. "Օ՛ի ամենեքեան, ասէ, պատուեսցեն զորդի, որպէս պատուեն զՀայր,,։

Ի ձեռն առաքինութեանցն և՝ի ձեռն գործոցն հաւատոյ յարմարեսցուք և միաւորեսցուք ընդ ուղղութեանցն աւանդութիւնս, զի մի կիսամահ մեզ՝ փըրկութեան իրք իցեն։ Լսե զառաքինութեանն ստուգութիւն և զվարուցն ուղղութիւնս ոչ այլ ինչ այնպէս կարէ յարմարել, որպէս անընդհատ աստ գեգերումն և հանգերձ յաժարութեամբ լսելութիւն։ Օ՛ի որպէս մարմնոյ կերակուր, նոյնպէս և հոգւոյ ածային բանիցն վարդապետութիւն. "Ոչ միայն, ասէ, կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ՝ի բերանոյ Այ,,։ Զան այսորիկ և սուտ գիտէ գործել որոյ ոչն հա-

զորդեացին այսմ սեղանոյ։ Լուր ՚ի դու որ զայս սպառնայ և ՚ի կարգի պատուհասիցն և տանջանացն ՚ի վերայ կարկառեսցէ. «Ցաց նոցա, ասէ, ոչ սով հացի և ոչ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանս Աստուծոյ»։ Եւ զիմաստդ ոչ ի ցի վերջին յիմարութիւն եթէ չաղագս զայս մարմնական սովս ՚ի բաց դարձուցանելոյ զամենայն առնեմք և հնարիմք, իսկ զոգւոցս ախորժելով ընդունիմք, որ և քան զայն չոյժ դժնդակագոյն ոգւոյն և մեծ են տուգանքն։

Արդ մի, աղաչեմ և պաղատիմ, մի այնպէս չարաչար չաղագս անձանց մերոց խորհեսցուք, այլ քան զայն ամենայն պարապուրթիս և հոգս՝ սատ չամրէն պատուեսցի։ Ոչինչ այսքան շահիցիս, սատ ինձ, ՚ի ժողովոյս մնացեալ, ոգւոյն վնասես և զանձն և զտունն զամենայն։ Վէպտ և գանձարան գտցես բովանդակ ոսկւով լցեալ և չաղագս այնորիկ սատի վերջանայցես, այլ մեծամեծք և լաւագոյնք են քան զզգալիսս հոգևորքն. զի այն թէպտ և չոլով իցէ և ամենայն ուսաեք ժողովիցի, այլ ոչ ուղեկից լինի առ որ անդէն կայուն կեանքն, և ոչ փոխոխի ընդ քեզ ՚ի կենցաղոյս. բազում անգամ թերևս և նախ քան զվախճանն թողեալ զքեզ կորնչիցի. և եթէ կայցէ մնայցէ մինչև ցվախճան, բայց վախճանաւն ամենայն ուրեք ՚ի բաց որոշի։ Իսկ հոգևոր գանձն անկողոպտելի ստացուած է, և չոգուոյս առաջի բեմին այնորիկ տայ մեզ համարձակութիւն։ Եւ եթէ այլոց ժողովոյն այսքանի է շահն, որ աստէն ժողովք՝ կրկնապատիկ ևս քան զայս լինի. զի ոչ զայս պատուղ ևեթ ընդունիցիմք եթէ զանձինս ՚ձեռային բանիւքն ուռգեմք, այլ և չոլովս զթշնամեացն քայքայեմք զամբէ, և բազում եղբարցն մերոց ընձեռեմք միխիթարութիւն։ Այս է պատերազմիս շահ վաստակելոյ, այս կռուոյս մանգլեալ վտանգիւք։ Չաղագս այսորիկ ամենեքեան ՚ի միասին ընթացցուք և զ՚ի վերայ եկեալ պատերազմունն ՚ի բաց դարձուցուք։

Ոչ կարես քան երկարագոյն չերկարել, և ոչ ունիս վարդապետութիւն, եկ միայն այսր և զամենայն կատարեցեր. զի մարմնովդ գալուստ՝ չաւելուած հօտիս լինի, և չոլովս եղբարցն քոց ընձեռեմ զչօժարութիւնն, և թշնամեացն ՚ի վերայ արկանեմ զամբէն։ Եթէ ոք

'ի վերայ ելցէ քահանայական դրացն այնոցիկ և սակաւս տեսցէ զժողովեալսն, և զնոյն ինքն լեալ յօժարամտու-Թիւնն շիջուցանէ, ընդարմանայ և Թախծի, և տաղտկագոյն լինելով 'ի բաց գնայ, և այնպէս առ փոքր փոքր ամենայն քնուԹիւնս առ մեզ մեղկի և պղերգագոյն լինի, Իսկ եԹէ տեսցէ ընԹացեալ 'ի միասին և փոյԹն և ամենայն ուստեք դիմեալս, այլոց փոյԹ՝ և յոյժ հեզագայելուճի և լքեցելուճի յօժարամտուԹեան պատճառ լինի: Վասնզի եԹէ քար ընդ քարի շփելով՝ բաղում անգամ հուր արտաքս վազել պատրաստէ, և սակայն զինչ քան զքար ցրտագոյն և զինչ քան զհուր ջերմ, այլ սակայն քնուԹեանն յաղԹէ յաձախուԹիւն շըփմանն: Իսկ եԹէ քարի այնպէս հանդիպի, և նա առաւել անձանց յորժամ առ միմեանս զեգերեսցին և հոգևոր հրոյն ջեռնուցուն:

Ո՛չ լուսաք զի առնախահարքն մերովք երկոտասանիք միայն էին, և ոչ նոքա ամենեքեան կայրն մեացին, այլ մին 'ի նոցանէ կորեաւ Յուդաս, և էին մետասանք բոլորեքեան. այլ սակայն 'ի մետասանիցն յայնցանէ հաւրիւր և քսան եղեն, և 'ի հարիւր և քսանիցն երեք հազարք, և ապա զաշխարհ ամենայն լցին: Իսկ պատճառն էր՝ ոչ երբեք զժողովն լքանել Թողուլ, այլ միշտ էին ընդ միմեանս 'ի տաճարին հանապազօրեայք աղօԹից և ընԹերցուածոց պարապելով. յաղագս այնորիկ յաձախապէս լուցին զՀուրն, վասն այնորիկ և ոչ երբեք լքան, այլ զաշխարհս ամենայն յհինքեանս ձգեցին:

Նոցա նմանեսցուք և մեք: Իսկ զիարդ ոչ իցէ վերջին յիմարուԹիւն ոչ այնքան ցուցանել յաղագս եկեղեցւոյ զնախահոգուԹիւն որքան կանայք վասն զրացեաց իւրեանց. զի նոքա յորժամ տեսանեն կոյս զոք աղքատ և ամայի յամենայն օգնականուԹենէ լեալ, զիւրեանց զամենայն ինչ բերեն 'ի կարգի խնամակալուսյ լինելով, և յորմէ տեսցէ ոք արդեօք անդ ամբոխս և հոյլս 'ի կուսին հարսանիս. ոմանք և ինքս բազում անգամ ընծայեն, և կէսք զմերձաւորուԹիւնն իւրեանց մարմնով. ոչ սուղ ինչ է և այն՝ քանզի լինի ծածկոյԹ խաղաղուԹեան նոցա փոյԹն, և զաղքատուԹիւնն Թաքուցանեն իւրեանց յօժարուԹեամբն:

Ո՛չ սոյն և աստ արասցուք եկեղեցւոյս այսմ. ամենե-

քին ամենայն ուստեք ընթացուք ի միասին և ծածկեացուք զսորա զաղքատութիւնս յաձախապէս այսր գալով։ Վնաս կիսոջ է այր, և օգնական առն կին. արդ մի գլուխն առանց մարմնոյն ներեսցէ ի վերայ ելանել սուրբ սեմոցս այսոցիկ, և մի մարմինն առանց գլխոյն երևեսցի. այլ բովանդակ այսր մոցէ մարդն ունելով ընդ ինքեանս զմանկունս։ Ո՛ի եթէ զծառ վայելուչ է տեսանել որ յերկրէ ունիցի նոր շառաւիղս բուսեալս, և առաւել զմարդ քաջալայելուչ է տեսանել և քան զամենայն ձիթենի քաջազուարճ՝ յարմատոյն իւրմէ զմանկունս իբրև զնորատունկ ունելով մերձ աստ կացեալ. ոչ վայելուչ միայն, այլ և շահաւոր. զի որպէս յառաջագոյնն ասացի՝ յոլով է աստ վարձ ժողովելոյն։ Վասն զի և ընդ երկրապոծ յայնժամ հրաշանաւք, ոչ յորժամ զբազում անգամ անդաստան գործեալ՝ դարմանիցէ, այլ յորժամ զանսերմն և զանարօգդրեալ երկիրն առնելով յոլով նախախնամութեան արժանի առնիցէ։ Այսպէս և Պաւղոս առնէր պատուասիրապէս աւետարանելով, ոչ ուր անուանեցաւ Քրիստոս։

Այսմ և մեք նմանեսցուք ի դէմս եկեղեցւոյս և յօգուտ մեր։ Արդ հանապազ ընթացուք այսր ի ժողովս։ Եթէ ցանկութիւն բոցակիզէ, շիջուցանել դիւրաւ զայն կարես՝ տեսանելով միայն զտունս զայս. և եթէ բարկանայցես, հանդերձ դիւրութեամբ զադարեցուցանես զդազանն. և եթէ այլ ինչ ախտ պատանդիցէ, զամենայն ձմեռնային մրրիկսն կարասցես լուծանել, հանդարտութիւն գործելով և բազում խաղաղութիւն անձին։ Յորում լիցի ամենեցուն մեզ վայելել արժանաւորութեամբ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՂԱԶԱՐՈՍ

Ասաց ի մեռելոց յարուցեալ Ղազարոս, ի բազում և ի զանազան վտանգից և վշտաց ընդհեաց մեզ

մխիթարութիւն մեհնութեան։ Ասան զի ոչ պիտեմ եթէ արդեօք ընթերցուածս այս եմոյծ Հառս գայթակղութեան Հրէից և հեթանոսաց ընդդիմաբանութիւն. ոչ եթէ ՚ի Հշմարտութենէ, քաւ լիցի, այլ ՚ի նոցա չարութեան մտաց։ Վասզուանք ՚ի հերձուածողաց ասեն՝ թէ չէ հաւասարակից որդի Հօր. ընդէր. քանզի սիտոյ եղև Վրիստոս աղաչել զՀայր առ ՚ի յարուցանել զԼազարոս. զի եթէ ոչ էր աղօթեալ, սակայն ոչ էր յարուցեալ զնա ՚ի մեռելոց։ Այս զիարդ իցէ նա հաւասար այնմ որ աղօթէ առ այն որ ընդունի զպաղատանս. քանզի միոյն աղօթել, և միւսն զպաղթութեան աղօթից ՚ի նմանէ ընդունի որպէս մատուցանել զպաղատանսն։

Վայթակղին օրք ոչ Հանապէն, մոլորին օրք ոչ խմանան՝ եթէ խոնարհութեան էին իրքն և ոչ վասն տկարութեան աղօթքն։ Այս դու ցիս, որ է մեծագոյն, լուանալ զոտս աշակերտացն, եթէ որ լուացեալն լինիցի։ Այլ փրկիչն լուաց զոտս մանկանցն Յուդայի, քանզի ընդ աշակերտսն էր. ապա զինչ մեծագոյն է, Յուդա քան զտէրն, վասն զի լուաց զոտս նորա. քաւ լիցի, ՚ի բաց տար։ Այրդ որ է խոնարհագոյն, զոտս լուանալ, թէ աղօթել. յայտ է թէ զոտս լուանալ։ Օ՚ի այն որ վասնաւհագոյնն ոչ հրաժարեաց առնել, զիարդ զբարձրագոյնն հրաժարէր առնել։ Այլ զայն ամենայն վասն տկարութեանէ այնոցիկ առնէր որ մերձն կային. և զի վասն տկարութեան Հրէիցն որ մերձն կային եղև, յառաջբանն ՚ի յայտ առնէ։

Այլ և Հրեայքն աստի առնուն զպատՀառս ընդդիմաբանութեան և ասեն՝ թէ զիարդ զնա ՚ա՚ծ անուանեն քրիստոնեայքն որ զտէղին անգիտանայր. վասն զի ասաց փրկիչն ցՎարիամ և ցՎարթա քորքն Վազարու՝ թէ "Վր եղիք զնա,,։ Տեսէր, ասէ, տգիտութիւն որ զտէղին անգիտանայ. նա ա՚ծ է, ասէ, որ այդպէս տկարանայր։

Այլ ես առացից ցնոսա. ոչ էր այդպէս, այլ զդիմադրութիւն նոցա խորհէր յամօթ առնել։ Վնգիտանայր Վրիստոս զտէղին ՚ի ձեռն այնմ իրացն. որ ասաց՝ ուր եղիք զնա։ Վ՚չ ապաքէն և Հայր ՚ի դրախտին չըՔէլով

1 Խմա՝ յառաջ երթալով բանին, յընթացս Հառին։

խնդրեր զ՝Յաժ և ասէր. "Ո՞ւր ես, Յաժ,, ոչ թա-
գուցեալ կաս. Ա՝ն ինչ ոչ ասաց ՚ի վտեղիան յառա-
ջագոյն Յաժ. և նա ասէր ՚ին՝ Յաժ, ոչ ես. Այս զինչ
նա. "Ա՝ռաջ զձայն գնալոյ քո ՚ի դրախտի աստ և եր-
կեայ, քանզի մերկ էի և թագեայ,, Եթէ զայս ան-
գիտութիւն կոչես, կոչեա ապա և զայն անգիտութիւն,
վասն զի ասաց Ա՝ստուած յա՝արիամ և յա՝արձա՝ թէ
ոչ եգիտ զնա. Այլ եթէ զայն անգիտութիւն ասես,
զինչ ապա ասես յորժամ լսես ՚ի խօսել ընդ Այեվնի
"Ո՞ւր ե Յ՝ընկել եղեալը քո,, Այս եթէ զայն անգի-
տութիւն կոչես, կոչեա և զայս.

Յ՝ագես և այլ ցոյցք քեզ յաղագս այդմ բանի յին-
սին գրոց. Յ՝նչ տէր ցԱ՝բրահամ. "Յ՝ղաղակ սոդո-
մայեցւոցն եղին առ իս. և իմեալ տեսից թէ ըստ աղա-
ղակի նոցա որ հասեալ է առ իս՝ վճարեսցին. ապա թէ
ոչ՝ զի գիտասցից,, Յ՝այն որ գիտէր զամենայն նախ քան
զլինելոցն, որ քննէ և հետազօտէ զսիրտս և զերիկա-
մունս, որ գիտէր զամենայն խորհուրդս մարդկան, մի-
թէ յանգիտութենէ՞ ասէր՝ եթէ իմեալ տեսից եթէ
ըստ աղաղակի նոցա որ յիս հասանիցէ՝ վճարեսցին. ա-
պա թէ ոչ՝ զի գիտասցից. Այս եթէ այն անգիտութիւն
է, ապա և այս անգիտանալի լիցի. Յ՝ոչ այլ ոչ հայր ըստ
հին կտակարանացն անգիտանայր, և ոչ որդի ՚ի նորումն.
Ո՞ւրեմն ապա "Իմեալ տեսից թէ ըստ աղաղակի նոցա
որ յիս հասեալ իցէ՝ վճարեսցին. ապա թէ ոչ՝ զի գիտա-
ցից,, Ա՝ռաջ, ասէ, եկն առ իս. այլ կամիմ անդրէն
առաւգագոյն իրօքդ այդուիկ առնուլ զգիտութիւն. ոչ
եթէ ես անգիտանամ, այլ ուսուցանել կամիմ զմար-
դիկ զի ոչ վայրապար բանիւք հաւատալ, և ոչ եթէ ոք
ինչ չար վասն ընկերի իւրոյ՝ հաւատալ. այլ նախ քննել
զնոսա, և ՚ի ձեռն իրացն այնոցիկ առնուլ զգիտութիւն,
և այնպէս ապա պարտ է հաւատալ. Ա՝ն որոյ և յայ-
լում տեղւոջ ասէ. "Ա՝՚ի հաւատար ամենայն բանից,,
զի ոչ այնպէս կործանիլ զկեանս մարդկան, որպէս վաղ-
վաղակի հաւատալ ումեք ասացելոց զայս ինչ կամ զայն.
Յ՝ւ մարգարէն Դաւիթ մարգարէացաւ և ասէ. "Ա՝ր
խօսեր գաղտ զընկերս իւրմէ, զնա բացէ ՚ի բաց Հալա-
ծէի,,

Տեսեր եթէ ոչ եղև անգիտութիւն փրկչին՝ որ ասաց

այսպէս “Ո՞ւր եղիք զնա,,. որպէս ոչ եղև հօր՝ որ ասաց թէ “Ո՞ւր ես, Ադամ,,. կամ որպէս ասաց ցՀայրն՝ եթէ “Ո՞ւր է Աբէլ եղբայր քո,,. կամ որ ասէր եթէ “Ոչեալ տեսից թէ ըստ աղաղակի նոցա որ յիս հասեալ է՝ վճարեսցին. ապա թէ ոչ՝ զի գիտացից,,: Ո՞չ ապաքէն ժամ է այսուհետև պատերազմել ընդ նոսա՝ եթէ ոչ վասն տկարութեան աղօթիցն Քրիստոս և յաղոյց զի աղարտոս, ոչ : Ա՛լուր ստուգութեամբ բազմաց, աղաչեմ՝

Ո՛ախձանեցաւ զի աղարտոս, և Յիսուս ոչ էր յայնմ տեղւոջ, այլ ի Գալիլեա, և ասէր ցաշակերտսն իւր. “Զի աղարտոս բարեկամն մեր ննջեաց,,: Այլ նոքա կարծէին եթէ վասն ննջելոյ քնոյ ասէ, ասէն ցնա. “Տէր, եթէ ննջեաց, ապա ապրի,,: Այս ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս. “Զի աղարտոս բարեկամն մեր մեռաւ,,: Դայ այնուհետև ի Բեթանիա ի տեղին ուր զի աղարտոս եդեալ կայր, և եւ ընդ առաջ նորա քոյրն Զ՝ աղարտու և ասէ. “Տէր, եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ,,: Ցկայր եր կինն և ոչ գիտէր, զի թէպէտ և ոչ անդ մերձ էր Քրիստոս մարդեղութեամբն, այլ աճուրդեան իշխանութեամբն մերձ էր. քանզի և մարմնոյն գալստեամբն ոչ լինելով անդ՝ ըստ զիջանելոյ վարդապետին կարծէր : Այս վասն այնորիկ ասէր. “Տէր, եթէ աստ լեալ էիր, ոչ էր մեռեալ եղբայրն իմ: Այս արդ այժմ գիտեմ, ասէ, եթէ զոր ինչ խնդրեսցես յայ, տայ քեզ,,: Այս փրկիչն ըստ խնդրուածոյ նորա առնէր զաղօթսն. քանզի ոչ կարիս ունէր աղօթելոյ, և այնպէս յարուցանէր զմեռեալն: Ա՛յլ յաղագս տկարութեան կնոջն առնէր զաղօթսն: Ա՛յս. “Եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. և արդ գիտեմ եթէ զոր ինչ խնդրեսցես դու յայ, տայ քեզ,,: Ա՛յցելութեամբ խնդրեցեր, և ես հայցելութիւ տամ քեզ:

Ա՛յս աղբիւր յորդաբուխ է և բղխէ. եթէ ոք մատուցանէ անօթս մեծ, արբցէ ջուր բազում. և եթէ փոքր մատուցանէ, արբցէ ջուր սակաւ: Ո՞այս խընդրուածս հայցեաց, և տուաւ նմա: Ա՛իւս այլ տեղ ասաց. “Ա՛յս բանիւ միայն, և բժշկեսցի մանուկն իմ. և ասէ ցնա. ըստ հաւատոյ քոյ եղիցի քեզ,,: Այս այլ տեղ՝ եթէ “Ա՛ն եմ արժանի եթէ ընդ յարկաւ իմով

մոցես ,,. և այլ ոմն ասաց՝ եթէ "Ի՛ժշկեա զաչսն իմ. և ասէ ցնա՝ երիվ , սրդին քո կենդանի է ,,. Ի՛ստ մոտաց և բարուց մարդկանն բժշկութիւն մատուցանէր բժշկողն. Ի՛յլ ոմն ՚ի գաղտնի և ՚ի ծածուկ մերձեցաւ ՚ի քղանցս Հանդերձից նորա, և ՚ի ծածուկ պտղաբերեաց զբժշկութիւնն. և իբրաքանչիւր ոք որով իւիք հատա- ւոյ, այնու և զբժշկութիւնն ընկալեալ.

Ալինա այս ասէր. զիտեմ զոր ինչ խնդրեսցես յայր, տայ քեզ ՚ած. Ալ եթէ նա պէտս ունէր աղօթից, այլ ըստ տկարութեան կնոջն զինքանէր. զի ցուցցէ եթէ ոչ էր Հակառակ ՚ի, այլ զի զայն զոր ինքն առնէր, և Հայր նմին նման գործէր. Ա՛ւ ստեղծ յաուաջագոյն զմարդն ՚ած և նոցա եղև ստեղծիչ. "Ի՛րասցուք, ասէ, մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան ,,. Վարձեալ կամեցաւ զաւազակն ՚ի դրախտն մուծանել, և ոչ ինչ պէտք եղեն նմա աղօթից. վաղվաղակի բան ասաց միայն, և եմոյծ զնա ՚ի դրախտն, Թէպէտ և զամենեսեան զկնի Ի՛զամայ արգել ՚ի մտանելոյ ՚ի տեղի նորա. Օ՛ի Հրամանն էտ ՚ած բոցեղէն սերովբէիցն և քերովբէիցն պահել զՀանապարհ դրախտին. այլ տիրաբար Ի՛սիտաս բացեալ զՀանապարհ դրախտին, և զաւազակին ՚ի ներքս արկ. քանզի յաղագս աւազակութեանն արտասահմանեալ էր ՚ի դրախտէն Հայրն մեր Ի՛զամ.

Ալ տէր, վասն միոյ յանցանացդ միայն արտաքսեալ զնա, և զաւազակին ՚ի ներքս ածեր. որ բիւրս բիւրուց բիւրապատիկ անօրէնութեան պարտապան էր, այդպէս միայն մեկին բանիւ վասն միոյ բանի դրախտէն արա- բեր քնակիչ. Ասայ և ոչ այն, ասէ, եղև առանց իմ զոր գործեաց Հայր, և ոչ այս զոր ես գործեմ առանց Հօր. "Օ՛ի ես ՚ի Հայր և Հայր ՚ի յիս ,,.

Ա՛ւ զի գիտացես եթէ ոչ լինէր պէտս աղօթելոյ առ ՚ի յարուցանել զմեռեալն, լոր զինչ ասէ յաղօթսն. "Ի՛ոհանամ զքէն, Հայր, զի լուար ինձ ,,. Օ՛ինչ իսկ ասայ, ոչ էր առ Հայրն նախ քան զասել զբանս զայս, և ասէ՝ եթէ լուար. զինչ ասայ, ոչ էր խօսեալ նախ քան զձայնս զայս, և ասէր՝ եթէ գոհանամ զքէն զի լուար ինձ: Ա՛ւ ընդէր վասն որոյ գիտէրն եղև. "Ի՛ալ վասն ժողովրդեանս որ շուրջ կան՝ առնեմ զայս, զի ծանիցեն եթէ դու առաքեցեր զիս ,,: Ա՛յեթէ վասն մեռելոյն ա-

զաչէաց, մինչ հայցեաց զի յարուսցէ զ'Ի ազարոս, մինչ ասաց՝ հայր, հրամայեա մահու զի հնազանդեսցի ինձ, մինչ ասաց՝ հայր, հրամայեա դժոխոց զի մի ազխէ զդրունս իւր, այլ ասէ յօժարութեամբ զմեռեալն։ "Ի՛ւր վասն ժողովրդեանս, ասէ, որ շուրջ կան՝ առնեմ զայս, զի հաւատասցեն եթէ դու առաքեցեր ,,։ Ա՛ն զի ոչ եթէ եղեալն նշան միայն էր, այլ և իրատ օրոց մերձն կային։ Ցեսէր եթէ ոչ եղեն աղօթքն վասն մեռելոյն, այլ վասն անհաւատիցն որ մերձ էին. "զի հաւատասցեն, ասէ, թէ դու առաքեցեր զիս ,,։

Ա՛ւ զերրորդ ունիցիմք հաւատս եթէ նա առաքեաց ըզքեզ. միտ դիր ստուգութեամբ, աղաչեմ։ Ի՛հաւասիկ, ասէ, իմով տէրութեամբս կոչեմ զմեռեալս. ահաւասիկ իմով իշխանութեամբս հրամայեմ մահու։ Կոչեմ զՀայրն որ յերկինս է՝ Հայր. և եթէ ոչ էր Հայր իմ, սակայն խափանեալ էր զմեռելոյն յարութիւնն. և եթէ Հայր ոչ էր իմ Հայր, արգելեալ էր զմահ տալ զմեռեալն։ Ի՛ւր զՀայր՝ Հայր կոչեմ, քանզի գիտեմ եթէ Հայր իմ է աշխարհութեամբ։ Կոչեմ զՀայր՝ Հայր, և կոչեմ զ'Ի ազարոս 'ի գերեզմանէ։ Ա՛յլ եթէ յառաջագոյն ոչ էր աշխարհիս, և ոչ յայսմ լինիցի. ապա եթէ աշխարհիս Հայր է Հայրն, լուիցէ մեռեալն առ 'ի վարդապետութենէն այնոցիկ որ մերձն կային։

Ո՛րպէս ապա ասէր. "Ի՛ ազարէ, արի եկ արտաքս ,,։ Յորժամ եղև աղօթքն, ոչ յարեաւ մեռեալն. այլ յորժամ ասաց "Ի՛ ազարէ, եկ արտաքս ,,, ապա յայնժամ յարեաւ 'ի մեռելոց։ Ո՛վ բանութիւն մահու. ո՛վ բանութիւն զօրութեան այնմ որ ըմբռնեաւն էր զոգին։ Ա՛ղօթք եղև, և ոչ արձակէր զմեռեալն։ Ա՛յնդէր. քանզի ոչ առ հրաման. դահիճ էր աստանօր և ըմբռնեալ էր զՀոգին. եթէ հրաման ոչ առնուր, ասէ, ոչ արձակեմ. քանզի աղօթքն, ասէ, ոչ եղեն վասն իմ, այլ վասն թերահաւատիցն որ մերձն կային. եթէ ոչ առնուր հրաման, ոչ արձակեմ զպարտապանն. կամ և ինուր ձայնին, զի արձակեցից զոգին։ "Ի՛ ազարէ, եկ արտաքս ,,։ Ի՛ ձայն հրամանացն և արձակեաց զոր ունէին։ Ա՛մենեցուն հերձուածողք, քանզի եցոյց բանն եթէ ոչ վասն յարութեան մեռելոյն եղեն աղօթքն, այլ վասն տկարութեան լսողացն որ մերձն կային։ "Ի՛ ա-

զարէ, եկ արտաքս ,,։ Ա՚ասն ելը յանուանէ կոչէ զմեռեալն. զի մի՛ յարձակել՝ ձայնին յարիցեն մեռեալք ա-մենեքեան որ՝ի գերեզմանսն են. սակս այնորիկ յանուանէ կոչէր և ասէր՝ Ղազարէ, եկ արտաքս։ Ո՛չքեզ միայն առ ժամս այս կոչեմ, զի՛ի ձեռն այսմ աւուրս ցհանդերձելոցն ցուցանեմ զյարութիւն. զի եթէ զայն որ՝ի դժոխսն էին՝ զարթուցի ես, և զտիեզերս յարուցանեմ։ “Ա՚յս եմ յարութիւն և կեանք ,,։

“Ղազարէ, եկ արտաքս։ Այլ եւ մեռեալն ոտիւքն կապելովք ,,։ Ա՚վ զարմանալոյ սքանչելեացն. որ զՀոգին՝ի կապանաց մահու ազատեաց, որ խորտակեաց զզրուսն դժոխոց, և փշրեաց զդրունս պղնձիս և զնիգս երկաթիս, և ազատեաց զՀոգին՝ի կապանաց մահու, ո՛չ կարեր զոտն արձակել։ Այլ[1] կարի իսկ քաջ. այլ Ա՚րէից արար հրաման լուծանել զկապանն զոր նոքա յառաջագոյն պնդեցին և կապեցին. զի Ճանաչիցեն զկընիք պատանաց իւրեանց, զի գիտելով իմացցին թէ Ղա-զարոս իսկ որ՝ի նոցանէն պատեցաւ, և Ա՚Քրիստոս որ Հաճութեամբ Հօր եկեալ էր՝ ունի իշխանութիւն կե-նաց և մահու։ Այլ նմա փառք յաւիտեանս. ամէն։

1 Պակասէր յօրինակին Ե՝ կարի իսկ քաջ... լուծանել զկապանն. յա-ւելաւ՝ի յունէն։

ԱՆԴՐԻԱԿԱՆ ՃԱՌԻ

ՃԱՆԿԻ

Ա. Խօսք ասացեալ Ա՛նտիոք, երբեմն նոր քահանայ՝ ի հին եկեղեցիս, ի բան առաքելոյ առ Տիմոթէոս՝ եթէ "Ականջ դնիր խառնեսջիր վասն ստամոքսիդ և ստէպ հիւանդութեանցդ,,. և որք գայթակղին վասն արդարոյ վասանգիցն, և մեղաւորացն՝ ի բարիս վայելելոյ:

Բ. Խօսք ասացեալ Ա՛նտիոք, երբեմն նոր քահանայ՝ ի հին եկեղեցիս, և վասն անդրկն դարձուցանելոյ զպատկերը մեծի Թագաւորին Յէսուսի, և՝ ի բան առաքելոյ "Ա՛ճապատանց պատուիրել յայսմ ժամանակի զգոյշ լինել,,. և վասն ապահովութեան:

Գ. Յաղագս գնալոյ Փլաբիանոսի արքեպիսկոպոսի առ Թագաւորն բարեխօսել վասն քաղաքին զի դարձուցին զանդրիանդքն: Եւ զի բարձրագոյն և մեծ է ըստ այ քահանայութիւն քան զթագաւորութիւն: Եւ վասն պահոց պնդութեան օրինակաւ նինուէացւոցն առ աննասունն: Եւ թէ բամբասելն և չարախօսելն վատթար է քան զմարմին եղբօրն ուտել: Եւ զի բազում պարտաւորք ազատեցան, և անպարտք պատուհասեցան:

Դ. Ա՛խտութիւն առ ժողովուրդն, և վասն նեղութեան և համբերութեան օրինակաւ Յոբայ և ելից մանկանցն, և վասն՝ ի բաց կալ հանապազ՝ ի բանից երգմանէ:

Ե. Դարձեալ առ ժողովուրդն զի քաջութեամբ տանիցին եկեղեցոյ սպառնալեաց օրինակաւ գրոյ չափաւոր պատմութիւն Յոբայ և նինուէացւոցն: Եւ զի քան՝ ի մահուանէ՝ ի մեղայ պարտ է երկնչել. և թէ ամենայն ջանիւ պարտ է փախչել յերգմանէ:

Զ. Ամէն բարւոք է երկիւղ Իշխանաց. և վասն դի-

պատածոյ Հանապարհին որոց հանդերձեալ էին պատմել Թագաւորին. և Թէ որք անպարտ գոլով չարչարին և գոհանան զնա, հաւատար են որ վասն նմա չարչարիցին օրինակաւ ի գրոց վասն երդման։

Ի. Ահ մնաց և տրտմութիւն յաշխարհ մեղաց բերին, որ և բարձաւ Քրիստոսիւ։ Այլ Թէ ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր։ Այլ Թէ ոչ միայն պատուէ զմեզ Աստուած, այլ և տանջէ ըստ նմանութեան բարութեանց։

Ը. Յաղագս գնալոց տեառն նա ի դրախտի անդ ընդ երեկս, և վասն փախչելոց յերդմանէ։

Թ. Գովութիւն գովասանական յաղագս ուղղելոց ժողովրդեանն չերդնուլ։ Այլ Թէ զինի կերակրոյ պարտ է մտանել յեկեղեցին և ունկնդիր լինել բանիցն նա։ Այլ ընդէր յետ բազում ժամանակաց տուաւ գիր։ Այլ յումեքեւտասան սաղմոսն Գաւթի։ Այլ Թէ չէ պարտ երդնուլ։

Ժ. Ահ պարտ է յետ կերակրոյ ոչ հեռանալ յեկեղեցւոյ։ Այլ քնախօսութիւն զաշխարհէ և զարարչութենէն նա. և քնաւ ի բաց կալ յերդմանէ։

ԺԱ. Գոհութիւն նա վասն փոխարկելոց ակնկալի չարեացն և յիշելոց վնասն. և արհամարհանաց մարմնոյ մերոյ և նորին ստեղծմանն. և ուղղելոց զշաւիղս երդման։

ԺԲ. Գարձեալ գոհութիւն առ Աստ վասն Թողութեան զոր առ Թագաւորն մեզան։ Այլ վասն արարածոց և քնական օրինաց մարդոյն. և վասն երդման։

ԺԳ. Գարձեալ գոհութիւն նա վասն ազատելոց ի խռովութեանցն. և մարդոյն հրաշագործութեանց, և քնական օրինաւք գիտութեան գործոց։ Այլ սերտիւ ուղղել զերդումն։

ԺԴ. Ալ ասն նոյն քաղաքին իրաց։ Այլ զի ոմանք յաչախեցին զհամբաւ ահին։ Այլ խրատ վասն երդման և զանցանելոյ օրինակաւ պատուութեան Աստուածայ և ի Աաւուղայ։

ԺԵ. Գարձեալ վասն նորին քաղաքի։ Այլ զի բարի է երկիւղ և ողորմի քան զծաղր։ Այլ Թէ քան սպասնանել չար է յերդումն ածել զոք։

ԺԶ. Ալ ասն հաստատուն գալստեան իշխանին, և երկիւղ ի քաղաքին և նորին միխիթարելոց։ Այլ ի կապանան Պաւղոսի, և վասն երդման։

ԺԷ. Ալ ասն առաքելոց իշխանացն ի Թագաւորէն քրն-

նել զյանցանս քաղաքին վասն պատկերին դարձուցանելոյ ։

ԺԵ. Ի սուն յառաջասացեալ վտանգիցն, և վասն պահոց, և ի բան առաքելոյ "Երախտ լերուք ի տէր յամենայն ժամ,,։

ԺԹ. Խօսք վասն տանի կեցուցիչ կիրակէին, և յեկելոցն բազմութիւնն ։ Յու թէ չէ պարտ երդնուլ ։

Ի. Ի սուն հաշտելոյ Թագաւորին ընդ քաղաքին, և որք մեղան ի կործանել զպատկերս անպրիանտացն ։ Յու ի գալուստ եպիսկոպոսին ։

Ա յսոքիկ են ի գիրքս անդրիանտաց, ի պատմութենէ գերահռչակ և տիեզերախուռն Թագաւորեալ քաղաքին Կոստանդնուպոլսի որ չինեցաւ ի Կոստանդիանոսէ և նոր Հռոմ անուանեցաւ, զոր մանաւանդ ինչ եդաք ի սկզբան ասա ։

ՎԱՍՆ ՊԱՏՃԱՌԻ ԳՐՈՑՍ ԱՆԴՐԻԱՆՏԱՑ

Ա յդ չեա հրկէզն լինելոյ Ի աղէսի կայսեր Ա լեքսիա նուպոլիս, յորժամ սրտմտութեամբ դիմեաց նա ի մարտ պատերազմի յաղագս այսպանելոյն նորա ի կոստանդիանուպոլսացւոյն վասն բարբարոսացն, և վասն ամենայն չարեացն զոր գործեաց ընդ սուրբս և ուղղափառ արսն, առնու այնուհետև զԹագն Կրատիանոս եղբօրորդի նորա հանդերձ մանկագունիւ եղբարբ իւրով Ի աղէնտիանոսիւ ։ Յայնժամ ապա խորհուրդ արարեալ Երկոցունց Թագաւորակից եղբարցն հանդերձ հանրիէն բազմութեամբ իշխանացն հռոմայեցւոց և Թագաւորեցուցին զմեծն Ի սահակ զայր քաջ և բարեպաշտօն, որ էր յաշխարհին սպանիացւոց ի հռչակաւոր և յականաւոր քաղաքէ ։

Ի սկ ապա իբրև Թագաւորեաց նա, և պատեալ վանեաց նա զամենայն աղգն բարբարոսաց, կամ էզև նմա ի չորրորդում ամի արքայութեանն իւրոյ առնել անդրի արծաթի վսեմագոյն զնմանութենէ իւրոյ կերպարանացն, և ետ տանել Ա ղնտիոք մայրաքաղաքն Ա սորւոց և անդ

կանգնել ՚ի վերայ բարձր սեան մերձ ՚ի տաձար սրբու-
Հւոյն Աբրահամու ՝ածածկին, որպէս և մեծին Կոստան-
դիանոսի կայ կանգնեալ ՚ի վերայ ծիրանի սեանն մեծ
՚ի վաճառափողոցն Կոստանդինուպոլսի: Վկանզի և այս
սովորութիւն է առաջնոց Թագաւորացն առ ՚ի հաստա-
տուն պահել այնուհետև ջհնազանդութիւն տիեզե-
րաց ՚ի ներքոյ ընդ Թագաւորութեանն իւրեանց:

Ընդ իբրև եհաս պատկեր Թագաւորութեանն իւ-
րոյ ՚ի մեծն Նիտիոք, և կանգնեցաւ ՚ի տեղւոջն յորում
և հրամայեցաւ, յայնժամ յետ աւուրց ինչ դիպ եղև
կոմսի հազարապետի քաղաքին և եպարքոսին արտաքոյ
լինել քաղաքին յաղագս իրիք ինչ զբօսանաց: Իսկ խառ-
նիճաղանջ ռամիկ ամբոխ քաղաքին, որք ըստ սովորու-
թեանն ժողովեալ էին յասպարէզ ձիրնթացիցն յա-
ւուր կազանդացն, խոյհուրդս անմիտս ՚ի մէջ առեալ
քարաձիգ եղեալ խորտակեցին զպատկեր Թագաւորին
և բաժանեցին զարծաթն ՚ի մէջ իւրեանց: Իսկ ՚ի դառ-
նալ անդրէն կոմսին ՚ի քաղաքն և տեսանել, բարկա-
ցաւ յոյժ ՚ի վերայ գործելոց իրացն, և կալեալ զբա-
զումս ՚ի քաղաքացեացն եդ ՚ի բանտի, և առ յաւարի
զտունս նոցա. գրեաց և առ մեծն Թէոդոս Թագաւորն
և ծանոյց նմա զպղտոս իրացն որ գործեցան: Յայնժամ
բարկացեալ Թագաւորն ետ հրաման ՚ի ձեռն գրոյ կոմ-
սին և եպարքոսին խրատել զբազումն ձեռաց և ոտից
հատմամբ և աչաց խլեալ և աւարառութեամբ
ընչից և տարաստմանութեամբ: Ընդ ևր տեսանել
այնուհետև մեգ և մառախուղ և խաւար սգոյ և տրտո-
մութեան զմայրաքաղաքսն մածեալ:

Ալան որոյ և Յոհան ոսկիբերան, որ յայնժամ էր
քահանայ մեծի եկեղեցւոյն, կոչեցեալ ՚ի միայնակե-
ցութենէ ՚ի վարդապետութիւն ժողովրդեանն, խօսե-
ցաւ զգիրս զայսոսիկ ՚ի սուրբ քառասնեորդսն Ձառս
քսանևմի ՚ի դէմ հայրապետին և բազմութեանն բանս
մխիթարականս: Ա՚յս և զեպիսկոպոսապետն Վլաբիոս
յորդորէր զնել զանձն ՚ի վերայ հօտին իւրոյ որ աւան-
դեցաւ նմա ՚ի Քրիստոսէ, և նմանող լինել Պօվլոսի
գնալ առ Թագաւորն և ասել, որպէս և նա ցոյց. "Ա-
Թէ Թողուս նոցա զմեղս Թող, ապա Թէ ոչ՝ և զիս ջնջ-
ջեա ՚ի գիրս[1] Թէնեդ յորում գրեցեր ,, : Իսկ զժողո-

վերդան խրատեր զմտաւ ածել զահաւոր զհանդերձեալ դատաստանին զերկիւղն։ Օ՜ի եթէ երկրաւոր թագաւորի բարկութիւն այսչափ՝ տանջանս էած, որչափ և առաւել երկնաւորին, որ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի նորա։

Որ և առ երկոսին կողմանն բարիոք կատարեցաւ վարդապետութիւն սրբոյն. վասն զի ժողովուրդն բազում զգաստութեի եցոյց, և սուրբ Հայրապետն գնաց ՚ի Կոստանդինուպոլիս, և յաւուր կենսաբեր պասեքի յարութեանն Քրիստոսի յանդիման լեալ թագաւորին աղաչեաց զնա, և գիր հրամանաց թողութեան առեալ ՚ի նմանէ եկն և ազատեաց զքաղաքն։ Արդ վասն այսր պատճառի ասացեալ է զգիրքս զայս մեծի ոսկիբերանին, յաւելեալ ՚ի սմա և զպահս պնդութեան, միամտութեան և զամենայն տեսակս առաքինութեան։

ՃԱՌ ՈՒՍՈՒՑԻՆ

Խօսք ասացեալ Յովհաննէս երբեմն նոր քահանայ ՚ի հին եկեղեցիս ՚ի բան առաքելոյ առ Տիմոթէոս՝ եթէ «Սակաւ գինի խառնեսջիր վասն ստամոքսիդ և ոտիպ հիւանդութեանցդ»։ Եւ որք դայթակղին վասն արդարոցն վտանգից, և մեղաւորացն ՚ի բարիս վայելելոյ։

Լուսաւք[1] զառաքելական զձայնն, զփողն երկնային, զերգն հոգևորական։ Օ՜ի որպէս փող ահեղ հնչմամբ պատերազմականաւ ահաբեկէ զթշնամին, և զմեզ ինքեանս յարուցանէ ՚ի վայրանկեալ հոգոց և բազում համարձակութեամբ ընու, և անճարտնչելի արասցէ այնոցիկ որ մնադիւր են սատանայի. և որպէս նուագողքն դարձեալ զարտմութիւն փոխէ ՚ի զուարճութիւն, և փարատէ զչիւանդացեալ մտաց զախտս, և բազում փափագմամբ բերէ մեզ զօգտութիւնս։ Լուսաւք այժմ վասն բազմակարօտ ընչից զասացեալսն առ Տիմոթէոս. վասն ձեռնադրութեի առ նա առաքելով ասէ.

1 Ցօրին. խանդարեալ երկո- խն վէպին. զոր ՚ի յունականէն քին բառիդ՝ յօտալ գրչէ սկզբնա- ուղղեցաք։
ւորեալ էր այսպէս. Ջանսկբնա-

“Զեռն վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցես, և մի լինիցիս հաղորդ մեղաց օտարաց,,. և որ շաղախեալ լինին յանօրէնութիւնս յայս, ’ի բաց կացցես ’ի նոցանէ զվտանգս, ցուցանելով զի ընդ այլում յանցանաց այլք անկանին ’ի տանջանս յետ նոցին այնոցիկ. վասն զի զիշխանութիւն ձեռնադրութեանն ’ի չար ընկեցին։ Այլ ապա դարձեալ ասէ. “Սակաւ մի գինի խառնեսջիր վասն ստամաքսիդ և ստէպ հիւանդութեանց քոց,,։ Այլ վասն դասակարգութեան ծառայից և վասն արծաթասիրութեանն, նախանձու և վասն ձախանաչից, հեղգութեան և վասն այլոց բազմաց այսօր ցուցաւ մեզ։ Այլ ընդ այս ամենայն անցանել բանիւ այժմ ոչ կարեմք, զինչ արդեօք խորհիցիք զասացեալսն զորս սկսանիմ այժմ պատմել սիրոյդ ձերում։ Ո՞ւ որպէս ’ի բուրաստան բազում և զանազան տեսանեմ ծաղիկս, վարդս և մանուշակս և շուշանս, այլ ընդ ամենեսեան պէսպէս սերմանեալ զառատագոյն պտուղ հոգւոյն սրբոյ ’ի մեզ լցեալ բազում անուշահոտութեամբ։ Այնուամենայնիւ ոչ եթէ բուրաստան միայն, այլ և դրախտ ամենապատիկ է ընդերցումն ասուածային գրոց. ոչ եթէ միայն փոքր ինչ անուշահոտութիւն ունելով ծաղիկս այս, այլ և պտուղս, որով զՀոգին կերակրել կարող է։

Ո՞ւրինչ այժմ կամիցիք յասացելոցն ’ի մէջ բերել այսօր։ Կամիք զի որ Թուին քան զամենայն հեշտագոյն հանդիպելոց այնմ հասու լինել բարեաց, զայս սկսանիմ ասել այժմ։ Ինձ այսպէս Թուի, և ձեզ բարիոք հաղորդակից լինել։ Ո՞ւրինչ արդեօք քան զայլս հեշտագոյն իցէ. հեշտագոյն ասեմ, որ հանդիպողաց Թուիցի հասու լինել բարեաց. և Թէ որպէս իցէ այս, ես ասացից. “Գինի, ասէ, սակաւ խառնեսջիր վասն ստամաքսիդ և ստէպ հիւանդութեանց քոց,,։

Այլ արդեօք զամենայն զմեկնութիւն բանիս այսորիկ ժողովեալ, ասասցուք զբանս զայս ոչ եթէ վասն պատուասիրութեան, և ոչ զասել բանիս կարող գոլով ձեզ պարգեւել փութամ, այլ զի ոչ մեր իցէ ասելն, այլ Հնոցհաց Հոգւոյն սրբոյ է փչումն այս. իսկ մեք մանաւանդ զդանդաղութիւն զանկնդիր լսողաց զարթուցանեմք, և ցուցանեմք Եթէ որպիսի գանձանակ իցէ բանք ՚ձեղէն գրոց, և ոչ է առանց գայթակղութեան ան-

պատրաստաբար ՚ի բաց գնալ ՚ի սոցանէ։ Արդ փոքր է բանս այս և հեշտալի՝ ոչ ունելով զդժուարութիւն, և որպէս զբազումս զայլս երևեսցի ձեզ բազում ձեռնտութեամբ ունելով պատճառս ՚ի մէնջ խորհրդաբար ի-մաստասիրել ձեզ զսա վերատին, բազում մանաւանդ սմա և նմա իւրաքանչիւր ուրուք անձին զուղղութիւն ունելով, և ջերմ լսողաց բիւրապատիկ լցուցանել զոգւոց գանձանակս։ Արդ այժմ մի զսա և մի զոր և կարծեք եթէ փոքր իցէ, ՚ի նմանէ ՚ի բաց երթիցուք։ Քանզի ա-մենեքեան սոքա չնորհօք Հոգւոյն սրբոյ լի էն. և չնորհք Հոգւոյն սրբոյ ոչ է փոքր և նուազագոյն, և որոց տա-ւեալ իցէ արժանաւորութիւն պարգևիս՝ մեծ և բա-քանչելի է։

Ա՚ի այսու հետև առանց աշխատութեան գործոյ լսե-ցուք զսա. զի և որք արուեստիւ բերեն զերկիր առ ՚ի գիւտս ոսկւոյ, և յորժամ գտեալ ՚ի հալոցս արկանեն, ոչ եթէ միայն զձուլեալ ոսկին առցեն ՚ի հրոյն, այլ և զմնացեալսն բազում ջանիւ և պատրաստու-թեամբ ժողովեն։ Այս մեք այժմ բազում ոսկւոյ հան-դիպեցաք առաքելական բանիցս ընտրելոց որ ոչ է ար-կեալ ՚ի բոլս, այլ ՚ի միտս և յոգիս ձեր հաստատեալ. և ոչ բացակիզութեամբ հրոյ փորձեալ, այլ հրով հո-գւոյն սրբոյ պարտ է մեզ հանդերձ ստուգութեամբ և զմնսոր ցայտմունսն ժողովել, այսինքն որ հեշտագոյն իցէ յաճախին գիրս։ Օ՚ի թէպէտ և սակաւ բան իցէ, այլ բազում ունի զօրութիւն. զի և մարգարիտն ոչ եթէ ՚ի մեծութենէ չափոյն, այլ ՚ի բնական գեղեցկութե-նէն ունի զգինս վաճառոյն. այսպէս է և բանք ընթեր-ցուածոյ աճածային գրոց։ Օ՚ի և յարտաքինն խրատան բազում նուագս բանից նուագեցան, և բազում հեղաս զնոքօք լսողացն զօղանջումն, սակայն ունկնդիրքն ունայն ձեռօք արձակեցան և ոչ մեծ կամ փոքր պղպաբերե-ցան բարիս։ Այլ չնորհք Հոգւոյն սրբոյ ոչ է այսպէս, նա և հակառակ է այսմ ամենայնի, և փոքր բանիւ ա-մենեցուն միտք որ ՚ի միտ առնուն՝ իմաստասիրեն. և բա-ւական իցէ մի բան առնուլ յայսցանէ և ունել նուաս զկեանս ամենայն հանգստեան։ Քանզի այսչափ է մե-ծութեամբ, ըստ որում զարթուցանեմք զանձինս ձեր խնդամտութեամբ ընդունել զասացեալսն։ Ապա մեք

այսպէս զգուշաբար պատրաստիմք որպէս թէ բազում խորհք ծածկեալ է բանս այս, և բազում ջան պիտոյ է ի լոյս ածել զինդիրս զայս։

Ամանչ այսպիսի բանս թուեցաւ ասել. միթէ ոչ էր կարող իմանալ յանձնէ իւրմէ Յիսուիթէոս թէ գինի խառնել պարտ է, այլ միայր ի վարդապետէն իւրմէ ուսանել զայն։ Օ՞ր և վարդապետն ոչ եթէ միայն հրամայեաց, այլ և գրով հաստատեաց՝ որպէս յայնմանս պղնձիս գրուագրել հրամանաւ։ Իսկ նա ոչ գժուարաց վասն այսպիսի առաքինանս ի հրապարակս գրել աշակերտին զայս։ Օ՞ ի ուսանիցիս եթէ ոչ միայն ոչ ի բաց եդիր առանց խնդրուածոց, այլ ի կարեաց ընդունական եղև. և այս ոչ եթէ ի Պաւղոսէ իցէ միայն, այլ ի ընդհաց հոգւոյն սրբոյ, որ ոչ ցուցանելով միայն ասեմ, այլ և ի գրոց հաստատեալ. նա և զամենայն զոր ինչ հանդերձեալ էր առնել՝ հրամանաւ տալ նմա զպէտս այնմ հետևել, և առ յապա ցուցումն ողջ հետևին ի պատուիրանս ոչ պակասութիւն ինքեանց վարկանելով զայս վասն կարողութեան և զօրանալոյ ի տկարութիւն։

Ընդէր տեղի ետ ՚ած առն այսպիսի ունելով համարձակութիւն, որոյ ասկերք և նշխարք զգեաս հալածէր, յայսպիսի հիւանդութիւնս անկանել. և ոչ միայնակ ի հիւանդութիւնս, այլ բազում ցաւս ընդ միմեանս խառնեալ, որ ոչ տային նմա փոքր ինչ հանգիստ առնուլ։ Այս ուստի յայտ իցէ այս. ի նմին բանիցն Պաւղոսի։ Օ՞ ի ոչ ասաց՝ վասն հիւանդութեան քո, այլ հիւանդութենէնց քոց. և ոչ միայն հիւանդութենէնց ասաց, այլ հանապազորդաց՝ եթէ “ստէպ հիւանդուեց քոց,,։

Ընդ լուարուք որ ընդ երկար ի հիւանդութեան իցէք, և գժուարաւ հետևել տրտնջիցէք։ Ալ եթէ զայս միայն այժմ պարտ է խնդրել՝ որ ի հիւանդութիւնս հանապազորդ և ի ցաւս էր սուրբս այս, այլ և վստահութիւն հաստատութեամբ առհասարակ ամենայն մարդկան զորոց և զհոգ ունէր յանձին։ Այս եթէ մի յայնցանէ էր որ բնակեալ են ի գլուխս լերանց, հեռացեալ ի քաղաքաց և յանապատս և ի խուռս բնակեալ, անհոգ վարելով զկեանս իւր, ոչ էր անհնարին քննել զայս։ Ընդ նա որ ի մէջ երկրի բնակեալ էր, և այսչափ եկեղեցեաց ձեռնկալաւ եղեալ, և բոլորովին զհոգս

քաղաքաց Հոգալ, նա և զաղգս և զաշխարհ ամենայն այնչափ փութով ապես յաժառութեամբ ընթանայր, և՝ի բաց դնէր զնեղութիւն հիւանդութեանց, ընդ այս մնա նաւանդ պարտ է զարհուրել ամենեցուն և զարմանալ ընդ ժուժկալութիւն սրբոյն. զի ոչ վասն անձին իւրոյ ինդրէր զառողջութի, որպէս և այլ ժողովրդեանն։ Այլ արիաբար զօրանայր, և հաճոյական ըստ զօրավարին տայր պատերազմ, ոչ ընդ հեթանոս միայն, այլ և ընդդէմ դիւաց և ընդ նոյն ինքն ընդ բանսարկուն, որք բազում և յոյժ պատերազմօք ամենեքեան ընդդէմ յառնելով սոսկացուցանէին։ Իսկ քաջ զինուորն յաղթական գոլով առ՝ի գերել զնոսա, և այնպէս կարողացաւ զօրութեամբ մինչև զերիս բիւրուց գերել՝ի Քրիստոսութիւն, և եր՝ի հիւանդութեան։ Այլ ոչ մի ինչ պլոց իրաց միաս նման՝ի հիւանդութենէն եղև, նա և բաւական իսկ եր այս միայն զՀաւատացեալսն ծոյլս առնել։ Օ՛ի և զինուորք յորժամ տեսանէին զզօրավարն իւրեանց՝ի մահիճս անկեալ, ծուլանան և դանդաղին՝ի պատերազմունս, բազում մանաւանդ յիրաւի եր յայնժամ Հաւատացեալցն զվարգապետան իւրեանց տեսանելով այնչափ նշանս առնել և հանապազ՝ի հիւանդութեան կալեալ, և ներգործէր մարմինն մարդկային ախտիւն։

Այլ ոչ միայն զայս, այլ և այլ ինչ բազում յայտնէր մեզ պատուէրս այս զոր ըստ կարողութեանն խնդրել պարտ է՝ վասն որոյ դարձեալ ոչ սա ինքն անձին իւրում և ոչ նորին վարգապետան այսպէս գոլով իւրում անձինն՝ ներգործեր զբժշկութիւն. այլ զմեռեալս յարուցեալ, զդեւս հալածեալ, և զմահու զօրութիւն հանդերձ գերազանցութեամբ ըմբռնեալ, և զմի մարմին հիւանդացեալ ոչ բժշկեցին. իսկ յօտար մարմինս կենդանութեամբ և զկնի վախճանին այնչափ յարդարեալ էին զօրութիւնք, և զմի ստամբս անկեալ՝ի ցաւս ոչ ողջացուցին։ Այ և այս իսկ է սքանչելի՝ ոչ ամաչել Պաւղոսի յետ այնչափ նշանաց փոքր բանիւ ցուցաներ առ Տիմոթէոս գրելով առ նա վասն գինւոյ ըմպելոյ ապաքինիչ բժշկութեան։ Այլ զի ոչ թէ գինի ըմպել գարշելի իցէ ըստ Արիկի պիտոյիցն, քաւ լեցի. Հերձուածողացն է պատուէրս այս։ Իսկ նա գիտեր զի ոչ եր միաս և ոչ ամենի, և ոչ նման կար եր առանց նորին օգ-

նակնուԹեան ուղղել զՀիւանդուԹիւն անդամոց իւրոց։ Այլ այսպէս կամեցաւ ցուցանել յայսմիկ ԹէՀ չէ ամենի, մինչ զի յետ այնմ ամենայնի յայտ արաբեալ գնաս։ Տեսէք այժմ ԹէՀ որչափ խորուԹիւն էր ի բանս յայս, կամ զիարդ կամ որպէս որ փոքր բան ԹուելովՀ բիւր քննուԹեամբ լցեալ կայր։ Ներ այսուհետև զլուծումն բանիս հաւաքեսցուք։ Այսն այսպիսի՛ի խորս բաղումն իջաք, զի զարԹուսցուք զմիտս ձեր, և պատրաստաբար ի շտեմարանս սրտից ձերոց զիմաստս սորա դիցուք։

Տուք ինձ ԹողուԹիւն ի բանիս յայսմիկ զի յառաջագոյն քան զմեկնուԹիւն բանիս ասացից ինչ վասն առաքինուԹեանն ՏիմոԹէի և վասն գԹոյն Պաւղոսի։ Զինչ էր ի վեր տեսանել քան զգուԹ նորա սիրոյն, որ յայնչափ հեռաւորուԹեան վասն առողջուԹե ստացմաքսի աշակերտին հոգայր այնչափ, մինչ զի փուԹով ստուգուԹեամբ առաքէր առ նա ասելով վասն առողջուԹեան հիւանդուԹեանն իւրոյ։ Զինչ իցէ և հանգոյն առաքինուԹեանն ՏիմոԹէի, որ այնպէս անտես առնէր զփափկուԹիւն կերակրոյ և ծաղր առնէր զբազմակատար սեղանս, մինչև ի խիստ կրծնիցն և ի հանապազորդ պահոցն անկանել ի հիւանդուԹիւնս։ Զի ոչ եԹէ ի բնուԹենէ մարմնոյ էր այսպիսի, այլ ի պահոց և ի ջրոյ ըմպելոյ ստամաքսին լուծաւ զօրուԹիւնն, ըստ որում և Պաւղոսի ստուգուԹեամբ տուեալ զպատուէրս զայս՝ ոչ միայն ասաց “տակաւ գինի խառնեա ջիր վասն ստամաքսիդ,,, այլ նախ ասէ. “Զուր ևեԹ մի ըմպիցես այսուհետև,,. և ապա վասն գինւոյն յաւել։ Ասասի յայտ եղև ի նմանէ ԹէՀ ցայն վայր միայն ըմպէր զջուրն, վասն որոյ և տկարացաւ։

Վասն զարհուրեցի ընդ իմաստուԹիւն նորա և ընդ ստուգուԹիւն առաքինուԹեանն. զի յանձն առեալ զերկնայնոյն զվարս և ի գլուխ առաքինուԹեանց հաստեալ, և զայս վարդապետին իւրոյ վկայեալ ասէ այսպէս. “Ունաքեցի առ ձեզ զՏիմոԹէոս, որ է իմ որդի սիրելի և հաւատարիմ ի տէր,,։ Խաւական է բանս այս ցուցանել զաննման առաքինուԹիւնս նորա. զի իրաւունք սրբոց ոչ ի չնորհս և ոչ ի վտանգս լինի, ոչ ընդ գովուԹիւն սրբուԹեան խնդան երբեք և ոչ ընդ

հայհոյութիւնս տրտմին, այլ յայսմ ամենայնէ վերամբարձեալք են։

Եւ ոչ լինէր ցանկալի Տիմոթէոս քնութեամբ որդի հարազատ կոչել Պաւղոսի, որ է այժմ ոքանչելի. զի որ ըստ մարմնոյ ազգականութեան ոչ էր ընդ նմա միաւորեալ՝ որդի սիրելի կոչէր զնա, ուստի յայտ իսկ է թէ ստուգութեամբ զկերպարանս նորին իմաստութեանն ունելով կեցուցանէր զամենեսեան։ Զի որպէս մատաղ որթ ընդ արջառոյ լծեալ այնպէս բերէր զլուծն զկնի Պաւղոսի և ոչ պակասէր վասն անկատարի հասակին. և զայս նմա պատրաստեաց յօժարութիւն և հոգս վարդապետին իւրոյ։ Եւ դարձեալ Պաւղոս ՚ւկայեաց և ասէ այսպէս՝ եթէ "Արի ոք զդա արհամարհիցէ, զի զգործ տեառն գործէ որպէս և ես,,։ Ցեսանեմ թէ զիարդ անխոփոխելի վկայ է վնորա փութոյն։ Զի մի ոք կարծեսցէ թէ չնարհս առնելով ասէ զայս, զնոսին զլռողսն առնէ վկայս մանկանն առաքինութեան ասէ՝ եթէ "Զփորձ գիտէք դուք, զի որպէս որդի հօր ծառայեաց ընդ իս յաւետարանին,,։

Այլ թէպէտ և յայսչափ բարձրութիւն ուղիղ գնացիւք եղեալ, սակայն ոչ այնու յուսով մեծամտեալ, այլ բարիոք ջանիւք կայր և հեղութեամբ, և ոչ թուլանայր որպէս և բազումք որք ամիս տան կամ քսան պահելով կարծեն կատարել զամենայն։ Իսկ նա ոչ այսպէս խորհեցաւ և ոչ ած զմտաւ յինքեան եթէ զինչ պէտք են ինձ այժմ պահոց, հասի յայսչափ բարձրութիւնս, մեռուցի զմարմինս, զդևս երկեցուցի, զսատանայ հալածեցի, մեռեալս յարուցի, զբորոտս սրբեցի, և ահագին դատ ընդդիմակացաց այսոցն զօրութեանց. զինչ այժմ պէտք են ինձ պահոց և կալոյ աստ զդուշութիւն։ Այսմ ամենայնէ ասաց և ոչ ինչ. այլ որպէս բիւր ուղղութեամբ լցեալ կայր, նոյնչափ մանաւանդ սոսկայր և դողայր. և զայս ՚ի վարդապետէն իւրմէ ուսեալ էր զիմաստութիւն։

Զի նա որ մինչև յերրորդ երկինս համբարձաւ և ՚ի դրախտն եմուտ և զանձառելի բանս լուաւ և այնքան խորհրդոց հաղորդակից եղև և ընդ ամենայն տիեզերս որպէս թևաւք ընթանայր, գրեալ առաքէր առ կորնթացիսն ասելով. "Երկնչիմ գուցէ որ այլոց քարոզեցի, ես

ինքն անպիտան գտանիցիմ»։ Արդ եթէ Պաւղոս յետ այնր ամենայնի և այնչափ ուղղութեանց երկնչէր, որ և ասէր համարձակ թէ և «Հշարհ ինձ ի խաչ ելեալ է և ես աշխարհի», յոյժ մանաւանդ մեզ պարտ է երկնչել, և այնքան մանաւանդ որչափ ի բազում ուղղութիւնս իցեմք։

Ականջ սատանայ յայնժամ խստագոյն լինի և գանանայ առաւելապէս յորժամ տեսանէ զմեզ ի հոգս անձանց մերոց բարիոք տնօրինեալ ջկենցաղս. յորժամ տեսանէ զբեռն առաքինութեան ուղղել՝ բազում ունելով դժուարակրութիւնս, յայնժամ փութայ չարչարել զործել զնաւակոծութիւն։ Խոկ զնուաստս և զհեղգս թէպէտ և ընդ ոտս անկեալ ի վայր զարկուցանէ, ոչ այնչափ հասարակաց միաս բերէ, որպէս զայն որ բարձրանայ ի գլուխս առաքինութեան և կայ ի բազում համարձակութեամբ և ծանիցեն զնա և ամենեցուն յայտնի լինի և սքանչասցի յամենեսեան, և ապա յորժամ փորձութիւն հասցէ՝ անկցի ի բարձրութենէն յայնմանէ, նորա անկումն մեծ միաս գործեսցէ. զի ոչ եթէ ինքեամբ միայն անկաւ ի բարձանց, այլ և զբազումս որք տեսին զնա՝ դանդաղագոյնս արար։ Եւ որպէս ի մարմինս եթէ յայլոց անդամոց ինչ ապականի, ոչ է բազում միաս. ապա եթէ յաչս կամ ի գլուխ լինիցի միաս, ամենայն մարմինն անպիտանանայ, այսպէս և ի սուրբս է տեսանել։ Որ ի մեծ ուղղութիւնս իցէ, և հեղգացեալ զլոյսն զայն շնջուցանէ, և աղտեղութիւնն լուցանի, յայնժամ բոլորովին ամենայն մարմնոյն անբերելի միաս բերիցէ։

Ո այս ամենայն զմտաւ ածեալ Յիմոթէի՝ յամենայն կողմանց զանձն ամփացուցանէր, գիտելով զի չարչարէ մանկութիւն և կոխող բարեաց և սրբութեան հոլովիչ. զի որպէս հուր զանձն ուրուք շուրջանակի պատեալ հեշտութիւն՝ փութով այրեսցէ։ Այսպէս ամն այսորիկ առաւել ինդրէր իբրև սանձիւք արգելուլ զչարձակումն և յամենայն կողմանց զանձն իւր փակէր, մինչ զի շուրջանակի զբոլոր բորբոքեալ շնջուցանել փութայր։ Որպէս ձի որ դժուարասանձ իցէ և դժուարաւ ուղղի, բազում ջանիւ նկրտի մինչև զխոյտալ երիվարին նահանջեսցէ և ուղիղ գնացուք յոտին կացուցանէ, այնպէս ուղիղ վա-

րուք զբռնութիւն մարմնոյ տկարացուցանել, և մի տկա-
բանալ հոգւոյ. սանձել զյարձակումն նորա, զի մի լիցի
արգել ընթացից յերկինս հոգւոյ:

Այլ յետ այսր ամենայնի կատարման մնաւանդ գնա
ոք գովեսցէ, զի այսպէս տկարացեալ և յայսչափ հի-
ւանդութեան ոչ հեղգացար յածախին գործոն, այլ որ-
պէս առողջ և պնդակազմ մարմնով. յամենայն տեղիս
ընթանայր, երբեմն Ասիա, երբեմն Աքայիա և ի
Կորնթոս, և ևս բազում անգամ ի Մակեդոնիա, հա-
նապազ յերկրի և ի ծովու զկնի վարդապետին փայլեր,
և յամենայն պատերազմունս հաղորդեր ընդ նմա ի միա-
սին գոլ ի վտանգս և ի ձգունս, և զնմաստութենէ հոգւոյն
ոչ վատթարեաց տկարութիւն մարմնոյն. այսչափ էր նա-
խանձն առ Աստ, որ ցանկ զթևս մարմնոյն յապաւէր: Օ՜ի
որպէս մարմին գոլով ողջ ի բարի կեանս՝ շահ ինչ ոչ
է յայնմանէ յորժամ հոգին անկեալ դիցի ի դանդաղ-
մունս և ի վտանգս, այսպէս և տկարացելոց չէ վնաս ի
հիւանդութենէն՝ եթէ ոգիքն կայտառ և արի իցեն:

Ծանուեցաւ ոմանց խրատս այս և պատուէրս եթէ ինչ-
խանութիւն տուեալ է անյագ լինել յարբեցութիւն
գինւոյ. այլ չէ այսպէս: Այլ եթէ ոք ստուգութեամբ
քննեսցի զանս զայս, մնաւանդ պահոց է հրաման պա-
տուիրանիս: Ոմա այժմ զիարդ ոչ յառաջմէն խորհե-
ցաւ զայս Պաւղոս, այլ յորժամ ետես կանխեալ որո-
շեալ ի նմանէ զօրութեանն, յայնժամ հրամայեաց.
և ոչ յայնժամ միայն, այլ յետ մեկնելոյն ի նմանէ:
Այլ ոչ ասաց լոկ՝ եթէ գինի խառնեսջիր, այլ եթէ սա-
կաւ. որ ոչ Տիմոթեայ միայն էր այս խրատ և հրաման,
այլ մնաւանդ մեզ է խնդրելի: Ասա որում և զրով
առաքեաց առ նա, որով մեզ սահման և չափ եդիր պե-
տոյից գինւոյ. այնչափ հրամայեաց մեզ ըմպել, որչափ
կանգնիցէ զտկարութիւն մեր, և լինիցի տալ առողջու-
թիւն մարմնոյ և մի ցաւս. զի սա քան զանչափ արբուծին
զրոյ ի վնասել ոչ է պակաս, այլ և առաւելագոյն և
չարաչար ցաւս մարմնոյ անչափութիւն գինւոյն ծնանի,
և հոգւոյ չարութեանէ պատերազմ ախտից, և զծուփս
աղտեղի խորհրդոց ի միտս մեր ժողովէ, և զզօրութիւն
մարմնոյն տկարացուցանէ: Ոչ երբէք քնութիւն երկրի
նեխեալ յառաւելութենէ ջրոյ այնպէս փութով եղ-

ծանի, որպես զօրութիւն մարմնոյ թուլանայ և գօսա-
նայ որք հանապազ ՚ի գինարբուեան յեցեալ կան։

Վախիցուք այսուհետև իւրաքանչիւր յանչափութե-
նէ գինւոյ, և զզուարճութեն նորա կարեսցուք ՚ի մէնջ։
Վինի տուաւ մեզ յայ ոչ յարբեցութիւն, այլ ՚ի զուար-
թութիւն ուրախութեան, և ոչ ՚ի հիւանդութիւն և
՚ի ցաւս։ "Վինի, ասէ, ուրախ առնէ զսիրտ մարդկան,,։
և դու առնես զնա պատճառ ծուլութեան։ Օ՜ի արբե-
ցողաց ոչ միայն ծուլութիւն գործէ, այլ և զմիտսն խա-
ւարեցուցանէ։ Լսէ յորժամ չափաւոր ունիցիս զսե-
զանն, դեղ է նա ախորժական։ Օ՜ի այսու ընդունե-
լութեամբ և ՚ի հերձուածողաց զմեզ բաժանեսցուք որք
այսպէս առնեն զայ արարածս։ Լթէ կայր ինչ արգել
գինւոյ, ոչ էր հրամայեալ Պաւղոս և ոչ էր ասացեալ
եթէ գինի սակաւ խառնեսջիր։ Լու այս ոչ եթէ ՚ի հեր-
ձուածողս միայն իցէ, այլ և առաւել յեղբարս մեր։
յորժամ տեսանիցեն զմեզ արբեցութեամբ անառա-
կեալ, թողուն զնա անդ տոչորեալ, և զոր չայ տուեալ
մեզ պտուղ այսպէս առնեն, ասէ՝ մի իցէ գինի։

Լ՜ու որս ասացուք՝ թէ մի իցէ արբեցութիւն։ զի գի-
նի գործ է այ, և արբեցութիւն գործ է սատանայի։
և ոչ եթէ գինի առնէ զարբեցութիւնն, այլ անա-
ռակութիւնն։ մի յետս ընկենուր զայ հրաշագործու-
թիւնն, այլ զստորոգութէն և զչարութէն ընկերի քումդ։
Պաւղոս թողուս զմեզուցեալն տանջել և դարձեալ կանգ-
նել, և զչարեգործն անարգես։ Լու մեք յորժամ լսեմք
զայս յոմանց ասել, խցցուք զբերանս նոցա։ զի ոչ ե-
թէ լուծումն, այլ անչափութիւն առնէ զարբեցութիւնն։
և արբեցութիւն արմատ է ամենայն չարեաց։

Վինի տուաւ մեզ յառողջութիւն տկարութէն մարմ
նոյ, և ոչ յեղծումն զօրութեան հոգւոյ։ զի զմարմնոյ
հիւանդութիւնս բարձցէ, և ոչ եթէ զհանգիստ հո-
գւոյ նաւակոծեսցէ, և մի անչափ յագեցմամբ զպարգևս
այ վնասու պատճառս առնել անխմաստից և անզգուշա-
ցելոց մարդկան։ Օ՜ինչ ողորմելի իցէ քան զարբեցողն,
ասա ինձ։ մեռեալ է կենդանւոյն, դև է յանդիմանն,
հիւանդ՝ որոյ բժշկութիւն ոչ գոյ, դէշ է ՚ի դիակունս,
որոշեալ ՚ի պատասխանւոյ սա շարժէ զաղգս մեր յան-
պիտանութիւն։ ոչ եթէ յեւթիւն ըստ բնութեան իւ-

ըստ միայն իցէ արբեցողն այնպէս, կամ ծանօթից իւրոց, կամ՝ի դիմացականն հարկս ուր պիտոյ իցէ հաշիւ գործոյ, այլ և յօտարաց՝ի պակաս տեսութեց երևեսցի գարշելի, հոտեալ զաղբուն եամբ ործայ և բանայ զբերանն իւր, և ձայնք նոցա անվայելուչք, անտես և վերջին աւարտեալ չար որոց ընդ նոսա իցեն. և որ գլուխն է ամենայն չարեաց, անելանելի առնէ զերկինս որք արբեցութեամբ իցեն՝ի ցաւս յայս, և յաւիտենական բաւեացն ոչ տայ Թոյլ Հանդիպիլ. զի որ այժմու կենօքս անառակութեամբ կացցեն յարբեցութիւնս և՝ի ատելին ցաւս և՝ի հիւանդութիւնս, անդ՝ի տանջանս կայ և ՚ի ճայ անմեկնելի։

Կարեսցուք այսուհետև՝ի չար սովորութենէս յայսմանէ. լուիցուք զասացեալսն Պաւղոսի եթէ "գինի սակաւ խառնեսջիր,, ։ Կայաև զչափս զայս վասն տկարութե հրամայեաց. զի Թէ չէր նեղեալ հիւանդութիւն զՏիմոթէոս, ոչ յայս ստիպէր զաշակերտն, և ոչ զպակաս խառնումն գինւոյն եդեալ էր չափ։ Օ՛ի Թէպետ տուաւ մեզ յայ կերակուր և ըմպելի, այլ ըստ ժամանակի և ըստ պիտոյից, և միշտ չափով ունել զյագեցումն. ոչ երբէք ելանել ըստ պէտս մեր, և ոչ Թափուր և ունայն ինչ առնել։

Կյ քանզի ծանեաք զգուշն Պաւղոսի և զառաքինութիւն աշակերտին ուսաք, բեր այսուհետև զմեկնութիւն հարցման խնդրոյ բանիս ժողովեսցուք։ Օ՛ինչ իցէ խնդիրն. հարկ է ասել գարձեալ, որ և ստուգապէս երևեսցի մեկնութիւնն։ Կ՝ան ի՛ր այսպիսի սրբոյ որ այսչափ գործոց յօրինիչ էր, տեղի ետ ՚ած անկանել՝ի հիւանդութիւնս, զոր ոչ ինքն և ոչ վարդապետն իւր կարացին բժշկել, այլ՝ի ձեռն գինւոյ ըմպելոյ խնդրեին զօգնականութիւն։ Խնդիրս այսպիսի էր. պարտ է և զմեկնութիւն սորա յառաջ բերել, և զի ոչ միայն յայսպիսի հիւանդութիւնս սուրբք ամանք անկեալ եղեն, այլ և բազումք անկան յաղքատութիւնս, ՚ի սով, ՚ի բանտ, ՚ի տանջանս, ՚ի փորձութիւնս, ՚ի զրպարտութիւնս և յամենայն վտանգս անցաւոր կենցաղոյս՝ սուրբք մեծամեծք և սքանչելիք։ Կյ այնոքիկ որք կամին խընդրել զայս, կարողութիւն է տալ պատասխանի յորոց ասացեալքս են ստուգութեամբ և ՃշմարտութեամՔ։

Վանգի և լեմ իսկ ի բազմաց ի խոշ և ի խնդիր արկեալ զմի բանս գայս. ընդէր երբեմն այս անուն այր չափաւոր և հեզ յայլմէ անօրինել և ի չար մարդոյ զօր առնային ի դատապարտութիւն մանկիկ և բիւր նեղութեան դիպեսցի, և տեղի տայ ած այնպէս լինել. Հիմ զգպարտեցաւ այլ ոմն և մեռաւ յանիրաւութենէ. և միւս ոմն սուրբ ընդէր խեղդեցաւ, և այլ ոմն կախեալ և ի վախից անկեալ մեռաւ: Այս զգաստութիւն ունիմք ի սրբոց ասել ի ժամանակս մեր և ի ժամանակս հարց մերոց համբերեալ նեղութեան և պէսպէս և զանազան տրտմութեանց: Այս գի մի հանապազ մեք զայսր պատճառ խուզեսցուք և կամ զարհուրեցուսցուք և կամ զայլոց գայթակղութիւնս անտես արասցուք, այս օր մեկնութեան բանիս զօր կամիք ասել՝ միտ դիցուք հաւատեաւ խնդալ զգաստութեան չարչարանս սրբոց: Այս ընդ ամենայն ուր Թուղ ունիմ ասել զպատճառդ սիրոյդ ձերում: Վ ան որոյ յիմաստս տեսութեանս այսորիկ ստուգութեամբ կալարուք զանձինս ձեր ամենեքեան, և գիտասջիք ամենեքեան գի ոչ մի Թողութիւն է մեզ կամ պատասխանի վասն դիպելոյ նեղութեանց սրբոցն, և չիք պատճառս գտանել տրտմութեան և խռովութենէ և ոչ մի, եթէ կամիցիմք:

Զառաջինն վասն այսորիկ Թոյլ ետ ած անկանել սրբոցն ի չարչարանս, գի մի վաղվաղակի Թուեսցի ուժեք փոխոխել նոցա և բաժանել ի մեծ Թութենէ ուղղութենն: Այրկրորդ գի մի համարեալ լիցի այլոցն ի վեր քան զբնութիւն մարդկան ունել նոցա, և աստուածս կարծիցեն զնոսա և ոչ մարդիկ: Այրրորդ գի յայտնի երևեսցի այ զօրութիւնն նոքօք, որք ի հիւանդութիւնս ի չարչարանս և ի բանտս անկեալ կային, և քարոզութիւն նոցա և բժշկութիւն առաւել յաճախէր: Չորրորդ գի այնչափ համբերութիւն նոցա ի նեղութիւնս յայտնապէս ցուցանէ զսէրն որ ոչ վարձու ծառայելին այ, այլ այսչափ ցուցանելին գիտութիւն և վարուց քաջութենէ, գի յետ այնչափ չարեացն վասն նորա անուանն գվարան ցուցանելին բարիոք: Հինգերորդ գի այնու հաստատութիւն յարութեան իմաստասիրեսցի. քանգի յորժամ տեսանիցես այր սուրբ և արդար և բազում աւաքինութեամբ լցեալ և բիւր նեղութեան դիպեսցի,

և այսպէս երթիցէ յայժմու կենացս, զի և անձամբ նե-
ղեալ իցէ, իմա գու ինձ մանաւանդ վասն յարուԹենն։
Օ՛ի Թէ մարդիկ որ վասն անձանց իւրեանց վաստակե-
ցին՝ ոչ տան Թոյլ առանց վարձուց և փոխարինաց գնալ,
ապա մանաւանդ ՚ած որ այսչափ վասն նորա ցաւագնե-
ցան՝ ոչ տայ Թոյլ առանց պսակաց մնալ։ Ա՛պա եԹէ
տայցէ Թոյլ վաստակոց նոցա մերժել ՚ի հատուցմանէ
և վտանգ նոցա յայլ ժամանակ լինել յետ աստի վախ-
ճանելոյս, Ե՛րբ զաստի կենացս առցեն զՀատուցումն
վաստակոց իւրեանց։ Ալ եցերորդ զի ամենեքեան որ ՚ի
փորձանս գայԹակղուԹեան անկանիցին, բաւական ու-
նիցին զմխիԹարուԹիւն. զի յորժամ եկեսցէ ՚ի վե-
րայ նոցա չար ինչ, յիշեսցեն զ՚ի վերայ եկեալ նեղու-
Թիւն սրբոցն, և ունիցին զմխիԹարիչն յանձինս իւ-
րեանց։ Ա՛օԹներորդ զի յորժամ աղաչեմք զձեզ նոցին
առաքինուԹեանցն նմանել, ասելով իւրաքանչիւր ու-
մեք ՚ի ձէնջ Թէ նմանող լերուք Պաւղոսի և ցանկորդ
Պետրոսի, մի կարծիցէք վասն նոցա Թէ այլ բնուԹիւն
ղգեցեալ էին, և ծուլանայցէք նմանող լինել։ Ալ-
Թերորդ զի յորժամ պարտ իցէ երանելիս վարկանել
կամ Թշուառականս, ուսանիմք Թէ որմէ պարտ իցէ առ-
նուլ զերանուԹիւնս, կամ ոմք իցեն Թշուառականք և
որուսք։

Ա՛յդ պատճառ այսոքիկ են, և պարտ է զայս ամե-
նայն ՚ի դրոց առնել Հաւատալի, և ցուցանել ստուգու-
Թեամբ զի ոչ մարդկեղէն միտք բաւական է այսոցիկ,
այլ գրելոցն Հրաման որ զամենայն ասացեալ է։ Ա՛յ-
պէս և բանս ձեր արժանահաւատալի իցէ, և մանաւանդ
Հաստատուն յանձինս ձեր կացցէ։ Վ՚ասնզի վասն խո-
նարհուԹեան և զչափ մարդկային Ճանաչելոյ գայր վիշտք
և նեղուԹիւնք սրբոցն, զի մի վասն վարուց իւրեանց
ուղղուԹեանն և մի ընդ բազմապատիկ առաւել նշանս
և արուեստս Հայրատասցին, վասն որոյ տեղի տայր ած
լինել այսպէս, ըստ որում լսեմք ՚ի ՊաւԹայ և ՚ի Պաւ-
ղոսէ ասացեալ. մարգարէն ասէ. "Ա՛խարի է ինձ զի խո-
նարհ արարեր զիս, որպէս ուսայց զկրաւունս արդարու-
Թեան քո.,։ Ա՛կ Պաւղոս յափշտակեցաւ մինչև յեր-
րորդ երկինս. նոյն և ՚ի գրոսխան, ասէ, յափշտակեալ։
"Ա՛ւ զի մի, ասէ, առաւելուԹեամբ յայտնուԹեանցն

Հպարտացայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատան կռփել զիս զի մի հպարտացայց ։

Զ ինչ քան զայս սաստիկ և յայտնի իցէ խմանալ. զի մի հպարտացայց, ասէ, տեղի տայ հրեշտակաց սատան կռփել զիս։ Հրեշտակս սատանայի ոչ զդևսն ասէ, այլ զմարդիկ որ սպասաւորք էին սատանայի՝ զանհաւատսն, զբռնաւորսն, զհելլենացիսն, որք հանապազ զինս տրտմեցուցանէին և հալածէին։ Այս զոր ասէն այս է. կալոյ էր ինձ, ասէ, մերժել յինէն զզանազան հալածմունս և զվիշտս. այլ քանզի յափշտակեցայ յերրորդ երկինս և լուայ բանս անձառս, զի մի աքանչելի յայտնութեամբք տեսլեանցն վերացայց և եղէց հպարտութեամբ մեծ անզգամ, թէպէտ և ես ինձ այսմ հալածանացս և հրեշտակ սատանայի կռփել զիս և տանջել. վասն այսորիկ հալածանք, ասէ, և տրտմութիւնք զիս մի հպարտացայց ։

Զ ի աքանչելի սուրբքն որք ընդ Պաւղոսի և ընդ Պետրոսի էին, և զկնի նոցա ամենեքեան որք էին և են և գալոց են, ոչ եթէ նոքա այլ ինչ բնութիւն ունէին, այլ այսպէս մարդիկ գոլով և միշտ փութային ի չափու ունել զանձինս զգուշացեալք ի հպարտութենէ, և զայս մանաւանդ սուրբքն ամենեքեան։ Վասնզի չիք ինչ մեծագոյն չար քան զհպարտութիւնն, յորժամ յանկարծակի ըմբռնէ զոգիս մարդկան որք յուղղութեան վարս իւրեանց և հոգւով համարձակութեամբ են ի կեանս յայս. ըստ որում թէպէտ տայր ինձ փորձանաց և տրտմութեանց հանդիպել նոցա, որ կարող էր զնոսա ազատել և հաւանեցուցանել՝ չափաւոր վարկանել յամենայնի զկեկաւ վտանգսն։ Իսկ զմեծամեծ զօրութիւնսն զայն ոչ կատարել նոքօք, լուր զառաջագոյն ասացեալսն ի Պաւղոսէ։ Զ ի մի դու ասիցես որպէս անհաւատք կարծեն, եթէ որոց թէպէտ տայ ինձ այսպէս լինել՝ տկարք իցեն և ոչ կարեն բառնալ զվտանգս իւրեանց, ըստ որում առեալ լինել նոցա ի չարաչար հիւանդութիւնս իւրեանց ։

Ա՛յս դիր առացելոցս թէ զնորդ և որպէս վասն այնորիկ եղեալ Պաւղոս յայտ առնելով թէ ոչ միայն զի տկարութեան չէր կամ նորա անտես առնելով, այլ զի այնու առաւելապէս զզօրութիւնն իւր ցուցանէր յամենայնի։ Տուաւ ինձ, ասէ, խայթ մարմնոյ հրեշտակ

սատան կափել զնա ,, . և այսու զաղջի ազգի փորձանան եկեալ 'ի վերայ իւր յայտ արար և ասէ . “Ա ան այսորիկ երիցս աղաչեցի զտէր զի 'ի բաց արասցէ յինէն . և ասէ ցիս , շատ է քեզ զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի ,, : Յայնժամ, ասէ , երևի զօրութիւն իմ յորժամ դուք 'ի տկարութեան իցէք , և վասն ձեր որք կարծեն զձեզ եթէ տկարք իցեն՝ առ նոսա բազմանայ քարոզութիւն ձեր , և յաձախեն նշանք յորժամ բիւրս առնուցուք վէրս և 'ի բանտ մտանիցեք : Արդեօք եղևն իսկ . 'ի բանտի գոլով՝ զբանտապետն կապեաց : Ձայեաց , 'ի կռճեղ պնդեալ էր ոտք նորա և երկաթի կապանք 'ի ձեռս նորա , և այնպէս շարժեաց զբանտն : “Ո՛ մէջ գիշերի , ասէ , Պաւղոս և Ե՛ղբա կային յաղօթս և օրհնէին զՅԾ ,, :

Տեսանէ՞ք թէ զիարդ և որպէս զօրութիւն նորա 'ի տկարութեան կատարի : Արդեօք էր Պաւղոս ընդարձակ և շարժեալ էր բանտն , ոչ էր այնպէս աքանչելիք . վասն այսորիկ ասէ՝ մնա կապեալ , և բանտդ շարժեսցի , զի առաւել երևեսցի զօրութիւն իմ վասն որ ըմբռնեալդ ես և կապեալդ : “Ո՛չ ամենայն հիմունք , ասէ , բանտին շարժեցաւ ,, : Ո՛չ այս ամենայն ըզնոյն ինքն զբանտապետն զարհուրեցոյց , որ այսչափ 'ի նեղութեան էր , աղօթիւք միայն կարող եղև շարժել զհիմունսն , և եբաց զդուրս բանտին և արձակեաց զկապեալսն ամենայն : Ա՛յլ եթէ աստ միայն եղև այս , այլ և Պետրոսի և սոյն ինքն Պաւղոսի և առ այլ առաքեալսն յորժամ հանապազորդ 'ի հալածանս անկանէին , ընծային ընդ օգնէն միշտ լեալ էին . և յորժամ տըրտմութիւն հասանէր նոցա , յայնժամ մեծապէս զօրութիւն նորա քարոզէր : Ա՛ան այսորիկ ասէր . “Ե՛ստ են քեզ ընդ իմ , զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի ,, :

Ո՛ի և առաւել ևս քան զմարդկային բնութիւնս լինէին կարծեցեալ 'ի բազմաց , եթէ ոչ տեսանէին զնոսա յայնպիսի չարչարանս , լուր այժմ՝ թէ զիարդ այսպէս երկեաւ Պաւղոս և ասէ . “Ո՛ի եթէ կամիցիմ պարծել , ոչ եղէց անզգամ . այլ անխայեմ , զուցէ ոք համարիցի յիս ինչ աւելի քան զոր տեսանիցէ յիս կամ լսիցէ յինէն ,, : Ո՛ՀՀ և զոր ասէս . կարող եմ , ասէ ,

բազում՝ և առաւելապոյն առնել աքանչելիս, այլ ոչ կամիմ՝ զի մի երբեք ՚ի մեծութենէ նշանացն առաւել քան զմարդկային բնութիւնս կարծեսցեն վասն իմ։ Ասա ո՞րում՝ և պետրոսեանքն յորժամ զկաղն կանգնեցին, և ամենեքեան զարմացմամբ առնոսա ընթանային, արձակէին զնոսա և հաւանեցուցանէին զի ոչ յանձանց իւրեանց առնէին զայս, և ասէին. «Ընդ մեզ զի հայիք, ոչ եթէ զօրութեամբ մերով արարաք զգնալ դորա»։ Եւ դարձեալ ՚ի Իւստրա արձառս զարդարէին և մատուցանէին զոհել Պաւղոսի և Բառնաբայ։

Ցեսանեմս զբանսարկուին չարութիւնն. զոր տէր փութացաւ սրբել, յամբարշտութիւն արկանել փութայր՝ հաւանեցուցանել զմարդիկ աստուածս պաշտել զնոսա. զոր և արար իսկ յառաջին ժամանակին, որով եղև ընկիզեն կռապաշտութեան, սովին իրօք մանաւանդ արմատացոյց։ Բազումք պատերազմունս մղեալ և չաղթութիւնս կացուցանել և քաղաքս շինել և այլ ինչ սոյնպիսիս, իսկ յորժամ ՚ի նոցանէ օգտէին, ՚ի բազմաց աստուածք կարծեցան, և տաճարօք և բագնօք պատուեցին զնոսա, և ամենայն հելլենական աստուածքն ըստ կարգի չայսպիսի մարդկանէ հաստատեցան։

Օ՚ի մի և ՚ի սուրբս լինիցի այս, Թոյլ ետ Աստ զնոսա հալածել և ստէպ ապստակել. զի ՚ի մարմնական տկարութենէ տեսեալ և ՚ի բազմութենէ փորձութեանցն՝ հաւանեսցին եթէ մարդիկ են որ այսպիսի աքանչելիս առնէին, և թէ ոչ յանձանց իւրեանց առնէին զայս, այլ չայմանապէս ընդոծրկեր զամենայն ՚ի ձեռն նոցա։ Օ՚ի թէ միոչ զփորձ և զանկատար նշանս առնէին՝ և զնոսա աստուածս կարծէին, ապա և առաւել եթէ ոչ էր դիպեալ նոցա մարդկային ախտք, որք և զայնպիսի աքանչելիս գործէին զոր ոչ տեսեալ ոք երբեք և ոչ լուեալ։ Սակայն և այնպէս տեսանէին զնոսա ապտակեալ, ՚ի բանտի, ՚ի հալածանս, ՚ի վիշտս զոր ամենայն, եթէ ոչ էին անկեալ չայսպիսի մարդկային հալածանս, բազումք մանաւանդ չայսպիսի կարծիս չամբարտաւանութեանն զլորեալ էին։ Խրոտդ պատճառ ՚ի վերայ սրբոցն չարեաց հասանելոյ այս է։

Ողորդն՝ զի մի կարծեսցեն զառաքեալս այսու կենօքս միայն յուսացեալ ՚ի տէր՝ առնել վասս բարիս և զնած

հաշտ առնել։ Քանզի բազում որք անառակութեամբ կեղին և ի բազմոց այնպէս կոչեցան, զնաղում սուրբս որք յառաքինութեան վարս լսելի եղեալ գովեցան, որք ի վիշտս գոլով բարւոյ հոգովք միայն սոքա զնոսա այսպէս առնել սկսանին։ Այլ ոչ միայն մարդիկ զայս առնեն, այլ և նոյն ինքն բանսարկուն զնոյն խորհէր։ Ասէ զի եռեսս զՅոբ բազում ստացուածովք յղփացեալ և մեծութեամբ հռչակեալ. իսկ չար դևն այն նախատել կամելով առաջի Աստուծոյ, ոչ ունելով այլ պատճառ թէ զինչ ասիցէ, ոչ յանձնէ իւրմէ տալ կարէր պատասխանի պարտաւորութեանն, ոչ վասն առաքինութեան արդարոյն հնարել ինչ կարէր ինչս, այլ յուսացաւ փութաթափս ի պատասխանիս և ասէ այսպէս. "Մի՛ եթէ ձրի պաշտէ Յոբ զտէր,,. այսինքն վարձու աղագաւ պաշտէ զքեզ, այսչափ Ճոխութեի՛ ի քէն ընկալեալ։ Օ՛ինչ ասեր Աստ. կամէր ցուցանել թէ ոչ ասկս վարձու ծառայելին և հաշտ առնելին զնա սուրբքն, եթարձ ի նմանէ զամենայն մեծութիւն և զՃոխութիւն, և ետ աղքատութիւն և թոյլ ետ անկանել ի չարաչար հիւանդութիւս։ Այլ ապա յանդիմանեաց զնա որ ունայն զայս խորհեցաւ. ասէ. "Ցակաւին առաւելապէս կայ յանմեղութեան. և դու ընդ վայր, ասէ, խօսեցար և ընդունայն զինչս նորա կորուսեր,,։

Քանզի սրբոց բաւական է այս առ ի փոխարէնս հատուցման հաշտ ունել զԱստ և համարձակ լինել առ նա. նա և սիրելեաց առ սիրելիս բաւական իցէ ի հատուցումն այս, և ոչ այլ առաւել խնդրեսցէ, և ոչ համարի այլ ինչ մեծ լինել քան զայս։ Այլ եթէ ի մարդկանէ այսպիսի, որչափ ևս առաւել առ Աստ. զոր և Աստ կամեցաւ ցուցանել այնու, զի առաւել քան զինչ խնդրեաց սատանայ, ետ իւր։ Օ՛ի նա այսպէս ասաց. "Դառաքեա զձեռն քո և մերձեցիր առ նա,,։ Այլ Աստ ոչ այսպէս արար. այլ զինչ. ի ձեռս քո, ասէ, մատնեցից զնա։ Որպէս և յարտաքին պատերազմունս որք ըզմարմինս սպանեն և կազմեն ի մարտ, և զհանդերձս իւրեանց զգենուն թաթաւեալ ձիթով և ի զէն զարդարեալ են՝ ոչ այսպէս երևին զարմանալիք, որպէս յորժամ զայս ի բաց Թօթափեալ մերկ մտանեն ի պատերազմն, յայնժամ մանաւանդ տեսողքն զարմանան

քան ընդ որս Հոգան վասն անդամոց իւրեանց, զի յաՄենայն կողմանց հարկանի սրով, և ոչ միով անդամով կաղող է պարտական։ Այսպէս է և Յոբ. յորժամ ամենայն մեծութեամբ զարդարեալ էր, ոչ էր յայսմնի բաղմաց թէ որպիսի ոք էր. իսկ յորժամ զայս որպէս հանդերձ մերկացաւ Ձգնաւորն, և մերկամարտի նմանեալ ՚ի բարեպաշտութեան պատերազմին, սոյն իսկ մերկ գոլով տեսեալ՝ զամենայն աշխարհ զարմացոյց. նա և հրեշտակաց տեսիլ եղեալ վասն Համբերութեան անձին իւրոյ, որք և մեծ բարբառով գովէին զպսակեանն զայն։

Այլ դարձեալ ասեմ զոր յառաջագոյնն ասացի. ոչ այսպէս երևելի էր մարդկան յորժամ ամենայն զօրութեամբ և մեծութեամբ պայծառացեալ էր, որպէս յայնժամ յորմէ հետէ որպէս հանդերձ մերկացաւ և մերկ երևեցաւ սոսկալի տեսիլ ՚ի մէջ արարածոց, ընդ որոյ Համբերութիւն ամենեքեան հիացան առ Հասարակ։ Այլ տես զի ոչ յառաջինն մարտին և ոչ ՚ի հիւանդութեանն զոր Համբեր՝ որպէս ասացի՝ ոչ եհար զնա Հարուածովք ՚ած, զի մի դարձեալ ասասցէ սատանայ՝ եթէ անխայեաց յարդարն, և ոչ որպէս պարտ էր՝ ած զփորձութիւնն ՚ի վերայ նորա. վասն այնորիկ մնանեաց զնա ՚ի ձեռն սատանային, զընչիցն զկորուստ և զիշխանութիւն մարմնոյ իւրոյ։ Կատաղեմ ՚ի Ձգնաւորն իմ, վասն այսորիկ ոչ արգելում ՚ածել ՚ի վերայ նորա մնրատս որչափ և կամիս։

Որ օրինակ քաջամարտիկ ոք վտահ եղեալ յաՐուեստ և յոյժ մարմնոյ իւրոյ ոչ կամիցի մարտնչել ընդ մարտակիցս իւր, մնանանդ և ոչ առանձինն միայն, այլ ՚ի մէջ հրապարակի կամիցի հանդիսել զի պայծառագոյն երևեսցի յաղթութիւնն, այսպէս և ՚ած ետ սատանային ՚ի մէջ ածել զսուրբն, քանզի կարծէր թէ յետ այնչափ խորհրդոց ըմբռնեսցէ զնա ապահովութեամբ և ՚ի վերուստ յերկիր քարշեսցէ, և այնու պայծառագոյն լինիցի պսակն։ Փորձեալ ոսկի որչափ և կամիցիս փորձեա, որչափ և կամիս տանջեա ՚ի հուր, և ոչ գտանես առնա աղտեղութիւն։

Եթէ այսու զսայմն զօրութենէ ցուցանէ մեզ միայն, այլ և այլ մխիթարութիւն մատուցանէ։ Յուր զինչ ասէր Պրհատս. Երանի է ձեզ յորժամ նա-

խաւեսցեն զձեզ և հալածեսցեն, և ասասցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ։ ցնծացէք և ուրախ լերուք զի վարձք ձեր բազում են յերկինս, զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ եին։։ Հարքն ձեր։։ Լաւ դարձեալ Պաւղոս յորժամ կամէր մխիթարել զմակեդոնացիսն, ։։Լաւք, ասէ, նմանողք եղերուք, եղբարք, եկեղեցեացն ՚ի որ են ՚ի հրէաստանի. զի այսպէս չարչարեցայք և դուք ՚ի ձերոյ ազգականաց որպէս և նոքայն ՚ի Հրէից։։։ Լաւ առ եբրայեցիսն դարձեալ այսպէս գրէր և աղաչէր վասն ամենայն արդարոցն որք ՚ի հնոցի և ՚ի գուբան, որք յանապատս և ՚ի լերինս և յայրս, որք ՚ի սով և ՚ի նեղութիւնս եին. զի այսու զանկեալսն որք հաղորդք եղեն չարչարանաց նոցա՝ միխիթարեսցէ։

Որ և վասն յարութեան մերոյ դարձեալ այսպէս ասէ Պաւղոս. ։։Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ՚ի Քրիստոս, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ։։։ Լաւ զոր ասէս այս է. եթէ յանցաւոր կեանս բիւր նեղութեան դիպեցաք և այլ ոչ ունիմք յոյս կենաց, ոչ ոք լինի թշուառական քան զմեզ՝ եթէ կեանք մեր մինչև ցայս պատուիրեցաւ։ Լաւ այս յայտնի ՚ի բազմաց չարաց լինի. զի թէ ոչ ընդունի ՚ած որպէս որք այսչափ յուսացեալ են ՚ի չարս և վայելեն, և որք զանցաւոր զկեանս զամենայն ՚ի փորձութիւնս և ՚ի բիւր վտանգս մատնեցին, և ոչ առնուն բազում և առաւելապէս զփոխարէնս հնորհացն։ Պատ եթէ ոչ է առնել զմեռս, բարիոք ասաց եթէ առաւելագոյն և պայծառացեալ պատրաստեալ կան մեզ անանց կեանքն որ հանդերձեալ են զբարեպաշտս պահել և քարոզել. և այս է յայտնի սահման ամենայն աշխարհի։ Զի յորժամ տեսանիցես զարդարն նեղեալ չարչարեալ, ՚ի հիւանդութիւնս և յաղքատութիւնս անկեալ, և յայլ բիւր նեղութիւնս և ՚ի վիշտս հասեալ յանցաւոր կեանս յայս, ասա դու ցանձն քո եթէ ոչ էր յարութիւն և դատաստանք և իրաւունք, ոչ էր թոյլ տուեալ ՚ած որք վասն անուան նորա հանդիպեալ եղեն բազում չարեաց՝ առանց փոխարինաց բարւոյ գնալ յայժմու կենացս. որպէս և ասացաւ իսկ՝ եթէ այլ է պատրաստեալ նոցա կեանք լաւագոյն քան զայս և առաւել բարձրագոյն քան

զանցառս։ Այլ եթէ ոչ էր այսպէս, ոչ էր Թողեալ զարագործս կեալ ի փափկութեան ի մեծութեան յառողջութեան անցառս կենացս, և արդարոց Թոյլ տալ ի բազում չարչարանս և ի վիշտս կեալ։ այլ այլ կեանք են պատրաստեալ յաւիտենականք ըստ իւրաքանչիւր արժանեաց, և Հանդերձեալ է տալ այլ աղգ չարագործաց և այլ ազգ առաքինեաց որպէս և կամեսցի, վասն որոյ աստէն Համբերէ ոգի ի չարչարանս իցեն և ի նեղութեան, և ոգի ի փափկութեան և ի մեծութեան։

Այս և զայլ պատճառն ի գրոց կամիմ ստուգել և Հաստատել. և Թէ որ իցէ, ես ասացից։ Աղաչեմ ըզձեզ զամենեսեան զի մի յայսմ Հետէ վասն Համբերական առաքինութեան սրբոցն ասիցէք եթէ նոքա այլ բնութիւն ունէին քան զմարդկան, ըստ որում և վասն մեծին Աղեայի է ասացեալ։ Օ իմաղդ ասէ. "Աղեա մարդ էր չարչարակից մեզ,, ։ Յետանէն զի մարդն ասէ լով՝ Հաղորդ չարչարանաց ձնա ցուցանէ որպէս զմեզ։ Այլ այլուր՝ Թէ "Աղբայր ձեր և Հաւասարակից վշտաց ձերոց,, ։ Օ ի ուսանիցիս զպարտն Թէ յիրաւի երանեցան նոքա, և զայս դարձեալ Պաւղոս խրատէ զմեզ և ասէ. "Աեթէ պարծել ինչ պարտ իցէ, ի տկարութիւնս պարծեցայց,. և դարձեալ ասէ. "Հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ վիշտս, ընդ չարչարանս և ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի,. և այլուր զնոյն տեսցես զասացեալն Պաւղոսի, Թէ "Ի նչևս ցայսօր ժամանակի և քաղցեաք և ծարաւեցաք և մերկ գնացաք և կռփահարեցաք և անհանգիստ եղաք և աշխատեցաք ձեռօք մերովք,. և Թէ "Օ որ սիրէ տէր, խրատ տանջէ զամենայն որդի զոր ընդունի,, ։ Քարիւղ ասէ զայս, զի յայտ արասցէ՝ եթէ ոչ որոց Հերեալ իցէ յայժմ կեանս զայնպիսիսն ընդունի, այլ զնոսա որ նեղեալ են վասն նմա և ի սգի անցուցեալ զաւուրս։ Օ այնպիսիսն և մեք գովեսցուք և ցանկասցուք որոց առաքինութեամբ կեցին յայժմ կեանս, որք բարեպաշտութեանն միայն Հոգացան։ Այսպէս և մարգարէն Դաւիթ ասէ. "Աչ նոցա աչ է մեղայ. զտերբ նոցա զարդարեալ և պաՀուՀեալ ի նմանութիւն տաճարի. շուխմարանք նոցա լի են և բխեն ի միմեանս. խաշինք նոցա բազմածինք են և բազմանան ի գնացս իւ-

բեանց, և անդեպք նոցա պարարտք էն։ Եւ գոյ իրա-
մատուցիւն ցանկոյ նոցա և ոչ աղաղակ ի հրապարակս
նոցա։ Լիցուն ժողովրդեան որոց այս այսպէս է ,, ։
Զոր զինչ կամիցիս ասել. ,,Այս երանի ժողովրդեան
որոց տէր նոցա է ,,. ոչ եթէ որք ընչիւք են մեծա-
ցեալք, այլ որք բարեպաշտութիւք են հաստատեալք։

Այդ եթէ կամիցիք զի ի սոյն յաւելից, ասացից և
հինեւրորդ պատճառ՝ զի նեղութիւնք և տրտմութիւնք
ընտիր գործեն զհամբերողն։ ,,Նեղութիւն, ասէ, ըզ-
համբերութիւն գործէ, համբերութիւն զհանդէս, հանդէս
զյոյս, յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ ,, ։ Ցեսանէս զի ի
տրտմութիւնս փորձութեանց վասն հանդերձելոցն մերձ
եգեալ եմք. և որք համբերեն ի փորձութիւնս, զնո-
սին բարի յուսով արասցէ, որք վասն հանդերձելոցն ի-
ցեն յաստի նեղութիւնս, և ոչ ունայն վարկցին զպա-
տուոր տրտմութիւնս զայսոսիկ որք առ յոյս վասն յարու-
թեան գրեցին մեզ, յայտ արարեալ զառաւելութիւն
տանջեցելոցն։ Ընդէ՞ս հուր, ասէ, փորձէ զոսկի, այս-
պէս և զմարդ ընտիր գործեն նեղութիւնք։

Ի յաստացեալս և տասներորդ պատճառ յաւելուլ,
և այս սոյն իսկ է զոր բազում անգամ ասացի. զի որք
ունիցիմք ազատութիւն ինչ, աստէն ի բաց մերկաս-
ցուք։ Ո՞վ այս և նախահայրն Աբրահամ առ մեծատունն
ասէր. եթէ ,,Որդի ընկալար զբարիսն քո, և Ղազա-
րոս զչարչարանս ի կեանս իւրում, և աստ սա ի բարիս
վայելէ ,, ։ Այս առ այսու զարձեալ այլ պատճառ գտի. որ
արդեօք իցէ, ես ասացից. զի զպսակին և զբարիսնն մեզ
առատապէս մեծացուցանէ. քանզի որչափ վիշտք և նե-
ղութիւնք և տրտմութիւք յաճախեն, այնքան յաւելուն
և փոխարէնքն, մանաւանդ ևս բազմապատիկ. ,,Կան-
զի չեն, ասէ, արժանի չարչարանք ժամանակիս հան-
դերձեալ փառացն որ յայտնելոցն է ի մեզ ,, ։ Այսչափ
պատճառս վասն չարչարանաց սրբոցն եղև ասել ի միջի։

Այսուհետև մի դժուարասցուք ի փորձութիւնս, մի
լիցուք անզօրք և մի տրտմեսցուք, այլ զնոցայն առ ի խրատ
և մեք բերցուք յանձինս մեր, և այլոց զնոյն ուսուսցուք։
Եթէ տեսանիցես մարդ զոր յառաքինութեանս հիւ-
սեալ կեանս իմաստութեամբ և հաճոյ լեալ ՚ի, և զի-
պեսցի բազում նեղութեան, մի գայթակղեսցիս դու,

ով սիրելի։ Այլ եթէ տեսանիցես զոք պատրաստեալ՝ի հոգևորական գործս և հանդերձեացէ զինքն գնալ՝ի հայ Հայաստան վարս, և ապա՝ի վտանգս անկանիցի, զարձեալ մի զարհուրեցիս։ Օ՛ի և զբազումս տեսի ես՝ի խնդիրս յայս. տեսաք, ասէ, զոմն՝ի մատրունս և՝ի վկայարանս Հեպեալ վասն աղքատաց ինչս բերելով, և անկեալ՝ի նաւակոծութիւն կորոյս զամենայնն. այլ ոմն զնոյն արարեալ դիպեցաւ աւազակաց, և հազիւ փըրկեաց զանձն իւր փախստեամբ յայնմ վայրէ մերկ։ Օ՛ինչ ասիցեմք առ այս. այլ թէ և ոչ՝ի միոջէ յայսցանէ պարտ է գայթակղել։ Այլ պէտ և՝ի նաւակոծութիւնս անկաւ, այլ ունի համբարեալ զպտուղ ողորմութեան, զի զամենայն ինչ զիւր կատարեաց. քանզի բարձեալ զինչս իւր և՝ի Հանապարհին եղև նաւակոծութիւն, և այս ոչ յիւրմէ, այլ ականայ։ Այլ ընդէր, ասէն, և վասն էր ետ Թոյլ ՚ած լինել այսպէս. զի գնաց ընտիր արասցէ։ Այլ աղքատքն, ասէն, զրկեցան յիւրեանցայոցն։ Այլ այսպէս խնամարկէս դու աղքատացն որպէս արարիչ նոցա ՚ած. Թէպէտ և յայնմանէ օտարացան, բայց յայլմէ կողմանէ կարող է պարգևել նոցա պատՀառս կենաց։

Այ՚ի գնա պարտաւոր արասցուք եղելոյն, այլ մանաւանդ փառաւորեացուք ըստ ամենայնի զարարիչն։ Օ՛ի ոչ եթէ միայն Թոյլ տայ այսմ լինել, այլ յետ այսորիկ ոչ անտես առնէ զայնսոսիկ ոըք Հանդերձեալ էին անտի առնուլ միսիթարութի՛ն, և այլևս պարգևէ նոցա պատՀառս կենաց, և զՀամբերողն յալէկոծութիւնն և՝ի վտանգն ընտիրս երևեցուցանէ, և բազմապատիկ պարգևէ նոցա վարձս։ Օ՛ի ոչ Թէ որք առնեն զողորմութի՛ն այնպէս իցեն՝ի պարգևսն, որպէս որք անկան՝ի չըն՚չին իւրեանց և գոՀանան զայ. զի սոքա յոյժ առաւելեալ գտանին քան որ զտուրսն տան. զի քան զողորմութիւն տալ՝ մեծ այն իսկ է զայլոց յափշտակութիւն բերել քաջութեամբ. այս առաւել յաՀախ զպտուղն։ Այ՚ի ուսանիցիս Թէ այս քան զայն առաւել է, յետկելոյն՝ի վերայ Յոբայ առնեմք զայս յայտնի։ Այս յոյժ ժամ ինչս ստացաւ, եթայց զտուն իւր աղքատաց տալ պատրաստեալ զամենայն. բայց ոչ այսպէս գտաւ պայծառացեալ յայնժամ, որպէս յոյժամ լուաւ զանկումն

ընչից իւրոց և ոչ գժուարացաւ։ Ա՛ւ այսպէս աքանչելի էր յորժամ՝ի գեղջին հօտից իւրոց զմերկս զգեցուցանէր, որպէս յորժամ լուաւ եթէ հուր էջ և զամենայն հօտսն կիզեաց և գոհացաւ զնա։ Յայնժամ մարգասէր էր, այժմ եղև իմաստասէր. յայնժամ աղքատաց ողորմէր, իսկ այժմ աղքատացեալ գոհանայ զտեառնէ։ Ա՛ւ ոչ ասաց ցանձն իւր՝ եթէ գլխոյդ իցէ այս, ամենայն հօտքն կիզեցան յորոց կերակրէին բիւրք աղքատաց. Թէպէտ և ես անարժան էի ունել զձոխութիւն, սակայն վասն առողջոյն պարտ էր խնայել։ Ա՛յլ ոչ ասաց զայս և ոչ ած զմտաւ. քանզի գիտէր Թէ զամենայն ինչ՝ի բարիս տնօրինէ նմա։

Ա՛ւ զի ուսանիցիս զի առաւելագոյն հարուածն և խոց էդ սատանայի յորժամ յափշտակեցաւ և գոհացաւ՝ քան յորժամ՝ի ստացուածոյն ողորմէր, իմա սիրելի, զի յորժամ ստացուածքն էին՝ յայնժամ կասկած ունէր՝ի սատանայէ ասել ինչ զմտանել. Թէպէտ և սուտ էր, սակայն յանդգնէր ասել՝՝ Ա՛ԹԷ ձրի պաշտէ Յոբ զտէր,,։ Ա՛ւ յորժամ զայն ամենայն առ՝ի նմանէ և յամենայնէ մերկացոյց զնա, յայնժամ փակեցաւ անառմոթ բերան նորա և այլ ինչ ասել ոչ ունէր. քանզի յորժամ՝ի մեծութեան էր, ամենեցուն ողորմած էր. և յորժամ յափշտակեցաւ, քաջութեամբ գոհութի՛ն բերէր, որ առաւել բազմապատիկ երևումն արդարոյն յայտնիկ էր։ Յայնժամ բազում էր հիւրասիրութիւն առ ամենեսեան, բայց այժմ մեծ զսէրն առ նմա եցոյց։

Ա՛ւ ես ոչ ըստ այմ միայն և վասն նորա մերձ գնիմ՝ի բանս. այլ երբեմն բազումք բազում ողորմութիւս առնեն, զայրիս կերակրեն, զորբս հանգուցանեն, զմերկս զգեցուցանեն, և՝ի սոյն սպառեցին զամենայն ստացուածըս իւրեանց. ոմանց հրով այրեցաւ և կորուսին զամենայն, ոմանք՝ի նաւաբեկութիւնս անկեալ, ոմանք՝ի գրպարտութիւնս և յայսպիսի պատճառս փորձանաց. բազումք հանդերձ բազում ողորմութեամբ հասին՝ի յետին աղքատութիւնս և՝ի ցաւս և՝ի հիւանդութիւնս, և ոչ ընկալան յուժեքէ օգնականութիւն և ոչ մի։ Ա՛ւ մեք այժմ ոչ ասեմք զոր բազումք բազում ինչ ասեն. բաւական է որ առացաւս յայտնի առնել որ զայսպիսի խռովութիւնս արկանեն. զի ոմ՛ք ոչ ետես յայտնեալ

զամենայն։ Այս անուն, ասեն, ողորմութիւնս արա՛ բեալ, և ապա կորոյս զգոյն իւր զամենայն։ Այս այն ինչ իցէ եթէ զամենայնն կորոյս։ Ի՞նչ եթէ վասն կորստեանն գոհանայ զնա, քաղցմ առաւելութեամբ հանդիպի բա՛ րեացն նա. ոչ եթէ կրկնապատիկ որպէս Յոբն, այլ հարիւրապատիկ առցէ՛ի հանդերձեալ կեանսն։ Այս ա՛ մենեքեան որք աստ պատահիցեն չարեաց՝ այսպէս է, միայն թէ քաջութեամբ բերիցեն զամենայն, առաւել առցեն անդր, որպէս թէ անդր համբարեալ զամենայն գգանձան։ Վասնզի բազում մեծութիւն կոչելով զնոսա՛ի ձեռն պատերազմի և մարտի փորձութեան, ՛ի ձախո՛ ւթենէ յաղքատութիւն եթող անկանել նա։

Այս դու արդ եթէ հուր անկեալ յերկնից այրէ զտուն քո, ած յիշեա զտունն Յոբայ, գոհացիր զտեառնէ՝ որ կարող եր արգելուլ և ոչ արգել. և այսչափ առցես վարձս որպէս թէ զամենայն եդեալ ես ՛ի ձեռս աղքատաց։ Այլ յաղքատութիւն անկար և ՛ի սով և ՛ի բազում վիշտս, ած յիշեա զԱզարուն. և եթէ ցաւօք և աղ՛ քատութեամբ և բիւր այլ այսպիսի տագնապ հասա՛ նիցէ եկեալ, և այս զինի բազում առաքինութեան, ած յիշեա զառաքելոցն որք ՛ի սով և ՛ի ծարաւ և ՛ի մեր՛ կութիւնս էին, զմարգարէիցն, զՀայրապետացն, զաւ՛ գաբոցն. և գտանես զամենեսեան զնոսա ոչ ՛ի մեծու՛ թենէ ոչ ՛ի փափկութենէ, այլ յանձկութենէ և ՛ի նե՛ ղութենէ հասին այնմ չնորհաց։

Այս ընտրեա յանձին քում, գոհացիր զտեառնէ որ զքեզ ՛ի մանկնս յայսմիկ կացոյց, որ ոչ թէ ատեր զնոսա, այլ առաւել սիրեր՝ պայծառագոյն առնելով ՛ի ձեռն այսպիսի չարչարանացս։ Զիք մեծ բարի ՛ի մեզ հանդոյն գոհութեան, որպէս ոչ ինչ վատթար քան զգայթակղութիւն։ Ի սքանչացուք եթէ ՛ի հոգևորա՛ կան գործս իցեմք և բազում նեղութեան դիպեսցուք։ Ի որպէս աւազակք ոչ եթէ ուր խոտ իցէ և յարդ և եղէգն անդ երթիցեն, այլ ուր ոսկի և արծաթ՝ անդ հանապազ աքնին և փորեն և հատանեն, սոյնպէս և սա՛ տանայ այնպէսիկ զնե զորոգայն իւր՝ որք ՛ի հոգևորական գործս մերձեալ են։ Ընդ բազում ջան և նախանձ է սատանայի, ուր առաքինութիւն և ողորմութիւն իցէ։ Այլ գոյ մեզ զէն զգօր փրկութեան որ կարող է զա՛

մեծայն մեքենայս չարին հարկանել, զի ընդ այսր առնային գոհասցուք զՅն։

Այս ինձ, ով սիրելի, միթէ հաբէլ ոչ զընտիրս հօտիցն սկսաւ մատուցանել Յն, և յեղբայրական ձեռս թոյլ ետ անկանել Յն. ոչ եթէ առէր զպատուղն, այլ սիրէր յոյժ։ Որովհետև կամեցաւ օգնել ուժգին արհամարհելոյ, և յետոյ վասն օգնականութեանն անկեալ ի հայրենեացն. և թոյլ ետ Յն, զի ուսանիցիս զսրբոյն գհամբերութիւնն։ Օ՜ի եթէ յառաջ իմացեալ էաք եթէ որ ոչ անկանիցի ի վիշաս՝ այնպիսի մերձենայ ի հոգևորական գործս, ոչ այլ ինչ մեծ կամիցաք առնել, բայց առձեռն պատրաստ զայս իսկ ունէաք. այլ այժմ մանաւանդ այս իսկ է սքանչելի, զի որք այնպիսի գործս գործէին, նոքա գնեղութիւնս, զմահս և զբազում չարչարանս առաջի աչաց տեսանէին. սակայն և այսպէս ոչ թողին զուղղութիւնն։ Որպէս և երեք մանկունքն ասէին. "Կայ մեր Յն յերկինս որ կարող է փրկել զմեզ,,. և դարձեալ եթէ "Ոչ՝ թէպէտ, զի զպատուածս քո մեք ոչ պաշտեմք, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր երկիր ոչ պագանեմք,,։

Եւ դու յորժամ կամիցիս վասն Յն բարիս գործել, և նախ տեսանիցես բազում նեղութիւնս և բազում փնասս և մահս, մի խռովեսջիր վասն եկեղեցւոյ այսոցիկ։ "Կայսեւհետև որդեակ, եթէ կամիցիս ծառայել տեառն, պատրաստեա զանձն քո ի փորձութիւն,,։ Եւ զոր որ ի պատերազմ մտանիցէ, առանց վիրաց ակն ունիցի զդառնալ պսակս։ Եւ դու այժմ ընդդէմ սատանայի զամենակալ թագաւորն ընկալեալ իցես, մի գնար զկետ կենցաղոյս այսորիկ որ լի է փափկութեամբ և մեղկութեամբ։ Այլ եթէ սատէն իցէ հատուցումն և խոստմանք, այլ ի հանդերձեալ յաւիտենին։ Յորժամ դու ինքնին կամեսցիս բարի առնել և դիպեսցի քեզ չար, կամ թէ զայլ զոր տեսանիցես յայսպիսի դիպուածս, ցնծա և ուրախ լեր, քանզի ևս առաւելագոյն հատուցումն լինի քեզ։ Դու մի անկանիցիս և մի լծծանիցիս զյոժարութիւն և մի ծուլանայցես, այլ մանաւանդ յաւելցես ի բազմապատիկ յոժարութիւն. քանզի առաքեալքն յորժամ քարոզէին, ապտակեալք և հանապազ ի բանտի արգելեալք՝ առաւել ևս աձեցուցանէին

զՀՀմարտութիւն քարոզութեն։ Տես զՊաւղոս յայնմ բանսի և կապեալ ՚ի շղթայս, բայց ՚ի վարդապետութենէն ոչ լռեր. և ՚ի գաւառսանէն կացեալ այսպէս առներ, և ՚ի նաւակոծութեան և ՚ի ծփանս ծովու և քաղցում յայլ նեղութիւնս։

Այլ դու այնպիսեաց սրբոց լեր ցանկացող, ընկալ ըզգործս բարիս մինչև ՚ի վախճան քո. և եթէ բիւր անգամ տեսանիցես զսատանայ մրցեալ առ ՚ի հատանել զքեզ քո, մի երբեք ՚ի բաց կայցես։ Դու այժմ ինչ բարձեալ տանիս կարօտելոց և անկանիս ՚ի նաւաբեկութիւն. իսկ Պաւղոս որ քան զամենայն ինչս զատուա-կանագոյն եր՝ բարձեալ զքանն ՀՀմարտութեան տանէր ՚ի Հռոմ, և անկեալ ՚ի նաւակոծութիւն և բազում նեղութեան դիպեալ։ Ա՛յլ և զայս ինքնին նոցա գրեալ ասէր. "Հազում անգամ կամեցայ գալ առ ձեզ, և խափանեաց զմեզ սատանայ,,. և ՚ի մեղն եւս սատանայի, այսպէս և ՚ի բնութենէ կամաց զզօրութիւնն իւր յայտնեաց, և ցուցանէր որ բազում անգամ եղև արգել սատանայ, սակայն ոչ յայտմ քարոզութենէ պակասեցոյց զնա։ Ա՛յսու այսորիկ Պաւղոս գոհանայր զնոյ, գիտելով զի այսու իսկ ընտիր լինէր։ Այլ մեք որչափ և անկանիմք, այնչափ մերձենամք ՚ի հոգևորական գործս։ Այլ զայս մի սասացուք եթէ ընդ՚ի տեղի եւս ՚ի սատանայի լինել խափանիչ. վասն այնորիկ թոյլ եւ, զի առաքելոյ՚ն Պաւղոսի և բազում տեղեաց զգուշացուցանէր։ Վասն այս իսկ և սիրոյ նշանակ, մի իւիք իրօք ՚ի բաց կալ յորմէ սիրոյ ակն ունիցի։ Ա՛յլ թոյլն և հեղգասիրան յառաջնումն իսկ անկանի. իսկ ժուժկալն և զգաստն թէ և բազում անգամ անկանիցի, նոյնչափ առաւելապէս ցուցանէ զզօրութիւնն իւր առ ՚ի՝ զի կատարեսցէ զամենայն գործս իւր, և յամենայնի գոհանայ. զոյն և մեք արասցուք։ Ա՛յն գանձանակ և գոհութիւնն և մեծ սասացուած, սանանց բարւոյ, զօրաւոր զէն. որպէս գայթակղութիւն առ որս իսկ՝ յերկարէ զվիսաս, և զոր կորուսանեմք՝ առաւելապէս իսկ կորուսեալ։ Կորուսեր ինչս. եթէ գոհանայիս, շահեցար զհոգիդ, և առաւել սատացար սատացուածս յայլ. սպա եթէ գայթակղեայիս, կորուսեր նախ զիրկութիւն քո, զայն ոչ սատացար, և զքեզ ևս սպաներ։

Ա՛յլ յորժամ վասն գայթակղութեան բանս եղև

առ մեզ, մի՛ հնարհս յամենեցունց՝ ի ձէնջ խնդրեմ. փութանակ հայհոյութեանս այսորիկ և յանդիմանութեես ինձ զայս արարէք, զի որք՝ ի քաղաքիս մերում գայթակղին՝ իմաստացուսջիք։ Եթէ լուիցես յումեքէ գաղտնի կամ՝ ի մէջ փողոցի գայթակղեալ չայ, մատիր առ նա, սաստեա. սակայն և վէրս ևս դնել պարտ է։ Իսկ եթէ ոչ խրատի և ղջմանայ, ապտակեա զերեսս նորա, մանրեա զբերան նորա, սուրբ արա զձեռս քո վասն հարուածոյն։ Եւ եթէ՝ ի դատաստան մտանիցէ, զհետ երթիջիր նորա, ասա համաչէմ՝ եթէ՝ ի թափաւորն հրեշտակաց գայթակղեցար։ Ո՛ի եթէ յերկրաւոր թափաւոր էր գայթակղեալ՝ արժանի էր տանջանաց, մանաւանդ որ զբաբերարն անարգեն։ Համօրէն իցէ պարտաւորութիւնս, հրապարակ և ատեան իցեն մեզանքս։

Ասային զայս Հրեայք և հեթանոսք, զի փրկութիւն են քաղաքաց քրիստոնեայք և սիրողք և առաջնորդք և վարդապետք. որք իցեն՝ ի չարիս և տանջանաց արժանի և հպարտացեալք են, ՝ի միտ առցեն զի՛ ՝ի ծառայից ՚այ պարտ է երկնչել. Թանդի թէ և կամեսցի որ այսպիսի խօսել, ՝ի միմեանս հայհոյին և յամենայն կողմանց պատրաստեսցին, նա և ՝ի ստուերաց անգամ տագնապաւ դողայցին՝ մի գուցէ քրիստոնեայ լուիցէ զայս, ընթացցի և ուժգին տանջեսցէ զմեզ։

Ո՛չ լաւ եթէ զինչ գործեաց Յովհաննէս. եաես անիրաւ հարսանիս և բռնաւորութեամբ արհամարհեալ զօրէնս, և համարձակութեամբ ասէ՝ ի մէջ հրապարակին. "Ո՛չ է արժան քեզ ունել զկինն եղբօր քո"։ Այլ զքեզ ոչ ածեմ առաջի բռնաւորի, ոչ առաջի դատաւորի, և ոչ խօսել ինչ վասն անօրէնն փեսայութեան և ոչ վասն անարգանաց ընկերի քո, այլ վասն որոյ՝ ի տէրն գայթակղեացին, զպայթակղեալն արժան է խրատել։ Այդպա եթէ ասէի քեզ՝ թագաւորի կամ դատաւորի անօրինելոյ ածել խրատ տանջանաց և առնել ուղղութիւն, յիրաւի խռովէիր ինչ. ո՛չ ապաքէն Յովհաննէս այսպէս արար, այսպիսիքս ոչ եթէ մեծագոյն ինչ իցեն քան զմեզ։ Սակայն դու զնմանակիցս քո ուղղեա. Թէ և պարտ իցէ քեզ մեռանել, մի՛ հեղգացիս խմաստացուցանել զեղբայր քո. այս իսկ է քեզ վկայութիւն, զի և Յովհաննէս ինքն վկայ իսկ է։ Եւ ոչ եթէ զսնել

կոյց կամ երկիր պագանել Հրամայեցաւ, այլ վասն ա-
նարգանաց ՚ծածկին օրինացն եւ զգլուխ իւր. եւ զու ՚ի
քէն այժմ ցոյց զքան մինչեւ ՚ի մահ վասն ՀՀմարտու-
թեանն, եւ տէր ինքնին պատերազմի վասն քո:

ՀՀ՚ի ինձ ասիցես զցուրտ բանս զայս՝ եթէ զինչ հոգ
է ինձ, ոչ եմ հաղորդ նմա: ՀՀ՚իսկ ընդ սատանայի ոչ
ունիմք հաղորդութիւն, այլ[1] ընդ ամենայն մարդկան
բազում ունիմք հաղորդութիւն որք զնոյն եւ զմի քնու-
թիւն ունին զմեր: ՀՀ՚ի այժմ ասիցէք եթէ ոչ եմք հա-
ղորդ նոցա. սատանայական է ձայնս այս, եւ դիւական
անմարդութիւնս: Ո՚չ յոյս հետեւ զայս մի ասասցուք, այլ
որպէս վայել է եղբարց սէր ցուցցուք: Ո՚չ այժմ զայս
Հանդերձ ամենայն սաստկութեամբ խոստանամ, եւ ձեզ
ամենեցուն երաշխաւոր լինիմ. զի եթէ դուք ամենե-
քեան որ աստ իցէք՝ խորհիցիք բաշխել զփրկութիւն ո-
րոց քնակեալ են ՚ի քաղաքիս, վաղվաղակի ամենայն
ինչ յաջողեսցի ձեզ: ՀՀ՚ոչ ապաքէն փոքր բաժին քաղա-
քիս աստ իցէք. փոքր ասացից վասն բազմամբոխ ժո-
ղովրդեանն, եւ զլուխ յաղագս բարեպաշտութեն: Ո՚աշ
խնամացուք այժմ եղբարց մերոց զփրկութիւն. բաւական
է մի ոք որ ջերմագութի ցանկութիւն ունիցի՝ ուղղել
բոլորովին զամբոխն: Ո՚սկ ուր ոչ եթէ մի կամ երկուս
կամ երիս միայն իցէ, այլ այսչափ բազմութիւնն որ կա-
րող են զծոյլն արթուննս առնել, ապա ոչ յայլ ինչ
ժնասուց, այլ ՚ի մերմէ դանդաղմանէ է, եւ ոչ ՚ի տկա-
րութենէ որք բազումք կրեան:

Օ խարդ ոչ է այս տաղտկալի, որ յորժամ տեսանեմք
վէճ եւ ընթանամք ՚ի փողոց եւ ոչ մոռնեմք հաշտ զվի-
ճեալն. եւ զինչ ասացից վէճ. ուր եթէ տեսանիցեմք
էշ ՚ի մօրատ անկեալ, ամենեքեան ձեռն տալ փութամք.
եւ զեղբարս ՚ի նոյն տեսեալ՝ պղերգանամք: Ո՚չ գայ-
թակղութիւն իցէ, բեռին բարկութեան ոչ ժուժկա-
լեաց, տապնապեալ անկաւ. մատիր յարս զնա եւ քա-
նիւք եւ գործովք եւ ողբանօք եւ խոտութեամբ. քանզի
այսպէս է դեղն: Ո՚թէ այսպէս յանձնէ մերմէ անօրի-
նեմք եւ յանձին ունիմք զդրացեաց մերոց զփրկութիւն,
վաղվաղակի նոքա զայսպիսի ուղղութիւնս վայելեն, եւ

1 Պակասէր յօրինակին այլ. : հաղորդութիւն. յաւելաւ ՚ի յունէն:

լինիցիմք կատարեալք և ցանկալիք. և որ քան զամենայն բարձրագոյն իցէ, զյաւիտենականն ընկալցուք բաւ ըիս շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ հոգւովն սրբով այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ

Խօսք ասացեալ յԱնթիոք երբեմն նոր քահանայ՝ի հին եկեղեցիս յաղագս եկեղցւոյ գայթակղութեանց յանխմաստութենէ. և վասն անգրէն դարձուցանելոյ զպատկեր մեծի Թագաւորին Թէոդոսի. և՝ի բան առաքելոյ «Մեծապանծ պատուիրել յայսմ ժամանակի զդաշ լինել». և վասն ապահովութեան։

Ո՞վ ինչ ասացից կամ զինչ խօսեցայց. արտասուել զհասեալ ժամանակս՝ ոչ բանիւք, ողբերգութեամբ՝ ոչ խօսիւք, աղօթիւ՝ յայս հանդերձակելոյ մեծութի։ Այսպիսի անբժշկելի է վէրս, այսպէս մեծ է հարուածս, ամենայն բժշկութեան բարձրագոյն է և կարօտ վերին օգնականութեան։ Յոր յորժամ զամենայն կորոյս, ինաց նստեալ՝ի վերայ աղբի. լսեալ զայս բարեկամաց իւրոց՝ մերձ եկին առ նա, և տեսեալ զնա՝ի բացեայ՝ պատառեցին զհանդերձս իւրեանց և՝ի մօխիր անկեալ մեծապէս հառաչէին։ Այժմ զնոյն պարտ է առնել ամենայն քաղաքացեացս և որ շուրջ իցեն գալ այսր և զեղեալս աղբալ բազում ողբերգութեամբ։ Այս ինքն Յոր յայնժամ նստեալ կայր յաղբևս. իսկ քաղաքս մեր անկեալ կայ՝ի մեծ որոգայթ։ Որպէս յայնժամ սատանայ՝ի հօտս և՝ի խաշինս և՝ի տունս արդարոյն խայտացեալ, սոյնպէս և՝ի քաղաքս յայս յանդգնեալ։ Այլ ոճ յայնժամ և այժմ տեղւոյ ետ լինել. անդ զի զարդարն պայծառագոյն արասցէ, այժմ զի զմեզ իմաստնագոյնս յօրինեսցէ։

Ցուք ինձ աղբալ զհասեալ իրս. լսեցաք զաւուրս եօթն որպէս և սիրելիքն Յոբայ, ոտք ինձ այսօր բանալ զբերան և զհամօրէնն զաւուս զայս կոծել։ Ո՛վ զա-

ըեցաւ ընդ մեզ, սիրելիք. ով նախանձեցաւ. ուսոյ ե՞ղև այսչափ հայհոյութիւնք։ Ա՛յ էր տեսանել պարկեշտ որպէս քաղաքս մեր, և ոչ լիեալ ողորմելի որպէս այժմ։ Ա՛յժմու ընտանեգոյն և բարեգնաց այնպէս որպէս ձի խեղախեռ միշտ անկեալ՝ի ձեռս իշխանաց, այնպէս խայտացեալ յանկարծակի՝ մինչև այսպիսի գործել չար զոր ոչ կարեմք ասել։

Ա՛ծիմ և ողբամ այժմ, ոչ եթէ ըստ աին ունելոյ մեծի սպառնալեացս, այլ վասն բազում բարկութեան եղելոյս։ Ա՛յլ եթէ ոչ էր բարկացեալ Թագաւորն և ոչ խռովեալ և ոչ կամէր տանջել և խրատել, զիա՞րդ այսպէս կամեաք մնալ՝ ասա ինձ՝ ամենայս եղելոյ։ Ա՛ղաւճնս այս հատանէ յինէն ղբան վարդապետութեանս, բըռնութեամբ կարել ամբառնալ ղբերան և բանալ ղշըրթունս և շարժել ղլեզու և բան ինչ յառաջ բերել։ Ո՞վ պատճառ ծանուցանէ ղարձուցանել ղլեզու իմ և ղբանս յափշտակէ յինէն։

Ա՛յ էր տեսանել որպէս զքաղաքս մեր երանելի յառաջագոյն, և ոչ անվայելուչ որպէս և այժմ։ Ո՞վ որպէս մեզու՝ի խորխէ պարսեալ՝ այսպէս՝ի փողոցս ընթանային զօր՝ամ բնակեալքն՝ի քաղաքիս, և՝ի բազմութէ՛ն չէ՛ն յանմանէ զմեզ երանելին յառաջագոյն։ Ա՛յլ այժմ խորխոխս այս եղև անապատ. զի որպէս հալածի մեզու յերեսաց ծխոյ, սոյնպէս և զքաղաքս զայս հալածեաց ահս այս։ Ա՛յլ զոր մարգարէն վասն Ա՛րուսաղէմի ողբալով ասէր, զսոյն և մեք յայսմ ժամանակի ասասցուք. եղև քաղաքս մեր “որպէս դրախտ որ ոչ առցէ ջուր”, անապատ մնացեալ՝ի պտղոյ, և մերկ՝ի տերևոյ մնացեալ երևեցուցանէ զծառն։ Ո՞չ եղև այժմ զի՝ի վերնին օգնականութենէն՝ի բաց Թողաւ, ըստ որում եղև անապատ և յամենայն բնակչաց՝ի բաց մերկացաւ։

Ձիք յերկրի քաղցրագոյն իբրև զՀայրենիս. խակ այժմ դառնագոյն եղև։ Ո՞մենեքեան բնակեալքն՝ի սմա որպէս յորոգայթից փախչէին, որպէս զգուռ Թողեալ գնային. որպէս՝ի հրոյ՝ յորժամ տուն առնուցու՝՝ի բաց վազէին, ուր ոչ եթէ բնակիչք տանն միայն՝ այլ և դրացիք ամենայն փախչէր փութան մերկ, միայն զանձինս իբրեանց ապրեցուցանել ջանան, այսպէս և այժմ Թագաւորական բարկութեանն որպէս հրոյ ինչ՝ի վերուստ

գալոյ ակն ունէին, և նախ քան ի վերայ նոցա հետևել հրոյն՝ իւրաքանչիւր ոք փախեաւ մերկ, միայն զմարմինս կեցուցանել։ Այլ եղև մեզ յանդիմանութեի փոխանակ առանց մարտի փախուստս այս, և առանց սպանման յափշտակութիւնս այս։ Ել տեսաք բարբարոսական սուր, և ոչ հայեցաք յերեսս պատերազմի, և որպէս զգերեալս պարտեցաք։ Այս ամենեքեան որք կամիցին իմանալ զհասեալ իրս, յորժամ ընդունին զփախստականսն մեր, ի նոցանէ ուսանին զվիշտս քաղաքիս մերոյ։

Այլ ոչ առնեմ ընդ այս. քանզի ուսանին ամենեքեան զչարիս քաղաքիս որ ոչ մոռացին, և ի մօրէ ձերմէ յերկրէ առ հասարակ ամենեքեան ձայնս պատանացս առ Աստուած մատուցանեն, և միաժողով զհասարակաց զամենեցուն զմայրն և զկերակրող խընդրեն յերկինսն որ թագաւորէն։ Ո՞ արժեցաւ նախ քաղաքս մեր, իսկ այժմ այսոքիկ շարժեաց զհոգի բնակչաց սորա. յայնժամ հիմունք շինուածոցն շարժեցաւ, այժմ այս զարհուրեցուցանէ զհիմունս իւրաքանչիւր սրտի, և ամենեքեան զօր ամենայն զմահ առաջի աչաց տեսանեմք, և կամք ահիւ հանապազ և մնամք տանջանացն Այրենի, ողորմելիք քան որ ի բանտս անկեալ և աստ անդր ցրուեալ՝ օտար է իրս այս և աքանչելի, մանաւանդ թէ և դժուարագոյն քան զկարծիս մեր։

Օ՜ի թէ ի պատերազմի այս դիպեսցի, միայն ի ներքոյ պարսպին արգելցին. իսկ մեզ այժմ և փողոցքս անընթացք եղև, քանզի իւրաքանչիւր ոք զպարիսպք[1] սիրոյ անարգեաց զտեառն իւրոյ։ Օ՜ի զօր օրինակ շրջապատեալ քաղաքի յորժամ պատերազմողք արտաքոյ նստիցին՝ բազում զգուշութիւն է արտաքս ելանել, սոյնպէս բազումք որք ի ներքս աստ քնակեալ էին զգուշացեալք ելանել ի տանց և ի մէջ քաղաքիս երևեալ, վասն օրալոյ յամենայն կողմանց զանմեղս և զմեղանչականս և յափշտակելոյ ի միջոյ փողոցին և ի դատաստանս որպէս և հանդիպէր՝ մատուցանելոյ։ Վասն որում ազատք հանդերձ ծառայիւք իւրեանց ի ներքս

1 Այդպէս յօրինակին, զոր յայնն ասէ իւրափանչիւր ոք ի փան իւրոմ ֆալէցաս։

ոտնակատիւք նստէին և հոգային՝ ոմ ածաւ, ոմ տան-
ջեցաւ այսօր, զիմրդ կամ զինչ օրինակաւ, և առաւել
չարեօք զգածեալ՝ մինչև զայսպիսիս պատրաստու-
թեամբ ուսանէին։ Այս այսպէս քան զմեռեալս ողբմելիք՝ ի
կեանս կային, ոլք զօտարացս Հասեալ նեղութիւնս կո-
ծէին, և վասն փրկութեան անձանց դողային։ Ոլ՝ ի
մահ անկեալ է, ոչ դարձեալ՝ ի մահուանէ երկնչէ։

Օ՞ի թէպէտ ոք յայսմ յահէ և՝ ի տագնապէ ազա-
տեալ գոյր և կամէր՝ ի փողոցս մտանել, ՝ի տեսութենէ
անվայելչութեան փութով անդրէն մտանէր՝ ի տուն
իւր. քանզի հաղիւ զմի ոք կամ երկուս առ ինքն տե-
սանէր, և տրտմութիւն զհետ բազմացն ընթանայր։
Օ՞ի որ յառաջ քան զսակաւ աւուրս էր գետացնաց
բազմութիւն ժողովրդեանն, թագեաւ և ամենեքեան
այնքիկ այժմ աներևոյթ եղեն՝ ի մէնջ։ Այս որպէս
յանտառի ծառոց բազմութիւն կտրեալ անվայելչանայ
տեսութիւն նորա, և որպէս գլուխ գերծեալ անտեսա-
կանայ, այսպէս և գետինն քաղաքիս մերոյ պակասեալ
՝ի մարդկանէ, զի որպէս սակաւ մանրիկ սերմ երևին,
որով անվայելչացեալ բազում հեղու տեսողաց գմեա-
ցեալ տրտմութիւնս։ Այս ոչ եթէ գետինս միայն, այլ
և բնութիւնք օդոց և նշոյլք արեգականն տխրեալ թուի
ինձ այժմ, և լոյս խաւար երևի։ Ոչ եթէ տարերցս
բնութիւն փոփոխելով, այլ աչաց մերոց պղտորեալ՝ ի
տխրութենէ ամպոց ոչ կարէ յստակ հայել, զի ոչ այ-
սու դրութեամբ՝ ի նշոյլսն ընդունի զլոյսն։ Այս է զոր
մարգարէն ողբալով ասէր. «Տանիցէ նոցա արեգակն
՝ի հիւսիսոյ և խաւարեսցի օրն»։ Օ՞այս ասաց ոչ ե-
թէ աստեղն թագուցեալ, այլ տրտմութի՝ հիւսիսայինն
ոչ ախորժէ տեսանել զլոյսն վասն մթութե՝ երկանցն,
ոլ և այժմ իսկ եղև. և ուր և տեսանէ ոք նշոյլ կամ
՝ի գետնի կամ՝ ի պարիսպս կամ՝ ի սիւնս քաղաքիս,
դիւրը կարծէ տեսանել և արշալոյր մթացեալ։

Այսպէս ամենայն քաղաքս լի եղեալ տրտմութեամբ
և լռութեամբ, ամենայնի լեալ անապատ, լցեալ անո-
դոհութեամբ, և ցանկալին այն բազմութի՝ շինօք խռո-
վութեամբ. և որպէս թէ ամենեցուն մտանել յերկիր,
այսպէս լռութիւն կալաւ զքաղաքս այժմ, և ամենե-
քեան քարանց նմանէին. լեզուք կապեալք խորագոյնք

որ առաւել տայ ունել զլուծն Քրիստոսի. և այսպէս լուծն Քրիստոսի որպէս երեսեալք ի պատերազմ և ամենեքեան ի միասին ի հրոյ և ի սրոյ մաշեալք եղեն։ Խարիսք է այժմ ասել զբան մարգարէին. «Կոչեցէք զձայնարկուս և եկեսցեն, և առ իմաստուն կանայս առաքեցէք և չխեցեն և ստիպեսցեն և առցեն ողբս ի վերայ ձեր, և իջուսցեն աչք ձեր արտասուս և արտևանունք ձեր բխեսցեն ջուր. լերինք ընկալցին կոծս և բլուրք առցեն ողբս»։ Կոչեսցուք այժմ զարարածս ամենայն ի գիտութիւն չարեաց մերոց։ Ասացաք այս մեծ և որ ի վերայ կանգնեալ կայ գլուխ ամենայնի, եթէ բարձցէ զնա ի միջոյ, տրտմեցուցանէ զարարածս. այժմ յանկարծակի՛ ի տրըտմութիւն եղեալ ամենեքեան, և ոչ գոյ օգնական։ Եւ եթէ որ անարդեցաւն նմանակից զոմն ունելով յերկրի, քանզի թագաւոր է և գլուխ երկրաւորացս ամենայն մարդկան։ Եւ զայն ոչ գիմեսցուք առ վերնական թագաւորն, զնա կոչեսցուք յօգնականութիւն։ Այլ եթէ ոչ ի վերուստ ընկալցուք զհաշտութիւն, ոչ եկեսցէ մեզ միխիթարութիւն և ոչ մի ընդ եղելոցս։

Այլ խորհեցայ ասել կատարել զբանս, զի ոչ խնդրեն անձինք նեղելոց յերկարել զբանս։ Այլ որպէս ամէն որ ստէպ ստէպ ընթանայ ի վերայ ճառագայթից արեգականն, դարձուցանէ յետ զլոյս ամենայն, այնպէս և տխրութեանս ամն ի վերոյ կացեալ յոգիս մեր՝ չտայ թոյլ հեշտաբար մտանել բանին ի սիրտս մեր, այլ հեղձուցանէ ունելով ի ներքս բազում նեղութիւնս։ Այս ոչ եթէ ասողացս միայն, այլ և լսողացդ լինիցի. զի որպէս յանձնէ ասողն ոչ տայ թոյլ հեշտաբար բանս ի ներքս բերել տրտմութիւնս, այսպէս և ոչ ի միտս լսողաց թոյլ տայ մտանել նորին զօրութեան։ Այսու որում և երբայեցիքն որ ի կաւոյ և յաղիւսոյ տառապէին, Թէպէտ և Մովսէս բազում անգամ ասէր վասն փըրկութեանն նոցա՝ ոչ առնուին յանձն. տխրութիւն անմտանելի առնէր զբանն ի սիրտս նոցա և խնայր զլսելիս նոցա։

Խորհեցայ և այժմ ասել յանգել զբանս. այլ զի տեմ զի ոչ ծածկէ ամն զբնութիւն լուսոյ առ ի տես ճառագայթիցն, նա ի նմանէ հալածեսցի. զի յորժամ արեգակն ջերմագոյն անկանի՝ ցրէ զամպս, ընդ մէջ հատանէ զնա, բազում անգամ և յանկարծակի ծագեալ

պայծառագոյն անկանի յաչս տեսողացս, սոյնպէս և զբանս զայս խօսել յանձինս ձեր հանապազ՝ առաւել յոյս ունիմ ցրել և հատանել ՚ի ձէնջ զամէն տխրութեանս, և ծագեալ ՚ի միտս ձեր զարձեալ զսովորական վարդապետութիւնն։

Տուք ինձ այսօր զլսելիս ձեր. փոքր ի շատէ ցուք զտրտմութիւն և յառաջին սովորութիւնն եկեսցուք. որպէս և սովոր էաք միշտ յօժարութեամբ լինել աստ, և զամենայն հոգս մեր ՚ի տէր ընկեսցուք։ Այս նա որպէս մեզ ինչ տրտմութիւնս՝ արասցէ վշտութիւն. միայն թէ գիտասցէ զմեզ ստուգութեամբ լսող լինել բանից նորա, և զիմաստութիւնն ոչ յայտնեալ մեզ վասն դժուարութեան ժամանակիս, վաղվաղակի զփոխարէնն առցուք, և արասցէ խաղաղութիւն ինչ և միխթարութիւն բարեաց յայսմ անցաւոր ծփանացս։

Օ՜ի պարտ է քրիստոնէին և յայսմիկ բաժանել յանհաւատից առ ՚ի բերել քաջութեամբ զամենայն տըրտմութիւնս, և հանդերձեալ յուսոյն թուչել գնալ որ վերագոյն է քան զմարդկային որոգայթս չարեաց։ Օ՜ի ՚ի վերայ վիմի հաստատեալ կայ հաւատով, վասն որոյ յաչեաց անշարժ մնայ. թէպէտ և բարձրասցին ալիք չարեաց, ոչ տայ սասանել ոտից նորա։ Ա՜ի այժմ անկցուք ՚ի գիտութենէ, սիրելիք. ոչ այնպէս հոգամք մեք զփրկութիւն մեր, որպէս արարիչն մեր ասէ. և ոչ այնչափ ախորժեն միտք մեր զի մի դիպեսցուք նեղութեան, որչափ նա կամի զի չնորհեսցէ հոգւոյ մերոյ զբարութիւնս։ Ա՜յսու յուսով զանձինս մեր թեւաւորեսցուք, և վասն հանդերձելոյն զասացեալս հանդերձ ուղղութեամբ և յօժարութեամբ լսիցուք։

Ընդ երկար յառաջագոյն յօրինեցի զխրատ սիրոյդ ձերում, և զամենեսեան տեսի զինի հետևեալ, և ոչ զմի ոք տեսի խոտորեալ յուղիղ հանապարհէ. չնորհ ունիմ ձեզ փոխանակ այնմ յօժարութեան, և փոխարէն զվարձան ընկալայ ՚ի ձէնջ։ Այլ զինի այնր վարձուց այլ խնդրեցի ՚ի ձէնջ յայնժամ լինել, զի ուսանիցիք և յիշիցէք։ Օ՜ինչ իցեն վարքն. զգայթակղեալսն որք են ընդդէմ քաղաքին՝ տանջել և խրատել, որք և չայ անարգեալք և հարեալք են։ Ա՜ւ ասացի յանձնել զայս յայնժամ, այլ ՝ած որ յառաջատես է հանդերձ

ձելոց իրաց՝ սրկ ՚ի միտս մեր զանձն զայն։ Օ՛ի թէ ոչք յայս իրս հանարձակեցան՝ տանջեալ. էաք, ոչ էր լինեալ որ այժմ եղև ...[1] Օ՛ի ահա մեղանքս եղև առ սակաւս, և դատապարտութիւնս եղև հասարակաց. և վասն նոցա սաստանիլք ամենեքեան այժմ, և ընդ նոցին համարձակութեամբն կամք և միաւք ՚ի տանջանս։ Զի թէ յառաջագոյն արտաքսեալ էաք զնոսա ՚ի քաղաքէս և յայս իմաստութիւն եկեալ էաք և զտկարացեալ անդամն մեր ուղղեալ էաք, ապա ոչ ՚ի հասեալ երկիւղս երկնչէաք։

Գիտեմ զի սովորութիւն քաղաքիս ազատութիւն է ՚ի վերուստ. այլ օտարք ոմանք զուգակիցք մարդք գարշելիք անկեալք ՚ի մեզ, որք ոչ գիտեն զիրկութիւն անձանց իւրեանց, համարձակեցան զոր և համարձակեցան։ Այսոքիկ զայս միշտ ոչ դադարեմք, զի սովիմք արգելցուք զիւռովէլոցս զգայթակղութիւնս, և հաստատեսցուք զմիտս նոցա, բարեբեխտաւոր գոլ առ նոցա փրկութիւնս։ Պէտք և մեռանել հասանիցէ յայսցանէ որք առնեն զայս, մեզ մեծ շահ բերէ գործս այս։ Այլ՝ ի այսուհետև անտես արասցուք որ զամենեցուն ՚ձեզն անարգեն. մեծ չար քաղաքիս յայնժամ լինիցի, եթէ որ զայս անտես առնիցէ։

Օ՛այս նախ ասացի և ասեմ այժմ, և բատ այնմ դանդաղութիւն համարեսցուք զվրէժս։ Օ՛՚ձեզ անարգել անտես առնիցես. ահա թոյլ եմ անարգել զԹագաւորն, և վասն վերջնոյս այսորիկ անարգանաց անկանել ՚ի նեղութիւնս, զի ահիւս այսու առանց դանդաղման առցուք իրաւունս։ Այլ՝ եթէ վայրապար և ունայն զայս նախ ասէիւ և ստէպ ստէպ պարտաւորէի զձեր. այլ որ ինչ ոչ եղև առաւել յայնժամ, եղև այժմ, և յայսմ հասեալ չարեացս իմաստաբար խոստովանեսցուք կտրել ՚ի յօգնականութենէ այնմ չարեաց. խոցցուք զբերանս նոցա որպէս զնահաբեր աղբերաց, և զհակառակութիւն

1 Յանդրիական Ճառքս Թերութիւն բազում կը յօրինակին մեր ումն ուր շատ և ուր սակաւ, թէպա՝ ՚ամ ուրեք գրչին միահետ գրեալ ոչ ինչ նշան տայր Թերութեանց. ՚ի համեմատութենէ ընդ յունականին գտեալ զպակասորդ տեղեան՝ կէտանիշ ևեթ ազդ առնեմք, աւելորդ համարեալ զայի Թերութեանց իւրաքանչիւր տեղեաց նշանակել։

նոցա ՚ի բաց հանցուք. և այս իսկ յեկեղեցոյ չարեաց կեցուցանէ զքաղաքս։

Ոչ եթէ տեսարան իցէ եկեղեցիս, զի վասն վայելչութեան սորա եկեսցուք այսր. այլ աստ գալ պարտ է զի լուիցուք և օգտեսցուք և շահեսցուք ինչ բազումս և մեծամեծս, և այնպէս գնասցուք աստի։ Այդպա թէ ոչ ՚ի զուր և ընդունայն մնաք աստ, եթէ առժամայն եղև լուրն և պակասեաց ՚ի միտ առնուլ, և այնպէս երթիցուք անապատք և ունայնք և դատարկք յօգտութէ ասացելոցս։

Օ՞րինչ է ինձ օգուտ ունկնդրութիւնս այս, զինչ գովութիւնդ և աղաղակ. այս է ինձ գովութիւն՝ գործով ցուցանել ՚ի ձեզ զասացեալս ամենայն։ Յայնժամ ես եղէց ցանկալի և երանելի, ոչ եթէ յորժամ ՚ի միտ առնուցուք, այլ յորժամ առնիցեք յօժարութիւն զոր լսայք ՚ի մէնջ, և ուղղիցեք իւրաքանչիւր զդրացի իւր և շինիցեք։ Այլ զայս ոչ եթէ ձեզ միայն ասիցեմք, քանզի իւրաքանչիւր եղելոցս յանցանացս՝ հաստարակաց և անորիշք եմք ՚ի միասս քաղաքիս։ Այնպէս և ոչ իցէ գիտակ որ որ ինչ եղևն, սակայն քան զհամարձակողն պակաս ոչ է պարտ երկնչել. զարհուրեցուք մի գուցէ առ ամենեսեան եկեսցէ բարկութիւն Աստուծոյն։

Ոչ է բաւական առ ՚ի պատասխանի առնել զայս եթէ ոչ եմ մերձ, ոչ իմացայ և ոչ եմ հաղորդ։ Այսոքիկ զայս տանջանս կրեա, ասէ, և հատս պչեհին դատաստան, եթէ ոչ էիր մերձ և ոչ արգելեր և ոչ անվայելուչ իրաց միտ արարեր և ոչ գայթակղեցար ՚ի պատիւ Աստուծոյն։ Այս ո՛չ գտար ՚ի համարձակողն, գովեմ զայս և ընդունիմ. այլ եթէ ոչ գիտացեր զեղեալն, այս արժանի իցէ դատապարտութեան։

Օ՞ այն բան և չա՛ր լուիցուք յորժամ լռութեամբ բերիմք առ ՚ի նա զանարգանս և զհայհոյութիւնս. զի և այն որ զքանքարն Աստուց, ոչ եթէ վասն անձին իւրում առնոյր դատաստան յայնժամ, քանզի բոլորովին հատոյց զարծաթն. այլ վասն զի ոչ բազմացոյց զնա ըստ զայլս խրատեր, ոչ արկ ՚ի սեղանաւաճառս զարծաթն, այսինքն ոչ խրատեաց, ոչ եղև խորհրդակից, ոչ ետ պատուէր և ոչ ուղղեաց զդրացի իւր ՚ի վկայել չարեացն, վասն որոյ առանց ամենայն ներելոյ ան-

կեալ յայնմ յանդերձանելն տանջանաւն : Այլ դուք Թէպետ և ոչ յառաջագոյն, սակայն և այժմ զործեցէք զուղղութիւնս զայս, և զայծ անարգեալ մի անտես առնիցէք : Այդ հաւատամ յաւէտ զի բաւական է եկեալ ջարիքս այս, Թէպետ և ոչ իցէ ոք որ խրատէ, նա Թէ և յոյժ անիմաստ ոք իցէ, արասցէ այսուհետև զի ծանիցէ զփրկութիւն իւր :

Վասն է մեզ այսուհետև զառ՛ի Պաւղոսէ զխրատն ձեզ առաջի դնել սեղան, զոր այսօր ականիմ զընթերցեալ զբանն՝ ի մէջ բերելով զամենայն : Օ՛րինչ իցէ զոր այսօր ընթերցաք . “Ա՛ծատանց՝ ի կեանս յայս պատուէր տալիր մի հպարտանալ ,, : Այսելով զմեծատանց՝ ի կեանս յայս, ցուցանէ և զայլոց մեծատանց՝ ի հանդերձեալ յաւիտենին . որպես Պաւղոս այն՝ անցաւոր կենաց աղքատ, ՝ի հանդերձեալն մեծատուն ոչ ոսկւով և ոչ արծաթով և ոչ այլովք ինչ ապականացու նիւթովք, այլ անձառելի այնմ բարութեամբ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ՝ի սիրտ մարդոյ ոչ անկաւ : Այն իսկ է այժմ Ճշմարիտ մեծութիւն և ձոխութիւն յորժամ անեղծանելի լինիցին բարութիւնքն, և ոչ միոյ պէտք իցեն միխիթարութեան : Այլ որ անտես առնէր զինս, ոչ էր մեծատուն այսպիսի, այլ քան զամենեսեան այնուհետև աղքատ և տնանկ . միոյ կաթի ջրոյ ցանկայր արժանի լինել, և ոչ եհաս ցանկութեանն, յայնպիսի վերջին աղքատութիւն անկեալ :

Այսպէս այսօրիկ զայնպիսիսն մեծատուն անցաւոր ժամանակիս կոչէ, զի յետ այժմու կենացս և մեծութիւնքն եղծանին և ծածկին . զի ոչ եթէ առյկ ընդ իւր զամենայն, և ոչ յոտնիցէ ընդ նոսա ինչք իւրեանց զոր և ունիցին . այլ մանաւանդ նախ քան զվախճան Թողեալ զամենայն, զոր և յայտնապէս ասէր մարգարէն . “Մի յուսար՝ ի մեծութիւնս անյայտս ,, : Այլ ինչ է այսպէս անհաւատ որպէս զմեծատունս . զի եթէ սպասաւորեաւն անղեղջ լիցէ, ծառայքն հաւատ ոչ ունին . Թէպետ և բիւր անգամ խրատս արկանես առաջի նորա, նոյն ինքն և զխրատն քարշելով տանիցի զհետ : Այ բազում նիգս և՝ ի դրունս արգելին զնա ստացողքն, և ծառայքն գնեալ վերակացուս և պահապանս . և նա զծառայս իւր հաւանեցուսցէ զկնի իւր տանել զպահապանս, և որպես շղթայիւք քարշէ զնոսա :

Օ՛ինչ իցէ քան զայս անհաւատութիւն, և զինչ աղօրմելի քան զնոսին փութացողն, յորժամ զսպաքանացուս զայս գործ՝ի ձեռն առեալ փութապէս հեշտալի և ընտիր համարեսցի, և ոչ լուիցէ մարգարէին որ ասէ. "Ալ այ այնոցիկ որ յուսացեալ են՝ի զօրութիւնս իւրեանց, ՚ի բազմութիւն մեծութեան իւրեանց պարծեսցին,,։ Լ՛սա, վասն որոյ վայ իցէ. "Գանձէ, ասէ, և ոչ գիտէ ումմ ժողովէ զայն,,. զի վաստակքն յայտնի են, և վայելքն անյայտ։ Լ՛ազում անգամ թշնամեաց վաստակ են և տառապանաց. բազում անգամ զինի վախձանի նոցա՝ի զրպարտողն և որ բիւր վասն նոցա խորհեալ են չարիս՝ եկեսցէ վիճակին. դու՝ի մեղն մնասցես, և զհանգիստն այլում պարգևեսցես։

Լ՛այց արժան է և զայս քննել, ընդէր ոչ ասաց՝ մեծատանց ոչ մեծանալ՝ի կեանս յայս, կամ պատուիրել աղքատանալ կամ յընչից դատարկանալ։ Լ՛ա՛ի գիտել մեզ զի մեծատանց արմատ և պատճառ չարեաց ագահութիւնն և հպարտութիւնն իցէ։ Լ՛թէ տեսանիցես զոք՝ի չափաւորութեան, այնպիսին ոչ բազում փոյթ արասցէ վասն ընչից։ Լ՛ընդէր և վասն էր, ասա ինձ, բազմութիւն ծառայից ժողովէս, զհագկատակս և զշտեղքորթս և զայլ ամենայն երևմունս։ Լ՛ե թէ վասն պիտոյից ընչից, այլ վասն ագահութեան միայն և հպարտութեան. զի յայսց ամենայնէ փառաւորագոյն կարծիցիս լինել։

Լ՛րդ զինչ ասիցէ. ոչ եթէ զմեծութիւնն արգելու, թէ ոք զսա որպէս պարտ իցէ վարիցէ։ Լ՛որպէս և յառաքելոյնն ասացի՝ թէ ոչ գինւոյն պիղծ իցէ, այլ արբեցութիւն, սոյնպէս ոչ եթէ մեծութիւնն էր չար, այլ ագահութիւնն և արծաթասիրութիւնն է չար։ Լ՛ալ է արծաթասիրութիւն և այլ է մեծութիւն. արծաթասէրն՝ի բազմաց պահանջէ, ոչ երբէք՝ի բարիս վաճառեսցէ. արծաթասէրն պահող է և ոչ տէր ընչից իւրոց. ծառայ և ոչ տէր. դիւրագոյն իցէ յանդամոց իւրոց տալ ումանց, և ոչ՝ի պահեստեանէ ոսկւոյն։ Լ՛ա որպէս թէ հրաման առեալ իցէ զի մի ոք մերձեսցի՝ի գանձանակն՝ այնպէս բազում զգուշութեամբ ունի և պահէ. իբրև զօտար ոք հեռի է յընչից իւրոց, քանզի և է իսկ օտար։ Օ՛ի յայլ արկանել ոչ կամի, և ոչ աղ-

քատաց քաշհել Թէ և բիւր տանջանաց դիպեացի, ա-
պա զիմրդ կարացէ գիտել Թէ իմ իցէ. կամ զիմրդ
այնպիսին տացուածս ունիցի, զորոյ զինիք ոչ աւելորդ
համարիցի և ոչ զհանդիսատ առնուցու։

Այս առ այսոքիւք ոչ զամենեսեան գասաւորէ Պաւ-
ղոս, այլ որք լուիցեն՝ առ նոսա տկարութեամբ զիջա-
նէ, որպէս և Քրիստոս արար։ Յորժամ եկեալ առ
մեծատունն հարցանէր վասն կենաց իւրոց, ոչ անդէն
ասաց՝ երթ վաճառեա զինչս քո. այլ զայս Թողեալ զայլ
օրէնս եցոյց նմա։ Այլ ապա յորժամ նորա զնա աղա-
չելով ասէ "զինչ պակաս է ինձ,,, և ոչ յայնժամ
պարզաբար ասաց՝ վաճառեա զինչս քո. այլ զինչ. "Այ-
Թէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զինչս
քո,,։ Ահա կամիցիս, ասէ, քոյին յօժարութեամբդ ըզ-
քեզ արարիչ տէր ընչից քոց, ոչ ածից զքեզ բռնութիւ։
Այսպէս Պաւղոս ոչ վասն աղքատութեանն զմեծատունս
յանդիմանէր, այլ վասն խնամարհութեան, ըստ տկա-
րութեան լսողացն և որք յոյժ ծանուցեալք էին և չա-
փաւոր յամբարտաւանութենէ, վաղվաղակի անտի փո-
փոխել նոցին և փոյթ ունելով զփոխարկութիւն մե-
ծութեանն,

Իբրև ասաց մի բարձրանալ, եցոյց և զարուեստն ո-
րով կարիցեն խնամարհել։ Որ իցէ արդեօք. քնութիւն
մեծութեանն ուսուցիչ է նոցա, զի անյայտ և անհա-
ւատ իսկ է. վասն որոյ յայտնեաց՝ մի յուսալ ի մեծու-
թիւն մնոտի։ Զինչ արդեօք իցէ ստոյգ մեծութիւնն.
ոչ բազում ստացուածովք, այլ բազում տրօք աղքա-
տաց։ Այր մեծատուն Աբրահամ, այլ ոչ արծաթա-
սէր. ոչ հոգայր և պատրաստէր տեղի Թէ ուր իցէ տուն
իմ կամ ուր ժողովեմ զստացուածս իմ։ Այլ յառաւե-
լութիւն ընչից փութայր, այլ յայս միշտ պատրաստ էր
միւ ուրեք իցէ աղքատ կամ օտար, միւնչև կանգնէր զաղ-
քատս և ընդունէր զօտարս։ Այլ ոսկեհոտն յօրինէր
զձեղունսն, այլ յանտառի բնակէր, և յայնպիսի խղճ
բաւական համարէր զհովանի տերևոյն. և այնպէս պայ-
ծառագոյն էր ժողովարան նորա, որ և ոչ ի հրեշտա-
կաց ամաչէր բերելով առ ինքն յօթեվանս. որք ոչ ե-
Թէ տուն պայծառ խնդրէին և վայելուչ, այլ հոգի ա-
ռաքինի։

Ոսոյն և մեք նմանեսցուք, սիրելիք, և զինչս մեր բաշխեսցուք աղքատաց։ Պատառատուն էր ժողովրդանն այն, բայց գտաւ առաւել պայծառագոյն քան զգաւիթս Թագաւորաց։ Ոչ երբեք հրեշտակս ընկալաւ, իսկ յայնմ անտառի նստեալն և՛ի խուղս առկայացեալն արժանի եղև այսմ պատուոյ. որ ոչ վասն նուաստութեանն և՛ եթէ պատուեցաւ, այլ վասն բազմակատար հոգւոյն. որով մեծութեամբ լցեալ նա, զայս ընկալաւ զպարգևս։

Եւ մեք այժմ մի զտունս վայելչապէս զարդարեցուք, այլ զՀոգիս մեր նախ քան զտունս։ Ոչ խմբդ ոչ իցէ այս գաղջելի, մարմարեայ կձայս արկանել յորմն ձրի և ունայն, և զՔրիստոս մերկ գոլով անտես առնել։ Ոչինչ օգտիցիս յայնմ տանէ, ով մարդ, միթէ յերթալն քումմէ առցեն զնա զկնի. այլ զՀոգիդ մանաւանդ երթալով առցես։ Ահա այսպիսի գայթակղութիւն եհաս այժմ։՝ի բաց արասցին՝ի միջոջ տունքս այս, արձակեսցի պատրաստեալ վտանգս. այլ ոչ կարեն առնել զայս։ Եւ վկայ էք դուք որ զպայծառ տունս ձեր Թողէք անապատ և յանապատս ընթացայք. օդնեաց ինչ այժմ ինչք ձեր. և այլ ոչ ունի ժամանակ օգտելոյ։ Եւ Թէ աստ առ մարդկեղէն բարկութիւնն յանդիմանեցաւ ընչից զօրութիւն, և աս բազում յաճախչին յանդիմանեցաւ ընչից զօրութիւն, և աս բազում յաճախչին դատաստանին լինիցի այս։ Յորժամ մարդ ե բարկացեալ և խռովեալ՝ և յայսմ ոչ օգտեաց մեզ ոսկի, արջառ՝ի բարկանալն ՚ով՝ որում ոչ պիտոյ էն ինչք, և յաւէտ տկարանայ զօրութիւն ոսկւոյս յայնժամ...։

Կամիս ստանալ տունս մեծամեծս և պայծառագոյնս, ոչ արգելում. բայց միւ յերկիր, ստացիր յարկս յերկինս դի և զայս ընդունել կարասցես. յարկք որ ոչ երբեք քակտեսցի։ Ո՛ւ յիշեսցես զփախստականս. չինք ինչ վատթարագոյն քան զմեծութիւն. այսօր զկնի քո, և վաղիւն դատախազ. զնախանձոտաց զաչս զարթուցանէ, պատերազմող Համաքննակիչ, Թշնամի մերձաւորակից. և վկայք դուք ստացողքդ, որք յամենայն կողմանց պահէք զսա և Թագուցանէք։

Տեսանէք այժմ զաղքատս պնդեալ միջոք, և արձակեալք և առ ամենեսեան պատրաստեալք համարձակութեամբ. և մեծատանց բազում դժուարութիւն ու-

նելով զքեզ ի նդրելին թէ ուր թագուցեն զսակին իւրեանց, կամ առ ով և ուր դիցեն զգանձս իւրեանց։ Օ՜ի ինդրես զծառայակիցս քո, ով մարդ. Քրիստոս պատրաստեալ կայ առ ընդունել և պահել զգանձս քո. և ոչ եթէ պահէ միայն, այլ և բազմացուցանէ և հանդերձ բազում շահիւք տայէ քեզ։ Քանզի մարդիկ որ ի պահեստ առնեն զգանձս, կարծելով թէ մեզ պարգեւս ինչ տայցեն առ ի պահել զոր ընկալան. իսկ Քրիստոսին հակառակ է այսմ. որ ոչ եթէ տուողաց յաւանդ վարկանի ընդոր, այլ ընդ առնլոյն՝ յորժամ առնու ի քէն զգանձս քո՝ քեզ ունի ընդոր։

Ա՛րդ որո՞ւմ ներելոյ և թողուլեան արժանի իցեմք, յորժամ ոչ ընթանամք առ որ պահել կարող իցէն, և մեզ ընդոր ինդրելոք զպահելն և վարձս բազումս և մեծամեծս, տայցեմք պահողացն՝ այսինքն տկարմարդկան՝ որք և ընդոր պարծեսցին տալ վասն պահստեանն, և զայն միայն տայցեն մեզ յեռոյ զոր և առցեն, և մեք մերոյն միայն ձեռնարկեմք զոր և տուաք։ Ո՞տար ես և հեռի յայսմ վայրէ. ունիս հայրենիս յերկինս, զամենայն ինչս քո անդ առաքեա, զի նախ քան վայելեալ քեզ ի կեանսն յայն՝ աստ առցես զհատուցումն։ Օ՜ի որ քաղցրութեամբ ընդի յերկրի, և վասն հանդերձելոցն յոյսով հատարձակի, զի ահա աստէն առ զձաշակս արքայութեանն... և ունիցիս զնոճ սիրելի, որով քան զամենեսեան գտանիցիս վերագոյն ատացեալ։

Կամիցիս մեծանալ, մի խորհիր բարձրանալ. և այս ոչ եթէ ի հանդերձեալսն միայն իցէ, այլ և աստէն յայսմանի է։ Ա՛յ զոր այնպէս նախանձ որպէս ընդ մարդոյ մեծանալ. իսկ յորժամ յամբարտաւանութեի գայ, կրկին անպատմ լինին տանջանքն, և չարագոյն յաւանէ քան զամենայն պատերազմն։ Ա՛պա եթէ կամիցիս ի չափս ունել զմեծութիւնն, խոնարհութեամբ ըզանուն թիւն նախանձու ի բաց հատցես, և հանդերձ պատրաստութեամբ ունիցիս զոր և ունիս։ Ա՛յս է բնութեի առաքինութեան, ոչ եթէ ի հանդերձելոյսն միայն մեզ օգուտ բերէ, այլ և այժմ տայ մեզ հատուցումն։

Ա՛ի այսմ հետե ի մեծութեան խորհիցիմք բարձրանալ. զի եթէ ի հոգևորսն բարձրանալ լուծաւ և կրեաւ ամենայն, որչափ մանաւանդ ի մարմնականս։ Ո՞ա-

նիցուք զմեր քնութիւնս, զմտաւ ածցուք զմեզս մեր՝ ո-
րով ուսանիմք թէ ով եմք, և բաւական է այս մեզ յա-
ճենային պատճառս խոնարհութեան։ Ա՛ի ինձ ասիցես
թէ այսչափ և այսչափ զմեւս ամաց ունիմ, և՛ի պա-
հու բիւր տաղանդս ոսկւոյ, և շահք զօրհանապազ լի-
նին ինձ։ Օ՜ այս որչափ և ասես, վայրապար և ունայն
զամենայն պատմես. բազում անգամ՛ի միում աւուր
և՛ի պակաս ժամու յականն թօթափել որպէս՛ի վե-
րուստ անկեալ հողմոյ և փոշի գտանիցի, այնպէս զա-
ճենայն փչեալ հանէ՛ի տանէ քումմէ։ Այս այսպէս լի
է կենցաղս՛ի մեր օրինակ, ցեխալ է և գրոյ ուսմամբ.
զի որ այսօր մեծատուն, վաղիւն աղքատ։

Ա՛ան որոյ բազում ծաղու արժանի համարիմք զայ-
նոսիկ որք՛ի կտակի ընթեռնուն ասել, ոմն տիրէ ագա-
րակաց կամ տանց կամ այլոց գործոց։ Ո՛րանզի այժմ
ամենեքեան զգործեալն ունիմք և ոչ զտիրութիւնն. զի
թէպէտ և յամենայն կեանս մեր մնայ մեծութիւն, ոչ
ունի և ոչ մի միթարութիւն, և կամաւ և ակամայ յօր
վախճանին բաժանիմք՛ի միմեանց. ըստ գործոց իւրա-
քանչիւր պաղաքերեն միայն, իսկ՛ի տէրութենէ մերկք
և ունայնք երթիցեն՛ի կեանն յայն։ Ա՛րկէս և յայտ-
նի է, զի անդ նոքա միայն ունիցին զտէրութիւն և զգ-
վայելուչն որ զայսոսիկ ծաղը առնեն։ Այս որք զինչս իւ-
րեանց արտաքս տուեալ աղքատաց և քաշխեալք որք
պէտս ունիցին, և այսպէս զկնի ունելոյ զտէրութիւնն
իւր երթայ, ոչ ինչ նման իւրոց ստացուածոցն պակա-
սեալ մնհոսամբ, այլ զամենայն ընկալեալ՛ի դէպ ժա-
մու և բազմապատիկ առաւելութեամբ քան զնոյն, յոր-
ժամ մնաւանդ զայնոսիկ խնդրեսցէ իւր առաջնորդ
յաւուր դատաստանին, յորժամ ըստ գործոց քննիմք
ամենեքեան։ Այս որչափ կամեսցի որ ունել ստացուածս
և ինչս և տէրութիւնս, փախիցէ յայսմ ամենայնէ. իսկ
եթէ զայս ոչ արասցէ, ՛ի վախճանի թողցէ զամենայն
և նախ քան զվախճան՛ի բազում վտանգս և՛ի չարիս
մնաւանդ արկանէ զնա։

Այս ոչ այս միայն իցէ վտանգ մեծատան յանկարծա-
կի յայնմանէ անկանելոյ նմա, այլ զի և որ անտրտունջ
՛ի Համբերութիւն աղքատութեանն կայցէ՝ մեծատուն
է և ոչ աղքատ, այսու զի ոչ եթէ յանշունչ նիւթս

յոսկի և յարծաթի յուսացեալ է, այլ յԱծ որ տուողէ ամենայն մեծութեան. ուստի մեծատուն է այնպիսին գաղանի, և կանգուն կայցէ քան զաղքատան յայսմիկ: Վանդի զամենայն ինչ պարգևեալ է առատապէս ի վայելուչն մեզ Ածի, որք յոյժ կարևոր են քան զամենայն ինչս: Այս ջուր են այսոքիկ. օդք, ջուր, հուր, աբեգակն, և զայլ ամենայն զայսպիսիս: Ասէ գոյ ասել եթէ մեծատունն առաւել վայելէ ի լոյս արեգականն և աղքատն սակաւ. ոչ է ասել եթէ առատագոյն են սըփռեալ կամ ցօղէն օդք մեծատանց քան աղքատաց, այլ ամենայն հաւասար և հասարակաց է: Վանդի որ ինչ մեծ և կարևոր իցէ ամենեցուն և ունի հաստատուն ըզկեանս մեր, հասարակաց ետ Ածի. իսկ որ նուազ և փոքր իցէ, ոչ է հասարակաց՝ զինչս ասեմ: Այլ թէ վասն էր՝ ես ասացից: Ասէ սորա պէտք առ հասարակ լինել. քանզի որք մեծատունք եղեն որք սովորեցան յագահութիւն՝ զափաւորսն հեղձեալ և կորուսեալ էին. որպէս և այժմ ընչից բազում անդամ առնեն, մինաւանդ վասն այնր այսպէս առնէին: Այս զարձեալ եթէ հասարակաց էր զինչս տուեալ, և ամենեցուն միապէս էր եղեալ, բաշձեալ էր զպատճառս ողորմութեան: Օ՛ի եթէ առանց բարեաց ապրիլաք, հասարակաց լինեալ էր պատճառք կենաց մերոց: Այս զարձեալ զի ունիցիմք պակս և պատճառս հաճոյականս, ոչ եղէն ինչք հասարակաց. քանզի յաղքատութենէ և ի մեծութենէ զտանեմք արքայութիւն:

Այլ զքեզ Ածի մեծատուն, զոր ընդէր առնես զքեզ աղքատ. վասն այսորիկ արար զքեզ մեծատուն, զի առնիցես ողորմութիւն, զի առատաբար բաշխմամբ առեղծանիցես զմեզս քո: Այս զքեզ ինչս Ածի, ոչ զի ի խոր թաքուսցես վասն կործանման քո, այլ զի արտաքս հեղուցուս վասն փրկութեան անձին քո: Ա՛ան այսպիսիկ ստացուածս անմայտ արար նոցա, զի որ վասն նոցին խռովութիւնք իցեն՝ այսու ի բաց կայցեն...:

Ա՛ի այսուհետև կարծեսցուք մեծ ինչ բարի զմեծութիւն. մեծի բարութեան այն իսկ է՝ որ ոչ է ստացեալ ինչս, այլ ստացեալ է զահ և զերկիւղն Այ և զամենայն զգուշութիւն: Այհասիկ եթէ աք արդար իցէ և ունի զի համարձակութիւն առ Ածի, թէպէտ և քան զամե-

նեսեան աղքատ իցէ, սակայն բաւական է լուծանել զա-
մենայն հասեալ նեղութիս. բաւական է միայն զձեռն
տարածել յերկինս և աղաչել զնա, և անցուսցէ զամն
տխրութեանս։ Ահա այսչափ ոսկի եդեալ կայ, և առ
'ի փրկութիւն հասեալ չարեացս քան զկաւ անարգ է.
և ոչ միայն 'ի նեղութիւնս յայս, այլ եթէ հիւանդու-
թիւն իցէ կամ մահ կամ այլ ինչ այսպիսի, անդ յան-
դիմանելսի ամենայն անկար զօրութիւն ընչից՝ ոչ ու-
նելով և ոչ մի միխիթարութիւն։

Այնպէս այս է զօր ակն ունիցի ագահ լինելով մեծա-
տանն քան զաղքատն, զի ամենայն աւուր վայելեսցէ 'ի
բազմակատար յընթրիսս։ Այլ զփափաքումն կերակրոյ
և զհեշտալի սեղանս առաւել աղքատացն լինել պարտ է
տեսանել, և սոցա ունելով զվայելումն քան զամենայն
մեծատունս։ Այս մի զարմանայք և աքանչանայք ընդ ա-
սացեալս. ես այժմ յիրաց առի զգործս զայս ձեզ յան-
դիման ցուցանեմ, զօր և դուք ամենեքեան խոստովա-
նեալ գտանիցիք։ Պանդխտութիւն կերակրոյ ոչ
է 'ի բնութենէ խորտկացն, այլ 'ի սովորական չափաւո-
րութենէ կերուցացն. զօր և ասեմ իսկ, եթէ որ յետ
քաղցոյ մերձեսցի 'ի սեղան և տեսանիցէ աղգի աղգի
կերակրովք լցեալ և բիւր զանազան խորտիկս 'ի վերայ
սեղանոյն, յոր և կերակուր մերձենայ յառաջագոյն,
յարմանել ընդ զօրովքն իւր, և ոչ միայ այլում առ 'ի
պետս սեղանոյն զալ ըստ կարգի, թէպէտ և քան զայլսն
նուազագոյն իցէ կերակուրն։ Իսկ որ ոչ ունի կարիս նախ
միալ քաղցոյ և ապա գալ 'ի սեղան զօր և մեծատունքն
առնեն, սա թէ և կրկնապատիկ գտանիցէ զանազան
խորտիկս, ոչ թուի ախորժելի կերակուրն, զի ստամքս
նորա ոչ է յարձակել կայտառելով։

Այս զի ուսանիցիս թէ այս այսպէս ունիցի զօրինակ,
վկայեաք դուք ամենեքեան։ Ասեմք և 'ի զրոյց այսպէս.
"Ընձեն յագեալ, ասէ, գարշի 'ի խորսխէ. այլ անձին
կարօտելոյ գառն քաղցրագոյն թուի"։ Օ զինչ քան զը-
մեղուս խորխս լինիցի քաղցր. սակայն ոչ քաղցեալոյն ոչ
է պիտոյ։ Օ զինչ քան զգառն խոտելի. այլ կարօտե-
լոյն քաղցր թուի։ Աղքատք յետ քաղցոյն ապա գան
'ի գործ պիտոյից. իսկ մեծատունք ոչ միան այսմ, այլ
յամենայն ժամ առաջի գտանի կերակուրն և ոչ տայ

ուժգին առնուլ զքաղցն, ուստի ոչ ախորժելի և յօժար բուԹեամբ վայելէն ՚ի փափագումն քաղցոյն։

Այլ ոչ եԹէ ՚ի կերակուրն միայն իցէ այս, այլ և յլմլ պելիս նմանպէս լինիցի. և որպէս անդ քաղցն նախ քան զընուԹիւն կերակրոյն զփափագումն զարԹուցանէ, սոյնպէս և աստ ծարաւն զինչ և իցէ ըմպելին՝ անոյշ գործէ, ԹէԹև և ջուր լոկ իցէ։ Այս զայս մարգարէն յայտնեալ ասէ՝ ԹէԹ "Ի վիմէ մեղր յագեցոյց ՚ի նոսա,,։ Այս զայս ոչ երբեք ՚ի գրոց ուսաք եԹէ ՚ի վիմէ մեղր եհան Աստուած. ամենայն ուրեք ՚ի գիրս գետս ասէ և վտակս և ցուրտ աղբիւրս։ Այլ յայտ է ԹէԹ պատճառ ունի ասացեալն, և ոչ երբեք ստեացի գրեալն։ Վասնզի ծառաւիք գոլով Ե յօժ կարօտեալք և անկան ՚ի ցուրտ աղբիւրս և զփափագումն իւրեանց յարբունեն դադարեցուցանել կամիցին, զջուրն զայն մեղր անուանեաց ԴաւիԹ. իբր ոչ եԹէ քնուԹիւնք ջուրցն փոխեցան ՚ի մեղր, այլ պատճառումն ծարաւոյն մեղր երևեցոյց զջուրն զայն։ Ասմ՚ր ԹէԹ զիարդ և որպէս կարօտուԹիւն լմլ պելւոյն ըստ օրինակի կերակրոյն զծարաւն անուշեցոյց...

Այնպէս և ըստ քնոյն լինի. եԹէ տեսանիցես զոք ՚ի գահոյս արծաԹիս և յօժ կակուղ անկողինս և խոր լուԹիւն ընդ յարկաւ եղեալ և այլ ինչ այսպիսի, ոչ այնչափ քաղցր քուն և անոյշ կարասցես ունել, որչափ վաստակաւորն և աշխատեալն, որ զտիւն ամենայն աշխատեալ ածնի յօժ. և յօրժամ ննջէ, ԹէպԹ և ՚ի գետնի անկանիցի և միայն ձեռն զդլխոյն դնիցէ, սակայն քաղցր և անոյշ է քունն այն։ Այս զայսր փորձ գոլով իմանամք, և նախ քան զգործս յայտ առնէ հրամանն գրոյն. քանզի Այողմոն որ աւելի ՚ի վայելուԹիւնս աշխարհիս չըվեցաւ, զսոյն պատուիրեալ ասէ. "Հաղցր քուն է ծառային, ԹէԹ սակաւ և շատ կերիցէ,,։

Այս որ յայնմ մեծանալով, չէ նմա հանդարձակ ՚ի քուն մտանել. քանզի ընդ միմեանս խառնեալ ուԹուԹիւն և կարօտուԹիւն կերակրոց՝ ոմն զնորմինն չորացուցանէ, և եղջիւրացուցանէ զարտաքսանուն և ոչ տայ Թոյլ ծածկել աչսդ. իսկ ոմն յերգան զշունչն նեղացուցանէ և խռովեցուցանէ և բազում բերէ տագնապս։ Այս այսպէս վաստակելոց երբեմն այս իսկ է միխԹաբուԹիւն, որպէս զի և խառն ընդ միմեանս եղեալ՝ կա-

լէ զծառայն տքնեալ ՚ի հանգստեան առնել։ Վասն զտիւն ամենայն աշխատեալ ՚ի սպասաւորութիւն տեառանց իւրեանց, տագնապելք և նեղեալք, և ոչ փոքր մի առեալ հանգիստ, բաւական առին այսու զհատուցումն ՚ի տքնութենէն փափաքմանն։ Այս մարգասիրութեան գործ եղև, որ ոչ յաղագս ոսկւոյ և արծաթոյ է փափաքումն, այլ յաշխատութիւնս և ՚ի ջանս և ՚ի պէտս ամենայն իմաստութենէ կալով գտին զհանգիստ։

Իսկ մեծատունք ոչ էն այսպէս, այլ ՚ի գահոյս անկեալ կալով բազում անգամ զդիշերն ամենայն հսկեալ ՚ի հոգս և ՚ի զբաղումն ցնորեալ զայսմ ոչ վայելէն զփափաքումն։ Այլ աղքատն գազարեալ յաշխատութենէ աւուրն, ունելով վաստակաբեկ զմարմինն, նախ քան զանկանելն յերկիր յափշտակէ զնա քուն անոյշ և քաղցր լի հանգստեամբ. ոչ փոքր ինչ է այս, և ընդ վաստակս արդարոյն ընդունի զվարձն։ Իսկ եթէ աղքատն բազում դեգերմամբ տքնիցի յուտել և յըմպել և ՚ի հոգալ զընչից, ոչ էր այնուհետև մեկնել նոցա արժանաւորութենէ իրիք ՚ի մեծատանց. քանզի որ՞վ իւիք գտանիցի մեծատունն յառաջաբան երևեալ և բաժանել ՚ի նմանէ...։

Մեծ ստացուած է աղքատութիւնն եթէ ոք համբերութեամբ և իմաստութեամբ բերէ զնա. գանձ է անկողոպտելի, գաւազան զօրաւոր, ստացուած անքակտելի, ժողովարան առանց խորհրդոյ և յուզման։ Այլ ունի, ասեն, ագահութիւն և աղքատն. եթէ այսպէս իցէ, ապա աւելի խորհեցաւ և աղքատն։ Այլ ալհամալհի, ասեն, աղքատն և անարգի. բայց մեծատուն հաշի նախանձու։ Ոչ երբէք այնպիսի ջան հասանիցէ աղքատին որպէս մեծատանն. բազմապատիկ յամենայն կողմանց ՚ի սատանայէ և յամենայն խորհրդոյ առնու ճնաս, և ամենեցուն ծառայաբար փաղաքշիցի վասն բազմութեան ընչից իւրոց և աւելորդաց։ Իսկ աղքատն եթէ կայցէ յիմաստութենէ, ոչ ՚ի սատանայէ և ոչ յայլմէ իմեքէ յաղթի...։

Ո՞ինչ իցէ քան զչքնեալ աղքատապոյն, ասա ինձ. այլ վասն այսպիսի յաղթեաց ամենայն մեծատանց, քանզի այսպիսի աղքատ էր, և զայն աղքատութիւն ՚ի մեծացեալ մտաց ընկալաւ, որով զամենայն ինչս մեծատանց անարգապոյն համարէր քան զմեծութիւն անձին

իւրոյ։ Այս և ոչ զայսոսիկ զմեզ ածել արժանի առնէր իմաստութեան իւրոյ, վասն որոյ Հանդիպեցաւ այնչափ մեծ՝ որ ոչ զանցաւորս մեծ համարէր. ոչ ապաքէն ըզմաշկեական միայն ստացեալ էր։ Այլ սպէս գիտակ էր աւետարանութեան անցաւորիս, որով զսակի որպէս կաւ գոեհիկ համարէր, և ոչ քան ղղեստն զոյն ստացաւ աւետարդ ինչ։ Այսպէս այսորիկ խնդրէր Թագաւորն զաղքատն. որ այնչափ ոսկւով լցեալ առ մի բերան հայէր՝ որ աւետարանին քան զմաշկեականն ոչ ինչ ունէր. այնպէս մաշկեղէնն քան զծիրանիսն պայծառագոյն էր, և այլ արդարոյն քան զդաւիթ Թագաւորականս։ Այսպէս որոյ և յերկինս իսկ ելանէր, և՝ի վերանալն ոչ այլ ինչ Թողեալ աշակերտին իւրոյ, բայց միայն զմաշկեղէնն։ Այսու, ասէ, Հալածեցի զաստանայ. զայդ առ և այդու զօրացոյց զնդդեմ Թշնամւոյն, որ է զնոյն հզօր և աշտարակ անվանելի և անթնդելի ժողովարան։ Որ իբրև զմեծ ժառանգութիւն զմաշկեղէնն ընկալաւ Հղիսէ. քանզի և էր իսկ Ճշմարիտ մեծ ժառանգութիւն, պատուական քան զոսկի։ Այս եղև նա ինքն երկրորդ Հղիա. որ՝ի վերն եղ Հղիա, և որ՝ի խաւարՀ՝ դարձեալ Հղիա։

Պիտեմ զի երանիցէք զարդարն զոյն և փափագիցէք իւրաքանչիւր ոք լինել իբրև զնա. այլ ես ցուցանեմ ձեզ զի յայժ առաւել քան զոյն խորհրդականքս ընկալեալ եմք։ Վասնզի Հղիա զմաշկեղէնն եթող աշակերտին, իսկ որդին՝ այ համբարձեալ յերկինս՝ զմարմինն իւր եթող առ մեզ։ Հղիա մերկացեալ զմաշկեականն գնաց, իսկ Քրիստոս առ մեզ Թողեալ և հանդերձ մարմնովն համբարձեալ, որ ոչ անխայեաց հեղուլ զարիւն իւր վասն մեր, և մարմնովն հանդերձ տուեալ մեզ զարիւն իւր, և զերկոսին խառնեալ՝ի մեզ։ Այս մեք այսուհետև զիաՀրդ խնայեսցուք զմերս առնել յաղագս փրկութեան մերոյ։ Այլ յոյս ապաւինեալ աղաչեսցուք զնա հանապազ աղօթիւք և պաղատանօք և հանդերձ այլովք առաքինութիւք կեցցուք ամենայն սատուգութեամբ. զի փախիցուք՝ի հասեալ չարեացս և հանդիպեսցուք հանդերձեալ բարութեանցն, որ եղիցի ամենեցունց մեզ հասանել ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր փառք հանդերձ հոգւովն սրբով այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵՐԲՈՐԴ

Յաղագս գնալոյ Փլոբիանոսի արքեպիսկոպոսի առ Թագաւորն բարեխոսել վասն քաղաքին զի դարձուցին զանդրիանդէն. և զի բարձրագոյն և մեծ է ըստ ամ քահանայութիւն քան զԹագաւորութիւն. և վասն պահոց այնդութեան օրինակաւ նինուէացւոցն առ անաստուանն. և թէ բամբասեն և չարախօսեն վասնեաց է քան զմարմին եղբօրն ուտելն. և զի բազում պարտաւորք ազատեցան և անպարտք պատուհասեցան:

Յորժամ լինէր անամ յաթոռ քահանայապետին, և տեսանէր զսա միայն անապատ և ունայն ի վարդապետէն, ինդամ և արտասուէր. արտասուէր զի ոչ զհայրապետն մերձ տեսանէր. ինդամ զի գնալն նորա եղև վասն մերոյ փրկութեան՝ զայսչափ ամբոխ բազմութեամբ չափշտակել ի բարկութենէ Թագաւորին: Եւ նոյն ինքն է ձեզ ամենեցուն զարդ, և նմա պակ. զարդ է ձեզ, զի այսպիսի հայրապետ ժառանգեցիք. իսկ նմա պակ, զի այսպէս երևեցաւ ի վերայ որդւոց իւրոց ջերմագութ, և զաստացեալն ի Քրիստոսէ վասն այսր գործոյ հաստատեաց հաւաստեաւ: Ուստի է ձեր զհրամանս առետրականին զի ասէ. "Հովիւ քաջ զանձն իւր դիցէ ի վերայ ոչխարաց իւրոց,,. և նա երթեալ զի դիցէ զոգի իւր վասն մեր ամենեցուն: Արդեպիտ և գոյր արդել յոյժ վասն երթալոյ նորա, և հարկ էր ճնալ, նախ հասակ ծերութեանն և տկարութիւն մարմնոյ և հնութիւն բազմաժամանակեայ ամացն, և հարկ կալեաց սուրբ և պատուեալ ածնիցն, և ի վերայ ամենայնի քոյր նորա որ միայն յաղգէ ճնացեալ էր նմա և կայր ի կատարումն ընչից և ի դուռն մահու, բայց սակայն անտես արար զազգականն, զծերութիւնն, զտկարութիւնն, զդժուարութիւն ժամանակին և զտապնապ գնացից Ճանապարհին. և վասն ձեր ամենեցուն փրկութենէ զամենայն արգել կապանայ խորտակեաց, և ծերն որպէս մանուկ սկսեալ զմեջ իւր, և այսու յօժարութեբ Թռուցեալ գնայ որպէս Թևաւոր եղեալ:

Քրիստոս, ասէ, զանձն իւր եդ ի մահ վասն մեր,

մեք զմի՛ նեռել Թողութեան պատասխանուց ունիցիմք, որ այսքան ժողովրդեան առաջնորդել ձեռն արկանեմք, և զտկարութիւն ամենեցուն ոչ բառնամք, և պատրաստ ոչ լինիմք՝ ի չարչարել վասն որոյ ընդ ձեռամբ անկեալ կան։ Հանգի նախահայրն Յակոբ կայր առաջի խաշանց և արածէր զանբան հօտն, և մարդոյ էր հանդերձեալ տալ զհամար պարտուց, սակայն զգիշերս անքուն կատարէր, և զցուրտ և զտապ և զամենայն սառամանիս օդոյ յինքն կրէր, զի մի կորիցէ՝ ի հօտից անտի. որչափ ևս առաւել մեք որ ոչ ենք կացեալ հովիւս անբան հօտից՝ այլ բանաւոր և հոգևորական հօտի, և ոչ մարդոյ՝ այլ Այ հանդերձեալ ենք կալ առաջի և տալ պատասխանի և զհամար պարտուցն, ոչ է պարտ մեզ ծուլանալ կամ դժուար համարել ըստ կարողութեան օգտել հօտից...։

Հանգի և զայս ինքնին գիտէր զի ոչ միայն վասն միոյ քաղաքի էր բանս այս, այլ վասն ամենայն արևելից. զի քաղաքաց որ՝ ի վերոյ քան զմեզ բնակեալ էն, գլուխ և մայր է քաղաքս մեր. վասն որոյ և համբեր ամենայն վտանգից, և ոչ կարացին զվարդապետն արգելուլ աստ պատճառքն զոր յառաջագոյն ասացի. Այսուհետև յուսամ՝ ի յոյս քաղցրութեան զի ոչ անտես առնէ Այ զայսչափ յօժարութիւնս և զջանս, և ոչ տայ Թոյլ սմանս բաստանի իւրոյ գնալ առանց մեծի վաստակոյ։ Վստեմ զի Թէ միայն երևեսցի վարդապետն մեր և տեսցէ զբազութեպաշտ Թագաւորն մեր, ՝ի հայեցմանէն իւրոյ՝ ի կարճոյ կարասցէ լուծանել զսրտմտութիւն Թագաւորին. քանզի սրբոյ ոչ եթէ բանք նոցա միայն, այլ և երեսք նոցա լի է հոգևորական շնորհիւն։

Ինքնին իսկ վարդապետն մեր լցեալ բազում իմաստութեամբ և հմուտ Աստուածային օրինացն՝ այնպէս ասիցէ ցԹագաւորն որպէս Մովսէս ցԱստ. «Եթէ Թողուս զբազմութիւն զոքա նոցա Թող. ապա Թէ ոչ՝ սատակեա և զիս ընդ նոսա»։ Հանգի այսպիսի է գութ սրբոցն՝ ի վերայ հոգևոր որդւոցն. քաղցրագոյն համարին զմահ քան՝ ի բաժեայ կեալ և ապրել։ Ուստի գնէ և զժամանակ աւուրցն օգնական, և մատուցանէ բարեխոս զատիկն սուրբ զի յիշեսցէ զժամանակն յորում եթող Հրիստոս զմեզ ամենայն տիեզերաց, և աղաչեսցէ զնա լինել նմանող

ՀՈՎ, յիշեսցէ և զառակին զայն զբիւր քանքարին և զՀա-
բիւր դահեկանին։ Կ'ուեմ և ես զՀամարձակութիւն
Հօրն մերոյ, զի ոչ զանգիտէ զնա յայսմ առակիս եր-
կեցուցանել և ասել՝ գուցէ և դու, Թագաւոր, յայնմ
աւուր լուիցես «Ողջ ծառայ, զամենայն զպարտսն Թո-
ղի քեզ, վասն զի աղաչեցեր զիս. ոչ էր պարտ և քեզ
Թողուլ քոյմ ծառայակցին, որպէս և ես քեզ Թողի»։

Չանդերձ այսուիկ ուսուցանէ զի ոչ Համօրէն քա-
ղաքիս եղև մեղանչս այս, այլ մարդոց ումանց օտարաց
անզգամաց և յանդգնելոց. որ Թէպէտ և Համարձակե-
ցան յանօրէնութիւն, սակայն ոչ ինչ Համարեցան կամ
Հոգս արարին. ըստ որում ոչ է արժան և իրաւ վասն
սակաւ մարդկան անզգամաց զայնչափ քաղաք յափշտա-
կել և զանպարտսն մատնել՝ ի պարտաւորութիւն. որ
Թէպէտ և ամենեքեան՝ ի մեղս էին, բաւական էր այս-
չափ աւուրս կրել դատապարտութիւն, մաշել երկիւ-
ղիւ և յամենայն աւուր ակն ունել մեռանել, Հալա-
ծեալք փախուցեալք՝ քան զպատժապարտս կան ողոր-
մագոյնք, բարձեալ զարիւն՝ ի վերայ ձեռաց իւրեանց՝
ոչ ունին վստահութիւն՝ ի կեանս իւրեանց։ Բաւական
են տանջանքս այս. մի յառաջ եկեսցես խստագոյն բար-
կութեամբ, ով Թագաւոր, Հաշտ արա քեզ զվերինն
դատաւորն վասն առ ծառայակիցս քո մարդասիրութե-
մանցիր զանճութիւն քաղաքին, զի ոչ վասն միոյ և եր-
կուց և երից կամ տասն անձանց է մեզ այժմ պատ-
բաստութիւնս, այլ վասն բիւրուց անմեղաց։ Այս վասն
զի գլուխ է ամենայն տիեզերաց Հաւատացելոց քաղաքն
այն, ուր յառաջագոյն երևեցան քրիստոնեայք, պա-
տուեա զՔրիստոս, զգոյշ լեր յորոց նախ քարոզեցին
զփրկագործն և զքաղցր անունն ամենայնի։ Այս ա-
մենայն քահանայապետն և առաւել քան զսոյն Հան-
դերձ մեծ Համարձակութեամբ ասիցէ։

Լուեալ զայս Թագաւորն լինիցի մարդասէր և քաղ-
ցրը, որպէս և է իսկ, մինչ զի յերկոցունցն քաղցրագոյն
ունիցիմք զյոյս։ Կանաւանդ քան զՀաւատով կալ վար-
դապետին և նախ քան զմարդասիրութիւն Թագաւո-
րին՝ վստահ եմք յողորմութիւն այ. զի Թէպէտ և Թա-
գաւորն աղաչեալ՝ ի քահանայապետէն և քահանայա-
պետն կայ յաղաչանս, նա ինքնին մերձ կայցէ՝ ի մի-

ջի նոցա, կակղացուցանէ զսիրտ Թագաւորին, և զլեզու քահանայապետին կայտառ և արագ առնէ, և զձանս նորա ուղիղ յօրինեսցէ ՚ի միտս և ՚ի սիրտս Թագաւորին, և ընդունելի զասացեալն բազում բարեմիտ ղղջմամբ։ ՚Այս ՚ի յաղաչանս առ Աբրիատա, և Աբրիատոսի փափագելի է քաղաքս մեր քան զամենայն քաղաքս վասն նախահարցն, լեցի և վասն մեր առաքինութեան, . . .

Երդ աղաչեսցուք զնա և պաղատեսցուք առ նա, և անցուսցէ զամենայն բարկութիւնն և զբռնամոլթիւն Թագաւորին, և զերծուսցէ զմեզ յամենայն եկելոց վտանգից։ Հայրն մեր անդ առնէ աղօթս, և մեք աստ աղաչեսցուք զերկնաւոր Թագաւորն. լիցուք օգնական աղօթից նորա։ Մեծ կարողութիւն ունի եկեղեցիս հասարակաց, եթէ ցաւագին ոգւով և խոնարհ սրտիւ զաղօթս մատուցանիցեմք։ Մի՛ ինչ պէտք են անցանել ընդ խորս ծովու կամ գնալ հեռի Հանապարհ. այլ հասարակ իւրաքանչիւր այր և կին հանդիպեսցուք յեկեղեցին. եթէ ՚ի տունս մնամք, անդ կոչեսցուք հանդերձ բազում ջանիւ զայծ յօգնականութիւն, և նա հայի յաղաչանս մեր և ողորմեսցի ՚ի վերայ մեր։ Ուստի յայսիսկ է եթէ յոյժ կամի զմեզ ապաւինել առ նա և յամենայն ժամ աղաչել զնա, և նա ոչ ձանձրանայ։ Արդիկ յոյժամ ընդ յերկար Թախանձին ՚ի մէնջ վասն իրաց ինչ մերոց, յագին և նեղին և դժուարեալ հայհին ՚ի մեզ. իսկ ասծ այսմ ամենայնի զընդդէմն առնէ. ոչ եթէ յոյժամ հանապազ մաղթանօք հանդիպիմք նմա վասն կարեաց մերոց՝ դժուարի, այլ մանաւանդ յոյժամ ոչ առնիցեմք զայս յամենայն ժամ. . . .

Ի այսու հետև ծուլասցուք ապաւինեալ առ նա հանապազ. և որչափ և իցէ նեղութիւն, Թերևս առցէ և կեալ վտանգն զարձակումն։ Երկեցցոյց մարդ. ընթացիր առ վերին տէրն, և ոչ գայցէ վտանգն։ Այսպէս ՚ի հնումն արձակեցան ՚ի վշտաց և ՚ի պատուհասից. և այս եղև ոչ ՚ի ձեռն արանց միայն, այլ և կանանց։ Այն կին ոմն եբրայեցի, Էսթեր անուն նորա. այս Էսթեր բողոքումն զժողովս Երեքին օրք հանդերձեալ էին մատնել ՚ի կործանումն, այսպիսի արուեստիւ յափշտակեաց յայնմանէ և ազատեաց զնոսա։ Վանգի Թագաւորն

Պարսից միանգամայն զամենեսեան բառնալ հրամայեաց յերկրէ, և չէր ոք որ կարէր կալ առաջի բարկութեն այնմիկ։ Երկացաւ կինն այն զպայծառագոյն պատմուճանն իւր և զգեցաւ քուրձ. արկեալ ՚ի վերայ մխիթոյ զանկողինս իւր, աղաչէր զմարդասէրն Աստ գալ զկնի նորա առ Թագաւորն, և այսպէս աղօթէր առ նա՝ զանունս գայս ասելով յաղօթելն իւրում։ Համարձակեցա զիս որ Թագաւորդ ես Թագաւորաց և տէր տերանց, և տուր ինձ բան դիւրին ՚ի բերան որով գտանիցեմ զշնորհս առաջի Թագաւորին։

Օ այս և վասն վարդապետին մերոյ աղաչեացուք զԱստ։ Վանդի կինն այն վասն Երկիցն աղաչէր, և եղև կարող լուծանել զբարբարոսական տրտմութենին. իսկ վարդապետան մեր որ վասն այսպիսի քաղաքի և հանդերձ այսչափ եկեղեցեաւս կայ յաղաչանս, և առաւել զՀոգ և զխոնարհ Թագաւորն կարիցէ ածել ՚ի հաւան։ Օ՛ի եթէ որք առ Աստ մեղուցեալք են՝ առեալ է իշխանութիւն արձակել, ապա մանաւանդ որ առ մարդիկ են մեղանչականք՝ կարող է զմեղսն կորուսանել և անյայտ առնել։ Վանդի իշխան է և սոյն իսկ, պարկեշտ և պատկառելի քան զնորին իշխանութիւնն, և զԹագաւորա կան գլուխն՝ ամենասուրբ Աստեղէն օրէնքն ընդ սորին ձեռամբ գալ հրամայեցին։ Այս յորժամ խնդրեսցէ լինել ՚ի վերուստ ինչ բարի, Թագաւորն առ քահանայն և ոչ քահանայն առ Թագաւորն ապաւինեալ սովորեաց։ Վանդի և ունի սա զկն զարդարութիւն և գօտի զՀոգմարտութիւնն. ունի և կօշիկս յոյժ պարկեշտագոյն՝ զպատրաստութիւն աւետարանին խաղաղութեան. ունի և պսակ զփրկութիւն յուսոյ կապեալ ՚ի վերայ գլխոյ իւրոյ. ունի և սուսեր ոչ եթէ յերկաթոյ, այլ ՚ի հոգւոյն սրբոյ. ուստի պայծառ և պատուական է սուրս վասն ամենեցուն աղօթք, պատկառելի զկնն, մեծ հանդարձակութիւնն, առաւել զօրութիւնն։ Զրով կարող իսկ է իւրով մեծահոգութեամբն յառաջին ծանրութենէ մեղանացս և ՚ի վերջին յամենայն պատուհասից առ Աստ յուսոյն և բազում հանդարձակութեամբն և պայծառ իմաստութեամբն փոխել զԹագաւորին սրտմտութիւնն։

Երբ այսուհետև մի անգետ լինցուք վասն մերոյ փըր-

կութեան, այլ մաղթեսցուք աղաչեսցուք խնդրուածս արասցուք առ վերին Թագաւորն Հանդերձ բազում արտասուօք, ունելով մարտակից մեզ զաւուրս քառասնորդացս։ Ո՛ր օրինակ յորժամ խռովութիւն ալեաց յուզի, ՚ի խորս ծովուն արկանէ նաւապետան զնաւն, և որպէս սրբեսցէ զինուոր և կազմ յօրինեսցէ զսպառազինութիւնն իւր և պատրաստ առնէ զերիվար իւր ՚ի պատերազմել, և որպէս երկրագործ ՚ի ժամանակի հընձոց սրէ զմանգաղ իւր, և որպէս Հանապարհորդ որ վըստահ իցէ յընթացս ոտից իւրոց՝ մերձենայ գնայ Հանապարհ, սոյնպէս և մեք իբրև հնձողք յորենոյ արիաբար Հոգևոր պատուոլքս երևեսցուք, իբրև զինուորք զէնս Հոգևոր կազմեսցուք, իբրև վաստակաւորք մանգաղս սրեսցուք, իբրև նաւուղեալք ՚ի խռովութենէ ալեաց զաղտեղեալ խորհուրդս թօթափեսցուք, իբրև Հանապարհորդք առ ՚ի գնացս յերկինս մերձեսցուք, և իբրև ըմբիշք ՚ի մարտս մերկասցուք. զի որ Հաւատովք լի իցէ, նա իսկ է վաստակաւոր և նաւուղիղ և զինուոր և ըմբիշ և Հանապարհորդ։ Այսո՛ւ այսորիկ և Պաւղոս ասէ. “Ես է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս ,,. և դարձեալ թէ “Բերեք զսպառազինութիւն այ ,,։ Ցնո՛ր զըմբիշն, տեսեր զզինուորն։ Այս դու եթէ ըմբիշ իցես, պարտ է մերկ մտանել ՚ի մարտն. եթէ զինուոր իցես, պարտ է սպառազինութեամբ կարգել ՚ի դասս զինուորացն։

Ո՛չիարդ, ասէ, կամ ո՞րպէս երկոցունցս կարէ լինել, մերկ լինել և ոչ մերկ, զգենուլ զէնս և ոչ զգենուլ։ Ո՛չիարդ արդեօք, ես ասացից։ Երկացիր զվարս կէնցաղոյս, և եղեր ըմբիշ. զգեցիր զէնս Հոգևորականս, և եղեր զինուոր. մերկացո զանձն քո ՚ի Հոգոյ կէնցաղոյս, քանզի ժամանակ է մարտնչելոյ. զգեցիր զՀոգևորական զէնն, զի պատերազմ Հասեալ է մեզ Հակառակ յարդարել ընդդէմ դիւաց։ Այսո՛ւ որոյ պարտ է մերկանալ, զի մի բռնարկութիւն ունիցիմք սատանայի յորժամ մարտնչիցի ընդ մեզ. սպառազինեսցուք շուրջանակի զանդաման մեր, զի մի առցուք վերս ՚ի պատերազմին ժամու։ Ելեր վաստակօք զանձն քո, որով Հատցես զարմատս փշոյ, զի մի հեղձուսցէ զՀասկս բարի պտղոյն.

սերմանեա զանս բարեպաշտութեան և բուսո զգեղեցիկ զխնամատութեան զտունկն. աշխատասէր լեր սրտի մտօք, և եղեր վաստակաւոր հաճոյական, և ասիցե ցքեզ Պաւղոս այսպէս. "Աշակին աշխատելոյ նախ պարտ է ՚ի պտղոյն ձաշակել,,: Զայս և ինքն միսեալ յարուեստ գործոյ, վասն որոյ առ կորնթացիսն ասէ առաքելով. "Այս տնկեցի, Ապողոս ջուր ետ, այլ Աած աձեցոյց,,: Արեա զմանգաղ քո հանդերձ պահովք առ ՚ի հատանել զհասկ չարեաց զոր աձեցուցեր աւելորդ կերակրոք. մերձեցիր ՚ի ձանապարհորդութիւն որ յերկինս հանիցէ զքեզ. յանձուկ ձանապարհն մերձեա և երթ: Այս զիաւրդ արդեօք կարէ մերձենալ և գնալ: Ամբռնեա զանձն քո աածել ՚ի ծառայութիւն ցայն վայր ուր հանդերձեալ ես գնալ զձանապարհն անձուկ, քանզի յայնմանէ արգել ՚ի մեծ Թանձրամարմնութենէ յաւելորդ կերակրոց: Այ բաց վարեա զալիս զաղտեղի մեծութիւնս. յաղթահարեա զծուփս չար խորհրդոց. ապրեցո զնաւդ ՚ի խռովութենէ բազմահանձար գիտութեէ արուեստիւն, և եղեր նաւուղիղ:

Այս այս ամենայնի պատձառք բանն Աայ է որ ուսուցանէ զմեզ յաղագս պահոց. բանք ոչ եթէ զայս ասեմ զբազմօրեայ զպահոցս, այլ զտոյդ պահոցն. ոչ ՚ի կերակրոց միայն, այլ նախ պարտ է զամենայն զմեղս ՚ի բաց հատանել... յորմէ ուսանիմք Թէ զիարդ կամ որով օրինակաւ պարտ է մնանել ՚ի պահս: Վանզի պահեաց փարիսեցին պահս, այլ զինի պահոցն ԻՀանցն ուսնայն ՚ի պտղոյ պահոցն. պահեցին և նիւսուէացիքն, և Հանդիպեցան ողորմութեանն Աայ. պահեցին և Հրեայքն, սակայն անընդունակ եղեալք և հայհոյեալք գնացին ՚ի պահոց իւրեանց: Այս արդ եթէ ոչ գիտեն զիարդ պարտ է պահել, այսչափ է վտանգ պահոցն, ուստուք մեք այսուհետև զօրէնս պահոց, զի մի անյայտ ընթացուք և մի զօդս կոծեսցուք և մի ստուերամարտութեամբ մրցեսցուք:

Վնեղ են ոգւոց պահք. սակայն դեղք Թէ և բիւր օգուտս ունին, բայցւմ անգամ անօգուտ լինին վասն անգիտութեան ցաւոցն. քանզի պարտ է և զժամն գնել զդեղոյն գիտել և զչափ նորին և զախորժակս մարմնոյն և զկիրս բնութեանն. և եթէ ոչ ըստ ախորժելոյ

ցաւոցն լինիցի, առաւել խոտացուցանէ փոխանակ օգտութեան։ Իսկ եթէ մարմնոյ բժշկութեան այսչափ ստուգութեամբ պարտ է ձեռն արկանել, որչափ եւս առաւել վասն ոգւոյ մերոյ ոչ հեղգալ։ Այլ ամենայն գիտութեամբ պարտ է քննել և բազում զգուշական ստուգութեամբ։

Տեսցուք այժմ թէ զիարդ պահեցին նինուէացիքն կամ թէ որպէս ազատեցան յայնմ բարկութենէ։ "Արդ, ասէ, և անասունն, ոչխար և արջառ մի՛ ինչ ձաշակեսցեն,, ։ Ո՛չինչ խօսիս, ասա ինձ, և անասո՛ւնք պահեսցեն, երիվարք և ջորիք քո՛ւրձ զգեցուսցուն։ Այո, ասէ. զոր օրինակ ՚ի մեռանել մեծատանն ոչ եթէ ծառայք միայն և աղախնայք սուգ առնուցուն, այլ և զերիվարս յառաջ բերեալ զգեցուցանեն և տան ՚ի ձեռս երիվարաբուծացն, և ՚ի գերեզմանն զհետ երթալ հրամայեն՝ զմեծութիւն վշտին ցուցանելով, և ամենեցուն յայտնելով զանբաւ աղէտս ողորմագինս տարակուսանացն, այսպէս և քաղաքին այնմիկ հանդերձեալ կորնչել, և զբնութիւն անասնոց քրձազգածս արարեալ արկին ՚ի լուծս պահոց։ Բայցի ոչ էր անասնոց բանիւ ուսանել զբարկութիւն տեառն, զի ոչ ունին միտս առ իմանալ, հանդերձ սովորի ուսանէին եթէ ՚ածահրաման էր նեղութիւնն. զի եթէ քաղաքս կործանեսցի, ասէ, ոչ եթէ մեզ բնակչաց միայն, այլ և անասնոց առ հասարակ լինիցի գերեզման. և սոքա, ասէ, հանդերձեալ են լինել հաղորդ որ գալոցն իցէ տանջանաց, լիցին հաղորդ և պահոցս։

Այս այլ ազգ տեսցուք զսոյն զոր և մարդարէքն առնէին. յորժամ տեսանէին թէ գալոց է բարկութիւն անհանդուրժելի յերկնից, և գիտէին որ հանդերձեալ էին տանջել, ոչ ունէին համարձակութիւն առ ՚ած ՚ի լաւութենէ մարգկանն, և ոչ մի ոք էր յառաջդիմութեան, և պատասխանւոյ անգամ չէին արժանի, ոչ ունէին թէ զինչ գործեսցեն, և ոչ գտանէին պատասխան դատապարտութեան՝ յանասունսն լինէին ապաւինեալք, և նոցին մահու գոլմամբն առնէին զաղաչանս առ ՚ած, և այնու զնոցին զողորմելի և զբազմողբերգելի վկորուստ անցուցանէին։

Այս գարձեալ այսու հաղորդ առնեմ զանասունս ընդ

մարգկան եկեալ վտանգիցն։ Այլ երբեմն եկեալ ՚ի վե-
րայ հրէաստանի, և երաշտութիւն բազում կալաւ զեր-
կիրն, և ամենեքեան մաշեալք եղեն չոյժ. և ոմն ՚ի մար-
գարէիցն ասէր. “Այսօրացին երինջք ՚ի մնուրս իւրեանց,
լայնին դասակք անդուռ զի ոչ գոյր նոցա արօտ, և ամե-
նայն խաշինք դաշտաց առ քեզ հայեցան, զի ցամաքե-
ցան հոսանք ջուրց,,. և յարգելմանէ ցօղոյ ողբայր չա-
րաչար և ասէր. “Լուր վայրի և ցիրք անապատի ՚ի քեզ
հայեցան. զի հուր սատակեաց զգեղեցկութիւն անա-
պատի և բոց Հարակեաց զամենայն փայտ ագարակի, և
կուրացան աչք նոցա զի ոչ գոյր խոտ,,։ Ապա այսմ դար-
ձեալ լուաք Յովհելեայ որ ասէր. “Լայեք փեսայ ՚ի սենե-
կէ իւրմէ և հարսն յառագաստէ իւրմէ և տղայք ստղն-
գիայք ՚ի գրկաց,,։ Ալ ասն էր, ասա ինձ, զանժամ հա-
սակ տղայոց կոչէ ՚ի պաղատանս։ Յաղագս այսորիկ և
ըստ այսմ պատճառի. քանզի որ Հասակաւ կատարեալ
արք էին, ամենեքեան բարկացուցին և խռովեցուցին
զՅԾ, որք սակաւ ՚ի մեղաց անփորձք էն, ասէ, նոքա ա-
ղաչեսցեն զբարկացեալն։

Ա.յլ որպէս և ասացի իսկ, տեսցուք եթէ զինչ է որ
ելոյծ զանդարձ բարկութիւնն զայն։ Այ՚ եթէ միայն պահքն
և քուրձն լուծին. ոչ է պարտ ասել զայս։ Ա.յլ զինչ.
քանզի փոխադրեցան ՚ի գործոց կենցաղոյս։ Այս ուստի
յայտ է այս. ՚ի մարգարէական բանից անտի, որ գիտակ
էր բարկութիւն Յծ և նոցին պահոցն. այսինքն որ զփո-
խարկութիւնն ասաց, և զպատճառս հաշտութեան ու-
սուցանէ, ասելով այսպէս. “Այս ետես Յծ զգործս նո-
ցա,,։ Ո՞ր գործ, զի պահեցին և քուրձ զգեցան. ոչ
է այս, զի զայս ամենայն լռեալ ծածկեաց. այլ ասէ.
“Դարձան իւրաքանչիւր ոք ՚ի Հանապարհայ իւրեանց
չարաց, և զղջացաւ Յծ ՚ի վերայ չարեացն զոր խոսեցաւ,
և ոչ արար,,։ Ցեսանե՞ս զի ոչ պահքն միայն վերացոյց
զնեղութիւն, այլ փոխարկութիւնն կենցաղոյս։

Ո՞այս ասեմք, ոչ եթէ անարգեմք զպահն, քաւ լի-
ցի. այլ զի առաւել պատուեմք։ Պատիւ պահոց ոչ միայն
՚ի պարարտ կերակրոց զատեէն է, այլ բաժանել չամե-
նայն մեզաց. իսկ որ մինչ ՚ի կերակուրս միայն սահմա-
նէ զպահն, այնպիսին է մանաւանդ որ անարգէ զպահն։
Պա՞հս պահես. ցոյց ինձ գործովք իւրովք։ Ա՞ր գործովք,

ասէ. Եթէ տեսանիցես զաղքատն, լեր ողորմած. Եթէ տեսանիցես զթշնամին, լեր հաշտ. Եթէ զոխերելին իսկ տեսանես 'ի բարեհաճութիւն, մի՛ չարանար. Եթէ տեսանիցես կին գեղեցիկ, զանց արա և 'ի բաց երթ։

Այլ Եթէ բերանդ միայն իցէ պարտ պահել. այլ աչք և ականջք, ձեռք և ոտք և ամենայն անդամք մարմնոյ մերոյ պահեսցեն. ձեռք 'ի յափշտակութենէ և յագահութենէ սրբեսցին. իսկ ոտք արգելցին յանօրինութեան տեղին ընթանալոյ. պահեսցին աչք և խրատեալք լիցին, գուցէ 'ի տեսիլ գեղոյ հայեսցին և զօտար գեղ զննեսցեն։ Վերակուր աչաց՝ տեսութիւնն է. Եթէ անօրէնն իցէ տեսիլն, արգել և սրբեա 'ի պահն. քանզի Թէ օրինաւք և զգուշութեամբ զարդարեցեր զպահն, զամենայն փրկութիւն բերցէ ոգւոյդ քում։ Իսկ Եթէ 'ի կերակրոյ և յըմպելեաց հեռանալով, և որ աչաց և ոտից և ձեռաց արգել իցէ՝ անխտիր մերձենայցես, յոյժ տգեղ է և գարշելի։ Այ ուտես միս. և մի կերիցես առանց զանառակութիւնս։ Պահիցէն և ականջք. պահք ականջաց ոչ հաձել և ոչ ընդունել զկայհոյութիւն և զլուր նախրութեան և մատնութեան. "Օ լուր անիրաւութեան, ասէ, մի՛ ընդունիցիք,,։

Պահիցէ և բերան 'ի բանից գարշելեաց և 'ի բամբասանաց։ Օ՛ ինչ օգուտ իցէ յորժամ 'ի Թռչնոց և 'ի ձկանց մեկնիմք, և զեղբարս մեր խածատիցեմք և ուտիցեմք։ Այլ չարախօսք զընկերէ իւրմէ, եկեր զմիս եղբօր իւրոյ. վասն որոյ և Պաւղոս երկեցոյց ասելով. "Ո՛ պա Եթէ զմիմեանս խածատիցէք և ուտիցէք, զգոյշ լերուք գուցէ 'ի միմեանց սատակիցիք,,։ Այ արկեր զատամունս 'ի մարմինս, այլ արկեր յանձն քո զչար կասկածն և զնա վկրաւորեցեր, և բիւրս գործեցեր չարիս քեզ ինքն և այլոց բազմաց...։

Ո՛ւ ոք զայս ասիցէ ինձ, Եթէ յայնժամ եմ չարախօս՝ յորժամ սուտ ասեմ. իսկ Եթէ ճշմարիտ, ոչ է ինձ։ Պարտական ես, Թէպէտ և սուտ խօսիս՝ չար։ Այս քանզի փարիսեցին այն յիրաւի ասաց չար զմաքսաւորէն, այլ սակայն նմա այս ոչ եկաց առաջի։ Այս ինձ, ի՛ր մաքսաւորն մաքսաւոր և մեղաւոր։ Այ մենայն իրօք յայտ է զի մաքսաւոր էր. բայց սակայն յորժամ զնմանէ խօսեցաւ չար, ել, ասէ, փարիսեցին կորուսեալ զամենայն արդարութիւնս։

Կամիցիս ուղղել զեղբայրն. արտասուեա աղօթեա առ Աստուած. ամ առանձինն և խրատեա, խոհրդակից լեր բարեաց, աղաչեա միսիթարեա՛ի զղջանալն. այսպէս և Պաւղոս ասէ. "Կուցէ յորժամ գայցեմ, նկուն արասցէ զիս Աստուած իմ առ ձեզ, և սուգ առնուցում վասն բազմաց յառաջադոյն մեղուցելոց և ոչ ապաշխարելոց՝ի վերայ պղծութեան և պոռնկութեան և գիջութեն զոր գործեցին"։ Այսպէս և դու սուգ առ և սէր ցոյց վասն մեղուցելոյն. հաւանեցո զնա զի վասն գթութե և հոգս առնելոյ քննես զյանցանսն, և ոչ յանդիմանեալ խորհիցիս վասն յիշելոյ նմա զյանցանս իւր։ Իսկ եթէ լինիցի անառակ՛ի չարիսն, կալ զոտս նորա և համբուրեա, և մի այսն առնիցես՝ եթէ ձգմարիտ բժշկել կամիցիս։ Օ՜ սոյն և բժիշկք առնիցեն բազում անգամ յորժամ՛ի դժուարին ցաւս տապնապիցին նեղեալքն առ դեղն. համբուրեն աղաչեն առ՛ի հաւանել առնուլ զառողջութեանն դեղ։ Այսպէս գարձեալ պարտ է առնել և քեզ, ցուցանել քահանային զվէրսն. այս իսկ է գթութիւն, այս է բարի խնամակալութիւն։

Ոչ միայն ոչ խօսել զչար, այլ և յորժամ լսիցէք ասել չար զումեք, աղաչեմ խնդրել զլսելիս ձեր, նման լինել մարգարէին որ ասէ. "Որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ, զնա բացէ՛ի բաց հալածէի"։ Այսպէս և դու ասասցես ցընկերն քո. եթէ գովել զոք կամիցիս կամ բարեբանութիւն մատուցանել, յարդարեմ զմուտ առկանջաց իմոց և ընդունիմ զանուշահոտութիւնս. ապա թէ չար ինչ կամիցիս պատմել, խնդրեմ զմուտ լսելեացս, զի ոչ եմ բաւական զաղբս գարշելիս ընդունել։ Օ՜ ինչ օգուտ է ինձ կամ շահ՛ի բանիցս յայսցանէ՝ իմանալ եթէ պոռնիկ իցէ ոմն. այլ և մեծագոյն լինի յայսմանէ շնաս։ Այսա դու ցնա. հոգասցուք զմերն. զի եթէ մեղուցեալն պարտաւոր է տանջանաց, մեք զմե՛ր ունի-ցիմք տալ պատասխանի յորժամ զմերն ոչ ածեմք զմըտաւ, և զայլոցն այնպէս քննասիրեմք...

Այս որպէս զք որ զբարին պատմէ և գովէ զընկերն՝ սիրելն առնէ սիրոյ, այսպէս և որ չարասեր իցէ՛ի մէջ արկանէ զթշնամութիւն և բիւր պատերազմաց սկիզբն և պատճառ լինի. զի ոչ երբէք յայլմէ պատճառէ պըղերգ լինիմք առ մերոյին յանցանս, որպէս յորժամ զո-

տարան բազմախոյզ ՚ի քնին և յաւելագործութիւն ածեմք. զի ոչ ոք է որ չարախօսէ զտարս և բազմաքնին լինի կենցաղոյն եթէ կալիցէ երբեք հոգալ վասն իւրոց կենացն, զի զամենայն զիոյզ իւր և զջան վասն այլոց բազմաքննութեան կորուսանէ և մնշէ։ Հարկ է իւրաքանչիւր զիւրսն զամենայն պարզ ունել ՚ի մտի և կալ և հոգալ. տիրապէս սէր այն իսկ է՝ զամենայն զհոգս և զիոյզ ՚ի գործ արկանել վասն իւրոց յանցանացն և դատաստանաց, որով կարող լինիցի առաւելապէս գործել։ Այսպա թէ հանապազ զայլոսմ քննիցես, երբ իցէ ժամանակ զղջանալ քեզ ՚ի չարեաց քոց։

Փախիցուք այսուհետև, սիրելիք, փախիցուք ՚ի չարախօսութենէ միմեանց. ուսցուք զի սատանայական է այնպիսի մոլեգնութիւն, և ՚ի նորին խորհրդոց է յայսոսիկ գարանակալութիւն.... Ի բաց ընկեցուք ՚ի բերանոյ մերոյ զամենայն չարախօսութիւնս. գիտացուք զի թէ հոգ և մտիւք ուսիցեմք, ոչ ինչ օգտիմք ՚ի յայնպիսի տարժանմանէ եթէ ՚ի չարախօսութենէ ոչ զատցուք. զի “Ոչ որ մտանէ ՚ի մարդ, ասէ, այն պղծէ զնա, այլ որ ելանէ ՚ի բերանոյն,,։ Այսպա ինձ, եթէ շարժէր ոք մերձ առ քեզ զաղբս գարշելիս, ոչ ապաքէն բամբասիր և անգոնանիր զնա անարգանօք. զսոյն զայս և ՚ի վերայ չարախօսացդ արասցես։ Օ՛ի հոտ աղբոյ ոչ այնպէս զազրացուցանէ զհոտոտելիս և զքիմն ՚ի յառնուլն զայն, որպէս զայլոց յանցանս հնչել և զանմաքուր վարս յայտնել։

Ի բաց կացցուք այսուհետև ամենեքեան ՚ի չարախօսութենէ, ՚ի գայթակղութենէ, ՚ի բամբասանաց, և մի զեղծցի և մի զայ ինչ ասիցեմք չար։ Խաղաղութիւք այժմ յայսմ խեռութեան արասաքս հոլովեն զչարախօսն, որպէս զի ծառայք ՚ի վերայ տեառն իւրեանց յարուցին զչեզոս իւրեանց։ Այո թէ ոքան է չարս այս, ուսիր յայսմ գործոյ յոր ըմբռնեալ եմք։ Այհա անարգեցեալ մարդ, և ամենեքեան երկնչիմք և դողամք թէ գուցէ յանարգողացն իցեմք, թէպետ և ոչ եմք գիտակիից յայսպիսի մեղանս. և ահ զոր ամենայն և յամենայն ժամու անարգի ՚ի մեծատանց և յաղքատաց, ոչք ՚ի դիւրութեան իցեն և ոչք ՚ի նեղութեան, ոչք դատեն և ոչք դատին, և ոչ ոք է որ ՚ի խնդիր և ՚ի քնին ելա-

նիցէ։ Ա՛ման այսորիկ Թոյլ եա անարգել, զի՝ի վտան-
պէս որ վասն անարգանացն եղև, ասաի ուսանիս զայ
մարդասիրութիւնն։ Այլ այս այժմ առաջին և միայն ե-
ղև, սակայն և ոչ ասաի ակն ունիմք առնուլ քաւութիւ
և ոչ պատասխանի տալ. և զայծ զօր ամենայն բարկա-
յուցանեմք, և ոչ մի օր առ նա ունիմք դարձ, սակայն
նա համբերէ առաւել ամենայն երկայնմտութեամբ։

Տեսեր զայ մարդասիրութիւնն Թէ որչափ է ...։ Ո՛չ
նա բաւական է ասել զմեղսն և լուծանել զպարտաւո-
րութիւնն. իսկ մարդկայինքս ամենայնի այսմիկ հակա-
ռակ է. քանզի մեղուցեալքն յայնժամ առաւել և մե-
ծագոյն տանջին, յորժամ խոստովանին զմեղսն. որ և
աստ այժմ եղև։ Այլ տանջեցան ոմանք՝ի սլոյ, ոմանք
՝ի հրոյ, ոմանք գազանաց մատնեցան և կորեան։ Այլ
այս ոչ Թէ արանց միայն, այլ և կանանց և տղայոց որ
յոյժ մատաղ էին հասակաւ, որք ոչ էին յամբոխս փո-
ղոցացս, և ոչ նոցա որք որպէս՝ի խռովութենէ դիւաց
վառեալք էին զայս առնէին միայն, որոց և տանջողքն
ակն ունէին, այլ և չէր ոք որ ազատ էր՝ի հարկէս յայս-
մանէ, ոչ աղքատութիւնն և ոչ որք ոչ էին շարժել
զինի ամենեցուն յանցանքս այս, և ոչ որք խոստացեալ
էին Թէ այսուհետև ոչ երբեք այլ համարձակիցիմք
այսպէս, և ոչ այլ ինչ բոլորովին կարաց զնոսա փրկել.
այլ յամենայն ղղջմանէ զրկեալք՝ի կորուստ մատնե-
ցան, և զինուորքն սպառազինուք զիւրաքանչիւր որ զնո-
սա յառաջ մատուցանէին, պահ արկեալ զի մի որ յա-
փըշտակիցէ զդատապարտեալսն. և մարք նոցա զինի եր-
Թային հեռագոյն, տեսանէին զորդիս իւրեանց սրով հա-
տեալք, և կոծել զսուգն ոչ համարձակէին. յաղԹէր
յոյժ ահ չարչարանացն, և ըմբռներ երկիւղն զխորովա-
գութիւն բնութիւնն։ Այլ որպէս զնաւակոծեալսն տես-
նեն ոմանք՝ի ցամաքէ անտի, երկնեն հոգալով և դո-
ղան և ազատել զընկղմեալսն ոչ կարեն, սոյնպէս և աստ
եղև. զի որպէս յալեաց ծովու ափեշեալ էին մարքն յեր-
կիւղ զինուորացն, և ոչ միայն մերձ գոլով ազատել
զիւրեանց զրպարտեալսն ոչ համարձակէին, այլ և ար-
տասուել երկնչէին։

Ո՛րդ խնացմ՛ք այսու զայ մարդասիրութիւնն, զիարդ
անքաւ եղէ, որպէս անփորձ, զիարդ՝ի վեր անցանէ քան

զամենայն բան։ Այժմ այժմ յայտնեաց զիւր բնութիւնն անարգեալն. քանզի՝ ի նուաստն դէպ եղև միոյ անարգանաց, և նա ոչ տեսութեամբ մեծ և ոչ լսելով, սակայն և ոչ մի ոք՝ ի համարձակողացն հանդիպեցաւ Աստղութեան։ Այսուհետև այլ ոչ գոյ ասել զայս. զի և այսչափ իսկ է՝ ի մէջ մարդոյ և այլ, զոր ոչ ոք բանիւ կարէ ցուցանել. և նա զօրհանապազ անարգի, և ինքնին մերձ տեսանէ զամենայն և լսէ, բայց ոչ՝ ի վերուստ փայլատակունս առաքէ, և ոչ ծովու հրաման տայ անցանել՝ ի վերայ երեսաց երկրի և ընկղմել զամենեսեան. այլ համբերէ և երկայնամիտ լինի և Աստղութիւ հրամայէ անարգողացն՝ եթէ միայն զղջանան և խոստովանին զի մի երբեք արասցեն զնոյն։ Այդ որ Ձեմարտապէս պարտ է աղաղակել և ասել. “Այվ խօսեսցի զգօրութիւնս տեառն և լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա,,։

Այանիցս անգամ զպատկեր այ ոչ միայն՝ ի հրապարակս մատուցեալ, այլ և կոխան արարեալ. քանզի դու յորժամ քարշեսցես զպարտաւորն, յորժամ մերկացուցանես, յորժամ ապտակես, զայ պատկերն կոխեցեր։ Ասուր այժմ զասացեալն՝ ի Պաւղոսէ. “Այն մարդոյ, ասէ, ոչ է պարտ ծածկել զգլուխ, զի պատկեր և փառք այ է,,. և դարձեալ այ ասացեալ. “Այրասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան,,։ Այսկ եթէ ասիցես դու եթէ մարդիկ ոչ են՝ ի գոյութենէ այ, որպէս և չեն իսկ, նա և անդրիանդք պատկերացն ոչ էին՝ ի գոյութենէ Աստուածութիւն, այլ սակայն եաւն պատասպարտութիւն համարձակողքն. զի Աեպէտ և ոչ են բնութեամբ այսպիսի ոչ մարդիկ և ոչ պատկերք, սակայն պատկեր անուանեցան և կերպարան կոչեցան, և վասն դնելոյ անուանցս պարտ է պատուել զնոսա և ընդունել։ Ասու՝ ի քէն սակաւ ոսկի կոխելով, զնոյն ինքն ոսկի պատկեր է հարկանես և փշրես. նոյնպէս հաւատա և զայն....։

Այսկ եթէ այսօր և ոչ մի ոք ոչ ետ դատապարտութիւն, և այսպէս Աստուծ ոմանց ընդունելի և աջողակ լինել համարձակութիւնս այս, և զի ոչ եաւր դատաստան՝ կարծես ջնջել յանցանացն, և արհամարհես զինչ և գործես։ Այդ՝ ի միտ առ, ով սիրելի, զի զչափ ար-

համարհեմք աստ, անդ այնուհետեւ հատուցեալ մեռանիմք. եւ որքան մեղանչեմք եւ աստէն ոչ տանջիմք, մի արհամարհեսցուք, այլ առաւել երկիցուք, դիտելով զի յոր ժամ եւ կամի՝ դիւրաւ զարձեալ հատուցանէ. վասն որոյ ոչ յայնժամ տանջէ յորժամ մեղանչեմք, զի առցուք խոստովանութիւն ղջմանն:

Որ այսուհետեւ ասասցուք՝ եթէ որ ոչն էր պարտաւոր անկաւ եւ պարտաւորն ազատեցաւ: Օ՛ի յորժամ որ ոչն է պարտաւոր եւ անկանի, որպէս ասացի, զայլ յանցանաց ետ դատաստան. իսկ որ պարտաւորն էր եւ ազատեցաւ, եթէ ոչ ղջմասցի՝ յայլմէ որոգայթէ սատակեսցի: Այթէ այսպէս իմանամք, ոչ երբէք մնասնամք զյանցանս մեր, այլ հանապազ երկնչիմք եւ դողամք գուցէ դատաստանս տացուք. զի այս իսկ է պատճառ վաղվաղակի յիշելոյ: Այանզի ոչ այսպէս սովորեցաք յիշել զմեղս մեր, այլ յորժամ հասցուք՝ ի տանջանս. երկուցեալ՝ ի տանջանացն, եւ ապա յիշեմք զոր ինչ մեղաք: Այս այս յայտ եղեւ յեղբարցն Յովսէփեայ. յորժամ մատնեցին զարդարն, անցին երեքտասան ամ եւ ոչ յիշեցին. եւ յորժամ համարեցան անկանել՝ ի տանջանս, վասն վերջին երկիւղին յիշեցին զմեղս իւրեանց եւ ասէին ընդ միմեանս. "Այո՛ի մեղս եմք վասն եղբօրն մերոյ Յովսէփու,,: Ցեսանէս թէ զնարդ երկիւղն տայր յիշել նոցա զյանցանսն զայն. յորժամ մեզան ոչ զգացին, իսկ յորժամ ակն ունէին տանջանաց՝ յայնժամ յիշեցին:

Օ այս գիտացեալ ապաստուք փոխադրութիւն եւ ուղղութիւն կենաց մերոց, եւ նախ քան զփոխադրութիւն եւ զջնջս զայս վասն պահոցս բարւոյ պարկեշտութեան եւ առաքինութեան հոգասցուք: Այս արդ երիս պատուէրս առաջի ձեր դնեմ խորհիմ; զի զայսոսիկ ինձ հանդերձ պահօք ուղղեցէք. ոչ ասել գումեքէ չար, և ոչ ընդ ումեք ունել թշնամութիւն, և բոլորովին հալածել՝ ի բենէ ձերմէ զչար սովորութիւն ելգմանն: Այս որպէս լսեմք եթէ հանդերձեալ են գանձ ժողովել դիմասկան, և երթիցէ իւրաքանչիւր՝ ի տուն իւր, կոչիցէ ընկերն և զորդիս և զծառայս, և խորհուրդ առեալ միաբան՝ ուստի վճարել պարտ է զհարկն զայն, այսպէս և վասն հոգևոր պատուիրանացս այսոցիկ յորժամ լսիցէք

և աստի գնայցեք, յայնժամ մնա կոչեսցէ իւրաքանչիւր ոք զկին իւր և զորդիս և զծառայս և այսպէս ասասցէ՝ եթէ հարկ եհաս հոգևորական այսօր, հարկ որ լուծանել զմեզ՝ի կապանաց և փարատիչ և արձակիչ նեղութեանց, հարկ որ ոչ եթէ աղքատ առնել, այլ յոյժ փառաւոր զվճարողսն, ոչ ունել ընդ որ թշնամութիւն, և ոչ խօսել զումեքէ չար, և ոչ երդնուլ բնաւ։

Ջանասցուք այսուհետև, մի հեղգասցուք, խորհեսցուք մինչև կատարեսցուք զհրաման պատուիրանացս այսոցիկ. յամենայնի արիաբար մատուսցուք զփոյթ, և զմիմեանս սիրեսցուք, զմիմեանս ուղղեսցուք, զի մի պարտականս անդ երթիցուք, և ապա խնդրեսցուք փոխ առնուլ անդ առ վտանդին, գուցէ յիմար կուսանացն հանդիպիմք տանջանաց և անկանիցիմք յանմահ փրկութենէն։ Որդ եթէ այսպիսի ուղղութիւնս արասցուք կենաց մերոց, աստ երաշխաւոր լինիմ ձեզ, և խոստանամ արձակիլ ձեզ յայսմ սգոյ և փարատիլ յայսմ նեղութենէ, և որ՝ի վեր է քան զամենայն՝՝ի հանդերձեալ բարութիւնան վայելիցէք...։ Որոց լիցի ամենեցունն մեզ հանդիպիլ շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք. ամէն։

ՃԱՌ ԶՈՐՐՈՐԴ

Մխիթարութիւն առ ժողովուրդն, և վասն ներողութեան և համբերութեան օրինակաւ Յոբայ և երից մանկանցն. և վասն՝՝ի բաց կալ հանապազ՝՝ի բանից երդմանէ։

Որչափ է ահ որ մխիթարեաց զվտանգեալ անձինս ձեր և հաստատեաց զդողացեալ սիրտս ձեր. քանզի բաւական ընկալայք զմխիթարութիւն, յուցանելով զջան վաստակոյս և զյօժարութիւն աննիւթապատութեանս։ Վանգի տրտմեալ ոգի և ծածկեալ ամպով տխրութենէ ոչ կարէ լսել բանից ասացելոցն. այլ զձեզ տեսանեմ հանդերձ բազում բարեմտութեամբ և ջանիւ յօժարութեամբ, ի միտ առեալ զասացեալսն՝՝ի մէնջ և՝՝ի բաց ձգեալ զամենայն տրտմութիւնս, և զմտա-

դիւրութիւն փափագմամբ մերձ կալայք քան զմծատ-
կայ երկուսս։

Ա՛ման այսորիկ ընդ ձեզ գոհանամ զնոյ, զի ոչ փո-
խեաց՝ի ձէնջ բարկութիւնն զհամաստութիւն, և ոչ
եղոյծ երկիւղն զզօրութիւնն, և վիշտ ոչ թարշամեցոյց
զնախանձ ձեր, և ոչ յաղթեաց առ՝ի յոյծ սիրոյն մարդ-
կային երկիւղն, և ոչ կորոյս՝ի մէնջ զիոյթ դժուարու-
թիւն ժամանակիս. զի ոչ միայն ոչ խորտակեաց, այլ
և հաստատեաց. և ոչ միայն՝ի բաց ոչ արձակեաց, այլ
և մօտ կացոյց. և ոչ միայն ոչ շինաւ, այլ լուցաւ առա-
ւելապէս։ Պատարկացան փողոցք, այլ եկեղեցիս առա-
ւել լցաւ. այն արուեստ էր մնոտի զբաղման, իսկ այս
շնորհք և ցնծութիւն և պսակ հոգևորական։

Յորժամ մտանես՝ի փողոցս և տեսանես անապատ
զնա, սիրելի, հառաչեա դառնապէս, ընթացիր՝ի մայր
եկեղեցիս, և փութապէս մխիթարեսցէ զքեզ բազմու-
թեամբ որդւովք իւրովք, և ցուցանէ քեզ զդաստս ժո-
ղովելոցս, և փարատեսցէ զամենայն տրտմութիւնս քո։
Ի՛ քաղաքիս ցանկամբ տեսանել զարս որպէս որք բնա-
կեալ են յանապատի. իսկ յորժամ ընթանամք եկեղ-
եցիս, ՚ի բազմախուռն ժողովոյս նեղեալ լինիմք յոյժ։
Ո՛չ որպէս՝ի վերայ ծովու յորժամ անձրևք և բազ-
մութիւնք ալեաց խռովէն, յայնժամ՝ի նաւահան-
գիստն ապաւինեալ ամենեքեան, սոյնպէս և այժմ ա-
լիք փողոցաց և կոծումն քաղաքիս զամենեսեան եկեղ-
եցիս մատուցանէ, և զկապ անպատմոյ սիրոյ ընդ մի-
մեանս պնդէ։

Պահասցուք և վասն այսորիկ այժմ զնոյ որ յայսչափ
փորձութեան ընկալաք զօգտութիւն. զի թէ ոչ էր փոր-
ձութիւն, ոչ գոյր պսակ. և եթէ ոչ էր մարտ, ոչ էր
բրաբիոն. եթէ ոչ էր պատերազմ, ոչ գոյր պատիւ. և-
թէ ոչ էր ձմեռն, ոչ գոյին հունձք։ Այլ այս ոչ՝ի մարդ-
կայինս միայն, այլ և՝ի հոգևոր սերմանիսս պարտ է տե-
սանել. քանզի անդ բազմութիւնք անձրևաց և գումա-
րեալ ամպոց և սառամանիք և այլ ինչ բազում լինելով՝
ապա կարիցէ յառնել բոյս հասկի. և յորժամ ժամա-
նակ իցէ սերմանեաց, ժամանակ է անձրևաց։ Արդարեւ
այժմ եհաս ձմեռն, ձմեռն հոգւոց և ոչ սերմանեաց,
սերմանեացուք և մեք յայսմիկ ձմեռնային ժամանակիս,

զի ՚ի ժամանակի հնձոյ հնձեսցուք առատապէս. սերմանեսցուք արտասուս, զի հնձեսցուք ցնծութիւն։ Եւ այս ոչ եթէ իմ իցէ բանս, այլ մարգարէական է պատուէրս. “Որ վարէ արտասուօք, ցնծութեամբ հընձեսցէ ,,։

Եւ ոչ այսպէս ՚ի գալ անձրևաց զուարճանան սերմանիք և աճիցեն բոյսք, որպէս ՚ի ցօղել արտասուաց յառնեն բարեպաշտութեան սերմանք և պարարտ գտանին. քանզի սա սրբէ զհոգին, սա արբուցանէ զմտաւոր բնական զօրութիւնս և տայ ՚ի միտ առնուլ զամենայն բխումն վարդապետութեան. վասն որոյ հարկ է զակօսս զայս ՚ի խոր հատանել։ Եւ զայս մարգարէն ուսուցանէ այսպէս. “Հերկեցէք ձեզ հերկս և մի ցանէք ՚ի վերայ փշոց ,,։ Եւ որպէս ՚ի մաձս արօրոյ վաստակաւորն արկանէ ՚ի խոր և ՚ի ներքուստ պատառէ զերկիրն և ըզգուշութեամբ պատրաստէ տեղի պահատեան սերմանն, զի մի կայցէ ՚ի նոցանէ յերեսս երկրին, զի ՚ի սրտէ երկրին յառաջ արկանէ զպտուղ և զգուշութեամբ հատատէ զարմատսն, այսպէս հարկ է և մեզ առնել. ըստ օրինակի արօրոյ վարել և խզել զսիրտս խորին երկրի։ Ա՛յս է և միւս մարգարէն ասէ. “Խզեցէք զսիրտս ձեր և մի՛ զհանդերձս ,,։

Ա՛յս է խզումն սրտի, զի այսուհետև եթէ իցէ խոտ կամ փուշ՝ որ է խորհուրդ նենգութեան՝ արմատախիլ արասցուք, և ՚ի սուրբ և ՚ի պարարտ տեղւոջ պատրաստեսցուք արկանել բարեպաշտութեան սերմամբ զմաձ վաստակոյ. քանզի այսպէս իսկ է ժամ՝ սուգ հասեալ և պահք՝ որ կարեն զմեզ ՚ի զղջումն ածել։ Իսկ եթէ այժմ ոչ հերկեմք և ոչ սերմանեմք և ոչ արտասուեմք, յորժամ ՚ի դիւրութեան և ՚ի փափկութե՛ և ՚ի խրախճանս իցեմք, այսմ լինել անհնար է. քանզի դիւրութիւն և փափկութիւն զղանդաղումն և զծուլութիւն արկանէ ՚ի մեզ, զիսպէթ սգոյ և տրտմութեան որ վասն ՚այ՝ ՚ի բաց հանէ, և մոլեգնի և արտաքս ելանէ և ՚ի բազումս զմիտս ցրէ։

Ա՛պա այսուհետև մի գայթակղեսցուք վասն տխրութեանս այսմիկ, այլ մանաւանդ գոհասցուք ՚այ, զի ՚ի տրտմութենէս յայսմանէ բազում՝ շահ լինելոց է։ Եւ աստ երկրավաստակն յորժամ ցանէ զսերմն զոր բա-

զուտ աշխատութեամբ ժողովեաց, յայնժամ և աղօթեայն իսկ հանապազ ի բազում շինիք անձրևաց ի Քանիցն։ Իսկ անգէտ քաղաքային յորժամ տեսանէ զամենայն եղեալան սքանչանայ, և սակայն ասիցէ ընդ միտս՝ զինչ գործէ այրս այս, զժողովեալն ցրէ. և ոչ միայն ցրէ, այլ և բազում Քանիս խառնէ ընդ երկիր մինչ ոչ է հնար վերստին ժողովել. և ոչ միայն ընդ երկիր խառնէ, այլ և աղօթս առնէ լինել սաստիկ անձրևաց մինչև ապականեսցի ամենայն և լինիցի նեխ։ Այսպէս զարհուրի յորժամ տեսանէ զհնչուճն որոտմանց և զբերել կայծակմանց. իսկ երկրավատաին ոչ այսպէս է, այլ մանաւանդ ուրախանայ ցնծալով ի տեսանել զգարունն. զի ոչ երբէք զհասեալն տեսանէ, այլ միայ հանդերձելոյն. ոչ հայի յորոտմունսն, այլ խնդայ վասն վաստակին։

Այսպէս և մեք արասցուք, մի՛ ի հասեալ տրտմութիւնս և յերկուս հայեսցուք, այլ որ յայտնեն լինելոց է մեզ օգտութիւն երբէք զսոսա կրեմք համբերութեամբ...։ Մի՛ ծփեսցուք այսուհետև՝ ի հասեալ դժուարութիւնս, այլ գոհութեամբ՝ի մեզ ընկալցուք։ Վասնզի երբ ունիցիմք մեզք՝ի տրտմութենէ, փութապէս ջնջին և լինի անյայտ. իսկ երբէք առաքինութիւն, առաւել փայլէ և պայծառանայ յայտնի. ապա թէ հանապազ ոչ տքնիս և կաս արթուն, մեծագոյն քան զամենայն ինասս գործէ քեզ. ոչ՝ի փորձանացն բնութենէ, այլ փորձեալքն՝ի ծուլութենէ դիւրամատութիս յինքեանս գործեալ յայտնին, քանզի՝ի դիւրութիւնս և՝ի հեշտութիս կամին վայելեալ։ Այլ զու մի խնդրեսցես հանգիստ և հեշտութիւն, այլ խնդրեա հոգի լցեալ ներողութեամբ և համբերութեամբ և՝ի սմին կարողացուցանել զքեզ. իսկ երբէք զայս ոչ ունիցիս, ոչ միայն՝ի փորձութեան, այլ թէ և՝ի դիւրութեան իցես, կորուսանիկ և խորտակ առաւելապէս։

Օ՛ի ոչ երբէք նեղութեանն է վանուճն՝ այլ դանդաղութիւն իմաստից մտացս մերոց դարձուցանէ զփրկութիւնն մեր, լուր այժմ զինչ ասէ Քրիստոս. "Ամեն՝ նայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստնոյ որ շինեաց զտուն իւր՝ի վերայ վէմ. իջին անձրևք և յարաշին գետք, շնչեցին հողմք

և բախեցին զտունն և ոչ կործանեցաւ, քանզի ՚ի վէրայ վիմի հաստատեալ էր։ Եւ որ լսէ զբանս իմ զայսոսիկ և ոչ առնէ, նմանեսցի առն յիմարի որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ աւազոյ. իջին անձրևք, յարեան գետք, շնչեցին հողմք և բախեցին զտունն և անկաւ, և էր կործանումն նորա մեծ յոյժ ,,։ Տեսանէս զի ոչ փորձուածոյ է վանումն, այլ որոց շինեցին ոչ զգաստութեամբ, այլ անմտութեամբ, այն իսկ արար զկործանումն։ Վանզի անձրևք անդ և աստ, անդ գետք և աստ, անդ վանումն հողմոց և աստ նոյնպէս. նա շինեաց և սա. շէնն մի և փորձութիւնքն մի, այլ ոչ այսպէս և վախճանն, զի և ոչ նոյնպէս հիմունքն։ Վանզի որպէս ասացի, ոչ եթէ փորձութեանն բնութիւն, այլ ստացողին անմտութիւնն գործեաց զկործանումն, որոյ պարտ էր ՚ի վերայ վիմի դնել զհիմն շինուածոյն, այլ ոչ այսպէս կամեցաւ։

Ա՛րդ դու մի վասն տան համարիցիս զաստացեալսն, քանզի վասն հոգւոյ են առեղծուածք այս որ ասեն զբանիցն զունկնդրութիւն գործովք ցուցանեն։ Այսպէս շինեաց զանձն իւր երանելին Յոբ։ Իջին անձրևք. հոսը, ասէ, կէտ յերկնից և եկեր զամենայն հօտսն։ Յաբեան գետք. ոչք. ստէպ և զինի միմեանց զանազան հրեշտակք վշտացն, ոմանք յերիվարացն, ոմանք յանդուացն, ոմանք յուղտուցն, և ևս որք ասացին զկորուստս որդեկայ իւրոց։ Եւ նշեցին հողմք, որ են գառն բանք կնոջն որ ասէր առն. “Այսօրեա բան ինչ ՚ի տէր և վախճանեաց ,,։ Այլ ոչ անկաւ տունն, և ոչ հողովեցաւ հոգի նորա, և արդարն ոչ գայթակղեցաւ, այլ գոհացեալ ասէր այսպէս. “Տէր ետ և տէր առ. որպէս հաճոյ է տեառն, այնպէս եղիցի ,,։ Տեսանէս զի ոչ բնութիւնք փորձութեանց, այլ դանդաղական ծուլութիւնք զկործանումն արասցեն։

Իսկ հոգի հզօր որչափ է հզօր, փորձութիւնք այլ հզօրագոյնս գործեն։ Ո՛վ ասէ զայս. նա որ հասեակ ՚ի փորձութեանց շրջէր երանելին Պաւղոս. ասէ. “Նեղութիւք զհամբերութիւն գործեն, համբերութիւնն զհանդէս, հանդէս զյոյս ,,։ Որպէս ծառք ՚ի գնացս հոգմոց զօրաւոր և հաստատուն լինին և աստիճ տարութեբեալ ոչ խլին, այլ ՚ի վանելն պատրաստք գոն, այսպէս և հոգիք

սուրբք և պարկեշտութեամբ կացեալ ոչ անկանին ՚ի ժողովել փորձութեանց, այլ առաւել զինքեանս ՚ի համբերութեան կացուցանեն. որպէս և երանելին Յոբ զոր պայծառագոյն և փայլակնաձև արարին: Ընդ այժմ մարդ էր որ բարկացաւ մեզ՝ նմանակից մեզ, և երկեաք յոյժ. իսկ նմա յայնժամ դև չար և գազան անհնարին էր որ բարկանայր, և ոչ միայն բարկանայր՝ այլ և շարժէր զամենայն մեքենայս իւր և մատուցանէր զամենայն հնարագիտութիւնս իւր, և ոչ այսպէս կարաց յանդիմանել զղջութիւն արդարոյն...:

Այս միշտ ընդ միմեանս ասասցուք, սիրելիք. վասն այսր ամենայնի միսիթարեսցուք զանմիւսս: Ով վկայք իսկ դուք էք և խնդացողք ձերոյին եղելոյդ՝ եթէ որչափ ՚ի փորձանացս յայսցանէ ընկալայք շահս: Միթարտութեանն այժմ եղև հեզ, յանդուգն հանդարտ, ծոյլն կայտառ. և որ ոչ երբէք յեկեղեցի մտանէր, այլ ՚ի հրապարակս կալ բարի համարէը, այսօր փոյթ և բարի յեկեղեցի համարձակեցան լինել: Ասն այսորիկ տրտմիս, ասա ինձ, զի հանդերձ ահիւս զգաստ զքեզ արար ած, զի զքեզ ՚ի տրտմութենէս յիմաստութիւն ած քոյին փրկութեան... և զքեզ որ մանաւանդ ՚ի փորձանս հանմարիս կալ, խորհի շինողացեալ զքերմութիւնս զայս, այլ ինայ քոյին փրկութեան: Կանզի որպէս ՚ի դիւրութէ տրտմութիւն, այսպէս և ՚ի տրտմութենէ պարտ է ակն ունել դիւրութեան: Ով ի ոչ հանապազ ժամանակ ձմեռայնոյ և ոչ հանապազ հունձք, ոչ համակ ալիք խռովութեան և ոչ միշտ խաղաղութիւն ՚ի վերայ ծովու, ոչ յարակայ ամիս և ոչ միշտ գիշեր. այնպէս ոչ հանապազ տրտմութինք, այլ եղիցի և դիւրութիւն. միայն եթէ ՚ի տրտմութեանս միշտ զոհասցուք զնոյ:

Կանզի և երեք մանկունքն ՚ի հնոցին ածան, և ոչ այնպէս մոռացան զառաքինութէն, և ոչ երկեցոյց զնոսա բոցն. այլ որպէս յառագաստի բազմեալք ՚ի սաստիկ ջարչարանս նեղութեան փութապէս ՚ի պաշարել հրոյն զսուրբ ձեռս իւրեանց տարածանէին յաղօթս: Ասն որոյ պարիսպ եղև նոցա հուրն բոլորեալ և բոցն պատմուճան և հնոցն աղբիւր. և կապեալս զնոսա առեալ՝ ետ արտաքս արձակեալս. առեալ մարմին մահկանացու, և որպէս զանմահս ընկալաւ. կապեաց զոտս նոցա բրա-

նաւուրն, և կապեցին ոտք նոցա զղօրութիւն Հրոյն։ Իվ սքանչելի զարմացմանն. բոցն զկապեալսն արձակեաց, և ինքն Տէրն 'ի կապելոցն կապեցաւ, փոխարկեալ իսկ զբնութիւն Հրոյն մանկանցն զդուշութիւնն։ Այլ դարձեալ զի բնութիւնն ոչ փոխարկեցաւ, այս են բազմացան սքանչելիք. Քանզի բնութեամբն Հուր, և ցուցաներ զղօրութիւն իւր. քանզի Հուրն ոչ շիջանէր և ոչ զբորբոքին խափանէր։

Այս և այս են զարմանք սքանչելեաց, զի ոչ 'ի մարմնոյ սրբոցն միայն եղև, այլ և 'ի հանդերձս և 'ի կօշկիս նոցա. և որպէս առաքելոցն եղև, քանզի պատմուճանն Պաւղոսի զդևս հալածէր և ստուերն Պետրոսի զմահ լուծանէր, սոյնպէս և աստ կօշկիք մանկանցն շինուցին զղօրութիւն Հրոյ ...։ Այլ յորժամ մարմինք սրբոցն խօսէին, Հուրն շիջաւ. իսկ յորժամ 'ի կապանան Հոտոտեցաւ և խղեաց, ոչ շիջաւ. զկապանսն խղէր, և 'ի հերս սրբոցն ոչ մերձենայր ...։ Ոտնաւուրն կապեաց, և Հուրն արձակեաց. զի ուսանիցիս զբարբարոսին բարկութիւնն և զՏնօրհն լսելութիւնն։ Իսկ ընդէր կապեաց յորժամ կամէր 'ի Հուրն արկանել. զի այսուիկ մեծագոյն լինիցին սքանչելիքն և զարմանալն նշանն երևեսցի, զի մի կարծիցես եթէ առաւօտ ինչ երևումն էր. եթէ ոչ էր Հուրն Հուր, ոչ Հոտոտէր զկապանսն։ Այլ որ այլ ևս մեծագոյն, ոչ զարտաքոյ նատեալ զինուորսն յափշտակէր. բայց անդ որ արտաքոյ նստեին՝ Հուր եցոյց զղօրութիւնն, և որ 'ի ներքս՝ զլսողութիւն։

Այլ դու զդուշութեամբ միտ դիր ամենայնի թէ զիարդ սատանայ մարանչն ընդ ծառայս Ա, և 'ի ձեռն այնոցիկ քակի ամենայն զօրութիւն նորա, ոչ իւրովք կամօք, այլ Ա իմաստութեամբն, որ բարի Հնարիւք զնորա մեքենաւոր ներգործութիւնն 'ի նորին գլուխն դարձուցանէ, զոր և աստ իսկ տեսանեմք։ Յորժամ սատանայ Հնչեաց 'ի բռնաւորն յայն, ոչ զրգռեաց զսիրտ նորա Հատանել սրով զգլուխս նոցա կամ արկանել գազանս նոց կամ այլ այսպիսի օրինակաւ տանջել, այլ արկանել 'ի Հուր, զի մի ծնասցեն մարմինք սրբոցն այնոցիկ. կամէր և զսկերս նոցա անյայտ առնել, և զաճիւն նոցա ընդ մխիր օրհոյ խառնեալ։ Իսկ Ա տեղի ետ այսմ, զի բարձցէ զամբարշտութիւն նոցա. և թէ որ-

պէս՝ ես ասացից ։ Ի պարսիկս զՀուլն ՚ած կարծէին. և բարբարոսքն որ բնակեալ էին յերկրին յայն, պատուէին զնա հանդերձ բազում հաճութեամբ, և մինչև ցայժմ իսկ. կամեցաւ ՚ած այնուհետև յարմատոյ հատանել զամբարշտութեան պատճառն. Թոյլ ետ այսու օրինակաւ տանջել սրբոցն, և առաջի աչաց ամենայն ապրստամբացն ետ ծառայից իւրոց զյաղթութիւն, զի ՚ի գոլ ծոց իւրեանց հաւանեցուսցէ զնոսա Թէ աստուածք նոցա ոչ միայն չ՚ին, այլ և ՚ի ծառայից նորա երկնչին յոյժ ։

Իսկ դու միտ դիր վկայիցն յաղթութեան առ Քրիստոս, և Թէ զիարդ հակառակորդքն հիւսէին զնմանէն ։ "Իսկ հրաման ետ, ասէ, Կաթուղոսինոսոր արքայ ժողովել զամենայն զօրաւարս և զզօրագլուխս, զիւսայկալս, զպետս և զառնաւորս, զգործակալս և զամենայն իշխանս աշխարհացն գալ ՚ի նաւակատիս պատկերին ղոր կանգնեաց արքայն Կաթուգոսինոսոր. և ժողովեցան ամենեքեան ,, ։ Ժողովեաց Քրիստոն զտեսիլն, և դարձեալ ինքն և տեսողքն զարհուրեալ գտան ՚ի սքանչելեացն ։ Կոյն ինքն յարոյց զպատերազմ և զհանդէսն. ոչ եթէ զինչ և պէտ հարևանցի մարդկան տգիտաց, այլ պատուականաց և ընտրելոց ամենեցուն, զի արժանահաւատալ լինիցի վկայութիւնն բազմաց ։ Իկին կոչեցեալքն վասն այլումն պատճառի, և տեսին այլ սքանչելիս, և գնացին զարհուրեալք. եկին երկիր պադանել պատկերին, և այսն արարեալ զպատկերն գնացին։

Այլ տես Թէ ուր եդաւ ասպարէզս այս. ոչ ՚ի քաղաքի և ոչ յեզեր ուրեք, այլ յայտնի լերնադարձակ դաշտի բարձրացաւ տեսիլ արարածոյն. քանզի ՚ի դաշտին Կայերայ արտաքոյ քաղաքին կանգնեաց զպատկերն, և քարոզ կարդայր զօրութեամբ և ասէր. "Զեզ ասի ազգ և ազինք և լեզուք, յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրնգի, զթմբկի, զտաւղ, զերգոց միաբանութեանց և զամենայն ազգաց արուեստականաց, անկանիջիք և երկիր պագանիջիք պատկերին ոսկւոյ զոր արարի ,, . այնպէս պարտ է, ասէ, անկանել և երկիր պագանել կռոցն. "և որ ոչ անկեալ երկիր պագանիցէ, ՚ի նմին ժամու անկցի ՚ի հնոց հրոյն բորբոքելոյ ,, ։ Տեսանէս Թէ զիարդ չարաչար լինի մարտն, և որչափ հրամանացն նեղութիւնք. այլ դու մի երկնչիր. զի որչափ չաւելու և աճեցուցա-

նէ զմեքենայս իւր Թշնամին, այնչափ մանաւանդ առա-
ւելապէս զմանկանցն առաքինութիւն։

Այսոյ որոյ այնչափ երգք միաբանութեան, ընդ նմին
և աստուածութիւն հրոյն բորբոքելոյ, զի ահ և երկիւղն
բազմապատիկ զանձինս եկեղցին զարհուրեցուցանէր։
Այսիա էր խորհուրդն 'ի վերայ մարգկանն և դժուարա-
խոհ, այլ և ամենայն արուեստք եղանակօք երգոյն միա-
ձայնութեանց զոգիս լսողացն կակղացուցանէր, և մեծ
զխորհուրդն տայր վարկանել։ Այսկալի էր և երկեղա-
կան տեսիլ բոցոյն, և էր ահ և երկիւղ ամենեցուն.
նախ հուրն բորբոքեալ, և զի աչօք բերկին զերկիւղն
յանձինս իւրեանց։ Այլ այն ամենայն զարհուրական ման-
կունսն ոչ յանդիմանեաց...։

Այս յորժամ ամենեքեան երկիր պագին և յաղթե-
ցան, ապա 'ի մէջ մատուցին զմանկունսն, զի պայծա-
ռագոյն լիցի յաղթութիւն նոցա. զի թէ միայն յայն-
չափ բազմութենէ ժողովոյն յաղթեալ բնաւորն և նա-
քա քարոզեալք էին, ոչ էին այնպիսի սքանչելիք, յոր-
ժամ ոչ էր ոք դայթակղեալ և սոքա առաջի կացեալ
էին և քաջալերեալ։ Այլ այս է բարձրագոյն և զար-
մանալի, զի անկումն բազմութեանն ոչ երկեցոյց զնո-
սա, և ոչ ասացին զայն զոր բազումք բազում անգամ
ասացին. եթէ նախ միայն մեք հանդերձեալ էաք եր-
կիր պագանել պատկերին, յիրաւի պատժէաք. իսկ զկնի
այսմ ամենայն բիւրուցս երկիր պագանել՝ ո՞վ է որ ոչ
առնէ Թողութիւն, կամ ո՞վ որ ոչ առնէ արժանի պա-
տասխանւոյ։ Այլ ոչ ինչ յայսցանէ ասացին, և ոչ ըզ-
մտաւ ածին ինչ այսպէս նոքա։

Այիա դիր աստանօր և մատնողաց նոցա չարագործու-
թեանն, որպէս չար սովորութեամբ և դառնութեամբ
իւրեանց բամբասէին զսուրբսն. "Այն աստ արք Հրեայք
զորս կացուցեր 'ի վերայ աշխատիս բաբելացւոց,,։ Այ-
եթէ միայն յանդիման ազգացն յիշեցին զանուանս ման-
կանցն և զպատիւ իշխանութեան նոցա Թողին, այլ որ
առաւել բորբոքեր զբարկութիւն Թագաւորին՝ զայն բե-
րէին 'ի մէջ, եթէ զծառայն զդերիան զկորուսեալն
զոր կացուցեր իշխանս 'ի վերայ մեր, նոքա զայսչափ
պատիւս անարգեցին և Թշնամանեցին զպատուողդ։
Այսն այսորիկ ասէին. "Այբարեցիքն զոր կացուցեր

'ի վերայ աչխարհիս բաբելացւոց, որ ոչ հնազանդեցան հրամանաց քոց և զդիս քո ոչ պաշտեն ,, : Ա՛ՀԱ է գովեստ այսր քննութեան, և լի ազատութեամբ պարտաւորութիւնս :

Օ՛ինչ ասէ Թագաւորն. հրամայեաց ընոսա ածել 'ի մէջ, և յամենայն կողմանց երկեցուցանէր զնոսա : Այլ ոչ ինչ զնոսա ահաբեկեաց, ոչ սրտմտութիւն Թագաւորին և ոչ զի 'ի բազմային նոքա միայն մնային հակառակ Թագաւորին, ոչ հրոյն տեսութիւնն և ոչ հնչումն ձայնիցն. այլ զայս ամենայն ծաղր առնէին, և 'ի հուրն որպէս 'ի ցօրտ աղբիւր կամելով մտանէին. և յորժամ մերձեցան 'ի հնոյն, ելեսանելի զձայնն զայն հնչեցեալն ասելով՝ Թէ "Օ՛ աստուածս քո մեք ոչ պաշտեմք, և պատկերի ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեմք ,, :

Այլ զկենսայս ձայնս զայս ոչ նոքա միայն հնչեցին, այլ զի և մեք ուսանիցիմք Թէ զարդարն ոչ սրտմտութիւն Թագաւորական և ոչ խորհուրդք զինուորաց, ոչ նախանձ Թշնամեաց, ոչ գերութիւն, ոչ հուր և ոչ այլ բիւր նեղութիւնք երկեցուցանել և յանդիմանել կարեցեն : Այլ Թէպետ և սաստիկ ամբարիշտ եր Թագաւորն՝ ոչ զարհուրեցան մանկունքն անդ 'ի խստութենէ բռնաւորին, ապա և մեզ մանաւանդ պարտ է բազում յոյսով կալ այժմ, քանզի մարդասէր բարի և հանդարտ ունիմք Թագաւոր . . . :

Այլա այսուհետև զամենայն հոգս անձանց մերոց 'ի բաց մերժեսցուք և եկեսցուք 'ի մեզ ինքեանս, և զարդարեսցուք զոգի և զմարմին մեր զարդուք առաքինութեան, զինու արդարութեան և մի ծածկեսցուք զանդամս մեր զինու մեզաց : Այդ նախ քան զամենայն ուղղեսցուք ղեղուս մեր լինել սպասաւոր Հնոցհաց Հոգւոյն սրբոյ, և զամենայն Թոյնս չարութեան 'ի բերանոց մերոց 'ի բաց հանցուք և ղխորհուրդս գարշելի բանից. քանզի մեք եմք տեարք չարեաց և արդարութեան, և յոր կողմ և կամիցիմք իբր զնուագարանս 'ի ձեռին լինին անդամք մեր : Այլ այժմ զիարդ ղեղուս ոմն մեզաց և ոմն արդարութեան զէն արասցե . քանզի ասէ . "Այեղուք նոցա որպէս սուր սուսերի ,, . իսկ վասն իւր, "Այեղու իմ որպէս գրիչ արագագիր գոլոն ,, : Տես զի

միւնն սպանումն գործեաց, իսկ միւսն օրհնս գրեաց հո-
գևորականս. ըստ որում միւնն սուր և միւսն գրիչ կո-
չեցան ոչ ինքեանց բնութեամբ, այլ՝ ի կամաց յոր սա-
վորեալ էին. քանզի բնութիւն լեզուի մի է, այլ գործքն
չէ մի։ Պարձեալ վասն բերանոյ այսպէս ասէ. "Կնիճք
և դառնութիւն և նենգութիւն՝ ի բերան նորա,. յայտ
արարեալ թէ՝ ի կամաց ունիք զբերանս իւրեանց թու-
նիւք և չարեօք են լցեալ. և նորա ոչ այսպէս, այլ "Կե-
րան իմ խօսեսցի ճշմարտութիւն և խորհուրդ սրտի
իմոյ զհանճար,։

Այս զձեռսն՝ ունիք, ասէ, ունկին ձեռս լցեալ անօ-
րինութեամբ, զորս անդոնեալ ասէ. "Ձեռք նորա աղ
է մեզաց, և ձեռք նորա լի են արեամբ,։ Ուներ և ինքն
ձեռս, որ ոչ այլ ինչ գործէր, բայց միայն յերկինս տա-
րածանէր կարգալ առ Աստ. "Համբարձումն ձեռաց ի-
մոց, ասէ, պատարագ երեկոյին,։ Պարձեալ վասն սրբո-
ւի Հոգւոյն ասէ. "Ի սիրտս իւր ժո-
ղովեաց զանօրինութիւն, և սիրտ նորա նանրեալք են,։
Իսկ վասն իւրոց անձինն ասէ. "Խոհեաց սիրտ իմ ըզ-
պատգամս քո բարիս, և առացից զգործս իմ թագա-
ւորի,։ Այս վասն ականջաց այսպէս տայ իմանալ, եթէ
ունիք ունկին լսելիք գաղանային յանդուգն անզեղջ, և
՝ի չարիս վարին նորօք, ասէ. "Ունկն իմ լուիր և քարըթ
զի խցեալ է զականջս իւր,։ Այլ ինքն լսելիօք ընդու-
նէր զաստուածային զբանն զկանխաւ յայտնեալսն. "Լսելի
արա ինձ զցնծութիւն և զուրախութիւն,. և թէ "Հա-
ցիւ առակաւ զբերան իմ,. և դարձեալ "Հացից զբե-
րան իմ յերգս օրհնութեան,։

Այսպա ամենայն իմացեալ յաստուածային չարեաց սպարըս-
պեսցուք զանձինս մեր, և այսպէս յանդիման լինիմ մեզ
բարութիւնն Նորա։ Ըզդ արասցուք զանդամս մեր զկեն ար-
դարութեան Նորա, և զաչս և զբերան, զձեռս և զոտս,
զսիրտ և զլեզու և զամենայն անդամս մեր խրատեսցուք
առաքինութեան ընդունելի լինել. և զասացեալսն սի-
րոյ ձերոյ զերիսն զայն զկրատ յիշեցեք, զոր աղաչե-
ցաք՝ մի ունել ոխս, և մի խօսել չար որոյ տրտմեցու-
ցանեն զձեզ, և զչար սովորութիւն երդման՝ ի բաց բար-
ձեք՝ ի բերանոյ ձերմէ։ Ըզդ վասն այլ երկուց պա-
տուիրանացդ յայլում ժամանակի պատուիրեմ ձեզ, զի՝ ի

դիւրագոյն պատուիրանէս արարից սկիզբն. քանզի և չէ իսկ աշխատութիւն փոխել ձեզ ի սովորութենէ երդմանն . . . :

Օ ինչ օգուտ է մեզ միայն ի կերակրոյ ի բաց կալ, եթէ ոչ հալածեմք յանձանց մերոց զչար սովորութիւն: Ահա այսօր յամենեսեան տեսանեմք կատարեալ զրոյս ընկալան. քանզի հաց և սեղան ընդ երեկս առաջի դնեմք որ ոչ է նման որպէս յերեկին և յեռանդն, այլափոխեալ է, սեփական և պարկեշտ: Երդ ի՞նար ուժք ի մէնջ յայսմ կենաց փոխել և ի սեղանոյ. ոչ, որպէս Թուխ ինձ. բայց ոչ ինչ օգտիմք միայն ի պահոցս: Ասան որոյ աղաչեմ և յաղաչելոյ ոչ դադարեմ մինչև իւրաքանչիւր ոք ի ձէնջ զպատուիրանս ի միտ առցէ. հանապազ երկուս և երիս աւուրս ի յուզութիւն պահոցս սովորիմք: Որպէս են ոմանք որ ի միմեանց պատուասիրեալք են ի բաց կալ ի կերակրոյ, և աքանչելի և անպատմելի զպահն կատարեն, և ոմանք զերկուս աւուրս անցուցանեն պահօք, այլք համօրէն ոչ միայն ի գինւոյ և ի ձիթոյ ի բաց կան, այլ յամենայն ի հեշտալի կերակրոց զպէտս իւրեանց ի բաց եդեալ հացիւ և ջրով միայն շատանան, զամենայն աւուրս քառասնորդացս այսպէս կատարեն, նոյնպէս և վանս այսր պատուիրանի հաստատեսցուք առ միմեանս՝ զերդմանցն չար սովորութիւնն ի բաց կորուսանել: Այս է պատուական քան զամենայն պահս, այս է շահաւէտ քան զամենայն խոստմերութիւն և քան ի բաց կալ ի կերակրոց զոր յուցանեմք: Մինչև ի վերջին աւուրն կացուք ի դատապարտութեան ըստ այսր անմտութեան. զի զոր արգել ՚ած չառնել, արհամարհեմք. զկերակուր ոչ երբեք արգել ի մէնջ, իսկ զերդումն կարի յոյժ. մեք զոր կրելին է ի բաց կամք, և զոր՝ արգել՝ յայն անխոհեր համարձակիմք:

Ասան որոյ աղաչեմ զձեզ յայնմանէ փոփոխել ձեզ. զի ձէն այսու ջանիւ զայս մի պահս վարեսցուք . . . , յայսմ նեղութենէ աղատեալ գտանիմք, և առնեմք զ՚ած ողորմած ի վերայ մեր, և դարձուցանէ զբազմութիւն ժողովրդեանն ի քաղաքս մեր: Այժմ զևտնիճաղանջն խրատեացուք մի տեղով զգուշութեան և մի փախստիւ հեռանալ, այլ պարկեշտ հոգւով և գործովք առաքի-

նուԹեան ունիցիմք զյոյն այսոցիկ, զի ասա և ՚ի հան-
դերձեալն ընկալցուք զաւրի ընդՀօք և մարգասիրու-
Թեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի,
ընդ որում Հօր միանգամայն հանդերձ Հոգւովն սրբով
փառք յաւիտեանս. ամէն:

ՃԱՌ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Դարձեալ առ ժողովուրդն զի քաջուԹեամբ տանիցին եկեղց սպառ-
նալեաց օրինակաւ ՚ի գրոց հափառոր պատմուԹիւն Յոբայ և նինուէա-
ցւոցն. և զի քան ՚ի մահուանէ ՚ի մեղաց պարտ է երկնչել. և Թէ ամե-
նայն ջանիւ պարտ է փախչել յերկմանէ:*

Ո՛Վ երկիւղ մանկանցն և գՀնոցին բաբեղայսւոյ պատ-
մուԹեամբ չափաւորուԹեան զիարդ պարտ իցէ միսի-
Թարել և աղաչել զսէր ձեր՝ երկիւղ առացաւ. և առա-
ւել այսօր ՚ի պատմուԹենէն Յոբայ և զվերս արդա-
րոյն և զաղաւնան յիշեսցուք, զայն աղաւնան որ պատու-
հանագոյն է և սեփական քան զաԹոռ Թագաւորական:
Վանդի ՚ի Թագաւորական աԹոռոյ ոչ շահ ևս իցէ տե-
սողացն. առաժամայն Թուի վայելուչ, այլ միսիԹարու-
Թիւն ոչ ունի: Իսկ զՅոբ տեսանելով յաղաւնան, ա-
մենայն օգտուԹեամբ լինու և բազում իմաստասիրու-
Թեամբ: Ա՛ման որոյ ընդ ծով եւընդ ցամաք գան հեռա-
գոյն ՚ի ծագից աշխարհի և փուԹան յերկիրն արաբա-
ցւոց տեսանել զաղաւնան զայն, և տեսեալ երկիր պա-
գանեն, և զվարս ուսանին զայնմ պսակելոյ, և զա-
րեանն ցնդումն որ պատուականագոյն է քան զոսկի.
քանզի ոչ այսպէս պայծառագոյն փայլեն ծիրանիքն որ-
պէս մարմինն այն, ոչ Թէ ՚ի նարօտաներկաց, այլ յիւր-
մէ արևնէն ներկեալ: Այս վերքն այն պատուականագոյն
է քան զականս պատուականս. քանզի բնուԹիւնք ա-
կանց և մարգարտի ոչ լինչ օգտեն վշտացելոց, այլ այն
վերք միսիԹարիչ է ամենայն տրտմուԹեան:

Այս զի ուսանիցիս Թէ Ձնմարիտ այսպէս է, Եթէ կո-
րուսանէ ոք որդի հարազատ և միածին, զոյց նմա բազ-
մուԹիւն մարգարտի, և ոչ միսիԹարի սուգն և ոչ բժըշ-

կին երկունքն. իսկ յորժամ զվերան Յոբայ լիշեսցես, դիւրաւ փարատես զցաւս վշտացն ասելով այսպէս. ընդ դէր ողբաս, ով մարդ, դու կորուսեր մի որդի, և երանելին այն բոլորովին բաժանեցաւ'ի դասուց սրդուոյ իւրոց, և դարձեալ մարմնով իւրով ընկալաւ խոցումն վիրաց սատիկ յոյժ, և մերկ նստեալ'ի վերայ աղբեւաց՝ որդնալից եղեալ և որդունք գնային'ի նմանէ: Ո՛ւր փոքր մի և քնաւին մաշեալ լինէր մարմին արդարոյն, արդարն, Ճշմարիտն, ամենապատճառն, խոտորեալն յամենայն չարեաց, որ զայծ ունէր վկայ իւր առաքինութեանն: Յորժամ ասիցես զբանս զայս վշտացելոյն, զամենայն վիշտս սրտին փարատեցեր և բարձեր զամենայն երկունսն. և յայնժամ երևեսցի վերջ արդարոյն պատուական քան զվերծագին մարգարիտս:

Կենդանագրեսցուք այսուհետև յանձինս մեր զըմբիշն զայն բարեպաշտութեան, և համարեսցուք եթէ տեսեալ եմք զաղբևան զայն և զարդարն նստեալ'ի վերայ նորա, զկերպարանն Ճշմարիտ, զգեղեցիկն քան զամենայն ասկի պատկերաց, զորոյ զորպէսն ասել ոչ գիտեմ. և կարի՞մ գտանել նիւթ պատուական այնպիսի որ կարիցէ յաղթել ախտացեալ մարմնոյն այնմիկ. զի բազմայ որոց չուրջ Հային, քան զամենայն նիւթս պատուական է բնութիւն այնր մարմնոյ, և վերջն պայծառագոյն քան զնշոյլս արեգական. քանզի փայլումն արեգականս զմարմնոյ աչս լուսաւորէ, իսկ նորա տեսակ ըզմիտս ամենեցուն լուսաւորէ. այն տեսիլ միանգամայն զատանայ կուրացոյց և անցեալ'ի բաց գնաց և այլ ոչ ևս երևեցաւ յետ այնորիկ:

Ո՛ւր ինքնին, սիրելի, յայտանէ ուսիր եթէ որչափ իցեն շահք'ի տրտմութեանց եթէ գոհութեամբ բերիցես: Յորժամ արդարն մեծանայր և էր'ի դիւրութեան, արհամարհէր զնա սատանայ. թէպէտ և տուտ էր, սակայն գտանէր պատճառս ասելով. "Մի՞թէ ձրի պաշտէ Յոբ զտեր,,: Իսկ յորժամ մերկացոյց զնա և արար աղքատ, ոչ համարձակէր չընդդէմ լինել: Յորժամ'ի մեծութեան էր, խրոխտայր մարտնչել ընդ նմա և գայթակղեցուցանել սպառնայր. իբրև աղքատացոյց, 'ի բաց գնաց: Յորժամ առողջ էր մարմնով, սատանայ համբառնայր զձեռս իւր. իսկ իբրև եկաց վիրօք զան-

դամն արդարոյն, խոցեալ փախեաւ։ Ցեսէր Թէ որչափ վերագոյն է աղքատութիւն քան զմեծութիւն և հիւանդութիւն քան զառողջութիւն և փորձութիւն առաւել քան զդիւրութիւն, որք զուարթութեամբ ընդունին, և այնու պատուական և պայծառ արասցեն։

Ո՛վ ետես կամ ո՛վ լուաւ այսպիսի մարտ աքանչելի։ Յարտաքին պատերազմունս մրցողք յորժամ զընդդիմակացն զգլուխն հատանեն, յայնժամ յաղթողք եւս լեալ պակկին. իսկ աստ յորժամ եհար զմարմին արդարոյն ազգի ազգի վշտօք և թարախ վիրացն գնայր, յայնժամ յաղթահարեցաւ և գնաց ՚ի բաց։։։ Օ՞ինչ եղև, ո՛վ սատանայ, վասն էր արդեօք հեռացար. ո՞չ զոր կամեցար՝ ամենայն եղև, ո՞չ սատակեցեր զՀօտս նոքա, զխաչինս, զերամակս երիվարացն, զիշոց և զՋօրուց, ո՞չ և զգաստս արդւոց նորա կորուսեր և զամենայն մարմինն հարմամբ խոցեցեր. արդ վասն էր հեռացար աստ ինձ։ Ա՛ն զի ամենայն որպէս կամեցայ՝ եղև, ասէ. և վասն որոյ լինելն կամեցայ ընդ որոյ մնասուանդ զամենայնն արարի՝ այն ոչ եղև, և ոչ գայթակղեցաւ արդարն. վասն այնորիկ զամենայն արարի, զի այս զոր կամեցայ՝ եղիցէ ՚ի բերանոյ նորա։ Այս իսկ ոչ եղև, յերկեղից միասուցն և ՚ի կորստենէ որդւոցն և ՚ի վիրացն դամնոյն ինձ առաւելութիւն ոչ եղև. այլ քանզի խորհեցայ լինել ինձ հակառակն եղև, և զիմ թշնամին պայծառացոյն և փայլակնաձև գործեցի։

Ա՛մացայք արդեօք, ո՛վ սիրելիք, եթէ որչափ չահք ՚ի տրամական փորձութեանց լինի։ Վարիսք և յորժամ ողջանդամ օք իցէ. և ես առաւել սեփական լինիմ յորժամ հարկանի վիրօք ամենայն մարմինն եթէ գոհանայցէ. քանզի սպիտակն գեղեցիկ երևի, այլ յորժամ կարմրանայ՝ անբաւ առնու զվայելչութիւն գեղեցկութեան։։։ Ա՛յսպէս պայծառացոյն և արքայ նրստեալ ՚ի վերայ աթոռոյ իւրոյ, որպէս արդարն այն մեծատահաս էր և բարձրագոյն. զի զկնի Թագաւորական աթոռոյն՝ մահաբեր վիշաքն, և զհետ այնմ աղբևացն՝ երկնից ալքայութիւնն։

Օ՞այս խորհեսցուք ամենեքեան և հանցուք ՚ի բաց զտխրութիւնս որ կալեալ է զանձինս մեր։ Այս ես վասն այսորիկ առաջի դնեմ ձեզ զտհմ արդարոյն ոչ զի զո-

վերջից վասայեալս, այլ զի նմանողք լինիջիք առաքեալ-
նուն Թեառն, և ուսանիջիք ի նորին գործոցն զի ոչ է չար
մարդկան նեղութիւնք, այլ մեզքն միայն. ոչ աղքա-
տութիւն, ոչ հիւանդութիւն, ոչ անասրգանք, ոչ փոր-
ձանք, ոչ նախատինք, ոչ որ քան զամենայն չարիս վատ
Թշուագոյն է մահ: Ընդունանք միայն են այսոքիկ որք ի-
մաստասիրեն զերեզոյն, անուանք իրաց ինչ և գործոց
պատմութիւն. այլ Աչմարիտ սուգ այն է որ գոհանայ
զայ, և նա զոր ակն ոչ ունիցի՝ սրասցէ նմա:

Օ ինչ ունիցի գժուարութիւն մահն, ասա ինձ. զի
վաղվաղակի ի բարի նաւահանգիստն առաքէ զքեզ և
յանխռովական կեանսն. Թէպէտ և ոչ սպանանէ մարդ,
նա ինքն երթայ ըստ օրինաց բնութեանն, և ապա զի
ոչ լուծանէ զմարմինն ի հոգւոյն. և եթէ այժմ ոչ լի-
նիցի այս, փոքր մի յետոյ լինելոց է, վասն էր այժմ եր-
կընչիմք: Օ այս ասեմ ոչ եթէ ակն ունիմ վասնզիոյ
կամ տրտմական իրաց, քաւ լիցի. այլ զի ամաչեսցեն
որք ի մահուանէ երկնչին: Ընդ ասա ինձ որք այժմ ակն
ունիմք բարութեան զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ
և ի սիրտ մարդոյ ոչ հասանէ՝ տէրն քո այնպիսի յու-
յսանէ քեզ հանգիստ, և դու լինես պղերգ և ծոյլ. և
ոչ ծոյլ միայն, այլ և երկնչիս և սարսես:

Լաւ ծրչափ վատթար և գարշելի է այս որ դու վասն
մահու երկնչիս, ուր Պաւղոս վասն այսչափ աւուր կե-
նացս ասէ. "Ընշխարհս այս հեծէ մինչև ապատեսցի.
և մեք իսկ որ զպտուղ Հոգւոյն ունիմք, անձամբ զան-
ձինս մեր հեծեմք՝ որդեգրութեան ակն կալեալ փրկու-
թեան մարմնոյ մերոյ,,: Օ այս ասաց՝ ոչ եթէ անգէտ
լինելով այսմ կենացս ասէր, այլ ի հանդերձեալսն փա-
փագէր: Ընդ. Ճաշակեսի ի ընդհացն, առի զպարգևսն,
վերացայ մինչև յերրորդ երկինս, տեսի զփառսն զայն
անճառելի, տեսի զպայծառութիւն զայնր արքայու-
թեան, խնացեալ եմ եթէ յորոց փառաց օտարացեալ
եմ և կամ ասա. վասն այսոքիկ հեծեմ:

Դու արդեօք ասա ինձ արդ. եթէ որ մեծանալ ըղ-
քեզ ի գաւիթ Թագաւորական և ցուցաներ քեզ յա-
մենայն կողմանց զփայլս գեղեցկութեան արմնոյն և զայլ
ամենայն զվայելչութիւն տաճարին, և ապա տանիցի
զքեզ անտի և ածցէ ի խուղ աղքատի, և յետ սակաւ

ժամանակի խոստանայր տանել զքեզ անդրէն յարքունական գաւիթն յայն ուստի եկեր՝ զնոյն քեզ չնորհեալ զի հանապազ անդ բնակեսցես, ոչ քոյին կամաք դժուարանայիր և տագնապեիր ՚ի սակաւ աւուրսն յորս կայիր ՚ի խուղն աղքատի։ Այոյպէս իմացիր վասն երկրի և երկնից, և հառաչեա և հեծեծ ընդ Պաւղոսի ոչ վասն մահու, այլ յաղագս այսր կենաց։

Այլ ասեն ոմանք. տուր մեզ լինել որպէս Պաւղոս, և ոչ երկիցուք ՚ի մահուանէ։ Այս ես ասացից. և ովք իցէ որ արգելուցու զքեզ լինել իբրև զՊաւղոս, ով մարդ. ոչ ապաքէն աղքատ էր Պաւղոս, ոչ առանց դրպրութեան էր։ Այնէ մեծատուն էր և ՚ի տոհմէ մեծամեծաց, ունէին առ նա աղքատք պատճառս և նախանձ թերեւս, և պատճառէին զաղքատութիւնս իբրեանց. իսկ այժմ զայսցանէ չունիս ինչ ասել պատճառս. քանզի ձեռնարուեստ էր երանելին այն, և հանապազ յիւրոց կերակրոցն կերակրէր։ Այս դու անդուստ յառաջնմէ կալեալ ես ՚ի հարց քոց զաւարեպաշտութիւնն, և ՚ի նախնի հասակէն սուրբ դրովք սնար և չքնեցար և յառաջ եկիր. իսկ նա հայհոյիչ և հալածիչ և անարգող այսր ամենայնի, այլ և աւար հարկանէր զեկեղեցի. բայց սակայն յանկարծակի փոփոխեալ ՚ի բաց ընկեց զայն ամենայն առաւել անբաւ յօժարութեամբ, և դու չեղուկ ասէր.՝՝ Ամենազք ինձ եղերութ որպէս և ես Պրիստոսի,,։ Այդ նա ՚ի եղև նմանող, իսկզդու ընկերի քումմ ոչ նմանիցես որ ՚ի սկզբանէ ՚ի բարեպաշտութեան կայեալդ ես։

Այ գիտես եթէ որք ՚ի մեղս են, թէպէտ և կենդանիք իցեն, մեռեալ են. և որք յարդարութեան կեան, թէպէտ և մեռանին, կենդանիք են։ Այս այս ոչ եթէ իմ է բանս, այլ զոր Պրիստոս հրամայեաց Աարիամու. ասէ՝ թէ՝՝ Այր հաւատայ յիս, թէպէտ և մեռանի, կենդանի է,,։ Աթէ սմանկ բանք իցեն ասացեալքս։ Դու եթէ իցես քրիստոնեայ կամ հաւատաս ՚ի Պրիստոս, ցոյց ինձ զհաւատս հանդերձ գործովք։ Օ քարդ ցուցից զհաւատս իմ հանդերձ գործովք։ Այթէ զմահ արհամարհիցես. քանզի թշնամեայ անհաւատիկ այսու ընդդէմ յայլեթեմք։ Այքա յիրաւի երկնչին ՚ի մահուանէ, վասն զի ոչ ունին յոյս յարութեան. իսկ դու

որ ևս քարձրագոյն Հանապարհաւ գնաս և վասն այնր յուսոյ իմաստասիրես, ապա զիմքդ գտանիցես Թողութիւն, յարութեան յոյս ունելով իբրև զանհատատ յարութեան երկնչիս ի մահուանէ։

Ա. Չլ ոչ ի մահուանէ երկնչիմ, ասէ, կամ ի մեռանելոյ, այլ ի չար մահուանէ՝ որ ի ձեռաց Թշնամեաց մեռանելն լցէ, անարգութեամբ և չարչարանօք, և սրով զգլուխ հատանելով։ Իսկ Յովհաննէս ոչ ապաքէն չար մահուամբ մեռաւ՝ սրով զգլուխն հատեալ, և ամենայն սուրբ վկայքն ևս զժնդակ քան զնոյնս մեռան. ոմանք սրով, ոմանք հրով կատարեցան ի կենաց իւրեանց, ոմանք ի ծով անկան, այլք ի վախից մղեցան և կեաք ի ժանեաց գազանաց, և որ սոյնպիսիք են մեռան ամենեքեան։ Արդ ոչ է այսպէս մեռանելն չար, ով մարդ, տանջանօք և չարչարանօք, այլ որք ի մեղս մեռանին։ Ուր այժմ մարգարէին ըստ այսմ զնմաստասիրելն. "Ա՛հ մեղաւորին, ասէ, չար է,,։ Արդարն զկնի այսմ վարուց գնալով՝ անդ ի տանջանաց ազատ է և անհոգ. իսկ նա ի հալածանս պատժոց անկեալ յանմահս, ուր որդունքն Թիւնաբերքը, հուրն անշէջ, խաւարն արտաքին, լալն և կրձտել ատամանց, նեղութիւնքն և տրտմութիւնք և յաւիտենական դատապարտութիւն։

Յորժամ այս ամենայն կայ և մնայ մեղաւորաց, զինչ օգուտ իցէ կամ ի տան մեռանել կամ ի մահիճս վճարել զկեանս իւրեանց։ Իսկ արդարոցն այն իսկ է առաւել ցնծութիւն ի սրոյ մեռանել կամ ի հրոյ կամ ի ջրոյ՝ զկենցաղս զայս ի բաց եդեալ և գնալ ի հանդերձեալ յանմահ բարութիւնն. ապա Աչմարիտ չար մահ մեղաւորին է։ Արդ յայտնի էր մեծատանն մահ, այն որ զի ազարտոն անտես առնէր. քանզի ի տան վախճանեցաւ և ի մահիճս, և իւրայոցն մօտակաց եղեալ այնպէս վճարեաց զկեանս իւր և գնաց անդ։ Այս զինչ. պապակեր ի տապ տապակին, և ոչ փոքր ինչ մխիթարութիւն կարաց գտանել անդ ի բարութենէ այսմ անցաւոր կենցաղոյս։ Այլ Ղազարոս ոչ այսպէս, այլ ի նորին դրան անկեալ կայր, և գայլին շունք և լեզուին զվէրս նորա, մեռաւ զժնդակ մահուամբ. զինչ զժուարին է քան զսովամահ լինել. այլ երթեալ ի կեանսն յայն վայելեալ զյաւիտենական բարութիւնն փափկանայր

'ի գոգն Ա. քրահամու։ Ա. րդ զինչ միսս եղև նմա քրտնութեամբ մեռանելն, կամ զինչ օգուտ եղև մեծատանն մեռանելն առանց պատժոյ։

Պարձեալ ասեն՝ եթէ ոչ 'ի սաստիկ մեռանելոյ երկնչիմք, այլ յանիրաւ մահուանէ։ Ո՛ զինչ խօսիս, ով մարդ, սա ինձ, յանիրաւ մահուանէ երկնչես. և զհաւրդ, կամիցիս յիրաւի մեռանել։ Այս զինչ ինչ թշուառական քան զայս զի ոչ անիրաւ մահու, այլ ըստ իրաւանց կամիցիս մեռանել. մանաւանդ պարտ է երկնչել 'ի մահուանէ յորժամ յիրաւի մեռանիմք, քանզի յայսմ անիրաւ մահուանէս ամենայն սրբոց հաղորդ գտանիմք...։

Կամիք զի ասացից ձեզ, ով սիրելիք, եթէ յորմէ մահուանէ պարտ է երկնչել։ Ո՛չ է ազգեաղ առ մեզ գութ արքայութեան և զարթուցեալ զմեզ փափագումն հանդերձելոյն. եթէ ոչ՝ անտես առնիցաք զամենայն անցաւորս, որպէս և երանելին Պաւղոս զարձեալ առ հռոմայեցիսն ասէ եթէ "Ո՛չ են արժանի մահ և չարչարանք ժամանակիս հանդերձեալ փառացն որ յայտնելոցն է 'ի մեզ,,. և եթէ "Ո՛չ գիտեմք զերևելիսս, այլ զաներևոյթսն,,։ Ա. յլ մեք ոչ երկնչիմք 'ի գեհենէն, վասն այնորիկ երկնչիմք 'ի մահուանէ. և ոչ եմք յանտի տանջանացն ազատեալք, ըստ որում փոխանակ 'ի մեղաց 'ի մահուանէ երկնչիմք. եթէ ըմբռներ զանձինս մեր երկիւղն այն, ոչ արդեօք այսու վարուք շրջէաք։ Այս զայս ոչ հեռագոյն ուսուցէք, այլ յայսմանէ յորոց եկեալ է 'ի վերայ մեր յաւուրս յայսոսիկ՝ փորձիմ առնել յայտ։

Եթէ վասն անչափ հարկաց եկեալ Թագաւորական հրամանն, և անզերծանելի կարծեաք 'ի հարկէ անտի հրամանին, ոչ ապաքէն ամենեքեան նեղեալ լինեաք և հակառակեաք, դժուարանայաք, ամբոխեաք սաստիկ, ասեաք ընդ միմեանս ամենեքեան. անմխիթար են կեանք մեր, քաղաքս աւերի, ոչ ոք կարիցէ զդէմ ունել բազմութեան հարկացս այսոցիկ։ Այս ամենեքեան սպառնէին որպէս 'ի կատարածի վշտաց։ Այս այլ ևս զարձեալ և յորժամ եղև համարձակութիւնս, և ամանք անարգ և բազմանախատ որ զօրէնս քակեցին և զպատկեր Թագաւորին կոխեցին, վասն այսր գործոյ զամենեսեան արկին 'ի վիշտս, և ըստ այսմ զի բարկացուցաք

զԹագաւորն՝ երկինչիմք յոյժ, այժմ ոչ խածատէ զմեզ առումն ընչից մերոց. այլ փոխանակ այնր այլ ինչ լսեմք ՚ի բազմաց, զի այսպէս առցէ զամենայն գոյս մեր Թագաւորն, և բարիոք կամօք ՚ի բաց կամք յապաբակաց և յընչից մերոց, միայն եԹէ խոստանայցէ ոք կեցուցանել զանձինս մեր։

Այդ քան զդալ երկիւղի մահու ՚ի վերայ մեր խայԹացեալ զմեզ առումն ընչիցն մերոց. և յորժամ եղև համարձակուԹիւնս այս անօրէնուԹեան և եհաս երկիւղ մահու, զերկումնս ընչիցն ՚ի բաց մերժեաց. արդ եԹէ այսպէս ըմբռներ զմեզ երկիւղ գեհենին, մահու երկիւղ ոչ զարհուրեցուցաներ զմեզ։ Օ՜ի որպէս ըստ մարմնոյ յորժամ երկրորդ և մեծ երկունք գայցեն ՚ի վերայ՝ դիւրաւ միւսն ծածկի, այսպէս և այժմ եղև արդեօք. պարտ էր մեզ յանձինս մեր երկիւղ հանդերձեալ տանջանացն, բայց մարդկային երկիւղն Թագոյց զայն։ Իսկ եԹէ ոք հանապազ և ընդ փոյԹ յիշեսցէ զգեհենին, ծաղր առնէ զվախձանն. և այս ոչ եԹէ յայսմ վտանգէ միայն ազատէ, այլ ՚ի յայնմ ահագին հրոյն փրկէ զմեզ. զի որ հանապազ երկնչի ՚ի գեհենէն, ոչ երբեք անկանի ՚ի հուր գեհենին, զի միշտ այնու ահիւ կացցէ։

Տուք առ ձեզ այժմ ՚ի դէպ ժամանակի ասել. “Այդ բարք, մի լինիք տղայք մտօք, այլ ՚ի չարեաց տղայացարուք,,։ Վասն զի մանկունք տղայք յերեսաց[1] մարդկան երկնչին. քանզի յորժամ բարձցեն զնոսա և հանդիպեսցին ջահաբարձի զի ունիցի ջահ լուցեալ, առանց պատրաստելոյ մեկնեն զձեռս իւրեանց ՚ի բաց Ճրագին. և ուստի չէ պարտ խոսել յերեսաց՝ սարսեն, բայց որ Ճշմարիտն է՝ ոչ երկնչին ՚ի հրոյն։ Այսպէս և մեք ՚ի մահուանէ իբրև յերեսաց երկնչիմք, որ դիւրագոյն է սրհամարհել. և ՚ի մեղաց որ է Ճշմարիտ և սարսափելի երկիւղ, ոչ երկնչիմք։

Իսկ այսպիսի սովորուԹիւն ոչ եԹէ յիրացն բնուԹենէ է, այլ յանմտուԹենէ լինիցի։ Օ՜ի մահ երբեք ոչ ինչ է. որպէս զհանդերձ ոք մերկանայցէ, զի և մարմինս այս որպէս զհանդերձ ծածկեալ է զհոգի. և

1 Իմն՝ գիտակ, նայնպէս և զկնի երկեցս։

զայս փոքր մահուամբ ՚ի բաց դնելով՝ պայծառագոյն դարձեալ առնուցումք։ Ալ ինչ է մահ, ձանապարհ է առժամանակեայ և քուն ընդ երկար քան զսովորա-կանն։ Այթէ ՚ի մահուանէ երկնչիս, երկիր և ՚ի քնոյ. և եթէ ընդ վախճանել ուրուք տրտմիս, ապա տըրտմեաց և վասն կերակրոյ և ըմպելոյ. զի որպէս այսոքիկ ըստ բնութեան են, սոյնպէս և մահ։ Այլ մի տրտմեցուսցէ զքեզ բնութեանս կարիք, այլ տրտմեսցիս ընդ սովորութեան չարեաց. և մի զվախճանեալն ողբասցես, այլ զդնացիկ որ մեղաց կեան։

Ասացիք զի և այլ պատճառս ասացից ձեզ թէ ընդէր երկնչիմք ՚ի մահուանէ։ Ասեմ զի ոչ կամք ստոյգ հա-մարձակութեամբ, և ոչ ունիմք խորհուրդ անզգաստ ՚ի բարիս. եթէ այս ոչ էր, էր ինչ որ զմեզ երկեցուցա-նէր, ոչ մահ, ոչ տուգանք ընկից, ոչ սպառնալիք և ոչ որ սոցին նման են. քանզի զայր առաքինի և սուրբ ոչ ինչ կարիցէ ՚ի մահուանէ վնասել և ոչ ՚ի բաց հանել զՀոգւոյն բա-րի ցանկութիւնն։ Օ՜ ինչ ինչ գործեսցէ ոք այնպիսի որ կարիցէ զայր զգոյշ արիական և պատրաստ տրտմե-ցուցանել. կորուսանէ՞ զինչսն, այլ նա յերկինս ունի զմեծութիւն. հանի՞ ՚ի հայրենեաց, նա զանձն առա-քեալ ՚ի վերին քաղաքն Համարի. ե՞ղ ՚ի կապանս, այլ որ ստոյգ կապանքն են՝ յայնմանէ արձակեալ է, և զար-տաքին շղթայս բնաւ ոչ զգայ, նա զի ինդայ ևս. սպա-նանի՞ զմարմինն, այլ գիտէ զի յարիցէ կանխաւ։ Այս զոր օրինակ որ մինչ ընդ ստուերի կամ Հարկանէ զօդս և ոչ ինչ ազդիցէ, այլ յիւրմէն անկցի ՚ի զօրութենէն, նոյնպէս և որ ընդ արդարոյ մարտնչի, միայն ստուերա-մարտ լինի և ընդ իւր զօրութիւնն մարտնչի, իսկ յար-դարն և ոչ մի վէրս Հասուցանել կարէ։

Ցուր ինձ, ասէ, լինել յարքայութեանն երկնից, և թէպետ և այսօր եկեսցէ իմ սպանումն, և ընդ այնր ցնծամ յոյժ, զի վաղվաղակի առաքեալ լինիմ ՚ի ստոյգ բարութիւնն յայն։ Այլ այս մանաւանդ է սուգ և տրտմութիւն զոր ողբամք և մեք, զի բազմութեամբ մեղաց կեամք, և անտի արքայութեան բարութեանց ոչ Հանդիպիմք։ Այդ դու այսուհետև Թող անդր ՚ի բաց ողբալ զմահ, և ողբա զյանցանս քո զի եղծանիցես զայն առնոյն։ Այս է ստոյգ տրտմութիւն որ ոչ

վան ընչից և ոչ վան մահու և ոչ այլոց այսպիսեաց, այլ վան մեղայն կործանման խառնիւք յայսպիսի տըրտմութիւն։

Այլ զի այս ձշմարիտ է, օրինակաւ յայտ առնեմ ձեզ։ Ոմեք բժշկական վան այնորիկ ստեպ լինիցի, զի զախտ ցաւոյն բարձցէ, և ոչ երբեք զայն 'ի կիր արկանեն որ ցաւոյն ոչ օգտիցէ։ Այլ զի ստոյգ որպէս ասացի՝ յայտնի կացուցից քանիւս, զրկ թէ դեղն որ միայն աչաց կարի՛ցէ օգտել և ոչ այլում օտար ցաւոց, յիրաւի զնոյն դեղ վան ցաւոց աչացն միայն որ ասիցէ լինել, ոչ ստամոքսի, ոչ ձեռաց և ոչ այլոց անդամոց։ Ոմեր այսուհետև 'ի տրտմութիւնս զբանս զայս. քանզի այլոց պատահաց բնաւ ոչ ինչ օգտէ մեզ տրտմութիւն յորժամ գայցեն 'ի վերայ մեր, այլ միայն զի զմեզաւորն ուղղիցէ և զյանցանսն ջնջեսցէ, յայսմանէ ունի զկարողութիւն. բարիոք է ասել՝ միայն վան այսր լեալ 'ի մեզ տրտմութիւն։

Ոչայց երթիցուք այսուհետև քանիւ յիւրաքանչիւրսն որ ածէն մեզ զտրտմութիւնս, և տեսցուք զինչ շահ յայնմանէ լինիցի։ Պատարկացաւ որ յընչից և տրտմեցաւ, այլ այն ոչ ելից զտեղին. կորսոյս որ որդի և սուգ առ, այլ ոչ յարոյց զմեռեալն, և գնացելոյն արար ոգուտ և ոչ ինչ. Հալածեցաւ որ ապտակեցաւ Հարաւ ա նարգեցաւ, տրտմեցաւ՝ այլ զանարգանս և զվէրս ոչ միսիթարեաց. անկաւ որ 'ի չարաչար հիւանդութիւնս, եթէ տխրեսցի՝ ոչ ղցաւսն թէթևացուցանէ, այլ մանաւանդ ծանրագոյն առնէ. մեռաւ որ, տրտմեցաւ վան մեղացն, անյայտ արար զմեղսն, եղծ և լուաց զյանցանսն։ Այս ուստի՞ յայտ իցէ այս. 'ի Հրամանացն Ցի որ վան մեղաւորի ումեմն ասէր. "Վ ան մեղաց առ սակաւ մի տրտմեցուսի զնա, Հարի զնա և դարձուսի զբեռս իմ 'ի նմանէ. տրտմեցաւ և գնաց թախծեալ առաջի իմ զձանապարհս իւր. զձանապարհս արտի նորա տեսի և բժշկեցի զնա,,։ Այսպէս և Պաւղոս ասէ՝ եթէ "Ցրտմութիւն ըստ Ցի ապաշխարութիւն 'ի փըրկութիւն առանց զղջանալոյ գործէ,,։

Ոչդ յորժամ բանս ստուգապէս յայտնի եղոյց մեզ, զի ոչ յաւիշտակութեան ընչից, ոչ անարգանաց, ոչ փորձութեանց, ոչ ապտակելոյ, ոչ հիւանդութեան, ոչ մա-

հու և ոչ այլ ինչ յաւելեալ որ գայցէ ՚ի վերայ մարդոյ տրտմութիւն՝ կարիցէ յարուցանել զոք, բայց միայն զմեզս կորուսանէ և կործանել անյայտ գործէ, ապա բարիքն ասացաւ եթէ վասն այսր միայն եգաւ ՚ի մեզ։ Մի այսուհետեւ վասն ընչից, այլ վասն մեղացս վշտասցուք միայն. աստ բազում շահք են մեզ ՚ի տրտմութենէ։ Կորեաւն ինչք քո, մի տխրիս, զի ոչ ինչ շահիս. մեղա՛ր, տրտմեայ յոյժ և անդէն օգտեսցիս։

Տես արդ զիմաստութիւն այ. երկուս իրս ծնաւ մեզքն մեզ, տրտմութիւն և մահ. զի "Յաւուր յորում ուտիցէք, ասէ, մահու մեռանիցիք,,. և դարձեալ ցկինն ասէ. "Ցրտմութեամբ ծնցիս որդիս,,։ Ի յերկուց յայսցանէ զմեզն քակեաց, և որդւոցն զմայրն Թողուլ հրամայեաց։ Օ՚ի զկնի տրտմութիւնն և մահ զմեզն բարձցէ, յայտնի եղև այս ՚ի վկայիցն. և դարձեալ զսոյն և Պաւղոս յայտնէ ասելով առ մեղուցեալսն. "Ո՛ան այնորիկ են ՚ի ձեզ հիւանդք և ախտաժէտք, և շատ ևս այն են որ ննջեցեալքն են,,. և դարձեալ առնու և ասէ. "Եթէ զանձինս քննեաք, ապա ոչ դատապարտիաք. և եթէ դատիմք, ՚ի տեառնէ խրատիմք զի մի ընդ աշխարհի դատապարտեսցուք,,...։

Մի այսուհետեւ երկիցուք ՚ի մահուանէ, այլ երկիցուք միայն ՚ի մեղաց։ Այս զայս ասեմ ոչ եթէ չար ինչ ակն ունելով, քաւ լիցի. այլ կամիմ երկիւղածս լինել ձեզ, զի այսպէս միշտ մնայցէք յօրէնսն Քրիստոսի ընդ հանդերձ գործովք։ "Եթէ ոք ոչ առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ, ասէ, չէ ինձ արժանի,,։ Օ՚այս ասաց ոչ զի խաչափայտ ՚ի վերայ ուսոց բարձցուք, այլ զի ըզմահ հանապազ կացցուք առաջի աչաց մերոց. որպէս և Պաւղոս ամենայն աւուր մեռանէր և այսն առնէր զմահ։ Արդ և դու զինուոր զքեզ համարեա և հանապազ ՚ի պատերազմի կացեալ. պատերազմող որ զմահու երկիւղ չինքեան ունիցի, ոչ երբեք մեծամեծ քաջութիւնս գործեսցէ ինչ. սոյնպէս և մարդ քրիստոնեայ որ ՚ի վշտաց գայթակղութենէ երկնչի, ոչ երբեք ցուցանէ բարձր ինչ վարս առաքինութեան կամ աքանչելի. և առ այսոքիկ Թէպէտ և դիւրին իցէ, այլ ոչ կարէ բնաւն հարկանել յանդուգն և մեծամիտն և անջան առվօրեայն։

Բայց երեք մանկունքն որ ոչ երկեան ՚ի հրոյն, ոչ մերձեցաւ ՚ի նոսա հուրն. և մեք եթէ ոչ երկնչիմք ՚ի մահուանէ, ցանկամք մահու։ Բանզի որք ոչ երկեան ՚ի մահուանէ, ոչ եղեն պարտաւորք այրման գեհենին. իսկ որք ոչ երկեան ՚ի մեղաց, գտան պարտաւորք ամբարշտութեան։ Սոյնի և մեք գտցուք նախանձաւորք, ՚ի բաց հանցուք զերկիւղ վտանգի ՚ի մէնջ, և յայնժամ յօժարիցիմք ՚ի վտանգն։

Ոչ եմ մարգարէ և ոչ որդի մարգարէի. բայց զոր լինելոցն է, գիտեմ ստուգութեամբ և մեծապէս գոչեմ պայծառ ձայնիւ, եթէ այլ ինչ հոգս ոչ առցուք յանձինս մեր, գիւրաւ և առանց տրտմութեան ՚ի չարեացս յայսոցանէ ՚ի բաց կամք։ Այլ զայս գիտեմ ես և ցուցից յայտնապէս յոյ մարդասիրութենէն զոր եցոյց Համբրէն ՚ի մեծ քաղաքն Հերմանոսաց ՚ի յայրս և ՚ի բաղմամբոխ ժողովուրդս բոլորովին, զինուեացեան առեմ, որում սպառնացեալ քաղաքին, “Երեք ևս աւուրք են և Նինուէ կործանեսցի,,։ Այս ապա զինչ եզև, ասա ինձ, էամնոց կամ կործանեցաւ քաղաքն Նինուէացւոց. և ոչ երբեք. այլ եղև ամենայն ինչ հակառակին, քանզի յարեաւ և պայծառագոյն գտաւ, և մի չափաւորագոյն ժամանակաւ ծածկեաց զփառս իւր, ոչ անյայտ եղև. այլ ամենեքեան որ լսեմք զզջմանն նոցա, սքանչանամք յոյժ. նա զի և յայնմ ժամանակի մինչև ցայժմ ապաւէն եղև հաճոյական ամենայն մեղաւորաց, և ոչ տայ Թոյլ ՚ի յոսահատութիւն անկանել, այլ զամենեսեան յորդորէ յապաշխարութիւն...։

Այվ ինէ որ ոչ յարիցէ և լուիցէ զնոցա պատմութենէն։ Ցես Թէ որչափ Թախանձելի մեղօք լինէին, բայց անդէն քակեցին զաւաջասացեալն, մինչ զի անցանել բանին տեառն, և ոչ անցանել քաղաքին. այլ ասեմք մանաւանդ զի ոչ մարգարէութիւնն էանց։ Ո՞վ Թէ յայնմ չարութեան էին կացեալ մարդիկն, ոչ էր անգործ լեալ հրամանն։ Իսկ եթէ կամիցիք գիտել զասացեալս, այս իսկ է. փոխեցան նոքա և ՚ի բաց կացին ՚ի չարեաց իւրեանց, և զղջացաւ Ած ՚ի բարկութենէն զոր խոստեցաւ Ածել, ով կարիցէ կծել[1] այսուհետև զմարգարէութենէն

1 Ծորինակին գԽԽԷ. եդաւ ըստ յունին։

և համարձակել եթէ սուտ էր ասացեալն։ Այլ զօրէնն զոր յառաջնմէ եառ ՚ի ձեռն մարգարէին ասել ամենայն մարդկան, զայս պահեաց և յայնժամ։ Այս զինչ էր օրէնն. “Ա՛խաՀան խօսեցայց ՚ի հեթանոս, յաղգս և ՚ի թագաւորութիւնս՝ առնել արմատախիլ և կորուսանել զնոսա. և եղիցի եթէ զղջասցին ՚ի չարեաց իւրեանց, զղջացայց և ես ՚ի բարկութենէ զոր խօսեցայ առնել նոցա,,։ Օ՛րէնս զայսոսիկ ՚ի մահ հաստատուն պահեցէք, զի ՚ի փոփոխելն ձեզ ՚ի չարութենէ և ՚ի բաց կալ ՚ի պղծութենէ՝ փոխեսցի և ՚ձ ՚ի բարկութենէ, որպէս և անդ իսկ զփոփոխեալսն ապրեցոյց։

Այիտեր իսկ զբարբարոսացն զառաքինութիւն, վասն այնորիկ ած անդ զմարգարէն. այսպէս և յայնժամ դղրդեցաւ քաղաքն ՚ի լսել զձայն մարգարէին, բայց ոչ ՚ի՛նաեցաւ, այլ օգտեցաւ ՚ի յահէ անտի. քանզի երկիւղն այն ծնաւ զփրկութիւն և սպառնալիքն ելոյծ զոչիշն, վՀիւ կործանմանն կանգնեաց զկործանումն։ Ա՛վաքանչելեացս և զարմանալի հիւսմանս. վՀիւ սպառնալեաց մահու կեանս ծնաւ։ Ա՛Հիւ զինի ելանելով՝ եղև առանց գործոյ, հակառակ արտաքին դատապարտութեանց. զի յայսմ ՚ի դատաստանի յորժամ ելանէ վՀիւ և ՚ի մէջ գայցէ, զկատարումն առնու լինել վըճռին. այլ յայնժամ հակառակն եղև այսր ամենայնի, քանզի ինքնին իսկ վՀիւն արար լինել առանց գործոյ։ Եթէ ոչ էր ելեալ վՀիւն, ոչ էին լուեալ մեղաւորքն. և եթէ ոչ էին լուեալ, ոչ էին զղջացեալ, ոչ էին ազատեալ ՚ի տանջանացն և ոչ էին վայելեալ ՚ի աբանչելի փրկութիւնն յայն։

Այ զիաւրդ արդեօք չէ այս զարմանալի յորժամ դատաւորն դատապարտեսցէ, և դատապարտեալքն զվՀիւ հրամանացն լուծանեն հանդերձ ապաշխարութեամբ։ Ա՛յրքա ոչ փախեան ՚ի քաղաքէն, որպէս և մեքս այժմ առնեմք. այլ մնացին ՚ի ներքս ՚ի քաղաքին և կանգնեցին զնոյն։ Ա՛րագալթ էր քաղաքն, և արարին զնա պարիսպ ամուր. ոչ ՚ի բաց կացին իւրաքանչիւր որ ՚ի տանէ իւրմէ, որպէս և այժմ մեք. այլ ՚ի բաց կացին իւրաքանչիւր որ ՚ի չար ձանապարհէ իւրմէ։ Ա՛յնքան եթէ պարիսպ քաղաքի ծնանի զաբարկութիւն. այլ մեք եմք պատճառ հարուածոց, մեք եմք որ և զդեղն կազմեմք։ Ա՛յն

որոյ ոչ եթէ զտեղի փոփոխեալ, այլ ի գործոյ փոխարկեալ փրկութիւն հաւատացին։

Ո՞յս խուժադուժքն. իսկ մեք ոչ ամաչեմք, և ոչ յայտնի մեզ նոցին արուեստիւն զինչ պարտ իցէ առնել, ուստի մեք զտեղիս փոխարկեմք, և զդոյս ստացուածոց և զարբեցողաց մարդկան զգործս առնեմք։ Ցերն բարկանայ մեզ, և մեք թողումք զպարտն լուծանել զբարկութիւն՝ անդրէն ի տունս դառնամք և եկեալ խնդրեմք եթէ ուր դիցուք զգանձանակն։ Պարտ էր խնդրել եթէ ուր պատրաստեալ դնեմք զհոգիս մեր. մանաւանդ եթէ զայս ոչ է պարտ խնդրել, այլ առաքինութեամբ զկեանս մեր ուղղել և ի զգուշական վարս ձեռնարկել...։

Լռեցուք այսուհետև յանօգուտս ջանալոյ, և ասացուք իւրաքանչիւր որ ցած. "Յո՛վ երթայեմք յոգւոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց"։ Մանաւանդ լիցուք բարբարոսացն այնոցիկ իմաստութեն ուրպէս նոքա համարձակ առանց երկիւղի զղջացան։ Ոչ ունէր այսպէս հրամանն, եթէ դառնայք զղջմամբ և ապաշխարէք, կեցցէ քաղաքս. այլ զինչ. "Երթէք ևս աւուրք և՝ կործանեսցի"։ Իսկ նոքա զինչ. "Ո՞ գիտէ, զղջասցի տէր ի չարեացս զոր խօսեցաւ առնել մեզ"։ Ո՛վ եռեա միտս այնպիսի. նոցայն ոչ է հաւասար մեզ որք զվախճան ընչից երկնեմք։ Տես, ոչ լինելին պղերգ ի զղջանալոյ. թէպէտ և ոչ գիտէին զաւորհուրդ մարդասիրութեանն այ, այլ մեծաւ երկիւղիւ փոփոխեցան ի գործոյ իւրեանց։ Ո՞յլ որ բնաւ ոչ էին տեսեալ նիհուէացիքն զղջացեալ և ապրեալ, և զմարգարէսն ոչ էին ընթերցեալ և ոչ լուեալ ի նախահարցն, և ոչ վայելեալ ի խորհուրդ իմաստութեան, և ոչ էին հաւատովք հաւանեցուցեալ զանձինս իւրեանց եթէ հաշտի ած ապաշխարութեամբ, և ոչ այսպէս ունէր սպառնալիքն։ Այլ ոչ քննեցին և ոչ տրտնջեցին վասն այսորիկ, այլ միայն զղջացան ամենայն սուտգութեամբ։

Արդ զինչ իցէ մեզ պատճառ յորժամ նոքա զայս կատարածին ոչ ունէին և այնչափ զօրութեամբ երևեցան դառնալով ի չարեաց իւրեանց. զո՞ւ իսկ որ հաւատարձակութիւն ունիս վասն մարդասիրութեանն այ, և բազում անգամ որպէս գրաւական առեալ ես զնորին

զգուշութեանն տուր, և լուեալ և ուսեալ ես զբանս մարգարէիցն և առաքելոց, և հանդերձ այսոքիւք և վասն ընչից խրատեալ ես, քայց ոչ մինչ 'ի նոցին առաքինութեիւնն և չափն հասանել հակառակիս։

Իսկ այնմ մարդկան մեծ էր առաքինութիւնն. քաղում ևս և առաւելութիւն մարդասիրութիւնն այ, և զայս 'ի մեծութենէ այսմ սպառնալեացս պարտ է խմանալ։ Վասնզի ոչ յաւելցը 'ի հրաման վճռին, եթէ զըղջանայք՝ խնայեմ 'ի ձեզ. և ոչ 'ի վճիռն սահման կարէին ածել. ամէնը երկիւղն, և 'ի թանձրանալ երկիւղին՝ վաղվաղակի յապաշխարութիւն յաձախէին։

Իսկ մարգարէն պատկառեալ, զի նախ զլինելոցն գիտէր, և ամաչեցեալ զի ոչ առ զկատարումն որ 'ի նմանէ ասացաւ. այլ այծ ոչ ամաչէր, քայց միայն խնդրէր զիրկութիւն մարդկան և զիւր ծառայն ուղղէր։ Ո՛չ յորժամ նա 'ի նաւն եմուտ, յարոյց վաղվաղակի զալիս ծովուն. զի ուսանիցիս թէ ուր մեղք էն, անդ և ձեռն ալեաց. և ուր պատուիրանազանցութիւն, անդ և նաւակոծութիւն։ Վաղաքն իսկ դողաց և շարժեցաւ վասն մեղաց նինուէացւոցն. դողայ և նաւն վասն պատուիրանազանց մարգարէին։

Իսկ նաւապետքն զՅովնան առին ընկեցին 'ի խորս ծովուն, և նաւն եկաց և ծովն դադարեաց. մեք ընկեսցուք զյանցանս մեր, և կեցցէ քաղաքս առ Հասարակ։ Ի փախստեանէ օգտիմք և ոչ ինչ. այս իսկ ընդ առաջ եղև Յովնանու, և ընդդէմ միաբերաց զգործս նորա։ Փախեաւ յերկիր յայլ և ոչ փախեաւ 'ի բարկութենէն, որով և զնաւովութիւն ալեաց յարոյց 'ի ծովուն. և ոչ միայն ինքն չհանդիպեցաւ բարւոյ փախստեամբն, այլ և որք զնա ընկալան 'ի նաւին՝ 'ի վախճան եկին վտանգի։ Ո՛չ յորժամ նստէր նա 'ի նաւին և նաւէր, նաւապետքն և նաւուղիքն մերձ էին և ամենայն գործիարուեստք պատրաստաք յուղևորութիւն նաւուն, սակայն 'ի վերջ եկն կործանման։ Իսկ յորժամ 'ի խորս ծովուն ընկղմեցաւ և 'ի միտ առ զոր արարն, անդէն ըզյանցանսն հանդերձ տանջանօք 'ի բաց եդիր, և յայլ խորագոյն նաւ 'ի փոր կիտին՝ ոչ վտանգեցաւ, այլ բազում զիւրութեամբ վայելեալ աներկիւղ քան 'ի նաւին. զի ուսանիցիս՝ եթէ որք կեան մեղաք, նաւն ոչ ինչ

օգտէ. իսկ որ զմեղս ի բաց դնէ, ծոմն ոչ կորուսանէ։

Լսառ զնա ալիքն և ոչ հեղձոյց, էառ կէտն և ոչ սատակեաց. այլ և գաղանն և տարերքս ի պահ առեալ ողջանդամ ետուն ՚ի։ Լաւ յայսմ ամենայնէ ուսանիմք մարգարէն Յովնդարտ և մարդասէրն լինել յանխմաստնասաւարայն, ՚ի խստութենէ ալեացն, ՚ի դժնդակ և յաչառոր գաղանէն։ Քանզի նաւապետքն իբրև գիտացին, ոչ յառաջեցին վաղվաղակի մատնել զնա ծովուն, այլ զկնի բազում բռնութեամբ, և ծոմն գաղանին. իսկ ապա ծոմն և գաղանն հանդերձ բարեմտութեամբ պահեցին ամբողջ։ Լաւ այս ամ ՚ի տնօրէնութենէն էր։

Զնաց այնուհետև, քարոզեաց սպառնայեալ, և այնու զարհուրեցոյց երկեցոյց, որով ապրեցոյց իսկ և ուղղեաց, և կեցոյց ՚ի մէյ և յառաջին քարոզութենէն։ Եւ աղաչեաց զբազում աւուրս, և ոչ հանապազ եղև խօրհրդակից. այլ զմիջոց բանն զայն ասացեալ՝ զամենեսեան ած յապաշխարութիւն։ Ա՛ստ այսօրիկ ոչ վաղվաղակի ած զնա ՚ի քաղաքն ՚ի Նաւէ անտի, այլ մատնեցին զնա նաւավարքն ծովուն և ծոմն կէտին և կէտն ՚ի և ած նմին։ Եւ ՚ի հեռագոյն ձանապարհէն եբեր զմիախուցեալն, զի խրատեսցէ զամենեսեան թէ փախչել ՚ի ձեռաց ՚ի անհնար է։ Օ՛ր[1] ուր և քարշելով փախուցանէ զմեղս, բիւրապատիկ դիպեսցի վտանգից. Թէպէտ և ՚ի մարդկանէ մերձ ոչ է, սակայն արարածք յամենայն կողմանց առաջի ընդդէմ կան հանդերձ ամենայն զօրութեամբ իւրեանց։

Ա՛ի այսուհետև զփախուստ փրկութիւն համարեցաւք, այլ զփոխադրեալն ՚ի չար սովորութենէ։ Ա՛իթէ ընդ կաճն մեր և բնակիլ ՚ի քաղաքիս բարկանայ ած, վասն այնորիկ զի փախիցես. ոչ. այլ զի մեղար, սակս այնորիկ բարկանայ, և ոչ ուր եդիր զմեղսն քո ՚ի քեզ։ Ա՛րդ ուր պատճառք կին վերայ, անդ ցամաքեցս զաղբիւր չարեացն. զի հակառակօքն հակառակքն բժշկին, այսպէս և որպիք բժշկայ հրամայեն. յորժամ յառաջելութենէ կերակրոյ ջերմութիւն ծնանի, ՚ի բաց կալ ՚ի կերակրոյ հրամայեն. եթէ ՚ի տրտմութենէ հիւանդացաւ ոք, առ պատրաստ զեղ նմա զբարեմտութիւնն

1 Ծօրինակին գրեալ էր Զ՛իւր և տրչբեվ։

ասեն։ Այնպէս և ՚ի հոգւոյ հիւանդութիւն պարտ է առնել. մերկ և դանդաղկոտ հոգի զբարկութիւն յաբուցանէ. զխոտոտ զայս մեծաւ ջանիւ խորտակեցուք, և առաւել յայսմ ցուցցուք զիմոխադրութիւն։ ( )գնաւկան և մարտակից մեծ ունիմք զաւուրս քառասնորդացս. այսուհետև յեկելոյ վտանգիցս դիցուք զանձինս մեր ՚ի ներքոյ, և դիւրաւ իսկ և իսկ կարիցեմք հաւանեցուցանել զմեզ ոչափ և կամիմք։ Ի՛հիւ և դողութեամբ և ՚ի փափուկ կերակրոյ յամենայնէ զատուցեալք կացցուք երկիւղիւն ՚ով, և դիւրաւ կարիցեմք իմաստնանալ, և հանդերձ բազում յօժարութեամբ ընդունիլ զերմանս առաքինութեան։

Հաւանեցուցցուք և յայս ևս զանձինս մեր փախչել յերդմանէ. նախ քան յայլ ինչ գործոյ՝ առաւել այսմ առնիցէք փոխադրութիւն։ Այս ըստ յերկկն և յերանդն վասն այսր միոյ պատճառի ասացի ցձեզ, այլ և այսօր և վաղիւ և որ զկնի գալոց են աւուրք ոչ լռեցից։ Այս զի ասեմ՝ այսօր և վաղիւ. մինչև տեսից զձեզ յուղղութիւն եկեալ, ոչ դադարեցից. քանզի որ զպատուիրանս օրինացն պատմեն՝ պատկառել ոչ պարտին, ևս առաւել մեզ՝ զոր Հրամայեաւն է մի լինել պատուիրանազանց՝ ոչ է արժան ամաչել ՚ի հանապազ խրատ տալոյ յայսմանէ։ Օ ի որ հանապազ վասն միոյ անօրէնն սովորութիւն յիշեսցէ, ոչ միայն որ ասէն, այլ և որք լսեն պարտական են ուղղելոյ. և ես սակս ինդրեմ վարդապետութեամբ վասն այսր միոյ սոսկ և դիւրինն առ ուղղել ի բիս։ Օ ինչ իսկ դիւրագոյն քան զչերդնուէլն. միայն սովորելն ՚ի բաց կալ՝ բաւական է յուղղութիւն, ոչ է այս աշխատութիւն մարմնոյ և ոչ ծախք ընչից։

Ամմիս գիտել թէ զիարդ կարիցես առողջանալ յայսմ հիւանդութենէ, կամ զիարդ զօրասցիս փոխարկել ՚ի չար սովորութենէդ. ես ուսուցանեմ թէ որով արուեստիւ. զոր եթէ արասցես, վերագոյն սխալանացն գտանիցիս։ Ա՛րդ յորժամ տեսանիցես զքեզ ինքն կամ զայլ ոք յօրդւոց կամ ՚ի ծառայից կամ յաշխարհանց կամ զկին խառնեալ ՚ի չարս յայս, և հանապազ պատուիրեալ ոչ ուղղիցեն, Հրամանն տուր նոցա տքնել առանց կերակրոյ և ըմպելեաց յընթերս։ Այս յայսմիկ և զքեզ ինքն ՚ի նոցա դատապարտութեանն կացո. դատապարտութիւն ասեմ՝

որ ոչ վտանգ, այլ շահս մատուցանէ. զի այսպէս իսկ են հոգևորքն, որ և շահս բերեն և փութապէս ուղղու-թիւն։ Վասնզի լերուս տանջեալ այսիւ Տանապազ, թէ-պէտ և առ՝ի խրատ ոք ոչ ինչ յիշեսցէ, բաւական լինի այսու խրատել և՝ի սոյն առնուլ մխիթարութիւն. զի յորժամ՝ի ծարաւոյ յերկարանայ և՝ի քաղցոյ վտան-գի, թէ և յոյժ անզգայ իցէ քան զամենայն ոք, խրա-տուն Տանդերձ և բոլորովին օրն մեծութեամբ տանջա-նացս այսոցիկ զամենայն յիշեցուցանէ, և ոչ պիտոյա-նամբ այլում խորհրդակցի և խրատուի։

Այժմ գովեք զասացեալս, սակայն գործովք յայտ արարէք զգովեալն. ապա թէ ոչ՝ ոչ ինչ է շահ աստ նկրտելն։ Արդեօք զմանուկ ոք Տանապազ՝ի դպրոց ա-ռաքելով, և ոչ ինչ աւելի ուսանիցի. իսկ այս մեզ բա-ւական պատասխանի է միշտ անդ դեգերել մանկանն յանօգուտս. զի զինչ այլ մեծագոյն դատապարտու-թիւն, թէ և այս միայն իցէ որ զօր Տանապազ անդ ըն-թանայ և ունայն առնէ զընթացսն։ Օ այս և առ մեզ խորհեսցուք, ամենեցունն ասեմ. մի չափաւոր ժամանակ Տանգիպիմք աստ, և պատուիրանս սոսկալիս ընդունիք՝ի մէնջ՝ ունելով յինքեանս շահս բազումս. եթէ դար-ձեալ այսպէս երթիցէք որպէս եկիքդ՝ ոչ ինչ ուղղե-լով՝ի ձերոցդ յանցանաց, զինչ օգուտ իցէ ապա գա-լուստն մեր աստ։

Վասնզի և ընչից բազմութիւն ոչ եթէ յայսմանէ լի-նիցի, այլ որ՝ի սմանէ յառաջ գայցէ։ Օ որ և ասեմ իսկ. սերմանողն ոչ եթէ միոջ՝ի սերմանելն միայն փու-թայ, այլ զի և հնձեսցէ. և եթէ այս չէր, ապա վայ-բասպար էր ցանելն, և՝ի Տոյն ունայն ցնդէր։ Նոյնպէս և վաճառականն ոչ եթէ միայն՝ի նաւելն փութայ, այլ զի և Տանդերձ հեռի Տանապարհաւն բազմացուսցէ ըզս-տացուածն. ապա թէ ոչ՝ վերջին աշխատութիւնն և ջնա-սակար Տանապարհ էր վաճառականին։ Օ նոյն և առ մեզ խորհեսցուք. փութամք յեկեղեցիս ոչ միայն զի աստ եկեսցուք Տանապազ, այլ զի շահեսցուք մեծ ինչ և հոգևորական շահս. ապա եթէ դատարկ լինիցի ըն-թացքն մեր և ունայն դարձեալ՝ ոչ ընդունիմք աստ, դատապարտութիւն է և փոյթն մեր. և ահա դիպաք վերջին տուգանաց։

Այլ զիա՞րդ. յորժամ ասէի զնայցէք, խորհեցարուք հարք ընդ որդիս, տեարք ընդ ծառայս, սիրելիք ընդ սիրելիս, զի զոր հրամայեցաւս կատարեցէք. և յորժամ այսրէն դառնայցէք և լուիցէք դարձեալ վասն այսմ միոյ պատուիրանիս զոր երէկն լսայք՝ի խորհրդակցութէ մերմէ՝ ոչ ամաչիցէք, այլ ուրախասջիք և ցնծասջիք, տեսակակից մեզ լինել՝ի յայլ պատուիրանացն ուղղութէն։

Այս մի ասա միայն իմաստասիրեսցուք, զի՛ չէ իսկ բաւական ըստ ամենայնի սակաւ ժամանակաւ զքարատս զայս յանդիման կացուցանել. այլ զի՝ի տան այր՝ի կնոջէ լուիցէ և կին յառնէ, լինելով անտրտունջ և փութալ հասանել՝ի կատարումն այս միոյ օրինացս. իսկ որ յառաջ մտանէ և ուղղիցէ, նախատի ինացեալն. զի որ որոշեալն է և ոչ ուղղեալ, տեսանելով զառաջամուտն չընթացս՝ յարուցանէ զինքն առաւել ջանիւ, և վաղվաղակի և այլն մեզ յաջողեսցի։ Այո՛ հոգա վասն այ, և նա ինքն զքոյինն խնամարկէ միշտ զկեանս։

Այլ զայն մի ասիցես ցիս, զինչ արարիցէ եթէ՝ի բռնաթենէ նեղութեան երդումն դիցէ որ՝ի վերայ իմ, կամ եթէ ոչ հաւատասցէ ինձ։ Այդ ուր այ օրէնքն լուծանի, նեղութիւն պարտ է յիշել. այլ մի լիցի նեղութիւնն հրաժեշտ պատուիրանին, որ ոչ զոճ անարգեալ է՝ հակառակել։ Այա և այլ ևս հնարս ասացից բառնալոյ զերդումն դիւրաւ և առանց նեղութեան. զի որք՝ի տան իցեն որդիք և սիրելիք և ծառայք, եթէ՝ի նոցանէ զսովորութիւնս զայս հատցես, ոչ պիտոյանամ ես բազում աղաչանաց։ Զի յորժամ՝ի միտն հաստատեսցի երկնչել, և բերանոյն խորհրդակից լինի փախչել՝ի բազմապատիկ բանից երդմանց, թէպէտ և բիւրապատիկ որք նեղիցէ, սակայն ոչ կարիցէ ընկերանալ՝ի բարի սովորութենէն։ Այլ որպէս այժմ հանդերձ բազում աշխատութեամբ, գանիւ և բիւրապատիկ նեղութեամբ սպառնալեօք երկեցուցանել և խորհրդաբար խրատել՝ դժուարին հարկաւ կարացաք փոխադրել զձեզ՝ի սովորականէն, սոյնպէս և յայնժամ եթէ բիւր վտանգս հասուսցէ որ, ոչ կարիցէ զսովորական օրէնսն շարժել։ Զի որպէս բաժակ մահու ոչ սպառնանէ առանց ըմպելոյ, և ոչ թէ նեղիցէ որ ըմպել՝ արբոյեն, այսպէս և երդումն լիցի։

Այս մեր զայս ուղղել՝ միսիթարութիւն մեծ է, և առաջարկութիւն առ՝ի յայլ առաքինութեանց մատուցս մերձենալ. . . . Ինձ այսպես թուի եթէ կարող էք այսպես լինել որպես կամիմն, զի և՝ի բացակայից ուստեք վասն ոչ կատարելոյ պատուիրանիս մի հասցէ ինձ անգոմանել. այլ փոխանակ իմ յիշեցէք զբանս իմ յամենայն ժամ. եթէ առ սեղանոյ նստիցիք, յեղանել և՝ի մտանել, զիս մծտ համարեցարուք յոտն կացեալ, և զոր աստ այժմ ասեմն՝ զամենայն հնչեցուցեալ յականջս ձեր. և ուր վասն իմ խօսք լինիցի՝ի ձէնջ, փոխանակ ամենայնի զայս միայն յիշեցէք զպատուիրանս, և զայս վասն ձերոյին սիրոյ տուք ինձ փոխարէն հատուցումն։ Եթէ տեսանիցեմ զձեզ . . . . . *

(ՁԱՒ ՎԵՑԵՐՈՐԴ)

. . . . . .

որպիսք բժշկաց միանձն տեսցեն ցամաքեալ զախտն, բազում առաւելութեամբ զնոյն վասն Հոգւոյ պարտ է առնել. քանզի վէրք Հոգւոց որտմութիւնք են, և պարտ է ստէպ առնուլ զբանս խնամատութեան։ Եւ այսպէս մաքրէ զաղտ մարմնոյ ջերմ ջրոյ բնութի, որպէս զաղտ Հոգւոյ ցամաքեցուցանէ և սրբէ յայտնապէս զօրութի բանից միսիթարութեան։ Այս ոչ է պէտք բաժակոյ՝ի ձեռն բժշկաց. այլ փոխանակ բաժակոյ զբեզուս մեր մատուցանեմք։ Այս Հուր ոչ է պիտոյ աստ առ՝ի ջեռուցանել. այլ փոխանակ Հրոյ ունիմք զշնորհս Հոգւոյն սրբոյ։ Բեր այսուհետև զի այսօր զայս գործեսցուք։

Իսկ եթէ մեք զմեզ ոչ միսիթարեմք, ապա ուստի՞ այլ միսիթարութեան ակն ունիցիմք։ Պատաւորք եկեղեցուցանեն, ոչ ապաքէն քահանայք կան յաղաչանս. իշխանք սպառնայցեն, ոչ ապաքէն եկեղեցի միսիթարէ։ Քանզի և առ տղայս փոքունս այսպէս լինիցի. վարդապետք զտղայս երկեցուցանեն և Տալկանեն և արտասուալից առաքեն առ մայրս իւրեանց. իսկ մայրքն ընդունին և՝ի ծոցս իւրեանց առնուն, գիրկս ածեն, զարտա-

* Թուղթ անկեալ յօրինակէն Թերի Ճայ վերջին հատուած այսր Ճառի և սկիզբն վեցերորդին։

սուն սրբեն և համբուրեն, զցաւս անձանց նոցա հանգուցանեն, հաւանեցուցանեն ասելով՝ եթէ բարիոք է նոցա երկիւղ վարդապետացն։

Իսկ այժմ և ձեզ եհաս երկիւղ իշխանաց և ած՝ի տագնապ մեծ. այլ եկեղեցի որ է մայր մեր ամենեցուն՝ պարզէ զծոց իւր և մերձենալով ընդունի ձեռօք իւրովք. զօրհանապազ աղաչելով ասէ՝ եթէ բարիոք է երկիւղ իշխանաց, բարիոք է և աստ միւթարիչ։ Այն մի երկիւղն ոչ տայ Թոյլ՝ի դանդաղմանէ դիւրութեան հոլովել. իսկ այս միւթարիչս ոչ տայ Թոյլ անկանել՝ի դանդաղանս. և յերկոցունցս ած զերկութիւնն մեզ անօրինէ։ Վասն զի և զիշխանս ինքնին սպառազինեաց՝ի տանջանս և յերկիւղ պագշտաց, և զքահանայս ինքնին ձեռնադրեաց զի բարեխօս լիցին վասն նեղելոց. և սոքա երկոքին ընդ միմեանս միաբանին հանդերձ օրինական գրովք որ զայսցանէ ազդէ գիտութիւն։

Իսկ եթէ իշխանք և զօրապետք գոլով կենդանիք բուռն, մարդիկ Թեթեւամիտք և հնարագէտք և վէպք, ՚ի սակաւ ժամանակի և ՚ի Թարթել ական այսչափ բացին ՚ի վերայ մեր պապակումն, եթէ բնաւին բարձեալ էր երկիւղ իշխանաց և դատաւորաց՝ ոչ որ ոչ էր եկեալ պատիժ խռովութիւն. Թերևս ՚ի խորոց քակեալ էին և առ հասարակ վէպ ՚ի վայր արարեալ էին զհիմունս քաղաքին, և միահաղոյն կորուսանէին զանձինս մեր։ Այլ եթէ զդատաւորաց զդատաստան քակես, կործանեցեր ապա և զամենայն կեանս մեր։ Օ՜ որ օրինակ եթէ զղեկ նաւին և զուղղիչ՝ի բաց ընկենուցուս՝ զնաւն ընկղմեցեր, և զօրապետ զօրաց եթէ կապեալ տանիցիս՝ զամենայն զօրն մատնեցեր, սոյնպէս և քաղաքաց եթէ զիշխանս կորուսանես, քան զգազանս խիստ և անքան լինիմք՝ի կենցաղումն, զիմիմանալ խաճատեաց և ուտեմք, մեծատունն զաղքատն, հզօրն զտկարն, յանդուգն զհանդարտն։

Այլ այժմ ընորհիւն՝ այ ոչ է այսպէս, և "Իրաւանց՝ օրէնք ոչ է անկեալ,,. եթէ ոչ բազումք միշտ՝ի չարիս հայեին, և՝ի բազմաց բիւրապատիկ չարեօք լցեալ էր քաղաքս այս, եթէ չէր ահ սոցին, որպէս և Պաւղոս ասէ. "Ոչ ուստեք իշխանութիւն է, եթէ ոչ յայ. և որ էնն, յայ կարգեալ են,,։ Որպէս պահանգք փայ-

տեսյք տանց որմոց միափակք զքարինս պահեն, այն-պես և իշխանք ի քաղաքս. եթէ զայն քակեսցես, ըզ-պարիսպն կործանեցեր, զի ինքնին խառնակեալ ի վայր անկցին։ Այլ աշխարհի եթէ զիշխանս և որ ի նոցանէ երկիւղն է՝ բարձցես ի միջոյ, տունք և քաղաքք և ազգք ընդ միմեանս անկանիցին առ հատարակ յաներկիւղու-թենէ, և ոչ ոք յումեքէ ակնածէ կամ ունկնդիր լի-նիցի, և ի չահէ տանջանացն հաւանեսցին կամ լռեսցեն։

Այսուհետև, եղբարք, մի տխրեսցուք վասն երկիւ-ղի իշխանաց զոր ունիմք. այլ մանաւանդ գոհասցուք զնա, զի զգանդաղկոտ ոգիս մեր զարթոյց և զգաստ գոր-ծեաց։ Ո՞րինչ ինձս եղև, ասա ինձ, յայսմ տրտմա-գին հոգոցս. ոչ ապաքէն պարկեշտս արար զմեզ և հան-դարտս, կայտառ և փոյթ ի բանս տեառն։ Այժմ ոչ տեսանեմք զանառակ արբեցութիւն և զերդս դիւա-կանս, այլ աղօթք հանապազ, աղաչանք և արտասուք և պատարագ օրհնութեան. և ծաղր անառակ և բանք գարշելիք և ամենայն հնչմունք չարեաց եղծաւ, և որ-պէս կին բարեգործ և աղատ նմանեցաւ ամենայն քա-ղաքս մեր։ Ընդ այսոսիկ տխրիս, ասա ինձ. ոչ ապաքէն պարտ էր ցնծալ և ուրախանալ և գոհանալ նմա, որ այնչափ սակաւամիտ վրինջումն բազում աւուրց երկիւղ գործեաց մեզ։

Այո, ասէ, բայց թէ մինչ յերկիւղն վտանգեալ էաք, բառական էր և յիրաւի գործէաք զօգտութիւնս. իսկ այժմ երկնչիմք մի երբեք եկեսցէ վտանգ և հասցուք ի վերջին կործանումն։ Այլ մի տրտմիք, եղբարք, Պաւ-ղոս մխիթարեսցէ զձեզ ասելով. “Հաւատարիմ է Ած որ ոչ թողու զձեզ ի փորձութիւն առաւել քան զկալ ձեր. այլ արասցէ ընդ փորձութեանն և զելքն, զի համ բերել կարասջիք,,. և դարձեալ ինքն իսկ ասաց. “Ոչ թողից զձեզ և ոչ ընդ վայր հարից,,։ Եթէ արդեամբք գործոյ խորհեր տանջել զմեզ ըստ այսմ փորձութեան, ոչ էր այսչափ աւուրս մնանել զմեզ յերկիւղ. յոյժամ ոչ կամի տանջել, երկեցուցանէ. եթէ կամէր տանջել, առաւելոյր զերկիւղն և զսպառնալիսն։ Ընդ այժմ բիւ-րապատիկ չարաչար քան զմեզ կենօք կացաք, այսչափ աւուրս երկնչել և դողալ անգամ և ի տառեորաց նա-ցա երկնչիմք, և ըստ Պաւղոսի դիպեցաք տանջանաց.

յորժամ էաք ի մէջ քնոյն, վասն առնէաք ի ստէպ ստէպ տագնապել յափշտակութիւնէ չարեաց միչև բարկացուցաք զաւծ. իսկ այժմ ողորմեցաւ ի այսչափ համբերեցաք տանջանաց: Օ՛ի և ոչ էր ըստ արժանի մեղաց մերոց հասեալ դատս, այլ բազում է ՚ի մարդասիրութիւնն: Ո՛չ աստ միայն, այլ և յայլոց բազմադիմ չարեաց փրկիլ միշտ յուսալ պարտ է:

Այս արդ և ոչ պակաս գրաւական զքաղցր յոյսն ետ մեզ աւծ. նախ քան զամենայն, զի որք զչար համբաւն մատուցանել հանդերձեալ էին, երթեալք աստ իբրև թեւաւորք, և զմանկունս զօրացն յետոյ թողուլ կարծէին, ընդ մէջ աւասիկ իբր շաւիղ Հանապարհի արասրին. այլ նոցա այնչափ արգել և խափանումն եղև, մինչ զերիվարս թողուլ հետևակք վարէին. ուստի և ամենայն նեղութեան արգել եղև յամել նոցա ՚ի գնալ անդ: Վասն զքահանայապետն մեր և զամենեցունց ՚ի Տէրն յորոյց աստի աւծ և արար գնալ նմա և մերձենալ յաղաչանս յայս: Ընկալաւ զնոսա արգելն ՚ի մէջ Հանապարհին, զի մի երբեք հասցեն և զՀուրն բորբոքեսցեն, և զվարդապետին անընկալ և ունայն արասցեն զուգևորութիւն առ ՚ի վառել զսկանջս թագաւորին չար բանիւք իբր հրկիզութեամբ:

Այսպա յայտ իսկ է եթէ ոչ առանց ՚ի եղև արգել զինուորացն այնոցիկ Հանապարհին. մարդիկ՝ որ զամենայն ժամանակս իւրեանց ՚ի հեռագնացութեան էին շրջեալ, և այս իսկ ստէպ գործ էր նոցա մերակել զերիվարս, իսկ այժմ յայսմ կառագնացութեանս մանրեալք վերջին գտան և հեռի օտարացան, և եղև հակառակ Յունանու՝ զինչ նմայն դիպեցաւ: Օ՛նա զոր ոչ կամէր երթալ, տարաւ աւծ. իսկ զոսոա որ կամէին գնալ, արգելով զարմանալի աքանչելեացս: Այս որ ոչ կամէր քարոզել զկործանումն նինուէացւոցն, ականջ յարոյց գնա. իսկ զոսոա որ բազում արագութեամբ փութային քարոզել զանցումն քաղաքիս մերոյ, ականջ խափանեաց. ըստ որում գնա ուղղեաց կէտին, և զոսոա խափանեաց երիվարօքն: Տեսանէս զիմաստութիւնն ՚ի. զի զորս գործով յուսացեալ էին կատարել զիւրաքանչիւր առաջարկութիւնս, խափանեցան երկոքեան. նա նաւու Հանդերձ ակն ունէր թագչել յերեսաց տեառն, և նաւն

եղև բանտ նմա. սաքա երիվարաքն հանդերձ ակն ունէին տեսանել փութապէս զթագաւորն, և եղեն երիվարքն արգել նոցա։ Այլ ոչ սոցա երիվարքն և ոչ նմա նաեւ, այլ խնամք ողորմութեանն ՚ի յամենայն կողմանց զամենեսեան իւրով տնօրէնութեամբն խնամատարացուցանէ։

Այս դու միտ դիր ՚ի գթութեանն զիարդ երկեցոյց և միխթարեաց։ Յայնմ աւուր յորում համարձակեցաւ անօրէնութիւնն այն, թոյլ ետ նոցա գնալ. որպէս զի պատմեցեն թագաւորին զամենայն եղեալն աստ, փութապէս ելից, մեծապէս երկեցոյց զամենեսեան։ Իսկ յորժամ գնացին անցեալ երկուս և երիս աւուրս, ուստի ունայն համարեաք զդնալ հայրապետին մերոյ, որպէս թէ հեռի գտաք ՚ի փրկութենէ, յայնժամ զերկիւղն ելոյծ և միխթարեաց. զի նոցա, որպէս ասացի, հասին զմիջոցաւ Ճանապարհին, և որք անտի ՚ի մեզ գային նովին Ճանապարհաւ՝ զնոցին չար հանդիպումն զամենայն մեզ պատմել պատրաստեաց, զի փոքր ի հանգիստ առցուք. որպէս եղև իսկ, և ՚ի բաղում տագնապէ երկիւղին ՚ի բաց կացաք մնանաւոր փոքր մի։

Օ՜այս լուեալ, և արարողին այսմ գործոյ միշտ երկիր պագանել իբրև հօր գթածի և զամենեսեան սիրողի, այժմ վասն մեր վերադրեալ զամենայն անտեսանելի զօրութեամբն արգել զհրեշտակն չարի. ոչ միայն արգել, այլ գրեթէ այսպէս ասաց նոցա. ընդէր փութայք կամ զի արագէք ՚ի գնացս. քաղաք մի այսպիսի կործանիլ համարիք, միթէ աւետիս կամիք աւետարանել թագաւորին. հնացէք աստ մինչև զերջանիկին իմ պատրաստեմ որպէս բժիշկ Քարտար հասանել, որպէս զի քան զփութալդ ձեր առաջամուտ լինիցի։

Այդ նախ քան զսաստիկ վերս անօրէնութեանս այսչափ բարեխնամ ողորմութիւն եղև, և ս մնանաւանդ զինի դառնալոյս մեր, զինի զղջմանս և երկիւղիս և արտասուաց և վերս առնոյ առաւելապէս ընդունիմք զդիւրութիւն։ Օ՜ՅուՆան յիրաւի առաքէր ՚ծ զի դարձուցէ ՚ի զղջումն զնոսա. դուք արդէն ահա զղջումն ցուցէք և առաւել զդարձն, այսուհետև միխթարութեան ակն ունիցիք և ոչ քարոզի որ սպառնալիս ունիցի։ Այսմ այսմ զամենեցուն զՀայրն մեր յորոյց ասաւ, թէ՝ և ուներ արդեալ բազումս. եթէ ոչ էր գթացեալ ՚ի փրկութիւն

մէր, ոչ էր զՀայրն մեր յօժարեցուցեալ. այլ Թէ կամեցեալ էր գնալ, սակայն արգելոյր։

Ունիմ իսկ ասել և զերրորդն որ կարող է զձեզ հաստատուն յուսով առնել՝ զհասեալ տօնս, զի և որք չհաւատացեք՝ յայսմ ժամու հաւատասջիք ամենեքեան։ Վանցի ձեռնաւոր Թագաւորն մեր առաւելապէս գիտէ և պատուեաց զսա քան զամենեսեան որ նախ քան զինքն բարեպաշտութեամբ Թագաւորեալ էին։ Ոչ զչնաստակարս կալեալ 'ի բանտի, յաւուրս յայս առաք հրամանն 'ի պատիւ տօնիս, զի որք 'ի բանտի բնակեալ կան՝ զամենեսեան փութապէս ազատել. յայսմ ժամանակի քահանայապետն մեր երթեալ ընթերնու զպատուիրանս առաջի Թագաւորին, և յանձնէ իւրմէ յիշեցոյ զօրէնս և ասէ՝ Եթէ դու ինքնին զքեզ աղաչեա, և որպէս վայել է քեզ՝ այնպէսնմանեցո զքեզ. յանձնէ քումմէ ունիս զնշան մարդասիրութեան՝ յիրաւի ոչ ծառայի առնել սպանութիւն, և զանիրաւութիւնս համբերես 'ի գործել. զի որք տարակուսեալք են և դատապարտեալք և անյոյս 'ի կենաց՝ զտօնս զգեցեալ ազատեցեր, և զանպարտն և որք ոչ են համարձակ յիրս ինչ՝ դատապարտես, ասա ինձ ով Թագաւոր, ամենակեցոյց այս տօն մերձեալ։ Ի իսպառ բարկանար և մի երբէք զանցաներ դու ըստ պատուիրանս ըստ այս, զոր և ամենայն քաղաքաց օրինօք ասացեալ ես. և ինձ այսպէս Թուի՝ Եթէ հնար էր և զգնացեալսն յարուցանէիր։ Օ այս աղաչեմք ցուցանել զմարդասիրութիւն, այժմ է ժամանակ այսմ բանից։ Ա այսպէս յաղթութիւն պատերազմի պայծառագոյն առնէ զԹագաւոր, որպէս արգելուչն զօրամասութիւն բարկութեան. զի անդ առ հասարակ սպառազէնն զինու զինուորացն է ուղղութիւնն, իսկ աստ մերկ քոյին է յաղթութիւնս և ոչ զոք ունիցիս բաժանորդ ընդ քեզ զփառս այս իմաստութեամբ։ Ընկրկեցեր զբարբարոսական պատերազմ, ընկրկեա և զարտմտութիւն Թագաւորական. լուիցեն ամենայն հեթանոսք և ասասցեն՝ Եթէ երկիւղն Քրիստոսի հզօր է առ 'ի սանձահարել զամենայն իշխանութիւնս։ Փառաւորեա զնա, ով Թագաւոր, Թողով ընկերաց քոց զյանցանս, զի և աս առաւել զքեզ փառաւորեսցէ աստ, և յաւուրն դատաստանի հանդարտ և քաղցր յուցանէ

քեզ զամենատես աչս իւր՝ յիշելով զայսօսիկ զքոյին մարդասիրութիւնդ։ Օ՜ այսօսիկ և առաւել քան զնոյնս խօսեսցի առաջի Թագաւորին Հայրն մեր, և զձեզ զամենեսեան փրկեսցէ ’ի փորձ . . . . . * ութեան ապաւինին, զի անդ փոխադրեալ՝ ’ի նաւակոծութիւն կենցաղոյս ոչ անկանին։

Օ՜ի իսկ և մեք ոչ այսպէս, այլ միշտ ընդ երկիր բևեռեալ եմք, և յանցաւորս մտադիւր կամք ուշ եդեալ ցնորիմք, և զհանդերձեալն քաջ ’ի բաց մոռանամք ’ի ցաւագին և յաշխարելի կենցաղոյս։ Օ՜րինչ պատուիրեաց մեզ Աստ. մի՛ քնաւ հոգալ զանցաւոր կենցաղս։ Այսմ զինչ շահ գործէ մեզ անցաւոր կենցաղս ցանկութեան։ Այսինքն ուսանել վասն որոյ իցէ բարի անցաւոր կեանքս. զի հանդերձեալ կենացն պատճառ սա է մեզ, փոխանակ աստի պատերազմաց և իբր յասպարիզի Հընազանդութեանցս անդ զփառաց պսակն առնուցումք. ապա թէ զայս ոչ բերիցէ մեզ, քան զմահ բիւրապատիկ ողորմագին և ողբալի է։ Իսկ եթէ հանդերձիմք ’ի կենդանութեան հաճոյ լինել Աստ, առաւել լաւագոյն է քան զգնալն . . . ։

Այ՛ի այսուհետև, մի՛ զկենդանիս երանեսցուք և մի՛ զմեռեալս ողբասցուք. այլ զորս մեղաքն են՝ եթէ կենդանիք իցեն և եթէ մեռեալք, կոծեսցուք անդադար. իսկ եթէ յարդարութե՛ն իցեն, երանեսցուք յոր կողմ և հանդիպին։ Վասն արդ իսկ մի՛ է մահն քո և երկնչիս և դողաս. այլ Պաւղոս յամենայն օր մեռանիր և ոչ արտասուէր ըստ այնմ, այլ ուրախ էր և ցնծայր և ասէր. “Յամենայն ժամ զմահն Յիսուսի ’ի մարմինս մեր կրեսցուք,,, և անհոգ եմք։

Նայց տես զի մի՛ և աստ անկցիս անգիտութեամբ. քանզի ոչ որ չարչարին վասն Աստ՝ նոքա միայն հաճելիք են, այլ և որք անիրաւ չարչարին և բերեն քաջութե՛ և գոհութիւն մատուցանեն տեղւոյ տուողին Աստ, ոչ են պակաս քան զայնոսիկ որ վասն Աստ չարչարին։ Վասնզի եբանելին Յոբ բազում՝ և զնազան վէրս ընկալաւ, զոր սատանայ ունայն և մնոտի և ’ի զուր խորհեցաւ. այլ իբրև քաջութեամբ եբեր և գոհացաւ զտեղւոյ տուողէն

* Թուղթք երկու պակասին յօրինակէն։

ՙայ, բոլորովին զգեցաւ զպատկին . . . . Եթէ սպառնայցէ ոք քեզ մահ, ասասցես ընդ նա. խրատեցայ յայ եթէ մի երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին և զոգի ոչ կարեն սպանանել: Եւ եթէ սպառնայցեն հրապարակել կամ առնուլ զգոյս քո, ասասցես նմա. մերկ եկի յորովայնէ մօր իմոյ և մերկանդամ անդրէն դարձայց. ոչ բերաք ինչ յաշխարհս և ոչ տանել կարեմք: Ահ և դու ոչ առցես, գայ մահն և առնու. եթէ դու ոչ սպանանիցես, բնութեանս օրէնք բերեն զվախձան:

Վասն այսուհետև երկիցուք ի մահուանէ որ ըստ բնութեան օրինաց տանիցի զմեզ, այլ յայնցանէ որ ի չար կամաց մերոյք չարեօք եղեալ է՝ այն իսկ ծնանի զտանջանս: Այն խորհեսցուք հանապազ, զի որ եկն մեզ՝ այնմ ակն ունել, և զի ոչ ամենևին ուղղեցաք զկեանս մեր՝ հոգասցուք, և զի ոչ լռեցաք ի ցնորից՝ զայս և զկնի սորին կանխաւ ողբասցուք. իսկ եթէ յանիրաւի դիպեսցի մեզ նեղութիւն յանցաւոր կեանս, համբերելով եղծանեմք զբազում յանցանս մեր: Վասն այսորիկ մեծ բարի է աստ առնուլ զիսոխարկնս մեղաց և ոչ անդ. քանզի մեծատունն ոչ ինչ աստ նեղութի կրեաց, վասն որոյ անդ պապակեր. և զի այս էր պատճառ՝ լուր զինչ ասէր Աբրահամ. “Որդեակ, ընկալար դու զբարիս քո ի կեանս քո որպէս և Ղազարոս զչարիս իւր,,: Արդ Ղազարոս զբարին զկնի առաքինութեանն առնայր, իսկ աստ դիպաւ բիւրապատիկ նեղութեան, ըստ որում հանգեաւ ի գոգնախաւօրն Աբրահամու: Յայսմանէ յայտ է եթէ որք առաքինութեամբ կեան և նեղութեամբ, կրկին ունին զշահ. սոյնպէս որ չարեօք կեան և ոչ զղջանան և փափկացեալ վայելմամբ, կրկին տանջելոց են: “Հոգի խոնարհ անվեր դիւրահաւան է, իսկ հիւանդն բազում աղաչանաց կարօտանայ,,: Վասն ոչ ըստ աղաչեմ մի՛ ի փախուստ՝ ի փրկութենէ մերմէ ձեռնարկեսցուք, այլ փախիցուք՝ ի մեզաց, հեռասցուք՝ ի չար ձանձալարէն: Եթէ յայսցանէ բացեայ եմք, և՝ ի մէջ բիւրուց զինուորաց անկեալ՝ ոչ ոք կարէ խոց դնել. ապա թէ յայնցանէ ոչ եմք հեռացեալ, թէ և՝ ի գլուխս լերանց ելանիցեմք, և անդ բիւր պատերազմունս գտանեմք:

Վասն այսուհետև յիշեա[1] զերիս մանկունսն զայն կան-

1 Պակասէր յօրինակին յիշեա· յաւելաւ՝ ի յունէն:

խաւ որք ՚ի ներքսագոյն ՚ի մէջ հրոյն ոչ դիպան նեղու-
թեան, և այնոքիկ որք զնոսա արկին՝ արտաքոյ հնոցին
նստեալք մնաւեցան ՚ի հրոյն։ Օ՜ ինչ քան զայս սքան-
չելի իցէ. զորս ունէր հնոցն՝ խլեաց զկապանսն. զի ու-
սանիցիս թէ ոչ տեղին, այլ իրացն յեղանակ բերէ
զփրկութիւնս և զտանջանս։ Որք ՚ի հուրն էին՝ փա-
խեան ՚ի հրոյն, և որ արտաքոյ՝ ընկղմեցան և ապակա-
նեցան։ Այն մարմին էր սոցա և նոցա, այլ ոչ մի զգայա-
բանս, վասն որոյ ոչ միապէս իրին դիպան։ Որպէս խոտ
թէ և արտաքոյ հանդիպի հրոյ, այրի վազվազակի. իսկ
ոսկի թէպէտ և յամ ՚ի ներքս ՚ի հուրն, առաւել պայ-
ծառանայ։

Ո՞ւր իցէն որք ասէնն, առյ Թագաւորն զամենայն
ինչս մեր, միայն զանձինս մեր ազատեսցէ։ Ասիր զինչ
է մարմնոյ ազատութիւն. զի ոչ միայն որ զմարմին ոչ
տանջէ՝ ազատ առնէ զնա, այլ որ հանապազ յարդա-
րութիւն կեսցէ։ Որոյին մանկանցս մարմինք ազատ ոչ
էին և մատնեցան հնոցին, բայց զմեղացն ծառայութիւն
՚ի բաց եդեալ կանխաւ՝ ոչ տիրեաց նոցա հուրն. զի այս
միայն է Աստուածութիւն որ ոչ տանջի և ոչ եր-
բեք կրէ նեղութիւն։ Որու յորժամ զմտաւ ածցես
զհնոցն, յիշեա զգեան հրեղէն որ յայնմ յահեղ ա-
ւուրն. զի որպէս աստ իսկ զոմանս յափշտակեաց և յո-
մանց երկեաւ հուրն, նոյնպէս և գեան հրեղէն։ Այն
որ անհրի փայտ խոտ եղէգն, այրէ զայնպիսին հուր.
իսկ եթէ որ անհրի ոսկի արծաթ, զայնպիսին պայծա-
ռացոյն գործէ։

Օ՜ այսոցիկ զնխութս ածցուք զմտաւ, և զհասեալ չա-
րիս բերցուք քաջութեամբ. զիտասցուք զի հասեալ
տրտմութիւնս յայնմ տանջանաց ազատէ զմեզ, եթէ
կեամբ խնամտութեամբ. և աստ ևս առաւել գործես-
ցէ, ոչ եթէ զմեզ միայն, այլ և որ զմեզն ածիցեն՝ շա-
հեցուսցուք, եթէ զուարթամիտ լինիցիմք։ Ո՜ յոչափ
է խնամտութեանն գոյութիւն, որպէս և առ բռնաւորն
էղև յայնժամ։

Որբև հասս եթէ ոչ ինչ միասեցան մանկունքն, լուր
զիարդ փոխեցաւ ՚ի չարեացն. “Օ՜ առաջք ոյ բարձրե-
ցաք, եկեք և եկայք,, ասէ։ Ո՞չ ապաքէն առ սակաւ մի
յառաջ ասէիր՝ թէ “Ո՞վ իցէ ոճ, որ կարող իցէ փըր-

կել զձեզ ՚ի ձեռաց իմոց ,,. զինչ եղև արդ , ով բռնաւոր, ուստի՞ է փոփոխումն. որ արտաքոյ էին՝ ապականեալ տեսեր , և զորս ՚ի ներքս են՝ կոչես. ուստի՞ էին քեզ այսպիսի իմաստութիւն : Տեսեր զիարդ եղև փոխադրեալ Թագաւորն. յորժամ ոչ էր գնոսա կալեալ՝ գայթակղեցաւ , իսկ յորժամ արկ գնոսա ՚ի հնացն՝ իմաստնացաւ : Ա՛ման որոյ և ՚ձեռ տեղի ետ լինել ամենայնի զոր և կամեցաւ բռնաւորն , զի յայտ առնիցէ Թէ որք ՚ի փառաց նորա պահպանեալք են՝ ոչ ոք իցէ կարող վհատել. զոր և Յոբայ արար , զայն և աստ գործեաց : Ա՛նդ Թոյլ ետ սատանայի առ ՚ի ցուցանել զամենայն զօրութիւն նորա. իսկ յորժամ Թափեաց և դատարկացոյց զամենայն նեստս իւր , և ոչ ինաց և ոչ մի չար խորհուրդ , յայնժամ ՚ի պատերազմէ նորա վերացոյց զբնիկն , զի պայծառ և առանց կարծեաց լինիցի յաղթութիւնն . զնոյն և աստ արար : Խորհեցաւ զքաղաքս նոցա այրել , և ոչ արդել. խորհեցաւ առնուլ գերութիւն , և ոչ գայթակղեցոյց . կամեցաւ կալ , և Թոյլ ետ. ՚ի հնոց հրամայեաց արկանել ՚ի բորբոքեալ բոցոյն առաւել քան զչափ , և այսմ տեղի ետ : Յորժամ և ոչ մի ինչ հնարս ինաց բռնաւորին՝ այլ դատարկացոյց զամենայն զօրութիւնս իւր , և ապա երևեցոյց զզօրութիւնն իւր ՚ձեռ և զինանկանցն զհամ բերութիւն :

Տեսանես զի մինչ ՚ի վախճան Թոյլ ետ սրտմտութեանն , զի ցուցցէ՝ որք խորհեալ էին և վասն որոյ խորհուրդն էր՝ զիմաստութիւնն իւր և զբարի խնամն ողորմութեանն : Ո՞ր յայսցանէ յերկոցունց յայնժամ իմացեալ բռնաւորն գոչէր և ասէր . “ Ո՛տառաք ՚ձեզ , եղէք և եկայք ,,. . . : Ո՞ զինչ եղև , ով բռնաւոր , զի ծառայս ՚ձեզ զնոսա կոչես . ո՞չ ապաքէն քո էին ծառայք : Ա՛յլ քակեցին , ասէ , զԹագաւորութիւնս իմ, ցուցին հանդերձ գործովք զձեմարիտ ՚ձեծն իւրեանց. եԹէ մարդկան էին ծառայք , ոչ էր երկուցեալ հարն ՚ի նոցանէ և ոչ բարձեալ զզօրութիւն բոցոյն . ՚ի ծառայից մարդկան և չյոլոց ստեղծուածոց ոչ երկնչի և պատուէ : Ա՛ման այսորիկ դարձեալ ասէ . “ Ո՛րհնեալ է ՚ձեծ որ առաքեաց զՀրեշտակ իւր և փրկեաց զծառայս իւր ,,. . . : Ա՛յս ըստ ՚ձեզ զօրութեանն էր. սաս արդարեւ զառա-

քինութիւն նոցա. «Ով յուսացան՝ ի նա և արհամարհեցին զՀրամանս Թագաւորին և մանեցին զանձինս իւրեանց, զի մի պաշտեսցեն զաստուածս օտարս»։

Զդէպ զինչ լինելի օրինակ առաքինութեան նոցա։ Ա՝ նախ քան զայս յորժամ ասացին եթէ «զաստուածս քո մեք ոչ պաշտեմք և պատկերիդ երկիր ոչ պագանեմք», զինոցն չարաչար վառեալ հրամայէր. իսկ այժմ իբրև՝ ի գործոց իւրեանց զայս խրատեցին, ոչ միայն եթէ ոչ խռովեցաւ, այլ և գովեաց և սքանչացաւ, զի անլուր եղեն ինքեան։ Յաչափ բարիք է առաքինութիւն, մինչ զայնոսիկ որ պատերազմողքն են՝ զօրացուցանէ և գովաղս յօրինէ։ Յաղթեցին նոքա, և որ յաղթեցաւն՝ գոհանայր։ Ի երկեցոյց զնոսա երևումն հրոյն, քանզի միթէ արեր զնոսա յոյն զոր ունէին առաջ. ըստ որում որ աջն էր արարածոց՝ երից մանկանցն կոչեր։ Ի եթէ նախապատկառք եղեն յիւրում տեղութեան, այլ քանզի զամենայն տիեզերս փոխան ոչ արժէին զերիս մանկունսն՝ վասն որոյ գովէր զարհամարհողս իւր։ Յաչափ բռնաւորք և թագաւորք և իշխանք բացակայք հաւանեցան նմա, և երեք մանկունքն ոչ հաւանեցան նմա, այլ ծաղր արարին զբռնաւորութիւն նորա։ Քանչացաւ զի ետես եթէ ոչ հակառակութեամբ, այլ խնամոտութեամբ զայն գործեցին. ոչ ցաւագին վիրօք, այլ բարեպաշտութեամբ. ոչ եթէ բնական ամբարտաւանութեամբ, այլ նախանձու ջերմութեան։ Քանզի առաջին և մեծ բարի է յուսալն՝ ի տէր, զոր և խուժադուժն այն վերագոչեաց՝ եթէ «Յուսացան՝ ի նա», զի աստ ոչ փախեան յառաջագրեալ տանջանացն։

Օ՜սոյն իսկ այժմ ասեմ, որպէս թէ ամենայն ազգ փորձութեանց չարժեսցին՝ ի վերայ մեր, և սրտմտութիւնք և բարկութիւնք թագաւորաց և նոցին խորհրդակցաց, մի երկիցուք, այլ միայն յայ պատկառեսցուք։ Ա՝ և յայնժամ հնոյն վառեալ կայր. իսկ նոքա ծաղր առնէին, քանզի զմեզս կապեցին. և գիտէին իսկ որ թէպէտ և այրեսցին, ոչ լինէր նոցա վտանգ, այլ այնու շինուցանէին զվերջինն որ կայ միայ տանջանս։ Քանզի մեծագոյն տանջանք մեղքն իսկ են, թէպէտ և այժմ ոչ տանջիմք. որպէս մեծ քան զամենայն և բարձրա-

գոյն պատիւ և հանգիստ է որք կեան առաքինութիւն, թէպէտ և աստ տանջեսցին։ Այնպէս մեղքն բաժանեն զմեզ յայ, որպէս և ինքն իսկ ասաց. «Ոչ մեղք ձեր որոշեն ընդ իս և ընդ ձեզ»։ Այլ տանջանք ժողովեն զմեզ առ ՅԱծ. «Ցուր մեզ, ասէ, խաղաղութիւն, զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցեր մեզ»...։

Որպէս ախտաժէտութիւն ինչ դժնդակ ոչ զի ունիցի միայն՝ չար է, այլ մանաւանդ յորժամ անբժշկելի իցէ, նոյնպէս և մեղք եթէ ոչ տանջեսցի, քան զամ թշուառական է. և ես քան զես չարագոյն լինիցի, եթէ ոչ տանջեսցի և ոչ դիպեսցի նեղութեան։ Զի որ օրինակ որք ի փորի ախտաժէտութիւն ունիցին, և յայնժամ յառատ սեղանս և ի հով ըմպելիս վայելեն և ի բազմակատար խորտիկս առաւել են ողորմագին, զի ի փափկութենէն ցաւքն աճեն, իսկ եթէ տառապի քաղցիւ և ծարաւով ըստ օրէնս բժշկաց՝ յոյս ունի փրկութեան, այսպէս և որք ի չարութիւնս կան, եթէ ի տանջանս անկանիցին, ունին քաղցր յոյս. ապա եթէ հանդերձ չարութեան յաւելմամբ և փափկութեամբ վայելեն, քան զայնոսիկ որ ըստ մարմնոյ ունին զախտաժէտութիւն՝ յոյժ և առաւել են ողորմելիք, և այնչափ առաւել որչափ ոգի քան զմարմին բարձրագոյն է։

Այդ եթէ տեսանիցես զոմանս ի մեղս և զկեսս ի նոցանէ ի սով հանապազ և ի քաղցր նեղութիւնս և զկեսս յաբեղեցութիւն և ի փափուկ որովայնամոլութիւնս հատեալք, յայնցանէ մանաւանդ զայնոսիկ երանի՛ որք ի նեղութեան են։ Զի զբոց մեզաց հատանեն վիշտք և նեղութիւնք, և ի հանդերձեալ վճռին և յահեղակերպ դատաստանին յայնմիկ երթեալ ոչ փոքր միխթարութիւն ընդունին. և որ քաղցր մեղք իցեն, որչափ նեղութեան դիպին աստ՝ զմեզան եղծանեն, և այսպէս անդր երթիցեն։

Այդ այսուհետև ժամ իսկ է մեզ անցանել առ ի խրատն փախչելոյ յերդմանէ, և զօրհնասազ ակն ունել միխթարութեան, սատակել զերդմանն սովորութիւն զգուրա և զանօգուտ ընդունելութիւնն։ Այթէ զայս խնդրեմք, բազումք մեզ բերեալ օրինակ և այսպէս առնիցեն. իսկ եթէ ասիցեն՝ այս անուն և այն երդնուն ստէպ, ասասցուք ընդ նոսա՝ թէ և այնք ուղղեցին

ընտիրքն ՝ի է, որ և այլոցն բերիցէ զվիշտն. բայց մեղաւորքն ՝ի մեղաւորացն ոչ օգտիցին որք հաղորդ են յանցանացն. այլ որք՝ յուղղութեան են, այսու զմեղաւորսն դատապարտեն: Այս և որք զՔրիստոս ոչ ընկալեցին և ոչ արբուցին՝ բազումք իսկ էին, այլ միմեանց ոչ օգտեցին. որպէս հինգ կուսանքն այն թէպէտ և ՝ի խնդիր ելին՝ ոչ ինչ ՝ի միմեանց շահեցան, այլ ինքեանք որ ուղղեցին և նոքա որ ոչ այսպէս՝ դատապարտեալք տանջեցան:

Փոխեսցուք այսուհետև ՝ի մնրմանչելոյ ընդ հոգիս մեր. մի յանկեալան հայեսցուք, այլ յայնոսիկ որք յուղղութեան են, և փութասցուք յիշատակ առնել վշտեալ աւուրցս պահոց, և այսպէս երթիցեմք աստի: Այլ որպէս խոստումն ինչ արարեալ տօնիս, կամ հանդերձ կամ ծառայ ազատել կամ անօթս պատուականս, յիշեմք առ միմեանս ՝ի հասեալ ժամանակին՝ թէ զծառայն զայն և զհանդերձ խոստացաք տօնիս և ժամանակ է կատարելոյ, նոյնպէս և զօրէնս զայս ուղղելով՝ ասասցուք եթէ յաւուրս քառասնորդացն զչար սովորութիւնն զոր ունէաք վանս երդմանց, ՝ի բաց ընկեցաք, քանզի սակաւ մի խրատ լուաք և դարձաք յայն մեղաց:

Այլ ասեն. դժուարաւ ուղղի այսպիսի սովորութիւն: Գիտեմ և ես, վասն այսորիկ ջանամ զձեզ յայլ բաւրիոք և ՝ի շահաւէտ սովորութիւն ածել: Օ՛ի յորժամ ասիցես՝ դժուարին է ՝ի բաց կալ յայսմ սովորութենէ, յայնժամ մանաւանդ փութա ՝ի բաց կալ, և իմայիր սատուգապէս եթէ սովորեսցիս ոչ երդնուլ, չէ այնուհետև ումեք պէտք աղաչանաց: Օ՛ինչ դժուարին է չերդնուլն, այլ մանաւանդ հակառակն. և զիարդ զառլոր օրն կալ ծարաւի և նօթի և նուաղել: Արիուք ասես՝ եթէ քան զայն դիւրին է չերդնուլն. բայց սակայն եղև սովորութիւն յայսոսիկ կարող և հեշտ: Յորժամ պահքս հասանիցեն, թէ և բիւրապատիկ ոք նեղէ և հարկէ կամ ՝ի գինի հաղորդել կամ յայլ կերակուրս զոր չէ արժան ձաշակել յաւուրս քառասնորդացս, թէ և մնչ հասանիցէ ՝ի յարգելեալ կերակրոյ ոչ ոք քնաւ ձաշակէ. և սակայն զսովորութիւն պարտ էր առ սեղանոյն չիշել, բայց ընդելութեամբ իմացեալ մեր զարժանն՝ քաջութեամբ տանիմք ամենայն տառապանաց:

Ա. յսպէս և վասն երդմանց եղիցի. որպէս ՚ի կերակուր որ Թէպէտ և բիւր նեղութիւն որ դիցէ ՚ի վերայ մեր՝ ինամք և ունիմք զսովորականն, նոյնպէս և ըստ այմ լինիցի, Թէ և բիւր որ ազաչիցէ, ոչ ՚ի բաց կամք ՚ի բաբի սովորութենէս։

Ա. րդ եԹէ ՚ի տուն երԹիցես, զայս ամենայն ասա ցնոսա որք ՚ի տանն իցեն. և որպէս քաղումք քաղում անգամ ելանեն ՚ի բուրաստանէ՝ վարդ կամ մանուշակ կամ յայսպիսի ծաղկանց առցեն ՚ի ձեռս և բերեն ՚ի մատունս, և այլք ստեղն ՚ի ծառոց հատեալ հանդերձ պտղովն ելանեն, այլք ՚ի բազմակատար ընԹրեաց առեալ մատունս տանին ՚ի տունս իւրեանց, այսպէս և դու երԹալով ասասի՝ տարեալ խրատ կնոջ, որդւոց և ամենայն հարազատաց քոց։ Օ ի այս իսկ քան զբուրաստան և զդրախտ և զսեղան ընդունելի է խորհրդածութիւնս. այս վարդ ոչ երբէք Թառամի, և պտուղս ոչ երբէք Թարշամեալ անկանի, և խորհիկս ոչ երբէք ապականի. յայնցանէ ժամանակաւ է վայելուչն, իսկ աստ հանապազ է օգուտն, ոչ զկնի ուղղութեանս, այլ ՚ի նոյն յուղղութիւնս...։

Ջուք լինձ այսուհետև պարծել ձեզ ՚ի յանցաւոր կենցաղութիւն. յորժամ որոց վստահացեալ է զքանքարն՝ քննեսցէ, բաւական է լինձ վարձս վաստակոյս ձեր հաճոյ լինելդ. եԹէ տեսից զձեզ պարկեշտութեամբ կեալ, ահա ընկալայ զամենայն։ Ա. րարէք այսուհետև զոր ե՛ բէկ խրատեցի, և այսօր ասեմ և յաւելոյ ոչ դադաբեմ. դատապարտութիւն սահմանեցէք որք երդնուն, դատապարտութիւն՝ որ շահ բերէ և ոչ տուգանս. պատբաստեցարուք այսուհետև զի ՚ի հանդիսի ցուցանիցէք զուղղութիւնս։ Ա. յս ես իւրաքանչիւր որ ՚ի ձէնջ փոյձեցից և զյարձակումն բանիս երկայն սարարից, զի յերկարելովս գտից զուղղեալն և որ ոչ այսպէս։ Ա. տակ եԹէ լինիցի գտանել զոք յերդումն, զամենեսեան որք ուղղեցին՝ կացուցից առաջի նորա յայտնապէս, պարտաւորեալ զնա և յանդիմանեալ, որով վաղվաղակի փախչիցին՝ ՚ի չար սովորութենէն։ Ա. նպուղ լաւագոյն է աստ լինել նախատս և ուղղել, քան յահեղ աւուրն յայն հաճոբէն ամենայն տիեզերաց առաջի ամօԹով ՚ի տանջանս մատանել վասն մեղաց որ ՚ի ձեզ գտանի, Թէպէտ և աստ

յամենեցունց տեսութենէ ծածուկ իցէ։ Այլ քան լեցի ումեք ՚ի ձէնջ փոխանակ բարի խրատուս անդ տարաբերը լինել. այլ աղօթիւք սուրբ Հարցն յամենայն մեղաց ուղեսցուք և զուղղութեանն պտուղ ցուցցուք, զի աստի հանդերձ բազում համարձակութեամբ երթիցուք և հանդերձեալ բարութեանցն հասցուք ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր փառք հանդերձ հոգւովն սրբով յաւիտեանս. ամէն։

ՁԱՒՈՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Խօսք եթէ մահ և արամութիւնք մեզքն բերին յաշխարհս, և նովքն դարձեալ բարձցին մեզքն. և եթէ «Ի սկզբանէ արար ած զերկին և զերկիր». և թէ ոչ միայն պատուէ զմեզ ած, այլ և առնչէ ըստ նմանութեան բարութեանց։

Բազում առաքինութեամբ երկիւղ իսկ յայտնեցաք սիրոյդ ձերում. և յայնմ բազմութենէն եթէ ոչ զամենայն ունել ՚ի միտս ձեր կարող իցէք, զայն մանաւանդ զձեզ աղաչեմ յիշել՝ թէ տրտմութիւն զոր ետ մեզ ած, ոչ վասն այլ ինչ իրաց, բայց միայն վասն մեղաց, և զայս յայտնեաց այսմ գործոյ փրկութիւն։ Իսկ եթէ ՚ի զրկութեն ընչից կամ ՚ի հիւանդութիւնս կամ ՚ի մահ կամ յայլ նեղութիւնս անկեալ՝ տրտմութեամբ տխրիմք, ոչ միայն յայնմ տրտմութենէ ոչ պտղաբերէ միաբարութիւն, այլ և ընդերկարի և նեղութիւն. իսկ յորժամ վասն մեղաց տրտմիմք և տխրիմք, ՚ի բաց հատանեմք զբազմութիւն մեղաց և ՚ի հանդարտութի՛ն փոխիմք, թերևս բազում անդամ և մինչև խոպառ եղծանեմք զամենայն յանցանս։ Զայս յիշեցէք հանապազ զհանդէս, զի միայն ՚ի վերայ մեղաց սուգ առեալ տրտմեսցուք, և ոչ վասն այլ ինչ իրաց. և զինի այսոքիկ դարձեալ՝ թէ զմահ և զտրտմութիւն մեզքն եբեր ՚ի կենցաղս մեր, և յերկոցունցս յայսցանէ լուծանիլ դարձեալ։

Այլ զայս նախ ստուգապէս ցուցաք մի յայլ ինչ իրաց

քնաւ երկնչել, բայց միայն ՚ի մեղաց և յանցանաց։ Ա՚ի երկիցուք ՚ի տանջանաց ուստի փախուստն է ՚ի տանջանաց. որպէս երեք մանկունքն ոչ երկեան ՚ի հնոցէն, ո՛ բուվ փախեան իսկ ՚ի բորբոքմանէն. այսպէս պարտ է լինել ծառայիւ այլ։ Այլ զի ոք ՚ի հնումն կէին, տակաւին մահն ոչ էր մահացեալ, և դրունք պղնձիք ոչ էին խորտակեալ և քակեալ և ոչ նիգք երկաթիք, և ոչ այսպէս արիաբար համարձակեալք մարդիկ ՚ի մեռանել, մեք զո՛ր պատասխանի ունիցիմք կամ զո՛ր ներումն թողութեան, որ այսչափ վայելեցաք բարութեանց և ոչ հասաք մինչ յայն ՚ի նոցա առաքինութիւնն։ Այժմ անուն միայն է մահու, իսկ յայլ գործոյ անարատ է. և ոչ այլ ինչ է մահ, բայց քուն և հեռաւորութիւն և փոխադրութիւն և հանգիստ և բարի նաւահանգիստ և փոխումն յամբոխից և աղատութիւն ՚ի կենցաղական հոգոցս։

Այլ զաղաչանաց զբանս աստէն լուծանեմ. քանզի այս հինգերորդ օր է զի աղաչել առաք զձեր ձեր, և կալ ծեմ ձանձրացեալ զամենայն լսողդ, և բաւական են ասացեալքս։ Իսկ որ նուազ են մտօք, թէ և առաւելումբ ՚ի նոյն ձառս, սակայն առաւել ինչ ոչ լինիցի։ Այամ իսկ է մեզ ՚ի գրոց վարդապետութիւն դառնալ պատմութեամբ. զի թէ վասն եկելոց վշտացս այսոցիկ ոչ ինչ յայտնեալ էաք, իբր զգաշան ծանուցեալ էաք և ոչ մարդիկ. և դարձեալ թէ զամենայն վասն այսոցիկ ասէաք, նեղասրտութիւն և կարձմտութիւն զմիմեանս յիրաւի ոք ձանաչէը։ Այժմ դիտօք զսիրտս մեր առաձ, որ կարող է բանալ զվիտս մեր և հալածել ՚ի ներքուստ զամենայն տրտմութիւնս։ Այդ ՚ի սովորական վարդապետութիւնն եկեսցուք այժմ. մանաւանդ զի և ամենայն իսկ պատմութիւն գրոց մխիթարութիւն է և մխիթարիչ. մինչ կարծեմ ՚ի բայ կալ յաղաչանաց, դարձեալ ՚ի նոյն պատձառս անկանիմք հանդերձ գրոց պատմութեամբ։ Վասնզի և գիրք ամենայն մխիթարութիւն իսկ է ոչք ՚ի միտ առնուն, յայնցանէ ձեզ յայտնի առնեմ. ոչ եթէ փորձիմ անցանել ընդ թիւս գրոց ինդրել բանս մխիթարութեան, այլ զի ստուգապէս խոստանան ցուցումն ընդհել, զոր այսօր ձեզ ընթերնուլ սկսաք. զսկիզբն և որ զկնի՝ որ թուի թէ ոչ հետն

երևի բանի մխիթարութեան, և ձեզ կարծիցի քնաւ ի մխիթարութենէ օտար, զոյն զայս ի մէջ բերցուք, զոր և ասեմ իսկ յայտնապես զակիզբն և որ զկնի։

"Ի սկզբանէ արար Աստ զերկինն և զերկիր։ և երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և խաւար ի վերայ անդնդոց,,։ Կանոն կարծեմ մխիթարութիւ ձեզ ի տըրտմութենէ ունիցի. ոչ ապաքէն սկիզբն առացելոցս պատմութիւն է և վարդապետութիւն արարչութեան։ Լըդ կամիք զի ցուցից աստ զթագուցեալ բանս մխիթարութեան. զգաստացարուք այսուհետև և հանդերձ բազում ստուգութեամբ ի միտ առէք զոր հանդերձեալս եմ ասել։ Յորժամ լսիցես թէ զերկինս և զերկիր, զծով, զօդս, զջուրս, զաստեղս երկնից, զերկուս լուսաւորս զմեծամեծս և զաքանչելիս, զառնկս զբոյոս, զանասունս, զթռչունս և զարարչաբար զամենայն տեսիլս և զդալիս վասն քո և վասն քոյին փրկութե և պատուոյ արար Աստ, արդ ոչ է բաւական վաղվաղակի ընդունել քեզ մխիթարութիւն և զբարձրագոյն սիրոյն Աստուծոյ ցուցումն, յորժամ տեսանես որ այսչափ հաստատագեղ աշխարհք մեծ և սքանչելի վասն քո սակաւ փոքրկութեանդ ի մէջ ածեալ։

Եւ յորժամ լսիցես թէ ի սկզբանէ արար Աստ զերկինս և զերկիր, մի զարմացար ընդ եռանուս, այլ երթ մտաք քովք ընդ ամենայն չափս աշխարհիս, և համբեաց եթէ որչափ բազմակատար սեղան մատուցեալ է մեզ, և բազմապատիկ յամենայն կողմանց պարգևեալ է մեզ ուրախութիւն։ Եւ այս իսկ է մեծ և սքանչելի, զի ոչ հատուցումն վաստակոց և ոչ փոխարէնս ըստ ուղղութեան մերոյ տուաւ մեզ այսչափ ահաւոր աշխարհ, այլ յորմէ հետէ զմեզ ստեղծ, անդէն յարքայութիւնս յայս զաղգս մեր արժանացոյց։

"Լըսասցուք, ասէ, մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան,,։ Սկիզբն նախ քան զպատկերն ասէ. այսինքն թէ որպէս յերկինս չիք վերադոյն այ, նոյնպէս և ի վերայ երկրի ոչ ինչ է ի վեր քան զմարդ։ Նախ առաջին այսու պատուեաց, զի ըստ պատկերի իւրում արար զնա. երկրորդ զի ոչ փոխարէնս մեզ ի սկզբանն չնորհեաց, այլ մերկ զերծոյ մարդասիրութեն արար զնորհս. երրորդ զի ոչ ըստ քնութե միայն չնոր-

հեաց մեզ իշխանութիւնս, այլ և այլ ազգ բաժանեաց, է որ ըստ ձեռնադրութեան և է որ արտաքին և բնական. բնական որպէս առիւծ 'ի վերայ անասնոց և գազանաց, որպէս արծուի 'ի վերայ հաւուց թռչնոց. իսկ որ ձեռնադրութեամբ իցեն, որպէս Թագաւորք 'ի վերայ մեր. այսինքն ոչ եթէ զբնութիւնն բռնաւորէ 'ի վերայ ընկերաց իւրոց, որով ըմբռնի 'ի նոցին, ըստ ոգւոյն և երկրորդն մնաւանդ փոխանակէ զառաջինն: Այսպիսիք են՝ որ ոչ են 'ի բնականս, դիւրաւ առնուն զփոխարկութիւնս: Իսկ առիւծ ոչ է այսպէս, այլ ըզբնութիւն իւր բռնաւորեալ ունի ըմբռնելով 'ի վերայ անասնոց և գազանաց, որպէս արծուի 'ի վերայ հաւուց միշտ: Ոչքա ըստ ազգի ժառանգեալ են զսովորութիւն Թագաւորութեան. զի ոչ ոք ետես զառիւծ փոխեալ 'ի բնութենէ կամ լեալ ողորմած 'ի վերայ անասնոց հօտի իւրոյ:

Յայսպէս 'ի սկզբանէ զԹագաւորութիւն շնորհեաց մեզ Աստ և տէր կացոյց 'ի վերայ ամենեցուն. և ոչ այսու միայն պատուեաց զբնութիւնս մեր, այլ և այժմ աճեցուց բնակութեան առաւել բնակութիւն հրամանակարգեաց մեզ յերկինս զարքայութիւն՝ բան տալեալ և կնոքին անմահ շնորհեալ: Զի զի՞ մի ասացից, ուր անչափ մեծութիւն է համբաւեալ Աստ գԹութեանն: Այլ ոչ միայն պատուեաց, այլ և տանջէ և ես. այսոքիւք կարող է յուցանել մեզ զբարերարութիւն և զմարդասիրութիւն իւր: Զի յաղագս սորին մանաւանդ աղաչեմ զձեզ զամենեսեան Հանապազ, զի հանդերձ ստուգութեամբ իմասցուք՝ Թէ Աստ ոչ միայն պատուէ և բարեգործէ, այլ և տանջէ և խրատէ ես ըստ նմանութեան բարութեանց: ԶԹէ ընդ հեթանոս և ընդ հերձուածողս պատերազմ շարժի և մարտ վասն բարեբարութեանն Աստ և մարդասիրութեանն, մի միայն յորժամ պատուեաց զմեզ, այլ և յորժամ խրատեաց՝ ցուցցուք զնորա մարդասիրութիւնն և զբարերարութիւնն: Օ՛ի եթէ 'ի պատուելն միայն իցէ բարի և 'ի տանջելն ոչ երևեսցի բարի, կիսակատար իցէ ապա նորա բարութիւն. այլ չէ այսպէս, քաւ լիցի: Այ մարդկանէ լինել այսպէս յիրաւի է, քանզի խոտութեամբ և բարկութեամբ ածէն զտանջանս. իսկ Աստ յայսցանէ անախտ

է. եթէ բարի գործեսցէ և եթէ տանջեսցէ, ըստ նմին բարուքեանց...։

Օ սոյն իսկ զբանս ոչ մի անգամ ասացից, այլ և բազում անգամ. զի յորժամ սուլ լինիցի և երաշտութի՛ւ և պատերազմունք և յարիցէ բարկութիւն Աստուածական և այլ ինչ նոյնպիսի անկարծելի պատուհասք, բազումք առանց օգտելոյ պատրեալք ասեն՝ եթէ ոչ են այսոքիկ արժանի խնամոյն Աստուծոյ։ Իսկ մեք զայսոսիկ մի անփոյթ արասցուք, այլ տեսցուք զգուշութեամբ, եթէ սուլ, եթէ պատերազմ, եթէ հիւանդութի՛ւ, եթէ այլ ինչ հարուածս ածիցէ՛ ի մարդիկ, ՚ի մարդասիրութենէ և ՚ի բազում գթութենէ զայս առնիցէ։ Զի տեսցուք զբանս այսպէս։

Վասնզի և Տարք մանաւանդ որ սիրէն զորդիս իւրեանց, ոչ միշտ առ սեղանս պարապորդեալ հրամայեն, այլ և վերս դիցեն...։ Զորդ եթէ մարդիկ խստութի՛ւ և բարկութեամբ բազում անգամ օգուտս գործեն, և այն ոչ եթէ գազանային և անմարդաբար, այլ անխայեղով և սիրական գթով կարծեն տանջել զոր սիրեն, ապա արչափ յաղագս այ Տամարել զայս պարտ է, որ քան զամենայն հայրական գութ դեր ՚ի վերոյ անցանէ իւրով առաւելական բարուքեամբն։

Այլ զի մի գժուարին զասացեալս Տամարիցիս, բեր այսուհետև ՚ի գրոցս յայսցանէ յայտնեսցուք զբանս։ Պատրեցաւ արՏամարհեցաւ մարդն առաջին. տեսցուք թէ արպէս յանցեաւ նա, կամ զնարդ երևեցաւ ածէ։ Իթէ անյայտ արար զնա ամենևին, որպէս և բանն արդարութեան խնդրէ, որում զայնչափ բարութիւնս եցոյց, և այնչափ ՚ի խնամն վայելեաց, և անդէն յառաջնմէ ՚ի բարերարէն իւրմէ ՚ի բաց կացեալ, ըստ այնմ բառնալ ՚ի միջոյ և ամենևին անյայտ առնել պարտ էր։ Այլ ածէ զայս ոչ արար, և ոչ իբրև զպիղծ Տամարեցաւ՝ զնա և դարձոյց զերեսս իւր ՚ի նմանէ որ այնպէս անմիտ և ապերախտ լեալ առ բարեգործն, այլ եկեալ առ նա որպէս բժիշկ առ հիւանդ։

Այլ դու ով սիրելի, մի միայն ընթանալ ընդ ասացեալս, այլ իմացիր զչափ սիրոյ նորա. զի ոչ առաքեաց զՏրեշտակս և ոչ Տրեշտակապետս և ոչ զայլ ոք ՚ի ծառայից, այլ ինքնին տէրն էջ առ անկեալն յարուցանել

զնա, միայն առ մինն որպէս սիրելի առ սիրելի՝ որ չա-
րիս գործեալ իցէ և կացցէ ՚ի դժուարին կեանս՝ մտա-
նիցէ սիրելին առ ՚ի հարցանել և իմանալ զպատճառ
վշտին, այսպէս եկին ՝ած, և զբանն զոր խօսեցաւ ընդ
նմա լի բազում գԹուԹեամբ՝ ցուցանելով զանբաւ մար-
դասիրուԹիւնն իւր։

Այլ զինչ ասացից զբանս զամենայն, մինչ զի յառա-
ջինն բանին նիւԹեաց զգուեԹ սիրոյ իւրոյ վաղվաղակի։
Եւ ասաց անարգանօք զոր պարան էր ասել. ով գարշ
և ամենագարշ, այսչափ վայելեցեր ՚ի իմանան ողորմու-
Թեան իմոյ, պատուեցի զքեզ արքայուԹեամբ և զամե-
նայն երկիր ետու ՚ի ձեռս քո ոչ վասն ուղղուԹեան և
բարի գործոց քոց. առեր գրաւական գԹուԹեան իմոյ
և իմանայ որ ՀՀմարիտ ցուցանէին քեզ. զչար դևն ըզ-
խաբողն և զԹշնամին քոյոյ փրկուԹեանդ արժանահա-
ւատալն արարեր քան զգԹուԹիւն տեառն քո. նա ինքն
զինչ եցոյց քեզ որպէս և ետս. ոչ ապաքէն զերկինս և
զերկիր վասն քո արարի, և զծով, զարեգակն և զլու-
սին, զաստեղս. ոչ ապաքէն հրեշտակք ամենայն զար-
մացան յայսմիկ. և զայս վասն քո արարի և հանդրս-
տեան քո և միահաղոյն իսկ զայսչափ աշխարհ. իսկ դու
զփոքր և զանարգ բանս նորա և զսուտ խոստումն և ըզ-
պատրանաց խօսս քան զգործս բարեգործի քո և զկըր-
նամն գԹուԹեան նորա հաւատարիմ կարծեցեր Թէ
իցէ, զքեզ ինքն ետուր նմա։

Օ այս ամենայն և առաւել քան զսոյն պարտ էր ա-
սել յաւժԹ եղելոյն. իսկ ՝ած ոչ այսպէս արար, այլ
վհակառակն։ Եւ աղվաղակի յառաջին ձայնէն զանկեալն
յարուցանէր, և զզարհուրեալն և զդողացեալն համար-
ձակուԹեամբ հաստատէր. նախ ձայնիւ կոչեաց զնա,
և ոչ միայն կոչեաց, այլ յանուանէ. «Ադամ ՚ուր ես»
ասէ. այսիւ եցոյց զբազմապատիկ զսէրն և զգուեԹ իւր։
Վ՚իտէք զայս ամենեքեան, զի այս իսկ է նշան սիրոյ
հարազատուԹէ. սոյնպէս և որք կոծին զվախճանեալն՝
սովորուԹիւն է առնել, ստէպ զանուանս նոցա յիշելով
կոծին։ Իսկ որ ԹշնամուԹեամբ առելիք են, ոչ երբէք
զանուն տրտմեցուցանողին լսել կամին. որպէս և Այ-
ւուզ զ՚ԻսուԹէ ոչ ինչ անիրաւեալ՝ մեծապէս և բազ-
մահնար որոգայԹիւ վատնել կամէր. և յորժամ դար-

ձաւ ՚ի նմանէ և ազատեաց զնա, զանուն նորա յիշելով ոչ ընդունէր. քանզի յորժամ բազմեցաւ ՚ի սեղան և զնա ոչ ետես մտեալ՝ զինչ ասէր. ոչ ասաց՝ ՚ուր իցէ Պաւիթ, այլ "՚ուր է որդին Յեսսեայ,, ՚ի հօրն ա-նուանէ զնա կոչէր։ Եւ դարձեալ Հրեայքն վասն Քրիս-տոսի նոյնպէս առնէին. յորժամ դարձան ՚ի նմանէ և ատեցին զնա, ոչ ասէին՝ ՚ուր է Քրիստոսն, այլ Թէ "՚ուր է նա,,. և ոմանք Թէ "՚ոչ է սա որդին Յովսեփայ,,։

Իսկ ՚ած ոչ այսպէս. այլ կամէր ցուցանել անդէն Թէ յանցանքն ոչ զիջայց զսէրն իւր և ոչ զնախասիրամուտ Թիւնն Հայր պատուիրանազանցութիւնն, այլ մնայ ՚ի նոյն իմաստն, և գԹացեալ ասէ. "Ադամ ՚ուր ես,,։ Ոչ էր տեղւոյն անծանօթ. այլ քանզի զմեղուցելոյն զկապեալ բերանն արձակէր և զմեղուցեալն ՚ի զղջումն դարձուցանէր առնուլ ՚ի միտ զմեղսն և դառնալ յիմաստութիւնն իւրեանց, իսկ նոքա կային մնային ապշեալք և լռեալք Հանդոյն այնոյիկ որք կապանօք ՚ի բանտի անկեալ դնին, խորհէր ՚ած ՚ի համարձակութիւն ածել զնոսա Հանդերձ յանդիմանելոյն, և տայր նոցա ապաւինել և յուսալ ՚ի նա, և Հարցմանքն ՚ի պատասխանիս ածէր զնոսա, զի այնու եկեսցեն յապաշխարութիւն։ "Ախ զնա ինքն կոչեաց, որ զբազում պատերազմ զմտացն Հատանէր յանուանէ կոչելոյն, և վերկիւղն Հալածէր, և բանիւն բանայր զիաւկեալ բերանն. վասն որոյ Հարցանէր, "Ադամ ՚ուր ես,,. այլ օրինակաւ Թողի զքեզ և այլ ձևով տեսանեմ, ասէ. Թողի զքեզ փառօք և բազում Համարձակութեամբ առ իս, այժմ գտի զքեզ յանարգութեան և յանբանութե։

Եւ դու միտ դիր զգուշութեամբ խնամոյ և գԹութեան ՚այ, զի նախ ոչ զԱդա կոչեաց և ոչ զօձն, այլ որ քան զնոսա Թեթևագոյն էր մեղուցեալ՝ զնա ածէր յառաջագոյն ՚ի դատաստան, զի ՚ի կարողէն սկիզբն առցէ վայելել ՚ի զղջումն, և Հանդարտագոյն մատուցանել նմա զվճիռն։ Դատաւորք ոչ ընդունին միայն ընդ միայն քննութիւն առնել, այլ մերձ կարգեն զընկերս իւրեանց որք յայնս Հաղորդք իցեն, և զսպասաւորս իւրեանց կացուցանեն և առաջի նոցա բերեն զնոցին Հարցմունսն. այսպէս ատեան կազմեն, և ապա զյանցաւորսն առաջի կացուցանեն առ արդարացուցանել կամ դատա-

պարտել, զանիրաւն իմանալ, և ըստ իւրեանց բանիցն խօսին և լսեն, և ում կամին՝ իրաւունս տան, և ապա զդատապարտեալն քննեսցեն։ Իսկ ՅԾ ոչ խնդրելը միջնորդ առ մարդն, այլ ինքն վասն նորա դատ առնոյր և միխիթարէր։ Ել միայն այս էր աքանչելի, այլ զի և ուղղեր հարցմամբքն զյանցանսն։ Իսկ դատաւորք ամենայն յորժամ ըմբռնեն զաւազակս և զտնահատս, ոչ թէ որպէս նոքա գործեցին՝ խնդրեն, այլ առաւելապէս ըզգուշանան անդէն խնդրել զմեղացն զդատն։ Ա՛յլ ՅԾ այսմ ամենայնի զհակառակն առնէ. ոչ թէ յորժամ զմեղուցեալն գտանէ՝ անդէն զգուշանայ դատել, այլ զի ուղղեսցէ և լաւագոյնս գործեսցէ, մինչ զի բոլորովին ինքն է ՅԾ և բժիշկ և դատաւոր և վարդապետ. քանզի որպէս զՅԾ տեսանէ և որպէս դատաւոր քննէ և որպէս բժիշկ ողջացուցանէ և որպէս վարդապետ խրատէ զմեղուցեալսն և բերեալ ածէ յամենայն իմաստութիւն։ Տեսանէ՛ք զի բան մի սակաւ և փոքր այսչափ ետցոյց զՅՀ գթութիւնն։ Ա՛յդ զոր ասացաք, զնոյն ընթեռնուցուք զդատաստան, և բոլորովին առ ձեզ զյիշումն սոցին։ Տեսանէս զի ամենայն գիրք միխիթարիչք են և միխիթարութիւն։ Ա՛յլ զայս ամենայն ասեմ վասն հասեալ ժամանակիս։

Ա՛ապ նախ և զայս հարկ է ասել՝ եթէ երբ տուան գիրքս այս. զի ոչ՝ի սկզբանէ և ոչ վաղվաղակի՝ի ստեղծանէն Ա՛դամայ գրեցաւ, այլ յետ բազում ազգաց. և թէ ընդհէր երբայեցւոյն միայն, և ոչ ամենայն մարդկան. և ընդհէր երբայեցի լեզուով և հիմ յանապատին Ա՛ինայ. զի և առաքեալ ոչ պարզաբար զտեղին համարի, և սակայն աստ մեծ խնդիր կայ մեզ բանալ առ՝ի տեսանել. քանզի ասէ այսպէս. "Ա՛յս ինքն են երկու կտակարանք, մինն՝ի լեռնէն Ա՛ինայ լինել՝ի ծառայութիւն,, և չէ և առաւել քան զայս հարկ է խնդրել. բայց տեսանեմ մեզ զժամանակս զի ոչ տայ Յայլ յայսպիսի ծուլ արկանել զբանս. վասն որոյ զայսոսիկ զինի ժամանակիս հատուցից ձեզ։

Ո՛ր կանխաւն ասէի փոխադրել յերգմանէ, զնոյն ձեզ յանդիման ածից. և աղաչեմ զսէր ձեր զի վասն այսր հոգալով բազմապատիկ փոյթ արասցուք։ Ո՛իթէպէտ ոչ իցէ սոսկալի. ծառայ զտէր իւր ոչ համարձակի կո-

չել յանուանէ վայրապար, ուր և հանդիպեսցի. իսկ դու զտէրն հրեշտակաց լոկ բանիւ և բազում արշաւարհանօք զահեղ անուն բերել յամենայն իրս։ Օ՜ աւետարանն յորժամ պարտ իցէ առնուլ, զձեռս լուանամք և հանդերձ բազում երկիւղածութեամբ և պարկեշտութեամբ, սարսափմամբ և ահիւ ընդունիմք. իսկ զտէր աւետարանին մեկին բանիւ և լեզուով յերդմունն բերես յամենայն ժամ։ Կամիս ուժանել եթէ զիարդ կոչէն զնա վերինն զօրութիւնքն, որպիսի սարսափմամբ, որպիսի ահիւ և հիացմամբ. "Տեսի, ասէ, զտէր նըստեալ յաթոռ բարձրութեան և վերացեալ. և սերովբէք կային շուրջ զնովաւ, մի առ մի աղաղակէին և ասէին՝ սուրբ սուրբ սուրբ տէր սաբաւովթ, լի են երկինք և երկիր փառաւք նորա.,,։ Տեսեր որքան ահիւ և որպիսի դողութեամբ կոչէն զանուն տեառն հանդերձ փառաբանութեամբ և գովաստանական երգով։ Վերք և յաղօթս իսկ և յաղաչանս հանդերձ բազում ծունկըթեամբ կոչեմք զանուն նորա յայնմ ժամու՝ յորում պարտ է սարսափմամբ և տքնութիւք և սուրբ և յատակ մտօք յիշել։ Իսկ յերդումն կոչել զանուն նորա ոչ սոսկաս և դողաս ամենևին. 'ի զանազան և 'ի պէսպէս երդմունս կոչես զանուն այ, որպիսի պատժոյ չիցես արժանի, կամ զոր պատասխանի ունիցիս։

Այլ զիարդ հնար իցէ, ասեն, թէ և բիւր անգամ ջանամք՝ փոխարկել 'ի սովորութենէ յայսմանէ։ Այսի՝ ոմն յարտաքին հարտարասանիցն սովորութիւն ունէր անբանից որ ստէպ զաջոյ թեկն շարժելով վազէր, այլ սակայն 'ի բաց եթող զսովորականն. քանզի սուր սրեալ և եղեալ յիւրաքանչիւր թիկունս, մինչև յահէ սրոյն պատշաճէ զանդամն մարմնոյն, զի մի անձահս վազեսցէ։ Օ՜ սոյն զայս և դու արասցես լեզուի քումմ. փոխանակ սրոյ դիր 'ի վերայ զերկիւղն և զահ տանջանացն յաւիտենից, և լինիցիս լաւագոյն յոյժ։ Վասնզի ամենայն անհնարինք զոր համարիս՝ չեն անհնարինք, այլ յոյժ հնարաւորք են այ։ Վեզ պարտ է հոգալ և փութալ և զգործս զայս առնել, թէպէտ և յաղթահարե-

1 Ծօրինակին Աբէ.. սովորութիւն է ասէ անբանից.. ըստ թելոյ վազեցեալ. եղաւ ըստ յունին։

ցար երթեք։ Գովեք այժմ զասացեալս. բայց յորժամ դուք ուղղիցիք, յայնժամ լինիցի գովել, ոչ միայն մեք, այլ և դուք իսկ, և հանդերձ փափագանօք լսէք ասացելոցն, և ուղղեալ՝ի միտ առջիք իմաստութեամբ կոչել զնա։ Ինքն այսպէս խնայէ՝ի քեզ, մինչ անգամ՝ի գլուխ քո չտայ երդնուլ· իսկ դու այնպէս արհամարհես զնա, մինչ զի համարձակիս երդնուլ՝ի փառս նորա։

Այլ զինչ լինիցիմ, ասէ, յորժամ նեղիցեն զիս՝ի տանջանս և՝ի հարկ մուծանիցեն։ Ել է այն նեղութիւն, ով մարդ· այլ զայս ամենայն՝ի քէն ուսանիցին՝ եթէ հաձոյ է զամենայն չարչարանս կրել, քան անցանել ըստ օրէնս տեառն և՝ի բաց կալ՝ի վտանգից։ Արդ ոչ երբեք երդումն արժանի առնէ հաւատալոյ, այլ վկայութիւն կենցաղոյս, զգուշութիւն, վարք և ձգնութիւնք և կայունն բարութեանց։ Խաղումք բազում անգամ զանձինս հերձին յերդումն և ոչ զմի ոք ոչ հաւանեցուցին. իսկ ոմանք հայեցուածովք միայն այո և ոչ ասելով՝ արժանահաւատալի են քան զյնսոսիկ իսկ որք յերդումն ոչ սուտ երևեցան։ Ոչ այս տեսեալ ամենեցուն և զոր առաջնիկայ տանջանս, որք երդնուն և որք ուրանայեն զերդումն, զի յոյժ առաւել է քան զաչաց տեսանելիսս, ՚ի բաց կացցուք այսուհետև՝ի չար սովորութենէն. զի այսիւ յայլ ուղղութիւնս ընթացցուք և հանդիպեսցուք հանդերձելոց բարութեանցն. որոց լիցի ամենեցուն մեզ հանդիպել ընդօրհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ

Զաղագս գնալոյ տեառն ՚ի դրախտի անդ ընդ երեկս. և վասն փախչելոյ յերդմանէ։

Ամացայք յառաջագոյն եթէ զիարդ ամենայն գիրք մխիթարիչք են և ամենեցուն զմխիթարութիւն բերեն, թէպէտ և պատմութիւնք իցեն ազգաց և տոհմից, Քանզի “Ո սկզբանէ արար ՚ած զերկին և զեր-

կիր ,, , պատմութիւն է ազգաց . այլ եղեալ քանն որ բա-
զում միութեամբ լեալ էր : Այլ զիաՀրդ . քան-
զի երկու սեղան արար Ոճ , զերկիր և եդ առաջի մեր
և զծով . և դարձեալ ըստ Թուոյ երկու լուսատուք ա-
րեգական և լուսին լուցեալ ՚ի վերուստ . և երկու ըն-
Թացք ժամանակի տիւ և գիշեր , ոմն ՚ի գործ , ոմն ՚ի
հանգիստ : Այլ փոքր քան զտունջեան բերէ մեզ սպա-
սաւորութիւն գիշերն . այլ որպէս ՚ի վերայ ծառոց ա-
սացի , Թէ պտղաբեր ծառք և անպտուղք զոյգ ունին
պէտս , նա զի և ոչ հարկէ զմեզ յընտանի ծառս մեր-
ձենալ ՚ի պէտս շինուածոց . և ընտանի անասունք ոչ ա-
ռաւել ունին զպէտս քան զվայրենիսն , և զանընտանիս
ածեալ ՚ի քաղաքս մեր՝ երկիւղն հանդարտագոյն առ-
նէ և ընդելացուցանէ ընդ իրեարս , այսպէս ամենեքեան
միաբան պնդութեամբ ընդ միմեանս . որովք զոմանց
զգօրութիւնն մերձ կացուցանէ , և ոմանք զհիւանդու-
Թիւնս մեր լուծանէ . բազում անգամ ՚ի նոցին իսկ ՚ի
վայրենեացն դեղս կազմեն որդիք բժշկաց , և զհին մեղս
մեր յիշելով :

Յորժամ լսեմք յայ Թէ " զահ և զերկիւղ ձեր ար-
կից ՚ի վերայ ամենայն գազանաց երկրի ,, , յայնժամ
զպատիւ ազգիս մերոյ զմտաւ ածեալ տեսանեմ զայս
և յիշեմ զմեղս մեր : Վասպէտ և զերկիւղն մեր ելոյծ ,
և զսկզբնական պատուհասն եհատ և էած յաւուր-
լութիւն , սակայն ուսանիմք զոր ՚ի մեղացն եղև մեզ
պատիժս այս : Այլ որպէս և ասացի իսկ , զայսոսիկ
այսպէս դիպեցոյց , և ՚ի կենցաղոյս օգուտ մեզ կատա-
րէ , այս է ասացեալն և առաւել քան զայն զոր արար Ոճ :

Այնպէս և գիշեր ոչ նուազագոյն քան զտունջեան
բերէ զպէտս անձանց մերոց , քանզի աշխատելոց հան-
գիստ է և դեղ հիւանդութեան : Առաջի անգամ բը-
ժիշկք զպէտս հիւանդացն քննեն , և բիւր դեղս կազ-
մեալ ոչ կարացին փոխել զախտ հիւանդութեանն . ինք-
նակամ քուն եկն ՚ի վերայ և զհիւանդութիւնն ելոյծ
և փոխեաց ՚ի բազում աշխատութենէն : Այլ ախտից
մարմնոյ միայն , այլ և հոգւոյ ախտից գիշեր բժիշկ է և
հանգուցանէ զաշխատեալ անձինս : Առաջի հարք կո-
րուսին զորդիս , և բիւրք բիւրուց աղաչեն ՚ի բաց ընկե-
նուլ զկոծն և ոչ կամեացին . եկն գիշեր և բռնութիւն

քնոյ կափոյց զաչսն, և ՚ի չարեաց աւուրն փոքր ինչ միխ-
Թարութիւն ընկալաւ և լռեաց ՚ի կոծոյ և յողբալոյ։

Ներ այսուհետև ՚ի պատճառն եկեսցուք ուստի և զայս ասացաք։ Գանգի բարի է գիտել ամենեցուն և ՚ի ձէնջ ուսանել Թէ վասն էր ոչ ՚ի սկզբանէ տուաւ գիրքս այս և պատմութիւն։ Այս զի՞նչ արդեօք. այսօր եկն մեզ կատարումն շաբաթուս, և երկեայ մերձենալ ՚ի պատճառս յայս և վաղվաղակի հատանել զվարդապետութիւնս։ Օ՚ի բազում՝ այլ աւուրց պատճառ է մեզ, վասն որոյ կանխաւ զայս ասեմ. այլ մի դժուարանայք, սիրելիք. սակայն տոկոսեօք հատուցից ձեզ ըզպարտս զայս. զի և այսպէս մեզ բարի է առնել։

Ա՚րդ զոր երկին ՚ինաց, այսօր ասացից։ Այս զի՞նչ էցե ՚ինացեալն. “Այս լուան զձայն գնալոյ տեառն ՚ի դրախտի անդ ընդ երեկս,,։ Օ՚ի՞նչ է զոր ասես, պատմեա ինձ. ՚ած գնայցէ։ Ոչ գնայ ՚ած. և զիա՞րդ գնայ, ասա ինձ, որ յամենայնի է և զամենայն լնու և զամենեսեան կատարէ, զիա՞րդ գնայցէ։ Ա՚յլ այսպէս իմանալ ետ Ա՚դամայ, զի դողացուցեալ պակուսցէ զանձն նորա զի մի՛ յանդգնաբար մերձեսցի և այնպէս կայցէ խօսել, զի ՚ի փախչելն և ՚ի Թաքչելն բան ինչ պատասխանւոյ ուսանիցի նախ քան զբան նորա։ Ոլորպէս որք հանդերձեալ են ՚ի դատաստան մտանել և ունիցին պատասխանութիւն յանցանաց, յամաքին և տգեղանան և պակուցեալք դժուարին երեսօք երևին դատաւորին, զի ՚ի կերպարանաց իւրեանց մարդասիրութեան հանդիպեսցին, և ՚ի դատաւորէն ողորմութիւն և Թողութիւն ընդունիցին, սոյնպէս և Ա՚դամայ եղև։ Այս պարտ իսկ էր նմա դողալ և ցամաքել ՚ի մտանել առ դատաւորն. վասն որոյ այնպէս յայտնէր զինքն նմա ՚ած. այլ ինքն ոչ գնայր. եԹէ իմանայր, ուստի՞ իսկ կարծէր եԹէ գոյր ՚ած։ Ա՚յց այս մեղուցելոյ սովորութիւն է. հանապազ ընդոստելով ՚ի զարհուրման կայցեն, դողան ՚ի ստուերայ անգամ, հանապազ երկնչին ՚ի սատանայէ։ Ա՚զամ անգամ զբազումն տեսանելով ընԹացեալ յայլ սպասաւորութիւն, և մեղուցեալն կարծէ Թէ առ իս է մեռ նորա։ Այս զայլս տեսանելով ընդ միմեանս ՚ի խորհուրդ կարծեն նոքա եԹէ իմացան զմեզս մեր, և վասն մեր է զոր խօսինն։

Ա. Յոպիսի են մեղք, ոչ յումեքէ յանդիմանեալ զոր ծովքն յայտնին, ոչ ուրուք բամբասեալ դատապարտին, ՚ի մահուանէ երկուցեալ զողացուցանէ, յայտնի խայտառակէ զմեղուցեալն։ Ա ուր այժմ զնարդ զորումն զերկիւղ և զումեմն զհամարձակութիւն գրեալ է ՚ի գիրս. “Թախչի, ասէ, ամբարիշտն առանց ուրուք հալածելոյ,,։ Ո՞ նարդ փախիցէ առանց ուրուք հալածելոյ՝ ես ասացից. ՚ի ներքուստ ունի զդատաւորն, անտի իսկ բամբասի և դատապարտի և հալածի, զնոյն յամենայն կողմանս բերելով երկնչի. և որպէս յանձնէ իւրմէ ոչ կարէ փախչել, այնպէս և յայնմանէ զոր ՚ի ներքուստ ունի. զի ուր և երթիցէ, ապտակէ և հարկանէ զնա և վերս դիցէ անբժշկելի։

Ւսկ արդարն ոչ այսպէս. և զնմանէ. “Ա՛րդարն որպէս առիւծ յանձնապաստան է,,։ Ա՛յսպիսի էր Ա՛ղնա. եթէս զԹագաւորն գալով առնա, և յասելն նորա “Ա՛ռ ես որ խանգարես զԱ՛սրայէլ,,, ասէ. “Ա՛ն ես, այլ դու և տուն հօր քո,,։ Ա՛պա Ա՛ճմարիտ է եթէ արդարն որպէս զառիւծ յանձնապաստան է. քանզի արդարն որպէս զառիւծ յառաջ կացեալ ընդդէմ Թագաւորին առգելու ՚ի Ա՛նապարհին։ Ա՛հպիտ և ծիրանիս էր զգեցեալ Թագաւորն, այլ որ զմաշկեղէնն Հանդերձն էր ըզգեցեալ Թեսբացին՝ պարկեշտ և պայծառ երևէր քան զայն որ զծիրանին էր զգեցեալ. քանզի ծիրանիքն այն ծնաւ զսոճի խիստ, և մաշկեղէնս այս ելոյծ զվտանգն, այս մաշկեղէնն զՅորդանան ԵՀերձ, զԱ՛ղնէա երկրորդ Ա՛ղնա արար։ Ա՛վ որչափ իցեն առաքինութիւնք սրբոցն. ոչ եթէ բանիք նոցա միայն և մարմինք, այլ և ձորձք նոցա աշխարհի ՚ամի Ա՛նխադոյն երևին։ Ա՛՝աշկեայս այս՝ որպէս ասացի՝ բաժանեաց զՂուրն Յորդանանու, և կոշիկք երից մանկանցն կոխեցին զլորքորուն հրոյն. փայտն Ա՛ղնէայի փոխեաց զբնութիւն ջրոյն և երկաթ յինքեան բարձեալ՝ գալ[1] յայտնել արար. գաւազանն Ա՛ովսիսի զծովն կարմիր ԵՀերձ և զվէմն պատառեաց. ձորձքն Պաւղոսի զՀիւանդութիւնս բժշկեաց. ստուերն Պետրոսի զմահ փախուցանէր. փոշի ոտից մարտիրոսացն զչար դևսն Հալածէին։ Ա՛ման որոյ իշխանութիւն

1 Յօրինակին ման ՚ի յայտնել արար։

զամենայն [illegible] զորձէին. որպէս և Յղիա ոչ թէ միայն զթագն և զծիրանին տեսանէր զթագաւորին, այլ առաւել զՀոգին տեսանէր զգեցեալ քուրձ, երաշտացեալ, պատուհասեալ վիրօք և թշուառական լեալ, գերի և ծառայ ախտից, արհամարհեաց զիշխանութիւն նորա. զի կերպ էր և ոչ Աչմարտութիւն, արտաքոյ թագաւոր տեսանիւր: Այլ զինչ օգուտ իցէ՝ ի վերոյ տեսիլք վայելչութեան, յորժամ՝ ի ներքուստ այսպիսի աղքատութեամբ լի իցէ. կամ զինչ ՚ՃՀաս իցէ արտաքոյ աղքատութիւն, յորժամ՝ ի ներքս լի իցէ հարբսոտութեամբ:

Այսպիսի էր Պաւղոս. մտեալ՝ ի բանտն աղօթեաց միայն, և զՀիմունս զամենայն շարժեաց, զկապանսն կապելոցն ելոյծ ոչ սրով Հատեալ, այլ բանիւ. ըստ որում ոչ եթէ միայն նման առիւծու, այլ ևս առաւել զօրաւորս պարտ է կոչել զայնոսիկ որ այ Հաձոյք են: ՎՀանզի առիւծ բազում անգամ անկանի՝ ի վարմս որսոդաց, պարաւանդեալ շուրջ փակի և կապեալ ՃՀայ. իսկ սուրբքն յորժամ՝ ի կապանս մանանէին, յայնժամ զօրանային: Որպէս և երանելիս այս՝ ի բանտին արար. զկապեալսն արձակեաց, զՀիմունսն շարժեաց, իսկ ըզբանտապետն կապեաց և անդէն ած՝ ի բարեպաշտութիւն: Առիւծ գոչէ և փախուցանէ զգազանս. իսկ սուրբն բանիւ զգևս Հալածէր յամենայն կողմանց: Օ էն առիւծու կուտակն Թաւամազեայ, մագիլք և ժանիք սրբեալ աստանայն. զէն արդարոյ իմաստասիրութիւն, Համբերութիւն, անտեսութիւն կենցաղոյս ամենայնի: Այթէ պատսիսի զէնս ունիցի ոք, ոչ եթէ զչար մարդիկ միայն, այլ և զՀակառակ զօրութիւնն իսկ ծաղր առնէր: Պոու ով մարդ, Հոգա միայն յաղագս կենաց և Հաձոյիցն այ, և ոչ ոք ես որ գեր՝ ի վերոյ լինիցի քեզ. այլ թէ և քան զամենեսեան տրուպ իցես, քան զամենեսեան զօրաւոր լիցիս. որպէս և որ Հեղգն է յառաքինութիւնս Հոգևորականս, թէպէտ և բազմապատիկ զօրութեամբ իցէ, դիւրաւ ՃՀասի՝ ի խորՀողաց նման չար: Այս և զայս ևս ցուցանէ ասացեալ պատմութիւնն, ուր ասէ՝ իբրև զաղուէս տկար:

Այսպա թէ կամիցիս և այլ ուստեք ուսանել, ցուցանել փորձիմ զիարդ անսանանելի են արդարք, և մեղա-

ւորք դիւրին առ ՚ի կորնչել։ | Զուր զիարդ զերկոսեանն մարգարէն պատմէ. “ | Է այսպէս են աւձաբրիչտք և ոչ այսպէս, այլ որպէս Հողմ զփոշի զի հոսկ յերեսաց երկրի „։ | Որպէս փոշի, ասէ, առաջի սաստկութեան Հողմոյ դիւրաւ հոսի, նոյնպէս և մեղաւորն յամենայն փորձութենէ յաղթահարի. յորժամ այլ ուստեք ոչ գուցէ, ինքն ընդ անձին իւրում մարտնչի և պատերազմ յամենայն կողմանց բերէ ՚ի վերայ իւր, և ոչ ուստեք է նման յոյս փրկութեան. իւրովք կամօք նախատ լինի, և ստէպ կռիւս և փորձութիւնս ինքեան մատուցանէ յամենայն կողմանց ըստ սովորութեան։ | Ոչ արդարն ոչ է այսպէս, և թէ որպէս է՝ ես ասացից. “ | Զի յուսոյ ՚ի տէր, ասէ, որպէս լեառն | Սիոն մի սասանեսցի յաւիտեան „։ ՚Ի նմանի որչափ և պատերազմիցնք յուզես և նետիւք հարկանես, զլեառն փախուցանել ոչ կարես, և ոչ հոգք ինչ առնու զքէն. Թէպէտ և բազմապատիկ մեքենայս շարժես, դու ինքնին քակեալ լուծանես ըզքոյին զօրութիւնդ։ Ո՞յսպէս և արդարն որչափ և վերս ընդունիցի յինքն՝ ոչ ազդէ նեղութիւնքն, և խորհրդածութիւք չարին լուծանեն զչար զօրութիւնն իւրեանց, ոչ եթէ մարդիկ միայն, այլ և առաւել գևք։ | Զուեալ էք բազում անգամ եթէ բանսարկուն որչափ մեքենայս շարժեաց ՚ի վերայ Յոբայ, և զանառիկ լեառն ոչ եթէ միայն ոչ սասանեցոյց, այլ ինքն իսկ գլորեալ և ամաչեցեալ հեռացաւ, և նեաք նորա խորտակեցան, և ՚ի պատերազմաց իւրոց կորացաւ, և վանուաին նորա եղև ընդունայն։

Զայս գիտեալով մի հեղգասցուք վասն կենաց մերոց, և վասն ընչից կորուսանելոյ մի ինչ փոյթ արասցուք, և մի վասն փառաց եղծանելոյ, մի վասն մարմնոյ ծերանալոյ, մի վասն գեղեցկութեն թառամելոյ, մի վասն փափկութեան հեռանալոյ. այլ հանապազ վասն ոչուց մերոց մաշեսցուք ՚ի Հոգւոյ։ Զանգի զմարմինն հիւանդացեալ համ հնարիւք փութասք բժշկել. Թէպէտ և ամենեցուն ոչ է դիւրին. բայց հիւանդացեալ Հոգի դիւրին է ամենեցուն որ կամիցին։ | Մարմնոյ հիւանդութեն դեղք պէտք են և արծաթոյ առ ՚ի բժշկութիւն. իսկ Հոգւոյ որակեանն՝ ուղղութիւն վարուց, որ է անմահչելի։ | Մարմնոյ բնութիւն բազում աշխատութիւն կրէ, մինչև զվերան կամ

զնեղութիւնն փոփոխել. իսկ հոգին ոչ այսպէս, այլ խորհելն և կամելն միայն բաւական է, և զամենայն ուղղէ։ Այլ այս 'ի խնամոյն ՅՍ գործեցաւ. քանզի 'ի մարմնոյ հիւանդութենէ ոչ բաղում ինչ վնաս լինիցի. զի թէպէտ և ոչ կամիք և ոչ աչն ունիք մահու, նա ինքն ապականի և եղծանի ամենևին։ Իսկ հոգիք մեր անմահք և յաւիտենից են, և առողջութիւն նմա ընտանի և ըստ բնութեան է, ուստի յոյժ վեհագոյն երևի, և հարկ է զօրհանապազ առողջ պահել, և ոճ հեշտեաւ արար և անճախելի և առանց երկանց զբժշկուիս։

. Այդ զինչ ունիք պատասխանի կամ զնո՞ր ներել թողութեան, զի յորժամ մարմին հիւանդանայ որ արծաթոյ պէտք են և բժշկաց աղաչելոյ և բազում համբերութեան իբր յերկուսն՝ այնչափ բարեաւ հոգամք և խնամարկեմք, նա զի և ոչ ինչ վնաս յայնմ հիւանդութենէ լինիցի մեզ. և զոգիս մեր արհամարհել որ ոչ արծաթի կորուսանելոյ պէտք են և ոչ այլ ծանրութիւն ձանձրութեան կամ երկունք ցաւոց, այլ առանց այս ամենայնի յօժարելն և խորհելն միայն զամենայն կարող է ուղղել։ Այլ զայս հաւաստեաւ գիտասջիք, եթէ ամենայն ջանիւ զայս ոչ արասցուք, հասանելոց է մեզ յերկինս տանջանացն և անհնարին չարչարանացն։

Այսա ինձ ով մարդ. եթէ ոք խոստանայր քեզ զարուեստ բժշկութեան ուսանել առանց արծաթոյ և աշխատութեան, ո՞չ բարեգործ համարիցիր զնա, և ախորժելով ընդունէիր առնել և կրել զինչ և հրամայէր։ Այհաւասիկ առանց աշխատութեան հասեալ կայ բժշկութիւնս՝ ոչ մարմնական որ անցանէ 'ի կենցաղումս, այլ հոգևորական. եթէ ուսանիցիս, հասանես և վայելես յանանց բարութիւնն, և հեշտեաւ ուսանիս զդեղ հիւանդութենէն, և առանց երկանց և ցաւոց յառողջութիւն գայցես հոգւով. մի այսուհետև հեղգասցուք։ Օ՜ զինչ վտանգ իցէ, ասա ինձ, 'ի բարկութենէ լռել և զյանցանս թողուլ . . . . . * բամբասողս, կարող լինի լռեցուցանել։ Այսա թէ տեսանէ ոք զայն որ ոչ երգնուն՝ գարչելի բան ինչ խօսեցեալ, այսն առնէ զնա վաղվաղակի և ծաղր, և հենգ-

* Թուղթ մի անկեալ է յօրինակէն։

նելով ասասցէ՝ եթէ դու որ ջհաւատացէքն և զայն երդումն համարիր, և որ ոչ այսպէս՝ սաստիր, այժմ գարշելի բանիւք ամաչեցուցանէս զքեզ։ Արդ մի՛ ինչ ակամայ հասեալ հալածանք՝ ի պարկեշտութենէս յայսմանէ՝ ի բաց կացուսցեն զմեզ։

Ո՞ինչ արդեօք եթէ հարկ առնիցեն երդնուլ։ Այր օրինապանցուցիչն է, անդ բնաւ հարկն ոչ է հարկ։ Այո՛, ասէն, կարողութիւն ամենևին ոչ երդնուլ։ Ո՞ինչ խօսիս. ած հրամայեաց, և դու համարձակիս ասել եթէ կարողութիւն իցէ պահել զօրինս. անկար իսկ և անհնարին ոչ պահելն է, և զայս արդէն իսկ՝ ի հասեալ իրաց հաւան առնել զձեզ խորհիմ, զի ոչ չերդնուլն, այլ երդնուլն է անհնարին։ Այո՛ հաւասիկ ոսկի հրամայեցաւ՝ ի թագաւորէն հանել որոց բնակեալ են՝ ի քաղաքիս, և այժմ իբրի ակն ունիցիք և ասիցէք զհրամանն՝ ի վեր եղեալ քան զզօրութիւն, և խնդրողաց ոսկւոյն ասիցէք՝ վասն ոյր մտիպէք զմեզ որ անհնարէն է կատարել։ Այո՛ որ ասիցեն. զինչ է զոր ասէքդ, միթէ կարողութիւն իցէ պատճառել. թագաւորական հրամանք են, առ որ հեղգալ չէ հնար, կամ ոսկի զոր խնդրեաց՝ ոչ տանել, և՝ ի նոյն փութայք մինչ կատարիցի։ Այսպէս ած հրաման ետ փախչել յերդմանէ, և ասիցէք զիարդ է կարող մարդ առնել զայդ։

Արդ վեցերորդ օր է յորմէ հետէ վասն այսր միոյ պատուիրանիս առաք խրատել զձեր ձեր. այժմ կարգել խորհիմ զամենեսին որպէս զԹոյլս և զանկատարս։ Եթէ ոչ զգուշանայցէք, ոչ ունիցիք պատասխանի և ոչ Թողութիւն. եթէ ոչ էի ասացեալ և պատուիրեալ, յանձնէ ձերմէ մանաւանդ պարտէիք առնել զայս. ոչ զանազան արուեստից պէտք էին, ոչ ինչս ծախելոյ առ՝ ի կազմել։ Այսպէս յորժամ այսչափ խրատուք՝ ի խորհրդակցութիւն առեալք՝ զինչ պատասխանի հանդերձեալ էք տալ բանին յաւուրն դատաստանի առաջի ահաւոր բեմին յորժամ պարտաւոր դատանիք այսմ անօրէնութեան. յայտ է եթէ ոչ մի բան ոչ ունիցիք պատասխանի տալ։ Արդ որ նեղութիւն իցէ. ուղղութեամբ գնալ աստի, եթէ ոչ ուղղել և տանջել յաւիտեան, կալ և տեւել վերջին պատասպարտութեանն։

Այս ամենայն՝ ի միտ առեալ, բազում ջանիւ՝ ի

մեղայս յայսցանէ հեռասջիք, և միմեանց հրամայեսջիք պահել որ զայս չափաւորս լուեալ էք, զոր մեծաւ զգուշութեամբ ունիցիք յընտեմարանս մտաց ձերոց. զի յորժամ մեք լռիցեմք, դուք զմիմեանս խրատեսջիք. հաւաստի օրինակ տայցէք զանձինս զտուեալսն կատարել, որով զամենայն իսկ զօրէնսն կարող լինիջիք առնել, և հասանիցէք յաւիտենական պսակացն։ Որոց լիցի ամենեցուն մեզ հանդիսիլ ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր փառք հանդերձ հոգւովն սրբով այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԻՆՆԵՐՈՐԴ

Գովութիւն գովասանական յաղագս ուղղելոյ ժողովրդեանն ընդհանուր։ և թէ զինի կերակրոյ պարտ է մտանել յեկեղեցին և ունկն դնել բանից այ. և ընդէր յետ բազում ժամանակաց տուաւ գիր. և յաւելումն սաղմոսին Դաւթի. և թէ չէ պարտ երդնուլ։

Այլ նախ ընդ ձեզ էի և այժմ առ ձեզ եմ, պարտ է և հանապազ իսկ կալ ընդ ձեզ, ոչ եթէ ըստ մարմնոյ գոլով, այլ զօրութեամբ սիրոյ. ոչ իսկ այլ կեանս խոհ ինձ, բայց միայն դուք և ձերոյին փրկութեան հոգան։ Որպէս երկրավաստակն ոչ այլ ինչ ունի հոգալ՝ բայց զսերմանիսն և զբոյսն, և նաւուղիղն զալիս ծովուն և զնաւահանգիստն, այսպէս և աստղ բանին զլսողացն և զնոցին զանգայթակղելի կենաց, որպէս այժմ եաս եմ։ Ըստ որում զձեզ զամենեսեան հանապազ բերեմ յընտեմարանս մտաց իմոց, ոչ եթէ աստ միայն, այլ և 'ի տունս ձեր։ Արդեօք և անչափ ժողովուրդ և անթիւ իցեն, և փոքր չափ ըստ հասակի սրտի իմոյ, սակայն լայն և ընդարձակ է սէր ձեր առ մեզ, և ոչ լինիջիք նեղեալ և անձուկ 'ի մէնջ. այսուհետև ասացից արժան է և ոչ մեզ առ ձեզ անձուկ լինել։

Այլ այս ուսցի լինիցի յայտ. իմանալ բազմաց և մեզ պատմել եթէ զպատուիրանն կատարեցէք, և միմեանց օրէնս դիք, և դատապարտութիւն սահմանիցէք և տան-

ջանս այնոցիկ որ երդնուն, որպէս վայելէ իսկ ձերում իմաստութեանդ. և բարձրագոյն սիրոյդ այդ է նշան։ Այլ ես ոչ ամենի համարիմ նախ և յառ ասել զայս. քանզի ոչ է այս բռնութեան, այլ խնամակալութեան և գթոյ այսպիսի քննութիւն։ Այնի բժշկի ոչ է նախատինս քննութիւն առնել վասն հիւանդի եթէ զիարդ է կամ որչափ վաստակեցաւ, որչափ ևս առաւել մեզ պարտ է քննել վասն ձերոյին փրկութեանդ։ Ո՛չ այսպէս ուսանիմք եթէ զինչ շահեցայք կամ զինչ մնացեալ եղև. զայս հաւաստեաւ գիտեմք, ապա և այլ դեղս կենացդ դիցուք։

Այս զայս իմացեալ մեր, զի՝ի գործ արկեալ լցեք ըղպատուիրանս, գոհացայց զմեծ սիրոյն ձեր, զի ոչ՝ի վերայ վիմի սերմանեմք և ոչ՝ի մէջ փշոց, և ոչ երկար ժամանակի և բազում խնդրոց պէտք են ձեռնարկել՝ի հունձս հասկաց։ Այն որոյ ստէպ ունիմ զձեզ՝ի սրտի իմում, յաղագս որոյ ոչ աշխարեմ զաշխատութիւն վարդապետութեանս, յորժամ ունկնդիր եղեալ դիւրաշահիլիմք զմեծութիւն։ Ահա և բաւական է մեզ ստանալ զվարձս զայս, թէւս տարածել, օրինակ առնուլ և հաւանեցուցանել զամենեսեան և վասն ձեր համբերել աշխատութեան։ Այս զի դուք երևեցուցէք բազում բարեմտութիւնս, բեր արդ և մեք զպարտս զոր խոստացաք յառաջադոյն՝ հատուսցուք։ Այս արդ ոչ տեսանեմ զամենեսեան ասա որոց զբանն խոստացայ։ Այս զինչ իցէ պատճառն. Թերևս և ոչ ինչ։ Վասնզի յայսմ սեղանոյ ոչ ինչ է պակասեալ, այլ սեղանս մեր լի է հոգևորականս կերակրովք, և ձաշակեն ամենեքեան որք մերձ են։

Այլ կարծեն ոմանք եթէ զինի կերակրոյ ոչ է արժան յունկնդրութիւն գալ ածաշունչ գրոց։ Այայց ոչ յիրաւի զայս կարծեն, և ոչ է այս առանց մեղադրութեան. զբազում և զերկար բանս Քրիստոս զինի խոստ Հըրդական ընթրեացն խօսեցաւ, և այ չեր անվայելուչ. կերակրեաց զբազմութիւն ժողովրդեանն յանապատի երկից և յոլով անգամ, և զինի սեղանոյն բանս խօսեցաւ յականջս նոցա։ Այեթէ պարտ է և սքանչելիս ինչ ասել, եթէ յայնժամ պատուական է ածաշունչ գրոց ունկնդիր լինել։ Յորժամ դու ինքն զքեզ հաւանեցուսցես, և զինի կերակրոյ և ըմպելեացդ ոչ նեղութիւն

համարեսցիս յեկեղեցիս հանդիպել և ըստ այսմիկ հոգալ, յոյժ լաւագոյն է և պատշաճ, և ոչ յարբեցութիւն և ոչ յաւելորդ կերակուրս ածցիս, սուրբ գալ խորատեսցէ զքեզ չափաւոր կերակուր և ըմպելի ընդունել. զի մի յորժամ խառնիցիս 'ի մէջ եղբարցս, հոտ գինւոյն աղտեղութեան գարշելի բխէ 'ի քէն, և ծաղր մերձաւորացն լինիցիս։

Օ այս ոչ միայն ձեզ այժմ ասեմ, այլ և այնոցիկ որ ճնացեալ իցեն 'ի ձէնջ, զի զայսոսիկ ձեզ ուսանիցին թէ կերակուր ոչ արգելու ունկնդիր լինել գրոց, այլ տխրութիւն և ծուլութիւն։ Պատուք իսկ ուսուսջիք թէ յիմարութիւն է զայս ոչ պահել, և այլ ևս դնիցէք 'ի վերայ պարտաւորութիւն առաւելագոյն, այլ և չարաչար՝ որ ոչ հաղորդեսցի այսմ սեղանոյս։ Օ մարմինդ դարմանես, և զհոգիդ սովամահ առնես, և զինչ ունիցիս տալ պատասխանի։ Յաւուրս պահոց թերևս ունիցիս պատճառել զտկարութիւն մարմնոյ. իսկ յունկնդրութիւն գալ զինչ ունիցիս ասել. քանզի ոչ է պարտ և իրաւ վասն տկարութեան մարմնոյ արգելուլ և ոչ 'ի միտ առնուլ զածայրն քանս։ Յթէ ասէի՝ եթէ մի ոք որ կերակուր և ըմպելի առեալ իցէ՝ ունկնդիր լինիցի սուրբ գրոց, ունէիր ինչ թողութիւն. իսկ այժմ յորժամ եկեալ եմք և կոչեմք զձեզ գթութեամբ և ոչ արգելումք յեկեղեցւոյ որ կերակուր առեալ իցեն, զի՞ր ունիցիք տալ պատասխանի։

Ընդհատաստ ունկնդրութեան նոքա են որ ոչ թէ կերակուր ուտիցեն, այլ որ զասացեալսն ոչ առնուն 'ի միտ, որ լի են ծուլութեամբ և մոլորեալ մտօք և յօրանչելով, լոկ զմարմինս աստ ունկնին, և մտօքն յայլ իրս մոլորեալ. այնպիսիքն թէպէտ և մեծ իցեն 'ի լսել ոչ ինչ օգտիցին։ Յոկ որ կայտառ մարմնով իցեն և զըւարթ մտօք, թէպէտ և տկարութեամբ անկեալ կայցեն, աջողակ և 'ի դէպ է այնպիսեացն ունկնդիր լինել մեզ։ Յայտաբին ասեմանն յիրաւի օրէնքս այս եղեալ են, զի ոչ հաւասար կարեն լինել յիմաստասիրեն. քանզի ոչ ուտեն կերակուր մինչև ցյայգուճն, այլ խմողին և պարպատին յառաւելութենէ, և արբեցութեամբն յիմարեալ թմբրին, ըստ որում՝ զանձինս իւրեանց անգոյս արարեալ՝ արգելուն 'ի դատաւորաց յայնպիսի

անօրէնութիւն և ՚ի խորհուրդ գալ։ Իսկ աստ ոչ է այսպէս, քաւ լիցի. այլ որ ուտէ պարկեշտ անձամբ ըստ պատշաճի, քան զծոմացեալ պահողն որ զբաղեալ և մոլորեալ մտօք իւրէ՝ պատուական է։ Ուստեղ ոչ այնչափ մինչ ՚ի ծանրանալ որովայնի ուստի խաւարին միտքն, այլ մինչ զսկարութիւն մարմնոյն հաստատիցէ։

Իսկ խրատս այս և այլում ժամանակի իւրէ պատճառ մերձենալոյ. թէպէտ և յուլանայք և դժուարիք այժմ ընդ վարդապետութիւնս մեր, նա և մեք իսկ դժուարիմք մտօք վասն չեկելոցն աստ ընկերաց ձերոց։ Ո՛չ որպէս զթական մայր յորժամ սեղան դիցէ և համբերէն որդիքն ոչ եկեսցեն՝ տիրի և երկնի, սոյնպէս և ես տոչորիմ և դժուարիմ, զի եղբարքն մեր այսմ ստացուածոց ոչ ժամանեցին։ Իսկ դուք որ զծուլութիւնս զայս ՚ի բաց ընկեցէք, և զայս ևս խոստացարուք ինձ զի հանդերձ ստուգութեամբ զամենայն զոր լսէք՝ առ նոսա հեղուցուք, և ես յօժարութեամբ զամենայն արկից յականջս ձեր, զի և որք ոչ ժամանեցին՝ այս է մխիթարութիւն ձերումդ սիրոյ վարդապետութիւնս. և դուք խնամով լուարուք ինձ, գիտելով զայս թէ բազմացն զայս ձեզ հարկ է պատմել։ Այլ զի հաստատուն առ մեզ բանս լինիցի, ՚ի վերուստ առցուք զաստուածս։

Ընդրէաք յառաջագոյն թէ վասն էր չետ այնչափ ազգաց և ժամանակաց տուան գիրք. ոչ Դամայ, ոչ յաւուրս Այսի և Բերահմու, այլ Մովսիսի տուաւ գիր։ Ի բազմաց լուայ զի ասէին. եթէ պատուական ինչ էր, յառաջնմէ պարտ էր տալ. իսկ եթէ ընդունայն, և ոչ զինի այնմ ժամանակի պարտ էր յաւելուլ։ Զրդ զայսպիսի քննումն փորձեսցուք տեսանել զոր ասեն եթէ պարտ է ՚ի սկզբանն տալ գիր, ապա թէ ոչ ընդեր չետ այնորիկ։

Վասնզի կամն ընդունել կերակուր պատուական է, այլ յորժամ աղայք իցեմք, և ոչ միշտ տայցեն. վերջին կերակուրս քաղցրագոյն է, այլ նախ քան զկամ կերակրել ոչ տան մեզ մինչև մեկնիմք ՚ի տղայական հասակէն։ Վարձեալ և հունձք ցանկալիք են, այլ հանապազ ոչ կատարին. աւուրք ձմերայնի հանգիստ են, բայց և նոքա փոփոխին։ Այլ զինչ արդեօք, գիրն ոչ էր պատուական. նա և պատուական և կարի կարևոր։ Ին-

դէր, ասեն, ապա ՚ի սկզբանէ ոչ տուաւ. զի ոչ գրովք, այլ գործովք կամէր խրատել և ուղղել ՚ած զընութիս մարդկան: Օ՞րինչ իցէ գործովք խրատելն. գոյիւք ա-բարածովքս՝ ասեմ Աստուծոյ և մեծն առաքելոյ Պաւղոս ՚ի բանս անկեալ առ Հեթանոսս կռփեր զնոսա որք ասէին՝ եթէ ընդէր յառաջագոյն ոչ ուսաք ՚ի գրոց զ՚ած-ծանօթութիւն, տես թէ որպիսի առնէ պատասխանի. "Յայտնելոց է, ասէ, բարկութիւն յերկնից ՚ի վերայ ամենայն ամբարշտութեան և անիրաւութեան մարդկան, որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին,,: Եւ զի փոխանակ ասելոյն զայս տեսանէին դարձուածս բանի և բազումք ընդդէմ խօսէին թէ ուստի գիտէին հեթանոսք զճշմարտութիւնն ՚այ, ած՚եալ ասէ. "Գիտութիւնն ՚այ յայտնի էր ՚ի նոսա,,: Եւ զիա՞րդ կարող էին գիտել զ՚ած, և ո՛վ եղոյց՝ ասա. "Աստուած, ասէ, յայտնեաց նոցա,,: Արո՛վ օրինակաւ, զո՛ր մարգարէս ա-ռաքեաց, զո՛ր աւետարանիչս կամ զո՛ր վարդապետս, և գիրք երբէք ոչ գոյին: Այո՛. "Աներեւոյթք. նորա ՚ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն և միանձնաւորութիւն և զօրութիւն և ած-ութիւն նորա,,: Եւ զոր ասէն՝ այս ինչ է. զարարածս ՚ի մէջ եդեալ առաջի աչաց մեր աներեւոյթն, զի ՚ի սքան-չելի գործոցս զկենագործն փառաւորել պարտ էր հա-նապազ. զոր և այլ ոմն ասէր. "Ո՛ մեծութենէդ գեղեց-կութեան արարածոցս արարիչն ՚ած ծանուցեալ լինի,,. այսինքն ըստ կարգի սքանչելի յօրինուածոց սորա յօ-րինիչն տեսանի: Զտեսիլ զմեծութիւնն, զարմացիր ընդ արարողին զօրութիւնն. տեսիլ զգեղեցկութիւնն, սքան-չացիր ընդ իմաստութիւն կազմողին, զոր և մարգարէն յերգս առեալ ասէ. "Երկինք պատմեն զփառս ՚այ,,: Օ՛չ՚ի պատմեն, ասա ինձ. ձայն ոչ ունին և լեզու ոչ են ստացեալ և բերան ոչ գուցէ նոցա, ապա որպէս պատմեն. ես ասացից. ՚ի տեսութենէդ իւրեանց պատ-մեն: Որժամ տեսանես զգեղեցկութիւնն զմեծու-թիւնն զբարձրութիւնն զգիրան կամարին զանհակու-թիւնն, զի այսչափ ժամանակս բովանդակեաց ՚ի նոյ-նութեանն, զայս տեսեալ՝ իբր ՚ի ձայնէ լսելոյ և ուսու-ցանելոյ երկիր պագցես արարողին զայսպիսի մարմին գե-ղեցիկ և աքանչելի: Լուռ են երկինք, բայց տեսութիւն

նորա քան զփող պայծառագոյն գոլէ, և աչօք մերովք և ոչ լսելեօք խրատէ. ուստի յայտ իսկ է եթէ այնպիսի իմացումն հաւատոյն և յոյժ ստոյգ ցուցանի։

Իսկ եթէ գրովք էր խրատեալ կամ՝ ի գրոց իմանալի էր, սակայն նոցա որ գրամարտիկքն էին. և որ ոչ այսպէս՝ գնայր անտի և ոչ օգտէր ինչ, եթէ այլ ոք նմա ոչ բանայր. և մեծատունն և վաճառականն զգիրսն գնէր, իսկ աղքատն ոչ կարէր ստանալ։ Պարձեալ որ զանունն զայն գիտէր զոր գիրքն նշանակէր, հմուտ լինէր և պատմութեան գրելոցն. բայց սկիւթացին և հնդիկն և բարբարոսն և այլք ամենեքեան որ յայնմ լեզուէ օտար էին, անցեալ գնային ունայն և ոչ ուսանէին։ Իսկ զերկնից ոչ է զայս ասել. այլ սկիւթացին և հնդիկն և եգիպտացին և բարբարոսն և ամենայն մարդ որ շրջի՝ ի վերայ երեսաց երկրի, այսու միով ձայնիւս լուռ լինի, ոչ ըստ տգէտ լսելեաց, այլ՝ ի տեսութենէ չշտեմարանս մտաց մերոց անկանի. նա և տեսանողաց ուսուցիչ ապաւէնն մի ինչ պիտոյ է, և ոչ այլ և այլ որպէս լեզուաց։ Օ այս գիրս և տգէտն և իմաստունն, աղքատն և մեծատունն կարող են տեսանել. և ուր և գնայցէ ոք, կամաւ և ակամայ տեսանէ, և անհնար է ոչ տեսանել զերկինս, և բաւական է վարդապետութիւն միայն ընդունել՝ ի հայեցմանէն. զոր և մարգարէն յայտնապէս մեկին ցուցանէ եթէ արարածք ձայն տան բարբարոսաց և հելլենացւոց և միանգամայն մարդկան մեկին և դիւրահաս, ասելով այսպէս. “Ոչ են բանք և ոչ են խօսք որոց ոչ լսին ձայնք նոցա,,։ Եւ զոր ասէն՝ այս է, եթէ ոչ գոյ ազգ և ոչ լեզու որ ոչ կարէ գիտել զձայնս զայս. զի այսպիսի է բարբառ նոցա որ ամենայն մարդիկ կարող են լսել։

Եւ ոչ երկնից միայն, այլ և տունջեան և գիշերոյ. երկինք գեղեցկութեամբն մեծութեամբն և այլովն ամենայնիւ զարմացուցանեն զտեսողն, և այնու սքանչելագործ արարողին փառս մատուցանեն։ Իսկ տիւք և գիշերք զինչ ունին մեզ այսպէս ցուցանել։ Այսպէս ոչ ցուցանեն, այլ ցուցանեն որ ոչ է նուազ քան զայս, զմեղմով կարգն իւրեանց զոր ամենայն ստուգութեամբ ունէին, զմիաչափ բաժինսն։ Եւ յորժամ իմանաս եթէ զիարդ զինքեանս ըստ ամի բաժանեն, որ իբրև եր-

կուտը լծակը և ստեղծակիցք զմեռաւորութիւն զփոխարկութիւն զամենայն երկարութիւն և զչեռաւորութիւն բաժանեալ, աբանչացիր ընդ իմաստուն կարգաւորիչն։ Իպէս եղբարք ամենք որ զհայրենի ժառանգութիւնս բաժանեն հանդերձ բաղում սիրով, ոչ տրտնջեն ընդ միմեանս զհասեալ բաժինս, այսպէս տիւն և գիշերն հանդերձ ամենայն ստուգութիւք զոր և ունին բաժին միաչափ՝ նոյնչափ բաժանին և ի նմին սահմանի զինքեանս պահեն, ոչ երբեք միմն զմին արհամարհէ։ Իև ի ձմերայնի տիւն ընդերկարեցաւ, որպէս և ոչ երբեք յամարայնի յայնքան անցեալ յաղգս. քանզի յայսքան երկարութիւն ոչ մասն մի յաւուր, ոչ կէս ժամու, ոչ մի պահ և ոչ որքան ական թօթափել միմն զմիոյն ագահեաց։ Իայսոյիկ սաղմոսերգն աբանչացեալ ընդ նոցա միաւորութիւնն, գոչելով ասէ. "Որ աւուր քոխ զգան և գիշեր գիշերոյ ցուցանէ զգիտութիւն"։ Իսկ եթէ զայս իմասցիս իմաստասիրել, աբանչանաս ընդ ա մենիմաստ յօրինիչն՝ որ ի սկզբանէ կարգեալ է զանշարժելի սահմանքս զայս։

Լուիցեն զայս ագահք և ի բաց կացցեն յընչից օտարաց. լուիցեն զայս մեծամիտ ամբարտաւանք և մեծատոհմիկք, և մի խորհեսցին զառաջադիմութիւնս այլոց բառնալ։ Տիւն զգիշերն բառնայ և ոչ անցանէ ըստ եդեալ սահմանին. իսկ դու պատուով վայելես և ոչ ընդունիս եղբարց տալ զայս։ Օգոյշ լեր օրինադրի իմաստութեանն. տես ի ձմերայնի երկար հրամայեաց լինել գիշերին. յորժամ մատաղագոյն իցէն սերմանքն, զգրտութիւն և ոչ զչերմութիւն ընդունին զարեգականն, զի մի ընդ բուսանելն և խոպանասցի թառամեալ. իսկ յորժամ բոյն աճիցէ, գարձեալ աճէ ընդնոսա և տիւն. և յորժամ պտուղն արմատ առնու, յայնժամ օրն լինի ընդ երկար։ Իսկ այս ոչ եթէ սերմանեաց միայն իցէ, այլ և մարմնոց իսկ հանգիստ է ի ձմերայնի. քանզի նաւատեառք և նաւորդք և վաճառականք և ձանապարհորդք և զինուորք և երկրագործք և որք ի տունս նստիցին, ամենեցուն հանգիստ է և անվաստակ ժամանակն ձմեռնային, ըստ այսմ եղև օրն փոքրագոյն. իսկ այլ տարւոյն գիշերացն մնալ արար ածառ ի յաւելումն և յերկարութիւն աւուրն։ Իսկ աւուրքն ձմեռնային

փոքրագոյն եղեն, քանզի ոչ հարկի և ոչ գիտէ զինչ առնիցէ մարդ։

Օ զինչ ասասցէ ոք և զժամուց բարեկարգութիւնս. զի արդ և սոքա որպէս օրիորդք պարտին շուրջանակի հանդերձ լրիւք եղանակօք, բաղում բարեկարգութեամբ ձեան միմեանց, և յանկարծակի երագահաս՝ի հակառակն ոչ փոխարկին, այլ զուգակշիռն՝ի մէջ անցուցանել ոչ խափանին։ Այսպէս որում զկնի ձմերայնոյ ոչ ընդունի զմեզ ամառն, և ոչ զհետ ամարայնի ձմեռն վաղվաղակի. այլ՝ի մէջ անցեալ գարունն և աշունն, զի առ փոքր փոքր նուազեալ ցրտաշունչ հողմոց, որով մրցեալ մարմինք մեր՝ ընդելանիցիմք ընդդէմ տօթոյ, և ապա եկեսցեն հունձք. քանզի յանկարծակի փոխխուսն՝ի հակառակն՝ ցաւք և վնասակարութիւն ծնաներ, ուստի՝ ած ընորհօք տնօրինեաց զկնի ձմերայնի գարուն, և զկնի հնձոց աշուն, և ապա բերէ զձմեռն և հասուցանէ զամառն, որով անվնաս՝ որպէս ասացի՝ պահիմք՝ի հակառակայն։ Այլ ով ոք իցէ այնպէս թշուառական և տառապեալ մտօք, որ տեսանիցէ զերկինս և զերկիր և զծով, զայսչափ ժամուց զդիւրադասակցութիւն այսպիսի ստուգութեամբ, և զտունջեան և զդիշերոյ զանխափանելի կարգն, և կարծիցէ զայս ինքնակամ լինել, և ոչ երկիր պագանիցէ այնմ որ զայս ամենայն արար և կարգաւորեալ յօրինեաց իմաստութեամբ իւրով։

Այնիմ և այլ ինչ առաւելագոյն ասել. քանզի պարտ է ոչ միայն ընդ մեծութիւն և ընդ գեղեցկութիւն աչս բարձածոցս նայել, և այսու օրինակաւ միայն զՀրաշագործն գովել և յօրինմամբ օրհնութիւնս մատուցանել. արդ՝ի յօրինելն զսոսա և՝ի հրաշագործելն ոչ ոք մերձ ձեցաւ, և զի ոչ պարտ իսկ էր մերձենալ. և զի ոչ գիտեմք եթէ ո՛րպէս եղեն անտեսանելի զօրութեամբ նորա և կազմեցան, զայս զնշանակ հրաշագործութեան մեզ արար լինել Հմմարիտ վարդապետ, ի վեր քան զբնութիւն զկայս պիտոյից գնելով ամենայն եղելոցս։

Այեթէ ոչ իցէ ստուգապէս զոր ասացիս. ոչ անդուստ՝ի բնէ կանխաւ ամենեքեան յայտնապէս խոստովանին՝ հետևման իցէ ջուրց՝ի վերայ երկրի բերել. իսկ նա զերկիր՝ի վերայ ջուրց կացոյց։ Այս զի երկիր պնդութեամբ սեղմեալ խստագոյն է, բնաւվէժ, յաղթահարող, դիւ-

բաւ կարէ բառնալ զընուԹիւն Ջուրց. իսկ Ջուր գնայուն
է և Թոյլ, կակղուԹեամբ լցեծ և Հոսանուտ, և ամե-
նայն պատկեր մարմնոյ որ անկանի 'ի նա՝ ոչ է կարող
բառնալ, Թէպէտ և յոյժ ԹեԹև իցէ: Արդուզարդ ան-
գամ փշրան մասին փոքր ինչ անկեալ 'ի Ջուր՝ 'ի վերայ
ունել և ամբառնալ ոչ կարէ, այլ առաքէ 'ի խորն: Իսկ
զու յորժամ տեսանիցես եԹէ ոչ մնան կամ փշրան
ինչ փոքր, այլ զամենայն երկիր 'ի վերայ Ջուրց բերեալ
և ոչ ընկղմեսցի, սքանչացիր ընդ սքանչելագործն որ 'ի
վեր քան զընուԹիւն կարգեաց զայս:

Այս ուստի, ասեն, յայտ իցէ այս՝ եԹէ երկիր 'ի վե-
րայ Ջուրց բերեալ է: Ջուր մարգարէին զի ասէ. "Ա-
յա ինքն 'ի վերայ ծովու հիմունս արկ նմա, 'ի վերայ գե-
տոց պատրաստեաց զնա,,: Օ ինչ խօսիս. փշրանս փո-
քունս Ջուրք 'ի վերայ ուսոց իւրեանց բառնալ ոչ կա-
րեն, և զայսչափ երկիրս կարող է բերել, զդաշտս զլե-
րինս զլուրս զվէմս մեծամեծս զքաղաքս զտունկս զարս
զկանայս զանասունս և զանբանս ամենայն, և ոչ ընկղ-
մի. այո ոչ ընկղմի: Օ ինչ ասես. և որպիսի 'ի ներ-
քուստ իցէ Ջուրն, և բնուԹիք ամենայն 'ի վերայ Ջուրցն
այսչափ ժամանակաւք ոչ լուծաւ ոչ մծրացեալ տղմայաւ
ամենևին ամենայնք: ԲնուԹիւն փայտի Թացեալ 'ի
Ջուր տարեաւք փտի և մնորի. և զինչ ասեմ զբնուԹիւն
փայտի, քան զերկաԹ զինչ լինիցի հզօրագոյն. այլ և
նա Թուլանայ բազում անգամ 'ի ժանգոյ մաշեալ, յոր-
ժամ հանապազ 'ի Ջուր ինասցէ: Ասա որում և ծա-
ռայ չար կապեալ երկաԹի կապանաւք 'ի տեառնէ իւրմէ,
յորժամ փախչի և ընդ դաշտս քարշէ զերկաԹ շղԹայիցն, և եկեալ 'ի գնայս Ջուրց և զկապեալ ոտն
դիցէ 'ի մէջ Ջրոյն՝ Թուլագոյն առնէ զերկաԹն, յայն-
ժամ դիւրեաւ քարիւ հարեալ մնորէ զերկաԹն:

Արդ եԹէ երկաԹ Թուլանայ և փայտ փտի և վէմք
հարեալ ապականին 'ի բնուԹենէ Ջուրց, երկիրս այս
մեծահասակ այսչափ ժամանակ կայ ինայ 'ի վերայ Ջուրց
և ոչ ընկղմեցաւ և ոչ հալեալ կորեաւ, իսկ ով իցէ որ
ոչ զարհուրեսցի և սքանչասցի և ապաւինեալ 'ի զօրու-
Թիւն նախախնամողին ասասցէ՝ եԹէ ոչ ըստ բնուԹե-
ն գործք նորա, այլ 'ի վեր քան զբնուԹիւն: Ո՞ան
որոյ ումն ասէ. "Ո՞ կախեաց զերկիրս իբրև զկամար, և

զերկիր ամենայն ՚ի վերայ ոչնչի կացոյց ,, . և այլ ասէ . ‘‘ Ի ձեռին նորա են ամենայն տիեզերք երկրի և բարձրութիւնք լերանց ,, : Այս Թուի Թէ այսոքիկ այսմ որ ասացաքս՝ հակառակ իցեն , այլ բազում ձայնակցութիւն ունին : Վասնզի որ ասացն՝ եթէ ՚ի վերայ ջուրց հիմնարկեաց զնա , զնոյնն ասաց զոր միւսն՝ Թէ կացոյց ՚ի վերայ ոչնչի . քանզի ՚ի վերայ ջուրց հիմնարկեաւն նոյն իցէ՝ Թէ զոչնչէ կախեաց : Այս կամ լուր դարձեալ սորա ասելոյն՝ Թէ ‘‘ Ի ձեռին նորա են ամենայն տիեզերք երկրի ,, : Ոչ եթէ ձեռս ունի ՚ած , քաւ լիցի . այլ զի ուսանիցիս եթէ զօրութիւն նորա որ իսամն զամենեսեան , այն է որ բարձեալ ունի զամենայնն : Այլ ոչ հաւանիս ասացեալոցս , հաւատա տեսանելոյն :

Այս և յայլ տարերս է գտանել զսքանչելագործութիւնս զայս : Զնութիւն իսկ է հրոյ վերաբերիլ միշտ և հանապազ ՚ի բարձունս ընթանալ . Թէ և ՚ի խառնարչ ունիցիս , Թէ և բիւրապատիկ նեզես և հարկես , ոչ ընդունի զ՚ի վայր խոնարհելն : Հազուագ անգամ ՚ի փայտէ ջահ լուցեալ առնու ոք և զգլուխ ՚ի վայր խոնարհեցուցեալ , զեղանակ հրոյն ոչ կարէ ՚ի վայր հայեցուցանել , այլ ՚ի վեր ընթանայ և ՚ի խոնարհելն բարձրանայ : Իսկ զարեգակն այսմ հակառակ արար ած . քանզի զնշոյլս նորա յերկիր դարձոյց , և զլոյս և զհուր ՚ի խոնարհ հայել արար . ոչ է ասել վասն տեսութէ միայն ՚ի խոնարհ հայել և մարդկան լուսատու լինել . զի վասն նոցին իսկ եղև : Այս և բոց Ճրագի մարդկան վասն է , բայց զայս ոչ ընդունի . իսկ այսպիսի աստղ մեծ և պայծառ ՚ի խոնարհ հայի և յերկիր հասանէ , ոչ ըստ կարգի բնութեանն հակառակ հրոյն , վասն հրամայողին զօրութեանն :

Կամիս զի և այլ այսպիսի ասացից : Ծփիկունք երկնից զգաստութիւն ջուրց ընկալեալ է յամենայն կողմանց և ոչ ՚ի վայր հոսի . միթէ այսպիսի է բնութիւն ջուրց . ոչ ՚ի հովիտս դագարէ , այլ աւասիկ աքանչելի և ՚ի վեր քան զբնութիւն եղև և եկաց յերկինս . և զայս դարձեալ մարգարէն ասէ . ‘‘ Ջուրք որ ՚ի վերայ երկնից օրհնեցեք զտէր ,, : Տես զի ոչ ջուրքն զարեգակն շինոյց , և ոչ արեգակն այսչափ ժամանակս ընթանալով՝ որ ՚ի խոնարհ են ջուրք՝ յամաքեցոյց :

Կամիս զի զարձեալ յերկիր իջանիցեմք և զաքանչելս ցուցանեմք։ Ոչ տեսանես զծովս զայս որ լի և լի գոլով, այլ այսքան ծով մեծ և անդունդք խոր ալեօք և սաստկագոյն հողմոլք խառնվեալ, ՚ի վերայ տակառ աւազի հաստատեալ կայ, որ յոյժ դիւրին է առ ՚ի հեղեղել քան զՀող։ Եւ զգոյշ լեր այ խնամոտութեանն, զի ոչ թոյլ ետ նմա լռել և ոչ ՚ի յառնելն գնալ, զի մի կարծիցես եթէ ՚ի բնութենէ իցէ նորա կարգաւոր բարեդաւանութիւնն։ Այլ զխռովութիւն նորա ոմն պատմեսցէ. Նաւք գամեալք երկաթով փշրին ՚ի խռովելն նորա, և տակառ աւազն ոչ լուծանի զայսչափ ժամանակս։ Օ սոյն իսկ և ինքն նախատելով երբեք զՔրեայսն ասէ. "Յինէն ոչ երկնչիք որ կարգեցի զաւազ սահման ծովու յաւիտենական և ոչ անցանէ,,։

Ոչ այս միայն է զարմանալի զի զմեծ և զաքանչելի զերկիրս զայս արար և ՚ի վեր քան զբնութիւն ստուգեաց զկայս սորա և զհետևումն ունակութեան, այլ զհակառակն յարատևութիւն միաբան կացոյց, զջերմութիւն ասեմ և զցրտութիւն և զցամաքութիւն, զՀուր զջուր զերկիր զօդս, զհակառակ տարերս զայս, զոր ՚ի սկզբանէ զայս ամենայն կացոյց՝ ընդ միմեանս մարտուցեալ և ՚ի միմեանց ոչ սատակին. ոչ Հուրն ընթացաւ և ելոյծ զամենեսեան, և ոչ ջուրն շարժեալ ընկղմեաց զամենայն արիզերս։ Սոքա բնութիւն իսկ են մարմնոց մերոց. յորժամ մաղձն աՀիցէ, ծնանի ջերմութիւն և զամենայն զկենդանին ժանտացուցանէ. իսկ յորժամ արիւնն յաւելու, բազում հիւանդութիւն բերէ և ապականէ զկենդանին։ Այլ յընդՀանուրս ամենեքեան սոքա զկայ առեալ յիւրաքանչիւրսն ինան որպէս սանձիւք ոմանք և կապանօք կապեալք. յորժամ խորհին ՚ի մարտ ելանել, զինքեանց սահման պահել ոչ կարեն. սա իսկ է պատճառ խաղաղութեան ամենեցուն։

Ասոքիկ և կուրացն անգամ յայտնի են, և որք յոյժ անիմայք իցեն՝ դիւրաւ կարեն Հասանել եթէ ՚ի խնամն ուրեք վայելեցին։ Ով իցէ այնչափ անզգամ և անիմայ, որ տեսանիցէ զայսչափ զմարմնոց բաղմութիւն, զայսքան գեղեցկութիւն, զայսպիսի զդիրս զտարերաց, զընդհանապազորդեան զմարտս և զՀակառակութիւնս և զտևող Համերաւութիւնս, և ոչ խորհի յանձն իւր ասել,

եթէ ոչ էր բարեկարգ նախախնամութիւնն ՚ի որ ըզմարմնոցս զչափ ըմբռնեալ ունէր և բարձեալ և բովանդակեալ, անկեալ էին ամենեքեան և ոչ ինչ էին և ոչ էր տեսեալ յայսպիսի բարեդասութիւնս, և ոչ այսպէս համաձայն զտիւ և զգիշեր, կամ զայսչափ անբանից ազնուոց և գաղանաց ծնունդս, և տնկոց և սերմանց և ամենայն դալարոյ զուգընթաց Ճանապարհ, որ մինչև յօրս հասեալ՝ ոչ մի ինչ՚ի կարգէ իւրմէ անկաւ և ոչ մաշեցաւ։

Ընդ ոչ միայն այս, այլ և առաւել քան զայս և խորհիս կայ ասելոյ, և յաղագս այնց արարածոց իմաստասիրել ՚ի յայլ աւուրս Թողցուք, մանաւանդ զի և փոխարինս պահանջեմք և փութամբ զասացեալսն և այլոց մատուցանել։ Այս գիտեմք զի զլսելիս ձեր զարհուրեցուցանեն խորք իմաստութեանն. բայց եթէ առ սակաւ սակաւ զարթնուցուք և յայնս դիցուք պատրաստաբար զանձինս մեր, նա և այլոց իսկ դիւրաւ լինիմք վարդապետ։

Իսկ այժմ զայն հարկ է ասել սիրոյդ ձերում։ զի որպէս փառաւորեաց զմեզ Ած հանդերձ այսչափ հրաշագործութեամբս, փառաւորեսցուք և մեք զնա հանդերձ բազում Ճգնութեամբ մերով։ Արկինք պատմեն զփառս ՚ի երևմամբ միայն. և մեք պատմեսցուք զփառս ՚ի ոչ բանիւք միայն, այլ և լռութեամբ, և մի ընդ կենցաղոյս վայելչութիւնս ամենեքեան սքանչասցուք։ “Ուսաւորեսցի, ասէ, լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է,,։ Զինչ արդեօք իցեն ասացեալքս՝ ես ասացից. յորժամ անհաւատն տեսանիցէ զքեզ զՀաւատացեալդ պարկեշտութեամբ և իմաստութե՛ պատշաճել և զարդարեալ որպէս պարտն է, զարհուրի և ասէ. Ճշմարտապէս մեծ է Ած քրիստոնէից, որպիսիս կազմէ զմարդիկ, որքան աչողակս, հրեշտակս գնոսա յօրինեաց ՚ի մարդկանէ։ Արթէ անարգէ ոք, ոչ բամբասեն. եթէ հարկանէ ոք, ոչ տրտմին. եթէ թշնամութեամբ մեղանչէ ոք, աղօթս ևս առնեն վասն նորա. թշնամի զոք ոչ ստանան, յիշաչարութիւն ոչ ունին, բարբանջողաց ոչ միաբանին. ոչ գիտեն և ոչ են ուսեալ զսատիսօսութիւս, զերդմնազանցութիւնս ոչ ընդունին, մանաւանդ զի և ոչ երդնուն իսկ. լաւ համարին զլեզու հատանել նախ, քան թէ երդուսին ընդ բերան հանել։

Ո՛չ այսպիսիս տացուք[1] նոցա ասել վասն մեր, և ըզչար սովորութիւն զերդմանն ամենևին հալածեսցուք ՚ի մէնջ. գոնեայ այնչափ տացուք պատիւ ՚ի, որչափ և մարմնոյ մերոյ առ ՚ի պահնել հանդերձիւք։ Ո՛չխրդ ոչ իցէ այս անտեղի, հանդերձ ունելով քան զայլս մեծագին և ոչ ընդունիմք ստէպ ագանել զայն, և աղտեղացուցանել զիւ անուն յամենայն տեղւոջ բերելով սուտ և վայրապար բանիւք ուր և հանդիպիմք։ Մ՚ի աղաչեմ և վկայութիւն դնեմ, մի այնքան արհամարհեսցուք զփրկութիւնն մեր. և զջան փութոյ զոր յառաջնմէ սկսաք վասն պատուիրանիս այսմիկ, պարտական էք կատարել։ Ո՛յսր աղագաւ և ես իսկ ստէպ արարի աղաչանս վասն երդմանց, ոչ անգիտանալով զձեր տխրութիւնդ. այլ քանզի զգաստումն ՚ի ձէնջ յուղղութեան պատուիրանիս տեսանեմ, փութամ ջանիւ զի յամենեցունց բարձից, և առցե զկատարումն։ Այսպէս և հանդիսատեսք առնեն ՚ի հրապարակս, յորժամ մրցողքն մերձ լինին ՚ի բրաբիոնն՝ բանիւ առաւել զօրացուցանեն և կայտառս գործեն։ Այս մեք այսու մի անվատակք երևեսցուք, մինչև ամենեքեան եկեսցեն յուղղութիւն. դժուարին յառաջագոյն սկիզբն էր։ Իսկ յորժամ առաւել սովորականն հատաւ և սակաւ ինչ մնաց, այժմ ոչ է պիտոյ ցաւագին վիշտք, միայն սակաւ մի քննութեան, զի ատյգ և հաւատի աղաչանօքս առ ձեզ և զայնս ուղղեցէք և լինիցիք այլոց վարդապետք, և հանդարձակութեամբ տեսցուք զսուրբ զատիկն, և հանդերձ բազում փափագմամբ և երկրորդ և երրորդ անգամ ՚ի յայսմ ուղղութենէ պտղաբերեսցուք զուրախութիւն։ Ել այսպէս է ընդ քրտունս պահոցս ուրախանալ, որչափ ՚ի չար սովորութենէն ուղղելով, և զկնի փոփոխմանն պայծառ պսակաց ՚ի սուրբ տօնին հանդիպել. այս պսակս ոչ երբեք թառամի։

Ո՛րդ եթէ ջանս առցես վաղվաղակի լինել ուղղութեան, արասցես զոր ես ասացից. գրեա ՚ի վերայ սեմոյ տանց քոց և ՚ի հաստատութեան սրտի քո զթուղեալ մանգաղն զայն Ո՛աքարիայն, և զայս ՚ի դէմս անիծից թռուցեալ իմա, և զայս ստէպ խորհեա։ Իսկ եթէ զայլ ոք տեսանիցես յերդումն, երթ արգել զնա.

1 Ըստ բնականին պատշաճ. եդաւ ըստ յունին։

վնոյն և 'ի վերայ ծառայից քոց հոգա։ Եթէ այսմ ա-
մենայնի ղգուշանամք, ոչ եթէ միայն մեք ուղղիցիմք,
այլ և զաղաւթս 'ի նոյն փոյթս յորդորեսցեմք, վաղվաղա-
կի զմեզ և զնոսա 'ի կատարումն ուղղութեանս հասու-
ցուք։ Իսկ եթէ զայլս զորս ընկալայք խրատել՝ պատ-
կառեք և ամաչեք, եթէ զոր ձեզ և այլոց հրամայե-
ցաք՝ զայն թողեալ և կատարեալ մեզ երևեսջիք, յայն-
ժամ ոչ է առաւել պէտք խօսիլ։ Արդ զայս զոր քա-
զում անգամ և զառաջասացեալսն վասն յիշելով ընդ-
հօքն ՚ի միայն ասացաք. իսկ ՚ձեծ մանաւանդ խնայեսցէ
յանձինս մեր, և յայսմ և յամենայնի իսկ կրկին հաս-
տատեսցէ ՚ի մեզ զբարին, զի կատարեսցուք զամենայն
պտուղ արդարութեան, և արժանի լինցուք հանդիպիլ
արքայութեան երկնից ընդհօք և մարդասիրութեամբ
տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում
վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ՁԱՒՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ

*Խօսք եթէ պարտ է յետ կերակրոյ ոչ հեռանալ յեկեղեցւոյ. և քնա-
խօսութիւն զաչխարհէ և զարարչութենէն այ. և քնաւ ՚ի բաց կալ
յերդմանէ։*

Ուրախ եմ և ուրախակից լինիմ ձեզ ամենեցուն, և զխրատն մեր վասն նոցա որք ոչ պահեցին զմիաբանեալսն նախ ՚ի ձէնջ այսօր ՚ի գործ մատուցանել։ Խազուածք ՚ի հրաւիրելոյն մերձ թուին լինէ այսօր, մինչ զի զաւուրն ժողովետղս մեր լնուլ. ըստ որում ուրախանամ և պայծառադոյն լինիմ ՚ի հանդէսս, և առաւել յունկնդրութիւն ժողովրդեանս։ Ոչ ՚ի ոչ ՚ի նմանիր վասն նոցին ծախեցաք զաւազում բանս, աղաչելով զձեր ձեր գալ առ մայրս ձեր և հնազանդ լինել որպէս պարտ է, և զկնի մարմնական կերակրոյ հաղորդել ՚ի կերակուր հոգևորական։

Որ մեծագոյն իցէ, ասա ինձ ով սիրելի, յանցեամբ աւուրսն յորժամ զկնի սեղանոյն ՚ի քուն մտանիցիք, եթէ այժմ որ զկնի այնր ՚ի ժողովարանս յաճախին ունկնդրութիւն հանդիպեցայք օրինացն այ. յորժամ ՚ի փո-

ղնոյս Հանդիպելիք և՝ ի Հանդէսս յօժարութեամբ ուր
ոչ գոյր բարւոյ ինչ, եթէ այժմ որ վշտեաւ եղեալոց ձերոց
կանգուն կալով լսէք զանոս մարգարէականս և զառա-
քելականս։ Եւ եթէ ուտելն իցէ ամօթ և գայն՝ ի ժո-
ղովարանս. այլ որ ուտիցէ և՝ ի տան ինասցէ, և՝ ի սուրբ
տօնէս յայսմանէ օտարացեալ հեռասցի։ Ո տան ինա-
լով, գատարկ և տխուր. իսկ աստ գոլով, ամենայն քուն
և ամենայն ծուլութիւն թօթափի. և ոչ եթէ ծուլու-
թիւնն միայն, այլ և ամենայն տրտմութիւն՝ ի բաց դնի,
և ախորժ և յօժարամիտ գտանի։

Այլ զինչ պիտոյ է զայլն պատմել. կաց ինա միայն առ
պահացողն, և վաղվաղակի առնուս՝ ի նմանէ զանուշա-
հոտութիւն. քանզի իւղ հոգևորական և անուշահոտ
է պահողն։ Պահող ասեմ, ոչ եթէ յատուկ՝ ի կերակ-
րոց, այլ պահող աչօքն լեղուով ոտիւք ձեռօք խորհրդ-
գովք։ Եւ եթէ զմիւս զպահք բամբասիցեմ, այլ ցու-
ցանեմ զշահս պահողին։ Պահք ոչ եթէ՝ ի բացն կալ
միայն՝ ի կերակրոյն իցէ, այլ հանդերձ այլովքն և այս
ևս, զի զկնի կերակրոյն պատշաճապէս աստ եկեսցէ՝ նա
ոչ է զատուցեալ՝ ի պահողին նօթի զաւուրս. որպէս և
որք պահիցենն և ոչ ստուգութեամբ ունկնդիր ասացե-
ղոյն լինիցին, ոչ ինչ պտղաբերին՝ ի պահոցն։ Իսկ որ
ուտիցէ և՝ ի սուրբ ժողովարանս հաղորդ լինիցի փու-
թով, առաւել մեծագոյն է քան որ պահէն և ոչ ուտէն
և յայսմանէ պակասի։ Վասնզի չուտելն կերակուր ոչ
այսպէս զմեզ օգտել կարասցէ, որպէս որ զհոգևորա-
կան վարդապետութիւնս՝ ի միտ առեալ իցէ, ուստի բա-
զում օգուտս բարեաց գտանէ։

Այլ զայս աստ խնամատարիս, յայլում տեղւոջ ար-
դեօք մեր լուիցես. եթէ առ դատաւորս երթիցես, անդ
պատապարտութիւն և մարտ տեսանիցես. եթէ՝ ի խոր-
հուրդս խորհրդականաց, անդ քաղաքային ընչից հոգս.
եթէ՝ ի տան, քոյին հոգն շուրջ պատէ զամենայն կող-
մանց. եթէ՝ ի հրապարակս փողոցի, ամենայնն այն երկ-
րային է և ապականացու. նոյնպէս թէ վասն հարկաց
կամ բազմակատար սեղանոյ կամ վաճառաց և այլոց
հոգոց կամ կտակի կամ ժառանգութեան կամ այլոց
սոյնպիսեաց, զոր անդ ամենեքեան քննեն և բազում
խօսս վճարեն։ Իսկ եթէ երթիցես՝ ի գաւիթս Թա-

գաւօրականս, և անդ դարձեալ այսպէս լուիցես խօսել ամենեցուն վասն զօրութեանց, վասն աստի փառաց և պատուոյ, վասն պատերազմաց, վասն հարկաց քննութեան. Հոգևոր իրս չիշեն և ոչ ինչ։ Իսկ աստ հակառակ է այս ամենայնի. քանզի աստ չիշեմք վասն երկնից վասն որոյ յերկինս գործք իցեն, վասն հոգւոց և հոգևոր կենաց մերոց, և վասն էր արդեօք կամ ընդէր կամք այսչափ ժամանակս աստէն, և վասն որոյ հեռանամք աստի, և վասն էր են կաւեղէն մարմինքս մեր, և զինչ իցէ քննութիւն մահու, կամ զինչ աստի կեանքս կամ զինչ հանդերձեալն. և պարզաբար ոչ է խօսել աստ երկրային և ոչ ինչ, այլ ամենայն խօսք վասն հոգևորական կենացն լինի. և բազում և մեծամեծս վասն փրկութեան մերոյ ընկալցուք Թոշակս, և այսպէս երթիցուք աստի քաղցր յուսով հանդերձ։

Եւ քանզի ոչ 'ի նանիր և ունայն սերմանեցաք, այլ որպէս զձեզ զամենեսեան աղաչեցի որսալ զփնայեալսն 'ի մէնջ, զի և մեք զփոխարէնսն հատուսցուք ձեզ, և փոքր ինչ 'ի բանիցն ձեզ չիշեցուցանելով զփնայորդսն տացուք դարձեալ։

Օ՜ինչ արդեօք ասացեալն էր զոր նախ խնդրեաք կամ որո՞վ օրինակաւ։ Օ՜ինչ վասն մեր տնօրինեաց ած նախ քան զգիր տալ. և ասացաք եթէ համարէն աբարածովք խրատեաց զազգս ամենայն. զերկինս հաստատեաց և եդ առաջի զգիրս զայս մեծ, զի և տգէտն և իմաստունն, աղքատն և մեծատունն, սկիւթացիք և բարբարոսք և ամենայն մարդիկ որ բնակեալ են յերկրի, յայտնապէս չինքեանս ընկալցին զգիրս զայս առաւել բազմապատիկ քան զբազմութիւն վարդապետութեան։ Բազում իմաստս վասն տունջեան և գիշերոյ և նոցին բարեկարգութեանն, և զմնասունս իւրաքանչիւր զորս միմեամբք պահեն. բազումս և վասն եղանակաց տարւոյն և ժամուց աւուրց և նոցին չափաւոր կարգաց։ Որպէս զի տիւ և գիշեր անդուստ 'ի սկզբանէ ոչ միոչ 'ի կէս ժամէ ագահեն յամենայն զոր 'ի նմանէ սահմանեցաւ, սոյնպէս ամբ և դարք ժամանակաց ամենայնքն աւուրբք բաժանեցան։

Եւ զոր յառաջն ասացի եթէ արարածոյս ոչ միայն մեծութիւնք և գեղեցկութիւնք յուցանեն զբանչելա-

բար զՀրաշագործողն, այլ և զիրքք Հաստատութեան սո-
ցա որ ՚ի վեր է քան զբնութիւն Հետեւման՝ յայտնի ցու-
ցանէ զՀրաշագործ ամենիմաստ արարիչն: Ի՝ստ բնու-
թեան Հետեւման է ջուրց ՚ի վերայ երկրի բերիլ, այժմ
զՀակառակն տեսանեմք՝ երկիր ՚ի վերայ ջուրց բարձեալ.
ըստ բնութեան Հետեւման է հրոյ ՚ի վեր ընթանալ,
այժմ զՀակառակն տեսանեմք յերկիր ՚ի խոնարհ սըլի-
ռեալ զՀրայինն նշոյլս արեգականն: Իսկ ջուրք որ ՚ի վեր
քան զերկինս են, ՚ի վերայ արեգականն ոչ իջանեն, և
նա ՚ի խոնարհ ընթանայ և ՚ի ջուրց ոչ չիջանի, և ոչ ան-
յայտ կարէն առնել զծնօտս նորա զլուսատու: Այլ առ
սոքօք ասացաք եթէ ՚ի ջրից տարերց զայս ամենայն
Հաստատեաց, և սոքա Հակառակեալք և մարտուցեալք
միմեանց զմիւսն ոչ անցուցանէ, թէ և բարձիչք են միմեանց.
ուստի յայտ իսկ է եթէ անտեսանելի զօրութիւն խոր-
Հրդոյն ՚ի զսոսա դաստիարակեալ և սանձս եդեալ:

Ո՞յսոսիկ զբանս առաւել մանրակրկիտ խորհիմ առ-
նել այսօր. բայց յարուցեալ ՚ի միտ առջիք Հանդերձ
ստուգութեամբ զամենայն: Այլ զի Հաւաստեաւ լինի-
ցին աքանչելիքն, ՚ի մարմնոյ մերոյ վարդապետութեան
սկիզբն արասցուք: Վանզի մարմինք մեր նուազ և փոքր
՚ի ջրից տարերց Հաստատեցաւ, ՚ի ջերմութենէ մաղձն
խարտեաշ, յօդոց արիւնն, ՚ի ցրտոյ մաղաս, ՚ի սառնէ
և ՚ի չորութենէ մաղձն սեաւ: Այլ մի ոք ՚ի մէնջ ՚ի կար-
գէն օտարացեալ կարծիցէ զբանս զայս. քանզի Հոգևո-
րական և ըստ իրաւանց է ամենայն, և ոչ յումեքէ դա-
տապարտեալ: Ի՝սկայէս և Պաւղոս յերկրաւաստակու-
թենէ մերձեցաւ ասել մեզ վասն յարութեան մեռե-
լոց. ասէ. "Ի՝նմիտ, դու զոր սերմանես, ոչ կենդանա-
նայ եթէ ոչ մեռանիցի,,: Ի՝րդ երանելին այն ՚ի սեր-
մանեաց զբանն Հաստատեաց, ապա և մերս անմեղա-
դրելի է ՚ի բժշկականն մերձենալ յիմաստութէ. քան-
զի յաղագս Հրաշագործողին զգոյսս առաք խօսել, և ՚ի
Հարկէ եղև մեզ գալ յիմաստութէ պատճառս յայս:

Ո՞ր և յառաջն[1] իսկ ասացաք՝ եթէ յայս ջրից
տարերց եկաց մարմինս մեր, եթէ միմն զօրանայ միոչ
իսպառ՝ մահ ՚ի բռնութենէն յայնմանէ ծնանի, և է

1 Ցօրինակին յաջորդն. եգաւ ըստ յունին:

այսպէս. եթէ մաղձն թանձրանայ յոյժ, ծնանի զջերմեռիւն. իսկ իբրև անցանէ զչափն, վաղվաղակի բերէ զվախճան կենդանւոյն. ապա եթէ ցրտութիւնն առաւելու, դողումն և սարսռումն և բիւրապատիկ հիւանդութիւն ծնանի: Ըստ իւրաքանչիւր յեղանակի ամենայն ցաւք՝ ի յաւելմանէ տարերց լինին. զի յորժամ մինն անցանէ ըստ այլոյն սահման, ՚ի վերայ այլոց բըռնանայ և զամենեցուն զչափն ժանտացուցանէ:

Հարց ցայնոսիկ որք ասեն եթէ ինքնակայ իցէ ամենայն և յանձնէ իւրեանց յառնեն և բերին: Ըստ զիաՒրդ արդեօք. ուսցին յայսմ՚ի սակաւագոյն և ՚ի փոքր մնացեալ, և դեղ առցեն իբր՚ի բժշկական արուեստից բժշկել և հոգալ զնեբբին հոգիսն, ածել յիմաստութիւն բազում, և այլ ևս բիւրապատիկ օգնականութեամբ տալ. տես զի եթէ ոչ՚ի չափու կացցէ, ոչ կարէ ամենևին՚ի բարօրէ կալ, այլ կորնչի և ապականի՚ի խառնակմանէ իւրոց տարերցն կիտի եղելոց: Իսկ զիաՒրդ այսչափ աշխարհ որ այսքան հաստակաւ մարմինս յինքեան բարձեալ է՝ յիւրումն կիտի տարրացեալ կայը, եթէ ոչ էր վայելեալ՚ի բազմապատիկ խնամակալութիւնս, կամ զիաՒրդ մնայը այսչափ անդրդուելի:

Այս և այլ ևս պատճառ. քանզի մարմինքս մեր որ այսքան վայելեն՚ի խնամակալութիւնս, յորժամ արկածք լինին կամ արտաքուստ կամ՚ի ներքուստ՝ բըռնութեամբ արտաքս մղի՚ի բաւականէ իւրոց կայենից. ապա զիաՒրդ այսչափ աշխարհ մնայը այսքան դարս և ժամանակս, եթէ այսպիսի էր հանդիպեալ որպէս և մարմնոյ մերոյ: Կամ զիաՒրդ մի տարր էանց ընդ սահմանս իւր, ասա ով մարդ. ո՞վ իսկ զսոսա՚ի մի ժողովեաց, կամ ո՞վ իսկ յօդէից և յանելութիւն յայտնի և երևելի գործեաց. ո՞վ սանձեաց կամ ո՞վ բռնն Հարեալ ուղի զայսչափ ժամանակս: Ո՞չ եթէ պարզ և միատեսակ էր աշխարհս այս, սակայն և այնպէս անհնարին և անկարի է ասացեալն. իսկ յորժամ այսքան մարտս ունի՚ի սկզբանէ, ո՞վ օք իցէ այնպէս անբան և անիմայ զի կարծիցէ առանց՚ի մի ժողովողին ինքնակամ յառաջ եկեալ զսոսա, և յետ գալոյն՚ի նոյն մնացեալ:

ԶիաՒրդ մեք յորժամ՚ի թշնամութեան տեսակ փոխիմք առ միմեանս, ոչ թէ բնութեամբ, այլ կամաւ,

ոչ ինքնակամ դիպի մեզ հաշտել, այլ այնպէս միամիք թշնամիք և հանապազ ոխս առ միմեանս ունիցիմք, և կարօտ միամք այլում գալ և հաշտեցուցանել զմեզ և ի մի ժողովել, և յետ ժողովելոյն ի նոյն պնդել զմեզ միալ ի հաւանութիւն հաշտութեան, և մի դարձեալ ի բաց կալ ի պնդութեան բանիցն, իսկ զիմոդ կամ որպիսի՞ ոք իցէ որ ոչ ձանաչիցէ զի բնութեամբ պատերազմողական է հաղորդութի տարերցս և անհաշտ թշնամութեամբ են առ միմեանս, և որպէս սիրով հանդիպին և գան և միանն ընդ միմեանս, եթէ ոչ է զօրութիւն անձաւելի որ ի մի ժողովէ և զկնի ժողովելոյն հանապազ ի նոյն իբր կապանօք ունելով...:

Վասնզի նաւ առանց նաւուղղի ոչ ապրիցի, այլ ընկըղմի դիւրաւ: Աշխարհս այս մեծ զիմոդ կայ միայ այսչափ ժամանակս, եթէ չէր ոք նմա կարգաւորիչ: Այս ևս առաւել ինչ ասացիցէ. համարեաց թէ նաւ իցէ աշխարհս այս, այլոք զերեսս երկրի, առապաստ զերկինս, ծով զի՛ ներքոյ կացեալ զանդունդս ի պնդութեան բանիցն. իսկ զիմոդ կամ որպիսի՞ այսչափ ժամանակս ոչ նաւակոծեցաւ: Այլ տուր նաւի միոջ զմի օր առանց նաւավարի և կարգաւորի և նաւուղղի, և անդէն տեսանես թէ որպէս վաղվաղակի ընկղմի. իսկ աշխարհս այս որ ի հինգ հազար ամ և ևս առաւել ունի, այամ ոչ դիպաւ:

Այս զի ասիցեմ նաւ. տաղաւար ոք հաստատեաց յայգի ուրեք, ի ժողովել պտղոյն եթովղ զնա անապատ. և ոչ զերկուս աւուրս լինի բաւական կալ, այլ լուծանի խուղն և անկանի վաղվաղակի: Այդ խուղ մի ոչ միայ առանց խնամակալութեան, և աշխարհս ամենայն միասցէ առանց հրաշագործողին, այսչափ գեղեցիկս և սքանչելի, բաժանեալ տունջեամբ և գիշերաւ, ժամուց փոփոխմամբք իւրաքանչիւր դասուց, և բնութեամբ ընթացիւք զանազան գոլով և ազգի ազգի որք ի ծովս և ի ցամաքի և յօդ, յերկինս լուսաւորք, յերկրի բոյսք և տունկք, անասունք, սողունք, գազանք, որք ըստ իւրաքանչիւր գնան մնչեան վաղեն սողան. և որ քան զամենայն զօրաւոր է ազգ մարդկան, զիմոդ այսչափ միասցին կանգուն՝ ասա ինձ՝ առանց խնամակալութեան:

Ակիս բանիւ և ի բուրաստանս ծառոց, ծաղկանց ազգի ազգեաց, դալարոյ ամենայնի, գունոց նոցա, անու-

շահոտութեց, տեսակի, դրից, անուանց, չափոց, անպատուղ ծառոց և պտղաբերաց, և կենդանեաց, և այլ և այլ քնութեանց որք ՚ի ծովու, որք ՚ի ցամաքի և որք ՚ի յօդս ընթանան, գլերանց, զդաշտաց, զկաղնիս և զայլ ծառս, զ՚ի խոնարհ բուրաստանս և զվերին բուրաստանս, զպեսպես աստեղաց և զծաղկանց վայելչութիս, ՚ի խոնարհ վարդ և շուշան, ՚ի վեր նշոյլք լուսոյ։ Կամիս թէ և ՚ի հաւուց ցուցից քեզ բուրաստան վայելչութեան. հայեաց զսիրամարգացն զտեսիլ վայելչութեան որ գեր ՚ի վերոյ անցանէ քան զամենայն ներկուածս գունոց, զծիրանափայլ ՚ննձղուկն և զայլսն ամենայն։ Ի միտ առ և զերկնիցն գեղեցկութիւն զիարդ նորոգ ունի զնւր գոյնն և ոչ սևանայ. իբրև թէ այսօր իսկ կազմեցաւ, այնպէս փայլուն և պայծառ տեսանի։ Օ՜երկրի զօրութեն զիարդ միշտ կայ ՚ի ծննդեան այսչափ ժամանակս, և ոչ եղև ամուլ որովայն նորա։ Կամ զաղբերս ՚որպէս ցանկ բխեն և ոչ պակասին, այլ ՚ի լինելութենէ իւրեանց զօրհանապազ բխեն զտիւ և զգիշեր։ Կատեա և զծով թէ որչափ ընդունի զգնացս գետոց և ըստ չափն ոչ անցանէ։ Աստի արժան է իւրաքանչիւր ումեք ասել. "Մեծ են գործք քո տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր,,։

Արդ զի՞նչ իցէ այլ ասել բանս իմաստութեան առանհատս, յորժամ զայս ամենայն ընթեռնուցումք առաջի նոցա, զմեծութիւն, զգեղեցկութիւն ստացուածոց, զառատութիւնս, զանանցութիս զամենայն։ Այս ինքն մանաւանդ պարտաւորութիւն է, ասեն, զի այսպիսի գեղեցիկ և մեծ արար Ած զաշխարհս. զի թէ ոչ էր գեղեցիկ արարեալ, ոչ էաք զնա Ած ծանուցեալ. իսկ մեք այժմ զարմացեալ զարհուրեցաք ընդ մեծութիւն սորա, սքանչացումք և ընդ գեղեցկութիւնն։

Կարծէին զսա Ած. քննեսցուք և զայս։ Արդ ոչ էթէ մեծութիւն սորա կամ գեղեցկութիւնն իցէ պատճառ ամբարշտաց, այլ իւրեանց անմտութէ, ցուցցուք զայս նախ ՚ի մէնջ։ Ընդէր մեք ոչ այսպէս հանդիպիմք, ընդէր զսա ոչ Ած ածացուցանեմք. միթէ աչօք մերովք ոչ տեսանեմք, ոչ զնոյն ստացուած վայելեմք որպէս և նոքայն, ոչ զնոյն մարմին և զհոգի ստացաք. ապա զիարդ ոչ զսոյն ետ իմանալ մեծութիւն և գեղեցկութիւն սորա

որպէս և նոցա։ Բայց ոչ այսու միայն յայտնեցից, այլ այլովք իրօք. զի ոչ վասն գեղեցկութեանն սորա զսա ածաց ցուցանեն, այլ յաղագս իւրեանց անմտութեանն. թէ պեկի[1] վասն ելն երկիր պագանէին, կամ կոկորդիլոսի կամ շան, և որ այլ նուաստագոյն է՛ի գազանաց։ Այլ մեք յիրաւի ասեմք՝ եթէ "Ի նանիր և ընդունայն են խորհուրդք նոցա և խաւարեալ անմտութեամբ սիրտք նոցա,,. և թէ "Ոչք զանձինս առ իմաստունս ունին յիմարեցան,,։

Արդ մեք ոչ ըստ այսմ միայն պատասխանեմք, այլ և առաւելագոյն ասեմք, եթէ նախ զայս՛ի վերուստ գիտեր ածծ, ըստ որում զպատճառս զայսոսիկ կորոյս՛ի խնդրոյ իմաստութեանն. վասն այսորիկ ոչ եթէ մեծ և սքանչելի միայն արար ածծ զաշխարհս, այլ ապականացու և հոսանուտ և՛ի բեկման, և զիւրոյ տկարութեանն բազում խայթ եդեալ սմա. որպէս առաքելոցն արար, զսոյն ամենայն աշխարհի։ Ո՛չինչ արար առաքելոցն, ես ասացից։ Բազում նշանս և սքանչելիս ետ՛ի ձեռս նոցա մեծամեծս և զարմանալիս. և յայտիկ թոյլ ետ ածծ զնոսա ստէպ ապտակել հարկանել հալածական առնել՛ի բանտ արկանել, անկանել՛ի տկարութիւն մարմնոյ, կալ հանապազ՛ի վիշտս տրտմականս, զի մի երբեք՛ի մեծութենէ զարմանալեացն նշանացն ըզնոսա աստուածս անուանիցեն. վասն որոյ յետ այնչափ ընորհացն տուելոց թոյլ ետ մարմնոյ նոցա լինել տկար և՛ի բազում ցաւս հիւանդութեան ծնկել, զի գնութիւնն յայտնի լինիցի։ Այլ եթէ իմ իցէ բանս այս, այլ Պաւղոսի որ ասէ. "Եթէ կամիցիմ պարծել, ոչ եղէց անզգամ, քանզի զարդարն ասեմ. այլ անխայեմ գուցէ ոք համարիցի լիս աւելի քան զոր տեսանիցէ կամ լսիցէ լինէն,,. և դարձեալ. "Ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս,,. այսինքն՛ի մարմինս տկարս։ Ո՛ւ որպէս անօթ քարեղէն՛ի հողոյ և՛ի հրոյ լինիցի, սոյնպէս և մարմինք սրբոցն այնոցիկ հողեղէն էին և հրով հոգւոյն սրբոյ ընկալան զօգնականութիւն և եղեն քարեղէն։ Այս այսպէս եղեն գանձանակ, ուստի առատագոյն ընորհքն՛ի տկար և յապականացու մարմին եդաւ, "Ո՛ւ

1 Յայնն խափ։

առաւելութիւն զօրութեանն, ասէ, իցէ յայ և ոչ ՚ի միջի ,,...: Այս և զսոսա որ այսպիսիք էին, աստուածս կարծեցին և զոհել սկսանէին և ասէին, "Աստուածք նմանեալք մարդկան իջին առ մեզ ,,, իսկ եթէ այսպէս ոչ էր լեալ, ոճր ոչ էին լեալ ամբարիշտ մարդիկ յորժամ զայն աքանչելիս տեսանէին:

Արդ որպէս աստ վասն աքանչելեացն նշանացն Թոյլ ետ քննութեն կալ ՚ի տկարութեան և առ միմեանս տեղի ետ փորձութե, զի մի երբեք կարծիցեն թէ աստուածք իցեն, նոյնպէս և զերկիր նմանակից նոցա արար. յօրինեաց զսա գեղեցիկ և մեծ, և զարձեալ տկար զսա կազմեաց, զոր ՚ի միասին յայտնեսցուք զսա ՚ի գրոց իմաստասիրաբար: Ոչ վասն գեղեցկութեան ասէն. "Երկինք պատմեն զփառս Աստ ,,. և զարձեալ. "Ձգեաց զերկինս որպէս կամար ,,. և զարձեալ. "Որ ունի զծիր երկնից և զշուրն որ ՚ի վերոյ նորա ,,. և այլուր վասն երկրի ցուցանէ, որ թէպետ և գեղեցիկ է և մեծ, սակայն ապականացու է. և ասէ այսպէս. "Ի սկզբանէ տէր զհիմունս երկրի հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են. նոքա անցանեն, բայց դու կաս և ամենա յաւիտեան. ամենեքեան որպէս ձոյնս մաշեսցին, որպէս վերարկու փոխոխեսցես զնոսա և փոխեսցին ,,. և զարձեալ վասն արեգականն. "Որպէս փեսայ զի ելանէ յառագաստէ իւրմէ, ցնծայ որպէս սկայ, ընթանայ զճանապարհս իւր ,,...:

Տեսեր արդեօք զգեղեցկութիւն նորին. տես արդ և զպատմութիւն տկարութեան նորա, զոր և ամն իմաստուն յայտ առնէ ասելով. "Ոչինչ իցէ լուսաւոր քան զարեգակն, և սա ինքն նուաղի ,,: Այս ոչ այսու միայն է տեսանել զնորա տկարութիւնն յորժամ պակասի և նուաղի, այլ և յամպոց ընթացս ծածկի. թերևս արձակել զշառաւեղս իւր հակառակի, բայց խղել զամպն ոչ կարէ, քանզի նա թանձրագոյն է և ոչ տայ երևել նմա:

Այլ զսերմանս մնուցանէ, ասեն: Այս զիարդ, միթէ նա միայն մնուցանէ. այլ պիտոյ է և հողոյ և անձրևաց և ցօղոյ և հողմոց և ժամուց, եղանակաց բաժանման բարեխառնութեան. եթէ այս ամենայն ոչ եկեսցէ, պէտք արեգականն աւելորդ գտանի. զի և նմին իսկ պիտոյ է կցորդութիւն այլոց յորս և եդաւ առնել ՚ի. իսկ

մանաւանդ զգործս իւր արար ոչ առանց կարեաց։ Եւ նա ինքն ոչ այսպիսի արուեստիւ զերմանիսս բխեաց յերկրէ, այլ հրամայեաց միայն և ամենայնին բուսաւ. քանզի առանց կարեաց նա միայն գործէ։ Եւ դարձեալ զայս գիտասցեն Թէ ոչ տարերցս բնութիւնք, այլ հրամանք նորա առնեն զամենայն, զի և զտարերքս յոչգոյից եբեր ի մէջ, և առ Երկիւքն ոչ յումեքէ աղաչեալ իջոյց զմանանայն. "Ո՛չ հաց երկնից, ասէ, ետ նոցա ,,...։

Իսկ զտարերս կարօտ արար հանապազ, զերկինս՝ առ որով հուր, զօդս, զերկիր, զծով. և եղոյց զնոցա տակաւութիւնն, և Թէ զիարդ իւրաքանչիւր ոք զընկեր իւր խնդրէ, և առանց նորա լուծանի և ապականի։ Զկանզի երկիր յոր արկանին սերմանիք, եթէ ոչ տեղայ անձրև յօդոց և պակասին աղբիւրք, Թէ և յափն ծովուց կամ առ եզերս գետոց իցեն արկեալ սերմանիքն, չորանան և լուծանին վաղվաղակի։ Եւ այնքն զմիմեանս խընդրեն, օդք զարեգակն և արեգակն զօդս։ Զայլ ևս մի ընդ յերկարեսցուք զբանս, ասացեալքս բաւական են. զի որք միտս ունին, պատճառս տուաք։ Ո՛չ Թէ որ քան զամենայն արարածս աքանչելի է արեգակն՝ ի տակաւութեան է և ի կարիս հարեալ, ոչչափ ևս առաւել այլ մասունք աշխարհիս։

Ո՛ր և ասացի իսկ վաստակասիրացն, զնոյն դարձեալ ի գրոց ունիմ ցուցանել ձեզ զի ոչ արեգակն միայն, այլ և ամենայն աշխարհ առ միմեանս այլայլին տարերօքս։ Ո՛չ յորժամ լինիցի բազմութիւն ցրտոյ, արգելու զզօրութիւն արեգականն. իսկ յորժամ ջերմութիւն արեգականն զօրանայ, մաշէ զխայթոցս ցրտոյ. և այսպէս զհակառակութիւն կալեալ և եդեալ առ միմեանս, յաւէտ առնեն մարտ տարերքս. և յայսմանէ յայտնի և ցուցանի մեծ ապականութիւն սոցա, և բարիոք երևի Թէ մարմնական է ամենայն տեսութիւնս։ Զայլ քանզի յօդուտ ձեր բարձրագոյն է բանս այս, բեր այսուհետև բացցուք ձեզ զքաղցր աղբերս գրոց որով հանգուսցուք զլսելիս ձեր։

Ո՛չ ոչ վասն երկնի և երկրի ըստ կարգի ասեմք ձեզ, այլ վասն ամենայն արարածոց ընդ նմին։ Ո՛այս ինքն առաքեալն Պաւղոս մեզ ցուցանէ ասելով Եթէ "Ո՛մեծն արարածք ապականութեան ծառայեն ,,. և Թէ

“Հեծեն և երկնեն մինչև ցայժմ,,։ Այլ զոր ասէն այս է. ապականացու, ասէ, եղեն արարածք. այս իսկ է, ’ի նանրութիւն կարգեցաւ զի ՚ած հրամայեաց։ Ընդէր հրամայեաց. վասն ազգիս մերոյ. քանզի յապականութիւն հանդերձեալ էր դառնալ և դարմանեալ մարդն, պարտ էր և երկրի այսպէս կալ. զի ոչ էր արժան մարմնոյ մերոյ ապականացու լինել, և զերկիր անապական կարգել։ Այլք սակայն և այսոքիկ բառնալոց են, ասէ, “Ով և ինքեանք իսկ արարածքն ազատեսցին ’ի ծառայութենէ ապականութեան,,. և ուստի այս լինիցի, յայտ ածեալ անդէն ասէ. “յաղատութիւն փառաց որդւոյն ՚այ,,։ Յորժամ յառնեմք, ասէ, և անապականն ընդունիմք զմարմինս, յայնժամ երկինք և երկիր և ամենայն արարածոց մարմինք անապական լինիցի և անարատ։

Յորժամ տեսանիցես զարեգակն ծագեալ, աքանչացիր և երկիր սպագ հրաշագործողն. և յորժամ տեսանես զնա թագուցեալ յամպոյ և աներևոյթ լեալ, իմացիր զտկարութիւն քոնութեանն, և մի՛ երկիր սպագաներ նմա որպէս ՚այ։ Ուստի ոչ թէ միայն ’ի քնութիւն տալոցդ խայթս տկարութեան եդ ՚ած, այլ և մարդկան իւրում ծառայից հրամայեաց նմա հրամանս տալ. զի եթէ ’ի տեսութենէ չհանապէս զնոցա ծառայութիւնն, ’ի հրամայողաց նոցա որք զնոսա ’ի ծառայութեան կացուցին՝ յայնցանէ ուսանիցիս։ Որպէս Յեսու որդի՝ Նաւեայ ասէր. “Այցէք արեգակն հանդէպ Գաբաւոնի և լուսին հանդէպ ձորոյն Աղիմնի,,։ Այլ դարձեալ մարգարէն Եսայի յաւուրս Եզեկիայ արարեալ. և Մոաբէս օդոց և ծովու և երկրի և վիմաց հրամանն տայր, և որպէս հրամայէր՝ վաղվաղակի լինէր։ Այլոյս զբնութիւն ջուրց դարձուցանէր. երեք մանկունքն զզօրութիւն հրոյ շիջուցանէին։ Ցեսանես զիարդ երկաքանչիւրովք խնամեաց զմեզ ՚ած. գեղեցկութեամբ տարերցս ած զմեզ յաստուածածանօթութիւն. իսկ վասն տկարութեան նոցա ոչ ետ թոյլ մեզ պաշտել զնոսա։

Եւրդ վասն այսր ամենայնի փառաւորեսցուք զբարեգութիւն մեր ՚ած ոչ բանիւք միայն, այլ և գործովք, և ձգնութիւնս հաճոյականս ցուցցուք իսկ, այլ և վասն երդման պահելոյ ասեմ։ Ոչ եթէ ամենայն մեղք միա-

պէս տանջանս բերեն ՚ի վերայ մեր, այլ որ դիւրին էցէ ուղղել և ոչ ուղղեսցուք՝ առաւելագոյն բերէ մեզ ըզտանջանս. որպէս և Սողոմոն ասէ. “Ո՞վ ինչ են զարմանք եթէ ըմբռնեսցի ոք ՚ի գողութեան, գողանայ զի լցուսցէ զանձն իւր քաղցեալ. ապա թէ ըմբռնեսցի, եօթնապատիկ տուժեսցի, և զամենայն ինչս տուեալ զանձն փրկեսցէ. իսկ որ ընայ առ պակասութեան մտաց, կորուստ անձին իւրոյ ստանայ, և ցաւս և անարգանս կրէ,,։ Այս զոր ասէն այս ինչ է. վտանգ մեծ է, ասէ, գողանալն, բայց ոչ որպէս ընացողն. զի նա ունի պատճառս ցուրտ, զկարիս աղքատութեան. իսկ ընացողն ոչ մի ինչ կարիս ունի որ ստիպէ զնա, այլ յանմտութենէ միայն անկանի ՚ի գութ մեղացն։ Օ՜սոյն զայս է ասել և վասն այնոցիկ որ երդնուն. զի և ոչ սոքա ունիցին ինչ պատճառս ասել, այլ միայն արհամարհութիւն է պատուիրանին։

Այս գիտեմ զի դիւրին է, սակայն և երկիւղալի, և ոչ թողից ես ասել. և եթէ զառանց ամենայն զսէր իմ ծանուցեալ էք, ՚ի բաց կացէք ՚ի չար սովորութենէ երդման....։ Կամիմ զձեզ զի որպէս ես այժմ ցաւագնիմ և կոծ առեալ սգամ վասն ձերոյ փրկութեան, նոյնպէս և դուք մի հեղգայք վասն ձերոց անձանց, մինչև զկատարումն առցէ ուղղութիւն պատուիրանին։ Այս զի է շատ ինչ ասել. եթէ ոչ էր գեհենի և ոչ տանջանք արհամարհողաց և ոչ վարձք հնազանդելոց, և ես եկեալ առ ձեզ զայս մանն ընորհ ՚ի ձէնջ խնդրելի, ոչ ապաքէն տեսեալ տալիք զխնդրուածսն զդիւրինս զայսմ ընորհն։ Իսկ յորժամ ՚ձեծ զայս խնդրէ վասն ձեր որ տուողդ էք, և ոչ վասն իւր որ առողն է, ո՞վ իցէ այնպէս անիմաց, կամ ո՞վ իցէ այնպէս թշուառական և տառապեալ որ արգելու տալ այնմ յորմէ վայելէ և ընդունի զընորհն զոր տայցէ բազմապատիկ։

Օ՜այս այժմ իմացեալ, յորժամ երթիցէք աստի, յանձինս ձեր խոկացէք զասացեալս ամենայն. և որք ՚ի միտ ոչ են առեալ, ամենայն հնարիւք ուղղեցէք, զի ըզձեր ինքեանց և զեղբարց ձերոց ուղղութեան զհատուցումն ընկալջիք ՚ի տեառնէ ՚ՅՍ մերոյ ընորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Գոհունակ ի վան փոխարկելոյ ակնկալի չարեացն և յիշելոյ զնոյն. և արհամարհանաց մարմնոյ մերոյ և նորին ոտեղծման. և ուղղելոյ զաւիղս երդման։

Յորժամ զմտաւ ածեմ զանցեալ ձմեռն և զկատեալ հանդարտութիս, ոչ դադարեմ ասել՝ օրհնեալ է Ած որ արար զայմ և կազմեաց զնոսա, որ արար ի խաւարի լոյս, որ ի ջուրցանէ ի դրունս դժոխոց և հանէ, որ խրատէ և ոչ մահացուցանէ։ Օ՜ սոյն և ձեզ խորհրդակից լինիմ հանապազ ասել և ոչ դադարել, քանզի նա ինքն այսու գործովք զմեզ բարեգործէ. ապա որք քաւութեան արժանի եղաք, որովք բանիւք տացուք նմա փոխարէնս։ Ոյան որոյ աղաչեմ մի երբեք դադարեր առ ի գոհանալոյ զնմանէ։ Զթէ յառաջակայ աւուրս լինիցիմք բարեմիտք, բարիոք զի և առաւելագոյն վայելեսցուք։ Զդ աստուցուք հանապազ՝ օրհնեալ է Ած որ ետ մեզ առանց երկիւղի ինդութիւն, և եդիր առաջի ձեր սեղան, և պարգևեաց ձեզ համարձակապէս ունկնդիր լինել բանից մերոց. օրհնեալ է Ած զի ոչ ետ այժմ փախըստական լինել ի վտանգից, այլ յօժարել յանկնդրութիւն գրոց ընթանամք աստ. և ոչ երբեք հանդերձ տագնապաւ և դողութեամբ և հոգովք լինիմք առ միմեանս, այլ Ած երկիւղիւն հանդերձ՝ զամենայն երկիւղ ի բաց թօթափեմք. մինչ զի զառաջագոյն աւուրն և զընկզմելն մեր երբև ի մէջ ծովու և զնաւակոծումն զոր ամենայն աւուր և ժամու ակն ունէաք գալոյ, ոչ առանց յիշելոյ թողցուք, յորժամ բիւրս համբաւէին հանճարս, զբոլորովին զօրն խռովեալք և սոսկացեալք յամենայն կողմանէ զամենայն օր աւելագործութեամբ և բազմաքնին յուզմամբ եթէ ոմն եկն ի զօրագլխացն կամ ոմն պատմեսցէ թէ եկն, կամ թէ ձիմարիտ էն ասացեալքն կամ թէ սուտ, և զդիշերս անքուն կատարել։ Յորմէ էր տեսանել զբաղաքս և արտաստուել՝ թէ զինարդ եղեն յայնմ պահու ապառնալեացն։ Աստի և մեք զառաջինն աւուրն լռեցաք, վասն զի դատարկացաւ

քաղաքս մեր և յանապատս փոխադրեցան ամենեքեան. իսկ որք մնացին, տրտմութեանն ամպ զբաղեալ զայրացուցանէր. քանզի Հոգի՛ի տրտմութիւնս անկեալ, միանգամայն յամենայն ունկնդրութիւնս առանց պատրաստութեան է: Ասատի և բարեկամքն Յոբայ մերձ եղեալ առնա և տեսեալ զարդարն զայն նստեալ՛ի վերայ աղբևայց տրտմագին խօսմամբ վիրաւորեալ, պատառեցին զհանդերձս իւրեանց, և յողբս հարեալ և լռեալք նըստան մերձ, չայտ արարեալ եթէ զառաջինն խօսել ոչ է հանգիստ նեղելոյ որպէս խաղաղական լռութեամբ կեալն. զի առաւել միխիթարութեան ունի պէտքս այս: Ըստ որում և երբայեցիքն որք՛ի ծառայութիւն կաւոյ և աղիւսոյ կապեալք էին, ՛ի գալն Մովսէսի տեսանէին զնա և ոչ կարէին ունկն դնել բանից նորա ՛ի տրտմութենէն: Այս այս չէ աքանչելիք հասարակաց մարդկան լինել նեղասրտաց, ուր և զաշակերտսն տեսանեմք անկեալ յախտս չայս: Ոչնի խորհրդական ընթերցն յորժամ առանձինն առեալ զնոսա Քրիստոս ասէր, զոր չառաջագոյն հարցանէին ցնա աշակերտքն ասէ՝ թէ յո՞ երթաս, իսկ յորժամ ասաց նոցա զոր փոքր ինչ չետոյ դիպելոց էր, զպատերազմանն, զչաունելն ՛ի վերայ նոցա, զհալածանսն չամենեցունց, զասպատակն, զհարուածն, զանսան, զ՛ի դատաստան մնանելն, որպէս բեռն ինչ ծանր՝ երկիւղ հանդերձելոյն և տրտմութիւն ըմբռնեաց զնոսա և մնացին լռեալք. վասն որոյ տխուր և գձուձ տեսեալ զնոսա Քրիստոս նախատելով ասէր. "Չանեմ ես առ Հայր իմ, և ոչ որ՛ի ձէնջ հարցանէ ցիս թէ յո՞ երթաս. այլ զայս խօսեցայ ընդ ձեզ, որպէս մութիւն ելից զսիրտս ձեր,,: Ասատի և ես լռեցի յանցեալ աւուրսն: Վանզի որ հանդերձեալն է մեծ ինչ խնդրել, եթէ բարւոք և ուղիղ կամիցի աղաչել, աջողակ ժամանակի մնասցէ, զի հանդարտ և՛ի բարւոջ եղեալն որ հանդերձեալ է տալ զխնդրուածսն, և ապա երթիցէ զաջողակ չժամն մարտակից առեալ, որով հանդիպիցի չնորհին: Այս մանաւանդ յորժամ կամիցիս ասել բան իմաստութեան, պատրաստական ժամանակ պարտ է խնդրել յորժամ ունկնդիրքն բարիոք կացցեն մնասցեն ազատ յամենայն հոգոց և՛ի տրտմութենէ, և ապա մատուցանել զբանս պատուիրանաց:

Ա՛րդ զոր վասն արարածոց ասացաք եթէ ոչ միայն զարմանալի և գեղեցիկ և մեծ արար զսա ՚ած, այլ և տկար և ապականացու, և եդ սմա խայթս բազումս, զի յերկոցունց զաջողակն մեզ ընտրհեսցէ, ՚ի սքանչանալն՝ արարողին մատուցանել զպատուիրեն, իսկ վասն տկարութեանն զատեալ զմեզ ՚ի սոցանէ, զի մի պաշտեսցուք զարարածս՝ այլ ղարարիչն, զայս և ՚ի մարմինս մեր է իմանալ։ Վասն որոյ բազումք քննեն որք են Թշնամիք արդարութեան միշտ հետազօտեալ զայնս, որք ընդ մեզ դասաւորեալք են՝ թէ ընդէ՞ր արդեօք ապականացու եղև մարմինս։ Հելլենացիք և հերձուածողք ասեն՝ եթէ ոչ է այս յա՛յ եղեալ. զի և ոչ էր արժան այսպիսիկ, ասեն, ՚այ հրաշագործութեանցն, աղտեղութիւնք և քրտունք և արտասուք և աշխատութիւնք և տառապանք և զայլ ամենայն որ ինչ է մարմնոյ։

Իսկ ես յորժամ վասն սորին քան ինչ լինիցի, նախ զայն ասացից՝ եթէ մի ինչ ասասցես զարհամարհեալ մարմինս զայս զանարգեալ և զդատապարտեալ. այլ եթէ կամիցիս գիտել եթէ զոյպիսի մարմինս ստեղծ ՚ած, եկեսցուք ՚ի դրախտն և զառաջինն զմարդն տեսցուք եղեալ։ Ոչ էր մարմինն այն ապականացու և արհամարհ և բեկոտեալ. այլ զոր օրինակ պատկերք ոսկեղէն հանիցէ նորոգ ՚ի հալոցայ բովուց և պայծառ փայլմամբ ելուսեցի, այնպէս յամենայն ապականութենէ յայսմանէ մարմինն այն փոխոխեալ էր. ոչ յաշխատութենէ ձանձրանայր, ոչ քրտամբք ժահահոտէր, ոչ հոգս խորհրդոց ինչ ունէր, և ոչ տրտմութիւն շրջապատէր և ոչ այլ ինչ կիրս յայսպիսի ախտից։ Իսկ յորժամ ոչ զգաստութեամբ բարեկենդանութեանն համբերեաց, այլ անարգեաց զբարեգործն, և զպատրող դևն քան զինամակալն ՚ած զարարող և զպատուիչ նորա արժանահաւատալի համարեցաւ և ակն ունէր լինել ՚ած, խորհուրդ առեալ առաւել քան զիւր իշխանութիւնն կամէր բարձրանալ, յայնժամ զգաստացոյց զնա ՚ած՝ ապականացու արարեալ զնա և տկար, և շուրջ պնդեաց զնա յամենայն նեղութիւնս յայս. ոչ եթէ առեաց կամ դարձաւ ՚ի նմանէ, այլ գթացաւ ՚ի վերայ նորա և զկործանիչ զամբարտաւանութիւնն զանանձաւորոյ արգելլոր, և անկարօտ լինել ՚ի վեր քան զպետս չտայր թոյլ.

այլ այսու գիտութեամբ ուսուցանէր զնա թէ տկար և անզօր է. և այսպէս զնա հաւանեցուցանէր, զի մի երբեք տեսլեամբ և երազովք ցնորեալ խաբիցի. քանզի ասաց սատանայ՝ եթէ լինիք որպէս զնածս՝ Նախ զայսպիսի խմացս խորհրդոյ արմատախիլ արար, բազմախտութեամբ վատագոյն զմնարմինն արարեալ. այսու բնութեամբ խրատէր զնա զի մի երբեք այլ այնպիսի առցէ խմաստս։ Նա եթէ այսպէս իսկ է Ճշմարիտ, մանաւանդ զի որ 'ի նմանէ եղեն՝ նոքօք յայտ արար։

Ել ետ Թոմ նախ նմա մեռանել, այլ որդւոյ նորա ետ տեղի այսմ դիպել. զի նա առաջի աչաց տեսեալ զմարմինն փտեալ և ապականեալ, մեծ խմաստութիւն ընկալցի 'ի տեսութենէն և ծանիցէ թէ զինչ եղև, և այսու զգաստացեալ այնպէս բարիոք ապա աստի երթիցէ։ Ո՛անաւանդ զոր նախ ասացի՝ եթէ 'ի ձեռն գոյից զայս յայտնէ, ոչ նուազ իսկ և զկնի այսմ ասացուածոյս իցէ յայտնապէս։ Վասնզի Տարկս այս պնդեալ ընդմարմնոյ մերոյ ամենեցուն մեռանել և ապականել, և յայսմ կերպարանաց եղծանել և լինել որպէս փոշի, զոր և յարտաքին իմաստասիրացն ոմն զայս տեսեալ կատարեալ սահման եդ ազգի մարդկան, Տարցանելով թէ զինչ իցէ մարդ, ասէ՝ կենդանի բանաւոր մահկանացու. և ասեն՝ զայս ամենեցուն խոստովանել, բայց համարձակեցան ոմանք 'ի կարծիս բազումս և 'ի կերպարանաց վկայ լինել մահուն, հակառակեցան համբառնալ զինքեանս յաճս և այնպիսի պատիւ ինդրելին։ Նա թէ ոչ էր նախ տեղի առեալ մահն և ապականութիւն, ոՀր ապա ոչ յայտնէր ամբարտաւանութիւն մարդկան։ Նոր զինչ ասէ մարգարէն յաղագս ումեմն բարբարոս թագաւորի. "Ոյու ասէիր 'ի սրտի քումմ. ելից 'ի վերայ աստեղաց երկնից, եդից զաթոռ իմ և եղէց նման բարձրելոյն,,։ Նա ապա ասէ պատմելով յայտնապէս զվախճան նորա. "Ի նեռքոյ քո մեց տարածեցաւ, և 'ի վերոյ քո որդն յարկցի,,։ Ոյրե թէ այսպէս իսկ ասիցէ, եթէ մարդ որ այսպիսի վախճանի մեռայ, զիաՀրդ այնպիսի երևմանց համարձակիցի։ Նա վասն այլոց ումեմն որ զայսպիսի կարծիս մարմնոյ կազմութեամբ խորհեալ՝ ասէ ած. "Ոյու ինքն ոչ ես ած, այլ մարդ,,։ Ո՛րդ որք բանիւք կամիցին զքեզ խոցոտել, զայս ասասցես՝ եթէ

ՙաճ անդուստ ՚ի վերուստ կամեցաւ բառնալ զկռապաշտուե պատճառս, ուստի այսպիսի արար զմարմինս մեր։

Այլ զինչ սքանչելիք իցեն եթէ ՚ի վերայ մարմնոյ մերոյ այսպէս եղիցի։ Այլ թէ մահկանացու արար, այլ անմահ գոլով՝ ոչ սուրբ բնաբար և անարատ և անտրտում և անմեղ և անախտ զհոգիս մեր կազմեաց։ Այսն էր արդեօք. զի մի զինքն ՚ի մեծատոհմութեան տեսեալ, առաւել վասն ինքեան առցէ իմացուածս։ Իսկ եթէ այս եղև և համարձակեցան ասել ոմանք՝ եթէ յայ գոյութենէն իցեն ոգիք մարդկան, եթէ այսչափ ախտիւք չէին փոփոխակալք և օտարայեալք, ոչ էին յարուցեալ խոովելիունք։

Արդ զոր վասն արարածոցս ասացի, զնոյն և վասն մարմնոյ ասեմ, զի մի առաւել սքանչասցուք զերկոցունց իբր նման գոլ ՚այ. այլ յայսմ ցուցանի սքանչելի ՙաճ, զի ապականացու և ախտաւոր զնա արարեալ ՚ի նմին ենցոյց զնոսա զօրութիւնն։ Այս զի կարող էր վեհ մեծութեամբ առնել և պահել զնիւթս, եցոյց և յերկինից կերպարանաց և յարեգակնէ, զայս այսպէս առնել կարող գոլով եթէ կամեցեալ էր. իսկ զպատճառ տկարութեանն վերագոյն ասացաք։ Ուստի ոչ թէ յայսմանէ հատանի հրաշագործողին սքանչելիքն, այլ մանաւանդ առաւելեալ յերկարանայ, զի ՚ի տկար և ՚ի գծուծ բնութիւնս զայսչափ ցուցանել զարուեստից բարի գնացս, զի ՚ի հողոյ և ՚ի կաւոյ այսպիսի զօգուտս և զգայութիւնս զանազան և ազդի ազգի և այսպիսի իմաստասիրութեան կարող լեալ։

Օ՚ի որչափ ստորագոյս զբնութեանս զնուաստութիւնս, նոյնչափ մանաւանդ աքանչացիս ընդ մեծութիւն արուեստաւորին. քանզի որ մեծամեծ հնարիւք պատկերս ոսկեղինս յօրինեն՝ ոչ այսպէս աքանչելի և գեղեցիկ կարեն ձեւացուցանել պատկերք, որպէս ՚ի հողոյ անկեալ՝ ՚ի բարի կարգ արուեստի կարող լեալ ստեղծուածն գեղեցկութիւն ցուցանել սքանչելի և անքննին։ Արդ և ՚ի կատարման նիւթոցն խանգարումն լինի և եղծումն. իսկ աստ մերկ արուեստին ե ցուցմունս։

Այս իսկ եթէ կամիցիս գիտել եթէ որչափ ե հրաշագործողին իմաստութիւնն առ մեզ, իմացիր եթէ զինչ

լինիցի ՚ի հողջ. և վինչ այլ, եթէ ոչ աղիւս և խեցի. Սակայն արուեստաւորն ՚ամ ամենայնի կարողութեան ՚ի նիւթոյ ուստի միայն աղիւս և խեցի ելանէ՝ արար առնել այսպիսի աչս գեղեցիկս, մինչև զամենայն տեսողս զարհուրեցուցանէ. և այսչափ ետ տալ սմա զօրութիւն, մինչ զաւարձութիւնս օդոյ կարող գոլ տեսանել փոքր բբիւն օգնականութեամբ, և զլերինս և զդաշտս և զբլուրս և զերկիր ծովու հանդերձ ՚ի ձեռն այնր փոքրիկ օգնականին տեսանէ։ Օ այսոսիկ տեսցես և մի ինչ ասասցես զարտասուս և զերկս, զի այնք վասն քոյին մեղայն եղեն. այլ իմա զնորա գեղեցկութիւն և զզօրութիւն տեսութեանն թէ զիարդ հասանէ ՚ի բարձրութիւնս օդոյ, ոչ աշխատի և վաստակեալ ննասցէ. ոտք յորժամ խուն մի երթիցէ, վաստակեալ լուծանի. իսկ աչք երթայ յայնչափ ձանապարհ, այնքան ընդերկար և հեռի և ընդարձակագնայ, և ոչ աշխատի և ոչ հիւանդութեան ինչ հանդիպի։ Այս է հարկաւոր և պատուական այլոց անդամոց մերոց, ըստ որում ոչ ետ ըմբռնել սմա ՚ի վաստակոյ, և առանց աշխատութեան մեզ ՚ի նորա սպասաւորութեանն լինել և անարգել։ Այլ իսկ մանաւանդ կարիցէ յառաջ բերել զնորա զամենայն առաքինի զօրութիւնս։

Այլ վինչ ասեմ վասն բբի և տեսանողդ զօրութեան. եթէ զոր նուաղագոյն ասես թէ իցէ քան զայլ մարմինն, զարտևանուսնս աչացն առցես ՚ի քննել, և յայսմանէ տեսցես զհրաշագործողին զիմաստութիւն զօրութեանն։ Օ՜ի որպէս ՚ի վերոյ հասկացաք հնձող պահապանս կացուցեալ զթուչունս հալածեն և ոչ տան թռչել նստել ՚ի վերոյ հասկացն և կոտորել՝ քանզի տկար են, այնպէս և զաչացն տեսցես. իբրև հովանիք և պահապանք ՚ի վերոյ կայ մազ արտևանանցն, և զփոշի և զկխոցուածն նշողից արեգականն արգելու, և յամենայնէ ոչ արտաքուստ հարեալ զբբիւն խաւարեցուցանէ՝ արտևանունքն ոչ տայ թռչել հարկանել։

Տեսցես արդեօք և ՚ի յօնսն զիմաստութիւն արարողին։ Ո՜վ ոչ զարմացի ընդ նորա դիրսն յօրինման. տես զի ոչ է անցեալ ըստ չափն մազ յօնիցն զի մի զաչսն մթացուսցէ, և ոչ ՚ի ներքսագոյն քան զպետսն թողուն անցանել իրաց իմիք, այլ որպէս ցիւ տան՝ այնպէս ունի

շուք ՚ի վերուստ. և զոր ՚ի գլխոյն ՚ի խոնարհ եկեսցեն քրտունք, ընդունին և ցաւել աչացն ոչ տան։ Ցես զիարդ և մազ յօնիցն իցէ բուսեալ, զի խտացեալ թխութիւն և ամուր կայիւքն բազում գեղեցկութիւն տան երեսացն։ Այս միայն երեսացն վայել է, ոչ ՚ի թաթախ ձեռացն կամ յայլ անդամս պիտոյ է։ Այս և ոչ այսու միայն է աքանչելի, այլ և միւսն ոչ գծուծ քան զնոցնս. զիաւրդ արդեօք. զի հեր գլխոյն աձեն և փոքրել պիտոյանայ, իսկ յօնացն ոչ այսպէս։ Այլ ոչ ըստ ումանց հանդիպմամբ եղև, այլ հասարակաց. և մինչև ծերանամբ և ՚ի խորին իսկ ծերութիւն հասցուք, և խաւարին աչք մեր։

Որ կարիցէ և վասն գլխոյ և զգայարանաց որ ՚ի սմա ցուցանել զամենիմաստ արուեստ արարչին։ Նախ զսա ՚ի տղայութեանն կակուղ արարեալ, իսկ յորժամ զամենայն զգայութեանցն բառնայ զաղբերս, յամենայն կողմանց ոսկերօք զսա հաստատեաց, զի ըստ իւրում քնութեանն անշնաս մնասցէ։ Արձեալ զի մի ՚ի խիստ պնդութենէ ոսկերացն ծանունց ձանձրասցի, իբրև մնուցանող դպրեակ պահապանս ՚ի մէջ կացուցեալ՝ ոչ մի միայն, այլ և երկուս. մինն զի հաստատուն կացցէ ՚ի ներքոյ զգործի զգայարանացն, իսկ երկրորդն զի ՚ի վերուստ ՚ի վերայ բերեալ գլխոյն մարմնոյ, և նա քան զայս է խստագոյն։ Այս պատճառ՝ զի մի յեկելոց վտանգից կամ գանից ՚ի վերայ գլխոյն՝ զնաս կրեսցեն զգայարանքն, այլ զի ընդդէմ կացցեն զօդուածքն այնոցիկ և զամենայն զընդդէմն լուծանեն և առանց զնաս պահեսցեն. ըստ որում ոչ եղև մի զօդուած և ոչ մի ոսկր որ ծածկէ զնա, այլ յամենայն կողմանց կարս բազում ունի, և բազում զգուշութիւն նորա ըստ ամենայն պատճառի։ Իսկ ծխոյ արտաքուստ ստեպ մտելոյ զիւրաւ արտաքս քաղի, ոչ կարելով ազդել ՚ի ներքս ընդ այնմ կարամուտս ոսկրազօդին, և մի կարել զնա հեղձուցանել. իսկ եթէ եկեսցէ գան ուստեք, ոչ ամենայն գլխոյն առնիցէ զնաս։ Օ՛ի թէ մի էր և ընդ մի ոսկր խառնեալ էր ամենայնն, յորժամ ՚ի մի կողմն գան առնոյր կամ վէրս, ամենայն գլուխն ապականէր. բայց քանզի բազում բաժին առնի այժմ, ոչ լինի այնպէս։ Այլ եթէ դիպեսցի խոցուածն միոյ մասին, բոլորն գոլով

յոսկերաց Հաստատեալ, միայն այն մանն ՚ի նմանէ, իսկ այլքն անշարժ մնասցեն, և ստէպ ՚ի վերոյ կոծել ՚ի խղելոյ ոսկեր՝ ՚ի յայլսն ոչ կարէ մերձենալ ցաւն։ Այսպէս այսմ պատրաստութեան ՚ի բազում ոսկերաց զգլուխն Հաստատեայ ած։ Այլ զոր օրինակ տուն ոք շինեալ՝ ցիւս և ՚ի վերուստ կողմանէ ծածկոյթս աղիւսայս դիցէ, նոյնպէս զոսկերս զայս եդ ՚ի վերոյ գլխոյն ած և զհերն բուսանել կազմեաց, զի փոխանակ քողարկութեան այս լինիցի գլխոյն։ Իսկ եթէ ամենայն գլուխն ջախջախի, առ հասարակ բնութիւն առնու զգան ցաւոյն և կործանի կենդանին։

Յապիսի և սրտին արար. քանզի տիրապէս է բնութեի նորա ամենայն անդամոց մերոց, և ամենայն կեանք մեր ընդ այսմ տէրութեամբս ըմբռնեալ է, և յորժամ հանդիպի նմա խոցումն կամ ցաւ՝ անդէն և մահ, ուստի կարծել և բուռն ոսկերօք պատեաց զնա յամենայն կողմանց իբրև վահանօք ընդդէմ նետից, և զթիկունսն յետուստ կողմանէ ամրացուցեալ ոսկերօք բիձայն և այլովք բազում պահապանօք, և զհոգին ընչից միայն ՚ի նմա եդ և շուրջ զնովաւ իբրև անկողինս կակուղս, զի հանապազ անպակասելի ՚ի շարժման գոլով՝ հաստատեաց զնա, զի մի դժուարութեան դիպեսցի։ Այլ զինչ ասիցեմ վասն զգայարանաց գլխոյ և սրտի. զի թէ և վասն ոնգաց քննեսցես, բազում և յայսմ տեսցես զայ խմաստութիւնն, և ըստ ամենայնի իսկ է յուցանել և ՚ի կերպարանաց և ՚ի գրից։ Հայեաց ՚ի ձեռն. ընդէր ոչ հաւասարաչափ եղեն ամենայն մատունքն։ Այս և այլ բազում և առաւել քան զասոյն են ծանուցիչք իմաստութեանն այ. բայց ասացեալքս բաւական են ոք մտադիւր կամիլ ունկնդիր լինել իմաստագործ արարչութեանն այ որ փայլեաց առ մեզ. վասն սրոյ թողեալ զայսր բաժանմունս զերկս աշխատութեան զգործ սիրոյ ձերոյ, ՚ի յայլ դիւրինս դարձցուք ստուգութեամբ։

Այլ զինչ ասելոյ զայսոսիկ պատասխանեն ոմանք. եթէ թագաւոր անասնոց եղև մարդս, ընդէր զզօրութիւն և զթեթևութիւն և զպատկութիւն բազում կաբեաք ապահէ ՚ի նոցանէ. քանզի ձի արագագնաց է քան զվարպ, և եղն զօրաւոր, և արծուի թեթև է, և առիւծ կարող զօրաւոր և բուռն։ Այս առ այս զինչ ասասցուք

նոցա, Թէ և աստի կարիցեմք գիտել զայ իմաստութիւն և զմեծ պատիւն զոր մեզ շնորհեալ է։ Ցես արդ. ե- րագընթաց է ձի քան զմարդ, բայց ՚ի գնացս հեռա- գոյնս աջողակ է մարդ քան զձի։ Ձի որչափ և է երա- գագնաց, առանց հեծանելոյ Թէ ընթացցի յաւուր՚ երբ կերիւր ասպարէզ. իսկ յորժամ հեծեալն վարէ զնա, կարող լինի և հազար ասպարէզ գնալ. զի Թէպէտ և նա արագ իցէ, այլ սա խորհրդական արուեստիւն ա- ռաւելագոյն գտանի. ոչ ունի ոտս զօրաւորս որպէս ե- րիվարն, ունի զնորային իբրև զիւր ոչ ինչ նուազ քան զիւրն սպասաւորել ինքեան. քանզի այսպէս վայել է Թագաւորի։ Ձէ կարէ երիվար զայլ անասուն ածել լծակցեալ ՚ի պետս իւր. իսկ մարդ զամենայն ինչ հնա- զանդ առնէ հանդերձ պէսպէս արուեստիւ զոր ըստ այմ տուեալ է սմա ըստ իւրաքանչիւր կարգի զամենայն ա- նասուն ածել ինքեան ՚ի սպասաւորութիւն։ Իսկ եԹէ էին ոտք մարդկան արագահաս իբրև երիվարաց, սա- կայն չայլ ինչ ոտիւք չետնեալ գտանէին, ՚ի կապանս, ՚ի ծայրս լերանց, ՚ի ծառ ելանել, յորս երիվարն չայ- սոսիկ ընԹանալ արգելու։ Ո՛չ Թէպէտ և ոչ խիստ, այլ կակուղ են ոտք սորա, սակայն չամենայնի աջողակ գտանին, և ոչ միանգ է տկարութիւնն քան զձիոյ զօ- րութիւն արագութեան սպասաւորել ՚ի պէսպէս ըն- Թացս։

Վարձեալ ոչ ունի Թևս բարձրաԹռիչս արծուոյ, այլ ունի քան և արուեստ որով կարող է զամենայն Թըռ- չունս ընդ ձեռամբ ածել։ Իսկ եԹէ կամիցես տեսանել Թևս իմանալիս և գեղեցիկս զիմ, ունիմ ևս ԹեԹևա- գոյնս քան զնոցին, ոչ տամն ասպարէզ կամ քանս բարձ- րանալ և ոչ միանգ չերկինս հասանել, այլ ՚ի վեր Թըռ- չել չերկինս երկնից, անդր հասանել ուր Քրիստոս իցէ նստեալ ընդ աջմէ հօր։

Անասուն կենդանիքն զգինս իւրեանց ՚ի մալամինս իւ- րեանց ունին. որպէս եզն եղջիւրս, և խոզ վայրի ժա- նիս, առիւծ մագիլս. իսկ մեզ ոչ ՚ի բնութիւն մարմնոյ զէնս եդ ՚ած, այլ արտաքուստ, յուցանելով Թէ մարդն ոչ է գազան վայրենամիտ, այլ ընտանի. ըստ որում ոչ միշտ ընդ նմա է զէնն, այլ բազում անգամ ՚ի բաց է- դեալ՝ դարձեալ առնու յորժամ կամիցի. քանզի ազատ

է և ՚ի կամ Թողեալ. ոչ հանապազ հարկէ բառնալ զչէնն, զի այն ծառայական է։

Օ՛ի ոչ եթէ հոգւիք մեր միայն են բաւական մեկնեալ յանբանից, այլ և դրիւք մարմնոյ վերագոյն եմք քան զնոսա. զի այսպիսի հոգւոյ բանականի օգնական կազմեաց զմեզ ՚ած, և ՚ի հրաման կարգի և դասու աջոզակ։ Աստի զայսպիսի մարմին ոչ պարզաբար արար, այլ որպէս իրաւունք են՝ բանաւոր հոգւոյ սպասաւորել. և եթէ ոչ էր այսպէս, յոյժ գայթակղեր օգնականութիւն հոգւոյն։ Այս այսմանի է ՚ի ցաւոց հիւանդութեանց. քանզի թէ առ փոքր մի շարժի կամ մանրի յիւրոյ կայից զարդ և յօրինուած մարմնոյս, բազում օգնականութիւն հոգւոյն արգելու, որպէս յորժամ առնել ջերմ կամ ցուրտ գլուխն լինիցի։ Զինչ զի ՚ի մարմնոյս է գիտել զբազմապատիկ գործութիւն ՚ած. քանզի յառաջնումն առաւել արար զմարմինս քան որ այժմ է, և յայսմանէ յևս պատուականապոյն հանցէ կազմուած՝ մեծագոյն փառաք յարուցանելով։

Զարձեալ եթէ պլուստ կամիցիս ուսանել որչափ վասն մարմնոյ եղոյց ՚ած իմաստութիւնս, առեմ և զայս, զոր մանաւանդ Պաւղոս զարմանալի գնիւթս ասէ ստէպ և հիանալի։ Օ՛ի՞րդ արդեօք. զանդամն առաւելութեամբ առ միմեանս արարեալ և չիւերաց ոչ բաժանեալ, ոմն գեղեցկութիւն ունելով, և միւսն ՚ի զօրութիւն կազմեալ և պատուական ցուցեալ. որպէս զի գեղեցիկ են աչք և զօրաւոր են ոտք և պատուական է գլուխ. բայց ոչ կարէ աչք ասել ցոտն թէ չէք ինձ պիտոյ, և այլքն նմանապէս. զայս և ՚ի վերայ անատնոց պարտ է իմանալ, զնոյն և վասն կենցաղոյս ամենայնի։ Ազատարուն կարօտ է ծառայից և ծառայք ազատութեան, որպէս գլուխ ոտից և ոտք գլխոյ նմանապէս։ Զարձեալ յանատնոց ոմանք են վայելուչք և ոմանք զօրաւորք. ոմանք զմեզ զարդարեն և այլք կերակրեն. սիրամարդ վայելչացուցանէ, և ընտանի հաւ և խոզ կերակրեն, ևս և հօտք և անդեայք. եղինք գործեն, հշտ բեռնակրեն, և այլք ամենեքեան նման սոցին զկարիս մեր ընտրեն . . .։

Զի այսու հեաւ բամբասեր զ՚ած վասն ապականացու մարմնոյս, այլ մանաւանդ երկրպագեա նմա վասն

այսորիկ և աքանչացիր ընդ իմաստութիւն և ընդ գթութիւն նորա. ընդ իմաստութիւնն զի կարող է յայսմ ապականացու մարմնի այսպիսի ցուցանել յօրինուածս. իսկ ընդ գթութիւնն՝ զի վասն օգտութեան հոգւոյն արար զսա ապականացու, զի քակեալ փարատեսցէ զնորա քնութեանն զամբարտաւանութիւն։ Հարցանեմ՝ զիմոդ արդեօք. և պատասխանեմ քեզ, թէ ոչ՝ի սկզբանէ զայս այսպէս արար, այլ եղև վասն մեղացն գործոյ։ Այս, ասէ, ոչ միայն վասն յանցանացդ այնմիկ՝ եթէ զքեզ յառաւել պատիւ կոչեցի, դու անարժան պարգևացն զքեզ կացուցեր և անկար՝ի գրահատէն. այլ զիարդ ոչ անտես արարի զքեզ, այլ զյանցանս քո բարձի և զքեզ ուղղեալ յերկինս հանի։ Ա՛ն օրոյ թոյլ ետու քեզ այնչափ ժամանակս փտել և ապականել, զի՝ի բազմութեան ամացն հաւանեսցիս, և առանձին լիցի քեզ խոնարհութեան և զգաստութեան վարդապետութիւն, և ոչ երբէք զառաջակայ զգաստութիւնն՝ի քէն ընկեսցես։ Ա՛ն այսր ամենայնի գոհասցուք զնմայ մարդասիրութենէն, և գթութեան նորա տացուք հատուցումն, հատուցումն՝ որ մեզ է օգտութիւն։

Վարձեալ և վասն պատուիրանին զոր ետ ասացի ձեզ, բազում արարից զիրօք և ոչ՝ի բաց կացից մինչև ուղղեցէք զպատուիրանն. քանզի առ՝ի ձէնջ խնդիրը ոչ եթէ այս իցէ զոր առ սակաւ սակաւ բազում անգամ ասեմք, այլ այն իսկ է հաւանեցուցանել զձեզ։ Ընդ Հրեայսն ասէր Տէր՝ի ձեռն մարգարէին. "Լեթէ՝ի դաստան և՝ի կռիւս պահէք, զի պիտոյ են ինձ այսպիսի պահք ասէ տէր,,։ Ո՛նոյն և առ ձեզ ասէ՝ի ձեռն մեր. եթէ յերդումն և յերդմնազանցութիւն պահէք, չեն պիտոյ այնպիսի պահք։ Ո՛իարդ ապա զզաւրիկն սուրբ տեսանիցեմք, զիարդ զսուրբ պատարագն ընդունիցիմք, կամ որպէս՝ի սքանչելի խորհրդոյն հաղորդեսցուք, որ հանդերձ լեզուօք մերովք զանուն Այ առ ոտն հարկանեմք յամենայն ժամ, լեզուաւ՝ որով զՀոգիս մեր աղաղաղացուցաք՝ՙի հոգևոր հնչմն մերձեսցուք։ Ո՛թագաւորական ծիրանիս աղտեղի ձեռօք ընդունել ոչ ոք կարէ. իսկ դու զերկրաւնական մարմինն անսուրբ լեզուաւ ընդունել համարձակիցիս։ Երդումն՝ի չարէն է, իսկ պատարագն սուրբ իսկ է։ "Ո՛իարդ հաղորդես

ցի լայն ընդ խաւարի, կամ զիաղդ միաբանի ՝Քրիստոս ընդ բեղիարայ ,,։

Իսկ այժմ զի փութայք փոխարկել յանօրէնութենէ՝ գիտեմ ստուգապէս. այլ իւրաքանչիւր ոք յանձնէ իւրմէ ոչ դիւրաւ զայս շաւիղ ուղղիցէ, արասցուք փառաւորութեի և պատիւ. և զոր օրինակ աղքատք առնեն յուրախութեէ իւրեանց, որպէս թէ բոլորովին իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ կոչնատէր իցէ, ոչ կան անհոգ ՚ի հանդարտութեէ, այլ ամենեքեան դիւրաւ բերեն զանխայութեի. զսոյն և մեք արասցուք, յորժամ յանձանց մերոց գանգաղկոտ իցեմք լինել զնամ, պատիւ արասցուք միմեանց երաշխաւոր լինել, բերել ՚ի խորհրդածութեի ՚ի զգուշութիւն պատուիրանին, ՚ի պատուիրանս և յաղաչանս, ՚ի յիշումն և ՚ի սպառնալիս, զի ըստ իւրաքանչիւր փութոյ ամենեքեան ուղղեսցուք։ Այս զընկերաց մերոց քան զըմերն առաւել տեսցուք, մեք զայլոցն պահեսցուք, և զըմեր պահն ցուցանել և յայտնել նոցա. և զբարի խորհուրդս զայս արասցուք, զի այսպէս փոխոխեսցուք յայսմ ՚ի չար սովորութենէ, և համարձակութեամբ երթիցուք ՚ի սուրբ տօնն և հաղորդեսցուք սուրբ խորհրդոյն հանդերձ քաղցր յուսով և բարի մտածութեամբ հնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի ՝Քրիստոսի, ընդ որում հօր փառք հանդերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Դոհութիւն առ ած, և վասն Թողութեան զոր առ Թագաւորն մեղաւ. և վասն արարածոց, և բնական օրինաց մարդոյն. և վասն երդման։

Այս երկկ ասացի՝ օրհնեալ է ած, և դարձեալ զսոյն ասեմ։ Պէտք և անցին վտանգքն, այլ յիշատակ վըտանգին մի անցցէ, ոչ զի տրտմեսցուք, այլ զի գոհասցուք. զի եթէ յիշատակ վտանգին մնասցէ, փորձութեի վտանգին ոչ երբեք կացցէ։ Օ մի գայցեն փորձութիւնք, զի յիշատակաւն զմեզ զգաստացուցանիցէ։ Որպէս ոչ եթող զմեզ ած ընկղմել ՚ի հասեալ տրտմութիւնս, նոյնպէս և մեք մի ծուլասցուք Թողուլ յանձնէ մերմէ

պիշատակն յորժամ էանց այն. աղաչանս մատուցեալ մեր ՚ի տիրուհեանն յայնժամ, գոհասցուք զնմանէ այժմ յուրախութեանս. յայնժամ միխթարել արժան էր զվտանգեալսն և ոչ նախատել, մի այսուհետև զմեզ ինքեանս իբրև զանպարտս ՚ի դանդաղանս անկանել. "Յիշեա, ասէ, զժամանակ սովոյ յաւուրս յագեցման ,,։

Յիշեսցուք և մեք զժամանակ փորձութեանն յաւուրս նեղութեան, և վասն յանցանաց մերոց այսպէս արասցուք։ Լթէ մեղանչեմ, ՚ի ձեռն խոստովանութե և ապաշխարութեան Թողու ՚ած զմեզ քո, զթողութիւնն ընկալ և գոհացիր. բայց զյանցանսն մի մոռանար, ոչ զի զքեզ ՚ի նոյն խորհուրդ ընծայեսցես, այլ առ ՚ի խրատել զՀոգիդ քո, զի մի խայտասցէ՝ և մի գառնայցէ և ՚ի նոյն անկանիցի։ Ա.յսպէս և Պաւղոս առնէր, քանզի ասէր՝ եթէ "Հաւատարիմ համարեցաւ զիս կարգել ՚ի սպասաւորութիւն որ յառաջ հալածիչն էի, հայհոյիչ և Թշնամանիչ,,։ Վասնզի միշտ յանդիմանի կենցաղս այս ՚ի ծառայից ՚ած, զի երևեսցի մարդասիրութիւնն տեառն։ Վասպէտ և Թողութիւն առի, ասէ, այլ զպիշատակ մեղացն ոչ ՚ի բաց հատանեմ։ Օ՚ի այսու ոչ միայն զտեառն մարդասիրութիւնն ցուցանէր, այլ և զինքն պայծառագոյն յօրինէր։ Օ՚ի դու յորժամ ուսանիցիս Թէ ով էր նա զառաջինն, առաւել սքանչասցիս ընդ նա յայնժամ. իսկ իբրև զմտաւ ածես զնորայն Թէ յորմէ զինչ եղև, ոչ միայն զնա գովեսցես, այլ և քեզ ինքեան քաղցր յոյս առնուցուս աստէն լուծանել՝ Թէ և մեծագոյն իցես մեղուցեալ։ Ա.ռաասցելովքս և որ անյոյսք են, այսու օրինակաւ աղաչէ և յարուցեալս առնէ։

Այնօրինակ և վասն քաղաքիս մերոյ իցէ ասել, զինչ եհաս մեզ՝ այն ամենայն ցուցանէ զայ մարդասիրութիւնն, և զմեր առաքինութիւնս՝ զի կարողացաք ՚ի բաց հատանել զանչափ բարկութիւն, իսկ զայն համբաւել՝ զի ՚ի պակաս դարձս մեր զանսպառ հասեալ ամպ տըրտմութեան ՚ի բաց մերժեաց։ Ա.յս իսկ զանյոյսն յարուցանէ, ուսանելով ՚ի մէնջ, զի Թէ ՚ի վեր հայիցիս առ ՚ած զմի պահ աւուրն, Թէ և բիւրապատիկ շուրջ կայցեն զքեզ ալիք ծովու, ոչ Թողու ընկղմել զքեզ։ Իսկ

1 Ցօրինակին Խոյրէսոյ. հգաւ ըստ յունին։

ոմ եաես կամ ոմ լուաւ երբեք զչարչարանս մեր, զի այնպէս հասեալ անկաք ՚ի խորխորատս խորինս։ Եանապազ ակն ունեաք թէ խլի քաղաքս մեր և քնակիչք սորա. այլ յորժամ յոյս առ սատանայ ընկղմել զնաւն, յայնժամ յստակ խաղաղական և հանդարտ զալիսն աբար ՚ած։

Մ՚ի այսուհետև զմեծութիւն վտանգին մտաւսցուք, որով յիշել կարասցուք զբարեգործութիւնսն որ եղև յմեզ. քանզի որ ոչ ճանաչէ զնուաճիչն հիւանդին, անգէտ է արուեստի բժշկութեան։ Ոչ այս առաւսցուք որ զոյց մերոց և յամենայն ազգս առաքեսցուք, զի լուիցեն ամենեքեան եթէ զիարդ փութայ սատանայ զյաւտակ անգամ քաղաքիս մերոյ անյայտ առնել, և սրպէս կարողութեամբ ՚ած զայս որ այսպէս անկեալ գնէր կործան կերպարանօք կեցոյց կանխաւ, նա և ոչ պարապաց Թոյլ ետ լինել միաս, այլ և զերկիւղն հալածեաց և զվտանգն խորտակեաց բազում փութով։ Վ՚անզի յանցեալ շաբաթուն զամենայն գոյս մեր աւարեալ կործեալք ամենեքեան հրապարակաւ, և զօրագլխաց գալ ՚ի վերայ մեր, և այլ ևս յաձախուսն բազում նեղութեան. ահաւասիկ այն ամենայն էանց, իբրև զամպ և որպէս ստուերք ընթացան, և միայն յանկալութենէ վտանգից տանջեցաք և առաւել լաւագոյնք եղաք, զ՚ած հաշտեցուցաք և զսիրտ թագաւորին կակղացուցաք։

Ա՚նասցուք այսուհետև և յամենայն ժամ՝ օրհնեալ է ՚ած, և առաւել փութով ընթասցուք յեկեղեցիս յունկնդրութիւն. աստ ընթասցուք ուստի և պտղաբերեցաք զօգտութիւն։ Վ՚ասէ իսկ յառաջնմէ թէ յոմ ապաւինեցաք կամ ուստի եղև մեզ փրկութիւն։ Անդ նիմք այսուհետև զսուրբ զատիկն ամուրութիւն հաստատութեան. և որպէս ՚ի ժամանակի վտանգիցն զմեզ ոչ մատնեաց, նոյնպէս և մեք մի Թողցուք զինս յաւուրս դիւրութեան. այլ ճնասցուք բազում ստուգութեամբ և պատրաստութեամբ ՚ի ժողովարանս և յաղօթս, և լսողք լինցուք ՚ած աշխատիչ գործոց. և զոր կանխաւ վայրապար զաւուրսն ծախեցաք, ՚ի գործ կենաց դարձուսցուք և ՚ի խնդիրս ՚ած յային. նախ ՚ի զօրացն և ՚ի զօրագլխացն ընթանայք փութով փախչել և յեկեալ հասեալ էարբեացն, այժմ զամենայն աւուրս ծախեսցուք յունկնդ-

դրութիւն ՝ածային օրինացն. և մի՛ ի չաւիղս մնասի յիմարութեանն, զի մի գարձեալ ՝ի նեղութիւս մանիցիմք։

Յանցեալ երից աւուրան մի ՝ածածանօթ յեղանակս քննեցաք և ածեալ ՝ի կատարումն առ ՝ի պատմել զայս եթէ զիարդ երկինք պատմեն զփառս ՝այ, և երևեցուցաք թէ ՛որպէս արարչութեամբ աշխարհի երկնի և երկրի հրաշագործն փառաւորի։ Իսկ այսօր զոր կանխաւն առացաք, սակաւ մի իմաստասիրեսցուք, և ապա յայլ բանս ՝այ ընթացցուք։ Ա՛րդ ոչ եթէ արար միայն զայսոսիկ, այլ և զեղեալսն որք ներգործեցան և կազմեցան. ոչ զամենայնն անշարժելի եթող և ոչ ամենեցունն շարժել հրամայեաց, այլ զերկինն հաստատեաց անշարժ, որպէս և մարգարէն ասէ. "՚Հաստատեաց զերկիրն որպէս կամար,,։ Իսկ արեգակն հանդերձ այլովք աստեղօք զօր ամենայն ընթանայ. իսկ երկիր ՝ի սկզբանէ լռեալ կայ, այլ ջուրք որ ՝ի վերայ սորա՝ գնան հանապազ. և ոչ եթէ ջուրք միայն, այլ և ամպք և անձրևք գնան և հեղուն, և ըստ ինքեանս ժամանակաւ տացեն պտուղս այլևայլս։ Իսկ բնութիւն անձրևաց մի է, բայց յոյժ այլ և այլ որ ՝ի նմանէ լինին. քանզի յորժամ այգւոյ գինի լինի և յանդս ցորեան, ՝ի ձիթենիս ձէթ և յայլս նմանապէս։ Ա՛ի է որովայն երկրի, և ազգի ազգի բերէ պտուղ։ Ա՛ի է և ջերմին նշոյլք արեգականն, և զամենեսեան զանազանապէս յանգէ, զոմանս յամեղով և զկէսս փուճացուցանելով։ Իսկ ո՛վ իցէ որ ոչ սքանչասցի ընդ այս և զարմասցի. մանաւանդ թէ և ոչ միայն սքանչելի է զանազան և պէսպէս կազմուածսոցա, այլ զի Հասարակ ամենեցուն աչաց առաջի եդ զնոսա, մեծատանց և աղքատաց, արդարոց և մեղաւորաց, զոր և Ա՛րիստոս իսկ ասաց՝ թէ "՚Ո արեգակին ծագէ ՝ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև ՝ի վերայ արդարոց և մեզաւորաց,,։ Ա՛յլ և բիւր անասնոք, գազանօք և սողնօք ելից զերկիր, և բնական որոշմամբք զատոյց, և եդ ՝ի մեզ իմաստս բնականս՝ ոմանց նմանել և յոմանց փախչել, զոր և ասացից իսկ։

Ա՛րջինն վաստակասէր է և աշխատասէր ՝ի գործս իւր. և դու եթէ ՝ի միտ առնուս, խրատ մեծ առնուցուս ՝ի յայսմ անասնոյ։ Ցես զիարդ հնարի ամբարել զիւր կերակուրն, զի մի գիձասցի. Հայեաց ՝ի նա և մի փախ-

վեցիս ՚ի քրտանց և յաշխատութենէ. ըստ որում և ի-
մաստունն Սողոմոն զծոյլն առ մրջինն առաքեալ ասէ.
“Երթ առ մրջինն, ով վատ, և նախանձեա ընդ Հանա-
պարհս նորա, և լեր իմաստնագոյն ևս քան զնա. զի նո-
րա ոչ գոյ երկրագործութիւն և ոչ հարկադիր և ոչ այն
որ տագնապիցէ և ոչ ընդ տերամբք է, և պատրաստէ
ամարայնի զկերակուր և բազում համբարս դնէ ՚ի
հունձս,,։ Եւ խորհիս ՚ի գլոյ ուսանել եթէ բարիոք
է վաստակելն. ոչ կամիս ՚ի վարդապետէ լսել զայս, առ
խրատ յանձանոյ։ Եւ յապէս բազում անգամ առնեմք
և ՚ի տունս մեր յորդիսն և ՚ի ծառայսն. զի մեծագոյնն
որում ակն ունիմք թէ իմաստուն է և պատուեալ քան
զայլսն, յորժամ յանցանէ ինչ՝ պարզամիտ տղայոցն հա-
մեմատեալ սաստեմք ասելով, տես զկրսերն քան զքեզ
զիարդ զգաստ և կայտառ և ամենեցունց երջանիկ։ Եւ
դու նոյնպէս յայսմ կենդանւոյ առեալ օրինակ մեծ աշ-
խատասէր լինել, և աքանչացիս ընդ իմաստութիւն տեառն
քո ոչ վասն երկնից և արեգական, այլ որ և զմրջինն
արար. որ թէ և փոքրիկ իցէ, այլ տայ նշանակ ՚ի մեծ
իմաստութեանն և բազում իրօք ուսուցանէ զքեզ։ Ո-
մն թէ ոչպէս իմացուն է նա, և աքանչացիր թէ որպի-
սի խուն մարմնոյ այնպիսի զօրութիւն ետ ՚ի և յօժա-
րութիւն անխափանելի վաստակոյ. և դու որ կարողդ
ես, լեր այնպիսի աշխատասէր։

Եւ մեղու իրատէ զքեզ վաստակասէր իմաստա-
սէր և գեղեցկագործ լինել. և նոյն իսկ ոչ եթէ վասն
իւր, այլ մեր աղագաւ աշխատի և տառապի զօրհնա-
պազ. որպէս պարտ իսկ է ամենայն քրիստոնէի ոչ միայն
վասն անձին իւրոյ հոգալ, այլ և ընկերին։ Եւ որպէս
նա յամենայն բուրաստանս ընթանալով հաւաքէ ծա-
ղիկս և այլում կազմէ սեղան, այսպէս արասցես և դու,
ով մարդ. եթէ ինչս ժողովես՝ այլոց բաշխեա. եթէ
բան վարդապետութեան ունիցիս՝ մի ՚ի խորս թագու-
ցաներ, այլ տարածեա առաջի ինդրողաց. և եթէ այլ
ինչ գոյս ստացուածոց ունիցիս, լեր պատուասէր առ այ-
նոսիկ որ ինդրեն առնուլ զվաստակս քո։ Եւ տեսա-
նես զի վասն այսորիկ մանաւանդ քան զայլ մեծամեծ
Թռչունս պատուական է մեղու, ոչ զի վաստակէ, այլ
զի այլոց վաստակէ։

Ա՛յս և սարդ վաստակէ տառապանօք, և Հաստատէ յորմն և ի գերանս հինուածս անօսրագոյնս որ զանցանէ զխնաստութեամբ ամենայն կանանց, այլ անպէտ է վաստակն և կենդանին անպատիւ. այնպիսիքն են որ վասն անձանց իւրեանց վաստակեն և տառապին։ Ա՛յսմանէր իշոյ և եզին տիրասիրութեան. ընկալ և զերանութիւն գազանին, որ ասէ՝ լեր տիրասէր իբրև զշուն. նմանեա Հաւուց որ կան առանց Հոգոց։ Խազուստ ինչ է ուսանել՝ի սովորութենէ անասնոյ՝ի պտղաբերութի ուղղութեան. ի սոցանէ և Պօղ խրատէ զմեզ և ասէ. "Ա՛ղերուք խորագէտք իբրև զօձս և միամիտք իբրև զաղաւնիս ,,. և կանխաւ ասէ. "Հայեցարուք՝ի Թռչունս երկնից զի ոչ վարեն և ոչ հնձեն, և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա ,,։ Ա՛յս մարգարէն նախատեալ զեբրայեցիսն այսպէս ասէր. "Գանեաւ եզն զտտացիչ իւր և Հշ զնուր տեառն իւրոյ, և Խորհիլ զիս ոչ ծանեաւ և ժողովուրդ իմ զիս՝ի միտ ոչ առ ,,. և դարձեալ այլ մարգարէ ասէ. "Ցատրակ և ծիծառն և Հերնճ զուկ վայրիք գիտացին զժամանակ իւրեանց. բայց ժողովուրդ իմ ոչ ծանեաւ զիրաւունս տեառն՝այ իւրոյ ,,։

Ա՛րդ յայսցանէ և յայսպիսի անասնոյ լսեն և ուսիր ուղղել զքեզ՝ի շահիլս առաքինութեան, և՝ի գազանոյ որ անբնդել են և Հակառակ՝ ուսիր փախչել՝ի չարեաց։ Որպէս Հիւրասէր է մեղու, այսպէս մահաբեր և անբնդել իժ և քարբ.՝ի բաց զարձիր՝ի չարեաց, զի մի լուիցես և առցես՝ի շրթանց նոցա թոյնս իժից։ Ա՛նհամաչ է շունն, առեա զնորա չարութիւնն. նենգաւոր է աղուէս, մի ցանկար, ՝ի բաց փախիր՝ի նենգութենէ. և որպէս մեղու որ՝ի վերայ ծաղկանց թռչի, ոչ եթէ զամենայն ժողովէ, այլ զպիտանացուն ժողովէ և զայն թողու, նոյնպէս և դու արասցես։ Ա՛րթ յաղգս գազանաց և զընտիրն առ խրատ՝ի նոցանէ. և զոր նոքա բնութեամբ ունին զգայութիւնս, զայս դու կամօք քոյովք ուղղեա. զի և ՚ած իսկ պատուիրանաւ և զօրութեամբ զբնականն նոցա զգայութի՝ի կամաց քոց ուղղել ընդհեաց, որով և պսակիցիս՝ի նմանէ։ Ա՛յլք ոչ բնութեամբ կամօք ուղղէն զոր ուղղենն, այլ բնութի միայն. զոր և ասեմ իսկ. մեղու գործէ մեղր, ոչ բանիւ ուսեալ զայս կամօք, այլ՝ի բնութենէ խրատեալ. իսկ

եթէ ոչ էր ի քնութենէ, և զգործս նոցա յաղգս նոցա ոչ էր առեալ ժառանգութիւն, պարտ էր ոմանց ի նոցանէ անգէտ լինել արուեստին. իսկ այժմ յորժամ և յորմէ հետէ եղև աշխարհ մինչև ցայսօր ժամանակի, ոչ ոք ետես զմեղս խափանեալ ի վաստակելոյ մեղս։ Կ՚ասպիսի են քնականքն առ հասարակ ամենայն անասնոց ազգաց. իսկ որ ի կամաց ուսանի, ոչ է առ հասարակ, այլ աշխատութիւն խնդրէ և ապա ուղղի։

Կ՚ըդ և դու զբարին առ ի նոցանէ և զգեցիր, եթէ Թագաւոր ես անասնոց. քանզի Թագաւորք զամենայն ինչ որ գեղեցիկ է և պատուական, եթէ ոսկի, եթէ արծաթ, եթէ ականս պատուականս, եթէ հանդերձս ոսկեհուռն և բազմակատար, զայնս ի վայելուչն ստանան. յամենայնի սքանչացիր դու ընդ տէրն քո։ Յաբարածոց աստի որ ի վեր անցանէ քան զտեսանելիս, և զբանս ոչ կարես գտանել, վասն այսորիկ փառաւորեա զարարիչն որ ի վեր անցանէ քան զտեսիլ իմաստութեան եղելոցն։ Մի՛ ասասցես Թէ ընդէր այս կամ վասն էր այն. զի իւրաքանչիւրքն ի պէտս են և ընդունական, Թէպէտ և զբանս նոցա ոչ Հանաչեմք մեք։ Որպէս ի բժշկանոցն երթիցես և տեսանիցես անդ զբազմակատար նիւթս արուեստին, սքանչանաս ընդ զանազան կերպս երանգոցն, այլ զպէտս նոցա ոչ Հանաչես Թէ ուր դեղ զոր ցաւ առողջացուցանէ, նոյնպէս և վասն արարածոց արասցես. յորժամ տեսանիցես զանբանս, զբոյս ամենայն և զտունկս և զայլ ինչ յեղելոցս որոց զպէտս ոչ Հանաչես, սքանչացիր ընդ զանազանութիւն նոցա և զարմացիր ընդ ամենեցուն ընդ ամենիմաստ արարիչն Ա՛Ծ, զի ոչ զամենայն յայտնեաց քեզ և ոչ եթող անյայտ զբնաւն, զի մի՛ ասասցես առանց խնամոյ լինել այնմ. ի միտ առ, ոչ ետ տեղի Հանաչել զամենայն քեզ, զի ի մեծամեծ և ի բազում խնամոտութէ յամբարտաւանութէի գայցես դու։ Կ՚սու իրօք զմարդն առաջին չարն սատանայ գայթակղեցոյց, զի յառաւել խնամոտութիւնն իւր յուսացաւ։ Վ՚ասն որոյ ոմն խնամոտն ասէ. “Վ՚ան զքեզ զօրագոյն մի՛ խնդրեր, և զիմաստնագոյնս քան զքեզ մի՛ քննեսցես,,. զյայտնիսն քեզ զայն խնամացիս։ Ո՛այս ասելով զտգէտն մխիթարէ և զանխնամոտն որ ոչ զամենայն գիտէ. այս իսկ է, ասէ, որ հրա-

մայեցաւ գիտել քեզ, յայժ ՚ի վեր անցանէ քան զքոյին զօրութիւնդ. նա և զայս ոչ յանձնէ քումմէ գտեր, այլ յայ ուսար։ Հաւական է այժմ որ տուաւ քեզ Հոխութիւն, և մի առաւել ինչ խնդրեր. այլ վասն որոյ առեր՝ գոհացիր, և զոր ոչ առեր՝ ընդ այնր մի տրտմիր. զոր տեսեր՝ ընդ այնր փառաւորեա, և մի գայթակղեցիս վասն որոյ ոչ տեսեր. ամենայնիւ զերկաքանչիւրսն առ միմեանս բարի արար Ած, և որով յայտնեաց և որով թագոյց՝ զքոյին փրկութիւնն խնամարկեաց։ Եւ որպէս ասացի իսկ, մի յեղանակ Ածածանօթութեան որ վասն արարածոյ՝ զբաղում աւուրս պիտոյանայ ծախել, զի միայն զմարդոյն ստուգութիւնն և զկարգաւորութիւնն խնայսցուք. ստուգութիւն ասեմք զայն՝ որ կատողանամք ասել. զի և որ ստոյգն է՝ թէպէտ և բազում քան զայս ասացեալ էաք բանս՝ ոչ զամենայն ասէաք, զի են այլ բազմապատիկ քան զայս անձառելիք զոր նա ինքն գիտէ որ արարն Ած, և ոչ մեք։ Եւ զի մեք զամենայն ստուգութիւն ստեղծման մարդոյն դիցուք, և զիւրաքանչիւր անդամոյ զյօրինուածս խնամատութեամբ գտցուք, զջլաց և զերակաց սահմանս և զբաժինս, զընդիրսն, զստեղծուածն և զայլն ամենայն, և ոչ զտարի մի մեզ բոլորովին բաւական է ՚ի պատմութիւնս յայս։ Եւ սա որում զբանս այսոցիկ աստէն արձակեսցուք, և զվաստակիրութիւնս մեր զգիտութիւն սիրոյ ձերոյ հնորհել յաստացելոցն, և զայսն յարարածոց ՚ի բաժինսն Աողցուք, երթիցուք յայլ պատճառս դարձուցեալ ըզբանս. և և այս ընդունելի յԱյ խնամոյն։ Եւ զինչ իցէ երկրորդ պատճառն։

Ի սկզբանէ ստեղծ Ած զմարդն և եդ ՚ի նմա բնական օրէնս։ Եւ զինչ իցէ բնական օրէնքն։ Յսկինքն զբնութիւնն տպաւորեալ իբր յարձանի ինքնագիտ իմաստութեան բարեաց. զի այնուհետև ոչ էին պէտք մեզ ժտել ուսանել եթէ չար է բնութիւն, և բարի իմաստութիւն զգաստութեան։ Եւ զի ուսանիցիս թէ անդուստ յառաջնմէ այս եղաւ ՚ի մեզ, յետոյ յորժամ օրէնսդիրն Ած տայր օրէնս, ասէ "Ի սպանաներ", ոչ զայն յաւել եթէ չար է սպանանելն, այլ մեկին լոկ բանիւ ասէ՝ մի սպանաներ. անուանեաց միայն զմեղսն և ոչ ուսոյց։ Ընդէր արդեօք ոչ ասաց եթէ չար է սպա-

նանէն. քանզի յառաջագոյն այսու գիտութեամբ խրատեալ զնուիթիւնս մեր, և որպէս գիտողաց այսպէս ասէ: Ոսկ յորժամ վասն այլումի պատուիրանի ասէր, որ ոչ էր քնաբար գիտել մեզ, զայն ոչ անուանէ միայն, այլ և զպատճառն յաւելու: Որպէս եդեալ ասէ. "Որ գործեսցես յաւուր շաբաթու ,,. և զպատճառ դատարկութեան ի վերայ բերէ ասելով. "Ցի հանգեաւ ած յաւուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց զոր սկսաւ առնել ,,. այս է պատիւ մեծի աւուրն այնորիկ: Ոսկ վասն սպանութեանն ոչ այսպէս. քանզի պատուիրանս այս ոչ յառաջնոցն էր թագուցեալ և ոչ ի քնական իմաստից մարդկան, այլ առ ժամանակ մի զբնականն կորուսեալ՝ ասպա զկնի այնորիկ չարն օրինօքն քակեցաւ. զի կարի կարևորքն են պահպանք կենաց մերոց, միապէս եդեալ են ի մեզ, և են այսոքիկ. "Մի սպանանէր, մի շնար, մի գողանար ,,: Ոչ ասն այսոցիկ ոչ երբեք արտաքուստ օրինօք կամ վարդապետութեամբ ի վերայ յաւել զպատճառն, այլ բաւական եղև յանուանէ առնելն միայն:

Ոչ այսու միայն ցուցանել փորձիմ, այլ և այլուստ թէ զիարդ ինքնիմաց էր մարդն յառաքինութեան իմացուածս: Որեղաւ Ադամ զառաջին յանցանսն և թագեաւ վաղվաղակի. արդ եթէ ոչ գիտէր եթէ չար գործեաց, ընդէր ապա թագչէր: Ոչ գայր գիր, ոչ օրէնս և ոչ էր Որսկս. ապա ուստի իմացաւ զմեղսն և թագեաւ. և ոչ թագեաւ միայն, այլ և ի գատաստանին յայլումի վերայ դնէր զմեղսն և ասէր. "Կինա զոր ետուր ընդ իս, սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ ,,: Զոնպէս և կինն յայլումի վերայ դնէր զպարտաւորութիւնն. "Որձն խաբեաց ,, ասէ: Ցի դու տես զնոյ իմաստութիւն. զի յասելն. Ադամայ "Ցուայ զձայն քո գնալոյ և երկեայ, քանզի մերկ էի և թագեայ ,, ոչ վաղվաղակի յանդիմանեաց զերեսեաւն, և ոչ ասայ եթէ ընդէր կերար ի պաղղն. այլ զիարդ. "Որ պատմեաց քեզ թէ մերկ ես. բայց եթէ ի պաղղն յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել, կերար արդեօք ի նմանէ ,,. ոչ լռեաց և ոչ յայտնապէս զնա յանդիմանեաց: Ոչ լռեաց, զի կոչէր զնա ի խոստովանութիւն մեղացն. և ոչ դէմ յանդիման յայտնեաց, զի մի ամե-

նեւին լինելի անապատ գօս, ըստ որում և այժմ ՚ի խոստովանութիւն լինելիք մեք ապաշխարել զյանցանս։ Ա՝ան այսօրիկ ոչ ասաց յայտնապէս զպատճառն ուստի մեր-կացաւն, այլ ՚ի հարցմանն կարգի մատուցանել զբանն՝ տեղի տալով նմա գալ ՚ի խոստովանութիւն։

Ա՚յսպէս է տեսանել կանխաւ առ Այբինն և առ Հաբէլ. նա սկսաւ տալ այ յիւրոց վաստակոյն։ Այս ես ոչ եթէ ՚ի մեղաց միայն, այլ և յառաքինութենէ ցուցանեմ, զի երկոցունցն տէր և արուեստաւոր էր մարդն։ Օ՚ի գիտակ էր մեղացն Ա՚դամ, եւյոյ. նոյն և զառաքինութիւն գիտէր զի բարի էր, յայտնեաց զայս Ա՚բէլ կանխաւ. յումեքէ ոչ էր ուսեալ և ոչ ՚ի նախնական օրինաց լուեալ, այլ յիւրմէ անձնէ և յիւրմէ իմաստութենէ մտաց ուսեալ մատուցանէր զպատարագն զայն։ Ա՝ան այսօրիկ ոչ ՚ի խոնարհ բերիցեմ զբանս, այլ ՚ի նախնական մարդն և որ ՚ի նմանէ՝ մերձ կացուցանեմ, յայնժամ որ ոչ գոյր գիր և ոչ օրէնք երբէք, ոչ մարգարէք և ոչ դատաւորք, այլ էր Ա՚դամ միայն որդւովք իւրովք. և զի ուսանիցես թէ բնութեամբ ըստ առաջադրութեան էր մարդոյն բարեացն և չարեաց գիտութիւն։ Ա՚նոի ուսանէր Ա՚բէլ թէ բարիոք է մատուցանել պատարագ, և բարիոք է յամենայն իրս պատուել զԱծ և յամենայնի գոհանալ զնմանէ։

Այս զինչ արդեօք, Այբին ոչ մատոյց պատարագ։ Ա՚յո մատոյց և նա, բայց ոչ նման եղբօրն. և անդ կանխաւ երևեցաւ ըստ կամն վարել զգիտութիւնն, յորժամ վասն պատուոյ եղբօրն նախանձեցաւ և ՚ի սպանութիւն մտաբերեաց և Թագուցանէր զնենգաւոր դատաւճիռք խորհուրդն. և զինչ ասէր. “Այկ, ասէ, ելցուք ՚ի դաշտ զբօսնուլ,,։ Ա՚յս բանի տեսակ զսիրոյ գԹուԹեան ունի կերպարան, և եղբայրասպանութեան խորհուրդ։ Ա՚րդ եթէ ոչ գիտէր եթէ չար էր խորհուրդն, ապա ընդէ՞ր ծածկէր զնա. և զինի սպանանելոյն յորժամ եհարց ցնա Ած “Ո՞ւր է Ա՚բէլ եղբայր քո,,, նա զինչ ասէ. “Ո՛չ գիտեմ, միթէ պահապանն եմ եղբօրն իմոյ,,։ Ա՝ան էր արդեօք ուրանայ. բարիոք Թերևս է ասել Թէ յոյժ գիտակ էր վասն նորա։ Ա՚յլ որպէս հայրն նորա Թագաւոր, նոյնպէս և սա ուրանայ. և դարձեալ զինի յանդիմանութեանն ասէր. “Ած

են յանցանք իմ քան զներել Թողութեան ,,. բայց զա-
պաշաւանան ոչ ընկալաւ :

Այդ այսուհետև վասն այսր քննեսցուք. որպէս ըստ
այլ արարածոցս արարաք, ոչ 'ի գլուխ միայն, այլ և 'ի
խորհրդոյ ղջան զոր առ նոսա սկսաք, զնոյն և վասն կա-
նայց առցուք այժմ: Ո՞րինչ է զոր ասեմն. եթէ ոչ էք
ինքնուսումն և 'ի բնական օրէնս կապեալ կայր, ուստի՞
արդ՝ ասա ինձ, վասն Հարսանեաց, վասն սպանութեան,
վասն կտակարանաց, վասն ոչ ապահելոյ զմիմեանս, և
այլ բազում վասն բիւր ինչ իրաց օրէնս գրեցին ոք ոչ
յայոց օրինագրաց: Նա և յառաջնմէ նախ քան զօրէնս-
դիրն ուստի՞ ուսան, եթէ ոչ 'ի բնական կամաց իմաս-
տութեան: Այլ զայս ոչ ոք կարէ ասել եթէ Ա՛ովսէ-
սի էին, կամ զբանս մարգարէիցն լուեալ էին. վիճդ
այն որ հեթանոսք էին և տակաւին չէր յայտնեալ օ-
րէնքն զոր եդ Աճ մարդոյն յառաջնումն 'ի ստեղծա-
նէն զնա, իբր թէ յայնմանէ օրէնս եդին և արուեստ
գտին և զայլ իրս զամենայն, զոր և Պաւղոս ասէր:
Յորժամ հեթանոսքն պատասխանի առնէին և ա-
սէին թէ ոչպէս դատի Աճ զմարդիկ որ քան զԱ՛ով-
սէս յառաջ էին. զի նոցա ոչ օրէնսդիր էր առաքեալ
և ոչ օրէնս տուեալ, ոչ մարգարէս առաքեալ, և զիա՞րդ
զնոսա իբրև զպատժապարտս դատեսցէ. առ որս խոր-
հէր Պաւղոս ցուցանել եթէ ինքնուսումն օրէնս ունէին,
և զլինելն բարիոք գիտէին. լուր զինչ ասէ. "Յորժամ
հեթանոսք որ զօրէնս ոչ ունէին, բնութեամբ զօրի-
նացն գործեցին. նոքա որ զօրէնս ոչ ունէին, անձանց
իւրեանց իսկ են օրէնք, որք ցուցանեն զգործս օրինացն
գրեալ 'ի սրտի իւրեանց վկայութեամբ մնաց իւրեանց,
և յանդիմանել զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց, կամ
թէ պատասխանի իսկ տալ յաւուրն յորում դատի Աճ
զգաղտնիս մարդկան ըստ աւետարանիս իմոյ 'ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի,,: Այլ դարձեալ ասէ. "Որք միան-
գամ արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օրինացն և
կորնչին. և որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն և դա-
տեսցին,,: Ո՞րինչ իցէ արտաքոյ օրինացն կորնչելն. ոչ
եթէ զի օրինացն անգոսնիչքն էին, այլ քնական իմաս-
տանն և խորհրդոյ: Իսկ եթէ ոչ ունէին օրէնս ինքնա-
գիտ իմացուածս, ապա մեղս ցելոյն ոչ էր պարտ կորչն-

չել, և ոչ ասէր թէ արտաքոյ օրինացն մեղանս։ Այլ յորժամ առանց օրինացն ասէ, ոչ զայս ասէ եթէ ոչ ունէին օրէնս, այլ զի զրով օրէնս ոչ ունէին, քանզի զբնական օրէնս ունէին։ Եւ դարձեալ ասէ. "Փառք և պատիւ ամենայնի որ գործէ զբարիս, նախ հրեի և ապա հեթանոսի ,,։

Այս իսկ ասաց վասն առաջին ժամանակին նախ քան զգալուստն Քրիստոսի. և հեթանոսս ոչ զկռապարիշտսն կոչէ, այլ որ երկրպագուք էին միայնոյ Աստուծոյ և ոչ էին կապեալ ընդ հրէական օրինացն խստանօք, զշաբաթն ասեմ և զթլփատութիւնն և զբաղարջակերութիւնն և զայլ կարգսն զամենայն։ Եւ դարձեալ վասն նոցին ասէ. "Արտմտութիւն և բարկութիւն, նեղութիւն և անձկութիւն՝ ի վերայ ամենայնի որ գործէ զչար, նախ հրէին և ապա հեթանոսին ,,։ Դարձեալ և աստ հեթանոս զայնոսիկ կոչէ, որ զատեալ մեհենեալ էին՝ ի հրէականացն. իսկ որք ոչ էին լուեալ զօրէնսն և ոչ ընդ Հրեայսն չորեալ, զիարդ նոքա ընդ պատժօք բարկութեան և նեղութեանն անկանիցին՝ ի գործելն զչարիս։ Այսուհանդերձ զի գիտութիւն ունէր՝ ի ներքուստ հնչեցեալ՝ ի նմա որ խրատէր և ուսուցանէր զամենայն։

Եւ ուստի՞, ասեն, այս յայտ իցէ. "Այսմանէ զի յորժամ այլք մեղանչեն, դու տանջես...։ Եթէ զսպանութիւնն ոչ կարծիցես չար, յորժամ զմարդասպանն ըմբռնես՝ մի տանջեր և մի սպանաներ. նոյնպէս և զընութիւնն եթէ ոչ կարծիցես չար, յորժամ զընացողն տեսանիցես՝ մի տանջիցես։ Իսկ եթէ այլոց մեղուցելոց օրէնս զնես և տանջել հրամայես, ապա յորժամ դու մեղանչես՝ զո՞ր պատասխանի ունիցիս, ասիցե՞ս անգէտ էի գաղտնեացն. ընայեր և դու որպէս և նայն։ Այսուհանդերձ, ասա ինձ, զնա տանջես և զքեզ թողութեան արժանաւորես. եթէ չնութիւն չէր չար, ոչ զայլս տանջել պարտ էր։ Իսկ դու զո՞ր պատասխանի ունիցիս փախչել՝ ի տանջանաց, և որք՝ ի նմա մեղս իցեն՝ նոցա ոչ տաս այդպիսի դատս, և զի զատաւոր ամենեցուն ՅԱծ է։ Այս ամենայն Պաւղոս իսկ ասէ. "Խորհիցե՞ս զայս, ով մարդ, որ դատապարտես զայնոսիկ որ զայսպիսիսն գործեն և դու զնոյն գործես, միթէ դու ապրելո՞ւ իցես՝ ի պատաստանաց անտի այ ,,։ Այո, ասէ, այսպէս, չէ և

չէ իսկ. այլ այսու վճռաւ զոր՝ի վերայ այլում բերեր, նովքին յայնժամ դատի զքեզ ՝ած... քանզի հատուցանէ, ասէ, ըստ իւրաքանչիւր գործս իւր։ Ա՝ան որոյ նախ քան զընական օրէնս եդեալ՝ի մեզ, և ապա գրով եւս, զի անպարտ գործեսցէ զմեղուցեալսն որք զղջանան, և զուղիղսն պսակեսցէ հանդերձ ամենայն փուլթով։ Այս մեք զիաւրդ կարիցեմք կալ յահագին դատաստանին, գիտելով զի և ոչ՝ի մի յապաշխարութեան վայելեմք, և մեզէն տնօրինեմք զայսոսիկ որք զկնի բնական և գրաւորական օրինացն և աւետարանական վարդապետութեանս, վասն մերոյ փրկութեան այսչափ պղերգանամք։

Ա՝սրհիմ զարձեալ զկանխաւ եդեալ պատուիրանն վասն երդման յայտնել ձեզ, և ամաչեմ իսկ վասն ձեր։ Ո՝չ ոչ երբ պարտ՝ի տուէ և՝ի գիշերի զայս և վասն սորին ասել ձեզ. նա և երկնչիմ իսկ մի գուցէ որ այսչափ աւուրս բազում զկնի ձեր հետևեալ, այժմ ձանձրանայեմ զբազում՝ի ձէնջ դանդաղեալս վասն այսր գործոյ՝ի մէնջ այսչափ հեշտեաւ հանապազ և ժտելով յիշել։ Ա՝ւստի ոչ ամաչեմ միայն, այլ և երկնչիմ իսկ. զի ստէպ վարդապետութիւն պիտոյ է որոյ՝ի միտ առնուն և փրկութիւն գործէ, իսկ ծուլացելոցն ՝ծաս է և վիշտ...։ Ո՝չ այսու և զԱ՝բրեայն նախատէր ՝ած. ասէ. "Ա՝ռաքեցի առ ձեզ զմարգարէսն իմ առաւօտել, և ոչ այսպէս լուարուք ինձ,,։ Ա՝ք իսկ՝ի բազում գըթոյ զայս առնեմք, բայց երկնչիմ թէ մի երբէք յահագին և յահեղական յօրն յայն հակառակ ձեզ կայցէ խորհրդածութիւնս այս և խրատ. զի յորժամ ուղղութիւն այսմ իրի դիւրին է, և որ ուսուցանէն՝ ստէպ ուսուցանէ և ոչ պակասի, զոր ունիցիք պատասխանի, կամ ոմ զձեզ ազատեսցէ՝ի բանից տանջանացն...։

Ա՝րդ մի այսուհետև առանց գործոյ երևեսցուք, այլ հանդերձ բազում ստուգութեամբ՝ի գործ արկցուք զպատուիրանս, զի բազում հաւաստեաք զսա յայնմ աւուր հատուսցուք։ Ա՝յս և զայլս ևս պարտիք յորդորել՝ի նոյն. իսկ եթէ ոչ առնիցէք, լսելոյ կէք զբանն զայն որ զքանքարին Թագոյց, որ քաւ և մի լիցի. այլ արժանի եղիջիք լսել զձայնն զայն զոր բարեգործացն ասաց՝ Ա՝րիւտոս, եթէ մերոյ ծառայակցացն զնոյն փոյթ ցուցանիք։

ցեմք. "Լինիւ ծառայ և բարի և հաւատարիմ,, և որ ընկի սորա...:

Ոչամ է այսուհետև յաղօթս աւարտել զբանս: Այլ այժմ համբրէն վասն ամենեցուն ասեմք ցած. որպէս ոչ կամիս զմահ մեղաւորի, այլ զդարձ նորին, արժանի արա զմեզ զպատուիրանս զայս հանդերձ ամենայն պատուիրանօք կատարել, և այնպէս կալ առաջի ահաւոր բեմին Քրիստոսի քո, ընկալեալ բաղումք համարձակութիւն և հանդիպիլ քոյին արքայութեանդ՝ի փառս քո. վասն զի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՃԱՌ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Դարձեալ գոհութիւն ՚ի վասն աղաւեղւոյ՚ի խռովութեանցն, և յիշումն զոր սաստկութեամբ քարշէին և տանջէին. և դարձեալ վասն մարմնոյն հրաշագործութեան; և բնական օրինօք գիտութիւն գործոց. և սերտիւ ուղղել զերդումն:

Ի նախկի բանս եկեալ և՚ի սոյն առաջաբանութիւնս զոր յերէկն և յեռանդն սկսաք, և այսօր զնոյն սկսանիմք և ասեմք՝ օրհնեալ ես ՚ցած, եթէ որպիսի տեսաք զանցեալ զօր չորեքշաբաթուն, և կամ որպիսի այժմ զՀասեալ զօրս տեսանեմք, զևարդ յայնժամ միգապատեալ մրրիկք էին, իսկ այսօր որպիսի հանդարտութիւն: Վասն՚ի սոյն օր չորեքշաբաթուն ահագին վշիւռ դատաստանին այժմ եղև՚ի քաղաքս մեր և սաստանեցոյց զսիրտս ամենեցունց. և որ ոչ էր ըստ տունջեան լինել, եղև գիշեր յայնժամ. ոչ եթէ նշոյլք արեգականն շինջաւ, այլ տրտմութիւն և դանդաղումն և երկիւղ կալաւ զաչս մեր: Այս մեք այնմ կերպարանօք առաւելապես՚ի պաղաքերութիւն ածեմք զփափագումն ձեր. փոքր ինչ յայնմ չարեաց եկելոց այսօր խորհիմ պատմել: Օ՛ի և մեզ և ամենայն մարդկան բարի տեսանեմք ըզպատմութիւնս զայս. քանզի որք՚ի նաւակոծութենէ ապրին, պարտին յիշել զաչեացն կոծումն, զմրրիկն և զխռովութիւն հողմոյն յորժամ հասանեն՚ի նաւա-

հանգիստան. և որք ի հիւանդութիւնս անկանին, քննեն զնոքին հիւանդութեանն զտապնասն, զերմութիւնն զոր երկին առ սակաւ մի ի մահ մերձեցան, պատմեն այլոց։ Օ ի յորժամ անցանեն վտանգքն, հեշտալի է պատմութիւն վտանգիցն. և հոգւոյն ոչ երբեք իցէ երկիւղ, այլ բազմապատիկ պտղաբերէ զուրախութիւն. քանզի յիշատակ անցեալ չարեացն միշտ զհասեալ բարիսն ըստուգապէս տեսանել առնէ։

Ա՛րդ առաւելութիւն քաղաքիս յայն յերկեղէ և ի սպառնալեաց յանապատս և ի դժուարին վայրս և ի ծածուկ տեղիս բնակելին, զի ահն յամենայն կողմանց հալածէր զնոսա. և դատարկացան տունք ի կանանց և փողոցք քաղաքիս յարանց. Թէ ուրեք երկուս կամ երիս էր տեսանել ի գնացս առ միմեանս ընդ մէջ փողոցացս, և զայսոսիկ որպէս շնչաւոր մեռեալս այնպէս տեսանէաք։ Վնայաք առ դատաւորս ի տեղի դատաստանին տեսանել զլինչ լինելոյն կատարածն, և տեսանէաք անդ զնշխարս քաղաքիս ժողովեալ. զայն մանաւանդ զարմացեալ լինէաք, զի բազմութիւնքն որ ի վերայ դրանացն՝ որպէս Թէ չէր որ՝ այնպէս խորին լռութիւն էր, ամենեցուն ընդ միմեանս հայելով, և ոչ իշխել ինչ խօսել առ որ մերձն էր, և ոչ լսել ինչ ի նմանէ համարձակեր...։ Ա՛ւ հասարակ ամենեցուն յերկինս հայելով տարածանէաք լռութեամբ զձեռս մեր, մինչդեռ վերջին պահուն աղաչելով զնոճ մերձ կալ առ դատապարտեալսն և կակղացուցանել զսիրտս դատապարտողացն և հանդարտ առնել զվճիռ մահուն։ Ա՛ւ որպէս որք ի յամաքէ զնաւակոծեալսն տեսանիցեն, և մեք կալ և ձեռն հասուցանել և ուղղել զդժբաղդութիւն ոչ կարասցեն վասն ալեացն խռովութեան՝ արտաքոյ առ եզր ծովուն զձեռն տարածանեն և զնոճ աղաչեն հասանել ի փրկութիւն ընկղմելոցն, այսպէս և աստ ամենեքեան լռեալք՝ ընդ միտս աղաչէին զնոճ արժանի լինել որոյ ի դատաստանս էին, որպէս յալիս ծովուն ձեռն տալ և ոչ Թողուլ ընկղմել նաւին. և այս առաջի դրան։

Ա՛սկ յորժամ ի ներքսագոյն սրահին մտաք, տեսաք անդ կանխաւ ահեղակերպ քան զայս զինուորք սպառազինօք և բրօք, նոցա որք ի ներքս դատապարտեալք էին՝ լսել տային։ Ա՛նդղի ամենեքեան անօրինեալք էին և

կանայք և մարք և դստերք որք կանգուն կային առ դուրս դատաւորին առ՝ի տեսանել այր հասցէ մահն կամ զնա՛ հանցեն՝ի Հանապարհս մահու, և ոչ երբեք՝ի տեսու- Թիւն Թողին զոք, որք սաստկութեամբ վառեալք էին զինուորքն խռովութիւնս առնէին և աղաղակ և բարբառս աղմկի և հեռագոյն երկեցուցանէին զամենեսեան, որպէս զի նախ քան զսուգն երկիւղն էր՝ի միտս նոցա։

Ա.ՀԼ քան զամենեսին ումեքն մայրն և քոյր յորոց՝ի ներքս դատապարտեալք էին՝ ողորմագինք էին, անկեալք առ դրանն Հոլանի ընդ գեաւինն քարշէին, և առ Հասարակ որոց անդն ամենեցուն տեսիլ էին՝ ծածկէին զերեսս իւրեանց, և այնչափ ամաչեցեալք՝ մինչ զի Թոյլ տալ Հարկի վշտացն. ոչ աղաչին նոցա մերձ, ոչ դրացի, ոչ սիրելի, ոչ այլ ոք առ պատրաստ, այլ նոքա միայն գծուծ Հանդերձիւք՝ի մէջ այնչափ սպառնացողաց զինուորաց ընդ գեաւին քարշէին առ դուրսն արտաքոյ, և քան որք՝ի ներքս դատապարտքն էին՝ և ողորմագին չարչարէին, որպէս զի լուր լինէին ամբոխն ամենայն ըղձայն ապստակելոյն, զողջս Հարուածոցն և զահեղ սպառնալիս դատողացն, և իւրաքանչիւր ոք զարհուրեալ կայր, և ս չարաչար վշտաց Համբերէին կանայքն այնոքիկ. խաժատէին ծամելով զատինս իւրեանց և զբազուկս, և Հոսումն արեանցն ներկէր զայլ առողջ անդամս նոցա. Հնգէին զՀերս գլխոյ իւրեանց, և զանբոյսն՝ի Հերոց Հարկանէին ընդ պարիսպ արիւնագութ գաւԹին։

Իսկ որք տեսողքն էին պարտաւորացն, յայլոց վկայութիւնն վատնգէին. ասեմ իսկ, ոմանք՝ի չապտակս Հարուածոց էին, և որք անպարտքն էին՝ յողջս գառնութեան Հայելով յերկինս զաչս աղաչէին տալ նոցա զօրութիւն և Համբերութիւն, զի ոչ կարէին գալ նոցա՝ի փրկութիւն յայլոցն սաստկութենէ որ մատնելոց էին. և այսոքիկ որպէս՝ի նաւակոծութեան նմանեցան։ Որպէս նոքա տեսանէն զգաչն և զբարձրանալ ալեացն, ՚ի բացուստ դիզանալ և առ փոքր փոքր աՀել, և կամիցին ընկրկմել զնաւն, ուստի նախ քան զգալ ալեացն մերձ՝ի նաւն՝ մեռանէին յերկիւղէն, այսպէս և նոքա յորժամ ձայնս և աղաղակս իմանային գալով երկնչէին, գուցէ երբեք՝ի տանջանս անուանեցին զնոսա, կամ վկայեալ նեղեսցեն. և ասեմ իսկ վասն ոմանց, զի նոքա պատ-

բաստեալ էին յաձախապէս առաջի աչաց տեսանելոյ զնահն։

Այլ անդ էր տեսանել ՚ի ներքուստ տանջանք և արտաքուստ տանջանք. զնոսա բռնաւորք վերակացուք ժողովելոցն, և զոսա տանջէր բռնութիւն բնութեանն. և էր ՚ի ներքուստ ողբք և արտաքոյ ողբք. ՚ի ներքոյ պարտաւորացն, և արտաքոյ որ զնոսացն տեսանէին և լային։ Ա՛նաւանդ ոչ եՀԷ այսոքիկ միայն, այլ և որ չարչարիչքն էին ողբային ՚ի միտս իւրեանց, և ևս զԺուռերին քան զամենեսեան տանջէին, այսպէս դառն քրՀմինջել յայնժամ սպասաւորացն։

Իսկ ես նստեալ կայի և տեսանէի զամենայն. տեսանէի զկանայս և զկուսանս որ յամրածածուկ առագաստի պահէին, այժմ Հասարակաց եղեն տեսիլ. և որք յանկողինս կակուղս փափկանային, զգեստին և զմխիթր այնը փոխանակ ունէին. և որք այնչափ վայելէին ՚ի ծաղոյից և յաղաւնաց և ՚ի ներքինեաց և յայլ ամենայն երևութից, այժմ յայնմ ամենայնէ անասպատ մնացեալ ՚ի քարշ գային առ ոտս ամենեցուն և զիւրաքանչիւր ոք աղաչէին... յայնժամ ասէի ես զբանն Սողոմոնի. "Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է,,։ Տեսի իսկ յայնժամ և զմիւս[1] պատգամն այնու ՚ի գլուխ ելեալ, այս է. "Ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. չորացաւ խոտն և անկաւ ծաղիկ նորա,,։ Վանդն և մեծատունքն էին յայնժամ և մեծագոյնք և երևելի ամբարտաւանութեամբք և սիրելեաց առաջնորդք և յամենայն ՚ի կենցաղական իրս յառաջացեալք. իսկ մեղք և անօրէնութիւնք որ եղև, զամենայն զմոռատակից լինելութիւնս վերացոյց։ Այլ եղեն այժմ որպէս մայր Ճնճղկաց որ զձագս իւրեանց յափշտակեն, նորա եկեալ զոյն գտանէ ունայն, և փրկել զձագսն կորուսեալ ոչ կարէ, զի եղեն անկեալ ՚ի ձեռս որսողաց, միայն զերկուսիս կրէ զնոցա. այսպէս և կանայքն առնէին յայնժամ, յափշտակեալս ՚ի տանց իւրեանց տեսանէին զորդիս իւրեանց և ՚ի ներքոյ կապեալք որպէս յուռկանի ձկունք կամ թռչունք յորոգայթս, գալ

1 Թարգմանիչն զյունականն ՚ետերον λόγιον պիտա պապգան յատուկ անուն իմացեալ, արարեալ ՚ի վերադրոյ եղիա ասէր։

և փրկել զգերեալսն ոչ կարէին. իսկ որք առ դուրս նո-
ցա լային ողբալով և կոծելով, կամէին որսորդաց որդե-
կայն իւրեանց մերձ լինել, ցուցանել նոցա զերկուսնս ի-
րեանց, թերևս ողորմեսցին՝ ի վերայ նոցա:

Օ այս ամենայն տեսանէի ես յայնժամ, և՝ ի միտ առեալ զահեղակերպ դատաւորութիւնն զայն՝ ասէի ցանձն իմ, եթէ՝ ի մէնջենաւոր դատաստանին վինչ լինիցի, ուր ոչ հայր, ոչ մայր, ոչ եղբայր, ոչ քոյր և ոչ այլ ոք, որ և ս համարձակիցին առ դատաւորն, և անպարտական՝ ի դատապարտութենէ ոչ կարեն փրկել զդատապարտեալսն. զի յահեղական դատաւորութենն Քրիստոսի դատապարտեալ որ՝ ի մէնջ ո՞վ կարիցէ կալ և շշնջել ձայնիւ, կամ ո՞վ կարիցէ փրկել յանբուժելի տանջանացն: Այլ միթէ ո՞չ էին առաջինք քաղաքիս մեր այնք որ՝ ի տանջանսն էին, և կամ այնց ազգաւ ազնիւ գլխաւորացն ո՞չ են՝ ի դատապարտութիւնս. այլ եթէ որ սիրէր զնոսա, պարտ էր այժմ զուտ սիրոյ ցուցանել և ժտել զփրկութիւն նոցա և վայելեալ անցաւոր կենաւքս:

Յ երդ օրն կատարեցաւ և եղև խոր գիշեր, ամենեքեան ակն ունէաք լինել կատար վճռացն. ապա առաւել լինէին ամենեքեան՝ ի տապնապի և դիմէին առ ած շրջումն և փոփոխումն առնել իրին, արկանել գուռն՝ ի սիրտս դատապարտողացն, և՝ ի միտս թագաւորին մատուցանել զզարհուրելի զայս գիտութիւն. և առ հասարակ ժողովրդեանն աղաչանք առ մարդասէրն ած առաքիւր փրկել զնշխարս քաղաքիս և ոչ մատնել իսպառ՝ ի խորոց արմատախիլ առնել զնոսա: Այլ ոչ էր տեսանել անդ զոք առանց արտասուաց զայս գոչելով. բայց սակայն այսոքիկ դատապարտողացն՝ ի ներքս ոչ լինէր լսել. այլ միայն զդուշանայինն թէ ևրպէս ստուգութեամբ լինիցի քննութիւն համարձակողացն և կատարումն, ի շրթայս արկանէին և կապէին յերկաթս և՝ ի բանտ առաքէին, տանէին ընդ մէջ փողոցի մարգկանն երիվարօք պատերազմականօք, և զայլսն որք ուներն բիւրս և անհամար սպասաւորութիւնս: և զդոյսս՝ ի հրապարակի հանէին, և զնոցա դրունսն զամենայն ինքեաւ, և զկանայսն արտաքսեալ՝ ի հայրենական տանցն, և իւրաքանչիւր ոք՝ ի նոցանէ գործովք զայն զվնասդ

հնոյն կատարէին, տանէ՝ ի տուն և տեղւոջէ՝ ի տեղիս շրջէին մնդրեալք, և՝ ի ժողովարան ժամէին. և ոչ այս նոցա դիւրաւ լինէր, զի իւրաքանչիւր ոք երկնչէլով դողայր յայնցանէ որ շուրջ գալով դիտէին թէ ում ոք ընկալցի զոք՝ ի մեղանչականացն և բժշկեսցէ։

Այլ սակայն այսչափ չարեաց հասելոց ոչք՝ ի չարիսն անկան և յանցաւոր կենացս ոչ եղին, զայն ամենայն ոչ ինչ գրեցին, ոչ զընչից առմունս, ոչ զանարգութիւնս, ոչ զայնչափ խայտառակութիւնն, և ոչ այլ ինչ յայսպիսեացս զնոսա խածատէր։ Այլ չարեացս այսոցիկ մեծութիւն և առաւել քան զոյն ակնկալութիւն համբերողս խնամատարապէս կազմէր և պատրաստէր զՀոգիս նոցա. և յայնժամ ուսանէին թէ որպէս դիւրաւ են առաքինութիւնքն, թեթեւ և հեշտագոյն ուղղութիւնք։ Այսոքիկ նախ քան զայս ոչ առնէր զնոսա հեզս. իսկ յորժամ՝ ի մահու երկիւղն անկան, առաւելագոյնք եղեն. զի թէպէտ և զամենայն ինչս իւրեանց կորուսին, յորժամ զկեանս իւրեանց ոչ կորուսին, այնպէս համարեցան որպէս թէ գանձանակ եղեալ գտին։

Այլ եթէ վասն հանդերձեալ դատաստանին առնոյր զմեզ երկիւղ, և զանբուժելի տանջանքն զայն զմտաւ ածէաք, եթէ զդայս մեր եթէ զՀոգիս եթէ զմարմինս տայք վասն օրինացն Այ, սակայն ոչ տիրէաք, գիտելով զի մեծագոյնս շահեաք փոխեալ՝ի վտանգից հանդերձելոցն։ Վերեւս բաւականապէս կակղացոյց զսիրտս ձեր Հառս ասացեալ. բայց մի դժուարիք, սիրելիք, զի յորժամ կամիցիմ՝ ի նուրբ նորագոյն յիմաստութիւնս համարձակել, կակուղ միտս պարտ է ժտել. առ զղուշութեան զայս արարի, մինչ զի յերկիւղէ պատմութեանս Թօթափիցէք՝ի մտաց ձերոց զամենայն դանդաղմունս, յարուցանել զձեզ յամենայն հոգւոց կենցաղոյս, և բազում հեշտութեամբ՝ ի խորս անձանց ձերոց առաքել զզօրութի՛ ասացելոցս. բաւական իսկ և առաջին բանքն ուսուցանել որ՝ ի քնութեանս կան օրինք բարեաց, և որ՝ ի վեր քան զքնութիւն իրքն լինիցի՝ ցուցաւ ձեզ։

Ո՛չ սոյն զայս պատճառ և այսօր՝ ի մէջ բերեմք բանիս. զի այսպէս ստեղծ ՚ած զմարդն՝ յամենայն իրս առաքեստաւորական արարեալ զնա, յայնմի արարեալ և զայս ամենայն մարդկան՝ աւանձել ամենեցուն՝ ի պար-

տական մեղայ. զի բազում անգամ այր տանուտեառ ընթանայ առ կին պոռնիկ, և յորժամ տեսանէ զոք ՚ի համեստ ծառայից իւրոց՝ պատկառէ հեռանայ յաղտեղի ձանապարհէն. դառն համարի զբամբասելն յայլ մէն. ընդ չար անուանն յանարգութեան զործս՝ ասացեալ եթէ ՚ի չարիս գտանիք մեզէն ՚ի դատապարտութիւն տանիմք զարարողն: Այսպէս գիտեմք զինչ է չարն կամ զինչ առաքինութիւնն:

Այս իսկ Վրիստոս յայտնի յուցանէ, զի ոչ օտար և ոչ որ քան զբնութիւնս մեր ՚ի վեր անցանէ՝ օրինադրէ, այլ զոր կանխաւ յառաջագոյն եդեալ ՚ի կամս մեր. քանզի զհետ բազում երանութեանցն այսպէս ասէր՝ եթէ "Որ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա,,: Այսպէս ոչ են պէտք բազում բանից և ոչ ընդերկարութիւն օրինացս և ոչ զանազան վարդապետութեանց. կամք քո եղիցին քեզ օրինակ: Կամիս զի բարի արասցէ քեզ ոք, բարի գործեա և դու նմա. կամիս գովելի լինել, գովեա դու ինքնին զայլս. կամիս զի ողորմեսցի քեզ ոք, լեր և դու ողորմած նմա. կամիս սիրել, սիրեա և դու զայլս. կամիս զի առցես զառաջաւորութիւնս, ՚ի բաց լեր յայլմէ. նախ դու լեր այսոցիկ դատաւոր, դու լեր օրէնսդիր. և դարձեալ զոր ատես, այլումն մի առնիցես: Այսպէս այսօրիկ զչարեալսն և զվշտամիսն բերէ ՚ի հաշտութիւնս այս. իսկ վասն առաջնոյ՝ գործոց առաքինութեան: Այլ զոր ատես, այլումն մի առնես. ատես զանարգանս, մի զայլ ոք անարգեր. ատես ընդ քեզ զչարեալսն, մի և դու զչարեսցիս ընդ ումեք. ատես զվնաբէութիւն, մի և դու զայլ ոք խաբեսցես. ատես զբամբասողն, մի դու զայլս բամբասեսցես: Ի վերայ ամենայնի եթէ զայս երկու բանս ՚ի մտի ունիցիմք, ոչ պահանջեմք այլ վարդապետութիւն:

Իսկ զառաքինութիւն եդեալ է ՚ի բնութեիս մեր, և զգործս և զվարս ուղիղս ժողովեալ է ՚ի կամս մեր: Այնքան անյայտ է ասացեալս, փութամ ստուգապէս յայտնի առնել զսա: Զինչ զի իմաջիք եթէ բարիոք է զգաստանալ, և ոչ է պիտոյ ժտել բան վարդապետութեան. և զի ունիմք ՚ի բնութիւնս մեր զայսոցիկ զնմացութիւնս, և ոչ է պիտոյ աշխատութեան կամ վաստակոյ խնդրել՝

եթէ բարի է զգաստութիւն և ընդունելի. քանզի հա-
մբէն ամենեցուն միտք խոստովանին զայս թէ բարիոք
է, և ոչ ոք է որ ոմնհար առնէ. զայս առաքինութիւն:
Ակայպես և զշնութիւն գիտեմք զի չար է, և ոչ ասա
պէտք ինչ իցէ աշխատութեան և ուսանելոյ առ՝ի Ճա-
նաչել զչարութիւն մեզաց այսորիկ. քանզի ամենեքեան
յայսպիսի վճիռ ինքնուսոյցք եմք. իսկ զառաքինութիւն,
թէպէտ և ոչ իցեմք յառաքինութեան, սակայն գո-
վեմք զառաքինութիւն: Ըստ այս չայ մեզ ուղղութիւն
եղև մեծապոյն, մինչ զի՝ի բնութենէ մերմէ և՝ի բա-
րուցնախ քան զգործելն մերձ լինել յառաքինութիւն:
Ըստ ընդդէմ պռոնկութեան, զոր և ասացի իսկ, զի գի-
տութիւնս այս չիւրաքանչիւր բնութէ կապեալ կայ,
և ոչ խնդրեմք պլուստ վարդապետութիւն ուսանել
զայս. իսկ այսոցիկ ուղղութիւն այսուհետև՝ի յօժա-
րութիւն՝ի փոյթ և՝ի ջանս ձեր արկեալ կայ:

Զինչ լինիցի այս, զի զայս ամենայն ըստ բնութեան
արար, և մեք անպսակք և առանց բրաբիոնի երթիցուք
աստի. և իբրև զանաստուս զառաւել խնամ զոր ու-
նին ըստ բնութեան, սակայն ոչ առնուն վարձս և ոչ
գովութիւնս, սոյնպէս և մեք ոչ վայելեցեալ յայսմանէ:
Վանզի ըստ բնութեան զգաստութիւն ոչ եթէ որք
ունիցին, այլ տուողին է գովութիւնն: Ամն որոյ՝ի
կամաց և ոչ ըստ բնութեան է զամենայն տուեալ. և
զարձեալ՝ի կամն բոլորովին ոչ ընկէց, և ոչ բեռն է-
թող զնմանութեան իրս և զուղղութեան, զի մի աշխա-
տութիւն ինչ անուանեսցուք զառաքինութիւնս, այլ
անուանեսցուք՝ի կամաց զգործս զայս, և մի յայսմանէ
բերի աշխատութիւն առ զգաստութեան: Վանզի ոչ
առանց վաստակոյ միայն բնութեանն, ըստ իմացութե-
նէ իցէ զգաստութիւն, և ոչ կարեմք ուղղել զսա առանց
վաստակոյ, և ոչ զգանկութիւն սանձել. զի այս ոչ եթէ
բնութեանն որպէս իմացութիւնք, այլ խնդրէ սա յօ-
ժարութիւն և փոյթ:

Զրդ ոչ եթէ այսու միայն թեթևացոյց զծանրու-
թիւնս, այլ զարձեալ և այլ արուեստիւ, զի ոչ ուղղու-
թեանց իմացութիւն միայն բնակից է՝ի մեզ, այլ և
ընդ անարգ իրս գժուարել՝ի բնութենէ ունիմք, զի
վաղվաղակի անարդ իրաց թէնամիք լինիմք: Ըստ այսպէս

յամենայն օդնութիւնս վայելեցաք ապաւինեալք, և ոչ ի պիտեղն միայն յուսալ, զի և վասն այլում որ գայթակղի տխրիմք ի լսելն, և զգուշութ սիրոյ բնական ունիմք առ միմեանս։ Ոչ ի թէպետ և փորձութիւնք իրաց ինչ տրտմութիւն հասուցանեն, այլ սակայն ունիմք սփոփանս համբերն ընդ միմեանս սէր։ Եւ զայս ամն իմաստասէր ասէ եթէ "Յամենայն անասուն սիրէ զիւր նմանին և մարդ զընկեր իւր.,,։

Խազում ևս այլ զինի իմացութեան տուեալ է մեզ վարդապետս ՅԾ. քանզի և հարք զորդիս խրատեն և տեարք զծառայս և վարդապետք զաշակերտս և բարեկամք զբարեկամս։ Եւ ոչ ևս ոք ամաչէ սիրել, ոչ է նուաստ զգոյն քան զայս, այլ մանաւանդ առաւելագոյն քան զայս և բազմապատիկ ըստ բանի աւետարանին։ Խազում անգամ և ի նոցանէ շահիմք յորժամ նախատեն զմեզ ի յանցանս ինչ, և ակամայ ի վեր յառնեմք յուղղութիւնս։ Յաչափ վարդապետս կացոյց մեզ ՅԾ, զի հեշտագոյն մեզ լինիցի ուղղութիւնք, և ընդարձակապէս զկատարումն գտցուք. քանզի բազմութիւնք որ ըստ այմ շուրջ պատեալ են զմեզ, ոչ տան թոյլ անկանել մեզ յօգտութենէ։ Եւ եթէ զայսոսիկ եղեալս ի մեզ արհամարհեմք, յիշխանաց երկնչիմք, և ամենևին հանդարտագոյն լինիմք. և եթէ զնոսա տեսանեմք և գտանիմք մեղուցեալս, ոչ կարեմք ի բնական քանագրութենէ փախչել։ Այսպա եթէ զայսոսիկ անարգեմք և հակառակիմք, ի բազմաց կասկածեալ երկնչիմք, և ոչ անփոխարէնս մնալ ակն ունիմք. ապա եթէ ի սոյն յայս ամաչեցեալ լինիմք, օրինօք կայ եղեալ երկիւղն և ակամայ զմեզ զգաստ առնէ։ Յորժամ ի մանկութեան էաք, վարդապետք և հարք զմեզ կարգեցին և ընկալան. և յորժամ աճեցաք, օրէնսդիրք և իշխանք։ Եթէ ծառայք ծոյլք լինին առ պատուիրանս տեառն, ի հարկէ տերանց իւրեանց զգաստութիւն առնեն, և կանայք յարանց. այսպէս բազումք ի բազմադիմի իրաց զազգս մեր պարսպեալ են, զի մի հեշտեալ անկեալ հոլովեսցուք ի չարիս։

Եւ զհետ այսր ամենայնի ցաւք և փորձութիւնք խրատեն զմեզ. աղքատութիւնն ըմբռնէ և տուգանն ըզգաստս առնէ և վտանգք ցամաքեցուցանեն և այլ այս-

պիսի բազումք։ Ոչ երկեցոյց զքեզ Հայր, ոչ վարդապետք, ոչ իշխանք, ոչ օրէնսդիրք, ոչ դատաւորք, ոչ պատկառեցեր ՚ի սիրելեաց, ոչ խածատեաց զքեզ Թշնամի, ոչ զգաստացոյց տեր քո, ոչ ուղղեաց սովորութիւնք. այլ եկն հիւանդութիւն մարմնական և զամենայնն ուղղեաց, և զերիտ զվէսսն՝ տուպանն հանդարտագոյն առնէ։ Այս իսկ է մեծ, որ ոչ միայն մեզ, այլ Թէ և այլոմ հասանէ վտանգ, յոյժ օգտիմք մեք. և եթէ մեք չարի ինչ դիպիմք և զայլս տանջեալս տեսանեմք, ոչ պակաս քան զնոսա զգաստանամք։ Այն և յուղղոյ լինի մեզ. և որպէս ՚ի տանջանս այլոց այլք առաւել գան ՚ի զղջումն, նոյնպէս և որ բարիոք ուղղեցին, բազումք հաւասարել փութան. որ և վասն երդմանն ուղղութեանն եղև։ Բազումք տեսին զյաքսունս որ ՚ի սովորութենէ երդմանց փոխեցան, նոցին ջանուց ցանկացան և փոխեցան ՚ի մեղայն. վասն որոյ և մեք յօժարագոյն ՚ի յայս մեծձենամք ՚ի խրատս։

Այս մի՛ որ ինձ ասիցէ՝ եթէ բազումք զպատուիրանս ուղղեցին, զինչ այլ ինդրեսցես։ Այլ քանզ հովիւն այն որ ունէր ոչխարս հարիւր, և մի ՚ի նոցանէ մոլորեցաւ՝ ոչ առնէր փոյթ ինննասուն և ինննցն, մինչև զմոլորեալն գտանէր և դարձեալ խառնէր ՚ի հօտն իւր։ Ոչ տեսանէք և ՚ի մարմինս մեր զլեռալսն. որ թէպէտ և զունդն միայն խլէ, ամենայն մարմինն ցաւէ։ Ո՛ՙի այսուհետև ասասցես զայս Թէ սակաւ ոմանք մնային որ ոչ ուղղեցան. այլ այնմ զգոյշ լեր եթէ նոքա նուազունքն որ ոչ ուղղեցան, զբազումս ապականեն։ Ո՛ՙի է որ պատնէշ ցաւ ՚ի կորնթոս, սակայն Պաւղոս այսպէս հեծէր որպէս Թէ կորեաւ ամենայն քաղաքն. տեսանէր իսկ զոչ զգաստանալն նորա, վաղվաղակի զհիւանդսն արտաքսէր ՚ի Հանապարհէն ընթանալ ՚ի մեղսն և յայլսն ամենայն։ Ցեսանէի նախ ՚ի դատաւորութիւնս կապեալ զաթս զերեւելիս և տանել ՚ի մէջ փողոցայն. և վասն աւելորդ անարգանացն զոր ոչ էր պարտ ումեք լսել, ոմանք սքանչանային ասել՝ ո՛ւր իսկ լինիցի սրբութիւն, իշխանութիւնք անարգին։ Օ՛ ի մանաւանդ ուր ամբարշտութիւն է, ոչ օգտի իշխանութիւն։

Օ՛ այս ՚ի միտ առեալ յարուսցուք զանձինս մեր. իսկ եթէ ՚ի ձէնջ ոչ բերջիք փոյթ, այս ամենայն ՚ի մէնջ

աւելորդ է։ Կ՚ըծաձիագործ յորժամ անօթի ինչ կազմիցէ և դիցէ ՚ի խոնարհ, միւս օրն եկեալ գտանիցէ որպէս եթողն. սոյնպէս պղնձագործ և քարահատ և ամենայն արուեստաւոր զգործի իւր որպէս թողու, նոյնպէս առցէ։ Իսկ մեզ ոչ այսպէս, այլ հակառակն այսմ ամենայնի. զի ոչ անօթս անշունչս կազմեմք, այլ զանձինս բանաւորս։ Ա՚ման որոյ ոչ այսպէս որպէս թողաք գտանեմք զձեզ. քանզի յորժամ առնուք զբանս հանդերձ բազում աշխատութեամբ վաստակեալ, ուղղեմք և ջերմադոյնս գործեմք, ապա եկեսցէ ձեզ իրաց իրաց փորձութիւն յամենայն կողմանց, ըմբռնել և դարձուցանել զհոգսն և առաւել զժուարութիւն բերիցէ ձեզ։

Ա՚ման այսորիկ աղաչեմ և զիրկս տարածեմ, զի որչափ աստ փութամբ վասն ձերոյ ուղղութեան, նովին չափովիւ՚ի գնալն աստի ցուցանեմ հոգս վասն ձերոյ փրկութեան։ Կ՚ու եթէ էր ինչ հնար ուղղել ինձ զպատուիրանս ձեր և ընդ ձեր ամենեցուն և լինէր ձեզ փրկութիւն, ես զձգնութիւնս առնուլ վասն ամենեցուն ձեր, սակայն ոչ այսչափ նեղէի։ Իայց զինչ գործեցից, զի այսմ անհնար է. իւրաքանչիւր որ ըստ գործոյ իւրոյ տացէ վճիռ։ Ասպէս մայր գթած տեսանէ զերմացեալ զորդի իւր, մերձ կալով տագնապի կիզեալ սրտիւ, ողբայ բազում և ասէ ընդ հիւանդացեալ որդեակն. եթէ էր ինձ հնար, որդեակ իմ, բառնայի՚ի քէն զտապ քո և ածէի զբոց այրման քո յանձն իմ։ Սոյնպէս և ես այժմ, եթէ էր ինձ հնար ուղղել վասն ձեր զամենայն։ Իայց չէ այս և չէ իսկ, այլ իւրաքանչիւր ըստ գործոց տալոց է ՚ի Հարկէ զպարտաւորութիւնս. քանզի ոչ է տեսանել զայս երբեք եթէ մարդ ընդ մարդոյ տանջեցի չայ։ Ա՚ման որոյ երկնեմ ողբալով, զի չօրն չայն յորժամ՚ի դատաստանի կացցուք, ոչ կարեմ ձեզ մերձ կալ, մանաւանդ զի և ոչ համարձակութիւն իսկ է ինձ առ ած կալ վասն ձեր. որ թէ և ունէի համարձակութիւն, ոչ երբեք իցեմ սուրբ քան զՈվսէս և ոչ քան զՍամուէլ արդար, որք չայնչափ առաքինութեան էին, սակայն ոչ կարացին Երիսին օգտել։ Կ՚րդ յորժամ իւրաքանչիւր ոք՚ի գործս իւր տանջի և ապրի, փութացուք աղաչեմ և զկնի այլ պատուիրանացն կատարել և զայս պատուիրանս, զի բարւոյ յուսով երթիցուք աստի

և Հանդիպեսցուք բարեաց խոստմանցն Հնորհօք և մաթ-
դասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիս-
տոսի, որում վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Խօսք վասն նոյն քաղաքին Իթաց. և զի ոմանք յաձախեցին զհամբաւ
ահին և յանդիմանեցան. և խրատ վասն երդման և զանցանելոյ օրինա-
կաւ պատմութեան Յովնաթանու Յեփթայէ և՛ի Սաուղայ։

Ա՛Յ որպէս կամիմք զքաղաքս մեր խոովեցոյց սատա-
նայ. բայց ՚ձեծ ոչ կամեցաւ, այլ յամօթ արար զսատա-
նայ և միսիթարեաց զմեզ, մինչև ասել իւրաքանչիւր ա-
մենեցուն մեզ զմարգարէական բանն զոյն. "Ընտ բա-
զում նեղութեան սրտի իմոյ միսիթարութիւն ՚քո ու-
րախ առնէր զանձն իմ"։ Ա՛յ զի միսիթարեաց միայն,
այլ զի և տեղի ետ խոովեցուցանել, զգթութիւն իւր
ետոյց ՚ձեծ ՚ի մեզ, որ խրատէն և անդէն բժշկէ։ Այս զոր
նախ ասացի, զնոյն և այսօր պատմեմ, եթէ ոչ փոխար-
կութիւն վտանգիցն միայն, այլ և Թողուլ ՚ի վտանգն
և Թոյլ տալ լինել յայ[1] բարերարութենէ է։ Յորժամ
տեսանէ զմեզ ՚ի դանդաղանս և ՚ի ծուլութիւնս և զա-
տեալս ՚ի մօտաւորութենէ իւրմէ և ոչ փոյթ արարեալ
բանից Հոգևորականաց, Թողու առ փոքր մի, զի աստի
վտանգիւքս զգաստասցուք ՚ի դարձ եկեալ և փութալ
առ նա դարձցուք։ Այս զի սքանչանաս որ մեզ ծուլիցս
զայս առնէ, որ երբեմն և Պաւղոսի և այլոցն իւրոց ա-
շակերտացն զնոցն պատուիրեր և առնէր. զոր և նա իսկ
առ կորնթացիսն երկրորդ Թուղթ առաքեալ զայս ասէր
պատճառ փոքուութեանն յասէն. "Ա՛յ կամիմ, եղբարք,
եթէ տգիտք իցէք վասն նեղութեան մերոյ եղելոյ Ա՛-
սիա, զի առաւել քան զկար մեր ծանրացաք մինչև ան-
յոյս լինելոյ մեզ ՚ի կենացս յայսցանէ. այլ անձամբ
յանձինս զվճիռ մահու ընկալաք, զի մի յանձինս ա-
պաստան իցեմք, այլ յ՚ձեծ"։ Ա՛յս զոր ասէն այս իսկ է.

[1] Պակասէր յօրինակին յայ բարերարութենէ է. յաւելաւ ՚ի յունէն։

այնքան մեծ, ասէ, եհաս վտանգն, մինչև հրաժարեցաք ի կենացս, և ոչ երբէք ակն ունէաք և յոյս՝ լինել փոխարկութեի չարեացն, այլ ամենևին ի մահու լինել։

Արդ զնոյն և մեք դիւցաք ի յանձինս մեր, գիտելով զի զդատապարտութիւն մահու ունէաք. այլ զկնի անզգամութեան մերոյ ընդարձակեաց ՚ած զծուխս ձմերայնոյ, զի զամպս տխրութեան մերժեաց և ի դրաց մահու յափշտակեաց զմեզ, ցուցանելով զի զոր և թոյլն ետ դնալ մինչ ի դրունս մահու՝ խնամք բարեաց էր ամենայն որ ինչ եղև։ Եւ յայսմ փորձութենէ պատեցաւ մեզ շահ մեծ, այս իսկ է, ստէպ առ նա հայել մեզ. բայց ընդ այս մի մեծ խորհել և մի հպարտանալ ձեզ։ Ասէ այսորիկ ասացի եթէ "յանձինս մեր ունէաք զդատապարտութեի մահու,,. և զպատճառն ծածկեալ ի մէնջ։ Զինչ իցէ պատճառն. այս իսկ է, "Ո՛չ մի յուսացաք յանձինս մեր, այլ յԱ՛ած որ յարուցանէ զմեռեալս,,։ Քանզի ի նիրհելն մեզ և յանկանելն՝ փորձութիւն զարթուցանէ զընութիւնս մեր և յարուցանէ և անվնաս գործէ...։

Մի՛ այսուհետև մերժեսցուք ի յառաւելութենէ միխիթարութեանս և մի անգէտք լիցուք, այլ ակն կալցուք վաղվաղակի լինել հանդարտութեան, և զկատարումն աղմկոյ խռովութեանս որ պատեալ էր զմեզ՝ ընկեսցուք ի տէր, և մեք ի մեր սովորութիւնն դարձցուք և յառաջ բերցուք զվարդապետութիւն բանին։ Եւ նախ զձեզ վասն այսմ մի պատուիրանի քննել կամիմ մինչև արմատաքի խլել զչար սովորութիւնն երդմանն. ըստ որում հարկ է կանխաւ յայսր պատուիրանի պաշտամանս ապաւինել։

Որպէս և նախ աղաչեցի զձեզ, արդ զգլուխ կարապետին Յովհաննու յիշեցէք զառնուլն և զՀատանելն և զջերմ արեանն զհոսանս. և յորժամ երթիցէք իւրաքանչիւր ի յարկս ձեր, զնոյն առաջի աչաց ձերոց կարծիցէք տեսանել և լսել զարձակեալ զձայնն, և թէ ընդ ձեզ այսօր խօսի սատանայ և ասէ. Նման լերուք ինձ սպանութեան երդմանն. զի զոր յանդիմանութիւնն ոչ արար, արար երդումն. և զոր սրտմտութիւն բռնաւորին ոչ արար, հարկ երդմանն դիւրաւ պատրաստեաց։ Յորժամ յանդիմաներ զնա առաջի ժողովրդեանն, բրա-

նաւորն քաջութեամբ բերէր զբանադրութիւնն. իսկ յորժամ 'ի հարկ երդմանն ածէ զնա, յայնժամ եհատ զերանելի գլուխն զայն: Այլ ես ըստ այսմ աղաչեմ և յաղաչելոյ ոչ դադարեմ, զի ուր և երթիցէք զսուրբ և զպատուական գլուխն 'ի վերայ ուսոյ բարձեալ համարեսջիք տեսանել առաջի զոր երդուաք զօրեաց առնել, և այնպէս բամբասեսջիք զսովորութիւն երդմանն: Այլ եթէ զայս զմտաւ ածիցէք, որչափ և իցէք ծայլք և դանդաղկոտք, յորժամ տեսանիցէք զաչս գլխոյն այնորիկ ահեղակերպ և խոժոռատես հայել 'ի մեզ լի սպանութիւք խոլորելով երդմնողաց՝ սանձեսցէ դիւրաւ սոսկալն ահս այս և ածցէ 'ի զգաստութիւն և հարկ առնիցէ դարձուցանել հեշտեաւ զլեզուս մեր 'ի գնացից երդմանց:

Այլ ոչ եթէ զայս միայն ունիցի վտանգ երդումն, կամ տանջել որք սովորեցին զանցանել և ոչ պահել զերդումն, հաւասարկ՝ եթէ խնասցի ոք՝ այսմ մեղաց ոչ այլ մեղք, բայց ե և այլ վտանգ որ ոչ է նուազագոյն քան զայս: Զինչ իցէ արդեօք. զորս ոչն կամին և ոչ փութան՝ յերդումն ածել: Վասնզի որ սովորական է ստէպ երդնուլ, և կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, 'ի շտապ խռովութեան և 'ի հանդարտութեան, և ս և 'ի սրտմտութենէ, բազում անգամ և յայլ բազում պատճառանաց երդնու, նման ոմն կարիցէ տալ պատասխանի, արգելուլ և խրատել. բայց նախ այս է յայտնեալ և խոստովանեալ եթէ որ երդնուն, հարկ է և երդմնազանց լինել: Այրկրորդ եթէ ոչ յափշտակիցիս, ոչ կամաւ և ոչ ակամայ յայս գիպեսցիս, սակայն յայսմ իրաց զնութենէ կամաւ և գիտութեամբ հարկեսցիս երդմնազանց լինել: Բազում անգամ լինիցի այս 'ի տունս իւրաքանչիւր 'ի սպասաւորաց մերոց և 'ի ծառայից. յորժամ մեզանչեն ինչ՝ երդնու կինն առն ապատակել զնա, իսկ այրն երդնու հակառակ նորա, և անտի յարուցանէ վէճ և ոչ լռեն: Իսկ ասա զոր ինչ և գործեսցեն, հարկ է երդմնազանց լինել. թէ և խորհեսցին երկոքեանն փութալ ամենայն ջանիւ, ոչ կարեն պահել զերդումն. եթէ ապատակ կինն զծառայն, եբարձ այրն զերդմնազանցութեան զմեզս. և եթէ առն արդարանայ բանն, եբարձ կինն յանձն իւր . . . .

Պահեսցուք ապա այսուհետեւ յերդմանէ. զի ոչ ե-
թէ ՚ի տունս միայն, այլ եւ ՚ի փողոցս լինի սաստիկ, եւս
առաւել ՚ի վիճմունս եւ ՚ի մարտս. մանաւանդ յորժամ
մրցին ընդ միմեանս, հակառակ երդնուն. ոմն երդնու
հարկանել, եւ ոմն եթէ ոչ հարցես. ոմն թէ առցէ զհան-
դերձն, եւ ոմն թէ ոչ տացէ թող. ոմն թէ առնուսցէ զար-
ծաթն, եւ ոմն թէ ոչ տամ. բազում եւ այլ հակառակս
ոչք ընդ միմեանս մարտնչին՝ երդնուն: Այլ ՚ի վաճառս
եւ յարուեստանոցս եւ յուսմունս լինիցի այս եթէ տե-
սանես. բազում անգամ արուեստաւորն երդնու աշա-
կերտին ոչ տալ թող կամ ճաշակել կամ ըմպել նախ քան զ-
ստուեալ գործն կատարեսցէ: Այսպէս եւ յուսմունս.
զսոյն առնէ եւ մայր առ մանկունսն եւ յաղախնայս եւ ՚ի
ծառայս. եհաս երեկոյ եւ գործն ոչ եղեւ կատարեալ, կամ
լինին ՚ի հարկէ սուվամահ, եւ կամ որ երդուաւն զան-
ցանէ: Վասնզի դէտ չար որ դարանի հանապազ ՚ի վայր
արկանել զբարին մեր, մերձ կայ եւ լսէ զհարկ երդմանն,
՚ի ծուլութիւն ածէ զպարտաւորսն կամ այլ դժուարու-
թիւն գործեսցէ, մինչ զի ոչ կատարեսցի գործն, եւ յայն-
մանէ գանք եւ անարդանք եւ այլ բազում նեղութիւնք
լինին: Որպէս մանկունք գունդ փոքր եւ հնազեալ ձգեն
հակառակ միմեանց, ապա դիպեսցի յորմ ինչ հասեալ՝
անկանի եւ պատառի, եւ յայնմանէ ոմանց զգլուխն եւ կի-
սոց զայլ անդամն խոցոտեն, նոյնպէս եւ որ հակառակ
երդնուն միմեանց, յիրացն հարկէ երդումն հերձի, եւ
նոքա ՚ի հարկէ յերդմնազանցութեան գուբն անկանի-
ցին. իսկ ոմանք երդմնազանցք լինին, եւ ոմանք պատ-
ճառ այլոց երդմանն լինին:

Այս զի մի այս ամենայն ՚ի տունս եւ ՚ի փողոցս եւ յա-
րուեստանոցս լինիցի զօր ամենայն, ՚ի գիրս տոհմից եւ
Թագաւորաց յայտնեալ է ՚ի հնումն, եւ ՚ի խրատ մեր
գրեցաւ: Այլեւ երբեմն պատերազմ ՚ի հրէաստան, եւ
Յովնաթան որդի Սաւուղայ առեալ զկապարձակիրն
իւր գնաց յայլազգիսն, զոմանս հարեալ ՚ի սուր սուսե-
րի, եւ զոմանս արգելեալ ՚ի կիրճս ձանապարհաց. իսկ
Սաւուղ հայր նորա իբրեւ գիտաց, խորհեցաւ առաւե-
լապէս յարուցանել ՚ի վերայ մնացորդացն զզօրականն,
եւ առնել զի մի նախագոյն ՚ի բաց կայցեն մինչեւ զամե-
նեսեան ըմբռնեսցեն. եւ զոր կամեցաւն՝ այնմ հակա-

ռակ գործեաց, երդուեալ Թէ մի ոք Ճաշակեսցէ հաց մինչև●ցերեկոյ, զի խնդրեսցէ զվրէժ Թշնամեաց իւրոց։ Եւրդ զինչ քան զայս անմտութիւն լինիցի· աշխատեալք և վաստակեալք և խոցոտեալք զօրք և զօրավարք, որ կամէին հանգչել՝ և ևս ուժգին առնել զպատերազմ, նա առաւել ևս վատԹարս գործեաց, Հարկիւ երդմանն եւ զնոսա ՚ի չարաչար սովս քաղցոյ։ Այսն անձին իւրում ունէք երդնուլ Ճշաս մեծ է, Թէ և յիրս և ՚ի փորձութիւնս լինչ նեղիցիք· իսկ զայլոց բնութիւն իւրով երդմանքն կապել՝ ևս բազում և մեծ Ճշաս է, մանաւանդ յորժամ ոչ վասն միոյ կամ երկուց և երից, այլ վասն բազմաց ոք երդուիցէ, զոր և Այուդն յայնժամ արար անպատրաստաբար· ոչ էած զմտաւ զոր պարտ էր յայնպիսի անչափ ժողովրդեանն, և մի ոք զանցանել չիմացաւ զերդումն· նա և ոչ զայս յիշեաց Թէ զօրք և զօրք ընդ միմեանս մարտուցեալք ոչ պահիցեն զերդումն։ Բազումք յիմաստութեան և ՚ի հանդարտութենէ կայցին, և ըմբռնել զօրավարս ոչ կարացին, մանաւանդ յորժամ բազում վաստակք լինիցի։ Այս զայս ամենայն անտես արար, և որպէս վասն միոյ ծառայի ոք երդնուցու զօր դիւրաւ իցէ պահել, այսպէս համարեցաւ վասն զօրացն և զօրապետացն։ Այն այսր սատանայ դուռն եբաց այնչափ, զի ոչ միայն երկուց և երից և չորից, այլ բազմաց յոյժ յարոյց յերդմանէս յայսմանէ ՚ի նուազ ժամու հիւսեալ երդումն և երդմնազանցութիւն։

Եւրդ զի մի ամենևին երդնուցուք երբեք, զամենայն մուտս չարին այսօր խոցուք· գիտելով այսպէս Թէ և ՚ի մի երդումն միամբ միայն, բազում իշխանութիւն առնու և երդմնազանցս առնել։ Այս որպէս օրք զպՀնեալսն հիւսեն, Թէ գիտիցեն որպէս ելանկ սկիզբն հիւսոյն, ստուգապէս զամենայն հիւսն գործեն· ապա եԹէ զբսկիզբն ոչ գիտիցէ, զայլսն ոչ կարէ առնել։ Եսկսի օրինակաւ և սատանայ զպՀնել մեզաց մերոց հիւսէ· և Թէ ոչ առցէ սկիզբն ՚ի լեզուէ մերմէ, ոչ կարիցէ սկսանել· ապա եԹէ սկսանիմք յերդումնն և միշտ ՚ի ձեռին ունիմք զնա, բազում աներկիւղութեամբ ըզչար արուեստս իւր ցուցանէ, և ՚ի միոյ երդմանէ բիւր պատճառս գնէ և հիւսէ երդմնազանցութիւն, զոր յայնժամ Այուդն այն արար։

Տես արդ Թէ դրպէս վաղվաղակի երդումն այս լինի որոգայթ մեծ։ "Լու եկին, ասէ, ժողովուրդն և անդ էր անտառ մեղուաց Հանդէպ անդին. և եմուտ ժողովուրդն 'ի մեղուանոցն և անցանէին քրթմնջելով,,։ Տէսեալ եթէ որպիսի գուբ ետ նոցա առաջի, սեղան ունէլով և խորտիկս հեշտ 'ի սկսանել և սպաս քաղցր 'ի կերակուր և յուսով 'ի յարձակումն պատուիրանին. այսու կոչէր զնոսա 'ի սեղան երդմնազանցութեէ... ժամանակին, "Լմենայն երկիր, ասէ, 'ի սպասաւորութիւն կերակրոյ պարապեալ,,. այսու նեղէր յանօրէնութիւն։ Լու տես, մեղրոյն զնոսա արտաքս կոչէր առ 'ի յարձակել զկապանսն։ Գու երդնուս, ով Աստուած, վասն ամենայն ժողովրդեանդ, այլ մեղրն կոչէ ղքաղցեալ ոգին. և ոչ եթէ օտար ոք, այլ որդի քո անօրինեցաւ, քանզի աՆոյշ կազմեալ էր սեղանն։ Լթէ միս էր եփեալ կամ խորովեալ պիտոյ էր, ուստի ոչ զայն Հնարեալ եդ, զի 'ի սպասաւորելն և կերակուր կազմել և ամիսոիելոյ ակն ունել 'ի պղերգութեն ածէր. իսկ այժմ ոչ էր այսպէս, այլ մեղր միայն որոյ ծախս ոչ գոյր. բաւական էր զծայր մատինն Թանալ Հաղորդել 'ի սեղանոյն և մնռանալ։ Լայլ սակայն նոքա ունէին յօժարութիւն և ոչ ասէին ընդ անձինս իւրեանց՝ զինչ Հարկ է մեզ այս, միթէ վասն մեր ոք երդուաւ. Նա տացէ վրէժ որ երդուաւ առանց պատրաստութեան. վասն որմ՝ արդեօք երդուաւ։ Լայց ոչ այսպէս զմտաւ ածէին, այլ 'ի բաց կացին քաղցմ պարկեշտութեամբ. և այսու իրօք չափ էր և կեալ նոցա, իմաստնանային։ "Լու անցանէր, ասէ, զօրն քրթմնջելով,,։ Օ ինչ էր՝ անցանէին և քրթմնջէին, ասէ, միթէ վասն նեղութեան. բանիւք զիրեարս միմեանս բէին խօսելով ընդ միմեանս։ Լու զիաւրդ, քանզի ամենայն ժողովուրդն իմաստասիրեցաւ, միթէ ոչ եղև ինչ առաւել, միթէ պահեցաւ երդումն. և ոչ երբեք. այլ էանց պատուէրն։ Օ իաւրդ և որմ՝ օրինակաւ. աստ քաջ միտ դիք, զի զամենայն արուեստս սատանայի իմասջիք։ "Լու Յոշեաթան, ասէ, ոչ էր լուեալ եթէ հայր նորա երդմնեցոյց զժողովուրդն, և կարկառ զծայր գաւազանի իւրոյ որ 'ի ձեռին իւրում՝ եհար 'ի խորխոր մեղուն և դարձոյց 'ի բերան իւր զձեռն իւր և բացան աչք նորա,,։

Տես թէ զով ուղղեաց յերդմնազանցութիւն սատանայ, ոչ եթէ զմի՛ ի զօրականացն, այլ զնոյն ինքն զօրդի երդմնողին. և զնա ոչ միայն յերդմնազանց խորհեցեալ առնել, այլ և յորդեսպանութիւն եդեալ և կազմեալ, և զբնութիւն իւր յանձն իւր դարձուցանել. որպէս և Յեփթայէ երբեք արար, զնոյն որ զմինի սորա յուսացաւ առնել։ Վասնզի և նա խոստացաւ՝ այ զմինի յաղթութեան պատերազմին որ նախ Հանդիպեսցի նմա՝ նուէրս մատուցանել՝ այ, և այսու յորդեսպանութիւն անկաւ։ Զուստր նորա նախ եւ ընդ առաջ նորա, զհետ զնա և՝ ած ոչ արգել։ Նա գիտեմք որ բազումք յանհաւատից գազանս անուանեն զմեզ և ոչ մարդիկ վասն այսմ զոհիս։ Այլ ես բազում՝ այ գթութիւն համարիմ և զրոյմ մարդասիրութեան Թոյլ տալ այսմ պատարագիս լինելոյ. և քանզի գթայ յազգս մեր, ոչ արգել զսպանութիւնն զայն։ Օ՛ի թէ զմինի աղօթիցն այնմ և խոստմանն զհն արգելեալ էր, բազումք յետ Յեփթայեայ ակն ունելով թէ ոչ ընդունի՝ ած առնել զայս, և բազում անգամ աղօթէին այսպէս առ՝ ած, և յորժամ՝ ի՛ ձանապարհս ելանել խորհէին, որդեսպանութիւն առնէին. իսկ այժմ յորմէ հետէ Թոյլ ետ կատարել գործոյն, որ զմինի այնր զամենեսեան արգել։ Նա զմինի սպանանելոյ զգուստրն Յեփթայեայ, միշտ լիշատակ եղև վշտացն և ոչ՛ի բարի յայտնեալ զսխտն, եղև օրէն Հրէիցն գալ կուսանայն յայնմ ժամանակի առ՛ի յողբալ քառասուն օր զեղեալ սպանութիւնն. քանզի ողբումն զոհին՝ զի լիշատակն վերաբերէր և որք զմինի նորա եղեն՝ զամենեսեան զգաստացուցանէր, և ուսանէին թէ ոչ՝ այ հրամանատն այն եղև. եթէ ոչ՝ ոչ էր Թոյլ տուեալ ողբալ և կոծել կուսանացն։ Սակ լսութեամբ Թոյլ տան եղոյց զկատարումն ասացելոցս՝ այլ ոչ ումեք երբեք այսպիսի աղօթս աղօթել առ՝ ած, վասն որոյ զայս ոչ արգել. իսկ զոր ինքն հրամայեաց արգել՝ զայն ասեմ զԱսահակայն. երկոքումբքն յայտնեալ՝ եւ թէ ոչ երբեք ուրախանայ յայսպիսի պատարագս։ Այլ անօրէնն բանսարկուն հակառակ նիւթեր և այժմ զբաբանջն գործել, ըստ որում և զՅոփքաեան՝ ի պատուիրանազանցութիւն գըգրեր։ Նթէ՛ ի զօրականացն ոք անցեալ էր ըստ օրէնսն, նման ոչ Թուէր չար ինչ լեալն.

քանզի անյապ է ՚ի մարդկանէ չարիսս, և ոչ երբէք վշտօք մերովք շատանայ նախանձոտն։ Ցես եթէ ՚ի մանկտւոյն նուազագոյն ոք մեռեալ էր, ոչ հաւանէր սպանութիւն գործեալ. այլ եթէ ոչ յորդեսպանութիւն զաջ թագաւորին խոտորէր, ոչ կարծէր եթէ մեծ ինչ գործեցի։ Ամացաւ անարդն այն և զայս գարձեալ առաւելապէս սպանութիւն գտեալ։ Եթէ գիտելով էր մեղուցեալ և սպանեալ, ոչ որդեսպանութիւն լինէր եղեալն. Նա իսկ յանգիտութէ մեղաւ, զի ոչ էր լուեալ զերդումնն. երկրորդ անգամ զի բարձումն որդւոյն կըրկին գներ ցաւս հօր իւրոյ, զի որդի և սիրելի որդի, և նա ոչ մեղուցեալ և հանդերձեալ էր մեռանել։ Այլ ըստ կարգին այսուհետև անցցուք բանիւս։

"Յորժամ եկեր, ասէ, բացան աչք նորա ,,։ Խաղում և աստ անգոնել զանմտութիւն թագաւորին. ցուցանէ թէ սաստիկ սոնձ ըմբռնեաց զզօրն, և առաւելապէս մէգ կալեալ պատեաց զաչս նոցա։ Այս պատասխանի ետ մի ՚ի զօրականաց անտի և ասէ. "Արդեամբ երդմնեցոյց հայր քո զԺողովուրդս և ասէ, մի ոք կերիցէ այսօր հաց մինչև ցերեկոյ. և լքաւ Ժողովուրդս։ Այս ասէ Յովնաթան. կորոյս հայր իմ զերկիրս ,,։ Օ՜ինչ իցէ կորոյսն. ապականեաց, ասէ, զամենեսեան ՚ի յանցանել երդմանն։ Ամենեքեան լռեցին, և ոչ ոք էր որ ըզպարտաւորն ՚ի մէջ ածեալ համարձակէր. և ոչ անց սակաւ մի և պարտաւորութիւն եղև, ոչ այնմ որ երդմնազանց եղև, այլ որ գիտակն էին և հաղորդ էին պարտաւորութեանն։ Այլ նախ տեսցուք որ ՚ի կարգիս է։

"Այս ասէ Սաւուղ. Իջցուք զհետ այլազգեացն և յափշտակեսցուք զնոսա։ Այս ասէ քահանայն. Մատիցուք առ Ած ,,։ Ցես զի և ՚ի հնումն Ած առաջնորդէր զպատերազմ, և առանց նորա կամացն ոչ ոք էր որ համարձակէր ՚ի պատերազմ ելանել, և պատերազմ նոցա պատճառ բարեպաշտութեան լինէր։ Այս ոչ ՚ի տկարութենէ մարմնոյ, այլ ՚ի մեղաց յաղթեալք լինէին երբեք և թշնամիքն յաղթողք երևէին. և ոչ ՚ի զօրութէ և ՚ի քաջութենէ, այլ ՚ի վերին խնամոյն զօրացեալք լինէին երբեք և զօրանային ՚ի վերայ թշնամեացն և յաղթէին և յաղթահարէին. յանդիմանութիւն նոցա՝ և վարդապետութիւն առաքինութէ էր. և ոչ եթէ նոցա

միայն, այլ և որոց ընդ նոսա պատերազմէին։ Այս նոցին իսկ այս յայտնեալ էր, որ ոչ զինս ըստ բնութեան՝ ի հրեաստանի գտանէին ունել՝ ի պատերազմունս, այլ ուղղութիւն կենաց և վարուց պատերազմողացն։

Ոսոյն իսկ իմացեալ մադիանացիքն և՝ի միտ առեալ թէ անմարտնչելիք էին ազգքն այնոքիկ, և մեքենայս իսկ և սպառազինութիւնս անմեքենայիցս մեղք միայն էին՝ որ և կարող էր զնոսա սատակել, կուսանս զարդարէին գեղեցիկս և կացուցանէին առաջի դասուցն՝ ի պագչութիւն կոչել զզօրն, զի վասն պոռնկութեանն՝ ի բաց ունել՝ ՚ի զմարտակից լինելն փութայինն. որպէս լինէր իսկ և եղև։ Յորժամ անկանէին՝ ի մեղս, կապեալ ձեռօք լինէին ամենեքեան, և զորս զինք և վահանք, երիվարք և կառք և զօրք անչափ՝ ի պատերազմունս փրկել ոչ կարէին, զնոսա բնութիւն մեղացն կապեալ մատնեաց՝ ի ձեռս պատերազմողացն, զորս իժք իսկ ասէին. քանզի զնիզակս զվահանս և զնետս զամ առ ոտն հարկանէին. անձն անառակ և կերպարան գեղեցիկ զարհուռ զանոսիկ ձեռակապեր։ Ոմն այսորիկ խրատ տայր ի մաստուն և ասէ. "Արդեաք, մի հայիր՝ ի կին չար. զի մեղք կաթէ՝ ի շրթանց կնոջ պոռնկի, որ առ ժամանակ մի պարարէ զբիւն քո, բայց յետոյ դառնագոյն ևս գտցի քան զլեղի, և սրեալ առաւել քան զսուր երկայրի, և ոտք անզգամութեան իջուցանեն զմերձաւորս նորա մահու հանդերձ՝ ի գժոխս։" և եթէ "Ոչ է քան զդառնակ համբոյր պոռնկի. թոյնք իժից համբոյր նորա, և գանակ մահու բերան նորա։" Տեսանէս զի յերևելն վաղվաղակի կորուստնէ. վասն այսորիկ պարտ է՝ ի նմանէ փախստական լինել, զի անյայտ ունի զկործանումն և՝ի բացեայ է, և զմահ թագուցեալ ունի. մինչև ցանկասցի զբ փախաքմամբ և յաժառութիւն կենաց պոռնկել՝ ի նոսա, ապաւինել՝ ի նոսա հանդերձ գոյիւք. և ապա բիւր պատերազմունս և աղմուկ հաձողացն՝ ի յանձինս լցուցանեն, և հանապազ շարժէ նոցա պատերազմունս և հակառակութիւնս բանիւք և գործովք. և որպէս որք ընդ թշնամիս պատերազմեալք, այսպէս և սոքա զնոյն առնեն մինչև ամթի և աղքատութիւն հասցէ և արկանել՝ ի յետին չարիս։ Այս որպէս որսորդք ցանցս տարածանեն և զվայրի երէսն ակսանին՝ ի ներքս

արկանել մինչև սպանանիցեն զնոսա, սոյնպէս և կա-
նայք յորժամ Թևս զանառակուԹեանն զամենայն կողմն
տարածանեն, ապա աչօք և կերպարանօք և բանիւք ջա-
նան զցանկացողն արկանել ՚ի գուբ կորստեան և այն-
պէս կապեն զնոսա, և ոչ նախ Թողուն մինչև ծծեսցեն
զարիւն նոցա, և զկնի այսորիկ այսպն առնեն զնոցա ան-
մուԹիւնն, և ածեն ՚ի բազում ծաղը զնոսա։ Այս և
չէ իսկ ողորմելոյ արժանի այնպիսին, այլ ծաղը և այսպն
առնելոյ յորժամ քան զկին և զկին պոռնիկ անասնա-
բարոյ ոք լինիցի։ Ասա որում և իրատէ նոյն խմաստունն
և ասէ. "Աղբիւր ջուր ՚ի քոյոյ ամանոյ և ՚ի քոյոյ ջըր-
հորոյ աղբիւրաց,,. վասն արդարեւ օրինակարգ ամուս-
նուԹեանն ասէ զայս։ Ընդէր Թողուս, ասա ինձ, զօգ-
նական քո և դիմես ՚ի չարն. ընդէր դառնաս ՚ի կենցա-
ղոյ հաղորդակցի քո, և այնմ որ խորտակէ զկեանս քո՝
նմա սպասես. սա ինքն անդամ քո է և մարմին, և այն
սուր սրեալ։ Ալ ան որոյ սիրելիք, փախերուք ՚ի չնու-
Թենէ, որ ասա նախասինք է և անդ տանջանք։

Պիտի կարծիցէք ՚ի պատճառէս անկանել. այլ ոչ ՚ի
յայսմանէ լըեալ։ Այլ զի ոչ մեկին ձեզ ՚ի տոհմից ըն-
Թեռնուլ խորհիմք, այլ զի զոյիս ձեր իւրաքանչիւրոյդ
ուղղեսցուք յախտից. վասն որոյ ստէպ առնեմք զքննու-
Թիւն՝ ազգի ազգի զբանս կալմել ձեզ, քանզի ազգի
ազգի հիւանդու Թիւնք են յայսչափ ժողովուրդս. և ոչ
եԹէ միոյ վիրի բժշկուԹիւն առաջի կայ գնել միայն,
այլ բազում և զանազան և ազգի ազգի. վասն որոյ և
ըստ պէտս պէտսպէս են դեղք վարդապետուԹեան։ Այ-
կեսցուք արդեօք ուստի ելաք զայս ասել։

"Այս ասէ քահանայն, մատիցուք առ ՚ած։ Այս ե-
հարց Մաուղ զ՚ած. ինձո՞ւք զՀետ այլազգեացն, եԹէ
մանեսցե՞ս զնոսա ՚ի ձեռս մեր։ Այս ոչ արար նմա պա-
տասխանի տէր յաւուր յայնմիկ,,։ Տես զՀեզուԹիւնն
և զհանդարտուԹիւնն. ոչ ՚ի վերուստ կայծակունս ա-
ռաքեաց, ոչ զերկիր շարժեաց, այլ զոր սիրելիք սիրե-
լեաց առնեն յորժամ անարգին՝ զայս ծառային արար
տէրն. լռեաց միայն և լռուԹեամբն պատմեաց, ցուցա-
նելով նմա զամենայն բարկուԹիւնս։

"Համացեալ զայս Մաուղ և ասէ. իմո՞ւցէք այսր զա-
մենայն աղգս Իսրայէլի, գիտասցուք և տեսցուք եԹէ

վան այր եղեն մեղաւք այսոքիկ. զի կենդանի է տէր որ փրկեացն զԻսրայէլ, զի եթէ զՅովնաթանայ զորդւոյ իմոյ տացէ պատասխանի, մահու մեռցի,, : Տեսեր զաւրութիւն նորա. ետես զառաջինն երդմնազանցութիւնն և ոչ այնպէս զգաստանայր, այլ յաւել երկրորդ ի վերայ առաջնոյն : Եւ զգոյշ լեր չարագործութեանն սատանայի : Յորժամ իմացաւ եթէ զպատանին ի հարկէ ի մէջ ածին, տեսութիւն պատկերին վաղվաղակի ըզհայրն ի հեզութիւն ածէ, և գութն կարողանայ կալուղ առնել զսրտմտութիւն թագաւորին, երկրորդ երդմանն հարկ էած ի բնութիւն նորա և ի կրկին կապանս կալաւ զնա, և ոչ ետ թոյլ լինել տէր բնութեան նորա, այլ յամենայն կողմանց ուղղեաց զնա յանօրէնութիւնն յայն : Եւ նախ քան զերեւումն մեղուցելոյն արարեալ զդատաստանն, և հայրն եղև բռնաւոր, և նախ քան զքննումն զվհին դատապարտութեանն մատուցեալ :

Օ ինչ քան զայս լինիցի անասնաբարոյ :

Օ այս այժմ ասացեալ առաւել կապեաց զբռնաւորն, և առնեաքեան էին ահիւ և մեծաւ զողութեամբ. իսկ սատանայ ուրախանայր զի ի տագնապի կացոյց զամենեսեան : “ Եւ ոչ ոք էր, ասէ, որ տայր պատասխանի յամենայն ժողովրդենէն, և ասէ Սաւուղ, դուք լինջք ի ծառայութիւն, և ես և Յովնաթան որդի իմ լինիմք ի ծառայութիւն ,, : Եւ զոր ասէն այս ինչ է. ոչ յայլ ինչ փութայք, ասէ, բայց միայն մատնել զմեզ ի պատերազմունս, և ծառայս փոխանակ ազատութեան առնել, և զնոճ բարկացուցանել ի վերայ մեր առ ի չտալ ի ձեռն զպարտականն : Տես իսկ և այլ հակառակութիւն լեալ յերդմանէն. եթէ խորհէր զպատճառն գտանել, պարտ էր ոչ սպառնալ այսպիսի և ոչ երդմամբ սնդել զտանջանս և զմահ, որով անեղկիւղ լեալ դիւրաւ ի մէջ ածէին զպարտականն. ի սրտմտութենէ և ի բազում խռովութենէ և յառաջին անմտութենէն դարձեալ հակառակորդս խորհի առնել :

Եւ զինչ պիտոյ է բազում ինչ ասել. վիճակաւ ըզգործն հաստատէր, և անկան ի վիճակ նախ ինքն Սաւուղ և Յովնաթան : Եւ ասէ Սաւուղ. “ Ընկէք վիճակ ընդ իս և ընդ Յովնաթան որդի իմ: և արկին վիճակ և ել վիճակն Յովնաթանու : Եւ ասէ Սաւուղ

ցՅովհաննէս. զինչ արարեր պատմեա ինձ։ Պատմեաց նմա Յովհաննէս և ասէ. Ձաշակելով ձաշակեցի ծայրիւ գաւազանի իմոյ որ ՚ի ձեռին իմում սակաւ մեղր, և ահա մեռանիմ ես,,։ Օ՜վ ոք ոչ զգաստացուցանէր կամ զով ոք ոչ ՚ի գութ ածէր բանքս այս։ Իմն թէ յորքան միգի կայր Աւուղ, և աղիք նորա հնձէին և սիրտ նորա խորովէր գալարելով. բայց սակայն և ոչ այնպէս զգաստանայր. և զինչ ասէ. ,,Են և ես արասցե ինձ աճ և ես և ես յաւելցէ եթէ ոչ մեռանիցիս այսօր,,։ Ահա դարձեալ երրորդ երդումն, այլ հանդերձ ժամանակին անձկութեամբ. ոչ միայն ասացէ թէ մեռանիս, այլ այսօր, ասէ։ Այր իսկ սատանայ, նեղէր և պնդէր զհետ նորա, քարշէր զնա յանօրէնութիւն։ Ա՛ան որոյ ոչ ետ թոյլ և ոչ ետ պայման վճռին, զի մի՛ ի հանդերձեալ չարեացն լինիցի ուղղութիւն։

Եւ ասէ ժողովուրդն ցԱւուղ. ,,Են և ես արասցէ մեզ աճ և ես և ես յաւելցէ եթէ մահու մեռանիցի այսօր որ արար զփրկութիւն Իսրայէլի. կենդանի է տէր աճ եթէ անկցի ՚ի հերոյ գլխոյ նորա մազ մի յերկիր, զի ողորմութիւն արար տէր ՚ի ձեռն նորա յայսմ աւուր,,։ Ահա և ժողովուրդն երկրորդ անգամ երդուեալ, և ընդդէմ երդուեալ Թագաւորին։ Յիշեցէք արդեօք զառակն իմ զգուշդն զոր ՚ի տղայոցն ձգեալ և ընդ որմի հարեալ պատառեցաւ։ Երդուաւ Աւուղ ոչ միայն մի կամ երկուս, այլ բազում անգամ. ընդդէմ երդուաւ ժողովուրդն և կեցոյց։ Հարկ է այսուհետև պատառել երդմանն. զի ամենեցուն արդարանալ յերդումն անհնարին է ամենևին։

Եւ մի դու ինձ զանցս իրացն քննեսցես, այլ իմա թէ որչափ չարիս ծնաւ. և զիարդ զԲեսողոմայ չարիսն և աստ կազմեաց սատանայ։ Օ՜ի թէ կամեցեալ էր Թագաւորն պինդ կալ և ՚ի կատար հանել զերդումնն, ամենայն ժողովուրդն հակառակեալ էին և բռնութիւնք էին լեալ չարաչար. զարձեալ թէ կամեցեալ էր որդին խնայել յիւր փրկութէն և եդեալ զանձն ընդ զօրավարացն, անդէն հայրասպան էր լեալ։ Ցեսանէս որքան բռնութիւնք և որդեսպանութիւնք և հայրասպանութիւն և պատերազմ ծանօթական և մարտ և սպանութիւն և արիւն և բիւրք մեռեալ էին ՚ի միոյ երդմանէ։

Այս եթէ հանդիպեալ էր լինել պատերազմ, և Սաուղ Թերևս մեռեալ էր և Յովնաթան, և բազումք ի զօրացն կատարեալք էին, և ոչ մի ոք ի նոցանէ արդարացեալ էին երդմամբ։ Այս մի դու զայս տեսանես որ ոչ եղև, այլ այնմ զգոյշ լեր որ իրացն քննութիւն զայս հարկէր լինել. բայց Ժողովուրդն արդել։

Ներ այսուհետև Թուեսցուք զեղեալ երդմնազանցութիւնսն։ Առանց զերդմամբն նախ Սաուղ յորդոյ իւրոյ. երկրորդ և երրորդ դարձեալ Սաուղ վասն որդւոյն սպանութեանն. իսկ Ժողովուրդն կամեցաւ երդմնապահ լինել. բայց եթէ ոք և զայս քննեսցէ ստուգութեամբ, և սոքա դարձեալ յերդմնազանցութեան պարտս պարտական եղեն ամենեքեան։ Առանձին զհայրն որդւոյն երդմնազանց արարին ի հարկէ, զի ոչ ետուն հօրն զորդին։ Տեսանես եթէ մի երդումն որչափ մարդիկ ած յերդմնազանցութիւն և կամաւ և ակամայ, կամ որչափ արար չար գործել և սպանութիւն։

Այս իսկ խոստացայ ի սկիզբն բանիս ցուցանել՝ թէ յինքեանէ երդումն տայ երդմնազանց լինել։ Այ և այլ ի տոհմն նախնեացն զոր ցուցանեմ բազում առաւելութեամբ զանցեալ. և ոչ մի կամ երկուս կամ երիս, ուրում այլ պատմութիւն է ասելոյ, և ցուցանել յայնմանէ չարաչար քան զայս և առաւել պատիժս գործել մի երդումն։ Այ քաղաքի հրկիզութիւն և բարբարոսաց գալուստ, կանանց և որդւոց գերութիւն, բիւրս բիւրուց կոտորածս, սրբութեանցն պղծութիւն և այլ բիւրս դժուարութիւն, որ և զամենայն արար մի երդումն ի հրէաստան։ Այլ տեսանեմ ընդ յերկար ըզբանս հատուցանել. վասն որոյ աստ յանգեցից զպատմութիւնս ազգաց։

Այդ յիշեցէք զհետ Յովհաննու գլխոյն զՅովնաթանու սպանութիւնն և զամենայն ժողովրդեանն զծախսումն զոր ոչ ետ լինել ած, սակայն ի հարկէ ածան յերդմնէնս. զայս ասել ընդ միմեանս աղաչեմ, ի տան և ի փողոց, առ կանայս և առ դրացիս և առ ամենայն մարդիկ բազում փոյթ առնել այսմ գործոյ. և մի բաւական պատասխանի կարծել՝ եթէ ի սովորութենի մատնեցայ և ոչ կարեմ փոխել։ Սնոտի բարուքք են այս և պատճառք, և ոչ սովորութիւնք, այլ դանդաղումն ո-

գուց ածէ յանօրէնութիւնս. ՚ի յայս գալոյ մեզ հաւան առնել փորձիմ։

Ա՚ղաչեմ ՚ի բաղանիս մտանել Թագաւորն և ոչ ետ հրաման լուանալոյ ուրուք անդ. ոչ ոք կարէ անցանել զօրէնսն, և ոչ պատճառել զեղեալն կամ սովորութիս յիշել. այլ և ոքք ՚ի հիւանդութեան էն բազում արք և կանայք և ծերք և մանկունք, և որք յերկունս էն վտանգեալ բազում կանայք և ըստ Տարկին խնդրէն զայս դեղ, սակայն համբերեն կամայ և ակամայ հրամանացն. ոչ տկարութիւն մարմնոյ լինիցի պատճառ, ոչ բռնայեալ սովորութիւնք և ոչ այլ ինչ ՚ի միասակաց տանջէ զնոսա. այլ համբերեն այսմ խրատու, զի ակն ունին յանցանել զպատուիրանսն այլ մեծագոյն չարեաց, և հանապազ աղօթեն մինչև ՚ի բաց տանել զթագաւորական բարկութիւնն։

Տեսանէս զի ուր երկիւղ է, դիւրաւ լուծանի սովորութիւնն, թէպէտ և յոյժ կարեօք իցէ և առաւել ՚ի Տարկաւորայն. զի և երբեմն ոչ լուանալ յոյժ է չար։ Ա՚հ և բիւրս իմաստասիրեմք, մարմնոյս քնութիւն յանդիմանի, իսկ հոգւոյն իմաստասիրութիւն յիւրմէ առողջութենէն գովի. իսկ չերդնուէն յոյժ դիւրագոյն է և ոչ մի միասս առնի քեզ ոչ մարմնոյ և ոչ հոգւոյ, նա և բազում ունի չահս և մեծ զգուշութիւն, առաւել օգուտս։ Օ՚խ՚րդ ոչ է այս ապիրատութիւն, Թագաւորի հնազանդել և կամ բերել դժուարութեան, իսկ ՚ի՞ օրինադրել որ ոչ է չար և ոչ դժուարին՝ այլ թեթև և հեշտալի յոյժ, զայս արհամարհել և ծաղր առնել և զսովորութիւն պատճառել։

Ա՚ի աղաչեմ, մի այսչափ արհամարհեսցուք զիրկութիւնն մեր, այլ երկիցուք յի՞ր որպէս և երկնչիմք ՚ի մարդկանէ։ Վ՚ասեմք զի սոսկացայք ՚ի լսելն զայս. այլ արժան է սոսկալ զի ոչ այսչափ պահեմք զի՞ պատիւն. զթագաւորական օրէնս ստուգութեամբ պահեմք, և զի՞ծեղէնն օրէնս և որք յերկնից իջեալ՝ առ ոտն Տարկանեմք և արհամարհեմք, և առանց գործոյ կարծեմք թէ բանք միայն իցէ։ Ա՚ղգ վասն այսր միոյ փութոյ զի՞ր պատասխանի ունիցիք կամ զի՞ր ներել թագութեան, զի զնի այսչափ խրատուց՚ի նմին ճնայք. քանզի ՚ի սկիզբն պատուհասիս զայս խրատ սկսաք, և այժմ կամիմ լուծանել։

Ա՛ղք և ոչ մի պատուիրան ուղղեցաք, զի՞արդ ապա խնդրեմք ՚ի նեղութենէս որ կալաւ զմեզ՝ փոխել. յորժամ մի պատուիրան ոչ կարացաք կատարել, զի՞արդ ապա ակն ունիմք քաղցր միխիթարութեան, և զի՞արդ ապօրէնեմք և կամ ո՞ր լեզուաւ զնճշ աղաչեալ կոչեմք։ Ապակ եթէ կատարեմք զօրէնս, ըստ փափագանաց մերոց բաղում պտուղ բերի, և թագաւորն հաշտ լինի քաղաքիս մերում. ապա թէ ինամք յանօրէնութիւնս, ամենի մեզ է և նախատինս յամենայնի. ա՛յ լուծեալ ՚ի մէնջ զվտանգս, և մեք ինամք ՚ի նոյն դանդաղմանս։ Ով յօգուտ լինչ էր, կարող էի կապել զանձինս բազում երդմնաւորաց, և յերեսս նոցա ածել դանս և վէրս զօր հանապազօր առնուն յերդմանէ, և ոչ կարօտաք խրատուց կամ խորհրդածութեան...։ Ապակ եթէ ոչ էի կարող յերեսս, կարող եմ յոգիս ածել զդանն, և ցուցանէի զնա փտեալ և ապականեալ. և որպէս ասի "Ծառայ փորձ և կիրթ ՚ի չարիս ՚ի վերաւորելոյ ոչ դադարէ, այնպէս և երդմնաւորն որ հանապազ երդնու և անուանէ զնոյն՝ ՚ի մեղաց ոչ անպարտ լինի.,։ Ա՛յնհնար, անհնար իսկ է՝ բերան որ խորհելով երդնու, թէ ոչ ստէպ երդմնաղանց լինիցի։

Ա՛ման որոյ աղաչեմ զամենեսեան զկործանման իրս զայս՝ և զչար սովորութիւնս ՚ի բաց դնել յանձանց ձերոց, և այլ աքանչելի պատկ աստէն զգեցցուք։ Ո՞ր պէս վասն քաղաքիս մերոյ ամենայն ուրեք երգեն, որ և նախ քան զամենայն տիեզերս քրիստոնեայ անուն զգեցաւ, այսպէս և ըստ այմ տուք ասել ամենեցուն՝ եթէ Ա՛նտիոք քաղաք ՚ի վեր քան զամենայն տիեզերս զսովորութիւն երդմանն հալածեաց ՚ի սահմանաց իւրոց։ Ա՛յս եթէ այս լինիցի, ոչ եթէ սա միայն պատկի, այլ և զայլս ածէ ՚ի նախանձս յայս։ Ա՛յդ որպէս քրիստոնեայ անուանս իւրեւ յաղթիւրէ միոյ աստի սկսեալ կալաւ զամենայն տիեզերս, այսպէս և այսր պատուիրանի ուղղութիւն՝ զարմանն և զպատճառն աստի առեալ զամենայն մարդիկ որ բնակեալ են յերկրի ձեզ աշակերտս գործեսցէ, ուստի երկրորդ և երրորդ ձեզ բարեաց վարձս հատուսցի վասն ձերոյ ուղղութեան և վասն այլոց վարդապետութեան։ Ա՛յս լուսապայծառ թագ ձեզ լինիցի. սա մեծ քաղաքաց առնէ զքաղաքս մեր ոչ միայն յերկ-

բի, այլ և յերկինս. սա յայնմ աւուր կացցէ ընդ մեզ և ձերում արդարութեանդ լինիցի պատկ. որում լեցի ամենեցուն մեզ հանդիպիլ ընծայօք և մարդասիրու-թեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՁԱՒՈՒ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Դարձեալ խօսք վասն քաղաքին իրաց. և թէ բարի է երկիւղն և ողբումն քան զծաղր. և՛ի բանն որ ասէ. «Ծանիր եթէ՛ ի մէջ որոգայթի քո՛ կաս»։ և թէ քան զպատանել չար է յերդումն ածել զոք։

Պարտ է այսօր որպէս յառաջնումն շաբաթուն վասն պահոց սկսանել զբանս. և մի՛ ոք առանց ժամանակի կարծեսցէ զասացեալս։ Քանզի յաւուրս պահոց ոչ է սիրոյ բազում խրատուց և խորհրդածութեան, որպէս՛ի հասեալ աւուրս, զի աստ և որ յոյժ անկեալ են յաբուցանել՛ի ջանս պահոց։ Քաղցմբ՛ի մարդկանէ յորժամ հանդերձեալ են մտանել՛ի պահս, որպէս թէ հեռի աւուրց կարող է որովայնն բառնալ կերակուր՝ այնպէս բազմապատկեալ լնուն զնա, և այսպէս յաւելմամբ կերակրոց և արբեցութեանց յառաջ դնելով՝ անօգուտ գործեն զմուտն՛ի պահս։ Իսկ յետանէն կանխեն որպէս թէ՛ի յերկար սովոյ և՛ի չարաչար կապանաց ազատեցան՛ի պահոցն՝ հանդերձ անփորձ բարուց՛ի սեղանոյ՛ի սեղանս ընթանան, և այնպէս փութան՝ զի զոր՛ի պահոցն եղև նոցա օգուտ, աւելի և անչափ կերակրոցն՛ի բաց հանեն յանձանց և այսպէս անչահ մնան, հարկ եր յայնժամ և այժմ յաղագս[1] ժուժկալութեան սկսանել՛ի բանս։

Քայց սակայն ոչ յառաջն ասացաք զայսպիսի իրաց և ոչ այժմ ասեմք. քանզի կալով ձեր յերկիւղ ցնորբիցս, բաւական է ամենայն անձին փոխանակ բազում խրատուց և խորհրդածութեան։ Այլ եթէ այսպէս թերշուառական և տառապեալ հոգւով, որ յայսչափ ծուլու-

1 Պակասէր յօրինակին յաղագս ծառայութեան. յաւելաւ՛ի յունէն։

ալբեալ է և յանխմայութիւն փոխեալ. ուր ամենայն քաղաքս շարժեալ է և նաւակոծութեան սպառնալիք, և ոչ աքնի և հակէ, և՝ի վեր քան զամենայն խրատ և զկորհրդածութիւն ելանէ ստուգապէս յայսմ տագնապի ուղղեալ։ Վասնզի բանք մեր ոչ այնպէս զօրեն գործել որպէս գործէ երկիւղն. և զայս այժմ՝ի հաստեալ իրացս կարեմք ցուցանել։

Որչափ յառաջագոյն ծախեցաք բանս խրատու և խորհրդոյ ծուլացելոցն Թողուլ զտեսիլս և զոր անդ անառակութիւնք, և ոչ ընդունէին. այլ յայսմ աւուր յանդիմանութիւնս կաքաւչայ ընծանային տեսանել, և՝ի ժողովս անառանական փոխադրէին զլուծն եկեղեցւոյ՝ և զոր աստ պաշտամունք և սաղմոսք՝ փոխանակ ունէին զչար աղաղակն, և զայն բերելով բազում ժուժկալութեամբ։ Իսկ այժմ մեք լռեալ կամք ըստ այնմիկ և ոչ շարժիմք ինչ. բայց ինքնակամ զտեղի կաքաւելոյն խոյին և զկառարշաւան Թողին ունայն յընծայից։ Այլ քան զայս բազումք՝ի մէնջ առնոսա ընծանային. իսկ այժմ ամենեքեան յայնմ փութոյ յեկեղեցիս ընծանան և օրհնաբանեն զնա մեզ։ Տեսանե՞ս Թէ որչափ շահ եղև երկիւղին։

Այլ եթէ ոչ էր բարի երկիւղն, ոչ էին հալք որդւոց օրինօք կարգեալ, և ոչ օրէնսդիրք՝ի վերայ քաղաքաց իշխանս կացուցեալ։ Զինչ դժուարին քան զգեհենին իցէ. բայց ո՞չ քան զսա լաւ և պատուական երկիւղ. վասն զի գեհենին երկիւղն մատուցանէ մեզ զպակաս արքայութեանն։ Զի ուր երկիւղ իցէ, ոչ է անդ նախանձ. ուր երկիւղ իցէ, սէր ընչից ոչ նեղէ. ուր երկիւղ իցէ, ոխակալութիւն ոչ դատապարտէ, որ չար է քան զամենայն մեղս. ուր երկիւղ իցէ, դիւրաբաժանութիւն շինչանի. ուր երկիւղ իցէ, ոչ է անդ բամբասանք որ հաւասար է մեղացն. ուր երկիւղ իցէ, զչար խորհուրդս և զցանկութիս ցամաքեցուցանէ։ Այլ զինչ ասացից, զի որպէս տուն ուր բազում զինուորք սպառազինեալ հանապազ տքնին, ոչ գողք, ոչ աւազակք և ոչ այլ յայսպիսեաց չարագործաց համարձակին մերձ լինել, այսպէս եթէ երկիւղ ուներ զանձինս մեր, ոչ անփըրկելի ախտք դիւրաբաժան պատեին զմեզ, այլ զամենայն չարութիւն հալածեր և փախուցաներ բռնութիւն երկիւղին։

Այլ ոչ եթէ միայն զայսոսիկ պտղաբերեր ՚ի մէջ երկիւղն զառ ՚ի չարեացն փախուստ, այլ բազում և առաւել քան զայսոսիկ յաւելու ՚ի մէջ առաքինութիւն։ Որ երկիւղ էցէ, անդ փոյթ ողորմութեան, կարգ աղօթից, ջերմ պատասուք և հառաչանք, ունելով զըզջումն բազում յոյժ։ Իսկ այսպէս կեալ մեր հանապազ երկիւղիւ, մեզք ՚ի մէնջ անհետ լինելին և առաքինութիւն աճեր զուարճանայր ՚ի բնութիւնս մեր։ Եւ ան այսորիկ ոչք ոչ կեան երկիւղիւ, ապրել ՚ի մեղաց ՝անհնարին է. որպէս և ոչք երկիւղիւ կեան, ՚ի մեղս ան՝հնարին է անկանել։

Զի տխրեսցուք այսուհետև, սիրելիք, և մի ՚ի հասեալ տրտմութիւնս ՚ի վայր անկցուք, այլ աքանչասցուք ընդ բարի հնարս ՚ի մեծ իմաստութեանն։ Զի ըստ որում ակն ունէր սատանայ կործանել զքաղաքս մեր, զսա յայտնեալ ՚ի վեր յարոյց. քանզի սատանայ չնչեալ ՚ի մարդս անօրէնս չարաբարոյս, և անարգեցեալ զանգրիանոս թագաւորին, կամելով զքաղաքս զայս և զգետինս անգամ անյայտ առնել. իսկ ՚ած ՚ի ձեռն երկիւղի և ակնունելոյ սպառնալեաց՝ որ եղև առ ՚ի զգաստութիւն մեզ՝ առաւել կինքեաց զՙամ իրս տխրութեց. և զոր չարասերն սատանայ կազմել կամեցաւ, եղև հակառակն։ Իսկ քաղաքս մեր սրբի զօրհանապազ, և փողոցք և գաւիթք և ապարանք ՚ի պատնիկ և ՚ի զայթակղելի երկոց փոխեցան սրբեցան. զի ուր հայեսցի ոք՝ տեսանէ պաշտօն առ ՚ած և գոհաբանութիւն և արտասուք փոխանակ անառակ ծաղրոց, և բանք իմաստութեան փոխանակ բանից գարշելեաց. և եղև մի եկեղեցի ամենայն քաղաքս մեր. վաճառանոցք փակեցան և ամենեքեան այսր ժողովեցան, ամենաժողով բարեկենդանութեան լինելին յաղաչանս և ՚ի պաշտօնս, և զՙած համբուրէն միաձայն հանդերձ բազում յօժարութեամբ կուչեն յօգնականութիւն։ Զ՚ի երբեք զայս վերացուցանել կարողանայր, ո՛ր խրատաք, կամ ո՛ր խորհրդածութիւնք կամ երկարութիւն ժամանակի։

Եւ ան որոյ գոհասցուք զՙայ և մի դժուարասցուք. և զի բարիք է երկիւղ, յաստուածոցս յայտնի է։ Զ՚ուր և Սողոմոնի որ ըստ այսմ իմաստասիրել ասէ. Նա որ յամենայն վայելչութիւնս շրջէր, տես զինչ ասէ. «Յա-

լինք է երթալ ի տուն ողբոց սգոյ քան ի տունս արբեցողաց և ուրախութեան ծաղու ,, : Զինչ ասես պատասխանի ինձ. ուր ողբք և արտասուք և հառաչանք և երկունք տխրութեան այսչափ՝ առաւել պարտ է գընալ, եթէ ուր պարք և ձայնք ծաղու, փափկութիւն, առաւելեալ կերակուր և արբեցութիւն : Այո, ասէ : Այն որոյ արդեօք կամ ընդէր. զի անդ հարկ անզգայութեան է և աստ զգաստութիւն : Եթէ ոք ի չափաւորաց երթիցէ ի մեծատանց վաճառականի ուրախութիւնս, ոչ եթէ միով փափագանօք հայի ի տունն յայն, այլ նախ դժուարանայ հայելով ի կինն, դժուարաբար հաղորդի սեղանոյն, դժուարախնդութիւն երևի նմա որդւոցն և ծառայիցն և ամենեցուն որ ի տանն իցեն. զի ի յայլում մեծութենէ ստուգապէս իմասցի զիւր աղքատութիւն : Այլ ոչ եթէ այս միայն իցէ վտանգ, այլ և ցանկայ բազում անգամ այնմ որ կոչեացն զնա, և ամենևին ոչ ինչ առեալ բարութենէ այնպէս գնայ . . . :

Այսք որ ի տունս ողբոց երթիցէ, վաղվաղակի արտասուէ, թէ և թշնամի իցէ . . . ի միտ առնու թէ փոքր մի յետոյ և ինքն այսմ դիպեսցի և ամենեքեան որ ի մեծութեան իցեն, և թէ առժամանակեայ է անցաւորս ամենայն եթէ քաղցր իցէ և եթէ տրտմական. և այնպէս զտխրութիւն և զամենայն ցանկութենէ ի բաց դնելով և թեթև զհոգին՝ երթիցէ . . . : Այս զայս ամենայն իմաստնոյն իմացեալ ասաց զայսոսիկ, եթէ “ Լաւիւղ է երթալ ի տուն ողբոց քան ի տուն արբեցութեան ,, : Ընդ հոգ և վերք լինին, և աստ սթափանք և ուրախութիւնք. անդ արհամարհութիւն, և աստ երկիւղ, երկիւղ՝ որ զամենեսեան զմեզ ածէ յաւաքինութիւն : Այլ թէ ոչ էր բարիք երկիւղն, ոչ էր զբազում և վերկաւ բանսն ծախեալ Քրիստոս վասն հանդերձեալ տանջանացն ասելով և պատմելով : Երկիւղ ոչ այլ ինչ է, բայց միայն պարիսպ և հաստատութիւն և աշտարակ անպարտելի և բազում զգուշութիւն, վասն զի և դարանակալութիւնք բազումք են մեզ յամենայն կողմանց. որպէս և ինքն Սողոմոն դարձեալ խրատ տայ ասելով. “ Ամենից զի ի մէջ որոգայթից շրջիս ,, : Լաւ եթէ որչափ բարութեամբ լցեալ է բանս այս :

Վրեսցուք զայս այժմ ՚ի տախտակս մտաց մերոց, և միշտ զայս ընդ մեզ բերելով ոչ մեղանչեմք վաղվաղակի։ Ցեսցուք նախ զայս և ուսցուք զնոյն ամենայն ստուգութեամբ. ոչ ասաց եթէ՝ տես ՚ի մէջ որոգայթի չըրջիս, այլ իմացիր։ Ապա էր արդեօք. զի ծածուկ են ոչ որոգայթքն. այսպիսի՝ է որոգայթ, զի կործանումն յայտնապէս ոչ երևի և ոչ ճնասն, այլ յամենայն տեղւոջ թագուցեալ կայ. վասն որոյ ասէ եթէ իմացիր։

Պարտ է քեզ ստանալ բազում իմաստութիւն, ըստոյգ քննութեան. որպէս տղայք մանկունք ձագուց ՚ի յերկրի դնեն որոգայթ, նոյնպէս և սատանայ ՚ի կենցաղս մեր թագուցեալ է զչարիսն։ Ապա ասէ՝ իմացիր եթէ ՚ի մէջ որոգայթից չըջիս...։ Վասնզի և ՚ի տունս որոգայթ է և ՚ի սեղանս որոգայթ է և ՚ի ժողովուրդս և ՚ի ձանապարհս։ Բազում անգամ և ՚ի մէջ սիրելեաց ոք անպատրաստութեամբ համարձակի և ասէ ինչ բան զոր չէր պարտ ելանել ընդ բերան. և անտի մեծ վտանգ յարուցանէ, մինչև բոլորովին զնա տունն չըջնցէ։ Յայսմենայն կողմանց դիտեսցուք ամ հաւաստեօք զիրս զայս։

Ա. երբեք զի կին լինիցի որոգայթ, է զի որդիք, նա և սիրելիք իսկ և դրացիք։ Ա. վասն էր արդեօք այսչափ որոգայթք իցեն։ Օ. զի մի առ երկրաւ թռչելովք, այլ զվերինն խնդրեսցուք։ Օ. և զօրաւոր թռչունք մինչև զբարձրութիւն օդոյ հատուցանեն, ոչ իջանեն այր. նոյնպէս և դու մինչև ՚ի վեր հասցես, մի յորոգայթից, մի յայլմէ ինչ իրաց խոչընդոտիւք ծախիցիս։ Սէզ[1] է սատանայ, լեր դու եղէգն քան զնա բարձրագոյն. քանզի որ ՚ի բարձրագոյն վերանայ, ոչ երբեք աքանչանայ ընդ իրս կենցաղոյս։ Որպէս յորժամ ելանեմք ՚ի գլուխս լերանց՝ փոքր երևեսցի քաղաքս մեր և պարիսպ, իսկ մարդիկ միջեանց չափ երևեսցին, սոյնպէս յորժամ ՚ի բարձր իմացուածս և յիմաստութիւն ելանես, ոչ ինչ զքեզ երկրայինքս պակուցանեն. այլ ամենայնն նուաղ քեզ երևեսցին մեծութիւնք և փառք և զօրութիւնք և պատիւ և այլ ինչ յայսպիսեացս։ Յորժամ յերկինս հայիս, որպէս և Պաւղոս, նուաստ երևին ամենայնքս, զի նման և քան զմեռեալս անպէտ համարեալ էին ամենայն պայծառութիւն կենցաղոյս.

1 Զոյնն Հաւորս է սապտանայ, ըստ որում գան պէտք բարբառոյն։

վան որոյ գոչելով ասէր. "Աշխարհս ինձ ի խաչ ելեալ է և ես աշխարհի,, ըստ այսմ և զմեզ խրատելով ասէ. "Ով վերինն խորհեցարուք,, և Ով սիր ասես արդեօք վերին, ասա ինձ, ուր արեգակն իցէ և լուսին. ոչ, ասէ: Այլ զսիր, ուր հրեշտակք և հրեշտակապետք, ուր քերովբէքն և սերովբէքն. ոչ, ասէ: Այլ զիաւրդ. ուր ես ասացիս. "Ուր Աստն է ընդ աջմէ հօր նստեալ,,:

Հաւանեսցուք այսուհետև զայն խորհել հանապազ. որպէս Ճնճղուկ յորժամ անկանիցի յորոգայթ՝ ոչ ինչ օգտէ, այլ տարապարտ և ունայն տարածէ զթևս իւր, այսպէս և դու յորժամ ըմբռնեսցիս ի չար ցանկութիւնս և կապեսցիս խորհրդովք քո, ոչ ինչ օգտեն. այլ որչափ և տաղտկալով խայտաս, կապեալ կաս: Ասն այսորիկ են թևք Ճնճղկայ, զի փախչիցին յորոգայթէ. ըստ այսմ են մարդկան խորհուրդք, զի փախիցեն ի մեղաց: Ով ինչ քաւութիւն կամ պատասխանի ունիցիմք յորժամ քան զձագս և զանասունս անխնայ իցեմք: Յորժամ Ճնճղուկ մի անկանիցի յորոգայթ, և անաւ զերծեալ՝ այլ ոչ անկանի, և եղջերու անկեալ ի վարմն և խզեալ, դժուարաւ անկանի այլ. կանխաւ իւրաքանչիւր փորձութիւն վարդապետ զգուշութեան լինիցի: Խակ մեք բազում անգամ ի սոյն անկեալ, և ոչ անսանոց հաւատարիմք նախխմացութեան և հոգալոյ՝ որ քանաւորքս եմք: Վանիցս անգամ տեսեալ կիմ՝ բիւրս դիպաք նեղութեան. զի յորժամ զցանկութիւն ոք առեալ հեռասցի ի նմանէ, բազում աւուրս երկնէ զերծանել, այլ սակայն ոչ զգաստանայ. յորժամ բուռն ապաշխարութեամբ բժշկեցաւ ի վիրացն յայնց, դարձեալ անկանի ի վտանգն ուստի ազատեցաւն. և դոյզն տեսութեամբ միշտ ընդերկարելով ինամբ ի նեղուէս:

Այլ եթէ ստէպ ուսանիմք զասացեալ բանս, զամենայն վտանգս ի բաց դնեմք: Աղօգայթ մեծ է գեղ կնոջ. մանաւանդ ոչ եթէ գեղեցկութիւնն, այլ անարգել տեսութիւնն: Ի զիրս ինչ վատթարեսցուք, այլ զմեզ և զդանդաղկոտ ոգիս մեր. մի ասասցուք եթէ լաւ էր եթէ ոչ էր կին, այլ լաւ էր եթէ ոչ էր շնութիւն. մի ասասցուք եթէ ընդէր է գեղեցկութիւն, այլ ասասցուք մի իցէ պոռնկութիւն. մի ասասցուք ընդէր է անյագ պոռնիկն, այլ ասասցուք թէ մի իցէ աւե-

լն կերակուր. զի ոչ եթէ որովայնն առնէ զաւելն կերակուրն, այլ հեշտասիրութիւնն մեր։ Որ ասիցէք եթէ վասն կերակրոյ և ըմպելեացս լինին ամենայն չարիք. ոչ եթէ վասն այսր, այլ վասն ծուլութեան և անյագութեան մերոյ։ Աչ եկեր և ոչ հարբ սատանայ, և անկաւ յերկնից. եկեր և հարբ Պաւղոս, և ել յերկինս։ Արդեաւք ըստ, ընդէ՞ր է աղքատութիւն, ասեն. ըմբերանեսցուք զնոսա որք յայսպիսիս համարձակին. հայհոյութիւն է որք ասեն զայսպիսի բանս գայթակղութեան։ Այսացուք և մեք առ նոսա՝ թէ մի՝ որ իցէ նեղասիրտ, այն իսկ է չար, այլ աղքատութիւն բիւր բարեաց պատճառ է մեզ՝ ի կենցաղումս, նա և առանց աղքատութեան մեծութիւնն անարգ է։

Որ այսուհետև զայն և մի զայս վատթարեսցուք. աղքատութիւն և մեծութիւն զկեն է մեզ առ՝ ի յառաքինութիւն, յիւրաքանչիւրոցն պատուղ կենաց բերելով եթէ կամիցիմք։ Այլ զոր օրինակ արի և քաջ զինուոր զմի զէն և առցէ՝ զիւր առաքինութիւնն յայտնէ, այսպէս իսկ անարին և վատթարն յիւրաքանչիւրոցն գայթակղի։ Այլ զի ծանիցես թէ այս ճշմարիտ է, յիշեա ինձ աստանօր և զՅոբ որ՝ ի միասին մեծատունէր և աղքատ եղև, և ըստ միմեանս ձեռնարկեալ սպառազէն երևեցաւ և յաղթող՝ բուռն հարեալ զերկոցունցն։ Յորժամ մեծատունն էր՝ ասէր. “Ոուռն իմ բաց էր ամենայն եկելոց,,. իսկ յորժամ աղքատ եղև՝ ասէ. “Տէր ետ և տէր էառ, եղիցի անուն տեառն օրհնեալ,,։ Յորժամ մեծատուն էր, բազում էր օտարասիրութիւնն. իսկ յորժամ աղքատացաւ, բազում էր համբերութիւնն։ Այլ դու այժմ մեծատուն ես, ցոյց բազում ողորմութիւն. եղեր աղքատ, ցոյց ներողութիւն և համբերութիւն. ոչ մեծութիւն չար է և ոչ աղքատութիւն, բայց միայն կամքն և բարք մարդոյն ըստ իւրաքանչիւրոցն լինել և առնել այսպէս։

Խրատեսցուք այսուհետև զանձինս մեր, և մի զայսպիսի իրս քննեսցուք և մի զգործս ՚այ, այլ զչար բարս մարդկան այսպէս արասցուք և զնեղասրտութիւն։ Աչ մեծութիւն օգտել կարէ մեծամտին, և ոչ աղքատութիւն մեղանչել ինչ երբեք։ Խմասցուք արդեօք զամենայն ողբոգալս և հեռի ընթասցուք յայնցանէ. խմասցուք

զՄեծութիւն անկմանն, և մի լիցուք մերձ։ Այլեայլ մեզ այս պատրաստութիւն մեծ՝ մի միայն ի մեզաց փախչել, այլ և յայլոց բազմաց յոլոց կարծեմք եթէ զմեզ ի մեղս արկանեն։ Արդարեւ ինչ ասեմ զծաղուէ, և զոր ասենն՝ ոչ կարծեմք եթէ մեղք իցէ. և զի մեղք է, այս խոստովանեալ և յայտնի է. քննեսցուք։ Ասացեալ է՝ գամ ի ծաղուէ ծնանին բանք գարշելիք, և ի գարշ բանից գործ աղտեղի. բազում անգամ ի ծաղրական բանից բամբասանք և անարգանք, և ի բամբասանաց և յանարգանաց խոցք և վէրք, և յայնցանէ սպանութիւնք։ Այեթէ հոգաս վասն անձին քո և բարիոք խորհիս, ոչ եթէ զգարշելի բանս միայն և զգործս աղտեղիս, զխօս և զվէրս և զսպանութիւն ի բաց հանես, այլ և զանառակ ծաղր և զոր անտի դատարկ և անպիտան բխումն բանից. քանզի այսչափ չարեաց արմատ և ընկիզուն է, վասն որոյ Պաւղոս ասէ. "Զմենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի ելցէ,,։ Այսպա եթէ զայս յանձին մեր փորձ կարծեսցուք, մեծամեծ չարեաց լինի մեզ պատճառ։

Դարձեալ փափկանալն եթէ պարտաւորութիւն է՝ յայտնապէս ոչ գիտեն, բայց մեծապէս ծնանի չարիս, արբեցութիւն, հարկանող, ագահութիւն, զրկանք, ապտակ, ծախս բազմակատարս, և սպասաւորս որ անդուլ սպասաւորեն. որոց գոյքն ոչ հերիք է, հարկ է բազում անգամ զայլում յափշտակել և ագահել և հարկս հարկել։ Այսպա եթէ փախչեցիս ի փափկութենէ և յագահութենէ և յարբեցութենէ, զբիւր չարեաց պատճառս խլեցեր. ի քէն ի բաց հատ զամենայն արմատս չարեաց։

Իսկ ի տեսիլս կանխել, երիվարս ի միասին տեսանել, ոչ կարծեն թէ յանցանք իցեն. բայց վն բիւր չարիս բերէ կենաց մերոց, ի բազմաց իրաց յայտնի է։ Վասնզի որ ի տեսիլսն սովորի, անտի պոռնկութիւնք, շնութիւնք, անարգել անառակութիւնք և ամենայն պագշտութիւն ծնանի. իսկ որ ի տեսութիւն ի խաղս կառաց և երիվարաց ելանիցէ, անտի վէճ, բամբասանք, խօսուածս գանից և անարգանս ծնանի...։

Ի այսուհետև ի մեզաց միայն փախչիցիմք, այլ զոր կարծիցեմք թէ անյայտ իցէ, առ փոքր մի զմեզ ի յանցանս յայս կարծանիցէ։ Որ ի վախից տեղիս ընթանայ,

թէ և ոչ է անկեալ, զողայ և յայնմ զողալոյ ահաբեկեալ անկանի. նոյնպէս և որ ոչ փախչի՝ի մեղաց, այլ մնա ընթանայ երկիւղիւ, հարկ է անկանել: Յայսմանէ տեսցես որ զօտար գեղեցկութիւնն զննեսցէ, թէ և ոչ ընայ՝ սակայն ցանկացաւ, և եղև ընացող ըստ հրամանին ՅՍ, ապա և յայնմ ցանկութենէ և յայսմ փորձութենէ՝ի մեղս բերի:

Յորհնեա զգաստանալ. մի միայն՝ի ննութենէ փախչիցես, այլ առաւել փախիր յանարգել տեսութենէ: Կամիս հեռանալ՝ի գարշելի բանից. մի միայն՝ի բանիցն, այլ և յանառակ ծաղուէ փախիր և յամենայն ցանկութենէ: Սիրես հեռի կալ՝ի սպանութենէ. փախիր՝ի բամբասանաց: Կնտրես՝ի բաց կալ յարբեցութենէ. հատ՝ի քէն զփափկութիւն բազմակատար սեղանոյ, և՝ի խորոց յարմատոյ խլեցեր զչարիսն մեծ որոգայթից: Կնառակ լեզուի բազում խնդրին կապանք. վասն որոյ ասէ սմա. "Կրոգայթ զօրաւոր առն շրթունք իւր,,:

Կախ քան զայլ ամենայն անդամս զսա կապեսցուք. զբամբասանս, զանարգանս, զբանս գարշելիս, զդպրութիւն և զանգոստել հեռի մերժեսցուք՝ի բերանոյ մերոյ, ընդ նոսին և զերգման չար սովորութիւն: Կարաձեալ յայսր պատուիրանի խրատ ածէ զմեզ բանն, զոր երեկ կարգեցաք սիրոյ ձերում, որ ոչ այլ վասն այսր պատուիրանի պիտոյ էր զոր կանխաւ զամենայն աւուրս բովանդակեցաք: Կայլ զինչ արարից. մինչև տեսից զսա ուղևորեալ, ոչ խափանիմ՝ի բաց կալ՝ի խրատուէս....

Կուսիք զմարգարէին որ ասաց այսօր վասն երգման. "Կե դարձեալ ամբարձի զաչս իմ և տեսի և ահա գեղանդի թռուցեալ. և ասէ ցիս՝ զինչ տեսանես. և ասեմ. գերանդի թռուցեալ տեսանեմ ես քսան կանգուն երկայնութիւնն և տասն կանգուն լայնութիւնն: Կե ասէ ցիս. այդ են անէծք որ ելանեն՝ի վերայ ամենայն երկրի, զի ամենայն վրէժ մահու չափ՝ի դմանէ խնդրեսցի. և հանից զդա՝ ասէ տէր ամենակալ, և մտցէ՝ի տուն գողոյ, և որ երդնուցու սուտ յանուն իմ՝ի մէջ տանն նորա, և վախճանեսցէ զնա և զփայտ նորա և զքարինս նորա,,: Զինչ իցեն ասացեալքս, և վասն էր արդեօք՝ի կարգ մանգաղի ընդ երդնահարաց եր-

թայ։ Վանդի զտանջանան ցուցանէ, և մանգաղ Թառուցեալ՝ այսու յայտ առնէ զանձողոպրելն դատաստանն և զանեղանելի տանջանան։ Տեսանես սուր Թառուցեալ յորմէ ով կարիցէ փախչել. մանգաղ իսկ որ՝ ի վերայ պատոյի անկանի և լինիցի փոխանակ վիճակի լինել, ոչ ոք իցէ որ փախչի. իսկ յորժամ Թևս ունիցի, որ յոյս փրկութեան ապա կայցէ։

Վասն էր արդեօք զքարինս և զփայտս հատանէ զերդ-ծողայ. զի քան զայլ չարչարանսն զգաստութիւն բեր։ Օ՞ի ամենայն որ երդուաւն, ՚ի հարկէ մեռանի և ծածկէ զնա երկիր. բայց զտունն քակել և ՚ի հող իջուցանել՝ որ մերձենան և տեսանեն, խրատին տեսութեամբն և ոչ համարձակին այնպէս։ Զերդ զի մի ոք չարչարեսցի այսպէս, և դատախազ լինիցի հանապազ զորդ մեղքն վախճանելոյն, այսու օրինակաւ ահաբեկէ զամենեսեան։ Օ՞ի ոչ այսպէս հարկանէ սուր որպէս քնութիւն երդմանն. և ոչ այսպէս սպանանէ դանակ, որպէս հատանէ երդումնն։ Զմենայն ոք որ երդնու, թէ և ակն ունիցի ապրել, սակայն մեռեալ է և զվերս երկայրաւսուր հատմանն ընկալեալ է յոգին։ Զոր որպէս մահապարտ ոք որ առնու զվճիռ մահու, նախ քան զելանելն ՚ի քաղաքէն և գալ ՚ի խորխորատս՝ Թէ և զբազում ժողովս տեսանէ ՚ի կանգուն և զինքն ընդ նոսա՝ սակայն մեռանի յորժամ ելանէ ընդ դուռն դատաւորին, սոյնպէս որ երդնու։

Օ՞յս խորհեսցուք հանապազ և մի յերդումն ածցուք զեղբարս մեր։ Օ՞րինչ առնես, ով մարդ, ՚ի սեզաՓնն սուրբ երդմնեցուցանես. ուր Քրիստոսն զենեալ և եղեալ կայ, դու աՓնդ զենուս զեղբայրն քո։ Զերդ աւազակքն ՚ի վերայ Յանապարհայ սպանանէն, դու առաջի մՓրն զորդին սպանանես. զի և քան զկայքն վատԹարադոյն գործես սպանումՓ։ Կա զեղբայր իւր սպան յանապատի, և մահն էր անցաւոր մահս. իսկ դու սպանանես զեղբայր քո ՚ի մէջ եկեղեցւոյն, և զհանդերձեալ անմահ մահն։ ՄիԹէ վասն այսորիկ եղև եկեղեցի զի երդնուցումք, ոմն անդր, այլ եղև զի աղօԹեսցուք. միԹէ վասն այսորիկ եղև սեղան զի երդմնեցուսցուք, այլ զի զյանցանս մեր լուծցուք և ոչ ՚ի նմին կապեսցուք։

Դու իսկ թէ և ոչ զամենայն իմաստիս, զի՛րս զայս զոր ածես առ՛ի յերդումն տալ՝ զաւետարանն սուրբ զոր՝ի վերայ ձեռաց ունիս խորհրդականք՝ անդ հրամայես երդնուլ, բայց զնա և լուիցես թէ զինչ վասն երդմանն Քրիստոս ասէ անդ, և յայնմանէ սոսկա և՛ի բաց կաց։ Օ՛ինչ ասէ վասն երդման անդ. «Ես իսկ ասեմ ձեզ, ամենևին մի երդնուցուք»։ Ընդ դու զայծեղէն օրէնսն որ արգել զերդումն, զնոյն երդնումն առնես։ Ո՛վ անարգանաց, ո՛վ անօրէնութեանս. զայնպիսի իրս առնես, որպէս ոք զօրէնսդիր և զարգելոյ երդմանն սպանանել, և զնոյն մարտակից առնէ յայլոց սպանութիւն։

Ո՛չ այսպէս նեղլիմ և արտասուեմ յորժամ լսեմ զանց սպանումն՛ի Հանապարհս, որպէս նեղլիմ և արտասուեմ և սոսկամ յորժամ տեսանեմ զոք մերձ՛ի սեղանն գոլով և զձեռն դնելով և յաւետարանն մերձենալ և երդնուլ։ Ո՛ման ընչից զայծ արհամարհես, ասա ինձ, և զհոգիդ քո սպանանես. և զի՞նչ այնչափ շահիս որչափ կորուսանես նախ զոգի քո և ապա զընկերդ քո։ Եթէ հաւատաս զի Հնարաւոր է այլն, մի ածեր զնա՛ի նեղութիւն երդման. իսկ եթէ իմանաս զի սուտ իցէ, մի հարկեր զնա երդմնազանց լինել։ Ա՛յլ զի հաւատացուսցէ, ասէ։ Յորժամ ոչ յերդումն ածես, յայնժամ բաւական ունիս զհաւատալն։ Ո՛վ այսմ ոչ լուիցես, յորժամ գնաս յեկեղեցին տանջես ստէպ զմիտս քո զայս խորհելով՝ միթէ՛ի նանիր ածի յերդումն, միթէ երդմնազանց եղև, միթէ ես եղէ պատճառ մեղացն։ Իսկ եթէ ոչ տայցես երդնուլ, յորժամ գնաս յեկեղեցւոյն՝ բազում մխիթարութիւն ընդունիս. զոհանամ զքո՛յ, ասես. օրհնեալ է ած, զի ըմբռնեցի զիս ինքն և ոչ երդմնեցուցի՛ի նանիր և տարապարտուց։

Կորեաւ ինչքն. զայս դիր մանաւանդ քեզ հաւատալ մի զանցանել զօրէնն, և մի հարկեր զայլ ոք առնել զայս։ Իսա թէ վասն այր ոչ երդմնեցուցեր, և բաւական է քեզ այս՛ի մխիթարութիւն։ Ի երբեք և վէմ լինիս, բազում անգամ անարգիմք և բերեմք քաջութիւն, և ընդ անարգողն ասիցեմք. զի՞նչ առնեմ քեզ, այս աշխատն առաջնորդ սատեաց ինձ և նա կալաւ զձեռս իմ. և բաւական լինի մեզ այս՛ի մխիթարութիւն։ Այսպէս և յորժամ կամիցիս զոք ածել յերդումն, ըմ-

քանեա զքեզ և արդել, և ոչ հանդերձեալ իցէ երդնուլ՝ ասա. զինչ արարից քեզ, ՚ած հրամայեաց ոչ երդնուլ, նա ինքն արգելու զիս. բաւական է այս ՚ի պատիւ օրինադրին և քեզ ՚ի զգուշութիւն...:

Ոչ ՚ի պատուիրանս նորա, և նա լուիցէ քեզ ՚ի ժամ աղօթից քոց: Հանքս այս զրեալ են քեզ ՚ի վերուստ, և մերձ լինիլն քեզ յաւուրն դատաստանին և բազում մեղս լուծանել: Այլ զայս ոչ եթէ յերգմունս միայն, այլ և յամենայն իրս հանարեցուք: Այլ յորժամ կամիցիմք առնել ինչ վասն ՚ած բարիս, և ապա բերիցէ ՚ի միտս կորուստ ինչ, մի զկորուստն որ յիրացն եղև՝ տեսցուք միայն, այլ և զշահս վասն որոյ պաղաքերեմք և զոր առնեմք վասն ՚ած: Որպիսի ինչ է զոր ասեմքս. անարգեմց զքեզ ոք, բեր քաջութեամբ, և մի զանարգանսն միայն, այլ և զիշխանութիւն հրամայողին զայն բերել, և զոր կայ մեայ քեզ վարձուց պահել: Յաղթ ողբմութիւն, մի զձախսն իմասցիս, այլ զմուտ ծախսուցն: Կորուսեր ինչ, գոհացիր. և մի զերկուսն կորուստեան իմասցիս, այլ զշահն զոր առցես ՚ի գոհութենէն:

Եթէ այսպէս յանձինս մեր համարեսցուք, ոչ ինչ տրամեցուսցէ զմեզ անկումն ՚ի վտանգն, այլ և շահիմք և յայնցանէ ուստի ակն ունիմք թէ տրամութիւնք իցեն... և աստ ՚ի հանդարտութեան վայելեմք, և անդ երկնից արքայութեանն հանդիպիմք: Որոց լիցի ամենեցունն մեզ արժանի լինել շնորհօք և մարդասիրութիւն տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք յաւիտեանս. ամէն:

ՃԱՌ ՎԵՇՏԱՍՍԱՆԵՐՈՐԴ

Վասն համբաւոյ գալստեան Իշխանին Քրեդայ, յորում ամենեքեան զինեսուստ խորհէին. և ՚ի գալ կոմսին յԵկեղեցին Միխթարէ. և ՚ի կապանան Պաւղոսի զոր ասէ « Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի ». և վասն երգման:

Ի Իշխանն իսկ գովէցի վասն գթութեանն իւրոյ, որ խռովեալ եւս զամենայն քաղաքս մեր և զամենե-

սեան ՚ի խորհուրդ փախստեան, եկեալ միխթարեաց զմեզ և աճ ՚ի քաղցր յոյս։ Բայց ես վասն ձեր ամաչեցի, և պատկառեմ զի արտաքուստ խնդրեցէք միխթարուԹիւն զկնի այնչափ երկար և բազում բանիցն, յորում աղաչեցի զձեզ ՚ի բաց կալ յերկիւղէն և մի կալ յերկունս։ Եւ յորժամ լուայ զնորա խօսելն ընդ ձեզ, և այժմ միխթարել, զինչ ասացից և այժմ ՚ի խոյզ արկանել զանժամ և զանամնաբարոյ երկիւղն։ Եւ զի ոչ էր արժան ձեզ ՚ի նմանիլ ուսանել, այլ ձեզ ամենայն անհաւատիցդ լինել վարդապետս, և ոչ դաստատան ժտել յանհաւատից. իսկ դուք արտաքուստ վարդապետուԹիւն խնդրէք զկնի այսքան նախկի խրատուց։ Արդ՚ւք աչօք այսուհետև հայեսցուք յանհաւատս զի դուք այսպիսի իցէք երկչոտք. կամ որո՞վ լեզուաւ խօսեսցուք ընդնոսա՝ հաւանեցուցանել համարձակ կալ ՚ի նեղուԹեանս յորժամ դուք քան զնապաստակս յերկիւղի իցէք վասն այսր միոյ տագնապի։

Օ՜ինչ արասցուք, ասէ, ապաքէն մարդիկ եմք։ Այո՛ այսորիկ իսկ չէ պարտ խռովել և աղմկել, զի մարդիկ եմք և ոչ անասունք։ Արգա յոտնաձայնէ երկնչին, զի ոչ ունին զգայուԹիւն կալ ընդդէմ երկիւղի. իսկ դուք որ բանիւ և զգայուԹեամբ պատուեալ էք, զիա՞րդ անկանիցէք ՚ի սոցա դժուարին սարսռալի ահն։ Այոմն, ասեն, պատմեաց վասն գալոց զինուորացն։ Այ՚ի խռովիցէք, այլ ՚ի բաց ընկեցէք զերկիւղն զայն. խնայարհեցո ծուներ և աղաչեա զտէրն քո հաշտիլ ընդ քեզ. առ նա հառաչեա դառնապէս, ընդդէմ կաց այսր նեղուԹեան։

Դու իսկ զգալուստ զինուորաց լուեալ զի ոչ ձշմարիտ, և զանցաւոր կեանս քո նեղուԹեամբ հերձանես. իսկ երանելին Յոբ այլ և այլ հրեշտակաց լուեալ գալով և զվտանգն պատմելով, որ յաւելուին ասել զանբանիցն անցումն, զորդւոցն զկորուստ, և ոչ տխրեցաւ և ոչ հառաչեաց, այլ յաղօԹս դարձաւ և գոհացաւ զՅա։ Արդ՚ւք ամա՞ն և լեր նմանող. եԹէ եկեսցէ ոք և ասիցէ՝ զինուորք պատեցին զքաղաքս և զամենայն գոյս մեր հանդերձեալ են յափշտակել, ապաւինեա առ տէրն քո և ասա. “Ցէր ետ և տէր առ. որպէս հաճոյ եղև տեառն, այնպէս արար. եղիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեանս„։ Օ՜նա իրացն գիտուԹիւնն ոչ երկե-

ցոյց, և զբեզ լուրն միայն երկեցուցանէ։ Արդ ապա պատասխանուց արժանի գտանիցիք, և զիարդ մնոյ համարձակ հրամանաց՝ ի համբաւէ ստոյ այնպէս երկնչիք։

Ահաղի աղմկարարն՝ ուր չիցէ երկիւղ, ինքեան մերձ կացուցանէ և զխռովութիւն՝ որ չէ յայտնի. իսկ որ հանդարտն և համեստն է, և զոր ստոյգն է՝ լուծանէ։ Ո՞չ տեսանես զնաւորդս, յորժամ ծուխն խռովիցի, ամպքն ընթանան, որոտմունք և Հայթմունք արձակիին և զամենեսեան որք ի նաւին են՝ զարհուրեցուցանեն, նոքա առանց երկիւղի նստիցին և առանց աղմկի և խռովութեան, միայն արուեստին միտ դնելով թէ զիարդ ընդդէմ կայցեն ալեացն ծփանաց։ Կոյա նմանեա և դու, առնելով ի քեզ զսուրբ Հաստատութիւնն զառ ի յԱծ յուսոյն, որ է անյաղթելի և անսասանելի...։

Կախ բազում ինչ ասացաք սիրոյ ձերում վասն որոգայթից որ յամենայն կողմանց եդեալ կայ, վասն երկիւղի, վասն տրտմութեան, վասն ողբոց և ցանկութեանց, վասն մանգաղին որ թռուցեալ մտանէր ի տունս այնոցիկ որք երդնուն, և այլ բազում այսպիսիս։ Արդ յայտ ամենայնիւ յիշեցէք ինձ վասն մանգաղին թռուցելոյ, և զամենց նոցա քակուածն զքարինս և զփայտս մաշտելոյ. և զկնի ամենեցուն զայն պահեցէք որ վերջին անգիտութեան իցէ՝ որք զաւետարան սուրբ ընդունիմն յերդումն, և զօրինն որ արգելու զերդումն՝ զնոյն երդումն առնել. և թէ լաւագոյն է ինչս կորուսանել, քան երդմամբ ստանալ մեծութիւնս...։ Օ այսոսիկ դուք պահեցէք և ամենեցուն ուսուսջիք։ Վ՞հատեմ եթէ զայս առ ի պահել պարկեշտագոյն ունիցիք, զամենայն չար սովորութիւնս դիւրաւ ի բաց դնիցէք։

Այլ խնդիր ոչ եթէ այս միայն իցէ զի աստ իմաստասիրեսցուք, այլ զի և արտաքոյ զպարկեշտութիւն առնուլ և գնալ, զոր և խնդրեմ իսկ մանաւանդ ի ձէնջ։ Այս որպէս գնողք գինւոյ ոչ միայն զի ընուցուն փութան զամանս իւրեանց, և յորժամ ի տունս իւրեանց երթիցեն՝ դատարկ իցեն, այլ անդր մանաւանդ զգուշութեամբ տանին, զի մի վնասիցեն և ի նանիր լինիցի աշխատութիւնն։ Կոյա նմանեսցուք և մեք. եթէ ի տան իցեմք, պահեսցուք զասացեալս Հանդերձ ստուգութեա-

եթէ արտաքոյ՝ նմանապէս։ Արդ եւ աստ լեալ զա-
մենս մտաց ձերոց ունիք, յորժամ երթիցէք՝ մի ու-
նայն եւ անպտուղ առնիցէք. ապա թէ ոչ՝ չէ ինչ օգուտ
աստի լուսաւորիլն։ Այլ ի ինձ ցուցաներ՝ի մարտի զըմբռիչն,
այլ՝ի յաղթանակին. մի ինձ աստ ցուցաներ զպարկեշտ
ունկնդրութիւն, այլ՝ի ժամանակի գործոյն։ Պատրաստ
զաստացեալս այժմ, եւ չէ ինչ. այլ յորժամ պարտ լինի
քեզ երդնուլ, յայնժամ զնաւ ած զամենայն։ Եթէ
վաղվաղակի ուղղիցէք զբանս, յայլ առաւելագոյն վար-
դապետութիւն ածիցէ զբանս։

Ահա երկրորդ ամ է զի միշտ ասեմ սիրոյդ ձերում,
եւ ոչ հարիւր տուն՝ի գրոց պատմել կարծայի ձեզ. իսկ
պատճառն՝ զի ոչ՝ի մէնջ պարտ է ուսանել միայն, այլ
եւ յանձանց ձերոց ուղղել զնոսա որ առաւել է քան
զմեր խրատս. ապա թէ ոչ՝ ունկնդրութեամբ միայն ծա-
խի քանս։ Այս չէ պարտ այսպէս լինել. քնաւ արուես-
տից յանձնէ ձերմէ հոգայք եւ խրատիք, իսկ զնմա-
տութիւն գրոց եւ զտեսութիւն մեզ միայն ցուցանէք։
Եթէ պարտ է՝ի մէնջ լսել ձեզ, առաւել քան զմի
ժամ յաւուր ոչ է խնդրեալ. Թէպէտ եւ դժուարագիւտ
է ասացեալն, բաւական է յումեքէ խնդրելին։

Յորժամ ած՝ի ձէնջ զառնելն խնդրէ, այնմ չիք
ժամանակ։ Քանց ած՝ «մի երդնուցուս», եւ մի պարտս
յանցանաց խնդրիցես։ Որպէս է Թագաւորական. որ եղ
զօրէնս ած, գիտէր զբան օրինացս. պարտ էր մեզ՝ Թէ
եւ չէր յոյժ օգտակար՝ ոչ խափանել եւ ոչ հրաժարել։
Արագաւորաց բերին օրէնք ոչ ամենևին յօգուտ, զի
մարդիկ են եւ ոչ կարեն գիտել զօգուտն մեր որպէս զած.
սակայն հաւանեալ հնազանդիմք ամենեքեան. նոյնպէս
եթէ կին ածեմք, եթէ կտակս հաստատեմք, եթէ ծա-
ռայս վաճառեմք կամ տուն կամ ագարակ կամ այլ ինչ
այսպիսիս, ոչ յանձնէ զայս գործեմք, այլ որպէս նոքա
օրէնս եդին եւ հրամայեցին. ՚ի մտաց մերոց ըստ կամս
մեր ոչ եմք տէր ամենևին յաւելուլ կամ պակասեցու-
ցանել ինչ, այլ հանապազ նոցա կամայն ծառայեմք.
իսկ եթէ առնեմք ինչ քան զոր նոքա ակն ունէին, ան-
ընկալ լինի։ Արդ յորժամ զմարդկան օրէնս զայս պա-
տուեմք, զի՞նչ օրէնսն այսպէս կոխեմք, ասա ինձ. եւ ո-
րո՞ւմ պատասխանուոյ կամ քաւութեան իցեմք արժա-

նի։ Այսց ՝ ՃԺ՝ մի երդնուլ. մի վասն ընչից հակառակ օրինադրին լինիցիս։

Այլ վասն այսր ասացաք սակաւ. բեր այսուհետեւ քան մի զոր այսօր ընթերցաք՝ դիցուք ձեզ առաջի։ "Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի և Տիմոթէոս եղբայր,,։ Օ այս լուաք արդ. մեծ է Պաւղոսի երեւելն՝ ոչ յառաջմանէ և՛ի պատուական անուանէն, այլ՛ի բանտին և՛ի շղթայիցն. ձշմարիտ մեծ է. եւս բազում առաւելութեամբ պայծառ փայլէ այսիւ, քան մինչ յերկրորդ երկինս յափշտակեցաւ և՛ի դրախտն աճառ և բանս անձառս լուաւ. ըստ որում ոչ եդ զայս, այլ փոխանակ այսմ ամենայնի զշղթայսն. այս զնա առաւել երեւելի արար և պայծառ։ Օ խոհդ արդեօք. զի այն ՝ այ մարդասիրութեան և ընդհացն է, իսկ այս ներողութիւն ծառային և համբերութիւն։ Պրոշմ սիրոյ սիրելեաց ոչ սովորութիւնք են, այլ յայսմիկ երևին յորժամ չարչարին վասն սիրելեացն և ապա բարեգործեալ Թուին՛ի նոցանէ։

Ոչ այսպէս Թագաւոր՛ի Թագ իւր վայելէ, որպէս և նա՛ի կապանս վայելչանայր. Թագաւորի Թագ յերկրի միայն բերէ զտեսութիւն զգլուխն պսակեալ, իսկ զշղշաքն՛ի վեր քան զաշխարհ։ Ձնագաւորական Թագ՛ի զգուշութիւն է բազում անգամ մանել զոր՛ի վերայ կացեալ զգլուխն, և հանդիպեցուցանէ զաղանի խորհրդածութեան, և՛ի բռնութեանց կոչէ. և՛ի պատերազմի այսպիսի զարդ պատրաստական է՝ ուստի Թագուցեալ լինի՛ի բաց դնելով. քանզի Թագաւորք զկերպարանս իւրեանց փոխեն յաւուր պատերազմի և այսպէս խառնին՛ի պատերազմ՛. ի սակէ Թագաւորին այսպիսի մանուածք լինին։ Իսկ կապանքն ոչ այսպիսի աւանդէ որոց ունիցին, այլ հակառակ է այսմ ամենայնի. և յորժամ պատերազմ յառնիցէ դիմամարտ զօրութեանցն, որ զնա զգենուցու՝ դիւրաւ ընդդէմ կայ մարտից նոցա։

Արտաքին իշխանք ոչ եթէ յորժամ սկսանին յիշխանութիւնս միայն, այլ և յորժամ՛ի բաց երթիցեն յիշխանութենէն կոչի անուն նոցա. ասեն՝ այս անուն հիւպատոսական իշխանի, այս անուն եպարքոսական իշխանի. իսկ նա փոխանակ այսր ամենայնի "Պաւղոս կա-

պեալ,, ասէ ։ Ա՛յն իշխանութիւնք ոչ ամենեցունն է ըստ հոգևորական առաքինութեանն ցուցման, այլ որք ինչ ունին և փաղաքշանօք սիրելի լինիցին. իսկ այս իշխանութիւն հոգևորական իմաստասիրութեան իցէ դրոշմ, և մեծապէս նշան սիրոյն Քրիստոսի. այն պատիւ վաղվաղակի թառուցեալ գնայ, իսկ այս պատիւ ոչ փոփոխի երբեք ։ Յայնմ ժամանակի մինչև ցայժմ քանի ժամանակք անցին և առաւել պայծառագոյն եղև անուն այնմ կապանաց. հիւպատք և եպարքոսք և այլք որչափ եղեն յառաջագոյն՝ լռեցին, և ոչ ոք ՚ի նոցանէ յանուանէ ծանօթ է բազմաց ։ Իսկ այսմ կապանաց անուն երանելոյն Պաւղոսի բազում աստ է և բազում յերկիրն բարբարոսաց, բազում առ սկիզբնացիսն և ՚ի հնդիկս. և եթէ ընդ ամենայն տիեզերս անցանիցես, լսիցես զանունն զայս. և ուր և երթիցես, ՚ի բերանոյ ամենեցունց Պաւղոս բերեալ լինի ։ Այս զինչ սքանչելի իցէ ընդ ծով և ընդ ցամաք տարածել. յերկինս եթէ ելանիցես, և անդ բազմապատիկ լսիցես զանունն Պաւղոսի ՚ի հրեշտակաց, ՚ի հրեշտակապետաց և յայլ վերինն զօրութեանցն և յամենեցունց Թագաւորէն այ ։

Ա՛րդ որպիսի՞ էր կապանքն այն որ այսպիսի ետ փառս կապելոյն. ո՞չ ասացէք յերկաթոյ կազմեալ էր ։ Ա՛յո, այլ բազմապատիկ ծաղիկս և պտուղ բերեր ՚ի հնորհաց Հոգւոյն սրբոյ, քանզի վասն Քրիստոսի ՚ի վերայ եդեալ կայր ։ Ո՛վ սքանչելեացս. տէրն խաչեցաւ և ծառայքն կապեցան, և նոցին քարոզն զօրհանապազ աճէ, և գործն որում ակն ունէին խափանիչ լինել՝ այսիւ յայտնեցաւ. և խաչն և կապանքն զոր կարծէին խոտեալ լինել՝ սոյն իսկ նշան փրկութեան եղև. և երկաթն այն քան զոսկի պատուական եղև ոչ եթէ յիւրմէ բնութենէն, այլ ՚ի պատճառէս յայսմանէ ։

Ա՛յլ տեսանեմ աստ խնդիրս յայսմանէ եկեալ ՚ի մէջ. զոր ՚ի միտ առեք հանդերձ ստուգութեամբ, ես զխընդիրն պատմեմ և զթարգմանութիւնն ասացից ։ Ո՞չինչ իցէ խնդիրն ։ Այն Պաւղոս առ Փեստոս, և յասելն նորա և ՚ի պատասխանելն վասն պարտաւորութեանն զոր ՚ի վերայ ածէին Հրեայքն, ասէր եթէ արպես ետես զՅիսուս, կամ արպէս լուաւ զերանելի ձայնն զայն, զիաւրդ ետես զվնի կուրանալոյն, զիաւրդ անկաւ և յա-

լեաւ, կամ ոչպէս գնաց գերել ՚ի Դամասկոս և կապել առանց կապանաց. և վասն մարգարէիցն և օրինացն ասելոյն՝ կանխաւ եղոյց և յայտ արար Թէ նոքա զայս ամենայն ասացին, և այսու ՚ի բաց խլեաց զդատախազն, և վաղվաղակի զնա ՚ի հաւանութիւն ածել փութայր փոխել և դառնալ առ նա:

Ա.Յսպիսիք են հոգիք սրբոց. յորժամ անկանին ՚ի նեղութիւնս, ոչ եթէ զերծանել ՚ի նեղութենէն զգուշանան միայն, այլ և զածողն ՚ի նեղութիւնն որսան հանապազ. որպէս և յայնժամ եղև. եկն առնել պատախանի, և զդատաւորն ընդ իւր առ և գնաց: Այս զայս ինքն դատաւորն վկայեալ ասէ. "Ար փոքր մի և զիս հաւանեցուցանես քրիստոնեայ լինել,, ով Պաւղոս,,: Պարտ էր այսմ և այսօր լինել. և զիշխանս որ եկն առ մեզ ՚ի գիտութիւն ածել լինել մեծահոգի, առնուլ զնմանատաւիրութիւն, զհանդարտութիւն զամենայն, ՚ի հաստատութենէ մերոյ վարդապետութեանս ընդունել և գնալ. քանզի աքանչանայ ընդ ժողովուրդս, գովելի վարկանի զատեանս: Լսացին յայսմանէ և որք ՚ի միջի մերում հելլենացիք և քրիստոնեայք:

Ա.րդ զոր ասացի՝ յորժամ զնա յիւրմէն քակեաց Պաւղոս, և նա ասաց, "Փոքր մի հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ,,, պատասխանի ետ նմա Պաւղոս և ասէ. "Այս աղօթս առնեմ փոքու և մեծի, ոչ միայն զքեզ, այլ զամենեսեան որ լուիցեն ինձ՝ լինել քրիստոնեայ բաց ՚ի կապանաց աստի,,: Ո՞ինչ ասես, ովվ Պաւղոս, ոչ միշտ գովաւ պարծիր ասելով. "Ազատեմ զձեզ ես որ կապեալս եմ ՚ի տէր, արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք,,. և առ Տիմոթէոս ասես. "Ո՛ման որոյ չարչարիմ կապանօքս չափ իբրև զչարագործ,,. և առ Փիլիմոն դարձեալ. "Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի,,. և յորժամ ընդ Հրեայսն դատախազ եղեալ ասես. "Ո՛ման յուսոյ յարութեան մեռելոց կամ՝ ՚ի շղթայիս յայս,,. և փիլիպեցւոցն գրեալ ասէիր և զաւետարդ եղբարցն՝ եթէ "Ո՛տահ եմ կապանօքս իմովք առաւել համարձակել առանց երկիւղի զբանն Այ խօսել,,: Ա՛մենայն ուրեք զշղթայսն բերես ՚ի մէջ, յամենայն տեղիս զկապանս յիշես և պարծիս դովաւ. իսկ ՚ի դատ մտեալ մանեաս զխոստասիրութի-

քո, ուր մանաւանդ համարձակել կը և ոչ երկնչել, և ընդ դատաւորն ասես՝ եթէ աղօթս առնեմ լինել քեզ քրիստոնեայ բաց ՚ի կապանաց աստի։ Եթէ կը բարիոք կապանքդ, և այսպիսի բարւոյ, մինչ զի և այլոց պարգեւս համարձակել ՚ի բանս պարկեշտութեան, զոր դու ինքնին ասես՝ եթէ եղբարց վստահանալով ՚ի կապանս իմ խօսին զբանն Աստուծոյ առանց երկիւղի, վասն կը արդեօք առ դատաւորիդ ոչ վայելուչ երևեցուցանես զայդ գործ և զհակառակն առնես։ Եթէ չկարծէք եթէ խնդրուածք են ասացեալն։ Այլ աստ վաղվաղակի ածից զառաքեալս։

Ահ եթէ յերկիւղ կամ ՚ի տագնապէ արար զայս Պաւղոս, այլ ՚ի խորհրդոյ և ՚ի բազում իմաստութենէ. և եթէ զնարդ՝ ասացից։ Ոչ հելլենացիս խօսեր և առ անհաւատս։ Ահ կամէր զնա ՚ի դժուարութիւն ածել. այլ որպէս և ասեր թէ “ընդ անօրէնսն եղէ իբրև զանօրէնն,,, զայն և աստ գործեաց։ Եթէ լուիցէ, ասէ, կապանս և նեղութիւնս, վաղվաղակի ապստամբէ, զի ոչ ձանձրէ զզօրութիւն կապանացն. եղիցի նախ հաւատացեալ, ձաշակեսցէ ՚ի քաղցրութենէս, և ապա իբրովի ընթացցի ՚ի կապանս յայս. գիտեմ զբանս տեառն իմոյ, “Ահ աք արկանէ, ասէ, կապերտ անթափ ՚ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու ելանէ ՚ի լրութենէ նորա, և ևս չար պատառումն լինի. և ոչ արկանեն գինի նոր ՚ի տիկս հինս, զի պայթուցանէ զհինն նոր զտիկս հինս,,։ Ձորձ սորա, ասէ, ձորձ է հնացեալ և տիկ պատառատուն, ոչ է միաւորեալ ՚ի հաւատս և ոչ նորոգեալ հոգւով սրբով, տկարացեալ է յոյժ, և զերկրաւորս ևեթ հոգայ և զկրս կենցաղոյս, և յարդեանցս երևմանդ երկնչէ, քանզի անցաւորիս ցանկայ։ Եթէ յառաջնմէ լուիցէ, եթէ եղեց քրիստոնեայ՝ ՚ի կապանս հասանէ վաղվաղակի լինել և ՚ի շղթայս մնանել, արդէն ապստամբէ ՚ի քարոզութենէս. վասն որոյ ասեմ “բաց ՚ի կապանաց աստի,,։

Ահ եթէ ինքն խնդրեր ՚ի բաց լինել ՚ի կապանաց անտի, քաւ լիցի, այլ ՚ի նորին տկարութիւնն զթայր. այլ ինքն այսպէս սիրեր և համբուրեր, որպէս կին զարգասեր զոսկի զարդ իւր։ Ահ ուստի՞, ասեն, յայտ է այս. լուր. “Ահրաին եմ ընդ չարչարանս իմ,,. և դարձեալ.

“Շնորհեցաւ մեզ յայդ ոչ միայն ի նա հաւատալ, այլ և վասն նորա չարչարանս կրել,,. և դարձեալ. “Պարծիմք, ասէ, ի նեղութիւնս մեր,,: Արդ յորժամ ա-րախանայ և պարծի և ընդհարս կոչէ զնոսին, բարիոք յայտնի եղև թէ վասն այսր պատճառի առ դատաւորսն խօսելով զայս ասէր: Վասնզի և այլուր գրձեալ ի նեղութիւնս անկեալ պարծէր, զոր ինքնին ցուցանէ ասելով. “Այս արդ լաւ լեցի ինձ պարծել ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւն Քրիստոսի, վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ չարչարանս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս և ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի,,. և դարձեալ. “Զի պարտ է պարծել, ի տկարութիւնս պարծեցայց,,. և թէ “Յառնէնայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրև զպաշտօնեայս նորա Համբերութեամբ բազմաւ, ի նեղութիւնս ի վիշտս ի չարչարանս ի գանս ի բանտս ի խռովութիւնս յաշխատութիւնս ի հսկմունս ի պահս,,: Եւ եթէ զմեռեալ յարոյց կամ զբորոտս սրբեաց և ոչ զգևս հալածեաց և ոչ զայլ ինչ զոր արարեալ էր յայտցանէ՝ ասայ. այլ զինչ. զբիւր նեղութիւնսն որոց դիպեալ էր ասէ. իսկ “առաւել ևս ես,,, ենայս փոքունութեն բազմութիւն. զինքրդ. “Եթէ վաստակաւք՝ առաւել, եթէ գանիւք՝ ևս առաւել, եթէ բանտիւք՝ աւելի քան զնոսա, եթէ մահուամբ՝ բազում անգամ, ի հրեից հընգիցս քառասուն միով պակաս արբի, երիցս ձաղկեցայ, մի անգամ քարկոծ եղէ, զտիս և զգիշեր յանդունդս տառապեցայ, ի ճանապարհս բազում անգամ. վիշտս ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս ի հեթանոսաց, վիշտս ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս ի ծովս, վիշտս ի սուտ եղբարց, ի ջանս ի վաստակս ի աքնութիւնս ի քաղց ի ծարաւ ի պահս ի ցուրտ ի մերկութիւն,, և յայլ նոյնպիսիս: Այսպէս ամենայն ուրեք ի տրտմականսն պարծի Պաւղոս և վայելէ ջանայ առաւել այսու գործովք, և մանաւանդ յիրաւի իսկ: Զի այսու ցուցանի զօրութիւնն Քրիստոսի, և սովին կալան զնիեզերս առաքեալքն հանդերձ կապանօք և տրտմութիւք և ապտակօք և յետին չարչարանօք:

Օ այսոսիկ պատուիրեաց Քրիստոս, ասա տրտմութիւն և նեղութիւն, և ասա պսակք. քրտունք ցաւք

աշխատութիւնք, և քաղցոյ հատուցումն. այլ տրտմա-
կանքն անցաւոր ժամանակիս են, և քաղցրութիւնն ի
հանդերձեալսումն. ոչ ի միասին ատեն առնել զհատու-
ցումն՝ ցուցանէ թէ ոչ խաբէ զմարդիկ, և զայս վտանգ
այսիւ բարձեալ և ի բաց հատանել խորհէր։ Վասնզի
թէ խաբել խորհէր, նախ զքաղցրն դնէր առաջի, և ա-
պա յետոյ զտրտմականսն։ Արդէս և մանկագողքն առ-
նեն ի գայթակղութիւնս ածել, յորժամ զիոքունս
տղայս խաբեն և գողանան. ոչ եթէ ապտակեն և սպառ-
նան և խոցոտեն, այլ առեալ ընդարձակապէս ի բար-
բանջս չար երգոյն զոր տղայական բնութիւնն սիրէ՝ ու-
րախացուցանեն, զի այսու սովորեալ՝ զաշատութիւն նո-
ցա արկանեն ի յետին վտանգս...։ Իսկ հարք հակա-
ռակ նոցին առնեն. յորժամ ի վարդապետանոցս ա-
ռաքեն զմանկունսն, մանկավարժս կացուցանեն, սպառ-
նան ապտակեն և յերկիւղ հաստատեն. ապա յորժամ
ըստ առաջնոյ հասակին անցանեն, յայնժամ դիւրութիւն
լինի նոցա, պատիւ և զօրութիւն և վայելումն, և նովին
յառաւել Ճոխութիւն ձեռնարկեն։

Արդէս և ասճ ըստ գթական հարց ի մանկունսն ա-
բար. նախ զտրտմականսն եդ առաջի, որպէս մանկա-
վարժք և վարդապետք զանցաւոր տրտմութիւնս եդ,
զի այսու զգաստացեալք զամենայն Համբերութիւն ցու-
ցանիցեմք, ուսեալք խմաստասէր գոլով. իսկ յորժամ
աստի ելանեմք, զերկնից արքայութիւնն ժառանգեմք...։
Օ՛ի և որք աստ փափկանան, զկնի անկանկն ի տան-
ջանսն յաւիտենականսն. վասն որոյ անցաւոր փափկու-
թեանս վայելումն անշահ է վասն ակն ունելոյ նեղու-
թեանն. իսկ որք յառաջագոյն զտրտմականս կրեցեն,
յուսով հանդերձեալ վայելմանն զտրտմականսն անտես
առնեն։ Եւ զի ի նեղութիւնս զգուշասցուք միայն, այլ
և փափագումն և միխթարութիւն կարգեաց զհանդեր-
ձեալ յոյսն որ հեշտալի առնէ զաստի վտանգս, որով
անցաւորիս ոչ առնումք զգայութիւն։ Այս զայս դար-
ձեալ ինքն Պաւղոս ցուցանէ ասելով. "Ոչ ժամային թէ-
թև նեղութեանս մերում ի յաւիտենական առաւե-
լութիւնն զհեծութիւնն փառացն գործէ ի մեզ. զի ոչ
դիտեմք զերևելիսս, այլ զաներևոյթսն,,։ Վասնզի և զը-
տրտմականն կոչեաց՝ ոչ ըստ իւրոյն բնութեան վտան-

գինն, առ ակն ունել հանդերձելոց բարութեանցն։ Որպէս և վաճառական ոչ՝ ի մոխ դնէ զնաւակոծութեան տառապանն՝ ապաւինութեամբ բեռինն հեշտացեալ, և մրցողն արիաբար բերէ զվէրս և զխոցուածն զևոցն՝ ակն ունելով պսակացն, սոյնպէս և մեք զի յերկինս և որ յերկինս են բարութիւնք՝ միամբ, որչափ և բերիմք՝ ի նեղութիւնս, զաննայն քաջութեամբ տարցուք՝ հանդերձեալ քաղցր յուսոյն զօրացեալք։

Ոչ այսոսիկ զբանս՝ ի միտ առեալ երթիցուք. զի թէպէտ և սակաւ է, այլ բաղում ունի վարդապետութիւն՝ իմաստութեան, բաւական կալեալ միմիթարութիւն՝ ի նեղութիւնս և՝ ի տրտմութիւնս, որ է մեծ զգաստութիւն։ Վասնզի յորժամ՝ ի փափկութիւնս իցես և՝ ի բազմակատար սեղանս և յիշես զբանս զայս, վաղվաղակի՝ ի բաց յառնես յարբեցութենէ և յաւելի կերակրոց, հաստատեալ յայմ բանիւ՝ թէ պարտ է՝ ի նեղութիւնս կեալ մեզ, և ասասցես ցքեզ ինքն. Վաւաղս՝ ի կապանս կայր և ես յարբեցութեան և՝ ի բազմախորտիկ սեղանս, և որո՞ւմ թողութեան գտայց արժանի։

Սոյն բան և կանանց առ պատրաստ կայ, որ զարդասէրք են, պճնողք և շուրջանակի ոսկւով զինքեանս կապեն, զշղթայս զայս յիշելով բարիոք իմանալ, ատել զայն և պիղծ համարել զայնպիսի զարդ, և ցանկալ այսպիսի կապանաց։ Վասնզի այն զարդ բաղում չարեաց եղև պատճառ մարդկան և բիւր պատերազմունս ած՝ ի յաղգս մարդկան, և միշտ նախանձ և չարութիւն և ատելութիւն ծնանի. իսկ սա զյանցանս տիեզերաց ելոյծ, զգէս զարհուրելոյդ, զսատանայ փախստական առաք։ Այս յորժամ սուաւ՝ ի բանտ մտանէր, զբանտապետն հաւատացեալ առնէր. հանդերձ սուաւ զվէստս և զվէրիպաս առ ինքն զարձոյց. սուաւ զամենայն տիեզերս աշակերտեաց Պաւղոս, վասն որոյ և ասէր՝ թէ «Զարչարիմ կապանօք չափ իբրև զբարագործ. այլ բանն ոչ եթէ կապեալ իցէ»։ Արդէս զձառագայթս արեգական շինուցանել անհնար է կամ՝ ի տան արգելուլ, սոյնպէս և ոչ զբան քարոզութեանն։ Վարդապետն կապանօք կապեալ, և բան նորա ևս առաւել թռուցեալ տարածէր. նա՝ ի բանտն եդեալ կայր, և

վարդապետութիւն նորա սլացեալ յամենայն կողմանս տիեզերաց հասանէր։

Օ՜այս ամենայն իմացեալ մի՛ ի վայր անկցուք, յորժամ՝ վասնզ ինչ՝ ի վերայ գայցէն, այլ և այս յայնժամ համարձակս և զօրաւորս լիցուք։ "Կեղծիւնք, ասէ, պՀամբերութիւն գործեն,,։ Որք, ասէ, այսուհետև մի՛ տխրեսցուք ընդ հասեալ վիշտս, այլ յամենայնի գոհասցուք զՅ։ Արիւս շաբաթս՝ ի պահոցս անցուցաք, այլ մի՛ այսու միայն զգուշասցուք. զի ոչ է այս միայն ընդունելի պահք՝ ի կերակրոյ՝ միայն զշաբաթս անցուցանել. եթէ զամբոր տարին անցուցանեմք պահօք առանց այլ օրինացն, ՚ի կերակրոյն միայն պահել ոչ ապրեսցուք։ Այլ զայս խորհեսցուք, եթէ ամենայն բարութեամբ ելաք՝ ի պահս, եթէ արիք և փոյթ եղաք, եթէ ուղղեցաք ինչ՝ ի մերոց յանցանացս, եթէ զգաստացաք՝ ի մեզաց։

Այս և այս սովորութիւն է ամենեցուն հարցանել յաւուրս քառասնորդացս թէ որչափ իւրաքանչիւր շաբաթս նօթի պահեալ է. և իցէ լսել թէ ոմն երկուս և այլ երիս և այլք ոմանք թէ զամենայն շաբաթս պահեալ են առանց կերակրոյ։ Այս զինչ շահ իցէ եթէ յամենայն ուղղութենէ անապատ եմք մնացեալ, և քաղցիւ միայն ելաք ընդ աւուրս պահոցն։ Իսկ եթէ ոք ասիցէ ցքեզ՝ եթէ զամենայն շաբաթս պահոցն պահեցի ժուժկալութեամբ, դու ասասցես ցնա՝ թէ ես հանդերձ պահօքս թշնամի ունէի և հաշտ եղէ ընդ նմա. սովորեալ էի՛ ի բամբասանս, և զայն խլեցի՛ ի մտաց և լուծի զլաւ սովորութիւնն։ Այս է պահք ճշմարիտ։ Ոչ աճառականին ոչ ինչ յօգուտ է երկարութիւն ճանապարհին ծովուն, այլ եթէ հանդերձ բեռամբ իցէ և բազում ծախսութեբ. և մեզ ոչ ինչ յօգուտ են պահք, եթէ՝ ի կերակրոյ միայն պահեմք զպահն, և յայլոց ուղղութեանց պակաս գտանիցիմք և ելանիցեմք ունայն անտի և տարապարտուց։

Արդ անցանեն աւուրք քառասնորդացս, անցանէ և պահեքն. եթէ յամենայն յանցանաց՝ ի բաց կացեալ եմք, թէ և պահքն գնայ, այլ ուղղութիւնն այն մնայ, և հանապազ այն լինի մեզ յօգուտ և՝ ի փրկութիւն, և նախ քան զարքայութիւն երկնից ոչ ինչ սակաւ աս-

տէն տայ մեզ զՀատուցումն։ Արդէս որ կայ յարեաք, նախ քան զգենիլն տանջի ՚ի խղճէ մնայ իւրոց, այսպէս որ մեծանայ ուղղութեամբ, նախ քան զպսակն ՚ի մեծի ուրախութեան վայելէ և ցնծայ քաղցր յուսովն։ Այսոր և Պրիստոս ասէր. “Դարձեալ գամ առ ձեզ, և ուրախ լինիցին սիրտք ձեր, և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ՚ի ձէնջ,,։

Եթէ ունիցիս ինչս, բազումք են որ կարող են զքընդութիւնն քո առնուլ զոր ՚ի մեծութենէն ընկալեալդ ես, և գողք փորեն և սկան հատանեն, և ծառայ հաւատարիմ առնու և գնայ զոր ՚ի նայն վստահացեալ ես, և թագաւոր հրապարակէ և բռնաւորք, և մարդ նախանձոտ ջանայ։ Իսկ եթէ զօրութիւն ունիս, բազումք կարող են առնուլ զոր ՚ի յայսմանէ քեզ ուրախութի։ Որժամ քակին յառաջարկութիւնք, քակին և որ անտի փափկութիւնք են. և յայնմ իսկզբանէ բազում դժուարութեամբ հասանէ յընչիցն անկանել, և այսպիսի Հոգ հատանէ զքոյին յոլդորումն։ Եթէ մարմնոյ ունիս զօրութիւն, գայ հիւանդութիւն և լուծանէ յայնմ ուրախութենէ։ Եղան եթէ ունիս բազմակատար առ ՚ի վայելել, հասանէ երեկոյն և եղծանին խնդութիւնք բարութեանց։ Ուրաքանչիւր կենցաղական իրացս փորձութիւն հասանէ, և միոյն միւսոյն ոչ զօրէ ընորհել զփափագումն։

Իսկ բարեպաշտութիւնն և ըստ Հոգւոյ առաքինութիւնն հակառակ է այսմ ամենայնի։ Ողորմութիւնս եթէ առնիցէ ոք, ոչ ոք է որ կարիցէ բառնալ զայս ուղղութիւն. եթէ թագաւորք եթէ զօրապետք բիւր մարքենայս յարուցանեն և ՚ի խորհուրդս խորհին, զոր ՚ի յերկինս եդեալ են ստացուածք՝ առնուլ ոչ կարեն, այլ միայն Հանապազորդ ուրախութիւն։ “Արեաց, ասէ, և եա աղքատաց. արդարութիւն նորա միայ յաւիտեանս յաւիտենից,,։ Այս մնաւանդ յիրաւի իսկ. զի որ յերկինս շահեմարանէ, գող ոչ գողանայ, աւազակ ոչ յափշտակէ, ցեց ոչ ուտէ և ուտիճ ոչ ապականէ։ Ցօրն եթէ աղօթեացես Հանապազ և Հակեաս, պատուղ զոր յայսմանէ է՝ ոչ ոք է որ կարող է գողանալ. քանզի պատուղս այս յերկինս արմատացեալ է, յաւիտեան Հասանէ զատեալ է և միայ անձեռնարկելի։ Այս եթէ

չարեաց բարի առնես, յորժամ չար լիցես՝ խնամտասիրեսցիս, եթէ բամբասեսցիս՝ օրհնեսցես զաւանդասողն, այս ուղղութիւն յաւէտ մնայ, և յայսմ ուրախութենէս ոչ ոք առնուել կարէ. այլ որչափ և յիշեսցես զայս, ցնծաս և ուրախ լինիս և բազում պտղաբերես զփափագումն։ Ա. յսպէս և փախչել յերդմանէ, թէ ուղղիցէք և հաւան զնեզուս ձեր առնիցէք ՚ի բաց կալ ՚ի կործանիչ սովորութենէս յայսմանէ, ուղղութիւնս այս սակաւժամանակեան է, իսկ ուրախութիւն ուղղութեանն միշտ և անպակասելի։

Պարտ էր ձեզ այսուհետև այլոց վարդապետ լինել և առաջնորդ սիրելեաց, դրացեաց, ծառայից և ընկերաց, զմանկունս ստնդիայս առնուլ խրատել և ուսուցանել։ Ա. րդ եթէ ոք խոստանայր տալ քեզ տաղանդ մի ոսկւոյ ամենայն աւուր վասն այս մի ուղղութեանս, ոչ զամենայն ջանս ջանայիր և փութով հաւանէիր։ Ա՛ւկ այժմ ոչ եթէ մի տաղանդ ոսկւոյ, ոչ տասն, ոչ քսան, կամ հարիւր, կամ հազար, նա և ոչ զբոլոր աշխարհս տայ այսմ ՚ի հատուցումն, այլ որ քան զամենայն աշխարհ մեծ է զայն տացէ քեզ՝ զարքայութիւնն երկնից. և[1] ոչ զայդ միայն, այլ և այլ ինչ, որպէս ասէն. “Ա՛ր հանէ զպատուականն յանարգէն, բերան իմ կոչեսցի.,,։ Ո՛րչափ լինիցի այսմ հոգւոյն բան և զգուշալի և պատուական։ Ա՛րժէմ պատասխանւոյ և Թողութեան գտանիմք արժանի, որ զկնի այսմ խոստմանս պղերգանամք ՚ի փրկութէ դրացեաց մերոց։ Պաու իսկ եթէ ՚ի խորխորատ տեսանիցիր անկեալ զոք կոյր, ձեռն տայիր և ակն ունիցիր, և թէ արժան է՝ ոչ անտես առնել զկորուսեալն. տեսանես յամենայն ժամ կախեալ զամենայն եղբարս քո զչար սովորութենէ երդմանն, և բանիւ միով ոչ համարձակիս խրատել։ Ա՛յլ ասացի, ասէ, մի անգամ և ոչ լուաւ. ասացեր երկրորդ անգամ և երրորդ և այնչափ մինչև ՚ի հաւանութիւն ածցես։ Ո՛րհանապազ խրատէ զմեզ Տէր և ոչ լսեմք, բայց նա ոչ լռէ յասելոյ և ոչ դադարէ. նմանեաց և դու այս գթութեան առ ընկերս քո։ Ա՛ան այսորիկ առ միմեանս կամք և ՚ի միում քաղաքի բնակեալք և յեկեղե-

1 Պակասէր յօր. Ե ոչ զայդ միայն, այլ Ե այլ ինչ. յաւելաւ ՚ի յունէն։

ցիս Ժողովիմք, և զմիմեանց Ճանրութիւն բարձցուք և զմիմեանց գյանցանս ուղեսցուք: Այլ որպէս յարուես տանոցս որ բնակեալ են մարդիկ՝ յայլ և այլ տեղիս երթիցեն, և զամենայն առ հասարակ զոր և վաստակեն՝ ի մի Ժողովեն, այսպէս և մեք արասցուք. զոր իւրաքանչիւր ոք կարիցէ ի բարիս աճել զդրացի կամ զընկեր իւր, մի Ծուլասցի և մի դժուարեսցի. այլ եղիցի վաճառական խմնաստուն, և զփոխարէնս զայսպիսի հոգևորական իրի որ առ հասարակ է՝ յամենեցունց ի միասին հաւաքեսցէ, որով բազում կարասիք ստանալ մեծութիւն և յոլով գանձս ամբարիցէք յերկինս յանձինս. և առհասարակ արժանի լիցուք արքայութէ երկնից ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է օրհնեալ յաւիտեան:

ՃԱՌ ԵՕԹՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ

Վասն առաքելոյ իշխանացն ի Թադաւորէն Թէոդոսէ՝ Եղկիթիոս զօրապետ և Կեսարիոն մագիստրիան քննել զյանցանս քաղաքին վասն պատկերին գարձուցանելոյ:

Ի ժամանակի պաշտեցաք ամենեքեան առ հասարակ, "Որհնեալ ես տէր ած Իսրայէլի, որ առնես զսքանչելիս միայն,,: Այլ զի մեծապանծ զարմանալիք եղեն յոյժ, զի մինչ գործս եղև. զքաղաքս բոլորովին և զայսչափ ժողովուրդ ընկղմել կամէր և անյայտ առնել և իսպառ կորուսանել, յանկարծակի ի մի պահ ժամանակի և յական թօթափել զնաւակոծումնս զայս փոխեաց: Այրդ գոհացուք զնմ ոչ միայն զի զկարծիս մահու եղեծ, այլ զի և տեղւոյ ետ լինել. ոչ զի զնաւակոծութիւնս փոխեաց միայն, այլ զի ի նոյն ժամու և զկնի կախել մեզ զվտանգից թոյլ ետ: Այսպէս և Պաւղոս հրամայեաց յամենայնի գոհանալ: Այրդ յորժամ ասէ՝ թէ "Յամենայնի գոհացարուք,,, զայս ասէ. ոչ եթէ միայն ի յարձակմանէ վտանգեալ գոհանալ, այլ և ի ժամանակի վտանգից: "Օ ի որ սիրեն, ասէ, զնծծ, յամենայնի գործակից լինին ի բարիս,,: Գոհացուք

զնոյ վասն ազատելոյ ի փորձութենէս զմեզ, և զփորձութիւնն մի երբեք մոռասցուք. աղօթիւք խնդրեսցուք ունել ի մտի զոր աղաչեմն բազում պարկեշտութեամբ։ Յորժամ զառաջինն դժուարութիւն չարեացս այսորիկ եհաս հրացեալ, ասէի՝ թէ ոչ ժամանակ վարդապետութեան, այլ աղօթից է ժամանակ. զնոյն և այժմ յորժամ շինաւ, ասեմ՝ թէ այժմ է ժամանակ աղօթից քան յառաջագոյն, և այժմ է ժամանակ արտասուելոյ և զղջանալոյ և բազում ջանից և զգուշութե։ Յայնժամ որպէս է բնութիւն արտմութեանց՝ ակամայ զմեզ պակուցանէր և զգաստ կազմէր և յառաւելապոյն պարկեշտութիւն ածէր. իսկ այժմ յամբառնալ վտանգիս և ի բաց գնալոյ ամպոյս պատ է զի մի այլ ի տխրութեան իրս խոնարհեսցուք, զի մի և վասն մեր ասասցի՝ թէ "Յորժամ սպանանէր զնոսա, խնդրէին զնա, դառնային և առաւօտ առնէին առ Ած"։ Ա ան որոյ և Պօվսէս խրատելով զեբրայեցիան ասէր. "Յորժամ ուտիցես և յագեսցիս, զգոյշ լեր գուցէ մոռանայցես զտէր Ած քո"։

Ա.յժմ բարեմտութիւն ձեր երևելի լիցի, եթէ մինայք ի նոյն պարկեշտութիւն։ Յայնժամ ի բազում երկիւղէն և ի ծածկել ահէ վտանգից զջանս ձեր համարէին. իսկ այժմ մաքրապէս հաւատան, եթէ մնայք առ ի պահել զնոյն ջանս։ Ա.նդրէ և տղայ ոք եթէ ի մանկականէ ումեմնէ յահարկու լինիցի, զգաստ և հանդարտ կեայ, ոչ ինչ աքանչելի է՝ զի յերկիւղէ զաստիարակին համարին ամենեքեան զգաստութե մանկանն. իսկ յորժամ ի բաց լինիցի յայնմ հարկէ և մնայ ի նմին պարկեշտութե, յայնժամ առաջին հասակին նորա համարին ամենեքեան զգաստութիւն։ Յոյնպէս և մեք առնասցուք, մնալով ի նոյն պարկեշտութե, զի և զնախկին ջանս մեր բազում գովութեամբ առ ի յայ պաղաբերիմք։ Ա.հիւր վտանգիս ակն ունեաք, բոլոր գոյիւ մերոյ յափշտակութեան, այրման բնակարանաց մերոց հանդերձ բնակչօք, և զքաղաքս բառնալ ի միջոյ արարածոց, և զմնացորդս սորա կորուսանել զամենեսեան, զի եղիցի արօրադիր ակօսաբեկ առ ի վաստակել, այսմ ապաստելով ընդունել զսա։ Ա.յլ այս ամենայն ի յակընկալութենէ վերացաւ և ի գործ ոչ եկն։ Ա.յլ ոչ միայն

այս է սքանչելի զի ելոյծ զայսչափ նեղութիւնս, այլ զի մեծապէս բարի գործեաց ՚ի մեզ և զքաղաքս մեր զարդարեաց, և հանդերձ այսու փորձութեամբս հանդիսաւոր գործեաց, և Թէ զիարդ՝ ես ասացից։

Յորժամ առաքեցան ՚ի Թագաւորէն առնել քննութիւն եղելոցն հանդէպ այնմ ահեղական դատաստանացն, յորժամ զամենայն զպարտաւորսն և զհամարձակողսն կոչէին, և էր ամենեցուն մահու ունել կասկած, յայնժամ միայնակեացք որ ՚ի գլուխս լերանց էին բնակեալ այսչափ դարուք ամաց յուցանելով զիմաստասիրութիւն իւրեանց՝ արգելեալք ՚ի խուցս իւրեանց, ոչ ուրուք աղաչելով և ոչ խորհրդակցեալք յումեքէ, յորժամ զայնչափ մեգս տեսին եկեալ ՚ի վերայ քաղաքիս մերում, Թողին զյարկս իւրեանց և զայրս յամենայնէ կողմանց, և որպէս յերկնից հրեշտակ ի՞ջեալ կացին առ մեզ։ Եւ էր տեսանել յայնժամ զքաղաքս մեր յարկք երկնից ամենայն ուրեք երևեալ գունդ առ գունդ ժողովս սրբոցն այնոցիկ, և ՚ի տեսութենէն միայն միսիթարէին որք ՚ի նեղութենան էին։ Ո՞վ էր որ տեսանէր զնոսա և ոչ ծաղր առնէր զմահ և անտես առնէր զկեանս։

Եւ ոչ միայն այս էր սքանչելի, այլ և առ իշխանս նոցա գոլով՝ համարձակութեամբ յանդիմանէին վասն պարտապանացն, և ամենեքեան պատրաստեցան ՚ի հեղուլ զարիւնս իւրեանց և զկլուխս իւրեանց նախ ՚ի բաց դնել խորհեցան, մինչ զի զգերեալսն ակն ունելով յապրշտակել ՚ի նոցա վտանգիցն. և ոչ կամեցան նախ ՚ի բաց կալ, մինչև դատապարտիչքն ինայեսցեն ՚ի ժողովուրդսն, կամ առ հասարակ ընդ դատապարտեալսն առ Թագաւորն զնոսա առաքեսցեն։ Ապաւաճասիրութիւն է, ասեն, առ նմա որ ունի զտիեզերս հաւատարիմ բարեպաշտութեամբ և կեայ ընդ մեզ. մեք իսկ զնա զատեմք յայսմանէ, և ձեզ ոչ Թողացուցանեմք հեղուլ զարիւն կամ սրով զգլուխս հատանել։ Ա՛պա եթէ ոչ յանձն առնուցուք զայս, մեք ամենեքեան ընդ նոսա մեռանիմք։ Նաս իսկ մեծ էր համարձակութիւնն, խոստովանիմք և՝ մեք, այլ ոչ ՚ի վեր անցանէ եղեալ անօրէնութիւնս Թագաւորին մարդասիրութեանն։ Ա՛յսչեալ մի ոմն ՚ի նոցանէ բան լցեալ բազում իմաստասիրութեամբ. պատկերք, ասէ, անդրիանտացն որ կոր-

ծանեցան, յարեան կանխաւ և առին զկերպարանս իւրեանց, և եղելոցս այսմ եղև փութապէս ուղղութիւն. իսկ եթէ զնոյ պատկերսն սպանանէք, զիաւրդ դարձեալ կարող լինիք կոչել զմեղաւորսն ի դարձ կամ յարուցանել զկորուսեալսն և ածել զոգիս ի մարմինս իւրեանց զոր աւանդէք հակառակ լեալ նմա: Հազուագիւտ ինչ և վասն դատաստանացն ասացին նոքա: Ոչ էր որ ոչ զարհուրեր կամ ոչ էր որ ոչ աքանչանայր ընդ իմաստութիւն արանցն այնոցիկ:

Ադամ և մայր միոյ ի պարտաւորացն մերկացուցեալ զգլուխ իւր զանիւն ձողէր, և զորոյ հանդերձեալ էր դատել՝ կալեալ զերասանակ երիվարին ընթանայր, և մըտրակաւոր երիվարն և աղէտ զաւակին՝ մանուկ արիւնկան արարեալ զկինն ծերացեալ, և ոչ եթէ մանուկ միայն, այլ և ընթացակից երիվարաց, կալեալ զերասանակն ընթանայր ընդ մէջ փողոցին և այնպէս երթայր ի դատարանն, և զարհուրեցան ամենեքեան և աքանչացան ընդ գութ սիրոյ այնմ կնոջ: Ընդ նա եթէ մեռաւ վասն որդւոյ իւրոյ, չէր աքանչելի, զի մեծ էր բռնութիւն բնութեանն, և անյաղթելի էր կարիք նեղութեանն: Իսկ միանակեացքն այնոքիկ զոր ոչ էին ծնեալ, մանաւանդ զոր ոչ էին երբեք տեսեալ և ոչ կեցեալ ընդ նոսա, զոր միայն ի ցնորիցն ծանեան, և այսպէս սիրէին՝ որ թէ ունէին իւրաքանչիւր բիւր հոգի, հանէին զամենայն վասն փրկութեան ժողովրդեանն:

Այլ մի գուզայս ասիցես ինձ՝ եթէ ոչ սպանան և ոչ հեղին զարիւնս իւրեանց. այլ զի այսպիսիք առ դատապարտողս երևեցան համարձակութեամբ, և այսպիսի կամք ի լերանց ի դատաստանս ընթանային: Օ՜ի թէ ոչ յառաջագոյն զանձինս իւրեանց պատրաստեալ էին ի սպանութիւն, ոչ էին այնպէս զօրացեալ առ դատապարտողսն և կամ այնպիսի ցուցեալ նոցա հոգի մեծագոյն. և ահա աւուրս երկուս առ դրունս դատաւորին նստեալ կային, և զոր հանդերձեալ էին տանել ի տանջանսն՝ յափշտակէին ի գինուորացն:

Ուր էին յայնժամ ժողովուրդն բազում որք ի փողոցս Ջեմիէին յաճախեալք ի յափշտակութիւն չարեաց. զի քան զշունս առ սեղան թշուառականք երևեցան. վասն որովայնի զայն ամենայն առնէին: Ամենեքեան

յայնժամ Թողին զքաղաքս և փախուցեալք ՚ի յայրս Թագչէին, և ոչ ոք մնայր ՚ի քաղաքիս, միայն նոքա որք գործովք Աչմարտութեան զհմաստասիրութիւն ցուցանէին, և որպէս Լհ ոչ և մի վտանգ քաղաքիս եկեալ էր՝ այնպէս աներկիւղ ՚ի հրապարակս երևեցան։ Որք ՚ի քաղաքս բնակեալ էին, ՚ի լերինս և յանապատս փոխեցան. իսկ անապատաւորքն ՚ի քաղաքս մուծան՝ ցուցանելով ՚ի գործոց իւրեանց զոր յառաջին աւուրսն ոչ դադարէին յասելոյ՝ եթէ որ առաքինութեամբ կեայ, և ոչ ՚ի հուր հնոցի երբեք մեղանչել կարէ։ Ո՛չինչափ ևս հոգևոր իմաստասիրութիւն, որ քան զամենայն բարձրագոյն լինի և քաղցրութեան և տրտմականաց ամենայնի. ոչ յայնմանէ Թուլանայ և ոչ ՚ի միւսմէն ցամաքի և նուազի, այլ միայ հանապազ և կեայ զկուր զօրութիւն ցուցանելով...։

Յայսմանէ մի երբեք զեղծցուք, սիրելիք. այլ միայ լով ՚ի նոյն ակն կալցուք քաղցր յուսոյն...։ Ո՛այս և ընդ հելլենացիսն ասացուք յորժամ Համարձակին վասն իմաստասիրացն ասել մեզ։ Յայսմանէ յայտնեալ է բարիք, զի յառաջագոյն այն պատրանք էր որ ՚ի նոցա նէն. և ՚ի սմին իրաց յայտնի է, զի անդստին յառաջնմէ Աչմարիտ էր որ ՚ի մէնջ, զոր վասն Յովհաննու և Պաւղոսի և Պետրոսի և այլոցն ամենեցուն։ Որք զնոցա բարեպաշտութիւնն ընկալան, և զնոցին Համարձակութիւնն ցուցանէին. և զի ՚ի նոցին յօրէնս շրջեցան, վասն որոյ և նոցա առաքինութեան ցանկացան։ Իսկ վասն ցուցանելոյ մեզ զառաքելական առաքինութիւնն, չէ պիտոյ մեզ գիրք, զի գործք նոցա գոչեն ամենայն ուրեք, և աշակերտացն զվարդապետսն ցուցանելով. չէն[1] մեզ պէտք բանից զհեթանոսացն ցուցանելով շաղփաղփութիւն և զոր ՚ի նոցանէ յիմար իմաստասիրութիւն և զնեղահոգի նեղասրտութիւնն. գործք նոցա գոչեն և նոցա Լհ որպիսի յառաջագոյն ամենայն ինչ որ ՚ի նոցանէ էր՝ բարբանջք և ստուերք և պատրանք էին։

Ո՛րդ ոչ եթէ միայնակեացք միայն, այլ և քահանայք զնոյն բարձրագահութիւն ցուցանելով բաշխէին զիւրկութիւնն մեր։ Որմն ՚ի զօրապետս եդեալ զանձն[2],

1 Պակասէր յօրինակին չէն... ցուցանելով. յաւելաւ ՚ի յունէն։

2 Յօր. փոխանակ բառիցդ զանձն, զամենայն գրեալ էր վէրկինոյն։

զամենայն երկրորդ դնելով ՚ի սէր ձեր , և նա ինքն պատրաստեալ է մեռանել եթէ ոչ ՚ի հաւանութիւն ածցէ զԹագաւորն . և այսոքիկ աստ մնային , և սոքա միայնակեցայն ցուցանելով ՚ի ձեռն սիրոյ դատաւորս զնոսա ունելին , ոչ յօժարեցուցանել գնալ նախ մինչև դատաւորացն խոստանալ ՚ի կատարումն ածել զդատն . և յորժամ տեսանէին զնոսա , հայելով ՚ի նոսա սուրբք քաջութեամբ համարձակութեամբ , և նոքա զկնի եւին : Այնպէս յորժամ տեսանէին զնոսա յանցս , մերձենային յոտս և ՚ի ծունր և զձեռն համբուրէին , և իւրաքանչիւր զառաքինութեանն առաւելութիւն ցուցանէին՝ այլ և զազատութիւն և զհանդարտութիւն : Այս զի չէր խիզախէին նոցա համարձակութիւն , յայնմանէ զի ՚ի ծունր կնկեալ մերձենային յոտս և համբուրէին զձեռս , մինչև ուանդ ցուցանէին կանխաւ զի ոչ էին այն քանք փաղաքշանաց և ոչ ծառայական ինչ և ոչ առանց ազատութեան քնութեան նոցա եղև . քանզի իրացն հասելոց էր վկայել նոցա համարձակութեանն :

Ոչ եթէ զայս միայն ՚ի փորձութենէ պաղաբերեցաք զբարիս , այլ և բազում զգաստութիւն բազում հանդարտութիւն , և վասն իսկ եղև քաղաքս մեր : Ոչ այսպէս զսա զարդարէր ոսկեղէն պատկերք անդրիանաք եթէ կանգներ ոք ՚ի մէջ հրապարակաց , որպէս է այժմ պայծառ և երևելի . նա զի և զգեղեցկութիւն առաքինութեանս պատկերք անդրիանտացն ընդհեղին , և սա զիւր Ճոխութիւն եցոյց :

Այո , ասեն , բայց որ ՚ի Թագաւորէն՝ արտմութիւն էր և սաստիկ պատուհաս . սակայն և այն ոչ եղև ծանր բեռն , այլ մատոյց մեզ շահս բազումս : Ո՞րինչ գժուարին եղև , ասա ինձ , զի զկաքաւէնն արգել , և զասպարէզս կառավարացն անանցանելի գործեաց , զբար աղբիւրն արգել և եխիչ , զի մի երբեք բացցի : Աստի և արմատ ամենայն չարեաց բխեաց քաղաքիս , աստի և զսովորութիւն դարձուցին , որք զձայնս իւրեանց՝ կաքաւոցացն ծախսէին , և երեք դանդիւք մատնէին զփերկութիւնս իւրեանց : Այս արտմութեա՞ն իցէ , ով սիրելի , ասա ինձ : Այն այսոքիկ ուրախանալ պարտ էր և ցնծալ և հնարհս խոստանալ Թագաւորին , զի տանջանք նորա ուղղութիւն եղև և իրատ նորա մանկաժո-

ղով[1] եղև և քարկուԹիւն նորա վարդապետուԹիւն։ Եւ այլ բազանիք փակեցան մեզ. նա և այս չէ անպատրաստ. զի որք լսէք և Թուլացեալ և եղծեալ կեանս կայէն, ակամայ յիմաստուԹիւն եկեսցեն։

Եւ այլ զի քաղաքիս մեր իշխանուԹիւն բարձաւ, զի ոչ առ այլս կոչել զսա մայր քաղաքաց...։ Ու այս տրխուիցիս արդեօք. Ըմն եԹէ զինչ էր իշխանուԹիւն քաղաքիս, և յայնժամ ստոյգ գտանիցիս, եԹէ նորա որ բնակեալ էին՝ի քաղաքիս՝ ոչ էին մատնեալ, չէր որ կարող բառնալ զիշխանուԹիւն քաղաքիս։ Ել եԹէ վասն այնորիկ կոչէր քաղաքս մեր մայր քաղաքաց, զի ունէր ստացուածս և մեծուԹիւնս և գեղեցկուԹիւնս, և ոչ զի ունի սիւնս և սրահակս և գնացս բազմաց. զի որք բնակեալ էին՝ի սմա՝ բարեպաշտուԹեամբ կային, այս է իշխանուԹիւն և զարդ և պահապան քաղաքիս. և եԹէ այս մերձ ոչ լինի, քան զամենայն քաղաքս նուաստ գտանի, Թէ և բիւրապատիկ պատուով վայելէր՝ի Թագաւորէն։

Ըսորհիս ուսանել զքաղաքիս քո զիշխանուԹիւն. կամիս տեսանել զՀայրենիս սորա. ես ստուգուԹեամբ ասացից զայս, որ ոչ եԹէ ուսցիս միայն, այլ և ցանկասցիս նմին։ Զինչ ևս իցէ իշխանուԹիւն մերում քաղաքիս. "Եկեալ Անտիոք երևեցաւ կոչելով զաշակերտեալն քրիստոնեայս,. զայս ոչ ունէին որ յամենայն տիեզերս քաղաք էին, նա և ոչ Հռոմէլն քաղաք. վասն որոյ՝ի վերայ տիեզերաց սա կարողացաւ իբրև զՀայելն երևեալ վասն սիրոյն Քրիստոսի, վասն համարձակուԹեան ընդդէմ կռապաշտուԹեանցն, վասն այսպիսի քաջուԹեան։

Ըսորհիս և այլուստ լուր լինել զիշխանուԹիւն քաղաքիս և զգովաբանուԹիւն։ Ամէն երբեմն հանդերձեալ լինել, և որ բնակեալ էին Անտիոք, ժամանեցին որպէս կարողացան վաճառանման առաքել առ սուրբսն որ բնակեալ էին Երուսաղէմ։ Ահա և երկրորդ իշխանուԹիւն՝ի ժամանակի սովոյ զգաստասիրել. զի ոչ պակոյց զնոսա ժամանակն, և ոչ ծուլացեալս արար առկընկալուԹիւն ցաւոցին. այլ յորժամ ամենեքեան զայ-

1 Խմա՝ մանկածուԹիւն, դաստիարակուԹիւն։

լոց ժողովէին, յայնժամ նոքա զիւրեանց քաշէին, ոչ թէ որոց մերձն էին, այլ և որոց հեռագոյնս բնակէին։ Տեսեր հաւատս առ Աճ և սէր առ եղբարս և դրացիս։

Խորհիս և այլ իշխանութիւն զմերոյ քաղաքիս։ Չկին ոմանք ի հրեաստանէ Վնտիոք թիւրել զուղիղ քարոզն և հրեական խտիրս ածել ի մէջ։ Ոգբա ոչ համ բերեցին լռութեամբ ստութեան նոցա. այլ եկեալք և ժողովեալք յեկեղեցին՝ զՊաւղոս և զՆաւնաբաս առաքեցին Յերուսաղէմ և պատրաստեցին զառաքեալսն գրել ուղիղ և մաքուր պատուիրանս ընդդէմ հրէական խտրութեանցն, և առաքել ընդ ամենայն կողմանս աշխարհիս։ Ո՛յս էր քաղաքիս իշխանութիւն, այս աԹոռ, այս մայր քաղաքաց զսա արարեալ ոչ էԹէ յերկրի, այլ և յերկինս...։

Ո՛րդ որ իմն է քաղաք, էԹէ ոչ ունիցի քաղաքացիս Աճասէրս, քան զամենայն քաղաքս նուաղագոյն գտանի և քան զայրս անպատիւ։ Չէ զինչ ասեմ վասն քաղաքի. այլ զի իմասցիս Թէ առաքինութիւն միայն զարդարէ զընակիչս, ասացից որ քան զամենայն քաղաքս պարկեշտագոյն էր՝ զտաճարն ՅԱ որ ի մէջ Յերուսաղէմի կանգնեցաւ, զսա ցուցանել ձեզ փորձիմ։ Ո՛յսմ տաճարի յաձախ պատարագ և նուէրք և պաշտամունք և աղօԹք էին, այժմ ոՒր են սրբութիւնք սրբոցն և քերովբէքն և կտակարանքն և սափորն ոսկեղէն և մեծ նշան խնամոցն ՅԱ. ուստի և օծմունք ի վերուստ ստեպ բերիւր և յայտնութիւնք, ուր և մարգարէքն սովորական բանիւ մարգարէանային, ուր ոչ մարդկային ապրուեստ՝ այլ ՅԱ խնամատութիւնն սահման գործոյն եղև, ուր պարիսպքն ոսկեհուռն փայլատակէին, և բովանդակին առաւել քան զառաւել և նիւթքն բազմակատար և արուեստքն ստոյգ Ճշդիւտ՝ միայն զսա յայնմ ժամանակի այսպիսի ցուցանելով տաճար յերկրի։ Ոչ անաւանդ ոչ էԹէ միայն ստոյգ արուեստիւ, այլ և իմաստութիւնն ՅԱ յայն չինուածս մերձեցաւ. զի ոչ յանձնէ իւրմէ, այլ յՅԱ զամենայն իմացաւ Ոգումն, և զբոլոշին նկարագիր գործոյն գրոմէ յերկինից իջեալ՝ այսպէս նշանակեաց զտեղին և կանգնեաց զտաճարն։ Ո՛յլ սակայն սուրբս այս պեղեցիկ և սքանչելի և պայծառագոյն ապականեցաւ և այսպէս եղև անպատիւ, արհամարհե-

ցաւ և եղև պիղծ, զի նախ քան զգերութիւնն այրս ա-
ւազակաց կոչէր, և զկնի այնմ այրս խաղից, և յետ այ-
նորիկ՝ի բարբարոսական և յանսրբոց ձեռս մատնեցաւ։

Կամիս և վասն քաղաքաց այսպէս ուսանել։ Ո՛չինչ
քան զսոդոմայեցւոց քաղաքն պայծառագոյն. տունք գե-
ղեցիկ և շինուածք պայծառք, պարիսպք վայելուչք և
երկիր պարարտ և բարւոյ և նման դրախտին ՚ի, սակայն
գերեցան. իսկ խուղն Աբրահամու փոքր և գծուծ, և
ոչ ունէր պահապանս և ոչ մի։ Յորժամ եղև պատե-
րազմն բարբարոսական, զքաղաքն պարսպեալ որ բա-
զում ունէր ամրութիւնս՝ աւերեցին և ծառայեցուցին
բարբարոսքն, և զբնակիչսն գերելով գնացին. իսկ զա-
նապատ քաղաքացին Աբրահամ ոչ կարացին առնել
այնպէս։ Լե այս մանաւանդ յիրաւի. զի քան զբազ-
մութիւն և քան զամրութիւն պարսպաց բազում և ա-
ռաւել ունէր զօրութիւն բարեպաշտութիւնն։ Եթէ
քրիստոնեայ ես, քաղաք ոչ ունիս յերկրի, այլ յեր-
կինս։ Իսկ քաղաքին մերում արուեստաւոր և հրաշա-
գործող ՚ած է. և եթէ զամենայն երկիր հասանիցէ մեզ
ըմբռնել, սակայն օտար և նժդեհ և անցաւոր եմք ա-
մենեքեան. քանզի յերկինս գրեալ եմք, անդ քաղա-
քանամք. ապա մի զփոքրունս զտղայական խաղալիկս իբր
զմեծ ինչ ՚ի վեր անցեալ տեսանեմք։

Արդ ոչ եթէ մեծութիւն քաղաքի, այլ հոգի առա-
քինի է զարդ և ամրութիւն։ Ապա եթէ զիշխանութի-
կարծես եթէ իցէ քաղաքիս, իմա եթէ որչափ հնացողք,
որչափ ախտաժէտք մեղօք և ապականեալ բիւր չարու-
թեամբ հաղորդեալ են քեզ այսմ իշխանութեանս, և
արհամարհեալք յայսմ պատուոյ։ Այլ ոչ նա այնպէս.
քանզի անհնար է նմա հաղորդել, ոչ ցուցանելով զա-
մենայն առաքինութիւնս։ Ի՛ արդեօք անգէտ լինցաք
բարեաց. յայնժամ տեսցուք, յորժամ զիշխանու-
թիւն մերոց հոգւոցս առցէ ոք, յորժամ մեղանչեմք,
յորժամ ընդ ամենեցունց ՚ածն մարտնչիմք. իսկ այս որ
այժմ եղև, ոչ միայն թէ ինաս չէ քաղաքիս, այլ և օ-
գուտ մեծ ՚ի զուարթանալն մերում։ քանզի յաղատ և
՚ի բարեգործ և ՚ի զգաստ կին նմանեցաւ քաղաքս մեր.
երկիւղն զսա հանդարտ և պարկեշտ արար, և ազատե-
ցաւ ՚ի գալշէլեացն յայնցանէ որ համարձակեցան կե-
ղեալ գործն։

Ալ արդեօք կանանցաբար ողբաց ողբասցուք. քանզի լուայ ՚ի բազմաց ՚ի մէջ փողոցիս զի ասէին՝ վայ քեզ, Նինուէ, թէ զինչ եղեր կամ որպէս անարգեցար: Եւ զայս լուեալ ծաղր արարի զտղայաբարս խօսան: Ո՛ի այժմ ոչ է պարտ զայս ասել, այլ յորժամ տեսանիցես ՚ի կաքաւս, յարբեցութիւնս, յերգս դիւականս, զայթակղել յերդումն, յերդմնազանցութիւնս և ՚ի ստութիւնս, յայնժամ ասիցես զայսպիսի բանս՝ վայ քեզ քաղաք թէ զինչ եղեր: Իսկ եթէ տեսանիցես զՀրապարակս նուաղեալ ՚ի մարդկանէ և սակաւս ունել մարդիկ, և այնք հանդարտք և զգաստք և չափաւորք իցեն, երանեա զքաղաքն զայն: Ո՛ի ոչ նմա՛ ՚ի նմանէ իցեն մարդկանն պակասութիւնն, յորժամ առաքինութիւն ՚ի նոսա իցէ. քանզի և բազմութիւնն ոչ ինչ օգտէ երբեք, յորժամ ՚ի չարութիւնս իցեն: “Եթէ իցէ, ասէ, թիւ որդւոցն Իսրայէլի իբրև զաւազ ծովու, սակաւ ինչ մնասցորդք մնասցեն,,: Ել կարիցեն, ասէ, բազմութիւնքն Հաշտ առնել զնո՛ա: Յայսմ և Պրիստոս առնէր վատթարելով զքաղաքս ոչ վասն պակասութեան և ոչ զի ոչ էին մայր քաղաքաց. նա և զԵրուսաղէմ կանխաւ վատթարեաւ ասէ.“Երուսաղէմ Երուսաղէմ, որ սպանանէր զմարգարէսն և քարկոծ առնէր զառաքեալսն առ նա,,:

Ո՛ինչ օգուտ բազմութիւն քերիցէ, ասա ինձ, եթէ ՚ի չարիս ձգնիցին. այլ Հակառակն ինչ մեծ յայնմանէ լինիցի: Յա՛յժմ իսկ զեղեալ չարիսս զինչ այլ գործեաց, եթէ ոչ դանդաղութիւն և յանդգնութիւն և չարիք բնակչաց. մի՛թէ իշխանութիւն օգտեաց քաղաքիս ինչ. մի՛թէ շինուա՛ծք, զի մայր քաղաքաց էր: Յո՛ւր երկրաւոր թագաւորութեանս ՚ի սմա մեղուցելոյ ոչ ոք ընդդէմ կարացեալ՝ այլ ամենայն բարձաւ, և առաւել տեառն հրեշտակաց առաջի ոչ կացցէ իշխանութիւս այս յաւուր յայնմիկ, թէ և մայր քաղաքաց է, շինուածս յարկս և սրահակս ունի ընդարձակագոյնս և այլս այսպիսի իշխանութիւնքս: Եւ զինչ ասեմ յայնմ աւուր, զի և յանցաւոր ժամանակս զինչ օգուտ կարաց լինել զի մայր քաղաքաց էր քաղաքս: Ո՛րթէ ոք ոչ բնութի՛ ՚ի չարիս իցէ, յայսմ իշխանութենէ քաղաքիս ուղղիցի՛, կամ օգուտս ինչ և շահ յայսմ իշխանութենէ առ

նուցմե, կամ թէ հակառակ գոտւ արտմութեես, կամ զհիւանդութիւնս խոտութեան թուլացմոյց, կամ զայրիս երբեք յոգւոց ի բաց արար։

Մի խաղասցուք, ով սիրելիք, և մի ի բաղում կարծիս անկցուք, այլ ուսցուք թէ զինչ խնդրեսցի քաղաքիս իշխանութիւս, կամ թէ զինչ կարիցէ առնել զքաղաքաց մայր քաղաքաց։ Օ՜այս ասեմ զի ակն ունիմ դարձեալ զկերպարանս քաղաքիս դարձուցանել։ Արդասեր է Թագաւորն և ՚ծծասէր։ Խորհրդակցելով ձեզ որ յորժամ տացի անդրէն, մի մեծամտիցէք վասն այնր, մի զիողոցս զարդարելով զքաղաքս այնու պարկեշտացուցանել։ Այլ յորժամ կամիցիք զովաբանել զքաղաքս, մի ասիցէք զդաբնիդայ կամ զբազմութիւն ծառոց մայրից Ճղդարենեաց, և ոչ զաղբիւրս ջուրց և ոչ զբազմութիւն բնակութեան մարդկան ի քաղաքիս, և ոչ զի մինչ ի խոր գիշերաց սովոր եմք շրջել ի մէջ փողոցաց առանց երկիւղի. այլ թէ ունիցիք ասել առաքինութիւնս, հանդարտութիւնս, ողջմութիւնս, հըլուսութիւն, աղօթս, զգաստութիւնս, իմաստասիրութիւն հոգւոյ։ Յայսմանէ զարդարի քաղաքս, սոքա քան զամենայն քաղաքս պայծառագոյն առնեն զայս քաղաքս. և դարձեալ քան զամենայն նուաղագոյն լինի, եթէ ըզսոսա քաղաքակիցս ոչ ունիցի։

Օ՜այս ոչ միայն վասն քաղաքաց ասեմք, այլ և վասն մարդկան։ Եթէ տեսանիցես մարդ բազմամարմին և ոբիական՝ յառաջադէմ գոլով ի վեր անցանել քան զառջեւ Հասակին բարձրութեամբ, մի աքանչանար ընդ նա մինչև զոգիս նորա ուսանիցիս. մի յարտաքին գեղեցկութենէն, այլ ի ներքինս մտաց գեղեցկութենէ երանեսս զամենեսեան։ Փոքր էր Պաւիթ և գոյն մարմնով. բայց նուաղն և փոքրն յամենայն սպառազինութենէ մերկացեալ զզօրս և զզօրավարս յայնժամ՝ միայն զմարմ նեղէն բուրգն ի միոյ խոցմանէ սատակեաց. ոչ սուր սրեաց և ոչ նետաձիգ եղև և ոչ սուսեր մերկացոյց, այլ փոքր քարիւ միով գործեաց զամենայն։ Ոմն ասէ որոյ անն իմաստուն ասէ. "Մի գովես զմարդ ի գեղեցկութիւն իւր, և մի այլն առնիցես զայր ի տեսութենէ իւրմէ։ Փոքր է ի թռչունս մեղու, այլ քաղցր է պտուղ նորա „։

Օ՜այս և վասն քաղաքաց և արանց ասացուք, և առ

իրեարս իմաստասիրեսցուք, և ՚այ ընդհս կալցուք հա-
նապազ վասն անցաւորիս և վասն հանդերձելոյն, և հա-
մբերն աղաչեսցուք զնա ամենայն պաղատանօք, մինչ զի
որ ՚ի բանտի են բնակեալ և որք յօտարութիւն փոխա-
դրեալք հանդերձեալք՝ մի թողցէ զնոսա: ՚Յու մեք փու-
թասցուք զի անդամք մեր են և ընդ մեզ նաւակոծե-
ցան և ընդ մեզ ընդդէմ կացին ծփանաց. աղաչեսցուք
զմարդասէրն ՚ած, զի ընդ մեզ վայելեսցեն ՚ի խաղա-
ղութեան: ՚Ի որ ասասցէ՝ զինչ կարիս ե ինձ այսու-
հետև ազատել զոք ՚ի վտանգից, եթէ այս ումն կորեաւ
և միւսն ապականեցաւ: ՚Ի բարկացուցանէք զ՚ած վասն
անտես առնելոյ զայս. այլ որպէս թէ մեք ինքն իցեմք
՚ի վտանգս, այսպէս երկնեսցուք և այսպէս պաղատա-
նօք զ՚ած աղաչեսցուք կատարել ՚ի մեզ զբանն Պաւղո-
սի. “ ՚Ընդ կապեալսն կապեցարուք, ընդ չարչարեալսն
չարչարեցարուք ,,. և այնպիսի ասէ՝ որպէս թէ մեք եմք
մարմնով. “ և լալ ընդ լացողսն ,,: ՚Այս զմեզ և զնոսա
օգտէ մեծապէս. ոչ այսպէս ինչ զ՚ած ուրախ առնէ, որ-
պէս բազում յօժարութեամբ արտմել վասն անդամոց
մերոց, որպէս թէ մեք իսկ իցեմք և ոչ այլ ոք: ՚Ղա-
չեսցուք զնա համբերն և վասն մերձաւորիս և վասն հան-
դերձելոյն եւս առաւել, զի զմեզ յաւիշտակեսցէ յայնմ
տանջանաց: Իսկ որ մերձս են որչափ և իցեն՝ զերծա-
նելիք են և վճարել ունին, իսկ անդ տանջանք անմահ
և անձողոպրելիք են: ՚Այլ մեք զինի մխիթարութեանս
փութասցուք մի երբեք անկանել ՚ի մեղս յայսպիսիս,
գիտելով զի այնուհետև թողութեան հասանել ոչ կա-
րեմք:

՚Ու հասարակ ամենեքեան անկցուք առաջի ՚այ և ՚ի
սուրբ տանս յորում եմք ժողովեալք՝ ասասցուք. ար-
դարութեամբ և յիրաւի ածեր զայս ՚ի վերայ մեր վասն
մեղաց մերոց. և զամենայն զոր արարեր, արդար դա-
տաստանաւ արարեր. և մեղք մեր յարեան ՚ի վերայ
մեր, արա զմեզ ըստ անուան քում, և մի տալ թոյլ
երբեք առնուլ զփորձ այսպիսի նեղութեան. “ ՚Ի տար
զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա ՚ի չարէն ,,. զի քո է
արքայութիւն զօրութիւն և փառք ընդ հօր և ամենա-
սուրբ հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն:

ՃԱՌ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Վասն յառաջասացեալ վտանգիցն. և վասն պահոց. և ի բանն առաքելոյ « Ուրախ լերուք ի տէր յամենայն ժամ» :

Պ՚ատճառումն տեսի ուրախասցեալս և ընդ միմեանս ասելով՝ յաղթեցաք անցաք զհասարակ պահոցս : Արդ զայսպիսիս աղաչեմ մի վասն այսորիկ ուրախանալ զի անց հասարակ պահոցս, այլ այնմ զգուշանալ՝ եթէ յանցանացս մերոց մնաիցաւ հասարակն, և ապա յայնժամ ուրախասցուք. սա միայն արժանի է փափագանաց, սա խնդրուածոց, վասն որոյ ամենայնին լինի, զի զյանցանս մեր ուղղեսցուք, զի մի այսպէս ելցուք ի պահոցս որպէս մտաք ի պահս, այլ զարթուցեալք և զամենայն ի բաց դնելով զչար սովորութիւնս՝ և այսպէս երթիցուք ի սուրբ տօն զատկին : Արդ եթէ այս ամենայն ոչ է, ոչ միայն շահ ինչ չէ կատարումն պահոցս, այլ և վնաս մեծ : Ի՚ արդեօք ուրախասցուք եթէ կատարեցաք զերկարութիւն պահոցս, զի այս չէ մեծ ինչ. այլ յայնժամ ուրախասցուք, յորժամ հանդերձ ուղղութեամբ կատարեմք, զի ի գնալ պահոցս փայլեսցէ սորա բարութեանցս պտուղ : Վ՚ասնզի ի ձմերայնին անցանել յորժամ երթիցէ, յայնժամ ցուցանէ զշահն. ուստի եւ լանեն բոյսք և ծաղիկք, բխեն ծառք տերևս և պտուղս, և ի տեսութենէն գոչէ յեղանել ձմերայնին զօգուտս նորա : Այսպէս պարտ է և մեզ լինել. քանզի ատեպ ցաւով ի միմեանց վայելեցաք ի ձմերայնիս ի ժամանակի պահոցս՝ հանապազ հաղորդեալք վարդապետութեանս, և սերմանս ընկալաք հոգևորականս, և զփուշս փափկութեան կտրեցաք : Արդ նամբ արդեօք այժմ զոր ընկալաք պահել բազում ստուգութեամբ, զի յորժամ պահքս երթիցէ՝ բխեսցէ պտուղ պահոցս. և հանդերձ բարութեամբն զոր պտղաբերեցաք ի պահոցս, և զայս պահքս յիշելով : Եթէ այսպէս կազմեսցուք զմեզ, դարձեալ զգալոստ սորա փափագմամբ ընկալցուք :

Այ քանզի տեսանեմ զբազումն որ նեղին և հոգան

վան հանդերձեալ քառասնորդացն, ՚ի բազմաց լուեալ է իմ զի ասեն, յորժամ փոխիմք ՚ի պահոցս, ոչ առնումք հանգիստ և դիւրութիւն ՚ի հոգոց հանդերձեալ պահոցն։ Օ՛ինչ լինիցի քան զայս նեղասրտութիւն, ասա ինձ, կամ զինչ տակաւին իցէ այսմ պատճառ. յորժամ եկեսցէ պահքն ոչ զի ՚ի հոգիս մեր դնել բարիս փութամք, այլ կերակրոք միայն սահմանեմք, որպէս թէ մեծ ինչ ուղղութիւն յայտմանէ պտղաբերեցաք։ Արդ եթէ աղօթեաք զօրհանապազ, գալ խընդրեաք պահոցն, և հանդերձ գործովք ազդումն առնել ՚ի մեզ զպահոցն ուղղութիւն, և ոչ երբեք զյօժարութիւնս զայս արտաքսեաք ՚ի մտաց մերոց. զի եթէ ակն ունեաք այսմ, ոչ լինեաք թախանձեալք և տագնապեալք։ Վասնզի որ ՚ի միտս իւր զբարիս դիցէ և հոգայ վասն հոգւոյ իւրոյ, ոչ ամենևին կարողանան նմա տրտմութիւնք, այլ վայելէ հանապազորդ ՚ի մաքուր ցանկութիւն։ Այլ զի այս ձշմարիտ է, լուայք այսօր Պաւղոսի զի ասէ. "Ուրախ լերուք ՚ի տէր յամենայն ժամ, գարձեալ ասեմ ուրախ լերուք,,։

Վհատեմք զբազումն զի անհնարին կարծեն զասացեալս. զիարդ իցէ, ասեն, մարդոյ հանապազ ուրախանալ։ Ուրախ լինելն չէ գժուարին. իսկ միշտ ուրախանալն անհնարին է կարծել, զոր և ասեն իսկ. բազում տխրութիւնք նեղութեանց պատեալ են զմեզ։ Եթէ կորուսանէ ոք որդի կամ կին կամ սիրելի կամ կարևոր հարազատ, ո՞չ ապաքէն տրտմութիւն է այս և նեղութիւն, կամ թէ հասցէ կորուստ ընչից կամ սուվ կամ ժանգ կամ գործոց խափանումն կամ տան գործոց. մանաւանդ զի ոչ հասանեմք ամենայնի ասել որչափ վասն ընչից և ՚ի հրապարակս գայցեն մեզ տրտմութիւնք։ Այլ զիարդ հնար իցէ յամենայն ժամ ուրախանալ։

Հնար իսկ է, ով մարդ. և եթէ ոչ էր հնար, ոչ էր Պաւղոս պատուիրեալ և ոչ խորհրդակից լեալ, մարդ հոգևորական վայելեալ չիմաստութիւն հոգւոյն։ Ա՛ն որոյ ատեպ մեզ է ասել և յասելոյ ոչ խափանիմ. զի մի երբեք յայլոց ոմանց տակաւին ուսանիցիմք, այլ ՚ի սմանէ պարտ է մեզ ուսանել և իմաստասիրել, ցանկ և հանապազ ուրախանալ. քանզի այս է ամենեցուն ցանկալի, վասն որոյ զամենայն առնեն և ասեն և վաճառեն։

Ա աձառականն վասն այսորիկ նաւէ, զի ինչս ժողովեսցէ. ժողովէ ինչս, զի ունիցի միալ հանապազ յուրախութեան. և զինուորն վասն այնորիկ զինուորի, և երկրաւաստակն վասն այսորիկ վաստակէ, և իւրաքանչիւր ոք վասն այսորիկ ուսանի արուեստս. փառասէրքդ վասն այսորիկ ցանկան, զի՛ի փառս վայելեսցեն. ՚ի փառս խորհին վայելեալ, զի ուրախասցին. և իւրաքանչիւր յիրս փոյթ առ այս ձեռս լինել ՚ի վախճանին, և յայլ ինչ ոչ հային իւրաքանչիւր ոք։ Եւ բազումք ոչ հասանեն այսմ փուճոյ քարուքեանց զոր ասացի. ամենեքեան ցանկան, այլ ամենեցուն հասանել անհնարին է, զի ոչ հաւասար բերի անդ ձանապարհն։

Բազումք կարծեն թէ այսր պատճառ ձախանաձն իցէ. և եթէ չէր սա պատճառ, ոչ ոք ցանկայր երբեք ինչս ստանալ։ Բազումք ՚ի մեծատանց այսմ ոչ հասանեն, այլ այնպէս անկենցաղ կարծեն թէ իցէ կենցաղս, և բիւրք վասն մնհոյ աղօթեն յորժամ դժուարին աւուրց հասանեն, և քան որ յոյժ տխրեալք են՝ սոքա առաւել ՚ի տխրութեան իցեն։ Եւ զու մի զսեղանս նոցա տեսանիցես և զկերակուրս, այլ զոր յայտնեսցէ իրք ծնանին, ջարիք զուր, նեղութիւնք, տագնապ և որ այլ ևս քան զայս չարագոյնք իցեն, և որ անքնին են քան զայս չարիք՝ ՚ի փոխարկութիւն գալոյ խմնատասիրել ոչ ստանան, և ոչ քաջութեամբ զոր գան ՚ի վերայ նոցա՝ զօրեն բերել։ Ա՝ան այսորիկ ոչ* այնպէս ինչ թուին նոցա դժուարինք որպիսի են քնութեամբ, այլ և թէ թևք անբերելիք թուին լինել. որպէս և առ ազքատն հակառակն լինի, անտանելիքն տանելի թուին, զի քաշուեմ ինչ այսպիսի նոցա զմնաւ ածեալ է. զի ոչ այնպէս իրացն քնութիւն, որպէս կրեղեացն հանգամանք՝ մեծամեծս և փոքունս երևեցուցանեն զՀասեալ մեզ չարիսն ||։

* Հատուածդ ու այնպէս ... լաբիան ՚ի նորոյ թարգմանեցաւ ՚ի յունականէն, որ ազաւաղեալ թուէք յօրինակին մերում, որով և անիմանալի. և էր այսպէս. ու այսպէս նոցա վճանգ, որպէս է ըսք բնութիւնն, այլ զի ընկնաճգոյնս անբաժանելի կարծեն իրք ինչ այնոսիկ. որպէս և ազքատոյն հակառակն այսմ լինի, անյագելին բաժանելի երևի, և ու բազում յայսպիսեաց առաջի նոցա խորհելս զի ու բնութիւնք իրաց, որպէս գիտասցին զիարելոյ՝ և մեծ և փոքր առնել երևեսցի զոր և գայցէ ՚ի վերոյ մեր լոր։

Այլ զի մի հեռագոյնս ածիցէ զօրինակ պատմութեանս, իբրաքանչիւր այսոցիկ յիրացս որ եհաս մեզ՝ ասեմ։ Զի հաւասիկ ժողովք աղքատաց ամենեքեան անզգոյշ՝ ի վերանալոյ և աներկիւղ վայելեն. իսկ որք զքաղաքիս գործեն գործս, որք զերիվարս դարմանէին և զհնոս կազմէին և յայլ այսպիսի սպասաւորութիւն էին, նոքա՝ ի բանտի են բնակեալ այժմ. և վասն վերջին կատարածին երկնչին, և ամենայն պարտականաց համարձակեցոյ սոքա ունին զպարտաւորութիւնս և յերկիւղն կան հանապազ, և քան զամենեսեան Թշուառական կան այժմ, ոչ եթէ վասն մեծութեան վտանգիցն, այլ զի փափկութեամբ զառաջինն ժամանակս կային։

Ուազումք՝ ի սոյն միտիաթարեալք և խորհին քաջութիւն բերել զվիշտն՝ զայս ասելով, եթէ ոչ այսպէս խորհեաք կամ գիտեաք այսպէս իմաստասիրել, վասն որոյ ունիմք բազում միսիթարութիւն։ Այլ ոմանք դարձեալ կարծեն՝ եթէ որ ողջանդամք են, այս է պատճառ փափագանաց լսման, այլ չէ այս. զի բազումք որ առողջք են՝ և նոքա բիւրապատիկ աղօթեն մեռանել, զի ոչ համբերեն եկեղոց նոցա փորձութեանց։ Իսկ այլք առաջինն դնեն որք՝ ի փառս վայելեն և՝ ի զօրութեան միան և՝ ի բազմոց փաղաքշելով հպատակին, հանապազորդ ուրախութիւն եղեալ ասեն, որ և այս ոչ է։ Այլ զինչ ասեմ զառաջինսն յիշխանութեան. Թէ և առ Թագաւոր իսկ գլխովին վերացուցանեմք զբանս, գտանեմք և անդ բազում տխրութիւն պատեալ, և այս չափս առաւել ունել տրտմութիւն, մինչ զի յոյժ զգեցեալ է սա ծանրութիւն։ Այլ զինչ պարտ է ասել զպատերազմունս, զընդդիմամարտութիւնս, զաւարբարոսաց՝ ի վերայ յարուցմանս. բազում անգամ և նեղքնոց երկիւղն զարհուրեցուցանէ։ Վասնզի բազում Թագաւորք՝ ի ձեռաց պատերազմողաց փախեան. իսկ՝ ի պահապանաց մարմնոյ նոցա ոչ կարացին փախչել։ Այսպէս անթիւ է Թագաւորաց տրտմութիւն որպէս աւիք ծովու։ Իսկ եթէ Թագաւոր ոչ կարէ առանց տրտմութեան պահել զկեանս իւր, ո՞վ այլ ոք կարող իցէ ուղղել զայս։ Զի՝ ի կենցաղս յայս ոչ երբէք գտանել է զսա. սեսանես զի Պաւղոս՝ ի սակաւ բանս յայս եբաց մեզ զգանձս զայս։ Այլ ոչ է խնդրել բազում բանս և ոչ հեռի ձա-

նապարհ անցանել. այլ միայն եթէ ՚ի միտ առնուիք զա-
սացեալս, դիւրաւ գտանիցէք զՀանապարհն որ բերիցէ
՚ի բանս յայս։

Եւ ասաց պարզաբար՝ եթէ ուրախ լերուք յամենայն
ժամ, այլ ՚ի վերայ յաւէտ զպատճառն զՀանապազորդ
փափագանացն. "Ուրախ լերուք՚ի տէր յամենայն ժամ,,
ասաց։ Որ ՚ի տէր Հանապազ ուրախանայ, ոչ է հնար
անկանիլ յայսպիսի փափագանաց. իսկ այլ ամենայն
յորս ուրախանամք, դիւրաւ յաղթելիք և եղծանելիք
են. և ոչ զայս միայն ունիցի վտանգս, այլ զի և որք
ինան ՚ի նմին, ոչ ունի յայնմիկ զուրախութիւն, այլ
յոլովս ՚ի նմին լինի մեղ ուրախութիւն և դիմանալո-
տութիւն։ Իսկ երկիւղն ՚ի՞ զերկուս զայս ունի յինքեան,
զի ստոյգ է և անյաղթելի, և այսչափ քաշխէ չնորհս՝
զի և ոչ մի զգայութիւն տայ առնուլ մեզ զայնմ տրըտ-
մութեան։ Զի թէ որպէս պարտ է երկնչել յ՚ոյ և առ
նա կալ համարձակապէս, զարմանն փափագանաց պըտ-
զաբերէ, և զամենայն աղբիւրս ուրախութեան ունի-
ցի. և որպէս ՚ի համատարած ծով մինէղ անկեալ ան-
յայտ լինի փութապէս, այսպէս և երկիւղածին ՚ի՞ որ-
չափ և անկանին տրտմութիւնք, որպէս ՚ի ծովս շինջա-
նին և լուծանին։ Զի այս է սքանչելի մանաւանդ զի
տրտմեցուցանողքն մերձ գոլով, ինայ ինքն յուրախու-
թեան. և եթէ չէր որ որ տրտմեցուցանէր, ոչ մեծ էր
յայժ Հանապազ ուրախանալ. իսկ բազմայ մնալով որք
ածէն ՚ի տրտմութիւնս և ՚ի մէջ տրտմականացն ուրա-
խանալ՝ վերագոյն է քան զամենայն, այս իսկ են սքան-
չելիք։ Որպէս և զերիս մանկունսն ոչ էր այնպէս սքան-
չելի զի ոչ կարաց կիզել բաբելոնական հուրն. այլ այս
հիացուցանէր զամենեսեան, զի այնչափ ժամանակ խօ-
սէին ՚ի մէջ հնոցին և օրհնէին և գոհանային, և ելին
անտի առանց տրտմելոյ։ Զայսպէս վասն սրբոց տակա-
ւին է ասել. եթէ նոցա ոչ որք էր ածեալ տրտմութիւնս
և փորձութիւնս, ոչ էաք զարմացեալ ընդ նոցա Հանա-
պազորդ ուրախանալն. ընդ որ հիանալ արժան է, զի
քան զընութիւն մարդկան ՚ի վեր անցանէ այսպէս, զի
ուր բիւր ալիք շուրջանակի պատեալ էին, և նոքա ՚ի
խաղաղութեան վայելէին...։

Յորժամ ոչ մահ, ոչ կորուստ ընչից, ոչ հիւանդու-

թիւն մարմնոյ, ոչ անապրդանք, ոչ բամբասանք և ոչ այլ ինչ յայսպիսեացս կարիցէ տրտմեցուցանել, այլ մանաւանդ ուրախ և առնէ, որ ապա տրտմութեան պատճառս բերիցէ արդեօք. այլ, ասէ, միթէ չտիրէին սուրբքն. ո՞չ լուար Պաւղոսի որ ասէ. "Տրտմութիւն է ինձ յոյժ և անպակաս ցաւք սրտի իմոյ,,: Այո այս իսկ են աքանչելիք, զի տրտմութիւնք շահ են և փափագումն ուրախութեան յողբոց բերին. որպէս ապտակիք ոչ երկունս, այլ ցնծութիւնս ածեն, նոյնպէս և տրտմութիւնս այս կանխաւ այնմ մեծի պսակացն տուողք լինի: Այս այս իսկ են զարմանք, զի աշխարհիս ոչ եթէ տրտմութիւնք, այլ և խնդութիւնք ունին զվերջինն տեսանել. իսկ հոգևորականն հակառակ է այսմ ամենայնի. զի ոչ եթէ ուրախութիւնք միայն, այլ և տրտմութիւնք բազում դանձս բարութեան ունին. և թէ ո՞րպէս արդեօք՝ ես ասացից:

Այթէ տեսանիցէ ոք զքէնսամի իւր 'ի վերայ երկրի 'ի դժուարին կեանս՝ ուրախանայ, և յայնմ ուրախութէ բազում տանջանս իւր բերէ. և յորժամ գայցէ 'ի վերայ հնչեան տրտմութիւն՝ տրտմի, և տրտմութիւնն այն զնա հաշտ ոչ առնէ: Իսկ հոգևորականն՝ յորժամ տեսանիցես զեղբայր քո անկեալ և տխրիս, տխրութիւնս այս բազում բերէ 'ի վերայ զողորմութիւնն նմա: Տեսանե՞ս զի տրտմութիւնք վասն նմա առաւել քան զխընդութիւն աշխարհիս ընդունելի է: Այսպէս և Պաւղոս տրտմեցաւ վասն մեղաւորացն և վասն անհաւատիցն յնա, և բազում տրտմութիւնս այս բազում և մեծամեծ վարձս երեր նմա... ինքն իսկ ասէ. "Տրտմութիւն վասն նա ապաշխարութիւն է 'ի փրկութիւն,,: Այս զի ծանիցես եթէ ստոյգ են ասացեալքս, այսպէս իսկ է. եթէ տրտմիս վասն ընչից, ոչ ինչ օգտեցար. եթէ տրտմիս վասն հիւանդութեան, ոչ ինչ շահեցար, այլ և մանրեցեր զքեզ մանաւանդ:

Ի բազմաց լուեալ է իմ զի ասէին պատժելով զանձինս իւրեանց. զինչ օգտեցայ զի տրտմեցայ, ինչս ոչ դարձեալ ստացայ, և անձին իմոյ ինչս արարի: Այս եթէ տրտմիս վասն մեղաց, զմեղսն ջնջեցեր, և պտղաբերեցեր քեզ բազում փափագումն բարեաց. և եթէ տրտմիս վասն անկանելոյ եղբօրն, զքեզ միսիթարեցեր

և զնա զարձեալ ստացար. և թէ 'ի նոցանէ ոչ օգտիս, յայ մեծագոյն ունիս հատուցումն: Այլ զի ուսանիցիս թէ տրտմութիւն վասն անկանելոյ եղբօրն՝ թէ և ոչ օգտիմք՝ մեծագոյն մեզ հատուցումն բերէ.... Այնէ ես որ տանջեմ, ասէ, ոչ ուրախանամ առնել զայս, "զի ոչ կամիմ զմահ մեղաւորին,, պարտ է քեզ տեառն քո նմանիլ և վասն այսր տրտմել, որ թէ և իրաւամբք տանջի և դու տրտմիս ըստ այ, մեծամեծ օգուտս պտղաբերեսցես աստի:

Այդ յորժամ ապականեալքն քան զապականողսն երանելիք են, և տրտմեալք 'ի մէնջ քան զոր 'ի դիւրութիւնս արտաքոյ լաւագոյնք իցեն, և տխրեալքն քան որ 'ի խնդութիւնս են, զինչ ապա այսուհետև պատճառ իցէ մեզ տրտմելոյ: Այդ ոչ երանէ զայլ տրտմութիւնս, բայց որ վասն այ կենդանւոյ միայն: Այս և գիրն ասէ. "Այրանեալ է այր որ երկնչի 'ի տեառնէ: Այրանի մարդոյ զոր խրատես դու տէր և յօրինաց քոց ուսուցանես դու նմա: Այրանի ամենեցուն այք յուսացեալ են 'ի նա,,. և 'Այրիստոս զարձեալ ասէ. "Այրանի հեզոց. երանի խաղաղարարաց. երանի որ հալածեալ են վասն արդարութեան,,: Ցեսանէս վիարդ յամենայն կողմանց ոչ զմի որ 'ի մեծատանց, ոչ զաղնիւ ազգաց, ոչ զայն որ վայելէ փառօք՝ երանեն ածեղէն օրէնքն երբէք, այլ զայնոսիկ որք հոգան վասն առաքինութեան: Ասկ զնդրեալին զամենայն զոր և առնեմք կամ չարչարիմք, հաստատէ 'ի մեզ երկիւղն այ, և նա է պատճառ. այլ և զարմատս չարի խորտակէ. ոչ եթէ քաւութիւն միայն և պատիւ և փառս և բժշկութիւն մեզ հասուցանէ, այլ և չարիք ամենայն կորնչին՝ զոր, և անարգանք, հայհոյութեան բանք լիշոցաց, տանջանք, ագահութիւնք, և այլ որպիսիք են և բարեաց փափագմանն բխեն քեզ պտուղս: Այր օրինակ արմատք ծառոց որք դառնաձաշակք են, և պտուղս սիրականս և քաղցունս բերիցեն, այսպէս երկիւղ և տրտմութիւն չաղագս այ բազում բերէ մեզ փափագումն բարեաց:

Ասացի՛ր որք նեղութեամբ աղօթէին և արտասուս հեղուին՝ թէ որչափ պտղաբերեցին զուրախութիւն և զիարդ մանրս եղեն յիմնաստս հոգւոյ, զիարդ յարուցին զինքեանս քաղցր յուսով հանդերձ. զոր և ես միշտ

ասեմ՝ եթէ ոչ իրացն բնութիւն, այլ միտք մեր՝ի տըրտմութիւն և յուրախութիւն ածեն զմեզ։ Այս եթէ արդեօք պատրաստ զսա առնեմք որպէս և պարտն է, ամենայն բարիոք ցանկութեանց գրաւական ունիցիմք։ Այս որպէս մարմին ոչ այսպէս՝ի բնութենէ օդոյ և յարտաքուստ վանելոյ՝ որպէս յիւրմէ կազմուածոյ օգոյն և ջնասի, այսպէս և հոգի, բազում և առաւել։ Այսա հակ բնութիւնն, իսկ անդ ամենայն ինչ՝ի կամացն է։ Այսան որոյ և Պաւղոս բիւրս համբեր նեղութեան, ՝ի նաւակոծութիւնս, ՝ի պատերազմունս, ՝ի նենգութիս, յաւազակաց դարանակալութիւնս և այլս բազումս զոր ոչ օք թուել կարասցէ, և զի զօրհանապազ մահու մտանէր, և ոչ եթէ միայն ոչ տրբեցաւ կամ դժուարացաւ, այլ և պարծէր ևս և ուրախանայր և ասէր իսկ. "Ուրախ եմ ընդ չարչարանս,,. և դարձեալ. "Ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք ևս՝ի նեղութիւնս մեր,,։ Իսկ պարծանք՝ի փափագանաց կարդի իցէ։

Այս դու եթէ արդեօք բարութեան ցանկաս, մի ընչից, մի մարմնոյ, մի փառաց, մի բազմակատար սեղանոյ, մի գեղեցիկ պճնող հանդերձից, մի շահաւէտ ադարակաց, մի պայծառ և երևելի տանց, մի այլ ինչ այսպիսեաց զհետ երթար. այլ երթ զհետ իմաստութեան և ընկալ՝ի քեզ զառաքինութիւն, և ոչ ինչ յորում եսդ կամ յորոց ակն ունիս՝ տրտմեցուցանել զքեզ կարիցէ։ Այս զինչ ասեմ տրտմեցուցանել. ուր և յառաջադիր փափագանաց յոյս լինի քեզ յայլոց տրտմութենէ. նա և գանս և ապտակ և տուգանս և անգոսնութիւն և չար դիպուածք և մահ իսկ և ամենայն որ այսպիսիք են, յորժամ վասն այ գայցեն՝ի վերայ և զայս սկիզբն ունիցին, բազում՝ի հոգիս մեր ժողովէ զուրախութիս...։

Վասն այսուբ արդեօք հոգալ վասն հոգւոյ մերոյ, և ոչ օք զմեզ յանկարծ տրտմեցուցանել կարիցէ. և վասն եկելոց մեզ չարեացս զՅաճ աղաչեսցուք, մինչև զնոսա փրկել՝ի հասեալ վշտացս։ Օ՜ի կարող է Յաճ յանկարծակի արձակել՝ի վտանգից, և ոչ սակաւ մի ոչ թողուլ նշխարս. արդ զի մի դարձեալ յառաջինն դանդաղմունս եկեսցուք, տակաւին հողմք և՝ի հողմոց սակաւ մի ուղիս չարեաց կանխէ։ Այս զի այս Ճշմարիտ է, բազում ուղիք յառաջագոյն՝ի դանդաղմանէ եկին և չարեան. և եթէ

ոչ փուճապէս լուծաւ ամենայնին, յայտ յայնմանէ և եթէ տակաւին մնայ մնացորդքն մեղաց նախկին, և ևս զի թագաւորին առ ոմանս անյայտ է բարին, քանզի որք մուծող էին քաղաքիս գործոց՝ ամենեքեան՝ ի կապանս են. և բազումք որք՝ ի կապանս բնակեն՝ ի լզանալ կաթսին ընթանալ՝ ի գետ և բիւր խեղկատակութիւնս անդ անառակին, խայտան և պարեն կանայք զօշոտեալք։ Արդ որո՞ւմ քաւութեան նոքա արժանաւորք են կամ որո՞ւմ պատասխանւոյ, մանաւանդ թէ որո՞ւմ իսկ չեն արժանի խրատից և տանջանաց։ Զլուխք քաղաքիս մերը՝ ի բանտի, անդամք մերը յաքսորս և վճիռն անյայտ վասն նոցա. և դու պարո՛ն, ասա ինձ, և խաղաս և ծաղր առնես։ Զանց լուանալոյ, ասեն, ոչ կարեմք բերել։ Ո՛վ ապականեալ մնացդ, ո՛վ ապականեալ և անպատկառելի խօսիցդ. քանի՞ ամիսք անցին. ոչ տակաւին քան աւուրք են յորս փակեցան բաղանիք. և եթէ հանապազ բոլորովին առանց լուանալոյ մնային, տրտմիս և դժուարանաս։ Զ՞յսպէս էիր, ասա ինձ, յորժամ ակն ունէիր գալոյ զնուագացն, յորժամ օր ըստ օրէ ակն ունէիր մահու մեռանել, յորժամ յանապատս փախստական լինէիր և՝ ի գլուխս լերանց ընթանայիր։ Զթէ ոք քեզ յայնժամ պատուէր տուեալ էր և ասացեալ թէ հանապազ առանց լուանալոյ կաց և ազատիս յեկելոյ տագնապէս, ոչ ապաքէն խոստանայիր և պատրաստ լինէիր հանապազ կալ առանց լուանալոյ։ Պարտ էր քեզ գոհանալ զայ հանապազ, զի առանց ամենայն ինչ ասուց զայս ելոյծ ՝ած. խայտաս կանխաւ և անարգես, և յորժամ չև է երթեալ բոլոր երկիւղս՝ դու առաւել եկիր՝ ի դանդաղմունս։ Զ՞յպէս մերձեցաւ առ քեզ վտանգս զի կարօտ լինիս բաղանեաց...։

Օ՜ գոյր լեր զի առաւելագոյն տանջանաց՝ ի ներքոյ կացուցանես զքեզ և նեղութեան, և դարձեալ առաւելապէս աղաչես և ոչ կարիցես անցանել և զերծանել՝ ի պատժոցն, զի ոչ իցեն սպառնալիք գոյից. և դիպիս դարձեալ անբժշկելի պատուհասից, կատարելով առ քեզ զոր վասն դիւացն ասէր Քրիստոս, եթէ “Յորժամ այսն չար ելանէ՝ ի մարդոյ անտի, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և ոչ գտանէ. ապա ասէ՝ դարձայց անդրէն ուստի ելի, և գայ գտանէ պա-

բասզոդ մնքրեալ և յարդարեալ։ Ապա երթայ առնու ընդ իւր եօթն այլ չար քան զինքն և մտեալ բնակէ անդ, և լինի մարդոյն այնմիկ վերջինն չար քան զառաջինն ,,։

Արկիցուք արդեօք և մեք որ ոչ յառաջինն չարեացն փոխեցաք, ուստի առաւել քան զառաջինն չարի հանդիպիմք հանդերձ այսու ծուլութեամբս։ Պիտեմք զի դուք մաքուրք էք յայսմ աղտեղութենէ. բայց զանզգուշանան կալէք և չարչարեցէք, տանջեցէք զդաստացուցէք, զի հանապազ յուրախութեան կայցէք, որպէս և Պաւղոս հրամայեաց. որպէս զի ընդ ձերոց ուղղութեցդ և այլոց ինամակալութեանց բազում աստ և՛ հանդերձեալ կեանսն պտղաբերէք զՀատուցումն ընդհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ՁԱՌ ԻՆՆԵՒՏԱՆԵՐՈՑ

Խօսք վասն կեցուցիչ կիւրակէին ոտնի, և յհկելցն բազմութիւն. և թէ ամենեին չէ պարտ երդնուլ։

Ընդամենեցիք[1] ՚ի սուրբ վկայիցն յառաջագոյն յաւուրս յայս, լցայք հոգևորական ուրախութեամբ, խայտացիք զբարի խայտալն պարելով. տեսէք զիոզս մարմնոյ բացեալ, զաղիս հերձեալ, զարիւն հոսեալ և բիւր տանջանաց ժուժկալեալ. տեսէք բնութիւնք մարդկան ՚ի վեր երևեալ քան զբնութիւնս, և յարենէ պսակս. պարելով պարեցէք զբարի պարան յամենայն կողմանս քաղաքիս՝ այսմ բարի զօրավարիս ժողովելով զձեզ, այլ զմեր տակաւութիւնս հարկէր տակամայ ՚ի տունս մեռալ։ Բայց եթէ ոչ հաղորդեցաք տնտիս, այլ հաղորդեցաք փափագանաց. և եթէ տնտիւս ոչ վայելեցաք, այլ վայելեցաք յուրախութիւնս ձեր։

Կայսիսի է զօրութիւն սիրոյ, զի սրք ոչ վայելեն, ընդ որս վայելեն՝ ուրախանալ առնէ լինել համօրէն ընդ դրացիսդ ՚ի բարիս աճեալ հաւան առնելով։ Ումանս սրոյ և սրք ՚ի տունս նստուին, ուրախացան ընդ ձեզ. և

1 Ցօրինակին կեսզծ էր բառդ։

ոք ՚ի հիւանդութեան էին, ամենեքեան յարեան և ե-
կին առ ձեզ՝ տեսանելով զկարօտելն պատկերս ձեր և
հասեալ տօնիւս հաղորդել։ Ցօն մեծապէս կարծեմ
զհասեալ օրս վասն գալստեան ձերոյ, եղբարք, որք ըզ-
քաղաքս մեր այսօր վայելուչ արարէք և զեկեղեցիս
զարդարեցէք. ժողով որ ՚ի լեզուաց մերոց զատեալ և
ընդ հաւատս մեր միաձայնեալ. ժողով առանց բազմա-
հնար հայթհայթանաց կերակրել, և կենցաղ զգաստ
և պարկեշտ ունել։ Վանզի արանցս այսոցիկ ոչ է հան-
դէս և տեսիլ անօրինութեան, ոչ երիվարաց հոգս, ոչ
կանայք պոռնիկ և ոչ այլ ինչ քաղաքի բաջաղմունք.
այլ ամենայն պատշաճ օրինակաւ կեցեալք են, յամե-
նայն կողմանց պտղաբերելով բազում զգաստութիւնս։

Այսպէս պատճառն զինչ. վասն զի ցաւագին է կենցաղ
սոցա, և վարդապետութիւն առաքինութեան՝ կեալ
ըստ պատշաճի՝ գործել զերկիր, և ընդ այսմ արուես-
տիս մտանել արար, որում և այլոց հանդիպեալ, քան-
զի հասարակաց ՚ի կենցաղս մեր բերելով զսա ՚ի։ Այս-
նախ իսկ քան զյանցանան Ադամայ յորժամ վայելեր
բազում համարձակութեամբ, ՚ի սոյն հրամայեցաւ կալ.
ոչ ցաւագին և ոչ տառապանաց կեանս ունելով, բա-
զում պարգեւեալ նմա իմաստասիրութիւն։ «Այդ, ա-
սէ, զնա ՚ի գրախտին գործել զնա և պահել»։ Այս զինի
սորին առաւել ՚ի վաստակութիւնս հրամայեաց մտա-
նել։ Այսքա իւրաքանչիւր զայս իմացեալ՝ այժմ լծեալ
եղինս յարօրի ուսանին զմաձն վարել ՚ի խոր ակօսս հա-
տանելով. այժմ ՚ի սուրբ բեմս ելանելով և զանձինս
աշխատելոցդ ՚ի մեղս իբր մանգաղաս՝ որ զիուշս հա-
տանէ զերկրի՝ այնպէս բանիւ զմեղս մաքրեն ՚ի ձէնջ։
Այս զի ոչ ամաչեն ՚ի գործս, որպէս որք բնակեալ են ՚ի
քաղաքս մեր, այլ ամաչեն ՚ի դատարկութիւնս կեալ,
գիտելով զի նա զամենայն չարիս ուսուցանէ և առաջ-
նորդէ չար վարդապետութեան որոց սիրեն զնա։

Այսոքիկ են որ զառաքինութիւնս մեզ իմաստասի-
րեն, ոչ եթէ ՚ի կերպարանաց, այլ ՚ի բնութենէ զա-
ռաքինութիւնս իւրեանց ցուցանեն. մինչ զի արտաքոյ
երևեալք իմաստասէրք քան * զմերոսս Թ ատերական խա-

* Այդպէս է հարազատ իմաստ հատուածիդ ՚ի յունականն, զոր մեր օրինակս ունէր ու ՚ի չարիս և ու վերջաւորդ որդիք, այլ այնպէս անխնամ ճան։

ղուցն ոչ ինչ լաւագոյն ունին ||, ոչ քան զմերսացս և ոչ քան զձորձոց յօրինուածս առաւել ունիցին ցուցանել։ Ո՛չ այսոքիկ հակառակ են այսմ ամենայնի. և որք գաւազանօք և փերևետեալ մորուօք շրջին, ոչ կարողանան մատանել՝ ի մանձն ուսանելով, կամ պահել զհրամանս Աստուծոյ, և զանձինս իւրեանց զարդարել՝ ի հրամանացն Աստուծոյ մարիտ իմաստութեանն. և ոչ եթէ զհրամանս միայն, այլ և զգործս։ Ահ ասիցէ ոք զոյգ որք՝ ի վայրի բնակեն և՝ ի հալածանս և՝ ի մանաւանդ թիւնս մաշեալ լինին, ըստ հրամանացն Աստուծոյ, և են յիմաստութեան մեծի, վասն որոյ բիւրք յիմաստասիրաց եկեալ և բազում ծախեալ ոչ կարացին ողջ առնել, սոքա բազում ստուգութեամբ պատասխանի առնեն քեզ զամենայն մեծաւ իմաստութեամբ։

Այլ ոչ միայն այս է զարմանալի, այլ զի գործովք ըստուգեն զհրամանս Հաւատոյն։ Այլ զի հոգի անմահ ունիմք, և զի հանդերձեալ եմք զոր աստ գործեմք՝ պատասխանի տալ և առաջի կալ ահեղական բեմին, և ըզմիտս հաւան առնեն, և զամենայն կենցաղս՝ ի յայսմիկ կացուցչին յաւսալ, ուստի գեր՝ ի վերոյ եղեն ամենայն կենցաղոյս, խրատեալք յԾածկին գրոց՝ եթէ «Ընդարձն՝ ի հաւատոյ կեցցէ,,, և թէ «Յայս ոչ երբեք ամաչեցուցանէ,,. ապա ոչ ինչ որոց մարդիկ ակն ունին եթէ պայծառագոյն է, անկեալ կայցեն։ Սոքա և վասն այ իմաստասիրել հաւասար լինին զոր և հրամայեաց Ած։

Եթէ զոմն յիմաստասիրացն առցես և ածցես այժմ՝ ի մէջ, մանաւանդ զի և ոչ մի կարողութիւն է գտանել, և եթէ գտանիցէ ոք և հանդերձ գրովք նոցա զոր երբեմն նոքա իմաստասիրեցին՝ եկեսցէ յառաջ, բացցէ զիրս նոցա և ընթեռնուցու, և յայնժամ իմանաս թէ սոքա երկրագործքս զինչ ասեն պատասխանի կամ նոքա զինչ իմաստասիրեն, դիր առ միմեանս և քննեա, և տեսանիցես թէ որչափ իսկ սոցա իմաստասիրութիւն, կամ որչափ նոցա անմտութիւն։ Ո՛չ յորժամ նոցա խօսքն ոչ՝ ի նախախնամութեան վայելեալ զէքս, և ոչ զի յայ եղեն արարածք, և ոչ առաքինութիւն ինչ բաւականութիւն, այլ զրեալ կայ մեծութիւն, ազգի ազնուութիւն, արտաքոյ ամբարտաւանութիւնք և երևմունք և այլ ևս ծաղրականս քան զայսոսիկ. իսկ սոքա

և վասն իմաստից և վասն գատաստանաց և վասն հրա-
շագործութեան և զի զամենայն յոչգոյից ած ՚ի մէջ
ած և վասն այլոց ամենայնի իմաստասիրեն, որոց ար-
տաքինքն հաղորդ ամենևին ոչ լինին այսմ խրատուս,
վ աք որ ոչ յայսցանէ ուսցի զզօրութիւնն Քրիստո-
սի . . . . Ա՚ի այսուհետև ՚ի կերպարանաց զսոսա արհա-
մարհեսցուք, այլ աքանչասցուք ընդ միտս սոցա: Օ՚ինչ
օգուտ իցէ արտաքոյ զգեստ յորժամ ոգին թշուառա-
կան իցէ. զայրն ոչ ՚ի ձորձոց և ոչ ՚ի մեծութենէ մար-
մնոյ, այլ ՚ի յոգւոյն լաւութենէ պարտ է գովել և ըս-
քանչանալ: Ա՚երկացո զսոցա ոգիս, և տեսանիցես զգե-
ղեցկութիւն սոցա և զհնոյութեան մեծութիւն բանիւք
և հրամանօք և ամենայն կարգօք:

Ա՚մաչեսցեն այսուհետև հելլենացիք, քանզի ծած-
կին և շինքանին յիմաստասիրութիւնս իւրեանց: Օ՚յ
և ՚ի ժամանակս յորս կենդանի էին և զնոսա ուսուցա-
նէին, և զայն քնութեամբ յոյժ և բարձրամիտ հպար-
տութեամբ կարացին ուսանել զոյզն հրամանաւս, և ՚ի
նեղութիւնս փոքր մի անկեալ՝ սակայն և զայն կորու-
սանէին. իսկ աշակերտքն որսորդք և մաքսաւորք և ջուա-
նամանք և փոկաձևք ՚ի փոքր մի ժամանակս զտիեզերս
ամենայն ածին ՚ի Ճշմարտութիւն. և բիւրս յայսմանէ
եղեալ նոցա վասնզ և նեղութիւն, և ոչ եթէ միայն
ոչ շինաւ քարոզութիւն նոցա, այլ և ծաղկէ օր ըստ օրէ
և ՚ի մեծութիւն վերանայ, և իմաստասիրել ուսուցա-
նէ մարդկան տգիտաց և երկրպագծաց. որով բերկրեալ
առ Հաստարակ խօսին և պատմեն սոքա Հանդերձ այլով
ամենայնիւ ամենայն բարութեանց պատճառաւն, զսի-
րոյ ասեմ, զոր արմատացեալ ունելով փութացան առ
մեզ այնչափ ընթացեալ Հանապարհ և վաստակեալ
անդամօք իւրեանց:

Ա՚եր այսուհետև և մեք փոխանակ պարգևացս, սի-
րոյ ասեմ և խրատուցս, տայցուք զոցա Թոշակս, և այս-
պէս զչոսա առաքեսցուք. և նախ վասն երդմանն սկսցուք
զբանս, և ՚ի խոր արմատոյ ՚ի մտաց մերոց յամենեցունց
խլեսցուք զչար սովորութիւն: Խօրհիմ փոքր մի զոր յա-
ռաջն ասացի, և այսօր չիշեցուցանել ձերում սիրոյդ:

Յորժամ ՚ի Պարսից ազատեցան Հրեայքն, և ՚ի բըռ-
նութենէն յայնմանէ զերծեալք և եկեալք ՚ի հայրենի

երկիրն իբրեանց, յայնժամ եառես մարգարէն զտեսիլն. "Արձակի զաչս իմ և տեսի և ահա գերանդի թռուցեալ. և ասէ ցիս տէր՝ զինչ տեսանես. և ասեմ՝ գերանդի տեսանեմ թռուցեալ, քսան կանգուն երկայնութիւն և տասն կանգուն լայնութիւն նորա: Եւ ասէ ցիս. այդ են անէծք որ ելանեն 'ի վերայ ամենայն երեսաց երկրի. զի ամենայն վրէժ մահու չափ 'ի դմանէ խնդրեսցի, և հանէ զդա՝ ասէ տէր ամենակալ, և մտցէ 'ի տունն գողոց, և որ երդնուցուն սուտ յանուն իմ 'ի մէջ տան նորա, և վախճանեսցէ զնա և զփայտ նորա և զքարինս նորա,,: Եւ զայս ընթերցաք յայնժամ խնդրեմք այժմ թէ վասն ի՞ր արդեօք ոչ միայն գերդմնողն, այլ և զտունս նոցա վախճանեսցէ: Զուարի ինձ եթէ այս իսկ պատճառն, զի զչարաչար մեղացն տանջանս հանապազ կամի ինալ ՚ած, մինչ զի այսիւ զգաստ առնել զամենեսեան: Օ՛ի յորժամ մեռցի երդմնազանցն, ոչ թաղել 'ի գերեզմանս, զի մի մնրմին նոցա ընդ չարութիւն նոցա թաղեսցի, զտունն նոցա արարեալ գերեզման. զի որք մերձն են, ամենեքեան տեսցեն զայս և զպատճառս քակտմանն ուսանիցին և 'ի նմանելոյ այնմ մեղաց փախչիցին:

Յայսկս և 'ի Յոգում եղև. քանզի այրեցան 'ի միմեանց 'ի ցանկութիւնս իբրեանց, այրեցաւ և բնութիւն երկրի նոցա 'ի վերուստ եկեալ հրոյն. կամեցաւ ՚ած զի սոքա միասցեն հանապազ 'ի տանջանս: Եւ զգոյշ լեր այ մարգասիրութեանն. զի ոչ եթէ զմեղուցեալսն միայն արար այրել հանապազ մինչև ցայսօր, այլ նորա միանգամ այրեցեալ աներևոյթ եղեն. իսկ երեսք երկրին այրելով միշտ 'ի մէջ եդեալ ամենայնի, զի որք զինի գայցեն տեսցեն, և այժմ 'ի վեր քան զձայն երեսք երկրին ամենեցուն պայծառապէս երևի, և որք զինի զամենայն ազգս խրատէ. ոչ եթէ միայն գոչէ և ասէ՝ մի համարձակիք որպէս առ սոդոմայեցիքն, զի[1] մի պատիժս կրիցէք զսոդոմայեցւոցն: Օ՛ի ոչ այնպէս բանք երկեցուցանեն և խրատեն և 'ի միտս մարդոյ ածեն, որպէս տեսիլն ահեղական և զրոյցն չարեացն հանապազորդ ժամանակն 'ի վկայութիւն առեալ, ամենեցունց

1 Ցօրինակին պակասէր զի մ... զսոդոմայեցւոցն. յաւելաւ 'ի յունէն:

որ մերձ լինին երկրին այնմիկ՝ յուցանէ։ Օ՛ի և որք յաճախաւանչ գրոց զնոցանէ ասել և լուեալ ոչ առնուն ՚ի միտ այնպէս, իսկ յորժամ եկեալ անցցէ ոք յերկիրն յայն և տեսցէ զնա աներևոյթ եղեալ և զամենեսեան ՚ի չայրման, տեսցէ զգետին ամենևին ոչ երևեալ, այլ փոշի և ծուխ և չամանդաղ, չայնմ հայեցմանէ զարհուրեալ բազում զգաստութիւն ընդունի և երթայ այնպէս խրատեալ։։։ Ա՛ման այսորիկ և զտունս սուտ երդմանց աւերել երկեցուցանէ, զի և զայլս ՚ի նոցին տանջանացն զգաստս առնիցէ։

Այս այսօր ցուցանեմ զի ոչ մի տուն կամ երկուս կամ երիս աւերեալ են յերդմանց, այլ քաղաք բոլորովին և ժողովուրդք ՝ձեռապաշտք և ազգ և ազինք, որ վայելչին ՚ի բազում խնամն և փախեան ՚ի բազում վտանգից։ Այրուսաղէմ իսկ քաղաք ՝ձեր, ուր սրբութիւնքն և տապանակն և պաշտամունքն և այլն ամենայն, ուր մարգարէքն էին և չնորհք Հոգւոյն սրբոյ և տախտակքն կտակարանաց և սափորն ոսկեղէն, ուր և հրեշտակքն միշտ երևէին, քաղաք որ բիւր պատերազմաց հանդիպեալ և բարբարոսաց արշաւանաց, և որպէս անդամանդեայ զգեցեալ այնպէս միշտ այսն առնէր զնոսա, և երկրին ամենայնի գերելոյ և անյայտ եղելոյ՝ ոչ ինչ վտանգից զիպաւ քաղաքն այն։ Այս ոչ միայն այս ես աքանչելի, այլ զի և գանս չարաչարս տայր պատերազմողացն և այնպէս զնոսա առաքէր, և այնչափ վայելեալ չայ խնամակալութիւնն, զի վասն նորա ասել ՝ձեզ։ ՚՚Որպէս ողկոյզ խաղողոյ յանապատի գտի զՒսրայէլ, և որպէս վաղահասուկն թզոյ զՀարսն ձեր,,։ և վասն քաղաքին նոցա գարձեալ ասէ։ ՚՚Երթ և ասա ձիթենւոյ ՚ի գլուխս լերանց սիրելոյ,,։ Այայց սակայն սիրեցեալ չայ քաղաքն այն՝ որ չայնչափ վտանգից փրկեալ և բազում մեղաց թողութեան հանդիպեալ և յորժամ ամենեքեան կործանեցան՝ նա միայն եղև կարող փախչել ՚ի վտանգիցն մի անգամ և երկրորդ և երրորդ, նա ՚ի միոյ երդմանէ կործանեցաւ. և թէ զիարդ՝ ես ասացից։

Այղև Թագաւոր նոցա Ակեղեկիա ոմն. այամ Ակեղեկիայի Թագաւորն բարբարոսաց Ասորւոցն երդումն եդ զի մնասցէ ՚ի հնազանդութեան և մի՛ մարտիցէ ընդ նմա. իսկ նա յետ այնորիկ ՚ի բաց եկաց ՚ի

նմանէ և առ եպիսկոպոսդ Թագաւորն դարձաւ և կոչ-
ծանեաց զերդումն իւր, և վասն երդմանն այնմիկ դի-
պաւ չարեացն զոր լուայք։ Այս Հարկ է ասել և զա-
ռակս մարգարէին որ զամենայն յայտնեալ է. «Այլ ե-
ղև բան տեառն առ իս և ասէ. որդի մարդոյ, պատմեա
պատմութիւն և խօսեաց առակ առ տունն Իսրայէլի և
ասասցես. այսպէս ասէ աղոնայի տէր, արծուին մեծա-
թև երկայնատարած լիամագիլ որ խորհեցաւ մտանել
ի Լիբանան և առ զընտիր ընտիր մայրիցն և հան զմա-
տաղատունկն և տարաւ յերկիրն քանանացւոց և տըն-
կեաց զնա ի պարսպաւոր քաղաքին, և առ ի սերմանէ
երկրին և ցանեաց ընդ երեսս դաշտին, տունկ մատա-
ղատունկ ընդ առատութեան ջրոյ երևելի կարգեաց առ-
նել զնա. բուսաւ և եղև որթ տկար փոքր մեծութիւ
յերևել ուռոյ իւրոյ ի նմա, և արմատք նորա ի ներ-
քոյ նորա էին և եղև յորթ մեծ. եհան ղկիսղս և ար-
ձակեաց զբարուճակս իւր։ Այլ երևեցաւ այլ արծուի
մեծ, մեծամեծ բազմամագիլ,, ։ Արդ իւ աստ զթագա-
ւորն բաբելացւոց կոչէ. մեծ զնա և մեծամեծ և երկայ-
նամագիլ անուանեաց վասն բազմութեան զօրացն և հե-
ռի Ճանապարհին և վասն մեծ զօրութեանն և փութով
հասանելոյն։ Այլ որպէս արծուոյ զէն մագիլք նորա էն,
նոյնպէս և Թագաւորի զօրք և սպառազինութիւնք։ Լի-
բանան զՀրէաստան կոչէ, զի մերձ կայ լեառն այն յոր
խորհեցաւ մտանել բաբելացին. առ և տարաւ ի Բա-
բելոն՝ առնուլ ի սերմանէ երկրին և ցանել ընդ առատ
ջրով ի դաշտին, այսինքն բազում խնամով և տեսու-
թեամբ Հրամանն ետ նմա զոր Թագաւորն կացոյց։ Ուռ
այգի զքաղաքն կոչեաց զԵրուսաղէմ. իսկ որ ասէ՝ տըն-
կեաց զնա արծիւն և արմատք նորա ի ներքոյ, զՀաս-
տատութիւն նորա ասէ։ Այլ դարձեալ խորհի ցուցա-
նել զանօրինութիւն, մերթ զօրացն ձգեսցէ զնա ար-
տաքս։ Ուռ այլ արծիւ մեծ զԹագաւորն եգիպտացւոց
ասէ և բազմամագիլ զնոյն կոչէ։ Այլ ապա զինչ. «Այլ
ահա որթս այս պատեալ է զնովաւ, և առաքեաց ար-
բուցանել զնա։ Ա՛ան այսորիկ այսպէս ասէ տէր, ե-
թէ իցէ աջողեսցի,. այսինքն զի էանց զերդմանքն
և զպայմանութեամբ, եթէ կարիցէ ճնալ և ապրել և
ոչ անկանել։ Այլ ապա ցուցանէ թէ ոչ է այսպէս,

այլ կորնչի վասն երդմանն, և վասն տանջանացն նորա ասելով զպատճառն յաւել. "Ո՛չ ապաքէն արմատք նորա և պտուղք նորա նեխեսցին, և չորասցին ամենայն շառաւիղք նորա,,: "Ո՛չ բազկաւ մեծաւ և ոչ ազգաւ բազմաւ բռնեն Հարկանել և խլել զնա յարմատոյ իւրոյ,,. զայս կամի ցուցանել՝ եթէ ոչ մարդկային զօրութիւն աւերէ և կործանէ, այլ զի ինքն ած մարտնչի ընդ նոսա և ածէ՝ի վերայ նոցա վասն երդմանն: Այս ապա զառաքեալն ստուգաբանեալ ասէ. "Յորժամ եկեսցէ Թագաւորն բաբելացւոց Այրուսաղէմ,,. և ըստ կարգի յաւելուլով զընդդիմամարտութիւնս և ապա զերծումնն, "Այս զի ուխտեաց ընդ նմա, ասէ, ուխտ,,: Այս պա ասէ վասն ամբաստանութեանն և՛ի բաց կալոյն. և թէ առաքէ Հրեշտակս Այգիպտոս տալ նմա հեծեալս և զօրս բազումս: Այս զկնի սորին ցուցանէ թէ վասն երդմանն այս ամենայն կորուստ լինի, և՛ի ստելն Թագաւորին որ Թագաւորէ նոցա. "Կենդանի եմ ես, ասէ տգնապի տէր, եթէ ոչ զնա որ անարգեաց զնզուէն իմ և անց ըստ ուխտի իմ որ ընդ նմա,՛ի մէջ Բաբելոնի վախճանեսցի, ոչ զօրու մեծաւ, այլ զի անարգեաց զերդումն և անց զուխտիւն: Կենդանի եմ ես, ասէ տգնապի տէր, եթէ ոչ ըստ ուխտին իմում զօրով անց և ըստ երդմանն իմոյ զոր անարգեաց, Հատուցից՛ի գլուխ նորա, և սփռեցից զվարմ իմ և ըմբռնեսցի պաշարմամբ իմով,,: Ցեսանեմ թէ զնարդ ոչ մի անգամ և երկիցս, այլ բազում անգամ ասէ վասն երդմանն այս ամ դիպեալ նմա. և զի անժուժելի է ած անարգել յերդմանէ:

Այս և ոչ՛ի տանջանաց միայն եկելոց կործանումն քաղաքին վասն երդմանն է տեսանել զայս, այլ և՛ի Հոգալոյն տեառն Ջանիւ մեծաւ. մի կոխեր զերդումն: "Այս եղև, ասէ, յամին իննեներորդի Թագաւորին Սեդեկիայ յամենեան տամեներորդի որ օր տասն էր ամսոյն եկն Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելոնի և ամենայն զօրք իւր՛ի վերայ Այրուսաղէմի և բանակեցան շուրջ զնովաւ, և շինեաց շուրջ զնովաւ պարիսպ և պաշարեցաւ քաղաքն մինչև ցամին մետասաներորդ Սեդեկիայ արքայի. և սաստկացաւ սով՛ի քաղաքին և ոչ գոյր հաց ժողովրդեան երկրին,,: Կարող էր Այտուած յառաջնմէ՛ի միում աւուր մատնել զնոսա վաղ-

վաղակի և առնել ընդ ձեռամբ պատերազմողացն. այլ վասն այնորիկ զերիս ամն Թոյլ ետ Աստված, և չղջապատեալ զնովաւ Թոյլ ետ չարաչար պատերազմել ընդ նմա, զի զնուաւորացն արտաքուստ երկիւղն և 'ի ներքուստ սաստիկ սոսկն լքանիցէ զնոսա: Եւ զգաստանային և ակամայ զԹագաւորն Հարկանէին հաւան լինել բարբարոսացն, և այնիւ լինել միսԹարութիւն ինչ յանցանացն: Եւ զի այս ձշմարիտ է, ոչ է իմ բանս, այլ մարգարէին որ ասէր ցնա. "ԵԹէ եղեալ առ Թագաւորն բաբելացւոց, կեցցէ անձն քո և քաղաքս մի այրեսցի հրով, և կեցցես դու և տունն քո: Իսպա Թէ ոչ ելցես առ իշխանս Թագաւորին, մատնեսցի քաղաքդ 'ի ձեռս քաղդէացւոցն և այրեսցեն զսա հրով, և դու ոչ ապրեսցիս 'ի ձեռաց նորա: Եւ ասէ Թագաւորն ցԵրեմիա. իմ բանք ինչ են ընդ Հրեայսն փախստականս առ քաղդէացիսն, գուցէ տայցեն 'ի ձեռս նոցա և ձաղիցեն զիս: Եւ ասէ Երեմիա, ոչ մատնեսցեն զքեզ. բայց լուր զբան տեառն զոր խօսիմ ընդ քեզ, և լաւ իցէ քեզ և կեցցէ անձն քո: Իսպա Թէ ոչ կամիցիս ելանել, այս բան է զոր ետուցէ ինձ տէր. ահաւադիկ ամենայն կանայք որ մնացեալ իցեն 'ի տան Թագաւորիդ Յուդայ հանցեն առ իշխանս արքային բաբելացւոց, և նոքա ասիցեն՝ խաբեցին զքեզ և յաղԹեցին քեզ արք խաղաղապարք, և արկցեն 'ի գայԹակղուԹիւն զոտն քո և դարձցին 'ի քէն, և զամենայն կանայս քո և զորդիս քո հանցեն առ քաղդէացիսն, և դու ոչ ապրեսցիս 'ի ձեռաց նորա, զի 'ի ձեռս Թագաւորին բաբելացւոց ըմբռնեսցին, և քաղաքդ այրեսցի հրով,,: Իսկ յորժամ ոչ հաւանեսցաւ լսելով զայս, այլ մնաց 'ի մեզս և յանօրէնուԹիւնս, զկնի երից ամաց մատնեաց զքաղաքն ԱՓ, և եցոյց զիւր մարգասիրուԹիւնն և զնորա անմտուԹիւնն: "Եւ պատուէրեաց, ասէ, քաղաքն, և մնին ամենայն զօրքն բաբելացւոց և այրեցին զտունն տեառն և զտունն Թագաւորին և զամենայն տունս Երուսաղէմի, և զպատիսան Երուսաղէմի քակեցին. և զամենայն աղաստս Յուդայ կոտորեաց արքայն արս վաԹսունս, և զամենայն ժողովուրդն առ Հասարակ խաղացոյց 'ի գերուԹիւն. և զօրքնուԹիւնն որ 'ի տան տեառն, զսիւնան պղնձիս և զմեքենովքն և զծովն պղնձի և զսանան և զկաԹսայսն

և զտաշան և զտուփա առին, և զբուլվառոն և զափսեն արծաթիս և ոսկիս, առ դահճապետն և տարաւ ՚ի Յաբեղեն և ասէն. և ՚ի քահանայիցն զառաջինն և զայլ պատուական գործակալն տարաւ առ արքայն ՚ի Յաբեղեն ՚ի Գեբդաղաթ և ասան վնասա անդ ,,։

Յիշեա արդ ինձ զմանգաղն Թռուցեալ առ ՚ի կոծանել զտունս երդմնողաց և զխորտակումն զքարանցն և զփայտիցն։ Յիշեա ինձ զայս եթէ զիարդ եմուտ երդումն ՚ի քաղաքն Յրուսաղէմ, և զտունն և զտաճարն և զզարնսպս և զպայծառ շինուածն քակեաց և ՚ի հող ինքայ զքաղաքն. և ոչ սրբութիք սրբոցն և ոչ անօթքն սուրբ և ոչ այլ ինչ գործոյց զտանջանաց և զչարչարանաց որ վասն երդմնազանցութեանն։ Արդ քաղաքն այսպէս ողբալի և ողորմելի եղեալ. և որպէս զնա քակեաց գերանդին Թռուցեալ, նոյնպէս և զամենայն տունս ուր երդումն լինիցի։

Արդ լուր գարձեալ. իբրև խրատատեցաւ պարիսպ քաղքին, ,,Իմ արքայ, ասէ, և Տէր արք պատերազմողք արտաքս ՚ի գիշերի ընդ Ճանապարհ դրանն ընդ աջմէ պարսպացն. և սիդեցաւ զօրն քաղդէացւոց զհետ Թագաւորին և հասին նմա յԱրաբովթ Յերիքովայ, և Տէր զօրք նորա ցրուեցան ՚ի նմանէ. և կալան զԹագաւորն և ածին առ արքայն բաբելացւոց ՚ի Գեբդաղաթ. և խօսեցաւ ընդ նմա դատաստանաւք, և զորդիսն Սեդեկիայ սպան առաջի նորա, և զաչս Սեդեկիայ կուրացոյց, և կապեաց զնա կապանօք և տարաւ ՚ի Յաբեղեն ,,։ Օ՛րինչ է՝ խօսէր ընդ նմա դատաստանաւք։ Խնդրեաց ՚ի նմանէ զպարտս, և դատաստան առնոյր ընդ նմա. և նախ զորդիս նորա սպան, զի տեսող լինիցի իւրոց վշտացն և յիշեսցէ զաւաչին անհաւատութիւնն, և ապա փորեցին զաչս նորա։ Ասան էր սրդեօք այս լինի գարձեալ. զի վարդապետ առաքեսցէ զնա բաբելացոցն և որոց գերեցան անդ երթայեսցուք. և զի ուսցին Հրեայքն զրք տեսցեն զկատարումն նորա եթէ որչափ չար է երդումն. ոչ եթէ նոքա միայն, այլ և որ քնակեալ էին շուրջ ՚ի Ճանապարհին տեսանէին զվապեալն, ուսանէին ՚ի չարեացն զմեզացն զմեծութիւն։

Ասան էր սին ՚ի մարգարէիցն ասէ՝ ոչ տեսանել ըզՅաբեղեն, և միւսն եթէ ՚ի Յաբեղեն երթիցէ։ Այսուհ

մեզ թէ հակառակ են մարգարէութիւնքս, այլ չէ այն-պէս. երկոքին չհամարիտ են. քանզի զԱրաբեցն կեղեկիա ոչ ետես և ածաւ ի Բաբելոն։ Իսկ եթէ ածաւ, զիաթդ ոչ ետես զԱրաբեցն. զի ի հրեաստան գկուրութիւնն ընկալաւ. ուր վերդումն ստեաց, անդ էառ ըզդատն և տանջանացն համբերեաց։ Որպէս ածաւ ի Բաբելոն. գերի եղև։ Իսկ երկուս տանջանս կրեաց, մինն կուրութիւնն և միւսն և գերութիւնն. զայս մարգարէքն բաժանեցին, ոմն ասաց թէ ոչ տեսանիցէ զԲաբելոն և միւսն թէ ածաւ ի Բաբելոն։

Օ այս խմացեալ, եղբարք, և զասացեալսն նախ քան զայս ի մի վայր ժողովեալ, յիշեցէք և լուեցէք յայնմ չար սովորութենէն, այս աղաչեմ և յաղաչելով ոչ դադարեմ։ Իթէ ի հնումն որ ոչ ստուգիւ պահանջելի էր իմաստութիւն՝ այլ բազում ընդարձակութիւն էր այնմ օրինաց՝ այնպիսի բարկութիւն եղև վասն միոյ երդմանն և այնչափ գերութիւն, այժմ զինչ այսչափ պատուիրանաց և առաջադրութե զինչ իրաւունս կամ Թողութիւն կայցէ որք երդնուն։ Իթէ այս իցէ խրնդրելոյ, զի մինչ ի ժողովարանս եկեսցուք մեք և լուիցուք զասացեալս։ Իսա այս իսկ առաւել դատապարտութիւն է և տանջանք աննեղելիք յորժամ ստէպ լսեմք և ոչ առնեմք զասացեալն։ Օ որ Թողութիւն կամ զոր պատասխանի ունիցիմք յորժամ յառաջին հասակէն մինչև ի վերջին ալիս աստ ժողովիմք և այսչափ վայելեմք ի վարդապետութիւնս, և յոր եմքն՝ ի նոյն միամբ և ոչ մի յանցանս ոչ ուղղեմք։

Իի ոք ինձ այսուհետև պատճառեսցէ զսովորութիւն երդմանն. վասն որոյ նեղիմ և սգամ և բարկանամ ևս, զի ի սովորութենէ փոխել ոչ կարեմք։ Իսւ եթէ ի սովորութենէ փոխել ոչ փոխիմք, զիաթդ կացցուք ոչ ի ցանկութիւնս. սա սկիզբն ի բնութենէ ունի։ Օ ի ցանկութիւն բնական է, և չար ցանկութիւն ի կամաց է. իսկ երդումն ոչ ի կամաց և ոչ ի բնութենէ, այլ ի ծուլութենէ միայն։ Իսւ զի ուսանիցիս թէ չէ դժուարլին գործս, այլ ի մերմէ սատրագութենէ մինչ ի յայս մեղս ելանէ, և զի չէ դժուարին զսա ուղղել մարդոյ, տեսցուք զինչ սատանայ կարգեաց կամ որպէս լի ցաւօք կամ որպիսի փութով և ջանիւ, և ոչ եղև արգել նորին հրամանացն...։

Յորժամ ՚ի խաղս կաքաւելով զՀանդերձս քարշեն, և որպէս Թէ Թևս առեալ խայտասցէ Ճեմելովն մարմ նովն աղջամղջեալ, ոմ տեսանիցէ զայս և ոչ զարհուրի։ Լայք դանակս սրեալ և յօդս կախեալ և ամենեքեան միասու միասցեն, զիաւրդ է ոչ ամաչել և պատկառել որ զայս ամենայն ջանս վասն մարմնոյ դնելով, և վասն առաքինութեան Հոգւոյ՝ ուր չիք ցաւք և գան՝ ոչ մի բե րել փոյթ։ Կամ Թէ զայնց արանց ասիցեմք որ ձողա կերպ գերան ՚ի վերայ Ճակատուն բարձեալ և որպէս ծառ արմատացեալ ՚ի վերայ երկրի՝ այնպէս անշարժ և հաստատուն պահեն։ Կրնայ ոչ այս միայն է զարմանալի, այլ և մանկունս փոքունս ՚ի վերայ եղեալ փայտին մարտ եղեալ ընդ միմեանս պատրաստին, ոչ ձեռք մերձ և ոչ այլ անդամ ՚ի մարմնոյ, այլ Ճակատովն միայն կապեալ ամենայն զգուշութեամբ բերիցէ զգերանն անշարժելի։ Լայլ ոմն գարձեալ ՚ի վերայ չուանի բարակի և անձկոյ այնչափ աներկիւղ վազս առնէ որպէս և մանկունք ՚ի դաշտս արշաւեն. և սակայն զայս ՚ի մտայ հաստատել կարծեն վասն զօրաւոր արուեստին։

Օ՜ինչ ունիցիս վասն երդմանց ասել, ասա ինձ, զոր դժուարութիւնս զոր քրտունս զոր արուեստ զոր նեղութիւն. կամելոյ միայն և սակաւ մի ջանալոյ պէտք են մեզ, և վաղվաղակի ամենայն լինիցի։ Կրնամ ասիցես Թէ զաւելորդն ուզեմ. Թէ ոչ զամենայնն ուզիցես, ոչ ինչ է. և մի համարիր Թէ արարի, և ակն ունել. քանզի ՚ի սակաւս յայսմիկ պղերգանալ՝ և այլն ընդ նմին լուծանի։ Կաղաչեմ անգամ տուն ոք չինիցէ և ՚ի վերոյ ձեղուն արկանիցէ, Թէ գնալ լինիցի և միոյ աղիւսոյ անկանել և այնմ յարմարել ոչ ջանայցէ, բոլորովին զամենայն տունն կորուսանէ։ Օ՜այս և ՚ի ձորձս է տեսանել. Թէ փոքր մի հերձ լինի և ոչ կարիցէ, մեծագոյն ևս պատառի։ Օ՜նոյն տես և յուխս ջուրց. Թէ սակաւ մի անց գտանիցէ, զընաւ տեղին զայն գնացս ջուրց առնիցէ։ Կրնդ այնպէս արասցես, զի յամենայն կողմանց պարսպեսցիս. և մի կողմ Թէ միասցէ, խից և զայն ՚ի սատանայէ, զի հաստատուն միասցես յամենայն կողմանց։

Տեսեր զմանգաղն, տեսեր զգլուխն Յովհաննու, լուար զԹուոյն Պաւուղայ, հայեցար զՀրէշտակաւոր գե-

թութիւնն, լուաւ և զշրջմանն Քրիստոսի որ ասէ ոչ եթէ վասն երդմնազանցութեան միայն, այլ և վասն երդմանն. քանզի սատանայական է և կաղմիչ այսմ աշխարհի չարեացս. լուաւ և ուսաւ զի ամենայն երդումն երդմնազանցութիւն ծնանի. զայս ամենայն ժողովեա և դրեա՛ ի միտս քո: Եթէ տեսանես եթէ արդեօք կանայք տղայոց փոքունց փոխանակ մեծ պահապանաց աւետարանս յօրինեն՛ ի վերայ պարանոցացն, և յամենայն կողմանց ուր և երթիցեն՝ բերիցեն զնոսին. և դու զպատուիրանս աւետարանին և զօրինս դրեա՛ ի սիրտս մտաց քոց. ասա ոչ է պէտք ոսկւոյ և արծաթոյ, ոչ զրոյց ծախս, կամք և յօժարութեան միայն պէտք են. ունիս պահապան զաւետարանն, ոչ եթէ արտաքուստ վերաբերելով, այլ՛ ի ներքս յշահեմարանս հոգւոյդ դնելով զգան վարդապետութեանս: Յորժամ ելանիցես՛ ի մահճաց քոց, ՛ի մտանել և ելանել քո՝ զօրինս զայս ասասցես՛ ի միտս քո զոր Քրիստոս ասաց. "Նեմ ձեզ՝ ամենևին մի երդնուցուք,,. և եղիցի քեզ օրինս այս վարդապետութիւն. և ոչ իսկ պէտք են վաստակոյ, այլ սակաւ մտադիւրութեան: Եւ զի այս Աչմարիտ է, յայտ յայսմանէ է, յորժամ կոչես զորդի քո և երկեցուսցես զնա և սպառնաս և փոքր մի գանեսցես և ասասցես, եթէ ոչ ուղղեսցես զօրինս՝ սատիկ գանս արբեցես, արդ տես թէ արդեօք վաղվաղակի՛ ի բաց կացցէ՛ ի սովորութենէն: Եւ զիարդ ոչ իսկ այս ապիրատութիւն, զի փոքունք տղայք առեալ՛ ի մէնջ երկիւղ կան՛ ի հրամանս մեր, և մեք այսպէս չար ոչ երկնչիմք որպէս և մանկունք՛ ի մէնջ երկնչին:

Օ՞ր վերադոյնն ասացի, և ասա ասեմ. դիցուք մեք օրինս մեզ նախ ոչ վասն դիմաական կարդաց և ոչ վասն մերոյ ինչ գործոյ մերձենալ յայլ ինչ մինչև լցցուք զօրինս զայս. իսկ յորժամ հարկաւ գայցեմք յայս, հետեւեալ լինի և կատարի օրինս, և այսու զարդարեմք ըզմեզ, զարդարեմք և զքաղաքս մեր: Եւան և տես թէ որպիսի հաւնաւ տարածի ընդ ամենայն տիեզերս՝ եթէ Քնահոգի սովորութիւն կալաւ որպէս քրիստոնէից վայելէ, զի ոչ օր լսէ և ոչ հարկ ինչ լինիցի երդման: Ուսիցեն զայս և մեր դրացի քաղաքք. մանաւանդ ոչ եթէ դրացիք միայն, այլ և ընդ տիեզերս բանս այս երթայ.

զի և վաճառականք որ խաւսին ընդ ձեզ սատ, և այլք որք մնանեն պատմեն զայս ամենայն։ Յորժամ յայլ բաղում քաղաքս գովաբանեն, լուր լինի այս և 'ի ծովու և 'ի ցաւահանգիստս պատմեն, տուք նոցա ասել որոց յայսմ վայրկ եւանեն՝ եթէ զոր տեսաք ուղղութիւն Աստուածոյ, յայլ քաղաքս տակաւին զայս ոչ է տեսանել. զի սովորութիւն են ընկալեալ արք քաղաքին այնմիկ նախ զլեզուն հատանել, քան թէ երդումն ելանել 'ի բերանոց նոցա։ Այս է ձեզ զարդ և պահապան. և ոչ միայն այս, այլ և վարձ բազում. յանկան ձեզ այլք և նմանեն։ Եթէ մի կամ երկուս շահեսցես՝ այնչափ վարձս խոստացեալ է ձեզ, որ զամենայն տիեզերս իրաւեսցէ՝ սրչափ ընկալցի հատուցումն յայ։ Արդ պարտ է փութալ հսկել և աքնել լըմնութեամբ, և իմանալ զի ոչ 'ի մերոց ուղղութեանց է եթէ, այլ հատուցումն մեծ և փոխարկնս բազում յայլոց ուղղութեանց առցուք, և այսպէս վայելեսցուք 'ի յաւիտենից բարութիւնն։ Որոց լեցի ամենեցունն մեզ հանապազ վայելել և հանդիպիլ արքայութեան ոյ հօր 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, որում փառք և զօրութիւն վայել և ամենասուրբ հոգւոյն յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ԳՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ *

Վասն հաշտելոյ Թագաւորին ընդ քաղաքին, և որք մեղան 'ի կործանել զպատակերս անդրիանոսի, և 'ի գալուստ եպիսկոպոսին Փլոբիանոսի։

Ի բանից որոց միշտ 'ի ժամանակի վտանգիցն ասացաք սիրոյ ձերում, յայտնանել և այսօր սկսանիմ և ասեմ ձեզ. օրհնեալ է ոյ որ արժանի արար զմեզ այսմ սուրբ և պատուական ծառայս կատարել այսօր հանդերձ ուրախութեամբ և ցնծութեամբ, և ընդունելոյ զքաղաքն ոտից և մարմնոյ գՀօտապետն Հօտից, զվարդապետն աշակերտաց, զքահանայապետն քահանայից։ Օրհնեալ

* Վերջին Ճառս անդրիանոսոյ ըստ կարգի նախընթացիցն քահանայից։ Նշանակեալ յօրինակին մերում, քանի երորդ առաջներորդ է 'ի յունականն, որոյ քանիերորդն պակասի 'ի մերն։

է ՝ած որ արար ընդ մեզ առաւել քան զոր խնդրեմքն և ածեմք զմտաւ բոլորով սրտիւ : Որ եզ արդեօք բաւական էր ազատել միայն ՚ի հասանել վտանգէս , և վասն այսր ստացաք բազում աղաչանս պաղատանօք . իսկ մարդասէրն ած այժմ ՚ի կատարել զինդրուածս մեր և յաղթել հանդերձ բազում առաւելութեամբ , և զհայրս մեր՝ զոր անյոյս ունելով՝ եհ մեզ : Որ իսկ կարծէր թէ այսպէս ՚ի սակաւ աւուրս հասցէ առ Թագաւորն և խօսեցի ընդ նմա մաղթական ձայնիւ , արձակեսցէ զվըտանգս և վաղվաղակի կանխեալ եկեսցէ առ մեզ , մինչ զի ՚ի սուրբ զատիկս կարողանալ հասանել և ընդ մեզ կատարել զսուրբ տօնս : Հայց աւանիկ եղև անակնկալ յոյսս այս , և զհայրս մեր ընկալաք . որք ինացաք ՚ի հօրե ՚ի վիշտս , և ընկալաք բարձրադոյն մխիթար զմայրս ամենեցուն :

Եւ արդ ընկալաք զհայրս մեր հանդերձ բազում ուրախութեամբ մատուցեալ մեզ զքաղցրութիւն Թագաւորին . և որում անյոյս էաք , ընկալաք արդեօք և առաւել պտղաբերեմք զփափագումն : Վասն այսր ամենայնի գոհասցուք զմարդասիրէն Աստ և աքանչասցուք ընդ նորա զօրութիւնն և մարդասիրութիւնն և իմաստութիւնն և զթութիւնն զոր արար վասն քաղաքիս մեր : Վանզի սատանայ կործանել խորհեցաւ և սկսաւ չարութեամբ վանել հանդերձ ամբարտաւանութ՚ե համարձակողացն . իսկ ած և զքաղաքս և զքահանայս և զԹագաւորն այսիւ զարդարեաց , և զամենեսեան պայծառադոյնս կացոյց : Վաղաքս հաճելի եղև զի այսպիսի վտանգից դիպաւ . քանզի որք զօրաւորք էին և զգեցեալ էին բազում մեծութիւն , նա և քան զԹագաւորս բազում զօրութիւն ունէին , ընթանային ամենեքեան յեկեղեցիս և առ քահանայապետս փութային , և հանդերձ բազում հաւատովք զի վերուստ յուսոյն կախեալ կային :

Եւ զկնի գնալոյն մեր ամենեցուն հօրս , որք ՚ի բանտի բնակեալք էին՝ խռովեալք և զարհուրեալք ասէին , եթէ ոչ Թողու զաւարկութիւն Թագաւորին , այլ և առաւել բարկասցի և խորհի զկործանումն ամենայն քաղաքիս , և աւելի ևս քան զսոյն աղմկեալք : Եւ որք կապեալք էին յայնժամ , այնչափ յայսմ համբաւէ զար-

հաւրեալք եղէն, զի մեր միսիթարական յոյսն սուտ Թուէը նոցա. և սատանայի հնարագիտութիւնն տակաւ՝ի գործ արկեալ խորհէը խորտակել զոգիս մեր՝ ոչ ժտել՝ի տեառնէ, և ոչ ունկն դնել բանից միսիթարութեան զոր ասէաք ձեզ, զի զառաջինն ոչ էին փախուցեալ. քանզի որք յուսով զանձինս մեր ամրացուցաք և կախեցաք ըզ-հաստատութենէ փրկութեանն և ոչ վատահաւատ՝ի մարդ եղաք, այլ յամենազօրն Ա՛Ծ. վասն որոյ համարձակեցաք Թէ կատարումն ամենայնի քաղցրագոյն լինի-ցի, զի ոչ երբէք է ամաչել՝ի յոյսս յայս յուսացեալըց: Եւ այս մրբան պատակաց փոխանակ է կամ մրչափ գովա-բանութեան բաւական քաղաքիս, մրչափ և յայլ իրս հանդիպեցաք ՚ի բարութեանց: Վանզի էէ երբէք և էէ իսկ միասել՝ի շուրջանակի փորձութեանց յորժամ անձինք հանդիպին՝ի տքնութիւն և՝ի հսկումն և հայել առ Ա՛Ծ ուղիղ սրտիւ, և զմարդկայինս զամենայն այսմ առնել՝ և մնալ միայն՝ի նմանէ մատակից լինել:

Ընդ քաղաքս այսպէս հաձոյ եղև, իսկ քահանայապետս կանխաւ ոչ որպէս քաղաքս. քանզի սա զհոգի իւր եդ վասն ամենեցուն. Թէպէտ և բազում արգելք էին սմա ոչ կարացին, ոչ աւուրքն ձմերայնի, ոչ չափ հասակի ծերութեանն, ոչ տօնիս աւուրք, և ոչ ինչ նուազ քան զայս քոյր իւր հասեալ՝ի վերջին կատարումն ընչից, որ և քան զամենայն արգելս գնալոյ՝ի վեր անցանէր. ոչ ասաց ընդ անձն իւր, զինչ իցէ այս՝ սա միայն մնացեալ է ինձ յիմոյն և այսչափ ժամանակս կեանակեալ ընդ իս և բարձեալ ընդ իս զլուծն Ա՛յ, և այժմ հասեալ՝ի վերջին կատարումն, մեք աստ զսա Թողեալ երթիցո՞ւք, ո՛չ տեսցուք զվախճան սորա և զմահ և ըզվերջին բան լսիցուք: Ո՛չ սա որ զօր ամենայն աղօԹէր մեզ, զգերեզմանականն ո՛չ երգեսցուք սմա, զլսըփել աչաց և զփակել բերանոց և զայլսն ևս բազում. արդ այժմ որպէս յանապատս ոմն առանց առաջնորդի կացցէ՝ ոչ միով իրիք հանդիպել յեղբօրէ, որում մնասանդ կարօտութիւն ունէր հանդիպել՝՚ի մեկնել ոգւոյն ոչ տեսանիցէ որ քան զամենեսեան նմա կարօտագոյն էր. և ո՛րպէս ոչ նմա քան զմահն ծանրագոյն իցէ: Այսպէս Թէ և հեռի ուրեք էի, ո՛չ էր պարտ ընԹանալ և կցորդել նեղութեանն մինչև պարգևել նմա զկարօտու-

թիւն սրտին իւրոյ և զնորհս ինդրուածոյ. իսկ այժմ մերձ կալով թողմ զայս և երթայցեմ:

Այլ ոչ ասաց զայս և ոչ զնաւ ած, այլ քան զանհնային ազգականս զնոյ երկիւղն պատուեաց. ծանեաւ զայս բարիոք, զի որպէս 'ի ծփանս ծովու նաւուղիղն և 'ի վտանգս մարտի զօրապետն՝ այսպէս և քահանայն 'ի փորձութիւնս երևեսցի: Այնմենեքեան, ասէ, առ մեզ հեղան Հրեայք և հեթանոսք, մի արդ ամօթ կրեսցուք 'ի նոցանէ վասն յուսոյն մերոյ...:

Այս զգոյշ լեր քահանային մեծահոդութեանն. անտես արար զայս ամենայն և վայելեաց զամենայն, զի և զյօժարութեանն վարձն առցէ 'ի տեառնէ, և վասն վայելման ըստ ակնկալութեան առաւելագոյն հանդիպեցաւ փափագմանն: Այթող զտօնս և յօտար հեռի գնաց երկիր խորհել վասն փրկութեան քաղաքին. իսկ ած նախ քան զզատիկս ետ մեզ զքահանայապետս, զի ընդ մեզ համօրէն ժողովեսցի 'ի տօնս, զի յառաջագրութենէ ամենայնի ուսիցի զվարձս և մեծապէս վայելեսցէ յուրախութեան: Այլ ած զնաւ զժամ տարեգնին, և եղև հունձք ժամանակ գնալոյ սորա. ոչ համբերեցաւ ինչ զհասակ ծերութեանն, այլ որպէս մանուկ արիաբար պնդակազմեալ այնպէս դիւրաբ ընթացաւ զերկարութիւն այնր ձանապարհի. ոչ լած զնաւ ըզվախձան ծերունւոյ քեռ իւրոյ, և որպէս առողջ գոլով ուրախութեամբ զնա թողեալ. և զայս ամենայն անտես արար վասն մերոյ փրկութեան: Այս այսպէս քահանայապետս հաճոյ եղև ած և մարդկան և էառ զվարձս մեծամեծս 'ի տեառնէ:

Իսկ զթագաւորին թագ պայծառագոյն արար և զարդարեաց գործս այս: Այախ իսկ զի յայտ եղև յայնժամ, զի զոր ոչ այլում քահանայի չնորհեաց երբեք, փութով քազմաւ զայս չնորհս քահանայիս մեր ետ և զբարկութիւնն եցոյց: Այս զի ստուգիւ զթագաւորին մեծահոդութիւնն և զքահանայիս զիմաստութիւնն և նախ քան զերկոսեանն զնոյ մարգասիրութիւնն ուսանիջիք, տուք ինձ փոքր մի հանդարտութիւն վասն այսր պատմել ձեզ: Այնեմ իսկ զոր 'ի յոմանց 'ի ներքս էին՝ ստուգեալ: Այանգի հայրս մեր ոչ փոքր և ոչ մեծ ասաց մեզ, այլ Պաւղոսի նմանեալ մեծ հոգւով՝ միշտ զիւր ուղղութիւն

Թագուցանէ։ Այլ Հարցեալ իմ ընդ ամենեսեան եթէ զինչ ընդ Թագաւորին խօսեցար կամ ուրպէս կած ի հաւան և կամ զիաւրդ զամենայն բարկութիւն նորա ի բաց եհան, սա առ մեզ զայս բանս խօսեցաւ. ասէ։ Ոչ ուղղեցաք զգործս զայս. այլ Թագաւորն՝ ով քաղցրացուցեալ զսիրտ նորա, և նախ քան զմեր բանս, ասէ, զամենայն բարկութիւն ելոյծ և եղծ զսրտմտութիւն. և վասն եղելոցս ասէ՝ որպէս այլ ոք անարգեալ՝ այնպէս առանց բարկութեան զամենայն պատմեալ Թագաւորին. և զայլսն Թագոյց հեզ գոլով և ցած, զոր ոճ ի մէջ կած։ Օ յաւրդ արդեօք. փոքր ևս վերագոյն եկից ի բանս պատմել ձեզ։

Յորժամ ել սա ի քաղաքէս և զամենեսեան եթող ի արտմութեան, քան զմեզ որք յայս նեղութիւս էաք՝ ինքն բազմապատիկ և դժուարինս չարչարէր։ Նախ եղեալ սոցա ի հասարակ Հանապարհի և հանդիպեալ զինուորաց որք գային վասն քննութեան եղելոց առաքեալք ի Թագաւորէն, և ուսեալ ի նոցանէն Թէ վասն որոյ առաքեցանն՝ սա յայնժամ յայտնեաց զեղեալ վըտանգ քաղաքիս, զաղմուկն, զխռովութիւնն, զփախուստն, զերկիւղն, զտագնապն, զնեղութիւնն, և հեղոյր զաղբիւրս արտասուաց, զի հնձէին աղիք սորա։ Այլ քան զՀարց սովորութիւն առաւելապէս ցաւագնեալ, յորժամ չարչարիցին որդիք նոցա, և ոչ կարիցեն մերձ լինել և փրկել, այսպէս և զԹաոէր Հայրս մեր տոչորէր. ոչ զի ի նեղութիւնս Թողեալ էր զմեզ՝ միայն ողբայր, այլ և զոր ի հեռաստանէ դիպելոց էր մեզ. սակայն և այս եղև վասն մերոյ փրկութեան։ Օ յորժամ զայս ի նոցանէ լուաւ, ջերմապէս հեղոյր զաղբերս արտասուաց, և հանդերձ բազում աղաչանօք առ ոճ դիմեալ՝ զամենայն դիշերն անքուն կատարէր, աղաչելով զի մերձ լիցի քաղաքիս որք ի չարչարանս էին, և զմիտս Թագաւորին հեզ առնիցէ։

Իսկ յորժամ եմուտ ի մեծ քաղաքն յայն և եկն ի գաւիթս Թագաւորականս, եկայ հեռագոյն ի Թագաւորէն, և ի խանարհ գՀեալ լուութեամբ արտասուէր, զերեսս ծածկեալ պատկառանօք, որպէս Թէ ինքնին էր որ զամենայն գործեալ էր։ Ընդոյր զայս կերպարանս ողբալոյն, մինչ զի տեսութեամբ և Հանդիպմամբ ածէր

զԹագաւորն յողորմածին, և ապա սկսանիր առնել վասն մեր պատասխանի։ Իսկ լռեալն և որ ոչ խօսէր՝ խորհէր զի միւն արտաքս ելցէ և միւսն ՚ի ներքս եկեսցէ. ելցէ սրտմտութիւնն ՚ի սրտէ Թագաւորին և ածցի բարեմտութիւնն. զի այս իսկ Հոգւդ Ձանապարհ ՚ի բանս պատասխանւոյ, որպէս եղև իսկ։ Օ՜ որ օրինակ և Ո՛ւմ սէս եղեալ ՚ի լեառնն լռեայ միւսէն կուէայ զնա ՚ած և ասէ "Ով տուր և ջնջեցից զժողովուրդ զայդ,, այսպէս արար և Հայրս մեր։

Իտես զսա Թագաւորն արտասուեալ և ՚ի վայր խոնարհեալ՝ եկն յինքն, և որ ինչ դիպաւ յարտասուաց քահանային յայտնեաց զայս ՚ի խօսից զոր խօսեցաւ ընդ նմա։ Օ՜ ի ոչ սրտմտութեամբ և ոչ խռովութեամբ էին բանք Թագաւորին, այլ տխուր միայն. ոչ բարկութիբ, այլ տրտմութեամբ. բայց ոչ նեղասրտութեամբ երկնչս ունելով. և զի այս մանաւանդ Ձմարիտ է, յայտ է ՚ի բանիցն զոր ասաց։ Ով ասայ՝ զինչ է այդ որ վասն մարդկան գարշելեաց և ամենագարշից որոց ապրելն ոչ է պարտ՝ եկիր առ ՚ի յաղաչանս մատուցանել որք արժանի են ամենայն տանջանաց։

Ա՛յլ զայս ամենայն Թողեալ զբանս՝ պատասխանի արար ծանրագոյն և լի պատկառանաւք. և խօսէր զիւրոյ բարեգործութեան զոր յիւրում ժամանակի քան զամենայն Թագաւորսն որ յառաջագոյն էին՝ առաւել բարեգործէր մերում քաղաքիս։ Որ անիրաւութեան, ասէ, փոխանակ զայս գործեցին անտիրաքիքն. զինչ փոքր կամ մեծ դատաստանս ունիցին, ոչ եթէ առ իս միայն գտան անարգիչք, այլ և զղնացեալսն ՚ի մէնջ ՚ի հանդերձեալն անարգեցին։ Որ էր բաւական մինչ ՚ի կենդանիս կացուցանել զբարկութիւնն, այլ և զորս ՚ի գերեզմանի՝ անարգէին. Թէ և մեզանչական լեալ էաք նոցա, որպէս և նոքա կարծէին, ոչ էր նոցա պարտ ինայել ՚ի մեռեալսն որք ոչ էին գործեալ նոցա անիրաւութիւն։

Իսկ ապա քահանայապետս հեղգով ջերմագոյն զարտասուսն և յոգւոց հանեալ մինչեւ ոչ լռէր այնուհետև. զի տեսանէր զպատասխանիս Թագաւորին, և ինքն առաւելապէս մեծ առնէր զանգոնութիւնն մեր. բայց հառաչելով ՚ի ներքուստ ծանրագոյն և դառն, Ստոտվանիմք, ասէ, ով Թագաւոր և ոչ ուրանամք զա-

ասցեալս զայս. վասն այսորիկ մանաւանդ ողբամ, զի առ ձեր անբաւ ողորմութիւնդ և սէրդ նախանձեցաւ սատանայ, և այնչափ՝ մինչ զի և առ բարեգործդ մեր անզգամք երևեցաք։ Եթէ սպանանես, եթէ հրով այրեսցես, եթէ զընաւն ապականեսցես, ոչ ըստ արժանեաց մերոց խնդրեսցես վրէժս։ Ո՛չ զինչ լինիցի դառնագոյն քան զայս յորժամ զբարեգործ և զայսպիսի սիրող և ողորմած երևեալ առ մեզ՝ այնպէս բարկացուցանել, և զայս տիեզերք ամենայն լուիցեն և զկետին անմոռութիւնս մեր իմասցին։

Ո՛չ եթէ ընթացեալ էին բարբարոսք ի վերայ քաղաքին մերում, և խլեալ ի հիմանէ զպարիսպն և զընակութիւնս վառեալ հրով և գերեալ զամենեսեան, փոքր էր վտանգն մինչ դուք կենդանի էք. քանզի այնչափ բարութիւն ցուցեալ ի մեզ, որով յոսոցայաք արձակել զմեզ յայնմ նեղութենէ, և զի կարող իսկ էիք ածել զմեզ կանխաւ յառաջին կերպարանն։ Արդ այժմ քոյին բարութիւնքն ի մէնջ պակասեալ և գութ սիրոյ շիջեալ, որ քան զամենայն ամրութիւնս պարսպաց զգուշութիւն էր մեզ, առ ոմն արդեօք ապաւինեսցուք ձնղպրեալ ի չարեացս, զո՞վ կարեմք տեսանել փոխանակ քո. և մեք զայդպիսի քաղցր տէր և հայր փոխանակ երկիւր պագանելոյ բարկացուցաք։ Եւստի առ ամենայն մարդիկ անհամարձակ գտաք, և ոչ կարեմք առ ամենեցուն մերում հայել յերեսս ուրուք. նա և ոչ զարեգակնս զայս կարեմք տեսանել ազատ աչօք, զի արտեւանունք մեր ծածկեալ են ամենեցուն, և զհամարձակութիւնն բարբառ՝ծանրութիւն լեզուաց մերոց ոլ յամենեցուն՝ փակեալ է ի մէնջ և ի բանից պապանձեցուցեալ. այս քան զամենայն գերութիւն թշուառագոյն է, և յիրաւի տանիմք վերջին անարգանաց...

Արդ եթէ կամիս, ով Թագաւոր, կայ բժշկութիւն վիրացս և դեղ այսչափ չարեացս. և սակայն զի ի տգէտ մարդկանէ եղեն չարիքն այն մեծ և անհաստատելի դիմամարտութիւնն։ Յայսմիսի իսկ հանդիպեցաւ մերում բնութեանս. զի յորժամ զմարդն արար ՚ած և ած զնա ի դրախտին, և մեծի հանգստեան և բաղում պատուոյ արժանացոյց, ոչ համբերեաց այնչափ բարի կենդանութեան մարդոյն սատանայ. զչարացաւ ընդ նմա, և ի

տուեալ փառաց աԹոռոյն արտաքս եհան զնա։ Ա.յլ ոճ ոչ եԹէ միայն ոչ եԹող զնա, այլ և փոխանակ դըրախտին եբաց մեզ զերկինս. այսպէս զմարդասիրութիւն իւր ցուցանելով, և զատուհասս առաւելապէս տանջանաց մատնեաց։

Ա.յսպէս և դու արասցես, ով Թագաւոր, որ ըստ պատկերի ՚ի և ըստ նմանութեան հաստատեցար. յամենայն չարիս զամենայն մարդիկ վարժեաց, նոյնպէս կամեցաւ զքոյին սիրական քաղաքն մերժել ՚ի քոյին բարերարութենէդ։ Ա.րդ զայսոսիկ ծանիր, և զգատապարտութիւնն զոր և կամիս խնդրեա, բայց ՚ի յառաջին սիրոյն զմեզ մի արտաքսել։ Ա.յս պարտ է և այլ ևս սքանչելի ասել. առաւել այժմ ցոյց ՚ի մեզ զբարեմտութիւնն, և զարձեալ յառաջին սիրելութիւնն գրեա ըզքաղաքն, և այսու կամաք և խորհրդիւ զարձուցանես յետս զչարն սատանայ պատկառանաք և ամօԹալի։ Ա.պա եԹէ քակես և խորտակես և անյայտ առնես, զոր մարդատեացն խորհեցաւ՝ զայն գործեցեր. ապա եԹէ Թողուս զբարկութիւնն և զարձեալ խոստանաս ողորմել և սիրել, խոցեցեր զբանսարկուն և ՚ի նմանէ զբեւեռն զատապարտութիւնն խնդրեցեր, ցուցանելով Թէ ոչ մի ինչ եղև ՚ի խորհրդածութենէ նոցա, այլ հակառակքն նոցա ամենայն զոր և խորհեցան՝ անցին ՚ի գլուխ նոցա։ Ա.յրասի է զի զայս առնիցես՝ ողորմել բազում, զի և ընդ քոյին սէրն նախանձեցան չար գևքն։ Ա.Թէ ոչ էիր այսչափ և յոյժ սիրել զքաղաքն, և ոչ նոքա այնքան նախանձու չարժեալ էին։ Ա.րդեօք զի սքանչելի է զոր ասեմն, բայց սակայն ճշմարիտ է, զի վասն քո և վասն սիրոյ քո այսպիսի իրս դիպաւ։ Ա.ՀԱն զորպիսի այրումն կամ զորչափ Թախանձումն բանքս այս գտանագոյն է զոր պատասխանեցեր այժմ։ Ա.նարգեալ ասացեր, և ասոյգ է, զոր ոչ ոք յառաջին Թագաւորացն երբեք կրեաց կամ Թէ սիրեաց։

Ա.յլ եԹէ կամիս, ով մարդասէր Թագաւոր, և լուիցես բազում խնամութեամբ, քան զԹագաւորութենդ քո ևս մեծ և պայծառ դիցէ քեզ պակ անարգանքս այս։ Օ.ի այդ Թագուցումն[1] է քոյին առաքինութենէդ,

1 Իմա Թագ կամ Թագիւ պահելն։

է և տուողին նշանակ պատուասիրութեան. իսկ որ ՚ի մոլորասիրութենէ հիւսեալ քեզ պսակ՝ քո միայն է ուղղութիւն և քոյին իմաստասիրութեանդ. և ոչ այսպէս սքանչանան զքէն վասն այդր պատուական քարանդի, որպէս գալաքանէն զքէն վասն անտես առնելոյ բարկութեանդ։

Վասն եղբօրն զքոյին պատկեր զանդրիանաքն, այլ կաթողութիւն է քեզ պայծառագոյն յարուցանել քան զայն։ Եթէ թողցես մեղուցելոցն զպարտաւորութիւն, և չհանդրեսցես և ոչ մի մեզս ՚ի նոյանէ, յայնժամ ոչ եթէ ՚ի հրապարակս կամ ՚ի փողոցս միայն յարուցանեն քեզ պատկերս ՚ի պղնձոյ կամ յարծաթոյ և կամ յոսկւոյ և ոչ քարամբք պատուականօք, այլ որ քան զամենայն նիւթս պատուական է՝ զմոլորասիրութիւն և զողորմութիւն զգեցեալ պատմուճան։ Այսպէս ըստ այսմ իւրաքանչիւր ոք ՚ի միտս իւր յարուցանէ քեզ պատիւ. և այնչափ յօրինեալ ժողովես պատկերս, որչափ յամենայն տիեզերս բնակեալ են և բնակին մարդիկ։ Ոչ եթէ մեք միայն, այլ և որք գկնի մեր և որք գկնի նոցա ամենեքեան որ լուիցեն զայս, որպէս թէ բարի գտեալ ՚ի քէն, այնպէս նոքա գովեն զքեզ և սիրեսցեն։ Այս զայս ոչ եթէ աչառանօք և ընդ երեսաց ասիցեմ, այլ որպէս և են իսկ, և գիտակ ես, ով Թագաւոր, պատմեմ քեզ բան ինչ, զի ուսանիցիս թէ ոչ այնպէս գինուորքն և սպառազէնքն, յաղթութիւնք և ծառայից բազմութիւնք և այլ այսպիսիք պայծառագոյն արասցէ զթագաւոր, որպէս իմաստասիրութիւն հոգւոյ և հանդարտութիւն։

Այրանելին Կոստանդիանոս պատկեր երբեմն գիւր առաքեալ, և անարգեալ՝ բարկացուցանէին զնա բազումք գնալ և խնդրել վրէժ զանարգանացն. և ասեն՝ եթէ զամենայն երեսս պատկերին քո մանրեցին քարամբք։ Իսկ նա շօշափեալ զերեսս իւր ձեռաք իւրովք և ժպտեալ ասէ՝ եթէ ոչ երբեք գանս հայիմ ՚ի Հակատս իմ, այլ ողջանդամ է գլուխս և ամենայն պատկերս իմ։ Այսքա ամենեքեան պատկառեալք և ամաչեցեալք ՚ի բաց կացին յանիրաւ խորհրդածութենէ։ Իսկ զբանս զայս մինչև ցայժմ երգեն ամենեքեան, և այսչափ ժամանակս ոչ Թառամեցաւ և ոչ շիջաւ իմաստութեանն յի-

շատակ։ Տեսանեմ թէ ոչպէս բազում և մեծ է չաղթութիւնս այս։ Խազում քաղաքս նա ինքն չարչչ և բազմաց բարբարոսաց չաղթեաց, այլ չայնմ ամենայնէ և ոչ մի ոչ չիշեմք. զբանս զայս մինչև ցայժմ ի բերան ունիմք, և ոչք զինի մեր գան և զինի նոցա՝ ամենեքեան լուիցեն։ Եւ ոչ այս միայն է սքանչելի թէ լուիցեն, այլ զի գովաբանութեամբ ասեն, և լուեալ ընդունեսն. և ոչ ոք իցէ որ կարիցէ մոռանալ չորժամ լսէ, այլ ընդ նմին գոչէ և զասողն գովէ։ Եւ եթէ ի մարդկանէ այսչափ վայելեաց փառաւք վանն միոյ բանիւն, որքան վայելէ ի մարգասիրէն Աստուծոյ պսակաւք։

Եւ զինչ պարտ է ասել զԱթանագինեսին կամ զայլ հեռի պատմութիւնս. պարտ է չանձնել քումմէ տեսանել և ի քոյին ուղղութեանդ աղաչել։ Զիշեա նախ զգալոստ այսմ տօնիս՝ թէ զնարդ հրովարտակս առաքէիք չամենայն տիեզերս արարածոց, հրամանս տալեալ զի որք ի քանտի իցեն՝ չամենեսեան արձակել և զպարտիս իւրաքանչիւր թողուլ նոցա. և զոր ոչ էիք բաւական անդ ցուցեալ զձեր մարդասիրութիւնդ՝ ասելով հանդերձ թզթովք, եթէ կարող էի՝ և զդնացեալսն չարուցանէի այսօր, ածէի ի կեանս և բնակեցուցանէի ի չարկս իւրեանց։

Եւ արդ նոքա վանն որոյ աղաչեմս, մեռեալք են, և չայնմ ժամ նախ քան զելանել վճռին մերձեալ է քաղաքն այն ի դրունս դժոխոց։ Արդ չարս զնոսա առանց ընչից, առանց ծախուց, առանց չամելոյ և աշխատանաց. բաւական է քեզ հրամայել միայն և չարուցանել զայնչափ քաղաքն որ ի վերայ երեսաց իւրեանց անկեալ կան ի մահ։ Արժմ տուր նոցա զձայն չարութեան քոյին մարդասիրութեանդ։ Ել այսպէս չնորհ երևի նոցա չառաջին տուողէն իւրեանց, որպէս և այժմ եթէ դարձցին ի վճռաց քոց. զի որ կենաց սկիզբն ունէին՝ գնաց, և զի աճեցին և եղեն մեծ, դու իսկ այնու չանդերձ բարեկենդանութեամբ ածէ զնոսա ի չարութիւն։ Ել էր այսպէս սքանչելի եթէ եկեալ էր նոցա պատերազմ և գերութիւն ի բարբարոսաց և դու ազատեալ էիր զնոսա ի վտանգից, որպէս այժմ սքանչելի է զի ինայեսցես ի նոսա. զի զձայն բազում անգամ բազում թագաւորք արարեալ են, իսկ զայսոսիկ դու միայն գոր-

ձես։ Ա՛յն իսկ ոչ է այնչափ սքանչելի և զարմանալի, այլ՝ ի վեր քան զամենայն ակնկալութիւն եղիցի դիպուածս այս, զի ծառայք այնչափ քարի գտեալ և անչափ մեղայեալ՝ և դու՝ ի նոցանէ անցուցանես զբարկութիւն. այս քան զընդունելի մարդկան՝ ի վեր անցանէ։

Ամա ով Թագաւոր, զի ոչ վասն միոյ քաղաքին միայն է խորհել քեզ, այլ վասն ամենայն քրիստոնէից։ Ա՛րդ Հրեայք և Հեթանոսք բարբարոսք և ամենայն տիեզերք լուիցեն զայս և ճանացեն քեզ եթէ զինչ վճիռ խորհիս վասն նոցա։ Եթէ մարդասէր լինիս և հանդարտ, գոլեն զայն Հրամանս և պատուեն ամենեքեան, և փառաւորեն զտէր ՚ուծ քո և ասեն ցմիմեանս. բաւէ եթէ պզտիկ է քրիստոնէից կարդ և զօրութիւն. մարդ որ ոչ ունի պատուակից ինքեան՝ ի վերայ երկրի, այլ տէր է ամենեցուն՝ ի կորուսանել և յապականել, նա ուր արժան էր այսմ զբարկութիւն ըմբռնել և խրատել զնմանատութիւն, զոր տեսեալ մարդ ոչ կարէ յուցանել. յիրաւի ապա մեծ է ՚ուծն քրիստոնէից, որ՝ ի մարդկանէ հրեշտակս առնէ և վերապոյն կացուցանէ քան զամենայն կարիս բնութեան։։։

Եւ եթէ անկարողութիւն էր գնալ անդ և յանկանակս լինելին քեզ զայս առնելով և հաւատարակից էր զօրութիւնն, յիրաւի և կասկածելիք։ Ապա այժմ երկուցեալ և՝ ի մահ մերձեալ երկիւղիս և առ ոտս քո ընթացեալ Հանդերձ ինձ և ոչ առ այլ ոք ակն ունիմք զօրհանապազ, միայն եթէ անկեալ՝ ի խորխորատս, և աղօթս առնեն առ Հասարակ յերկինս Հայելով և զ՚ուծ աղաչելով գալ և մերձենալ յաղաչանս յայս, որպէս թէ Հասեալ իցեն՝ ի յեաին կառարումն ընչից, իբրա քանչիւր ոք վասն իւրոյ կորստեան պատրաստեալ է, և զինքդ ոչ իսկ առելոդ երկիւղդ այդ։։։

Ասա որոյ չիշեա արդ զաՀեղական օր պատառատանին յորում ամենեքեան դատ ունիմք տալ վասն գործոց մերոց. իմա և դու եթէ մեղս ինչ և իցեն քեզ, զամենայն քաւեացես այսու մարդասիրութի՛ւն՝ ի Թողուլ զյանցանս մեղուցելոց քեզ ըստ բանի փրկչին՝ առանց աշխատութեան, առանց քրտանց։ Ա՛յլք աղաչեն և կաշառս մատուցանեն ոսկի և արծաթ. ես սուրբ տօնիս՝ ի Թագաւորութեան օրհնս քո մերձենալ եմ, և փոխա-

նակ ամենայն կաշառաց զայս ամենայն խորհուրդ տա-
լածեմ առաջի քո, և աղաչեմ զքեզ նման լինել տեառն
քո՝ որ զօրհանասպազ անարգեալ ի մինչ, ոչ երբեք պա-
կաս ունիցի ի խնամելոյ զմեզ։ Ի յամենի առնել ըզ-
յոյս մեր և մի յանդիմաներ զնոստուանս իմ։ Լու զայս
և ծանուցանեմ քեզ. եթէ խորհիս հաշտել և առնել
զառաջին բարեմտութիւնն քո ընդ քաղաքին և Թողու-
ցուս զայս յիրաւի բարկութիւնս, հանդերձ բազում
համարձակութեբ երթայցեմ անդ. ապա թէ ոչ արձա-
կես զբարկութիւնս ի քաղաքէն, ոչ եթէ միայն ոչ կո-
խեմ ի սահմանան յայն, այլ և ուրացայց զնա միան-
գամ և յայլ քաղաք պարագրեմ զանձն իմ։ Վաս լի-
ցի ինձ կոխել ի հայրենի հողոյ իմոյ, որում մարդասէր
Թագաւորդ և հանդարտդ քան զամենայն մարդիկ և
հեզ ոչ առնես ողորմութիւն և հաշտ լինիս ընդ նմա։

Զայս և առաւել քան զսոյն ասէր և հեղոյր առաջի
Թագաւորին արտասուս։ Իսկ նա եղև որպէս Յովսէփ
երբեմն։ Զի որպէս նա յայնժամ ետես զեղբարան և
խորհէր արտասուել, բայց լռեցուցանէր զտրտմութիւն
զի մի ապականեսցի պատասխանին, այսպէս և Թագա-
ւորն ի սիրտ իւր արտասուէր և ոչ յայտնէր վասն նո-
ցա ամենեցուն որ մերձն կային, այլ և ակամայ յանդի-
մանեցաւ զհետ այմ բանի։ Իչ խնդրեր երկրորդա-
բանել, բայց մի բան միայն ասացեալ՝ որ քան զԹագն
որ ի գլուխն նորա առաւելապէս զարդարեաց զնա։

Զինչ էր զոր ասաց Թագաւորն։

Զինչ է մեծ այս կամ աբանչելի՝ եթէ անարգողաց
Թողցուք զբարկութիւն, և նոքա մարդիկ ևս իցեն, ո-
րովհետև տէրն մեր եկն յերկիր և վասն մեր հաւ ըզ-
ծառայի կերպարանս, և որոց բարի գործեալ՝ ի նոցա-
նէ խաչեցաւ, և վասն խաչահանուացն աղաչէր զհայր
և ասէր. “Հայր Թող սոցա զի ոչ գիտեն զինչ գոր-
ծեն,,. զինչ աբանչելի է եթէ մեք ընկերաց մերոց Թո-
զուցուք։

Լու զի այս մի բանս ոչ էր պատասխանի, եցոյց յայս-
մանէ և զայլն ամենայն որ ոչ նուազ քան զոր հանդեր-
ձեալ է պատմել զայնոսիկ քահանայապետս այժմ։ Իդդ
յետ այսորիկ խորհէր հայրս մեր զի անդ համբրէն ընդ
նոսա կատարեսցէ զտօնս զայս. յայնժամ ակամայ զսա

հաւանեցուցանէր և հարկէր փութով գալ և երևել քաղաքին։ Վասն, ասէ, զի հոգին նոցա երկուցեալ և բաղում վիշտք են 'ի մեռցորդսն. երթ մխիթարեա, ասէ։ Եթէ տեսանիցեն զնաւուղիղդ, ոչ յիշեսցեն զանցեալ ծուփս ալեկոծութեանն, այլ և զյիշատակ սրբատմութեանն ջնջեսցեն զամենայն։ Իսկ որպէս մեռցոյ քահանայապետս թէ արժան էր առաքել զորդի իւր, այլ նա խորհէր ցուցանել ստուգապէս թէ բոլորովին զամենայն բարկութիւն ջնջեալ էր 'ի մտաց իւրոց։ Ասյլ տուր, ասէ, բարձ յինէն զայսմ արգելս՝ չնջուցանելով զպատերազմն զայս, և ես գնամ ասկայն։

Ա՛րդ զինչ լինիցի առաւել քան զՀոգին զայն հանդարտ և հեզ։ Պատկառեն, ասէ, հելլենացիք և ամաչեսցեն. և ոչ միայն ամաչեսցեն, այլ և խրատեսցին և Թողցեն, ասէ, զմոլեգնութիւնս իւրեանց և եկեսցեն, ասէ, 'ի զօրութիւնս քրիստոնէական, և 'ի Թագաւորէ և 'ի քահանայապետէ ուսցին զիմաստասիրութիւն։

Յայնժամ ամաչեսէր Թագաւորն ոչ միայն եկաց, այլ յորժամ էլ 'ի քաղաքէն քահանայապետս և անդ ընդ ծով, առաքէ անդ զոմանս քննել և բաղում իրաք փութացուցանել, զի մի երբեք մանրեսցի ժամանակն, և սա անփոյթ արասցէ զփափագումն քաղաքին, արտաքոյ կատարեսցէ զոճն։ Ասրպիսի հայր բարեգութ, քաղցր և գթած այսչափ 'ի վերայ անարգողաց որդւոց ջանս դիցէ։

Ասէմ և այլ ևս վասն արգարոյս գովաբանութիւս, զի զայս կատարել ոչ փութացաւ, որպէս և այլք կարծէին ասել. իսկ նա հրովարտակս արձակել յորում գրեալ կայր լուծումն տրամակատացն։ Ասէ եթէ զի սա ոչ բերիցէ, այլ քանզի սա մեղմաբար գայր, այլ ոմանց մըտրակավար երիվարօք արժանացոյց կանխել յառաջագոյն մատուցանել զաւետիս քաղաքին, զի մի սա մեղմաբար գալով 'ի Հանապարհին՝ տխրութիւնն 'ի վերայ կայցէ։ Ա՛յս միայն էր փութացուցանելն նորա, ոչ եթէ զինքա եկեսցեն բերցեն զքաղցր զայս և զլի բաղում մխիթարութեամբս, այլ զի վաղվաղակի հայրենի մեր բնակութիւնս հանգիստ առցէ։

Օ՛ր և յայնժամ արարէք իսկ զարդարելով զփողոցս, և բազմականս բազում յարուեստանոցս եղեալ,

և որպէս թէ այժմ եղև քաղաքս այս՝ այնպէս պարէնն, ինչն միշտ և յայժմու ժամանակս ապարէք մի ծագիցք, այլ առաքինութեամբ պահեալք, զլայս կենդանի որ ի գործոց՝ վառեցեալք յանձինս ձեր, ի նմին հոգևորական ուրախութեամբ ուրախանալ։ Եւ զնոյ գոհանալ հանապազ վասն այսր ամենայնի և ոչ դադարել, ոչ զի եղյծ զվտանգս միայն, այլ զի տեղի ետ այսմ որ եղեալ լինել, ըստ որում բազում ընդհարմս խոստովանիմք առնուան նորա. քանզի յերկոցունց յայսցանէ զքաղաքս մեր զարգարեաց։

Ո՛չայս ըստ բանի մնդպարէնին պատմեցէք ուստերաց և դստերաց ձերոց, և նոքա կանխաւ որդւոց իւրեանց, և որդիք նոցա պատմեսցեն յազգ այլ։ Ո՛չ ամենեքեան մինչ ի կատարած ուսցին զմարդասիրութիւնն նոյ զոր արար քաղաքիս մերում, և երանեսցեն զմեզ որ յայսչափ բարութիւնս վայելեցաք, և աքանչասցին ընդ տէր մեր՝ որ զայսչափ զանկեալ քաղաքս մեր կանգնեաց. շահեսցին և սոքա վասն եղելոյ այսմ ամենայնի, և զի ի պարկեշտութիւն սովորեսցին։ Ո՛չ ոչ եթէ մեզ միայն պարտ է յիշել զգործս զայս, այլ և ամենեցուն որ ընդ մեզ էին, զի կարող են ի բազմաթիւ դիպուածոցս մերոց օգնել։ Ո՛չայս միշտ խորհել ոչ միայն զարձակումն ի վտանգիցս, այլ և վասն թողլ տալոյ լինել այսոցիկ՝ գոհասցին զնոյ։ Իսկ մեք յիմծայեն գրոց և ի դիպելոցս մեզ զայս պարտ է ուսանել, զի զամենայն միշտ ի բարիս մեր անօրինեկ իւրով մարդասիրութեամբ։ Յորում լիցի մեզ հանապազ վայելեալ և արքայութեանն նոյ հանդիպիլ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՎԱԽԱՆ ԱՆԴՐԻԱՆՏԱՅ

ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՐԱՁԱՏ ՁԱՌԻՑ

ՑԱՆԿ

ՍԿԶԲՆԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒՑՍ

		Յոյն Հատոր	Էջ
Ճշմարիտ արդեօք ինչ	7	Ա.	436
Եթէ զարտասուս և զհառաչանս	17	Ա.	35
Պայծառ մեզ այսօր ծնաւ	26	Բ.	309
(այլ օրինակ) Երևելի և վայելուչ է ծնունդս			
Տեսէք յառաջնումն կիւրակէին	46	Բ.	287
Հեշտալի նաւավարաց է գարունն	56	Դ.	643
Ցիշեցէք զինդիրն որ յառաջագոյն եդաւ մեզ	64	Դ.	651
Զոր օրինակ սերմանողացն օգուտս ոչ ինչ է	69	Դ.	655
Լուայք երէկ զվարդ արար Թագաւոր	74	Դ.	658
Դուք Թերևս կարծիցէք արդեօք	82	Դ.	664
Սիրեմք զպահս, զի մայր է ողջախոհութեան	90	Դ.	670
Ցաւէտ ազաչեցի երէկ զձեր սէրդ	95	Դ.	674
Անկոց խուռն ընթացք	105	Դ.	683
Կատարեցէք զպահոց նաւարկութիւն	110	Ե.	525
Ի բաց եղաք զպահոցն բեռն	122	Բ.	437
Իբրև զի ցանկալի և փափաքելի է մեզ	134	Բ.	225
Հալածիցէք արդեօք 'ի բաց	147		
Զ Յառաջագոյն ասացեալսն սիրոյ ձերում	157	Բ.	234
Խաւսակ ցանկացաւ երթալոյն Ճաշ	171	Բ.	260
Մեք նախ քան զերկիւղն օրէն	181	Բ.	267
Բազում անգամ ինդրեցի յիս յինքեան	195	Բ.	397
Ա յսօր տէրն մեր 'ի խաչին	202	Բ.	403
Յաղագս գործոց ընդ ձեզ յառաջագոյն խօսեցայ	213	Բ.	422
Ընդ ամենայն տեսակս ժողովրդեանս	235	Բ.	518
Պատուասէր կոչնատեառքն	243	Բ.	592
Սակաւք են այսօր առ մեզ եկեալքս	256	Բ.	730
Տեսէք զանկն պնդակազմ	270	Բ.	741
Զինչ այս, որքան յառաջ մեզ ծնաւ	280	Գ.	50
Ցեղս բազում ժամանակի առ մայրս մեր դարձեալ	295	Գ.	60
Արդեօք այսքիկ ներելի	310	Գ.	98
Զփարիսեցին և զմաքսաւորն յիշեցաք	323	Գ.	300
Երանեմ զձեր փոյթդ սիրելիք	338	Գ.	344
Միշա, առաւել ևս այժմ	352	Գ.	381
Մարդասէր մեզ Ժողովս	360	Գ.	421

		Յոյն հատոր	էջ
Յորժամ զՄատա յԱբրահամ յափշտակեաց	365	Գ·	427
Ցայժ էն խռովութիւնք	370	Գ·	432
Զուարճանալք, 'ի միասին ընթացեալը	385	Դ·	106
Օրհնեալ է ած, և յազգիս մերում ընծայեցան	392	Դ·	111
Բեր այսօր որ յաղագս Ոզիայ պատմութեանն է	404	Դ·	131
Հազիւ ուրեմն վասն Ոզիայ հատաք անցաք	412	Դ·	137
Զուարճանայ անդէորդ	422	Դ·	180
Զերկնիւեան օրն սոն սատանայական	447	Ե·	707
Սքանչացայ ընդ սէրն ձեր	466	Ե·	726
Ոչ դուշնաքեայ ինչ օգտեայ	479	Ե·	736
Զղաղարու զառակիս զկատարած	501	Ե·	751
Աւուրս չորս ծախեցաք	516	Ե·	762
Ցեսէք զնոյ զօրութիւնն	530	Ե·	772
Զինչ այս· հովիւն ոչ է մերձ	557	Ե·	444
Բեր այսուհետև առ անհատատան	569	Ե·	452
Աշխատասէր մշակք	583	Ե·	462
Բաւական էր ցուցանելն	595	Ե·	471
Յորժամ հանդերձեալ ոք իցէ	608	Ե·	480
Մի օր ընդ ձեզ խօսեցայ	624	Ե·	541
Այսօր 'ի մեռելոց յարուցեալ Ղազարու	633	Ե·	525
Լուա՞ք զառաքելական զձայնն	645	Ը·	1
Զինչ ասացից կամ զինչ խօսեցայց	673	Ը·	20
Յորժամ ընթանամ յաթոռ քահանայապետին	692	Ը·	35
Օրհնեալ է ած որ մխիթարեաց	707	Ը·	48
Զերից մանկանցն և զՀնոցին բաբելացւոց	719	Ը·	59
... որդիք բժշկաց մինչև աւսգեն	738	Ը·	73
Բազում առաքինութեամբ երկիր խոկ յայտնեցաք	752	Ը·	84
Խնացայք յառաջադոյն	761	Ը·	91
Եւ նախ ընդ ձեզ էի	769	Ը·	96
Ուրախ եմ և ուրախակից լինիմ ձեզ	782	Ը·	105
Յորժամ զմտաւ ածեմ զանցեալ ձմեռն	794	Ը·	114
Եւ երկիւ ասացի՝ օրհնեալ է ած	805	Ը·	123
Ի նախկի բանս եկեալ	818	Ը·	133
Ոչ որպէս կամէաք	829	Ը·	140
Պարտ է այսօր որպէս յառաջնումն	844	Ը·	151
Զխնամն խոկ գովեցի	855	Ը·	160
Ի ժամանակի պաշտեցաք ամենեքեան	869	Ը·	170
Զգլուխն տեսի ուրախացեալս	881	Ը·	180
Խնդամեցէք 'ի սուրբ վկայիցն	890	Ը·	188
Ի բանից որոց միշտ 'ի ժամանակի վտանգիցն	903	Ը·	213